Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1998

ԳՄԴ 63. (22)
Վ 942

Վրացյան Սիմոն
Վ 942 *Հայաստանի Հանրապետություն։ Եր.։ Հայաստան, 1993.— 704 էջ, նկ.։*

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրման տասնամյակի առթիվ Սիմոն Վրացյանը գրել և 1928 թ. Փարիզում հրատարակել է Հայաստանի Հանրապետության ամբողջական պատմությունը։

Գրքում լուսաբանվել է առաջին աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի արևմտյան և արևելյան հատվածների վիճակը, Ռուսաստանում հեղափոխական խմորումների հետևանքով Հայաստանում ստեղծված կացությունը, հայ-թուրքական պատերազմը, Սարդարապատի և մյուս հերոսամարտերի նշանակությունը։

Արտացոլվել են նաև Հայաստանի Հանրապետության հռչակման, հասարակական-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման, հայ-վրացական ժամանակային վեճին, Ղարաբաղին, Զանգեզուրին, Գողթնին (Նախիջևան) վերաբերող խնդիրները։

Գրքի վերջում զետեղված են Հայաստանի Հանրապետության խորհրդարանի որոշումները։

0503020913
701 (01) — 98 չհայտարարված

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-540-01452-9
© Ս. Վրացյան, 1998

ԳԼՈՒԽ Ա
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԺԹ դարի վերջերին մրցակցությունն ու հակամարտությունը եվրոպական մեծ պետությունների միջև, շահաստանների և գաղութների շուրջ, հասան ծայրահեղ աստիճանի։ Հաջորդ դարի սկիզբը արդեն ձևակերպված էին եվրոպական մեծ պետությունների երկու խմբակցությունները՝ այսպես կոչված Եռյակ դաշնակցությունը հանձին Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի և Եռյակ զինակցությունը՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Իտալիա։ Ամերիկայի Միացյալ Նահանգները դեռ անմիջական դերակատար չէին Համաշխարհային մեծ քաղաքականության մեջ և մեկուսացած երկու օվկիանոսների միջև, հետևում էին Մոնրոյի իրենց ավանդական վարդապետությանը, թեև, Հին Աշխարհի վեճերն ու պայքարները հետզհետե մոտենում էին և իրենց ափերին։

Երկու խմբակցությունները՝ Եռյակ դաշնակցություն և Եռյակ զինակցություն, իրենց աշխարհակալական ձգտումներով բախվում էին երկրագնդի գրեթե բոլոր մասերում և խելահեղ թափով զինվում՝ ուժով լուծելու համար այն հարցերը, որոնց առջև դիվանագիտությունը անզոր է։ Խաղաղասեր, ազատական տարրերը և ընկերվարական կուսակցությունները իզուր աշխատում էին պատերազմի հրդեհի առաջը առնել, աշխարհը ակնհայտ կերպով գնում էր դեպի պատերազմ, թեև հանրային կարծիքը, ինչպես և կառավարական շրջանակները ճիգ էին գործ դնում հեռացնելու այդ վայրկյանը։

Եվ ահա, ինչպես կայծակը անամպ երկնքից, 1914 թվի ամառը, պայթեց համաշխարհային պատերազմը։ Ազգեր ելան ազգերի դեմ։ Աշխարհը իրար խառնվեց։ Եվ քաղաքակրթության զարգացումն ու մարդկության առաջադիմությունը կանգ առան երկար ժամանակով։

Պատերազմը ահավոր փորձություն եղավ ամբողջ երկրագնդի, մանավանդ, հայ ժողովրդի համար։ Նա բռնկվեց այն պահին, երբ հայ-թուրքական հարաբերությունների լարումը հասել էր ծայրահեղ աստիճանի, երբ հայը Թուրքիայում նորից դարձել էր «խային» ազգ, «պետական դավաճան», «կույր գործիք մեծ պետությունների ձեռքին»...

Նոր էր ստորագրվել բարենորոգումների ծրագիրը։ Օսմանյան սահմանադրության հաջորդող հայ-թուրքական համերաշխության մեղրամիսը կարճ տևեց։ Կիլիկիայի ջարդը, ներքին ճնշումները, կառավարության կասկածոտ վերաբերումը դեպի հայ տարրը, հողային հայակործան քա-

զաքականությունը Արևելյան վիլայեթներում, Թուրք ազգայնամոլության հարաճուն զարգացումը։ ԻԹԹիհատի ծոցում՝ այս և ուրիշ բազմաթիվ պատճառներ վերջնապես համոզեցին հայերին, որ առանց արտաքին օգնության, միա՛յն թուրքական միջոցներով անկարելի է ձեռք բերել կյանքի բարելավում։ Եվ նորից ամենքի հայացքը ուղղվեց դուրս՝ դեպի «մարդասեր Եվրոպան»։

Սահմանադրության օրերին ամբողջ թուրքահայությունը, չնչին բացառությամբ, կանգնել էր օսմանյան պետականության հողի վրա։ Հ. Հ. Դաշնակցությունը, հայ ժողովրդի մեծագույն կուսակցությունը՝ գործակցելով ԻԹԹիհատի հետ՝ ձգտում էր իրականացնել համապետական նպատակներ։ Երեսուն տարիների հեղափոխական մաքառումներից հետո, հայը անվերապահ կերպով դառնում էր օսմանյան քաղաքացի, հավատարիմ տարբ օսմանյան «վերածնվող հայրենիքի»։ Ի՞նչ ավելի հարմար ռափթ թուրք գործիչների համար՝ օգտագործելու հայ ժողովրդի այս ինքնաբուխ զգացմունքները։

Մարտյան հետաշրջական օրերին հայ ժողովուրդը, մի մարդու պես, ոտքի կանգնեց՝ պաշտպանելու համար հասարակաց հայրենիքն ու նոր վարչաձևը։ Եվ երիտասարդ թուրքերի հաղթանակը զգալի չափով արդյունք էր նաև հայերի օժանդակության։

Երբ Իտալիան հարձակվեց Տրիպոլիի վրա, թուրքահայ ժողովուրդը, հակառակ Ադանայի արյունոտ հիշատակների, նորից կառավարության կողքին էր՝ անվարան նպաստելով երկրի պաշտպանության գործին։ Պետության սպառնացող վտանգը հայությունն ընդունում էր վտանգ և իրեն համար։

Եվ, սակայն, թուրքերը ո՛չ միայն չգնահատեցին հայ ժողովրդի այս անկեղծ զգացմունքները, ո՛չ միայն չաշխատեցին նրա մեջ խորացնելու և ամրացնելու օսմանյան պետականության գաղափարը, այլ, կարծես դիտավորյալ կերպով, թափեցին ամեն ճիգ ու ջանք՝ սառեցնելու համար հայերի նման վերաբերումը, հետ մղելու նրանց իրենցից ու Թուրքիայից։ Երբ 1912-ին սկսվեց թուրք-բալկանյան պատերազմը, հայերի մեջ այլևս հավատ ու խանդավառություն չէր մնացել։ Պատրիարքարանը, կուսակցությունները, հանրային կարծիքը, բովանդա՛կ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտության հայերի վիճակը չի բարեփոխվի։ Այս տրամադրության հետևանքով էր, որ, օրինակ, պատերազմի ընթացքում բուլղարահայությունը կազմակերպեց Թուրքիայի դեմ Անդրանիկի կամավորական խումբը։

Նույն տրամադրության հետևանքով ծնունդ առավ նաև կաթողիկոսական պատվիրակությունը Եվրոպայում՝ Պողոս Նուբարի գլխավորությամբ։ Հայերը նորից բռնեցին քաղաքական այն ուղին, որով ընթացել էին Բեռլինի վեհաժողովից ի վեր՝ փշոտ, վտանգավոր, թե՛ հայերի և թե՛ թուրքերի համար հավասարապես փորձություններով հարուստ ուղի։

Սակայն, ուրիշ հեռանկար չէր տեսնվում. «վերածնվող» Թուրքիան էլ, ինչպես առաջներում սուլթանական Թուրքիան, հայերին մղում էր դեպի ա՛յդ ուղին։

Եվ այս անգամ, կարծես հաջողությունը ժպտում էր հայերին. մեծ պետությունների կամ, ավելի ճիշտ, ռուս-գերմանական երկար ու տաղտկալի վեճերից ու սակարկություններից հետո, որոնց ընթացքին Գերմանիան ոգի ի բուն պաշտպանում էր Թուրքերին, իսկ Ռուսաստանը պնդում էր հայկական բարենորոգումների վրա, վերջ ի վերջո, 1914 թ. հունվարի 26-ին, մեծ-վեզիր Մայիդ-Հալիմի և Ռուսաստանի Պոլսի գործակատար Գուլկևիչի միջև ստորագրվեց բարենորոգումների ծրագիրը։ Գերմանիան հրաժարվեց դնել իր ստորագրությունը այդ թղթի տակ։

Համաձայն այդ ծրագրի հայկական վեց վիլայեթներին պիտի կցվեր Տրապիզոնի նահանգը ևս և այդ ամբողջ շրջանը պիտի բաժանվեր երկու ընդհանուր քննչությունների, կամ, ինչպես սիրում էին ասել հայերը, մարզպանությունների։ Առաջին շրջանը պիտի բաղկանար Էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի վիլայեթներից, երկրորդը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Տիգրանակերտի։ Ընդհանուր քննիչները պետք է լինեին եվրոպացիներ։ Նրանց նշանակումը կատարելու էր Բ Դուռը՝ համաձայն մեծ պետությունների առաջարկելիք թեկնածուների։

Ընդհանուր քննիչների հակակշռին պիտի ենթարկվեին շրջանի վարչությունը, արդարադատությունը, ոստիկանությունն ու ժանդարմերիան։ Ի հարկին, տեղական զորքերն ևս պիտի տրամադրվեին նրանց՝ հանրային անդորրության պահպանության համար։ Նրանք իրավունք պիտի ունենային նշանակել, հեռացնել և դատի ենթարկել պաշտոնյաներին. բարձր պաշտոնյաներ նշանակելիս պիտի առնեին սուլթանի հավանությունը։ Հողային վեճերը պիտի լուծվեին քննիչների անմիջական հսկողության տակ։ Օրենքներն ու կառավարական կարգադրությունները պիտի հրատարակվեին տեղական լեզուներով, և ազգաբնակչությունը իրավունք պիտի ունենար գործածել իր լեզուն վարչության ու դատարանի մեջ։ Յուրաքանչյուր ազգ պետական բյուջեից կրթական գործի համար պիտի ստանար որոշ գումար՝ համեմատ իր վճարած հարկի, այլև իրավունք պիտի ունենար նույն նպատակով նշանակել ազգային տուրք։ Զինվորական ծառայությունը պիտի կատարվեր իր վայրում։ Համիդիե գնդերը պիտի ջնջվեին։ Ժողովուրդների, կրոնների և լեզուների իրական փոխհարաբերությունները պիտի ճշտվեին մարդահամարով, որը պիտի կատարվեր ընդհանուր քննիչների հսկողության տակ։ Վիլայեթներում գոյություն պիտի ունենային ժողովրդից ընտրված ընդհանուր և վարչական խորհուրդներ։

Այսպիսով, հուն. 26-ի բարենորոգումների ծրագիրը Հայաստանում հաստատում էր համարյա նույն դրությունը, ինչ որ կար արդեն Լիբանանում, ա՛յն հիմնական տարբերությամբ, որ Լիբանանի ընդհանուր նա-

հանգամանքը թուրքահպատակ էր, մինչդեռ այստեղ՝ պետք է լիներին եվրոպացիներ*։

Այս ծրագիրը լիովին չէր համապատասխանում հայերի բաղձանքներին։ Նրանք դժգոհ էին հայկական նահանգները երկու շրջանի բաժանելուց։ Բացի այդ, նրանց շատ էր անհանգստացնում ծրագրի շուրջ հարուցված հակամարտությունն ու թուրք կառավարության բռնած բացասական դիրքը, մի փաստ, որի վրա մատնանշում էր և Գուլկևիչը իր կառավարության ներկայացրած հաղորդագրության մեջ։ «Հայկական հարցի մասին Բարձր Դռան հետ համաձայնության հանգելու համար, հեռագրում էր նա ծրագրի ստորագրության հաջորդ օրը, հուն. 27-ին, կայսերական դեսպանին պետք եղավ հաղթահարել մեծ դժվարություններ։ Մի կողմից նա ստիպված էր հաշվի առնել հայերի բնական ձգտումը, ըստ կարելվույն, ավելի լայն բարենորոգումներ ստանալու, մյուս կողմից՝ Բ Դռան համառ դիմադրությունը, որով նա աշխատում էր ի չիք դարձնել առաջարկված բարենորոգումները և այդ նպատակով ծառանում էր մեր նախագծի բոլոր էական կետերի դեմ։ Իսկ ինչ վերաբերում է Գերմանիային, նա մեզ հետ հայկական հարցի մասին համաձայնության մտավ երկու նպատակով. նախ՝ որպեսզի կարողանա ասել Բ Դռանը, որ ինքը Ռուսաստանին հետ է պահել լայն բարենորոգումներից՝ տալով իր համաձայնությունը Թուրքիայի համար վտանգ չներկայացնող համեստ ծրագրի. երկրորդ՝ որպեսզի ձեռք բերի հայերի համակրանքը, հայերի, որոնք շատ թանկ են Գերմանիայի համար, իբրև մեծամասնություն Կիլիկիայում, որը Գերմանիան համարում է իր ազդեցության շրջան։ Այդ պատճառով, Գերմանիայի վարմունքը, ամբողջ ժամանակ, աչքի էր զարնում անկեղծության բացակայությամբ և նրա աջակցությունն ուներ զուտ ցուցական բնույթ (հայերի համար)։ Իրապես, գերման դիվանագետները թուրքերի հավատարիմ խորհրդատուներն էին»**։

Այս բոլորը տեսնում էին և հայերը, և նրանցից խորատեսները լուրջ անհանգստությամբ էին նայում ապագային։ Բայց լայն հասարակությունը և, մանավանդ, բարենորոգումների աշխատանքը տանող շրջանները՝ Փարիզից մինչև Էջմիածին՝ համակված էին հաղթողի գոհունակությամբ։

1914 թվի գարունը և ամառը անցան բարենորոգումների գործի կազմակերպման աշխատանքներով։ Պետությունների առաջարկած թեկնածուներից, Բ. Դուռը ապր. 2 (15)-ին ընդհանուր քննիչներ ընտրեց հոլանդացի Վեստենենկին և նորվեգացի Հոֆին ու մայիսի 10 (23)-ին ստորագրեց նրանց հետ վերջնական պայմանը։ Եվ նախնական անհրաժեշտ

* Сборник дипломатических документов. Реформы в Армении. Изд. министерства иностр. дел., Петроград, 1915.

** Նույն տեղը, էջ 173—174։

աշխատանքները լրացնելուց հետո, Հոֆը մեկնեց իր պաշտոնատեղին՝ Վան. կարճ ժամանակից հետո պիտի մեկներ և Վեստենենկը։

Ճիշտ է, թուրք կառավարությունը և Իթթիհատը չէին ծածկում իրենց դժգոհությունը հայերից և հակառակությունը բարենորոգումների ծրագրից։ Ճիշտ է, Ճանապարհին և Վանում թուրք իշխանություններն ու հասարակությունը թշնամանքով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում թուրք պաշտոնյաները նույնիսկ հրաժարվեցին նրան ենթարկվելուց, բայց և այնպես «բարենորոգումները սկսել էին գործադրվել», իսկ այս ինքնին արդեն կարևոր նվաճում էր համարվում։ Պատճառ չկար կասկածելու, որ, վերջ ի վերջո, թուրքերը տեղի կտան, և բարենորոգումները կմտնեն ուժի մեջ։ Հայ ժողովրդի առջև բացվում էին նոր, անսահման, հրապուրիչ հորիզոններ...

Այսպես էր դրությունը, երբ հուլիսին, Էրզրումում, բացվեց Հ. Հ. Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը։ Մեծ կարևորություն էր ընծայվում այդ ժողովին ոչ միայն դաշնակցականների, այլև դրսի խավերի կողմից. բարենորոգումների գործադրության նախօրյակին, հայրենի երկրի կենտրոններից մեկում գումարված հայ կյանքին գույն և բովանդակություն տվող կուսակցության ընդհանուր ժողովը, անկասկած, ունենալու էր խոշոր նշանակություն, մասնավորապես բնագավառի համար։ Եվ, հիրավի, Հ. Հ. Դ. 8-րդ ընդհանուր ժողովը իր ուշադրության և աշխատանքի գլխավոր մասը նվիրեց երկրին՝ նրա ներքին կազմակերպությանը, հողային խնդրին, արտագաղթին, կառավարության վարած հակահայ քաղաքականությանը, ինքնապաշտպանությանը, բարենորոգումներին և այլն։

Վերջին հարցի մասին ընդունվեց հետևյալ բանաձևը.

«Ընդհանուր ժողովը՝ լսելով բարենորոգումների մասին տրված զեկուցումը և վիճաբանության ենթարկելով, առհասարակ, կուսակցության բարենորոգչական գործունեությունը, դիվանագիտական և քաղաքական ճանապարհով, ընդունեց, որ կուսակցությունը սկզբունքով կարող է որդեգրել բարենորոգչական այդ գործունեությունը, իբրև նպատակահարմար, սակայն, պարտք կդնի ձեռնհաս մարմինների վրա ավելի քիչ տարվել դիվանագիտական ուղղությամբ՝ միշտ շարունակելով գերակշռությունը տալ կազմակերպական իրական ուժի զարգացմանը։

Գալով 1914 թ. հունվարի 26-ի բարենորոգմանց ծրագրին, այն ձևով, որ ընդունված է Պոլսո եվրոպական դեսպանների, թուրք կառավարության և ընդհանուր քննիչների կողմե, կնկատե զայն իր ամբողջության մեջ անբավարար և օգտակար չի գտներ, որ նույն ծրագրի գործադրության ժամանակ կազմակերպությունը կուսակցորեն աջակցություն ցույց տա և այդպիսով որոշ պատասխանատվություն ստանձնե. կթելադրե միջամտության գործք թողուլ ազգային պաշտոնական մարմիններու։

Ասոր հետ միասին, չբացասելով հանդերձ, որ հիշյալ բարենորոգմանց ծրագիրը կպարունակե կարգ մը կետեր՝ համապատասխան մեր նվազագույն պահանջներուն, և որ, իրոք, կառավարությունը կշանա իր բոլոր հնարավոր միջոցներով ջլատել նույնիսկ այդ համեստ ծրագրի իրագործումը, ինչպես նախապես առաջադրված բարենորոգչական սկզբունքները, ընդհանուր ժողովը կհրահանգե, որ կուսակցությունը, անհրաժեշտության պարագային, ընդդիմանա կառավարության կողմե նույն ծրագրին իրագործման դեմ հանված խափանարար միջոցներուն և պաշտպանե հայ ժողովուրդին իրավունքները»։

Ինչպես տեսնում ենք, առանձին խանդավառություն չկա դեպի բարենորոգումների ծրագիրն ու դիվանագիտական գործունեությունը։ Ընդհանուր ժողովը անհրաժեշտ էր համարում նվիրվել ներքին աշխատանքի ու սեփական ուժերի կազմակերպման։

Օրակարգի հարցերը սպառված չէին դեռ, երբ ստացվեց եվրոպական պատերազմի լուրը, որը արտակարգ եռուզեռ առաջ բերեց Թուրք զեկավար շրջաններում, որոնց առաջին գործն եղավ, իհարկե, բարենորոգումների խափանումը։ Ընդհանուր քննիչ Հոֆը անմիջապես մեկնեց Վանից։ Թուրքիայում հայտարարվեց ընդհանուր զորահավաք, և ամեն կողմ սկսվեցին տեսնվել շտապ նախապատրաստություններ։ Թուրքիան սկսեց տենդագին պատրաստվել պատերազմի։

Այս ընդհանուր կացության հանդեպ, այլև աչքի առաջ ունենալով Թուրք իշխանությունների կասկածոտ ու բծախնդիր վերաբերումը՝ Հ. Հ. Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը և ցրվեց՝ նախօրոք քննության առնելով Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հավանականությունը և այդ առթիվ որոշելով հրահանգել իր մարմիններին և ընկերներին մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ և կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականությունները։ Միաժամանակ, ընդհանուր ժողովը ընտրեց 7 հոգիանոց հատուկ մի մարմին, որին և հանձնվեց, պատերազմի դեպքում, լուծել ծագելիք բոլոր գործնական խնդիրները։ Իբրև ընդհանուր հրահանգ, որոշվեց ամեն գնով Թուրքիային հետ պահել պատերազմին մասնակցելուց՝ նկատելով, որ նման քայլը կործանարար կլինի ո՛չ միայն հայ ժողովրդի, այլև օսմանյան պետության համար։

Ընդհանուր ժողովն արդեն փակված էր, երբ Էրզրում հասան Իթթիհատի լիազորներ Բեհաեդդին Շաքիրը և Նաջի բեյը՝ իրենց հետ բերելով մի քանի տասնյակ կովկասցի և պարսիկ-ազրբեջանցի գործակալներ ու մարտիկներ։ Նրանց նպատակն էր կազմակերպել հակառուս քարոզչություն ու պաշտպան Կովկասում և Հյուսիսային Պարսկաստանում, այլև պատերազմական նախապատրաստություններ տեսնել Արևելյան նահանգներում։ Նրանց հանձնարարված էր նաև բանակցություններ վարել

Հ. Հ. Դ. ընդհանուր ժողովի հետ Թուրքիայի դեմ մեկ ճակատ ստեղծելու համար։

Իթթիհատի լիազորները առաջարկեցին Հ. Հ. Դաշնակցության ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-Թուրքական պատերազմի ընթացքում միանան Թուրքերին՝ աշխատելով ռուսների դեմ ապրստամբեցնել կովկասահայերին։ Նրանք պնդում էին, որ վրացիք ու կովկասյան Թուրքերը արդեն տվել են իրենց համաձայնությունը և սկսել են պատրաստվել ապստամբության։ Եվ, հիրավի, Իթթիհատական լիազորների հետ Էրզրում էին եկել և կովկասցի Թուրքեր, որոնք հավաստիացնում էին, թե գնում են Կովկաս՝ խռովություններ և ապստամբություններ առաջ բերելու է, պատերազմի պարագայում, ռուս բանակի թիկունքը կազմալուծելու նպատակով։

Բեհաեդդին Շաքիրն ու Նաջի բեյը համարում էին վայրկյանը հասած, երբ կովկասյան ժողովուրդները պետք է ազատվեն ռուսական լծից։ Նրանց ասելով՝ Թուրքիան մտադիր չէ գրավելու Կովկասը, այլ ձգտում է վերածել Թուրքական հովանավորության տակ գտնվող ինքնավար պետության, որ պատվար լինի իր և ռուսների միջև, մասնավորապես, հայերին խոստանում էին ստեղծել հայկական ինքնավար մի իշխանություն ռուսահայ և նաև Թուրքահայ որոշ հողամասերից։ Ընդհակառակը, հայերի չմիանալը վրացիներին և կովկասյան Թուրքերին կարող է առաջ բերել ծանր հետևանքներ։

Հ. Հ. Դաշնակցության ներկայացուցիչները հայտնեցին, որ իրենց կտրականապես դեմ են Թուրքիայի պատերազմի խառնվելուն, որովհետև համոզված են, որ վերջնական հաղթանակը պատկանելու է դաշնակիցներին, իսկ այդ դեպքում պատերազմող կողմ դարձած Թուրքիան կարող է շարաշար տուժել։ Նրանք ապացուցում էին, որ Թուրքիայի ջահերը պահանջում են պահպանել չեզոքություն. չեզոք Թուրքիան անհամեմատ ավելի շատ կշահի, քան պատերազմող Թուրքիան։ Պատերազմի մասնակցել՝ նշանակում է երկիրը նետել աննեղելի արկածախնդրության գիրկը։

Իթթիհատի լիազորները, սակայն, անդրդվելի էին իրենց առաջարկի վրա։ Նրանց համար պատերազմի հարցը որոշված էր. հանցանք կլիներ ձեռքից փախցնել հարմար առիթը և մեկ անգամ ընդմիշտ շազատվել ռուսական մղձավանջից։ Գերմանիայի հաղթությունը կասկածի առարկա չէր նրանց համար, իսկ հաղթական Գերմանիա՝ նշանակում էր հաղթական Թուրքիա։ Նրանք համոզում էին հայերին ևս միանալ իրենց և ձեռք ձեռքի տված կռվել հասարակաց թշնամու դեմ։ Բայց Դաշնակցության ներկայացուցիչները հայտարարեցին, որ եթե, այնուամենայնիվ, իրենց կամքի հակառակ, պատերազմը պայթի, Դաշնակցության Թուրքիոտված բոլոր անդամները լրիվ կերպով կկատարեն իրենց պարտքը հանդեպ պետության։ Ինչ վերաբերվում է կովկասահայերին՝ Դաշնակ-

ցությունը չի կարող հանձնառություն սպանձնել նրանց ապստամբեցնելու, մանավանդ որ թուրքերը իրենց վերջին հինգ տարվա քաղաքականությամբ թուրքահայերի վերաբերմամբ այնպիսի վիճակ չստեղծեցին, որ կարողանային գրավել ռուսահայերի համակրանքը։

Այս պատասխանը թուրքերի տուածը չէր։ Նրանք պահանջում էին ավելի շոշափելի ապացույցներ «օսմանյան հայրենասիրության», մանավանդ բարենորոգումների ծրագրի առթիվ իրենց և հայերի միջև առաջ եկած պաղությունից հետո։ Հայերը չէին կարող խոստանալ ավելին. հոգեբանորեն, մարդկայնորեն հնարավոր չէր այդ։ Ո՛չ միայն կովկասահայերին ապստամբեցնել, թուրքահայերին իսկ դժվար էր ոգևորել «օսմանյան հայրենասիրությամբ»՝ այնքա՜ն վարկաբեկված էր թուրքական ռեժիմը հայ ժողովրդի աչքին։

Ընդհակառակը, պատերազմի պարագայում, ավելի հավանական էր հակաթուրք զգացմունքների պոռթկումը։ Այդպես էլ պատահեց։ Դեռ թուրք-ռուսական պատերազմը չսկսված Կովկասում ծայր տվեց ուժեղ, բառի իսկական իմաստով տարերային կամավորական շարժում, որը կլանեց հայ ժողովրդի համարյա բոլոր խավերն ու կազմակերպությունները։ Կարճ ժամանակամիջոցում կազմակերպվեցին 4 կամավորական խմբեր, որոնց մեջ մտնել փափագողների թիվը պահանջվածից մի քանի անգամ ավելի էր։ Ասպարեզ եկան հայդուկային կռիվների մեջ թրծված խմբապետներ՝ Անդրանիկ, Վարդան, Քեռի, Համազասպ, Դրո, Խեչո և շատ ուրիշներ, որոնք կանգնեցին խմբերի գլուխը։ Կամավորական շարժման նախաձեռնող և ընդհանուր ղեկավար եղավ Ազգային բյուրոն։ Հ. Հ. Դաշնակցության կովկասյան Շրջանային ժողովը, 1914 սեպտեմբերին, յուրացրեց և գործոն դեր կատարեց կամավորական շարժման գործադրության մեջ (Ա.)։ Զուտ վարչական-կազմակերպական գործը ամփոփվեց Կարգադրիչ մարմնի ձեռքը։ Շարժման քաղաքական նշանաբանն էր՝ «Ինքնավարություն 6 վիլայեթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզոր հովանավորության տակ»։ Ռուս դիվանագիտությունն ու զորահրամանատարությունը քաջալերում էին այս տրամադրությունը և ուղղակի կամ անուղղակի կերպով զգացնել էին տալիս, որ հայերի բաղձանքները կկատարվեն լիովին։ Այդ իմաստով արտահայտվեց ցարը Ամենայն Հայոց կաթողիկոսին, ընդունելության միջոցին Թիֆլիսում։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը նույն հավաստիացումները տվեց կաթողիկոսին առանձին մի գրությամբ։

Կամավորական խմբերը սկզբում 4 էին՝ Անդրանիկի, Քեռիի, Դրոյի, Համազասպի, որոնց մեջ մտնում էին մոտ 2500 կամավորներ։ Ապա՝ ավելացավ մի նոր խումբ՝ գնդ. Զամփոլադյանի հրամանատարության տակ, Ազգային բյուրոյից անկախ։ 1915-ի գարնանը Քեռիի, Դրոյի և Համազասպի խմբերը միացվեցին Արարատյան ջոկատի մեջ, Վարդանի ընդհանուր հրամանատարության ներքո, որ Վանի գրավման գլխավոր

ուժը հանդիսացան։ Նույն 1915-ին կազմակերպվեց Իշխանի՝ Հովսեփ Արղությանի խումբը։ Ի վերջո, հայ կամավորական խմբերի թիվը հասավ յոթի։ 1916 թվին այդ խմբերը վերակազմվեցին հայկական հրացանաձիգ գնդերի, սպաների հրամանատարության տակ և մտցվեցին ռուսական կանոնավոր բանակի մեջ։ Ռուս քաղաքականությունը փոխվում էր հայերի վերաբերմամբ, և հայ կամավորական խմբերը այլևս պետք չէին։

Կամավորական խմբեր կազմակերպելով՝ Կովկասի հայ ղեկավար շրջանները նպատակ ունեին՝ մի կողմից մասնակցելով պատերազմին Թուրքիայի դեմ՝ արագացնել թուրքահայերի ազատությունը, մյուս կողմից՝ զինված ուժեր ունենալով ռազմաճակատի առաջավոր մասերում՝ նպաստել այնտեղի հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին։ Ենթադրվում էր, որ կամավորական խմբերը արագ շարժումներով կարող էին առաջն առնել կամ մեղմացնել կոտորածները։

Իրականության մեջ, կամավորական խմբերը խաղացին, գլխավորապես, զինվորական դեր և, այս տեսակետից, անգնահատելի ծառայություն հասցրին ռուս բանակին։ Նրանք ո՛չ միայն առաջապահ-հետախուզական պաշտոններ էին կատարում, այլև մասնակցում էին ընդհանուր ճակատամարտերի կամ լուծում էին ռազմական ուրույն խնդիրներ։ Կովկասյան ռուս բանակի տարեգրության մեջ հայ կամավորական խմբերն ունեն իրենց պատվավոր տեղը թե՛ կատարած հերոսական գործերով և թե՛ տված բազմաթիվ ու թանկագին զոհերով։ Բացի հարյուրավոր շարքային մարտիկներից, պատերազմի դաշտում ընկան շատ քաջ և անվանի խմբապետներ, ինչպես Քեռին ու Խեչոն*։ Խմբապետներից ու կամավորներից շատերը վարձատրվեցին քաջության նշաններով։ Մի ահագին թիվ հայ երիտասարդների խմբերի մեջ ձեռք բերեց զինվորական փորձառություն և հետագայում, մանավանդ, Հայաստանի անկախության շրջանում, մեծ չափով օգտակար եղավ հայ ժողովրդի և հանրապետության պաշտպանության գործին**։

Կամավորական խմբերը, սակայն, մի կաթիլ էին համեմատած այն ահագին օժանդակության հետ, որ հայ ժողովուրդը բերեց Ռուսաստանին պատերազմի ընթացքում։ Ըստ պաշտոնական հաշվի, հայերի

* Հայ կամավորական շարժումը դեռ սպասում է իր պատմագրին։ Նրա մասին որոշ գաղափար է տալիս զոր. Գ. Ղորղանյանի գիրքը՝ «La Participation des Arméniens à la Guerre Mondiale sur le Front du Caucase (1914—1918)», Paris, 1927, որ հրատարակվեց նաև հայերեն լեզվով «Հայրենիք» ամսագրի 1926—27 թթ. համարներում։

** Այդ օրերին, դեկտեմբերի առաջին կեսին, Կովկաս այցելեց ցար Նիկոլայ Բ և ցնծությամբ ընդունվեց մասնավորապես Թիֆլիսի հայերի կողմից։ Ցարը, իրեն ներկայացնող Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի միջոցով հայտնեց, թե Ռուսաստանը, պատերազմից հետո խոստանում է ապահովել Թուրքահայաստանի ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո։

18 %-ը զինվոր էր զանազան ռազմաճակատներում։ Ուրիշ խոսքով, 2 միլիոնանոց ռուսահայությունը ավելի քան 250 000 զինվոր տվեց ռուս բանակին։ Բացի այդ, նա իր ուժերը հասցրեց գերագույն լարման և թիկունքում՝ մասնակցելով ռազմաճակատի օգնության հատկացվող բազմապիսի ձեռնարկների։ Եվ այդ ամենը կատարվում էր մեկ նպատակով. Թուրքահայկական դատի լուծման, Թուրքահայաստանի ազատագրության համար (Բ.)։

Պատերազմի սկզբին հայկական շրջաններում տիրում էր ընդհանուր համոզում. մի քանի ամսվա մեջ ռուսները կգրավեն Վանն ու Էրզրումը, և հայկական շրջանները կազատվեն Թուրքական լծից։ «Ինչի՞ս պետք են կոշիկ ու մուշտակ,— ասում էր Անդրանիկը պատերազմի սկզբին,— զինվորին կուտամ շարուխ ու հալվա՝ և հինգ օրեն Վան եմ...»

Այս հավատն էր, անշուշտ, պատճառ այն համազգային խանդավառության, որ առաջ բերեց կամավորական շարժումը։ Սակայն, օրեր ու ամիսներ անցան, և հայկական նահանգները մնացին չգրավված։ Ավելին դեռ. 1914-ի դեկտեմբերին քիչ մնաց Ռուսահայաստանի մի մասն էլ վտա գնար. Էնվերի գնդերը հասել էին արդեն Սարիղամիշի բարձունքները, և Կովկասի մայրաքաղաքը մատնվել էր խուճապի։ Փոխարքան պատրաստվում էր փախչելու դեպի լեռների ա՛յն կողմը, և կովկասյան թրքությունը ցնծության մեջ էր (Գ.)։

Հրաշքը միայն, ավելի ճիշտ, արտակարգ ձմեռը, փրկեց Կովկասը Թուրքական ներխուժումից։ Ջարդված Սարիղամիշի տակ՝ Էնվերն իր զայրույթի բովանդակ թույնը թափեց Թուրքահայ ժողովրդի գլխին։ Հայերի բնաջնջման դավը վաղուց էր նյութված Իթթիհատի որջում։ Առիթ էր հարկավոր՝ ահա և առիթը. հայերն էին Թուրքերի պարտության պատճառը։ Հարկավոր էր մաքրել ռազմաբեմը այդ վնասակար տարրից։ Եվ ահա գործադրության է դրվում տեղահանության ծրագիրը։ Պրուսական ու բելգիական ճակատներում տեղահանություն նշանակում էր տնտեսական քայքայում, Թուրքիայում՝ ջարդ ու կոտորած։ Եվ 1915 թ. ապրիլից սկսած, ամիսներ շարունակ, Թուրքերը զբաղվեցին հայերի ծրագրված բնաջնջումով։ Ապրիլի 11-ին զանգվածորեն ձերբակալվելով՝ դեպի մահ քշվեց պոլսահայ մտավորականությունը։ Ապա՝ գյուղեր ու քաղաքներ դատարկվեցին և ավարի ենթարկվեցին։ Մի միլիոնից ավելի ժողովուրդ մորթոտվեց կամ մեռավ տեղահանության ճանապարհին և արաբական անապատների ավազներում։ Դարերով կուտակված անհաշիվ հարստություն, տնտեսական ու մշակութային թանկագին նյութեր կորստյան մատնվեցին (Դ.)։ Մի ամբողջ քաղաքակիրթ ժողովուրդ խաչ հանվեց ու նահատակվեց վայրագորեն՝ աշխարհի աչքի առջև. ոչ ոք չմբոստացավ ու չմիջամտեց։ Եվ ո՞վ կարող էր, ո՞վ սիրտ ու կամք ուներ միջամտելու, երկրագունդը խեղդվում էր արյան մեջ։ Մարդկության խիղճը քար էր կտրել...

Թուրքահայկական խնդիրը լուծվում էր Թուրքերի ձեռքով։ Թուրքահայաստան առանց հայերի՝ այս համապատասխանում էր և ռուսների հաշիվներին։ Մինչ Թուրքերը կլանված էին հայկական տեղահանություններով ու ջարդերով, այստեղ ռուս զորավարները կադրիլ էին խաղում Թուրքական ռազմաբեմում։ Մեկ քայլ առաջ, երկու քայլ հետ՝ ռուս բանակը անվերջ առաջխաղացում և նահանջ էր անում, որոնց ընթացքում իսպառ քար ու քանդ եղան և իթթիհատական դահիճներից ազատ մնացած Ալաշկերտն ու Վասպուրականը։ Դիտում կա՞ր այդ նահանջների մեջ, թե՞ նրանք իսկապես ռազմագիտական անհրաժեշտություն էին՝ միևնույնը չէ՞ր հայ ժողովրդի համար։ Նա գաղթում, տնաքանդ էր լինում և ամեն գաղթի հետ կորցնում էր և՛ իր տնտեսական ու բարոյական կոթողը, և՛ մարդկային հավաքական կերպարանքը։

Ռուսաստանի հայությունը անխտիր բոլոր կազմակերպություններով իր բովանդակ ուժերը լարել էր մեղմացնելու համար համազգային այս աղետը։ Առաջին հերթին նյութական և բարոյական ճիգ էր թափվում փրկելու համար պատերազմի թատերաբեմ դարձած վայրերից փախած գաղթականների ֆիզիկական գոյությունը, բայց նույնչափ հուզում էին և ազգային-քաղաքական հարցերը. ի՞նչ էր սպասվում և ի՞նչ դուրս եկավ...

1916 թ. սկզբներին, միաժամանակ, թե Թիֆլիսում, Ազգային բյուրոյի շրջանակում, և թե Պետրոգրադի, Մոսկվայի հայության մեջ, զգացվեց համազգային խորհրդաժողով գումարելու պահանջը, քննելու համար օրվա խնդիրները և նոր կացության համապատասխան քաղաքական ուղեգիծ որոշելու։ Ժողովի գումարման նախաձեռնությունը ստանձնեց Մոսկվայի Հայկական կոմիտեն իր կորովի նախագահ Ստ. Մամիկոնյանի գլխավորությամբ։

Երկար բանակցություններից հետո կառավարությունը արտոնեց հայկական խորհրդաժողովի գումարումը, Կովկասից հեռու, Պետրոգրադում, և այն պայմանով, որ զուտ գաղթականների օգնության հարցից դուրս ազգային կամ քաղաքական բնույթ կրող որևէ խնդիր չդրվի ժողովի օրակարգի վրա։

Պետրոգրադի խորհրդաժողովը գումարվեց 1916 թ. մայիսին։ Ժողովին մասնակցում էին գաղթականական գործերով զբաղվող կազմակերպությունների և Ազգային բյուրոյի ներկայացուցիչները, Պետական դումայի հայ անդամները և հրավերով անհատ գործիչներ Թիֆլիսից ու Կովկասի մյուս հայկական կենտրոններից, Պետրոգրադից, Մոսկվայից, Նոր Նախիջևանից և այլն։ Բազմանդամ և մեծաղմուկ ժողով էր, որ, սակայն, լավ կազմակերպված չէր և, կարելի է ասել, շոշափելի ոչ մի հետևանք չունեցավ։

Խորհրդաժողովին նախագահում էր Մոսկվայի Հայկական կոմիտեի նախագահ Ստ. Մամիկոնյանը, որ և պատասխանատու էր կառավարու-

թյան առջև։ Ժողովականներ էին, ի միջի այլոց, Պետրոգրադի Հայկական կոմիտեն իր ամբողջ կազմով՝ պրոֆ. Ն. Ադոնց, պրոֆ. Վարդանյան, Ասրիբեգյան, Պետական դումայի անդամներ՝ Մ. Պապաջանյան, Մ. Աջեմյան, Մոսկվայի կոմիտեն նույնպես գրեթե ամբողջ կազմով՝ Ս. Մամիկոնյան, պրոֆ. Ճիվելեկյան, Իվ. Ամիրյան, Հ. Թադևոսյան և այլն, Ազգային բյուրոյից փոխնախագահ՝ Հ. Խունունց, Ն. Աղբալյան, Խ. Կարճիկյան, Ս. Վրացյան և ուրիշներ, Բարեգործական ընկերության նախագահ Ս. Հարությունյան, Վանից՝ Արամ Մանուկյան, Ա. Թերզիբաշյան, օսմանյան երեսփոխան Վահ. Փափազյան և շատ ուրիշներ։ Ներկա էր և սոցիալ-դեմոկրատ, աղմկարար մի խմբով՝ Սարգիս Սրապիոնյան (Լուկաշին), Արտ. Կարինյան և այլն։

Ժողովը զբաղվեց գլխավորապես գաղթականական հարցերով, բայց գաղտնի հավաքույթներում քննության առնվեցին և Հայկական հարցի հետ կապված քաղաքական խնդիրները։ Եթե գաղթականական հարցը պարզ և որոշ էր— նպաստամատույց գործի կազմակերպում, նյութական օգնության համար վարկերի ապահովում կառավարությունից և ազգային մարմիններից, բժշկական և կրթական աջակցություն և այլն— և այս հարցի շուրջ սուր տարակարծություններ չկային, թեև նկատելի էին անհամաձայնությունն ու պայքարը զանազան մարմինների միջև. քաղաքական խնդիրները բուռն վեճերի առարկա եղան։ Այս ժողովում էլ, ինչպես և դուրսը, անհամաձայնությունը ազգային քաղաքականության շուրջ հետևանք էր ի վաղուց անդի հայ կյանքում գոյություն ունեցող երկվության. մի կողմից ազատախոհ մտախոհությունը, որ Նալբանդյան—Արծրունի ուղիղ գծով հասել էր Հ. Հ. Դաշնակցության, իբրև հայ ժողովրդի մեծամասնության ազգային ապրումների արտահայտություն, մյուս կողմից ծայրահեղ պահպանողական և ծայրահեղ ձախակողմյան փոքրամասնությունը։ Մանավանդ այս վերջինը, ապագա հայ բոլշևիկները, խորհրդաժողովում խափանարար երևալու աստիճան աղմկոտ պայքար մղեցին, առանց որևէ հաջողության։

Ժողովը, իր մեծամասնության մեջ, երկու հարցերում էլ՝ գաղթականական և քաղաքական, միակամ դուրս եկավ. շարունակել մինչև այդ որդեգրված ազգային-քաղաքական ուղղությունը Թուրքահայ դատի և գաղթականների օգնության գործի վերաբերմամբ։

Օրակարգը դեռ չսպառած՝ կառավարության կողմից անպաշտոն թելադրություն եկավ շուտով վերջ տալու խորհրդաժողովին։ Հապճեպով կատարվեցին բոլոր ձևակերպությունները, և համագումարը փակվեց արտաքնապես իր պարտականությունը կատարողի գոհունակությամբ, բայց, ինչպես ասացինք, առանց որևէ շոշափելի ազդեցություն գործելու հայ կյանքում, որ նորից առարկա էր դարձել ռուսացման բիրտ քաղաքականության։

Թուրքահայկական նահանգների պարպումից հետո հետզհետե փոխվեց և ռուսների վերաբերումը դեպի հայերը։ 1916 թվին այլևս «հայկական ինքնավարության» մասին խոսք չէր լսվում. կամավորական խմբերը լուծվեցին։ Կովկասում իշխում էր մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը՝ հակահայ քաղաքականության ներշնչողներից մեկը։ Մտածվում էր գրավված վայրերը հանձնելու ռուս գաղթականներին։ Ծրագրվում էր Ալաշկերտի ու Եփրատյան կազակություն հաստատել։ Թուրքահայ գաղթականների վերադարձը արգելվեց իրենց տեղերը։ Ինչ-որ մութ, այն օրերին դեռևս անհասկանալի դավ էր լարվում հայ ժողովրդի դեմ։ Հետագայում, սակայն, հայտնի դարձավ, որ դաշնակից պետությունները հայերի գլխին խաղացել էին ամենանենգ խաղերից մեկը։

1916 թվի գարնանը, Լոնդոնում ու Պետրոգրադում կատարված բանակցությունների հետևանքով, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը ստորագրել էին Թուրքիայի անդամահատման գաղտնի համաձայնությունը, ըստ որի հայերին խոստացված հողերը բաժանվում էին երկու մասի. Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթները ստանում էր Ռուսաստանը, Սիրիան ու Կիլիկիան մինչև Խարբերդ ստանում էր Ֆրանսիան։ Այսպիսով, իրագործվում էր Գալիցիաների ու Լոբանով-Ռոստովսկիների երազը՝ Հայաստան առանց հայերի։

Համաձայն այս նոր պայմանների ու մտայնության ձևակերպվեց և ռուսական քաղաքականությունը Թուրքահայկական վիլայեթների նկատմամբ. «Հնարավոր է,—գրում էր 1916 թ. 14(27) հունիսին Կովկասի փոխարքային արտաքին գործոց նախարար Սազոնովը,— հնարավոր է տրամադրել հայերին, որոշ շրջանակում, դպրոցական և եկեղեցական ինքնուրույնություն, լեզվից օգտվելու իրավունք, այլև քաղաքային ու գյուղական ինքնավարություն՝ պայմանով, որ ընտրությունների ժամանակ հարկվի ազգաբնակչության տոկոսային համեմատությունը։ Ոչ քրիստոնյա տարրերի վերաբերմամբ պետք է կիրառել նույն սկզբունքները, որքան այդ թույլ կտան տեղական պայմաններն ու նրանց մշակութային զարգացման աստիճանը»։

Ի պատասխան այս գրության, Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչը 3(16) հուլ. նամակով նույնպես գտնում էր «խիստ ցանկալի, որ մինչև պատերազմի վերջը մշակվեն այն ղեկավարող սկզբունքները, որոնցով պետք է Ռուսական կայսրության սահմանների մեջ մտցվեն մեր կողմից պատերազմի իրավունքով գրավված թուրքական հողերը», և մերժելով Թուրքահայաստանի ինքնավարության գաղափարը՝ «կատարելապես համամիտ» է Սազոնովին, որ «կարելի է հայերին տրամադրել դպրոցական ու եկեղեցական ինքնուրույնություն, եկեղեցական գույքերն ու դրամագլուխները կառավարելու և լեզվից օգտվելու իրավունք, պայմանով, սակայն, որ բոլոր պաշտոնական դեպքերում առաջնությունը պատկանի ռուսական բարբառին...»*

* Раздел Азиатской Турции по секретным документам б. мин. ин. дел, под ред. Е. А. Адамова. Изд. Литиздата НКИД, Москва, 1924.

Այս սկզբունքների համեմատ էլ կազմվեց Թուրքիայից գրավված վայրերի կառավարության ծրագիրը 1916 թ. հունիսի 6-ին, որից հետո, հաստատվեց, զոր. Փեշկովի հռչակավոր ընդհանուր-նահանգապետությունը իր հայակեր պաշտոնեությամբ ու գործելակերպով։

Ահա ձեզ «ինքնավարություն վեց վիլայեթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզոր հովանավորության տակ»։ Ի՞նչ դառն հեգնություն...

Արմատական փոփոխության ենթարկվեց ռուսների հայկական քաղաքականությունը և ներքին կյանքում. հայերն այլևս բարեհաճ ուշադրության առարկա չէին։ Վերականգնվում էր նախապատերազմյան վերաբերումը։ Խստացվում էր գրաքննությունն ու ոստիկանական հսկողությունը քաղաքական կուսակցությունների և ազգային-բարեգործական կազմակերպությունների գործունեության վրա։ Մասնավորապես, անբաղձալի տարր էին դառնում Թուրքահայ գաղթականները և կամավորական խմբերից հեռացած զինվորները։ Ոստիկանությունը նրանց դեմ կիրառում էր խիստ միջոցներ՝ այլևս պետք չուներ նրանց։

Եվ, հասկանալի է, հայ ժողովրդին համակում էր դառն հիասթափությունն ու վիշտը։ Ի՞նչ էր սպասում, ինչ դուրս եկավ։ Թուրքահայաստանի ինքնավարության փոխարեն՝ ահա ռուս բանակի կողմից գրավված ու ռուսացման ենթակա ամայի հողեր։ Թուրքահայ գյուղերն ու քաղաքները՝ ավերակ։ Ժողովուրդը կա՛մ ոչնչացված, կա՛մ տարագիր ու բնաջնջման ենթակա և կամ—ավելի քան 300 000 հոգի—գաղթական վիճակում՝ ապաստանած Անդրկովկաս։ «Մեծ դաշնակիցները» Հայաստանը բաժանել էին իրենց միջև, իբրև պատերազմական ավար։ Հայերին վերհանձնորեն շնորհվում էր... «Եկեղեցական ինքնուրույնություն»։

Փա՛ռք «մեծ դաշնակիցներին»...

Միևնույն դառն ապրումներն ուներ և գաղութահայությունը, որ նույնպես խանդավառված էր պատերազմից ստացվելիք բարիքներով։ Ամերիկայի և Բալկանների հայերը լայն մասնակցություն էին բերել կամավորական շարժման՝ դրամով ու մարդկային ուժով և սպասում էին, որ, իբրև հետևանք հայերի մատուցած ծառայության, Հայաստանին կտրվի ինքնավարություն։

Արտասահմանի հայության իղձերի թարգմանը և քաղաքական գործունեության կենտրոն շարունակում էր մնալ Պողոս Նուբարի պատվիրակությունը Փարիզում, որ գործում էր Ազգային պատվիրակության անունով։ Նա ներկայացնում էր հայկական դատը պետությունների առջև և հենված Ամենայն Հայոց կաթողիկոսից ստացած լիազորության և համահայկական վստահության վրա՝ գործում էր ի նպաստ Հայաստանի ինքնավարության։ Ինչպես Ազգ. բյուրոն Կովկասում, Ազգ. պատվիրակությունը ևս արտասահմանում մեծ պետությունների պետական գոր-

ծիչներից ու կառավարություններից ստանում էր խոստումներ ու հավաստիացումներ, որ հայկական բաղձանքները լիովին կգոհացվեն դաշնակիցների հաղթությունից հետո։

Այս հավաստիացումների հիման վրա էր, որ Ազգ. պատվիրակությունը նախաձեռնեց— կովկասյան կամավորական շարժման հաշվեհարդարից հետո— հայկական լեգեոնի կազմակերպումը դաշնակիցների արևելյան բանակում։ Հայկական լեգեոնը, իր հեղինակների գաղափարով, պետք է ապագայում կազմեր ինքնավար կամ անկախ Հայաստանի բանակի կորիզը։ Եվ ինչպես կամավորական խմբերը Կովկասում, հայկական լեգեոնը ևս Պաղեստինի ճակատի վրա և ապա Կիլիկիայում երևան բերեց մարտական ոգու հերոսական արտահայտություններ, մասնակցեց ճակատամարտերի, կատարեց պատասխանատու դերեր, շոշափելի կերպով նպաստեց դաշնակից բանակների զենքի հաջողության և արժանացավ անգլիական ու ֆրանսիական հրամանատարության բարձր գնահատության։

Բացի զուտ ազգային ձեռնարկներից՝ հայ կամավորական խմբեր և անհատ մարտիկներ մասնակցեցին պատերազմին և ուրիշ ճակատներում՝ դաշնակիցների զանազան զորամասերի մեջ՝ ֆրանսիական և ամերիկյան բանակներում։ Եթե հաշվելու լինենք բոլոր ճակատներում և բոլոր բանակներին մասնակցող հայ զինվորների ու կամավորների ընդհանուր թիվը, հայ ժողովուրդը, ամենահամեստ հաշվով, մոտ 300 000 կովող տրամադրեց դաշնակիցներին պատերազմի ամբողջ տևողության ընթացքում։ Եվ վարձատրությո՞ւնը...

Ռուսաստանում տեսանք այդ վարձատրությունը՝ բացարձակ խաբեություն ու զրկանք։ Նույնը կատարվեց և Եվրոպայում։ Մի կողմից ֆրանսիական և անգլիական կառավարությունները հրապարակով հայտարարում էին, որ պատերազմի նպատակներից մեկն էլ Հայաստանի ազատագրությունն է, մյուս կողմից, դիվանագիտական առանձնասենյակներում, գաղտնի բանակցում էին Հայաստանի բաժանման մասին։ Հայաստանի անդամահատության ծրագիրն, ի վերջո, հաստատվեց առանց հաշվի առնելու հայ ժողովրդի շահերն ու բաղձանքները։

Այսպիսով, թե՛ Ռուսաստանում և թե՛ արտասահմանում հայ ժողովրդի բոլոր հույսերն ի դերև ելան։ Խաբված ու լքված դաշնակիցներից ավերված ու ջարդված իր հայրենիքում, ծանրաբեռնված հարյուր հազարավոր գաղթականներով ու պատերազմի զոհերով, առանց հեռանկարի, հայ ժողովուրդը նմանը չտեսնված տագնապով ոտք կոխեց 1917 թվականը։ Եվ ով գիտե ի՞նչ կլիներ վախճանը, եթե վրա չհասներ հրաշքը՝

1917 թվի փետրվարի 28-ին, անսպասելի կերպով, պայթեց Ռուսական մեծ հեղափոխությունը։

ԳԼՈՒԽ Բ

ՕԶԱԿՈՄԻ ՕՐԵՐԸ

Հեղափոխությունը շրջեց ամեն բան։

Ցարական գահի փլատակների հետ միասին հեղափոխության ալիքը սրբեց-տարավ և կովկասյան սատրապներին։ Անփառունակ ու դողալով՝ փախավ Թիֆլիսից փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչը իր բոլոր արբանյակներով ու ռուսացման ծրագրերով։ Հեղափոխական իշխանությունը հետը բերեց նոր գաղափարներ, նոր ոգի, նոր գործելակերպ ու նոր հույսեր։

Ժամանակավոր կառավարության մարտի 9-ի որոշումով Անդրկովկասի համար կազմվեց հատուկ իշխանություն՝ Անդրկովկասյան առանձին կոմիտե, կամ, կրճատված, Օզակոմ անունով։ Հետագայում, սեպտ. 8-ին գրի առնվեցին նրան տրված ղեկավար «հրահանգները», որոնք հետևյալն էին.

«1. Իր գործունեության մեջ Առանձին կոմիտեն անմիջապես ենթարկվելու է Ժամանակավոր կառավարությանը։ 2. Առանձին կոմիտեի մեջ կենտրոնանում է Անդրկովկասի բոլոր քաղաքական գործերի տեղական բարձր վարչությունը։ 3. Կոմիտեին հանձնված իշխանության էությունը բացառապես գործադիր է։ Առանձին կոմիտեն չի կարող իր իշխանությամբ սահմանել ո՛չ մի նոր օրենք կամ վերացնել գոյություն ունեցող որևէ օրենք։ 4. Առանձին կոմիտեի իրավունքների և պարտականությունների շրջանը երկրի կառավարության գործում որոշվում են կովկասյան փոխարքայության օրենքներով, ա՛յն սահմանափակումով, որ Առանձին կոմիտեի իշխանությունը տարածվում է միայն Անդրկովկասյան նահանգների ու շրջանների վրա»։

Սկզբում, Օզակոմը ուներ ավելի անորոշ ծրագիր. «1. Ապահովել իրականացումը խղճի ազատության՝ կազմակերպելով բոլոր դավանանքների հոգևոր գործերը։ 2. Սահմանել երկիրը կառավարելու կարգ՝ նոր կյանքի բոլոր շրջաններում՝ հայրենիքի ծառայության կոչելով տեղական հասարակական ուժերը։ 3. Նոր կարգի պահանջներին համապատասխան՝ վերակազմել քաղաքային ինքնավարությունը և միջոցներ ձեռք առնել, որպեսզի անմիջապես ռամկավար սկզբունքներով գավառական

ինքնավարություններ մտցվեն, ընտրովի հաշտարար դատավարություն հաստատվի և վերակազմվի գյուղական խիստ թերի դատարանը»։ Այլև միջոցներ ձեռք առնվեն՝ կարգավորելու հողային, աշխատանքի, հաղորդակցության և այլ խնդիրները։

Այսպիսի լիազորություններով օժտված՝ Անդրկ. առանձին կոմիտեն, մարտի 16-ին, հասավ Թիֆլիս, ուր գտավ արտակարգ խանդավառ ընդունելություն ազգաբնակչության բոլոր խավերի և կազմակերպությունների կողմից։ Նա բաղկացած էր 5 հոգուց. նախագահ՝ Խալամով, անդամներ՝ Ա. Չխենկելի, Քիթա Աբաշիձե, Մ. Ջաֆարով և Մ. Պապաջանյան։ Վրացիները ամեն միջոց գործ էին դրել, որպեսզի ունենան ավելի անդամ, մի բան, որ սաստիկ դժգոհություն առաջ բերեց բոլորի մեջ։

Հայկական լայն խավերը գոհ չէին մասնավորապես Օզակոմի հայ ներկայացուցչությունից։ Մինչ վրացի ու թուրք անդամները հարազատորեն ներկայացնում էին իրենց ազգի ընկերային-քաղաքական շերտավորումն ու տրամադրությունները, Մ. Պապաջանյանը արտահայտիչ էր հայկական շատ նոսր՝ բուրժուական խավերի, այն էլ միայն կադետական կուսակցության փոքրաթիվ խմբակի։ Այդ պատճառով նա կտրված էր հայ իրականությունից։ Այս փաստը լայնորեն օգտագործվեց իր վրացի և թուրք պաշտոնակիցների կողմից, որոնք Օզակոմի կյանքի առաջին օրերից հենց բռնեցին ազգային ուղղություն և համապետական իշխանություն լինելուց ավելի՝ ներկայացնում էին իրենց ազգը, աշխատում էին նախ և առաջ կարգադրել իրենց ազգին վերաբերվող գործերը։ Աշխատանքի բաժանումն էլ այդ հաշվով էր կատարված։ Հայ պատգամավորին տրվել էր արդարադատության և նման, ա՛յն օրերի համար, անարժեք գործերի ղեկավարությունը, մինչ ներքին գործերը վերցրել էր Չխենկելին, հաղորդակցությունը՝ Ջաֆարովը և այլն։

Հասկանալի է, որ այս ձևով կազմված և նման մտայնությամբ առաջնորդվող մի իշխանություն չէր կարող լինել հեռանկավոր։ Եվ, հիրավի, նրա կազմած հանձնաժողովները մնացին մեռած մարմիններ. նրա հրատարակած կարգադրություններից քչերն էին կատարվում։ Օրավուր, նրա ազդեցությունն ընկավ ժողովրդի աչքին և, վերջ ի վերջո, նրա իշխանությունը սահմանափակվեց Թիֆլիսի պալատով։

Դժբախտ կաղմ ու տխուր վախճան ունեցավ Անդրկովկասյան առանձին կոմիտեի գործունեությունը, բայց սկզբի օրերին նրա հետ մեծ հույսեր էին կապվում։ Սպասվում էր, որ նա կդարմանի հին ռեժիմի բացած վերքերը, կյանքի կկոչի նոր հիմնարկություններ, կանցկացնի բարենորոգումներ, կմեղմացնի պարենավորման տագնապը, ազգային հակամարտությունները, երկրին կտա արդարամիտ ու կորովի իշխանություն, կուժեղացնի ռազմաճակատի պաշտպանության գործը։ Դրանցից և ո՛չ մեկը տեղի չունեցավ։ Ընդհակառակը, քայքայումն ու կյանքի պայմանների դժվարացումը աճեց ու զարգացավ անընդհատ։

Հեղափոխության առաջին շրջանում կուսակցություններն ու կովկասյան ժողովուրդները, ընդհանուր առմամբ, ասպարեզ էին գալիս համապետական գաղափարներով և աշխատում էին իրենց ազգային ձգտումները հաշտեցնել համառուսական պետական շահերի հետ։ Ազգային ուրույն խնդիրներ հարուցանելուն դեմ էր և բանակը։ Այսպես, կովկասյան բանակի համագումարը, որ բացվեց Թիֆլիսում մարտի 5-ին, մերժեց զբաղվել ազգային հարցով՝ գտնելով, որ «ազգային հարցի լուծումը իր ամբողջության մեջ հնարավոր է միայն Սահմանադիր ժողովում։ Այս հարցը լուծելու մյուս բոլոր փորձերը մինչև Սահ. ժողով վտանգավոր են և անթույլատրելի»։ Իսկ բանվորների և գյուղացիների շրջանային ժողովում, հունիսին, Ն. Ժորդանիան հետևյալ ձևով էր ներկայացնում ազգային խնդիրը.

Նա ազգային շարժումը համարում էր հետևանք մի ազգի բուրժուազիայի քաղաքական իշխանության տիրանալու ձգտումի, ինչպես նաև ազնվականության՝ իր նախկին դիրքերը պահելու ցանկության։ Բանվորության և գյուղացիության ազգային խնդիրը իր լեզուն ազատ գործածելու ցանկության մեջ է։ «Մինչդեռ բուրժուազիան և ազնվականությունը ձգտում են քաղաքական տիրապետության, բանվորությունն ու գյուղացիությունը հետապնդում են զուտ մշակութային նպատակներ։ Այս հիման վրա բուրժուա և ազնվական կուսակցությունները պահանջում են ազգային հարցի լուծումը պետական ինքնօրինության իմաստով, իսկ բանվորությունը պահանջում է ազգային ինքնավարություն»։

«Ազգային ինքնավարությունը հնարավոր է որոշ բնաշխարհի մեջ, եթե որևէ ազգ այնտեղ մեծամասնություն է կազմում։ Անդրկովկասյան երեք խոշոր ժողովուրդներ կան՝ վրացիներ, հայեր և թուրքեր։ Այն բնաշխարհների համար, ուր որևէ ազգ մեծամասնություն ունի, կազմվում է ազգային-բնաշխարհիկ ինքնավարություն. ազգային տեսակետով խառը շրջանների մեջ՝ խառն ինքնավարություն՝ ամեն ազգի տալով ինքնօրինություն մշակույթի խնդրում։

Ֆեդերացիան, իբրև ազգային հարցի լուծում ընդունելի չէ, որովհետև նա չի համապատասխանում տնտեսական և հասարակական զարգացման։ Ֆեդերացիա նշանակում է պետությունների միություն, մինչդեռ մի պետության կտրատումը անջատ պետությունների՝ չի համապատասխանում պատմության ընթացքին։ Ռուսաստանի համար հնարավոր է մի ճանապարհ՝ կենտրոնական ռուսական հանրապետություն և ազգաշրջանային ինքնավարություններ։ Այդ ինքնավարության իրավասությունները պետք է լինեն հետևյալը.

1) Դպրոց (ստորին, միջին, բարձր)։ 2) Ժողովրդական առողջապահություն, անասնաբուժություն։ 3) Տեղական բնույթ ունեցող հաղորդակցության միջոցներ։ 4) Աջակցություն տեղական գյուղատնտեսական և առևտրաարդյունաբերական ձեռնարկների։ 5) Հողերի շահագործում։

6) Դատարան։ 7) Քաղաքային ձեռնարկներ։ 8) Տեղական կարիքների համար հարկեր հավաքելու իրավունք։ 9) Կառավարություն, գործադիր իշխանություն։ 10) Կենտրոնում հրատարակված օրենքների գործադրություն։ 11) Օրենսդրական նախաձեռնություն»։

Այս ծրագիրը կազմեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի ա՛յն ժամանակվա գործունեության հիմքը։ Նա, ըստ ամենայնի, համապատասխանում էր «հեղափոխական դեմոկրատիայի» ցանկություններին։ Սակայն, որքան էր արտահայտում վրաց ժողովրդի իրական բաղձանքները և վրաց սոցիալ-դեմոկրատիայի գործնական քաղաքականությունը՝ այդ կարելի է ըմբռնել, եթե նկատի առնենք նրանց ներքին-ազգային աշխատանքը։ Թվում է, թե վրաց ազգի քաղաքական ապրումներն ավելի ճիշտ և անկեղծ ներկայացնում էին վրաց ազգային-դեմոկրատները, որոնք իրենց համագումարում, հունիսին, բանաձևել էին հետևյալ պահանջները. 1. Վրաստանում պետք է հաստատվի քաղաքական-հողային ինքնավարություն՝ ռամկավար-հանրապետական կազմի սկզբունքներով։ 2. Ինքնավար Վրաստանի սահմանադրությունը մշակում է Թիֆլիսում գումարված Ազգային սեյմը։ 3. Վրաց Սահմանադիր ժողովի ընտրությանը մասնակցում են Վրաստանի բոլոր չափահաս քաղաքացիները, առանց սեռի, դավանանքի և ազգի խտրության, ընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի և համեմատական քվեարկության սկզբունքով։ 4. Վրաց ինքնավար օրենսդրության և կառավարության են ենթարկվում, Վրաստանի հողի սահմաններում, բոլոր հարցերը, բացառությամբ հետևյալների. ա) պատերազմ և խաղաղություն. բ) արտաքին քաղաքականություն և պետական բյուջե։

Սա այն սաղմն է, որից աճեց ու զարգացավ Վրաստանի անկախությունը և որին, սկզբում գաղտնի, ամաչելով, իսկ հետո բացահայտ կերպով միացան և վրաց սոցիալ-դեմոկրատները։ Առհասարակ, պետք է նկատել, որ հեղափոխության սկզբի ամիսներին, վրացի սոցիալ-դեմոկրատները վրաց ազգային խնդիրներում, հոժարությամբ առաջ էին քշում ազգայնականներին, իսկ իրենք՝ պահելով միջազգային ու համառուսական դեմքն ու լեզուն՝ բավականանում էին ձեռքի տակ եղած օգնությամբ։ Ազգային-դեմոկրատների ջանքերով և վրացի սոցիալ-դեմոկրատների աջակցությամբ, շատ շուտով, հայտարարվեց վրաց եկեղեցու անջատումը համառուսական ուղղափառ եկեղեցուց և վրաց կաթողիկոսության վերականգնումը*։

* Քիչ հետո, վրաց սոց.-դեմոկրատները դեն շպրտեցին այս թզենու տերևն էլ։ Նոյեմբեր ամսին, Թիֆլիսում գումարվեց վրաց ազգային համագումարը բոլոր դասակարգերի և կուսակցությունների կատարյալ համերաշխությամբ։ Ն. Ժորդանիան զեկուցում տվեց քաղաքական կացության և վրաց ազգի քաղաքականության մասին։ Եվ համագումարը, միաձայնությամբ ու խանդավառ ծափերով, ընդունեց նրա առաջադրած կետերը. 1) Վրաստանը, սեփական հողի վրա, պետք է լինի ինքնավար և ունենա

Համապետական ոճ էին գործածում և մահմեդականները, թեև, վրաց ազգայնականների նման, նույնպես դնում էին ազգային կամ, ավելի ճիշտ, համիսլամական պահանջներ։ Ռուսաստանի հեղափոխությունը նրանց համար երկնքից ընկած պարգև էր, որ դալիս էր ազատագրելու մահմեդական ազգին։ Այս տրամադրության ցայտուն արտահայտիչը հանդիսացավ կովկասյան մահմեդականության ներկայացուցիչների առաջին համագումարը, որ բացվեց Բաքվում, ապր. 15-ին։ Այդ համագումարում հանդիսավորապես հայտարարվեց մահմեդական շիա և սյունիի աղանդների միություն, որ աննկարագրելի խանդավառություն առաջ բերեց ժողովականների մեջ։ Ձեռք ձեռքի՝ բեմ բարձրացան Մուֆթին ու Շեյխ-ուլ-Իսլամը և ամենքի աչքի առջև հանդիսավորապես համբուրվեցին։ Արտասանվեցին կրակոտ ճառեր մահմեդական ցեղերի եղբայրության մասին։ Առանձնապես ուժեղ տպավորություն թողեց համագումարի նախագահ Ալի Մարդան բեգ Թոփչիբաշևի մահմեդականության միությունը դրվատող ճառը։

Ազգային-քաղաքական հարցի մասին համագումարում զեկուցում ներկայացրեց «Ակրկ Սեոզ» թերթի խմբագիր և ապագա Մուսավաթի պարագլուխ Մահմեդ Էմին Ռասուլ Զադեն, որ պաշտպանեց Ռուսաստանը դաշնակցային հանրապետության վերածելու անհրաժեշտությունը։ Դաշնակցությանը, իբրև հիմք, պետք է դրվեր ազգային սկզբունքը, ազգային ամենալայն ինքնորոշման իրավունքը։ Ռուսաստանը պետք է կազմեր ինքնավար ազգերի միությանց միություն, որի կենտրոնական իշխանությանը պետք է վերապահվեր միայն արտաքին քաղաքականությունը, երկրի պաշտպանության գործը, հաղորդակցության միջոցները։

Ռասուլ Զադեի զեկուցման հիման վրա՝ համագումարը միաձայնությամբ որոշեց. «1. Ռուսաստանի ապագա պետական-քաղաքական կազմը պետք է լինի ռամկավար հանրապետություն՝ հողային-դաշնակցային սկզբունքներով, որպիսի կազմով միայն հնարավոր է լայնորեն ապահովել մահմեդական ժողովուրդների ազգային շահերը։ 2. Ընդունելով, որ մահմեդական կրոն դավանող բոլոր ժողովուրդները կապված են իրար հետ հոգևոր-մշակութային կյանքով՝ մահմեդականների համագումարը անհրաժեշտ է համարում ամբողջ Ռուսաստանում առաջ բերել ընդհանուր մահմեդականության կենտրոնական մի մարմին՝ օրենսդրական իրավասություններով՝ պաշտպանելու համար վերև առաջադրված նպատակները»։

Պատկազմի խնդրում համագումարը որոշեց. «Ամբողջությամբ հարել Ռուսաստանի դեմոկրատիային, որը պահանջում է պատերազմը վերջացնել առանց հողագրավումի և ռազմատուգանքի»։

«...Կովկասյան ազգությունների նկատմամբ համագումարը անհրաժեշտ է գտնում սերտ ու համերաշխ հարաբերություն ստեղծել ամենքի հետ՝ նպատակ դնելով իրականացնել կյանքում փոխադարձ համերաշխության և հարգանքի վրա հիմնված ռամկավար իդեալները»։

Կովկասյան ժողովուրդների մեջ, ըստ էության, ամենից ավելի համապետական հողի վրա կանգնած էին հայերը։ Հեղափոխության սկզբին երկու խնդիր էր զբաղեցնում նրանց. Թուրքահայկական հարցի լուծումը և Անդրկովկասի վարչական վերաբաժանումը՝ ազգագրական սկզբունքով։

Առհասարակ, վարչական նոր սահմանագծման խնդիրը կովկասյան ժողովուրդներին ամենից շատ զբաղեցնող ու փոխադարձ դժգոհություն պատճառող խնդիրներից մեկն էր։ Տակավին հին ռեժիմի օրով, փոխարքայության կից գումարված զեմստվոյական խորհրդակցությունների միջոցին, 1916 թ. ապր. 26—մայիսի 7-ին, հայ ներկայացուցիչները դրել էին նոր «գյուղատնտեսական շրջաններ» կազմելու առաջարկը, բայց մնացել էին փոքրամասնության մեջ. վարչական նոր բաժանման թաքուն ծրագիր էր այդ։ Հեղափոխությունից հետո, երբ զեմստվո մրցընելու հարցը ստացավ գործնական նշանակություն, հայերը նորից առաջ քաշեցին վարչական վերաբաժանման պահանջը, առանց որի նոր զեմստվոյի մեջ հայերը, գրեթե ամեն տեղ, պիտի կազմեին փոքրամասնություն։ Հեղափոխությունը պարտավոր էր սրբագրել հին իշխանության գործած չարիքները՝ վերացնելով կամայականորեն գծված անարդար սահմանները։ Օզակոմի հայ անդամի կողքին կազմված միջկուսակցական մարմինը, գյուղատնտեսներ Հ. Փիրալյանի, Մ. Կամսարականի և Ավ. Շահխաթունյանի ու Գ. Խատիսյանի աշխատանքով, մշակել էր Անդրկովկասի վարչական բաժանման նոր ծրագիր, որ և Ավ. Շահխաթունյանի միջոցով ուղարկվեց Պետրոգրադ պատշաճ իշխանություններին ընդունել տալու համար։

Հեղափոխությունից հետո Պետրոգրադում կազմվել էր Սահմանադիր ժողովի գումարման նախապատրաստական աշխատանքները կատարող մի հանձնախումբ, որի մեջ ներկայացուցիչներ ունեին Ռուսաստանի բոլոր ազգերը։ Հայերի կողմից այդ աշխատանքներին մասնակցում էր Գ. Խատիսյանը։ Նույն ժամանակ ներքին գործող նախարարությանը կից գործում էր տեղական ինքնավարությունների հանձնախումբը Բ. Վեսելովսկու նախագահությամբ։ Օգտվելով առիթից՝ Բ. Վեսելովսկին հրավիրեց խորհրդակցության Պետրոգրադում գտնվող անդրկովկասցի գործիչներին՝ Անդրկովկասի զեմստվոյական հարցը քննելու նպատակով։ Հայերից այդ խորհրդակցությանը մասնակցեցին Ավ. Շահխաթունյանը և Գ. Խատիսյանը, որոնք կարողացան համոզել, զեմստվո մտցնելուց

ազգային օրենսդրական մարմին. 3) Պետք է որոշվեն Վրաստանի սահմանները՝ հարևան երկրների հետ. 3) Վրաստանում ապրող ազգային փոքրամասնություններին պետք է տրվեն մշակութային զարգացման երաշխիքներ. 4) Համառուսական սահմ. ժողովի չգումարվելու պարագային հրավիրել համակովկասյան և առանձին սահմանադիր ժողովներ։ Եվ այլն։

Ի՞նչ տարբերություն ազգային-դեմոկրատների ու այս ծրագրի միջև

առաջ, Անդրկովկասը ենթարկել վարչական նոր բաժանման։ Քննության առնվեց Հ. Հ. Դաշնակցության ներկայացուցչի առաջարկած նախագիծը, որը, երկու խոսքով, հետևյալն էր.

Արևելյան Անդրկովկասը բաժանվում էր երկու մասի՝ թրքական և հայկական։ Հայկական մասի մեջ մտնելու էին Ղազախ, Գանձակ, Ջիվանշիր և Շուշի գավառների լեռնային հայաբնակ մասերը և ամբողջ Զանգեզուրը, բացի Բարգուշատի հովտի մի քանի թուրք գյուղական հասարակություններից, որոնք միացվելու էին Կարյագինի թրքական գավառին։ Գանձակ քաղաքը բաժանվելու էր երկու մասի՝ թրքական և հայկական։ Ախալքալաքը, Լոռին և Ծալկայի հայկական մասը պետք է միացվեին նոր կազմվելիք Ալեքսանդրապոլի նահանգին։

Այսպիսով, ստեղծվելու էր հոծ հայ ազգաբնակչություն ունեցող մի շրջան՝ բաժանված 4 նահանգի՝ Գանձակի, Երևանի, Ալեքսանդրապոլի և Կարսի։ Համապատասխան ձևով կազմվելու էր և հոծ թրքական շրջան։

Այս ծրագրի դեմ հանձնախմբում, ըստ էության, առարկեցին միայն վրացի ազգային-դեմոկրատները, որոնք գտնում էին, որ Ախալքալաքն ու Լոռին, իբրև վրացական սեփականություն, պետք է մտնեին Վրաստանի սահմանների մեջ։ Թուրք ներկայացուցիչները հայտարարեցին, թե իրենք լավ չեն ուսումնասիրել խնդիրը, համապատասխան լիազորություն չունեն և, հետևաբար, չեն կարող մասնակցել հարցի լուծմանը։ Հանձնախումբը, իր ամբողջության մեջ, հավանություն տվեց հայկական նախագծին, որը հետո նախարարության կողմից ընդունվեց իբրև հիմք կառավարական օրինագծի։ Այս վերջինը ուղարկվեց Թիֆլիս՝ Օզակոմին, որը, մի ամսվա ընթացքում, իր կարծիքի հետ միասին պետք է վերադարձներ նախարարությանը։ Օզակոմը նախագծի քննությունը հանձնեց միջազգային մի հանձնախմբի, որը ունեցավ երկար խորհրդակցություններ, բայց կարելի չեղավ հանգել ընդհանուր եզրակացության։ Առանձին ազգերի ներկայացուցիչների դիրքը հանձնախմբում լիովին երևան բերեց քաղաքական այն ձգտումները, որոնցով տոգորված էին այդ ազգերը։ Հայերը, բացի հայ սոցիալ-դեմոկրատներից, որոնք ինքնուրույն կարծիք չունեին, պաշտպանում էին կառավարական նախագիծը. վրացի սոցիալ-դեմոկրատները, հանձին Ժորդանիայի և Ռամիշվիլիի, համաձայն էին հայկական ծրագրին. մյուս խոսակցությունները շարունակում էին պնդել Ախալքալաքն ու Լոռին Վրաստանին միացնելու պահանջի վրա։ Թուրքերը հիմքից մերժում էին նախարարական նախագիծը. նրանք առաջարկում էին Անդրկովկասը բաժանել ավելի մանր վարչական՝ զեմստվոյական միություններ, այդ միջոցով կամենալով ապահովել մահմեդական տարրերի գերակշռությունը Կովկասում։ Այս տարակարծություններն ու վեճերը մինչև վերջ էլ մնացին լուծված և, ի վերջո, ճակատագրական դեր կատարեցին կովկասյան ժողովուրդների կյանքում։

Պետք է նկատել, որ թե՛ վարչական սահմանագծման և թե՛ այլ հարցերում, հենց սկզբից, նկատելի դարձավ թուրք-վրացական ընդհանուր հասկացողություն ու գործակցություն։ Բոլոր կարևոր խնդիրներում, երբ հրապարակ էր գալիս կովկասյան ժողովուրդներին վերաբերվող ընդհանուր մի խնդիր, թուրք ու վրացի ներկայացուցիչները դուրս էին գալիս համերաշխ ու միացյալ ճակատով։ Հեղափոխության առաջին օրերից սկսած մինչև վերջ, թուրք-վրացական ընդհանուր ճակատը հայերի հետ առընչություն ունեցող բոլոր դեպքերում մնաց իրողություն, և այս հանգամանքը դարձավ անդրկովկասյան կյանքի կարևոր գործոններից մեկը։ Այդ գաղտնի թե բացահայտ գործակցությունը ունեցավ չափազանց աղետավոր հետևանքներ կովկասյան ժողովուրդների համերաշխ մեկ ընտանիք կազմելու տեսակետից։ Վրաց-թրքական գործակցությունը, մասնավորապես այլանգակ ձևերով արտահայտվեց անդրկովկասյան գյուղացիական համագումարում, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները և թուրք բեգերն ու աղալարները, ձեռք ձեռքի տված, պայքար մղեցին սոցիալիստ-հեղափոխականների և Հ. Հ. Դաշնակցության հողային բանաձևի դեմ և կամենում էին հայ գյուղացիությանը պարտադրել սոցիալ-դեմոկրատական հողային ծրագիրը։

ԳԼՈՒԽ Գ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Ասացինք արդեն, որ հեղափոխությունը շրջեց ամեն բան։ Նոր դարաշրջան էր բացվում։

Կովկասը, ինչպես և ամբողջ Ռուսաստանը, խելահեղ ոգևորությամբ տոնեց բռնապետության անկումը։ Հանդեսները, թափորները, ժողովները ու համագումարները իրար էին հաջորդում։ Մամուլը արբեցած էր ազատությունից։ Եվ ապագան ամենքին թվում էր այնպես վարդագույն։ «Երբե՛ք, երբե՛ք,— գրում էր «Հորիզոնը» մայիսի 1-ի խմբագրականում,— ապագան չի թվացել մեզ այնպես գեղեցիկ, հաղթությունը՝ այնքան մոտ, ինչպես այսօր՝ հույսի ու հույզի այս երազ օրերին... Գահեր են խորտակվում ու շղթաներ քանդվում, և թագակիր ավազակները դողում են աշխարհի անողոք դատաստանի առջև»։

«Հույսի ու հույզի օրեր» էին, մանավանդ, մահվան տագնապում գալարվող արևմտահայության համար։

Ապրիլի 27-ին Ժամանակավոր կառավարությունը, հատուկ կարգադրությամբ, որոշեց Թուրքահայկական գրավված վայրերի վիճակը, որ կատարելապես համապատասխանում էր հայերի այն ժամանակվա բաղձանքներին։ Այդ կարգադրությունը, որ լույս տեսավ «Ժամ. կառավարության լրատու» պաշտոնաթերթի մեջ, հետևյալն էր.

Ժամանակավոր կառավարության կարգադրությունը Թուրքահայաստանի մասին

Ժամանակավոր կառավարությունը, համաձայն հոդ. 42-ի և 43-ի Լահեի հոկտ. 5/18 կոնվենցիայի ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին, մինչև խաղաղության դաշնագրով Թուրքահայաստանի վիճակի վերջնական որոշումը՝ կարգադրեց.

Հոդվ. 1. Թուրքահայաստանի հողը՝ Ռուսաստանի զորքերի գրավված քաղաքացիական կառավարության տեսակետից՝ վերացվում է կովկասյան իշխանությունների, այլև կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջապես ենթարկվում է Ժամ. կառավարությանը։

Հոդվ. 2. Առաջին հոդվածում հիշված լիազորության, ինչպես և Թուրքահայաստանի շրջանների կառավարության 5 հունիսի 1916 թ. ժամանակավոր օրենքով այս շրջանների ընդհանուր նահանգապետին հանձնված իրավունքների իրագործումը Ժամ. կառավարության կողմից վստահվում է իր նշանակած Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարին։

Հոդվ. 3. Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարի մոտ գտնվում է քաղաքացիական մասի օգնականը։

Հոդվ. 4. Ընդհանուր կոմիսարը, իր քաղաքացիական մասի օգնականի զեկուցման համաձայն, անմիջապես ներկայացնում է Ժամ. կառավարության իր նկատումները։ Թուրքահայաստանի շրջանների կառավարության 5 հունիսի 1916 թ. ժամանակավոր օրենքի ցանկալի լրացումների և փոփոխությունների մասին։

Ստորագրեցին. Նախարարապետ՝ Լվով
Արտաքին գործերի նախարար՝ Պ. Միլյուկով
Ժամ. կառավարության գործերի վարիչ՝ Վլադ. Նաբոկով

16 ապր. 1917 թ.

Այսպիսով, Թուրքահայաստանի խնդիրը նորից դրվում էր միջազգային հողի վրա, հանվում էր կովկասյան միջցեղային կրքոտ փոխհարաբերությունների միջավայրից և կապվում ուղղակի կենտրոնական կառավարության հետ։ Սա ինքնին մեծ հաջողություն էր հայերի համար։

Բացի այդ, նախատեսվում էր, որ ընդհանուր կոմիսարի օգնականը լինելու էր հայ և, ուրեմն, գրավված վայրերի վարչական կազմակերպումը և, մանավանդ, փաստական կառավարությունը ընթանալու էր ըստ ամենայնի հայկական ցանկությունների համաձայն։

Այդպես էլ եղավ։ Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսար նշանակվեց մի պարկեշտ ռուս զինվորական՝ զոր. Ավերիանովը, իսկ նրա քաղաքացիական մասի օգնական՝ բժ. Հ. Ջավրյանը՝ մեկը այն լուսամիտ ու գաղափարական գործիչներից, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրել էին հայկական դատին։ Ջավրյանը աչքի ընկնող դեր էր կատարել և 1913—14 թթ. բարենորոգումների շրջանում, գործակցել էր Պողոս Նուբարին պատերազմի ընթացքում, աշխատել ռուս դիվանագիտությունը շահագրգռել հայկական հարցով և լայն ծանոթություններ ու կապեր ուներ, ջերմ համակրանք էր վայելում ռուս քաղաքական շրջաններում։ Նա մտերիմ կապերով կապված էր ռուսական հեղափոխությունը անձնավորող Ա. Կերենսկիի հետ։ Նրա նշանակումը գրավված վայ-

բերի վարչության ղեկավարության պաշտոնին գրավական էր, որ այս անգամ խոսքը կարող է վերածվել գործի։

Եվ գործը չուշացավ։ Արագ կերպով մշակվեց Թուրքահայաստանի գրավված վայրերի վերաբնակեցման ծրագիրը, նշանակվեց վարչության նոր կազմ մեծ մասամբ հայերից, հատկացվեցին մեծագումար վարկեր և ձեռք առնվեցին միջոցներ, որ գաղթականությունը վերադառնա իր տեղերը։ Ասենք, առանձին միջոցների պետք էլ չկար, քանի որ ժողովուրդը ինքը, երբ վերացան կապանքները, տարերային թափով մղվեց դեպի երկիր։

Կարճ ժամանակամիջոցում, Թուրքահայաստանը, մանավանդ, Վասպուրականի և Տարոն-Տուրուբերանի շրջանները վերակենդանացան։ Ամեն տեղ բռնել էր հայ ազգաբնակչությունը։ Գյուղերը վերաշինվում էին։ Մշակված արտերը ծածկվում էին կանաչով։ Աշխատանքը եռում էր։ Մի ձեռքին հրացան, մյուսում մաճ ու բահ՝ հայ գյուղացին ողողում էր քրտինքով հայրենի հողը և անօրինակ ոգևորությամբ ու եռանդով վերաշինում այն, որ քանդել էր բարբարոս թշնամին կամ պատերազմի դաժան չաստվածը։

Բացի կառավարական հիմնարկություններից, գրավված վայրերում աշխատում էին և բարեգործական ու մշակութային մարմիններ՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Քաղաքների միությունը, Գաղթ. կենտր. կոմիտեն, Մոսկվայի կոմիտեն, զանազան հայրենակցական ընկերություններ, որոնց ներկայացուցիչներն ու գործակալները զբաղված էին զանազան վայրերում։ Բազմաթիվ գործիչներ հետզհետե անցան գրավված վայրերը՝ լծվելով աշխատանքի՝ պետական ու հասարակական ասպարեզներում։ Նրանց մեջ էին Խաչ. Կարճիկյանը, Ռ. Տեր-Մինասյանը, բժ. Ա. Պողոսյանը, Կ. Համբարձումյանը, Վ. Քրմոյանը, Կ. Սասունին, Տ. Զորյանը, Սասունցի Մանուկը, Սասունցի Մուշեղը, Սիրական Տիգրանյանը, Վահան Փափազյանը, Հովսեփ Թադևոսյանը, Մ. Դարմանյանը, Մ. Տեր-Գրիգորյանը, Բ. Աբոյանը, Տ. Աղամալյանը, Հ. Մակարյանը և շատ ուրիշներ՝ բժիշկներ, գյուղատնտեսներ, դեղագործներ, գթության քույրեր, որբահավաքներ ու որբ խնամողներ, վարչական պաշտոնյաներ, մարտիկներ։

1918 թվի ամառը Վան—Մուշ—Բասեն տարածությունը բնակեցված էր հայ ազգաբնակչությամբ, հարկավ, ոչ խիտ գյուղերով և հայկական վիլայեթները դարձել էին իսկական մտքով Հայաստան։ Մոտավոր հաշվով, գրավված վայրերի բնակչությունը դասավորված էր հետևյալ ձևով. Բայազետ և շրջակայքը՝ 10 000 մարդ, Դիատին՝ 5 000, Ալաշկերտ՝ 30 000, Բասեն՝ 22 000, Խնուս՝ 28 000, Կարին և գաշտը՝ 6 000, Դերջան՝ 4 000, Երզնկա՝ 3 000, Ճորոխի հովիտը՝ 3 000, Բուլանըխ-Մանազկերտ՝ 4 500, Տրապիզոն՝ 1 500, Վանի նահանգ՝ 25 425— ընդամենը՝ 142 425

մարդ*։ Տեղական վարչությունը կրում էր գրեթե զուտ հայկական կերպարանք. տեղ-տեղ գոյություն ունեցող ռուս պաշտոնեությունը ձևական դիրք ուներ և շատ քիչ էր ազդում գործերի վրա։ Բացի վարչությունից, կային ինքնապաշտպանության խմբեր, որոնք պահակի դեր էին կատարում։ Ժողովուրդն ինքն էլ զինված էր և ի վիճակի՝ պաշտպանելու իրեն։ Բացի այդ, Վանում, Մուշի շրջանում, Խնուսում, Ալաշկերտում, Էրզրումի և Երզնկայի կողմերը գործում էին զուտ հայկական զորամասեր։ Որոշ վայրերում հիմնված էին որբանոցներ, որոնց մեջ հավաքվում ու խնամվում էին որբերը։ Կարևոր կետերում կային բազմաթիվ սննդակայաններ, հիվանդանոցներ, բուժարաններ։ Մի խոսքով, Թուրքահայաստանը՝ հարություն էր առնում մոխիրների տակից, եռանդով վերաշինվում ու պատրաստվում էր նոր կյանքով ապրելու համար**։

Այս առթիվ հետաքրքրական են Թիֆլիսի այն օրերի հայ թերթերի հաղորդած տեղեկությունները։ Այսպես, «Հորիզոնում» կարդում ենք. «Երկրի մեջ այս տարի կրթական-կուլտուրական կյանքը ավելի փայլուն շրջան ունեցավ, քան անցյալ տարիներում։ Վանի մեջ գոյություն ուներ մոտ 16 դպրոցներ։ Դպրոցներ կան նաև երկրի ամեն մեկ անկյունը։ Կան նաև որբանոցներ։ Դպրոցական-որբանոցային հսկողությունը կգտնվի Արևմտահայ խորհուրդին ձեռքը, բայց տեղական երիտասարդ ուժերն են գլխավորաբար, որ կվարեն գործը։ Երկրի որոշ վայրերու մեջ բացված են նույնպես գրադարան-ընթերցարաններ։ Մեկ-մեկ կպատահեն նույնպես երեկույթներ, ներկայացումներ և այլն»։

1917 թվի վերջերին, Թիֆլիսի «Ազատամարտում» գրավված վայրերից վերադարձած մի ճանապարհորդ գրում էր. «Տասնյակ վերստերով ճամփա կտրեցինք, թիմարի ամբողջ երկարությամբ և չգտանք ո՛չ մեկ թիզ հող առանց վարելու. միայն մեկ տեղ հանդիպեցանք անվար հողի, երբ, սակայն, քիչ ետք նկատեցինք, որ հեռվեն հայ ծեր գյուղացին խտիք ձգած էր հողին մեջ և սկսած էր վարել միակ անհերկ հողը»։

Նույնն էր պատկերը, ընդհանրապես, և մյուս շրջանների համար։ Հ. Գյուղատնտ. ընկերությունը և Հայաստանի կոմիսարիատը գերմարդկային ճիգ գործ դրին ժողովրդին սերմացու և լծկան հասցնելու համար, և երկիրը ծածկվեց կանաչ արտերով։

Ռուսական իշխանություններն ու զորահրամանատարներն էլ օժանդակում էին հայերին։ Առաջվա թշնամական վերաբերումը հետզհետե չքանում էր։ Դեռ պատահում էին անհատ պաշտոնյաներ կամ հրամանատարներ, որոնք խեթ աչքով էին նայում այս «Հայաստանի կառուց-

* Տե՛ս «Հորիզոն», 1917 թ. հունվ. 1։

** Թուրքահայ գրավված հողերի մասին տեղեկություններ կարելի է ստանալ Կ. Սասունիի «Տաճկահայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ» (1914—1918) գրքից, Բոստոն, 1927։

ման» վրա, բայց ընդհանուր քաղաքականությունը հայանպաստ էր։ Հրամանատարության համար հայերի ներկայությունը ռուս բանակի թիկունքում օգտակար էր թե ռազմագիտական տեսակետով և թե, մանավանդ, այն պատճառով, որ հայերի մշակած արտերից զորքը կստանար պարեն և անասունների կեր։ Հաղորդակցության միջոցների խանգարումով՝ Ռուսաստանից հացահատիկ ու խոտ հասցնելը դառնում էր ավելի և ավելի դժվար։ Հայերի մշակած հողերը, մասամբ, կլրացնեին այդ պակասը։

Առհասարակ, զարմանալի կենսունակության և ձեռներեցության ոգի հայտնաբերեց արևմտահայ ժողովուրդը։ Ամենադաժան պայմաններում, Նիկոլայ Նիկոլաևիչի ռեժիմի տակ, նա պահեց իր հոգեկան արիությունը և կազմակերպեց իր հավաքական կյանքը։ Հեղափոխությունից հետո, նա փութաց անմողջապես իր ձեռքն առնել սեփական ճակատագրի տնօրինումը։ Այդ տեսակետից ահագին դեր կատարեց արևմտահայ առաջին համագումարը, մայիսի 2—11-ին, Երևանում։

Համագումարը հրավիրվեց միջկուսակցական կազմակերպիչ մարմնի կողմից և բաղկացած էր 80 պատգամավորներից ու խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողներից, որոնցից 15 հոգին Թուրքահայաստանից, 27 Կովկաս ապաստանած գաղթականներից, 14 ընկերություններից ու միություններից, 8 կուսակցություններից, 3 թուրքահայ մամուլից, 6 հրավիրյալներ և 11 խորհրդակցական ձայնով կանչվածներ։ Համագումարին ներկայացուցիչ էր ուղարկել և Ամենայն Հայոց կաթողիկոսը։ Հանդիսավոր բացումը կատարեց Անդրանիկը, իսկ բացման խոսքը ասաց Արամը, որի ճառը թողեց խորունկ տպավորություն ամենքի վրա։

Համագումարը հրավիրված էր միայն գաղթականական խնդիրներ լուծելու նպատակով, բայց անհրաժեշտորեն ստացավ նաև քաղաքական գունավորում։ Նրա հանած որոշումներն ու, մանավանդ, ստեղծած մարմինը հետագայում խաղացին խոշոր գործնական դեր արևմտահայերի կյանքում։

Համագումարը երկարորեն զբաղվեց գաղթականական ու նպաստաբաշխման գործի քննությամբ և ապագա գործունեության ծրագրի մշակումով։ Ի վերջո, ընդունվեցին հետևյալ երկու բանաձևերը, որոնցից երկրորդը, դեպքերի բնական զարգացումով, դարձավ մի տեսակ սահմանադրություն։

Առաջին բանաձևը, որ առաջարկեց Վահ. Փափազյանը և ընդունվեց 51 քվեով 8-ի դեմ, արտահայտում էր համագումարի վերաբերումը դեպի գաղթականական կամ, ինչպես այն ժամանակ ասում էին, փախստականական մարմինների անցյալ գործունեությունը։

Բանաձևը ասում էր. «Թուրքահայ համագումարը լսելով պատգամավորների զեկուցումները և փախստականական ազգային մարմիններ ոմանց ներկայացուցիչներու բացատրությունները փախստականներու օգնության գործի կազմակերպման և վիճակի մասին, կնկատե, որ փախստականներու օգնության գործը վարող ազգային մարմիններու գործունեությունը՝ չնայած անոնց նպատակներու և միջոցներու բացարձակ համանմանության՝ չէ ունեցած մեկ ընդհանուր ուղեգիծ և գործելակերպ, ինչպես նաև միջոցներու ու գործերու կենտրոնացում և ներդաշնություն։

Որ օգնության գործին մեջ տեղի են ունեցած խոշոր թերություններ, ինչպես՝ անմեթոդ գործելակերպ, իրական կոնտրոլի բացակայություն, պաշտոնական կազմի անփույթ ընտրություն, փախստականներու իրավական մասնակցությունը չէ հարգված, կանոնավոր հաշվետվության բացակայություն, որոնք առիթ տված են բազմաթիվ բողոքներու և կասկածներու։

Որ փախստականներու օգնության գործը ընդհանուր առմամբ նկատված է իբր սոսկ մարդասիրական ձեռնարկ և տարված է ըստ այնմ՝ ղեկավարվելով գլխավորապես նպաստ տալու սկզբունքով, փոխանակ աշխատանք տալու, մինչդեռ հալածական թրքահայության գոյության պահպանման գործը պիտի նկատվեր գերազանցապես ազգային-հասարակական նշանակություն ունեցող գործ։

Մյուս կողմե, սակայն, բոլոր հիշյալ թերություններով հանդերձ թրքահայ համագումարը փախստականական կազմակերպություններու զորությունը օգտակար կհամարե հետևյալ նկատումներով.

Որ անոնք ցարդ ձեռք բերած են գործին անհրաժեշտ փորձառությունը, հաստատած են կապեր և մոտեն ծանոթ են ռուս միջավայրին ու պայմաններուն։

Որ արդեն ստեղծած և ընթացք տված են որոշ հիմնարկություններու։

Որ փախստականներու գոյությունը պահելու գործը համագումարը կնկատե իբր համազգային գործ. հետևաբար անոր օգնությունը պիտի կատարվի բոլոր հատվածներու կողմե հավասարաբար, և

Թրքահայությունը աստանդական և տնտեսական քայքայման այս վիճակին մեջ շատ տեսակետներով հնարավոր և ցանկալի չի համարեր միայնակ վարելու իրերօգնության գործը առանց փախստականներու մարմիններու գործակցության։

Գործակցության սույն հիմերու համաձայն ծրագրի մը պատրաստության համար համագումարը այդ խնդիրը կհղե համապատասխան հանձնաժողովին»։

Երկրորդ բանաձևը ընդունվեց միաձայնությամբ և ձևակերպում էր հետագա անելիքները.

«Համաշխարհ. պատերազմի հետևանքով մեր քայքայված ժողովրդի վերածնունդին նվիրված աշխատանքը նպատակ պիտի ունենա՝ 1) Թուրքահայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանումը և անոր քայ-

քայված տնտեսության վերականգնումը. 2) Հայրենիքի վերաշինությունը. 3) Նոր սերնդի կրթական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակությունը։

Այդ նպատակներուն իրագործման համար համագումարը նկատի ունի հետևյալ երեք հիմնական սկզբունքները. 1) Տեղական կազմակերպություններ առաջացնել գրավված վայրերու հայության, ինչպես նաև Ռուսաստան և Պարսկաստան ապաստանած հայ փախստականության մեջ. 2) Փախստականական գործերու մեջ իրագործել արևելահայերու և արևմտահայերու սերտ համագործակցությունը. 3) Օգնության գործի ղեկավարությունը և դրամական միջոցները կենտրոնացնել մեկ կենտրոնական մարմնի ձեռք։

Սույն սկզբունքներու իրագործման գործոններն են՝ համագումար և կենտրոնական խորհուրդ։

Կենտր. խորհուրդի անդամներու կեսը կընտրվի Թուրքահայ համագումարի կողմե, իսկ մյուս կեսը ռուսահայ փախստականական գլխավոր մարմիններու և կամ ռուսահայ համագումարի կողմե։ Այժմ խորհրդի համար կընտրվի 15 անդամ և 10 փոխանդամ։ Իսկական անդամներու թվի վերջնական ճշտումը կթողնվի ռուսահայ մարմիններու ընտրության ժամանակ։

Խորհուրդը փոխստականական ընթացիկ գործերը կվարե իրմե ընտրված բյուրոյի միջոցով, որու անդամները վճարովի պիտի ըլլան։

Խորհուրդը իրեն կից կկազմե կրթական, որբանոցային, առողջապահական, պարենավորման, իրավաբանական, աշխատանքի և տեղեկատու բյուրոներ և հանձնաժողովներ։

Թուրքահայ համագումարը կընտրե վերստուգիչ հանձնախմբի երեք անդամներ՝ առաջարկելով կենտր. խորհրդին ռուսահայ անդամներ տվող մարմիններուն և կամ ռուսահայ համագումարին՝ լրացնել զայն երկու կամ երեք անդամներով։

Վերստուգիչ մարմինը պիտի հսկե խորհրդի դրամական գործառնությանց վրա՝ համարատու ըլլալով համագումարին»։

Միաձայնությամբ ընտրվեցին խորհրդի 15 անդամներ՝ Անդրանիկ, Սմբատ Բորոյան, Հրանտ Գալիկյան, Արտակ Դարբինյան, Զապել Եսայան, Ավ. Թերզիբաշյան, Գ. Հայկունի, Հմ. Մանուկյան, Լ. Շանթ, Վարդ. Պապիկյան, դր. Բոնապարտյան, Կարո Սասունի, Սեպուհ, Հակ. Տեր-Զաքարյան, Վահան Փափազյան։

Վերստուգիչ հանձնախումբ՝ Սերովբե Կյուլպենկյան, Արշակ Սաֆարյան, Եղնիկ Քաջունի։

Համագումարի փակումից հետո Արևմտահայ խորհուրդն իր միջից ընտրեց 5 հոգիանոց բյուրո, որ և ստանձնեց համագումարի որոշումների իրագործումն ու արևմտահայ գործերի ղեկավարությունը։ Բյուրոյի անդամներ ընտրվեցին Վահ. Փափազյանը, Արտ. Դարբինյանը, Հ. Տեր-Զաքարյանը, Կ. Սասունին և Հ. Գալիկյանը։ Հետզհետե գրավված վայրերի և Անդրկովկասի զանազան կենտրոններում կազմվեցին Արևմտահայ բյուրոյի մասնաճյուղեր, որոնք դարձան արևմտահայության իրական ներկայացուցիչները։ Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծվում՝ կենտրոնական և տեղական իշխանություններով։ Ապագայում, երբ Թուրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդեն պատրաստ էր։

Բյուրոյին հաջողվեց համախմբել գաղթականների օգնության գործով զբաղվող մարմիններն ևս՝ Կովկ. Հայոց բարեգործական ընկերությունը, Քաղաքների միությունը, Մոսկվայի կոմիտեն, Հայոց գյուղատնտեսական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Կենտրոնական նպաստամատույցը և այլն, որոնց գործունեությունը կենտրոնացվեց և դրվեց ընդհանուր հակակշռի տակ։ Այս մարմինները ահագին ծառայություն մատուցին արևմտահայ ժողովրդին։

ԳԼՈՒԽ Գ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Իրերի բերումով, արևմտահայերի և արևելահայերի կյանքը հեղափոխությունից հետո գնաց տարբեր ճանապարհներով։ Արևմտահայերը ապրում էին սեփական, ազգային-տեղական կյանքով. նրանց հետաքրքրությունը ամփոփված էր Թուրքահայաստանի և գաղթականական գործերի սահմաններում։ Արևելահայությունը, ընդհակառակը, ամբողջապես տարվեց համապետական ընդհանուր հարցերով և ընկերային գաղափարներով։ Հեղափոխության մրրիկը հափշտակեց նրան և մի պահ մոռացնել տվեց զուտ ազգային ցավերը։

Արևելահայոց ակնկալությունները հեղափոխությունից ամբողջապես տեղավորվում էին Ռուսաստանի համապետական հարցերի մեջ. նոր ժողովրդական իշխանության հաստատում, հին վարչաձևի մնացորդների վերացում, ընդհանուր ներում, քաղաքացիական ազատություններ, ռազմաճակատի ամրացում ու պատվավոր հաշտություն և այլն. այս վերջին պահանջի մեջ հասկացվում էր նաև Թուրքահայաստանի ինքնավարությունը։ Եվ, իբրև ազգային պահանջ, մանր ազգերին էլ տալ այն իրավունքները, որոնք մինչև այդ վերապահված էին միայն տիրող ցեղին։

Նույն ոգին տեսնում ենք և մայիս ամսի ընթացքին գումարված գավառական ու նահանգային ուսուցչական և գյուղացիական բազմաթիվ համագումարների մեջ՝ Երևանում, Կարսում, Ալեքսանդրապոլում և այլուր։ Ամեն տեղ դրվում էին ընդհանուր-պետական խնդիրներ, իսկ տեղական-ազգային պահանջները դուրս չէին գալիս լեզվի և տեղական մշակույթի համեստ սահմաններից։

Նմուշի համար՝ ահա Երևանի նահանգային գյուղացիական համագումարի մայիսի 12-ի նիստում, Ավ. Շահխաթունյանի զեկուցումից հետո ընդունված բանաձևը, որ տիպար կարող է համարվել և մյուս համագումարների բանաձևերի համար, և որը լիովին արտահայտում է արևելահայերի ա՛յն օրերի քաղաքական ապրումները.

«Երևանի նահանգի Գյուղացիական համագումարը՝ քննելով Ռուսաստանի ապագա կարգերի խնդիրը, գտնում է.

Ռուսաստանում վերջնականապես ոչնչացված է հին կարգը և նրա տեղ պետք է հաստատվի հանրապետություն։ Այդ հանրապետությունը պետք է լինի ռամկավար, որովհետև միայն ռամկավար հանրապետության մեջ կարող է աշխատավոր ժողովուրդը իր շահերը պաշտպանել։

Այդ ռամկավար հանրապետությունը պետք է լինի դաշնակցային, որպիսին միայն կարող է համապատասխանել Ռուսաստանի պես բազմալեզու մի երկրի և նպաստել պետության բոլոր տարբեր մասերի տնտեսական ու մշակութային զարգացմանը։

Անդրկովկասը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ դաշնակցային կերպով։ Ինքը Անդրկովկասը պետք է ներկայացնի մի ռամկավար դաշնակցային հանրապետություն՝ բաժանված կանտոնների՝ տեղադրական ու մշակութային պայմանների համաձայն։

Գյուղացիական համագումարը գտնում է, որ մինչև Սահմ. ժողովի կենտր. կառավարությունը և նրա կովկասյան ներկայացուցիչները պարտավոր են.

Նախապատրաստել Սահմ. ժողովի գործը, նոր նահանգական ու գավառական բաժանումներ մտցնել Անդրկովկասում, այնպես, որ նրանք համապատասխանեն աշխարհագրական և տնտեսական պայմաններին և հավասար ու արդար պայմանների մեջ դնեն բոլոր ազգերին։

Անմիջապես մտցնել տեղական լեզուները բոլոր վարչական և դատական հիմնարկությունների մեջ, որի համար անհրաժեշտ է փոխել պաշտոնյաների կազմը։

Սեպտեմբերից տարրական դպրոցները կատարելապես ազգայնացնել, միջնակարգ դպրոցները՝ նույնպես։ Որտեղ այդ հնարավոր չի լինի ամբողջովին, ազգայնացնել գեթ ստորին դասարանները։

Նոր վարչական բաժանումները մտցնելուց հետո, տալ երկրին զեմստվոյին ինքնավարություն և երդվյալների դատարան։

Այս գործը թեթևացնելու համար նահանգի գյուղացիների համագումարը սրտագին կոչ է ուղղում Ռուսաստանում ցրված բոլոր կովկասցի ինտելիգենտ հայրենակիցներին՝ վերադառնալ հայրենիք և հեշտացնել դպրոցների ու այլ հիմնարկությունների ազգայնացման գործը»։

Նույն այդ տրամադրությունները տեսնում ենք և քաղաքային ինքնավարությունների, ապա և Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ։ Այս վերջինին արդյունքը խիստ բնորոշ է Անդրկովկասի քաղաքական ուժերի դասավորության տեսակետից։

Սահմանադիր ժողովի ընտրություններին, Անդրկովկասում իրար հետ մրցող ու պայքարող կողմերն էին սոցիալ-դեմոկրատները (№ 1), որոնք դեռ գործում էին համառուսական կուսակցության անունով և բացի Վրաստանի քվեներից ստացան նաև հայ, ռուս, թուրք և այլ քվեներ, ինչպես նաև զորամասերի սոց.-դեմոկրատ զինվորների ու սպաների ձայները, մուսավաթն ու թուրք անկուսակցական խմբակը (№ 10),

որ ներկայացնում էր մահմեդական ազգայնական խավերը, և Հ. Հ. Դաշնակցությունը (№ 4)։ Ընտրության հետևանքը եղավ հետևյալը. սոցիալ-դեմոկրատները ստացան 661 934 քվե և տվին 12 պատգամավոր, մուսավաթականները՝ 615 934 քվե՝ 10 պատգամավոր և Հ. Հ. Դաշնակցությունը՝ 558 400 քվե՝ 9 պատգամավոր։ 62 044 քվեն տալիս էր մեկ պատգամավոր։ Հ. Հ. Դաշնակցության ցանկով ընտրված պատգամավորներն էին Ռոստոմ Զորյանը, Մ. Հովհաննիսյանը (Մ. Վարանդյան), Հ. Օհանջանյանը, բժ. Հ. Զավրյանը, Կ. Համբարձումյանը, Ավ. Շահխաթունյանը, Հ. Քաջազնունին, Սիր. Տիգրանյանը, Կ. Ղազազյանը։ Այսպիսով, առանց չափազանցության, Անդրկովկասի հայ ժողովրդի ավելի քան 95 % իր քվեն տվեց, հետևաբար և վստահություն հայտնեց Հ. Հ. Դաշնակցությանը։

Այս համապետական տրամադրություններին ու լավատեսությանը զուգընթաց զգացվում էր և ներքին անհանգստություն կատարվող դեպքերի հանդեպ։ Որքան էլ հեղափոխությունը արբեցրած լիներ ամենքին, անկարելի էր չնկատել, որ որոշ խավերում աճում էր ձգտումը հեղափոխությունը օգտագործելու ռազմաճակատի գործերը ի նպաստ Թուրքիայի շրջելու համար։ Դիտվում էր ճակատի պահանջների հանդեպ խիստ անփույթ վերաբերում վրացական շրջաններում և քողարկված հակառուս աշխատանք մահմեդականների կողմից։ Բաքվի Մահմեդական բարեգործական ընկերությունը բազմապատկել էր իր գործակալների և նյութական հատկացումների քանակը Կարսի նահանգում և Էրզրումի ու հարակից շրջաններում։ Պաշտոնապես նրանք զբաղված էին մահմեդական որբերի ու գաղթականների հոգատարությամբ. իրապես՝ ռուս բանակի թիկունքում գործում էին հօգուտ Թուրք զենքի։

Այս աշխատանքը, ուրիշներից ավելի, տեսնում էին հայերը, և հեղափոխության առաջին օրերից հենց ճակատի պաշտպանության, ազգային ինքնապաշտպանության և հայկական ներքին ուժերի համախմբման պահանջը շատերի համար դարձավ լուրջ մտահոգության առարկա։ Այս պահանջի հետևանքով առաջ եկավ ազգային ներքին կազմակերպության անհրաժեշտության գիտակցությունը։

Ապրիլի 10—13-ին Թիֆլիսում Ազգային բյուրոյի հրավերով գումարվեց միջկուսակցական մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Ազգային բյուրոյի և Կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամները, նախկին կամավորական խմբերի հրամանատարները, գավառական բյուրոների և կոմիտեների ներկայացուցիչները, Թիֆլիսի Միջկուսակցական մարմինը, Արևմտահայ խորհրդի անդամները և այլն՝ Թիֆլիսից 75 և գավառներից 20 գործիչ։ Այդ ժողովում ներկայացվեցին մանրամասն զեկուցումներ ընդհանուր և ազգային-քաղաքական կացության, ինչպես և ռազմաճակատի ու գավառների վիճակի մասին։ Եվ անհրաժեշտ տեսնվեց, երկու ամսից ոչ ուշ, հրավիրել ազգային համագումար՝ արևելահայերի կյանքին վերաբերվող խնդիրների լուծման համար։ Որոշվեց, որ համագումարը կկազմվի քառանդամ ընտրական եղանակով՝ երկու սեռերի մասնակցությամբ. 10 000 հոգուն՝ մեկ պատգամավոր։ Ընտրություններին մասնակցելու էին միայն արևելահայերը։ Համագումարը պետք է գումարվեր Երևանում։ Ընտրությունների կազմակերպումն ու ղեկավարումը, համագումարի օրակարգի մշակումը և այլ խնդիրների կարգադրությունը հանձնվեց Թիֆլիսի Միջկուսակցական մարմնին, որը իրավունք պիտի ունենար իր կազմը ուժեղացնել նոր անդամներով։

Այս որոշումը, սակայն, ժամանակի ընթացքում, ենթարկվեց որոշ փոփոխության, և համագումարը հրավիրվեց կեսընտրական, կեսնշանակովի սկզբունքով։ Նախապատրաստական բոլոր աշխատանքները կատարելուց հետո, սեպտ. 28-ին, Թիֆլիսի առաջնորդարանի սրահում, տեղի ունեցավ համագումարի անդամների և Միջկուսակցական մարմնի խորհրդակցական մի ժողով, ուր պարզվեց համագումարի վերջնական կազմը. 113 դաշնակցականներ, 43 ժողովրդականներ, 23 սոցիալիստ-հեղափոխականներ, 9 սոցիալ-դեմոկրատներ (մենշևիկ, բոլշևիկ և հնչակյան) և 7 անկուսակցականներ, ընդամենը 203 հոգի։ Համագումարին մասնակցեց առանձին ներկայացուցչություն և Արևմտահայ խորհրդի կողմից (Անդրանիկ, Վահան Փափազյան, Ա. Թերզիբաշյան ևլն.)։ Նույն ժողովում որոշվեցին և համագումարի բացման ու ղեկավարության գործնական խնդիրները՝ չընտրել պատվո նախագահներ չարտասանել ողջույնի ճառեր։ Երկար վեճից հետո, համագումարի բացման պարտականությունը թողնվեց Միջկուսակցական մարմնին։ Բուռն վեճեր տեղի ունեցան և նախագահության կազմի մասին. ի վերջո որոշվեց համեմատական սկզբունքով ընտրել 7 նախագահ և 5 քարտուղար։ Թեև ըստ պատգամավորների քանակի նախագահների կեսից ավելին պետք է լիներ դաշնակցական, բայց դաշնակցականները համաձայնեցին ունենալ 3 տեղ և մի տեղ տալ անձնապես Մոսկվայի ներկայացուցիչ անկուսակցական Ստ. Մամիկոնյանին։

Համագումարի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ սեպտ. 29-ին ժամը 12-ին, Արտիստական թատրոնի ընդարձակ սրահում, խուռն բազմության ներկայությամբ։ Հ. Օհանջանյանի հանուն Միջկուսակցական կոմիտեի արտասանած բացման ճառից հետո, յոթը նախագահներ ընտրվեցին. Հ. Քաջազնունի, Ալ. Խատիսյան և Ա. Ահարոնյան (դաշն.), բժ. Այվազյան (ժող.), Լ. Աթաբեգյան (ս.-հ.), Ղ. Տեր-Ղազարյան (ս.-դ.), Ս. Մամիկոնյան (անկս.) և 5 քարտուղարներ՝ Հ. Տեր-Հակոբյան և Ա. Զոհրաբյան (դաշն.), Ս. Մալխասյանց (ժող.), Հ. Ստեփանյան (ս.-հ.) և Ս. Հովվյան (հնչ.)։

Նիստի նախագահությունն ստանձնելով Ս. Մամիկոնյանը՝ նկարագրեց հայ ժողովրդի համար ստեղծված տարապայմանորեն ծանր դրու-

թյունը և ջերմագին կոչ ուղղեց համագումարին՝ հրավիրելով համերաշխ ու ներդաշնակ գործունեության։ Ապա լուծվեցին ժողովավարության գործնական հարցերը, կազմվեց պատգամավորների լիազորությունները քննող հանձնախումբ և որոշվեց համագումարը բաժանել 4 հատվածների, որից յուրաքանչյուրի մեջ մտնեն 5 դշնկց., 5 ժող., 3 սոց-հեղ., 2 սոց.-դեմ.։ Դաշնակցականները իրենց մեկ ձայնը բոլոր հատվածներում զիջեցին սոց.-դեմ-երին ու հնչակյաններին։

Համագումարի 2-րդ նիստը, սեպտ. 30-ին, նվիրվում է ընդհանուր քաղաքականության հարցին։ Դաշնակցության կողմից «Քաղաքական մոմենտի մասին» զեկուցում է ներկայացնում Ս. Վրացյանը, որ մասնակցելով Մոսկվայի «Պետական խորհրդակցությանը», իբրև Անդրկովկասի Հեղափոխական կենտրոնի ներկայացուցիչ, մոտեն ծանոթ էր Ռուսաստանի ներքին կացությանը։ Շեշտելով այն խանդավառությունը, որով ամբողջ Ռուսաստանը ընդունեց հեղափոխությունը՝ նա մանրամասն կանգ է առնում երկրում տիրող անկերպարան վիճակի վրա, ուր գոյություն ունի ընդհանուր հիասթափություն երկրի ներսում և ճակատներում։ Ռուսաստանը կանգնած է սուր ճգնաժամի առաջ։ Պատճառները զորեղ են և բազմազան։ Նախ խանգարված է պետական մեքենան. չկա հեղինակավոր իշխանություն. անվանապես գոյություն ունեցող պետական մարմինների ազդեցությունը կյանքի վրա չնչին է։ Ծայրագավառներում ու գյուղերում տիրում է անիշխանություն։ Երկիրը շարժվում է տարնդային կերպով։ Վարիչ ձեռք չկա։

Երկրորդ՝ խանգարված է երկրի տնտեսական կյանքը։ Կանգ է առել արդյունաբերությունը։ Օրավուր զարգանում է քայքայումը։ Պարենավորման ճգնաժամը և ապրուստի թանկությունը անտանելի են։ Այդ հողի վրա տեղի են ունենում բազմաթիվ խռովություններ և ընդհարումներ։

Երրորդ՝ պակաս հուսահատական չեն և երկրի ֆինանսները։ Պատերազմը կլանում է միլիարդներ։ Պետական եկամուտները պակասում են։ Ներմուծումը և արտածումը կանգ են առել. եկամուտի միակ աղբյուրը մնացել է փոխառությունը։ Սակայն արտաքին փոխառություն չի կարելի, որովհետև պետությունը դուրսը վարկ չունի։ Ներքին փոխառությունն էլ հաջողություն չունի, որովհետև բնակչության ունևոր մասը չի վստահում հեղափոխական կառավարության։ Կառավարության առաջ մնում է միակ վտանգավոր և անհույս ճանապարհը՝ հեղեղել երկիրը թղթադրամով, որը ավելի է ծանրացնում կյանքը։

Չորրորդ՝ նույն քայքայումը տիրում է և ռազմաճակատներում։ Զորքը լքումի է մատնված։ Կարգապահությունն ընկած է, բանակի տոկունությունը խորտակված. զինվորը մերկ է, անոթի և անզեն։ Զմեռը գալիս է, բայց ո՛չ մի պատրաստություն չի արվում։ Վտանգի մեջ է ոչ թե լոկ հեղափոխությունը, այլև բովանդակ պետությունը։

Ի՞նչ անել։ Եվ զեկուցողը արծարծում է երկու միջոց։

Առաջին՝ երկրում պետք է ստեղծել զորեղ իշխանություն, որը պետք է լինի կոալիցիոն։ Հեղափոխության հարած բոլոր տարրերը պետք է կազմեն կուռ ճակատ ոչ միայն կենտրոնում, այլև ամենահետին գյուղում։ Դեմոկրատիան է իշխանության նեցուկն ու հիմքը։

Երկրորդ՝ պետք է աշխատել հաշվեհարդարի ենթարկել պատերազմը, որը աղբյուրն է բոլոր չարիքների։ Ներկա պայմաններում, երբ երկրի բոլոր ուժերը քայքայման վերջին ծայրն են հասել, պնդել թե պատերազմը պետք է շարունակել մինչև հաղթական վախճանը, անհեռատեսություն է։ Սակայն, ինչպե՞ս վերջացնել պատերազմը։ Հնարավո՞ր է միթե անջատ հաշտություն կնքել։ Եթե հնարավոր է, այդ կլինեք լավագույն ելքը. բայց այդ հույսը դժվար իրագործելի է, որովհետև միայն Ռուսաստանից չի կախված։ Ռուսաստանը համաեվրոպական ընդհանուր շղթայի մի օղակն է և անջատ հաշտությունը մի ճակատում կարող է պատճառ դառնալ նոր պատերազմի մի ուրիշ ճակատում։ Հաշտությունը կարող է լինել կամ դաշնակիցների հետ միասին և կամ նրանց համաձայնությամբ։ Ռուսաստանը պետք է ձգտի հաշտության՝ եվրոպական դեմոկրատիան էլ ոտքի հանելով հանուն հաշտության։ Իսկ մինչ այդ պետք է վարել ոչ թե հարձակողական, այլ պաշտպանողական պատերազմ՝ ամուր պահպանելով գրավված դիրքերը։ Այս հանգամանքը առանձին նշանակություն ունի մասնավորապես մեզ՝ հայերիս համար։ Հասկանալի է, թե ինչ կլինի մեր վիճակը, երբ թշնամու առջև ռազմաճակատը մերկանա։ Մենք ուրիշներից ավելի ուժ պիտի տանք ճակատի ամրացման և միջոց չխնայենք ճակատի կայունությունն ու զինվորների ֆիզիկականն ու բարոյականը բարձրացնելու համար։ Ճակատի պաշտպանությունն և հաշտություն՝ այս ձևով կարելի կլինի ապահովել մեր նվաճումները Թուրքահայաստանում։ Նույնպես պետք է նպաստենք ուժեղ իշխանության կազմության և երկրի քառսային վիճակի դեմ կռվելու։ Դրա համար նախ մեր մեջ եղած հոսանքները պետք է ըմբռնեն պետության և մեր ազգային շահերի ներդաշնակությունը և իրագործեն համերաշխություն. նույն զգացումով տոգորված պետք է լինեն հայ, թուրք և վրացի աշխատավոր զանգվածները։

Հոկտ. 1-ի նիստում քննության է առնվում Վրացյանի զեկուցումը։ Իրար հետևից խոսում են հոսանքների ներկայացուցիչները, որոնք համաձայն են գտնվում զեկուցանողի հիմնական մտքերին և ըստ իրենց աշխարհայացքի՝ պարզաբանում ու հիմնավորում են հիմնական դրությունները։

Դավիթ Անանուն (ս.-դ.)— բուրժուազիան չունի քաղաքակրթված սեփականություն, հետևաբար և չի կարող դառնալ իրականության տերը. նա պետք է ընդառաջ գնա դեմոկրատիայի նվազագույն պահանջներին և կոալիցիայի մեջ մտնի առանց հետին մտքերի։ Կոալիցիան պետք է

լինի իսկական և չպիտի կասկածել դեպի ձախը. կասկած կարող է լինել միայն աջ թևի վերաբերմամբ։ Գալով հայ ազգային քաղաքականությանը՝ մենք չպետք է ասենք, թե մեր խրճիթը գյուղի ծայրում է, մենք մեզանով զբաղվենք, ուրիշները ինչ ուզում են անեն. ընդհակառակը, մենք պետք է միանանք ռուս դեմոկրատիայի ծովին և լինենք ռուսից էլ ավելի ռուս։

Լևոն Աթաբեգյան (ս.-հ.)— խոսում է սոցիալիզմի մասին։ Սոցիալիզմը միայն դասակարգային պայքար կամ արդյունաբերական միջոցների համայնացում չէ, սոցիալիզմը մի ամբողջ կուլտուրա է, որից տակավին հեռու է Ռուսաստանը։ Ռուսաստանի հեղափոխությունը սոցիալիստական չէ. դասակարգային հակամարտությունը ներկա պայմաններում վնասակար է Ռուսաստանի պետականության շահերին։ Մեր նպատակը պետք է լինի պաշտպանել պետականության շահերը և իշխանության կազմակերպման խնդրում ամբողջապես ընդունել կառավարության դեկլարացիան։ Պատերազմի նկատմամբ պետք է տոկունությամբ պահել ճակատը։ Ազգային քաղաքականության հարցում մենք մեր երկրում պետք է դարբնենք մեր բախտը մեր հարևանների հետ միասին։ Մեր բախտը չպետք է հանձնել կենտրոնին, որովհետև մենք կենտրոնի հետ շատ թույլ թելերով ենք միացած և եթե վաղը մի ձեռք կտրի այդ թելը, մենք կմնանք մեր երկրում բոլորովին մենակ։ Մենք պետք է միանանք մեր հարևաններին և հողային մաքսիմալ ծրագրի իրականացումը այդ գեղեցիկ միջոցն է, որը պիտի իրար հետ կապի հային և թուրքին։ Մեր համերաշխությունը մեր հարևանների հետ պիտի տեղի ունենա ոչ թե վերին շերտերում միայն, այլ նախ և առաջ ժողովրդի ստորին խավերում։

Ավետիք Շահխաթունյան (դաշ.)— գտնում է, որ բուրժուազիան ստիպված է ընդառաջ գնալ դեմոկրատիային։ Դա իսկական կոալիցիա, ուժերի ներկայացուցչություն չէ, այլ թույլի զիջում։ Այդ զիջումը կարելի է երկու կերպ բացատրել. կամ բուրժուազիան ենթադրում է, որ այդ բոլոր ծրագրերը ի չիք պիտի դառնան և կամ իր դասակարգային շահերը զոհաբերում է հայրենիքի շահերին։ Հայ բուրժուազիան այդ տեսակետից ավելի զիջում պիտի անի հայ դեմոկրատիային, որովհետև մեր ազգային գոյության խնդիրն է. այստեղ վտանգված։ Ընդունելով կառավարության ծրագիրը՝ մենք պիտի համախմբվենք մեր իրականության մեջ, գործենք համերաշխ, աչքի առաջ ունենալով պետության և մեր ազգային շահերը։

Քրիստափոր Վերմիշյան (ժող.)— խոսում է ռուսերեն, որի դեմ ժողովը բողոքում է. նա ճգնում է ապացուցել, որ հայ ժողովրդականները «բուրժուազիա» չեն, այլ ապադասակարգային կուսակցություն, որը միակն է, որ կանգնած է պետական տեսակետի վրա։ Նա ողջունում է իսկական կոալիցիայի գաղափարը, բայց կոալիցիա չէ, երբ միայն

բուրժուազիայից են զիջում պահանջում. դա գերություն է։ Հրավիրում է իսկական համերաշխության և զգուշացնում ծայրահեղ պահանջներից։ Դեմ է հողային մաքսիմալ ծրագրին, որը Կովկասում կարող է առաջ բերել միայն անկարգություններ և ջարդեր։

Ապա հետագա վիճաբանություններին մասնակցում են Ս. Արարատյանը, բժ. Աղաջանյանը, Ա. Խոնդկարյանը, Վ. Նավասարդյանը, Հ. Քաջազնունին, Հ. Առաքելյանը և Մ. Ղարաբեգյանը։ Բացի վերջինից, բոլորը պաշտպանում են կոալիցիայի սկզբունքը և կառավարությանը օգնելու անհրաժեշտությունը։ Հ. Առաքելյանը ճառում իր միտքը պաշտպանելու համար վկայության է բերում Քրիստ. Միքայելյանին ու Զավարյանին, որոնց անվանում է «իմ ընկերները»։

Վրացյանը (վերջին խոսք) բողոքում է Հ. Առաքելյանի հայտարարության դեմ, որ Զավարյանին և Քր. Միքայելյանին իրեն ընկերներ անվանեց։ Ապա առանձին-առանձին պատասխանում է եղած հակաճառություններին և շեշտում, որ Հայ ժողովրդական կուսակցությունը հայ բուրժուազիայի կուսակցությունն է և պաշտպանում է բուրժուական գաղափարախոսությունը։ Մեզ մոտ բուրժուազիան դեռևս գիտակից ու դասակարգորեն կազմակերպված չէ, դրա համար էլ ամաչում է, երբ իրեն բուրժուա են ասում, մինչդեռ պետք է ողջունել, որ, վերջապես, մեր բուրժուազիան էլ սկսում է հասունանալ ու կազմակերպվել։ Անցնելով Լ. Աթաբեգյանի հայտարարությանը, թե այսուհետև սոց.-հեղափոխականները հայ կյանքի պատասխանատու գործի մի մասը իրենք են վերցնելու, ողջունում է այդ հայտարարությունը, բայց պնդում է, որ, վերջին հաշվով, հայ էսէռներն էլ անելու են այն, ինչ որ մինչև այժմ արել է Հ. Հ. Դաշնակցությունը, որովհետև հայ միջավայրի մեջ ուրիշ անելիք չկա։

Ապա կարդում է իր բանաձևը.

«Նկատի ունենալով, որ ռուսական ներկա դեմոկրատական հեղափոխության ապահովությունն ու հաղթանակը կախված է նրանից, թե ինչ ուղղությամբ կընթանա դեմոկրատիայի կազմակերպումն ու զարգացումը և ինչպիսի փոխհարաբերություններ կստեղծվեն հեղափոխությանը մղում տվող հասարակական խավերի միջև.

Որ պետության ռազմաճակատում ու թիկունքում տիրող տնտեսական, քաղաքական, ռազմական և կուլտուրական աննպաստ պայմանների շնորհիվ մեծապես դժվարանում է պատերազմը վարելու և երկրի ներսում անդորրություն հաստատելու գործը.

Որ իշխանության կազմակերպման խոչընդոտները հեղափոխության յոթ ամիսների ընթացքում աճելով և սուր կերպով դրված լինելով երկրի առջև՝ շարունակ հուզել են հանրային կյանքը.

Որ կառավարական մարմինների ֆունկցիաների մի խոշոր մասը

պատվավոր կերպով տարել են հեղափոխական օրգանները և դեմոկրատիկ խորհուրդները, զինվորական կոմիտեները և այլն.

Որ օրեօր աճող տնտեսական ու քաղաքական անիշխանությունն ու քայքայումը և հեղափոխության շահերը հրամայական պահանջ են դարձնում ուժեղ իշխանության կազմակերպումը կենտրոնում ու բովանդակ երկրում և բոլոր հեղափոխական դասակարգերի և ժողովուրդների համագործակցությունը։

Այլև աչքի առաջ ունենալով Անդրկովկասի և հայ իրականության բացառիկ պայմանները, ազգային ու դասակարգային հարաբերությունների աննորմալությունը, հասարակական խավերի թույլ կազմակերպված լինելն ու համագործակցության բացակայությունը, ինչպես նաև արտակարգ տագնապալի հեռանկարը պատերազմի անհաջողության դեպքում կովկասյան ռազմաճակատի վրա՝

Ազգ. խորհրդաժողովը որոշում է.

1. Ողջունել կազմակերպումը նոր իշխանության, որն իր հայտարարած դեկլարացիայով խոստանում է իրագործել այն բոլոր պահանջները, որ դեմոկրատիան ձևակերպել էր օգոստ. 14-ի դեկլարացիայի մեջ և անպայման վստահություն հայտնել և աջակցություն ցույց տալ նրան։

2. Հավանելով կառավարության ձգտումը փութացնելու հաշտության կնքումը դաշնակիցների հետ և Ռուսաստանի պարտությունը համաբելով մահ նաև հեղափոխության՝ համախորհուրդը անհրաժեշտ է գտնում նպաստել նաև զորքի վերակազմության, ճակատի ու թիկունքի ամրացման, որպեսզի ռուսական բանակները պահեն բռնած ռազմագծերը և պաշտպանեն երկիրը թշնամու ներխուժումից։

3. Ձեռք առնել վճռական միջոցներ երկրի տնտեսական կյանքը և պարենավորման գործը բարեկարգելու, նշանակել պետական կոնտրոլ արտադրության և բաշխման վրա։ Բարձրացնել արդյունաբերության արտադրությունը՝ առողջ փոխհարաբերություն ստեղծելով արդյունաբերող և գործավոր դասակարգերի միջև։ Արտադրության և բաշխման գործում լայն տեղ տալ համագործակցական հաստատություններին։ Հաստատուն գներ նշանակել գյուղի և քաղաքի արտադրած ապրանքների վրա։ Պարենավորման գործի կազմակերպությանը հրավիրել տեղական ուժեր՝ հանձին քաղաքային և գավառական ինքնավարությունների ու կոոպերատիվների։ Ընդունել առաջին կարգի անհրաժեշտ առարկաների համար մենավաճառի սկզբունքը։

4. Պետության եկամուտն ավելացնելու նպատակով ընդունել պարտադիր փոխառության սկզբունքը։ Հարկ դնել և եղածներն ավելացնել պերճանքի առարկաների և ժառանգության վրա։ Կրճատել պետության ծախսերը խիստ խնայողության միջոցով։

5. Ազգային և հողային հարցի վերջնական լուծումը վերապահելով

Սահմ. ժողովին՝ ճանաչել ազգերի կուլտուրական ինքնորոշման և լեզվի իրավունքները պետական բոլոր հաստատությունների մեջ։ Բարեկարգել հարաբերությունները հողատերերի և գյուղացիների միջև։ Օրենսգրքական նյութ պատրաստել ազգային և հողային հարցերի մասին Սահմ. ժողովի համար։

6. Մինչև պետական ռամկավար օրգանների վերջնական կազմակերպումն ու ամրացումը ճանաչել դեմոկրատական խորհուրդների իրավասությունները և ապահովել նրանց անկաշկանդ գործունեությունը։

Անցնելով Անդրկովկասին և հայ իրականությանը, որ մասն է կազմում ընդհանուր պետության, և ընդունելով, որ վերոհիշյալ պահանջները տարածվելու են այստեղ, խորհրդաժողովը հարկ է համարում շեշտել հետևյալը.

1. Անհրաժեշտ է ուժեղ թափով առաջ տանել հայ դեմոկրատիայի կազմակերպումը։

2. Գիտակցելով, որ Անդրկովկասի խաղաղությունն ու բարգավաճումը հնարավոր է միայն բոլոր ազգերի, մանավանդ նրանց աշխատավոր մասերի հավաքական ջանքերով ձգտել իրականացնել հայ, վրացի, թուրք և այլ աշխատավորության համերաշխությունը և բոլորի հետ միասին եղբայրական ձեռք մեկնել համառուսական դեմոկրատիային։

3. Շտապեցնել Անդրկովկասում մտցնել զեմստվոյական հաստատություններ՝ նախօրոք կատարելով նահանգների վարչական բաժանում՝ ղեկավարվելով տեղական, ազգագրական և տնտեսական սկզբունքներով։

4. Հայկական ներքին կյանքում առաջ բերել բոլոր կազմակերպված և իրական արժեք ներկայացնող հոսանքների համագործակցություն՝ փութացնելով քառանդամ եղանակով ընտրված ազգային ժողովի գումարումը»։

Բանաձևեր են առաջարկում և մյուս կուսակցությունները, որոնք բոլորն էլ կոալիցիայի կողմնակից են։ Բոլշևիկները միայն բանաձև չեն առաջարկում և դեմ արտահայտվում կոալիցիային։ Դժբախտաբար, մյուս բանաձևերը ձեռքի տակ չունենք, այլապես շատ հետաքրքրական կլիներ հրատարակության տալ։ Ներկայացված բանաձևերը հաշտեցնելու և մի ընդհանուր բանաձև կազմելու համար ընտրվում է 10 հոգիանոց հանձնաժողով երկուական հոգի ամեն մի կուսակցությունից. Արարատյան, Վրացյան, Լ. Աթաբեգյան, Հ. Տեր-Օհանյան, Մ. Պապաջանյան, Ք. Վերմիշյան, Հ. Մանանդյան և բժ. Իսախանյան։

Հոկտ. 2-ի նիստում համագումարը միաձայնությամբ ընդունում է քաղաքական մոմենտի մասին հանձնաժողովի մշակած հետևյալ բանաձևը.

«Նկատելով, որ ժամանակավոր կառավարությունը այժմ ավելի քան երբեք կարիք ունի Ռուսաստանի բոլոր ժողովուրդների անվերապահ

աջակցության և որ հեղափոխական 7 ամիսների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները ցույց են տալիս, թե անհնար է ստեղծել երկրի մեջ ուժեղ պետական իշխանություն առանց այդպիսի աջակցության. նաև նկատի ունենալով, որ նոր կառավարության սեպտ. 25-ի հրատարակած դեկլարացիան իր բովանդակությամբ համապատասխանում է ստեղծված իրական պայմաններին, ընդգրկում է իր մեջ ներկա քաղաքական վայրկյանի հրամայական պահանջները և իր հայտարարած սկզբունքներով գոհացուցիչ պատասխան է տալիս նաև հայ ժողովրդի միջև Սահմ. ժողովն ունենալիք պահանջներին՝ ռուսահայ ազգային խորհրդաժողովը, ռուսական մեծ հեղափոխության հետևանքով առաջին անգամ գումարված ազատ պայմաններում, հայտնում է իր բացարձակ վստահությունը Ժամանակավոր նոր կառավարությանը և իր կատարյալ աջակցությունը բոլոր տրամադրելի միջոցներով»։

Քվեարկության չեն մասնակցում մենշևիկները, որոնք արձանագրության մեջ են մտցնում իրենց առանձին բանաձևը։ Նույն նիստում կարդացվում է նաև բոլշևիկների հայտարարությունը, որով նրանք հայտնում են, թե իրենք բոյկոտի են ենթարկել համագումարը և ո՛չ մի ներկայացուցիչ չունեն այնտեղ։

Համագումարի 4-րդ նիստում քննության է առնվում վերաբերումը դեպի Անդրկովկասի Առանձին կոմիտեն, որի մասին զեկուցումներ են ներկայացնում Հ. Առաքելյանը և Ն. Աղբալյանը։ Անդրկ. Առանձին կոմիտեն նշանակվել էր Ժամ. կառավարության կողմից 1917-ի մարտին և անմիջապես ենթարկվելով կենտրոնական կառավարությանը՝ հանդիսանում էր Անդրկովկասի տեղական բարձրագույն գործադիր իշխանությունը. ուրիշ խոսքով՝ նա կատարում էր փոխարքայի դերը։ Առանձին կոմիտեի կազմն էր. երկու վրացի՝ Ա. Չխենկելի և Ք. Աբաշիձե, 1 ռուս՝ Խարլամով, 1 թուրք՝ Ջաֆարով և 1 հայ՝ Մ. Պապաջանյան։ Անջիղ, անգույն և ներքին հակասություններով ու ազգային ինտրիգներով հարուստ մարմին էր այդ։

Հ. Առաքելյանը (ժող.) գտնում է, որ Անդրկովկասի Առանձին կոմիտեն չարդարացրեց իր վրա դրված հույսերը։ Նրա անշնորհք գործունեության հետևանքով երկրի շփոթ վիճակը սաստկացավ։ Ավազակությունները սովորական երևույթների կարգն անցան։ Երկրում միլիցիա չկազմվեց։ Նրա լիազորներն ու հրահանգիչները գավառում աչքի ընկնող գործ չկատարեցին։ Պատճառը ոչ թե Առանձին կոմիտեի անկարողությունը կամ չկամենալն էր, այլ որովհետև պետության կենտրոնական իշխանությունն էլ թույլ է։ Մյուս կողմից՝ Առանձին կոմիտեն կազմվելով ազգային սկզբունքով՝ չկարողացավ իր շուրջն համախմբել բնակչությունը. յուրաքանչյուր ազգ խմբվեց իր ներկայացուցչի շուրջը։ Առաջ եկավ մի քանի իշխանություն, հաճախ, իրար հակասող ու տարբեր գործելակերպով։ Պետք է Առանձին կոմիտեն կազմել 7 անդամից. 4 դրսից

(սոցիալիստ ու կադետ) և 3 տեղական ազգերի ներկայացուցիչներից։

Ն. Աղբալյանը հիշում է ընդհանուր խանդավառությունը Առանձին կոմիտեն ընդունելիս և առաջացած հիասթափությունը։ Կովկասյան ազգերից յուրաքանչյուրը համախմբվեց Առանձին կոմիտեի կազմի մեջ ունեցած իր ներկայացուցչի շուրջը՝ ծառայելով նրան զորեղ հենարան։ Ամենից թույլ հենարանը գտավ հայ ներկայացուցիչը, որովհետև նա չէր արտահայտում այն հոսանքին, որ ամենից զորեղն է հայ կյանքում։ Շուտով երևաց, որ կովկասյան կառավարությունը վարում է ոչ թե պետական, այլ ազգային քաղաքականություն, որ Առանձին կոմիտեի ամեն մի անդամը վարում է իր ազգային քաղաքականությունը՝ պետական իշխանությունը իր ազգի շահերին ծառայեցնելով։ Այդտեղ էլ մեր ներկայացուցիչը ամենից թույլը գտնվեց, որովհետև նա իր քայլերը կատարում էր ոչ ազգի բազմության ձայնը ներկայացնող հոսանքների խորհրդատվությամբ։ Կովկասյան կառավարության դրությունը ավելի ևս խախտվեց, երբ Պետրոգրադում լուծվեց առաջին Ժամանակ. կառավարությունը, ուրեմն Առանձին կոմիտեն զրկվեց և այդ հենարանից։ Հետևանքը եղավ այն, որ մենք այդ վեց ամսվա ընթացքում ունեցանք կառավարիչներ, բայց ոչ կառավարություն։ Երկրի վիճակը գնալով ավելի ևս վատթարացավ, ազգերի մրցակցությունը զորացավ։ Դրա մի գլխավոր պատճառն էլ այն էր, որ կառավարության մեջ գերիշխանություն ձեռք բերեց վրացական սոցիալ-դեմոկրատիան. սա իր կուսակցական դրոշակի տակ հաճախ առաջ էր մղում ազգային խնդիրներ, գերիշխանության ուժ տալով վրացական ազգին, մեկուսացնելով հայ ժողովրդին և հանձին Դաշնակցության՝ հեռու պահելով նրան իշխանությունից։

Կառավարության թուլության մի պատճառն էլ այն էր, որ նա չուներ գործակալներ, որ ենթարկվեին նրան, կատարեին նրա հրամաններն ու կարգադրությունները։ Կարծեք նա մի հանձնախումբ էր, որ կարգադրություններ էր անում չկատարվելու, թղթի վրա մնալու համար։ Այս կարգադրությունների մեջ էլ մեր ժողովուրդը ամենից թույլ մասնակցությունն ուներ։ Պատճառը հայ ներկայացուցչի անձնական թուլությունը չէ, այլ հայ ժողովրդի ինքնազգացման թուլությունը։ Բազմաթիվ են հայ ինքնազգացման թուլությունը առաջացնող պատճառները, որոնցից թվենք մի քանի կարևորագույնները.

1) Որ հայ ժողովուրդը մեր երկրում միապաղաղ տարր չի ներկայացնում. նա ամեն տեղ ապրում, շփվում է այս կամ այն օտար ազգի հետ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ազգային տենչերն ու ձգտումները, որոնց հետ ընդհարվելով հայ ժողովուրդը՝ նախ հետ է մնում իր առաջադիմության մեջ. երկրորդ՝ թուլանում է ազգային ինքնազգացումը։ Ուրիշ խոսքով ասած՝ հայ ժողովրդի ինքնազգացման թուլության մի պատճառը պայքարի բազմաճակատությունն է։

2) Որ մենք դեռ ԺԱ դարից սկսած հեռու ենք եղել իշխանությու-

նից, չենք ունեցել իշխանական դասակարգ, իշխելու տենչ և ունակություն ունեցող խավ. մինչդեռ մեր հարևան Թուրքերն ու վրացիները մինչև այսօր էլ ունեն այդպիսին, որին ռուս կառավարությունը ձեռք էր մեկնում և հաճությամբ իշխանության այս կամ այն բաժինը հանձնում։ Սա պատմական մի փաստ է, որի հանդեպ չպետք է աչք փակել։

3) Որ մենք ոչ միայն չենք ունեցել, այլև միշտ խուսափել ենք իշխանությունից, որովհետև հայը շարունակ օտար իշխաններ է տեսել՝ մեկը մյուսից վատ և այլանդակ։ Եվ եթե մի հայ պետական պաշտոնյա է դարձել, հայ ժողովուրդը նրան վերաբերվել է բոլորովին այլ տրամադրություններով։ Այնինչ, մեր հարևանները իշխանության մասնակցել են զորեղ չափով, մանավանդ վրացիները, և թե վաղը Վրաստանը կամենա, ինքնավարություն ստեղծել և ամբողջ իշխանությունը վրացիներով վարել, առանձին դժվարության չպետք է հանդիպի։ Ուրիշ խոսքով, հարևանների ինքնազգացումը տիրողի է, մերը՝ հպատակի։

4) Որ հայ մտավորականության գլխավոր ուշադրությունը դարձած է եղել ոչ թե մեր երկրի, այլ Տաճկահայաստանի վրա, որով մենք տեղական հարցերը լուծելու ունակությունից զրկված ենք մնացել։ Մեր մտավորականությունը մեծ մասով ազգային կրթություն ունենալով՝ իր շարքերում քիչ է տվել ընդհանուր ցցուն դեմքեր. եղածներն էլ գլխավորապես կապված են եղել Տաճկահայաստանի հետ։

5) Սրանց կողքին, հայ ժողովրդի վրա շատ խոշոր ազդեցություն ունեցավ նաև Թուրքահայերի վերջին կոտորածն ու գաղթականությունը, որը գրավեց մեր ամբողջ ուշադրությունը, մեր բոլոր ուժերը և հեռու պահեց նրանց իշխանության մեջ ունենալիք հնարավոր մասնակցությունից։ Կոտորածն ու գաղթականությունը փշրեցին հայ ժողովրդի թևերը։ Մյուս կողմից այն ծանր կացությունը, որի մեջ ապրում է այժմ հայ ժողովուրդն ազգովին, թուլացնում է մեր ազգային ինքնազգացումը և շեղում մեր ազգային կամքը, որի հետևանքով մենք ստիպված ենք զբաղվելու ոչ թե իշխանության հեղափոխության խնդիրներով, այլ մեր ֆիզիկական գոյության հարցով։

Կոռնիլովյան ապստամբությունից հետո Անդրկովկասում ևս կազմվեց հեղափոխական իշխանություն, որի մեջ տիրող դերը ստանձնեց վրացական սոց-դեմոկրատիան։ Հայ ժողովուրդն զրկվեց այնտեղ, հանձին Դաշնակցության, մասնակցության հնարավորությունից, որովհետև հայտարարվեց նախօրոք, որ այդ իշխանությունը պետք է կազմված լինի սոցիալիստական տարրերից, իսկ Դաշնակցությունը, որի ետևից գնում է հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը՝ աշխատավորությունը, հայտարարվեց ոչ սոցիալիստ։

Այս երևույթը անբնական է և անարդար. իշխանությունը չպետք է թողնվի բախտի խաղին. նրա մեջ պետք է վերականգնվի ուժերի հավասարակշռություն, որովհետև առանց դրան իշխանությունը չի կարող

լինել օգտակար և արդար։ Այս տեսակետով, անհրաժեշտ է մի չեզոք, ղեկավար տարր Կովկասյան իշխանության մեջ, որը սանձեր ուժեղի ոտնձգությունը և պաշտպաներ թույլի իրավունքները։ Կովկասյան ապագա կառավարությունը պետք է լինի կոալիցիոն, 7 հոգուց. 4 կենտրոնից, ոչ տեղական ազգերից, 3 Կովկասյան երեք գլխավոր ազգերից, մեկ-մեկ հոգի յուրաքանչյուր ազգից և անպայման այն հոսանքից, որը ամենաազդեցիկն է այդ ազգի մեջ։ Ազգային ներկայացուցիչներից յուրաքանչյուրը իր կողքին կունենա ազգային խորհուրդ՝ կազմված իր ազգի մեջ եղած բոլոր հոսանքներից։

Հինգերորդ նիստում վիճաբանության են դրվում նախորդ զեկուցումները.

Սիմ. Փիրումյանը (մենշևիկ) խոսում է ռուսերեն, որի դեմ ամեն կողմից բողոքներ են լսվում։ Նա քննադատում է Առանձին կոմիտեի ազգային հիմքը, կողմնակից է կոալիցիայի և դեմ դրսից «վայրագներ» բերելուն։ Իր ճառի մեջ մի շարք փողոցային հայհոյանքներ է ուղղում դաշնակցականների հասցեին (բանդիտներ ևն.)։ Պոռթկում է ընդհանուր բողոք ու զայրույթ։ Նախագահ Լ. Աթաբեգյանը հանդիմանում է Փիրումյանին և պահանջում ներողություն խնդրել։ Ժողովը խառնվում է և քշում ճառախոսին ամբիոնից։

Ա. Երզնկյանը սոց.-դեմոկրատական ֆրակցիայի կողմից ներողություն է խնդրում Փիրումյանի խոսքերի համար։ Ապա քննադատում է Առանձին կոմիտեի ազգային բնույթը։ Մոտ լինելով Առանձին կոմիտեին, նա վկայում է, որ կոմիտեի անդամների առանձնասենյակները մի-մի դավադրական վայրեր են, ուր գավեր են նյութում ոչ միայն իրար դեմ, այլև ազգերի դեմ։ Մի դժբախտ պատահականությամբ Ջաֆարովի և Պապաջանյանի սենյակները գտնվում են իրար մոտ և դռները բացվում են իրար մեջ, կարծեք միմյանց գործողությունները դիտելու համար։ Եվ պետք է տեսնել, թե ինչե՞ր են տեղի ունենում այնտեղ։ Պետք է վերակազմել իշխանությունը սոցիալիստական հիմքերով։ Կովկասի կառավարությունը պետք է կազմել միայն սոցիալիստներից, և Դաշնակցությունը, իբրև ազգային և ոչ սոցիալիստական կուսակցություն, տեղ չպիտի ունենա այնտեղ։ Կարիք չկա դրսից չեզոք տարրեր հրավիրելու, սոցիալիստ լինելու հանգամանքը բավական է, որ իշխանությունը Կովկասում տարվի ապազգային, պետական ուղղությամբ։ Եվ հետո մի շարք մեղադրանքներ է ուղղում դաշնակցականների հասցեին, որոնք իբրև թե «վարում են թիկունքի քաղաքականություն»։

Ս. Հարությունյանը (ժող.) Առանձին կոմիտեի թուլության պատճառը գտնում է ոչ թե նրա ազգային կազմի, այլ ազգայնական բնույթի և ընդհանուր պետական պայմանների մեջ։ Կովկասի իշխանությունը պետք է հիմնել ազգային սկզբունքներով. ազգերի ինքնորոշումը հեղափոխության նվաճումներից մեկն է։ Նա ևս հակառակ է դրսից չեզոք

մարդկանց հրավիրելու մտքին։ Կովկասի կառավարությունը պետք է կազմվի մի ընդհանուր կոմիսարից (ոչ կովկասցի) և երեք օգնականներից՝ հայ, վրացի, թուրք։

Առանձին կոմիտեի հարցի քննությունը շարունակվում է և վեցերորդ նիստում, ուր, ի միջի այլոց, մի ուժեղ ճառ է արտասանում Ն. Կարճիկյանը, որ հերքում է Դաշնակցության դեմ եղած մեղադրանքները։ «Ասում են, որ մենք գործում ենք կովկասյան դեմոկրատիայի թիկունքում և այդ է հայ ժողովրդի մեկուսացման պատճառը։ Ճի՞շտ է այդ։ Փաստ է, որ թուրք դեմոկրատիա գոյություն չունի. հայ դեմոկրատիան ինքն իր թիկունքում գործել չի կարող։ Նշանակում է, մնում է վրաց դեմոկրատիան՝ սոցիալ-դեմոկրատիան։ Եվ մեզանից պահանջում են, որ մենք նրա հետևից գնանք։ Բայց մի՞թե հնարավոր է այդ։ Ո՛չ, հետևից գնալու մասին խոսք լինել չի կարող. խոսք կարող է լինել միայն հետը գնալու մասին, և այդ բանն է, որ վրաց սոցիալ-դեմոկրատիան չի ուզում ընդունել։ Պահանջում են, որ Դաշնակցությունը լինի ստորադասյալի կամ խնդրողի դերում։ Դա և՛ անպատվաբեր է, և՛ անպատակահարմար, որովհետև անկարելի է, որ մի ամբողջ ժողովրդի դեմոկրատիայի կազմակերպությունը խնդրողի դեր ստանձնի մի հարևան ժողովրդի դեմոկրատիայի հանդեպ»։

Մի շարք ուրիշ ճառախոսներից հետո, հուզված կերպով պաշտպանվում է Առանձին կոմիտեի անդամ Մ. Պապաջանյանը, որ Կոմիտեի թուլության պատճառը տեսնում է պետական իշխանության ընդհանուր թուլության մեջ։ Եվ երկար կանգ է առնում իր հրաժարականների վրա։ «Իմ պաշտոնավարությունը եղել է հրաժարականների մի շարք»։ Վրդովված հերքում է Երզնկյանի պնդումը, թե իր «առանձնասենյակը եղել է դավադրությունների վայր»։ Դեմ է արտահայտվում դրսից չեզոք տարրեր բերելուն, «որովհետև մենք և մեր հարևանները ձգտում ենք ինքնավարության, իսկ այստեղ ուրիշին են ուզում հանձնել մեր իշխանությունը։ Կառավարությունը պետք է հանձնել սոցիալիստներին, որովհետև միայն սոցիալիստական իշխանությունը կարող է հեղինակություն ունենալ լայն զանգվածների մեջ»։

Ն. Աղբալյանը, իբրև վերջին խոսող, մի ոգեշունչ ճառով մեկիկ-մեկիկ հերքում է հակառակորդների ամբաստանությունները։ Ժողովը լարված հետևում է նրա հիանալի ճառին, որը հաճախ ընդհատվում է պատգամավորների և հանդիսականների խանդավառ ծափերով։ Վերջացնում է մի տպավորիչ պատկերով, որի մեջ Դաշնակցությունը նմանեցնում է վարպետ դարբնի, որ փոքրիկ մուրճը ձեռքին վարում է աշխատանքը, իսկ մյուս կուսակցությունները՝ մուրճ խփող աշկերտի։ Հենց որ աշկերտներից մեկը սխալմամբ մուրճը փոխանակ երկաթին խփելու՝ խփի վարպետի ձեռքին, սա իր մուրճով կզարնե նրա գլխին և կհրավիրե կարգի։ Ճառի այս համեմատությունը ծայր աստիճանի ջղայ-

նացնում է սոց.-հեղափոխականներին և սոց.-դեմոկրատներին, որոնք աղմկով հեռանում են ժողովից և խորհրդակցելուց հետո որոշում են, իբրև բողոք, չմասնակցել այս նիստին։

Հաջորդ նիստը, հոկտ. 5-ին, գրեթե ամբողջապես զբաղվում է այս միջադեպով։ Արտ. Զիլինգարյանը կարդում է դաշնակցականների կողմից մի պատճառաբանված բանաձև, որով պարզում է Դաշնակցության դերը համագումարում։ Կուսակցության նպատակն է «հայ ժողովրդի բոլոր գործոն տարրերի հետ համաձայնության գալ այն գործնական միջոցների վերաբերմամբ, որոնք իրապես պիտի ապահովեն ազգամիջյան համերաշխությունը Կովկասում և գործակցությունը համառուսական դեմոկրատիայի հետ, հանուն հայ աշխատավոր ժողովրդի կենսական շահերի և ռուսական մեծ հեղափոխության հաղթանակի»։

Ժողովրդական կուսակցության կողմից Մ. Պապաջանյանը բողոքում է, որ ժողովից հեռացողները արգելք են լինում համագումարի բնականոն պարապմունքներին և դատապարտում է նրանց քայլը։ Անկուսակցականների կողմից Մանանդյանը նույնպես բողոքում է կուսակցական պայքարի դեմ և հրավեր է կարդում համերաշխության։

Այս հայտարարություններով միջադեպը համարվում է փակված։

Հոկտ. 6-ի նիստում քննվում է վարչական բաժանումների հարցը, որի մասին զեկուցում է ներկայացնում Ս. Կամսարականը (անկ.). «Անդրկովկասի վարչական սահմանները,— ասում է նա,— ռուսական տիրապետության տակ մի քանի անգամ են փոխվել։ Ներկա սահմանները մտցված են 60-ական թվականների վերջում։ Նահանգների, գավառների և գյուղական հասարակությունների սահմանները գծելիս ռուս կառավարությունը ղեկավարվել է ոչ թե տնտեսական, ցեղագրական ու վարչական նկատումներով, այլ բոլորովին մութ հաշիվներով։ Վերջերս ձգտում էր, որ քրիստոնյա և գլխավորապես հայ ազգաբնակչությունը մի վայրում մեծամասնություն չկազմի։ Դրա համար ժողովուրդը միշտ հարուցել է սահմանափոխման հարցը, բայց միշտ էլ մերժվել է։ Վերջին անգամ հին կառավարության օրով հարուցվեց 1916-ին, երբ զեմստվոն մտցնելու խնդիրը դրվեց»։ Ապա փաստերով և թվերով ցույց է տալիս գոյություն ունեցող սահմանների վնասակարությունը և առաջարկում է նոր բաժանումներ կատարել ազգային սկզբունքով, վերացնել նահանգների, գավառների և գյուղաշրջանների սահմանները, որով կստեղծվի հայկական մի շրջան՝ Երևան կենտրոնով, ու. տնտեսական և քաղաքական մեկ միություն կկազմե։ Այդ շրջանը կկազմվի ամբողջ Երևանի նահանգից, Կարսի երկու հարևան գավառներից, Թիֆլիսի երկու գավառներից և Գանձակի լեռնային շրջանից՝ 13 գավառ, որից 10-ի մեջ կլինի հայկական մեծամասնություն 2 330 000 ազգաբնակչությամբ, որից 1 220 000 հայ՝ 60 %։

Գ. Խատիսյանը (դաշ.) անում է լրացումներ, առանձնապես շեշտում է տնտեսական գործոնների դերը և դեմ է արտահայտվում մեկ նահանգ ստեղծելուն։ Նա առաջարկում է կազմել հայկական երեք նահանգ մեկնելով գործնական նկատումներից։

Ղ. Տեր-Ղազարյան— սոց.-դեմոկրատների կողմից ընդունում է սահմանաբաժանման համար առաջարկված սկզբունքը և առաջարկում է հարևանների հետ համաձայնության գալ, միասին կատարել սահմանաբաժանումը։ Դեմ է մեկ կամ երեք նահանգի. դա կարող է հարևանների մեջ կասկածներ առաջ բերել։ Պետք է զավառային միություններ կազմել, կանտոնալ սիստեմով։ Անդրկովկասի կենտրոնը պետք է լինի Թիֆլիսը։

Ա. Խոնդկարյանը (ս.-հ.) անհրաժեշտ է գտնում սահմանագծումը վարչական տեսակետով։ Պետք է հայերը, թուրքերը և վրացիները միասին կատարեն այդ աշխատանքը։ Կանտոնալ սիստեմը ավելի առավելություններ ունի, բայց հազիվ թե կառավարությունը համաձայնի։ Համենայն դեպս, պետք է կանգնել կանտոնալ սիստեմի վրա, եթե այդ չանցնի՝ նահանգային։

Ք. Վերմիշյանը հայտնում է, որ Հայ. ժող. կուսակցությունը սահմանափոխման վրա նայում է զուտ վարչական-տնտեսական տեսակետից և ընդունում է 3 նահանգի դրությունը. մի նահանգ կազմելու դեպքում հարևանները կարող են դայթակղվել, թե հայերը քաղաքական ձգտումներ ունեն։

Ա. Շահխաթունյանը (դաշ.) մանրամասն պատմությունն ու վերլուծությունն է անում սահմանագծման հարցի և պաշտպանում է Կամսարականի առաջարկած նախագիծը։ Գործնական նկատումներով դեմ է կանտոններին։ Պետք է պահել նահանգային սկզբունքը։ Դեմ է Թիֆլիսը ամբողջ Անդրկովկասի կենտրոն դարձնելուն։

Ա. Երզնկյանը (ս.-դ.) նորից բուռն կերպով հարձակվում է Դաշնակցության վրա, որը այս խնդրում էլ վարում է թիկունքային քաղաքականություն. մեկ կամ երեք նահանգ պահանջելով, նա ուզում է հայկական տերիտորիա ստեղծել, որ շովինիզմ է։ Դրա համար իրենք պնդում են կանտոնների վրա։

Ապա ընտրվում է հանձնախումբ հաշտեցնող բանաձև կազմելու համար։ Հանձնաժողովն ընդհանուր գծերով յուրացնում է Կամսարական—Շահխաթունյանի ծրագիրը, որը և վավերացվում է համագումարի կողմից։

Հոկտ. 8-ի նիստում քննվում է դպրոցական խնդիրը։ Հիմնավորված զեկուցում է կարդում Ս. Տիգրանյանը (դաշն.)՝ պաշտպանելով դպրոցների ազգայնացման, եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման տեսակետը։ Զեկուցման մտքերն ընդունվում են ընդհանուր ժողովի կողմից։

Հոկտ. 9-ին, նիստի նախագահ Ղ. Տեր-Ղազարյանը հայտնում է, որ ավագների խորհուրդը երեկ գիշեր մինչև ժամը 2 և այսօր մինչև ժողովի բացումը խորհրդակցելով եկել է հետևյալ համաձայնության համագումարի կողմից ընտրվելիք խորհրդի և Գործադիր մարմնի կազմի մասին.

1) Մեծ խորհուրդը կամ խորհրդաժողովը պետք է ներկայացնի համագումարի պատկերը. յուրաքանչյուր հոսանք ներկայացուցիչ պիտի ունենա իր թվի համեմատ։ Խորհրդակցական ձայնով կհրավիրվին ներկայացուցիչներ մի քանի քաղաքներից և հաստատություններից։

2) Գործադիր մարմինը կամ Ազգային խորհուրդը բաղկանալու է 6 դաշնակցականներից, 2-ական հոգի սոց.-դեմ., սոց.-հեղ. և ժող. և 3 չեզոքներ անձնական ընտրությամբ, ընդամենը 15 հոգի։

Հոկտ. 9-ի երեկոյան նիստը զբաղվում է Մեծ խորհրդի և Գործադիր մարմնի իրավասությունների որոշումով և հանձնում է Ավագների խորհրդին պատրաստել մի բանաձև։

Ս. Հարությունյանը (ժող.), զեկուցում է պարենավորման տագնապի մասին։

Հաջորդ նիստերի մասին, դժբախտաբար, նյութ չունենք ձեռքի տակ, բայց այսքանն էլ բավական է պարզ գաղափար կազմելու համար համագումարի աշխատանքների և որոշումների մասին։ Նա քննության առավ և որոշումներ տվեց օրվա բոլոր հրատապ հարցերի մասին։ Նա, կարելի է ասել, սպառիչ ամբողջությամբ արտահայտեց այն ապրումները, որ ա՛յն օրերին ուներ արևելահայ ժողովուրդը։ Եթե ներկայացվեր համագումարի և ծիսական կողմը՝ ողջույնի հեռագրեր ուրիշ ժողովուրդների և կազմակերպությունների կողմից, ժողովրդական համակրական ցույցեր և այլն. պատկերը կլիներ ավելի տպավորիչ։

Համագումարը վերջացավ Գործադիր մարմնի կազմությամբ, որը ստացավ Հայոց ազգային խորհուրդ անունը։ Ազգային խորհուրդը ունեցավ հետևյալ կազմը. Արամ Մանուկյան, Ա. Ահարոնյան, Ն. Աղբալյան, Ե. Կարճիկյան, Ռ. Տեր-Մինասյան, բժ. Ա. Բաբայյան (դշն.), Ա. Ստամբոլցյան, Հ. Տեր-Օհանյան (ս.-հ.), Մ. Ղարաբեգյան, Ղ. Տեր-Ղազարյան (ս.-դ.), Ս. Հարությունյան, Մ. Պապաջանյան (ժող.), Ս. Մամիկոնյան, Տ. Բեգզադյան և Պ. Զաքարյան (անկ.)։ Նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը։ Հետագայում, այս ցանկի մեջ տեղի ունեցան որոշ փոփոխություններ. կուսակցությունները իրավունք ունեին իրենց մեկ անդամին հետ կանչել և տեղը նշանակել ուրիշին։ Այդ ձևով Ազգային խորհրդի կազմի մեջ առնվեցան Ար. Երզնկյանը (ս.-դ.), Ս. Վրացյանը (դաշն.) և ուրիշներ։

Համագումարի որոշումով Ազգային խորհուրդը պետք է լիներ սոսկ գործադիր մարմին։ Դեպքերի բերումով նա դարձավ ազգային գերագույն իշխանություն, մի տեսակ հայկական կամ արևելահայոց կառավարություն. Կովկաս ապաստանած արևմտահայերի համար՝ նույն դերը կատարում էր Արևմտահայ բյուրոն, հետո՝ Ապահովության խորհուրդը։ Ընդհանուր բնույթ կրող բոլոր կարևոր հարցերում Ազգային խորհուրդը և Արևմտահայ բյուրոն գործում էին համախոհ ու համերաշխ, մանավանդ, ճակատի պաշտպանության գործում։

Խորհրդաժողովի փակումից անմիջապես վերջը, Ազգային խորհուրդը հայ ժողովրդին ուղղեց հետևյալ կոչը*։

«Հայրենակիցնե՛ր։

Սեպտ. 27-ին, Թիֆլիսում գումարված հայոց ազգային խորհրդաժողովի որոշման համաձայն, կազմված է 1) Ազգային ժողով, որի քննության և վճռահատության ենթարկվում են հայ կյանքի առաջադրած խնդիրները և 2) Ազգային խորհուրդը, որ ստանձնում է ազգային բոլոր գործերի գերագույն ղեկավարությունը, որպես գործադիր մարմին։

Թե մեկը և թե մյուսը կազմակերպված են ազգային խորհրդաժողովի գծած սահմաններում և բոլոր գործոն կուսակցությունների ու չեզոք տարրերի մասնակցությամբ՝ համագործակցության սկզբունքով։

Ազգային խորհուրդը պատասխանատու և հաշվետու է Ազգային ժողովի առաջ, որ պարբերաբար պիտի գումարվի Թիֆլիսում իր հրահանգիչ և վերահաս ֆունկցիան իրագործելու համար։

Ազգային խորհուրդը իր գործունեության կետ-նպատակ ունենալով հայ ժողովրդի կենսական շահերը՝ միաժամանակ պիտի ճգնի այդ շահերը ներդաշնակել ռուսական մեծ դեմոկրատիայի և մեր բոլոր հարևանների նույնպիսի շահերի հետ՝ միշտ առաջնորդ ունենալով մի կողմից առողջ պետականության և մյուս կողմից ժողովուրդների եղբայրության և ազատության բարձր սկզբունքները։

Խորապես գիտակցելով իր հանձն առած պարտքի բոլոր լրջությունն ու ծանրությունը՝ Ազգային խորհուրդը վստահ է, որ հայ ժողովրդի բոլոր խավերի անվերապահ ու հզոր աջակցությունը նրան երբեք չի պակասի։

Հայրենակիցնե՛ր, փորձություններով հարուստ ու տագնապալից այս օրերում, երբ ամեն օր դաժան անակնկալներ կարող են ի դերև հանել ստեղծագործական լավագույն իղձերն ու ճիգերը, հայ ժողովրդի բոլոր կենդանի ուժերի համերաշխ գործակցությունը դառնում է գերագանցապես հրամայական։

Պատրանքների տեղ չկա։ Մեր կյանքի կարիքը, աղետն ու ավերը անսահման է, պետք է որ անսահման լինի նաև մեր զոհաբերության պատրաստակամությունը։

* Կոչի հեղինակն է Նիկոլ Աղբալյանը։

Այս դժվարին օրերին, Ազգային խորհուրդը դիմում է հավատով հայ ժողովրդի առողջ բնազդին, քաղաքական իմաստությանը և հինավուրց կորովին և նույն խորունկ հավատով է, որ նա առանց վարանումի ու տարակուսանքի վճռապես ձեռնարկում է շինարարական աշխատանքի՝ հենված գիտակից հայության վստահության, ինչպես և նրա բարոյական ու նյութական կուսակցության վրա։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ»

ԳԼՈՒԽ Ե

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հոկտեմբերյան հեղաշրջումը հիմնովին փոխեց դիպքերի ընթացքը ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես և Կովկասում։ Եվ ամենից առաջ անդրադարձավ պատերազմի և խաղաղության վրա։

Ժամանակավոր կառավարությունը պատերազմի վերաբերմամբ ընդունել էր միանգամայն որոշ ուղղություն՝ ընդհանուր և պատվավոր հաշտություն։ Մարտի 14-ին, Բանվորական և Զինվորական խորհուրդը դիմելով ամբողջ աշխարհին՝ հայտարարել էր, թե ազատ Ռուսաստանը հրաժարվում է ցարիզմի նվաճողական քաղաքականությունից։ Իսկ մարտի 27-ին, Ժամ. կառավարությունը ձևակերպել էր իր քաղաքական դավանանքը. «Ազատ Ռուսաստանի նպատակը չէ տիրել ուրիշ ժողովուրդներին, խլել նրանց ազգային արժեքները, ուժով գրավել օտար երկրներ, այլ հաստատել տևական խաղաղություն՝ հիմնված ժողովուրդների ինքնորոշման վրա։ Ռուս ժողովուրդը չի ձգտում ուժեղացնել իր ներքին կազմը ի հաշիվ ուրիշ ժողովուրդների. նրա նպատակի մեջ չկա նվաստացման ու ստրկացման և ո՛չ մի հակում»։

Ժամ. կառավարությունը այս ուղեգծին հետևեց իր հետագա բոլոր քայլերում։ Նույն ոգով գործեց և Պետրոգրադի Բանվորական ու Զինվորական խորհուրդը՝ Ժամ. կառավարության ներշնչողն ու հենարանը և հեղափոխական դեմոկրատիայի կամքի արտահայտիչը։ Խորհուրդը, հակառակ բոլշևիկների բուռն դիմադրության, ապրիլի 26-ին որոշեց չեզոք մի վայրում գումարել միջազգային ընկերվարական խորհրդաժողով և այնտեղ լուծել պատերազմի և խաղաղության հարցը միջազգային ծավալով։ Այս որոշումը միանգամայն համապատասխանում էր և Եվրոպայում, մանավանդ, պատերազմին չմասնակցող երկրներում տիրող տրամադրության։ Այնտեղ էլ հերթի էր դրված նման խորհրդաժողովի գումարումը և կազմված էր, այսպես կոչված, Հոլանդ-Սկանդինավական կոմիտեն, որ կատարում էր համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքները։

Ընդհանուր համաձայնությամբ, խորհրդաժողովը նշանակվեց 1917 թ. հուլիսի 8-ին Ստոկհոլմում։ Օրակարգի վրա դրվում էին պատերազմի հետ կապ ունեցող բոլոր հարցերը, որոնց շարքում և հայկական խնդիրը։ Հայաստանի կողմից խորհրդաժողովին պիտի մասնակցեր Հ. Հ. Դաշնակցությունը, որի լիազոր ներկայացուցիչ Ռոստոմ Զորյանը Թիֆլիսից մեկնել էր Ստոկհոլմ՝ նախօրոք մասնակցելով Պետրոգրադի խորհուրդների և ընկերվարական շրջանների նախապատրաստական աշխատանքներին։ Պետրոգրադի Բանվ. և Զինվ. խորհուրդը իր պատվիրակության համար մշակած հրահանգներում դրել էր և Թուրքահայաստանի ինքնավարության պահանջը։

Հ. Հ. Դաշնակցությունը կազմակերպիչ մարմնին ներկայացրեց մի ընդարձակ հուշագիր, որի մեջ մանրամասնորեն նկարագրում էր հայերի վիճակը պատերազմի նախօրյակին ու պատերազմի ընթացքին, հայկական տեղահանություններն ու կոտորածները, և ձևակերպում հայկական պահանջները՝ «Ռուսահայաստանը Վրաստանի և Թաթարստանի (Ազրբեջանի) հետ պետք է լինի ինքնավար՝ դաշնակցային ու հանրապետական Ռուսաստանի ծոցում». Թուրքահայաստանը պետք է ազատագրվի թուրքական տիրապետությունից. «Ազատ Հայաստանը բովանդակելու է հայկական 6 վիլայեթները և Կիլիկիան. ի բաց առյալ 1877—78 թվականների պատերազմից հետո հայկական նահանգներին միացված մահմեդական շրջանները». «Հայաստանի չեզոքությունը պետք է երաշխավորվի միջազգայնորեն», «Թուրքական կառավարությունը պետք է հատուցանի հայերի վնասներն» և այլն։

Ինչպես հայտնի է, Ստոկհոլմի խորհրդաժողովը դաշնակից պետությունների բացասական վերաբերումի և Ռուսաստանի ներքին դեպքերի հետևանքով չգումարվեց։ Հետաքրքրական է, որ իթթիհատական Թուրքիան էլ ներկայացուցիչներ էր ուղարկել Ստոկհոլմ՝ Ն. Մազլիա էֆ. և դր. Հուսեյին Զադե Ալի բեյ, որոնք իրենց հուշագրի մեջ, առանց որևէ ակնարկ անելու հայկական խնդրի մասին, «հանուն Թուրք դեմոկրատիայի», պահանջում էին «ազգերի ինքնորոշման իրավունք՝ առանց խորության սպիտակ, դեղին ու սև ցեղերի միջև», «գաղտնի դիվանագիտության վերացում» և այլն*։

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո խաղաղության գործը ստացավ նոր ընթացք. բոլշևիկները դիմեցին անջատ հաշտության՝ հայտարարելով «եղբայրացման» սկզբունքը ռազմաճակատի հակառակորդ զինվորների հետ և պատերազմող կողմերին առաջարկելով անցնել անմիջական բանակցությունների։ Այս քաղաքականության, ինչպես և երկրի ներսը բռնկված անիշխանության ու քաղաքացիական կատաղի կռիվների հետևանքով՝ սկսվեց համատարած քայքայումը ռազմաճակատում.

---

* Ստոկհոլմի խորհրդաժողովին վերաբերող ամբողջ նյութը հրատարակված է առանձին հատորով. «Stockholm», Ed. Tidens Förlag Stockholm, 1918, որի մեջ ամբողջովին զետեղված է և Հ. Հ. Դաշնակցության հուշագիրը։

զորամասերը թողնում էին դիրքերը և հրացանը առած՝ շտապում դեպի տուն, որպեսզի օր առաջ բաժին ստանան բոլշևիկների խոստացած «հողից ու բուրժուաների գույքից»։ Եվ Բալթիկ ծովից մինչև Քիրմանշահ, ամբողջ տարածության վրա, միլիոնավոր զինված մարդիկ խուժեցին դեպի թիկունք։

Այս զանգվածային դասալքությունը առանձնապես հիվանդագին անդրադարձում ունեցավ կովկասյան ճակատում, ուր ընդհանուր պատճառներից զատ՝ ուժեղ էին և ազգային հակամարտությունները և Թուրքիայի ու Կովկասի մահմեդականների յուրահատուկ փոխհարաբերությունները։

Հոկտեմբերյան հեղաշրջումը Թիֆլիսում հանդիպեց խիստ բացասական վերաբերումի։ Բացի ընդհանուր պատճառներից, որով բոլշևիկյան կոմունիզմը նկատվում էր ցնորական մի ճիգ պատմությունը գիտական ընկերվարությունից դեպի ուտոպիա տանելու և, հետևաբար, աշխատավոր մարդկության բնաշրջումը առողջ ճանապարհից շեղելու, Անդրկովկասում կային և հատուկ պատճառներ. վրացի սոցիալ-դեմոկրատ մենշևիկների համար բոլշևիզմը, նախ և առաջ, կուսակցական հակառակորդ էր։ Այն հարատև պայքարը, որ սոցիալ-դեմոկրատ մենշևիկ ու բոլշևիկ հատվածները վարել էին միմյանց դեմ գաղափարական ձևերով, այժմ փոխադրվում էր գործոն քաղաքականության ասպարեզ։ Շատ խոշոր տեղ էին գրավում այս պայքարում և անձնական համակրանքներն ու հակակրանքները, երեկվա վեճերն ու սրտացավությունները։ Հայերի համար հոկտեմբերյան հեղաշրջումը անընդունելի էր, ամենից առաջ, բոլշևիկների դեպի պատերազմն ու ճակատի պաշտպանության գործը բռնած դիրքի պատճառով. բոլշևիկների մեջ նրանք տեսնում էին քայքայող ուժ, մինչդեռ վայրկյանը պահանջում էր Ռուսաստանի հզորությունը։ Մահմեդականների աչքին բոլշևիզմը դասակարգային թշնամի էր. մահմեդական ներկայացուցիչների մեծ մասը խաներ ու բեգեր էին։

Այսպես թե այնպես, Անդրկովկասը հենց առաջին օրից բացասական դիրք բռնեց խորհրդային իշխանության վերաբերմամբ։ Եվ քանի որ Սահմ. ժողովի գոյությունը դառնում էր խնդրական, կապը կենտրոնի հետ վերացված էր, և, մյուս կողմից, Անդրկովկասի Առանձին կոմիտեն խպաո կորցրել էր հեղինակությունը ժողովրդի աչքին, իսկ կոռնիլովյան հետաշրջական փորձից հետո ստեղծված ինքնապաշտպանության մարմինը հմայք չուներ լայն զանգվածների մեջ, բնական կերպով, առաջ էր գալիս տեղական իշխանություն ունենալու պահանջը։ Այդ նպատակով, նոյեմբ. 27-ին, հրավիրվեց մի խորհրդակցություն Անդրկովկասի Բանվորական, Զինվորական և Գյուղացիական խորհուրդների, Թիֆլիսի Բանվ. ու Զինվորական խորհրդի, Թիֆլիսի քաղաքային խորհրդի, Հանրային ապահովության կոմիտեի, Անդրկ. Առանձին կոմիտեի, քաղաքա-

կան կուսակցությունների ներկայացուցիչների և Սահմ. ժողովի անդամների, որը մանրազնին քննության առնելով տիրող կացությունը՝ որոշեց Անդրկովկասի համար ստեղծել տեղական իշխանություն՝ Անդրկովկասյան սեյմ և Անդրկովկասյան կոմիսարիատ, իբրև Սեյմի գործադիր մարմին։ Սեյմի կազմության հիմք ընդունվեց Սահմ. ժողովի համար ընտրված պատգամավորների քանակը. որոշվեց եռապատկել կուսակցական ցանկերով ընտրված պատգամավորների թիվը։

Անդրկովկասյան կոմիսարիատը կազմվեց ազգային-կուսակցական ներկայացուցչության սկզբունքով։ Կոմիսարիատի մեջ մտան. Ե. Գեչկորի՝ նախագահ և արտաքին գործոց կոմիսար, Ն. Ռամիշվիլի՝ ներքին, Դ. Դոնսկոյ՝ զինվորական, Խ. Կարճիկյան՝ ելևմտական*, Հ. Օհանջանյան՝ խնամատարության, Ներուչև՝ երկրագործության, Մելիք-Ասլանով՝ հաղորդակցության, Խան-Խոյսկի՝ արդարադատության, Լ. Բեբութով՝ պետական վերահսկիչ։ Զինվորական կոմիսարի օգնականներ նշանակվեցին Գոբեչյանը և Պ. Լևոնյանը։ Երկրագործության կոմիսարի օգնականներ՝ Ավ. Շահխաթունյանը և Պ. Գելեյշվիլին։

Բայց Անդրկովկասյան կոմիսարիատն ևս չդարմանեց դրությունը։ Ընդհակառակը, նա ինքը հենց դարձավ կուսակցական պայքարի թատերաբեմ և բոլշևիկների ձեռքին՝ պայքարի ուժեղ զենք։

Ժողով. կոմիսարների խորհուրդը Ստ. Շահումյանին նշանակել էր Անդրկովկասի կոմիսար, և սա աշխատում էր հեղաշրջում առաջ բերել Թիֆլիսում։ Բոլշևիկները ձգտում էին օգտագործել զորքը, որի մեջ նրանց ազդեցությունը օրեցօր ավելանում էր և որին գրգռում էին Անդրկ. կոմիսարիատի դեմ, որը, իբր թե, Անդրկովկասը անջատել էր Ռուսաստանից։ Փոխանակ բանակի մեջ վայելած համակրանքից օգտվելով՝ Թուրքերի դեմ պատվար կանգնեցնելու՝ Շահումյանը և իր ընկերները ճգնում էին զինվորությանը մասնակից դարձնել Անդրկ. կոմիսարիատի դեմ մղած իրենց պայքարին և աստիճանաբար ճակատից հետ էին քաշում զորամասերը։ Այս հողի վրա, հոկտ. 20-ին, մերկացնելով ճակատը, դեպի թիկունք խուժեց հռչակավոր 39-րդ դիվիզիան։ Չէ որ ռազմական կոմիսար Տրոցկին հրամայել էր ռուս բանակին հեռանալ պարսկական և թուրքական ճակատներից։

Ասենք, բանակը առանց այդ էլ չէր հետաքրքրվում ռազմաճակատով։ Նրա ուշն ու միտքը Ռուսաստանն էր, ուր «հող էին բաժանում»։ Ուստի առանց սպասելու վերին հրամանատարության սահմանած կարգին, մաս-մաս, հազարներով ու տասնյակ հազարներով լքում էին դիրքերը, թողնում բազմամիլիոն հարստություններ, ռազմամթերքի ու պարենի անհաշիվ պաշար, մթերքներով լիքը պահեստներ և հրացանը գրկած՝ նետվում վագոնները, շտապում «դեպի տուն»՝ ճանապարհին, մորեխի պես, ավերելով ու խժռելով ամեն բան։

* Ելևմտական— իմա՝ ֆինանսական։

Ահա մի երկու փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով, Կովկասյան ռազմաճակատում ստեղծված դրությունը։ Կովկասյան բանակի հրամանատարը հեռագրում է ճակատի ընդհանուր հրամանատարին դեկտ. 25-ին. «Հակառակ առաջին կորպուսի նահանջի համար ճշտորոշված ժամանակամիջոցին, վերջինս ինքնագլուխ թողնում է դիրքերը, և այս նահանջը սպառնում է ճակատը խսպառ մերկացնել։ Այս հանգամանքներում հայկական զորամասերի ճակատ ուղարկելու հապաղումը և, իբրև հնարավոր հետևանք, Երզնկայի գրավումը ոչ միայն թուրքերի, այլև քրդերի կողմից ինձ կհարկադրե, հավանաբար, պարպել ամբողջ շրջանը, որով մենք անխուսափելիորեն կկորցնենք Թուրքահայաստանը»։

1918 թ. հունվար 8-ին կովկասյան բանակի սպայակույտը տեղեկագրում է. «6-րդ կորպուսը լքեց իր դիրքերը և ամբողջապես քաշվեք դեպի Սարիղամիշ։ Այս պահուն, վերջին գունդն է հեռանում և հուն. 13-ին ոչ մի զինվոր չի լինի Շեյթան-Դաղից դեպի հարավ, և այս կողմից ճակատը բոլորովին կմերկացվի։ Առաջին կորպուսն էլ մեծ մասով սկսել է շարժվել դեպի Թիկունք. ես վախենում եմ, որ կորպուսի վերջին զորամասերը կթողնեն Երզնկան նշանակված ժամանակից առաջ։ Եվ մեր զորամասերի հեռացումը այս կետից և գրավումը քրդերից ճակատագրական կերպով առաջ կբերեն զինադադարի խախտում թուրքերի կողմից և ընդհանուր առաջխաղացումը ամբողջ ճակատում։ Կասկածից վեր է, որ Երզնկայի շրջանի թուրքական գրավման հետևանքը կլինի այն, որ մենք կպարպենք ամբողջ Արևմտյան ռազմաճակատը։ Թուրքեստանյան 2-րդ կորպուսը և կովկասյան 5-րդ կորպուսը նույնպես ճակատից մեկնելու հարց են հարուցել։ Մեր զորքերի հեռանալը արևմտյան ճակատից, աչքի առաջ ունենալով կովկասյան բանակի ներկա վիճակը, անխուսափելի կերպով առաջ կբերե մեր գրաված թուրք հողամասերի պարպումը։ Ուրիշ խոսքով, Երզնկայի շրջանի պարպումը հավասար է ամբողջ Թուրքահայաստանի պարպումին, այսինքն՝ նշանակում է կորցնել այն ամենը, որ մենք ձեռք ենք բերել Թուրքիայի դեմ մղած երեքամյա հաղթական կռիվներով։ Այս պարագան իրավունք է տալիս ինձ մի անգամ ևս խնդրելու, որ շտապով ուղարկեք հայկական զորամասեր, որոնք հնարավոր կդարձնեն կայունացնել մեր դրությունը»։

Հունվ. 10-ին Ալաշկերտի կոմիսար Գվոզդյովը Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին, ուղիղ հեռագրաթելով, հետևյալ ձևով է ներկայացնում կացությունը. «Ղարաքիլիսան թողնում է թշնամու հարձակումից առաջ դատարկված քաղաքի տպավորություն։ Ճակատից հեռացող վերջին գունդը իր հետ տանում է շրջանի բոլոր հիմնարկությունները, անգամ փոստն ու հեռագիրը։ Հրամանատարական կազմ չկան միայն 150 անկանոն ձիավորներ. տեղական բնակչությունն է պահում պարենի պահեստները, զինվորական գույքերը, հրետանու, ինժեներական և ռազմամթերքի պահեստներն ու վառոդարանները։ Ճանապարհների կայանները վերացված են։ Դժվարությամբ մեր տեղական ուժերով պահվում է հեռագրական կապը։ Կոմիսարիատն ընդունել է 4-րդ կորպուսի և հասարակական հիմնարկությունների անհաշիվ դույքը։ Միայն ձիեր ընդունված են մի քանի հազար հատ։ Մենք անպոր ենք տեղավորել թողնված հարստությունները։ Խիստ վախենում ենք արյունոտ ընդհարումներից և ավազակություններից։ Քրդերն սկսեցին իրենց հարձակումներն ու թալանները գյուղերի, պահակախմբերի և Մակուի երկաթուղու վրա, որը հազիվ շնչում է։ Հեռագրական հաղորդակցությունը Երևանի հետ կտրված է»։

Չորրորդ կորպուսի հրամանատարը հեռագրում է հունվ. 13-ին. «Կորպուսի փոխադրական մասերը, կայանների զորքերը, զինվորները, հիմնարկությունները հեռանում են անկարգ կերպով։ Անկարգությունները սաստկանում են օրեցօր։ Հայկական զորամասերը ուժասպառված են հիմնարկությունների և կայանների պահակությունից։ Առանց թիկունքից թարմ ուժերի առաքման կարելի չէ պատասխանատու լինել հետևանքների համար»։

«Ռուս զինվորները ահաբեկում են տեղացիներին (հայերին) և բռնությամբ ստիպում հեռանալ իրենց հետ»,— հեռագրում է կովկասյան բանակի սպայակույտը։

Հունվ. 16-ին սպայակույտից գրում են զոր. Նազարբեգյանին. «Ճակատի դրությունը ողբերգական է. ամրացված շրջանների լքումը առաջ է բերում առանձնապես ողբալի կացություն և ինձ հարկադրում է տալ հետևյալ հրահանգները ամրությունների պետերին. «Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը հրամայում է ձեզ, որ, աչքի առաջ ունենալով ռուս սպաների և զինվորների հեռանալը ճակատից՝ ամրացված շրջանների պահակությունը հանձնեք ազգային զորամասերին»։

Կարս—Մերդենեք երկաթուղագծի վարչությունը հեռագրում է հունվ. 21-ին. «Երկաթուղային բրիգադի Կարս—Մերդենենք գծի վրա ծառայող ռուս զինվորները լքում են միլիոնավոր ռուբլիներ արժող նյութերը և կանգնեցնում շարժումը։ Խնդրում ենք կազմել հայկական երկաթուղային գումարտակ և նրան փոխանցել այս բրիգադի և Կարս—Մերդենեք երկաթուղագծի գույքը»*։

Սրանք պատահական օրենակներ են լոկ ա՛յն օրերի ռազմաճակատի քայքայումը պատկերացնող առատ նյութից։ Իրապես դրությունը անհամեմատ ավելի մռայլ էր։ Ռազմաճակատը հալչում էր արևից տաքացած ձյան պես. ռուս զորքը խելահեղ՝ խուժում էր դեպի Թիկունք, Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմը։

* Կովկասյան ճակատի այդ ժամանակվա վիճակի մասին տե՛ս զոր. Ղորղանյանի գիրքը։

Այս խուժումը տեղի էր ունենում ցավագին պայմանների մեջ, մասնավորապես մահմեդական շրջաններում։ Անկասկած, թուրքերի ներշնչումով, կովկասյան մահմեդականները աշխատում էին մի կողմից արագացնել ռուս զորքերի փախուստը, մյուս կողմից՝ խլել նրա զենքն ու ռազմամթերքը։ Զինորսության հողի վրա պատահում էին արյունոտ ընդհարումներ ու ճակատամարտեր նահանջող ռուս զորամասերի ու թուրք ազգաբնակչության միջև։ Այդ կարգի արյունոտ դեպքերից առանձնապես մեծ հուզում առաջ բերեց Շամխորի կոտորածը, հունվ. 8—10-ին։

Հունվ. 8-ին ճակատից հեռացող բազմաթիվ զինվորական գնացքներ եկան-կանգնեցին Շամխոր կայարանի մոտ։ Ճանապարհը կտրված էր և առաջ երթալը անհնար։ Գնացքները բերնեբերան լցված էին զինվորներով, ձիերով, կանանցով ու երեխաներով, թնդանոթներով, ռազմամթերքով, մեծաքանակ փամփուշտով ու մթերքով։ Զինվորները հարուստ ավար էին տանում իրենց հետ։

Եվ, հանկարծ, գիշերվա մթության մեջ, ամեն կողմից սկսվեց հրացանաձգություն։ Գնացքները ենթարկվեցին թնդանոթային կրակի։ Առաջ եկավ աննկարագրելի իրարանցում։ Զինվորներն էլ, իրենց հերթին, գրավեցին դիրքեր և գործի դրին գնդացիրները։ Տեղի ունեցավ հուսահատական կռիվ։ Հարձակվողներին հաջողվեց վառել գնացքների մի մասը։ Զինվորները անձնատուր եղան։

Պարզվեց, որ հարձակվողները եղել են վրացի Աբխազավայի զրահապատ գնացքը, զոր. Մաղալովի «Վայրենի դիվիզիան» և հազարավոր զինված թուրք խուժան Գանձակի Մահմ. ազգային խորհրդի ղեկավարությամբ։

Բոլոր գնացքները խուզարկվեցին ու թալանվեցին։ Զինվորներից խլվեց ամեն ինչ՝ զենք, ռազմամթերք, պարեն, մասնավոր գույքը, անգամ վրաների հագուստը հանեցին թուրք հրոսախմբերը։ Գրավված թնդանոթներն ու բոլոր զենքերը սեփականացրեց Գանձակի Մահմ. ազգային խորհուրդը։ Մեծ շուքով ավարը տարվեց Գանձակ։ Թուրք սոց.-հեղափոխական պարագլուխ Ասլան բեգ Սաֆիքուրդսկին, հեծած առջևի թնդանոթը՝ հաղթական մուտք գործեց Գանձակ։

Հետագայում հայտնի դարձավ, որ այդ հարձակմանը անմասն չէին և վրացի վարիչներից ոմանք։ Հուն. 6-ին Ն. Ռամիշվիլին զեկուցանում էր այդ մասին Անդրկ. կոմիսարիատի նիստին, թե «անհրաժեշտ էր զինաթափել Ցարսկի Կոլոդցից մեկնած զորամասը և զենքը հանձնել վրացական կորպուսին։ Ուղարկվեց մի զրահապատ և մի զորամաս... Բոլոր միջոցները ձեռք են առնված»։ Իսկ Ջուղելին մատնանշում էր «Աբխազավայի և իր զորամասի կատարած տխուր դերը։ Զինաթափում չէր այդ, այլ զինվորների թալան։ Դժբախտ ու տանջված, իրենց տան կարոտը քաշող մարդկանցից խլում էին ամեն ինչ, անգամ կոշիկները։

Եվ հենց տեղն ու տեղն էլ ծախում էին։ Ավազակախմբերը ծախում էին զենքերը։ Ինչ-որ գարշելի բան էր տեղի ունենում»*։

Հունվ. 26-ին, Երկրային կենտրոնում, նույն Ջուղելին հայտարարեց. «Իսկ ինչ վերաբերվում է Շամխորի դեպքերին, ես հայտարարում եմ, որ ընկ. Նոյ Ռամիշվիլին որոշ կապ ունի նրանց հետ։ Միայն մի քանի օր այդ տխուր դեպքերից առաջ ընկ. Ռամիշվիլին, ինձ հետ ունեցած խոսակցության միջոցին, ասում էր, որ զինաթափության համար ամենահարմարը ինքը համարում է Աբխազավայի զորամասը։ Իմ ցուցմունքները, թե Աբխազավան այդ նպատակի համար պահանջված վարկը չունի, ըստ երևույթին, չօգնեցին, և մենք տեսնում ենք, որ Աբխազավան իր զորամասով ուղարկվել է այդ նպատակով։ Ըստ երևույթին, այդ ուղարկելը չի եղել առանց ընկ. Ռամիշվիլիի մասնակցության»։

Ռուս զորքերի փախուստի հետևանքով ամեն կողմից պահանջում էին հայկական զորամասեր։ Պարզ էր դառնում, որ ճակատի պահպանության գործում այսուհետև առաջին տեղը բռնելու էին հայերը։ Կարո՞ղ էին նրանք կատարել այդ պատմական դերը։ Ի՞նչ վիճակ ունեին հայերը զինվորական տեսակետից։

Դեռ հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ, Թիֆլիսի և Պետրոգրադի հայկական կազմակերպությունները հարց էին հարուցել, որ Ժամ. կառավարությունը հրահանգի արևմտյան ճակատի զորամասերում գտնվող հայ զինվորներին փոխադրել կովկասյան ճակատ և կազմակերպել հայկական զորամասեր։ Արևմտյան ճակատում, այն ժամանակվա հաշվով, կար շուրջ ութսուն հազար հայ զինվոր։ Այդ քանակությունը՝ միացված Կովկասում գտնվող գրեթե նույնչափ հայ զինվորների հետ, լավ կազմակերպված ու մարզված, տրված հմուտ հրամանատարության ձեռքը, կարող էր վճռական դեր կատարել Թուրքիայի դեմ։

Զինվորական նախարարն ու բարձր հրամանատարությունը ընդառաջ գնացին այս առաջարկությանը և կարգադրեցին հայ զինվորներին համախմբել թուրքական ռազմաբեմում, իսկ հուլիսի 2 ու 11 հրամաններով կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարը արտոնեց հայկական հրացանաձիգ գումարտակները վերածել գնդերի։ Կարճ ժամանակում կազմվեցին վեց հայկական գնդեր՝ յուրաքանչյուրը բաղկացած 2 գումարտակից։

Արագ թափով զարգացող դեպքերը, հակայն, անհրաժեշտ դարձրին հայկական ավելի խոշոր զինվորական միությունների ստեղծումը. և հոկտեմբերին Հայոց ազգային խորհուրդը նոր դիմում արավ՝ խնդրելով հայկական զորագնդերի թիվը հասցնել 8-ի, յուրաքանչյուր գունդ դարձնել 3 գումարտակից, և այդ 8 գնդերը բաժանել չորսական գնդա-

* «Заря Востока», 1927 г. янв. 8, № 6.

նոց երկու դիվիզիայի, մեկ բրիգադ այրուձիով, 15 մարտկոց հրետանիով ու հարակից տեխնիկական մասերով։

Կառավարությանը ոչինչ չէր մնում, քան բավարարել այդ դիմումը, քանի որ ռազմաճակատի փլուզումը ստանում էր աղետավոր ձևեր, և հայկական զորամասերը կարող էին որոշ չափով մեղմացնել դրությունը։ 1917 թ. դեկտ. 13-ին, կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը № 136 հրամանով արտոնեց կազմել հայկական կորպուս՝ հրամանատար նշանակելով ռուսական բանակի լավագույն զինվորականներից մեկին՝ զոր. Թովմաս Նազարբեգյանին և սպայակույտի պետ՝ զոր. Վիշինսկիին։

Սկսվեց կազմակերպական եռուն աշխատանք։ Ազգային խորհուրդը իր միջից կազմեց առանձին մի մարմին Ստ. Մամիկոնյանի գլխավորությամբ, որ զբաղվում էր կորպուսի գործերով։ Զոր. Նազարբեգյանի մոտ զինվորական նախարար Դոնսկոյի կողմից նշանակվեց հատուկ կոմիսար՝ Դրոն և վերջինիս օգնական՝ Սարգիս Մանասյանը։ Հետզհետե հավաքվեցին ռուս բանակի հայ սպաներն ու զինվորները և իրար հետևից վերակազմվեցին հին մասերն ու կազմվեցին նորերը։ Ազգ. խորհրդին և կորպուսի հրամանատարությանը զգալի օժանդակություն էր ցույց տալիս և Հայ զինվորական միությունը սպա Արսեն Շահ. մազյանի նախագահությամբ և մի շարք եռանդուն սպաների անդամությամբ՝ Գ. Տեր-Օհանյան, Տ. Անիյան և այլն։

Հայկական կորպուսի կազմակերպության զուգընթաց զորահավաքման ու զինվորական ուժերի կազմակերպումի գործով զբաղված էր և արևմտահայությունը, որը, ավելի քան ուրիշը, սարսափում էր կազմալուծումից և միջոցներ էր խորհում ճակատի փլուզումի առաջն առնելու համար։

Արևմտահայ բյուրոյի նախաձեռնությամբ, 1917 թ. դեկտեմբերի սկզբներին, Թիֆլիսում գումարվեց արևմտահայության մարմինների ու քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից ու գործիչներից կազմված մի խորհրդակցություն, որը մանրամասն քննության առնելով ճակատի պաշտպանության խնդիրը որոշեց իր վրա առնել արևմտահայկական մարտական ուժերի կազմակերպումը։ Այդ նպատակով ընտրվեց հատուկ մի մարմին՝ Ապահովության խորհուրդը, որի մեջ մտան Վահ. Փափազյանը (նախ.), Սեպուհը, Ա. Թերզիբաշյանը, Հ. Տեր-Զաքարյանը և Ժ. Միրզախանյանը։ Խորհրդակցությունը որոշեց նաև հայտարարել պարտադիր զորակոչ բոլոր արևմտահայերի համար։ Կազմվելու էր արևմտահայկական առանձին դիվիզիա։ Ենթադրվում էր ստեղծել 15–20 հազարնոց մի զորամաս։

Պետք է ասել, որ դեռ այս որոշումից առաջ, զանազան վայրերում, արդեն գոյություն ունեին զուտ արևմտահայկական զորամասեր։ Վանում կար Վանի գունդը՝ Տ. Բաղդասարյանի հրամանատարության տակ՝

Գրիգոր Բուլղարացու և Լևոն Շաղոյանի անմիջական գործակցությամբ։ Խնուս—Մուշ շրջանում գործում էր Սասունի գունդը Մանուկի և Մուշեղի ղեկավարությամբ։ Ալաշկերտում կազմված էին տեղական զորամասեր Սմբատի ջանքերով։ Երզնկայի շրջանում էր Մուրադը իր գործակիցների հետ, Բաբերդում՝ Սեպուհը և այլն։

Ապահովության խորհրդի առաջին աշխատանքը եղավ՝ համախմբել այս բոլոր ուժերը և կապել իր հետ։ Այդ նպատակով մարդիկ ուղարկվեցին շրջանները, և մասամբ հաջողվեց ցաք ու ցրիվ եղած զորախմբերի միջև հաստատել որոշ կապ։

Ապահովության խորհուրդը ձեռնարկեց արևմտահայ դիվիզիայի կազմության։ Այդ գործին ջերմ աջակցություն ցույց տվին Կովկասի բարձր հրամանատարությունը, հանձին զոր. Լեբեդինսկու, գնդ. Ջենկևիչի, գրավված վայրերի ընդհանուր նահանգապետությունը, մասնավորապես բժ. Հ. Ջավրյանը և դաշնակից պետությանց Թիֆլիս գտնվող ներկայացուցիչները։ Այս վերջիններս Ապահ. խորհրդին տրամադրեցին և որոշ գումար կազմակերպչական նախնական կարիքների համար։

Ապահ. խորհուրդը անմիջապես դիմեց զորահավաքի, ամեն կողմ ուղարկեց գործակալներ, կարճ ժամանակում կարողացավ առաջ բերել կենդանի ոգևորություն և հիմքը դրեց մի շարք զորամասերի, որոնց համար ստացավ պահանջված հագուստը, զենքը, պարենավորումն ու նյութական միջոցները։

Ապահ. խորհուրդը իր բոլոր կարևոր ձեռնարկները կատարում էր համախորհուրդ Ազգային խորհրդի հետ։ Երկու խորհուրդների միջև տիրում էր կատարյալ ներդաշնակություն, և Ապահ. խորհուրդն ու Ազգ. խորհրդի զինվորական մարմինը գործում էին ձեռք ձեռքի տված։ Որոշ անհամաձայնություն առաջ եկավ արևմտահայ դիվիզիայի հրամանատար նշանակելիս։ Ապահ. խորհուրդը կամենում էր այդ պաշտոնին կոչել Անդրանիկին՝ օգտվելու համար նրա թե՛ հայերի մեջ և թե՛ դուրսը վայելած հմայքից։ Ազգ. խորհուրդը դեմ էր արտահայտվում այդ թեկնածությանը՝ առարկելով, որ Անդրանիկը չի կարող կառավարել դիվիզիայի պես մի խոշոր զորամաս, որի համար, բացի անձնական քաջությունից, պահանջվում էր և մասնագիտական պատրաստություն, որից զուրկ էր Անդրանիկը։ Սակայն, Ապահ. խորհրդի պնդումի վրա Ազգ. խորհուրդը տեղի տվեց, և Անդրանիկը նշանակվեց արևմտահայ դիվիզիայի պետ՝ առաջուց, բժ. Ջավրյանի միջնորդությամբ և Պ. Լևոնյանի ջանքերով ստանալով զաուրյադ-զորավարի աստիճան։

Արևմտահայ դիվիզիան մտցվեց Հայկական կորպուսի մեջ, իբրև նրա մի մասը, և այսպիսով, ի վերջո, Հայկական կորպուսը ձևակերպվեց ու ստացավ հետևյալ կազմը.

Կորպուսի հրամանատար՝ զոր. Թ. Նազարբեգյան, սպայակույտի պետ՝ Վիշինսկի։

Առաջին դիվիզիա*— 4 գունդ՝ յուրաքանչյուրը 3-ական մարտկոցով և 1 հրետանիի բրիգադ 6 մարտկոցով. հրամանատար՝ զոր. Արեշյան։

Երկրորդ դիվիզիա— նույն կազմով, հրամանատար՝ գնդ. Սիլիկյան։

Այրուձիի բրիգադ— երկու գունդ չորսական հարյուրյակով և մեկ ձիավոր հրետանի. հրամանատար՝ գնդ. Ղորղանյան։

Արևմտահայ դիվիզիա. Ա. բրիգադ— Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, Երզնկայի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց, ձիավոր գունդ՝ 3 հարյուրյակ։ Բ. բրիգադ— Խնուսի գունդ՝ 2 գում., Ղարաքիլիսայի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց։ Գ. Բրիգադ— առաջին Վանի գունդ՝ 2 գում., 2 լեռնային մարտկոց, Զեյթունի ձիավոր գունդ՝ 3 հարյուրյակ։ Դիվիզիայի հրամանատար՝ զոր. Անդրանիկ, սպայակույտի պետ՝ գնդ. Զենկևիչ։

Տեղական զորամասեր— Լոռիի, Շուշիի, Ախալքալաքի և Ղազախի գնդերը՝ 2-ական գումարտակներով և Նուխիի, Ախալցխայի, Լոռիի, Իգդիրի և Խանասորի գումարտակները։

Հարակից մասեր— բերդային մասեր, բերդային հրետանի, կապի ու հաղորդակցության մասեր, պայթուցիկ, առողջապահական, պարենավորման, հրետանիի, երկաթուղային և այլ մասեր**։

Այս զորամասերին անցավ ռուս բանակի ժառանգությունը հայկական ճակատում, իսկ ապագայում, հայ հանրապետական բանակի կորիզը կազմելու պատիվը։

---

* Հետո, Հայաս. Հանրապետության դիվիզիան բաղկացած էր 3 հետևակ, 1 ձիավոր և 1 թնդանոթաձիգ գնդերից։ Յուրաքանչյուր հետևակ գունդ ուներ 1500—1800 զինվոր՝ մեջը հաշվելով կապի և գնդացրային վաշտերը։ Վաշտը բաղկացած էր 4 դասակից (50 հոգի)։ Դասակը ուներ 2 ձիավոր գնդացիր։ Զինվորները զինված էին ռուսական նոր ձևի (մոսին) հրացաններով։ Գունդը ուներ 4 լեռնային թնդանոթ, 8—12 գնդացիր՝ մաքսիմ և կոլտ։ Ձիավոր գունդը ուներ 6 էսկադրոն (5—600 հոգի), յուրաքանչյուր էսկադրոնը ուներ 2 կոլտ ու մաքսիմ և 4 ձեռքի գնդացիր։ Ամբողջ գունդն ուներ 4 լեռնային թնդանոթ, 2 էսկադրոն նիզակավոր դասակներ, 25 հոգի առաջապահ հետախույզներ, 2 ձեռքի գնդացիրով և հակագազային դիմակներով։ Թնդանոթաձիգ գունդը ուներ 8 մարտկոց՝ յուրաքանչյուրը 4 թնդանոթով։ Ընդամենը 32 թնդանոթ, որից 16 լեռնային։

** Հայկական կորպուսի մասին տե՛ս զոր. Ղորղանյանի վերն հիշված գիրքը, նաև A. Poidebard «Rôle Militaire des Arméniens», 1920 Paris. և Commandant M. Larcher, «La Guerre Turque dans la Guerre Mondiale», 1926, Paris։

ԳԼՈՒԽ Զ

ԶԻՆԱԴԱԴԱՐ ԵՎ «ՄՈՒԹ ԶԵՌՔԻ» ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ռուս բանակի քայքայումը և թիկունքում կատարվող դեպքերը, բնականաբար, չէին կարող վրիպել թուրքերի ուշադրությունից։ Թուրք հրամանատարությունը այժմ բոլորովին այլ հեռանկարի առջև էր կանգնած. ռուս բանակը պատրաստվում էր, 1918 թվի սկզբին, անցնելու ընդհանուր հարձակման՝ անգլիացիներին միանալու ծրագրով, և թուրքերը ուժ չունեին դիմադրելու։ 1917 թվի տարեվերջին թուրքերի արևելյան բանակը բոլորովին կազմալուծ ու բարոյալքված վիճակի մեջ էր՝ անընդունակ ռազմագիտական լուրջ խնդիրներ լուծելու։ Եվ, հանկարծ, ոչ միայն հարձակումն է կանգնեցվում, այլև ճակատը սկսում է արագորեն մերկանալ։ Թուրք ղեկավարների առջև բացվում էին նոր, արբեցնող հորիզոններ։

Նոյեմբ. 17-ին կովկասյան ռուս բանակի հրամանատարը թուրքական 3-րդ բանակի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ փաշայից նամակ ստացավ զինադադար կնքելու առաջարկությամբ։ Նույն օրերին, բոլշևիկների նախաձեռնությամբ, զինադադարի բանակցություններ էին սկսված և ռուս-ավստրո-գերմանական ռազմաճակատում. Անդրկ. կոմիսարիատը, հեղափոխական կենտրոնի ու հրամանատարության համաձայնությամբ, ընդունեց թուրքական առաջարկը և ռազմաճակատ ուղարկեց 5 հոգիանոց մի հանձնախումբ՝ 2 ռուսներ հրամանատարության կողմից և Ա. Ջամալյանը, վրացի Թևզայան և ռուս Սմիռնովը, որպես Անդրկ. կոմիսարիատի ներկայացուցիչներ։ Հանդիպումը երկու պատվիրակությունների միջև տեղի ունեցավ դեկտ. 2-ին, Երզնկայում, իսկ դեկտ. 5-ին ստորագրվեց զինադադարի համաձայնությունը, ըստ որի զինվորական գործողությունները վերջ էին գտնում կովկասյան ամբողջ ռազմաճակատի վրա՝ Սև ծովից մինչև Վանա լճի հարավային եզերքը, կողմերը պարտավորվում էին զինվորական բնույթ կրող որևէ գործողություն չանել, զորքերի տեղափոխություն կամ լրացում չկատարել և մնալ զինադադարի պայմաններով նախատեսված դիրքերում։ Եթե կողմերից մեկն ու մեկը, մինչև հաշտության կնքումը, վճռեր զինադադարը խախտել, պարտավորվում էր մյուս կողմին իմաց տալ 14 օր առաջ։ Իսկ եթե զինադադար կնքվեր նաև կենտրոնական պետությունների և Ռուսաստանի միջև,

նրա բոլոր պայմանները պետք է լինեին պարտադիր կովկասյան ճակատի համար ևս։ Եվ որովհետև դեկտ. 5-ին լուր էր ստացվել, որ նախորդ օրը զինադադար էր կնքվել և Ռուսաստանի ու կենտրոնական պետությունների միջև, պատերազմական գործողությունները կանգ առան ոչ միայն կովկասյան, այլև ամբողջ պարսկական գծի ու Սև ծովի վրա։ Հաստատվեցին 5 խառն մարմիններ՝ հսկելու համար զինադադարի պայմանների գործադրության վրա։ Անդրկ. կոմիսարիատը իր քայլի մասին անմիջապես տեղեկացրեց և Միջագետքի անգլիական հրամանատարությանը, և Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչներին։

Զինադադարի կնքման պահին, ռուս-թուրքական ռազմաճակատը տարածվում էր ավելի քան 500 կիլոմետր երկարությամբ՝ Սև ծով—Քյալքիթ—Երզնկա—Խնուս—Վան ուղղությամբ։ Հետագայում, Վիլսոնի իրավարարությամբ և Սևրի դաշնագրով հայերին հանձնվելիք ամբողջ Հայաստանը գտնվում էր ռուս բանակի գրավման ներքո։

Զինադադարի կնքումից հետո, 1918 թ. հունվ. 1-ին, կովկասյան բանակի հրամանատար զոր. Օդիշելիձեն Վեհիբ փաշայից ստացավ մի նոր նամակ, որով, հանուն թուրքական բանակի սպարապետ Էնվեր փաշայի, հարցվում էր, թե ի՞նչ միջոցով կարելի է վերականգնել հարաբերությունները Կովկասի կառավարության հետ ու հաշտություն կընքել երկու երկրների միջև։ Հունվ. 15-ին Վեհիբ փաշան հաղորդեց, որ կենտրոնական պետությունների Բրեստ-Լիտովսկ հավաքված պատգամավորները պատրաստ են ճանաչելու Անդրկովկասի անկախությունը, և որ վերջինս, ամենայն վստահությամբ, կարող է ուղարկել իր ներկայացուցիչները։

Անդրկ. կոմիսարիատը, հեղափոխական կենտրոնի և ազգային խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին, քննելով Վեհիբ փաշայի առաջարկը՝ պատասխանեց, թե ինքը պետք ունի խորհրդակցելու Ռուսաստանի ուրիշ ինքնավար շրջանների հետ ևս և 3 շաբաթից կհայտնի իր վերջնական որոշումը։ Միաժամանակ կոմիսարիատը թուրքերի առաջարկության մասին իմացրեց խորհրդային իշխանությունը չճանաչող Ուկրաինայի և Հարավ-Արևելյան Դաշնակցության կառավարություններին՝ հրավիրելով նրանց խորհրդաժողովի, փետրվ. 1-ին, Թիֆլիսում։ Սակայն, Ուկրաինական կենտրոնական ռադայից պատասխան չստացվեց, իսկ Հարավ-Արևելյան Դաշնակցության կառավարությունը թեև խորհրդաժողովի մտքին վերաբերվեց համակրանքով, բայց ներկայացուցիչ չուղարկեց, որով Անդրկովկասը ստիպված էր մենակ վճռել պատերազմի և խաղաղության հարցը։ Եվ փետրը. 1-ի նիստում, Անդրկ. կոմիսարիատը, համախորհուրդ հեղափոխական կենտրոնի, ազգային խորհուրդների և բանակի հրամանատարության հետ, որոշեց տեղեկացնել Վեհիբ փաշային, թե ինքը պատրաստ է սկսելու հաշտության բանակցությունները և խնդրում է հաղորդել տեղն ու վայրը, ուր կարող են հանդիպել իրար երկու կողմերի պատվիրակությունները։ Նույն նիստում որոշվեց, որ հաշտարար պատվիրակության կազմն ու հրահանգները կմշակե Սեյմը, որ պիտի բացվեր մի քանի օրից հետո։ Փետրը. 3-ին հեռագրվեց Վեհիբ փաշային համաձայնության մասին, իսկ փետրվ. 10-ին ստացվեց Պոլսի պատասխանը, որով հաշտության բանակցությունների վայր նշանակվում էր Տրապիզոնը։

Այս բոլոր իրադարձությունների ընթացքում թուրք հրամանատարությունը հանգիստ նստած չէր, այլ գտնվում էր տենդոտ գործունեության մեջ։ Հակառակ զինադադարի պայմանների, կատարվում էին թուրքական զորամասերի տեղափոխություններ ու լրացումներ. արևմտյան ճակատներից շտապով թարմ զորամասեր էին բերվում։ Ռազմաճակատի ամբողջ տարածության վրա, մերձավոր թիկունքում, նկատվում էին շտապ պատրաստություններ պատերազմական նոր գործողությունների համար։ Պարզ էր. թուրքերը մտածում էին օգտվել նպաստավոր դրությունից՝ իրականացնելու համար դեռ պատերազմի սկզբին նախագծված ծրագրերը. Կովկասի դռները ինքնաբերաբար բացվում էին նրանց առջև։

Այս ծրագրերը Կովկասի ազգաբնակչության որոշ մասի կողմից էլ դիտվում էին խանդավառությամբ. կովկասյան մահմեդականությունը պատրաստ էր զրկաբաց ընդունելու թուրքական բանակը։ Հին ռեժիմի օրերի զսպված ու լուռ թուրքասիրությունը այժմ ստանում էր հրապարակային արտահայտություն, և կովկասյան մահմեդականների ու թուրքերի եթե ոչ պաշտոնական գործակցությունը, գեթ փոխադարձ համակրանքը այլևս անհերքելի փաստ էր ամենքի համար։ Այդ փաստն երևան էր գալիս ո՛չ միայն հեղափոխական ու կառավարական հիմնարկությունների մեջ, ժողովներում ու մամուլում, այլև շոշափելի գործերով, որոնց շարքին, առաջին տեղը բռնում էին, անկասկած, այն լայն մահմեդական շարժումները, որոնք հեղափոխության հաջորդ օրն իսկ ծայր տվին գրավված վայրերի և Անդրկովկասի զանազան կողմերում և հարաճուն զարգանալով՝ անիշխանության ու քաոսի մատնեցին ամբողջ երկիրը։ Այդ շարժումները ներշնչված էին թուրքերի կողմից, առաջ էին բերվում ու հրահրվում թուրք գործակալների միջոցով և նպատակ ունեին դժվարություններ ստեղծել ռուսական, իսկ հետո՝ հայկական զորքերի առջև։

Մահմեդական խռովությունները, ավազակային հարձակումները զինվորական գնացքների, պարենակիր խմբերի, խաղաղ հայ ազգաբնակչության և իրենց ծննդավայրը վերադարձող գաղթականների վրա՝ սկսվեցին հեղափոխությունից անմիջապես հետո և սաստկացան, մանավանդ, մայիս ամսին։ «Ինչ-որ մի մութ ձեռք,— գրում էր «Հորիզոնը» մայիսի 19-ին,— պատերազմի ու խռովության սերմեր է փորձում ցանել հայ և թուրք ժողովուրդների մեջ... Երբ օդը հագեցած է գազերով, հար-

կավոր է ծայր աստիճան զգույշ լինել և կայծ չձգել այնտեղ, թե չէ պայթումը անխուսափելի կդառնա»։

«Մութ ձեռքին», այսինքն՝ Թուրքիային ձեռնտու էր խռովությունը։ Եվ ահա նրա գործակալների դրդումով, այստեղ ու այնտեղ, սկսում են առաջ գալ խռովություններ։ Շարժումներ են տեղի ունենում Կարսի, Երևանի, Գանձակի, Էրզրումի շրջաններում։ Խռովությունների ալիքը տարածվում է ամեն կողմ։ Երկրի բոլոր ծայրերից ու ճակատից Թիֆլիս են տեղում հեռագրեր կատարվող անկարգությունների և հակապետական քայլերի մասին։

Մայիսի 9-ին Ալեքսանդրապոլի զինվորական գործադիր կոմիտեի նախագահ Պրեգիրովը հեռագրում է Օզակոմի նախագահ Խառլամովին, որ Թուրքերը գողացել են պահակախմբի զենքերը, և այդ պատճառով մի վաշտ զինվորներ խուզարկել են թուրքական թաղը։

Մայիսի 13-ին Ալեքսանդրապոլի գավառական կոմիսարը 101-րդ երկրապահ հարյուրյակի զինվորների ու միլիցիոներների հետ խուզարկում է Կարսի շրջանի Օղլի-Օղլի գյուղը և բռնում 2 սայլ՝ 7 արկղ պետական հրացան ու փամփուշտ։ Թուրք գյուղացիք կրակում են և վիրավորում մի զինվոր։

Մայիսի առաջին երկու-երեք շաբաթների ընթացքում բազմաթիվ հարձակումներ եղան Օղնուտ—Երզնկայի շրջանի և Բասենի հայ գյուղերի վրա։ Հարձակման ու թալանի զոհերը, մեծ մասամբ, գաղթականները կամ զինվորական պահեստներն ու կայաններն էին։

Մայիսի 29-ին քրդերը հարձակվեցին Սուք Սուի զորակայանի վրա. եղավ բուռն կռիվ։

Հունիսի 1-ին հարձակման ենթարկվեց Գավրեշամիի կառավարական պարենավորման խումբը։ Հունիսի 8-ին քրդերը հարձակվեցին կազակների վրա Բայազետի մոտ։ Հարձակումներ եղան Արագածի շրջանում, Նոր Բայազետում, Սուրմալուում...

Հունիսի 1—2-ին, Գավրեշամիի մոտ սպանվեցին 3 հայեր, վիրավորվեց մեկը, քշվեց 86 բեռնակիր եզ, 2 ձի։

Հունիսի 2-ին, Արհաջ գյուղի մոտ Վան վերադարձող 50—60 գաղթականներ կողոպտվեցին քրդերից, սպանվեց մի մարդ, քշվեց 60 եզ և 40 այլ անասուններ։

Հունիսի 6-ին Արծափի և Մոսունի միջև քրդերը մորթեցին 6 հայեր։

Հունիսի 15-ին 300 քրդեր քշեցին իգդիրցիների անասունները՝ սպանելով մեկ և վիրավորելով 9 մարդ։

Հուլիսի 14-ին քրդերը քշեցին ղամարլուցիների տավարը՝ սպանելով ու վիրավորելով մի քանի հայեր։

Զանազան տեղեր հարձակման էին ենթարկվում երկիր վերադարձող գաղթականները կամ թիկունք մեկնող զինվորները։

«Օգտվելով Ժամ. կառավարության թուլությունից և պրովոկացիոն

մութ ուժերի դրդումից,— գրում էր հունիսի 8-ին «Հորիզոնը»,— Սուրմալուից Հայոց ձոր ու Հայոց ձորից մինչև Մամախաթուն քրդական ավազակաբարո, մինչև ատամները զինված հրոսախմբերը հարձակվում են խաղաղ բնակչության վրա, կողոպտում են, վիրավորում ու սպանում... Ձեն քաշվում անգամ զինվորների ու պարենատար զորամասերի վրա հարձակվելուց։

Իհարկե, կարելի է ասել, որ քրդական ավազակությունները առաջ էլ սովորական երևույթ էին և թուրքական սադրանքներով չպետք է բացատրել, բայց փաստը ցույց է տալիս, որ ավազակություններն ու հարձակումները կատարվում էին, մեծ մասամբ, ռազմագիտական նշանակություն ունեցող վայրերում, գաղթականների վերադարձի ճանապարհների վրա, զորքի թիկունքում։ Դժվար չէր տեսնել, որ այդ շարժումներն ունեն ներքին ծրագիր և ուղղված են, ամենից առաջ, պատերազմին աջակցող ուժերի և կազմակերպությունների դեմ»։

Նման դեպքերը հուզում էին հանրային միտքն ու կառավարական շրջանները։ Տարածվում էին հազար տեսակ լուրեր, որ, իբր թե, Կովկասի թուրքերը շտապով զինվում են, որ նրանք պատրաստվում են միանալու թուրքերին, որ թուրքերն արդեն որոշել են գրավել Կովկասը և այլն, և այլն։ Իշխանությունը անզոր էր իրական դարման հասցնելու։ Նա, ավելի շուտ, աշխատում էր ծեփել ավելի ու ավելի բացվող ճեղքը կամ չտեսնելու ձևանալ օրը ցերեկով կատարվող դեպքերը։

Ապրիլի 24-ին, Անդրկ. Առանձին կոմիտեն քննեց թուրքերի զինման լուրերը և լսելով թուրք ներկայացուցիչներին՝ եկավ այն եզրակացության, որ դրանք անհիմն բաներ են ու որոշեց այդ մասին հաղորդել հասարակությանը։ Որոշեց նաև ռուս-հայ-վրացի-թուրք խառն պատվիրակություններ ուղարկել այն վայրերը, ուր տեղի կունենան միջցեղային խռովություններ։ Բացի այդ, կարգադրեց արգելել քաղաքացիներին զինվորական զենք կրել։

Նույն հարցը, քիչ հետո, մայիսի 12-ին, քննվեց և Առանձին կոմիտեին կից գործող խորհրդակցության և զինվորական ու բանվորական խորհուրդների պատգամավորների խառն նիստում, Խառլամովի նախագահությամբ։ Այս վերջինը հաղորդեց, որ զանազան վայրերից հուզումնալից լուրեր են հասնում ազգաբնակչության զինվելու մասին և որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել երկիրը միջցեղային կռիվների սպառնալիքից փրկելու համար։ Խորհրդակցությունը, այս անգամ, հաստատեց զինման փաստը և որոշեց՝ 1) հրատարակել ռուսերեն և տեղական լեզուներով կոչեր՝ բացատրելով ժողովրդին զինման վնասակարությունը. 2) շրջաններն ուղարկել պատգամավորներ և պրովոկացիայի առաջն առնել. 3) հրատարակել օրենք՝ զենք կրելու իրավունքի մասին. 4) հիմնել հաշտարար մարմիններ՝ հասարակության մեջ առաջ եկող թյուրիմացությունները վերացնելու համար. 5) արգելել ինքնակամ խուզար-

կությունները. 6) պատժել սուտ լուրեր տարածողներին. 7) հիմնել հատուկ մարմին ազգային հողի վրա ծագող վեճերը քննելու համար։

Նշանակում է պաշտոնապես հաստատվում էր, որ Թուրքերը զինվում են։ Հաստատվում էր նաև, որ արգելված միջոցներով պետական զենք են ձեռք բերում ու փոխադրում. այդ նպատակով հարձակումներ են կատարում պետական պահեստների ու կայանների վրա։ Նման մատնանշումները սաստիկ վրդովում էին մահմեդականներին։ Նրանք պնդում էին, որ այստեղ գործում է հայկական պրովոկացիան։ Կատարվող խռովություններն ու հակապետական շարժումները բարդում էին հայերի, մանավանդ Թուրքահայ գաղթականների վրա։

Այսպես, Բաքվի Մահմեդական կոմիտեն, մայիսին, հեռագրեց Մոսկվա, համառուսական մահմեդական համագումարին, Թե «վերջերս Բաքվում, Կարսում, Երևանում և Կովկասի այլ քաղաքներում եռանդուն պրովոկացիա է արվում մահմեդականների դեմ և զրույցներ տարածվում, որ, իբր Թե, մահմեդականները փութով զինվում են կառավարության և քրիստոնյա բնակչության դեմ ոտնձգություններ անելու մտադրությամբ։ Որոշ ծրագրով կազմակերպված և գործադրվող գրգռումի հետևանքով՝ մի քանի զորամասեր Երևանում, Ախալցիխայում, Կարսում և Թուրքիայից գրավված վայրերում ոտնձգություններ են կատարվել խաղաղ մահմեդականների նկատմամբ։ Բաքու քաղաքը ևս գտնվում է պրովոկատորների զզվելի գործունեության սպառնալիքի տակ։ Այդպիսի խառնակիչ գործունեությունը կարող է տալ վատ հետևանքներ Թե՛ մահմեդականների և Թե՛ Կովկասի ու Նոր Ռուսաստանի բոլոր այլ ազգությունների համար։ Շուտափույթ պետք է ձեռք առնել ամենավճռական միջոցներ չարամիտ պրովոկացիայի դեմ»։

Նույն իմաստով մի բողոք էլ կոմիտեն ուղարկեց Անդրկ. Առանձին կոմիտեին, ուր, ի միջի այլոց ասում էր. «Կոմիտեն համարում է իրեն անպատված, որ պրովոկացիան արատավորում է մահմեդականներին, որոնք կողմնակից են ներկայի և ապագայի ռամկավար իդեալներին և համակարծիք են բոլոր բանվորական կուսակցությունների հետ։ Միությունը պահանջում է վերջ տալ պրովոկատորական խարդախությանը»։

Իսկ Բաքվի «Ենի Իկբալ» Թերթը, մայիսի 3-ին, շտապում է բանալ փակագծերը՝ հայտարարելով, Թե մահմեդականների դեմ դավեր լարողը հայերն են. «Պրովոկացիա սարքողը կովկասյան ազգերից մեկն է... Եթե ուզենանք իմանալ, Թե ո՞րն է այդ ազգը, ցավելով պետք է ասենք, որ այդ ազգը մեր մոտիկ հարևան ազգայնամոլ հայերն են»։

Որ հայերի կողմից էլ բռնություններ ու կամայականություններ տեղի էին ունենում, այդ, իհարկե, անհերքելի է։ Մանավանդ, Թուրքական սրածությունից ու կոտորածներից հրաշքով ազատված արևմտահայ գաղթականները երբեմն փորձում էին վրեժ լուծել մահմեդականներից։ Տեղ-տեղ Թուրքերին հալածում ու ճնշում, երբեմն նաև սպանում էին և

կամավորական խմբերը։ Պատերազմի և իթթիհատական վայրագության առաջ բերած դժբախտ երևույթներ էին սրանք, որոնք, հաճախ, տարերային ձև էին ստանում և որոնց առաջն առնելը վեր էր մարդկային կարողությունից։ Սակայն, անհիշտ կլիներ ասել, որ 1917 և հաջորդ 1918 Թվին մահմեդական շարժումները Կովկասում արդյունք էին հայկական պրովոկացիայի կամ հայ գաղթականների ու խմբերի առաջացրած անկարգությունների։ Ո՛չ, այդ այդպես չէ։ Երևույթն ավելի խորն էր. նրա բացատրությունը պետք է որոնել Թուրք քաղաքականության և կովկասյան մահմեդականների ա՛յն ժամանակվա տրամադրությունների մեջ։ Անպայման, դեպքերի պատճառը Թուրքական «մութ ձեռքն» էր, որ պղտորում էր մտքերը և խռովություն առաջ բերում այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր գտնում իր շահերի համար։ Այդ «մութ ձեռքը» գործակալներ ուներ և՛ Թիֆլիսում, և՛ Կովկասի ուրիշ կենտրոններում, որոնք շատ անգամ պրովոկացիոն խաղեր էին խաղում հանրային անդորրությունը խանգարելու համար։

Այսպես, մայիսի 23-ին Թիֆլիսի Բանվ. և Զինվ. խորհուրդների պաշտոնաթերթում, ինչպես և ուրիշ Թերթերում հրատարակվեց Բասենի շրջանի ժամանակավոր կոմիսար և զինվ. գործ. կոմիտեի նախագահ Սպերանսկու մի գրգռիչ հեռագիրը, Թե «վերջին երկու-երեք շաբաթվա ընթացքին Բասենի հովտի գյուղերը գաղթում են Թիկունքից բազմաթիվ փախստական հայեր, մեծ մասամբ ռուսահպատակներ, որոնք ինքնակամ կերպով գրավում են Թուրք բնակիչների տները՝ դուրս քշելով տեղական բնակիչ Թուրքերին։ Հայերին բնակեցնում են Հասան-Ղալայի շրջանում առանց շրջանային կոմիսարիատի գիտության՝ արգելք լինելով Օղնուտ—Երզնկայի շրջանից տեղահանվող ժողովրդի գաղթեցման ծրագրին։ Խնդրում եմ շուտով կարգադրել՝ դադարեցնել հայկական մասնավոր ընկերությունների կազմակերպված այդ գաղթը, տալով ինձ այդ մասին ղեկավարող ցուցմունքներ»։

Խնդիրը ինքնին պարզ էր. արևմտահայ կազմակերպությունները, Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարության գիտությամբ ու հավանությամբ և զինվորական ու քաղաքացիական իշխանությունների աջակցությամբ կատարում էին գաղթականների տեղավորում, որի ժամանակ հնարավոր էր, որ բռնություններ էլ կատարված լինեն Բասենի շրջանում։ Բայց պետք էր տեսնել, Թե ի՞նչ աղմուկ բարձրացրին մահմեդական շրջանները, ի՞նչ ծանր մեղադրանքներ ուղղեցին հայերի հասցեին։

Մայիսի 23-ին Թիֆլիսի Բանվ. և Զինվ. խորհուրդը Գանձակից ստացավ հետևյալ հեռագիրը. «Գանձակ քաղաքում մահմեդականներն ու հայերը բաժանվել են երկու մասի. մեջտեղը կանգնած է զորքը. Արջեվանիձե»։ Բնականաբար հասարակության ու կառավարական շրջաններում առաջ եկավ սաստիկ իրարանցում։ Անմիջապես հեռախոսով հարցում արվեց Գանձակ, և քաղաքապետ Խասամադովը զարմանքով պա-

տասխանեց, թե քաղաքում ոչինչ չի պատահել, հայերն ու թուրքերը ապրում են հաշտ, և զորքը մնում է իր տեղը։ Ո՞ւմ էր հարկավոր այդ չարամիտ խաղը. մնաց չպարզված։

Անհանդարտ, ջղագրգիռ վիճակ էր տիրում ամեն տեղ. մութ ձեռքը գործում էր անարգել և ոչ մի ճիգ, կառավարական կամ հասարակական ո՛չ մի ուժ չկարողացավ զսպել կամ առաջն առնել մահմեդական շարժումների։ Նրանք հետզհետե ծավալվեցին, ստացան հարատև բնույթ և 1917 թվի վերջերին արդեն դարձել էին կովկասյան կյանքի ամենաազդեցավոր երևույթը։ Մահմեդական հոծ զանգվածներ ունեցող շրջաններում, հաճախ, կտրվում էր երկաթուղային հաղորդակցությունը, և պետք էր լինում դիմել արտակարգ միջոցների՝ զինվորական ուժի ու զրահապատների օգնության, որպեսզի բացվի ճանապարհը։ Քրդական շարժումները նոր թափով բռնկվեցին 1918 թ. հունվարի կեսերին, երբ ճակատի զանազան մասերում ուղղակի ճակատամարտեր մղվեցին քուրդ հրոսախմբերի և կանոնավոր զորքերի միջև։ Միայն հունվ. 15—16-ին, և միայն Երզնկայի շրջանում, պաշտոնական հաղորդագրությամբ քրդերի ձեռքով սպանվեց շուրջ 200 մարդ։

Այս ամենը, իհարկե, անգնահատելի ծառայություն էր թուրքերին։ Երբ Կովկասն արդեն բավական խառնվել էր ներքին խնդիրներով, իսկ, մյուս կողմից, թուրք բանակն արդեն վերստացած էր նախկին ռազմունակությունը, թուրք հրամանատարությունը դիմեց վճռական քայլերի. դեկտ. 16-ին կովկասյան բանակի հրամանատարը Վեհիբ փաշայից ստացավ մի նամակ, որի մեջ ասվում էր, թե սպարապետ Էնվեր փաշան նկատել է, որ գրավված վայրերում բռնություններ են գործադրվում թուրքահպատակների վերաբերմամբ և պահանջում է վերջ տալ դրանց։ Մի քանի օր հետո, հունվ. 23-ին, Վեհիբ փաշայից ստացվեցին մի քանի հեռագրեր, որոնք նորից բողոքում էին թուրքահպատակների նկատմամբ գործադրվող բռնությունների դեմ և պահանջում էին խիստ պատժի ենթարկել հանցավորներին։ Զոր. Օդիշելիձեն, հունվ. 31-ին և փետրվարի սկզբին, երկու անգամ պատասխանեց, որ Վեհիբ փաշայի ստացած տեղեկությունները խիստ չափազանցված են, որ ճիշտ է, Երզնկայի ու Տրապիզոնի շրջաններում տեղի են ունեցել մի քանի բռնություններ, բայց նրանք արդյունք են քրդական հրոսախմբերի հարձակումների և բնավ չեն համապատասխանում թուրք հրամանատարության ցույց տված չափերին։ Ի պատասխան սրան, փետր. 6-ին Օդիշելիձեն ստացավ Վեհիբ փաշայից մի նոր հեռագիր, որով թուրք հրամանատարը հայտնում էր, թե ինքը՝ երկու կողմերի համար պատվավոր հաշտության երկրպագու լինելով հանդերձ՝ ստիպված է, մահմեդական բնակչության պաշտպանության նպատակով, առաջ շարժել իր զորքերը մինչև ռուս զորամասի հետ շփման մտնելը։

Ուրիշ խոսքով, վերսկսվում էր պատերազմը։

ԳԼՈՒԽ Է

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բայց ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Անդրկովկասը։ Որքա՞ն ընդունակ էր նա դիմադրելու թուրքերին։

Տեսանք արդեն, որ նոյեմբերի 27-ին Անդրկ. Առանձին կոմիտեն փոխարինվեց Անդրկ. կոմիսարիատով։ Այս փոփոխությունը, սակայն, իրական բարելավում չբերեց։ Ճակատի ու թիկունքի քայքայումը շարունակվեց անարգել՝ միշտ ընդարձակվելով ու խորանալով։ Գրեթե ամբողջ ժամանակ կառավարությունը զբաղված էր բանակի նահանջի ու մահմեդական շարժումների հետ կապված խնդիրներով, պարենավորման ու ելևմտական տագնապի դեմ կռվելով, պատերազմի հաշվեհարդարին վերաբերվող և նման հարցերով։ Կազմակերպական և շինարար աշխատանք կատարելու հնարավորություն չէր մնում։ Միակ «շինարար» աշխատանքը եղավ անդրկովկասյան բռների հրատարակությունը փետրվ. 6-ին, որ մասամբ մեղմացրեց դրամական սովը։

Անդրկ. կոմիսարիատը ներքնապես էլ ներդաշնակ ու հաշտ չէր։ Ազգային ներհակությունները մաշում էին նրա հիմքը։ Իշխանության իրական ուժը ավելի և ավելի տեղափոխվում էր ազգային խորհուրդների մեջ, որոնցից յուրաքանչյուրը իր ազգի շահերն էր պաշտպանում։ Դրան մեծապես նպաստում էր և կովկասյան ժողովուրդների քաղաքական հակումի՝ օրիենտացիայի տարբերությունը։ Մինչ հայերը և, որոշ չափով, վրացիները համարվում էին հակաթուրքական կողմ, մահմեդականները շեշտված թուրքասերներ էին և Թուրքիայի գործերը շատ մոտ էին ընդունում իրենց սրտին։ Հակումի ներհակությունից առաջ էին գալիս և Անդրկ. կոմիսարիատի ներսում աճող սուր անհամաձայնությունները պատերազմի խնդրում. Կոմիսարիատի մահմեդական անդամները ամեն գնով աշխատում էին արագացնել հաշտությունը թուրքերի հետ՝ Թուրքիայի համար նպաստավոր պայմաններով, նույնիսկ Կովկասի շահերին ի վնաս։

Այսպիսի հանգամանքներում գործող մի իշխանություն, իհարկե, չէր կարող երևան բերել ուժ ու հեղինակություն, իսկ նրա կառավարած երկիրը չէր կարող լինել խաղաղ ու բարգավաճ։ Եվ, իրոք, երկիրը ներկայացնում էր քաոսային մի վիճակ։

Սեյմի փետրվ. 13-ի նիստում Գեգեչկորին այսպես էր բնորոշում Անդրկովկասի դրությունը դեկտեմբեր-հունվար ամիսներին. «Մեր ընդարձակ և բազմացեղ երկրի բոլոր կետերում, բոլո՛ր շրջաններում առաջ էին գալիս թյուրիմացություններ ու բռնություններ թե ազգային հողի վրա և թե հեռացող զորքերի ու տեղական բնակչության միջև պատահող ընդհարումների պատճառով։ Այստեղ ու այնտեղ բռնկվում էին հրդեհներ, որ ստիպված էինք հանգցնել մեր փոքրիկ ուժերով, որովհետև Անդրկ. կոմիսարիատը, պնդում եմ, չուներ այն, որ կազմում է հիմքը յուրաքանչյուր իշխանության՝ հարկադրող ուժ։ Անդրկ. կոմիսարիատը հնարավորություն ու միջոց չուներ անհապաղ և անշեղ գործադրել տալու իր պահանջները, որովհետև թեև գոյություն ունեին ազգային զորամասեր, բայց նրանք ո՛չ մի ուժ չէին ներկայացնում։ Մի մասը բռնված էր ճակատում, մյուս մասը անկազմակերպ էր, իսկ երրորդը՝ գոյություն ուներ միայն թղթի վրա»։

Ինչ կարելի էր պահանջել այսպիսի իշխանությունից։ Շատ քիչ բան։ Ավելի ևս անհույս էր, որ նա ի վիճակի կլինի կազմակերպելու և վարելու պատերազմի գործը։ Այդ պատճառով, Վեհիբ փաշայի դիմումը հաշտության բանակցություններ սկսելու մասին, Թիֆլիսում նկատվեց իբրև մի ելք ստեղծված անտանելի կացությունից։ Փետրվ. 1-ին, Թուրքերի հաշտության բանակցությունների առաջարկն ընդունելուց հետո, Անդրկ. կոմիսարիատը կազմեց մի հանձնախումբ՝ հաշտության խորհրդաժողովի համար նյութեր պատրաստելու նպատակով։ Եվ միաժամանակ միջոցներ ձեռք առավ արագացնելու Սեյմի գումարումը։

Անդրկ. սեյմը գումարվեց փետր. 10-ին հետևյալ կազմով.

Ամենամեծ ֆրակցիան սոցիալ-դեմոկրատ մենշևիկներինն էր՝ 32 անդամ, որից 25-ը վրացի, 4 հայ (Ա. Զոհրաբյան, Հ. Բեգզադյան, Ղ. Տեր-Ղազարյան, Ս. Փիրումյան), 2 ռուս և 1 գերմանացի։ Այս ֆրակցիան հարուստ էր փորձված քաղաքական գործիչներով, որոնցից շատերը ալքի ընկնող դեր էին կատարել Պետական դումաներում և համառուսական քաղաքական կյանքում՝ Ծերեթելի, Գեգեչկորի, Զոհրաբյան, Սկոբլև, Չխենկելի, Ժորդանիա և այլն։

Պատգամավորների թվով երկրորդ տեղը գրավում էր «Մուսավաթ և անկուսակցականների խմբակ» ֆրակցիան՝ 30 անդամ, որի մեջ մտնում էին ազրբեջանցի ամենաալքի ընկնող գործիչները՝ Թոփչիբաշև, Ջաֆարով, Ռասուլ-Զադե, Ուսուպբեգով, Աղաև, դր. Սուլթանով, Խանխոյսկի, Մելիք-Ասլանով։

Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան ուներ 27 պատգամավոր՝ Ռոստոմ Զորյան, Մ. Հովհաննիսյան, Կ. Համբարձումյան, Հ. Օհանջանյան, բժ. Հ. Ջավրյան, Ավ. Շահխաթունյան, Հ. Քաջազնունի, Ս. Տիգրանյան, Ն. Ղազարյան, Ս. Վրացյան, Ա. Խատիսյան, Ա. Նալչաջյան, Գ. Խատիսյան, Ս. Խաչատրյան, Գ. Զամոյան, Խ. Կարճիկյան, Մ. Հարությունյան, Հ. Յաղջյան, Խ. Համասփյուռ, Հ. Զոլախյան, Ա. Չիլինգարյան, Գ. Տեր-Հարությունյան, Վ. Խորենի, Մ. Արզումանյան, Տ. Ավետիսյան, Ա. Սահակյան, Պ. Լևոնյան, Գ. Մանդալյան։ Առաջին երեքը, ինչպես և Ա. Չիլինգարյանը, բացակա էին Թիֆլիսից, ոչ մի նիստի չմասնակցեցին և հետագայում փոխարինվեցին ուրիշներով։

7 պատգամավոր ուներ մահմեդական ընկերվարական բլոկը՝ 5՝ սոց. հեղափոխականների կուսակցությունը, 4՝ սոց.-դեմ. Հումմեթը, 3՝ Ռուսաստանի մահմեդականության Իթթիհատ-Իսլամ կազմակերպությունը, 1՝ ռուս ժողովրդ. ազատության կուսակցությունը, 1՝ վրացի սոց.-ֆեդերալիստները, 1՝ վրացի ազգային-դեմոկրատները։

Սեյմի երրորդ (15 փետրվ.) նիստում կուսակցություններն արին իրենց հայտարարությունները։ Հ. Հ. Դաշնակցության բաղձանքներն արտահայտեց Հ. Քաջազնունին, հետևյալ հայտարարությամբ. «Հ. Հ. Դաշնակցությունը ողջունում է հայ դեմոկրատիայի կողմից Անդրկովկասյան սեյմը։

Սերունդների երազը՝ Համառուսական սահմանադիր ժողովը մի օրվա համար դարձավ իրական փաստ։ Ժողովրդի ընտրյալները հավաքվեցին արդեն, որպեսզի իրականացնեն նրա վեհ կամքը և դնեն պետական և ընկերային կեցության նոր հիմքերը։ Բայց, ընդհանրապես, բոլոր ընկերային-քաղաքական խորունկ շարժումներին հատուկ անխուսափելի հիվանդագին թեքումը պառակտում մտցրեց հեղափոխական շարժման առողջ ընթացքի մեջ և բռնությամբ ընդհատեց Սահմ. ժողովի աշխատանքը հենց սկզբից։ Քանի որ կենտրոնական համապետական իշխանությունը բացակա է, ժողովուրդներն ու երկրները հարկադրված են տեղերում սեփական ուժերով լուծելու կյանքի հրամայական ընթացքով առաջ եկած ամենեն անհետաձգելի խնդիրները։ Կարգավորելով իրենց կյանքը տեղերում՝ ժողովուրդներն ու երկրները դրանով հենց գնում են ամուր հիմքը մեծ ամբողջի՝ մեկ համառուսական ռամկավար դաշնակցային հանրապետության կառուցման։ Նման կազմակերպող կենտրոններից մեկը պետք է դառնա Անդրկովկասյան սեյմը։

Կանգնած լինելով անդրկովկասյան դեմոկրատիայի մեկ և ընդհանրական շահերի պահպանության տեսակետի վրա և հենվելով նրա հեղափոխական մարմինների՝ զինվորական, բանվորական ու գյուղացիական խորհուրդների վրա՝ Անդրկ. սեյմը կոչված է, մի կողմից, վերականգնել երկրի կարգն ու անդորրությունը, դուրս բերել նրան հարաճուն, քայքայող անիշխանության շրջանից և դնել հեղափոխական նվաճումների ամրապնդման ճանապարհի վրա, մյուս կողմից՝ հենարան տալ Ռուսաստանի հանրապետությանը, որի մեջ Անդրկովկասը, իբրև մասնիկը հզոր ամբողջության, պետք է գտնի արժանավոր տեղ։

Մեկնելով Անդրկ. սեյմի նպատակների նման հասկացողությունից՝ Դաշնակցության ֆրակցիան դնում է հերթից դուրս պատերազմը վեր-

ջացնելու և Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտություն կնքելու հարցը՝ հաշտություն առանց բռնագրավումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքներով։ Մեր ճակատում այս սկզբունքը պետք է հանգի Թուրքահայաստանի ինքնավարության ստեղծման։

Պատերազմի հաշվեհարդարի խնդրի հետ միասին անհապաղ պետք է լուծվի Անդրկովկասի կենտրոնական իշխանության և տեղական իշխանությունների կազմակերպման հարցը, իշխանությունը պետք է լինի միատարր՝ ընկերվարական, որովհետև միայն այդպիսի՛ իշխանությունը կարող է իրականացնել աշխատավոր ժողովրդի ակնկալությունները և անհնար դարձնել քաղաքական պատեհապաշտության և ընկերային ճահճացման սկզբունքների վերադարձը։ Եվ հաշվի առնելով օրվա ամենաանհետաձգելի պահանջները՝ երկրի իշխանությունը պետք է ձեռք առնե շտապ և իրական միջոցներ՝ վերականգնելու հաղորդակցությունը, լուծելու պարենավորման ու ելևմտական տագնապը։

Վաղուց ի վեր հասունացած հողային խնդիրը պետք է լուծում ստանա հողային մասնատիրության իսպառ վերացումով և բոլոր հողերը անհապաղ և անվճար աշխատավոր ժողովրդին հանձնելով՝ հողից հավասարաբար օգտվելու սկզբունքով (ծափեր)։

Հետո, նույն ընկերային օրենսդրության ասպարեզում, Դաշնակցության ֆրակցիան ձգտելու է իր նվազագույն ծրագրի իրականացման նրա բովանդակ ծավալով՝ առաջին հերթին դնելով օրենսդրական կարգով 8 ժամվա աշխատանքի օրվա հաստատման, աշխատանքի պետական հովանավորության և բանվորների ապահովության պահանջը (ծափեր)։

Քաղաքատնտեսական բարենորոգումների բնագավառում ֆրակցիան պահանջելու է պետական նշանակություն ունեցող և ընկերվարական արտադրելակերպի համար բավականաչափ հասունացած խոշոր ֆինանսական, արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունները հասարակության սեփականություն դարձնել, այլև արդյունաբերության վերահսկողության և ընդհանուր աշխատավորական պարտավորության հաստատում։

Վերոհիշյալներին զուգընթաց, օրվա մեծագույն քաղաքական խնդիրն է հանդիսանում Անդրկովկասի ճիշտ սահմանաբաժանումը, ժողովուրդների ինքնուրույն կանտոնների ստեղծումը և նրանց միացումը Անդրկովկասյան ընդհանուր դաշնակցության մեջ։ Նոր կարգի ամրությունն ու կայունությունը, երկրի ներքին խաղաղությունն ու բովանդակ բարեկեցությունը ամենասերտ կերպով կապված են այս բարդ խնդրի բավարար լուծման հետ, ուստի և պահանջվում է նրա հանդեպ առանձնապես ուշադիր վերաբերում։

Հիշված խնդիրների իրականացմանը Հ. Հ. Դաշնակցությունը կնվիրի իր բոլոր ուժերը՝ երկրի բոլոր դեմոկրատների հետ կատարյալ համերաշխության և բարեկամական գործակցության մեջ։

Միաժամանակ Դաշնակցությունը, իբրև միջազգային ընկերվարական ընտանիքի անդամներից մեկը, անհողդողդ հավատն ունի, որ Անդրկովկասյան սեյմը իր հետագա զարգացման ընթացքում կդառնա ընկերվարական մտքի ու ստեղծագործության հնոց և միջոց Անդրկովկասյան ընկերվարական միջազգայինի (ծափեր)»*։

Այսպիսով, Դաշնակցությունը առաջադրում էր օրվա հրատապ նշանակություն ունեցող չորս խնդիրներ. 1) Ինքնուրույն Անդրկովկասը համարվում է մասնիկը Ռուսաստանի. 2) Պատերազմը վերջացնելու պայման՝ դրվում է Թուրքահայաստանի ինքնավարությունը. 3) Անդրկովկասի վերաբաժանումը ազգային կանտոնների և 4) Միատարր-ընկերվարական իշխանության կազմակերպումը։

Այս չորս պայմաններն էլ հանդիպեցին Ազրբեջանի ներկայացուցիչների բուռն դիմադրության։ Նրանց կողմից հայտարարություն անող Աղաևը գտնում էր, որ Սեյմը պետք է լինի Սահմանադիր ժողով՝ լուծելու համար Անդրկովկասի ճակատագիրը, որը կտրված է Ռուսաստանի ընդհանուր ճակատագրից։ Ճիշտ է, Աղաևը դեռ խոսում էր «Ռուսաստանի ազատ ժողովուրդների», «դաշնակցության», «Ադրբեջանի ազգային-քաղաքական ինքնավարության» մասին, բայց այդ, ավելի շուտ, տուրք էր օրվա ընդհանուր տրամադրություններին։

Պատերազմի խնդրում Աղաևն ևս պահանջում է «ռամկավար հաշտություն, առանց բռնագրավումների և ռազմատուգանքի, ժողովուրդների ինքնորոշման հիմունքով», բայց և շտապում է ավելացնել, թե «չպետք է խառնվել հարևան պետությունների ներքին գործերին», այսինքն՝ ձեռք քաշել թուրքահայկական դատից։

Կառավարության կազմության հարցում Աղաևը դնում է «խիստ կոալիցիայի պահանջը»՝ հաշվի առնելով «ազգային խմբերի իրական համեմատությունը»։ Միատարր-ընկերվարական իշխանությունը, անընդունելի է միանգամայն։ Պատճառը հասկանալի է. մահմեդականների մեջ տիրող տարրը բեգերն ու կալվածատերերն էին։

Անդրկովկասի վարչական բաժանման վրայից Աղաևը անցնում է լռությամբ, բայց ազրբեջանցիների ընդհանուր քաղաքականությունից գիտենք, որ նրանք վճռականապես հակառակ էին հայկական ծրագրին, որի դեմ պայքարում էին 1916-ի զեմստվոյական խորհրդակցություններից սկսած։

Վրաց բաղձանքները արտահայտեց Ժորդանիան, որ իր առաջադրած խնդիրներով ավելի մոտենում էր ազրբեջանցիներին, թեև խոսքերով աշխատում էր ցույց տալ հակառակը։

* Закавказский Сейм. Стеногр. отчет. Сессия первая, заседание третье, 1918. Тифлис, стр. 15.

Ռուսաստանի հարցում նա, ըստ էության, կանգնեց Աղաևի տեսակետի վրա. «Ժողովրդական կոմիսարների խորհրդի ընդունած հաշտության վերջին պայմանները, որոնք ամբողջ Ռուսաստանը մատնեցին գերման իմպերիալիստների քաղաքական ու տնտեսական գերության, է՛լ ավելի կտրեցին մեզ Ռուսաստանի հետ կապող թելերը։ Եվ մեր Սեյմը այժմ իրեն համար հիմնական նպատակ պետք է դնե սեփական ուժերով այս երիտասարդ երկիրը՝ Անդրկովկասը վերածել իրավականորեն կազմակերպված Անդրկովկասյան Հանրապետության»։ Ա՛յս կետում տարբերություն չկար Ժորդանիայի և Աղաևի միջև։

Հետո, Անդրկ. Հանրապետության սեյմը, առաջին հերթին, պետք է հաշտություն կնքեր Թուրքերի հետ, բայց ո՛չ այնպիսի հաշտություն, որպիսին ստորագրեցին բոլշևիկները. «Մենք այդպիսի հաշտություն չենք ստորագրի և կարծում ենք, որ ավելի լավ է մեռնել պատվով դիրքերում, քան խայտառակվել և սերունդների անեծքին ենթարկվել»։ Այս կետում, Ժորդանիան Քաջազնունու հետ է. նա պահանջում է «պատվավոր հաշտություն», թեև հետագա դեպքերը ցույց տվին, որ Ժորդանիայի «պատվավոր հաշտությունը» շատ քչով է տարբերվում Աղաևի «անպատիվ» հաշտությունից։

Իշխանության կազմության խնդրի վրայից Ժորդանիան անցավ լռությամբ. փափուկ դրություն էր. եթե պահանջեր միատարր-ընկերվարական կառավարություն, ինչպես պահանջում էր հեղափոխական խորհուրդների կենտրոնում, դժգոհ կլինեին ազրբեջանցիները. եթե պահանջեր կոալիցիոն կառավարություն, ինչպես գործնականորեն անց էր կացնում Սեյմի կուլիսներում, դժգոհ կմնային հեղափոխական խորհուրդները։ Ահա մի տեղ, որտեղ լռությունը իսկապես ոսկի էր։

Անդրկովկասի սահմանների վերաբաժանման հարցում Ժորդանիան պաշտպանում էր Դաշնակցության տեսակետը. «Հենվելով հողային սկզբունքների վրա՝ մենք պետք է գոյություն ունեցող ազգերը սահմանաբաժանենք այնպես, որ միմյանց չխանգարեն, ընդհակառակը, որ նրանք կարողանան աջակցել միմյանց և միացյալ ու ընդհանուր ջանքերով դուրս բերեն մեր երկիրը քաղաքակրթության և ազատության ճանապարհի վրա»։ Բայց սահմանների վերաբաժանումը Ժորդանիան հասկանում էր բոլորովին հակառակ Դաշնակցության պաշտպանած ծրագրից՝ այնպե՛ս, որ Կովկասում միայն Վրաստանն էր դառնում ազգային միություն. «Մենք ստիպված պիտի լինենք Անդրկովկասի հողից ձևել սահմանափակ մեծություն ունեցող ազգային հողային միավորներ, այսինքն, թերևս, պետք լինի, որ մի ազգ (օրինակ, հայերը, վրացիները կամ թաթարները), կտրատվեն մի քանի ինքնավար միավորների և որ այդ ազգը ապրի իր ազգային շատ կանոններում։ Եթե առնենք Արևելյան Անդրկովկասը, կտեսնենք, որ այստեղ այդպես պետք պիտի լինի վարվել, որովհետև ոչ մի կերպ կարելի չէ ձևել այնպիսի միապաղաղ ազգային-հողային միավոր, որը ընդգրկեր մեկ ազգություն և չընդգրկեր մեծ քանակությամբ ուրիշ ազգություն»։

Այսպիսով, Սեյմի գոյության առաջին իսկ օրից երևան եկավ Անդրկովկասի երեք գլխավոր ժողովուրդների մտածողության ու ձգտումների ներհակությունը։ Եվ այն անհամաձայնությունները, որ կային Սեյմից առաջ, Անդրկ. կոմիսարիատի մեջ, վեճի ու պայքարի բոլոր առարկաները, կիրքն ու նախանձը, չկամությունն ու թշնամանքը մեքենայորեն մուտք գործեցին և Սեյմ։ Հետագա դեպքերը և միացյալ աշխատանքը Սեյմում ո՛չ միայն չմեղմացրին, այլ ավելի ևս սաստկացրին հակամարտությունը։

Տարակարծությանց հրատապ առարկաներից մեկն էր Անդրկովկասի քաղաքական կազմակերպության՝ անկախության խնդիրը, որով Սեյմը զբաղվեց փետր. 22-ի նիստում։

Այդ առթիվ երկար ճառեր արտասանեցին վրացիների կողմից Ն. Ժորդանիան, ազրբեջանցիներից Խան-Խոյսկին։ Երկուսն էլ անվերապահ վճռականությամբ պաշտպանում էին Անդրկովկասը անկախ հայտարարելու պահանջը։ Ժորդանիան շեշտում էր, որ Ռուսաստանը ինքն է հեռացել Կովկասից, և կովկասյան ժողովուրդները պետք է իրենք տնօրինեն իրենց ճակատագիրը, որի համար ուրիշ ելք չի մնում, քան անկախություն հայտարարելը, այլապես կգան Թուրքերը և կգրավեն Անդրկովկասը։ Թուրքերի հետ հաշտություն կնքելու միակ միջոցը Անդրկովկասը անկախ հռչակելն է, պնդում էր և Խան-Խոյսկին։ Նրանց պատասխանեց ռուս Սեմյոնովը. «Անդրկովկասը Ռուսաստանից անջատելով՝ դուք կերթաք ավելի առաջ, դուք ստիպված կլինեք Արևելյան Անդրկովկասը՝ Ազրբեջանը և Վրաստանը անջատել Անդրկովկասից, Հայաստանը անջատել Անդրկովկասից, իսկ հետո, գուցե, Վրաստանն էլ բաժանել մասերի՝ Իմերեթիայի, Քարթալինիայի և կվերադառնաք 13-րդ դարին... Անկախություն հայտարարելուց հետո, դուք կմտնեք թուրքական օրիենտացիայի մեջ, ակամա կդառնաք Թուրքիայի մեկ մասը կամ՝ նրանից կախված, նրա հովանավորության տակ... Թուրքական օրիենտացիա ընդունելով՝ դուք կընկնեք պետությունների այն խմբի մեջ, որը պատերազմում է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ»։

Սեմյոնովը ճիշտ էր արտահայտում իրերի ընթացքը։ Անդրկովկասը արագ քայլերով շարժվում էր դեպի Թուրքիայի գիրկը։ Հայերը պայքարում էին դրա դեմ, և նրանց ընդդիմության պատճառով անկախության հարցի լուծումը հետաձգվեց։

ԳԼՈՒԽ Ը

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Տարակարծությանց և պայքարի մյուս լուրջ աղբյուրը պատերազմի և խաղաղության հարցն էր, որը, ինչպես արդեն բազմիցս նկատեցինք, անդրկովկասյան ժողովուրդներին բաժանել էր տարբեր, հաճախ, միմյանց թշնամի հատվածների։ Այս հարցում կովկասյան ժողովուրդների տեսակետը բավական տարբեր էր իրարից. վրացիք և, մանավանդ, հայերը ձգտում էին «պատվավոր հաշտության»։ «Այնպիսի հաշտության, որպիսին ստորագրեցին բոլշևիկները, մենք չե՛նք ստորագրի. ավելի լավ է պատվով մեռնել դիրքերում, քան թե խայտառակվել և սերունդների անեծքին մատնվել»,— Ն. Ժորդանիայի այս հայտարարությունը ընդունվեց բուռն ծափերով Սեյմի կողմից, փետրվ. 15-ի նիստում։

Նույնքան և ավելի վճռական էին հայերը։ Սեյմի նույն նիստում Հ. Քաջազնունին Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի անունից հայտարարեց. «Դաշնակցությունը հերթից դուրս դնում է պատերազմը վերջացնելու և Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի ազդարարած սկզբունքներով հաշտություն կնքելու հարցը՝ հաշտություն առանց բռնագրավումի և ռազմատուգանքի՝ ժողովուրդների ինքնորոշման հիմունքով։ Մեր ճակատում այս սկզբունքը պետք է հանգի Թուրքահայաստանի ինքնավարության ստեղծման»։ Այսպիսով, հայկական տեսակետը անհամեմատ ավելի որոշ էր, քան վրացիների անբովանդակ «պատվավոր հաշտություն» խոսքը։

Ավելի կտրուկ էր ազրբեջանցիների բանաձևը. նրանք պահանջում էին անմիջապես վերջ տալ պատերազմին, բավականանալ 1914 թվի սահմաններով և չխառնվել Թուրքիայի ներքին գործերին. Թրքահայկական խնդիրը, նրանց համար, Թուրքիայի ներքին գործ էր։

Ազրբեջանցիների կողմից հայտարարություն անող Աղաևը դեռ վարանոտ ու չափազանց զգույշ արտահայտություններով էր ձևակերպում այս տեսակետը. «Խիստ կերպով անցկացնել հարևան պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը»։ Բայց հետզհետե լեզուները բացվեցին, և Ազրբեջանի գործիչներն այլևս պետք չէին զգում ծածկելու, որ իրենց համար «եղբայրական Թուրքիայի» շահերը ավելի թանկ են, քան իրենց հարևան հայերի ազգային բաղձանքները։

Հաջորդ նիստում, փետր. 16-ին, Սեյմը արդեն գործնականորեն զբաղվեց հաշտության խնդրով։ Հանձնախմբի զեկուցաբեր Ն. Ռամիշվիլին մանրամասն պարզեց այն սկզբունքները, որոնք պետք է հիմք կազմեին Թուրքերի հետ կնքվելիք դաշնագրի։ Այս սկզբունքներն են. հաշտությունը պետք է լինի վերջնական, դաշնագիր կողմերի միջև պետք է պահվեն 1914 թվի սահմանները, Արևելյան Անատոլիայի ժողովուրդներին՝ հայերին, ասորիներին, լազերին, պետք է տրվի ինքնավարություն Թուրքիայի վեհապետության ներքո։ Հայկական հարցի մասին Ռամիշվիլին ասաց. «Առաջին հարցը, որ կկանգնի մեր պատվիրակության առջև և այժմ կանգնած է Անդրկ. սեյմի առջև, Թուրքահայաստանի բարեկարգության հարցն է։ Չպետք է այստեղ երկար խոսենք, թե այդ ժողովուրդը ինքնորոշման ի՞նչ իրավունքներ ունի։ Ես կարծում եմ, որ այդ իրավունքները ամրապնդված են հայ ժողովրդի մղած դաբավոր պայքարով այն ճնշումների դեմ, որոնց այդ ժողովուրդը ենթարկված էր Թուրքական կայսրության սահմաններում, և մենք պետք է հայտարարենք, որ Թուրքահայկական հարցը մի հարց է, որի լուծումով շահագրգռված են ո՛չ միայն Թուրքական կայսրությունը, այլև անպայման ոչ պակաս չափով նաև անդրկովկասյան ժողովուրդները։ Ձեզ հայտնի է, որ հայ ժողովրդի ամեն մի շարժում Թուրքիայում լիովին արձագանք էր ստանում և՛ արտասահմանում, և՛ այստեղ, Անդրկովկասում։ Եվ այդ, քաղաքացի պատգամավորնե՛ր Սեյմի, միանգամայն բնական է։ Արյունակից եղբայրներ՝ այստեղ գտնվողները չէին կարող այս կամ այն ձևով չարտահայտվել Թուրքիայի սահմաններում ապրող իրենց ցեղակիցների վիճակի մասին։ Այդ դեռ քիչ է. այդ հարցի ամեն մի խճողում Թուրքիայում միշտ առաջ է բերել միջցեղային հարաբերությունների բարդացում այստեղ, Անդրկովկասում։ Արժե հիշել այդ տեսակետից մի փաստ. 1895 թվի ապստամբությունը, որը այստեղ այս կամ այն ձևով արձագանք գտավ։ Մեկնելով այս դրությունից, բոլորովին բնական է, որ ի պաշտպանություն Թուրքա-հայկական իրավունքների դուրս է եկել ո՛չ թե բռնապետական Ռուսաստանը, ո՛չ այն երկիրը, որը ինքն էլ ոչ պակաս չափով ճնշում էր հպատակ ժողովուրդներին, այլ ահա դուրս է գալիս ռամկավար մի երկիր և ռամկավար երկրի ներկայացուցիչը՝ Անդրկովկասյան սեյմը։ Թուրքական կայսրության շահերը թելադրում են լուծել մեկ անգամ ընդմիշտ այդ բարդ ու ցավոտ հարցը։ Եվ մենք կարծում ենք, որ Թուրքիայում էլ կան հասուն պետական գործիչներ— մենք կուզեինք, խիստ կուզեինք հավատալ, որ կան— որոնք իրենց հենց միջոցներ ձեռք կառնեն, որ մեկ անգամ ընդմիշտ լուծվի հայ ազգաբնակչության և Թուրքական կայսրության միջև մշտական կրռվախնձոր եղող այդ հարցը։ Եվ մենք կարծում ենք, համաձայն Դաշնակցության հայտարարության, որ եթե այդ հարցը լուծվի, բախումները մեկ անգամ ընդմիշտ կսպառվեն և կվերջանան»։

Եվ Սեյմի ֆրակցիաների ներկայացուցիչների արտահայտվելուց հետո, միաձայնությամբ ընդունվեցին հետևյալ «հիմնական պայմանները».

«1. Ստեղծված պայմաններում Անդրկ. սեյմը իրեն համարում է իրավատեր՝ կնքելու հաշտություն Թուրքիայի հետ։

2. Սկսելով հաշտության բանակցությունները՝ Անդրկ. սեյմը նպատակ է դնում կնքել Թուրքիայի հետ հիմնական հաշտություն։

3. Կնքվելիք հաշտության դաշնագրին իբրև հիմք պետք է դրվի 1914 թվին, պատերազմի հայտարարության վայրկյանին, Ռուսաստանի և Թուրքիայի միջև գոյություն ունեցող պետական սահմանների վերականգնումը։

4. Պատվիրակությունը ջանալու է ձեռք բերել Արևելյան Անատոլիայի ժողովուրդների համար ինքնորոշման իրավունք և, ի մասնավորի, Թուրքահայաստանի համար ինքնավարություն՝ Թուրք պետականության շրջանակներում»։

Հայերի համար առանձնապես ծանր էր վերջին կետը. այնքա՜ն հույսերից հետո նորից մնալ «Թուրք պետականության շրջանակներում»՝ սարսափելի էր։ Բայց այդքան համեստ պահանջն էլ մեծ դժվարությամբ կարելի եղավ մտցնել հաշտության «հիմնական պայմանների» մեջ։ Ուժերի փոխհարաբերությունը շատ էր փոխված...

Սեյմի հինգերորդ նիստում, փետր. 17-ին, միաձայնությամբ հաստատվեց հանձնախմբի մշակած հաշտարար պատվիրակության կազմը, ինչպես նաև պատվիրակության ներքին կանոնագիրը։ Պատվիրակության անդամ նշանակվեցին՝ Աբաշիձե (սոց.-դեմ.), Հայդարով (մահմ. սոց. բլոկ.), Գվազավա (վրացի ազգ.-դեմ.), Գաջինսկի (մուս.), Քաջազնունի (դաշն.), Լասխիշվիլի (վրացի սոց.-ֆեդ.), Մեհթիև (ռուս. մահմ. կուս.), Խաս-Մամեդով (մուս.), Ա. Խատիսյան (դաշն.), Չիկալին (սոց.-հեղ.), Չխենկելի (սոց.-դեմ.), Շեյխ-ուլ-Իսլամով (հումմեթ)։ Պատվիրակության նախագահ՝ Չխենկելի։

Բացի այդ, պատվիրակության մեջ մտան բազմաթիվ խորհրդականներ, մասնագետներ, քարտուղարներ, այլևայլ պաշտոնյաներ։ Հայերից՝ պատմաբան Լեոն, Ռ. Տեր-Մինասյանը և ուրիշները։

Իբրև պատվիրակության ղեկավարող կանոններ, Սեյմի կողմից հաստատվեց հետևյալ բանաձևը.

«1. Պատվիրակությունը հանդես է գալիս, որպես մեկ ամբողջություն իր նախագահի կամ յուրաքանչյուր առանձին դեպքի համար հատուկ լիազորված անձի միջոցով, Սեյմի ընդունած հիմնական պայմանների սահմանում, և ո՜չ մի անջատ քայլ չի թույլատրվում։

2. Պատվիրակությունը մանրամասն կերպով հաղորդում է Սեյմին բանակցությունների ընթացքի մասին՝ նախօրոք առնելով Սեյմի ցուցումները բոլոր կարևոր հարցերի համար»։

Ըստ որոշման, փետր. 17-ին պատվիրակությունը պետք է մեկներ Թիֆլիսից, բայց նույն օրը ստացվեց մի անթել հեռագիր Բրեստ-Լիտովսկի բոլշևիկյան պատվիրակության քարտուղար Կարախանից, որը ասում էր. «Համեմատած փետր. 21* վերջնագրի հետ նոր առաջարկը պարունակում է վերջնագրի ժամանակակետ։ Այդ պատճառով, գերմանացիները մերժեցին մինչև դաշնագրի ստորագրությունը դադարեցնել պատերազմական գործողությունները, մենք վճռեցինք ստորագրել դաշնագիրը, որի քննության մեջ ենք դեռ, և ստորագրելուց հետո՝ մեկնել։ 21 փետր. պայմանների ամենալուրջ կետն է՝ Արդահանի, Կարսի և Բաթումի անջատումը Ռուսաստանից՝ ինքնորոշման ձևի տակ»։

Այս հեռագիրը խորին զարմանք ու վրդովում առաջ բերեց Սեյմի շրջաններում։ Նույն օրն իսկ գումարվեց բոլոր ֆրակցիաների և Կոմիսարիատի անդամների արտակարգ մի ժողով, որը միաձայնությամբ ընդունեց բողոքի հետևյալ հեռագիրը, որ և ուղարկվեց անմիջապես. «Բրեստ-Լիտովսկ՝ հաշտության խորհրդաժողովին, Պետրոգրադ՝ Սովնարկոմին, Լոնդոն, Փարիզ, Վաշինգտոն, Հռոմ, Տոկիո, Կ. Պոլիս, Բեռլին, Վիեննա՝ արտաքին գործոց նախարարներին, Կիև՝ Կենտրոնական ռադային, Օդեսա՝ Սովդեպին. Համաձայն Սեյմի վճռի, անդրկովկասյան կառավարության Անդրկովկասին և նրա սահմաններին վերաբերվող ամեն մի դաշնագիր, որ կնքվում է առանց իր գիտության ու մասնակցության, համարվում է զուրկ միջազգային արժեքից և պարտավորեցուցիչ ուժից իրեն համար։ Այսու հայտնվում է նաև ի գիտություն հանրության, որ Անդրկ. սեյմը արդեն ընտրել է հաշտության պատվիրակություն, որը, ըստ Թուրքիայի հետ կայացված նախնական համաձայնության, պատրաստվում է մեկնել Տրապիզոն վերջնական հաշտություն կնքելու նպատակով»։

Որոշ վարանումից ու սպասումից հետո, պատվիրակությունը մեկնեց Թիֆլիսից և փետր. 23-ին արդեն Տրապիզոնի նավահանգստում էր։ Տեղ հասնելուն պես հաղորդեց Պոլիս, որ սպասում է Թուրքական պատվիրակության, սակայն, մի քանի օր պատասխան չեկավ, և Անդրկ. պատվիրակությունը մնաց նավի վրա, առանց ցամաք իջնել կարողանալու, անորոշ վիճակի մեջ, բոլորովին կտրված աշխարհից։

Միայն փետր. 27-ին, Տրապիզոն հասավ Թուրքական պատվիրակությունը, որ բաղկացած էր 5 անդամից, նախկին ծովային նախարար Ռաուֆ բեյի նախագահությամբ, և նույն օրը անդրկովկասյան պատվի-

* Պետք է նկատել, որ Անդրկովկասում դեռ գործում էր հին տոմարը և Անդրկ. սեյմին ու Կոմիսարիատին վերաբերվող ժամանակագրությունը նշանակված է հին տոմարով. այստեղից է և Կարախանի հեռագրի մեջ հիշված ժամանակի տարբերությունը։ Նոր տոմարն ընդունվեց Սեյմի 13 ապր. օրենքով։

բակությունը նավից իջավ ցամաք։ Մի քանի նախնական բանակցություններից հետո, հաշտության խորհրդաժողովը բացվեց մարտի 1-ին և հենց առաջին նիստում պարզվեց, որ կողմերը եկել էին ներհակ ծրագրերով և խոսում էին տարբեր լեզուներով։ Բանալով նիստը՝ Ռաուֆ բեյը արտասանեց ողջույնի հետևյալ ճառը. «Երախտապարտ եմ երկնքին, որ ինձ առիթ ընծայեց իմ երկրի և իմ պաշտոնակիցների անունից դիմելու բարեմաղթական խոսքերով անդրկովկասյան ժողովուրդների հարգելի ներկայացուցիչների գալստյան առթիվ, Անդրկովկասի՛, որը, ցարիզմի անկումից հետո, հետզհետե շարժվում է անկախության ճանապարհով. պատիվ ունեմ դիտել այս թանկագին դեպքը, իբրև իմ կյանքի ամենահաճելի ուրախություններից մեկը։ Ողջունելով այսօր հանձին ձեզ, ձեր երկիրը, բնավ ո՛չ միայն ծիսակատարության և դիվանագիտության ավանդություններին հետևելու անհրաժեշտությունից դրդված, ես ավելի շուտ ոգևորված եմ հարգանքի զգացմունքներով և աջակցելու յաղձանքով ա՛յն սրբազան գործին, որի ներկայացուցիչն եք հանդիսանում դուք։ Քանի որ 200 տարուց ի վեր ցարիզմի դեմ մղած բոլոր մեր պատերազմները մեր երկրների համար ինքնապաշտպանողական պատերազմներ էին, ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագրերը ավելի ու ավելի էին կապվում միմյանց այդ ընդհանուր փառավոր պատմության ընթացքում։ Ձեր ապրած վերջին շրջանը, որը, դժբախտաբար, արգելք եղավ մեզ շոշափելի կերպով կատարել մեր պատմական պարտքը օգնելու ձեզ, մի շարք ծանր փորձություններով ապացուցեց մեր ճակատագրերի այդ միության ամբողջ կարևորությունը։ Համենայն դեպս, ես համոզված եմ, որ մենք ամենքս այստեղ մեզ բաժանող արգելքի խորտակումը համարում ենք մեզ համար ավելի կարևոր երևույթ, քան ամենամեծ դիվանագիտական հաջողությունները, որովհետև մեզ շաղկապող կապերը հանդիսանում են ո՛չ միայն սոսկ պատմական ու աշխարհագրական հարաբերություններ, այլ, ավելի շուտ, մեր ընդհանուր անցյալից բխող ազգակցական կապեր։ Եվ հենց այդ պատճառով կովկասյան և թուրքական ժողովուրդները այժմ կազմված են միևնույն կրոններից ու միևնույն ազգերից և ունեն գրեթե միևնույն պատմությունը։ Ոգևորված այս զգացմունքներով՝ ես մաղթում եմ բախտավոր վախճան մեր խորհրդակցությունների համար և հայտարարում առաջին ընդհանուր ժողովը բացված»։

Այս, արևելյան շողոքորթությամբ համեմված, ճոռոմ ու մանվածապատ, բայց հստակ մտքեր պարունակող ճառին Անդրկ. պատվիրակության նախագահը պատասխանեց ընդհանուր, խուսափողական խոսքերով։ Այնուհետև Ռաուֆ բեյը դիմեց ավելի կտրուկ միջոցի։ Նա դրեց Անդր. պավիրակության առջև հետևյալ հարցումը. «Օսմանյան պատվիրակությունը խնդրում է Անդրկովկասյան պատվիրակությանը անել

ստույգ հայտարարություններ հիշյալ հանրապետության էության, ձևի, քաղաքական ու վարչական կազմակերպության մասին և հարցնում է, թե արդյոք վերջինս կատարե՞լ է այն պայմանները, որոնք պահանջվում են միջազգային իրավունքով պետություն կազմելու համար»։

Այս հարցումին Անդրկովկասյան պատվիրակությունը պատասխանեց, հաջորդ, մարտի 2-ի նիստին, թե՝ «Անդրկովկասի էության, կառավարության ձևի, քաղաքական և վարչական կազմակերպության հարցը հերթի է դրված այդ հարցերը լուծելու միակ իրավազոր մարմնի՝ Անդրկ. սեյմի մեջ, որը ստեղծված է ժողովուրդների ազատ կամարտահայտությամբ և ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքով։ Բոլշևիկյան հեղաշրջումից սկսած Անդրկովկասի հողի վրա դադարեց կենտրոնական ռուսական իշխանության գործունեությունը, և մի նոր, ինքնուրույն կառավարություն ծագեց, որը այժմ պատասխանատու է Սեյմի առջև։ Անդրկովկասի այս կառավարությունը մտել է միջազգային հարաբերությունների շրջանը՝ ընդունելով օսմանյան կառավարության առաջարկը՝ սկսելու իր հետ ինքնուրույն բանակցություններ հաշտություն կնքելու նպատակով։ Հետագայում, Սեյմն ու Անդրկ. կառավարությունը այս ուղղությամբ արին մի նոր քայլ ևս՝ ուղարկելով պատերազմող պետությունների արտաքին գործոց նախարարներին հեռագրական բողոք Բրեստ-Լիտովսկի դաշնագրի Անդրկովկասին վերաբերող մասի դեմ և հայտարարելով, որ առանց իրենց գիտության և հավանության կնքված դաշնագիրը միջազգային իրավունքի տեսակետից զուրկ է որևէ արժեքից և պարտադիր չէ իրենց համար։ Սակայն, այս խաղաղության խորհրդաժողովը Տրապիզոնում նույնպես հանդիսանում է միջազգային-իրավական կյանքի մի ակտ։ Այսպիսով, Անդրկովկասը de facto իրապես արդեն պետություն է, թեև դեռ չի հայտարարել ու չի տեղեկագրել պետություններին իր անկախությունը»։

Այս պատասխանի մեջ էլ որոշություն չկար. Թուրքերը ձգտում էին ստանալ հստակ պատասխան, թե Անդրկովկասը անկախ պետություն է. անդրկովկասցիք այդ պատասխանը չէին տալիս։ Այդ պատճառով Ռաուֆ բեյը սկսեց Անդր. պատվիրակությանը դնել մի շարք հարցումներ վերջինիս պատասխանի զանազան կետերի մասին և երբ մյուս օրվա, մարտի 3-ի նիստում ստացավ պատասխանները, արավ հետևյալ հայտարարությունը. «Օսմանյան կայսերական պատվիրակությունը Անդրկովկասյան պատվիրակության նախագահի արած հայտարարություններին ծանոթանալուց հետո, հաստատում է, որ այդ պատվիրակությունը բաղկացած է Սեյմի պատվիրակներից, որ հիշյալ պետության կազմակերպությունը չի համապատասխանում միջազգային հանրային իրավունքին և որ այդ պետությունը դեռ հայտարարություն չի արել իր անկախության մասին։ Օսմանյան կայսերական կառավարությունը անկեղծորեն բաղձալով Անդրկովկասի ժողովուրդների ազատ զարգացումը և կամենալով բարի

հարևանական հարաբերությունների մեջ մտնել այդ ժողովուրդների հետ՝ խնդրում է անդրկովկասյան կառավարությանը որոշել ու պաշտոնապես հայտարարել ձևը այն կառավարության, որի կազմության մասին խոսում է ինքը, հողի սահմանները, պետական լեզուները և կրոնը, այլև ճշտորոշել հիշյալ կառավարության վիճակն ու դիրքը Օսմանյան կայսրության նկատմամբ»։

Մարտի 7-ին, 4-րդ նիստում, Չխենկելին նորից հայտարարեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտավորեցուցիչ և ընդունելի չէ Անդրկովկասի համար՝ կրկնելով արդեն մի անգամ արած հայտարարությունը Անդրկովկասյան սեյմի և կառավարության մասին՝ ավելացնելով նաև, որ «ամենայն հավանականությամբ Անդրկովկասը կլինի ռամկավար, դաշնակցային հանրապետություն»։ Անդրկովկասի հողը բաղկացած է Բաքվի, Գանձակի, Երևանի, Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի ու Կարսի նահանգներից և Սուխումի ու Զաքաթալայի շրջաններից։ Դաղստանի և Սևծովյան շրջանի միացումը Անդրկովկասին կախված է իրենցից։ Պետական լեզուն առայժմ ռուսերենն է, բայց պիտի դառնան վրացերենը, հայերենն ու թուրքերենը. կրոնական տեսակետից՝ Անդրկովկասում տիրում է խղճի ազատություն։ Միջազգային տեսակետից Անդրկովկասը բանակցությունների մեջ է Թուրքիայի հետ և պատրաստվում է կնքել տևական հաշտություն։

Այս հայտարարության ի պատասխան Ռաուֆ բեյը նորից կրկնեց, որ օսմանյան պատվիրակությունը պնդում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի վրա։ Լենինի կառավարությունը՝ տապալելով նախկին կառավարությունը՝ կատարված փաստի զորությամբ իսկ բռնել է նրա տեղը։ Սահմ. ժողովը ավելի կամ պակաս հետաքրքրական միջադեպ է լոկ, որ մի ավելորդ անգամ ապացուցանում է Լենինի կառավարության ուժը։ Այն հանգամանքը, որ Անդրկովկասը չի ճանաչում այդ կառավարությունը, ունի ներքին պետական նշանակություն և չի կարող անդրադառնալ արտաքին հարաբերությունների վրա, քանի երկրի որևէ մի մաս չի անջատվել և միջազգային իրավունքի սկզբունքներով չի հայտարարել իր անկախությունը և չի ստացել ուրիշ պետությունների ճանաչումը։ Ներկա բանակցությունները միայն մեկ նպատակ ունեն. պատրաստել և ընդունել տնտեսական, առևտրական և ուրիշ տեխնիկական մանրամասնություններին վերաբերվող և Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող պայմաններ՝ մի դաշնագիր, որը պարտադիր է և Անդրկովկասի համար։ Միաժամանակ Ռաուֆ բեյը ավելացրեց, որ բանակցությունները սկսելուց առաջ Անդրկովկասը պետք է հայտարարե իր անկախությունն ու կառավարության ձևը։

Հինգերորդ նիստում, մարտի 8-ին, Չխենկելին նորից ու նորից պընդեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը պարտավորեցուցիչ չէ Անդրկովկասի համար և հաղորդեց Սեյմի փետր. 22 նիստի որոշումը, թե «սկզբունքով հնարավոր է» Անդրկովկասի անկախության հայտարարությունը, որից հետո Ռաուֆ բեյը վճռական կերպով հայտարարեց, որ կովկասյան հանրապետության անկախության ճանաչումը հնարավոր կլինի միայն մի առանձին կետով Անդրկովկասի և Թուրքիո միջև կնքվելիք դաշնագրի մեջ, իսկ նման դաշնագիր կնքելու համար բանակցությունները կարող են սկսվել ա՛յն ժամանակ միայն, երբ Անդրկ. պատվիրակությունը հրաժարվի Բաթումի, Կարսի, և Արդահանի սանջակների վրա ունեցած հավակնություններից։ Իսկ ինչ վերաբերվում է Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման և Թուրքահայաստանի ինքնավարության հարցին, այդ թուրքական ներքին խնդիր է և չի կարող քննության առնվել. օսմանյան պատվիրակությունը թույլ չի տա միջամտելու իր ներքին գործերին։

Սրա վրա երկու պատվիրակությունները որոշեցին դիմել իրենց կառավարություններին նոր հրահանգներ ստանալու համար, և բանակցությունները միաժամանակ կանգ առին։

Ստեղծված փակուղուց դուրս գալու նպատակով Անդրկովկասյան պատվիրակությունը իր անդամներից մի քանիսին, որոնց մեջ և Քաջազնունուն, ուղարկեց Թիֆլիս՝ բերանացի զեկուցում տալու և նոր հրահանգներ բերելու համար։ Միևնույն ժամանակ պատվիրակությունը հարց հարուցեց, որ նախագահին տրվեն արտակարգ լիազորություններ՝ ազատ և ինքնուրույն քայլեր անելու համար։ Այս պահանջը հիմնավորվում էր նրանով, որ պատվիրակությունը շատ բազմանդամ է, դանդաղաշարժ և դժվարացնում է գործը։ Իրոք, պատճառը ուրիշ էր. այդ միջոցով ուզում էին առաջը առնել այն դրության, որ թուրքերը միշտ իրազեկ էին Անդրկ. պատվիրակության մեջ անցած-դարձածներին, և այդ բացատրվում էր նրանով, որ ազրբեջանցի պատվիրակները գաղտնի կերպով տեղեկություններ էին տանում նրանց։ Հետագայում հայտնի դարձավ, որ այդ «արտակարգ լիազորությունները» հարկավոր են եղել և վրացիների համար։

Սեյմը իր մարտի 13 նիստում քննության առավ Տրապիզոնից բերված տեղեկությունները և Չխենկելիին «արտակարգ լիազորություններ» տալու առաջարկը և ընդունեց հետևյալ բանաձևը. «Լսելով զեկուցումը Թուրքիայի հետ վարվող հաշտության բանակցությունների ընթացքի մասին և կանգնած մնալով իր 1918 թ. փետր. 16 որոշման վրա ի մասին հաշտության պայմանների Թուրքիայի հետ, բայց կամենալով հասնել պատվավոր հաշտության՝ ընդունելի Անդրկովկասի և Թուրքիայի համար, Սեյմը վճռում է. տալ հաշտարար պատվիրակության նախագահ և Անդրկովկասի արտաքին գործոց նախարար Ա. Ի. Չխենկելիին արտակարգ լիազորություններ՝ ինքնուրույն կերպով այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլեր անելու համար»։

Այս լիազորությունը անմիջապես ուղարկվեց Տրապիզոն։

ԳԼՈՒԽ Թ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Թողնենք միաժամանակ Տրապիզոնի բանակցությունները և նայենք, թե այդ օրերին ի՞նչ էր կատարվում ռազմաճակատում։

Տեսանք արդեն, որ թուրքերի դրդումով, դեկտեմբեր ու հունվար ամիսներին, Անդրկովկասի ամբողջ տարածության վրա և գրավված վայրերում տեղի էին ունենում մահմեդական շարժումներ, իսկ հունվարի կեսերին Վեհիբ փաշան բողոքեց «հայկական գազանությունների» դեմ՝ հաղորդելով, թե ինքը հրամայել է իր բանակին շարժվել մինչև ռուս զորքի հետ շփման մեջ մտնելը։

Փետր. 25-ի երեկոյան, Անդրկովկասյան կոմիսարիատը Վեհիբ փաշայից ստացավ մի նոր հեռագիր, որ ասում էր. «Թիֆլիս, գլխավոր հրամանատարին, պատճեն Անդրկ. կառավարության նախագահին։ Հաղորդում եմ բառացի հենց հիմա ստացված երկու ֆրանսերեն հեռագրերը։ Առաջինը՝ կովկասյան ռուս բանակի գլխավոր հրամանատար զոր. Լեբեդինսկիին։ Ձերդ գերազանցություն, Ռուսաստանի փառապանծ հանրապետությունը՝ համաձայնելով պարպել Բաթումի, Կարսի և Արդահանի շրջանները՝ հենց նոր այդ մասին ստորագրեց հաշտության դաշնագիր։ Ի հետևանս այդ բանի պատիվ ունեմ հաղորդել ձերդ գերազանցության, որ ես այս պահուս ստացա իմ սպարապետից մի հրաման, որի հիման վրա խնդրում եմ ձեզ ամենակարճ ժամանակում դադարեցնել հիշյալ շրջանները։ Սպասելով ձերդ գերազանցության պատասխանին՝ խնդրում եմ ընդունել ամենախորին հարգանաց հավաստիքը։ Վեհիբ Մեհմեդ»։

Երկրորդ հեռագիր. «Կովկասյան ռուս բանակի հրամանատարին։ Ձերդ գերազանցություն, հիմնվելով ձեր ներկայության վրա էրզրումում՝ ես ենթադրում էի, որ հայերը հանդգնություն չեն ունենա գործելու դաժանություններ այդ քաղաքում և շրջակա գյուղերում և սկզբում հրամայեցի կանգնեցնել մեր զորքերի առաջխաղացումը հիշյալ գծերի վրա։ Այսօր ստացված տեղեկությունների հիման վրա, ձերդ գերազանցության հեռանալուց հետո էրզրումում և քաղաքի շրջակայքում տեղի են ունեցել անհաշիվ գազանություններ հայերի կողմից, այդ պատճառով ես ինձ պարտավորված եմ զգում հաղորդելու ձերդ ազնվության, որ մենք հարկադրանքի տակ ենք, քան կարելվույն շուտ, ազատելու սպառնալիքի ներքո գտնվող շրջանները։ Այդ առթիվ խնդրում եմ, ձերդ գերազանցություն, այս կամ այն ձևով հայտարարել այդ բռնավորներին, որ նրանց դիմադրությունը կարող է ունենալ իբրև հետևանք խիստ ճնշումներ և անսպասելի արդյունք։ Օգտվում եմ առիթից, ձերդ գերազանցություն, տեղեկացնելու ձեզ, որ մեր զորքերի վերադարձը Տրապիզոն ձեր զորքերի կողմից ընդունվեց անկեղծ ու սրտագին։ Ես երջանիկ էի վկա լինելու այդ հաղվագյուտ պատմական տեսարանին։ Տրապիզոնի պայթյունը, որ, անկասկած, տեղի է ունեցել շնորհիվ պատահականության, մեծ ցավ պատճառեց ինձ, և ես շտապում եմ ներկայացնել ռուս բանակին իմ ցավակցությունները ու խնդրել ձերդ գերազանցության ընդունել իմ բարձր հարգանաց հավաստիքը։ Վեհիբ Մեհմեդ»։

Այսպես, ուրեմն, անդրկովկասյան կառավարությունը Վեհիբ փաշայից էր իմանում, որ Տրապիզոնը գրավված է թուրքերի կողմից և որ, բացի այդ, թուրք հրամանատարությունը նոր պատրվակներ է որոնում, որովհետև «հայերի գազանությունները» նորություն չէին նրա համար։

Նոր տեղեկությունները հաստատում էին, որ թուրքերը շարունակում են արագորեն ուժեղացնել ռազմաճակատը։ Անդրկ. բանակի ընդհանուր հրամանատար զոր. Օդիշելիձեն Սեյմի փետրվ. 26-ի նիստում հաղորդեց, որ «վերջին երկու-երեք օրվա ընթացքում Տրապիզոնի շրջանում թուրքերի վերաբերումը դեպի մեզ փոխված է։ Մեր զորքերը թողել էին ռազմամթերքի ու պարենի ահագին պաշար։ Թուրքերի առաջարկով կազմվել էր մի հանձնաժողով, որը պետք է պահակներ դներ, և հետզհետե ամբողջ պաշարը պիտի փոխադրվեր։ Ստացված տեղեկություններից այժմ դուրս է գալիս, որ թուրքերը ներս չեն թողնում մեր ընդունողներին և ամեն կերպ արգելք են հանում մեր ստացվածքը դուրս տանելուն։ Դրանից զատ, մեզ հաղորդում են, որ բացի Տրապիզոնը գրավող 37 դիվիզիայի մասերից Եվրոպական Ռուսաստանից հասնում են 42-րդ դիվիզիայի մասերը։ Տեղեկություններ կան, որ այնտեղ երևացող գնդերը բոլշևիկյան կազմ չունեն. լավ և առույգ տրամադրության տեր մարդիկ են։ Երևացել են ռազմամթերք կրող բազմաթիվ առագաստանավեր»։

Միաժամանակ սաստկանում էին մահմեդական շարժումները Կարսի և Արդահանի շրջաններում. Մերդենեքն ու Արդահանը պաշարվել էին զինված ամբոխի կողմից. Կարս, Արդահան, Օլթի հաղորդակցությունը կտրվել էր, ավազակախմբեր էին երևացել Կարս—Ալեքսանդրապոլ ճանապարհի վրա, Ջբլդերում, Գյոլում և ուրիշ կողմեր։ Կարսից, Արդահանից ստացված էին պաշտոնական հեռագրեր, որոնք ամենամռայլ գույներով էին ներկայացնում կացությունը։ «Դրությունը չափից ավելի տաղնապալից է,—հեռագրում էին Արդահանի քաղաքային և գավառական գործադիր կոմիտեի նախագահ Սալարիձեն և կոմիսար Շագալովը։—

կազմակերպված ու համաչափ գործող հաղարավոր հրոսակների կողմից իրար հետևից կողոպտվում ու զինաթափվում է քրիստոնյա բնակչությունը։ Երեկ նույնիսկ թալանվեց ու հրացանի բռնվեց Մերդենեքը, ուր հավաքվել է շրջանից 6 գյուղերի ողջ քրիստոնյա բնակչությունը։ Արդահանի շուրջ հավաքվում է քրիստոնյա ազգաբնակչությունը, որ երկու անգամ որոշել է արտագաղթել, բայց չի կարողանում իրականացնել, որովհետև պահակ չունի և վստահ չէ, թե կկարողանա ճեղքել-անցնել։ Քրիստոնյա ազգաբնակչության մեջ տիրում է կատարյալ խուճապ»։

Նույն շրջանի հունական Ազգ. խորհրդի նախագահ Կորխանէլն հեռագրում էր, որ «Արդահանի բոլոր քրիստոնյա գյուղերը ավերված ու թալանված են քրդերի և թուրքերի ձեռքով, տավարը քշված-տարված է, բնակչությունը խպառ մերկացված, արտագաղթին արգելք են լինում քուրդ հրոսակախմբերը... Շրջանի հույն բնակչությունը դատապարտված է մահվան՝ սովից ու ցրտից»։

Ի վերջո, Արդահանը գրավվեց զինված թուրք խուժանի կողմից, քրիստոնյա և, մասնավորապես, հայ տարրը մասամբ ջարդվեց, մասամբ կարողացավ փրկվել փախուստի միջոցով։

Արդահանի շրջանի այդ դեպքերը բուռն վեճերի առիթ տվին Սեյմի մարտի 5 նիստում։ Հայերը և վրացիների մի մասի մեղադրում էին մահմեդականներին, որ զենք են ծառայում «մութ ուժի» ձեռքին, որը ձգտում է կործանել Կովկասը։ Մահմեդական պատգամավորները ջղայնացած պաշտպանվում էին և, իրենց հերթին, հարձակվում Դաշնակցության վրա, որը, իբր թե, պատճառ է դառնում մահմեդական շրջանների ավերումին։

Նույն օրերին Սեյմում քննության նյութ եղան և Գանձակի ընդհարումները, որոնք միևնույն աստառն ունեին՝ թուրքական պրովոկացիան։

Փետրվարին թուրքերը հարձակվեցին կայարանից հայկական մասը անցնող մի խումբ պատերազմի դաշտից վերադարձող հայ զինվորների վրա և նրանցից 12-ին սպանեցին։ Զինվորները դիմեցին ինքնապաշտպանության և նույնպես սպանեցին մի քանի թուրքեր։ Իսկույն, Գանձակում հայ և թուրք թաղերը դիրքեր բռնեցին միմյանց դեմ, և քաղաքը ստացավ պատերազմական բանակի կերպարանք։ Անդրկ. սեյմը ուղարկեց պատվիրակություն՝ խնդիրը տեղն ու տեղը կարգադրելու համար։ Պատվիրակության մեջ մտան Գեր. Մախարաձեն, Ավ. Սահակյանը, Շահթախտինսկին և Խորեն Համասփյուռը, իբրև գանձակցի գործիչ։ Մարտի 2-ին մի խառն պատվիրակություն էլ ուղարկեցին Բաքվի Հայոց և Մահմ. ազգ. խորհուրդները՝ բաղկացած Բեհբութ Ջիվանշիրից ու բժ. Ռաֆիևից և Հայկ Տեր-Միքայելյանից, Գ. Եվանգուլյանից, Գեր. Շահնազարյանից, Հակ. Մանանդյանից ու Մարտին Շաթիրյանից։

Պատվիրակության առջև բացվեց այսպիսի պատկեր. հունվարի կեսից սկսած, ինչպես որ երկաթուղիներով երթևեկությունը հայերի համար կտրված էր, բոլորովին կտրվել էր և Գանձակի հայերի և թուրքերի փոխհարաբերությունը, որովհետև կայարանում, շուկայում և, առհասարակ, թուրքական թաղում (որ քաղաքի մեծ մասն է) բոլոր պատահած հայերին անխտիր թուրքերը սպանում էին։ Դրանից հետո թե թուրքական և թե հայկական մասերը դարձել էին երկու թշնամի բանակներ, որոնք պաշտպանվում էին խրամատներով սահմանի ամբողջ երկարությամբ, մշտական պահակներով և պատերազմական օրենքներով։ Կայարանը և երկաթուղին թուրքերի մասումն էին, ուստի վերջիններս աղաս կապված էին արտաքին աշխարհի հետ և օգտվում էին ամեն հարմարությունից՝ ստանալով զինամթերք և ուտեստ։ Իսկ հայերը, պաշարված բերդի նման, սպառում էին իրենց վերջին մթերքը. նրանք չափազանց դժվար և պատահական կապ կարող էին պահպանել լեռների հայկական գյուղերի միջով Դիլիջանի և Շուշիի հետ»*։

Բացի ընդհանուր պատճառից, Գանձակում կար ընդհարումների և մի հատուկ առիթ. Թիֆլիսի կենտրոնական զինվորական իշխանության որոշումով թուրքերը պետք է ստանային ռուսական 269-րդ գնդի ամբողջ գույքը, որի մի մասը— ռումբ ու փամփուշտ— գտնվում էր թուրքական թաղում և թուրքերն արդեն սառել էին, իսկ մյուս մասը՝ մի քանի հազար հրացան, բազմաթիվ հագուստ, վրաններ, պայտ ու մեխ և այլն, հայկական թաղում էր, և հայերը չէին ուզում հանձնել։ Այս հողի վրա բուռն վեճ ու կռիվ էր առաջացել երկու կողմերի միջև։

Պատվիրակություններին մեծ դժվարությամբ հաջողվեց հաշտեցնել կռվող կողմերը։

Մահմեդական շարժումների տեսակետից, ինչպես կտեսնենք հետո, դրությունը անհամեմատ ավելի վատ էր Երևանի նահանգում, ուր արյունահեղ ճակատամարտեր էին տեղի ունենում թուրք զինված խուժանի և հայկական կանոնավոր զորքերի միջև։

Վեհիբ փաշան ու կովկասյան մահմեդականները շատ լավ դիտեին, թե ինչ են անում։ Նրանք ձգտում էին խառնափնթորել Կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը և այդպիսով հեշտացնել թուրք զորքերի առաջխաղացումը, որը սկսվեց հունվարի վերջերին։

Մոտ երկու ամսվա զինադադարից հետո, նորից հայկական նահանգները դառնում էին թատերաբեմ պատերազմի, այս անգամ փաստորեն Թուրքիայի և հայերի միջև. ռազմաճակատում այլևս ռուսական մասեր գրեթե չէին մնացել, և նրանց թողած դիրքերը գրավել էր Հայկական կորպուսը։

1918 թ. տարեգլխին կովկասյան ճակատը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

---

* Մ. Շաթիրյան, *Դրվագներ մոտիկ անցյալից*, «Հայրենիք» ամս., 1928 թ., № 7։

Վանում կանգնած էր հայկական 5-րդ հրացանաձիգ գունդը և Վանի երկու գնդերը՝ կազմված տեղական բնակչությունից։

Խնուսում՝ հայկական 2-րդ հրացանաձիգ գունդը, Խնուսի և Ղարաքիլիսայի գնդերը՝ նույնպես տեղացիներից։

Էրզրումում՝ Էրզրումի հետևակ գունդը, հայկական առաջին հրացանաձիգ գունդը և 4-րդ հրացանաձիգ գնդի մեկ գումարտակը, ինչպես նաև բերդային մասեր։

Երզնկայում՝ Երզնկայի հետևակ գունդը՝ 3 գումարտակներով և կամավորական խմբեր՝ Մուրադի ղեկավարությամբ։

Քյալֆիթում՝ Սեպուհի կամավորները։

Տրապիզոնի շրջանում դեռ մնացել էին ռուսական վտիտ զորամասեր, որոնք աստիճանաբար հեռանում էին Ռուսաստան։ Գլխավոր հրամանատարության կարգադրությամբ Գյումյուշխանե—Տրապիզոն գիծը պետք է գրավեին վրացական զորամասերը, բայց չգրավեցին։

Բացի այս մասերից, զանազան վայրերում ցրված էին նաև փոքրիկ կամավորական խմբեր, որոնք օժանդակ դեր էին կատարում և օգնում էին ժողովրդի և թիկունքային հիմնարկությունների ու հաղորդակցության գծերի պաշտպանությանը։

Հայկական կորպուսի մի մասը դասավորված էր թիկունքի զանազան քաղաքներում. Երևանում՝ հայկական 3-րդ և 6-րդ հրացանաձիգ գնդերը և 4-րդ գնդի մեկ գումարտակը. Կարսում՝ բերդային մասերը, որոնք կազմակերպման վիճակում էին դեռ. Ալեքսանդրապոլում՝ հայկական 7-րդ և 8-րդ հրացանաձիգ գնդերը և բերդային կազմակերպվող մասերը։ Այլև, զանազան կետերում, կազմակերպվում էին այրուձիի, հրետանիի և տեխնիկական որոշ մասեր։ Կարսի բերդապետ նշանակված էր զոր. Դեևը, որը համարվում էր Կարսի բերդային ամրությունների ամենից լավ ծանոթ զինվորականներից մեկը։ Նրա կողքին կոմիսար էր Մ. Արզումանյանը*։

Ճակատի ընդհանուր հրամանատարությունը մնում էր նախկինը. ընդհանուր հրամանատար էր զոր. Օդիշելիձեն, որ նստում էր Էրզրումում։ Կովկասյան բանակի հրամանատարն էր՝ զոր. Պրժևալսկին։ Բանակի կազմակերպության ու հրամանատարության ձևը պահվել էր անփոփոխ, բայց, ըստ էության, ռուսական բանակ այլևս գոյություն չուներ. կար, համեմատաբար կազմակերպված հայկական կորպուսը, կիսակազմակերպ վրացական կորպուսը և անվանական, տակավին սաղմնային վիճակի մեջ՝ մահմեդական զորամասը։

* 1918 թվի կովկասյան ճակատի կազմի, դասավորության և պատերազմական գործողությունների մասին ամփոփ տեղեկություններ կարելի է գտնել զոր. Գ. Ղորղանյանի արդեն հիշված գրքում և Ֆրանսիացի գնդ. Լարշեի վերոհիշված մեծահատոր ուսումնասիրության մեջ։

Բե այս ուժերին ի՞նչ էին հակադրում Թուրքերը, դժվար է ասել։ Ըստ գնդ. Լարշեի, 1918 թ. սկզբին Վեհիբ փաշայի հրամանատարության տակ կային (3-րդ բանակը) հաղիվ 10 000 կովողներ, որոնց թիվը մարտին հասավ 25 000-ի։ Նույն Լարշեի հաշվով, զոր. Նազարբեգյանը Վեհիբ փաշայի բանակի դեմ ուներ ոչ ավելի, քան 17 000 զինվոր՝ Կարս—Սարիղամիշ ճակատի վրա։ Բացի թվականից, Թուրքերն ունեին և մի շարք ուրիշ խոշոր առավելություններ. նախ նրանք շատ լավ ծանոթ էին մեր ճակատի ու թիկունքի վիճակին. մերձավոր և հեռավոր թիկունքում ունեին մահմեդականների համակրանքն ու աջակցությունը։ Թուրք բանակի կորովը բարձր էր, մինչդեռ մեր զորամասերի մեջ դեռ թարմ էին ռուս բանակի քայքայման հիմքերը։ Վերջապես, Թուրք զորքը ուներ հմուտ հրամանատարություն ու մեկ կամք, մինչդեռ Կովկասում տիրում էր բազմիշխանություն կամ անիշխանություն և չկար միացնող ու ղեկավարող ուժեղ ձեռք։ (Ռազմանակատի քարտեզը տե՛ս էջ 98։)

Այս դրության մեջ, խախտելով զինադադարի պայմանները, հունվարի վերջերին Թուրքերը անցան հարձակման Երզնկայի ճակատում, որը ուներ ավելի քան 70 կիլոմետր երկարություն, էրզրումից կտրված էր մոտ 150 կիլոմետր տարածությամբ և բռնված էր հայկական ցանցառ զորամասերով, որոնք ստիպված էին պաշտպանել նաև ճանապարհները քուրդ հրոսակախմբերի հարձակումներից։ Մեր զորքերը ցույց տվին կատաղի դիմադրություն։ Միաժամանակ բարձր հրամանատարությունը բողոքեց զինադադարի խախտման դեմ, բայց Վեհիբ փաշան պատասխանեց, թե ինքը ստիպված է առաջ շարժվել միայն մահմեդականների կյանքը հայերից պաշտպանելու նպատակով։ «Ես կարող եմ ձեզ վստահեցնել,— ավելացնում էր նա,— որ Երզնկայի զինադադարի համաձայնությունը ամբողջապես մնում է իր ուժի մեջ. իր արժեքը կորցրել է միայն երկու կողմերը բաժանող գիծը, իբրև հետևանք ռուս զորքերի հեռացման»։

Թուրքերի կողմից գործում էին 36-րդ դիվիզիայի մասերը՝ 2 հետևակ գունդ, 2 հարյուրյակ հեծելազոր, և 2 լեռնային թնդանոթ՝ ունենալով օգնական քրդական հրոսախմբեր։ Այս ուժերի դեմ հայերը ունեին հաղիվ 1000 սվին, 120 ձիավոր և 6 թնդանոթ. մյուս ուժերը ստիպված էին զբաղվել թիկունքի և ճանապարհների պաշտպանությամբ։ Մի քանի օրվա համառ կռիվներից հետո, հունվ. 31-ի երեկոյան, հայկական զորքերը հայ ազգաբնակչության հետ պարպեցին Երզնկան և, անհնարին դժվարություններով նահանջեցին էրզրումի ուղղությամբ։ Թուրքերը կրնկակոխ հետևում էին նրանց. քրդերը հարձակվում էին աջից ու ձախից, և դժվարացնում հայերի նահանջը, որը, ավելի շուտ, անընդհատ ճակատամարտերի մի շարք էր։ Եվ միայն գնդ. Հասան-Փաշայանի ու Մուրադի քաջության շնորհիվ թշնամին հաջողություն չունեցավ։ Ճանապարհին միացան և Մամախաթունի և մյուս շրջանների հայկական

կովող ուժերն ու գաղթականները։ Եվ այս բազմահազար զանգվածը, սարսափելի ցրտի ու սառնամանիքի մեջ, ահագին զոհեր տալով, շարժվեց դեպի հետ։ Զորքի մոտ 40 %-ը և գաղթականների կեսը վնասվեց ցրտից. որի ձեռքն էր սառել, որի ոտքը կամ մարմնի ուրիշ անդամը։ Սպանվածների ու վիրավորների թիվը հաշվվում էր հարյուրներով։ Հասկանալի է, որ գաղազած բազմությունը, իր հերթին, ինչով կարող էր վնասում էր ճանապարհին պատահած մահմեդականներին։ Եվ Երզնկայից մինչև Էրզրում ո՛չ մի մահմեդական գյուղ կանգուն չմնաց. այրվեցին ու քար ու քանդ եղան, բնակչությունը փախավ կամ կոտորվեց։

Նույն ձևով նահանջը տեղի ունեցավ, փետր. 3-ին, և Բաբերդի շրջանից, Սեպուհի անմիջական ղեկավարության տակ։

Հայերի արած փոխվրեժի քայլերը ավելի ևս գրգռեցին Թուրքերին, և պատերազմը փաստորեն ստացավ հայ-թուրքական կոտորածի կերպարանք։ Գերիներ չէին առնվում. երկու կողմն էլ իրենց ձեռքն ընկած հակառակորդին ոչնչացնում էր։ Խնայել չկար։ Պատերազմական օրենքները չէին հարգվում։ Մարդը մարդուն իսկական մտքով դարձել էր գազան։

Փետր. 11-ին Երզնկայի զորքն ու ժողովուրդը հասավ Էրզրում։ Թուրքերը ավելի և ավելի զարգացնում էին իրենց գործողությունները և տարածվում ուրիշ ճակատների վրա։

Նույն փետր. 11-ին Թուրքերը մտան Տրապիզոն և գրավեցին ռուսների թողած անհաշիվ ապրանքները, ռազմամթերքը, պարենը, նավահանգստի գույքերը, երկաթուղային նյութերը՝ տասնյակ միլիոնների արժողությամբ հարստություններ։

Փետր. 18-ին Հայկ. կորպուսի սպայակույտի պետ զոր. Վիշինսկին հեռագրում էր գլխավոր հրամանատարությանը. «Կորչմայի զորամասը հասավ Իլիջա. ժամը 16-ի մոտերը, Կորչմայի կողմից, երևացին ձիավոր քրդեր, որոնք, մեր առաջապահների հետ հրացանագություն ունենալուց հետո, շուտով քաշվեցին։ Խնուսի ուղղությամբ, Սուլուխի կամուրջի մոտ, Թուրք ներկայացուցիչը կանչեց մեր սպային և հարցրեց, թե ինչո՞ւ չենք հեռանում Թիկունք։ Թուրք ներկայացուցչի ասելով՝ Թուրքերն արդեն բոլշևիկների հետ կնքել են հաշտություն, որով մենք պետք է քաշվենք մինչև Սարիղամիշ՝ հանձնելով Թուրքերին ամբողջ պաշարն ու զենքը»։

***

Երզնկայի անկումը, լախտի հարվածի պես, ցնցեց ամենքին։ Վերահաս վտանգը բացահայտ էր։ Այնքա՜ն ճիգով և արյուն-քրտինքով բնակեցված Թուրքահայաստանը նորից դատարկվում էր։ Երզնկայից մինչև Վան տեղահան եղած ժողովուրդը՝ գաղթում էր. փախստականների շարանը սկսել էր հասնել Երևան ու Թիֆլիս։ Նորից՝ ավեր ու թշվառություն ամեն կողմ։ Թուրքահայաստանը մահացու վտանգի առջև։ Ավելին. թշնամին մոտենում էր Ռուսահայաստանի դռներին։ Եվ ամենքի աչքերը հառած էին Էրզրումին։ Էրզրումը դարձել էր հայության հույսի փարոս։ Ազգային խորհրդի և Ապահովության խորհրդի ջանքերը ամբողջապես ուղղված էին այդ կողմը։

Բայց իրապես ի՞նչ էր ներկայացնում այդ ժամանակ Էրզրումը։ Այնտեղ համախմբված էին հայկական կորպուսի առաջին բրիգադի հետևյալ զորամասերը՝ Էրզրումի գունդ՝ 2 գումարտակ, 600 սվին, Երզնկայի գունդ՝ 3 գումարտակ, 1400 սվին, 2 լեռնային մարտկոց 8 թնդանոթով, առաջին հրացանաձիգ գունդը՝ 2 գումարտակ, 500 սվին, 4-րդ հրացանաձիգ գնդի մեկ գումարտակը 300 սվինով, Էրզրումի գումարտակը՝ 300 սվին, 3 խումբ կամավորներ՝ 400 ձիավոր։ Ընդամենը, ուրեմն, 9 գումարտակ, 3 խումբ՝ 3100 սվինով ու 400 ձիավորներով և 2 մարտկոցով՝ 8 թնդանոթով։

Բացի այս ուժերից, Էրզրումի ամրությունները ունեին բավական ուժեղ հրետանի 400 բերդային և դաշտային թնդանոթներով, որոնց մեծագույն մասը, սակայն, անգործածելի վիճակի մեջ էր՝ լքված ու թաղված խորունկ ձյունի տակ. հազիվ մի-երկու տասնյակ թնդանոթներ պահել էին իրենց ռազմունակությունը։ Էրզրումի հրետանին վարում էին 40 ռուս սպաներ և 400 զինվորներ, որոնց մարտական ոգին ու բարոյականը այնքան էլ բարձր չէին։ Ռուսական սպայակույտը փետր. 12-ին Էրզրումից տեղափոխվել էր Սարիղամիշ և բերդի պաշտպանությունն ու զորքերի հրամանատարությունը անցել էր հայերի ձեռքը։

Էրզրումի ամրացված շրջանի պետ նշանակվել էր Անդրանիկը։ Քաջ հայդուկ, հիանալի խմբապետ, պարտիզանական կռիվների հմուտ վարիչ՝ Անդրանիկը, զորավարի ուսադիրներ դնելուց հետո, մեծ չափով կորցրեց իր հմայքը։ Ուսադիրները չէին արգելում, որ ռուսական բանակի սպաները շարունակեին համարել նրան խմբապետ՝ անձեռնհաս վարելու խոշոր զորամասեր և բերդի պաշտպանության բարդ գործը։ Անդրանիկը ինքն ևս, իր հերթին, լավ չէր զգում իրեն նոր դերում. ո՛չ խմբապետ էր, ո՛չ զինվորական։ Խմբապետությունից հրաժարվել, զորավար չէր դարձել։ Այդ պատճառով, մինչև վերջ էլ չկարողացավ կենտրոնացնել իր ձեռքը բերդի և զորամասերի ղեկավարության գործը։ Այս պարագան քիչ չնպաստեց Էրզրումի արագ խորտակմանը։

Բայց առանց այդ էլ Էրզրումի օրերը հաշված էին։ Նրա դեմ գործում էր ո՛չ միայն վեհիր փաշայի օր ավուր աճող բանակը, ո՛չ միայն հակառակորդի հրամանատարության առավելությունը, ո՛չ միայն շրջակա քրդական հրոսախմբերը, այլև ուժերի անհամաչափությունը՝ Թուրքերը գերակշռում էին թվով, մահմեդական զանգվածները օգնում

էին նրանց և Էրզրումի ավելի քան 20 000 թուրք ազգաբնակչության համակրանքն ու գաղտնի օժանդակությունը նրանց հետ էր։ Ճիշտ է, Անդրանիկը փորձեց ձեռք առնել կտրուկ միջոցներ հայտնապես թշնամու օգտին ծառայող «Մահմեդական Ազգային կոմիտեի» դեմ, բայց հիմնական շարիքը դրանով չվերացվեց։

Փետր. 14-ից Էրզրումը դարձավ թուրքերի զինվորական գործողությունների անմիջական թիրախ, և հայկական առաջապահ մասերը, նրանց ճնշման տակ, քայլ առ քայլ, կռվով քաշվեցին մինչև Իլիջա։ Համախմբելով իր ուժերը Իլիջայի դեմ՝ փետր. 26-ին թշնամին դիմեց բուռն հարձակման։ Սկսվեցին կատաղի կռիվներ, որոնք հետզհետե տարածվեցին և ուրիշ շրջաններ։ Թշնամու հախուռն գրոհի առջև մերոնք նահանջեցին՝ տալով ահագին զոհեր։ Անդրանիկը ցույց տվեց անձնական մեծ քաջություն և անվեհերություն, բայց բանակն ու բերդի պաշտպանությունը ղեկավարող չուներ։ Որոշ զորամասեր կռվեցին հերոսաբար, ուրիշները չկատարեցին իրենց պարտականությունը։ Երեկոյան դեմ արդեն պարզ էր, որ կացությունը անհույս է։ Անդրանիկի հրավերով գումարվեց զինվորական արտակարգ խորհրդակցություն, որը որոշեց պարպել քաղաքը և նահանջել։

Հաջորդ օրը, փետր. 27-ի վաղ առավոտից, սկսվեց Էրզրումի պարպումը, ամենաողբերգական պայմաններում։ Զինվորներով ու գաղթականներով լցված գնացքներ ու հետիոտն բազմություններ շարժվեցին դեպի Հասան-Ղալա։ Ժամը 9-ին թուրքերն արդեն քաղաքում էին։ Վերջին հեռացողը այստեղից էլ, ինչպես և Երզնկայից, Մուրադն էր իր ձիավորներով, որ պաշտպանում էր գաղթականությունը։ Թուրքերի ձեռքն ընկավ անհաշիվ ռազմամթերք, պարենավորում, հագուստ և ուրիշ հարստություններ։ Քաղաքում մնացած հարյուրից ավելի հայերը կոտորվեցին։ Իրենց հերթին, նահանջող հայերն էլ Էրզրումում ու ճանապարհին կոտորեցին պատահած թուրքերին։

Ճանապարհին իրենց միացնելով նաև Խնուսի կռվողների մի մասն ու գաղթականությունը՝ Էրզրումի ուժերը մարտի 2-ին հասան Սարիղամիշի ուժերին։

Էրզրումի անկումով փաստորեն ամբողջ Թուրքահայաստանը նորից անցավ թուրքերի ձեռքը։ Ճիշտ է, Ալաշկերտ—Խնուս—Վան տարածությունը դեռ գրավված չէր, բայց նրա ճակատագիրն էլ որոշված պետք էր համարել։ Թուրքա-հայկական գավառները նորից դարձան ավերակ և անմարդաբնակ։

Պատերազմը փոխադրվում էր ռուսա-հայկական հողերի վրա։ Բնաջնջման սպառնալիքը կախվում էր և հայության երկրորդ հատվածի գլխին։ Կռիվը ո՛չ միայն ըստ էության, ձևականորեն էլ ստանում էր հայ-թուրքական պատերազմի բնույթ։ Այսուհետև բացառապես հայ ժողովրդից էր կախված պատերազմի վախճանը։ Անդրկովկասյան իշխանությունը ո՛չ միայն չէր նպաստում պատերազմին, այլև իր վարանոտ ու հակասական քայլերով ու ներքին հակամարտություններով ավելի ևս թուլացնում էր ճակատի պաշտպանության գործը։ Թիֆլիսում տիրող բարքերն ու միջցեղային բախումները, մանավանդ, սաստիկ ազդում էին բանակի կազմության ու տրամադրության վրա։ Հայերը Թիֆլիսում ու գավառներում պահանջում էին հայտարարել նոր զորակոչ, մինչ Անդրկ. կոմիսարիատը մահմեդական անդամների ճնշման տակ և վրացիների հեղհեղուկ դիրքի պատճառով ձգձգում էր։ Բանը հասավ այնտեղ, որ հայկական շրջանների մի քանի ազգային խորհուրդներ ստիպված եղան հայտարարել տեղական զորահավաք, որ ահագին իրարանցում ու դժգոհություն առաջ բերեց Թիֆլիսում։ Եվ միայն հայերի ստիպումով, անվերջ ու ջղայնացնող հետաձգումներից և երկու ամիս զինվորական հանձնախմբում պահելուց հետո, շատ ուշ, մարտի 24-ին Սեյմը ընդունեց զորահավաքի օրինագիծը, որով զինվորական նախարարությանը իրավունք էր տրվում զենքի տակ առնել, առաջին հերթին, մինչև 28 տարեկան զինապարտները, իսկ հետո, ի հարկին, նաև մինչև 32 տարեկանները։

Մարտի 2-ին Հայկական կորպուսի հրամանատար զոր. Նազարբեգյանը նշանակվեց ճակատի հրամանատար՝ Օլթիից մինչև Մակու ընկած տարածության վրա։ Օլթի—Բաթում գիծը պետք է պաշտպանեին վրացիները։ Հայ և վրացական ճակատների հրամանատարությունը կենտրոնացվեց զոր. Լեբեդինսկիի ձեռքը։

Զոր. Նազարբեգյանի տրամադրության տակ կար, միջին հաշվով, 36 գումարտակ զորք, թերի կազմերով՝ մոտ 15 000 զինվոր, որով պետք է գրավվեր ավելի քան 250 կիլոմետր երկարություն ունեցող ռազմաճակատ և պահպաներ թիկունքը։

Հայկական ճակատի դեմ, համաձայն հետախուզական տեղեկությունների, գործում էին հետևյալ թուրքական ուժերը. 5-րդ, 11-րդ և 36-րդ դիվիզիաները Էրզրում—Սարիղամիշ շրջանում, 1 դիվիզիա Ալաշկերտում և 1 դիվիզիա Վանի լճի շուրջը։ Թե թվով և թե, մանավանդ, կազմակերպությամբ ու ներքին կորովի տեսակետից թուրք բանակը ավելի բարձր էր, քան հայկականը։

Բայց և այնպես, հայերը ցույց տվին ուժեղ դիմադրություն։ Կարուրգանից այս կողմ թուրքերը յուրաքանչյուր թիզ հողը գրավում էին կռվով և զոհեր տալով։

Ընդհարումները սկսվեցին մարտի առաջին կեսերին՝ Կարաուրգանի շրջանից։ Թուրքական գործողությունների հետ մեկտեղ գլուխ բարձրացրին և քրդերը թիկունքում, մանավանդ երկաթուղու շրջանում։ Մարտի 10-ին, թուրքերի ճնշող գրոհի տակ՝ հայ զորքերը քաշվեցին դեպի Խան-Դերե։ Մարտի 20-ին թուրքերը, մոտ 6 գումարտակով, լայն



տարածությամբ, շարժվեցին դեպի Կարաքուրուտ, Բարդուս և այս կետերը գրավելուց հետո, հարձակվեցին Խան-Դերեի վրա։ Այս կետի պաշտպանությունը հանձնվեց Դրոյին, որ այդ օրերին Սարիղամիշ էր եկել։ Սկսվեց արյունահեղ ճակատամարտների մի շարք, որ տևեց մի քանի օր։ Մարտի 23-ին, Կարսից կտրվելու վտանգի տակ, զոր. Արեշյանը տվեց նահանջի հրաման, և մարտի 23 լույս 24-ի գիշերը հայկական զորքերը պարպեցին Սարիղամիշը՝ նախօրոք պայթեցնելով, այրելով ու փչացնելով պահեստներն ու ռազմական նշանակություն ունեցող կետերը։

Սարիղամիշի անկումով՝ մաքրվեց և Ալաշկերտի հովիտը։ Հայկական զորքեր մնացին միայն Վանում, որոնք մինչև ապրիլի կեսերը շարունակեցին պաշտպանվել թուրքերի դեմ և ապա, կռվով, նահանջեցին դեպի Պարսկաստան, ուր սպանվեց Կոստյա Համբարձումյանը՝ «Պարոն Կոստին», ժողովրդական գաղափարական գործիչներից մեկը։

ԳԼՈՒԽ Ժ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԶՈՒՄ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ԱՆԿԱԽ

Դառնանք, սակայն, Տրապիզոնի բանակցություններին և Անդրկովկասի ներսը կատարվող դեպքերին։

Ընթերցողը կհիշե, որ մարտի 13-ին Սեյմը տվեց «արտակարգ լիազորություններ» հաշտարար պատվիրակության նախագահ Չխենկելիին։ Այդ լիազորությունը ստանալուց հետո, պատվիրակությունը, խորհրդաժողովի 6-րդ նիստում, մարտի 23-ին հայտարարեց, որ Անդրկովկասյան կառավարությունը զիջում է թուրքերին ամբողջ Օլթիի շրջանը, Արդահանի շրջանի հարավային մասը, Կարսի շրջանի հարավ-արևմտյան մասն ու Կաղզվանի շրջանի արևմտյան մասը և պատրաստակամություն է հայտնում թուրքերի հետ միասին թուրքա-հայկական խնդրի լուծման համար գտնել Օսմանյան կայսրությանը ընդունելի մի ձև, որը միաժամանակ հնարավորություն տար թուրքահպատակ հայերին և ուրիշ ժողովուրդներին վերադառնալու իրենց տեղերը և ստանալու ապահովության որոշ երաշխիքներ։

Այսպիսով, թուրքա-հայկական ինքնավարության խնդիրը կովկասյան պատվիրակության առաջարկությունների մեջ դառնում էր զուտ գաղթականական մի հարց՝ զուրկ գործնական որևէ արժեքից։ Բայց թուրքերը դրա դեմ էլ խիստ կերպով բողոքեցին։

Չխենկելիի այս հայտարարությունը լսելուց հետո, Ռաուֆ բեյը պատասխանեց, թե ինքը պետք ունի կառավարությունից նոր հրահանգներ ստանալու և առաջարկեց ընդմիջում անել։ Մյուս օրը, փետր. 24-ին, Սարիղամիշի անկման հաջորդ օրը, երեկոյան ժամը 9-ին թուրքերից ստացվեց հետևյալ վերջնագիրը. «Պարոն նախագահ, Օսմանյան կայսերական կառավարությունը պնդում է 1918 թ. 21 մարտի հայտարարության վրա և խնդրում է հարգելի Անդրկ. պատվիրակության այդ առթիվ 48 ժամվա ընթացքում, տալ վերջնական պատասխան», այսինքն՝ ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և Անդրկովկասը հայտարարել անկախ։ Մարտի 25-ի առավոտյան Չխենկելիի հայտարարությունն ու վերջնագիրը հեռագրվեց Թիֆլիս։ Մարտի 26-ին ստացվեց կառավարության պատասխանը, որով համաձայնություն էր տալիս զիջելու Կարսի նահանգը և Արդվինի շրջանը՝ մերժելով զիջել Բաթումը։ Պատվիրակությունը

նույն օրն իսկ, ալքի առաջ ունենալով ռազմաճակատի վիճակը և Թուրքերի սպառնական դիրքը, միաձայն որոշումով հեռագրեց Թիֆլիս՝ պընդելով Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու անհրաժեշտության վրա։ Եվ որովհետև մինչև մարտի 28-ի երեկոյան ժամը 8-ը, Թուրքերի կողմից երկարաձգված նոր 48 ժամվա ընթացքում էլ Թիֆլիսից պատասխան չստացվեց, Չխենկելին, ի գործադրություն պատվիրակության միաձայն որոշման, մարտի 28-ին (10 ապր.) հաղորդեց Ռաուֆ բեյին հետևյալ պատասխանը. «Անդրկովկասյան հաշտարար պատվիրակությունը, ի պատասխան Օսմանյան կայսերական պատվիրակության 6 ապր. 1918 թ. նամակի, պատիվ ունի հայտարարելու, որ ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և պատրաստ է շարունակելու բանակցությունները՝ հիմնվելով նրա վրա»։ Պատվիրակության հայ անդամներն էլ՝ Հ. Քաջազնունին ու Ա. Խատիսյանը հեռագրեցին Սեյմի դաշնակցական ֆրակցիային, թե՝ «Անհրաժեշտ ենք նկատում հրավիրելու Հ. Հ. Դաշնակցության ամենալուրջ ուշադրությունը այն բանի վրա, որ ստեղծված պայմաններում Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը պետք է համարել փոքրագույն չարիք»։

Երեք օր հետո Ռաուֆ բեյը պատասխանեց հետևյալ գրությամբ. «Տրապիզոն, 13 ապր. 1918 թ. պարոն նախագահ. Օսմանյան կայսերական կառավարությունը տեղեկացավ Անդրկովկասյան պատվիրակության 10 ապր. գրության, որ ստորագրված էր արտաքին գործոց նախարար և Անդրկ. պատվիրակության նախագահ պարոն Չխենկելիի կողմից։ Բայց որպեսզի կարողանա մասնակից դարձնել իր դաշնակիցներին ևս բարեկամության դաշինքի բանակցություններին, որ ինքը պատրաստ է քննելու, անհրաժեշտ է ամենից առաջ, որ Անդրկովկասը հայտարարե իր անկախությունը։ Ընդունեցե՛ք, պարոն նախագահ, ամենաբարձր հարգանաց հավաստիքը. Ռաուֆ»։

Հաջորդ օրը, ապր 1-ին (ապր. 14) Անդրկ. կոմիսարիատի նախագահ Գեգեչկորիից ստացված հեռագրով պատվիրակությունը հետ էր կանչվում Թիֆլիս, որովհետև Անդրկովկասի և Թուրքիայի միջև «կարելի չէր եղել կայացնել խաղաղ համաձայնություն Անդրկովկասի սահմանային հարցի մասին»։ Պատվիրակությունը զգալով ինքզինքը անել կացության մեջ և վախենալով ապագա աղետներից՝ հաղորդեց Թուրքական պատվիրակությանը, թե ինքը պարտավորված է մեկնել Թիֆլիս և որ այդ մեկնումը պետք է նկատել ոչ թե խզում, այլ բանակցությունների ժամանակավոր ընդհատում։ Եվ նույն օրը հեռացավ Տրապիզոնից։ Չխենկելին, որ միաժամանակ իրեն պահում էր և իբրև վրաց ժողովրդի ներկայացուցիչ, և, ինչպես հետո պարզվեց, մյուս պատգամավորների թիկունքում վարում էր վրացական քաղաքականություն, Տրապիզոնում թողեց ազգային-դեմոկրատների պարագլուխ Վեշապելիին՝ գործելու

համար հօգուտ վրաց ազգային շահերի։ Մնաց նաև ազգային-դեմոկրատ մյուս պարագլուխ Գվազավան։

Իսկ ինչե՞ր էին կատարվում այդ միջոցին Թիֆլիսում. ինչո՞ւ, հանկարծ, պատվիրակությունը հետ կանչվեց։

Պատվիրակության հեռագրերը և, մանավանդ, Թուրքերի ներկայացրած վերջնագիրը սաստիկ հուզում առաջ բերին անդրկովկասյան ղեկավար շրջաններում։ Մարտի 31-ին գումարվեց Սեյմի նիստը, ուր կառավարության նախագահը զեկուցում տվեց Տրապիզոնի բանակցությանց ընթացքի մասին։ Այդ զեկուցումից պարզվեց, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ճանաչման հայտարարությունից հետո Բաթումի ճակատում, մարտի 29-ին, կնքվել էր զինադադար, որից հետո, Բաթումի բերդապետի մոտ եկել էր Թուրք առաջապահ զորամասի կողմից մի սպա և պահանջել՝ մինչև մարտի 31-ի կեսօրը, քաղաքը հանձնել Թուրքերին՝ հակառակ պարագային սպառնալով գրավել զենքի ուժով։ Եվ որովհետև բերդապետը պատասխանել էր, թե առանց կառավարության հրամանի չի կարող կատարել ներկայացված պահանջը, իսկ կառավարությունն էլ բերդապետի հեռագիրը ստացել էր միայն մարտի 31-ին ժամը 11-ին, Բաթումի ճակատում վերսկսվել էին կռիվները, և Թուրքերը շարժվել էին Բաթումի վրա։

Տալով այս տեղեկությունները՝ վարչապետ Գեգեչկորին հայտարարեց, որ կառավարությունը չի կարող կատարել Թուրքերի պահանջը. «Կառավարությունը կարծում է, որ անդրկովկասյան դեմոկրատիայի ազատատենչ ոգին տակավին մարած չէ, որ դեռ «չոր է վառոդը վառոդամանում» և որ թեև մենք թույլ ենք, բայց դեռ այնքան թույլ չենք, որ դառնանք ստրուկ։ (Ձայներ՝ «ճիշտ է», ծափեր։) Ուստի և կարծում ենք, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելը պիտի նշանակեր, որ Անդրկովկասը, իբրև անկախ հանրապետություն, դադարի գոյություն ունենալուց և պիտի դառնա Թուրքական կայսրության մեկ նահանգ (Ձայներ՝ «ճիշտ է», «ճիշտ է»։) Ես կարծում եմ, թե այն կառավարությունը, որ վայելում է անդրկովկասյան դեմոկրատիայի իրավատեր ներկայացուցչությունը հանդիսացող Սեյմի վստահությունը, չի կարող ընդունել այդպիսի խայտառակություն։ (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր։) Ես պետք է ասեմ, որ կառավարությունը ձեռք կառնե բոլոր միջոցները, կթափե ամեն ճիգ, կհավաքի բոլոր ուժերն ու բովանդակ զորությունը, որ տա արժանավոր հակահարված այն ընդատենչ հավակնության, որ գալիս է Թուրք կառավարության կողմից։ (Ձայներ՝ «ճիշտ է». ծափեր։)

Կառավարության ռազմատենչ հայտարարությունները չերմ արձագանք գտան Սեյմի դահլիճում։ Գեգեչկորիից հետո, հանուն սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի, մի ռազմաշունչ ճառ էլ խոսեց Ծերեթելին. նա ևս հրավեր կարդաց դիմադրության, կռվի «Թուրքական իմպերիալիզմի» դեմ. «Բրեստ-Լիտովսկում թելադրվեց հեղափոխական Ռուսաս-

ատանի մահավճիռը, և այդ մահավճիռը մենք չենք ստորագրի մեր հայրենիքի համար։ (Բուռն, երկարատև ծափեր։)»։ «Թուրքիան ուզում է խեղդել անդրկովկասյան դեմոկրատիան։ Եվ ահա հասնում է ժամը, երբ մենք զենքով պետք է պաշտպանենք անդրկովկասյան ժողովուրդների ազատ զարգացումն ու գոյությունը»։ Եվ «մենք համոզված ենք, որ այդ կռվում մենք կարող ենք հաղթել միայն այն ժամանակ, եթե թիկունքից չլինեն դավադիր հարվածներ։ (Երկարատև ծափեր։)»

Ակնարկը պարզ էր. թիկունքից «դավադիր հարվածը» կարող էր գալ միայն կովկասյան մահմեդականներից։ Եվ Մուսավաթի ներկայացուցիչը վերցրեց Ծերեթելիի նետած ձեռնոցը։ «Պատերազմի հարցում,— ասաց նա,— դուք ինքներդ էլ լավ գիտեք, մահմեդական դեմոկրատիայի դիրքը բացառիկ է՝ նախ, որովհետև մինչև այժմ նա զինվորական պարտականություններ չի կատարել, երկրորդ՝ ի հետևանս Թուրքիայի հետ ունեցած կրոնական կապի, որը թույլ չի տալիս նրան գործոն մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ վարվող պատերազմական գործողություններին։ Այդ խնդրի վրա էլ մենք չենք նայում լավատեսությամբ։ Մենք տեսնում ենք այն ներքին քայքայումը, ներքին միության բացակայությունը, որն, անկասկած, արգելք է հանդիսանում պատերազմական գործողությունների բարեհաջող ընթացքին։ Մենշևիկների ներկայացուցիչ քաղաքացի Ծերեթելին մատնանշեց, նույնպես, որ այս պատերազմում մենք կարող ենք հաղթել միայն, եթե լինենք բոլորովին միացած ու համերաշխ։ Մենք կասկածում ենք, որ կարելի կլինի հասնել այդպիսի միության, եթե սկսվեն պատերազմական գործողությունները»։

Ուրիշ խոսքով, մահմեդականության ներկայացուցիչները բարձրաձայն հայտարարում էին, որ իրենք հակառակ են պատերազմին Թուրքերի դեմ և որ չեն երաշխավորում մահմեդական զանգվածների համակրանքն ու աջակցությունը պատերազմի դեպքում։ Ճիշտ է, իրենց առաջարկած բանաձևի մեջ նրանք խոստանում էին «բոլոր մատչելի միջոցներով ցույց տալ հնարավոր օժանդակություն մյուս ժողովուրդներին», բայց այդ սոսկ տուրք էր ճարտասանության։ Հետագա դեպքերը հաստատեցին, որ Ռուստամբեգովի հայտարարությունն ավելի անկեղծ էր և ավելի համապատասխան իրերի վիճակին։

Այնուամենայնիվ, ռազմաշունչ ճառերը շարունակվեցին։ Նույն ոգով խոսեցին և Ջուղելին, Ժորդանիան, Լորդկիպանիձեն, Սեմյոնովը։ Մ. Հարությունյանը հանուն Դաշնակցության հայտարարեց, որ «մենք և բոլոր այն զանգվածները, որոնք իրենց քվեն տվել են մեզ, ես կարող եմ ասել ավելին՝ ամբողջ հայ ժողովուրդը համոզված է, որ իրեն համար չկա ուրիշ փրկություն, քան այս մարտահրավերն ընդունելը և զենքը ձեռքին ճակատ մեկնելը՝ հայրենի հողը պաշտպանելու համար։ Մենք համոզված ենք, որ այս միակ ճանապարհն է, որը կարող է փրկել մեր ժողովրդի

ֆիզիկական գոյությունը։ Մենք հավատացած ենք, որ ժողովրդի միակ փրկությունը զենքի մեջ է... Մենք կշարունակենք պայքարը Թուրքիայի դեմ, որովհետև մեզ համար զենքից բացի ուրիշ փրկություն գոյություն չունի»...

Ռուստամբեգովից հետո ամենից անկեղծ և իր ժողովրդի տրամադրությունները ճիշտ արտահայտող պատգամավորը, այդ օրն, անշուշտ, Մ. Հարությունյանն էր։ Եվ հայ ժողովուրդը, որ հուսահատական կռիվ էր մղում Վեհիբ փաշայի զորքերի դեմ, կենդանի ապացույց էր Դաշնակցության հայտարարության ճշմարտության Սեյմում։

Ի վերջո, բուռն վեճերից հետո, Սեյմը, միաձայնությամբ ընդունեց Ժորդանիայի առաջարկած բանաձևը սոց.-դեմ. ֆրակցիայի կողմից. «Որովհետև Թուրքիայի և Անդրկովկասի միջև չի կայացել խաղաղ հաշտություն Անդրկովկասի սահմանների մասին, Անդրկովկասյան պատվիրակությանն առաջարկվում է անհապաղ մեկնել Թիֆլիս»։ Այս բանաձևն էր, որ ուղարկվեց Տրապիզոնի պատվիրակությանը։

Ապա Ժորդանիան բացատրեց, որ այս որոշումով «մենք, ուրեմն, պաշտոնապես մտնում ենք պատերազմի ասպարեզ, այսինքն՝ Անդրկովկասը պատերազմ է վարում Թուրքիայի հետ։ Այդ պատճառով, Սեյմը պետք է երկրում զինվորական վիճակ հայտարարի»։ Քվեարկությամբ և նույնպես միաձայն ընդունվեց այս առաջարկն էլ։ Միաձայնությամբ հաստատվեց Ժորդանիայի և երրորդ առաջարկը՝ կազմել արտակարգ լիազորություններով օժտված 3 հոգիանոց հատուկ մարմին՝ վարելու համար պատերազմի գործը։ Մարմնի անդամներ ընտրվեցին վարչապետ ու զինվորական նախարար Ե. Գեգեչկորին, ելևմտական նախարար՝ Խ. Կարճիկյանը և ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլին։ Ի վերջո, Սեյմը վավերացրեց նաև— միշտ միաձայնությամբ— Ժորդանիայի ներկայացրած նախագիծ-կոչը անդրկովկասյան ժողովուրդներին։ Առաջ ենք բերում այդ մարդկային վավերագիրը ամբողջությամբ, իբրև արտահայտություն այն ժամանակվա տրամադրությունների։

«Անդրկովկասյան սեյմից՝ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին

Անդրկովկասի՛ քաղաքացիներ։

Հնչել է ժամը, երբ վճռվում է բախտը մեր ընդհանուր հայրենիքի։

Դուք գիտեք, թե ինչ պահանջներ է ներկայացրել մեզ Թուրք կառավարությունը։

Մեզանից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որ կնքվել է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտության, մի դաշնագիր, որը այժմ Ռուսաստանում չի ճանաչում ոչ մի մարդ, որին թանկ է հայրենի երկրի ազատությունն ու պատիվը։

Մեզանից պահանջում էին մեր լավագույն բերդը՝ Կարսը և մեր ամենալավ նավահանգիստը՝ Բաթումը։

Մեզանից պահանջում էին պարբերումը մեր երեք շրջանների՝ Կարսի, Արդահանի և Բաթումի։

Մենք արինք ամեն ինչ, որ խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով ստիպենք Թուրք կառավարությանը՝ հրաժարվել այդ հավակնություններից։ Չգտնելով խաղաղության պահպանման՝ մենք հանձն առինք մեծ զոհեր ու զիջումներ։ Մենք հայտնեցինք Թուրքիային, որ պատրաստ ենք զիջել համարյա բոլոր բաներում։ Բայց մենք չէինք կարող հրաժարվել Բաթումից, մեր միակ ծովային ելքից, միակ ճանապարհից»։ Եվ մեր բոլոր ճիգերը՝ վեճը լուծելու խաղաղությամբ՝ խորտակվեցին Թուրքիո համառության առջև։

Թուրքիան պնդում է իր սկզբնական պահանջների վրա։ Նրա նպատակն է՝ կտրել Անդրկովկասը արտաքին աշխարհից, խեղդել ու ստրկացնել նրան։ Հանուն այդ նպատակի են առաջ շարժվում Թուրք զորքերը։ Կանգնեցնել նրանց կարող ենք միայն զենքի ուժով։

Մեր առջև հարց է դրված շարունակել բանակցությունները Թուրքիայի հետ ա՛յն միջոցին, երբ նրա զորքերը մտնում են մեր երկրի խորքերը, թե՞ ընդհատել և զենքին հանձնել Անդրկովկասի ազատության պաշտպանությունը։

Թուրքիայի հետ վարած մեր բանակցությունների սկզբին մենք ասում էինք. Անդրկովկասի ժողովուրդները ծարավի են հաշտության, բայց չեն համաձայնվի գնել հաշտությունը ստրկության ու խայտառակության գնով։

Այժմ մենք ստիպված ենք ընտրել՝ խայտառակ հաշտությո՞ւն ու ստրկությո՞ւն թե պատերազմ։

Մեծ պատասխանատվության գիտակցությամբ հայրենիքի և գալիք սերունդների առջև՝ մենք առանց տատանվելու արինք ընտրություն.

Մենք չստորադրեցինք խայտառակ հաշտությունը։

Հաշտության բանակցությունները Թուրքիայի հետ խզված են։

Այսուհետև վեճը լուծվում է զենքի զորությամբ, պատերազմի դաշտում։

Եվ այս ժամին մենք դիմում ենք ձեզ, որովհետև ձեզանից, ձեր արիությունից, ձեր զրկանքի ու զոհաբերության պատրաստակամությունից է կախված ձեր և ձեր զավակների ապագան։

Քաղաքացինե՛ր։ Ռուսաստանի հետ մեկտեղ ցարիզմը տապալեցիք ա՞յն նպատակով, որ դառնաք Թուրքիայի ստրկացած մի նահանգը։

Գյուղացինե՛ր։ Հեղափոխությունը նրա համա՞ր ձեզ հող տվեց, որ նվաճողը այդ հողի վրա բնակեցնե նոր կալվածատերեր։

Բանվորնե՛ր։ Արդյոք ա՞յն նպատակով բարձրացրիք հեղափոխության դրոշը, որ նրան ցեխի մեջ կոխկրտե հաղթողի ոտքը։

Խայտառակություն ու ստրկություն կամ պատերազմ՝ ուրիշ ընտրություն չկա մեր առջև։ Թո՛ղ, ուրեմն, մեր երկրի բոլոր ժողովուրդների գլխին սպառնացող ահավոր վտանգի հանդեպ լռեն բոլոր վեճերը, վերջանան թշնամանքն ու պառակտումը, որոնք մինչև այսօր քայքայում էին մեր շարքերը։

Հավիտենական ստրկության պարանը ձգված է մեր երկրի բոլոր ժողովուրդների վզին. Թո՛ղ, ուրեմն, թշնամու զրոհը խորտակվի՝ զարնվելով մեր վճռականությանը՝ մինչև վերջ պաշտպանելու այնքան սերունդների արյունով ողողված մեր հողը։

Ի զե՛ն ամենքդ։

Դեպի ճակա՛տ ամենքդ։

Ամենքդ՝ ի պաշտպանություն ազատության ու հայրենիքի»։

Այս կոչը տպվեց բոլոր լեզուներով և տարածվեց ժողովրդի մեջ։

Իսկապես, Սեյմի որոշումը պատերազմը շարունակելու մասին նորություն էր միայն վրացիների համար, որովհետև հայերն արդեն իսկ պատերազմի մեջ էին։ Այդ պատճառով, վրացի ղեկավարները դիմեցին աղմկոտ աշխատանքի։ Շատերը նրանցից, որոնց մեջ և Ժորդանիան ու Ծերեթելին, հրացան առան, մեկնեցին ռազմաճակատ։ Մի պահ Թիֆլիսում ստեղծվեց պատերազմական բարձր տրամադրություն։

Սակայն, այս ոգևորությունը տևեց շատ կարճ. հազիվ ծովի փրփուրի կյանք ունեցավ։ Դեռ նոր էին լռել ռազմատենչ ճառերը Թիֆլիսի պալատի կամարների տակ, երբ ստացվեց Բաթումի անկման գույժը։ Ապրիլի 1-ին, առանց դիմադրության հանդիպելու, Թուրքերը գրավել էին Բաթումի ամրությունները, քաղաքն ու նավահանգիստը։ Վրաց զորքերի մի մասը փախել էր խուճապահար, մի ահագին բազմություն էլ մնացել էր գերի։

Հայտնի դարձավ նույնպես, որ Թուրքերին միացել է ամբողջ Աջարիայի և Ախալցխայի մահմեդականությունը, որ Աբաս-Թումանն էլ գրավված է թշնամու կողմից։

Այս ամենը չէր նպաստում վրացիների մարտական ոգու հարատևությանը։ Մի անգամ միայն նրանք ունեցան զինվորական հաջողություն Զոլոքի մոտ։ Բայց այդ փոքրիկ ճակատամարտը պատահական միջադեպ էր։ Իրապես վրացիները նահանջում էին անընդհատ. նրանց մեջ արագ զարգանում էր դասալքությունը, քայքայումն ու բարոյալքումը։ Պարզ էր, որ վրացի ժողովուրդը չէր ուզում կռվել, թեև Թուրքերն արդեն մտել էին բուն Վրաստանի ներսերը՝ Գուրիան և գրավել Օզուրգեթին։ Վրացի գործիչները շատ շուտով հասկացան, որ ժողովուրդը չի հետևում իրենց և շտապեցին փաստից հանել տրամաբանական եզրակացությունները։

Դրան նպաստեց և ապր. 3-ին Տրապիզոնից վերադարձած պատվի-

բակությունը, մասնավորապես Զիմենկելին, որը ոգի ի բռին աշխատում էր համոզել իր ընկերներին, թե միակ փրկությունը Բրեստ-Լիտովսկի դաշնագիրն ընդունելու, Անդրկովկասը անկախ հայտարարելու և հաշտության բանակցությունները վերսկսելու մեջ է։ Եվ քանի ճակատի պարտություններն ավելանում էին, այնքան մեծանում էր Զիմենկելիի կողմնակիցների թիվը։

Վրաց անհաջողությունները սուր ցավ էին պատճառում հայերին, որոնք սարսափով էին դիտում թուրքերի առաջխաղացումը։ Նրանց ուշադրությունը ամբողջապես բևեռված էր Կարսի շրջանում. թշնամին ինքնավստահ քայլերով մոտենում էր Կովկասի անպարտելի ամրությանը։ Կարսի անկումը մահ էր հայ ժողովրդի համար, որը, փակված ծուղակի մեջ, չուներ փրկության ո՛չ մի ճանապարհ։

Էրզրումի աղետը անասելի խուճապ առաջ բերեց հայ ժողովրդի մեջ։ Ծայր տվեց դասալքությունը, որին ի պատասխան զինվորական մարմինները Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և ուրիշ վայրերում կատարեցին մի շարք ահաբեկումներ, որոնք ցնցող տպավորություն արին հասարակության վրա։ Ազգ. խորհուրդն էլ, ճառերից ու կոչերից հոգնած, վերջապես շարժվեց տեղից, և նախագահ Ա. Ահարոնյանը, անդամներ՝ Ս. Մամիկոնյանը, Տ. Բեգզադյանը, Ն. Աղբալյանը, ինչպես նաև Թիֆլիսի զինվորական մարմինը, անցան ռազմաճակատ. Ազգ. խորհրդի անդամները այցելեցին Ալեքսանդրապոլ, Կարս, Սարիղամիշ, ամեն տեղ շփում ունեցան զորքի ու ժողովրդի հետ և իրենց ներկայությամբ սիրտ տվին ամենքին։ Խորհրդակցություններ ունեցան բանակի բարձր հրամանատարության և հասարակական ներկայացուցիչների հետ։

Ազգ. խորհրդի անդամները Սարիղամիշում էին դեռ, երբ սկսվեց թուրքական հարձակումը Կարաուրգանից։ Սարիղամիշի անկումից և թուրքական վերջնագիրը ստացվելուց հետո, Հ. Հ. Դաշնակցության Արևելյան բյուրոյի նախաձեռնությամբ, ապր. 7—8-ին, Ալեքսանդրապոլում գումարվեց, մի տեսակ, համազգային խորհրդաժողով, որին մասնակցեցին Ազգ. խորհրդի և Ապահովության խորհրդի անդամները, Սեյմի և Տրապիզոնի պատվիրակության հայ պատգամավորները, քաղաքական կուսակցությունների, տեղական ազգային խորհուրդների, հասարակական կազմակերպությունների, Երևան, Ալեքսանդրապոլ ու Կարս քաղաքների ու բանակի ներկայացուցիչները, և մի շարք հասարակական գործիչներ։ 1917 թ. սեպտեմբերի ազգային խորհրդաժողովից հետո հայկական ամենապատկառելի և պատասխանատու հավաքույթն էր այս, որ պետք է որոշեր հայերի վարքագիծը պատերազմի և խաղաղության հարցում։ Ներկա էին բազմաթիվ պատասխանատու գործիչներ՝ Արամը, զոր. Նազարբեգյանը, զոր. Սիլիկյանը, Դրոն, Ա. Ահարոնյանը, Ս. Հարությունյանը, Մ. Պապաջանյանը, Հ. Քաջազնունին, Ա. Խատիսյանը, Ս. Վրացյանը, Ա. Սահակյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Ա. Երզնկյանը,

Ս. Մանասյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Վահ. Փափազյանը, Ստ. Մամիկոնյանը, Տ. Բեգզադյանը, Ն. Աղբալյանը, Երևանի ու Կարսի քաղաքագլուխները և այլն։

Պատերազմի և խաղաղության մասին գրավոր զեկուցում կարդաց Հ. Քաջազնունին, որը, իրեն հատուկ տրամաբանական կուռ բանավարություններով, աշխատում էր համոզել՝ թուրքական պայմաններին համակերպվելու անհրաժեշտությունը։ Զեկուցումը առաջ բերեց հուզումնալից ու երկարատև վիճաբանություններ։ Հաշտության կողմնակիցների թիվը մեծ չէր՝ Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան, Ղ. Տեր-Ղազարյան և մի քանի ուրիշներ։ Ահագին մեծամասնությունը ժողովականների, բանակի ներկայացուցիչներն ու հրամանատարությունը ոգի ի բռին պաշտպանում էին թուրքական պահանջները մերժելու և պատերազմը շարունակելու անհրաժեշտությունը*։

Թիֆլիսից ստացվող լուրերը, սակայն, քիչ էին ներդաշնակվում Ալեքսանդրապոլի տրամադրություններին։ Հաղորդում էին, որ Անդրկ. կառավարության թուրք նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով անհապաղ ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանները և կնքել հաշտություն, այլապես իրենք կհեռանան Սեյմից ու կառավարությունից։ Զիմենկելիին, կատարվող դեպքերի օգնությամբ, հաջողվել էր համոզելու իր ընկերներին՝ ընդունել թուրքերի պայմանները։ Այդ պատճառով, Ալեքսանդրապոլի խորհրդակցությունը, առանց որոշ վճիռ հանելու, թեև մեծամասնաբար դեմ էր թուրքերի պահանջներն ընդունելուն՝ ցրվեց՝ հանձնարարելով իր անդամներին լուծել խնդիրը Թիֆլիսում, ուր կացությունը ավելի պարզ էր։

Թիֆլիսում, սակայն, ամեն բան արդեն որոշված էր. վրացիներն ու թուրքերը վճռել էին՝ վերջ տալ պատերազմին, ընդունել թուրքական վերջնագիրը և հայտարարելով Անդրկովկասի անկախությունը՝ վերսկսել հաշտության բանակցությունները։ Այս քայլն անելիս վրացիները որոշ հույսեր էին կապում Գերմանիայի հետ, որոնց ներկայացուցիչներին, Տրապիզոնում, Զիմենկելին տեսել էր մյուս պատգամավորներից գաղտնի, իսկ կովկասյան թուրքերի համար՝ թուրքիան ցանկալի բարեկամ էր։

Այսպիսով, հայերի համար ստեղծվում էր ահավոր կացություն. միանալ վրացիներին ու թուրքերին՝ նշանակում էր ձեռք քաշել ո՛չ միայն ամբողջ թուրքահայաստանից, այլև Ռուսահայաստանի մի երրորդ մասից, և դեռ հարց էր՝ կգոհանայի՞ն արդյոք թուրքերը միայն Բրեստ-

* Այս ժողովին մասնակցեց և հայ բոլշևիկ Պ. Մակինցյանը, որը, Արամի հանձնարարությամբ, Երևանից գնում էր Մոսկվա՝ հաջողացնելու համար վերջինիս աշխատությունը հայ ժողովրդին։ Մակինցյանը անցավ Ռուսաստան և փոխանակ կատարելու իր խոստումը՝ պաշտոնի մտավ Զեկայի մեջ և մյուս հայ բոլշևիկների հետ սկսեց կատաղի պայքար մղել Հայաստանի Հանրապետության դեմ։

Լիտովսկի սահմաններով։ Զմիանալ՝ նշանակում էր անջատվել հարևաններից, մնալ մենակ, կտրված ամբողջ աշխարհից, շրջապատված մահմեդական ծովով, թուրքական բանակի սպառնալիքի տակ՝ դատապարտված ստույգ մահվան։ Պետք էր ընտրել չարիքներից փոքրագույնը, և հայերը միացան հարևանների որոշմանը։

Կային մարդիկ, որոնք, այդ օրերին, ցույց էին տալիս Խորհրդային Ռուսաստանի ճամփան՝ առաջարկելով ձեռք մեկնել բոլշևիկներին, որոնց առաջապահները դեռ մնում էին Բաքվում ու Սուխումում։ Այդ տրամադրությանը որոշ չափով նպաստում էին Թիֆլիսում ստացվող աղոտ լուրերը, որ, իբր թե, Լենինը առանձին դեկրետով հայտարարել է Հայաստանի անկախությունը։ Սակայն, այդ մտքի անհեթեթությունը այնքան էր ակներև, որ նույնիսկ, նրա հեղինակները լուրջ քայլեր չարին այդ ուղղությամբ։ Ռուսաստանը շատ էր հեռու Հայաստանից, իսկ բոլշևիկների ուժը՝ ավելի քան խնդրական։

Ուրիշ ճանապարհ չկար։ Ապրիլի 9-ին գումարվեց Սեյմի 22-րդ նիստը, ուր դրվեց Անդրկովկասի անկախության հայտարարության հարցը։ Մեռելատան էր նմանվում այդ օր Սեյմի դահլիճը։ Մենակ հայերը չէին սգավոր. վրացիներն էլ լավ չէին զգում իրենց։ Նրանց առաջնակարգ հռետորներից ոչ ոք ամբիոն չբարձրացավ այդ օր։ Մենշևիկների կողմից անգույն ու անհամ ճառեր արտասանեցին մի ինչ-որ Օնիաշվիլի, Գեորգաձեն, Արսենիձեն, որոնք բոնազբոսիկ ոգևորությամբ ու հակասական բացատրություններով աշխատում էին հիմնավորել Անդրկովկասի անկախության անհրաժեշտությունը։ Ռուս Սեմյոնովը և սոց.-հեղափոխական Լ. Թումանյանի համար դժվար չէր ջախջախել նրանց խախուտ փաստերը և մերկացնել անկախության իսկական շարժառիթները։ Մանավանդ, սպանիչ էր վերջինիս ճառը. «Ձեզ համար պետք է պարզ լինի, ասում էր նա՝ դիմելով վրացի մենշևիկներին, որ Անդրկովկասի ներկա պայմաններում հայտարարված անկախությունը ոչ այլ ինչ է, եթե ո՛չ դառնալ կատարյալ ստրուկ Թուրքիային... Անկախ Անդրկովկասը ո՛չ միայն չի տա մեզ հաշտություն Թուրքերի հետ, ո՛չ միայն չի բարելավի մեր դրությունը, այլ ավելի ևս կվատթարացնի, կկապե մեր ձեռքն ու ոտքը»։

Նույն տեսակետն էր պաշտպանում և Սեմյոնովը. «Ձեր անկախությունը կփրկե՝ ձեզ Թուրք և գերման զորքերից,— հարցնում էր նա։— Եվ ի՞նչ երաշխիք եք սպասում դուք... Անկախության հայտարարությունից հետո, երկրորդ քայլը կլինի՝ բանակցություններ Թուրքիայի հետ դաշնակցություն կնքելու մասին, և դուք հարկադրված կլինեք քայլ առ քայլ անել այն, ինչ որ հրամայեն ձեզ Թուրքերը... Դուք Թուրք զորքերի օգնությամբ կերթաք նվաճելու Բաքուն և երբ Թուրք զորքերը անցնեն Անդրկովկասով, տեղի կունենա Անդրկովկասի գրավումը Թուրք-գերմանական միության կողմից։ Եվ երբ Թուրք-գերմանական զորքերը գրավեն ամբողջ Անդրկովկասը, գուցե, ա՞յդ ժամանակ կարող կլինեք խոսել հեղափոխության հաղթանակի մասին»...

Տոնական տրամադրություն ունեին միայն վրացի ազգայնականները, բայց, մանավանդ, Թուրքերը։ Ռասուլ-Զադեն ցնծում էր։ Մուսավաթական ֆրակցիան իրեն զգում էր նոր փեսայի դերում։ Չէ՞ որ իրականանում էր իրենց նվիրական տենչը՝ մի քայլ դեպի Ռուսաստանի քայքայումը, մի քայլ դեպի «Թուրք ազգերի դաշնակցությունը»՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքեստան և Թուրքեստանից՝ Անատոլիա։

Իսկական սգի մեջ էին հայերը։ Սիրտ չկար խոսելու։ Եվ ի՞նչ խոսել. բոլոր խոսքերն արդեն ասված էին։ Նրանց ապրումները արտահայտեց Հ. Քաջազնունին։ Հուզված, մազերը ցրիվ՝ բարձրացավ ամբիոն ու կարդաց. «Պարոնայք, Սեյմի անդամներ։ Դաշնակցության ֆրակցիան՝ գիտակցելով շատ պարզ այն մեծ պատասխանատվությունը, որ առնում է իր վրա այս պատմական վայրկյանին, միանում է ինքնուրույն Անդրկովկասյան պետության հայտարարությանը»։

Եվ ուրիշ ոչինչ։ Եվ այս մի քանի խոսքերը անհամեմատ ավելի տպավորիչ էին, քան մյուս պատգամավորների երկարապատում հռետորական մարզանքները։

Վիճաբանությունից հետո Սեյմը ընդունեց Օնիաշվիլիի առաջարկած հետևյալ բանաձևը. «Անդրկովկասյան սեյմը որոշեց՝ հայտարարել Անդրկովկասը ռամկավար դաշնակցային հանրապետություն»։

Ապա Չխենկելին, հաշտարար պատվիրակության կողմից, զեկուցեց Տրապիզոնի բանակցությունների վերջին շրջանի իրադարձությունները։ Այդ զեկուցման մեջ առանձնապես հետաքրքրական էր մի կետ, որ շատ բնորոշ էր, առհասարակ, բոլոր վրացի գործիչների համար։ Խոսելով պատերազմական անհաջողությունների մասին՝ նա նկատեց, որ «Անդրկովկասյան պետությունը, իբրև մեկ միավոր, չէր կարող դուրս գալ զենքի ուժով պաշտպանելու Անդրկովկասը»։ Խոսքը մահմեդականների բռնած թշնամական դիրքի մասին էր։ Ու շտապեց ավելացնել. «Թե ինչու մահմեդականները չէին կարող համաձայնվել պատերազմելու Թուրքիայի դեմ, կան ու կային բոլորովին առարկայական պատճառներ. նույնը կարելի է ասել և քրիստոնյա ժողովուրդների մասին, որոնք նման պարագաներում չէին պատերազմի Ռուսաստանի դեմ։ Հիմքերը միևնույնն են։ Եթե այժմ խոսքը մահմեդականների մասին է, նշանակում է ուրիշ ելք չկար նրանց համար»։

Խուժանավարությունը մահմեդականների առջև ակներև էր։ Չխենկելին շատ լավ գիտեր, որ մահմեդականները Կովկասում, ոչ թե չէին կռվում Թուրքերի դեմ, այլ դավաճանում Անդրկովկասի միության, փորում էին նրա հիմքերը։ Բայց... կովկասյան մահմեդականների տեսակարար կշիռը օրեցօր բարձրանում էր, նրանք բարեկամ էին Թուրքերին՝ և Չխենկելիները քծնում ու սիրաշահում էին։

Զեկուցումն ըստ էության առարկություն չէր վերցնում. պատասխանատու ֆրակցիաները նախօրոք համաձայնվել էին բոլոր կետերի մասին. Սեյմի կատարածը ծես էր միայն։ Նա հավանություն տվեց պատվիրակության կատարածին և հանձնարարեց «շարունակել բանակցությունները ու միջոցներ ձեռք առնել հաշտության շուտափույթ կնքման համար»։

Նույն նիստում ընդունվեց Գեգեչկորիի «ռազմասեր» կառավարության հրաժարականը և նոր կառավարություն կազմելը հանձնվեց Չխենկելիին։

ԳԼՈՒԽ ԺԱ

ԿԱՐՍԻՑ ՂԱՐԱՔԻԼԻՍԱ

Անդրկովկասը դարձավ անկախ հանրապետություն և Չխենկելին՝ նրա կառավարության նախագահ։ Այս հանգամանքը հայերի համար ունեցավ ճակատագրական հետևանքներ։

Կառավարությունը կազմվեց հետևյալ անձերից. վարչապետ և արտաքին գործոց նախարար՝ Չխենկելին, ներքին գործոց նախարար՝ Ն. Ռամիշվիլի, զինվորական՝ Գ. Գեորգաձե, ելևմտական՝ Ա. Խատիսյան, հաղորդակցության՝ Խ. Մելիք-Ասլանով, արդարադատության՝ Ֆ. Խան-Խոյսկի, երկրագործության՝ Ն. Խոմերիկի, հանրային կրթության՝ Ն. Ուսուպբեգով, առևտրի և արդյունաբերության՝ Հ. Գաջինսկի, պարենավորման՝ Ավ. Սահակյան, խնամատարության՝ Հ. Քաջազնունի, աշխատանքի՝ Ար. Երզնկյան, պետական վերահսկիչ՝ Ի. Հայդարով։

Այս կազմով Չխենկելին ներկայացավ Սեյմի 13 ապր. նիստին, կարդաց կառավարական հայտարարությունը, որի հիմնական միտքն էր Թուրքիայի հետ հաշտություն կնքելու անհրաժեշտությունը, և ստացավ Սեյմի վավերացումը։ Չխենկելիի հայտարարության առթիվ խոսեցին կուսակցությանց ներկայացուցիչները՝ Ծերեթելի, Ռասուլ Զադե, Կարճիկյան և ուրիշներ։ Ծերեթելին նորից վեր հանեց անկախության և կովկասյան ազգերի համերաշխության գաղափարը, «եթե քայքայվի անդրկովկասյան ժողովուրդների ներքին միությունը, մենք ոտքի տակ կերթանք, այլևս տեղ չի մնա, ուր հնչի անդրկովկասյան դեմոկրատիայի ազատ ձայնը»։ Ռասուլ Զադեն շեշտեց, որ Դաղստանն էլ մտնում է անդրկովկասյան հանրապետության մեջ, և պահանջեց, որ Հյուսիսային Կովկասն էլ մտցվի։ Թուրքերը շատ էին մտահոգված մահմեդական երկրների ազատությամբ ու հավաքումով...

Հայերին հուզողը գլխավորապես պատերազմի ու հաշտության, թուրքական վտանգի հարցն էր։ Եվ այդ մտահոգությունները արտահայտեց Կարճիկյանը։ Անդրկովկասի անկախությունը նրա աչքին արտաքին ուժերից բռնադատված մի քայլ էր. «Այդ արտաքին ուժերի գոյությունը փաստ է՝ Խորհրդային Ռուսաստանի և արտաքին թշնամու (Թուրքերի) կողմից, և այդ արտաքին ուժերը հարկադրեցին հայտարարել Անդրկովկասի անկախությունն ու տատանում մտցրին անդրկովկասյան ժողովուրդների մեջ։ Մինչև որ անդրկովկասյան ժողովուրդները

չմիանան ու համերաշխ չգործեն, ոչ մի ուժ չի փրկի նրանց, և կառավարության խոստումներն էլ կմնան դատարկ հնչյուններ»։

«Կառավարության առջև կանգնած երկրորդ կարևոր խնդիրը հաշտություն կնքելն է։ Այն հանգամանքը, որ նոր կառավարության գլուխը նախկին հաշտարար պատվիրակության նախագահն է՝ ինքնին ասում է, որ նոր կառավարությանը կներկայացվեն շատ խիստ պահանջներ։ Տրապիզոնից վերադարձած պատվիրակությունը լի էր հավատով, թե կարելի է կնքել հաշտություն, որը կփրկե Անդրկովկասը։ Պատվիրակությունը ոչ միայն հավատով վերադարձավ, այլ իր այդ հավատը ներշնչեց նաև զանգվածներին։ Այդ պարտավորեցնում է ոչ միայն պատվիրակությանը, այլև կառավարությանը. այդ մուրհակով կառավարությունը ստիպված կլինի հաշիվ ներկայացնել»։

Հայերը համոզված էին, որ Թուրքերի հետ անկարելի է տանելի հաշտություն կնքել, և այդ համոզումն էր Կարճիկյանի խիստ զգույշ ճառի իմաստը։ Նա չէր հավատում, որ Չխենկելիին կհաջողվի կատարել իր խոստումը, մանավանդ որ տեսնում էր շուրջը գտնվող մահմեդական գործիչների մտայնությունը։ Չէ որ նույն նիստում սոց.-հեղափ. Լորդկիպանիձեն, Սեյմի ամբիոնից, հայտարարում էր, թե «ոմանք այստեղ, ա՛յս դահլիճում, Սեյմի պատգամավորների շարքերում ու լրագրողների օթյակում, արդեն խոսում են այն մասին, թե՝ քանի որ անկախությունը հայտարարված է, պետք է օգնության կանչել Թուրքական զորքերին և Թուրք սվիններով պաշտպանել Անդրկովկասի անկախությունը հյուսիսից արշավող բոլշևիկների դեմ»։

Այո՛, խոսում էին, և հենց Ռասուլ Զադեն իր ճառում շատ թափանցիկ ակնարկներով հրավիրում էր Սեյմի ուշադրությունը Սուխումի և Բաքվի վրա, որոնք «տառապում էին ինքզինքը խորհրդային իշխանության գաղափարների ջատագով համարող ավազակների լծի տակ»։

Այսպես, ուրեմն, պաշտոնապես Չխենկելիի կառավարությունը սկսեց գոյություն ունենալ ապր. 13-ից, բայց ապր. 9-ից արդեն Գեգեչկորիի դահլիճը, բոլորովին ապօրինի կերպով և աններելի անփութությամբ, քաշվել էր գործից և իշխանության ղեկը փաստորեն անցել էր Չխենկելիի ձեռքը։ Այս վերջինը անմիջապես անցավ գործի և արավ մի շարք ինքնագլուխ քայլեր։

Ապր. 10-ին Չխենկելին հեռագրով իմացրեց բոլոր պետություններին Անդրկովկասի անկախության հայտարարությունը։ Ապա Փոթիի ու Բաթումի գծով նույնը հեռագրեց և Վեհիբ փաշային՝ ավելացնելով, որ Անդրկ. սեյմը ընդունել է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և որ ինքը կոչ-գրել է բոլոր ճակատների հրամանատարներին՝ կանգնեցնել պատերազմական գործողությունները և նույնը խնդրում է նաև Թուրք հրամանատարությունից։ Չխենկելին ավելացնում էր, որ ինքը հրաման է տվել, որ Կարսի պարպման պայմանները մշակելու համար բերդապետը պատ-

վիրակներ ուղարկե Թուրք հրամանատարության մոտ, և խնդրում էր տալ բավարար ժամանակ, որպեսզի կարելի լինի պարպել բերդը։

Հետո, հայկական և վրացական կորպուսների պետերին, զինվորական նախարարի պաշտոնակատար զոր. Օդիշելիձեի միջոցով, արավ հետևյալ հեռագրական հրամանը. «Հաղորդում եմ ի գիտություն ձեզ, որ Անդրկ. սեյմը իր 9 ապրիլի նիստում հայտարարեց Անդրկովկասի կատարյալ անկախությունը։ Կազմված է նոր կառավարություն Չխենկելիի գլխավորությամբ, որը լիազորված է շարունակելու հաշտության բանակցությունները Թուրքերի հետ։ Կառավարությունը հրամայում է ձեզ՝ անմիջապես հասկացողության գալ ձեր առջև գտնվող Թուրք զինվորական իշխանությունների հետ դադարեցնելու համար պատերազմական գործողությունները ամբողջ ճակատի վրա՝ սկսած այսօրվա ժամը 17-ից։ Հեռագրեցեք անմիջապես ինձ այս հրամանի գործադրության ու թշնամության դադարեցման մասին և մի պատճեն էլ ուղարկեցեք ընդհանուր հրամանատարին։ Այս հեռագրից հետո անմիջապես կուղարկեմ ձեզ մի հեռագիր Վեհիբ փաշայի անունով, որը զոր. Նազարբեգյանը պետք է հաղորդե ըստ պատկանելվույն անթելի միջոցով և զոր. Գաբաևը մի ներկայացուցչի միջոցով՝ հեռագրաթելով՝ Բաթումից Տրապիզոն»։

Այս հեռագրին հաջորդեց Օդիշելիձեի մեկ ուրիշ հեռագիրը, որը «անհապաղ» պետք է հաղորդվեր Թուրք հրամանատարության. «Կովկասյան ճակատի թուրք բանակների ընդհանուր հրամանատար Ֆերիկ Մեհմեդ Վեհիբ փաշային. Պատիվ ունեմ ծանուցանելու ձերդ գերազանցության, որ համաձայն վարչապետ Չխենկելիի 1918 թ. ապր. 10-ին Փոթիի և Բաթումի վրայով ձեզ ուղարկված և հավանորեն արդեն ստացված հեռագրի, ես հաճույքն ունեցա հաղորդելու Անդրկովկասի գործող զորքերին անդրկովկասյան նոր կառավարության հրամանը՝ 10 ապրիլի ժամը 17-ից սկսած ամբողջ անդրկովկասյան ճակատի վրա դադարեցնել պատերազմական գործողությունները՝ համաձայնության գալով հանդիպակաց Թուրք իշխանությունների հետ։ Հույս ունեմ ձերդ գերազանցություն, որ հանուն հաշտության առաջիկա բանակցությունների հաջողության և մեր երկու ժողովուրդների ապագա բարեկամության, դուք ևս կհրամայեք ձեր զորքերին անմիջապես դադարեցնել պատերազմական գործողությունները»։

Այս բոլոր հրամաններն ու կարգադրությունները կատարվեցին կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար Լեբեդինսկիից անկախ, Սեյմից և հրավիրված նոր նախարարներից գաղտնի, միայն Չխենկելիի անձնական պատասխանատվությամբ։ Ոչ ոք տեղեկություն չուներ Չխենկելիի արած քայլերի մասին։ Եվ, ինչ որ պակաս տարօրինակ չէ, հեռագրական սովորական կապն էլ հայկական կորպուսի և Հայոց ազգ. խորհրդի միջև կտրված էր, և Թիֆլիսում ոչ ոք չգիտեր, թե ի՞նչ էր կա-

տարվում հայկական ռազմաճակատում, մինչ այնտեղ զարգանում էին հայ ժողովրդի համար ողբերգական հետևանքներ ունեցող դեպքեր։

Ապրիլի 10-ին հայկական զորամասերը բռնում էին հետևյալ ռազմական դիրքերը. Սամավաթ-Հարամ Վարդան-Բեյուք Թեփե բարձունքը—Գիվնեյ բարձունքը—Աղբաբա բարձունքը—Կանը Քեոյ գյուղը։ Բերդային հրետանին կազմ ու պատրաստ վիճակի մեջ էր։ Զորքի ոգին ու բարոյական կորովը բարձր էր։ Հայկական բանակը պատրաստ էր դիմադրության, և հրամանատարությունը վստահ էր, թե Կարսը ցույց կտա համառ դիմադրություն, կդիմանա առնվազն երկու շաբաթից մեկ ամիս։ Թուրքերը ավելորդ զոհեր չտալու համար՝ ստիպված պիտի լինեն զիջումներ անել Անդրկ. կառավարությանը՝ բերդը առանց կռվի ստանալու համար։

Այսպես էր կացությունը, երբ իրար հետևից սկսեցին հասնել Զխենկելիի հեռագրերը, որոնք խիստ բարոյալքող տպավորություն արին գիրքերում կանգնած զինվորների վրա։ Քանի որ որոշված է կնքել զինադադար, էլ ինչո՞ւ կռվել՝ այս բնական միտքը կայծակի արագությամբ տարածվում էր ամեն կողմ, և զորաշարքերը արագորեն քայքայվում էին։ Հայկ. կորպուսի պետ զոր. Վիշինսկին, ապր. 11-ին, ընդհանուր սպայակույտին արած հաղորդագրության մեջ, զոր. Նազարբեգյանի հանձնարարությամբ, հետևյալ բնորոշումն էր տալիս ստեղծված դրության. «Բեգլի-Ահմեդի զորամասի կողմից գրավված առաջավոր դիրքի բախտը որոշվել էր երեկ զոր. Օդիշելիձեի կարգադրությամբ՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու և բանագնացներ ուղարկելու մասին։ Այդ կարգադրությունը բացասական տպավորություն արավ զորքերի վրա։ Սակայն, Կարսի բերդապահ զորքին կաս, գուցե և ամբողջ ամիս։ Եթե ժամանակին մերժվեին թուրքական պայմաններն այսօր առավոտ ընդունելու առաջարկը, այդ դեռ կարող էր փրկել կացությունը, և Կարսի բերդը, անտարակույս, հետ կմղեր թուրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ լավ պաշտպանվում էր, մինչև որ ստացվեց վարչապետ Զխենկելիի և զոր. Օդիշելիձեի կարգադրությունը, որ բանագնացներ ուղարկվեն՝ ճշտելու համար բերդի դատարկման պայմանները։ Այս բանը բերդապետին հայտնելուց հետո՝ կռիվը դադարեց։ Զորքերը, ենթարկվելով հրամանի, հեռացան Աղաջ—Աղբաբ—Հարամ Վարդան առաջավոր դիրքերից»։

Այսպիսով, Զխենկելիի կարգադրությունը կոտրեց հայկական բանակի դիմադրական թափը և պատճառ դարձավ սարսափելի աղետի։

Զխենկելիի հրամանը ստանալուց հետո զոր. Նազարբեգյանը և Ս. Մանասյանը աշխարդյուն կերպով աշխատեցին ուղիղ հեռագրաթելով կապվել Թիֆլիսի Ազգ. խորհրդի հետ. կապը խզված էր։ Դրանից հետո, Նազարբեգյանը հրամայեց Էջմիածնի շրջանում գործող հայկական 2-րդ

դիվիզիայի պետ զոր. Սիլիկյանին և Կարսի բերդապետ զոր. Դեմին 10 ապրիլի ժամը 17-ից սկսած դադարեցնել պատերազմական գործողությունները, և թուրք հրամանատարության հետ սկսվեցին բանակցություններ երկու կողմերը զատորոշող գիծը ճշտելու համար։ Թուրք առաջավոր մասի հրամանատարը հայտնեց հայերի բանագնաց գնդ. Մորելին, որ ինքը զինադադարի կարգադրություն չի ստացել, հայերի դիմումը կուղարկե բարձր հրամանատարության, բայց մինչ այդ, Վեհիբ փաշայի հրամանի վրա, ապր. 11-ին պիտի շարունակե առաջխաղացումը, ուստի առաջարկում է, որ իզուր ընդհարումներ չունենալու համար, հայկական զորքերը քաշվեն բերդային ամրությունների մոտ։

Հաջորդ առավոտ թուրք առաջավոր զորքերի հրամանատարից ստացվեց մի նամակ, որով հաղորդվում էր, որ զինադադարի առաջարկը ընդունված է, թուրք պատվիրակներն արդեն նշանակված են, բայց մինչև բանակցությունների սկսումը հայկական զորքերը պետք է նահանջեն ու կանգնեն բերդի ամրություններից երկու վերստի վրա։ «Մեր զորքերի մոտենալու միջոցին ձերոնք չպետք է կրակեն, հակառակ դեպքում մենք ուժ կգործադրենք»։ Եվ, իրոք, ապր. 11-ին, թուրքերը դիմեցին ընդհանուր հարձակման և աշխատում էին գրավել Կարս—Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը՝ հայերի նահանջի ճանապարհը կտրելու նպատակով, բայց բերդի մարտկոցներից բացված ուժեղ կրակը կանգնեցրեց նրանց, թեև կռիվները չդադարեցին։

Նույն օրը Թիֆլիսից ստացվեց և զոր. Օդիշելիձեի հեռագրական հրամանը՝ «ընդունելու թուրքերի պայմանները և դադարեցնելու պատերազմական գործողությունները՝ համաձայն այդ պայմանների»։ Այս հրամանը հավասար էր բացարձակ անձնատվության, որովհետև բերդի ամրություններից 2 վերստի վրա կեցած, այն էլ բարոյալքված ու զաղված զորքը անկարող պիտի լիներ պաշտպանվել թշնամուց, և Կարսը, բոլոր զորքերով ու ժողովրդով, պիտի անցներ թուրքերի ձեռքը։ Այդ պատճառով, հայկական հրամանատարությունը նորից փորձեց զինադադարի ավելի նպաստավոր պայմաններ ստանալու։

Ապր. 11-ին և 12-ին կռիվները շարունակվեցին անընդհատ։ Թուրք զորամասերն ու քրդական հրոսախմբերը աշխատում էին կտրել դեպի հյուսիս տանող երկաթուղին ու խճուղին և անվերջ հարձակումներ էին գործում հայկական զորքերի վրա։ Թնդանոթները գոռում էին բերդի ամրություններից։ Հայ զորքը ցույց էր տալիս կատաղի դիմադրություն։ Իսկ նույն այդ ժամանակ հայերի բանագնաց գնդ. Մորելը իրար հետևից գնում-գալիս էր թուրքական հրամանատարի մոտ, բանակցություններ վարում Կարսի հանձնումի պայմանների մասին։ Թուրք զորքերի հրամանատար Քյազիմ բեյը Վեհիբ փաշայի կողմից դրեց ու մինչև վերջն էլ պնդեց հետևյալ երեք պայմանի վրա. 1. Մինչև ապր. 12-ի կեսօրը թուրքերին հանձնել Կարս գետի ձախ ափին գտնվող բերդային ամրու-

թյունները, իսկ մնացյալ ամրությունները հանձնել մինչև նույն օրվա երեկոն։ 2. Ապրիլի 12-ի ընթացքին անդրկովկասյան զորքերը պետք է հեռանան Կարսից։ 3. Բերդից դուրս գալուց հետո, 3 օրվա ընթացքում, այդ զորքերը պետք է անցնեն Ախուրյան գետի մյուս ափը։

Գնդ. Մորելը պնդում էր պայմանաժամի երկարաձգման վրա, բայց թուրքերը մնացին մինչև վերջ անզիջող և սպառնում էին, որոշյալ ժամանակը լրանալուց հետո, բերդը գրավել զենքի ուժով։ Մյուս կողմից էլ Թիֆլիսի կառավարությունն էր շտապեցնում թուրքական պայմանների ընդունումը. ապրիլի 11-ի գիշերը զոր. Նազարբեգյանը ստացավ ընդհանուր հրամանատարի հետևյալ հեռագրական կարգադրությունը, թե՝ քանի որ Կարսի «պարպման խնդիրը բացարձակ կերպով որոշված է կառավարության կողմից, հրամայում եմ ձեզ իրավունք տալ բերդապետին զորքերը փոխադրելու Ալեքսանդրապոլի կողմը»։

Այս հեռագրի վրա, հայկական հրամանատարությունը մի անգամ էլ— չորրորդ անգամ— ուղարկեց գնդ. Մորելին թուրք հրամանատարի մոտ՝ խնդրելով պայմանաժամը գեթ մեկ օրով երկարաձգել։ Պատասխանը եղավ կտրուկ մերժում։ Եվ մինչև 12 ապր. ժամը 2 Կարսը պարպվեց։ Հեռացան զորքերը։ Հեռացավ բնակչությունը՝ մոտ 20 000 մարդ նախօրոք այրելով քաղաքի լավագույն շենքերը։ Բերդում մնացին միայն բերդապետ զոր. Դեմը, կոմիսար Մ. Արզումանյանը, գնդ. Մորելը և սպայակույտի ու վարչական հիմնարկությանց սպաների ու պաշտոնեության մի մասը... բերդի գույքերը փոխադրելու համար։ Չխենկելին միամտորեն հավատում էր, որ թուրքերը թույլ կտան իրեն բերդի պաշարն ու ռազմամթերքը տեղափոխելու Թիֆլիս...

Ապր. 12-ին, երեկոյան ժամը 9-ին Կարս մտավ թուրքական 11-րդ դիվիզիայի առաջապահ մասը։

Կարսից հեռանալու պահուն զոր. Նազարբեգյանը Թիֆլիսից ստացավ հետևյալ հեռագիրը. «Հայտնում եմ ձեզ ի գիտություն, որ Կարսի նահանգը մինչև Ախուրյան գետի երկարությամբ անցնող սահմանը պետք է պարպվի մեր զորքերից։ Ալեքսանդրապոլի՝ Ախուրյանի աջ ափին գտնվող ամրությունները պետք է ոչնչացվեն։ Կառավարությունը հարց է հարուցել, որ Թուրքիան մեկ ամիս ժամանակ տա մեզ՝ դուրս գալու համար Կարսի բերդի ամբողջ գույքը և մեկ շաբաթ՝ մեր զորքը Կարսի նահանգից հեռացնելու համար։ Անդրկովկասի վարչապետ՝ Չխենկելի։ Պատերազմ. նախարարի պաշտոնակատար՝ Օդիշելիձե»։

Սակայն, հակառակ, որ թուրքերի բոլոր պայմաններն ընդունվել էին, թուրք բանակը չդադարեցրեց զինվորական գործողությունները, և մեր զորքերը կռվով նահանջեցին մինչև Ալեքսանդրապոլ։ Ապր. 15-ին, հայկական բանակը ամբողջովին անցավ Ախուրյանի ձախ ափը՝ նախօրոք պայթեցնելով աջ ափի ամրությունները։

Քիչ հետո, ապր. 17-ին, Կարսից հեռացվեց և զոր. Դեմը իր ընկերների հետ, ինչպես նաև մնացած բնակչությունը։ Թուրքերը վճռականորեն մերժեցին Կարսի գույքից որևէ բան հանձնել։ Զինվորականներին ազատ թողին՝ դրա համար էլ պետք էր շնորհակալ լինել...

Կարսի կռիվներում ընկան շատ քաջ մարտիկներ։ Ապր. 9-ին, խիզախ գրոհի ժամանակ, սպանվեց սպա Սուրեն Թադևոսյանը՝ հայտնի հասարակական գործիչ Արշակ Թադևոսյանի որդին. ապր. 12-ին, Մազրայի մոտ, նահանջի ճանապարհը պաշտպանելիս, հերոսի մահով մեռավ Կարսի քաղաքագլխի որդին՝ կամավոր Գևորգ Նոհրատյանը։

Կարսի դեպքերի լուրը Թիֆլիսում ստացվեց միայն ապր. 11-ի կեսօրից հետո։ Հայկ. կորպուսի կոմիսար Ս. Մանասյանին մեծ դժվարությամբ հաջողվել էր ուղիղ հեռագրաթելի մոտ կանչել Սեյմի անդամ Ս. Վրացյանին ու հաղորդել Չխենկելիի հեռագրերի և ստեղծված կացության մասին, ինչպես նաև խնդրել, որ Ազգ. խորհուրդը միջոցներ ձեռք առնի՝ երկարաձգելու Կարսի պարպման ժամանակամիջոցը։

Այս տեղեկությունը ռումբի պես պայթեց հայկական շրջաններում։ Ազգային խորհուրդը գումարեց արտակարգ նիստ։ Խաչ. Կարճիկյանը և Ստ. Մամիկոնյանը անմիջապես հեռագրաթելով կապվեցին զոր. Նազարբեգյանի հետ՝ կամենալով փրկել Կարսը։ Նազարբեգյանի պատասխանը եղավ կարճ. այլևս ուշ է։ «Ես զինվորական նախարար Օդիշելիձեի միջոցով ստացա կառավարությունից բացորոշ հրաման՝ դադարեցնել Կարսի մոտ պատերազմական գործողությունները և թույլ տալ, որ թուրքական զորամասերը մինչև երկու վերստ մոտենան Կարսի ամրություններին. այժմ տեղի են ունենում բանակցություններ Կարսը պարպելու մասին»։

Կարսի պարպումի լուրը ահագին փոթորիկ առաջ բերեց և Սեյմի ու նորակազմ կառավարության շրջաններում։ Դաշնակցական նախարարներ Ա. Սահակյանը, Քաջազնունին ու Խատիսյանը՝ բողոքելով Չխենկելիի ապօրինի վարմունքի դեմ՝ հրաժարական տվին։ Դաշնակցական ֆրակցիան պահանջեց հեռացնել Չխենկելիին վարչապետությունից։ Նրա արարքը համարվում էր դավաճանություն. անհանդուրժելի էր դավաճանի վարչապետությունը։

Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան, երկար խորհրդակցություններից հետո, Ժորդանիայի ու Ծերեթելիի բերանով, պատասխանեց, որ ինքն ևս վրդովված է պատահածից, դատապարտում է Չխենկելիի վարմունքը, պատրաստ է վերացնել Չխենկելիի թեկնածությունը, բայց այդ դեպքում վարչապետությունը պետք է ստանձնե հայերից մեկը, օրինակ, Քաջազնունին։

Այս առաջարկի անհեթեթությունը պարզ էր ամենքի համար։ Ստեղծված պայմաններում ի՞նչ կարող էր անել հայ վարչապետը։ Նման քայլ միայն կփութացներ Անդրկովկասի քայքայումը, և Դաշնակցությունը, բնականաբար, հրաժարվեց այդ «պատվից»։ Հանգամանքները ստիպե-

ցին նրան համակերպվել նաև Չխենկելիի վարչապետությանը, որովհետև վրացիները բացե ի բաց մերժեցին ուրիշի թեկնածությունն առաջ քաշել. կա՛մ Չխենկելին, կա՛մ մենք կհրաժարվենք կառավարություն կազմելուց։

Չխենկելին մնաց կառավարության գլուխը և շարունակեց սկսած գործը։ Սեյմի որոշման հիման վրա նա մտավ Թուրքերի հետ նոր բանակցությունների մեջ, և, փոխադարձ համաձայնությամբ, որոշվեց հաշտության նոր խորհրդաժողովը նշանակել Բաթումում։ Կազմվեց Անդրկովկասյան նոր պատվիրակություն, այս անգամ փոքրաթիվ կազմով։ Պատվիրակության մեջ մտան՝ Ա. Չխենկելին՝ նախագահ, Ն. Նիկոլաձեն, Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին, Մ. Գաջինսկին, Խան-Խոյսկին և մի շարք խորհրդականներ ու քարտուղարներ՝ զոր. Օդիշելիձե, զոր. Ղորղանյան, Ռասուլ Զադե, Սաֆիքուրդսկի, Մ. Բունիաթյան, Ս. Վրացյան, Զ. Ավալով և ուրիշները։

Պատվիրակությունը Թիֆլիսից մեկնեց մայիսի 5-ին* և հաջորդ օրը, ուշ երեկոյան, արդեն Բաթումում էր։ Մայիսի 11-ին տեղի ունեցավ Բաթումի խորհրդաժողովի հանդիսավոր բացումը։

Ներկա էին Անդրկովկասյան պատվիրակությունը իր ամբողջ կազմով, Թուրքերի կողմից՝ Խալիլ բեյը, Վեհիբ փաշան, Նուսրեթ բեյը, Օրխան բեյը և այլն, Գերմանիայի կողմից՝ զոր. ֆոն Լոսովը, կոմս Շուլենբուրգը և Ο. ֆոն Վեզենդոկը։ Նիստի սկզբում դրվեց և Լեռնականների հանրապետության մասնակցության հարցը, և Հայդար բեգ Բամմատը ընդունվեց իբրև նրա պատվիրակ։

Ստանձնելով նախագահությունը՝ Խալիլ բեյը արտասանեց Թուրքերեն լեզվով մի ճառ, որով ողջունում էր «ազատության գեղեցիկ աստղի» ծագումը Կովկասի գլխին։ Չխենկելին պատասխանեց համապատասխան արտահայտություններով։

Նիստի գործնական մասում Չխենկելին Անդրկովկասյան պատվիրակության անունից հայտարարեց, որ բանակցություններին իբրև հիմք ընդունվում է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը։ Բայց Խալիլ բեյը վճռական կերպով մերժեց այդ տեսակետը։ Տրապիզոնի բանակցությունների խղումից ի վեր նոր դեպքեր էին պատահել, պատերազմ էր եղել Թուրքիայի և Անդրկովկասի միջև, արյուն էր հոսել, հետևաբար, անկարելի էր այլևս զոհանալ Տրապիզոնում ներկայացված պայմաններով։ Թուրքիան իրավունք էր համարում դնել նոր պահանջներ, որոնք ամփոփված են հաշտության նոր նախագծում։ Եվ որպեսզի բանակցությունները չձգձգվեն, Խալիլ բեյը տեղն ու տեղը հանձնեց Չխենկելիին կնքված մի ծրար, որի

* Սեյմի ապր. 13-ի օրենքով, ապր. 17 լույս 18-ի գիշերվանից մտցվեց նոր տոմար, և հետագա ժամանակագրությունը այլևս հաշվված է նոր տոմարով։

մեջ գտնվում էր նախագիծը «հաշտության և բարեկամության դաշնագրի Թուրքիայի և Անդրկովկասյան Հանրապետությունների համադաշնակցության միջև»։ Սրանով էլ վերջացավ խորհրդաժողովի առաջին և վերջին նիստը։

Հաշտության նախագիծը բաղկացած էր 12 հոդվածներից և 3 հավելվածներից և սարսափելի ծանր պայմաններ էր պարունակում ամբողջ Կովկասի, մանավանդ, Վրաստանի, բայց ավելի ևս Հայաստանի համար։ Վրաստանից առնվում էր Բաթումի շրջանը՝ նավահանգստով հանդերձ, Ախալցխայի գավառը։ Հայաստանից խլվում էին Ալեքսանդրապոլը, Ախալքալաքը, Շիրակի և Էջմիածնի գավառի մեծ մասը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլ—Կարս և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը։ Հայաստան փաստորեն չէր մնում. հայերին թողնվում էր հազիվ 11 000 քառ. վերստ լեռնոտ տարածություն Արագածի և Սևանի լճի միջև։ Հողային պայմաններից զատ դրվում էին և չափազանց ծանր տնտեսական, առևտրական, ռազմագիտական և այլ պահանջներ։

Այսպիսով, Թուրքիան հախուռն թափով մուտք էր գործում Կովկաս և իր ազդեցության տակ առնում Կովկասյան լեռնաշղթայից հարավ գտնվող բոլոր հողամասերը։ Կարս—Սուրմալու—Նախիջևան—Զանգեզուր—Ղարաբաղի վրայով միանում էր Պարսկական և Ռուսական Ազրբեջաններին, և Բաքվից նրա առջև բացվում էին շշմեցնող հեռանկարներ դեպի Անդրկասպյան Թուրք-Թուրանական ցեղերն ու Կենտրոնական Ասիայի իսլամական աշխարհը։ Էնվերների համիսլամական ցնորքները իրականություն էին դառնում...

Թուրքական պահանջները զարմանք ու զայրույթ առաջ բերին ո՛չ միայն վրացիների ու հայերի, այլև գերմանացիների մեջ։ Մայիսի 12-ին զոր. ֆոն Լոսովը հեռագրում էր իր կառավարությանը. «Թուրքական ամեն չափ ու սահման անցած պահանջները՝ անջատելու զուտ հայկական գավառները, որպիսիք են Ախալքալաքը, Ալեքսանդրապոլը և Երևանի նահանգի մասերը, աղաղակող կերպով խախտում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և նպատակ ունեն բնաջնջել հայերին Անդրկովկասում։ Այսօր երեկոյան Թուրքերը վերջնագիր ներկայացրին, որ թույլ տրվի իրենց զորքերին Ալեքսանդրապոլի վրայով անցնելու Ջուլֆա և այդ մասին ոչինչ չհաղորդեցին ինձ։ Ես բողոքեցի նման ընթացքի դեմ»*։

Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագիծը իրենց տրամադրելու պահանջը Թուրքերը հետապնդում էին շատ խիստ կերպով։ Եվ մինչ երկու պատվիրակությունների միջև սկսվեց օրեր տևող գրավոր վեճ Բրեստ-Լիտովսկի շուրջ, երկու կողմից կազմված մի հատուկ զինվորական հանձնախումբ քննում էր այս պահանջը։ Թուրքերը պնդում էին, որ երկաթուղին տրվի իրենց, որպեսզի օր առաջ զորք հասցնեն անգլիացիների

* I. Lepsius, Deutschlard Und Armenia, Berlin, 1919.

դեմ. Անդրկովկասի ներկայացուցիչները՝ զոր. Օդիշելիձեն և զոր. Ղորդանյանը հակառակում էին՝ առարկելով, որ այդ հարցը կարող է վճռվել միայն ընդհանուր դաշնագրի ստորագրությամբ։

Հուսահատված խաղաղ միջոցով երկաթուղին ստանալու մտքից՝ մայիսի 14 լույս 15-ի գիշերը թուրքերը ներկայացրին վերջնագիր, որ մայիսի 15-ի առավոտյան ժամը 7-ին Ալեքսանդրապոլը հանձնվի իրենց, և հայկական զորքերը քաշվեն 25 կիլոմետր դեպի արևելք։ Եվ առանց պատասխան ստանալու, մայիսի 15-ի առավոտյան ժամը 2-ին, Ալեքսանդրապոլի դեմ գործող թուրք զորքերի հրամանատարը վերջնագրի թուրքերեն պատճենը ուղարկեց Ալեքսանդրապոլի հրամանատարին՝ պահանջելով մինչև ժամը 6 դատարկել քաղաքը։ Հազիվ մինչև ժամը 6 ու կեսը կարելի եղավ թարգմանել թուղթը, այն ինչ ժամը 6-ից սկսվեց քաղաքի ռմբակոծումն ու թուրքերի հարձակումը։ Հայկական բանակը հանկարծակիի եկավ և շտապով նահանջեց։ Ալեքսանդրապոլն անցավ թուրքերի ձեռքը։

Հայկական զորքերի նահանջը, զոր. Նազարբեգյանի կարգադրությամբ, կատարվեց երկու ուղղությամբ. հայկական առաջին դիվիզիան և 2-րդ դիվիզիայի 7-րդ և 8-րդ գնդերը անցան դեպի Գյոք—Յողուշ—Բեքյանդ—Ավդիբեկ—Փամբ գյուղագիծը։ Ձիավոր բրիգադը, իբրև հետապահ, մնաց Զրախլու գյուղում։ Առաջին և երկրորդ բրիգադները 2-րդ ձիավոր գնդի հետ շարժվեցին Սարդարապատի ուղղությամբ՝ զորացնելու համար Երևանի զորամասը։ Անդրանիկին, որ մայիսի 1-ից ի վեր գրավում էր Գիվլլիի Բուլաղը, հրամայվեց պահպանել Ախալքալաք և Վորոնցովկա տանող ճանապարհները, սակայն, նա չմնաց այնտեղ և քաշվեց-գնաց Ջալալ-Օղլի։

Այսպիսով, տարածված լայն ճակատով, հայ զորքերը պաշտպանում էին հայկական շրջանները։ Թուրքերը քայլ առ քայլ առաջանում էին և մայիսի 22-ին գրավեցին Համամլու կայարանը, որով բացվում էր Երևանի ճանապարհը։ Երևանից շտապով նրանց դեմ Բաշ-Ապարան ուղարկվեց մի զորամաս Դրոյի գլխավորությամբ։ Բացի այդ, միջոցներ ձեռք առնվեցին ամրացնելու Ղարաքիլիսայի ճակատը։ Զոր. Նազարբեգյանը մի կոչ ուղղեց զորքին, որով դիմում էր նրա հայրենասիրական զգացմունքներին և հրավիրում կատարել իր պարտականությունները ժողովրդի հանդեպ։ Կարելի եղավ կանգնեցնել ու կարգի բերել նահանջող զորամասերը։ Հուսալքումը տեղ տվեց ոգևորության։

Զոր. Նազարբեգյանը օգտագործեց այս տրամադրությունը և մայիսի 23-ին տվեց հարձակման հրաման։ Նույն օրը Ղարաքիլիսայի մոտ տեղի ունեցավ հաջող ճակատամարտ. թուրքերը ջարդված՝ խուճապով քաշվեցին դեպի Համամլու։ Սակայն, թշնամին սպառնում էր մեր աջ թևին. Անդրանիկը հեռացել էր Ջալալ-Օղլիից դեպի Դսեղ՝ բանալով ահագին տարածություն թուրքերի առջև։

Տաք և մեզ համար հաջող հարձակողականը շարունակվեց և մայիսի 25 ու 26-ին։ Այդ երկու օրվա ընթացքին տեղի ունեցան համառ և արյունահեղ ճակատամարտեր։ Մայիսի 26-ի երեկոյան թշնամին քշված էր Գյադա-Մայմեխ սարից. հայերը գրավել էին Հաջի-Ղարա գյուղը, Բեղոբդալը։ Թուրքերը տվին ահագին զոհեր։

Ստանալով օժանդակ նոր ուժեր ու թնդանոթներ՝ մայիսի 27-ին թուրքերը դիմեցին հակահարձակման և արյունահեղ կռիվներից հետո նորից գրավեցին Բեղոբդալը։ Աջ թևից սպառնացող հարվածի պատճառով՝ ստիպված նահանջեցին և հայերի կենտրոնական ուժերը ու մայիսի 28-ին դիրքեր բռնեցին Բոզիգյուղ և Նիկիտինո գյուղերի մոտ՝ փակելով Երևանի ճանապարհը։ Անդրանիկը մայիսի 30-ին Դսեղից անցավ Դիլիջան։

Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայ զինվորը երևան բերեց ռազմական բարձր կարողություն և անսահման հայրենասիրություն։ Բազմաթիվ զոհեր տվեց նա։ Շատերը ընկան հերոսական մահով։ Դրանց մեջ էր թնդանոթային մարտկոցի հրամանատար հերոս Տեր-Մովսիսյանը։ Դրանց մեջ էր և Հայաստանի ապագա վարչապետ Հ. Օհանջանյանի անդրանիկ զավակը՝ Մոնիկը, որ մի խումբ գաղափարական ուսանողների հետ գտնվում էր առաջավոր դիրքերում, մասնակցել էր բազմաթիվ ճակատամարտերի, ստացել քաջության նշան և որ անհետ կորավ Ղարաքիլիսայի կռիվներում։

Ղարաքիլիսայի ճակատամարտը և նույն օրերին Սարդարապատ-Բաշ-Ապարանում տեղի ունեցող կռիվները ահագին տպավորություն թողեցին Բաթումում։ Դրանից հետո էր, որ Վեհիբ փաշան, էնվեր փաշայի կողմից զինակցություն առաջարկեց հայ պատգամավորներին։

***

Ղարաքիլիսան գրավելուց հետո, թուրքերը արշավեցին դեպի հյուսիս՝ Թիֆլիսի ուղղությամբ։ Միաժամանակ ոտքի ելավ և Սադախլու—Սանդարի շրջանի մահմեդականությունը, որ կտրեց երկաթուղային հաղորդակցությունը և թալանում ու կոտորում էր փախստական հայերին։ Մայիսի 22-ին Անդրկ. կառավարությունը որոշեց խնդրել Հ. Հ. Դաշնակցության և Մուսավաթին՝ ուղարկել երեքական ներկայացուցիչներ այդ շրջանի թուրքերին հանգստացնելու համար, բայց ալեկոծված տարերքը զսպելու հնարավորություն չէր մնացել այլևս։ Հարավից ջարդում ու կոտորում էին թուրք ասկյարները, հյուսիսից՝ զինված թուրք գյուղացիները։ Հայ գաղթականությունն ու նահանջող զորամասերը թալանվում ու կոտորվում էին ամեն կողմ։

Թուրքերի հյուսիս շարժվելու հետևանքով անասելի իրարանցում առաջ եկավ և Թիֆլիսում՝ վրաց և հայկական շրջաններում։ Վրացիները սկսեցին պատրաստվել դիմադրության։ Թիֆլիսը հայտարարվեց պաշար-

ման վիճակում. զորաշարժի ենթարկվեց կարմիր գվարդիան։ Քաղաքի շուրջը, բարձունքների վրա, դիրքեր փորվեցին, նշանակվեցին պահակներ։

Անտանելին, սակայն, հայ ժողովրդի, Թիֆլիսում խռնված կարսեցի, շիրակեցի, արևմտահայ բազմահազար գաղթականության վիճակն էր։ Մանավանդ, շատ էին ջղայնանում արևմտահայերը, որոնք, հասկանալի պատճառներով, ավելի էին սարսափում թուրքական արշավից։ Նրանց դրությունը ահռելի էր։ Ի՞նչ անել։ Ո՞ւր գնալ։ Եվ ահա ծայր տվեց մի խուճապային փախուստ դեպի Հյուսիսային Կովկաս։ Հազարավոր մարդիկ, ծեր ու երեխա, գյուղացի ու քաղաքացի, աշխատավոր ու մտավորական — ով ինչով կարող էր— խուժեցին դեպի ռազմավիրական ճանապարհը։ Հոսանքի մի ծայրը հասել էր արդեն Վլադիկավկազ ու Արմավիր, մինչ մյուսը դեռ նոր էր դուրս գալիս Թիֆլիսից։ Օրեր անընդհատ, Թիֆլիսից շարժվում էին հազարավոր սայլեր, կառքեր, ինքնաշարժներ, դրաստներ, ֆուրգոններ՝ բեռնավորված տնային իրերով, կանանցով ու երեխաներով։ Շատերը իրենց ունեցվածքը չնչին գնով ծախում էին Թիֆլիսի փողոցներում՝ գորգ, կապերտ, բարձ, անկողին, վերմակ, կարասներ, ամանեղեն... Վլադիկավկազ գնացող փոխադրության միջոցների սակագինը բարձրանում էր տասնյակ ու հարյուրավոր անգամներ։ Մի մարդու տեղը ֆուրգոնում արժեր մինչև 10 000 ռուբլի։ Մարդիկ վերջին կոպեկն էին տալիս, միայն թե կարողանային հեռանալ։

Թիֆլիսից Հյուսիսային Կովկաս մեկնեց և Ապահովության խորհուրդը ամբողջ կազմով։ Այս պարագան ավելի ևս սաստկացրեց ընդհանուր խուճապը։ Գաղթը կատարվում էր անկազմակերպ, տարերային կերպով։ Պարենավորման գործը ճանապարհին չափազանց անբավարար էր, ապահովություն չկար, և հարձակումները գաղթականների վրա սովորական էին։ Այսպես, մայիսի 23-ին Լարսից հեռագրում էին Հ. ազգ. խորհրդին. «Այսօր ինգուշները Նոր Լարս կայարանում պահեցին ավելի քան 10 000 գաղթականներ, թույլ չտվին գնալու Վլադիկավկազ և վերադարձրին Կազբեկ, ուր նրանց սպասում է սովն ու ցուրտը»։

Մայիսի 25-ին Ազգ. խորհրդի ներկայացուցիչը հեռագրում էր Դուշեթից. «Հարյուր հազար սոված ու մերկ գաղթականներ հավաքվել են Մցխեթի, Դուշեթի միջև և ավելի հեռուները։ Ո՛չ մի օգնություն և ո՛չ մի տեղից։ Փախստականների մեջ սկսվում են հիվանդություններ։ Կան մահվան դեպքեր։ Գիշերելու տեղ չկա, և ամենքը գիշերում են բաց երկնքի տակ, ցրտին։ Չկա ո՛չ հաց, ո՛չ եռացրած ջուր. չկան սննդատու կայաններ՝ ամենքը թողնված են ճակատագրի կամքին։ Բժշկական օգնություն էլ չկա։ Մարդիկ հազարներով գնում են ոտքով, առանց օգնության որևէ հույսի... կացությունը հուսահատական է»։

Թե ինչ կլիներ հետևանքը այս տնաքանդ փախուստի, դժվար է ասել, եթե մեջտեղ չգար արտաքին միջամտություն. մայիսի 24-ից Թերեքի ժողովրդական կառավարությունը փակեց գաղթականների առջև Հյուսիսային Կովկասի ճանապարհը, որով հոսանքը կանգ առավ, և գաղթել ցանկացողների մեծ մասը մնաց Անդրկովկասում։ Թուրքական յաթաղանից ազատվածները Հյուս. Կովկասում ընկան բոլշևիկյան դժոխքը. այնտեղ նրանց սպասում էին նոր զրկանքներ, նոր տառապանքներ ու նոր հիասթափություններ։

ԳԼՈՒԽ ԺԲ

ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔԵՎ

Ալեքսանդրապոլի անկումից հետո, հայկական զորքերի մի մասը նահանջեց դեպի Սարդարապատ, Երևանի ուղղությամբ։ Այստեղ ավելի ուշ տեղի էին ունենալու դեպքեր, որոնք բախտորոշ դեր էին կատարելու հայ ժողովրդի կյանքում։ Նախքան այդ դեպքերին անցնելը, սակայն, անհրաժեշտ է կանգ առնել ընդհանրապես Արարատյան դաշտի անց ու դարձերի վրա՝ Արարատյան դաշտի, որը, շատ չանցած, կազմեց Հայաստանի Հանրապետության պատվանդանը։

Ռուսական հեղափոխությունը Երևանում էլ ընդունվեց ցնծությամբ։ Հին իշխանությունը փոխարինվեց նորով, և նահանգի կառավարությունը անցավ նահանգական գործադիր կոմիտեին՝ նախագահությամբ առաջին շրջանում՝ Սմբ. Խաչատրյանի, ապա՝ Սահ. Թորոսյանի, և Զինվորական խորհրդի գործադիր կոմիտեին՝ նախագահ Ստարցև։ Առաջինը գերազանցապես զբաղվում էր քաղաքացիական գործերով, երկրորդը՝ զինվորական։ Քանի ճակատը կայուն էր, գերակշռող դերը պատկանում էր Զինվ. խորհրդին։ Այս երկու մարմինները գործում էին համերաշխ՝ աշխատելով ամուր պահել հեղափոխական կարգն ու ազգամիջյան խաղաղությունը և նպաստելով միաժամանակ ռազմաճակատի ուժեղացմանը։ Հունիս ամսին կազմվեց և Հայ զինվորական միությունը, բժ. Հ. Մելիքյանի նախագահությամբ, որ բավական կարևոր դեր կատարեց հետագայում։

Հեղափոխության առաջին ամիսներին Երևան քաղաքի և նահանգի կյանքը ընթանում էր, համեմատաբար, խաղաղ*։ Տիրում էր համերաշխություն հայերի և թուրքերի միջև. երկու ազգերի մտավորական ներկայացուցիչները գործում էին ձեռք ձեռքի։ Սակայն, հետզհետե դրությունը սկսեց փոխվել. թուրքերի և թուրք ազգայնականների գրգռումով այստեղ ու այնտեղ սկսեցին գլուխ բարձրացնել քրդերը, հարձակվել ու

* Առ 1 հունվ. 1916 թ., պետական վիճակագրության համաձայն, Երևանի նահանգում ապրում էր 1 120 242 բնակիչ, որից հայեր՝ 669 871, թուրքեր՝ 373 582, քրդեր՝ 36 508, ռուսներ՝ 16 103, եզդիներ՝ 12 624 և այլն։ Երևան քաղաքում հաշվվում էր 51 286 բնակիչ, որից 37 204 հայ, 12 557 թուրք, մնացածը՝ ռուս, վրացի, հրեա և այլն («Кавк. Календарь», 1917 г., стр. 214—221)։

թալանել երկաթուղին և խճուղիներով անցնող պարենակիր սայլերը, կոչոչտել ու սպանել հայերին։ Սկսեցին շարժվել և թուրք գյուղերը, մանավանդ ռազմաճակատ տանող ճանապարհների և հանդուցային կետերի վրա։

Մյուս կողմից, բոլշևիկների քարոզչության ազդեցության տակ ծայր տվին զինվորական անկարգություններ ճակատում ու թիկունքում։ Հունիս ամսին Երևանի զինվորները փորձ արին կողոպտելու քաղաքի շուկան. թալանվեցին մի քանի խանութներ, և հազիվ հաջողվեց աղետի առաջն առնել։ Նման, տեղական բնույթ կրող խռովություններ եղան և ուրիշ վայրերում։

Սակայն, դրությունը սկսեց սրվել և սպառնական բնույթ ստանալ 1917 թվի աշնանը, մանավանդ, հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, երբ բոլշևիկները քայքայեցին ռազմաճակատը և ռուս զորքը քաշեցին դեպի թիկունք, որի պատճառով ճակատի պաշտպանության հոգսը ամբողջապես ծանրացավ հայերի վրա։ Իբրև հետևանք այս դրության, իշխանությունը Երևանի նահանգում հետզհետե անցավ հայերին, ռուս զորամասերին փոխարինեցին հայկական մասեր, զանազան կետերում սկսվեցին կազմվել նոր զորամասեր և այլն։ Քաղաքացիական իշխանությունը ամփոփվեց Երևանի Հայկ. ազգային խորհրդի ձեռքը, իսկ զինվորական գործերը վարում էր Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից նշանակված հայկական զորքերի կոմիսար Դրոն, որի գլխավոր հոգսն էր զորամասերի առողջացումն ու մարտունակության բարձրացումը։

Երևանի Ազգ. խորհուրդը, որ կազմված էր Թիֆլիսի Հայոց ազգ. խորհրդի ձևով՝ կուսակցությունների ներկայացուցիչներից, իր գոյության սկզբի շրջանում, անգույն և անջիղ մի մարմին էր, որ գնում էր դեպքերի հոսանքի հետևից։ Ինքնուրույն նախաձեռնությունից զուրկ՝ շարժվում էր Թիֆլիսից եկած հրահանգներով։ Նրա մեջ մտնում էին թեմական առաջնորդ Խորեն եպ.-ը, Մ. Մուսինյանը (անկ.), Գր. Տեր-Խաչատրյանը (ժող.), Դ. Զուբյանը (ս.-հ.), բժ. Գր. Տեր-Հակոբյանը (ս.-հ.), Մ. Հարությունյանը (դաշն.), Ա. Աստվածատրյանը (դաշն.), Թ. Նիկողոսյանը (դաշն.) և այլն։

Երևանի Ազգ. խորհուրդը կյանք ստացավ միայն 1917 թ. դեկտեմբերի վերջերին, երբ Թիֆլիսից եկավ Հայ ազգ. խորհրդի լիազոր ներկայացուցիչ Արամը։ Ազգ. խորհրդի առաջին իսկ նիստում նա տվեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրության ու Թիֆլիսում տիրող մթնոլորտի մասին և հայտարարեց, որ ո՛չ մի տեղից չկա և ո՛չ մի հույս. պետք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը։ Եվ առաջարկեց անմիջապես վերակազմել Ազգ. խորհուրդը, ընտրել փոքրակազմ գլուխաշարժ մի մարմին՝ տալով նրան արտակարգ իրավունք գործելու Ազգային խորհրդի գծած սկզբունքների սահմանում։

Ազգ. խորհուրդը միաձայնությամբ ընդունեց Արամի առաջարկը և ընտրեց Ազգ. խորհրդի իրավունքներով մի մարմին՝ Հատուկ կոմիտե՝ տալով նրան երեք ամսով գործելու կատարյալ ազատություն։ Երեք ամսից հետո նա զեկուցում էր ներկայացնելու Ազգ. խորհրդին, և վերջինս, ի հարկին, կարող էր երկարաձգել նրա լիազորությունները կամ լուծել։ Հատուկ կոմիտեի մեջ ընտրվեցին Երևանում մեծ հարգանք վայելող հասարակական գործիչ Մկրտիչ Մուսինյանը, որ այն ժամանակ ո՛չ մի կուսակցության չէր պատկանում և միայն 1919 թվին մտավ Հ. Հ. Դաշնակցության շարքերը, Արշալույս Աստվածատրյանը, Սահակ Թորոսյանը, իբրև նահանգական կոմիսար, Հ. զինվ. միության ներկայացուցիչը և Արամը ի պաշտոնե։ Հատուկ կոմիտեի նախագահ ընտրվեց Մ. Մուսինյանը, քարտուղարի պաշտոնով հրավիրվեց Սարգ. Օհանջանյանը։ Հատուկ կոմիտեն դարձավ Երևանի փաստական իշխանությունը։

Հատուկ կոմիտեի, ինչպես և նրա հետ համերաշխ գործող զինվորական կոմիսար Դրոյի ու Երևանի նահանգի հայկական զորքերի ընդհանուր հրամանատար զոր. Սիլիկյանի գլխավոր մտահոգությունը ռազմաճակատի ամրացումն ու թիկունքի անդորրության պահպանումն էր։ Այդ նպատակով, հենց առաջին նիստում, Հատուկ կոմիտեն որոշեց զենքի տակ առնել մինչև 28 տարեկան բոլոր զինապարտներին։ Այդ իմաստով Արամը գրեց մի կոչ, որ եղավ Հատուկ կոմիտեի № 1 կոչը։ Նրա մեջ բացատրվում էր կացության լրջությունը և, հանուն Ազգ. խորհրդի, հրավեր ուղղվում զինապարտներին՝ երեք օրվա պաշարով ներկայանալ տեղական զինվորական կենտրոնները։ Ժողովուրդը արտակարգ վստահությամբ արձագանք տվեց իրեն ուղղված կոչին, և, հակառակ ծննդյան տոներին, ամենքը շտապեցին ներկայանալ իշխանությանը։

Միաժամանակ, Հատուկ կոմիտեն կազմակերպում էր թիկունքը, աշխատում էր ապահովել ճանապարհները և հաղորդակցության միջոցները, ինչպես նաև կարգավորել ինքնապաշտպանության գործը։ Այս նպատակով կազմվում և որոշ վայրերում դասավորվում էին մարտական խմբեր ու ռազմամթերք և ջանք էր թափվում, խաղաղ միջոցներով, առաջն առնելու հանրային անդորրության խանգարման։ Այս տեսակետից, խոշոր նշանակություն էր տրվում հայ և թուրք ղեկավարների համերաշխությանը և հարևան երկու ժողովուրդների խաղաղ կենակցությանը։ Թե՛ Հատուկ կոմիտեի, թե՛ նահանգական կոմիսարի և թե զինվ. կոմիսարի գործունեությունը զարգանում էր այդ ուղղությամբ, մի բան, որ շատ էր դժվար ա՛յն ժամանակվա պայմաններում։ Անսաստողների դեմ առնվում էին կտրուկ ու խիստ միջոցներ։

Հեշտ չէր և ռազմաճակատի պաշտպանության և հայկական զորամասերի կազմակերպության ու առաջացման գործը։ Դրոն նոր էր նշանակված հայկական զորքերի կոմիսար, երբ ճակատի հայկական զորամասերից սկսեցին Թիֆլիս հասնել պատվիրակներ՝ խնդրելու, որ իրենց

մասերը հետ քաշեն թիկունք. չէին ուզում մնալ առաջավոր դիրքերում։ Զորամասերի ներկայացուցիչները իրենց պահանջը պատճառաբանում էին նախ՝ ընդհանուր բարոյալքումով և երկրորդ նրանով, որ միայն հայկական ուժերով անհնար է պաշտպանել ռուս բանակի լքած ընդարձակ ճակատը։ Եվ, իրոք, նրանց ասածի մեջ կար որոշ իմաստ. հայկական ռազմաճակատը այդ օրերին երկարում էր Սև ծովից մինչև Վասպուրական, որի վրա 1917 թ. վերջերին, կանգնած էին 200 000 հետևակ զինվորներ և 30 գունդ ձիավոր համապատասխան հրետանիով և մոտ 120 000 հոգիանոց թիկունքային մասերով։ Այդ ուժերը այժմ պետք է փոխարինվեին հայկական նորակազմ փոքրաթիվ մասերով։

Դրոն գործի անցնելուց առաջ, կազմել էր մի ծրագիր, որով առաջարկում էր կարճեցնել ռազմաճակատը. գրավված վայրերի ժողովուրդը և պաշարից այն մասը, որ հնարավոր է, տեղափոխել Կովկաս, մնացած պաշարը ոչնչացնել և զորքերը հետ քաշել ու գրավել մոտավորապես Զիվին—Կարադերբենտ-Գլբչ Գյադուկ—Թափառիզ գիծը, ծայրահեղ դեպքում և Մակուն՝ Ալաշկերտի երկաթուղին պահելու նպատակով։ Դրոն համոզված էր, որ դրանով առաջը կառնվի ճակատի զորամասերի քայքայման և օր ավուր աճող դասալքության, իսկ մյուս կողմից, կուժեղացվի Կարսը։ Բացի այդ, նա առաջարկում էր կազմել մի բրիգադ Դիլիջանի ուղղությամբ, որպեսզի ապագայում, երբ ճակատի գործերը անհաջող գնան, կարելի լինի շարժվել Գանձակի և Ղարաբաղի ուղղությամբ և միանալով Բաքվին՝ ապահովել հայ ժողովրդի գեթ մարդկային գոյությունը։

Այս առաջարկությունների շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանություններ Ազգային խորհրդի և Ապահովության խորհրդի նիստերում։ Դեմ արտահայտվեցին, ո՛չ միայն քաղաքացիական գործիչները, ինչպես Ստ. Մամիկոնյանը, Ն. Աղբալյանը, Ա. Ահարոնյանը, Ռ. Տեր-Մինասյանը և այլն, այլև զոր. Նազարբեգյանի ու զոր. Ղորղանյանի նման զինվորական հեղինակություններ, որոնք կարծում էին, թե էրզրումի հանձնումը հոգեբանական ահագին հարված կլինի հայ ժողովրդի ու հայկական բանակի համար։ Դրոն առարկում էր, թե էրզրումը հանձնումը անխուսափելի է, թշնամին զենքի ուժով կխլի մեզանից, և այդ ավելի վատ հետևանքներ կունենա։

Թիֆլիսից Դրոն անցավ Երևան, ուր այդ օրերին կազմակերպվում էր Հայկական կորպուսի մեկ դիվիզիան, որի հրամանատար նշանակված էր զոր. Սիլիկյանը։ Վերջինիս օգնական և բրիգադայի հրամանատար էր զոր. Դանիել բեգ Փիրումյանը։ Երևանի նահանգում էին գտնվում և Պարսկաստանից քաշված 4-րդ գունդը հրամանատարությամբ գնդ. Հովսեփյանի (Էջմիածնում), 6-րդ գունդը՝ հրամ. գնդ. Մելիք-Մուրադյանի (Աշտարակ), 3-րդ գունդը՝ հրամանատարությամբ գնդ. Հովսեփյանի (Եղբայրը) Դիլիջանում։ Այս վերջինս հետո փոխադրվեց Թիֆ-

լիս։ Գնդերում իշխում էին զինվորական կոմիտեները. բոլշևիկյան ոգին տիրող էր նրանց մեջ։ Ամեն օր պահանջներ էին ներկայացնում։

Թե զորամասերի մեջ տիրող անիշխանական տրամադրության վերջ տալու և թե նահանգում ծայր տված անկարգությունները զսպելու նպատակով Արամն ու Դրոն անհրաժեշտ գտան ստեղծել առողջ զինվորական մի կորիզ, որի վրա հենված կարողանային երկրի մաքրագործման ու խաղաղության գործը դնել իրական հիմքերի վրա։ Այդ նպատակով Դրոյին հանձնարարվեց կազմել մի հետևակ բրիգադ և մի ձիավոր դիվիզիոն։ Դրոն իսկույն գործի կանչեց հմուտ խմբապետներ Բաշ Գառնեցի Մարտիրոսին, Խոսրով Եղիազարյանին և հանձնարարեց նրանց, ստանձնել ռուսների թողած 800 ձիերը, ձեռնարկել կամավորների հավաքը։ Երկու օրվա ընթացքում հավաքվեցին ավելի քան 200 զինվորներ, մեծ մասամբ կամավորական 2-րդ գնդի նախկին մարտիկներից։ Միաժամանակ կոչ ուղղվեց սուրմալուցիներին, և ահա դեպի Երևան շարժվեցին զինվորներ ու սպաներ սպա Սահակյանի ու սպա Շավարշյանի ղեկավարության տակ։ Մի շաբաթվա մեջ կազմվեց 6 վաշտ հետևակ՝ պարտիզանական գնդի, յուրաքանչյուր վաշտը 200 սվին, և երկու ձիավոր հարյուրյակ՝ Խոսրովի ու Մարտիրոսի, որոնցից առաջինը ուղարկվեց Դավալու, վերջինը՝ Ալի Ղըզըլ, իսկ վաշտերը հատկացվեցին երկաթուղու պաշտպանության։

Գնդ. Զալինյանին հանձնարարվեց՝ ընդունելով 2-րդ սահմանապահ գնդի Քանաքեռում թողած գույքը, ձիերն ու ռուս սպաների մի մասին՝ կազմակերպել մի ձիավոր գունդ։ Այդ ռուս սպաների մեջ էր և գնդ. Կորոլկովը, որը նշանակվեց պարտիզանական գնդի ձիավոր դիվիզիոնի հրամանատար և կարգադրություն ստացավ կազմելու 3-րդ հարյուրյակը սպա Ֆիրումյանի հրամանատարության տակ։ Մի ուրիշ սպա՝ փոխգնդ. Պերեկրեստովը նշանակվեց հրամանատար պարտիզանական հետևակ գնդի, որի մեջ պաշտոն ստացան և իրենց քաջությամբ թուրքական ճակատում աչքի ընկած ուրիշ 10 ռուս սպաներ։ 1918 թ. հունվարի կեսին ջոկատը արդեն պատրաստ էր՝ 3 գումարտակներով։

Մինչ այսպես, Ազգ. խորհուրդն ու զինվորական իշխանությունները կազմակերպում ու կարգավորում էին իշխանությունն ու հայկական զորամասերը, կացությունը հետզհետե սկսում էր բարդանալ ու խճճվել։ Մի կողմից՝ բոլշևիկների գործունեությունը, մյուս կողմից՝ ռազմաճակատի մերկացում, երրորդ կողմից՝ կովկասյան մահմեդականների հակապետական շարժումներ։ Եվ, վերջապես, թուրք գործակալներ, որոնք վխտում էին ամեն կողմ և ոտքի հանում Կովկասի մահմեդականներին՝ ռուսների և հայերի դեմ՝ նպատակ ունենալով փակել ռազմագիտական ճանապարհները, կտրել հաղորդակցության միջոցները և այդպիսով դյուրացնել թուրք բանակի հաղթանակը։ Արդեն 1918 թ. հունվարից սկսած Երևանյան նահանգը գրեթե ամբողջապես թատերաբեմ էր դարձել մահմեդական խռովությունների։ Զուգընթացաբար թրքական շարժումներ էին տեղի ունենում նաև Կարսի, Թիֆլիսի ու Գանձակի նահանգներում՝ բոլոր այն վայրերում, որոնք որևէ կապ ունեին ճակատի պաշտպանության հետ։

Պարզելու համար այն օրերի դժոխային կացությունը՝ առաջ բերենք մի քանի նմուշներ բազմաթիվ նյութերից։ Այսպես, հունվ. 14-ին Իգդիրից հեռագրում են, որ քրդերը հարձակվել են ռազմաճակատ գնացող պետական պարենատար խմբի վրա՝ Կարա—Օրգով ճանապարհին, տարել են մեծ քանակությամբ հացի պաշար՝ բարձած ուղտերով։ Սպանված են շատ զինվորներ։ Բայազետ—Մուսուն—էջմիածին ճանապարհները փակվել են. ամեն օր տեղի էին ունենում հարձակումներ, սպանություն ու կողոպուտ։ Ալի-Ղըզըլ գյուղը տեղափոխվում է Ղամարլու՝ ազատվելու համար պաշարող թրքական ու քրդական հրոսախմբերից։

Հունվ. 20-ին Զուլֆայից հեռագրում են Անդրկ. կոմիսարիատին. «Դրությունը Զուլֆայում սպառնական է. ավերի ու արյունի են ենթակա ամենքը. երկաթուղային ծառայողները խնդրում են փրկել իրենց ընտանիքների կյանքը։ Ամեն օր հրացանաձգություն է տեղի ունենում. կան սպանվածներ ու վիրավորներ։ Ազգային թշնամությունը սուր բնույթ է ստացել։ Ամենքը ենթակա են վտանգի։ Ռուս զինվոր համարյա չկա. բոլորը գնացել են։ Շուտափույթ կարգադրություն պետք է անել փոստը Ալեքսանդրապոլ կամ Թիֆլիս փոխադրելու համար, հակառակ դեպքում բոլոր ծառայողները կփախչեն»։

Հունվ. 29-ին հեռագրում են Երևանից. «Կացությունն օրըստօրե վատթարանում է, որովհետև քրդերն ու թուրքերը, առաջվա պես, խիստ գրգռիչ կերպով են պահում իրենց։ Հրացանազարկ են անում գնացքները։ Հարձակվում են պարենակիր խմբերի և անհատ ճամփորդների վրա։ Ներկայումս նրանք փորձում են շրջապատել Ռեհանլու գյուղը, որի շուրջը փորվում են խրամատներ։ Զորքի և հրոսախմբերի միջև տեղի ունեցած ընդհարումների ժամանակ առայժմ սպանված են 2 սպա և 11 զինվոր. վիրավորված են 7 հոգի, անհետ կորած՝ 3-ը։ Բնակիչներից սպանված է 34 հոգի, վիրավորված՝ 10։ Շահթախթից եկող 400 ֆուրգոնոց պարենակիր խումբը Խանլուխլարի մոտ ենթարկվեց հարձակման, կան սպանվածներ և վիրավորներ։ Քրդերն ու թուրքերն, ըստ երևույթին, ձգտում են անգործության մատնել երկաթուղին։ Այս օրերս փորձ է եղել Արարատ կայարանի մոտ կամուրջն այրելու։ Դրությունը երթալով բարդանում է շրջանում»։

Փետր. 2-ին մոտ 3000 զինված թուրքեր կանգնեցրին Նորաշենից Շահթախթ գնացող փոստատար գնացքը։ Գնացքում եղած 11 հայ զինվորները դուրս թռան վագոնից և անցնելով շոգեշարժի վրա՝ պահանջեցին առաջ շարժվել։ Զինվորների և թուրքերի միջև սկսվեց տաք հրա-

ցանաձգություն։ Նույն միջոցին Ղամարլուից դեպի Նորաշեն դուրս եկավ հայ զինվորներով բեռնավորված մի գնացք, որ անտեղյակ էր Նորաշենում կատարվող դեպքին։ Նորաշենի մոտ թուրքերը առաջ բերին գնացքի խորտակում. շոգեշարժն ու վեց վագոններ ջարդվեցին։ Թուրք խուժանը հարձակվեց երկու գնացքների վրա և սկսեց թալանել։ Եղան բազմաթիվ վիրավորներ ու սպանվածներ։ Գնացքում եղած ռուսներին ու վրացիներին ձեռք չտվին։ Խորտակված գնացքից թուրքերը տարան 1000 հրացան, մեծ քանակությամբ փամփուշտ։ Գերի առնվեցին 5—600 հայեր։ Հաջորդ օրը, փետր. 3-ին, հազարավոր զինված թուրքեր Նորաշենում շրջապատեցին Արազդայան կայարանից եկող № 25 մարդատար գնացքը, թալանեցին ամբողջը, կողոպտեցին կայարանի պետի գրասենյակն ու ճանապարհի վերաքննիչին և մորթոտեցին գնացքում ու կայարանում եղած բոլոր հայերին։

Փետր. 7-ին հաղորդակցության պետ Վեքիլովը հեռագրում է Թիֆլիս, որ ինքը Շահթախթ է եղել և վերադարձել է մեծ դժվարությամբ՝ զինվորական գնացքի հետ։ Ճանապարհի վրա հեռագիրը չի գործում, կամուրջները քանդված են, գիծը բռնված է քրդերով ու թուրքերով, Ուլուխանլուում բոլոր տներն ու շինությունները այրվում են։

Նույն մոայլ տեղեկությունները և Ալեքսանդրապոլից, փետր. 4-ին. «Ջուլֆա—Երևան գծի բոլոր գնացքներն անխտիր ենթարկվում են թալանի, հայ ճանապարհորդներին սպանում կամ մորթում են։ Թուրքերը շատ լավ զինված, կազմ ու պատրաստ են. Ալեքսանդրապոլից Երևան, Նախիջևան կամ թե այն կողմից դեպի Ալեքսանդրապոլ ո՛չ մի գնացք չեն թողնում։ Չկա ո՛չ մի զինվորական ուժ, իսկ խուժանի սանձարձակությունը քանի գնում մեծ չափերի է հասնում։ Քաղաքում ժողովուրդը խիստ զրգռված, հուզված է այս բոլորի դեմ. անասելի իրարանցում է տիրում հենց կայարանում։ Եկել են և գալիս են բազմաթիվ զինվորականներ, որոնք անցնելու են Նախիջևան, Երևան, բայց ճանապարհ չի նելու պատճառով մնում են կայարանում»։

Փետր. 15-ին Ալեքսանդրապոլի մոտի Մոլլա-Մուսա գյուղի բնակիչները հարձակվեցին իրենց մոտ եկող պատգամավորության վրա, սպանեցին զինվորական խորհրդի ներկայացուցիչ՝ համակրելի հասարակական գործիչ Ասրիբեգյանին (սոց.-դեմ.) և ուրիշ վեց հոգու ու վիրավորեցին վեց հոգի։ Այս դեպքը ահագին հուզում առաջ բերեց. Մոլլա-Մուսա գյուղը ենթարկվեց թնդանոթաձգության, կայարանում գտնվող 60 թուրքերը տարվեցին քաղաքից դուրս ու կոտորվեցին, թրքական թաղը պաշարվեց զրգռված ամբոխի կողմից և փրկվեց միայն դաշնակցականների ջանքերով։

Փետր. 19-ին Երևանի նահանգային կոմիսար Ս. Թորոսյանը ուղիղ հեռագրաթելով տեղեկագրում է Թիֆլիս. «Պաշտոնապես ինձ հաղորդել են հետևյալը. փետր. 16-ին քրդերը Սուրմալու գավառի ջալալցիների և

տեղական թուրքերի հետ հարձակվեցին Ղամարլուի վրա, որտեղ կանգնած են հայկական զորամասեր։ Փետր. 17-ի առավոտյան այնտեղ տեղի ունեցավ ընդհարում։ Ազդեցիկ թուրքերից կազմակերպեցի հաշտարար պատվիրակություն։ Նրանք մեկնեցին Ղամարլու, բայց 17-ի գիշերը գավառամասի կոմիսարը զեկուցեց, որ թուրքերի և հայ զինվորների միջև տեղի է ունենում հրացանաձգություն. երկու կողմից էլ շատ զոհեր կան։ Նույն գիշերը Դավալուից ստացվել են հեռագրեր, որոնք հայտնում են, որ Ռեազլու գյուղը շրջապատված է թուրքերով... Պատգամավորները տեղ չհասան, որովհետև Աղհամզալուի մոտ զինված թուրքերը կտրել էին ճանապարհը և թույլ չէին տվել առաջ գնալ։ Աղհամզալուի մոտ կանգ էին առել նաև զորամասեր, որոնք առաջ էին շարժվում շտաբի հրամանով։ Երեկ Երևանից Ղամարլուի ուղղությամբ մեկնեցին զորամասեր։ Աղհամզալուի մոտ նրանց կանգնեցրել էին խճուղուց քիչ հեռու խրամատներ մտած թուրքերը։ Այդտեղ զորամասերը բռնվեցին կռվի։ Թուրքերը Ուլուխանլուից օգնություն ստացան։ Զորամասը շարժվեց առաջ և փախցրեց նրանց ու ստիպված եղավ իր գործողությունները ուղղել Ուլուխանլուի դեմ»։

Մահմեդական շարժումները ստացել էին տարերային բնույթ. ամեն տեղ կռիվ էր. հարձակվում էին թուրքերն ու քրդերը. պաշտպանվում՝ հայ զորամասերն ու ինքնապաշտպանության խմբերը։ Երկաթուղին հայերի համար կտրված էր. գնացքից հանում էին հայ ճամփորդներին և ամենքի աչքի առջև մորթում։ Դավալուն կտրվել էր Երևանից. հունվ. 20-ին, մի ճակատամարտում, այնտեղ սպանվել էր Խոսրովը, և հարյուրյակն ու գյուղի բնակչությունը պաշարվել էին։ Ալի Ղըզըլը նույնպես շրջապատված էր թշնամիներով, և Մարտիրոսի հարյուրյակը կտրվել էր կենտրոնից։ Շարուր—Նախիջևանի ամբողջ գավառում կռիվներ էին տեղի ունենում թուրքերի և հայերի միջև։ Փակվեց նույնիսկ Ելենովկա—Նոր Բայազետ ճանապարհը, ուր հազիվ 6—7 թուրք գյուղ կար, և Շուշու գնդի մասերը, Հաջի-Մուխան գյուղի մոտ ենթարկվեցին հարձակման դարանամուտ թուրքերի կողմից, որոնք սպանեցին 70 հայ զինվորներ ու մասնավոր ճամփորդներ։ Սուրմալուի խճուղին կտրված էր, և կապը Երևանի հետ պահվում էր հին ճանապարհով, էվջիլարի վրայով։ Գնացքները հարձակման էին ենթարկվում։ Եվ Սարդարապատ—Ալագյոզի շրջանում, ապրանքատար մի գնացքի պաշտպանության ժամանակ, հերոսական մահով մեռավ սպա Շավարշյանը մի խումբ զինվորների հետ։

Խռովությունները նահանգից աստիճանաբար մոտենում էին և քաղաքին. Ջանգիբասարը, 7—10 կիլոմետր Երևանից, գրգռումի և ըմբոստությունների, ավազակային հարձակումների հենց էր։ Ուլուխանլու կայարանում հայերին դուրս էին բերում վագոններից ու գնդակահարում։ Այս ամենը բարձրացնում էր և քաղաքի մահմեդական խուժանի տրամադրությունը։ Եվ ահա, փետր. 20-ին, Երևանը ևս դարձավ թատերա-

վայր հուզումնալից դեպքերի։ Ժամը 3-ին, առանց մի պատճառի, սկսվեց տաք հրացանաձգություն հայերի և թուրքերի միջև, որ տևեց մինչև երեկոյան ժամը 7-ը և շարունակվեց հաջորդ օրը առավոտյան էլ։ Միայն երկու կողմերի ներկայացուցիչների պաղարյունության և Արամի ու Դրոյի ջանքերի շնորհիվ կարելի եղավ փրկել քաղաքը անդարմանելի աղետից. փետր. 21-ին նահանգի զորքերի հրամանատար Փիրումյանի նախագահությամբ գումարվեց երկու ազգի ներկայացուցիչներից և քաղաքի ու զորամասերի պատգամավորներից մի ժողով, որը միաձայնությամբ որոշեց քաղաքը հայտարարել պատերազմական դրության մեջ, կազմել ռազմահեղափոխական դատարան քաղաքացիների և զինվորների համար առանձին-առանձին, բանալ ճանապարհները՝ ապահովելու համար զորամասերի մեկնումը ռազմաճակատ և այլն։ Նիստի վերջին, Մահմեդ. ազգ. խորհուրդը պաշտոնապես հայտարարեց, որ ինքը անկարող է զսպել թուրքերին նահանգի մի քանի մասերում և խնդրում է հայ զինվորական մասերի աջակցությունը։ Վճռվեց, զինվորական մասեր փոխադրելիս, հետները ուղարկել մահմեդական պատվիրակներ՝ համոզելու համար թուրքերին, որ բանան ճանապարհները, և միայն չենթարկվելու դեպքում գործադրել զենքի ուժ։

Այս առթիվ, հայ և թուրք ներկայացուցիչները միասին, հեռագրեցին Անդրկ. կոմիսարիատին, թե՝

Երևանի նահանգի դեպքերի համար հայ և մահմեդական ազգային խորհուրդներն ու պատասխանատու գործիչները խորհրդակցություն գումարեցին և միաձայնությամբ որոշեցին ձեռք առնել ամեն միջոց՝ վերջացնելու համար անկարգությունները։ Խորհրդակցությանը մասնակցում էին Արամը, նահանգային կոմիսար Սահակ Թորոսյանը, նահանգային գործադիր կոմիտեի նախագահը, Երևանի քաղաքագլուխ Թ. Թոշյանը, նահանգային Ախունդ Կազիևը, Միրզա Հուսեյին զադեն, Սեյիդ Քյազումովը, Միրզա Ալաքպեր Ախունդ զադեն, Երևանի Մահմ. ազգ. ժողովի անդամներ Աղաբաբեգովը, Միր Սադրկովը, Ֆիզուլլաբեգովը։ Կողմերը համաձայնվեցին՝ թուրքերը՝ բանալ ճանապարհները, Երևան—Ջուլֆա երկաթուղին, իսկ հայերը խոստացան վերջ տալ զորամասերի գործողություններին։

Քաղաքի համաձայնությունը, սակայն, ո՛չ մի նշանակություն չուներ գավառի համար։ Այնտեղ դեպքերը ընթանում էին իրենց ճանապարհով. թուրքերի սանձարձակությունները օր օրի վրա սաստկանում էին։ Անհրաժեշտ էր ձեռք առնել վճռական միջոցներ։ Արամը, զոր. Սիլիկյանը, զոր. Փիրումյանը և Դրոն խորհրդակցություն արին և որոշեցին, օրինակ տալու համար, պատժել Ուլուխանլուն և բանալ երկաթուղային հաղորդակցությունը։ Խորհրդակցության միջոցին լուր ստացվեց, որ Կողբը պաշարված է, Դաշբուռունի վիճակը շատ ծանր է, և Իգդիրի Ազգ. խորհուրդը օգնություն է խնդրում։

Հաջորդ օրը, փետրվարի 22-ի առավոտյան, 6-րդ և պարտիզանական գնդերից մի-մի գումարտակ և 2 թնդանոթ Կլիչի մարտկոցից շարժվեցին դեպի Ուլուխանլու և դիրքեր բռնեցին գյուղի մոտ։ Արամի առաջարկությամբ, գործողության դիմելուց առաջ՝ փաստաբան Գ. Ենգիբարյանից ու Երևանի հայտնի վաճառական Հաջի Ռիզայից բաղկացած մի պատվիրակություն ուղարկվեց մի անգամ ևս համոզելու համար ուլուխանլուեցիներին, որ խաղաղությամբ բանան ճանապարհը։ Զինված թուրքերը ահագին բազմությամբ ու դրոշակներով գրավել էին դիրքերը և թուրքական ազգային քայլերգն էին երգում։ Նրանք մերժեցին ընդունել պատվիրակությունը։

Այն ժամանակ Դրոն տվեց հարձակման հրաման։ Որոտացին թնդանոթները։ Սկսվեց տաք կռիվ։ Նույն ժամանակ արյունահեղ կռիվներ էին տեղի ունենում Սուրմալուում, Ղամարլուում, Յուվայի շրջանում։

Մինչև երեկոյան ժամը 5-ը թուրքերը ցույց տվին կատաղի դիմադրություն։ Ժամը 5-ին հայկական զորամասերը դիմեցին ընդհանուր գրոհի։ Հակառակորդը չդիմացավ ու ջարդված փախավ, ցիր ու ցան եղավ։ Ուլուխանլու գյուղը մատնվեց կրակի։ Ուլուխանլուեցիները հայտնեցին հպատակություն և այնուհետև մինչև վերջ մնացին հավատարիմ Հայաստանի պետականության ու ո՛չ մի զրկանքի չենթարկվեցին։

Ուլուխանլուի դեպքի մասին Դրոն տվեց հետևյա հեռագիրը.

«Զորամասը գնում էր Ղամարլու միանալու համար Ղամարլուի զորամասին և բանալու Դավալուում փակված 4-րդ գնդի մեկ գումարտակի ճանապարհը։ Մեկ օրվա հրացանաձգությունից հետո Աղհամզալուում, ուղարկված հայ-թուրքական պատվիրակությունը, որ թուրքերը հետ քաշվեն ու չխանգարեն զորքերին առաջ անցնելու, արդյունք չտվեց։ Թուրքերը օգնության հասած քրդերի հետ դիմեցին հարձակման՝ կամենալով ջարդել մեր զորամասը և գրավել հրետանին։ Թուրքերը ունեին ձեռքի ռումբեր։ Այն ժամանակ մենք որոշեցինք վերջ տալ այդ ամենին և օգնություն հասցրինք գնդ. Դոլուխանյանին՝ հրամայելով հարձակվել ու գրավել Ուլուխանլուն, որը և կատարվեց։ Ուլուխանլուն գրավված է, շրջանը մաքրված։ Մեր զոհերն են՝ 9 սպանված, 32 վիրավոր, որոնցից երկուսը՝ սպա։ Թուրք պատգամավորները մեղադրում են յուրայիններին, որի համար կան փաստեր, և խնդրում են հաշտություն։ Մեր դրած պայմաններն են. բանալ ճանապարհները, չկտրել հեռագրական թելերը և հրացանի չբռնել գնացքները։ 22 փետր.»։

Ուլուխանլուի գրավումից հետո՝ բացվեց երկաթուղային հաղորդակցությունը Ալեքսանդրապոլի հետ, բացվեց և Ղամարլուի ճանապարհը։ Ապա զսպվեցին Կողբի, Սուրմալուի, Ղամարլուի թուրքերը, ազատվեցին Ալի Ղըզըլի բնակիչները, պատժվեցին Ալագյազի և Նոր Բայազետի թուրքերը։

Առանձնապես ուժեղ կռիվներ տեղի ունեցան Դավալուի շրջանում,

ուր, Խոսրովի մահից հետո, ձիավոր հարյուրյակի հրամանատար էր նշանակվել սպա Կուռո Թարխանյանը, իսկ Դավալուի զորամասի— 1 գումարտակ, 1 հարյուրյակ— պետ՝ գնդ. Տեր-Սարգիսյանը։ Դավալուն շրջապատված էր թշնամիներով և բոլորովին կտրված Երևանից։ Շաբաթներ շարունակ պաշտպանվում էր 3000-ից ավելի չելալցի քրդերից և Շարուրի, Վեդիբասարի, Արալբխի ու Բաշքենդի թուրքերից, որոնք կատաղի հարձակումներով՝ աշխատում էին գրավել Դավալուն և գերի առնել հերոսական դիմադրություն ցույց տվող հայերին։

Այդ դեպքերի ընթացքում էր, որ Պարսկաստանից նահանջող Կուբանյան 2-րդ դիվիզիան— 2 գնացքով, ձիավորներով ու թնդանոթներով— կռվով եկել-հասել էր Սադարակ, ուր և շրջապատվել էր թուրքերի և քրդերի կողմից, որոնք մի վերջնագրով պահանջ էին ներկայացրել, որ կազակները հանձնեն իրենց զենքերն ու ձիերը և այնպես հեռանան։ Կազակները մերժել էին և կռվում էին նրանց դեմ։

Թնդանոթների ու գնդացիրների ձայնը առնելով՝ Կուռո Թարխանյանը դուրս եկավ հետախուզության և փողի հնչյուններով ու համազարկերով նշաններ էր անում։ Երեկոյան դեմ, թշնամու շղթան ճեղքելով, Արարատ կայարանը հասավ մի զրահապատ ինքնաշարժ՝ մի սպայով և գնդացիրներով ու ռումբերով զինված 6 կազակներով։ Ռուս զորքերի հրամանատարը մի նամակով առաջարկում էր հաջորդ օրը միասին հարձակում գործել թշնամու վրա։

Մյուս օրն առավոտյան ժամը 7-ին, գնդ. Տեր-Սարգսյանի հրամանով, 2 վաշտ ու ձիավոր հարյուրյակը շարժվեցին դեպի Սադարակ։ Սկսվեց կատաղի կռիվ։ Քրդերն ու թուրքերը պաշտպանվում էին ճակատից ու թիկունքից, բայց երկու կրակի մեջ առնված՝ չդիմացան ու փախան՝ մի մասը Դարալագյազի ուղղությամբ, մյուսը՝ Արաքսի մյուս ափը։ Կեսօրվա մոտ հայ և ռուս զորամասերը «կեցցեներով» միացան իրար։ Գրոհի ժամանակ երկու ոտքից վիրավորվեց հարյուրյակի հրամանատար Թարխանյանը։ Դավալուի ժողովուրդը խանդավառ ընդունելություն արավ կազակներին, որոնք հայերին տվին մի քանի վագոն հաց, գարի, ռազմամթերք։

Հաջորդ օր, Դավալուի բնակչությունը և հայկական զորամասերը կազակների հետ միասին մեկնեցին դեպի Երևան։

Ղամարլուի և Դավալուի շրջանի դեպքերի առթիվ Երևանից Թիֆլիս ուղարկվեցին բազմաթիվ հեռագրեր. մահմեդականները մեղադրում էին հայերին, հայերը՝ մահմեդականներին։ Հայերի կողմից հետևյալ ձևով էր ներկայացվում կացությունը։

Փետր. 21-ին Երևանի զորքերի հրամանատար գնդ. Փիրումյանը հեռագրեց ներքին գործերի նախարարին. «Մահմեդականների անընդհատ հարձակումները զինվորական, մարդատար, բեռնակիր և սանիտարական գնացքների վրա չեն դադարում՝ չնայած ձեռք առնված միջոցների։ Ավազակային հարձակումները մեծ չափերով տեղի են ունենում երկաթուղու, խճուղու, հեռագրային գծերի վրա, կայարանները կողոպտվել են, կամուրջները քանդվել, որի պատճառով կտրված ենք ամբողջ աշխարհից. առանձնապես ահաբեկված է ռուս ազգաբնակչությունը, որը թողնելով ամեն բան՝ հեռանում է Կովկասի սահմաններից։ Թուրքերը հարձակվել են Ղամարլուի վրա, ուղարկվեց պատգամավորություն, որը ենթարկվելով հրացանաձգության՝ հետ դարձավ։ Թուրքերը իրենց ուժերը կենտրոնացրել են Ուլուխանլու ու Աղհամզալու կայարաններում, ուր և զինաթափ են անում զինվորական գնացքները։ Երևանի նահանգային կոմիսարիատը ստիպված էր զինված ուժերով վերականգնել կարգը նաև հեռագրային և երկաթուղային գծերի վրա։ 48 ժամ ժամանակ է տրված կապ հաստատելու համար Դավալու կայարանի հետ, որտեղ գտնվում է մի զորամաս. այս պահանջն չկատարելու դեպքում զորք կուղարկեմ։ Մի քանի օրվա կռիվներում կորցրել ենք երկու սպա, ինը զինվոր. վիրավորված են 2 սպա և 37 զինվորներ։

Փետր. 27-ին Երևանից Զինվ. միության նախագահ բժ. Հ. Մելիքյանը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Թիֆլիս. «Կացությունը նահանգում հուզումնալից է։ Դավալուից 70 զինվորներ ճանապարհվեցին Ղամարլու. ճանապարհին հրացանի բռնվեցին թուրքերի կողմից. 10 հոգի վերադարձան վիրավորված. մնացած 60-ը կորել են հայտնի չէ թե ուր. ենթադրվում է, որ սպանված են։ Այդ բանից Ղամարլուի մեր զորաջատները սարսափելի էլեկտրականացած են և պահանջում են անհապաղ գնալ մաքրել Ղամարլու—Դավալու ճանապարհը։ Այսօր այնտեղ ուղարկվեց հայ-թրքական մի պատգամավորություն, բայց Օվշարի գյուղում թուրքերը բռնել են պատգամավորներին, զինաթափել նրանց պահակներին և ամենքին հետ դարձրել։ Դավալուն և Ռեհանլուն շրջապատված են թուրքերով, և խիստ հրացանաձգություն է տեղի ունենում... Այս առավոտ եկավ Թիֆլիսի պատգամավորությունը և վաղը մեկնում է Ղամարլու ու Դավալու զրահապատ գնացքով, իսկ այսօր ցերեկը Ղամարլու մեկնեց կոմիսար Դրոն զինվորներին հանգստացնելու համար, որովհետև նրանք վերջնագիր են ներկայացրել, որ եթե զորախմբին թույլ չտրվի հարձակման դիմելու, զինվորները իրենք դատաստանի կենթարկեն հրամանատար գլխապետ Թարվերդյանին։ Դրությունը շատ լուրջ է»։

Թիֆլիսում Երևանից ստացվող լուրերը առաջ էին բերում ահագին իրարանցում։ Անդրկ. կոմիսարիատը ուղարկել էր մի պատվիրակություն՝ տեղն ու տեղը քննելու հայ-թուրքական ընդհարումների պատճառը։ Պատվիրակության անդամներ են Խ. Կարճիկյանի և Ջաֆարովի բերած զեկուցումները բուռն վիճաբանությունների նյութ դարձան Սեյմի փետր. 19—20-ի նիստերում։ Մահմեդական պատգամավորները մեղադրում էին հայերին, թե նրանք մաքրում են Երևանի նահանգը մահմեդական

ազգաբնակչությունից՝ հայկական հող պատրաստելու նպատակով։ Հայերն, ընդհակառակը, ընդհարումների պատճառ էին ցույց տալիս թուրքերին, որոնք արգելք էին հարուցանում ռազմաճակատ մեկնող զորամասերի առջև։ Այս առթիվ էր, որ Խ. Կարճիկյանը Սեյմում արտասանեց իր պատմական մեկ ճառը՝ հանգամանորեն ներկայացնելով հայ-թրքական կռիվների էությունը։

«Երբ Անդրկ. կոմիսարիատը,—ասաց նա,—լուրեր ստացավ, որ Երևանի նահանգի ու Բորչալուի գավառի որոշ մասերում կատարվում են դեպքեր, որոնք ոչ միայն խանգարում են նահանգի ու գավառի խաղաղ կյանքը, այլև բոլորովին անդամալուծում են երկաթուղային հաղորդակցությունը. երբ լուր հասավ, որ Ուլուխանլու—Ջուլֆա երկաթուղամասի վրա մի շարք անկարգություններ ու քրդական հարձակումներ կանգնեցրել են հաղորդակցությունը, երբ հայտնի դարձավ, որ այնտեղ գնացքների արհեստական խորտակումներ են արվում, թալանվում են զենք փոխադրող ամբողջ գնացքներ. երբ տեղեկություն եկավ, որ գնացքներից մարդիկ են դուրս հանվում ու սպանվում. մյուս կողմից, երբ լուր ստացվեց, որ երկաթուղագծի վրա այս ու այն կողմ փոխադրվող հայ զորամասերը գնդակահարում են խաղաղ բնակիչներին՝ Անդրկ. կոմիսարիատի համար պարզ դարձավ, որ կացությունը խիստ սպառնական է և անհրաժեշտ է ձեռք առնել անմիջական միջոցներ»։ Եվ ահա ուղարկվեց հատուկ պատվիրակություն, որի վրա դրվեց պարտականություն բանալու Սանդար—Սադախլու երկաթուղին, որ փակել էին թուրքերը, և խաղաղեցնել Երևանի նահանգը։

Արդ՝ ի՞նչ է տեսնում, ի՞նչ է անում պատվիրակությունը։

Սանդարում պատվիրակությանը ներկայացնում են գյուղերի պատվիրակները, որոնք «միաբերան հայտնեցին, թե ավելի համբերել այլևս չեն կարող, թե այն, ինչ որ կատարվում է Բորչալուի գավառում, այլևս անտանելի է։ Ջարդերը, կողոպուտն ու թալանը, սպանությունները, քայքայումը, հրկիզումները տեղական մահմեդական ազգաբնակչությանը հասցրել են այնպիսի մի վիճակի, որ նրանք է՛լ չեն կարող համբերել։ Եվ պահանջեցին Անդրկ. կոմիսարիատի պատվիրակությունից ձեռք առնել ամենախիստ ու շտապ միջոցներ. պահանջում էին հաստատել ժողովրդական ռազմահեղափոխական դատարան, որ նա դիմե կտրուկ միջոցների և նույնիսկ մահապատժի»։

Ուլուխանլուում պատվիրակության առջև պարզվում է այսպիսի պատկեր. «Ուլուխանլուն ներկայացնում է պատերազմական մի բանակ։ Նախ՝ պատվիրակությանը դիմավորեց այդ կայարանի զինված պահակախումբը՝ մի քանի հարյուր զինված գյուղացիներ, մի քանի հարյուր հոգի ձիավորներ, ամենքը զինված։ Այս մեծ հանգուցային կայարանը բոլորովին այրված է, այնպես որ հեռագրաթելը վերականգնելու նպատակով էջմիածին կայարանից մեզ հետ առած ծառայողներին տեղ չկար

տեղավորելու։ Մենք իմացանք, որ մի քանի օր առաջ այնտեղից հեռացել էին բոլոր ծառայողները, որովհետև կայարանի վրա հարձակվել էին քրդերը, այրել, քար ու քանդ արել ու կողոպտել ամեն ինչ, կրակի մատնել կայարանի բոլոր շենքերը։ Մահմեդականների ներկայացուցիչները հայտնեցին, որ նրանք թույլ չեն տա, որ պատերազմից մնացած պետական ստացվածքը բաժին հասնի բացառապես հայերին կամ վրացիներին. նրանք պահանջում էին, որ այդ ստացվածքը հավասարապես բաժանվի Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջև։ Մասնավորապես, պահանջում էին, որ մահմեդականներին տրվի այն քանակությամբ զենք, ինչ քանակություն որ համապատասխան է իրենց ազգաբնակչության թվին։ Հետո, մահմեդականները հայտնեցին, որ իրենք թույլ չեն տա երկաթուղային հաղորդակցության վերականգնումը, մինչև որ իրենց հիմնական պահանջը չգոհացվի. եթե հայերը կամենում են խաղաղությամբ կարգադրել այս բախումը, նրանք պարտավոր են անհապաղ լուծել իրենց զորագնդերը և զենքերը հանձնել թուրքերին, այլապես իրենք թույլ չեն տա կարգի վերականգնումը...

Պատվիրակությունը ընդունում է նաև քրդերի ներկայացուցիչներին։ Նրանք հայտնում են, թե, ճիշտ է, իրենք թալանում ու քանդում են և կշարունակեն քանդել ու թույլ չեն տա, որ երկաթուղային հաղորդակցությունը վերականգնի, որովհետև քուրդ բնակչությունը բոլորովին մատնված է անուշադրության և դատապարտված է սովի։ Մթերք ու նպաստ ստանում են մահմեդականներն ու հայերը, բայց ոչ քրդերը։ Եվ, հետևաբար, քանի որ երկաթուղին գոյություն ունի միայն մահմեդականների ու հայերի համար, իրենց ուրիշ ոչինչ չէ մնում, բացի թալանից և ճանապարհին հանդիպած ամեն բան փչացնելուց»։

Ապա պատվիրակությունը հասնում է Երևան, ուր իրար հետ կռվող հայերն ու թուրքերը նոր էին հաշտվել, իբրև նախապայման ընդունելով հայ-մահմեդական խառը զորագնդերի կազմությունը։ «Հայկական կազմակերպությանց ներկայացուցիչները հայտնեցին, որ ամեն բան, որ կատարվում է այժմ Անդրկովկասում, հանգում է որոշ մտքի։ Նախ՝ բոլոր այն երկաթուղագծերի վրա, ուր ապրում են մահմեդականները, համարյա միաժամանակ տեսնում ենք որոշ բնույթ կրող հուզումներ, որոնք վերջանում են երկաթուղային հաղորդակցության խանգարումով։ Մատնանշում են Սանդար—Սադախլու երկաթուղագիծը, Ուլուխանլու գիծը։ Հետո, նրանք հայտնեցին, որ բոլոր խռովությունները տեղի են ունենում երկաթուղու մոտ երկաթուղային հաղորդակցության շուրջը... Նրանք կարծում էին, որ այս ամենը պատահական բան չէ, որ կան ինչ-որ մութ տարրեր, որոնք առաջ են բերում այդ ամենը և գործում որոշ նպատակով, որպեսզի խանգարեն հաղորդակցության միջոցները, արգելք հանդիսանան ռազմաճակատի պաշտպանության, և որ այս բանում թե՛ մահմեդական ու հայ և թե՛ ամբողջ Անդրկովկասի ազգաբնակ-

չությունը գործիք է այդ մութ ուժերի ձեռքին... Երևանի նահանգի արևելյան մասը, ուր ազգաբնակչությունը խառն է, արդեն համարյա անծանոթ մի երկիր է. հայտնի չէ, թե ինչ է կատարվում այնտեղ. ոչ ոք ոչ մի լուր չի ստանում և այնտեղ մուտք գործելը բոլորովին անհնար է։

«Մյուս կողմից հայ հասարակության վիճակը չափազանց ծանր էր այնտեղ։ Նախ, ինչպես ձեզ հայտնի է, այնտեղ կազմակերպվում են հայկական զորամասեր, որոնք պետք է ուղարկվեին ռազմաճակատ։ Այդ զորամասերը մի քանի շաբաթ սպասեցին ուղարկվելու օրին։ Որոշ մասեր առաջ շարժվեցին երկաթուղագծի վրա դիծն ու պահեստները պահպանելու համար։ Եվ ահա ստեղծվեց այնպիսի դրություն, որ անհնար էր ոչ ռազմաճակատ ուղարկել, ոչ էլ Շահթախթում, Դավալուում և, կարծեմ, Նախիջևանում կանգնած զորամասերին օգնություն հասցնել։ Նրանք կտրվեցին իրարից և ո՛չ մի հնար չկար նրանց միջև կապ հաստատելու։ Հայ զորամասերը չէին կարող հանդուրժել նման դրություն, չէին կարող հանդուրժել, որ շաբաթներով մնան նստած ու չկարողանան մեկնել ռազմաճակատ։ Ինձ հայտնեցին հայ գործիչները, որ նրանք թափեցին ամեն ճիգ, որպեսզի զսպված պահեն այդ զորամասերը. նրանք զգում են, որ մութ ուժերը դրդում են նրանց հարձակվելու մահմեդական բնակչության վրա։ Ես տեսել եմ հայ զորամասեր թե այստեղ և թե ուրիշ տեղեր և պետք է ասեմ, որ Երևանում նրանք բավական կարգապահ են, բայց նրանց ա՛յս վիճակում պահելը կլինի գրեթե անհնար...

Մեր գլխավոր նպատակն էր երկաթուղային հաղորդակցության վերականգնումը Ուլուխանլու և Ջուլֆա կայարանների միջև։ Մենք այդ չկարողացանք կատարել, որովհետև չկարողացանք անցնել այնտեղ։ Մեր ստացած տեղեկություններով կամուրջներն ու գիծը այնտեղ բոլորովին փչացած են և եթե մենք ուզենայինք գնալ, պետք է մեզ հետ առնեինք շինվածանյութերի մի ամբողջ գնացք, որպեսզի վերականգնեինք ճանապարհը։ Մեզ ասում էին, թե մեզ կձերբակալեն և թույլ չեն տա առաջ անցնելու։ Պատվիրակությունը վերադարձավ առանց որևէ բան անելու։

Ավելի մոայլ պատկեր գժվար էր գծել։ Երկու ժողովուրդներ՝ կոկորդ կոկորդի հոշոտում են միմյանց, իսկ երկրի կենտրոնական իշխանությունը դատարկ խոսքերից զատ ոչինչ չունի նրանց ասելիք։ Այս պայմաններում մեծ պաղարյունություն ու կամք պետք էր տեղական գործիչներին՝ «մութ ուժերի» սադրանքին չենթարկվելու համար։ Եվ դրա վրա էր հրավիրում Կարճիկյանն իր զեկուցման վերջում՝ պատասխանելով միաժամանակ թուրք պատգամավորների աղմկարար ու գրգռիչ ճառերին. «Ես մտնում եմ հայ ու մահմեդական տեղական գործիչների դրության մեջ. այնտեղ հրդեհն արդեն սկսված է, իսկ մենք

չենք տալիս ոչ մի օգնություն և ոչ մի միջոց հանգցնելու համար այդ հրդեհը։ Բայց, քաղաքացի պատգամավորներ Անդրկովկասյան սեյմի, մի՛ խանգարեք նրանց, թո՛ւյլ տվեք, որ նրանք իրենք հանգցնեն հրդեհը՝ մենք նրանց օգնել չենք կարող այժմ։ Մի՛ հանեք փոթորիկ հրդեհի ժամանակ։ Մենք չպետք է կորցնենք մեր պաղարյունությունը։ Քաղաքական ղեկավար մարմինը, այսպիսի ահավոր վայրկյանին, երբ ամենքս կանգնած ենք անդունդի եզերքին, իրավունք չունի կորցնելու հավասարակշռությունը, իրավունք չունի զբաղվելու միմյանց դեմ ամբաստանագրեր պատրաստելով։ Մեզանից ամեն մեկը պատասխանատու է ո՛չ միայն իր համար, այլև հայերի, մահմեդականների ու վրացիների՝ մենք պատասխանատու ենք ամբողջ ազգաբնակչության համար։ Մենք չպե՛տք է դուրս գանք, իբրև միմյանց մեղադրողներ. մենք հանդես պետք է գանք, որպես գաղափարական քաղաքական մի մարմին, որը այս հուզումնալից վայրկյանին կոչված է փրկելու երկիրը։ Ես կոչ եմ անում պաղարյունության ու սեփական պարտքի գիտակցության»։

Ի՜նչ տգնիվ խոսքեր, որոնք, սակայն, հնչում էին անապատի մեջ։ Գազանական տարերքը խցել էր ամենքի ականջները։

Ուլուխանլուի և Ղամարլուի դեպքերի առթիվ, Երևան մեկնեց մի ուրիշ պատվիրակություն, այս անգամ Սեյմի կողմից, որի նախագահ Գեորգաձեն Սեյմի մարտի 7-ի նիստում ներկայացրեց մանրամասն զեկուցում, որի մեջ, ի միջի այլոց, ասում էր. «Երևակայեցեք երկաթուղին, որի վրա մի ժամանակ եռում էր կյանքը, սուլում էին շոգեքարշները, գործում էին արհեստանոցները, տրվում էին հեռագրեր, ժողովուրդը օգտվում էր քաղաքակրթության պտուղներից։ Իսկ այժմ այդ երկաթուղու վրա ոչի՛նչ չեք գտնի. չկան կայարաններ, չկան շենքեր, ամեն ինչ թալանված է, ամեն բան փչացած, կայարաններում չեք տեսնի ո՛չ մի կենդանի էակ, ո՛չ մի ծառայող՝ ամեն ոք հեռացել-կորել է, ոչինչ չի մնացել։ Այս վիճակում են գտնվում Ուլուխանլու, Արարատ և ուրիշ կայարանները։ Պատվիրակության ունեցած տեղեկություններով դեպի Ջուլֆա տանող գծի վրա կանգուն է մնացել միայն Ղամարլու կայարանը, ուր կանգնած է հայկական մի հարյուրյակ։ Այս վիճակում գտնվող երկաթուղու վրա, որևէ շարժում, զորամասերի որևէ փոխադրություն— ինչ զորամաս էլ ուզում է լինի՝ ռուս, թե հայ— բոլորովին անհնար է։ Ճիշտ է, երկաթագծերը դեռ հանված չեն, փայտեղեն մասը դեռ իր տեղում է, բայց կատարելապես անմարդաբնակ են և ճիգ է թափվում, որ այդպես էլ մնան։ Եթե այդ ճանապարհով անցնելու լինեք, ճանապարհի երկու կողմը կտեսնեք փորված դիրքերում նստած քրդեր կամ մահմեդականներ։ Երբ մենք մոտենում էինք մի ավերված ու քար ու քանդ արված կայարանի, կայարանում և ուրիշ շենքերում նկատեցինք ինչ-որ զինված մարդկանց։ Մահմեդականների պատվիրակությունը իջավ վագոնից, մոտեցավ այդ զինված անձանց և հարցրեց. ի՞նչ կա,

ինչո՞ւ են նստած այստեղ։ Զինված մարդիկ սկզբում հեռացան մի կողմի, ապա հետ եկան և բացատրեցին, որ իրենք քրդեր են և եկել են տանելու մնացած գերաններն ու իրերը։ Եվ երբ քիչ հեռու տեսանք զինված մի հրոսախումբ, պատվիրակությունը ստիպված էր դառնալ հետ, բայց այդ զինված ամբոխը սպիտակ դրոշակը ձեռքին հասավ ու հայտնեց, որ այդ կամուրջները այրել են ոչ թե իրենք՝ մահմեդականները, այլ քրդերը»։

Սակայն, «պատվիրակությունը լսեց և այլ կարգի գանգատներ. հայկական զորամասերը ճակատ են գնում. ճակատում թողնված է հրսկայական, բազմամիլիոն արժեք ունեցող գույք. այդ գույքը սեփականություն է կազմում Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդների՝ և՛ հայերի, և՛ մահմեդականների ու վրացիների, այդ պատճառով հայ զորամասերը, որոնք գրավում են այդ գույքը և հայտարարում են իրենց սեփականություն, չպե՛տք է թույլատրվեն անցնելու ռազմաճակատ... Այն օրը, որ մեր պատվիրակությունը հասավ Երևան, շտապով հայերից ու մահմեդականներից բաղկացած մի ուրիշ պատվիրակություն էր ուղարկված։ Մերձավոր մի գյուղում հայերի և մահմեդականների միջև ընդհարում էր սպասվում, և այդ պատվիրակությունը որոշ ժամանակից հետո, վերադարձավ ու հայտնեց, որ մահմեդականները դուրս են եկել պատվիրակության առջև, խլել են նրանցից հրացաններ և ուրիշ զենքեր։ Այս ամենը կատարվեց մեր ներկայությամբ, ձեր պատվիրակության աչքի առջև, և կարելի է թվել շատ դեպքեր, երբ հայ զինվորները սպանել են թուրքերին և, ընդհակառակը, թուրքերը սպանել են հայերին։ Մյուս կողմից տեղի են ունենում մասնավոր ընդհարումներ ու սպանություններ։ Ահա այսպիսի հանգամանքներում, երբ ոչ միայն ազատ հաղորդակցություն չկա երկաթուղիներով, այլև փակված է երթևեկը գյուղերի միջև, այս դրության մեջ հայկական զորքերի կոմիսար Դրոն հայտարարեց, որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակված են հայկական զորամասերի առջև։ Նա վճռական ու համառ կերպով պահանջում էր, որ իրեն ցույց տրվի որևէ ճանապարհ, թեկուզ շատ վատ ու անհարմար, թեկուզ ամենաանանցանելի մի ճանապարհ։ Այդ պահանջին նրան պատասխանվեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակված են ռազմաճակատ գնացող հայ զորամասերի առջև։ Մահմեդականների ներկայացուցիչները չառարկեցին»։

«Երբ մի կողմից, գյուղերում, կանգնած են կանոնավոր գնդեր ու գումարտակներ, իսկ մյուս կողմից կանգնած են զինված անկազմակերպ մահմեդական զանգվածները, ստեղծվում է այնպիսի հագեցած մթնոլորտ, որ ամենաաննշան առիթն իսկ բավական է, որպեսզի բռնկվի ազգային հրդեհը։ Եվ ահա այդ ազգային հրդեհը տեղի ունեցավ փետր. 17—21-ին։ Եթե դուք նայեք Ղամարլու մեծ գյուղի վրա, որի բնակիչները բաղկացած են մահմեդականներից ու հայերից, կտեսնեք, որ այդ

գյուղի մահմեդական մասը չկա, անհետացել է. չեք գտնի նրան, գոյություն չունի, բնաջնջված է. իսկ հայկական մասը կանգուն է, չի վնասվել։ Եթե առնեք մի ուրիշ գյուղ՝ Աղհամզալուն, այդ գյուղում էլ բնակիչ չկա. հեռացել, թաքնվել են, մի մասն էլ գուցե, բնաջնջված է։ Ուլուխանլուն, ավելի մեծ ու հարուստ մի գյուղ, նույնպես դատարկված է։ Դավալու գյուղից մահմեդական բնակչությունը, տեսնելով հուսահատական վիճակը, հեռացել է հոժարակամ, հայտնի չէ թե ուր։ Այսպիսի դրության մեջ են հայերի ասելով 18, իսկ մահմեդականների տեղեկություններով 21 գյուղեր։ Ամենացավալին այն է, որ գյուղերի մաքրագործումը, այս, եթե կարելի է ասել, գյուղերի ջարդ ու փշուր անելը կատարվել է մասնակցությամբ հայկական կանոնավոր զորամասերի, որոնք այս հրդեհի ժամանակ օգնության են կանչված Երևանից և, փոխանակ օգնելու, իրենք էլ մասնակցել են այդ հրդեհին՝ գործի մեջ մտցնելով գնդացիրներ ու հրետանիներ։ Երևան քաղաքի դեպքերը արձագանք եղան Դավալուի դեպքերի։ Երևանում սկսվել է հրացանաձգություն ու կոտորած։ Հետևանքը՝ 36 մահմեդական գերեզման և 56՝ հայկական... Հայ ու մահմեդական խանութները բոլորովին ջարդված ու թալանված են և եթե չլինեին մի քանի հասարակական գործիչներ մահմեդականների ու հայերի կողմից, Երևանում ահավոր ջարդ ու կոտորած տեղի կունենար։ Բայց, ինչպես վկայեց պատվիրակությունը հայ ու մահմեդական ներկայացուցիչների առջև Երևանում, շնորհիվ Դրոյի, Արամ փաշայի և Երևանի պարետ Շահխաթունիի եռանդուն միջամտության, կոտորածը լայն ծավալ չի ստացել։ Նրանք ամբողջ օրը շրջում էին քաղաքում, հանդարտեցնում թշնամի կողմերը և, վերջ ի վերջո, փակեցին այդ դժբախտ դեպքը»։

Այս զեկուցումը բուռն փոթորիկ առաջ բերեց Սեյմում, հատկապես մահմեդական պատգամավորների կողմից։ Նրանք իրար հետևից բարձրանում էին ամբիոն և արտասանում ցասումով լի, կրքոտ ճառեր՝ ուղղված հայերի ու Դաշնակցության դեմ։ Ամբողջ պատասխանատվությունը, նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրա, որոնք բռնի միջոցներով ձգտում էին ստեղծել «հայկական հողամաս»։ Հայկական զորամասերը չեն ենթարկվում կենտրոնական իշխանության և փոխանակ ռազմաճակատ մեկնելու՝ կռվում են խաղաղ ազգաբնակչության դեմ։ Երևանի դեպքերի հեղինակներն են Դրոն, գնդ. Փիրումյանն ու մի շարք ուրիշ հայ զինվորականներ ու գործիչներ։ Անհիմն է այն ամբաստանությունը, թե մահմեդականները փակում են ճանապարհը հայ զորամասերի առջև և այլն, և այլն։

Ի վերջո, Սեյմը ընդունեց մի բանաձև, որի հիմնական միտքն այն էր, թե անմիջապես պետք է ձեռք առնվեն վճռական միջոցներ, որպեսզի զորամասերը կարողանան առանց արգելքի անցնել դեպի սահմանը։ Սակայն, ի՞նչ արժեք ուներ նման բանաձևը, երբ Անդրկովկասի

իշխանությունը զուրկ էր ամենատարրական գործադիր միջոցներից։ Ուրիշ անգամների պես, այս բանաձևն էլ մնաց մեռած տառ, իսկ կյանքը գնաց իր ճանապարհով։ Մահմեդական շրջանները շարունակեցին հուզվել և ըմբոստանալ՝ նպաստելով Թուրքական ռազմական ծրագրերին։ Հաշտարար պատվիրակությունները ոչ մի օգուտ չէին տալիս, բացի ավելորդ զոհեր պատճառելուց։ Թուրքերի մոտ ուղարկված խառը պատվիրակություններից մեկի մեջ սպանվեց երևանցի հասարակական գործիչ փաստաբան Լևոն Մուշեղյանը։

Դրությունը ծանրանում էր և նրանով, որ նահանգը ապրում էր արտակարգ պարենավորման տագնապ։ Խանութների և պահեստների առջև կանգնած երկար «պոչերը» հուզում էին ժողովրդին, խռովում նրա միտքը։ Մարդիկ դեռ սովոր չէին մեծ զրկանքների և պահանջում էին հաց, նավթ, շաքար...

Մարտի 12-ին նահանգային կոմիսար Ս. Թորոսյանը հեռագրում էր Թիֆլիս. «Պարենավորման հարցը Երևանի նահանգում ահավոր բնույթ է ստացել. Երևանում հացի բաշխումը հասցված է անտանելի փոքր չափի։ Ո՛չ մի պաշար չկա։ Նոր Բայազետ, Նախիջևան, Օրդուբադ քաղաքները մնացել են առանց հացի, նավթի, շաքարի և առաջին անհրաժեշտության այլ կարգի նյութերի, իսկ Նախիջևանի և Նոր Բայազետի գավառները գտնվում են սոված խռովությունների ու բռնությունների նախօրյակին»։

Եվ խռովություններն ու բռնությունները չուշացան։ Այստեղ ու այնտեղ սկսեցին կատարվել հարձակումներ պետական պահեստների և մասնավոր խանութների ու հացի փռերի վրա։ Դրությունը դառնում էր սպառնական։ Անհրաժեշտ էր ուժեղ և արագ գործող, վճռական ու միակամ իշխանություն։ Այդ իշխանությունը Արարատյան դաշտը ունեցավ հանձին Արամի։

Այս պահանջի գիտակցությամբ, Երևանի ազգաբնակչությունն ու զինվորականությունը, Էրզրումի անկման լուրի տպավորության տակ, մի բազմամարդ ժողովում որոշեցին Արամին հայտարարել դիկտատոր և ամբողջ իշխանությունը կենտրոնացնել նրա ձեռքը։ «Մեր հայրենիք» երգելով հազարավոր բազմությունը շարժվեց դեպի Արամի բնակարանը և հուզիչ հանդիսավորությամբ հռչակեց նրան դիկտատոր։ Վրա հասան քաղաքի զորամասերը և երդվեցին հնազանդ լինել նորընտիր դիկտատորին։ Այդ քայլին իր անվերապահ հավանությունը տվեց և Ազգ. խորհուրդը։ Այսպիսով, մարտի առաջին օրերից սկսած՝ Երևանի բովանդակ իշխանության մարմնացումը դարձավ Արամը, որ իր զարմանալի նրբամտության ու տակտի շնորհիվ կարողացավ շաղկապել շրջանի բոլոր գործոն տարրերը, աշխատանքի լծել ամենքին։ Ձեռք ձեռքի տված Դրոյի, զոր. Սիլիկյանի ու Փիրումյանի, նահանգական կոմիսար Ս. Թորոսյանի, քաղաքական կուսակցությունների և կառավարական ու հասարակական մարմինների հետ՝ նա երևան բերեց արտակարգ եռանդ և, ամենատագնապալի վայրկյանին, ձեռնհասությամբ վարեց Արարատյան դաշտի հայ ժողովրդի ճակատագիրը։

Ըստ ձևի, Արամի դիկտատոր նշանակվելուց հետո էլ իշխանությունը մնաց Ազգ. խորհրդի ձեռքին։ Հատուկ կոմիտեի փոխարեն այժմ գործում էր առանձին մի մարմին, որի անդամները կոչվում էին վարիչներ։ Այս մարմինը փաստորեն Արարատյան դաշտի կառավարությունն էր, որի նախագահն ու զինվորական գործերի վարիչը Արամն էր, ներքին գործոց վարիչը՝ Սահակ Թորոսյանը, պարենավորմանը՝ Մկ. Մուսինյանը, ելևմտականը՝ Հովհ. Մելիքյանը, ինքնապաշտպանությանը՝ Արշ. Աստվածատրյանը։ Քիչ վերջը, մարմնի կազմի մեջ մտան նոր անձեր՝ Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կամսարականը, բժ. Հ. Տեր-Միքայելյանը (Օվին) և այլն. եղան և ուրիշ փոփոխություններ։ Դրոն, իբրև զինվորական կոմիսար, մարտական ուժերի ոգին էր և զինվորական ծրագրերի գործադրողը՝ համախորհուրդ Արամի հետ։ Այս մարմինը մնաց իշխանության գլուխ մինչև Հայաստանի խորհրդի ու կառավարության ժամանումը Թիֆլիսից։

Երևանի կառավարությանը, ի վերջո, հաջողվեց բանալ ռազմագիտական նշանակություն ունեցող գլխավոր ճանապարհները, մաքրել խռովությունների բուն ծառայող մահմեդական վայրերը և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակա շրջաններում։ Նա միջոցներ ձեռք առավ դասալքության և ավազակությունների դեմ։ Նրա տրամադրության տակ կային 10—12 000 մարզված ու բավական կաթգապահ զինվորներ։ Դրամական դրությունը կարգավորելու համար պարտադիր տուրք դրեց ժողովրդի վրա, որը տալիս էր անտրտունջ, անգամ սիրով։ Երբեք, գուցե, հայ կյանքում իշխանությունն ու հասարակությունը այնպիսի համերաշխ միություն չէին կազմել, քան 1918 թվի գարնան և ամառվա պատմական ամիսներին, Արարատյան դաշտում, Մասիսի հովանու ներքև։

ԳԼՈՒԽ ԺԳ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ—ԲԱԹ ԱՊԱՐԱՆ

Այսպես էր կացությունը Արարատյան դաշտում, երբ, Ալեքսանդրապոլի անկումից հետո, հայկական բանակի մի մասը նահանջեց Երևանի ուղղությամբ և կռվով հասավ Սարդարապատ մայիսի 19-ին։ Թուրքերը նրանց հետապնդեցին երկու ճանապարհով՝ երկաթուղու ուղղությամբ և Արագածի հյուսիս-արևելյան փեշերով։

Դրանից առաջ արդեն, Արարատյան դաշտում համախմբված էին և Վանի ու Ալաշկերտի շրջաններից նահանջած զորամասերը։ Ապրիլի կեսերին երևանյան նահանգում, հայկական 2-րդ դիվիզիայի պետ զոր. Սիլիկյանի հրամանատարության տակ, գտնվում էին 5-րդ և 6-րդ գնդերը, 4-րդ գնդի մեկ գումարտակը և Վանի առաջին ու 2-րդ գնդերը 28 թնդանոթով։

Վանի երկու գնդերը, որոնք գրավում էին Բարթողյան բարձունքները, ապր. 27-ին ենթարկվեցին հարձակման թուրքերի կողմից, որոնք, հակառակ կնքված զինադադարի, փորձեցին ա՛յս կողմից խուժել Արարատյան դաշտը։ Հայկական զորքերը ցույց տվին ուժեղ դիմադրություն։ 2-րդ գունդը նահանջեց մինչև Օրգով և Արհաջ, բայց հաջորդ օրը անցավ հակահարձակման և արյունահեղ ճակատամարտից հետո՝ հետ շպրտեց թշնամուն։ Սակայն, թուրքերը ստացան օգնական ուժեր և հետ մղեցին հայկական զորամասը, որը ամրացավ Խալֆալու—Սուլթանապատ գծի վրա։ Կռիվները տևեցին մոտ երկու շաբաթ։ Այս կռիվներում մերոնք ունեցան մի քանի տասնյակ սպանված և 80 վիրավոր։ Մայիսի 9-ի ճակատամարտում, հերոսական մահով մեռավ և Վանի 2-րդ գնդի հրամանատար, սիրված գնդ. Լևոն Չարուխչյանը՝ հայ լավագույն զինվորականներից մեկը։

Ի վերջո, անդրկովկասյան կառավարության եռանդուն բողոքի վրա թուրքերը նորից քաշվեցին Զինգիլի մյուս կողմը։ Հայկական զորքերը տեղավորվեցին Իգդիրում՝ Օրգովում ունենալով առաջապահներ։ Մյուս թևը Սարդարապատ կայարանում էր՝ Կողբի առաջապահներով։ Մի մասն էլ գրված էր Արաքս կայարանում։ Այսպես մնաց դրությունը մինչև մայիսի 15, երբ թուրքերը դիմեցին ընդհանուր հարձակման Ալեքսանդրապոլի և, Զինգիլի վրայից, Երևանի ուղղությամբ և հետ մղեցին մեր զորքերը

Իգդիրից ու Կողբից մինչև Արաքս։ Միաժամանակ, ոտքի ելան տեղական թուրքերն ու քրդերը, և 1918 թ. մայիսի կեսերին Արարատյան դաշտը ամեն կողմից շրջապատվեց թշնամիներով։

Կացությունը առանձնապես ծանրանում էր և ընդհանուր դժոխային պայմաններով. Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո, երկիրը բոլորովին կտրված արտաքին աշխարհից՝ խճողված էր բազմահազար գաղթականներով, որոնք թափված էին գյուղերում ու քաղաքներում և ճանապարհների վրա։ Էջմիածին—Երևան, Երևան—Դիլիջան խճուղու վրա խոնվում էին աննպատակ շարժվող գաղթականներ, սայլեր և անասուններ։ Երկաթուղին չէր գործում։ Պարենավորման տագնապը օրեցօր սրվում էր. հացն ու ապրուստի այլ միջոցները դժվարությամբ էին ճարվում։ Այստեղ ու այնտեղ երևում էին համաճարակային հիվանդություններ։ Ժողովրդի և զորքի հոգեկան վիճակը ընկճված էր անսահման։

Այսպիսի դրության մեջ, թուրքերի ընդհանուր հարձակումը մի պահ Երևանում առաջ բերեց անասելի իրարանցում և սարսափ։ Դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ։ Հաղթության վստահություն չէին ներշնչում և մինչև այդ բանակից հասնող տեղեկությունները. զոր. Սիլիկյանի հաղորդագրությունները մռայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը։ Բնակչությունը պատրաստվում էր փախուստի։

Բայց ո՞ւր փախչել։ Ճանապարհները դեպի Թիֆլիս ու Բաքու փակված էին ամուր։ Պարսկաստան տանող երկաթուղին չէր գործում. Շարուր—Նախիջևանը մահմեդականների ձեռքին էր։ Իսկ հարավից և արևմուտքից թուրքն էր գալիս՝ կոտորելով հանդիպող հային։ Փախուստը այս պայմաններում հավասար էր մահվան, ինչպես և անձնատուր լինելը։ Ելք չկար։ Ելքը դիմադրությունն էր, կռիվը. քանի որ մահը անխուսափելի է, գեթ պատվով մեռնել։ Մա՛հ կամ ազատություն՝ ուրիշ փրկություն չկա։ Եվ ահա կատարվում է հրաշքը՝ մեկը այն հրաշքներից, որոնք գալիս են բոլորովին չսպասված և փրկում անհույս համարված կացությունները։ Ժողովուրդը, նրա առաջնորդները, զորքը, ամենքը համակվում են մեկ գիտակցությամբ՝ հաղթել կամ մեռնել։

Եվ Արարատյան դաշտի ժողովուրդը մի մարդու պես ոտքի է կանգնում։ Գործում են ամենքը։ Ազգային խորհուրդը վարում է բանակի լրացման, կազմակերպման ու մատակարարման գործը։ Հրամանատարությունը կարգավորում ու բարձրացնում է զորքի մարտական ուժը։ Զոր. Սիլիկյանը մի շարք հրամաններով ու կոչերով խրախույս է ներշնչում զինվորներին ու հասարակությանը։ Ամենքը լծվում են թիկունքային աշխատանքի։ Կանայք, օրիորդները ուտելիք, ծխախոտ, վիրակապեր են պատրաստում։ Հոգևորականությունը խաչ ու քարոզով մտնում է ժողովրդի ու զորքի մեջ։ Գարեգին եպ. Հովսեփյանը շրջում է մի մասից

մյուսը և իր հրաշունչ ճառերով բարձրացնում է զորքի տրամադրությունը։ Կրկնվում էին Վարդանաց պատմական օրերը...

Երբ մայիսի 21-ին երկաթուղու ընթացքով շարժվող թուրքերը երևավացին Սարդարապատի մոտ, այլևս իրենց առջև գտան հաղթելու վճռականությամբ տոգորված հայ զինվորին։ Մոտավոր հաշվով, զոր. Սիլիկյանի զորքի քանակը, այդ օրերին, հասնում էր 10 000 հոգու՝ բաղկացած հետևյալ մասերից. 4-րդ գունդը՝ 1500 սվին, 5-րդ գունդը՝ 800, պարտիզանական առաջին գունդը՝ 1200, Երզնկայի գունդը՝ 700, Մակուի գունդը՝ 300, սպայակույտի պարեսի գումարտակը՝ 200, Վանի առաջին և երկրորդ գնդերը՝ 2500 սվին, 2-րդ ձիավոր գունդը՝ 700, Զեյթունի ձիավոր գունդը՝ 500, պարտիզանական ձիավոր գունդը՝ 800, հատուկ ձիավոր գունդը՝ 500, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրադի խմբերը՝ 500 ձիավոր, և 4 մարտկոց 16 թնդանոթներով*։

Այս ուժերը բաժանված էին երկու մասի. մի մասը Դրոյի հրամանատարության տակ Բաշ-Ապարանի ճակատում, մյուսը՝ զոր. Դանիել բեգ Փիրումյանի հրամանատարության տակ Սարդարապատի դաշտում։ Զորքերի ընդհանուր հրամանատարն էր զոր. Սիլիկյանը, սպայակույտի պետ՝ գնդ. Վեքիլյանը, որ և գծել էր կռվի ընդհանուր հատակագիծը։

Թուրքերի կողմից, Սարդարապատի ճակատում, գործում էր 5-րդ դիվիզիան և բազմաթիվ անկանոն խմբեր, իսկ Բաշ-Ապարանի ուղղությամբ՝ 3-րդ դիվիզիան։

Կռիվները սկսվեցին Սարդարապատում, ուր մեր զորքերը գրավել էին Ղարախանլու—Քյորփալու—Զեյվա գյուղերի գիծը։ Մայիսի 21—22-ին տեղի ունեցան մասնակի ընդհարումներ. թշնամին որոնում էր հակառակորդի թույլ տեղը՝ վճռական գրոհի դիմելու համար։ Մայիսի 23-ին զոր. Սիլիկյանը տվեց հարձակման հրաման։ Հայկական ուժերը նետվեցին առաջ։ Բռնկվեց կատաղի ճակատամարտերի երկար մի շարք։ Թուրքերը ցույց տվին համառ դիմադրություն՝ անցնելով բազմաթիվ հակահարձակումների։ Ամբողջ օրը, առավոտից մինչև երեկո, որոտում էին թնդանոթները, որոնց գոռոցը հասնում էր մինչև Երևան, ուր նույնպես տիրում էր տենդոտ եռուզեռ։ Թիկունքից սայլերով, էշերով, ձեռքերով ռազմամթերք էին հասցնում կռվողներին, հաց, ծխախոտ, խմելու ջուր... Բազմաթիվ կամավորներ՝ ծեր ու երիտասարդ, որոնց թվում էր և էջմիածնի միաբան գիտնական Գարեգին եպս. Հովսեփյանցը, իբրև նոր ժամանակների Ղևոնդ Երեց, ռազմաճակատ էին շտապում։ Ճակատի զինվորը չէր միայն՝ ամբողջ երկիրը մի մարդ, մի շունչ դարձած՝ կռվում էր թշնամու դեմ՝ «ազատություն կամ մահ» վճռական կամքով։

Մայիսի 24-ին թուրքերը դիմեցին փախուստի։ Մերոնք հալածեցին

* Հ. Մելիքյան, Արյան ճանապարհով, «Հայրենիք» ամս., 1925 թ. մայիս։

ոգևորված։ Թշնամին հուսահատական դիմադրություն էր ցույց տալիս և աշխատում դիրքեր գրավել, բայց մերոնց շեշտակի հարվածների տակ շարունակեց փախուստը։ Հաղթությունը մերն էր։

Այդ հաղթանակի առթիվ, նույն օրը երեկոյան, զոր. Սիլիկյանը ժողովրդին ուղղեց հետևյալ սրտառուչ կոչը.

«Հայե՛ր, շտապեցե՛ք հայրենիքն ազատելու։

Հասել է ըոպեն, երբ յուրաքանչյուր հայ՝ մոռնալով իր անձնականը, հանուն Մեծ գործի՝ հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պետք է գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար։

Մենք չէինք ուզում կռվել. հանուն խաղաղության ու հաշտության, պատրաստ էինք ընդառաջ գնալու ամեն տեսակ զոհողությունների, սակայն, մեր նամարդ թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով. նա, ըստ երևույթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց, իրոք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը։ Բայց քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռներիս փորձենք պաշտպանել մեզ։ Գուցե, հաջողվի մեզ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը։

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, այդ ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, ուր մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր հերոսական գրոհի առաջ։

Հարկավոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյունքրտինքով աշխատել են գեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը։

Հայե՛ր, ժամանակը չէ դանդաղելու։ Մինչև հիսուն տարեկան ունեցող բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գալու. ես պահանջում եմ ամենքից ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով հայրենիքի պաշտպանության համար։

Հայուհինե՛ր, հիշեցե՛ք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի Մեծ գործը, անմահ Վարդանի կռիվների ժամանակ. հետևեցե՛ք նրանց օրինակին. եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցե՛ք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գալուց։ Հավաքեցե՛ք ռազմամթերք, հաց, հագուստ և ուրիշ մթերքներ...

Ես խորապես համոզված եմ, որ իմ այս կոչը անարձագանք չի մնա, և երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի քաջարի զորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայրենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյությունը։

Հանո՛ւն բազմաչարչար ժողովրդի ֆիզիկական գոյության,

Հանո՛ւն ոտնակոխ եղած ճշմարտության՝

Ոտքի՛ կանգնեցեք։ Դեպի՛ սրբազան պատերազմ։

Բոլոր զենքի ընդունակ տղամարդիկ պարտավոր են ներկայանալ Երևանում զոր. Բեժանբեգին, իսկ բոլոր հավաքված մթերքները պետք է հանձնել տեղական Ազգ. խորհուրդներին»։

Իսկապես որ հինգերորդ դարը հիշեցնող այս կոչը անարձագանք չմնաց. զոր. Սիլիկյանը ստացավ իր պահանջածը։

Մայիսի 23-ին թշնամին, խոշոր ուժերով, հարձակման դիմեց և Բաշ-Ապարանի ճակատում։ Սկզբին արյունահեղ կռիվներ։ Դրոյին հաջողվեց կանգնեցնել նրա առաջխաղացումը զգալի կորուստ պատճառելով նրան։

Ստանալով օժանդակ ուժեր, թուրքերը նորից անցան հարձակման՝ հանդիպելով մերոնց համառ դիմադրության։ Կռիվները տևեցին մի քանի օր։ Այստեղ էլ մեր զորքերը երևան բերին արտակարգ տոկունության ու քաջության։ Դրոյի հմուտ ղեկավարության տակ նրանք հետ շպրտեցին թշնամու բոլոր գրոհները և մայիսի 28-ին, մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեցին թշնամուն։ Այդ ճակատամարտում հերոսական մահով ընկավ հայ լավագույն հայդուկներից մեկը՝ ձիավոր խմբի հրամանատար Ջեմլյակը։

Մայիսի 28-ին ամբողջ ճակատի վրա, թուրքերը նահանջում էին անկարգ։ Մեր սպայակույտի այդ օրվա հաղորդագրությունը ասում է այդ մասին. «Թուրքերը երեք օրվա կռիվներից հետո, ջարդված են և նահանջում են հապճեպով։ Նրանց զորամասերը բաժանված են երեք խմբերի։ Առաջինը՝ Ալագյոզ կայարանից նահանջում է դեպի Անի կայարանը, երկրորդը՝ Ղըրմըզլու և երրորդը՝ Աղջա-Կալա։ Մեր զորամասերը քայլ առ քայլ հետապնդում են նրանց։ Ոգևորությունը աներևակայելի է»։

Եվ, իրոք, ոգևորությունը շատ մեծ էր։ Զոր. Սիլիկյանն այլևս մտածում էր ավելի լայն գործողությունների մասին՝ շարժվել դեպի Ալեքսանդրապոլ։ Իր մտքում նա օրորում էր ուրիշ ծրագիր, որ միայն մտերիմներին էր հայտնում. մի կողմ թողնել Ալեքսանդրապոլը և հարձակվել Կարսի վրա։ Եվ համոզված էր, որ կգրավե Կարսը, իսկ Կարսի գրավումով անխուսափելիորեն կգրավվեր և Ալեքսանդրապոլը. թիկունքից կտրված թուրքերը չէին մնա Շիրակում։

Սարդարապատի հաղթության հաջորդ օրը, մայիսի 29-ին, զոր Սիլիկյանը, դիմեց հայ ժողովրդին հետևյալ կոչով.

«Հայե՛ր։ Մեր քաջարի զորքերի հերոսական գործունեությունը շարունակվում է, և թուրք զորքերը նահանջում են։

Մենք պետք է հետ առնենք Ալեքսանդրապոլը, որը այնպես նենգորեն գրավեցին թուրքերը։

Մեր բոլորիս մտքերը ամբողջովին պետք է սևեռած լինեն դեպի Ալեքսանդրապոլը. մենք պետք է հետ առնենք այն և ապա միայն թուրքերի հետ բանակցության մեջ մտնենք հաշտություն կնքելու համար։

Մեզ բոլորիս շատ լավ պետք է հայտնի լինի, թե որ աստիճանի գրգռվել է անկուշտ ու միաժամանակ թույլ թուրք կառավարության

ախորժակը։ Նա պահանջում է ամբողջ Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառները՝ Էջմիածին վանքի հետ միասին և Երևանի, Նախիջևանի գավառների մեծ մասը։

Մի՞թե մենք պետք է տանենք այդպիսի անարգանք։ Մի՞թե հեշտ ու հանգիստ սրտով պետք է տանք թշնամուն մեր հայրենի հողերը, որ կերակրել, կերակրում են և պիտի կերակրեն մեզ, և մեր սրբատեղին՝ Սուրբ Էջմիածինը։

Ո՛չ, երբեք, հա՛յ ժողովուրդ, դու չպիտի թույլ տաս այդպիսի անարգանք։

Եվ այդ անարգանքը տեղի չի ունենա, եթե մենք հասնենք մինչև Ալեքսանդրապոլ։

Քի՛չ է մնացել մինչև Ալեքսանդրապոլ. հարկավոր է միայն օգնել խրամատներում գտնվող մեր քաջերին, և մի երեք-չորս օրից հետո մենք կհասնենք մեր նպատակին։

Արդ, ուրեմն, մի՛ դանդաղեք, հայե՛ր. շտապով խմբվեցեք խիտ ու համերաշխ շարքերով, վռնդեցե՛ք թշնամուն մեր հայրենի արյունաներկ հողից, և թո՛ղ ձեզ հետ լինի ձեր հետնորդների օրհնությունը։

Դեպի՛ զենք բոլորդ։

Դեպի՛ Ալեքսանդրապոլ»։

Դեպի՛ Ալեքսանդրապոլ... Այս մարտակոչը հարազատ էր ամենքի սրտին՝ և՛ հաղթական ու հպարտ զորքին, և՛ անխուսափելի մահից ազատված ժողովրդին։ Ոգևորված՝ ամենքն ապրում էին Ալեքսանդրապոլը վերագրավելու հեռանկարով։ Եվ մինչ զոր. Սիլիկյանը պատրաստվում էր ընդհանուր առաջխաղացման, հեռագիր ստացվեց, որ Բաթումում ստորագրվել է հաշտության դաշնագիր. զոր. Նազարբեգյանը հրամայում էր կնքել զինադադար...

Կարելի է երևակայել, թե այս լուրը ի՞նչ տպավորություն գործեց Երևանում ու բանակի մեջ. հուսահատությունը անսահման էր. Ազգային խորհուրդը անընդհատ նիստեր էր գումարում, բայց որոշ եզրակացության չէր կարողանում հանգել. մեծամասնություն չէր կազմվում։ Արամը գրեթե չէր մասնակցում այդ նիստերին. նա ամփոփվել էր իր մեջ և սպասում էր զոր. Նազարբեգյանին։ Ազգ. խորհուրդն ալեկոծվում էր առանց նրան՝ ոմանք առաջարկում էին հաշտվել կացության հետ և ընդունել Բաթումի դաշնագրի պայմանները, ուրիշները՝ գլխավորապես դաշնակցականները, պահանջում էին չեղյալ համարել զոր. Նազարբեգյանի հեռագիրը հաշտության մասին, զորքերի ընդհանուր հրամանատար նշանակել զոր. Սիլիկյանին և շարունակել պայքարը։ Այս առաջարկի կողմնակիցներին թև էր տալիս և զորքի խիստ բացասական վերաբերումը դեպի Բաթումի դաշնագիրը. առաջավոր դիրքերից հեռագրեր էին տեղում, որոնք բողոքում էին այդ դաշնագրի դեմ և խնդրում էին Ազգ. խորհրդին շարունակել պատերազմը։ Այս տրամադրու-

թյանը ուժ էր տալիս, մանավանդ, այն հանգամանքը, որ, ըստ դաշնագրի պայմանների, երկրի ամենահարուստ մասերը հանձնում էին թշնամուն, և Ղամարլուն, որ դեռ չէր գրավված թուրքերի կողմից, բայց դաշնագրով պիտի անցներ նրանց, հարյուրավոր ներկայացուցիչներ էր ուղարկել Երևան, որոնք ցույց արին Ազգ. խորհրդի առջև՝ պահանջելով մերժել Բաթումի դաշնագիրը։ Ցուցարարները— կանայք ու օրիորդներ— դրոշակները ձեռներին՝ կանգնում էին Ազգ. խորհրդի շենքի առջև և ներկայացուցիչների բերանով հայտարարում, թե իրենց շրջանը ամբողջ ունեցվածքն ու կռվող ուժերը տրամադրում է Ազգ. խորհրդին, միայն թե թշնամու պայմանները չընդունվեն։

Վճիռ տալը անչափ դժվար էր. վտանգը շատ էր մեծ։ Հայկական զորքերի ընդհանուր քանակը այդ օրերին հասնում էր 30 ոչ լրիվ գումարտակների, մինչդեռ Թուրքիան շարժման մեջ էր դրել 5 դիվիզիա (3-րդ, 5-րդ, 9-րդ, 11-րդ և 36-րդ), այսինքն՝ 50 գումարտակ և ի վիճակի էր նորանոր ուժեր հասցնելու։ Հայ զինվորների թիվը 12 000-ից չէր անցնում. թուրքերն առաջ էին քաշել 35 000 կռվող։

Ազգ. խորհուրդը չկարողացավ միակամություն երևան բերել, և զոր. Սիլիկյանին մնաց ենթարկվել զոր. Նազարբեգյանի հրամանին։ Պատերազմը վերջացավ։ Ղամարլուի շրջանի բնակչության մի մասը անմիջապես գաղթեց. մյուսը հեռացավ թուրքերի գալուց հետո։

Բաթումի դաշնագրի հետ կապված խնդիրները կարգադրելու համար Ազգ. խորհուրդը Ալեքսանդրապոլ ուղարկեց հատուկ պատվիրակություն՝ բաղկացած Մ. Մուսինյանից, Թամամշյանից, բժ. Հ. Մելիքյանից, զոր. Տեր-Հակոբյանից, գնդ. Քիշմիշյանից և գնդ. Վեքիլյանից։ Պատվիրակությանը հանձնարարվեց բանակցել թուրք հրամանատարության՝ Քյազիմ Կարաբեքիրի հետ Բաթումի դաշնագրից բխող հետևյալ հարցերի մասին. 1) Գաղթականության վերադարձը իրենց տեղերը. 2) Գերիների փոխանակումը. 3) Թուրքական զորքի Հայաստանից անցնելու պայմանները. 4) Երկաթուղու փոխանցման խնդիրը. 5) Ղարաքիլիսայի պարպումը և հանձնումը հայերին։

Պատվիրակությունը Ալեքսանդրապոլում ընդունվեց պատշաճ քաղաքավարությամբ. սկսվեցին բանակցությունները, բայց հայերի դրած հարցերից և ո՛չ մեկը չընդունվեց թուրքերի կողմից։ Նրանց զբաղեցնողը Հայաստանի վրայով զորք փոխադրելու իրավունքն էր և Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղագծի անմիջական փոխանցումը։ Եվ ա՛յս պահանջներին էր, որ ամենից ավելի հակառակում էին հայերը։

Տեսնելով հայերի համառությունը, առանց ընդհատելու Ալեքսանդրապոլի բանակցությունները, հուլիսի 7-ին, թուրքերն անցան առաջխաղացման Սարդարապատի ճակատում։ Զոր. Սիլիկյանը հրամայեց մեր զորքերին թողնել երկաթուղին և դիրքեր գրավել Էջմիածնի շրջանում։ Հուլիսի 8-ին թուրքերը մեծ ուժերով հարձակվեցին Քյորփալու—Զեյվա գծի վրա, բայց հետ շպրտվեցին 5-րդ գնդի և կամավորական խմբերի ուժգին հակահարվածով։ Թողնելով այս կետում պահակ զորամասեր՝ թուրքերը շարժվեցին դեպի արևելք. հուլ. 8-ին գրավեցին Խաթունարխ գյուղը Էջմիածնից 10 կիլոմետրի վրա. հուլիսի 9-ին մտան Ջորանքյարա, Նեջերլու, Թազաքենդ և Աղհամզալու գյուղերը։ Այսպիսով հաստատվեց Բաթումի դաշնագրի սահմանագիծը։

Թուրքերը դիրքեր գրավեցին Երևանից 7 կիլոմետր հեռու՝ թնդանոթների բերաններն ուղղելով դեպի Հայաստանի մայրաքաղաքը։

ԳԼՈՒԽ ԺԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպես, Հայոց աշխարհը արյան ու կրակի մեջ էր։ Իսկ ի՞նչ էր կատարվում այդ միջոցին Բաթումում ու Թիֆլիսում։

Մայիսի 11-ին, Թուրքերի պայմաններն ստանալուց հետո, Անդրկ. Բաթումի պատվիրակությունը գրավոր պնդեց Բրեստ-Լիտովսկի պայմանների վրա, և այս առթիվ սկսվեց թղթերի փոխանակություն Թուրք և Անդրկովկասյան պատվիրակությունների միջև. անդրկովկասցիք անշեղ կանգնած էին Բրեստ-Լիտովսկի պայմանների վրա, բողոքում էին այդ դաշնագրի սահմաններից դուրս ընկնող շրջանների գրավման դեմ և պահանջում էին, բանակցություններին մասնակցեն նաև Թուրքիայի դիտակիցները. Թուրքերը հակաճառում ու սպառնում էին։

Այս բանակցությունների ընթացքում, մայիսի 14-ին Թուրքերը պահանջեցին անմիջապես թույլ տալ Թուրք զորքերին Ալեքսանդրապոլի վրայով անցնել դեպի Ջուլֆա։ Եվ դեռ պատասխանը չստացված, ինչպես տեսանք, հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա։

Բանակցություններն արագացնելու նպատակով, մայիսի 19-ին Գերմանիայի ներկայացուցիչ զոր. ֆոն Լոսովը առաջարկեց Անդրկ. պատվիրակությանը իր միջնորդությունը։ Անդրկովկասյան պատվիրակությունը, հակառակ ազրբեջանցիների վարանումին, ընդունեց ուրախությամբ։

Հաջորդ օրը, մայիսի 20-ին, Բաթում հասան Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ բժ. Համ. Օհանջանյանն ու Արշ. Զոհրաբյանը՝ գերման կառավարության հովանավորությունը խնդրելու առաքելությամբ։ Մայիսի 22-ին այդ իմաստով պաշտոնապես դիմում արվեց զոր. ֆոն Լոսովին, և այս վերջինը իսկույն հեռագրեց Պոլսի գերման դեսպանին այդ դիմումի մասին՝ ավելացնելով միաժամանակ, որ հայ ժողովրդի վիճակը ողբերգական է և որ Թուրքերը ձգտում են գրավել հայկական գավառներն ու բնաջնջել հայերին։

Մայիսի 24-ին զոր. ֆոն Լոսովը հաղորդեց Անդրկովկասյան պատվիրակությանը, որ Թուրքերը մերժեցին միջնորդության իր առաջարկը, իսկ մայիսի 25-ի երեկոյան, մի առանձին նամակով, հայտնեց, թե իր ստացած ստույգ տեղեկությունների համաձայն Անդրկովկասյան Հանրապետությունը քայքայման նախօրյակին է գտնվում, որով իր ներկայությունը դառնում է այլևս ավելորդ, և ինքը նույն օրը ևեթ մեկնելու է Բաթումից։

Եվ ճիշտ որ, Անդրկովկասը արագ քայլերով գնում էր դեպի քայքայում։ Օր օրի վրա սաստկանում էին հակամարտությունները կովկասյան ժողովուրդների միջև, որոնցից վրացիները գաղտնի, բայց տենդագին որոնում էին գերմանացիների հովանավորությունը, ազրբեջանցիները բռնել էին Թուրքերի փեշից և քաշում էին դեպի Բաքու, որը այդ օրերին բոլշևիկների ձեռքն էր. հայերը մնացել էին մենակ և օրհասական կռիվ էին մղում մահ ու ավեր սփռելով առաջ շարժվող Թուրքական զորքերի դեմ։

Հայ ներկայացուցիչները Բաթումում փորձեցին համաձայնության գալ ազրբեջանցիների հետ, բայց հանդիպեցին խիստ անզիջող վերաբերումի. ազրբեջանցիները պահանջում էին ոչ միայն ամբողջ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Շարուր—Նախիջևանը, այլև Երևանի ու Էջմիածնի գավառների մեծ մասը՝ Երևան քաղաքով հանդերձ։ «Հայաստանի մայրաքաղաքը կարող է լինել Էջմիածինը»,—ասում էր շնականորեն Ուսուպբեգովը Խան-Խոյսկու և Ռասուլ Զադեի հավանությամբ։ Եվ սրանք համարվում էին դեռ չափավորները։ Անդին գործում էր դր. Սուլթանովը Գանձակի ու Բաքվի Ազգ. խորհուրդների խան ու բեգ անդամների հետ, որոնցից 30 հոգիանոց մի պատվիրակություն եկել էր Բաթում և համոզում էր Թուրքերին օր առաջ շարժվել դեպի Անդրկովկասի խորքերը՝ աղատելու համար Բաքվի մահմեդականներին բոլշևիկների և հայերի ձեռքից։ Ազրբեջանցի Թուրքերը Անդրկ. պատվիրակության մեջ անվերապահ կերպով պաշտպանում էին Թուրքերին և իրենց քայլերը հարմարեցնում վերջիններիս ծրագրերին։

Ըստ էության, ավելի լավ չէր և վրաց ներկայացուցիչների դիրքը։ Ինչպես պարզվեց հետո, Չխենկելին և իր ընկերները՝ պատվիրակության մյուս անդամներից թաքուն, բանակցություններ էին վարում Գերմանացիների հետ՝ Վրաստանը նրանց հովանավորության տակ դնելու նպատակով։

Հաճախ Բաթումում երևում էին վրացի գործիչներ, որոնք նույնպես գաղտագողի խորհրդակցություններ էին անում, տեսնվում էին մերթ Թուրքերի, մերթ գերմանացիների հետ և հայերի թիկունքում ինչ-որ մութ հաշիվներ կարգադրում։ Հետագայում հայտնի դարձավ, որ նրանք Վրաստանի անկախության հայտարարությունն էին նախապատրաստում։ Վրաց պատվիրակության անդամներից մեկը՝ պրոֆ. Զ. Ավալովը հետևյալ ձևով է ներկայացնում այդ դավերը.

«Գերմանական պատվիրակության հետ ունեցած բաց ու անկեղծ զրույցների ընթացքում պատրաստվեց Վրաստանի նշվող դիրքը՝ անդրկովկասյան միության անխուսափելի քայքայման նախատեսության հետևանքով։ Միայն մի քանի մարդ տեղյակ էր գաղտնիքին։ Թիֆլիսից

նկած Ն. Ժորդանիան Վրաց ազգ. խորհրդի նախագահի և Սեյմի ու Վրաստանի սոց.-դեմոկրատական կուսակցության պարագլուխի իր դիրքով հանդիսացավ այն անձը, որին վիճակվեց Թիֆլիսում հիմնական ակտերը (Վրաստանի անկախության հայտարարությունը և Անդրկ. սեյմի ինքնավերացումը) անցկացնելու դժվարին գործը։ Նա, ըստ երևույթին, ատատանվում էր՝ միանգամայն հասկանալի և օրինական պատճառներով. Վրաստանի անկախությունը քիչ էր կապվում իր նախկին գործունեության ու հավատամքի և Ռուս. սոց.-դեմ. կուսակցությանը պատկանելու հետ։ Բայց մի անգամ որ «հավատաց», այլևս ճարպիկ ձեռքով սկսեց անցկացնել նոր ծրագիրը։

Մայիսի 22-ին Ժորդանիան վերադարձավ Թիֆլիս։ «Գերման-վրացական» աշխատանքը ամբողջ թափով ընթանում էր «անդրկովկասյան-թրքական» աշխատանքին զուգընթաց»*։

Նույն Ավալովը այդ օրերի դեպքերը հետևյալ ձևով է արձանագրում իր հուշատետրի մեջ.

«Բաթում, 21 մայիսի 1918. Առավոտյան Ն. Ժորդանիայի և Նիկոլաձեի հետ քննում ենք քարտեզի վրա մեզ անհրաժեշտ սահմանները, ժայրահեղ դեպքում պատրաստ ենք «տալու» Զաքաթալայի շրջանը։ Հոգուտ Ադրբեջանի սահմանային ուրիշ որևէ սրբագրություն չենք անի։ Թուրքերը դանակը կոկորդներիս դրած՝ պահանջներ են անում, բայց Ախալցխան, Խերթվիսը Վրաստանին պետք է մնան։

Ցերեկը՝ խորհրդակցություն վրացիների ու թաթարների միջև սահմանների մասին։ Մի կողմից՝ Նիկոլաձե, Ժորդանիա, Սուրգուլաձե և ես. մյուս կողմից՝ Խան-Խոյսկի, Խասամեդով, Սաֆիքուրդսկի, Պեպինով, Ուսուպբեգով, Ջաֆարով։ Հայերը հրաժարվել են Գանձակի նահանգի մասերից (Ղարաբաղ), իսկ մահմեդականները... համաձայն են կազմել Անդրկովկասում առանձին հայկական կանտոն (օրինակ, զեմստվոյական «Ալեքսանդրապոլի նահանգի» ձևով)։ Մեզանից էլ ուզում են գրավել Սրղնախ, Թիֆլիս և Բորչալու գավառների մասերը, բայց համաձայնությունը հնարավոր է. նրանք կդիջեն։ Ախալցխայի խնդրի առթիվ Պեպինովը առաջ է քաշում ինքնորոշման պահանջը (հասկանալով կցումը Թուրքիային)։

Ընդհանուր առմամբ, մեր բարեկամ մահմեդականները հավատացնում են, որ ամեն կերպ պաշտպանելու են «եռյակ» Անդրկովկասը. բայց ասում են, ինչ անել, եթե Թուրքերը չհրաժարվեն իրենց պահանջներից, և ծրագրվող «կանտոններից» մեկը բացակայի։ Նրանց փափագն է, այդ դեպքում, պահպանել Անդրկովկասը գեթ որպես «երկյակ միություն»։

---

* З. Авалов. Независимость Грузии в международной политике, 1918—21 г., Парижъ. 1924 г., стр. 5.

«Մայիսի 22. Աչքի առաջ ունենալով «Անդրկովկասին սպառնացող փլուզումը՝ վճռական խորհրդակցություն եղավ Վրաստանի անկախությունը հայտարարելու անհրաժեշտության մասին։ Որագրին այն է, որի վրա վաղուց ի վեր, իբրև «խորհրդական», պնդում եմ այստեղ և որին Չխենկելին և ուրիշները համաձայն են։ Վրաստանի անկախությունն ու հողային ամբողջությունը երաշխավորվում է Գերմանիայի կողմից։ Արևելյան Անդրկովկասը ստանում է գործելու ազատություն և կազմակերպվում է Թուրքերի օգնությամբ։ Հայերն էլ պարտավորված պիտի լինեն հայտարարել իրենց անկախությունը...

Գրեցի Վրաստանի անկախության հայտարարության նախագիծը՝ ժամանակն է ճշտորոշել, գործել։ Չխենկելին, Նիկոլաձեն, Ժորդանիան, Սուրգուլաձեն հավանություն տվին։ Ժորդանիան այդ նախագիծն իր հետ տարավ Թիֆլիս։ Մնաս բարովի ժամանակ մենք առանձնապես սեղմում էինք նրա ձեռքերը։ Նա ստիպված պիտի լինի բեմադրել մի շատ լուրջ թատերախաղ։ Մտածեցե՛ք, միայն զանազան կազմակերպությունների, խորհուրդների և է՛լ ավելի թանձր նախապաշարումների մեծության մասին։ Բայց նա, երևի, արդեն նախապատրաստել է վերջին գործողությունը. մնում է քաշել թելը»։

«Մայիսի 23. Այսօր, ի միջի այլոց, կարդում ենք համաձայնության նախագիծը, որով վրաց ժամանակավոր կառավարությունը Գերմանիային իրավունք է տալիս օգտվելու Վրաստանի նավահանգիստներում գտնվող բոլոր նավերից»։

Մայիսի 24. Լարված աշխատանք։ Վեզենդոնքի հետ կարդում եմ վերջնական նախագծերը։ Շատերն սկսում են գլխի ընկնել, որ բեմի հետևը կատարվում է խուլ աշխատանք, որ բեմասարքը փոխվում է։ Ուշ գիշերը կազմում են հետևյալ հեռագիրը, որ մայիսի 25-ի գիշերը ուղարկվում է Չխենկելիի ստորագրությամբ.

«Թիֆլիս, զորավար Քվինիքաձեին.

Հաղորդեցե՛ք Վրաստանի Ազգային խորհրդի նախագահությանը հետևյալը. անկախության հայտարարության հետագա հապաղումը կունենա անուղղելի հետևանքներ։ Գերմանական միջնորդության փորձը չհաջողվեց։ Մնում է մեկ բան. Թուրք արշավին հակադրել Գերմանիայի աջակցությունը վայելող անկախ Վրաստանը։ Նրա ներկայացուցիչը վրաց կառավարության մոտ կլինի կոմս Շուլենբուրգը, որին պետք է անմիջապես ճանաչել հենց որ հայտարարություն արվի... Արդեն ստորագրության համար պատրաստված են մի շարք ժամանակավոր համաձայնություններ Գերմանիայի հետ... Սպասում ենք շուտափույթ հաղորդագրություն ակտի մասին»։

Զոր. Ի. Օդիշելիձեն սեփական ձեռքերով ծածկագրեց այս հեռագիրը։

«Մայիսի 25. Ամբողջ թափով ավարտում ենք հետևուլիչյան աշ-

խատանքը... Ուշ գիշերով Չխենկելիի ու Նիկոլաձեի հետ խոսում ենք մեր հավանականությունների մասին։ Թիֆլիսից հեռագիր ստացվեց. անկախությունը կհայտարարվի վաղը, մայիսի 26-ին։ Հարցը անց է կացված բոլոր աստիճաններով։ Միայն թուրքերը խնդրում են մի քիչ սպասել»*։

Նվ մայիսի 26-ին, Ավալովը գոհունակությամբ արձանագրում է. «Մեր անդրկովկասյան աշխատանքը անցավ աննկատելի։ Ոչ ոք, կարծես, չի անդրկովկասյան աշխատանքը անցավ աննկատելի։ Ոչ ոք, կարծես, չի կասկածում, թե ի՞նչ է կատարվելու այսօր և վաղը... Մենք անկախություն ենք կազմակերպում։ Գերմանիան բռնելու է թուրքերի փեշը. դրա փոխարեն մեզանից բան-ման կառնե։ Ազրբեջանը միաժամանակ կլինի Թուրքիայի ազդեցության ներքո։ Հայաստանը կմնա թուրքերի ճնշման տակ, որ կմեղմացվի գերմանացիների ներկայությամբ»**։

Այսպես, ուրեմն, ազրբեջանցիները թուրքերի հետ կարգադրում են իրենց ազգային խնդիրները. Անդրկովկասյան պատվիրակության նախագահ Չխենկելին Ժորդանիայի ու Նիկոլաձեի հետ, գերմանացիների փեշից բռնած, գաղտագողի դավադրություն են սարքում Անդրկովկասյան միության դեմ և նախապատրաստում Վրաստանի անկախության հայտարարությունը։ Հայերն են միայն մեջտեղը՝ մենակ, անբարեկամ, անպաշտպան, ամենքից լքված, զոհ հարևանների դավաճանության...

Ավելի զարհուրելի վիճակ դժվար էր երևակայել։ Մի աղոտ լույս էր մնացել միայն հայերի համար՝ գերմանացիների պաշտպանությունը, բայց ֆոն Լոսովը մեկից ավելի անգամներ հայտնել էր, որ թուրքերը չեն լսում իրենց և, հակառակ Բեռլինից եկած պահանջների, անում են իրենց գիտցածը։ Հետևաբար ի՞նչ անել։ Ո՞ւմ դիմել։ Ո՞ւր որոնել փրկություն։ Ֆոն Լոսովի խորհրդով Հ. ազգ. խորհրդի ներկայացուցիչներ Օհանջանյանն ու Զոհրաբյանը որոշեցին մեկնել Բեռլին. ֆոն Լոսովը խոստացավ տանել նրանց իր նավով, վրաց ներկայացուցիչների հետ միասին, Փոթիից։

Մայիսի 25-ին գերման պատվիրակությունը հեռացավ Բաթումից, իսկ մյուս օրը, մայիսի 26-ի երեկոյան ժամը 8-ին, օսմանյան պատվիրակությունը Անդրկ. պատվիրակությանը հանձնեց հետևյալ վերջնագիրը.

Անդրկովկասյան պատվիրակության նախագահին

«Ցավով հաստատում եմ, որ տակավին ոչ մի որոշ պատասխան չի տրված այն առաջարկություններին, որ ես պատիվ ունեցա Օսմանյան

* Այստեղից երևում է, որ վրացիք միայն հայերից էին գաղտնի պահում իրենց ծրագրերը. թուրքերին, ընդհակառակը, մանակից էին դարձնում իրենց անելիքներին...

** Ավալովի նույն գիրքը, էջ 57—61։

կայսերական կառավարության կողմից հանձնելու Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետության պատվիրակության Բաթումի խորհրդաժողովի առաջին նիստում, մայիսի 11-ին, չնայած որ բավական երկար ժամանակ, այսինքն՝ երկու շաբաթ է անցել այն օրից, երբ նրանք ձևակերպվեցին։ Մինչդեռ ինչպես հայտնի է ձերդ գերազանցությանը, Կովկասի վիճակը ավելի քան տագնապալի է ու երկդիմի և առանց հապաղելու պետք է լուսաբանվի։

Հարյուր հազարավոր թուրքեր և մահմեդականներ Բաքվում ու շրջակայքում տառապում են անխիղճ հրոսակների, այսպես կոչված հեղափոխականների արյունոտ լծից, և անուղղելի աղետը, որ սպառնում է այդ դժբախտներին, դառնում է ավելի ու ավելի անխուսափելի։ Թուրք և մահմեդական բնակիչների ճակատագիրը Կովկասի մյուս մասերում էլ, ուր թալանիչների ու շարագործների բազմաթիվ կազմակերպված հրոսախմբեր նրան պատճառում են անվերջ ու հարաճուն կերպով ամեն կարգի բռնություններ, ավելի հանգստացնող չէ ու չի կարող չհրավիրել ամենալուրջ ուշադրություն։ Դուք կընդունեք, սակայն, պ. նախագահ, որ այդ անունին արժանի և ո՛չ մի կառավարություն չի կարող դիտել անտարբեր աչքով, որ իր երկրին սահմանակից մի հողի վրա անպատիժ կերպով աճեն նման ոճրագործություններ, և կգիտակցեք, անշուշտ, որ Օսմանյան կայսերական կառավարության դրությունը առանձնապես փափուկ է Կովկասը ծվատող անիշխանության հանդեպ, որովհետև այդ վերաբերվում է նույնպես և առավելաբար ապահովությանը մի ազգաբնակչության, որ ցեղի ու կրոնի ամենասերտ ազգակցությունն ունի կայսրության բնակչության հետ։ Մյուս կողմից, ընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները կայսերական կառավարությանը գնում են Կովկասի վրայով, երկաթուղիներով, ըստ կարելվույն շուտ, դեպի պատերազմի ուրիշ ռազմաբեմ զորքի ազատ փոխադրությունը ապահովելու անհրաժեշտության առջև։ Այդ ևս պահանջում է, որ անհապաղ վերջ տրվի ներկա երկդիմի կացության։

Այս բոլոր պատճառներով, Օսմանյան կայսերական պատվիրակությունը պարտք է համարում պահանջել, որ անմիջապես հաղորդվի իրեն Անդրկովկասյան պատվիրակության պատասխանը առաջ արված առաջարկություններին, այլև սահմանների սրբագրության վերաբերվող նոր առաջարկին, որի բնագիրը պատիվ ունեցա ընդսմին ուղարկելու ձերդ գերազանցության։

Այսպիսով, իմ կառավարությունը՝ ընդունելով, որ միայն վերոհիշյալ առաջարկությունների ճշտիվ և արագ ընդունումը Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետության կառավարության կողմից կարող է Կովկասը հասցնել գոհացուցիչ դրության և որ միայն այդ ընդունումը ի վիճակի է ստեղծել կայուն դրություն և համարվում է բավարար երաշխիք թուրք և մահմեդական բնակչության ապահովության և անդորրու-

թյան համար, հանձնարարել է ինձ խնդրելու ձերդ գերազանցությունը՝ հաղորդել ինձ, այս օրվա երեկոյան ժամը 8-ից սկսած, 72 ժամվա ընթացքում ընդունո՞ւմ է արդյոք հանրապետության կառավարությունը օսմանյան առաջարկություններն իրենց բովանդակ ծավալով։

Ես պետք է ավելացնեմ նաև, որ այդ երեք օրվա ընթացքում հարաբերությունները մեր երկու կառավարությունների միջև կարող են պարբերել բարեկամական բնույթ, ա՛յն անառարկելի պայմանով, որ թուրք զորքերի գործողությունները Կովկասի հարավում որևէ դիմադրության չհանդիպեն։ Ընդունեցեք և այլն. Խալիլ»։

«Սահմանային սրբագրություն» կոչվածը հողային նոր պահանջ էր. թուրքերն այժմ պահանջում էին Նախիջևանի ու Ախալցխայի գավառները, անշուշտ, ազրբեջանցիների բացահայտ թելադրանքով։

Իսկ ի՞նչ էր կատարվում այդ միջոցին Թիֆլիսում։

Նույն օրը, մայիսի 26-ին, գումարվեց Սեյմի վերջին, ողբերգական նիստը, որի մեջ վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցության պարագլուխներից Ի. Ծերեթելին արավ հետևյալ հայտարարությունը.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. նրանից անջատվել են հայերը և կամովին՝ թուրքերը։ Անդրկովկասի կեղծ անկախությունը խանգարում է նրան վարվելու ազատորեն և իր լիազոր ուժերը գործադրելու իր անկախությունը պաշտպանելու համար։

Այս հանգամանքներում մեր պարտքն է ասել վրաց ժողովրդին. Դու մնացել ես մենակ, չունես պետական կազմ, չունես քո պատվիրակությունը և, որքան էլ ծանր լինի խոստովանել, դու ապրում ես պատրանքներով. չկա՛ն նրանք, չկա՛ Անդրկովկասի միությունը և, ուրեմն, եթե ուզում ես փրկել քեզ, պաշտպանել քո շահերը, ինչպես և քո հարևանների շահերը, պետք է ունենաս քո ինքնուրույն պետական կազմը։

...Դժբախտաբար, գոյություն չունի այլևս անդրկովկասյան միությունը և փաստորեն չկա մի ընդհանուր ներկայացուցչական կենտրոնական մարմին, ուստի Սեյմը պետք է հայտարարե, թե ինքը հրաժարվում է իր վրա դրված լիազորություններից ու ցրվի»։

Նախընթաց դեպքերի ուշադիր հետևողը կտեսնե առանց դժվարության, թե Ծերեթելիի հայտարարությունը սկզբից մինչև վերջ մտացածին փաստերի վրա է հիմնված. ո՛չ հայերն էին «անջատվել» վրացիներից և ո՛չ էլ վրացի ժողովուրդն էր մնացել մենակ։ Անդրկովկասի անկախության «կեղծությունը» կամ միության գոյություն չունենալը նոր երևույթ չէր. նա նույնն էր, ինչ որ և անկախության սկզբում։ «Կեղծը» Ծերեթելիի մտայնությունն է, այսինքն՝ վրաց վարիչ շրջանների մտայնությունը։ Նրանք որոշել էին դուրս գալ Անդրկովկասյան միությունից և պատրվակ էին փնտրում՝ իրենց տգեղ վարմունքը արտաքին աշխարհի աչքին արդարացնելու համար։

Վրացիների պնդումի վրա Սեյմը ընդունեց մի բանաձև, որը ասում էր. «Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության խնդրում երևան եկան հիմնական տարակարծություններ Անդրկովկասի անկախ հանրապետությունը կազմող ազգերի միջև, որով անհնար է դառնում ամբողջ Անդրկովկասի համար մի հեղինակավոր իշխանության գոյությունը, Սեյմը արձանագրում է Անդրկովկասի քայքայման փաստը և հայտարարում չեղյալ իր լիազորությունները»։

Մայիսի 26-ի կեսօրին ցրվեց Սեյմը, իսկ հինգ ժամ վերջը, նույն սրահում գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, որ և բեմադրեց Վրաստանի անկախության հայտարարության ծիսակատարությունը։

Նույն օրը, երեկոյան, Բաթումում ստացվեց Անդրկովկասի Հանրապետության քայքայման և Վրաստանի անկախության հայտարարության լուրը։ Ն. Ժորդանիան ու Ն. Ռամիշվիլին հեռագրում էին Ջխենկելիին. «Այսօր, կեսօրից հետո ժամը 5-ին, Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարեց անկախ հանրապետություն։ Վարչապետ է Ռամիշվիլին, արտաքին գործոց նախարար՝ Ջխենկելին։ Անդրկովկասյան սեյմը հայտարարեց իրեն լուծված, և Անդրկովկասի միությունը վերջացավ»։

Խալիլ բեյը անմիջապես՝ մայիսի 26-ի իր վերջնագիրը ուղարկեց առանձին-առանձին վրաց, հայկական և ազրբեջանյան պատվիրակներին։

***

Վրացիների վարմունքը սարսափելի կացություն ստեղծեց հայերի համար։ Հայ հասարակության վրդովումը անսահման էր։ Հայերը, ո՛չ առանց իրավունքի, նենգ դավադրություն ու դավաճանություն էին տեսնում վրացիների վարմունքի մեջ։ Նրանք զգում էին, որ մի վատ խաղ է խաղացվել իրենց գլխին։ Եվ մայիսի 26-ի երեկոյան, Հայոց ազգային խորհուրդը, բուռն վիճաբանություններից հետո, ձայների ճնշիչ մեծամասնությամբ, որոշեց բողոքել վրաց գործիչների ընթացքի և Վրաստանի անկախության դեմ։ Այդ որոշումը, սակայն, չգործադրվեց հետագա դեպքերի զարգացման հետևանքով։

Հայ գործիչների մեջ միաձայնություն չկար այդ օրերին։ Մայիսի 26-ի նիստին մասնակցող Հ. ազգ. խորհրդի և Սեյմի անդամները՝ Ա. Ահարոնյան, Ստ. Մամիկոնյան, Տ. Բեզդադյան, Ա. Բաբալյան, Ռ. Տեր-Մինասյան և սոցիալիստ-հեղափոխականները վճռական կերպով դեմ էին արտահայտվում անկախությանը։ Խ. Կարճիկյանը, Ս. Հարությունյանը, Ավ. Շահխաթունյանը, Ս. Վրացյանը, Ա. Ծրզնկյանը և ուրիշներ այլ ելք չէին տեսնում, բայց եթե Հայաստանի անկախության հայ-

տարարությունը և, առանց ուշացնելու, հայկական իշխանության կազմակերպումը։ Բնորոշ է, որ հայ սոց.-դեմոկրատները, անշուշտ, վրացի սոց.-դեմոկրատների թելադրանքով, թունդ պաշտպաններ էին անկախության և շտապեցնում էին Ազգ. խորհրդին օր առաջ կատարել անկախության հայտարարությունը։ Նրանք անկախության մեջ էին տեսնում հայ ժողովրդի փրկությունը։

Այս հարցում էլ առաջին վճռական խոսքն ասողը եղավ Հ. Հ. Դաշնակցությունը, նրա շարքային ուժերը։

Սեյմի լուծման օրն իսկ, մայիսի 26-ի երեկոյան, տեղի ունեցավ Հ. Հ. Դաշնակցության Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի ու թաղային կոմիտեների արտակարգ նիստը։ Ս. Վրացյանի զեկուցումից հետո, տեղի ունեցան բուռն վիճաբանություն և ձայների ճնշիչ մեծամասնությամբ ընդունվեց հետևյալ բանաձևը. «Նկատի ունենալով այն, որ Անդրկ. սեյմի ինքնացրումից և Վրաստանի անկախություն հայտարարելուց հետո լուծվելու է Անդրկ. կառավարությունը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին՝ ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայության կենտրոնում՝ ստանձնելով կառավարական ֆունկցիաները, օժտված դիկտատորական իրավունքներով հայ կյանքի բոլոր երևույթների և գործերի նկատմամբ»։

Շատ ճիշտ էր վայրկյանի գնահատությունը. դեպի՛ ինքնորոշում, դեպի՛ ինքնակազմակերպում, դեպի՛ հայրենի երկիր, ժողովրդի գիրկը։

Մայիսի 27-ին Ազրբեջանի Ազգ. խորհուրդն էլ որոշեց հայտարարել Ազրբեջանի անկախությունը. վարանումը այլևս անիմաստ էր։ Դեպքերը գահավեժ՝ իրենք էին գալիս ստիպելու անել այն, ինչից մարդկային բանականությունը համառորեն աշխատում էր խուսափել։

Անկախության հայտարարության վրա պնդում էին և Բաթումից վերադարձած ներկայացուցիչները՝ Քաջազնունին, Խատիսյանը, Պապաջանյանը, որոնք մայիսի 27-ի երեկոյան մանրամասն զեկուցում տվին բանակցությունների ընթացքի և Վրաստանի քայլերից հետո ստեղծված կացության մասին։ Հաջորդ օրը, մայիսի 28-ին Ազգային խորհուրդը որոշեց Բաթում ուղարկել Ալ. Խատիսյանից, Մ. Պապաջանյանից և Հ. Քաջազնունուց բաղկացած հաշտարար պատվիրակություն՝ տալով նրան բացարձակ լիազորություն բանակցելու և հաշտություն կնքելու հանուն անկախ Հայաստանի։ Անկախության հայտարարությունը, սակայն, եղավ ավելի ուշ, մայիսի 30-ին, ավելի արտաքին ճնշումների տակ, քան Ազգ. խորհրդի հոժար կամքով։

Մայիսի 29-ին գումարվեց Հ. Հ. Դ. Արևելյան և Արևմտյան բյուրոների, Հ. Հ. Դ. Թիֆլիսի Կենտր. կոմիտեի և Սեյմի ու Ազգ. խորհրդի դաշնակցական հատվածների միացյալ նիստը, ուր մի անգամ ևս քննության առնվեց քաղաքական կացությունը և որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն, կազմել կառավարություն միջկուսակցական հիմքերով, մինչև օրենսդրական ժողովի գումարումը։ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը տեղափոխել Երևան, որը պետք է դառնար Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը։ Նույն ժողովում Հ. Քաջազնունին նշանակվեց վարչապետի թեկնածու։

Այս ժողովից հետո միայն Ազգ. խորհուրդը արավ վճռական քայլ և մայիսի 30-ին հրատարակեց հետևյալ հայտարարությունը, որը, թեև իսկական առումով անկախության հռչակում չէր, բայց դեպքերի բերումով դարձավ այդպիսին։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ազրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության ներքո, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերը կազմել հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկը վարելու համար*։

Հայոց ազգ. խորհուրդ

1918 թ. մայիս 30
Թիֆլիս.

Այսպիսով, Հայաստանի անկախության հայտարարության օրը իսկապես պետք է համարվեր մայիսի 30-ը։ Հակառակ դրան, համարվում է մայիսի 28-ը, այսինքն, այն օրը, երբ Ազգ. խորհուրդը վճռեց հաշտության պատվիրակություն ուղարկել Բաթում։ Անուղղակի կերպով, այս օրն էլ կարող է համարվել անկախության սկզբնավորություն, որովհետև հաշտության բանակցություններ վարելու համար նախապայման էր անկախության հայտարարությունը։ Ընդունելով թուրքերի այդ պայմանը՝ Ազգ. խորհուրդը դրանով իսկ հաստատած էր լինում անկախության փաստը։

Այսպես թե այնպես, Հայաստանի Հանրապետության ծագման օրը

* Այս բանաձևի հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր։

եղավ մայիսի 28-ը։ Այդ օրը դարձավ նվիրական հայ ժողովրդի համար և մտավ ազգային տոնացույցի մեջ, իբրև սրբազան օրերից մեկը։

Մայիսի 30-ին, Բաթումում, սկսվեցին բանակցությունները օսմանյան և հայկական պատվիրակությունների միջև։ Մի շարք նիստերից հետո, կողմերը եկան համաձայնության, և հունիսի 4-ին, օսմանյան և հայկական պատվիրակությունները, հանդիսավոր նիստում, ստորագրեցին հաշտության դաշնագիրը Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև։ Առաջին միջազգային վավերաթուղթն էր այս, որ ստորագրում էին անկախ Հայաստանի ներկայացուցիչները։

Բաթումում ստորագրված վավերագրերն էին. «Խաղաղության և բարեկամության դաշինքը Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև» և 3 հավելվածներ, որոնցից առաջինը վերաբերվում էր տրանզիտին, երկրորդը՝ առևտրին սահմանակից շրջաններում և երրորդը՝ կրոնական ազատության պայմաններին։ Մի համաձայնությամբ էլ կարգավորվում էր գերիների փոխանակության հարցը։ Նույն օրը Հայաստանի պատվիրակությունը մի համաձայնագիր էլ ստորագրեց Թուրքերի և ազրբեջանցիների ու վրացիների հետ երկաթուղային գույքերի բաշխման մասին՝ ըստ երկաթուղագծի երկարության։

Բաթումի հիմնական դաշնագիրը բաղկացած էր 14 հոդվածներից։ Երկրորդ հոդվածը գծում էր սահմանը Թուրքիայի ու Հայաստանի միջև։ Պետք է նկատել, որ մայիսի 26-ի վերջնագրի համեմատությամբ, այստեղ կա որոշ տարբերություն. հայ պատվիրակության պնդումի վրա Թուրքերը զիջեցին Համամլու—Աշտարակ խճուղին, որով մոտ 100 քառ. կիլոմետր տարածություն ավելացվեց հայերին թողնված հողերի վրա։

Հայ-Թուրքական սահմանը որոշվում էր հետևյալ կերպ. «Դևեգիրյան լեռների գագաթներով անցնելով՝ սահմանագիծը փոխում է իր ուղղությունը դեպի հարավ՝ անցնելով Աղրիքար, Բաշքերան, Նուռռահման լեռների գագաթներով։ Նուռռահման գագաթից հետո շարունակվում է հարավային ուղղությամբ և անցնելով շարունակ գագաթների գծով՝ հանդիպում է Ալեքսանդրապոլ—Թիֆլիս երկաթուղուն Աղբուլաղ ավանից հինգ կիլոմետր դեպի արևմուտք։ Այստեղից գալիս է գագաթների գծով մինչև Խանվալի ավանը, որտեղից գրեթե ուղիղ գծով հասնում է մինչև Ալագյոզի ամենաբարձր գագաթը և հետևելով, գարձյալ ուղիղ գծով, կտրում է Էջմիածին—Սարդարապատ խճուղին Էջմիածնից 7 կիլոմետր դեպի արևմուտք գտնվող կետում։ Հետո, պտույտ է անում այդ քաղաքի շուրջը 7 կիլոմետր տարածության վրա, շարունակվում է գահեռական ուղղությամբ Ալեքսանդրապոլ—Ջուլֆա երկաթուղու գծին մոտ վեց կիլոմետր տարածության վրա այդ երկաթուղուց և 16 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք Բաշքյարան ավանից՝ կտրում է այդ ավանից դեպի երկաթուղու գիծը գնացող ճանապարհը։ Հետո, շրջում է դեպի հարավ-արևելք, անցնում է Աշաղի-Կարաբաղլար գյուղից մի կիլոմետր դեպի արևմուտք Շաղաբլու, Ղարախաչ, Աշաղի-Ջանախչի ավաններով և հասնում է մինչև Էլփինչայը, որով շարունակում է մինչև Արփա ավանը։ Այս վերջին ավանից խառնվում է Արփաչայի հովտի հետ, հասնում է մինչև Կայալու ավանը և հետևելով Կայիդ գետի ընթացքին՝ հասնում է մինչև Աղտաբան լեռան գագաթը. հետո անցնում է Ղարատարնա, Ալաջին, Ղարանլիկ լեռների գագաթներով, հասնում է մինչև Ռիլիանչայի իջնելը, հետևում է նրա հովտին, մինչև որ հասնում է Աղա ավանից դեպի հարավ՝ ռուս-պարսկական նախկին սահմանագծի վրա գտնվող Ալիջին ավանը»։

Չորրորդ հոդվածով «Օսմ. կայսերական կառավարությունը պարտավորվում էր զենքի ուժով օգնություն հասցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը ա՛յն դեպքում, երբ վերջինս կխնդրեր նրան այդ մասին՝ երկրում կարգ և անդորրություն ապահովելու համար»։

Վեցերորդ հոդվածը տնօրինում էր Հայաստանում ապրող մահմեդականների կրոնական և սովորույթի խնդիրները. սուլթանի անունը պետք է հիշվեր մահմեդականների հասարակական աղոթքների մեջ։

Յոթերորդ հոդվածը վերաբերվում էր հյուպատոսական և առևտրական համաձայնությունների կնքմանը։

Ութերորդ հոդվածում խոսվում էր երկաթուղային, իններորդում՝ փոստ-հեռագրական, իսկ տասներորդում՝ մի երկրի սահմանամերձ բնակիչների մյուս երկիրն անցնելու իրավունքների մասին։

Հոդված 11-րդով «Հայկական Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր գործի դնել իր բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանները ստորագրելուց անմիջապես հետո հեռացնի Բաքու քաղաքից այնտեղ գտնվող հայկական ուժերը և ապահովե, որ այդ հեռացումը ո՛չ մի ընդհարման տեղիք չտա»։

12-րդ հոդվածը շոշափում էր Բրեստ-Լիտովսկի դաշնագրից բխող իրավունքները։

13-րդ հոդվածի համաձայն ներկա պայմանագրի սահմաններից դուրս եկող և գրավված հողերը պետք է անմիջապես պարպվեն։

Ըստ հավելվածների, Թուրքերն իրավունք էին ստանում, պատերազմի դեպքում, Հայաստանի վրայով զորք փոխադրել, Թիֆլիս—Երևան—Ջուլֆա երկաթուղով ապահովվում էր ազատ երթևեկությունը Թուրքերի և հայերի համար, հայ գերի զինվորները իրավունք պիտի ունենային վերադառնալու Հայաստան, Կարսի և Բաթումի շրջանների հայ գաղթականները կարող էին մի ամսվա ընթացքում վերադառնալ

իրենց տեղերը, մյուս վայրերի գաղթականները՝ դաշնագիրը ստորագրելուց անմիջապես հետո, իսկ Թուրքահայերի վերադարձի խնդրի լուծումը հետաձգվում էր ընդհանուր պատերազմից հետո։

Այսպիսով, ըստ Բաթումի դաշնագրի, Հայաստանը դառնում էր անկախ պետություն։ Ահ ու դողով մտնում էր նա ինքնիշխան ազգերի համակեցության մեջ, իբրև ազատ անձնավորություն միջազգային իրավունքի։ Նրա հողի տարածությունը, մոտավորապես, 12 000 քառակուսի կիլոմետր էր, բնակչության թիվը գաղթականներով միասին՝ մոտ մեկ միլիոն։ Եվ... մայրաքաղաքից յոթը կիլոմետր հեռու երևում էին Թուրքական թնդանոթները...

ԳԼՈՒԽ ԺԵ

ԲԱՔՎԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ*

Հայաստանի Հանրապետության նախապատմությունը վերջացնելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև Բաքվի դեպքերի վրա, որոնք թեև Հայաստանի հետ անմիջական առնչության մեջ չէին գտնվում, բայց ահագին նշանակություն ունեցան նրա ճակատագրի համար. առանց Բաքվի Հայաստանի դեպքերը կարող էին բոլորովին այլ ընթացք ստանալ։

Թիֆլիսի Հ. ազգային խորհրդի օրինակով, 1917 թ. վերջերը, Բաքվում էլ կազմվեց Ազգային խորհուրդ, որի մեջ մտան Աբր. Գյուլխանդանյանը, Խանասորի Վարդանը, Կ. Պարունակյանը (դաշնակցականներ), Լևոն Աթաբեգյանը (սոց.-հեղ.), Նար. Տեր-Ղազարյանը (ս.-դ.), Հայկ Տեր-Միքայելյանը և Ս. Տեր-Ղազարյանը (ժողովրդականներ)։ Առաջին նիստում, դեկտ. 30-ին, նախագահ ընտրվեց Ա. Գյուլխանդանյանը, փոխնախագահ՝ Լ. Աթաբեգյանը։ Ազգ. խորհրդին, ձայնի իրավունքով, մասնակցում էին նաև Ռոստոմը, Հ. Քաջազնունին և բժ. Իսախանյանը։ Ազգ. խորհուրդը գործադիր մարմին էր, որ ենթարկվում էր Ազգ. ժողովին՝ բաղկացած կուսակցությունների 32 ներկայացուցիչներից։ Հետագայում, Անդրկասպյան երկիրը մեկնած Կ. Պարունակյանի տեղ անցավ Ս. Արարատյանը, իսկ Լ. Աթաբեգյանին փոխարինեց Հ. Տեր-Օհանյանը և, իբրև փոխնախագահ, հաջորդեց Ն. Տեր-Ղազարյանը։ Լ. Աթաբեգյանը Ազգ. խորհրդի աշխատանքներին շարունակեց մասնակցել որպես հրավիրված անդամ։ Արևմտահայերի կողմից Ազգ. խորհրդի նիստերին, փոփոխակի, ներկա էին լինում Ռ. Քաջբերունին և Ջ. Եսայանը։ 1918 թ. սեպտեմբերին Ազգ. խորհրդի մեջ մտան և առաջնորդ Բագրատ եպ.-ը, Ստ. Թաղիանոսյանը, Աս. Վաչյանը և Աբր. Դաստակյանը։

Ազգային խորհուրդներ ունեին և Բաքվի մյուս ժողովուրդները՝ մահմեդականները, ռուսները, վրացիները և այլն, որոնք բոլորն էլ,

* Այս գլուխը կազմելիս օգտվել ենք Աբր. Գյուլխանդանյանի «Բաքվի հերոսամարտը» փաստերով ու վավերագրերով հարուստ աշխատությունից, որը, դժբախտաբար, դեռ մնում է չհրատարակված։ Աչքի առաջ եմ ունեցել նաև զոր. Գ. Ղորղանյանի և Բաշխի Իշխանյանի ծանոթ գրքերը, ինչպես նաև մի շարք անտիպ նյութեր ու վավերագրեր։

սկզբի շրջանում, կատարում էին սահմանափակ դեր. իրական իշխանությունը պետական հիմնարկությունների և բանվորական խորհրդի մեջ էր, ուր տիրող ուժը սոցիալիստ-հեղափոխականներն էին։

1918 թվի հունվարի կեսերին, Շամխորի արյունոտ դեպքերից հետո, ընդհատվեց երկաթուղային կապը, և Բաքուն կտրվեց Թիֆլիսից ու Ղարաբաղից։ Բաքու—Գանձակ ճանապարհը մնաց թուրքերի ձեռքը։ Պատահաբար անցնող գնացքներով հայերը չէին կարող ճամփորդել. նրանց հանում էին վագոնից ու տեղն ու տեղը սպանում։ Այդ պատճառով, Բաքվում կուտակվում էին ավստրո-գերմանական ճակատից տուն վերադարձող հազարավոր հայ զինվորներ, որոնք անգործ թափառում էին փողոցներում, շատ թշվառ վիճակի մեջ։ Նրանց ջղայնացնում էին Ղարաբաղից, Գանձակից և հայաբնակ ուրիշ վայրերից հասնող լուրերը հայ-թրքական ընդհարումների մասին։ Բաքվում նրանք պայթուցիկ նյութ էին, որ հեշտությամբ կարող էին գործիք դառնալ բոլշևիկ և ուրիշ անիշխանական տարրերի ձեռքին։ Ուստի, Ազգ. խորհուրդը իր վրա առավ նրանց հոգատարությունն ու կազմակերպումը՝ նպատակ ունենալով պատրաստել կանոնավոր զինվորական մասեր և ուղարկել ռազմաճակատ։

Հայկական զորամասերի կազմակերպման գործը հանձնվեց խմբապետ Համազասպին։ Որոշվեց կազմել 1200 հոգիանոց մի գումարտակ։ Այս քայլը առաջ բերեց արտակարգ ոգևորություն։ Արձանագրվել ցանկացողների թիվը այնքան մեծ էր, որ շուտով ստեղծվեց 3 գումարտակից բաղկացած 3000 հոգիանոց մի զորամաս, այսպես կոչված, Համազասպի բրիգադը։ Բացի այդ, Ազգ. խորհուրդը կազմակերպեց 2-րդ հայկական պահեստի գունդը գնդ. Ս. Եղիազարյանի հրամանատարության տակ։ Այդ գնդի կարիքների համար, մեծ դժվարությամբ, ստացվեց, ռուսական նախկին 279-րդ գնդի գույքերի մնացորդը։ Զորամասերի հագուստը, սարքավորումը, ուտելիքը և այլն հայթայթում էր Ազգ. խորհուրդը։

Միաժամանակ, Բաքվի Ազգ. խորհուրդը իր վրա առավ հայկական ներկայացուցչության դերը դաշնակիցների, Ռուսաստանի ու Պարսկաստանի նկատմամբ։ Ապր. 20-ին նա Մոսկվա հղարկեց Արտ. Ջիլինգարյանին և Սիմ. Հակոբյանին՝ հանձնարարելով, որ առաջինը, Լիպ. Նազարյանի հետ միասին, հարաբերության մեջ մտնե Բեռլինի հետ, իսկ երկրորդը աշխատե Ռուսաստանում։ Նպատակն էր՝ ապահովել խորհրդային իշխանության աջակցությունը՝ կազմակերպելու համար հայկական զորամասեր, օժտելու նրանց նյութական միջոցներով ու ռազմամթերքով, ճանաչել Ազգ. խորհրդի իրավասությունը, ի հարկին, թույլ տալ անգլիացիների մուտքը Բաքու և, առհասարակ, օժանդակել Կովկասի ինքնապաշտպանության գործին։

Խորհ. իշխանությունը ընդառաջ գնաց այս դիմումին. Ստալինը մի հրամանով արտոնեց հայերի զորաշարժ կատարել և տուրք դնել հայ

հարուստների վրա. խոստացվեց ռազմամթերք և անպաշտոն կերպով համաձայնություն տրվեց, որ անգլիացիները մտնեն Բաքու։ Սակայն, քիչ հետո, այս բարյացակամ վերաբերումը փոխվեց, և հունիսին արդեն, նույն Ստալինը Լենինի անունից հեռագրում էր Շահումյանին, որ Խորհրդ. Ռուսաստանի սահմանները պետք է հասնեն մինչև Գանձակ և Բաքուն պաշտպանվի թուրքերի արշավից և որ, պարտության դեպքում, բոլշևիկները պետք է այրեն հանքերն ու հեռանան*։

Բաքվի Ազգ. խորհրդի հիմնական նպատակներից մեկն էլ հայ-թրքական հարաբերությունների բարվոքումն էր։ Ճակատից փախչող ռուս զորամասերի և ռուս գաղթականների վրա գործված հարձակումներին զուգընթաց՝ թուրքերը ասպատակում ու ավերում էին և հայկական շրջանները, թալանում, կոտորում ու գերում հայերին։ Դեկտեմբերին ավերի ու ավարի մատնվեցին մի շարք հայաբնակ գյուղեր Նուխիի ու Շամախիի գավառներում։ Հունվ. 2-ին սպանվեցին Գանձակի թրքական մասից անցնող 14 հայեր։ Ընդհարումներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում։ Շատ շրջաններում ճանապարհները փակվեցին, և հայերը զրկվեցին շարժվելու հնարավորությունից։ Մթնոլորտը օրեցօր էլեկտրականանում էր։

Ազգ. խորհուրդը, մի շարք խորհրդակցություններից հետո, որոշեց բանակցությունների մեջ մտնել Մահմեդական ազգ. խորհրդի հետ։ Այդ նպատակով ընտրվեց 6 հոգիանոց հանձնախումբ՝ Հ. Քաջազնունի, Ա. Ջիլինգարյան, Հ. Տեր-Միքայելյան, Ս. Տեր-Ղազարյան, Լ. Աթաբեգյան և Տ. Իսախանյան, և հանձնարարվեց սկսել բանակցությունները։

Հունվ. 15-ին գումարվեց Հայ և Մահմ. ազգ. խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցական առաջին նիստը։ Թուրքերի կողմից մասնակցում էին Մահմ. ազգ. խորհրդի նախագահ Ալի Մարդան բեգ Թուրկ-

* Առաջ բերենք այստեղ այդ ուշագրավ գրության էական մասերը։ Նամակը գրված է Ցարիցինից, օգ. 8-ին և ուղղված է Շահումյանին։ Ստալինը գրում էր. «...Մեր ընդհանուր քաղաքականությունը Անդրկովկասի խնդրում այն է, որ ստիպենք գերմանացիներին պաշտոնապես ճանաչել, որ վրացական, հայկական ու ադրբեջանյան հարցերը Ռուսաստանի համար ներքին հարցեր են, որոնց լուծմանը գերմանացիները չպետք է մասնակցեն։ Հենց այդ պատճառով մենք չենք ճանաչում Վրաստանի անկախությունը, որ ճանաչված է գերմանացիների կողմից։

2. Հնարավոր է, որ մենք ստիպվենք զիջելու գերմանացիներին Վրաստանի հարցում, բայց այդ զիջումը կանենք միայն ա՛յն պայմանով, որ Գերմանիան չխառնվի Հայաստանի և Ադրբեջանի գործերին։

4. Ձեր հաշողությունները ուրախացնում են մեզ, բայց մենք կկամենայինք, որ, գերմանացիների հետ բարդություններ ունենալուց խուսափելու համար, դուք Գանձակից ավելի հեռու չգնաք, այսինքն՝ չմտնեք Վրաստանի սահմանները, որի անկախությունը պաշտոնապես ճանաչված է Գերմանիայի կողմից։

Եվ ավելի ուժ տալու համար իր խոսքերին, Ստալինը ավելացնում է. «Այս ամբողջ ասվածը ընդունեցեք ո՛չ իբրև իմ անձնական կարծիք, այլ որպես առաջարկ Լենինից, որի հետ երեկ խոսեցի ուղիղ հեռագրաթելով բոլոր շոշափված հարցերի մասին։

(С. Шаумян. «Статьи и речи», 1924, Баку. стр. 224—225)։

չիբաշևը, Մահմեդ Հասան Գաջինսկին, Բեհբութ խան Ջիվանշիրը, Իբրահիմ բեգ Հայդարովը, Ա. Ի. Վեզիրովը և Բ. Ա. Բաբաևը։ Մի շարք նիստերում քննության առնվեցին հետևյալ խնդիրները. ընդհանուր՝ 1) Վերաբերում դեպի ռուս կառավարությունը, 2) Անդրկովկասի ապագա քաղաքական կազմը, 3) Ռազմաճակատի հարցը և պատերազմը վերջացնելու միջոցները, 4) Կովկասի վարչական բաժանումը։ Տեղական՝. 1) Բաքվի իշխանության կազմակերպումը, 2) Երկաթուղու և մյուս ճանապարհների բացումը, 3) Գավառների անիշխանությունը և այլն։

Նիստերի ժամանակ պարզվեց, որ կողմերը շատ են հեռու իրարից և ընդհանուր լեզու չունեն. նրանց բաժանում էին և՛ ազգային ներհակ ձգտումները, և՛ տարբեր վերաբերումը դեպի պատերազմը, դեպի Թուրքիան ու Ռուսաստանը, և՛ փոխադարձ անվստահությունը։ Խորհրդակցությունները դրական արդյունք չտվին։ Եվ որովհետև շուտով բացվելու էր Անդրկ. սեյմը և խորհրդակցության մասնակցող մահմեդական ներկայացուցիչներն էլ Սեյմի անդամներ էին ու պիտի մեկնեին, վճռվեց այդ բոլոր հարցերի քննությունը տեղափոխել Թիֆլիս։ Միակ գործնական օգուտը եղավ այն, որ որոշվեց մի քանի խառն պատվիրակություններ ուղարկել Գանձակ, Նուխի, Խաչմազ, որոնք մի պահ մեղմացրին սրված դրությունը, բայց, կարճ ժամանակից հետո, կրքերը բռնկվեցին ավելի սուր մոլեգնությամբ։

Հետապնդելով հանդերձ հաշտասեր ու բարեկամական վերաբերում Թուրքերի նկատմամբ՝ Ազգ. խորհուրդը ձեռնարկեց շրջանների ինքնապաշտպանության կազմակերպման գործը։ Այդ նպատակով զենք ու ռազմամթերք էր հայթայթվում, հայաբնակ վայրերին հրահանգիչներ ու մարտական ղեկավարներ էին տրվում, կազմակերպվում ու մարզվում էին զենքի ընդունակ ուժերը։ Հիմնական նպատակն էր՝ որևէ բախումի տեղիք չտալ և Թուրքերի գործած հարձակման դեպքում պաշտպանվել։

Միևնույն ժամանակ, Ազգ. խորհուրդը ճիգ էր թափում բանալու երկաթուղին՝ Բաքվում հավաքված զորամասերը ռազմաճակատ ուղարկելու նպատակով, բայց այս ուղղությամբ կատարված բոլոր քայլերը անցան ապարդյուն։ Ապր. 13-ին Ազգ. խորհուրդը վերջին անգամ ևս փորձեց Պարսկաստանի ճակատից եկած 500 հայ և վրացի զինվորներին ուղարկել Թիֆլիս։ Ալեաթ կայարանից հայերը հետ դարձվեցին. Թուրքերը ճանապարհ տվին միայն վրացիներին...

Այդ առթիվ, Ազգ. խորհուրդը մի անգամ էլ դիմեց Մահմ. ազգ. խորհրդին՝ բացատրելով, թե ի՞նչ վտանգ է սպառնում մեծաքանակ զինվորների խռնվելը Բաքվում։ Այս դիմումն էլ մնաց անհետևանք։ Նույն հարցով դիմում արվեց և Սեյմին՝ արդյունքը եղավ նույնը։ Ազգ. խորհուրդը զգում էր, որ հազարավոր հայրենաբաղձ հայ զինվորների արգելափակումը Բաքվում կարող է տալ աղետավոր հետևանքներ հենց Բաքվի համար, գերմարդկային ուժ էր թափում այդ զինվորներին հեռաց-

նելու համար, բայց չէր հաջողում։ Այդ պայմաններում, զինվորների ներկայությունը Բաքվում նպաստավոր կարող էր լինել միայն բոլշևիկներին. Թուրքերը կուրորեն բռունցք էին պատրաստում հենց իրենց գլխի համար։ Նրանց հաշիվն էլ, սակայն, այն էր, որ թույլ չտան մի քանի հազար հայ զինվորների մեկնումը ռազմաճակատ՝ Թուրքերի դեմ։

Ի տես այս անտանելի կացության և ճակատից հասնող աննպաստ լուրերի, մարտի 3-ի նիստում Ռոստոմը Ազգ. խորհրդի առջև դրեց հետևյալ խնդիրները. նկատի ունենալով, որ մեր դրությունը օրեցօր ծանրանում է, որ Թուրքերը խաղում են մեզ հետ և աշխատում ժամանակ շահել, անհրաժեշտ է կանխել և նախաձեռնությունը առնել մեր ձեռքը։ Այդ նպատակով հարկավոր է. 1) անել ընդհանուր զորակոչ մինչև 45 տարեկանները, 2) կտրուկ քայլերով ապահովել դրամական միջոցները, 3) ռազմաճակատ ուղարկել մեր ուժերի մեծ մասը, 4) ապահովել թիկունքը՝ մեր ձեռքն առնելով իշխանությունը Բաքվում և Գանձակում, որոնք գլխավոր բանալիներն են և ամենակարևոր կետերը թիկունքի։

Ազգ. խորհուրդը, հանգամանորեն քննելով ստեղծված դրությունը և Թուրքերի բացահայտ թշնամական դիրքը՝ ընդառաջ գնաց դրված հարցերին, հայտարարեց զորաշարժ և մարտի 5-ին ընտրեց գերագույն զինվորական մարմին՝ բաղկացած Վարդանից, գնդ. Բախտամյանից և գնդ. Ղազարյանից, որոնց դերն էր լինելու վարել տեղական ինքնապաշտպանությունը, զինվորական ուժերի մարզանքը, ղեկավարությունն ու փոխադրությունը ուրիշ վայրեր։ Լուրջ մտահոգված ժողովրդի ապահովության հարցով՝ Ազգ. խորհուրդը աշխատում էր պատրաստ լինել ամեն անակնկալի առջև. նա տեսնում էր, որ Թուրքերը օրեցօր դառնում են սոնձարձակ։ Փաստեր ուներ իր ձեռքին, որ Թիֆլիսում կայացել էր Թուրք-վրացական գաղտնի համաձայնություն, և վրացիները օգնում էին Թուրքերին։

Բաքվի հայերի համար անվիճելի էր, որ վրացիներն ու Թուրքերը Թիֆլիսում գործում էին համերաշխ և, հակաբոլշևիկյան պայքարի անունից, նեղ ազգային շահեր էին հետապնդում։ Այս հաստատում էր և մուսավաթականների գործունեությունը Բաքվում ու գավառներում, ուր մի կողմից նրանք ձգտում էին գրավել իշխանությունը, մյուս կողմից՝ քար ու քանդ անել հայկական շրջանները։ Այսպես, փետրվարին կոտորվեցին Արեշի 4 հայաբնակ գյուղերը, տեղահանվեց Խաչմազի և Լենքորանի հայ բնակչությունը, ճգնաժամային դարձավ Ղուբայի հայության վիճակը։ Մարտին Թուրքերը ավերեցին Շամախիի հայկական թաղը և 20—25 հայ գյուղեր, որոնց մոտ 25 000 մերկ ու անոթի բնակիչները թափվեցին Մազրա և մյուս ռուսական գյուղերը։ Շամախիի և Գյոքչայի հայ ազգաբնակչությունը բոլորովին կտրվեց արտաքին աշխարհից։

Այս առթիվ Ազգ. խորհուրդը բազմաթիվ դիմումներ արավ Մահմ.

ազգ. խորհրդին և մուսավաթին, բայց իզուր։ Մուսավաթը իր ծրագիրներն էր առաջ քշում և սուր ընդհարման մեջ էր բանվորական խորհրդի հետ, ուր, Սեյմի գումարումից հետո, ազդեցությունը բոլորովին անցել էր բոլշևիկների, հատկապես, Շահումյանի և Ջապարիձեի ձեռքը։ Մուսավաթը, հենված «վայրի դիվիզիայի» վրա, մեղադրում էր Բանվ. խորհրդին՝ ռուսական վեհապետական ձգտումների մեջ, աշխատում էր քշել «եկվորներին» և պահանջում էր, որ իշխանությունը հանձնվի «տեղական տարրին», այսինքն՝ թուրքերին։ Իր հերթին, Բանվ. խորհուրդը մուսավաթականներին ամբաստանում էր բեգ-կալվածատիրական, բուրժուական, հակահեղափոխական և համիսլամական մեղքերի մեջ։ Կռիվը լարվեցին ծայր աստիճանի և բախումը դարձավ անխուսափելի։ Փոթորիկը պայթեց մարտին։

Առիթը մի հասարակ դեպք էր. Թրքական «վայրի դիվիզիայի» զինվորների 120 հոգիանոց զինված մի խումբ եկել էր Բաքու թուրք միլիոնատեր և հայտնի բարեգործ Թաղիևի զինվոր որդու հուղարկավորությանը մասնակցելու։ Հուղարկավորությունից հետո խումբը նավով վերադառնում էր Լենքորան։ Բանվ. խորհուրդը բռնությամբ զինաթափ արավ նրան, որի առիթով, մարտի 17-ին, սկսվեցին արյունահեղ ընդհարումներ։ Հայոց ազգ. խորհուրդը այդ դեպքերի ժամանակ մնաց բացարձակապես չեզոք և աշխատեց հանգցնել ավերիչ հրդեհը՝ միջնորդ հանդիսանալով կռվող կողմերի միջև։

Դեպքերը, սակայն, տարերային մղումով կռվի մեջ մտցրին որոշ հայ զորամասեր, որոնք Բանվ. խորհրդի կողմից ուղղվեցին մուսավաթական զինված խմբերի դեմ։ Դեպքերը դասավորված էին այնպես, որ կա՛մ Բանվ. խորհուրդը պետք է հաղթեր, կա՛մ մուսավաթը։ Վերջինս շարժվում էր թուրք գործակալների ծրագրով և անմիջական աջակցությամբ, որով մուսավաթի հաղթանակը պիտի նշանակեր Թուրքիայի, այսինքն՝ հակահեղափոխության հաղթանակ։ Եվ հասկանալի է, որ մուսավաթի դեմ մղված պայքարում միանգամայն գիտակցորեն համերաշխ էին բոլոր կուսակցությունները։ Հ. Հ. Դաշնակցությունը, սակայն, հաշվի առնելով հայ-թրքական հարաբերությունների փափուկ խնդիրը, գործոն մասնակցություն չուներ այդ պայքարում, իսկ Հ. ազգ. խորհուրդը ջանք չէր խնայում խաղաղության հաստատման համար։

Առանց մտնելու մարտյան արյունոտ դեպքերի մանրամասնությունների մեջ, առաջ բերենք մի քանի քաղվածքներ Հ. ազգ. խորհրդի ա՛յն օրերի նիստերի արձանագրություններից, որոնք բավարար հստակությամբ պատկերացնում են թե ընդհարումների բնույթը և թե Հ. ազգ. խորհրդի քաղաքականությունն ու խաղացած դերը։

«Մարտի 17-ի երեկոյան ժամը 8-ին սկսվեց հրացանաձգություն, «վայրի դիվիզիայի» զինվորների և «կարմիր գվարդիայի» միջև։ Այդ առթիվ Ազգ. խորհուրդն իր արտակարգ նիստն ունեցավ և որոշեց միջամտել՝ դադարեցնելու համար արյունահեղությունը։ Ստեղծված բախումը լուծելու համար որոշեց առաջարկել հակամարտ կողմերին հետևյալը. «վայրի դիվիզիայի» զինվորները հանձնում են իրենց զենքերը թուրք ընկերվարական կուսակցություններին, իսկ Բանվ. և Զինվ. խորհուրդը հրաժարվում է «վայրի դիվիզիայի» զենքերը գրավելու ցանկությունից։ Հանձնարարվեց բժ. Լ. Աթաբեգյանին գնալ Զինվ.-հեղափոխական կոմիտե և հայտնել Ազգ. խորհրդի որոշումը։

Բացի այդ, Ազգ. խորհուրդը որոշեց հանձնարարել բժ. Լ. Աթաբեգյանին հայտնելու, որ կռվող կողմերից ո՛չ մեկը չի կարող հույս ունենալ Հայոց ազգ. խորհրդի գործոն աջակցության վրա, որովհետև մեր խորհուրդը դեմ է որևէ ընդհարումի և կամենում է, որ փոխադարձ իրավախոհությամբ լուծվի դժվարությունը»։

«Ազգ. խորհրդի մարտի 19-ի նիստում զեկուցվում է գիշերվա դեպքերի մասին. բախումը թեև հաջողվեց երեկ հարթել թուրքերի զիջումով, բայց այսօր մեծ խլրտում կա թուրքերի մեջ. քաղաքի զանազան մասերում թուրքերը կազմակերպել են միտինգներ, որոնց հանած բանաձևերը բնավ հաշտարար չեն։ Թուրքերը վերջնագիր են ներկայացրել Զինվ.-հեղափ. մարմնին՝ պահանջելով հետ տալ գրավված զենքերը։ Դրությունը շատ լուրջ է, և ընդհարումը անխուսափելի է թվում, եթե ձեռք չառնվեն արտակարգ միջոցներ»։

«Ազգ. խորհուրդը երկար քննությունից հետո որոշեց. 1) Ձեռք առնել միջոցները, որ ընդհարում տեղի չունենա՝ ազդելով երկու կողմերի վրա։ 2) Եթե անհնար եղավ ընդհարման առաջն առնել, ձեռք առնել բոլոր ինքնապաշտպանողական միջոցները, որ հայ ազգաբնակչությունը ընդհարման ժամանակ չտուժե։

Երեկոյան դեմ, ժամը 6-ին, չնայած ձեռք առնված միջոցներին, սկսվեց հրացանաձգություն։ Կռիվը սկսողը եղան թուրքերը Շեմախինկայում*, ուր հարձակում գործեցին կարմիր գվարդիայի մի խմբի վրա։ Այդ ազդանշան եղավ կռվի ամբողջ քաղաքում։ Շուտով սկսեցին կրակել և թնդանոթները նավերից։ Նկատի ունենալով, որ սկսված արյունահեղ կռիվը անխուսափելիորեն կարող է աղետավոր հետևանքներ ունենալ ամբողջ քաղաքի համար, Խորհուրդը իր արտակարգ նիստում որոշեց մի անգամ ևս միջամտել՝ ազդելու համար երկու կողմերի վրա, որ դադարեցնեն կռիվը։

Որոշվեց հանձնարարել նախագահին (Ա. Գյուլխանդանյան), Ա. Արարատյանին և Ն. Տեր-Ղազարյանին՝ անմիջապես խոսելու այդ նպատակով Զինվ.-հեղափ. կոմիտեի հետ, իսկ բժ. Լ. Աթաբեգյանին, Տ. Իսախանյանին, Հ. Տեր-Միքայելյանին և Ա. Զիլինգարյանին խոսել թուրքական կոմիտեի հետ»։

---

* Բաքվի թրքական մեկ թաղը։

«Հաջորդ (մարտի 20-ի) նիստում զեկուցում են ընտրված երկու պատվիրակությունները իրենց առաքելության անհաջողության մասին։ Պարզվում է արդեն, որ Հեղափ. կոմիտեի զորքերը ամբողջ գծի վրա առաջ են շարժվում, և Թուրքերը նահանջում են սարսափահար։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքում հավաքված շատ հայ անկազմակերպ զինվորներ և մասամբ Ազգ. խորհրդին ենթակա որոշ հայ զինվորներ տարերային կերպով մղում ունեն մասնակցելու կռվին, որոշեց ամենակտրուկ միջոցները ձեռք առնել և Ազգ. խորհրդին ենթակա ո՛չ մի զինվոր չմասնակցի կռվին, և բոլոր հայկական զորամասերը մնան ինքնապաշտպանողական դերի մեջ։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ կռվի ժամանակ բազմաթիվ անմեղ Թուրքեր ենթարկվում են հարձակման և որ այդ կատարվում է հայկական թաղամասում, հաճախ, հայ զինվորների կողմից, որոշեց կտրուկ միջոցներ ձեռք առնել հայ թաղամասերում ապրող կամ ապաստանած Թուրքերին խորհրդի հովանավորության տակ առնելու։ Այդ նպատակով որոշվեց նշանակել Դ. Անանունին ընդհանուր հոգաբարձու և լիազորություն տալ նրան հավաքելու Թուրքերին որոշ ապահով տեղերում ու խնամել նրանց, մինչև որ վտանգը կվերանա, որից հետո բոլորն էլ կփոխադրվեն Թուրքական մասը։ Այդ նպատակով պետք եղած զինվորական ուժը Ազգ. խորհուրդը որոշեց տրամադրել հոգաբարձուին։ Եթե պատսպարված Թուրքերի վրա որևէ հարձակում լինի, որոշվեց դիմել ծայրահեղ միջոցների՝ կանգ չառնելով նույնիսկ զենքի գործածության առաջ»։

«Յերեկվա ժամը 3-ին Թուրքերը ընդունեցին Զինվ.-հեղափ կոմիտեի վերջնագիրը։ Հաշտության նպաստելու համար որոշվեց հանձնարարել Ս. Արարատյանին գնալ Զինվ.-հեղափ. կոմիտե, ներկա լինել հաշտության կնքման ժամանակ և հարկ եղած աջակցությունը ցույց տալ հաշտության գործը դյուրացնելու համար։ Որոշվեց տալ Արարատյանին լիազորություն, եթե պետք լիներ, հայտնելու, որ Հայոց ազգ. խորհրդի Բաքվի մասնաճյուղն ևս պատրաստ է ընդունել Թուրքերին ներկայացված վերջնագրի այն կետը, որ վերաբերվում է ազգային զորամասերին»։

«Խորհուրդը երկարորեն զբաղվեց հրացանաձգությունը, թալանը և կոտորածը կանգնեցնելու խնդրով։ Չնայած հաշտության կնքման և հայտարարման, հրացանաձգությունը շարունակվում է և թալանը ստանում ահավոր չափեր։ Դրությունը չափազանց վտանգավոր կերպարանք կստանա, եթե խորհուրդը գործ չդնի հերոսական ջանքեր՝ թալանի և հրացանաձգության առաջն առնելու համար։ Որոշվեց հրացանազարկ անել այն բոլոր զինվորներին, որոնք, հակառակ բոլոր նախազգուշացումներին՝ կշարունակեն զբաղվել թալանով կամ հրացանաձգությամբ։ Որոշվեց կռվին վերջ դնելու համար հանձնարարել նախագահին և Համազասպին գնալու առաջավոր դիրքերը և անմիջապես ազդելու զինվորների վրա, որ դադարեցնեն կրակը, եթե նույնիսկ Թուրքերի կողմից հատ ու կենտ հրացանաձգություն լինի։ Որոշվեց հրատարակել մի կոչ, որով Ազգ. խորհուրդը հրավիրում էր հայ թաղամասերում ապրող բոլոր քաղաքացիներին ամենախիստ կարգապահության՝ սպառնալով ամենածանր պատասխանատվության ենթարկել զանցառուներին։ Որոշվեց կարգը պահպանելու համար քաղաքի հայկական մասի վրա նշանակել մի ընդհանուր հսկիչ, այդ պաշտոնը հանձնվեց Լ. Քալանթարյանին, իսկ վերջինիս հրաժարվելուց հետո՝ Գ. Բալայանին։ Այդ նպատակով նշանակվեցին հայկական բոլոր թաղամասերի վրա ևս հատուկ հսկիչներ»։

Բաքվի Ազգ. խորհրդի նախագահը և Համազասպը ամբողջ դիշերը զբաղված էին խորհրդի որոշումներն իրագործելով՝ դադարեցնել անիշխանությունը, կռիվը և հրդեհը։ Ի մի կենտրոնացվեցին Բաքվում գտնվող Հ. Հ. Դաշնակցության լավագույն մարտիկները՝ թվով մի քանի հարյուր հոգի. Համազասպի զորամասից առնվեցին մի քանի վստահելի և կարգապահության ենթարկված վաշտեր։ Գիշերը ժամը 4-ին այդ զորամասերը բռնելու էին այն սահմանագիծը, ուր կռիվ էր տեղի ունենում խորհրդային իշխանության և մուսավաթի միջև։ Այդ զորքերը թույլ չպիտի տային զինված մարդկանց մի մասից մյուսը անցնելու. Թրքական մասից եղած հրացանաձգության չպիտի պատասխանվեր։

Այդպես էլ արվեց։ Հայկական զորամասերը բռնեցին դիրքեր կռվող երկու կողմերի միջև։ Այս դրությունը տևեց գիշերվա ժամը 4-ից մինչև 21-ը մարտի ցերեկվա ժամը 12-ը։

Երբ երկու կողմերը վերջ տվին հրացանաձգության, Թրքական մասը ամբողջապես ծածկված էր ծխով. աստիճանաբար սկսեցին դուրս գալ կանայք, երեխաներ, երիտասարդներ, պառավներ՝ յուրաքանչյուրը ձեռքին բռնած փայտի կտոր, վրան սպիտակ լաթ՝ ի նշան հաշտության։ Այսպիսով, Թրքական համարյա ամբողջ մասը դուրս եկավ և հայտնեց իր հնազանդությունը։ Հայ զինվորները շարժվեցին նրանց ընդառաջ, խառնվեցին իրար, և մի օր առաջվա հրացանաձգության տեղ այժմ լսվում էր լաց ու հառաչ, արցունք ու համբույր։

Այսպիսով, վերջ գտավ մի քանի օր տևող մղձավանջը, և քաղաքը խաղաղվեց։

Այս կռիվներում, Թուրքերի գնդակով, սպանվեց Լ. Աթաբեգյանը, որ, իբրև անդամ Ազգ. խորհրդի պատվիրակության, գնում էր Թրքական թաղը բանակցելու համար։ Լ. Աթաբեգյանի մահով Բաքվի բանվորական խորհուրդը և Հ. ազգ. խորհուրդը կորցնում էին իրենց ամենաձեռնհաս ու գործոն անդամներից մեկին։

Մարտյան դեպքերի առթիվ Հ. ազգ. խորհուրդը հրատարակեց մի ընդարձակ հաղորդագրություն, որի մեջ տալիս էր դեպքերի մանրամասն նկարագրությունը։

Այս հաղորդագրությունից երևում էր, որ Ազգ. խորհուրդը ազատեց բազմաթիվ մահմեդականներ, որոնց պահեց մի քանի օր, կերակրեց և ապահով վերադարձրեց իրենց տները։ Այդ մահմեդականները զետեղված էին հետևյալ վայրերում. Մայիլյանների թատրոնում՝ 3500 հոգի, որոնցից 70 պարսկահպատակներ, Ռեկորդ թատրոնում՝ 2690, Ռամզեյ թատրոնում՝ 579, Եֆիմովի կրկես-թատրոնում՝ 800, Վոկզալնայա և Տելեֆոննայա փողոցի անկյունի տանը՝ 58, Բուդաղյանի դպրոցի շենքում՝ 218, Միրոնովի բաղնիքում՝ 306, Մոսկովյան բաղնիքում՝ 263, ութերորդ միլիցատանը՝ 117, յոթերորդ միլիցատանը՝ 72, Մալայա-Մորսկայա փողոցի № 15 տանը՝ 95, երրորդ գիմնազիայում՝ 201, Հայոց կուլտուրական միության տանը՝ 18, քաղաքային սայլանոցում՝ 2530, իններորդ միլիցատանը՝ 200, Հայկավանում՝ 79— ընդամենը 11 726 հոգի։ Մոտ 1500 մարդ էլ ապաստանել էր հայերի մասնավոր տներում։ Առհասարակ, Բաքվի հայությունը ցույց տվեց արտակարգ հոգատարություն։ Նա, կարելի է ասել, փրկեց Բաքվի թուրքերի ամբողջ մտավորականությունը։ Եվ... վարձատրությունը ստացավ վեց ամիս հետո, սեպտեմբերյան օրերին։

Մուսավաթի ողնաշարը ջարդելուց հետո, Բանվ. խորհուրդը ձեռք առավ և գավառի թուրք-մուսավաթական դավերի սանձահարման գործը։ Մարտի 27-ին Շամախի ուղարկեց մի զորամաս Թադ. Ամիրյանի գլխավորությամբ, որի երևալը հիմնովին փոխեց դրությունը Շամախիում։ Ամիրյանը զսպեց քաղաքի թուրքերին. կռվի ժամանակ հիմքից այրվեց թրքական թաղը։ Հայ գաղթականները վերադարձան իրենց տեղերը, իսկ թուրքերը հեռացան։ Խաղաղվեց նաև Գյոքչայի գավառը, որտեղի թրքությունը նույնպես հեռացավ։

Մարտի դեպքերի վրա, Բաքուն գրավելու փորձեր արին և լեռնականները, որոնք փետրվարից սկսած՝ կտրել էին Բաքու—Պետրովսկ երկաթուղին և առատ զենք ու ռազմամթերք խլելով վերադարձող ռուս զորամասերից՝ անվերջ հարձակումներ էին գործում իրենց շրջապատի վրա։ Մարտի 21-ին նրանց զինված խմբերը հասան մինչև Բալաջարի, իսկ նրանց պետ Իմամ Գոձինսկին Պետրովսկից տված հեռագրերով սպառնում էր պատժել հայերին։ Ապրիլի սկզբներին, սակայն, հայկական զորամասերը ջարդեցին ու քշեցին նրանց խմբերը։ Այս հաջողությունը խիստ բարձրացրեց հայ զինվորների մարտական ոգին։

Ազգային խորհուրդը որոշեց համախմբել ու կազմակերպել բոլոր հայ զորամասերը, ենթարկել նրանց մեկ հրամանատարության և այդ որոշումը իրագործելու համար հարաբերության մեջ մտավ Զինվ.-հեղափ. կոմիտեի հետ, սակայն, մարտի հաջողություններից արբեցած՝ բոլշևիկներն արդեն այնքան էին երես առել, որ մտածում էին Ազգ. խորհուրդն ու Հ. Հ. Դաշնակցությունն էլ մեջտեղից վերացնելու մասին։ Ի պատասխան Ազգ. խորհրդի դիմումի, Զինվ.-հեղափ. կոմիտեն, ապր. 8-ին հայտարարեց բոլոր ազգային զորամասերը և Հայկական ազգ. խորհուրդը լուծված։ Վերջինս մերժեց ենթարկվել այդ կարգադրությանը, բայց, ի վերջո, ստիպված եղավ տեղի տալ, և ապր. 14-ին Զինվ.-հեղ. կոմիտեի ու Ազգ. խորհրդի միջև ստորագրվեց մի համաձայնություն, որով՝

«1. Հայկական 2-րդ ազգ. հետևակ գունդը կազմալուծվում է. նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակների մեջ, իսկ մնացածը խորհրդի կարմիր գումարտակների մեջ.

2. Համազասպի գումարտակները վերակազմվում են՝ ամբողջովին ենթարկվելով խորհրդի իշխանության և մտնում են կարմիր բանակի մեջ «16-րդ և 17-րդ գումարտակներ» անվան տակ.

3. 16-րդ և 17-րդ գումարտակների հրամանատար է նշանակվում Համազասպը, իսկ օգնական՝ Սերգո Մանուչարյանը...

4. Համազասպի գումարտակները նպատակ ունեն մոտիկ ապագայում գործողություններ սկսելու արևմտյան ուղղությամբ, այսինքն՝ դեպի Գանձակ—Երևան»։

Համաձայնագիրը ստորագրեցին Ս. Շահումյանը, Մ. Կորկանյանը, Ա. Գյուլխանդանյանը, Ն. Տեր-Ղազարյանը և Հ. Տեր-Օհանյանը։

Այսպիսով, հայկական զորամասերը ապր. 14-ից անցան բոլշևիկների ձեռքը։ Նրանց թիվը հասնում էր 10—12 հազարի, 50-ի չափ թնդանոթներով։ Նրանց մեջ էին հաշվվում և Հ. Հ. Դաշնակցության ու սոց.-հեղափոխական մարտական խմբերը, որոնք փաստորեն գտնվում էին այդ կուսակցությունների ղեկավար մարմինների ձեռքին և հրապարակ էին բերվում միայն արտակարգ դեպքերում։ Դաշնակցական զորամասը բաղկացած էր 6—700 ընտիր մարտիկներից՝ Գ. Բալայանի հրամանատարության տակ։

Ապր. 25-ին իշխանությունը վերջնականապես անցավ բոլշևիկներին։ Այդ օրը բանվորական, զինվորական և նավաստիական խորհուրդների համագումարը կազմեց Բաքվի ժողովրդական գործավարների խորհուրդ՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ։ Մյուս կուսակցություններն ու ազգային խորհուրդները հետ մղվեցին, թեև, անուղղակի կերպով, Հ. ազգային խորհուրդը շարունակում էր ազդեցություն ունենալ գործերի և հայկական զորամասերի վրա։ Առհասարակ, զորքի կազմն ու ղեկավարությունը հիմնական փոփոխության չենթարկվեց. զինվորական գործավար և ընդհանուր հրամանատար էր բոլշևիկ Ղորղանյանը, նրա սպայակույտի պետ՝ գնդ. Ավետիսյանը, հայկական զորամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդ. Ղազարյանը, բանակի մատակարարման մասի վարիչ՝ Մ. Տեր-Պողոսյանը և այլն։

Հայկական զորամասերի վրա ձեռք դնելուց հետո, բոլշևիկները ձեռնարկեցին զինվորական ուժերի վերակազմության ու լրացման։ Բայց այդ միջոցին հանգիստ նստած չէր և թշնամին։ Նուրի փաշան Գանձա-

կում կազմակերպում էր հռչակավոր «իսլամական բանակը»՝ թուրք սպաների ղեկավարության տակ՝ նպատակ ունենալով գրավել Բաքուն և առաջանալ դեպի հյուսիս ու արևելք։ Հունիսի սկզբներին Գանձակ հասան և թուրք կանոնավոր զորամասեր, Ադրբեջանի կառավարությունը, դեռ Թիֆլիսից, ուժեր էր հավաքում Բաքվի գրավման համար. ոտքի էին հանված բոլոր զորամասերն ու զինված խմբերը և ուղղված Բաքվի վրա։ Նրանց առաջավոր մասերն արդեն սկսել էին երևալ Հաջի-Կաբուլի մոտերը. մի ուրիշ թև շարժվում էր դեպի Շամախի։ Անհրաժեշտ էր շտապել՝ նախաձեռնությունը թշնամուն չտալու համար։ Եվ Ջինվ.-Հեղափոխ. կոմիտեն որոշեց անցնել վճռական գործողությունների՝ հետ շպրտել թուրքերին Հաջի-Կաբուլից և գրավել ռազմական տեսակետից կարևոր Աղսու—Քուրդամիր գիծը՝ մոտ 160 կիլոմետր տարածությամբ։

Հունիսի 5-ից Բաքվի զորքերը անցան հարձակման և մի շարք տաք ու հաջող ճակատամարտերից հետո, մինչև հունիսի 26-ը գրավեցին մի կողմից Կարամարգիան—Քուրդամիր—Զուբովկա և մյուս կողմից՝ Զուբովկա—Պետրոպավլովսկ գծերը, այսինքն՝ ավելի, քան նախորոշված էր արշավանքի սկզբին։ Թուրք-ադրբեջանյան ուժերը, ծանր կորուստներով, քաշվեցին հետ։ Բաքվեցիների ձեռքը անցավ հարուստ ավար՝ թնդանոթներ ու գնդացիրներ, հրացան ու փամփուշտ։ Կռվի դաշտում մնացած դիակների թիվը հաշվվում էր հարյուրներով։

Հունիսի 25-ին հայտնի դարձավ, որ թուրքական մի դիվիզիա շարժվում է դեպի Գյոքչա, մի ուրիշն էլ՝ Եվլախի ուղղությամբ և որ իսլամ բանակի սպայակույտը փոխադրվում է Ուջարի կայարանը՝ ավելի վճռական գործողությունների դիմելու համար։ Բաքվի հրամանատարությունը որոշեց շեշտակի հարվածով խանգարել այդ ծրագիրը, և հունիսի 27-ին շարժվեց Ուջարին ու Գյոքչան գրավելու դիտավորությամբ։ Սկսվեցին կատաղի կռիվներ։ Հունիս 27—28-ին թուրքերը մեծ զոհեր տալով նահանջեցին և հունիսի 29-ին անցան հակահարձակման։ 3 օրվա արյունահեղ կռիվների մեջ հոգնած, անոթի ու ծարավ՝ գերազանց ուժերի ճնշման տակ՝ Բաքվի զորամասերը սկսեցին նահանջել դեպի Կարակարգյան՝ իրենց հետ տանելով և Գյոքչայի հայազգաբնակչությանը։

Այդ օրվանից նախաձեռնությունը անցավ թուրքերի ձեռքը։ Բաքվի ուժերը օր ավուր հալչում էին. հունիս 10-ից սկսած նրանք կորցրել էին 7 սպա և 265 զինվոր սպանված, 16 սպա և 534 զինվոր վիրավոր։ Անառողջ կլիման, ջրի պակասությունը, անբավարար սնունդն ու հագուստը զարգացնում էին հիվանդություններ ու դասալքություն։ Մարտիկների թիվը, որ արշավանքին սկզբին 4 400 էր, իջել էր 2 400-ի։ Այդ պատճառով, հուլիսի 1-ից սկսած տեղի ունեցավ անընդհատ նահանջ, որի ընթացքում թշնամին հարձակումներ էր գործում, աշխատում անցնել թիկունքը, կռվի էր բռնվում բաքվեցիների հետ։ Հուլիսի 6-ին Բաքվի ուժերը կանգնեցին Շամախի—Կարասախկալ—Քուրդամիր գծի վրա։

Հուլիսի 5-ին Պարսկաստանից Բաքու հասավ գնդ. Բիչերախովը իր զորամասով և նշանակվեց Բաքվի պաշտպանության պետ, որ խիստ բարձրացրեց մարտիկների տրամադրությունը։ Հուլիսի 8-ին Բիչերախովի զորամասը հաջող կռիվներ ունեցավ Քուրդամիրի ճակատում։ Նույն օրը թուրքերը հարձակվեցին Շամախիի վրա, բայց հանդիպեցին սաստիկ դիմադրության։ Հուլիսի 9-ին, բաքվեցիները անցան հակահարձակման, և թուրքերը լուրջ կորուստներ կրելով և խոշոր ավար թողնելով նահանջեցին։ Հուլիսի 11-ին բաքվեցիները դադարեցրին հետապնդումը՝ վերադրավելով Շամախիի դիրքերը։ Նույն ժամանակ կռիվներ սկսվեցին և Բաքվի զորքերի ձախ թևում ու կենտրոնում։ Երեք օր տևող ճակատամարտերից հետո բաքվեցիները չդիմացան ու հետ քաշվեցին բռնելով Կերար կայարանը։ Հուլիսի 20-ից սկսվեցին մի շարք նոր արյունահեղ կռիվներ. Բաքվի ուժերը նահանջեցին Շամախիից էլ. զորքի հետ հեռացավ և շրջանի ամբողջ հայ բնակչությունը։ Քայլ առ քայլ, անվերջ կռիվներով՝ հուլիսի 26-ին զորքն ու ժողովուրդը հասան մինչև Խուրդալան, իսկ կենտրոնի ուժերը՝ մինչև Ալեաթ՝ ճանապարհին ոչընչացնելով ամեն ինչ։

Հուլիսի 26-ին խաբեությամբ, լքելով իր դիրքերը, Դերբենտի շրջանը փախավ գնդ. Բիչերախովը՝ տանելով հետը իր զորամասը։ Նույն օրը Հայոց ազգ. խորհուրդը թուրքերի արևելյան ճակատի պետ Մուրսել փաշայից ստացավ մի գրություն, որով առաջարկում էր վերջ տալ կռվին և քաղաքը հանձնել իրեն։

Մյուս կողմից, անհաջողությունները ճակատում շարունակվում էին։ Հուլ. 27—28-ին թուրքերն արդեն քաղաքի տակ էին՝ Բիբի-Հեյբաթում ու Բալաջարիում։ Մի գրոհ ևս, և Բաքուն կընկներ։ Հուլ. 28-ի գիշերը ժողովրդի մեջ ծայր էր տվել խուճապը. հայերից և օտարներից ոմանք պատրաստվում էին հանձնել քաղաքը։

Դրությունը դառնում էր հուսահատական։ Ի՞նչ անել, ո՞ւմ դիմել։ Ռուսաստանից հույս չկար. Ստալինն ինքը, դեռ հունիսին, թախանձագին խնդրում էր Շահումյանից «ամեն կերպ (զենքով, մարդով) օգնել Թուրքեստանին, որի գլխին անգլիացիները, Բուխարայի և Աֆղանիստանի վրայով, աշխատում են վատ խաղ խաղալ»։ Մնում էր աղոտ հավանականություն՝ օգնություն ստանալ «երրորդ ուժից»՝ անգլիացիներից, Պարսկաստանի վրայով։ Եվ այդ հարցը դրվեց բանվ., զինվ., նավաստ. և գյուղացիական խորհուրդների պատգամավորների և շրջանային խորհուրդների, նավային կոմիտեների ու կովկասյան կարմիր բանակի Ռազմա.-հեղափոխ. կոմիտեի արտակարգ նիստում, հուլ. 27-ին։ Շահումյանը մի ընդարձակ ճառով աշխատեց համոզել, որ անգլիացիներին հրավիրելը հավասար է հեղափոխության պարտության, որ, ավելի լավ է հաշտություն կնքել թուրքերի հետ, բայց անգլիացիներին հրավիրելու մտքից հետ կենալ։ Սակայն, ժողովը միաձայնու-

թյամբ, ընդդեմ բոլշևիկների, որոշեց օգտվել անգլիական ուժերից։ Փաստորեն այդ որոշումը խորհրդային իշխանության վերջն էր, բայց Ժող. գործ. խորհուրդը մի քանի օր էլ չհրաժարվեց և, ամենքից գաղտնի, սկսեց տենդագին փախուստի պատրաստություններ տեսնել։ Հուլիսի 28-ից մինչև 30-ը գիշերները, նավերի վրա փոխադրեցին ռազմամթերքը, պարենը, բանկերի ամբողջ դրամը, զանազան ապրանքներ, ամեն ինչ, որ արժեք ուներ։ Հուլիսի 30-ին նավերի վրա փոխադրվեցին բոլշևիկ զորքերն ու բոլշևիկ պարագլուխների ընտանիքները։ Ապա, հապճեպով խորհրդի արտակարգ նիստ գումարեցին, ուր Շահումյանը մի տգեղ ճառով անհաջողությունների ամբողջ պատասխանատվությունը ձգեց մենշևիկ-էսէռների և Հ. Հ. Դաշնակցության ու Հ. ազգ. խորհրդի վրա և հայտարարեց, որ Ժող. գործ. խորհուրդը հրաժարվում է իշխանությունից ու հեռանում Աստրախան...*

Եվ նույն օրն էլ հեռացան։ Փախչողների մեջ էին, բացի Շահումյանից, և մի շարք ուրիշ հայ կոմունիստներ՝ Սմբ. Մարգարյանը, Արա. Կարինյանը, Գ. Ղորղանյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Աշ. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Բոլշևիկների փախուստից հետո ստեղծվեց նոր իշխանություն՝ Բաքվի դիկտատուրա, որի մեջ մտան սոց.-հեղափ. Վելունցն ու Լ. Ումանսկին, դաշն. Ալ. Առաքելյանն ու Ս. Մելիք-Յոլչյանը և 3 նավաստիներ Կասպից նավատորմիղից։ Դիկտատուրայի առաջին գործը եղավ

* Իրենց դավաճանությունը արդարացնելու նպատակով Շահումյանը կազմեց մի կոչ՝ ուղղված «Բաքվի բանվորներին», որի մեջ գրում էր. «Հուլիսի 30-ին Թուրք զորքերը բոլորովին մոտեցան քաղաքին։ Խորհրդային զորքերի հրամանատար գնդ. Ավետիսյանը հայտնեց Ժող. գործ. խորհրդի նախագահին, որ քաղաքի բախտը արդեն որոշված է։ Ճակատը մերկացել է. «Բիչերախովը՝ մերկացնելով ճակատը՝ իր զորամասի հետ հեռացել է Սումգայիթ և շարժվում է դեպի Հյուսիս»։ Նույնը հաղորդեց և ընկ. Ղորղանյանը (զինվ. գործավար), որ վերադարձել է Սումգայիթից։ Ալեաթից հետ քաշված զորքերը ցրվել են. 1600 կովողից ճակատում մնացել է միայն 200 մարդ։ Այդ 200-ից էլ, աշ թևում կանգնած է ևս 200 մարդ Պետրովի զորամասից։ Իսկ հայկական զորամասերը, թվով ավելի քան 3000 հոգի, հազուստ չունենալու պատրվակով, մինչև այդ էլ մերժում էին գրավել դիրքերը քաղաքի շուրջ։ Այսպիսով, 32 վերստ երկարություն ունեցող ճակատը պահում են միայն 400 կովողներ, մինչդեռ օդային հետախուզությունը ցույց է տալիս, որ թուրք կանոնավոր զորքերից բաղկացած թշնամու մեծ ուժեր են առաջ շարժվում։ Եվ բանակի հրամանատար Ավետիսյանը իրավունք էր խնդրում, որ Ժ. զորավորը սպիտակ դրոշ բարձրացնե ու սկսե բանակցություններ։ Հակառակ պարագային, հայտարարեց Ավետիսյանը, դուք կլինեք պատճառ, եթե ուժով ներս խուժած թշնամին ոչնչացնե 160 հազարանոց քրիստոնյա բնակչությունը։

Նույն երեկոյան հայկական զորամասերի հետ խորհրդակցություն տեղի ունեցավ ...ի մոտ։ Զորամասերի պետեր Համազասպն ու Ղազարյանը հայտնեցին իրենց համաձայնությունը Ավետիսյանի հետ և վկայում էին, թե անհրաժեշտ է քաղաքի հանձնումն ու պատվիրակների ուղարկելը։

Նույն գիշեր Դաշնակցությունը իր մոտ ժողովի հրավիրեց հայ բուրժուազիային, և, ա հետ միասին վճռեց առավոտյան սպիտակ դրոշ բարձրացնել և նշանակեց հաշտա-

ռազմանավեր ուղարկել ու հետ բերել փախստական բոլշևիկներին և նրանց տարած ավարը, որը և կատարվեց հաջողությամբ. նավերը վերադարձվեցին և բոլշևիկները բանտարկվեցին. նրանց դեմ հարուցվեց դատական հետապնդում։

Դիկտատուրայի գլխավոր մտահոգությունը, սակայն, ճակատն էր, ուր դրությունը օր օրի վրա վատանում էր։ Պատերազմի ծանրությունը առանձնապես ընկած էր հայերի և մանավանդ, Հ. Հ. Դաշնակցության վրա, որ լարել էր ուժերը ճակատը պահելու համար։ Հուլիսի 30-ի գիշերվա նիստում Հ. Հ. Դ. Բաքվի Կենտր. կոմիտեն քննեց ստեղծված ահարկու կացությունը։ Ելք չէր գտնվում։ Նույնիսկ Ռոստոմը, որ, սովորաբար, հուսահատվել չգիտեր, շվարել էր։ Հանկարծ, պատմում է Ս. Մելիք-Յոլչյանը իր հուշերի մեջ*, «դուռը բացվեց և սոց.-հեղ. Միքայել Տեր-Պողոսյանը ներս մտավ՝ խնդրելու, որ Ռոստոմը դուրս գնա։ Հարևան սենյակում Տեր-Պողոսյանը հանձնել էր Ռոստոմին Պարսկաստանի էնզելի քաղաքից ստացված նոր ռադիո-հեռագիրը, որով հայտնվում էր, թե անգլիական հինգ հազարանոց մի զորամաս այնտեղ պատրաստ է նավեր նստելու և Բաքվին օգնության հասնելու, եթե միայն

բար պատվիրակության կազմը, որի մեջ պետք է մտներ, ի միջի այլոց, և շվեդական հյուպատոսը, որ երաշխավորում էր հայ ազգաբնակության անձեռնմխելիությունը քաղաքը հանձնելու պարագային։ Ժող. գործ. խորհուրդը վճռական կերպով արտահայտվեց բանակցությունների դեմ՝ քաղաքում գտնվող բոլոր զորամասերը հրավիրելով մեկնել ճակատ, հուլ. 30-ի գիշերը մի կոչ ուղղեց բանվորներին՝ հրավիրելով զենք առնել ու պաշտպանել քաղաքը, և պահանջում էր հայկական զորամասերի պետերից ճակատ տանել իրենց մասերը»։ Վերջիններս, Շահումյանի ասելով, խոստացել էին տալ 1300 մարդ. «Դաշնակցության ներկայացուցիչը հուլ. 31-ի գիշերը ժամը 3-ին հաղորդեց Ժող. գործ. խորհրդի նախագահին, որ հույս ունի հուլ. 31-ին մինչև 3000 մարդ հասցնել ճակատ», բայց, իբր թե, խոստացված ուժերից ճագիվ 320 մարդ է տեղ հասել, որի վրա Ավետիսյանը հայտնել է, որ «քաղաքի հանձնումը անխուսափելի է մի քանի ժամից»։ «Եթե շարունակեք սպիտակ դրոշ բարձրացնել, հարյուր հազարավոր գոհերի արյունը նրանց ձեր խղճի վրա»,— հայտարարում էր վճռական կերպով բանակի հրամանատարը։

«Նույն միջոցին եկած Հ. ազգ. խորհրդի նախագահ Ա. Գյուլիսանդանյանը և գնդ. Ղազարյանը, որոնք հայտարարեցին, թե Ազգ. խորհրդի հենց նոր կայացած ժողովը հաստատեց իր վերջնական «վճիռը՝ սպիտակ դրոշ բարձրացնել և հանձնվել հաղթողի գութին»։

Եվ միայն այս «դավաճանությունից» հետո, «Ժող. գործ. խորհուրդը որոշեց հրաժարվել իշխանությունից և խորհրդ. Ռուսաստանի զինված ուժերն և պետական գույքը փոխադրելով նավերի վրա»՝ հեռանալ Աստրախան»... (С. Шаумян, «Статьи и речи», 1924, Баку, стр. 137—138):

Այս որոշումն, իհարկե, Շահումյանի և ընկերների կողմից փախուստ ու դավաճանություն չէր... Առհասարակ, Շահումյանի չմեղանչելն ու արդարացումը շատ էին վրան բաց, իսկ դաշնակցականների հասցեին ուղղված մեղադրանքը՝ սիճեռի զրպարտություն։ Պատմական փաստերը բոլորովին հակառակ դեր են վիրագրում դաշնակցականներին ու բոլշևիկներին։

* «Հայրենիք» ամս., 1925 թ., № 9. էջ 71։

քաղաքը երկու օր պաշտպանվի և պահվի։ Ռոստոմը վերադարձավ բոլորովին փոխված։ Նա, կարծես, նորեն հարություն էր առել...»

Հ. ազգ. խորհրդի ներկայացուցիչ Ս. Արարատյանի ջանքերի արդյունքն էր այդ։ Հ. ազգ. խորհուրդը Արարատյանին ուղարկել էր Պարսկաստան՝ անգլիացիների հետ բանակցելու և Բաքու բերելու համար։ Նրան հաջողվել էր համոզել անգլիական հրամանատարությանը Բաքու ուղարկել անգլիական զորամասեր։ Այդ լուրն էր ավետում ռադիո-հեռագիրը, որ աներևակայելի ոգևորություն առաջ բերեց Բաքվում։ Հ. Հ. Դաշնակցությունը մի հատուկ կոչով զորակոչ հայտարարեց և ճակատ ուղարկեց մի քանի հազար կռվողներ։ Առաջավոր դիրքեր գնացին և Մուրադն ու Սեպուհը, որոնք, հուլիսի վերջերին, Վոլգայի ափերից հասել էին Բաքու։ Եվ սկսվեց համառ դիմադրություն։

Օգոստոսի 2-ին թուրքերը նորից անցան կատաղի հարձակման, այս անգամ Գայլի Դրունքի շրջանում, և համառ կռիվներից հետո, առաջացան մոտ 500 քայլ։ Հաջորդ օրը թնդանոթները որոտում էին ամբողջ ճակատի վրա։ Թուրքական գրոհները իրար էին հաջորդում։ Բաքվեցիները պաշտպանվում էին արտակարգ քաջությամբ. մեկը մյուսի հետևվից ընկնում էին լավագույն մարտիկները՝ Մուրադը, 16-րդ գումարտակի հրամանատար Արամ Դովլաթյանը, հեծելազորի պետ Իսակը։ Վիրավորների թիվը շատ մեծ էր...

Օգոստ. 4-ին թուրքերը սկսեցին կենտրոնացնել իրենց ուժերը, և Հ. ազգ. խորհուրդը ստացավ Մուրսել փաշայի երկրորդ, այս անգամ սպառնական, նամակը՝ քաղաքը հանձնելու պահանջով։ Նույն օր Բաքու հասավ գնդ. Ստոկսը մի քանի տասնյակ անգլիացի զինվորներով և լուր բերեց, որ իր հետևից գալու են 5000 անգլիացիներ։ Այս լուրը Բաքվի պաշտպաններին նոր ուժ ներշնչեց։ Եվ կռիվը շարունակվեց հուսահատ վճռականությամբ։

Օգոստ. 4-ի գիշերը, թուրքերը փորձեցին պատռել բաքվեցիների շղթան և օգոստ. 5-ի լուսաբացին արդեն գրավել էին Բիբի-Հեյբաթը։ Նրանց թնդանոթների ռումբերը ընկնում էին Բայիլով քաղաքամասում։ Արյունահեղ կռիվներ էին տեղի ունենում և մյուս ճակատների վրա։ Բաքվեցիները լարում էին իրենց վերջին ճիգը։ Հ. Հ. Դաշնակցությունը ճակատ ուղարկեց իր բոլոր ուժերը։ Ռոստոմը շրջում էր դիրքից դիրք և քաջալերում կռվողներին։ Հ. ազգ խորհուրդը իր բոլոր անդամներով աշխատում էր առանց դադարի։ Հրամանատարները անձնական քաջությամբ թև էին տալիս մարտիկներին։ Անգնահատելի ծառայություն էր մատուցանում և նավերի հրետանին։ Օրհասական վայրկյան էր. մա՛հ կամ ազատություն՝ ուրիշ ելք չկար։

Առավոտյան ժամը 10-ին բաքվեցիների մի զորամաս հաջողեց անցնել թշնամու թիկունքը. միաժամանակ հակահարձակում սկսվեց և ճակատից ու թևերից։ Թուրքերը առնվեցին երկու կրակի մեջ և, 3 ժամ

հետո, արդեն փախչում էին գլխակորույս՝ թողնելով մոտ 1000 դիակ, 16 գնդացիր և մեծ քանակությամբ ավար։ Շատ լուրջ էին և բաքվեցիների զոհերը. 14 սպա և 415 զինվոր սպանված ու վիրավոր։ Սպանվեց և Համազասպի օգնականը՝ Սերգոն, Բաքվի հերոսամարտի ամենափայլուն մարտիկներից մեկը։ Ծանր վիրավորվածների մեջ էր Մարտին Շաթիրյանի որդին՝ ուսանող Ռուբենը, որ թնդանոթաձիգ էր և ռումբի պայթյունից կորցրեց մեկ ոտքը, մեկ աչքը, ծնոտը, բայց և այնպես փրկվեց և ապագայում շարունակեց ծառայել Հայաստանի բանակում։

Օգոստ. 5-ին, երբ թշնամին արդեն փախել էր, Բաքու հասան և անգլիացիները, և մինչև օգոստ. 19-ը իրենց ուժերը հասցրին 2 700-ի, որոնցից 200-ը հետ գնաց, իսկ 150—200 հոգին կռիվներում սպանվեց կամ գերի ընկավ։ Անգլիացիների գալը առաջ բերեց խիստ դժգոհություն Բաքվի մահմեդական և, մասամբ, ռուս ազգաբնակչության ու բոլշևիկների մեջ։ Քաղաքում սկսեցին երևալ ռուսերեն կոչեր ու թռուցիկներ՝ «Կորչե՛ն հայերը», «Մա՛հ հայերին», «Կեցցե՛ Թուրքիան և Ռուսաստանը» և այլ նշանաբաններով։

Օգոստ. 5-ի կռիվներից հետո, ավելի քան 3 շաբաթ, տիրեց խաղաղություն. թուրքերը սպասում էին օգնական նոր ուժերի՝ պատրաստվելով վճռական գործողության։ Սկսեցին վերակազմել ու համախմբել իրենց ուժերը և բաքվեցիները։ Օգոստ. 5-ին դիկտատուրայի կողմից ընդհանուր հրամանատար նշանակվեց զոր. Դոկուչաևը. զինվորական գործերի վարիչ՝ զոր. Բագրատունին։ Սակայն, անգլիացիների հետ կարելի չեղավ ուժերի ներդաշնակություն և ընդհանուր ղեկավարություն առաջ բերել. նրանք, զոր. Դընստերվիլի հրամանատարության տակ, գործում էին բոլորովին անկախ։ Նրանք բռնեցին աջ ճակատի «Յեխոտ հրաբուխ» մասը։ Զոր. Դընստերվիլը, առհասարակ, մռայլ աչքով էր նայում հաղթանակի հնարավորությանը և հենց սկզբից իրեն պահում էր այնպես, որ ամենքը զգում էին, թե առաջին իսկ լուրջ վտանգի դեպքում պիտի թողնի ու հեռանա։

Օգնական ուժեր ստանալուց և վերակազմվելուց հետո, օգոստոսի 29-ին, թուրքերը անցան հարձակման, անգլիացիների գրաված ճակատում։ Վերջիններս ուժգին դիմադրությունից հետո թողին դիրքերի մի մասը։ Սեպտ. 1-ին թուրքերի համար հաջող հարձակումներ սկսվեցին և աջ թևում։ Զոր. Դընստերվիլը հայտնեց դիկտատուրային, որ դրությունը անհույս է և պետք է թուրքերի հետ բանակցություններ սկսել՝ պատերազմը վերջացնելու համար։ Դիկտատուրան միաձայնությամբ մերժեց այդ առաջարկը և պահանջեց, որ անգլիացիք մեկնեն ճակատ՝ սպառնալով, հակառակ պարագային, թնդանոթի կրակի բռնել նրանց նավերը։ Անգլիացիները համակերպվեցին։ Կռիվները շարունակվեցին անընդհատ. թշնամին դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտենում էր քաղաքին։

Սեպտ. 13-ի առավոտյան, մոտ 3000 թուրքեր ու տեղացի մահմեդականներ՝ ձիավոր ու հետևակ՝ գրոհ տվին Սուրուխանիի շրջանում և մինչև կես գիշեր աշխատում էին ճեղքել բաքվեցիների ճակատը։ Սեպտ. 13—14-ի գիշերը հարձակումները սկսվեցին ամբողջ ճակատի վրա, և լուսաբացին թուրքերը գրավեցին Գայլի Դրունքի դիրքերը։

Արյունոտ վախճանը մոտենում էր։

Սեպտ. 14-ի առավոտից անգլիացիք սկսեցին թողնել դիրքերը և նաև նստել. պատրաստվում էին հետևելու բոլշևիկների օրինակին. իրենց կաշին ավելի թանկ էր, քան Բաքուն ու Բաքվի ժողովուրդը։ Ժամը 5-ին նրանք հայտնեցին դիկտատուրային, որ հեռանում են և առաջարկեցին քաղաքը հանձնել թուրքերին։ Հ. ազգ. խորհուրդը խնդրեց նրանց թախանձագին, որ գեթ 8 օր էլ մնան, մինչև որ կարելի լինի գաղթեցնել ժողովուրդը. զոր. Դընստերվիլը պատասխանեց. «2 ժամից հետո պիտի մեկնենք. սպիտակ դրոշակ բարձրացրե՛ք»։ Եվ երեկոյան ժամը 8-ին անգլիական նավերը հեռացան Պարսկաստանի ուղղությամբ։

Հայերը մնացին մենակ։ Դիկտատուրան սկսեց պատվիրակություն պատրաստել հաշտության բանակցությունների համար։ Մյուս կողմից, նավերն էին թափվում ժողովուրդն ու զինվորները. զորամասերը քայլ առ քայլ նահանջում ու հավաքվում էին ծովափին։ Որոշ մասեր, սակայն, չկարողացան հեռանալ դիրքերից ու մինչև վերջին փամփուշտը կուվելուց հետո՝ կոտորվեցին կամ գերի ընկան։

Սեպտ. 15-ի առավոտյան, Ազգ. խորհրդի անդամները, ինքնապաշտպանության կազմակերպիչներն ու ղեկավարները, զինվորներն ու բնակչության մի մասը նավերով հեռացան Բաքվից՝ ոմանք դեպի Պարսկաստան, ոմանք դեպի Պետրովսկ, ոմանք Կրասնովոդսկի կողմը։ Վերջին նավ նստողն էր Բաքվի հերոսամարտի ոգին՝ Ռոստոմը, մոայլ ընկճված ու հուսաբեկ...

Իսկ քաղաքում, այդ միջոցին, սկսվում էր Մեծ եղեռնը։ Մահմեդական խուժանը թափվում էր ամեն կողմից։ Հասան Ազրբեջանի կառավարության ներկայացուցիչներն էլ։ Եվ երեք օր շարունակ, ամեն կողմ, կատարվեց սպանություն, թալան, բռնաբարություն և աննկարագրելի գազանություն. էնվերի ու Թալեաթի աշակերտները սերտում էին իրենց վարպետների տված դասը...

Թուրք կանոնավոր զորքը քաղաք մտավ միայն սեպտ. 16-ի երեկոյան, և այդ ժամից զանգվածային թալանն ու կոտորածը վերջ գտավ։ Անհատական սպանությունները, սակայն, ձերբակալություններն ու կողոպուտը, այնուհետև էլ շարունակվեցին. հայերը Ազրբեջանում դրվեցին օրենքից դուրս։

Որքա՞ն էր Բաքվի զոհերի քանակը։ Ազգ. խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանը այդ մասին տալիս է հետևյալ թվերը. սպանվածներ՝ 5 248 հոգի, անհայտացածներ՝ 3 572, գերվածներ՝ 3 396, բանտարկվածներ՝ 253, առևանգվածներ՝ 571, բռնաբարվածներ՝ 288։

Բ. Իշխանյանը իր կատարած վիճակագրության վրա հենվելով՝ հաղորդում է ուրիշ թվեր*. սպանվածներ՝ 9 029, անհայտացածներ՝ 3 586, գերվածներ՝ 4 246, բանտարկվածներ՝ 253, առևանգվածներ՝ 1 142, բռնաբարվածներ՝ 572։ Բացի այդ, Իշխանյանը հաստատում է, որ Բաքվի 32 000 փախստականներից 10 235 հոգին մեռել է զանազան վայրերում։ Եղել են և այլ կարգի մահացություններ։ Զոհերի հանրագումարը Իշխանյանը ցույց է տալիս 29 060, Բաքվինը՝ 89 541 հոգի, հայ բնակչության 32,45 %։ Հայերի նյութական կորուստը Իշխանյանը հաշվում է 945 724 017 ռուբլի։

«29 060 հոգի մարդկային զոհեր և 945 724 017 կամ մոտ մի միլիարդ ռուբլու նյութական վնասներ ու կորուստներ՝ ահա թուրք-թաթարական բարբարոսության և արյունռուշտ քաղաքականության արդյունքը սեպտեմբերյան մեծ սարսափների օրերին»,— եզրափակում է Բ. Իշխանյանը։

Ահա ա՛յս «քաղաքական հասունության վկայականով» Ազրբեջանը սկսեց իր պետական անկախ կյանքը։

* Բ. Իշխանյան, Բաքվի մեծ սարսափները, 1920 թ., Թիֆլիս, էջ 184—185, 187։

ԳԼՈՒԽ ԺԶ

ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ

Այսպես, ուրեմն, ընդ հուր և ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչվեց անկախ կյանքի։ Ցնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը։ Ընդհակառակը, շատերի համար նա նկատվում էր անժամանակ ծնունդ։ Հիվանդ երեխա աշխարհ բերած մոր պես, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգավոր՝ շշնջալով. «Դու իմ և ուրախությունն ես, դու՝ դժբախտությունը իմ...»

Այո՛, արցունքի ու տառապանքի ծովից ծնվեց Հայաստանի անկախությունը։ Ոմանք չէին հավատում նրան. անկախություն ու հանրապետություն բառերը դնում էին չակերտի մեջ։ Եվ այդպես վարվելու հիմքերը շատ էին զորավոր. իրոք որ, զարհուրելի էին պայմանները, և անկախությունը այդ պայմաններում թվում էր հեգնանք։

Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12 000 քառ. կիլոմետր աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, աշխարհի խուլ անկյունում, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված ատամ կրճտացնող թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական։ Սով ու հիվանդություն, ավար ու ավեր, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ։ Իսկ մյուս կողմը՝ էնվերի բանակը հաղթական՝ համաթրքական երազներով տոգորված, որ Հայաստանի մարմնի վրայով ձգտում էր դեպի Ապշերոն ու Թուրքեստան։

Այսպես էր դրությունը Հայաստանում, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ։ Մայիսի 26-ից հետո, հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայր աստիճանի. վրացիները՝ արբեցած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ՝ թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք, իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, դավաճան, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող, հայ ժողովրդի գոյության թշնամի...

Անկախության առաջին իսկ օրից, վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ «գերիշխան Վրաստանի» հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն։ Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր,

թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը։ Եվ այդ այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր և Լոռիի ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղական մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը։

Ծանր էր կացությունը։ Եվ հենց որ հաշտարար պատվիրակությունը Բաթումից վերադարձավ, Հ. ազգ. խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարության կազմակերպման՝ հրավիրելով վարչապետության Հ. Քաջազնունիին. այստեղ էլ բացվեց անակնկալ դժվարություն. Ժողովրդական կուսակցությունը, Մ. Պապաջանյանի գլխավորությամբ, կտրականապես մերժեց Քաջազնունիի առաջարկը՝ մտնելու նախարարության մեջ։ Ժողովրդականները բաց արին կատաղի պայքար Հ. Հ. Դաշնակցության դեմ՝ պահանջելով, որ սա քաշվի ասպարեզից, և իշխանությունը հանձնվի իրենց։ Երկու հիմնավորում էին առաջ քաշում նրանք՝ մամուլի ու հրապարակային ժողովների մեջ. նախ՝ Դաշնակցությունը, իր վարած քաղաքականությամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղետների համար. երկրորդ՝ թուրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու համար անհրաժեշտ էր նոր ուժ հրապարակ հանել և այդ նոր ուժը Ժողովրդական կուսակցությունն էր, որին և պետք էր հանձնել կառավարություն կազմելը։

Դժվար չէր տեսնել, որ նման խնդիրներ հարուցանելիս՝ ժողովրդականների մեջ խոսում էր, ավելի շուտ, կիրքը, կամ, պատասխանատու վայրկյանին, գործից խուսափելու ցանկությունը, որովհետև վերջին 10—15 տարվա ազգային-քաղաքական բոլոր կարևոր գործերում Հ. Հ. Դաշնակցության կողքին, իսկ շատ անգամ և նրանից առաջ, քայլում էին հենց իրենք ժողովրդականները։

Բայց վերջին տեսակետը, անշուշտ, որոշ ճշմարտություն պարունակում էր իր մեջ։ Իհարկե, ավելի լավ կլիներ, եթե այդ բոպեին մեջտեղ գար ազգային մի նոր ուժ, որ կարողանար, առավել կամ պակաս ձեռնհասությամբ, փոխարինել Հ. Հ. Դաշնակցությանը։ Այդպիսի ուժ գոյություն չուներ, դժբախտաբար. Հայ ժողովրդական կուսակցությունը— Թիֆլիսցի սահմանափակ թվով մտավորականների ու քաղքենիների մի խմբակցություն— այդ ուժը չէր։

Քաջազնունիի բոլոր ջանքերը՝ միջկուսակցական կառավարություն ստեղծելու՝ ի դերև ելան. ժողովրդականները համառ կերպով մնացին իրենց տեսակետի վրա։ Նրանց հաստատակամությանը նպաստում էր և այն հանգամանքը, որ Ազգ. խորհուրդը չյուրացրեց Երևանի ու Թիֆլիսի համար ջոկ-ջոկ կառավարություններ կազմելու ծրագիրը. ժողովրդականները չէին ուզում հեռանալ Թիֆլիսից։

Ի վերջո, երկար բանակցություններից հետո, Քաջազնունիին հաջողվեց կյանքի կոչել հետևյալ կազմով կառավարություն, վարչապետ՝ ինքը, Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին

գործերի՝ Արամ, ելևմտական՝ Խ. Կարճիկյան, զինվորական՝ Հ. Հախվերդյան։ Վերջինը միայն անկուսակցական էր, մյուսները անդամ էին Հ. Հ. Դաշնակցության։

Կառավարությունը կարգավորեց մի շարք ընթացիկ խնդիրներ. Վրաստանի կառավարության մոտ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Ջամալյանին. հուլիսի 2-ին վրաց կառավարության հետ կնքեց համաձայնություն 200 միլիոն անդրկովկասյան նոր բոներ բաց թողնելու մասին, որից 120 միլիոնը պիտի տրվեր Հայաստանին, իսկ ութսունը՝ վրացիներին. դրեց հայկական կորպուսի դույքերը Երևան փոխադրելու, ինչպես նաև անդրկովկասյան ընդհանուր դույքերի բաժանման խնդիրը, կապեր հաստատեց գերման, ավստրիական և թուրքական ներկայացուցիչների հետ. նշանակեց Պոլսի խորհրդաժողովի անդամներ և այլն։

Բաթումի խորհրդաժողովից հետո, Գերմանիայի ներկայացուցիչ զոր. ֆոն Քրեսը հայտնեց, որ հունիսի 25-ին Պոլսում պետք է գումարվի մի խորհրդաժողով՝ մասնակցությամբ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի և կովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների՝ լուծելու համար Կովկասի և Թուրքիայի միջև անկախ մնացած բոլոր խնդիրները։ Հայ. ազգային խորհրդի կողմից այդ խորհրդաժողովին պատվիրակներ նշանակվեցին՝ Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը։ Այս վերջինը, որ մերժում էր դաշնակցականների հետ մտնել կառավարության մեջ, դաշնակցականների հետ գնաց Պոլիս, իսկ ապագայում, ինչպես կտեսնենք, նաև Փարիզ։ Հունիսի 14-ին պատվիրակությունը մեկնեց Թիֆլիսից։

Այս բոլոր աշխատանքները ուշացնում էին կառավարության մեկնումը, որ ջղայնություն էր առաջ բերում ո՛չ միայն վրացիների, այլև հայ հասարակության մեջ։ Երևանից պահանջում էին փութացնել մեկնումը։ Այդ նպատակով նույնիսկ պատվիրակներ եկան Թիֆլիս։ Թիֆլիսի մամուլն ու հանրային կարծիքը դատապարտում էին Հ. ազգ. խորհրդի ցույց տված դանդաղաշարժությունը. մեղադրում էին, որ Ազգ. խորհրդի անդամները չէին ուզում բաժանվել Թիֆլիսից, ինչ որ շատ էլ հեռու չէր ճշմարտությունից։

Այս մթնոլորտում Ազգ. խորհուրդը չէր կարողանում երևան բերել մեկ վճռական կամք։ Իրար հաջորդող նիստերում տեղի էին ունենում բուռն վիճաբանություններ, որոնցից պարզ նկատվում էր, որ շատերի համար Երևան գնալը անձնապես անհանդուրժելի խնդիր էր, որ անձնական նկատումները քողարկվում էին սկզբունքային առարկություններով։

Ի վերջո, Երևան փոխադրվելու հարցը կտրուկ կերպով դրվեց Ազգ. խորհրդի և կառավարության հուլիսի 13-ի միացյալ նիստում, ուր կուսակցության ներկայացուցիչներն արին իրենց հայտարարությունները.

Հ. Հ. Դաշնակցությունը պահանջում էր, որ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը ամբողջ կազմով անմիջապես մեկնեն Երևան։ «Մեր տունը վերադառնանք»,— ասում էին նրանք։ Հայ ժողովրդական կուսակցությունը առաջարկում էր Երևան ուղարկել մի պատվիրակություն և կազմել տեղական կառավարություն, իսկ Հ. ազգ. խորհուրդը, որպես համազգային մարմին և իշխանության աղբյուր, պահել Թիֆլիսում։ Հայ բուրժուազիայի համար Թիֆլիսն էլ, ինչպես ամբողջ աշխարհը, «մեր տունն» էր։ Սոցիալիստ-հեղափոխականները առաջարկում էին, որ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը գնան Երևան, կազմեն այնտեղ Հայաստանի տեղական իշխանություն, ապա Ազգ. խորհուրդը վերադառնա Թիֆլիս ու մնա իբրև ընդհանուր ազգային իշխանություն։ Սոցիալ-դեմոկրատները, որ առաջ կողմնակից էին Երևան փոխադրվելուն, այժմ հետ տուին իրենց առաջարկը և տատանվում էին անվճռականության մեջ։

Այս բոլոր կարծիքները լսելուց հետո, Քաջազնունին հայտարարեց, որ եթե Ազգ. խորհուրդը մնա Թիֆլիսում կամ կազմվեն երկու Ազգային խորհուրդներ, ինքը կհրաժարվի վարչապետությունից։ Որի վրա, 7 քվեով ընդդեմ 5-ի, որոշվեց Ազգ. խորհուրդն ու կառավարությունը փոխադրել Երևան։ Հայը շատ ամուր էր նստել Թիֆլիսում ու դժվարությամբ էր պոկ գալիս...

Երկար ձգձգումներից ու վարանումներից հետո, հուլիսի 17-ին, Ազգ. խորհուրդն ու կառավարությունը, վերջապես, մեկնեցին Երևան։ Թիֆլիսից մեկնելուց առաջ, Ազգ. խորհուրդը, Քաջազնունիի հետ համախորհուրդ, նշանակեց ներկայացուցիչներ՝ Վրաստանի կառավարության մոտ՝ Արշ. Ջամալյանին, Ռուս. կամավորական բանակի մոտ՝ Հ. Սաղաթելյանին, Կոլչակի բանակի մոտ, Սիբիրում՝ Գր. Ջամոյանին, Կուբանի և Դոնի կառավարությունների մոտ՝ Ս. Վրացյանին և այլն։

Ալեքսանդրապոլով անցնելը վտանգավոր էր. Սանահնից սկսած երկաթուղին գտնվում էր թուրքերի ձեռքը։ Պետք էր անցնել Աղստաֆա—Դիլիջանով։

Մեկնողների մեջ էին կառավարության անդամները՝ Քաջազնունին, Խ. Կարճիկյանը, զոր. Հախվերդյանը, Ազգ. խորհրդի կողմից՝ Ավ. Սահակյանը, Ս. Տիգրանյանը, Ստ. Մալխասյանը, Պ. Ջաքարյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Խոնդկարյանը, բժ. Ա. Բաբալյանը, Հ. Ազատյանը, Ա. Մխիթարյանը և ուրիշներ, այլև զորապահակ՝ Դալի Ղազարի գլխավորությամբ։ Նրանց հետ գնում էին և երկու գերմանացի սպաներ՝ լեյտենանտ ֆոն Մոմսենը և օբեր-լեյտենանտ Այզենմանը՝ զոր. ֆոն Քրեսի ներկայացուցիչները, և մի թուրք սպա Վեհիբ փաշայի կողմից։

Մեկնումը կատարվեց շատ տխուր պայմաններում։ Վրացիները, որոնք, առհասարակ, երևելի վարպետներ են հանդիսավոր ընդունելություններ ու «բարի երթեր» կազմակերպելու, այս անգամ, կարծես դիտմամբ, արել էին ամեն բան, որպեսզի վիրավորեն հայերի ինքնասիրու-

թյունը։ Հակառակ նախօրոք հայերի կողմից արված դիմումի, վրաց կառավարությունը ո՛չ մի քայլ չէր արել դյուրացնելու համար «քույր հանրապետության» կառավարության ճանապարհորդությունը։ Վրաց կառավարության կողմից ոչ մի ներկայացուցիչ չէր եկել կայարան։ Երկաթուղային վարչությունը, իր հերթին, անփափկանկատ բծախնդրություններով, դժվարություններ էր հանում. տրամադրել էր մի հին, կեղտոտ ու անհարմար վագոն, կարծես գաղթականներ լինեին ճամփորդողները։ Մեծ դժվարությամբ կարելի էր եղել արտոնություն ստանալ՝ մի երկու կիսախարխուլ ինքնաշարժ տանելու։ Նվաստացած, դառն զգացումներով մեկնեցին Թիֆլիսից Հայաստանի վարիչները։ Կարծես, թշնամի երկրից էին հեռանում։ Փոյլի կայարանում վրաց սահմանապահները լրացրին պակասը՝ փորձելով նույնիսկ խուզարկել Հայաստանի կառավարության վագոնը, և միայն գերման սպայի միջամտությունը աղատեց այդ խայտառակությունից։

Ընդհակառակը, ինչքա՜ն տարբեր էր վերաբերումը Ազրբեջանում։ Սահմանի վրա հայկական կառավարությունը ընդունվեց զինվորական պատիվներով. ընդառաջ էին եկել նահանգապետը և Ազրբեջանի կառավարության ներկայացուցիչները։ Աղստաֆայում և Ղազախում արվեց պաշտոնական ընդունելություն. ճաշ էր պատրաստված ի պատիվ հյուրերի։ Թուրք գյուղացիները համակրանքով էին դիմավորում հայ ներկայացուցիչներին, որոնք մինչև Հայաստանի սահմանը անցան բարեկամական ցույցերի միջից։

Հայաստանում, ճանապարհին, ամեն տեղ Ազգ. խորհուրդն ու կառավարությունը ընդունվեցին անվերապահ համակրանքով։

Առաջին հանդիսավոր ընդունելությունը Հայաստանի հողի վրա տեղի ունեցավ Դիլիջանում։ Հակառակ անձրևոտ եղանակին, ձիավոր մի հարյուրյակ սպասում էր հյուրերին գյուղից դուրս։ Յարալյանի ամառանոցի առաջ, որը հատկացված էր հյուրերին գիշերելու, դրված էր պատվո պահակ։ Ազգ. խորհրդի նախագահի բարևի վրա զինվորները պատասխանեցին հայերեն. «բարև՛, հազար բարի՛»։ Դիլիջանցիները պատրաստել էին հյուրասիրություն և հաջորդ օրը, հանդիսավորությամբ ճանապարհ դրին Երևան։ Զորքերը բռնել էին ճանապարհի երկու կողմերը։ Ժողովուրդը բարեմաղթություններ էր անում։

Սեմյոնովկայում աղ ու հացով ընդառաջ եկան ռուս ազգաբնակչության ներկայացուցիչները և գնդ. Սամարցյանը իր գնդով։ Ավ. Սահակյանը ընդունեց աղն ու հացը, դիտեց զորքերը և ողջույնի խոսք ասաց հավաքվածներին։

Ելենովկայում խռնված էր ահագին բազմություն մերկ ու թշվառ գաղթականների։ Ռուս բնակիչները հեռացել էին Հյուսիսային Կովկաս և նրանց տները բռնել էին Կարսի, Շիրակի, Ղարաքիլիսայի հայ փա-

խրստականները։ Երևանի Ազգ. խորհուրդը այստեղ բաց էր արել մի ճաշարան և ձրի կերակուր էր տալիս ավելի քան 5 000 մարդու։

Հուլիսի 9-ին, երեկոյան դեմ հասան Ախտա։ Երևանից եկել էին դիմավորելու Արամը և տեղական կառավարության անդամները։ Փողոցի գլխին կանգնած էին զորքն ու զինվորական նվագախումբը։ Ավ. Սահակյանը ընդունեց հրամանատարի զեկուցումը. ապա զորամասերը, կանոնավոր շարքերով, դրոշակները պարզած ու երաժշտությամբ, անցան Ազգ. խորհրդի ու կառավարության անդամների առջևից։ Տեսարանը հուզիչ էր։

Հայկական կորպուսի սպայակույտը զոր. Նազարբեգյանի գլխավորությամբ հյուրերին ընդունեց Քանաքեռում, ուր պատրաստված էր թեյասեղան, որի միջոցին արտասանվեցին հանդիսավոր ճառեր։

Ուշ երեկոյան հասան Երևան։ Քաղաքը զարդարված էր դրոշակներով, գորգերով ու կանաչով։ Աստաֆյան փողոցը լցված էր բազմությամբ։ Փողոցի երկու կողմը շարքերով կանգնած էին զորքերը՝ Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հերոսները։ Հրամանատարի զեկուցումից հետո հնչեց երաժշտությունը և խանդավառ «կեցցե՛ն» հազարավոր բերաններից։

Հասարակությունը առանձնապես ջերմ ընդունելություն ցույց տվեց գերմանացի սպաներին։

Երեկոյան տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որին ներկա էին Թիֆլիսի և Երևանի Ազգ. խորհուրդների և կառավարության անդամները, ռուս, ուկրաինացի ու մահմեդական ազգաբնակչության ներկայացուցիչները, պարսկական հյուպատոսը, գերմանական ու թուրք սպաները։ Արտասանվեցին բոլորի կողմից ողջույնի ճառեր, որոնց պատասխանեց Հ. Քաջազնունին. «Մեր պետությունը,— ասաց նա,— ի միջի այլոց, կոչվում է ո՛չ թե հայկական, այլ Հայաստանի Հանրապետություն։ Այդ ցույց է տալիս, որ մեր պետությունը հայրենիք է նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդների համար»։

Հանդեսը տևեց մինչև ուշ գիշեր։

Հաջորդ օր սկսվեցին պետական աշխատանքները։ Կառավարությունը հայրենի հողի վրա անցավ գործի։

***

Իսկ գործ շատ կար։ Վերից վար պետք էր կառուցանել պետական մեքենան։ Երկիրը կատարյալ քաոսի և անիշխանության մեջ էր՝ պետք էր կարգ ու օրենք հաստատել։ Գաղթականությունը սնունդ ու բնակարան էր պահանջում՝ պետք էր տալ։ Պետք էր կարգադրել պարենավորման ու դրամական հարցերը։ Սահմանների վրա ընդհարումներ էին տեղի ունենում, մահմեդական խռովությունները երկրում չէին վերացած

խպառ՝ պետք էր հաշտությունը գործնականացնել արտաքին ու ներքին թշնամու հետ։ Մի խոսքով, պետք էր ոչնչից պետություն ստեղծել։

Եվ Թիֆլիսից եկած գործիչները Երևանում գտնվողների հետ համերաշխ և համախորհուրդ լծվեցին աշխատանքի։

Թիֆլիսի և Երևանի Ազգ. խորհուրդների մի շարք խառն նիստերում վերջնական ձև ստացան Ազգ. խորհուրդն ու կառավարությունը։ Որոշվեց, հակառակ ժողովրդականների քվեի, եռապատկել Ազգ. խորհրդի անդամների թիվը և հրավիրել այլազգիների՝ թուրքերի, եզդիների ու ռուսների ներկայացուցիչներին։ Այս ձևով կազմվեց Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդ անունով։

Կառավարության կազմը պահվեց նույնը, ինչ որ նշանակված էր Թիֆլիսում։ Քիչ հետո հրավիրվեց միայն մի նոր նախարար արդարադատության համար՝ տեղական անկուսակցական գործիչներից մեկը՝ Գ. Պետրոսյանը։

Հաստատվեց Հայաստանի ազգային դրոշակը՝ հորիզոնական կարմիր, կապույտ ու նարնջի գույներով։ Դրոշակի ձևի և գույների շուրջ եղան բավական երկար խորհրդակցություններ. նկատի առնվեցին հայոց պատմական դրոշակները, լսվեց հայկաբան Ստ. Մալխասյանի հիմնավորված զեկուցումը հայկական դրոշակի մասին և, ի վերջո, որոշվեց ընդունել վերոհիշյալ երեք գույները՝ պայմանով, որ վերջնական հաստատումը կատարվի Սահմանադիր ժողովի կողմից, որը պետք է գումարվեր Հայաստանի երկու հատվածների միացումից հետո։

Ի՞նչ բովանդակություն կամ խորհուրդ էր դրվում այդ գույների կամ դրոշակի ամբողջության մեջ։

Առանձին պատգամավորներ իրենց մտքում ունեին, անշուշտ, որոշ բացատրություն, ոմանք ճառով էլ արտահայտեցին, բայց Հայ. խորհուրդը այդ մասին որևէ որոշում չտվեց, և դրոշակն իր ամբողջության մեջ, գույների ընտրությունն ու դասավորությունը ավելի շուտ արդյունք էր քվեարկության պատահականության։

Պատգամավորների մի մասի կողմից մասնավոր առարկություն էր լսվում — գլխավորապես գործնական տեսակետից — նարնջագույնի դեմ՝ Հայաստանում դժվար էր այդ գույնի կտոր գտնել։ Առաջարկվում էին փոխարենը դնել կանաչ գույն. ոմանք փաստ էին բերում, որ կանաչը մեր պատմական գույներից մեկն է։ Բայց նարնջի գույնը առանձնապես պաշտպանում էր Քաջաղնունին, որ զեկավարվում էր սոսկ գեղասիրական նկատումներով. կարմրի, կապույտի և նարնջագույնի ներդաշնակությունը դուր էր գալիս նրա ճաշակին։

Կային, սակայն, հայկական եռագույնի մեջ և՛ գաղափար, և՛ խորհուրդ դնողներ։ Այդ գույները, կարծես, բխում էին մեր կյանքից, խորհրդանշում էին հայ պետականության ծագումն ու ապագան։ Կարմիրը հայ ժողովրդի թափած արյունն էր, կապույտը՝ Հայաստանի կապույտ

երկինքը, և նարնջի կամ ոսկու գույնը՝ խտացումը աշխատանքի։ Հայ ժողովուրդը, որ արյունով էր ձեռք բերել իր ազատությունը, հայրենի կապույտ երկնքի տակ, իր համբավավոր աշխատասիրությամբ՝ պիտի վերաշիներ երկիրը և ապրեր ազատ ու երջանիկ...

Հայաստանի խորհրդի պաշտոնական բացումը նշանակվեց օգոստոս 1-ին։

Երկու օր առաջ, հուլիսի 30-ին, Երևան եկան գերմանական ներկայացուցիչ զոր. ֆոն Քրեսը և ավստրիական ներկայացուցիչ բարոն Ֆրանկելշտեյնը Վրաստանի մեր դիվ. ներկայացուցիչ Ջամալյանի և մի քանի սպաների ուղեկցությամբ։ Կայարանում նրանց ցույց տրվեց հանդիսավոր ընդունելություն։ Երեկոյան տրվեց հացկերույթ քաղաքագլխի կողմից։

Հաջորդ օր նրանք այցելեցին վարչապետին ու Հայաստանի խորհրդի նախագահին, ապա մեկնեցին էջմիածին՝ տեսնվելու համար կաթողիկոսի հետ։ Ժամը 5-ին վերադարձան էջմիածնից և ընդունեցին Հայաստանի խորհրդի նախագահի ու վարչապետի փոխայցելությունը և ունեցան նրանց հետ երկար խոսակցություն՝ հայկական գործերի մասին։ Նրանց այցելեցին և մյուս նախարարները։ Երեկոյան կառավարությունը հացկերույթ տվեց ի պատիվ հյուրերի, որին ներկա էին և Երևանում գտնվող թուրք սպաները։ Արտասանվեցին ճառեր։ Գիշերը ֆոն Քրեսը մեկնեց Թիֆլիս, իսկ պարոն Ֆրանկելշտեյնը մնաց Հայաստանի խորհրդի բացմանը ներկա գտնվելու համար։

Առաջին դիվանագիտական ընդունելությունն էր այս Հայաստանի հողի վրա։

Թիֆլիս վերադառնալիս, գնացքում, Ջամալյանը մտերիմ խոսակցություն է ունենում զոր. ֆոն Քրեսի հետ։ Զորավարը ցույց է տալիս իր իր կառավարության ուղարկելիք հեռագիրը։ «Այդ հեռագրում,— հաղորդում է Ջամալյանը Երևանի կառավարությանը,— նա զարմանալի հմտությամբ խտացրել է այն մտահոգությունները, որ դուք արտահայտեցիք մեր առանձին ունկնդրության ժամանակ, և ներկայացնում է այդ մտահոգությունները ոչ թե ձեր, այլ յուր անունից։ Միայն հեռագրի վերջում նա մեր կառավարության անունից հայտնում է, որ վերջինս դեմ չի լինի, եթե ավստրո-հունգարական զորքերը գան Հայաստան։ Ես խընդրեցի, որ գեներալը հեռագրի մեջ մտցնի նաև Ղարաբաղի ղինաթափության խնդիրը, որ և նա կատարեց։ Այդ հեռագրի մեջ գեներալը խոսում է ամենահոգի արտահայտություններով թուրքերի մասին՝ նրանց քաղաքականությունը բնորոշելով երկու խոսքով՝ վրդովեցուցիչ թալան և հայ ժողովրդին սովամահ անելու ձգտում»։

Նույն տեսակցության ժամանակ ֆոն Քրեսը Ջամալյանին ասել է, ի միջի այլոց, նաև, որ՝

«Մեր հարաբերությունները տաճիկների հետ բավական վատացան

շնորհիվ մեր միջամտության Անդրկովկասյան գործերին։ Թուրքերը այս երկիրը իրենցն են համարում ռուսների հեռանալուց հետո և, հանկարծ, մենք ասում ենք՝ «half» (կեցիր), բնական է, որ պետք է լարվեն մեր դեմ»։

«Թուրքերը չեն ենթարկվում ընդհանուր հրամանատարության պահանջներին և իրենց գլխու դասավորում են զորքը սահմանաձակատներում...»*

***

Օգոստ. 1-ին, Երևանի քաղաքային ակումբի դահլիճում, հանդիսավոր շքով բացվեց Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը։ Քաղաքը ընդունել էր տոնական կերպարանք։ Փողոցները բռնված էին բազմություններով։ Ակումբի առջև երկկարդ շարված էր զորքը։

Ակումբի սրահը հարմարեցված էր խորհուրդի նիստերին։ Մեջտեղը դրավել էին պատգամավորները. բեմի վրա՝ նախագահությունը։ Ներկա էր կառավարությունը ամբողջ կազմով։ Ձախ օթյակը բռնում էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի ներկայացուցիչները, պարսից հյուպատոսը և ռուս ու մահմեդական ազգ. խորհուրդների ներկայացուցիչները։ Աջ օթյակում նստած էին բանակի հրամանատար զոր. Նազարբեգյանը, զոր. Սիլիկյանը և ուրիշ զինվորականներ։ Մամուլի ներկայացուցիչներին հատկացված էր առանձին տեղ։ Դահլիճի հետևի մասը և վերնահարկը բերնեբերան բռնված էին հասարակությամբ։

Հայաստանի խորհրդի պատգամավորները դասավորված էին նախօրոք սահմանված կարգով. աջ կողմը նստած էին Հայ ժողովրդական կուսակցության անդամների և մահմեդականների, եզդիների ու ռուսների ներկայացուցիչները։ Կենտրոնում և ձախ կողմի մի մասում՝ դաշնակցականները, իսկ ձախակողմում՝ սոց.-դեմոկրատներն ու սոց.-հեղափոխականները։

Հայաստանի անդրանիկ օրենսդրական մարմնի առաջին նիստը բանալու պատիվը վիճակվեց Հ. ազգ. խորհրդի նախագահ Ավ. Սահակյանին։ Խորին լռության մեջ բեմ ելավ նա և արտասանեց բացման ճառը, որը տեղն ու տեղը թարգմանվեց ռուսերեն ու թուրքերեն լեզուներով։

«Քաղաքացինե՛ր, պատգամավորներ Հայաստանի խորհրդի։

Գերագույն Հայոց ազգային խորհրդի կողմից ես պատիվ ունեմ այսօր բաց անել անդրանիկ նիստը Հայաստանի խորհրդի և հայտարարել, որ այսուհետև սա՛ է միակ լիազոր մարմինը՝ ամփոփող իր մեջ Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը։

Այս օրը կդառնա մեզ համար պատմական և կբանա մի նոր լուսավոր դարաշրջան մեր երիտասարդ պետության կյանքում, ինքնուրույն քաղաքական և տնտեսական զարգացման։

Այս օրը կմնա միշտ հիշատակելի և ա՛յն պատճառով, որ առաջին անգամ իրականացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի սահմաններում գեղեցիկ երազանքն ու նվիրական տենչը ինքնորոշման, թեև անհնարին դժվարին պայմաններում։

Ենթադրելով, որ մեր երկրի անկախության հարցին շատերը ձեզանից լավատեղյակ չեն՝ ես հույժ կարևոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչև իր վերջին ձևակերպումը անկախ պետությունների գաղափարը Անդրկովկասում։

Մեր հանրապետությունը, ինչպես և մյուսները, հանդես եկան իբրև անկախ պետություններ ա՛յն օրից, երբ Անդրկովկասյան սեյմը մայիսի 26-ին իրեն հայտարարեց կազմալուծված. վրաց սոցիալ-դեմոկրատ ֆրակցիայի նախաձեռնությամբ և առաջարկությամբ նույն օրն իսկ Վրաստանը հայտարարեց իրեն անկախ։

Անդրկովկասի ամբողջությունը փլվելուց հետո մեր երկիրը թողնված էր իր բախտին, ուստի Հայոց ազգային խորհուրդը շտապեց իր վրա վերցնել կառավարության բոլոր ֆունկցիաները։

Հենց այդ ժամանակն էր, որ ստացվեց օսմանյան կառավարության բոլորին հայտնի վերջնագիրը նոր հողային գրավումների մասին և պահանջվում էր պատասխան 48 ժամվա ընթացքում։ Գերագույն խորհրդի կողմից անմիջապես առանձին պատվիրակություն ուղարկվեց Բաթում հանձինս Հ. Քաջազնունու, Մ. Պապաջանյանի և Ա. Խատիսյանի՝ տալով նրանց արտակարգ լիազորություններ բանակցություններ վարելու տաճիկ պատվիրակության հետ։

Մեր պատվիրակությունը հաջողեցրեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մեջ, բայց և այնպես ստիպված էր ընդունել վերջնագիրը և խաղաղության դաշինք կնքել Վեհիբ փաշայի և Խալիլ բեյի հետ։ Այստեղ առաջին անգամ Հայոց ազգային խորհրդի պատգամավորները պաշտոնապես ճանաչվեցին իբրև ներկայացուցիչներ անկախ Հայաստանի և ստորագրեցին հունիսի 4-ի դաշինքը։

Մեր պետության անկախության մասին հայտնի է նույնպես Տաճկաստանի դաշնակից պետություններին՝ Գերմանիային, Ավստրիային, Բուլղարիային։ Պոլսում է մեր երկրորդ պատվիրակությունը, որի մեջ մտնում են Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը և Մ. Պապաջանյանը, որոնք ուղևորվել են այնտեղ օսմանյան կառավարության հրավերով,

* Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան, *Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում*, 1932, Երևան, էջ 222—223։

բանակցություններ վարելու Տաճկաստանի և նրա դաշնակից պետությունների հետ։

Այսպիսով, բազմակողմանի քննելով մի կողմից երկրի ուժերը և այն հանգամանքները, որոնց մեջ գտնվում է հայ ժողովուրդը, և մյուս կողմից՝ քաղաքական և տնտեսական ստեղծված դրությունը, Հայոց ազգային խորհուրդը սեղմեց իր սիրտը և անողոք գիտակցությամբ որոշեց վերջնականապես ընդունել վերջնագիրը և ճանաչել Հայաստանի անկախությունը՝ իրեն հանձնելով պատմության անաչառ դատաստանին։

Այո՛, մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար։ Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ. ես հավատում եմ, որ մեր երկրի սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողամասերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի և նրա դաշնակից պետությունների հետ, որոնց ներկայացուցիչները ներկա են այստեղ։ Մենք ընտրել ենք համաձայնության և խաղաղության ուղին, և ուզում եմ հուսալ, որ չենք սխալվում։

Մինչ այդ, մենք կկատարենք սրբությամբ և անշեղ կերպով մեր այն պարտականությունները, որոնք բխում են խաղաղության դաշինքից։ Թողնե՛նք ապագա հեռանկարները. համենայն դեպս, այսօր այստեղ առանց տատանումների և լիակատար վճռականությամբ մենք գցում ենք խարիսխը մեր պետական նավի և դնում ենք հիմքը պետական շենքի՝ ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրություն Հայաստանի Հանրապետության բոլոր ազգությունների, իբրև զավակների մեկ հարազատ մայր հայրենիքի»։

Սահակյանի ճառը լսվեց խորը հուզումով։ Պատգամավորներն ու հասարակությունը, հաճախ, ընդհատում էին նրան բուռն ծափահարություններով։

Երբ, իր խոսքն ավարտելուց հետո, Սահակյանը արտասանեց՝ «Հայտարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացված», դուրսը, Խորհրդարանի շենքի գլխին, բարձրացավ հանրապետության եռագույն դրոշակը և հազարավոր բերաններ որոտացին՝ «կեցցե՛». ծափահարությունները թնդացրին օդը։ Հնչեց «Մեր հայրենիքը»։ Զորքը պատվի կեցավ։

Հայաստանի խորհրդի անդամների ցանկը հայտարարելուց հետո, սոց.-դեմ. պատգամավորների ձեռնպահությամբ, նախագահ ընտրվեց Ավ. Սահակյանը (դաշն.), փոխնախագահներ՝ Գր. Տեր-Խաչատրյանը (ժող.) և Դ. Զուբյանը (ս.-հ.), քարտուղար՝ Պ. Զաքարյանը (անկ.), երկրորդ քարտուղար՝ Ե. Սարգսյանը (դաշ.)։

Խորհրդի նիստից հետո, զոր. Նազարբեգյանի գլխավորությամբ, տեղի ունեցավ զորահանդես, որին նիրկա էին օտար ներկայացուցիչները, Խորհրդի և կառավարության անդամները և խուռն բազմությունը։ Զորքերը, երաժշտությամբ ու կանոնավոր շարքերով, անցան հանդիսատեսների առջևից և բարձրացան Աստաֆյան պողոտայով, հասարակության աննկարագրելի ցնծության ու ծափերի միջով։

Տեսարանը հուզիչ էր։ Շատերի աչքից արցունք էր հոսում։ Հայաստանի Խորհրդարան, հայոց կառավարություն, հայկական բանակ... Երազ չէ՞ր արդյոք։

Հայաստանի Խորհրդի երկրորդ նիստում, օգոս. 3-ին, վարչապետ Քաջազնունին կարդաց կառավարական հայտարարությունը.

«Բացառիկ ծանր պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառավարությունը։ Նա կոչված է իրականացնելու գործադիր իշխանություն մի պետության մեջ, որ դեռ նոր է ծնունդ առել և տակավին դուրս չի եկել իր կազմակերպման առաջին շրջանից։ Կառավարությունը չունի ո՛չ մի հենարան անցյալում. նա չի՛ հաջորդում նախկին կառավարությանը՝ շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նույնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանության կարիքներին հարմարեցրած պատրաստի ապարատներ։ Նա հարկադրված է սկսելու ամեն բան սկզբից. անձև քաոսի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին։

Մյուս կողմից, կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատաստրոֆիկ։

Չորս տարի տևող պատերազմը, մեծ հեղափոխությունը, ռուսական զորքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրության տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտությունները, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետությունների՝ այս խորին ցնցումները չէին կարող չթողնել իրենց հետևից ահռելի հետքեր։ Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայքայում, դադարում ապրանքների արդյունաբերության և փոխանակության, զինամթերքի ծայր աստիճանի պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայության կամ սոսկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի՝ անիշխանություն։ Ահա թե ինչպիսի ծանր պայմանների մեջ կանչվել է աշխատանքի իմ կառավարությունը։

Այս բացառիկ դրությունը նախորոշում է արդեն կառավարության բնույթը։ Նա չի կարող ձգտել բազմակողմանի ու լրիվ գործունեության,

չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով։

Կասեցնել քայքայման պրոցեսը, հանել երկիրը անիշխանության վիճակից և ստեղծել պետական շինարարության համար պայմաններ՝ ահա թե ինչպես է ըմբռնում իր կոչումը ներկա կառավարությունը։

Համաձայն սրան, կառավարությունը դնելու է լուծման հետևյալ խնդիրները.

Ա. Ներքին գործերի սահմաններում

1. Հաստատել երկրում տարրական իրավակարգ, կյանքի ու գույքի ապահովություն։
2. Բանալ հաղորդակցության ճանապարհները անարգել երթևեկության համար։
3. Վերականգնել փոստ-հեռագրական նորմալ հաղորդակցություն թե երկրի մեջ և թե հարևան պետությունների հետ։
4. Եռանդուն միջոցների դիմել կարելույն չափ մեղմացնել պարենավորման տագնապը։
5. Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը, մասամբ վերադարձնել իրենց տեղերը, մասամբ տեղավորել նոր վայրերում։
6. Նախապատրաստել Հայաստանի Սահմանադիր ժողովի հավաքումը կարելույն չափ շուտ։

Բ. Ֆինանսների սահմաններում

Հող պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար։ Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի երկիրը ապահովվի դրամական նշաններով, վերականգնի արդյունաբերական կյանքը և ապրանքների փոխանակությունը, ինչպես նաև մշակվի հարկերի առողջ սիստեմ։

Գ. Արդարադատության սահմաններում

Հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացման և իրավական սովորույթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացուցիչներին։

Դ. Զինվորական գործերի սահմաններում

Վերակազմել երկրի զինվորական ուժերը՝ նպատակ ունենալով ստեղծել թվով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահությամբ ուժեղ բանակ։

Ե. Արտաքին գործերի սահմաններում

1. Ամրացնել օսմանյան կառավարության հետ հաշտությունը և բարի դրացիական հարաբերություններ հաստատել նրա հետ։ Խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ ու հետևել, որ օսմանյան կառավարությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ։ Մասնավորապես լուծել օսմանյան զորքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը։
2. Ազրբեջանի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով՝ լուծել Հայաստանի և այլ պետությունների սահմանների հարցը՝ հիմք ունենալով ազգագրական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռամկավար պետությունների ոգուն ու նպատակներին։
3. Լիկվիդացիայի ենթարկել, համաձայնության գալով Ազրբեջանի և Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկությունները և գույքը, որ մնացել են Անդրկովկասյան Հանրապետությունից։

Այս է կառավարության ծրագիրը։ Սա կարելի է անվանել պետության գոյությունը ապահովող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր։ Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս մնում են մի շարք կարևոր և արդեն հասունացած խնդիրներ։ Բայց կառավարությունը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրվա պայմանների մեջ համարում է անկարելի։ Կառավարությունը չի ուզում սխալների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից։ Կառավարությունը համոզված է, որ իր առաջադրած ծրագիրը մաքսիմումն է այսօրվա հնարավորության։ Կառավարությունը լարելու է իր ամբողջ ուժն ու կարողությունը այդ մաքսիմումին հասնելու և հույս ունի հաջողությամբ լուծելու դրված խնդիրների գոնե մի մասը, եթե իր կողմն ունենա Խորհրդի անվերապահ վստահությունն ու գործուն աջակցությունը»։

Քաջազնունիի հայտարարությունից հետո, անմիջապես խոսք առավ Հ. Հ. Դաշնակցության ներկայացուցիչ Սմբ. Խաչատրյանը, որ, ընդհանուր առմամբ, կառավարության ծրագիրը գտավ ընդունելի և խոստացավ իր կուսակցության վստահությունը։

Երկրորդ ճառախոսը՝ սոց.-հեղ. Ա. Խոնդկարյանը՝ կառավարության հայտարարությունը գտավ ընդհանուր և անբովանդակ, անհամապատասխան անդրանիկ կառավարության կոչումին. վարչապետը ոչինչ չասաց կառավարական դրության և քաղաքացիական ազատությունների մասին։ Ա. Խոնդկարյանը առանձնապես խիստ քննադատեց հայտագրի արտաքին քաղաքականության մասը՝ զարմանք հայտնելով, որ նրա մեջ

ոչ մի խոսք չի ասված Ռուսաստանի մասին։ Եվ եզրափակեց, թե կառավարական հայտագիրը սոց.-հեղափոխականներին չի գոհացնում, ուստի նրանք որոշել են սպասել գործի։

Ընդհակառակը, Հայ ժող. կուսակցության կողմից գրավոր ճառ կարդացող Ա. Մխիթարյանը գտնում էր կառավարական համեստ ծրագիրը միանգամայն գոհացուցիչ։ Ավելին, տիրող պայմաններում, կարելի չէր պահանջել։

Ծրագրից գոհ էին և մահմեդականների ներկայացուցիչն ու ռուս պատգամավոր Ա. Զորինը։ Վերջինս, սակայն, անհրաժեշտ էր գտնում առաջ բերել ավելի սերտ գործակցություն ռուսների հետ։

Սոց.-դեմոկրատների կողմից խոսեցին երկու հոգի՝ մենշևիկ Հ. Ազատյանը և բոլշևիկ Ա. Մելիքյանը։ Երկուսն էլ դեմ արտահայտվեցին Հայաստանի անկախության և կառավարական ծրագրին*։

Օգոստ. 6-ի նիստում Հ. Քաջազնունին պատասխանեց եղած քննադատություններին։ Նա հայտնեց, որ ինքը գիտակցաբար խուսափել է լայն ու անիրագործելի խոստումներից և կառավարական ծրագրի մեջ գրել է միայն օրվա հրատապ կարևորություն ունեցող հարցեր։ Իր քաղաքականության հիմքը կազմելու են քաղաքացիական ազատությունն ու ռամկավար սկզբունքները։ Արտաքին քաղաքականության տապարեզում մնալու է Բաթումի դաշնագրի տեսակետի վրա և դրանից մազաչափ շեղում չի թույլատրելու։ Ապա իբրև եզրափակում, դրեց վստահության պահանջ։

Այդ պահանջին ընդառաջ գնացին միայն դաշնակցականներն ու մահմեդականները. մյուս պատգամավորները դեմ եղան։ Այսպիսով, դեռ գործը չսկսած, ծագեց կառավարական տագնապ։

Փափուկ դրությունից դուրս գալու համար հայտարարվեց ընդմիջում, որից հետո ժողովրդականների մի մասն էլ միացավ դաշնակցականների բանաձևին, և կառավարությունը ստացավ վստահության քվե։ Հօգուտ կառավարության քվեարկեցին դաշնակցականները, 4 ժողովրդականներ, մահմեդական և ռուս պատգամավորները. ձեռնպահ մնացին 5 սոց.-դեմ., 3 սոց.-հեղ., 2 ժողովրդական և 1 անկուսակցական՝ Գ. Զաքարյանը, որը հետագայում համարյա միշտ, ընթացավ սոց.-դեմոկրատների հետ միասին։

Այսպիսով, իր կյանքի առաջին իսկ օրից, Հայաստանի Խորհուրդը դուրս եկավ ներքին շաղախից զուրկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով և անակնկալներով հարուստ մի մարմին։ Նրա այս հիվանդությունը բնածին էր և մինչև վերջ էլ կարելի չեղավ դարմանել։

* Այստեղ պետք է հիշել, որ սոց.-դեմոկրատ պատգամավորները Հայաստանի Խորհրդի անդամ էին նշանակվել դեռևս համառուսական անունը պահող, բայց փաստորեն Վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցության կողմից. Հ. Ազատյանի լիազորագիրը ստորագրել էր Նոյ Ռամիշվիլին։ Սոց.-հեղափոխական պատգամավորները նշանակված էին իրենց կուսակցության Անդրկովկասյան կազմակերպության կողմից։

ԳԼՈՒԽ ԺԷ

«ԱՆՁԵՎ ՔԱՈՍԻ» ՄԻՋԻՑ

Արտակարգ դժվար պարտականություն էր դնում պատմությունը Հայաստանի գործիչների վրա։ Իսկապես որ, «անձև քաոսի և ավերակների կույտ էր» Հայաստանը այդ օրերին։ Եվ սարսափելին այն էր, որ չէր երևում ոչ մի հեռանկար։ Թուրքերը ծեծում էին արդեն Բաքվի դռները, գերմանացիք՝ հաղթական արևմուտքում։ Ռուսաստանում քաղաքացիական կռիվն էր ծավալվում իր բոլոր արհավիրքներով։ Դրսից պաշտպանություն, ապրուստի միջոց, դրամական օժանդակություն չէր գալիս։ Ինչ որ արվելու էր՝ պետք էր անել սեփական ուժերով։

Հայաստանը, ավելի շուտ, գաղթականական կայան էր. ամբողջ երկրում շուրջ 450 000 գաղթական էր թափված, որից մոտ 40 000-ը՝ Երևանում, շատերը՝ փողոցների և ավերակ շենքերի մեջ։ Հաց չէր ճարվում, ժողովուրդն ապրում էր ինչպես կարող էր։ Գետնախնձորով կամ լոբիով խառն հացի ֆունտը քաղաքում, սկզբի օրերին, արժեր 5 ռուբլի և այն էլ ճարվում էր դժվարությամբ։

Սարսափելի էր որբերի վիճակը։ Երևանի «Զանգ» թերթը գրում էր օգոստ. 3-ին. «Տասնյակ հազարավոր որբեր այսօր ցրված Հայաստանի Հանրապետության սահմաններում, մոռացված ամենքից՝ ենթակա են ցրտի, քաղցի և համաճարակ հիվանդությունների... Մահացողներին վերջ չկա. մեռնում են ամենքը և ամենուրեք, գյուղերում թե քաղաքներում, բացօթյա ամենքի աչքի առաջ»։

Հացի, բնակարանների, հագուստի և դեղերի պակասն ու գաղթականության խռնվածությունը առաջ բերին ու զարգացրին համաճարակ հիվանդություններ, սկզբում խոլերան, ապա բծավոր տիֆը, որի գերանդին առատ հունձ էր անում ամեն կողմ։ Տուն չկար, որ հիվանդ չուներ։ Հիվանդները թափվում էին և փողոցներում ու հրապարակներում։ Միայն հունիս ամսի 12—18-ին Երևանի զինվորական հիվանդանոցը ընդունվել էին 370 հիվանդներ, որից մեռել էր 142 հոգին, առողջացել՝ 25-ը։ Օգոստ. 28—29-ին հիվանդանոցում կային 197 հիվանդներ, մեռան 17 հոգի։ Զինվորական հիվանդանոցից դուրս, մասնավոր բժիշկների տեղեկություններով օգոստ. 12—29-ին, Երևանում, մեռել էր 56 մարդ և հիվանդացել՝ 157-ը։ Այս դեռ սկիզբն էր երկանց։ Հաշվելով պատրաստ-

ված հիվանդանոցներն անզոր էին իրական դարման հասցնելու. դեղ չկար, վառելիք չկար, սնունդ չկար, սպիտակեղեն չկար։ Եվ մարդիկ մեռնում էին անմռունչ, հարյուրներով, հազարներով։ Ժողովուրդը սպառվում էր վառվող մոմի պես։

Սովի և համաճարակի հետ, երկրում խախտված էր և սպահովությունը։ Դասալիք զինվորներ, ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու տեղացիներ, խմբերով և անհատ-անհատ, հարձակվում էին ճամփորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրությունը։ Հասարակական չարիք էր դարձել, այսպես կոչված «մաուզերիզմը»՝ մաուզերով զինված մարդիկ շահատակություններ էին անում նույնիսկ մայրաքաղաքի փողոցներում, և խաղաղ բնակչությունը տառապում էր նրանց ձեռքին։

Դրությունը քանի գնաց ծանրացավ։ Մինչև հոկտեմբեր դրեթե վերջացավ Հայաստանի սահմաններում գտնված հացի պաշարը։ Դրսից ոչինչ չէր գալիս։ Պետական և հասարակական ամբարները պարապ էին։ Ստեղծվեց սարսափելի կացություն։ Ո՛չ միայն գաղթականությունը, այլև տեղացիներից շատերը մատնվեցին սովամահության։ Եվ այս զարհուրելի վիճակը տևեց մինչև 1919 թ. գարունը, երբ հասավ ամերիկյան ալյուրը։ Սովը առանձնապես ահռելի ձևեր ընդունեց Սուրմալուի և Ալեքսանդրապոլի շրջաններում։

Վեց ամսվա ընթացքում, սովից ու հիվանդություններից, Հայաստանում մեռավ մոտ 180 000 մարդ։ Թուրքերը գտել էին կոտորածի նոր ձև՝ ավելի իրական և ավելի անաղմուկ։ Մի վեց ամիս ևս և Ռուսահայաստանն էլ կհասներ Թուրքահայաստանի օրին։ Արժե՞ր այդ պայմաններում կռիվ անել, զորամասեր զբաղեցնել, իզուր տեղը արյուն թափել։ Հայաստանի գործը հանձնելով սովին ու տիֆին՝ Թուրքերն իրենց զլխավոր ուժերը ուղղել էին Բաքվի դեմ։

Թուրքիայի ներկայացուցիչը Երևանում՝ Մեհմեդ Ալի փաշան «մարդասիրաբար» օգնում էր կառավարությանը՝ մերթ ընդ մերթ «նվիրելով» կամ ծախելով Հայաստանին մի քանի վագոն ցորեն հայերից հափշտակված պահեստներից։ Եվ միաժամանակ, միջոցներ էր ձեռք առնում Հայաստանում ապրող մահմեդականությունը փոխադրելու Սուրմալուի ու Սարդարապատի շրջանները՝ ձգտելով մի կողմից սովից ու հիվանդություններից ազատել մահմեդական զանգվածները և մյուս կողմից՝ նախկին հայկական վայրերը բնակեցնել մահմեդականներով։

Եվ, հակառակ այս դժոխային պայմաններին, հայ ժողովրդին ու նրա ղեկավարներին հաջողվեց հաղթահարել դժվարությունները և, ճիշտ է մեծ զոհերով, կենդանի դուրս գալ օրհասական պայքարից։

Հայաստանի Խորհրդի և կառավարության առաջին գործը եղավ լարել ու գործի դնել կառավարական մեքենան։ Կազմակերպվեցին նա-

խարարությունները։ Վերակազմվեցին բանակն ու վարչական հիմնարկությունները։ Կանոնավորվեց զինվորականների ու պետական պաշտոնյաների ռոճիկը։ Միջոցներ ձեռք առնվեցին գատաբանների բարեկարգության ու դպրոցների բացման։ Խոշոր գումարներ հատկացվեցին գաղթականների խնամատարության և աշխատանքի գործի կազմակերպության, որբերի հավաքման ու պահպանման, պարենավորման մթերքների հայթայթման համար։ Միաժամանակ, մինչև սեփական օրենսդրության իրականացումը, Հայաստանի սահմաններում ընդունվեցին նախկին ռուսական օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկ. կոմիսարիատի ու Սեյմի և Հայաստանի Խորհրդի փոփոխություններով ու լրացումներով։

Առաջ բերենք այստեղ մի քանի օրինակներ Հայ. Խորհրդի առաջին շրջանի օրենքներից ու կարգադրություններից, որոնք որոշ գաղափար կտան այն ժամանակվա պայմանների մասին։

Օգոստ. 8-ին հատկացվեց 6 միլիոն ռուբլի գաղթականական, պարենավորման ու զորքի վերակազմության համար։

Օգոստ. 21-ին ամբողջ Հայաստանը հայտարարվեց խոլերայի կողմից վտանգված և Հայ. Խորհրդի բժշկասանիտարական մասնաժողովը վերածվեց վարակիչ հիվանդությունների դեմ մաքառող բոլոր հիմնարկությունների վրա հսկող ամենաբարձր մարմնի։

Օգոստ. 29-ին հրատարակվեց օրենք մասնավոր սեփականություն կազմող զենքի ու զինամթերքի պետականացման մասին։ Այս օրենքի շուրջ Խորհրդում տեղի ունեցան բուռն վիճաբանություններ. առանձնապես ծառացան սոց.-դեմոկրատ պատգամավորները, որոնք համարում էին անթույլատրելի ժողովրդի զինաթափությունը և պահանջում էին ժողովրդին թողնել զինված։ Օրինագիծը ընդունվեց 15 քվեով ընդդեմ 7-ի։

Սեպտ. 11-ին հայտարարվեց բամբակի մենավաճառ. կառավարությունն իր ձեռքը առավ բամբակի առևտրի մենաշնորհը՝ որոշ գնով* պետականացնելով երկրի ամբողջ բամբակը, որ, այն օրերին, միակ աղբյուրն էր կառավարական հասույթի։ Այս օրենքն էլ կրքերի սաստիկ գրգռում առաջ բերեց Խորհրդի նիստերում և առատ նյութ մատակարարեց կառավարության քննադատության համար։

Նույն սեպտ. 11-ին հաստատվեց դպրոցական օրենքը, որով «յուրաքանչյուր հասարակական կամ համայնական կազմակերպություն, խմբակցություն, ընկերակցություն, ինչպես և առանձին անհատ, իրավունք ունեին անարգել դպրոց բանալու և անկախորեն վարելու սեփական միջոցներով»։ Պետությանը վերապահվում էր ընդհանուր հսկիչը։

* Հետագայում, դեկտ. 3-ին Հայ. Խորհուրդը պետականացված բամբակի համար դին նշանակեց փութը 49 ռ. 50 կ.։

Սեպտ. 28-ին ընդունվեց կարիք ունեցող գաղթականներին հող և աշխատանք հայթայթելու օրենքը. կառավարությունը պարտավոր էր ապրուստի միջոց չունեցող գաղթականներին տալ աշխատանք կամ հող կամ, հակառակ պարագայում, բաց թողնել պետական նպաստ։

Հոկտ. 8-ին որոշվեց. կարիքավոր գաղթականների, առավելապես կանանց համար, բանալ պետական ջուլհականոցներ՝ առաջին հերթին գործի դնելով 1 500 դազգահ և 20 000 ճախարակ։ Այդ նպատակին հատկացվեց 6 691 200 ռուբլի։

Հոկտ. 11-ի օրենքով, «բոլոր գաղթական որբերի խնամատարության ու դաստիարակության գործը պետությունը վերցրեց իր վրա և անմիջական վարումը հանձնեց հանրային խնամատարության նախարարին»։ Ինքնավարություններին, հասարակական կազմակերպություններին ու մասնավոր անհատներին թողնվում էր իրավունք բանալու և պահելու որբանոցներ, միայն պետության հսկողության տակ։

Դարձյալ հոկտ. 11-ին հատկացվեց 12 736 250 ռ. որբերի, անճար և աննեցուկ գաղթականների օգնության և գաղթականներին տրամադրելիք բնակարանների վերաշինության համար։

Խորհուրդը արձակեց նաև մի շարք վճիռներ աշխատավորության ու պաշտոնեության, հաշմանդամների և հասարակական պարտականությունները կատարելիս մեռածների ընտանիքների վիճակը բարելավող, հարկային ու պարենավորման դրությունը կարգավորող։ Վարկեր հատկացվեցին մթերքների գնման, ոստիկանության ու նոր զորամասերի կազմակերպման, քաղաքային ինքնավարությունների ու կոոպերատիվների օգնության և համանման ուրիշ կարիքների համար։

Պետք է նկատել, որ Հայ. Խորհրդի աշխատանքը ամբողջապես ուղղված էր երկրի ընթացիկ սուր կարիքների մեղմացմանը։ Հիմնական շինարարության մասին, իհարկե, խոսք լինել չէր կարող։ Նույնը և կառավարության գործունեության մեջ. նա գերագույն ճիգ էր թափում, գլխավորապես, օրվա հրամայական պահանջներին բավարարելու համար. հաց, դեղ և անդորրություն՝ այս երեք խնդիրներով կարելի էր սպառել այն ժամանակվա «պետական շինարարությունը»։

Իր խղճուկ միջոցներից Հայաստանը ստիպված էր բաժին հանել և երկրից դուրս գտնվող կարոտյալներին։ Հոկտ. 26-ին, Հայ. Խորհուրդը դեռ միլիոն ռուբլի հատկացրեց Բաքվի հայ աղետյալներին, նոյ. 4-ին 5 միլիոն ռուբլի քվեարկեց՝ Վրաստանի Հայոց ազգային խորհրդին միանվագ նպաստ տալու համար, դեկտ. 3-ին 300 000 ռ. վարկ բաց արավ Պարսկաստանի հայ փախստականների օգնության և այլն։ Փշրանքներ էին սրանք տիրող ծով կարիքի համեմատությամբ, բայց Հայաստանի սեղանի վրա էլ փշրանքից զատ բան չկար, հայ ժողովուրդը չունեցածից էր տալիս։

***

Հոկտ. 5-ին խալիլ փաշան Երևանում հայտնեց, որ ինքը հրաման է ստացել դատարկելու Լոռի-Փամբակի շրջանը։ Անմիջապես հայ և թուրք հրամանատարությունները գծեցին այդ շրջանը հայերին փոխանցելու ծրագիրը, և Հայաստանի կառավարությունը հրամայեց Դիլիջան-Լոռիի զորամասի պետ Դրոյին՝ բռնել հեռացող թուրք զորքերի տեղը։

Դիլիջան-Լոռիի զորամասը, այդ միջոցին, բաղկացած էր հետևյալ ուժերից. պարտիզանական հետևակ գունդ՝ գնդ. Միրիմանյանի հրամանատարության տակ, պարտիզանական ձիավոր գունդ՝ հրամանատար գնդ. Կորոլկով, 4-րդ լեռնային մարտկոցը (4 թնդանոթ) և նոր կազմվող Ղազախի միլիցիոն գունդը՝ սպա Թ. Մնացականյանի գլխավորությամբ։ Դրոն զորամասի հրամանատար էր նշանակված օգոստոսին։ Քաղաքացիական մասի օգնականն էր Ս. Մանասյանը։

Զորքերը դասավորված էին հետևյալ կերպով. Ղազախի զորամասի պետ գնդ. Կորոլկովը, ունենալով իր հրամանատարության տակ մի ձիավոր հարյուրյակ, 4-րդ հետևակ գունդը և Ղազախի միլիցիոն գունդը՝ բռնում էր ամբողջ հայ-վրացական սահմանագիծը (Կողբ-Քարվանսարա), ուր կարգը մինչև 1918 թիվը բնավ չխանգարվեց։

Ղարաքիլիսայում գտնվող թուրքերի դեմ՝ Բոզիքենդ—Վոսկրեսենովկա—Վարդանլու (Վարդանլուն չեզոք վայր էր), կանգնած էին 2-րդ ձիավոր գնդի երկու հարյուրյակները՝ սպա Կուռո Թարխանյանի հրամանատարությամբ։

Ընդհանուր պահեստը, գնդ. Միրիմանյանի գլխավորությամբ, բաղկացած էր 4-րդ գնդի 2 գումարտակներից՝ Դիլիջանում և 1 գումարտակից՝ Նիկիտինոյում։

Ստացված հրամանի վրա, հոկտ. 18-ին Դրոն կարգադրեց Կուռո Թարխանյանին, 2 հարյուրյակ ձիավորներով շտապ գնալ գրավել Դսեղ—Քոլագերան—Կաչական գիծը, իսկ Բաշ-Ապարանի զորամասը—առաջին ձիավոր գունդ, 5-րդ հետևակ գունդ, 1 մարտկոց—հրամանատարությամբ գնդ. Ղորղանյանի՝ անցնելով Սպիտակի լեռնանցքը՝ գնաց բռնեց Ջալալ-Օղլի—Գերգեր—Կուրթան գիծը։ Կարգադրությունը կատարվեց շատ արագ, և հոկտ. 21-ին արդեն շրջանը ամբողջությամբ հայերի ձեռքին էր, զրեթե առանց միջադեպի։

Մեկ-երկու աննշան միջադեպեր պատահեցին հայ և վրացի զորամասերի միջև Ջալալ-Օղլիի և Դսեղի շրջանում։ Առաջինում, հակառակ մերոնց նախազգուշացման, վրացիները հետախույզների մի խումբ ուղարկեցին Կաչականի կողմը, բայց մեր ձիավորների կրակով հետ շպրտվեցին։ Դսեղի կողմը վրացիները առաջ քաշեցին գերմանացի զինվորների մի խումբ, որ մտավ հայերի գրաված Քարինջ գյուղը և ձերբա-

կալվեց ու զինաթափված հետ ուղարկվեց մեր զորամասի կողմից։ Երկու օր հետո, վերից եկած հրամանով, զենքերն էլ վերադարձվեցին գերմանացիներին։ Այս միջադեպը առիթ ծառայեց զոր. Ֆոն Քրեսի միջամտության։ Առհասարակ, Լոռի-Փամբակի գրավումը ահագին խլրտում առաջ բերեց Թիֆլիսում։

Հոկտեմբերից սկսած, արտաքին աշխարհում տեղի ունեցան արտակարգ դեպքեր։ Բուլղարիան պարտված՝ դուրս էր եկել պատերազմողների շարքից։ Ավստրո-հունգարական կայսրությունը ճարճատում էր փլուզումի նախօրյակին։ Ամերիկայի մուտքը պատերազմի մեջ նախորոշում էր պատերազմի վախճանը։ Եվ որքան ընդհանուր հաշվեհարդարի օրը մոտենում էր, այնքան փոխվում էին տրամադրությունները և Հայաստանում ու Հայաստանից դուրս գտնվող հայկական շրջանների մեջ։ Կասկածն ու հոռետեսությունը սկսում էր տեղի տալ լավատեսության։

Հայաստանի Հանրապետության կյանքի առաջին ամիսներում շատ ուժեղ էր թերահավատությունը։ Մանավանդ, Թիֆլիսում, Հայաստանի մասին խոսելիս ու գրելիս «հանրապետություն», «անկախություն» բառերը արտասանվում էին հեգնանքով ու չակերտների մեջ էին առնվում։ Հայ սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները, հակառակ որ մասնակցում էին Հայ. Խորհրդի աշխատանքներին, ըստ էության բացասական դիրք ունեին և պայքարում էին անկախության դեմ։ Ժողովրդականները սկզբունքով ճանաչում էին անկախությունը, բայց Հայ. Խորհրդում, համարյա միշտ, ընթանում էին ձեռք ձեռքի սոց.-դեմոկրատների և սոց.-հեղափոխականների հետ, իսկ Թիֆլիսում նրանց կուսակիցները ջանք չէին խնայում՝ վարկաբեկելու Հայաստանի կառավարությունը, որով, անուղղակի կերպով, հարվածում էին և Հայաստանի պետականությանը։ Բացի դաշնակցականներից— այն էլ ո՛չ բոլորը— շատ քչերն էին հավատում, որ հանրապետությունը Կապրի ու կամրանա։

Արևմուտքում զարգացող դեպքերը, սակայն, հետզհետե փոխեցին տրամադրությունները և՛ հայկական շրջաններում, և՛, մանավանդ, հայ բուրժուական մտավորականության մեջ։ Նրանք կամաց-կամաց փոխեցին իրենց վերաբերումը դեպի Հայաստանը և, երեկվա անհաշտ հակառակորդները, սկսեցին հասկացողության գետին որոնել՝ արծարծելով Հայաստանի իշխանության վերակազմության ծրագիրը կոալիցիոն հիմունքներով։ Այդ նպատակով, հոկտեմբերի վերջերին Երևան հասան Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները՝ Ս. Հարությունյանի և Մ. Բերբերյանի գլխավորությամբ՝* Հ. Հ. Դաշնակցության հետ բանակցելու՝ կոալիցիոն կառավարություն կազմելու նպատակով։ Թիֆլիսի ժողովրդականների տրամադրությունը համապատասխանում էր և Երևանի ժողովրդականների ձգտումներին, որոնք ավելի ամուր կանգնած Հայաստանի հողի վրա՝ ջերմորեն պաշտպանում էին համերաշխության ու գործակցության գաղափարը։

Հ. Հ. Դաշնակցության շարքերում էլ կոալիցիայի հարցը դրված էր հերթի։ Հոկտեմբերի վերջերին սկսվել էր կառավարական սուր տագնապ. ընդդիմադիրների անվերջ քննադատություններից ու հարձակումներից զզված ինչ-որ խնդրի առթիվ ստանալով անվստահության քվե՝ Քաջազնունին հրաժարական էր ներկայացրել։ Առհասարակ, Հայ. Խորհրդում ստեղծվել էր անշնչելի մթնոլորտ, և այդ դրության վերջ տալու համար Հ. Հ. Դաշնակցությունը մտածում էր առաջ բերել կուսակցությունների գործակցություն։

Գործակցությունը ներկայացվում էր երկու ձևով. ոմանք կողմնակից էին բոլոր կուսակցությունների մասնակցությամբ կառավարություն կազմելուն, բայց կային և զուտ ընկերավարական նախարարության կողմնակիցներ։ Այս վերջին միտքը մեկ կողմ թողնվեց, որովհետև Հ. Հ. Դաշնակցության կողմից արված առաջարկի վրա սոց.-դեմ. և սոց.-հեղ. ֆրակցիաները դրին ակնհայտ կերպով անիրագործելի պայմաններ. առաջինները պահանջեցին երկու տեղ և անպայման ներքին կամ արտաքին գործոց նախարարությունը. վերջիններները իրենց համար առանձին պահանջներ չունեին, բայց վճռականապես դեմ էին, որ արտաքին գործոց նախարարությունը հանձնվի ժողովրդականներին և ներքինը՝ սոց.-դեմոկրատներին։ Այսպիսով, ընդհանուր կոալիցիայի խնդիրը մեկ կողմ էր ընկնում. միակ հնարավորությունը մնում էր դաշնակցական-ժողովրդական գործակցությունը։ Այս հողի վրա և սկսվեցին բանակցությունները։

Բանակցությունների ընթացքում ժողովրդականներին ավելի հետաքրքրում էր նախարարական աթոռների թիվը, քան քաղաքական սկզբունքային հարցերը։ Նրանք պնդում էին, որ իրենց հանձնվեն արտաքին, ելևմտական, դատական և հանրային կրթության նախարարու-

* Հոկտեմբերին վերադառնալով Հյուս. Կովկասից, Կուբանի և Դոնի կառավարությունների մոտ Ազգ. Խորհրդի հանձնարարականները կատարելուց հետո, Թիֆլիսում, ժողովրդականների մոտ ես տեսա բոլորովին փոխված տրամադրություն, դեպի Հայաստանի անկախությունն ու կառավարությունը։ Այժմ նրանք ուզում էին մտնել կառավարության մեջ։ Կոալիցիոն կառավարության ջերմ ջատագով էր մասնակցում ես իմ հայրենակից Մինաս Բերբերյանը, որի հետ մենք համոզեցինք ժողովրդական մյուս պարագլուխներին և միասին մեկնեցինք Երևան։ Ինձ էլ էր թվում, որ կոալիցիան կենսական անհրաժեշտություն էր Հայաստանի համար։

Ս. Վ.

թյունները, իսկ զինվորական նախարարը լինի անկուսակցական մեկը։ Վերջին չորս կետերը Դաշնակցությունն ընդունեց, իսկ արտաքին գործոց նախարարությունը վերապահեց իրեն։

Ընդհանուր-սկզբունքային խնդիրներից ժողովրդականները մինչև վերջ պնդեցին մեկ կետի վրա, որ հողային հարցի լուծումը հետաձգվի մինչև Սահմ. ժողով կամ համաժողովրդական քվեով ընտրված խորհրդարանի գումարումը։ Դաշնակցությունը այս հարցում զիջեց։

Ժողովրդականները առարկում էին և՛ Արամի, և՛ Ա. Խատիսյանի կառավարական կազմի մեջ մտնելու դեմ. այս պահանջը Դաշնակցությունը մերժեց։

Ի վերջո, կոալիցիան գլուխ եկավ և Հայ. Խորհրդի նոյ. 4-ի նիստում՝ դաշնակցական ու ժողովրդական պատգամավորների քվեներով ընդունվեց Հ. Քաջազնունիի կառավարության հրաժարականը և Դ. Զուբյանի ու Հ. Ազատյանի կրքոտ քննադատություններից հետո հանձնարարվեց նույն Քաջազնունիին կազմել նոր կառավարություն։ Նույն նիստում հենց Քաջազնունին հայտարարեց նոր կառավարության կազմը. անպորտֆել վարչապետ՝ Հ. Քաջազնունի (դաշն.), արտաքին գործոց նախարար՝ Ս. Տիգրանյան (դաշտն.), օգնական՝ Գ. Մելիք-Ղարագյոզյան (ժող.), ներքին գործոց՝ Արամ (դաշն.), զինվորական՝ գոր. Հ. Հախվերդյան (անկ.), ելևմտական՝ Ա. Էնֆիաջյան (ժող.), արդարադատության՝ Ս. Հարությունյան (ժող.), հանրային կրթության՝ Մ. Աթաբեգյան (ժող.), պարենավորման՝ Լ. Ղուլյան (ժող.), խնամատարության՝ Խ. Կարճիկյան (դաշն.)։

Պետական վերահսկիչ Հայ. Խորհրդի կողմից, սոց.-հեղ. և սոց.-դեմ-ների ձեռնպահությամբ, ընտրվեց Մինաս Բերբերյանը (ժող.)։

Ինչպես ցույց են տալիս անունները, կառավարությունը բավական ուժեղ կազմ ուներ։ Բոլոր նախարարները զարգացած ու հեղինակավոր գործիչներ էին։ Ժողովրդականների մեջ կենտրոնական անձը Ս. Հարությունյանն էր՝ Թիֆլիսի հայտնի փաստաբաններից մեկը, պատրաստված, Հայաստանի պայմաններն ու հայ իրականությունը լավ ճանաչող, աշխատունակ ու հայ բուրժուական խավերում մեծ ազդեցություն ունեցող մի գործիչ։ Հայկական ու ռուսական շրջաններում լայն կապեր ունեցող, գրական ու հասարակական ջղի տեր, հայրենասիր ու ձեռնհաս մարդ էր և պետական վերահսկիչ Մ. Բերբերյանը։

Նոր կառավարությունը հասարակության կողմից ընդունվեց, իբրև մի քայլ դեպի աջ, զիջում բուրժուական խավերի. «Հայաստանի Խորհրդի ղեկավար կենտրոնը մի քիչ թեքվեց դեպի աջ,— գրում էր «Հորիզոնը»*,— և այդ բանում մեծապես պատասխանատու են սոց.-դեմ. և սոց.-հեղափ. ֆրակցիաները... Ստեղծված դրությունը իսկական կոալիցիան է մեր իրականության, ուր հայ դեմոկրատիայի կուսակցությունն է Հ. Հ. Դաշնակցությունը և հայ բուրժուազիայի դրոշակակիրը՝ ժողովրդական կուսակցությունը։ Հայ դեմոկրատիայի և բուրժուազիայի կոալիցիան է, որ ստեղծվեց»։

Հասկանալի է, որ նոր կառավարության հետ կապվում էին մեծամեծ հույսեր։ Ենթադրվում էր նաև, որ Թիֆլիսից դեպի Հայաստան կսկսվի թարմ ուժերի, մտավորական նոր գործիչների կենդանի հոսանք։ Եվ, առաջին օրերին, նոյեմբ. 20-ին Երևան փոխադրվելով, ժողովրդական նախարարներն իրենք էլ գործի կպան մեծ ոգևորությամբ։ Ս. Հարությունյանը պատրաստվում էր հիմքից վերակազմել արդարադատության գործը, պաշտոնի կոչել հմուտ իրավագետներ ու դատաստանական գործիչներ։ Մ. Աթաբեգյանը հրապարակ դրեց աշխարհիկ ընդհանուր կրթության խնդիրը, խոստացավ ուժ տալ տեխնիկական դպրոցների բացմանը։ Էջմիածնի ճեմարանը տեղափոխել Երևան և հետզհետե վերածել համալսարանի, կրթությունը աստիճանաբար ազգայնացնել, պետական թատրոն, թանգարան ու գրադարան հիմնել, համախմբել մտավորականությունը Հայաստանում։ Մ. Բերբերյանը ձեռնարկեց պետական վերահսկողության գործի կազմակերպման՝ պետական վերահսկողության իբրև հիմք ընդունելով նախնական կամ փաստական հսկողության սկզբունքը։ Ա. Էնֆիաջյանը հայտարարեց, թե նոր տարվանից ներկայացնելու է կայուն պետական բյուջե և միջոցներ է ձեռք առնելու՝ ստեղծելու սեփական դրամ։

Ոգևորությունը, սակայն, երկար չտևեց՝ հազիվ մի քանի շաբաթ։ Եվ ահա սկսվեց ժողովրդական նախարարների փախուստը Երևանից, ուր կյանքի պայմանները շատ էին ծանր, սև հացի, հատակի վրա քնելու և ոջիլի չվարժված մարդկանց համար։ Կառավարության կազմությունից երկու շաբաթ չանցած, կուսակցական ինչ-որ ներքին տարակարծության հետևանքով, հրաժարական տվեց ու հեռացավ հանրային կրթության նախարար Մ. Աթաբեգյանը. նրա տեղը անցավ Գ. Մելիք-Ղարագյոզյանը։ Քիչ վերջը, պաշտոնական գործով, մեկնեց պարենավորման նախարար Լ. Ղուլյանը և այլևս չվերադարձավ. Թիֆլիսում պաշտոն ստացավ հայկական պարենավորման հիմնարկության մեջ։ Ղուլյանի նախարարությունն էլ ստանձնեց Ս. Հարությունյանը, որը շուտով նույնպես գնաց Թիֆլիս՝ իր հերթին պաշտոնակատար նշանակելով Գ. Մելիք-Ղարագյոզյանին։ Այսպիսով, ստեղծվեց մի դրություն, երբ Հայաստանը ուներ երեք պարենավորման նախարար և ո՛չ մի պարենավորում։ Մի հանգամանք, որ իհարկե, վնասում էր կառավարության հմայքին։

Կոալիցիոն կառավարության համար անուղղելի հարված եղավ և Խ. Կարճիկյանի եղերական մահը նոյեմբ. 14-ին։ Նա սպանվեց իր կուսակցական ընկերոջ՝ սպա Եգոր Տեր-Մինասյանի ձեռքով, երբ նա-

* Ս. Մանսուրյան, «Հորիզոն», 10 նոյ., 1918 թ.։

խարարական առանձնասենյակում զբաղված էր գաղթականների տեղավորման ու հոգատարության խնդիրներով։

Կարճիկյանի մահով ո՛չ միայն Հայաստանն էր զրկվում իր ամենախոշոր պետական մի գործից, այլև բովանդակ Կովկասը։ Նա եղավ վերջին տասնամյակի Կովկասյան իրականության այն սակավաթիվ դեմքերից մեկը, որոնք կյանքի ամենախռովահույզ օրերին անգամ կարողացան պահել մտքի պայծառությունն ու հոգեկան հավասարակշռությունը։ Արամից հետո, առաջինն էր՝ կոչված կերտելու Հայաստանի պետական շենքը։ Եվ մոլեռանդի կույր գնդակը խլեց հայ ժողովրդից այդ թանկագին կյանքը։ Հասկանալի է, թե ինչո՞ւ նրա մահը ցնցեց ամենքին։ Կարճիկյանի հուղարկավորությունը իսկական համաժողովրդական սուգ էր*։

Մարդասպանը վրեժ էր լուծում Կարճիկյանից, իբրև մեկից, որ իր վարած քաղաքականությամբ դեպի կործանում էր առաջնորդել հայ ժողովրդին, որ գործիք էր ծառայել վրացի ազգայնականների ձեռքին, որ պատճառ էր եղել Կարսի անկման ու հետագա աղետների։ Անարդար էին այդ մեղադրանքները։ Կարճիկյանին վերագրվող հանցանքների համար ավելի պատասխանատու էին այն մարդիկ, որոնց ուղղակի կամ անուղղակի ներշնչումով ոճիր էր գործում դժբախտ Եգորը։

***

Կոալիցիոն կառավարությունը գործի անցավ այն պահին, երբ արդեն դաշնակիցների հաղթությունը փաստ էր, և հայ ժողովրդի առջև բացվում էին նոր հորիզոններ։ Նոյեմբ. 17-ին Բաքու էր մտել անգլիական մի զորամաս զոր. Թոմսոնի գլխավորությամբ։ Նոյեմբ. 20-ին վերադարձել էին հաշտարար պատվիրակության անդամները՝ Ահարոնյանը, Խատիսյանը, Պապաջանյանը, որոնք Պոլսից դուրս էին եկել նոյեմբ. 1-ին՝ բերելով իրենց հետ Մուտրոսի զինադադարի և արևմտյան ճակատի դեպքերի մանրամասնությունները։ Նույն օրերին, Թեհրանից՝ Ս. Արարատյանից, Ներսես արքեպ. Մելիք-Թանգյանի միջոցով, ստացվեց մի հեռագիր, որ չափազանց վարդագույն հեռանկարներ էր բանում հայ ժողովրդի առջև. Պողոս Նուբարը ավետում էր դաշնակիցների հաղթության լուրը և այն ոգևորությունը, որ տիրում էր հայկական բոլոր խավերի մեջ։

Շուտով բացվելու էր խաղաղության վեհաժողովը։ Պետք էր շտապել պատվիրակություն ուղարկել Եվրոպա ներկայացնելու համար հայկական պահանջները։ Հայ. Խորհուրդը մի քանի դռնփակ նիստերում քննեց պատվիրակության տալիք հրահանգները։ Մասնավորապես լուրջ ու բազմակողմանի քննության առնվեց Հայաստանի սահմանների հարցը։ Կար մի քանի տեսակետ. վարչապետ Քաջազնունին գոհանում էր համեստ սահմաններով՝ համաձայնվելով ծովային ելք էլ չունենալ։ Ժողովրդականները՝ Ս. Հարությունյանն ու Մ. Պապաջանյանը պնդում էին ծովից ծով Հայաստանի վրա՝ Տրապիզոնի և Ալեքսանդրետի ելքերով։ Դաշնակցականների մեջ էլ քիչ չէին ծովից ծով Հայաստանի կողմնակիցներ, բայց մեծ մասը կանգնած էր միայն Սև ծովի ելք ունենալու տեսակետի վրա։ Նկատողության առնվեց և մանդատի հարցը. բացի սոց.-հեղափոխականներից ու սոց.-դեմոկրատներից, որոնք պաշտպանում էին միությունը Ռուսաստանի հետ, Հայ. Խորհուրդը առաջին տեղը տվեց Ամերիկայի հոգատարությանը, ապա՝ Անգլիայի, հետո՝ Ֆրանսիայի, և վերջը միայն՝ Ռուսաստանի։ Հայ. Խորհրդի դեկտ. 3-ի նիստում կազմվեց պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյան՝ նախագահ, Մ. Պապաջանյան և Հ. Օհանջանյան՝ անդամներ։ Այս վերջինը դեռ Բեռլինում էր։ Հրահանգների վերջնական ձևակերպումը թողնվեց կառավարությանը, որ և հանձնարարեց պատվիրակությանը պաշտպանել Սև ծովի ելքը՝ առանց դնելու Կիլիկիայի պահանջը։ Միևնույն ժամանակ հրահանգվեց Ա. Ահարոնյանին՝ սերտ գործակցություն հաստատել Պողոս փաշա Նուբարի հետ։ Նոյեմբերի 9-ին պատվիրակությունը մեկնեց Թիֆլիս։

***

Դարձյալ հրաշքն էր փրկում հայ ժողովրդին։

Նոյեմբերի կեսերին, Հայաստանի զինվորական նախարարը Երևանի թուրքական ներկայացուցիչ Մեհմեդ Ալի փաշայից ստացավ հետևյալ գրությունը. «Պ. նախարար, Օսմանյան կայսրության գլխավոր սպայակույտի պետը հրամայում է ինձ հաղորդելու ձեզ, որ Բրեստ-Լիտովսկի սահմաններից դուրս մնացող և թուրք զորքերի կողմից գրավված հողամասերը պետք է դատարկվեն վեց շաբաթվա ընթացքում՝ հաշվելով 1918 թ. հոկտ. 24-ից»։

Եվ հետզհետե սկսվեց թուրքերի նահանջը ու նրանց պարպած հողերի գրավումը հայերից։ Նոյ. 18-ին հայկական զորքերը մտան Ղարաքիլիսա և իրենց ձեռքը առան շրջանի կառավարությունը։ Ահռելի տեսարան բացվեց նրանց առջև. գավառը բառիս բուն նշանակությամբ ավերված ու կողոպտված էր։ Գյուղացիության 98 % թալանված էր մինչև շապկի կոճակը։ Ամեն ինչ տարել էին թուրքերը՝ տավարը, երկրագործական գործիքները, սայլերը, կահ-կարասիքը, անկողինները, անգամ ճրագները։ Մարդկային կմախքները թափթփված էին չորս կողմը։ Ղա-

* 1919 թ. հունվ. 17-ին Հայ. Խորհուրդը հատկացրեց 75 000 ռ. Խ. Կարճիկյանի ընտանիքին նպաստ և զավակներին կրթություն տալու նպատակով։

բաքիլիսայի ու Ղըշլաղի միջև նետված էին 400 դիակներ, Ղըշլաղի մոտ՝ Մեծ կիրճում մարդիկ հաշվել էին 500 դիակ։ Հաղարավոր դիակներ, գանգեր ու մարդկային ոսկորներ թափված էին Ալթուն Թախտում ու Վանանց ձորում... Երկաթուղին քար ու քանդ էր արված, կողոպտված մինչև դռներն ու պատուհանները։ Երկիրը հասել էր քայքայման վերջին աստիճանին։

Զարհուրելի պատկեր էր նկարում «Զակ. Սլովոյի» թղթակիցը (1918 թ. նոյ. 22), որ անմիջապես թուրքերի հեռանալուց հետո, եղել էր Լոռի-Փամբակում։

«Ղալթախչի կայարանից մինչև Քոլագերան թուրքերը տարել են շպալները, պահեստի երկաթուղագծերը, կայարանների կարասիները, շոգեշարժները, վագոնները, հեռախոսներն ու հեռագիրը... Կայարանի շենքերը թողնում են ավերակների տպավորություն. դռների և պատուհանների փայտեղեն մասերը հանված են, կտուրները պոկված, պատերը քանդված... Համաճարակները շարունակում են հնձել ժողովրդին։ Չկա բժշկական օգնություն։ Դեղատները թալանված են։ Հիվանդները մեռնում են առանց դեղի ու բժշկական օգնության։ Փամբակի գյուղերում կան բազմաթիվ սոված ու բոկոտն որբեր, առանց որևէ խնամքի։ Շըրջանի դպրոցական կյանքը մեռել է։ Բոլոր դպրոցները թալանված են։ Ղըշլախի գեղեցիկ դպրոցի ամբողջ կահ-կարասիքը այրել են ասկյարները... Բոլոր 8—10 կոոպերատիվները կողոպտված են»։

Նույնքան սարսափելի էր դրությունը և մյուս վայրերում։ Նոյեմբերի 22-ից թուրքերը սկսեցին դատարկել Ալեքսանդրապոլը։ Դեկտ. 2 և 3-ին, Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Խոյեցյանի նախագահությամբ կազմված մի հանձնախումբ ընդունեց քաղաքն ու բերդը։ Դեկտ. 4-ին առավոտյան ժամը 5-ին Ղալթախչիից շարժվեց մի հայկական գումարտակ գնդ. Նեստերովսկիի հրամանատարության տակ և գրավեց Ալեքսանդրապոլը։ Բերդապետ նշանակվեց գնդ. Դիտիմովը։

Այստեղ էլ՝ ընդհանուր ավեր ու խեղճություն. թուրքերը տարել էին ամեն ինչ, որ կարելի էր եղել շարժել՝ շոգեշարժ, վագոն, ցորեն, ժողովրդից խլված պարենը, բամբակը, տնային իրեր, կայանների բոլոր գույքը՝ հեռագրական ու հեռախոսային գործիքներից սկսած մինչև դռներն ու պատուհանները։ Բերդը պայթեցրել էին և շատ բան այրել։ Քաղաքն ու շրջակա գյուղերը կողոպտված էին մինչև վերջին աստեղը։ Անհատակ թշվառություն էր տիրում ամեն կողմ։ Հակառակ Մեհմեդ Ալի փաշայի Հայաստանի կառավարության տված պաշտոնական հավաստիացումների, թե դեկտ. 6-ի առավոտյան ժամը 9-ից սկսած՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններից այս կողմ ո՛չ մի թուրք ասկյար չի մնալու և թե կարգադրված է, որ հեռացող ասկյարները ո՛չ մի թալան ու ավերածություն չանեն, թուրքերը հեռանում էին՝ իրենց հետևը թողնելով մահ ու քայքայում...

Ավարը կենտրոնացվում էր Կարսում, ուր հավաքված էր հարյուր հազարավոր փութ բամբակ, 65 000 փութ շաքար, մի քանի տասնյակ հազար եղջյուրավոր անասուններ, մեծ քանակությամբ հացահատիկ, կաշվեղեն, բուրդ, կերպասեղեն, կահ-կարասիք, պատուհաններ ու դռներ...

Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղագիծը, որ հանձնվեց Հայաստանին դեկտ. 5-ին, մերկացված էր ամեն բանից. կայարանների շենքերը՝ ավերակ և անբնակելի, ջրակայանները՝ փչացած, հեռախոսն ու հեռագիրը՝ քանդված, կամուրջներից շատերը հրո ճարակ...

Նույն տեսարանը և՛ Երևան—Ջուլֆա երկաթուղագծի վրա, և՛ Երևանի, Էջմիածնի ու Սուրմալուի գավառների թուրքերից գրավված մասերում։ Պարսկաստանից դեպի Կարս ու Էրզրում քաշվող թուրք զորամասերը, խուժանացած, ճանապարհին ահ ու սարսափ էին տարածում, գործում էին բռնություններ, կողոպտում ու փչացնում էին հայերի գույքերը։ Երկաթուղային կազմվածքի պակասի պատճառով Նախիջևանում, Ուլուխանլուում, Սարդարապատում, Ալեքսանդրապոլում կուտակվում էին հազարավոր ասկյարներ, որոնք թալանում էին ժողովրդին, մտնում շրջակա գյուղերը, խլում ինչ որ պատահի, կոտրում-փչացնում կայարաններն ու երկաթուղային կազմվածքը։ Մորեխի պես, այս ամբոխը սրբում-ոչնչացնում էր ճանապարհին ամեն բան։

Դժվար է տալ իրական պատկերը թուրքերի գործած ավերի ու քայքայման իրենց ութամսյա տիրապետության շրջանում և հեռանալու ժամանակ։ Մեր ձեռքի տակ կա «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» մեկ պաշտոնական զեկուցումը Փամբակ-Լոռի շրջանում թուրքերի հասցրած վնասների մասին։ Այդ զեկուցումը կազմված է 1918 թ. դեկտեմբերի առաջին կեսին, թուրքերի հեռանալուց անմիջապես հետո, տեղն ու տեղը, բոլոր գյուղերում կատարված քննության ու հավաքած նյութերի հիման վրա։ Ահա մի քանի քաղվածքներ այդ զեկուցումից, որոնք տալիս են աղոտ պատկերը սոսկ իրականության, որը անհամեմատ ավելի մռայլ էր։

«Թուրք զորքը ներս է խուժել Փամբակի շրջանի 1918 թ. մայիսի 20-ին։ Այդ զորքը Ջավիդ բեյի 11-րդ դիվիզիան էր, որի շարքերում մեծ թիվ էին կազմում քուրդ զինվորները»։ Ղարաքիլիսա հասնելուն պես, նրանք սկսում են կոտորել հայերին. «կոտորածները բնավ անկարգ, պատահական բնույթ չեն կրել, այլ եղել են ծրագրված ու կազմակերպված և տևել են պաշտոնապես երեք օր»։

«Ղարաքիլիսայում թե բռնությամբ և թե զանազան խորամանկ միջոցներով հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբեր են հավաքել և գյուղից դուրս հանելով՝ գնդակահարել կամ սվինահարել են։ Ղարաքիլիսայում սպանվել են բոլոր հայ սպաներն ու զինվորները, որոնք պարտությունից հետո կամ գերի են ընկել, կամ կամովին ապավինել

հաղթողների մեծահոգության։ Նույն տեղում կոտորված են, բացի տեղացիներից, բազմաթիվ գաղթականներ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից։ Ընդհանուր առմամբ, Ղարաքիլիսայի շրջակայքում գնդակահարված են մի քանի հազար մարդ. ճիշտ թիվը պարզելու հնարավորություն չկա։ Պետք է կարծել, որ այդ թիվը 3000-ից պակաս չէ, թեև ոմանք հասցնում են մինչև 7000-ի։ Այս թվի մեջ չեն մտնում սպանված տեղացիները՝ 1470 հոգի։ Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաջիղարայում, Դարբասում, Ղշլաղում և Եղարլուում։ Մյուս գյուղերում սպանությունները զանգվածային բնույթ չեն կրել, սակայն, մարդկային զոհերը պակաս չեն եղել և այս գյուղերում. այստեղ թուրքերը իրենց ծրագիրը իրագործել են մեղմ ձևով։ Արևմտյան Փամբակի գյուղերից գերի են տարել հարյուրավոր երիտասարդներ, որոնք գրեթե բոլորը ոչնչացել են քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից՝ Էրզրումի շրջանում։ Սակավաթիվ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլևայլ տաժանելի աշխատանքներից, լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով։ Էրզրում քշված 8000 գերիներից— Շիրակից ու Փամբակից— վերադարձել են միայն մոտ 600 հոգի։

Թե մեր շրջանում և թե ամենուրեք առանձնապես հետամտել են թուրքահայերին և ճանկը ընկածներից ոչ մեկը չի խուսափել մահից։

Բռնաբարությունները կրել են բառի ամենալայն իմաստով զանգվածային բնույթ. կան գյուղեր, որոնք, հենց իրենց գյուղացիների խոստովանությամբ, ենթարկվել են լիակատար բռնաբարության (Նալբանդ գյուղը)։ Եղել են դեպքեր, երբ բոլոր տղամարդկանց դուրս են քշել գյուղից ու կանանց բռնաբարել։ Բռնաբարության ենթարկվել են և ջահել աղջիկները՝ սկսած 8—10 տարեկանից, և նորատի հարսները, սակայն, սակավ չեն դեպքեր, երբ բռնաբարել են պառավ կանանց։ Հաստատվում են նաև արվամոլության բազմաթիվ դեպքեր, բռնաբարություններին մասնակցել են նաև հրամանատարությունը, նույնիսկ բժիշկները, օրինակ, դիվիզիայի բժիշկ Քյամիլ բեյը։

Թալանի ենթարկվել է ամեն ինչ, որ կարելի է թալանել՝ դրամ, թանկարժեք իրեր, կահ-կարասիք, հագուստեղեն, մթերքներ և այլն։ Որովհետև Փամբակի ազգաբնակչությունը հանկարծակիի եկավ, նա գրեթե ոչինչ չթաքցրեց և ամեն ինչ կորցրեց։ Դրամը և թանկարժեք իրերը անցել են ասկյարների ձեռքը շատ դեպքերում որպես փրկանք կամ մահից ու բռնաբարությունից ազատվելու և կամ «օրենքի» խստությունից խուսափելու համար։

Թալանի են ենթարկված ամբողջ շրջանի անասունները. ջոկել տարել են ջահել և առույգ անասունները՝ թողնելով վտիտներին։ Տարել են գրեթե բոլոր ձիերն ու էշերը... Ցանքսերի մեծ մասը տրորվեցին ձիերի ոտքերի տակ, մի մասը արածացրին, իսկ ինչ փրկվեց, սրա երեք-ութերորդ մասն էլ, իբրև բահրա, թուրք իշխանությունը դուրս տարավ երկրից տասնյակ վագոններով։ Փամբակի լեռնաշղթայի ճոխ խոտհարքները հնձել տվին հենց գյուղացիներին, նրանք սայլերով կրել տվին կայարանները և բառնալով վագոնները՝ նույնպես դուրս տարան։ Նույն վիճակին ենթարկվեց և գետնախնձորը... Մեղվաբուծությունը վերջնականապես ոչնչացած պետք է համարել, եթե հաշվի չառնենք մեկ մեղվանոց, որ փրկվել է ամբողջովին, և հատ ու կենտ փեթակներ՝ մնացած այս կամ այն մեղվապահի մոտ։ Շրջանում ոչնչացված է մոտ 6500 մեղվի ընտանիք, բոլորը շրջանակավոր փեթակներով։

Հիմնավորապես ոչնչացած է բոլոր դպրոցական գույքը, գրադարանները, կոոպերատիվները. քիչ բացառությամբ թալանված են և վատթար ձևերով սրբապղծված բոլոր եկեղեցիները։ Ներկայումս Փամբակում չի գործում ո՛չ մի դպրոց, ո՛չ մի կոոպերատիվ։

Ասկյարները ամբողջ հինգ ամիս ապրել են գյուղերի հաշվին և բառի իսկական իմաստով ոչնչացրել են ոչխար, հավ, ձու, յուղ, պանիր, կաթ և այլ մթերքներ։ Եվ այսօր հայ շինականի շեն օջախը կատարյալ ամայություն է ներկայացնում։

Ինչ որ ասվեց Փամբակի մասին, նույնը կարելի է կրկնել Լոռիի մասին»։

Լոռի-Փամբակի նյութական կորուստը, խիստ մոտավոր թվերով, հաշվված է, մոտ 45 միլիոն ռուբլի՝ շուրջ 15 միլիոն դոլար։

Եվ այս դեռ մի շրջանում, որը, օրինակ, Շիրակի կամ Սուրմալուի համեմատությամբ, ավելի քիչ էր վնասված։ Կարելի է երևակայել, թե ինչ էր կատարվում մյուս շրջաններում։ Իրոք որ, «այստեղից թուրքն էր անցել»...

ԳԼՈՒԽ ԺԸ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՎԵՃԸ

Կոալիցիոն կառավարության օրով կատարված ամենախոշոր դեպքը եղավ, անշուշտ, հայ-վրացական բախումը, որ ահագին անդրադարձում ունեցավ երկու երկրների ճակատագրի վրա։

Ինչպես տեսանք նախընթաց գլուխներում, հայ-վրացական հարաբերությունները լավ չէին։ 1918 թ. ամառը, հայերն ու վրացիները Թիֆլիսում, արդեն երկու թշնամի կողմեր էին։ Դրությունը չմեղմացավ և Հայաստանի կառավարության Երևան մեկնելուց հետո։ Լենդհակառակը, ավելի ևս սրվեց։

Նախկին հակամարտությունների, դժգոհությունների և սրտացավությունների վրա, այժմ, երբ Վրաստանն ու Հայաստանը այլևս անկախ պետություններ էին, ավելացավ և՛ սահմանային վեճը, և՛ անդրկովկասյան ընդհանուր գույքերի բաժանման խնդիրը, և՛ մի շարք ուրիշ ցավոտ հարցեր։

Առանձնապես ախտավոր ձևեր ստացավ սահմանային խնդիրը։ Վրացիները, որ անկախությունից առաջ, բոլորովին համամիտ էին հայերին և մեկից ավելի անգամներ պաշտոնապես հայտարարել էին, որ Ախալքալաքի գավառն ու Բորչալուի շրջանի լեռնային մասը՝ Լոռին համարում են հայկական հողամաս, այժմ, հանկարծ, պահանջ դրին, որ Ախալքալաքն ու Լոռին մտնեն Վրաստանի սահմանների մեջ։ Ծերեթելին այս պահանջը հիմնավորում էր Վրաստանի համար «ռազմագիտական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտությամբ. Ախալքալաքի գավառը և Լոռին մինչև Շահալի անհրաժեշտ էին վրացիներին իրենց պետության ապահովության համար։ Իսկ Ժորդանիան առաջ էր քաշում և տնտեսական նկատումներ ու պատմական իրավունքներ։

1918 թ. հունիսի սկզբին* Վրաց ազգ. խորհրդի նախագահ Ժորդանիան և Վրաստանի վարչապետ Ռամիշվիլին այցելեցին Հայոց ազգային խորհուրդը և առաջարկեցին Ա. Ահարոնյանին, Հ. Քաջազնունիին ու Ա. Խատիսյանին՝ Բորչալուի բաժանումը կատարել ազգային սկզբունքներով՝ խնդրելով նշանակել ներկայացուցիչներ այդ նպատակով։ Ախալքալաքի մասին խոսք չկար, որովհետև նա գրավված էր Թուրքերի կողմից։ Հ. ազգ. խորհուրդը նշանակեց Խ. Կարճիկյանին, Գ. Խատիսյանին և զոր. Գ. Ղորղանյանին, որոնց Ի. Ծերեթելին, հանուն Վրաց ազգ. խորհրդի հայտարարեց, որ Վրաստանի սահմանների մեջ են մտնելու ամբողջապես Ախալքալաքի, Ղազախի ու Բորչալուի գավառները և Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանը։ Ծերեթելին բացատրեց, որ նման սահմանների հաստատումը անհրաժեշտ է վրաց ժողովրդի կենսական շահերի համար, որ, ռազմագիտական տեսակետից, Վրաստանը չի կարող ապրել առանց Լոռի-Փամբակի։ Մյուս կողմից, հայերի շահն էլ պահանջում է այդ շրջանների Վրաստանի սահմաններում լինելը, որովհետև այդպիսով հանձին Վրաստանի, Կովկասում կստեղծվի կենսունակ ու հզոր քրիստոնյա պետություն, որը գերմանացիների աջակցությամբ կպաշտպանի և հայերին։

Այս հայտարարությունը հանկարծակիի բերեց հայերին։ Նա բոլորովին հակասում էր վրացիների մինչև այդ ասածներին և տարօրինակ էր հնչում, մանավանդ, Ծերեթելիի բերանում։ Հայերի կողմից Խ. Կարճիկյանը վրդովված բողոքեց նրա դեմ՝ ասելով, որ Ծերեթելիի առաջարկածը ոչ այլ ինչ է, եթե որ Հայաստանը Թուրքիայի, Վրաստանի և Ազրբեջանի միջև բաժանելու ծրագիր, որ այդ առաջարկը տրամագծորեն հակառակն է Ժորդանիայի և Ռամիշվիլիի Հայոց ազգ. խորհրդին արած հավաստիացումներին։

Պետք է այստեղ նկատել, որ Թուրքերի առաջխաղացման հետևանքով վրաց-գերմանական զորամասերը գրավել էին Բորչալուն։ Հ. ազգ. խորհրդի դիմումի վրա վրաց ներկայացուցիչները՝ Ժորդանիան ու Ռամիշվիլին վստահեցրին Ա. Ահարոնյանին, Ա. Խատիսյանին և Հ. Քաջազնունիին, որ այդ գրավումը ժամանակավոր է, միայն պաշտպանողական նպատակներով, և, հենց որ Թուրքերը հեռանան, կհեռանան և վրաց զորքերը։

Հայերի պատասխանը լսելուց հետո Ծերեթելին առաջարկեց մի քիչ էլ մտածել և ինքն էլ խոստացավ խնդիրը նորից քննության առնել ընկերների հետ։ Բայց, մի քանի օր անցած, առանց հայերին իմացնելու, Վրաստանի կառավարությունը հայտարարեց Վրաստանի սահմանները՝ մտցնելով նրանց մեջ և վիճելի համարվող շրջանները։ Հայաստանի կառավարությունը անմիջապես բողոքեց այդ հայտարարության դեմ, սակայն վրացիները շարունակեցին մնալ իրենց որոշման վրա և Բորչալուում վարվում էին այնպես, կարծես այդ շրջանը անվիճելի վրացական հող լիներ։ Ծանր տուրքեր էին դնում հայերի վրա, հեռացնում էին Հայաստանի կողմնակից պաշտոնյաներին և տեղը նշանակում իրենց մարդկանց, հարկադրում էին հայ գյուղացիներին համախոսականներ ուղար-

* Армяно-грузинский вооруженный конфликт, 1919 г., Баку.

կել Թիֆլիս, որ, իբր, թե, ուզում են մնալ Վրաստանի սահմաններում, իսկ հետո հայտարարեցին և զորահավաք։

Իսկ վերջը, օգոստ. 26-ին, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Ջամալյանը Վրաստանի արտաքին գործոց նախարարին հանձնեց հետևյալ բողոքագիրը. «Ներկայացնելով ընդամին Ալլահվերդիի շրջանի կոմիսարի սույն տարվա հուլ. 27 № 35 գրությունը՝ ուղղված Լերութի գյուղական կոմիսարին ի մասին 1895—1899 թ. ծնվածների զորակոչի Վրաստանի կողմից, իմ կառավարության հանձնարարությամբ հայտնում եմ ամենավճռական բողոք այն մասին, որ Վրաստանի կառավարությունը զորակոչ է անում Բորչալուի վիճելի շրջանում, որի սեփականության իրավունքի մասին Հայաստանի Հանրապետությունը երբեք չի կասկածել և պարոնայք նախարարներ Ժորդանիան և Ռամիշվիլին դեռ սույն տարվա հունիս ամսին հայտարարեցին Քաջազնունիին, Ահարոնյանին ու Խատիսյանին, որ հիշյալ շրջանը ժամանակավոր կերպով գրավված է վրաց զորքերի կողմից՝ թուրքերի ճանապարհը դեպի Թիֆլիս կտրելու նպատակով։

Վրացիները դեպքը բացատրեցին «թյուրիմացությամբ» և խոստացան «համապատասխան հրահանգներ» տալ, բայց իրենց ընթացքը շարունակեցին անփոփոխ։ Սեպտ. 29-ին Ջամալյանը մի նոր «ամենավճռական բողոք» ևս ուղարկեց վրաց կառավարությանը՝ հայտնելով թե՝ «մինչև այսօր էլ շարունակում եմ ստանալ տեղեկություններ վիճելի գոտու բնակիչների կողմից, որոնք գանգատվում են, որ վրաց իշխանությունները զորակոչ են անում»։ Այս բողոքն էլ ունեցավ նախկինի հետևանքը. սիրալիր խոստում և որդեգրված գործելակերպի շարունակություն։

Հարաբերությունները ավելի ևս լարվեցին հոկտեմբերին, երբ, Հայաստանի կառավարության բազմաթիվ դիմումների հետևանքով, թուրքերը սկսեցին պարպել Լոռի-Փամբակի շրջանը և հայ զորքերը Դրոյի գլխավորությամբ գրավեցին նրանց թողած հողերը։ Վրաց կառավարությունը հայերի այդ քայլը գտավ ապօրինի։ Հոկտ. 19-ին Վրաստանի արտաքին գործոց նախարարը ուղարկեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանին հետևյալ բողոքագիրը. «Վրաստանի Հանրապետության կառավարությունը տեղեկացավ, որ Թիֆլիս նահանգի մեկ մասը՝ Քոբեր կայարանից սկսած մինչև սահմանակից կամուրջը, այլև Սանահինի մոտի շրջանները, սույն հոկտ. 18-ին, գրավվել են հայկական կանոնավոր զորքերի առաջին և չորրորդ հրացանաձիգ գնդերի կողմից։ Վրաց կառավարությունը, որ միշտ պատրաստ է խաղաղ, փոխադարձ համաձայնության միջոցով կարգավորել սահմանների հարցը բարեկամ Հայաստանի Հանրապետության հետ, իր պարտականությունն է համարում հայտարարելու, որ քանի այդպիսի համաձայնություն չի կայացել, հայկական զորամասերի մուտքը Թիֆլիսի նահանգի սահման-

ներից ներս վրաց կառավարության կողմից կդիտվի որպես Հայաստանի կողմից արված ակներև մի թշնամական քայլ Վրաստանի նկատմամբ»։

Իսկ հաջորդ օրը, հոկտ. 20-ին, Սանահինում կանգնած զրահապատ գնացքների պետ Գոգուաձեն ստացավ զինվորական նախարարի հրամանը՝ պահանջել հայ զորամասերից, որ անմիջապես հեռանան Լոռիից և ամբողջ տարածությունը, մեջը լինելով և Շահալին, հանձնեն վրացիներին։ Եվ նույն օրն ևեթ Գոգուաձեն հայ սահմանապահ վաշտի հրամանատարի միջոցով Հայաստանի կառավարությանը ուղարկեց հետևյալ հեռագիր-վերջնագիրը. «Հիմնվելով Վրաստանի Հանրապետության զինվորական նախարարի № 672 հեռագրի վրա՝ հանձնարարում եմ ձեզ 24 ժամվա ընթացքում տեղեկացնել ձեր կառավարությանը, որ դուք պետք է հեռանաք ձեր այժմ գրաված տեղից Շահալի կայարանից այն կողմը։ Սպասում եմ ձեր պատասխանին մինչև 22 հոկտ. ժամը 2 կեսօրից հետո»։

Հաջորդ օրը, հոկտ. 21-ին, Գոգուաձեն ստացավ զինվորական նախարարության հետևյալ հեռագիրը. «Վաղը, հոկտ. 22-ին ժամը 12-ին, երկաթուղով ձեզ մոտ են գալիս նահանգային գումարտակի 250 զինվորներ, դեպի Վորոնցովկա է շարժվում զոր. Ցիցիանովի զորամասը՝ բաղկացած մարտկոցներից և հետևակներից։ Զոր. Ցիցիանովի գալուց հետո նա կընդունի բոլոր զորքերի հրամանատարությունը։ Ամբողջ Բորչալուի գավառի մաքրագործման և մինչև Թիֆլիսի նահանգի սահմանները հեռանալու պահանջը անպայման է»։

Իսկ մեկ օր վերջը, հոկտ. 22-ին, զինվ. նախարար Գեորգաձեն հեռագրեց նույն Գոգուաձեին, թե՝ «քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանը, իր կառավարությունից դեռ չի ստացել մեր դիմումի պատասխանը, հրամայում եմ շտապով գրավել այն գիծը, որ մենք բռնում էինք թուրքերի հեռանալուց առաջ և ոչ ոքի թույլ չտալ անցնելու ո՛չ այդ գծի այն կողմը, ո՛չ այս կողմը։ Մեր զորքերը դեռ չպետք է անցնեն այդ գիծը»։ Եվ մի լրացուցիչ հեռագրով էլ հրամայեց՝ «առանց վրաց կառավարության արտոնության Հայաստանից ոչ ոքի թույլ չտալ մտնելու Վրաստան»։

Այսպես, ուրեմն, վրաց կառավարությունը պատրաստվում էր զենքի ուժով ստիպելու հայերին, որ դուրս գան Լոռիից՝ վրացիներին հանձնելով և Շահալի կայարանը։ Ի՞նչ է այս, եթե ոչ պատերազմի որոշում, որովհետև վրաց ղեկավարները չէին կարող չհասկանալ, որ հայերը հոժար կամքով չէին կատարելու իրենց պահանջը։ Նրանց թև էր տալիս Գերմանիայի հովանավորությունը։ Անշուշտ, նրանք հավատում էին, որ զինված բախումի դեպքում գերմանացիները կմիջամտեն ու կստիպեն հայերին կատարել վրացական պահանջը։

Եվ, հիրավի, մինչ Գեորգաձեն պատերազմի պատրաստություններ էր տեսնում, Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ Ֆոն Քրեսը աշխատում էր համոզել Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանին ընդու-

նել վրացիների վերջնագիրը և առանց արյունահեղության դատարկել «վրացական» հողը։ Ջամալյանի հարցումին, թե արդյոք Գերմանիան կխանգարի՞ հայ-վրացական սահմանային վեճին, ֆոն Քրեսը պատասխանեց դրական մտքով. Գերմանիան, որպես Վրաստանի դաշնակից, պարտավորված է պաշտպանել վերջինիս երկիրը այն սահմաններում, ինչ սահմաններում որ ցույց կտա վրաց կառավարությունը։ Այսպիսով, ինչ սահմաններում որ ցույց կտա վրաց կառավարության լայն ախորժակն ու վճռական դիրքը։

Ի՞նչ կարող էին անել այս պայմաններում հայերը։

Վրացիների վերջնագիրը Երևանում ստացվեց հոկտ. 21-ի գիշերը և անսահման զայրույթ ու վրդովում առաջ բերեց բոլոր շրջաններում։ Հայաստանի խորհրդի հոկտ. 22-ի նիստում վարչապետ Քաջազնունին արեց հետևյալ զեկուցումը.

«Մեր հողի մի մասը, Լոռի-Փամբակի շրջանում, գրավված էր Թուրքական զորքերով։ Կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է ներկայացրել Թուրքաց կառավարությանը, ինչպես նաև գերմանական և ավստրիական միսիաներին ու գերմանական կառավարությանը և միշտ մի պատասխան է ստացել, որ գրավումը ժամանակավոր է։ Հոկտեմբերի 5-ին խալիլ փաշան Երևանում հայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոհիշյալ երկրամասերը։ Անմիջապես մեր և Թուրքաց շտաբները գծեցին այդ գործողության ծրագիրը, որը սկսվեց հոկտ. 18-ին և առանց որևէ միջադեպի շարունակվեց մինչև հոկտ. 21-ը, երբ գիշերվա ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրոյից այն մասին, որ «վրացիները վերջնագիր են ներկայացրել՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչև Շահալի ու շարժվեցին Կոբերի վրայով»։ Նա խնդրում է կարգադրություն անել։ Կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չհանձնել Շահալի կայարանը և զինված ուժի դիմելու պարագային՝ ցույց տալ դիմադրություն։

Ստացանք Դիլիջանից ևս երեք հեռագիր. առաջին, որ մերոնք գրավել են Կոբերը, երկրորդ, որ պարպել են Կոբերը գերմանացի լեյտենանտի պահանջով և երրորդ, որ մերոնք նորեն եկել են Կոբեր։ Մեր կառավարությունը Թիֆլիս ուղարկեց մի հեռագիր Ժորդանիային, որով առաջարկվում է զինված ընդհարում չառաջացնել, այլ աշխատել վեճը լուծել խաղաղ ճանապարհով։

Ջամալյանից ստացանք երկու ռադիո-հեռագիր. առաջինով հայտնում է, որ ինքը հուշագիր է ստացել՝ դատարկելու Թիֆլիսի նահանգի այն մասը, որ թողնում են թուրքական զորքերը. երկրորդով, որ նա տեսակցել է վրաց արտաքին գործոց նախարարի հետ ու վերջինս առաջարկել է թողնել գրավված շրջանները և ապա բանակցություններ սկսել հարցը խաղաղությամբ վերջացնելու համար. կառավարությունը կանգ-

նած է այն տեսակետի վրա, որ հարցը պետք է լուծել խաղաղ ճանապարհով և պահել բարի-դրացիական հարաբերությունները»։

Այս արտակարգ հայտարարությունից հետո ընդմիջում տրվեց, որի միջոցին ստացվեց մի նոր հեռագիր, թե հայկական զորամասերը բռնել են թուրքերի թողած ամբողջ շրջանը և որ դրությունը խաղաղ է։ Միջնարարին ֆրակցիաները ունեցան խորհրդակցություններ, և երբ նիստը վերսկսվեց, ամենքի որոշումն արդեն պատրաստ էր։

Կառավարության հայտարարության առթիվ արտահայտվեցին բազմաթիվ պատգամավորներ, որոնք բոլորն էլ շեշտում էին միջադեպը խաղաղ ձևերով հարթելու անհրաժեշտությունը, բայց եթե վրացիները դիմեն զինված ուժի, անհրաժեշտ էր ցույց տալ դիմադրություն։ Ի վերջո, ընդունվեց հետևյալ բանաձևը. «Լսելով կառավարության հայտարարությունը՝ Հայաստանի խորհուրդը հավանություն է տալիս կառավարության բռնած քաղաքականությանը ու արած քայլերին և առաջարկում է նույն ուղղությամբ շարունակել»։

Ստանալով Հայ. խորհրդի հավանությունը՝ Հ. Քաջազնունին հեռագրեց Թիֆլիս Ա. Ջամալյանին, թե «Հայաստանի խորհուրդը լսելով իմ զեկուցումը վրացական № 4303 դիմումի և Շահալին պարպելու մասին արված վերջնագիր-պահանջի, այլև կառավարության ձեռք առած միջոցների մասին՝ որոշեց 1) հավանություն տալ կառավարության գործողություններին և առաջարկեց նրան հետագայում էլ հետևել ընդունած ուղղությանը, 2) պարտք դնել կառավարության վրա՝ ամեն ջանք թափել բախումը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ ա՛յն հույսով, որ Վրաստանն էլ հետ կկենա հարձակողական քայլերից և չի անցնի իր գրված գիծը։ Խնդրեմ հաղորդել այդ մասին վրաց կառավարությանը»։

Մի ուրիշ հեռագիր էլ տրվեց Ժորդանիային, պատճենը՝ Ջամալյանին. «Դիլիջանի զորամասի պետը հաղորդում է, որ վրաց հրամանատարությունը վերջնագիր է ներկայացրել՝ դատարկելու Շահալի կայարանը։ Ես հրաման տվի՝ չդատարկել կայարանը, և եթե վրացիները անցնեն հարձակման՝ պաշտպանվել։ Ի խուսափումն բարդությունների, որոնք կարող են առաջ բերել նոր աղետներ, հանուն պատերազմից տառապած ու հոշոտված Վրաստանի և Հայաստանի բարիքի, հանուն իրավունքի և արդարության խնդրում եմ հետ կենալ հարձակողական գործողություններից, պահել վրաց զորքերը նրանց կեցած այժմվա գծի վրա, իսկ սահմանների հարցը լուծել խաղաղ համաձայնության ճանապարհով։ Հիշեցնում եմ ձեզ ձեր սեփական հանդիսավոր հայտարարությունը, հունիսին, Նոյ Ռամիշվիլիի, Ահարոնյանի և Խատիսյանի ներկայությամբ, թե Վրաստանը աչք չունի Լոռիի վրա և գրավում է նրան ժամանակավոր կերպով երրորդ պետության գրավման առաջը առնելու նպատակով»։

Թե ինչով կվերջանար բողոքադրերի ու հեռագրերի այս փոխանակությունը, դժվար չէր գուշակել. վրաց կառավարությունը մի կողմից

պահանջներ էր անում, սպառնալիքներ կարդում, մյուս կողմից տենդագին զինվորական պատրաստությունների մեջ էր, ուժեր էր հավաքում Սանահինի ու Վորոնցովկայի շրջանում և պատրվակ էր փնտրում, որպեսզի հնարավոր ընդհարման պատասխանատվությունը ձգե հայերի վրա։ Վերջին իմաստը ուներ Ն. Ռամիշվիլիի 23 հոկտ. նամակը Ջամալյանին, որի մեջ վրաց արտաքին գործոց նախարարը հաղորդում էր. «Քննելով ստեղծված դրությունը՝ Վրաստանի կառավարությունը հանձնարարեց ինձ հաղորդելու ձեզ, որ եթե հայկական զորամասերը անհապաղ չպարպեն Քորինջ—Ցաթեր գիծը կամ եթե հետագայում գրավեն որևէ հողամաս Թիֆլիսի նահանգի սահմաններում, վրաց կառավարությունը կհամարի այդ պատերազմի հայտարարություն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, որի վրա կընկնի երկու հանրապետությունների համար ստացվելիք կորստաբեր հետևանքների բովանդակ պատասխանատվությունը»։

Եվ զինվորական գործողությունները սկսվեցին էլ. զոր. Ցուլուկիձեի հրամանով, հոկտ. 23-ին, Գոգուաձեի զրահապատը ռմբակոծեց Շընիխ գյուղը, և վրացի զինվորները ընդհարում ունեցան հայ գյուղացիների և այդ շրջանում գտնվող հայկական փոքրիկ զորամասի հետ։ Հոկտ. 26-ին Գոգուաձեն իր զրահապատով անցավ մինչև Հայրում և պահանջեց հայ գյուղացիներից ճանաչել Վրաստանի իշխանությունը։ Մանր դեպքեր տեղի ունեցան և ուրիշ կողմերում։

Մթնոլորտը խտացած էր՝ պատրաստ պայթելու։ Դրան նպաստում էր վրաց ղեկավարների հոխորտ դիրքը։ Հայ-վրացական սահմանային վեճը դարձավ նաև Վրաստանի խորհրդարանի հարցապնդման նյութ, և արտաքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին «բոլոր թյուրիմացությունները վերացնելու նպատակով» հայտարարեց, թե «Թիֆլիսի նահանգը անվիճելիորեն համարվում է Վրաստանի հող», իսկ զինվորական նախարար Գեորգաձեն ավելացրեց, որ ինքը «զենքի ուժով կճնշե ապստամբությունը»։

Այդ ժամանակ վրա հասան գերմանացիների արևմուտքում կրած պարտությունների լուրերը, զոր. ֆոն Քրեսի հետ կապված հույսերը սկսեցին թուլանալ, և վրաց վարիչները խոհեմություն համարեցին զսպել իրենց ռազմաշունչ եռանդը։

Մի ուրիշ դեպք նույնպես յուղ լցրեց հայ-վրացական փոխհարաբերությունների խարույկի վրա։ Հոկտ. 17-ին Վրաստանի արտաքին գործոց նախարար Ն. Ռամիշվիլին Հայաստանի, Ազրբեջանի և Լեռնականների կառավարություններին ուղարկեց հետևյալ դիմումագիրը.

«Արդեն հասել է այն վայրկյանը, որ Անդրկովկասի և Կովկասի կառավարությունները, լցված փոխադարձ վստահության ոգով, իրար օգնության գալու պատրաստակամությամբ և միմյանց անկախությունը ընդունելով՝ հանդես գան փոխադարձ օգնությամբ և համերաշխությամբ

իրականացնելու ապագա վեհաժողովին ստեղծված հանրապետությունների ճանաչումն ու փոխադարձ շահերի պաշտպանությունը, ինչպես և լուծելու բոլոր վիճելի հարցերը, դրանց թվում և սահմանների հարցը՝ շահագրգռված պետությունների համաձայնությամբ կամ, եթե այդ անցնի ապարդյուն, իրավարարության միջոցով, և մշակելու փոխադարձ այնպիսի պարտավորություններ, որոնց ուժով ոչ ոք իրավունք չունենա որևէ պետության հետ համաձայնության մեջ մտնել՝ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող ժողովուրդներից որևէ մեկի։

Այս նպատակով վրաց հանրապետության կառավարությունը առաջարկում է Ազրբեջանի և Հայաստանի հանրապետություններին ու Հյուսիսային Կովկասի Լեռնական ժողովուրդների Միության կառավարությանը՝ անհրաժեշտ լիազորություններով երկուական ներկայացուցիչ ուղարկել Թիֆլիս, սույն թվի նոյեմբերի 10-ին, ցերեկվա ժամը 12-ին՝ արտաքին գործոց նախարարության շենքում կայանալիք խորհրդաժողովին մասնակցելու համար։

Վրաց հանրապետության կառավարությունը որոշել է խորհրդաժողովի քննության դնել հետևյալ հարցերը.

1. Խորհրդաժողովին հրավիրված պետությունների անկախության ճանաչումը փոխադարձաբար։

2. Վիճելի խնդիրների, որոնց մեջ և սահմանավեճերի լուծումը՝ փոխադարձ համաձայնությամբ կամ իրավարարությամբ։

3. Փոխադարձ պարտավորություն՝ չկայացնելու համաձայնություն որևէ պետության հետ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող պետությանց։

4. Համերաշխ և փոխադարձ վստահությամբ հանդես գալ համաշխարհային վեհաժողովում հանրապետությունների անկախությունը ճանաչել տալու և ընդհանուր շահերը պաշտպանելու նպատակով»։

Այս դիմումը տարօրինակ էր թե՛ ըստ ձևի և թե՛ բովանդակությամբ. վրաց կառավարությունը որոշել էր խորհրդաժողովի օրակարգը, կազմը, տեղն ու ժամը և ուղարկում էր իր հարևան պետությունների կառավարություններին ի գործադրություն։ Այդպես կարող էր վարվել մի նահանգապետ իր ստորադաս գավառապետի հետ, բայց անհանդուրժելի էր անկախ պետությունների փոխհարաբերությունների մեջ*։ Եվ հասկանալի է, որ այդ գրությունը Երևանում ընդունվեց զարմանքով ու վրդովմունքով։

Հայերը ունեին դժգոհելու և ուրիշ պատճառ. Ռամիշվիլին ինքնագլուխ օրակարգի մեջ էր դրել և «սահմանավեճերի լուծումը»։ Երևա-

* «Ռամիշվիլիի ստորագրած «հրավիրագրի» ոգին, բնորոշում է Ավալովը, մի քիչ... ներքին գործոց նախարարի շրջաբերականն էր հիշեցնում»։

նում համարվում էր կասկածից դուրս, որ վրացիներն ու թուրքերը միացած, ինչպես վարվում էին անցյալում, Հայաստանին կպարտադրեն անընդունելի սահմանագիծ, մինչդեռ սահմանային խնդիրը իր էությամբ այնպես էր, որ կարող էր լուծվել միայն շահագրգռվող կողմերի միջև առանձին-առանձին։

Հայաստանի խորհրդի նոյեմբ. 8-ի նիստում քննվեց Ռամիշվիլիի դիմումագիրը, և առաջին անգամ Հայաստանի Հանրապետության կյանքում խորհրդի բոլոր կուսակցությունները, առանց բացառության, կանգնեցին միևնույն տեսակետի վրա՝ ցասումով և բուռն կերպով դատապարտելով Վրաստանի կառավարության մենատիրական ձգտումները։ Եվ որ հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական կապեր պահել վրաց սոցիալ-դեմոկրատների հետ։ Սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Ա. Մալխասյանը բուռն կերպով բողոքեց խորհրդաժողովը հրավիրելու տարօրինակ ձևի դեմ, որը այս դեպքում համազոր էր բովանդակության. իր քայլով Վրաստանի կառավարությունը խախտում էր հավասարության սկզբունքը, կամենում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը։ Նա ինքնագլուխ կերպով որոշել է խորհրդաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը։ Նման դրությունը կարելի չէ հանդուրժել։

Անհանդուրժելի գտավ և «ըստ ձևի ու ըստ էության դեմ» արտահայտվեց նաև սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան։ Նույն պատճառաբանություններից մեկնելով՝ բացասական վերաբերվեցին և դաշնակցական ու ժողովրդական ֆրակցիաները։ Եվ գրեթե միաձայնությամբ խորհուրդը որոշեց չմասնակցել նոյեմբ. 10-ի խորհրաժողովին և հանձնարարել կառավարությանը, որ աշխատի «հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրոք համաձայնության գալով նրա կազմի, օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ»։ Միաժամանակ խորհուրդը որոշեց, որ հայ-վրացական սահմանային վեճը առնչություն չունի այդ խորհրդաժողովի հետ և «պետք է վճռվի միայն երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ»։

Եվ Ռամիշվիլիի ծրագրած խորհրդաժողովը հետաձգվեց։

Քիչ չէին և ուրիշ առիթներ, որոնք բարդացնում էին հայ-վրացական փոխհարաբերությունները։ Հայաստանը կտրված էր ամբողջ աշխարհից, խեղդվում էր իր լեռներում և, իրավամբ, սպասում էր, որ հարևան Վրաստանը մի քիչ մարդկային վերաբերում կունենա իրեն հանդեպ։ Ընդհակառակը, վրացիները, կարծես դիտմամբ, խնդիրներ էին ստեղծում, վիրավորում էին հայերի արժանապատվությունը, դժվարացնում հաղորդակցությունը դրսի հետ, նույնիսկ փակում էին իրենց սահմանները հայերի առջև։ Պատրվակ բռնելով տրանզիտային համաձայնության չգոյությունը Հայաստանի և Վրաստանի միջև, վրաց կառավարությունը արգելքներ էր հանում հայերի առջև։ Սովի և հիվանդությունների ճիրաններում գալարվող Հայաստանի համար այս վերաբերումը համարվում էր անխիղճ, տմարդի, թշնամական։

Բազմաթիվ օրինակներից առաջ բերենք միայն մեկը. նոյեմբերի կեսերին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում դիմեց վրաց արտաքին գործոց նախարարին՝ խնդրելով արտոնել Բաքվում գտնված 40 ցիստեռն նավթն ու 9 ցիստեռն բենզինը Վրաստանի վրայով փոխադրել Հայաստան։ Իբր փոխարինություն այդ արտոնության Ջամալյանը համաձայնություն էր հայտնում ապրանքների 20 % հանձնել Վրաստանի կառավարությանը։ Մեծ դժվարությամբ ու ձգձգումներով կարելի եղավ ստանալ իրավունք, բայց ահա Վրաստանի հաղորդակցության նախարարը հայտնում է Հայաստանի դիվանագիտ. ներկայացուցչին, որ զինվորական նախարարի կարգադրությամբ հարավային երկաթուղագծի վրա զինվորական դրություն հայտարարված լինելու հետևանքով, բացի թուրքական կառավարական գնացքներից, ո՛չ մի գնացք չի թողնվելու հայ-վրացական սահմանից դեպի հարավ։ Իհարկե, Բաքվի նավթն ու բենզինը Հայաստան չգնաց։ Նման պատճառներով Հայաստանը բոլորովին ի վիճակի չէր արտաքին աշխարհից որևէ ապրանք, ուտելիք ու դեղորայք ներմուծելու։ Կարելի է երևակայել, թե վրացիների այս ընթացքը ինչպիսի տրամադրություն էր առաջ բերում սովահար Հայաստանում։

Այսպիսի պայմաններում ծնունդ առավ այն բախումը, որը վերջ ի վերջո վերածվեց հայ-վրացական արյունոտ պատերազմի։ Այդ պատերազմի անմիջական առիթը վրաց զորամասերի գործած բռնություններն էին Լոռիի հայ գյուղերում և Ախալքալաքի գրավումը թուրքերի հեռանալուց հետո։

Ամբողջ նոյեմբեր ամսին և դեկտեմբերի սկզբներին Հայաստանի կառավարությունը անվերջ գանգատներ ու բողոքներ էր ստանում լոռեցիներից վրաց զորքերի գործած կամայականությունների, թալանի ու բռնությունների դեմ։ Վրաց զինվորները ապրում էին հայկական գյուղերում. ուտելիքը առանց վճարումի առնում էին գյուղերից. խուզարկությունների պատրվակով մտնում էին տները և տանում ինչ որ պատահեց։ Ձեռք էին տալիս կանանց, հարբում, ամեն տեսակ խայտառակություններ գործ դնում. իշխանությունները բռնագրավում էին գյուղացիների ցորենը, անասունները, գինին, խոտը, յուղը, պանիրը, գետնախնձորը, հավը, հավկիթը. պահանջում էին զենք ու ռազմամթերք։ Երբեմն ամբողջ գյուղեր ինչպես, օրինակ, Շուլավերը, խուզարկության ու կողոպուտի էին ենթարկվում։ Վրացիները պահում էին իրենց այն-

պես, կարծես թշնամի երկրում լինեին։ Ենիչերական կարգեր էին սահմանվել Լոռիում, ուր վրացին ամեն ինչ էր, հայը՝ ճնշված ռայա։

Առանձնապես ծանր էր Ուզունլար գյուղի բնակիչների վիճակը. վրացիները մասնավոր ուշադրություն էին դարձնում «ըմբոստ» Ուզունլարի վրա և նրանց զինվորները ի՞նչ սանձարձակություն ասես չէին գործում ուզունլարցիների գլխին։ Այսպես, Վորոնցովկայի շրջանի վրաց զորքերի հրամանատար գնդ. Ռամազովը, նոյեմբ. 21-ին, տեղեկագրում էր զոր. Ցուլուկիձեին. «Հաղորդում եմ ձեզ, որ այսօր, ժամը 3-ին, հրացանաձգություն էր լսվում Ուզունլարի ուղղությամբ։ Ես ուղարկեցի պահակներ տեղակալ Շուբլաձեի հետ բանի էությունը հասկանալու և հրացանաձգությանը վերջ տալու համար։ Տեղ. Շուբլաձեի երևալով հրացանաձգությունը վերջ է գտնում։ Պարզվեց, որ պահակային հարյուրյակի զինվորները և Ուզունլարի բնակիչները հրացանաձգության են բռնվել, որի ժամանակ սպանվել է Ուզունլարի պահակը և վիրավորվել է ձին, այլև զինվորների ձեռքից սաստիկ ծեծ կերել գյուղի կոմիսարը... Երևալով զինվորների ձեռքից սաստիկ ծեծ կերել գյուղի կոմիսարը... Երևվում է, որ զինվորները հանցավոր են եղել, բայց գյուղացիների հանդուգն քայլը և զինված շղթաներով հարձակվելը առիթ է տալիս մտածելու, որ գյուղում շատ զենք կա։ Անհրաժեշտ է խիստ խուզարկություն անել գյուղի բոլոր տներում և միևնույն ժամանակ հարկավոր է վռնդել այստեղի երկու հարյուրյակները և փոխարինել ուրիշ զորամասերով, որովհետև զինվորները սաստիկ երես են առած և թալաններով հուզում են տեղական բնակչությանը»։

Երբ ուզունլարցիները ներկայացուցիչներ ուղարկեցին Սանահին՝ բողոքելու համար զինվորների գործած շահատակությունների դեմ, զոր. Ցուլուկիձեն ձերբակալեց նրանց և Ուզունլար պատժիչ զորամաս ուղարկեց՝ գնդացիրներով ու թնդանոթներով։ Դեկտ. 8-ին այս զորամասը ճանապարհ ընկավ մի զրահապատի ուղեկցությամբ։ Ուզունլարցիները դիմավորեցին հրացաններով։ «Զրահապատից,— տեղեկագրում էր նրա պետ Խունչիան,— պատասխանեցինք թնդանոթներով ու գնդացիրներով։ Մեր հետևակները չկարողացան բարձրանալ սարը և նահանջեցին թողնելով մի գնդացիր։ Մեր հետևակները շատ վնասվեցին։ Հայերը մեծ քարեր էին նետում կայարանի վրա, որի հետևանքով պայթեցրին ռազմամթերքով բեռնավորված երեք թուրքական վագոններ։ Կայարանը ջարդված է»։ Իսկ վրաց հաղորդակցության նախարարությունը դեկտ. 9-ին հաղորդեց, թե՝ «Դեկտ. 9-ին, Սանահինի մոտ կռիվներում, վրացիներից սպանվել են 3 հոգի, ծանր վիրավորվել՝ 1, թեթև վիրավորվել՝ 1, անհետ կորել՝ 2։ Արձակված է 3 600 գնդակ»։

Երկու օր հետո, դեկտ. 11-ին, Գոգուաձեն զեկուցանում էր զինվորական նախարարին. «Այսօր, վաղ առավոտյան, Ալլահվերդի և Սանահին կայարանների միջև, 102-րդ վերստի վրա, ուղին քանդված է հայերի ձեռքով։ № 3 զրահապատը թնդանոթաձգություն ունեցավ։ Ես կարգադրել եմ նորոգել ճանապարհը»։

Վրացիներն ամբողջ երկու օր թնդանոթի բռնեցին Ուզունլար գյուղը։ Դեկտ. 10-ին Ուզունլարի ներկայացուցիչներ Տադյանն ու Ղարաքեշիշյանը հետևյալ աղերսալի հեռագիրը տվին Երևան, զինվորական նախարարին. «Իմացնում ենք, որ դեկտ. 8-ին վրաց զորքերը ուզեցին գրավել Ուզունլար գյուղը։ Միջոց չունեինք նրանց տեղավորելու, և հասարակությունը մերժեց ընդունել։ Զորքերը վճռեցին գրավել ուժով։ Երկու օր է Ուզունլարը գտնվում է թնդանոթների կրակի տակ։ Վրացիները սպառնում են կոտորել ուզունլարցիներին։ Հազար տուն ենք և խնդրում ենք անել շտապ կարգադրություն՝ օգնություն հասցնելու կորչող ժողովրդին»։

Հայաստանի կառավարությունը, որ ահագին նյութ ուներ Լոռիի ծանր կացության մասին, նույն օրն ևեթ, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանի ստորագրությամբ Թիֆլիս ուղարկեց հետևյալ հեռագիրը. «Ղարաքիլիսա՝ Լոռիի զորամասի պետը հաղորդում է, որ ուզունլարցիները երկրորդ օրն է գտնվում են վրաց զորքերի թնդանոթային և գնդացրային կրակի տակ, որ Լոռիի հյուսիսային մասի հայկական գյուղերը մատնվում են թալանի ու բռնությունների նույն զորքերի կողմից։ Հայաստանի կառավարությունը վճռական կերպով բողոքում է վրաց զորքերի սանձարձակությունների դեմ մի շրջանում, որը կազմում է Հայաստանի հողամասը և բռնությամբ գրավված է վրաց զորքերով։ Եթե անմիջապես միջոցներ ձեռք չառնեք վերջ տալու, հետևանքների պատասխանատվությունը կառավարությունս վերցնում է իր վրայից»։

Շուտով հայտնի դարձավ, նույնպես, որ միայն Ուզունլարը չէր վրաց զորքերի սխրագործությանց զոհը. Աղրի, Ամուլ, Աքորի և մի շարք ուրիշ գյուղեր էլ ենթարկվել էին հարստահարությունների, կողոպուտի ու բռնությանց։ Եվ նման երևույթները ընդհանուր էին Լոռիի բոլոր վայրերում, ուր կանգնած էին վրաց զորամասերը։

Մինչ հայ-վրացական սահմանի վրա տեղի էին ունենում այս դեպքերը, Երևանում կատարվում էին դիվանագիտական բանակցություններ Հայաստանի և Վրաստանի միջև։ Նոյեմբերի սկզբներին Երևան էր եկել Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին՝ հայ-վրացական սահմանային վեճը լուծելու նպատակով։ Նոյ. 29-ին նա գրավոր կերպով հաղորդեց Հայաստանի արտաքին գործոց նախարարությանը, որ ինքը «լիազորված է վերջնականապես լուծելու սահմանային հարցը և կայացվելիք վճիռը ներկայացնելու Վրաստանի կառավարության ի վավերացումն»։ Եվ նույն գրության մեջ որոշում էր վրացիների սահմանային պահանջները. «Վրաց հանրապետության կառավարության պահանջով սահմանագիծը Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև պետք է անցնի Թիֆլիսի նահանգի հին սահմանով, այսինքն՝ այն գծով, որը այժմ

բաժանում է Ախալքալաքի ու Բորչալուի գավառները նախկին Երևանի նահանգի նախկին Ալեքսանդրապոլ գավառից՝ հարավում, իսկ արևելքից՝ այն գծով, որ բաժանում է Բորչալուի գավառը նախկին Գանձակի նահանգի նախկին Ղազախի գավառից»։

Ի պատասխան այս գրության, Ս. Տիգրանյանը հաղորդեց, նույնպես գրավոր, որ սահմանը Հայաստանի և Վրաստանի միջև որոշված և հայ ու վրաց ներկայացուցիչների միջև մեկից ավելի անգամներ հաստատված է 1917 թվի ընթացքին։ Այդ սահմանը, որ հիմնված է ազգագրական սկզբունքի վրա, Հայաստանի կառավարության համար ի զորու է և այժմ։ Ըստ 1917 թ. հայ-վրացական համաձայնության՝ «Ախալքալաքի գավառը ամբողջովին և Բորչալուի գավառի մեծ մասը, ուր հայ ազգաբնակչությունը կազմում է բացարձակ մեծամասնություն, անկապտելի կտորն են Հայաստանի։ Միաժամանակ Բորչալուի գավառի հյուսիսային մասը և Թիֆլիսի գավառի հյուսիսային մասը մինչև Թիֆլիս քաղաքը, չնայած որ այս մասում հայ բնակչությունը ավելի է վրացականից, մտցված են Վրաստանի կազմի մեջ՝ այն հաշվով, որ Վրաստանի հայերը կունենան ազգային-մշակութային ինքնորոշման երաշխիքներ»։ Բայց եթե, վրաց կառավարությունը պնդում է նոր սահմանագծի վրա, այն ժամանակ սահմանային խնդիրը պետք է քննվի բովանդակ ծավալով՝ ոչ միայն Ախալքալաքի և Լոռիի, այլև «այն շրջանների (Բորչալուի և Թիֆլիսի գավառների) վերաբերմամբ, որոնք կարող են առանց վեճի միացվել Վրաստանին միայն այն դեպքում, երբ Վրաստանի և Հայաստանի հողային բաժանման ամբողջ նախկին ծրագիրը պահպանվի»։

Վրաց ներկայացուցիչը շարունակեց պնդել իր տեսակետի վրա, իսկ այդ միջոցին Վրաստանի կառավարությունը, օգտվելով թուրքերի հեռանալուց, հակառակ Հայաստանի կառավարության կտրուկ բողոքների, գրավեց Ախալքալաքի գավառը. դեկտ. 5-ին վրաց զորքերը, զոր. Մակաևի գլխավորությամբ, մտան Ախալքալաք և հայտարարեցին միացված Վրաստանին։ Վրաց կառավարությունը պատասխանեց Հայաստանի կառավարությանը, թե «Ախալքալաքի գավառի նվաճման հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսակետից վիճելի չէ»։ Եվ այդ «անվիճելի» իրավունքը իրականացնելու համար դեկտ. 8 ու 9-ին, վրաց զորքերը զենքի ուժով ստիպեցին սակավամարդ հայ զորամասին թողնել Ախալքալաք գավառի Եֆրեմովկա և Տրոյիցկոյե գյուղերը, որ հայերը գրավել էին թուրքերի հեռանալուց հետո։

Ախալքալաքի ու Լոռիի դեպքերը մեծ հուզում առաջ բերին Երևանում։ Կուսակցությունները, Հայաստանի խորհուրդը, կառավարությունը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների ընթացքը։ Հայ. խորհուրդը մի շարք դռնփակ նիստերում քննելով դրությունը՝ կառավարությանը տվեց գործելու ազատություն՝ պարտավորեցնելով

նրան դիմել ամեն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, բայց, մանավանդ, Լոռիի վերաբերմամբ։ Այս հարցում տարակարծություն չկար. բոլոր կուսակցությունները Լոռին համարում էին Հայաստանի անբաժանելի մաս։ Հայ ժողովրդի բոլոր խավերի գաղափարն էր արտահայտում, երբ սահմանավեճի առթիվ պատմաբան Լեոն գրում էր. «Երկու հազար տարվա պատմությունը տանում հասցնում է այն եզրակացության, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան։ Ներկայումս այս բանն ավելի ևս անհերևակայելի պիտի համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից կնշանակի հոշոտել նրա ամբողջ անցյալը և նրա կուլտուրական գանձերը՝ դարերի և հարյուրավոր սերունդների մեծագործությունը թալանել տալ»*։

Ներեթելիի համար Լոռին «ռազմագիտական սահման» էր, հայերի համար՝ հայկական մարմնի մի մաս։ Եվ այդ մարմինն էր, որ հոշոտվում էր շարաշար վրաց զորախմբերի կողմից։ Դեկտ. 9-ին և ապա 12-ին Հայաստանի կառավարությունը նորից դիմեց վրաց կառավարությանը՝ խնդրելով, հանուն երկու ժողովուրդների բարիքի, վերջ տալ հարստահարություններին, դուրս բերել վրաց զորքերը Լոռիից և սահմանի խնդիրը կարգադրել խաղաղ բանակցություններով։ «Մերժման պարագային,— գրում էր Քաջազնունին իր դեկտ. 12-ի դիմումագրի մեջ,—Հայաստանի կառավարությունը ստիպված պիտի լինի ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ պաշտպանելու համար Հայաստանի քաղաքացիներին վրաց զորքերի բռնություններից ու շահատակություններից»։

Վրաց կառավարության պատասխանը եղավ բացասական։ Թիֆլիսի կառավարությունը շարունակում էր պնդել իր «անվիճելի» իրավունքների վրա, առանց հաշվի առնելու հայերի նույնպես «անվիճելի» համարվող իրավունքները։ Հայերի պահանջը նա համարում էր «միջամտություն Վրաստանի ներքին գործերին»։ Բախումը դառնում էր անխուսափելի, և դեկտ. 13-ին բռնկվեց հայ-վրացական զինված ընդհարումը։

Պատերազմը սկսվելուց հետո էլ Հայաստանի կառավարությունը աշխատեց գտնել վեճի լուծման խաղաղ միջոցներ։

Դեկտ. 14-ին արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը Թիֆլիս ուղարկեց մի նոր դիմումագիր, որով, ի միջի այլոց, գրում էր. «Վրաց կառավարությունը ո՛չ միայն ընդառաջ չգնաց մեր փափագին՝ սահմանների հարցը խաղաղությամբ լուծելու, այլև կամենալով ամրապնդել օտար հողի գրավումը՝ ձեռնարկեց արշավանք խաղաղ բնակչության դեմ՝ ենթարկելով արյունահեղ ու դաժան բռնությունների, մինչև իսկ հայկական գյուղերը թնդանոթների կրակի մատնելով։ Հայաստանի կառա-

* Լեո, Սահմանավեճեր, 1919 թ., Թիֆլիս, էջ 24։

վարությունը չի կարող մնալ անկարեկից դիտողի դերում, որովհետև հարևան պետության զորքերը սխրագործություններ են անում Հայաստանին պատկանող հողի վրա և գնդակահարում են Հայաստանի քաղաքացիներին։ Իմ կառավարությունը՝ ջերմորեն ձգտելով առաջն առնել ապագա բարդությունների՝ ուզում է հավատալ, որ ձեր կառավարությունը՝ հարգելով ժողովրդի բաղձանքն ու Հայաստանի իրավունքը՝ կփութա սեփական նախաձեռնությամբ դուրս հանել զորքերը, հնարավորություն կտա ձեր պատգամավորության հարաբերության մեջ մտնել մերինի հետ, կվերականգնե հեռագրական կապը և դրանով կամրացնե երկու հարևան հարազատ պետությունների խաղաղ կենակցությունը»։

Այս դիմումն էլ մնաց ձայն բարբառո հանապատի։

Զինված ընդհարման առաջին իսկ օրերին միջամտեց, այդ պահուն Ղարաքիլիսայում գտնվող, անգլիական սպա կապիտան Գրինը, որ առաջարկեց՝ հայ-վրացական խորհրդակցություն կազմել և վեճը լուծել խաղաղ ճանապարհով։ Հայաստանի կառավարությունն ընդունեց առաջարկը և Ղարաքիլիսա ուղարկեց մի պատվիրակություն, որի մեջ մտան՝ Մ. Հարությունյանը (նախագահ), Ս. Խաչատրյանը, Ս. Մամիկոնյանը, Ա. Խոնդկարյանը և Գ. Տեր-Խաչատրյանը։ Միևնույն ժամանակ, դեկտ. 18-ին, արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը հեռագրեց Վրաստանի կառավարությանը. «Խորհրդի որոշումով կառավարությունն այսօր պատվիրակություն է ուղարկում կապ. Գրինի և Վրաստանի լիազորների հետ միասին, եթե վերջիններս դան, պատերազմական գործողությունները վերջացնելու պայմանները մշակելու համար։ Մի պայման Խորհուրդը համարում է միանգամայն անհրաժեշտ. Հայաստանի կառավարությունն իր զորքերը Բորչալուի գավառից կարող է հանել միայն այն դեպքում, երբ երաշխիք ստանա, որ այս, ինչպես և Ախալքալաքի գավառը կապահովվեն Վրաստանի նոր հարձակումներից... Մեր պատգամավորությունը ուրախ կլինի հանդիպելու ձեր լիազորների հետ, որպեսզի համերաշխաբար աշխատեն լավագույն պատմական ավանդություններով կապված և ընդհանուր մշակութային տենչերով համակված երկու հարևան ժողովուրդների բարօրության համար»։

Այս դիմումն էլ անմիջական գործնական հետևանքներ չունեցավ. վրացիները պահանջեցին, որ հայերը հեռանան Լոռիից, իսկ իրենք մնան Լոռիում և Ախալքալաքում։ Բնականաբար, հայերը չէին կարող ընդունել հարցի նման միակողմանի լուծում. հայ պատվիրակները երկար սպասեցին Ղարաքիլիսայում, վրացիները պատվիրակներ չուղարկեցին։ Կապ. Գրինը գնաց զոր. Թոմսոնին զեկուցանելու համար, և այլևս ձայն չլսվեց։

Երկու ժողովուրդների զինված ընդհարման առաջն առնելու փորձեր արավ և Վրահայոց ազգ. խորհուրդը։ Դեկտ. 11-ին նրա պատվիրակությունը— Ա. Երզնկյանը, Ա. Քոչարյանը, Տեր-Օհանյանը և Աբովյանը— վրաց կառավարության արտոնությամբ, մեկնեցին Թիֆլիս՝ կամենալով

Վորոնցովկայի ու Ջալալ-Օղլիի վրայով հասնել Ղարաքիլիսա և համոզել հայերին, որ դադարեցնեն կռիվը և վեճը լուծեն բանակցությունների միջոցով։ Դեկտ. 15-ին պատվիրակությունը հասավ Եկատերինֆելդ, ուր պահվեց մի քանի օր, ապա վերադարձվեց Թիֆլիս, իբր թե, կառավարության հրամանով։ Պատվիրակության անդամներ Երզնկյանն ու Աբովյանը ենթարկվեցին հայհոյանքի և անարգանքի, իսկ Քոչարյանը ծեծվեց ժողովրդական դվարդիականների ձեռքով։ Երեքին էլ փակեցին սենյակի մեջ և դաշույնը կրծքերին ուղղած՝ սպառնում էին սպանել։ Ջոգնեց և այն փաստը, որ Ա. Երզնկյանը Վրաստանի խորհրդարանի անդամ էր. նրան համարում էին հայկական լրտես։

Պատերազմի առաջն առնելու մի փորձ արավ և Վրաստանի ներկայացուցիչը Հայաստանում՝ Ս. Մդիվանին, որը դեռ ընդհարումներից առաջ մեկնել էր Երևանից և գտնվում էր Ղարաքիլիսայի շրջանում։ Զոր. Ցուլուկիձեի հետ ուղիղ հեռագրաթելով խոսելուց հետո, նա հորդորեց Հայաստանի կառավարությանը կանգնեցնել առաջ շարժվող զորքերը, պարպել Լոռիի գրավված վայրերը և հայ-վրացական խառն պատվիրակության միջոցով՝ համոզել Լոռիի հայ գյուղացիությանը, որ համակերպվի և ճանաչի վրաց իշխանությունը, իսկ սահմանների հարցը լուծել բանակցությունների միջոցով։ Մի ձև, որ, իհարկե, անհնար էր ընդունել ստեղծված պայմաններում։

Եվ դեպքերն ընթացան իրենց ճանապարհով. խոսքը մնացել էր զենքին։

ԳԼՈՒԽ ԺԹ

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

Դեկտ. 13-ին Հայաստանի կառավարությունը հրամայեց Դիլիջան—Լոռիի զորամասի պետ Դրոյին՝ մաքրել Լոռին վրաց զորքերից։ Հաջորդ օրը զորամասը դիմեց առաջխաղացման Վորոնցովկա—Պրիվոլնոյե—Օփրեթ—Հայրում գծով։

Գործողության սկսող զորամասի մեջ մտնում էին հետևյալ միավորները. աջ թևում՝ փոխգնդ. Կորոլկովը 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիրով, 3 հարյուրյակ ձիավորով և միլիցիոն գնդի 4 վաշտով։ Կենտրոնում՝ փոխգնդ. Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիրով, 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթով։ Ձախ թևում՝ գնդ. Տեր-Նիկողոսյանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիրով, 4-րդ լեռնային մարտկոցի 3 թնդանոթով։ Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդ. Միրիմանյանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիավոր հետախույզներով և 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթներով։ Զորամասի ուժերի համագումար թիվն էր՝ 28 վաշտ, 26 գնդացիր, 7 լեռնային թընդանոթ, 4 հարյուրյակ ձիավորներ։ Ա՛յս համեստ ուժերով սկսվեց հայ-վրացական պատերազմը։

Պետք է նկատել նույնպես, որ պարենավորման, սարքավորման, հագուստի ու մատակարարման տեսակետից էլ հայկական զորամասերը աննախանձելի վիճակ էին ներկայացնում։ Օր-կուշտ, օր-սոված, ցընցոտիներ հագին, բայց, գուցե, հենց այդ պատճառով, հաղթելու վճռականությամբ լի՝ հայ զինվորը կռվի դաշտ նետվեց արտակարգ աշխույժով։

Առաջին օրն իսկ, գնդ. Տեր-Նիկողոսյանի զորամասը, գիշերային խիզախ գրոհով, գրավեց Վորոնցովկան ու Պրիվոլնոյեն։ Գերի առնվեցին 5 վրացի սպաներ, 45 զինվոր, 3 լեռնային թնդանոթ, 1 մաքսիմի գընդացիր, առատ փամփուշտ և մեծ քանակությամբ ձիեր։ Մեր կորուստներն էին՝ սպանված տեղակալ Զարաֆյանը, վիրավոր՝ 8 զինվոր և տեղակալ Ազատյանը, որը մինչև կռվի վերջը զորամասից չհեռացավ։ Գնդ. Նեստերովսկու զորամասը գրավեց Սանահին կայարանը, ուր մերոնց ձեռքն ընկան 49 վագոն ու 1 շոգեշարժ և գերի առնվեցին 15 զինվորներ։ Վրացիները ունեցան մեծ կորուստ։ Մեր կողմից վիրավորվեց մի զինվոր։ Վրացիների 3 զրահապատ գնացքները համառ դիմադրություն ցույց տվին, բայց Հայրումի կողմից Կորոլկովի զորամասը քանդել էր երկաթուղագիծը և կտրել նրանց նահանջի ճանապարհը։ Գիշերային գրոհով, գլխապետ Թարվերդյանը 4-րդ գնդի մեկ գումարտակով հետ շպրտեց վրաց զորքերը Հաղպատի և Ախտովայի միջև և գրավեց 2 գընդացիր։ Ռոտմիստր Փիրումյանի հարյուրյակը քշեց վրացիներին և գրավեց Լալվար սարը՝ գրավելով 2 գնդացիր և գերելով 15 վրացիներ։ Գիշերվա ժամը 2-ին հայ կամավորները ռումբերով պայթեցրին զրահապատներից մեկը։ Լուսաբացին գնդ. Տեր-Նիկողոսյանը գրավեց Միխայլովկա գյուղը և առաջ ուղարկեց խուզարկուներ։

Դեկտ. 14-ին և 15-ին հայ զորքերի առաջխաղացումը անցավ շատ հաջող։ Նրանց ճնշման տակ վրացիները պարպեցին և Ալլահվերդին։ Դեկտ. 16-ին, լուսաբացին, գնդ. Տեր-Նիկողոսյանի ուժերը անցան հարձակման՝ գրավելու համար Բոլնիս-Խաչեն—Եկատերինֆելդը։ Նույն օրը, առավոտյան, Կորոլկովի Հայրումի ջոկատը, մի խիստ հաջող շարժումով, ոչնչացրեց վրացական մի գունդ և գրավեց Հայրում կայարանը։ Վրացիներից գերի ընկան 12 սպաներ գնդ. Վաչնաձեի գլխավորությամբ և 300 զինվորներ։ Մոտ 200 հոգի սպանվեցին ու վիրավորվեցին, մյուսները փախան։ Մեր կողմից սպանվեցին տեղակալ Մուկուչ Տեր-Հովհաննիսյանը և մի զինվոր, վիրավորվեցին 7 հոգի։ Տեր-Նիկողոսյանի և Նեստերովսկիի զորամասերը շարունակեցին ճնշել վրացիներին դեպի հյուսիս։ Վրաց կողմից սկսեցին երևալ Թիֆլիսից հասած թարմ ուժեր։

Դեկտ. 17-ին արևելքից գլխապետ Թարվերդյանի ու արևմուտքից Փիրումյանի խիզախ գրոհով ջարդ ու փշուր եղան 5-րդ և 6-րդ վրացական գնդերը և գվարդիայի ու սահմանապահ գումարտակները։ Գրավվեցին 2 հաուբիցներ, 2 դաշտային թնդանոթ, 25 գնդացիր և Ախթալա կայարանի մոտ 2 կազմ ու պատրաստ զրահապատ գնացքներ, որոնք տեղն ու տեղը գործադրության դրվեցին հակառակորդի դեմ։ Վրացիները ցույց տվին կատաղի դիմադրություն և կռվի դաշտը թողին 60 դիակ։ Վրաց ճակատի հրամանատար զոր. Ցուլուկիձեն, բոլորովին ջախջախված, հապճեպ փախավ Հայրում—Սադախլու գիծը՝ հայերի ձեռքը թողնելով նույնիսկ իր սալոն-վագոնը մեջի իրերով։

Մերոնք շարունակեցին առաջխաղացումը. Կորոլկովի զորասյունը մոտեցավ Սադախլուին և կռվի բռնվեց թշնամու հետ։ Դեկտ. 18-ին, առավոտյան, գնդ. Տեր-Նիկողոսյանը գրավեց Բոլնիս-Խաչենը։ Կռվի պայմանները շատ ծանր էին. ձյուն, ցուրտ, հագուստի ու սնունդի պակասություն։ Բայց և այնպես զորքի տրամադրությունը բարձր էր։ Երբեմն ճակատամարտերը ստանում էին արյունահեղ բնույթ, տեղի էին ունենում կատաղի սվինամարտեր։ Ախթալա կայարանի մոտ, ուր գրավվեցին զրահապատները՝ 4-րդ գնդի առաջին և երրորդ վաշտերը արագ

ու վճռական հարվածով խփեցին թշնամուն և սվիններով խուճապային փախուստի մատնեցին։ Զախ թևի վրա, օգնական ուժեր ստանալով, վրացիները դիմեցին հակագրոհի Բոլնիս-Խաչենի վրա, բայց մերոնց սպանիչ կրակի տակ փախան դեպի Արուխլու գյուղը։

Մինչև դեկտ. 18-ը վրաց զորամասերը նահանջեցին ու կենտրոնացան Սադախլուի շրջանում։ Հետզհետե Թիֆլիսից հասան նոր ուժեր։ Հայկական ճակատ էր ուղարկվել ժողովրդական դվարդիան։ Ամբողջ Վրաստանը ոտքի էր հանված, զորահավաք էր կատարվում։ Թիֆլիսում, խորհրդարանի նիստերում սպառնական ճառեր էին արտասանվում, մամուլը կրակ ու շանթ էր թափում հայերի գլխին. հայությունը դրված էր օրենքից դուրս. տղամարդիկ հարյուրներով ձերբակալվում և Բութայիս էին աքսորվում։ Առհասարակ, ազգային կրքերը սրվել էին անասելի աստիճան։

Դեկտ. 18-ին Սադախլու եկավ և Վրաստանի զինվորական նախարարը, 1000 թարմ զինվորներ, մի հարյուրյակ ձիավոր, 3 լեռնային մարտկոց և վերջին զրահապատ գնացքը։ Զոր. Յուլուկիձեն պատրաստվում էր ուժեղ հակահարձակման։

Հայկական ուժերը սկզբից մինչև այժմ մնացել էին նույնը. թիկունքից համարյա ո՛չ մի լրացում չէր գալիս. ճանապարհները փակված էին, և կառավարության ուշադրությունը զբաղված էր Շարուրի ճակատում սպառնացող բարդություններով։ Պարսկաստանից ու Նախիջևանից հայրենիք վերադարձող բազմահազար թուրք զինվորները՝ անկարգ ու բոլշևիկացած՝ ահ ու դողի էին մատնել մերձակա շրջանների հայերին, և կառավարությունը ճիգ էր լարում այդ փորձանքից ազատվելու։ Վրաց հակատը գրեթե ամբողջապես մնացել էր Դիլիջան—Լոռիի զորամասին և Ղազախի ու Լոռիի կամավորներին։

Այդ ուժերով Դրոն որոշեց շրջապատել ու ջարդել Յուլուկիձեի զորամասը։ Գնդ. Տեր-Նիկողոսյանին նա հրամայեց Բոլնիս-Խաչենից մի գումարտակ առաջ քաշել դեպի արևելք՝ երկաթուղու կողմը և ցուցական շարժումներով օժանդակել Կորոլկովի զորասյունին, իսկ Կորոլկովին հրամայեց երկու թնդանոթ և 3 վաշտ թողնել Հայրումում և մնացած ուժերով, Բարդաձորի և Գյուլբեգիի վրայով, անցնելով Դամիա գյուղը, վրացիների թիկունքը՝ ջարդել նրանց՝ լուրջ ուշադրություն դարձնելով Շուլավերից Օփրեթ տանող ճանապարհի վրա։ Դեկտ. 19-ին փոխգնդ. Կորոլկովին միացավ և միլիցիոն գունդը 350 զինվորներով և 2 գնդացիրներով, որին հրամայվեց գրավել Շուլավերը։

Երեկոյան դեմ, 4-րդ գնդի 6-րդ վաշտը փոխգլխ. Ֆիլերկովսկիի հրամանատարությամբ և առանձին ձիավոր գնդի 2-րդ դիվիզիոնի 2-րդ հարյուրյակը տեղակալ Տեր-Մարտիրոսյանի գլխավորությամբ, սեփական նախաձեռնությամբ հարձակման դիմեցին և գրավեցին Սադախլուն։ Վրացիները սպիտակ դրոշ բարձրացրին։ Բայց հենց այդ միջոցին,

վրա հասավ վրաց զրահապատը և մոտենալով կայարանին՝ սպանիչ կրակ բացեց հայերի վրա։ Զրահապատի օգնությամբ վրաց զինվորները շրջապատեցին 6-րդ վաշտի և 2-րդ հարյուրյակի զինվորներին, շատերին սպանեցին և գերի առան Ֆիլերկովսկիին ու Տեր-Մարտիրոսյանին մոտ 30 զինվորներով։

Այդ ժամանակ, 6-րդ գնդի մեկ հարյուրյակը փոխգնդ. Մանյանի հրամանատարությամբ հասավ Հայրում և հրաման ստացավ Ճոճկանի զորախումբը ուժեղացնելու նպատակով 60 հոգի հետախույզներ ուղարկել Ճոճկան, փոխգլխ. Պետրոսյանի արամադրության տակ, իսկ մնացած ուժերով անցնել հարձակման ու գրավել Լամբալու գյուղը՝ Հայրումում թողնելով պահեստի մի վաշտ։

Դեկտ. 20-ին տեղի ունեցան համառ և արյունահեղ կռիվներ։ Կուռո Թարխանյանի հարյուրյակը մի կողմ շպրտելով թշնամուն՝ գրավեց Շուլավերը։ Իսկ նույն ժամանակ, հազարից ավելի վրացիներ, զրահապատ գնացքի աջակցությամբ, համախմբվում էին Սադախլուի շրջանում։

Շուլավեր—Սադախլուի շրջանում գործող վրաց ուժերի մի մասը մի կողմ քաշելու նպատակով՝ Դրոն հրամայեց գնդ. Տեր-Նիկողոսյանին, դեկտ. 21-ին 1 գումարտակ ու 2 թնդանոթ թողնել Մեծ Դումանիսում, իսկ մնացած ուժերով շարժվել Արախլուի վրա։ Սկսվեց տաք կռիվ։ Մերոնք հարձակվում էին անվերջ, վրացիները հուսահատական դիմադրություն էին ցույց տալիս։ Գլխ. Մնացականյանի Շուլավերի զորամասը կռվի բռնվեց Թիֆլիսից նոր հասած վրացական թարմ ուժերի հետ։ Մերոնք քանդեցին Սադախլու—Մամայ երկաթուղագիծը՝ կտրելով վրաց զրահապատի նահանջի ճանապարհը։ Կուռո Թարխանյանը հանդուգն հարձակումներ գործելով Աշաղա—Սարայլի ուղղությամբ՝ գրավեց մի թնդանոթ և մի գնդացիր։ Այդ կռվում վիրավորվեց ինքը՝ Թարխանյանը և սպանվեց նրա ձիավորներից մեկը։

Ճակատամարտը Սադախլուի մոտ շարունակվեց անընդհատ։ Վրացիները համարյա շրջապատված էին և գրավում էին միայն կայարանը, գյուղը և արևմտյան բարձունքը։ Դեկտ. 22-ին, հակառակ թշնամու հրացանի ու գնդացիրների մրրկահույզ կրակի, Ճոճկանի զորախումբը փոխգլխ. Պետրոսյանի գլխավորությամբ, արհամարհելով գնդակների տեղատարափը, շարժվեց Սադախլուի վրա և համառ ու երկարատև կռվից հետո գրավեց կայարանն ու գյուղի հարավային մասը, բայց օգնական ուժեր չստանալով՝ վրացիների հակահարձակման ու թևից սպառնացող վտանգի տակ՝ քաշվեց նախկին դիրքերը՝ տալով մոտ 40 զոհեր։ Փոխգլխ. Պետրոսյանը գրավեց 2702 բարձունքը, փոխգնդ. Կորոլկովը, Դամիան, գլխ. Մնացականյանը՝ Շուլավերը, փոխգնդ. Մանյանը՝ Քերփելի— 2660 բարձունք գիծը։ Վրացիները շարունակում էին նոր ուժեր բերել ու կենտրոնացնել Բոլնիս-Խաչենի մոտ։

Դեկտ. 23-ին մեր ուժերը վերադասավորվեցին՝ նորից հարձակման

անցնելու համար։ Եվ նույն օրը, երկարատև ու բուռն ճակատամարտից հետո, 4-րդ գնդի 12 վաշտերը, փոխգլխ. Ասլանյանի հրամանատարության տակ, գրավեցին Սադախլուն։ Մերոնց.ձեռքը գերի ընկան 6 սպա, 126 զինվոր, 2 կոլտի գնդացիր, ավելի քան 100 վագոն պարեն, ռազմամթերք ու փամփուշտ, 3 շոգեշարժ և ուրիշ պաշարեղեն։ Մեր կորուստներն էին. փոխգլխ. Ալեքսանդրովը վիրավոր, 7 զինվոր սպանված և 11 վիրավոր։ Տաք կռիվներ տեղի ունեցան և Եկատերինֆելդի ուղղությամբ, ուր վրացիները գրավեցին Դաղեթ-Խաչեն գյուղը, և Շուլավերի շրջանում, Սարաչլու գյուղի ճակատում, ուր մերոնք հետ մղեցին վրացական մի շարք կատաղի գրոհներ։ Այսպիսով, վերջնականապես ջարդ ու փշուր եղավ զոր. Յուլուկիձեի զորամասը, և Յուլուկիձեն ինքն էլ փախավ մազապուրծ՝ շրջակա թուրքերի օգնությամբ։

Դրանից հետո, վրաց հրամանատարությունը փոխվեց. Յուլուկիձեի փոխարեն նշանակվեց զոր. Մազնիևը։ Վրացիները շարունակեցին շտապ հասցնել նոր զորքեր ու թնդանոթներ և պատրաստվել ընդհանուր հարձակման։

Դեկտ. 24-ին փոխգնդ. Կորոլկովը հրաման ստացավ շարժվելու Շուլավերի վրա, որը ենթարկվել էր վրացիների հարձակման. միլիցիոն գունդը երկու օր է դիմադրում էր հակառակորդի սաստիկ գրոհներին։ Դեկտ. 25-ին, երբ հասան Կորոլկովի ուժերը, վրացական 5 գրոհ հետ մղվեց՝ մեծ կորուստներով թշնամու համար։ Սարաչլու գյուղից դեպի խճուղին տանող տարածության վրա բոլոր վրացական դիրքերը մաքրվեցին. վրացիները կռվի դաշտում թողին 86 դիակ։

Ցերեկվա ժամը երկուսի մոտերը, վրացիները, Թիֆլիսից հենց նոր հասած ու վագոններից դուրս եկած մոտ 1500 մարդով, ուժեղ հրետանու ընկերակցությամբ, դիմեցին հարձակման Շուլավերի խճուղու շրջանում, Աչաղա—Սարայլ կայարանի մոտ։ Շուլավերի վրա թռչում էին վրաց սավառնակները և նետում ռումբեր։ Մերոնց հակահարձակումով թշնամին հետ շպրտվեց և Աչաղա—Սարայլը տրվեց մեր թնդանոթների կրակին։ Այս կռիվներում ռումբի կտորներով երեք տեղից վիրավորվեց անվեհեր տեղակալ Կուռո Թարխանյանը և սպանվեց միլիցիոն գնդի սպա Տեր-Գրիգորյանը։

Այս ձևի կռիվները, գրոհներն ու հակագրոհները շարունակվեցին անընդհատ, մինչև դեկտ. 28-ը։

Մինչ ճակատում հոսում էր արյունը, Թիֆլիսում դաշնակիցները միջոցներ էին փնտրում՝ վերջ տալու համար արյունահեղությանը։ Դեկտ. 25-ին անգլիական զորավար Ռայկրոֆտի, ֆրանսիական գնդապետ Շարդինիի և Ժորդանիայի կողմից ստորագրվեց մի համաձայնագիր, որով «պատերազմական գործողությունները վրացիների և հայերի միջև պետք է անմիջապես դադարեցվեն և բրիտանական ու ֆրանսիական բանակների սպաներից բաղկացած մի հանձնաժողով՝ ուղեկցությամբ վրաց

կառավարության ներկայացուցիչների՝ կմեկնի ճակատ՝ բացատրելու համար համաձայնության մանրամասնությունները և հսկելու նրանց իրականացման վրա՝ համաձայն ներքո ստորագրյալների կողմից Երևան ուղարկված հեռագրի»։

Այս համաձայնությունը կնքելիս ներկա էր և Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանը, որը մերժեց ստորագրել՝ բողոքելով, մասնավորապես, Ախալքալաքի գավառին վերաբերվող մասի դեմ։ Այդ պատճառով համաձայնագրի տակ, Ռայկրոֆտն ու Շարդինին ավելացրին, թե «Պ. Ջամալյանը համաձայն չէ Ախալքալաքի գավառը Վրաստանի կողմից գրավվելու կետին»։

Նույն օրը Երևան ուղարկվեց հետևյալ հեռագիրը. «Ներկայումս Թիֆլիսում գտնվող մեծբրիտանական զորավար Ռայկրոֆտը և ֆրանսիական առաքելության պետ գնդ. Շարդինին, Վրաստանի Հանրապետության նախագահ Ժորդանիայի հետ ունեցած խորհրդաժողովում, պ. Ջամալյանի ներկայությամբ, որոշեցին, որ պատերազմական գործողությունները անհապաղ պետք է վերջացվեն։

Չնայած պ. Ջամալյանի բողոքներին, զոր. Ռայկրոֆտը, գնդ. Շարդինին և Վրաստանի Հանրապետության նախագահ Ժորդանիան որոշեցին, որ՝

Անգլիական, ֆրանսիական, վրաց ու հայկական ներկայացուցիչներից բաղկացած մի խառն հանձնախումբ, ըստ կարելվույն շուտ, պետք է մեկնի ճակատ, որպեսզի կյանքում իրականացնի հետևյալ պայմանները.

Հանձնախումբը որոշում է քանակը այն զորքերի, որ վրացիները պետք է թողնեն Բորչալուի գավառի հյուսիսային մասին, իսկ հայերը՝ հարավային, այլև վրացիները՝ Ախալքալաքի գավառում։ Զորքերը պետք է լինեն սակավաթիվ։

Վրաց զորքերը պետք է մնան իրենց գրաված այժմվա գծի վրա, հայ զորքերը պետք է նահանջեն Դսեղ—Ջալալ-Օղլի թուրքական գիծը։

Վրացական և հայկական զորքերի գրավված տարածության միջև, երկաթուղու վրա, կգտնվեն բրիտանական պահակներ. վարչությունը այս վիճելի մասում կլինի խառը։

Ախալքալաքի գավառի վրացական վարչության վրա հսկում է դաշնակիցների մի հանձնախումբ, որի մեջ մտնում են ներկայացուցիչներ և տեղական հայ ու մահմեդական բնակիչներից։

Երկու պետության՝ Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները շուտով կուղարկվեն Եվրոպա, ուր սահմանների վերաբերվող ամբողջ հարցը կլուծվի մեծ պետությունների կողմից։

Իսկականը ստորագրեցին՝ Ռայկրոֆտ, Շարդինի, Ժորդանիա։ Թիֆլիս, 15-ը դեկտ. 1918 թ.»։

Հանձնախումբը՝ բաղկացած 2 անգլիացի, 1 ֆրանսիացի ու 1 վրա-

ցի սպաներից, անգլիական կապիտան Դրգլեզ Վիցերսի գլխավորությամբ, դեկտ. 28-ին հասավ Ղարաքիլիսա և հայկական հրամանատարության ներկայացրեց վերևի համաձայնությունը։ Հայերը բողոքեցին ու պահանջեցին որոշ կետեր փոխել, բայց, ի վերջո անգլիացիների ճնշման տակ ստիպված եղան համակերպվել։ Հայկական կառավարությունը, սակայն, համաձայնության մի քանի կետեր համարում էր մութ և բացատրություն էր պահանջում, որի վրա հանձնախմբի նախագահը համաձայնվեց իր հետ Թիֆլիս տանել հայերից երկու ներկայացուցիչ՝ մութ կետերի վերջնական պարզաբանման համար։ Բանակցություններից հետո, դեկտ. 30-ին, որոշվեց, մյուս օր, դեկտ. 31-ի գիշերվա ժամը 12-ին, վերջ տալ պատերազմական գործողություններին, որից հետո հայկական պատվիրակությունը պետք է մեկներ Թիֆլիս՝ հաշտության բանակցությունների համար։

Հանձնախմբի Ղարաքիլիսա հասնելու օրն իսկ, դեկտ. 28-ին վրացիներն ամբողջ ճակատի վրա անցան ընդհանուր հարձակման։ Նրանց ուժերը ավելացել էին, մատակարարման գործը հեշտացել էր. նրանց միացել էին և Բորչալուի թուրքերը, որոնք կռվի դաշտ էին հանել կամավորական խմբեր։ Ռազմագիտական տեսակետից նահանջը վրացիներին օգտակար էր եղել. նրանք դուրս էին եկել թշնամաբար տրամադրված հայկական շրջաններից, կարճացրել հաղորդակցության գիծը, վերակազմել իրենց բարձր հրամանատարությունը, ռազմաճակատ ուղարկել գործիչների ու ժողովրդական գվարդիայի նոր խմբեր, վրաց ժողովրդի ուշադրությունը լարել, ամբողջապես կենտրոնացրել ճակատի վրա։

Ընդհակառակը, հայերի համար՝ երթալով՝ ստեղծվում էր ավելի աննպաստ վիճակ։ Երկու շաբաթ շարունակ առաջ շարժվող, կռիվներից դուրս չեկող, վատ հագնված ու վատ պարենավորված զորքը սաստիկ հոգնել էր, պահեստի մասերը սպառվել էին, իսկ նոր ուժ գրեթե չէր գալիս. կառավարությունը զբաղված էր ուրիշ ոչ պակաս ծանր հոգսերով և պատերազմին բավարար ուշադրություն չէր կարող դարձնել։ Թիկունքից պարենավորում ու ռազմամթերքներ չէին ստացվում. զորքը կերակրվում էր վրացիներից առած հացով և կռվում վրացական ռազմամթերքով։

Դրությունը դժվարացնում էր և մի ուրիշ հանգամանք. քանի կռիվները տեղի էին ունենում հայկական շրջաններում, լոռեցիները՝ զենքը ձեռներին մասնակցում էին պատերազմական գործողություններին՝ միշտ բանակի առաջին շարքերում։ Հենց որ ամբողջ Լոռին գրավվեց, և պատերազմը սկսեց տեղափոխվել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով, հեռացան իրենց տները, և կռվի դաշտում մնացին գլխավորապես կանոնավոր զորամասերը։ Այս պարագան, իհարկե, վատ անդրադարձավ և մնացած զինվորների հոգեկան վիճակի վրա։ Հայկա-

կան բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, ավելանում էր արագորեն։ Ուժերի համեմատությունը փոխվում էր ի նպաստ թշնամու։

Դեկտ. 27-ին վրացական առաջավոր խմբերը երևացին 2659 բարձունքի մոտ։ Սարաշլուի կողմից, 3—400 վրացիներ աշխատում էին անցնել փոխգնդ. Կորոլկովի ձախ թևի թիկունքը։ Շարժումներ սկսվեցին և մյուս ճակատներում, բայց գլխավոր ուժերը Շուլավերի շրջանում էին, ուր զոր. Մազնիևի զորամասը— 3 ու կես հազար մարդ ու 12 թընդանոթ— մեր դիրքերի թնդանոթային փոթորկահույզ ռմբակոծումից հետո, ժամը 5-ին անցավ ուժեղ հարձակման Կորոլկովի ճակատի ամբողջ լայնությամբ։

Հակառակ թշնամու ուժերի խիստ գերակշռության և մեր զորքերի արտակարգ հոգնածության ու սակավության, մի քանի օր անընդհատ մղվեցին կատաղի կռիվներ, և մերոնք մեծ կորուստներ պատճառելով՝ հետ էին մղում բոլոր գրոհները։

Միաժամանակ վրացիները, մոտ 1000 հոգով, հետները ունենալով և Բորչալուի թուրքերի կամավորական խմբերը, Քասումլու և Ահմամդլու գյուղերի կողմից, հարձակվեցին մեր աջ թևի վրա, ուր գործում էր փոխգնդ. Իշխանյանը 6-րդ գնդի 1 գումարտակով ու 2 գնդացիրով։ Թե Շուլավերից և թե այս կողմը, մեր զորքերը, չստանալով ո՛չ մի օգնություն, թշնամու օր ավուր աճող ուժերի ճնշման տակ, դիմեցին նահանջի մինչև Գյավուր Արխ և Սիոն գյուղերը։ Մեր կորուստներն էին այս կռվում. մոտ 200 հոգի սպանված ու վիրավոր։ Սպանվեց տեղակալ Տիլիշենը, գերի ընկան փոխգնդ. Հակոբյանը և 2-րդ թեթև մարտկոցի պետ տեղակալ Բագրատունին։ Թշնամու ձեռքն անցան 7-րդ թեթև մարտկոցի 2 թնդանոթները, որոնց վարիչները մինչև վերջ ցույց տվին հերոսական դիմադրություն և հեռացան թնդանոթները անգործածելի դարձնելուց հետո։

Դեկտ. 29-ին օգնության հասավ գնդ. Տիմշենկոն, որ ընդունեց աջ թևի ընդհանուր հրամանատարությունը՝ խնդիր ստանալով հսկողության տակ առնել № 2660 և Ղըզել-Կայա բարձունքներից դեպի հյուսիս գրտնվող տարածությունը և, եթե վրացիները Շուլավերի դիրքերից հեռանան, արևելքից անցնել նրանց թիկունքը, շարժվելով դեպի Աչաղա—Սարայլ ու սերտ կապ պահելով Կորոլկովի հետ՝ ապահովել աջ թևը։ Կենտրոնի՝ Կորոլկովի զորամասին՝ բաղկացած 4-րդ գնդի 10 վաշտից, միլիցիոն գնդի 4 վաշտից, 2-րդ դիվիզիոնի 2 հարյուրյակից, 2-րդ գնդի 1 գումարտակից, 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթից ու 1 զրահապատ գնացքից՝ հրամայվեց համառ կերպով պաշտպանել Դամիա—Սադախլու գիծը՝ Խոժոռնիում կենտրոնացնելով 4-րդ գունդը, առաջավոր մասերը պահելով Դամիա գյուղում և աջից կապ ունենալով Տիմշենկոյի թևի հետ։ Վերջինիս նոր հրաման տրվեց՝ ամուր կերպով պահել Սա-

դախլուի մոտ երկաթուղագծից 2660 բարձունք՝ Քերփիլի գյուղ գիծը։ 2-րդ գնդի մեկ գումարտակը թողնվեց պահեստում Ճոճկան գյուղի մոտ։

Մինչ կենտրոնում և աջ թևում կատարվում էին այս դեպքերը, ձախ թևից երեք օր շարունակ լուր չստացվեց, գնդ. Տեր-Նիկողոսյանը բոլորովին կարվել էր ընդհանուր հրամանատարությունից։ Հետո պարզվեց, որ 5-րդ գունդը բռնված էր բծավոր տիֆով, հիվանդացել է և գնդ. Տեր-Նիկողոսյանը ու իր սպայակույտի սպաները։ Այդ պատճառով կարելի չէր եղել կատարել ստացված հրամանը, որով կարգադրվում էր գրավել Եկատերինֆելդ—Բոլնիս-Խաչեն գիծը և 4-րդ գնդի հետ միասին շարժվել դեպի Արախլու։ Հակառակ պարագային, եթե կռիվները գնան անհաջող, ամուր պահել Մեծ Դումանիս—Բոլնիս-Խաչեն ճակատը։ Այս հրամանը գնդ. Տեր-Նիկողոսյանը չէր կարողացել կատարել, և այդ ծանր անդրադարձում ունեցավ հետագա գործողությունների վրա։

Դեկտ. 30-ի առավոտյան վրացիները փորձեցին մոտենալ Սադախլու կայարանին ու Լամբալու գյուղին, բայց մեր հրետանիի կրակով հետ շպրտվեցին։ Նորից անցնելով հարձակման՝ մոտ 500 հոգով մտան Սադախլու, իսկ մի ուրիշ զորամաս գրավեց 2660 բարձունքը։ Մեր զրահապատը կրակի բռնեց Սադախլուն, ուր սկսել էր հավաքվել թուրք զինված խուժանը։ Վրացիներն ու թուրքերը հեռացան Սադախլուից և սկսեցին քաշել իրենց թնդանոթներն ու ռմբակոծել մեր զրահապատը, որը, փոխհատակալ Սուլթան-Շահի հրամանատարության տակ հանդուգն հարձակումներ էր գործում և ահագին վնաս պատճառում հակառակորդին։ Մերոնք քանդեցին Սադախլուից հյուսիս գտնվող երկաթուղու կամուրջը։ Շուլավերից առաջացող վրացիներն ու թուրքերը այրեցին Դամիա գյուղը։

Երեկոյան դեմ վրացիները նորից փորձեցին գրավել Սադախլուն, փոքրիկ խմբերով առաջ անցան, մագլցեցին 2660 բարձունքը։ Մեր զրահապատը կրկին գործողության դիմեց նրանց դեմ։ 2-րդ գնդի մեկ գումարտակը գլխ. Չերգեշտովի հրամանատարությամբ բռնեց 2702 բարձունքը։ Կռիվներ տեղի ունեցան և Կորոլկովի ու Տեր-Նիկողոսյանի ճակատներում։ Վերջինում, երկու օրվա կատաղի գրոհներից հետո, վրացիները գրավեցին Բոլնիս-Խաչեն գյուղը։

Նույն օրը, երկար ու համառ պահանջներից հետո, Դրոն վերջապես ստացավ փոքրիկ օժանդակություն. 4-րդ և 6-րդ գնդերի համար հասան մոտ 600 թարմ զինվորներ։ Դրոն մի կողմից հետ էր մղում թշնամու հարձակումները, մյուս կողմից պատրաստվում դեկտ. 31-ի վճռական կռվի համար. երկու կողմերն էլ աշխատում էին զինադադարի վայրկյանին իրենց համար նպաստավոր դիրքեր ապահովել։

Դեկտ. 31-ի առավոտյան հայկական զորամասերը դասավորված էին հետևյալ ձևով. աջ թևում կանգնած էր գնդ. Տիմշենկոն 6-րդ գնդի 2 գումարտակով (մոտ 1100՝ սվին) և 6-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթով։ Նրա ճակատն էր Գյունաշթափա լեռ—Քերփիլին մինչև երկաթուղի։ Կենտրոնում՝ 2-րդ գնդի 3 գումարտակներ (մոտ 600 սվին) գլխ. Հովհաննիսյանի հրամանատարությամբ և 7-րդ լեռնային մարտկոցի երկու թնդանոթ՝ երկաթուղուց մինչև Բարդաձորից Ճոճկան տանող ճանապարհը։ Ձախ թևի վրա՝ փոխգնդ. Կորոլկովը՝ Բարդաձորի ճանապարհից մինչև Օփրեթի ճանապարհը։ Նրա մասերը դասավորված էին. Գյուլ-Գագիում միլիցիոն գունդը, Բարդաձորում 4-րդ գնդի մեկ գումարտակը, 2 գումարտակ Խոժոռնիում, 50 ձիավոր Աղքյորփիում։ Պահեստը գտնվում էր Ճոճկանում՝ 2-րդ գնդի 2 գումարտակներ և 7-րդ մարտկոցի 2 թնդանոթներ։

Վրացիները դեկտ. 31-ի առավոտյան Սադախլուում հավաքել էին մոտ 3 և կես հազար կռվող*, Դամիա—Սադախլուում 12 թնդանոթ և մոտ 800 հոգի էլ Քասումլու թրքական շրջանում։ Նրանց առաջապահ մասերը, մոտ 2 վաշտ, գրավում էին 2660 բարձունքը։

Հայկական հրամանատարության ծրագիրն էր՝ գրավել Սադախլուն և ոչնչացնել զոր. Մազնիևի զորամասը։ Այդ նպատակով տրվել էր հետևյալ հրամանը.

Աջ թևը, ժամը 2-ին, սկսում է հարձակումը, գրավում 2660 բարձունքը և, եթե ձախ թևը առաջանա հաջողությամբ, Մամայում կապվում նրա հետ։ Կենտրոնական զորամասը՝ զարնում է ճակատից և զբաղեցնում Սադախլուի թշնամուն։ Ձախ թևը շարժվում է կենտրոնի հետ միաժամանակ և գրավելով Սիոն—Դամիա շրջանը՝ Մամայում միանում է աջ թևին։ Այսպիսով թշնամին առնվելու էր օղակի մեջ և ջախջախվելու։

Սակայն, ճակատամարտը տեղի ունեցավ նախատեսվածից մի քիչ տարբեր ձևով։ Հեռախոսային կապ չլինելու պատճառով՝ Կորոլկովը մի քանի ժամ ուշ ստացավ հրամանը, և նախաձեռնությունը նրա ճակատում անցավ թշնամու ձեռքը։ Ժամը 8-ին վրացիները, սպայական գումարտակի գլխավորությամբ, դիմեցին ուժեղ հարձակման, Գյուլ-Գագիի մոտ պատռեցին մերոնց շղթան և շարժվեցին դեպի Դեղեք-Բուռուն լեռը։ Ժամը 1-ին թշնամու առաջխաղացման մասին լուր ստացվեց զորամասի սպայակույտում, և Դրոն շտապեց պահեստից օգնության հասցնել 2-րդ գնդի 2-րդ գումարտակը, որը կանգնեցրեց վրացիների արշավը։

Ժամը 2-ին ուժգին հարձակման անցավ 6-րդ գունդը՝ շարժվելով դեպի 2660 բարձունքը։ Կենտրոնական ճակատից անընդհատ տեղեկություններ էին ստացվում, որ վրացիները 2660 բարձունքի կողմերից, Մամայից ու Դամիայից Սադախլու էին քաշում իրենց ուժերը և շարժվում դեպի Գյուլ-Բաղի։ Եվ որովհետև ձախ թևը չէր շարժվում, Դրոն հրա-

* Զոր. Մազնիևի հետագա հայտարարությունների համաձայն, վրացիները ամբողջ հայկական ճակատի վրա ունեին 8 000 կռվող։

մայեց աջ զորասյունին ցույց տալ վճռական գործունեություն և մի զորասյուն ուղարկել դեպի Սադախլու՝ Գյուլ-Բաղիի ուղղությամբ գործող վրացիներին թիկունքից հարվածելու համար։

6-րդ գունդը առաջացավ երկու թևով. մեկը՝ 1 գումարտակ՝ Գյունաշ-Թափայից 2660 բարձունքի լանջերով շարժվեց դեպի Լամբալու և Սադախլու։ 6-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթը կրակ բաց արին Սադախլուի վրա. 2660 բարձունքի վրա դրվեց մի պահակ։ Մյուս գումարտակը գործում էր Քասումլուի և Կաշաղանի շրջանում։

Միաժամանակ, Սադախլուի վրա կրակ բաց արեց և 7-րդ լեռնային մարտկոցը, և 2-րդ գնդի 3-րդ գումարտակը 2702 բարձունքից սկսեց հարավից իջնել դեպի Սադախլու։ Զրահապատը, առաջ անցնելով, օգնում էր 3-րդ գումարտակի էջքին։

Ձախ թևի վրա շարունակվում էին կատաղի կռիվները. վրացիները տարածվում էին Գեդիք-Բուռունի ուղղությամբ։

Ժամը 3-ի մոտերքը, 6-րդ գնդի 2-րդ գումարտակը սկսեց մոտենալ 2660 բարձունքի կատարին։ Վրացիները բաց արին ուժեղ գնդացրային կրակ; բայց մերոնք առաջ շարժվեցին գնդակների տարափի տակ՝ պատրաստ անցնելու սվինամարտի։ Վրացիները խուսափեցին սվինակռվից և ժամը 4 ու կեսին փախան։ 2660 բարձունքը անցավ հայերի ձեռքը, որոնց առաջավոր մասերը սկսեցին իջնել դեպի Մամայ՝ կտրելով Սադախլուի ճակատում գործող վրացական զորքերի թիկունքը։ Երեկոյան 6-րդ գնդի ձախ զորասյունը գրավեց Լամբալուն, իսկ 2-րդ գնդի 3-րդ գումարտակը ներս խուժեց Սադախլուի հարավային մասը։

Գիշերը կռիվը դադարեց։ Թիկունքից կտրված՝ վրացիները կանգնեցին Գյուլ-Բաղիի շրջանում և սկսեցին կամաց-կամաց հետ քաշվել։ Մեր ձախ զորամասը բռնեց բարձունքները Խոժոռնիի, Գյուլ-Բաղիի ու Բարդաձորի գլխին։

Ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդեն ժամը 12-ն էր, և կռվող կողմերը կանգ առան իրենց գրաված տեղերում։ Պատերազմը վերջանում էր։

Ո՞վ էր հաղթողը այս պատերազմում։ Վրացիները պնդում են, որ դեկտ. 31-ի ճակատամարտը վերջացավ իրենց հաղթանակով։ Եթե պայմանաժամը չլինար, ասում են նրանք, վրաց զորքը առաջ կերթար հաղթական, և հայկական բանակի կատարյալ պարտությունը կդառնար անխուսափելի։ Ո՛չ, պատասխանում են հայերը, եթե պայմանաժամը չլիներ, հայ զորքերը հաջողությամբ կիրականացնեին շրջափակման ծրագիրը, և զոր. Մազնիևի զորքերը ամբողջովին գերի կընկնեին հայերի ձեռքը։

Վրացիները ասում են՝ մենք հաղթեցինք, հայերի ասում են՝ մենք հաղթեցինք։ Ո՞ւմ է իրավունքը։ Պատասխանը թո՛ղ ռազմագետները

տան. ճակատամարտի դաշտի քարտեզը երկու կողմին էլ հիմք է տալիս մնալու իր համոզման մեջ։

Եվ, իրոք, ուշադրություն դարձրե՛ք ճակատամարտի քարտեզին՝ ուժերի ի՜նչ տարօրինակ դասավորություն։ Հայ ու վրացի զորամասերը խառնվել են իրար. վրացիները մտել են շատ խորունկ հայկական շրջանը, հայերը սպառնական անցել են վրացիների թիկունքը։ Կդիմանայի՞ն Կորոլկովի զորամասերը վրացական գրոհին, կկարողանայի՞ն վրացիները մաքրել թիկունքը հայկական խուժումից. կկարողանա՞ր Մազնիևը տոկալ Դրոյի հարվածին։ Այս հարցերը մնում են անպատասխան*։



* Ինչքա՞ն էր մարդկային կորուստը պատերազմում՝ դժվար է ասել։ Մեր ձեռքն ընկած պատահական տեղեկություններից երևում է, որ միայն 4-րդ գնդից սպանվել էր 41 զինվոր, անհետ կորել 62 և վիրավորվել 60, 5-րդ գնդից սպանվել էր 19 զինվոր, անհետ կորել 44 և վիրավորվել 14, 6-րդ գնդից սպանվել էր 8, անհետ կորել 11 և վիրավորվել 18։ Կռիվներում սպանվեցին հետևյալ սպաները՝ Վահան Դանիելյան, Լևոն Գաբրիելյան, Հովսեփ Գրիգորյան, Արշակ Մելիք-Շահնազարյան, Մարտիրոս Խոջայան, Թեոդոր Թան, Կոլոձեյչիկ, Գրիգոր Սաֆարյան, Մկրտիչ Տեր-Հովհաննիսյան, Մատթեոս Տեր-Մատթեոսյան, Մկրտիչ Տեր-Պողոսյան։ Վերքերից մեռան սպաներ Սուրեն Տեր-Ղուկասյանը, Գևորգ Սուլթան Շահը, Թիլիչևը, Տեր-Գրիգորյանը։ Վիրավորվեցին սպաներ Ալեքսանդր Մամյանցը, Սմբատ Չեթիգյանը, Ալեքսանդր Անգրաբատովը, Արամայիս Բաբլաշյան-Բաբլոմյանը, Տիգրան Աղիգյանը, Լևոն Վերմիշյանը, Նիկ. Թարխանյանը (Կուռո), Դարբինյանը և զինվ. պաշտոնյա Վախթանգ Դավթյանը։

Այսպես թե այնպես, հայ-վրացական պատերազմը վերջացավ։ Բանակները կատարեցին իրենց պարտականությունը։ Խոսքը անցնում էր քաղաքագետներին։

***

Քաղաքագետների գործը, սակայն, հեշտ չէր լինելու. պատերազմն ու հարակից դեպքերը չափազանց շատ էին լարել կրքերն ու խառնափնթորել կացությունը։ Մանավանդ, վրաց կառավարությունը եռանդ չէր խնայել այդ ուղղությամբ. պատերազմի ընթացքում հայերի վիճակը Վրաստանում ոչնչով չէր տարբերվում այն վիճակից, որ ստեղծվել էր Թուրքիայում պատերազմի օրերին։ Հայաստանի դրամները բանկերից և հայկական պետական գույքերը գրավվեցին։

Հայաստանի ներկայացուցչությունը փակվեց։ Վրահայոց ազգ. խորհուրդը փակվեց։ Գաղթականական ու որբախնամ մարմինները փակվեցին։ «Աշխատավոր», «Նոր-Հորիզոն», «Կավկ. Սլովո» և մի շարք ուրիշ թերթեր փակվեցին։ Բազմաթիվ հայ գործիչներ, Թիֆլիսի քաղաքային խորհրդի դաշնակցական անդամները ձերբակալվեցին։ Հայ միլիցիոներները արձակվեցին պաշտոնից։ Սկսվեց մի այլանդակ հալածանք բոլոր հայերի դեմ անխտիր, զզվելի հայորսություն Թիֆլիսի փողոցներում։ 1918 թ. հունվ. 8-ին, Վրահայոց ազգ. խորհուրդը Վրաստանի կառավարության ներկայացրեց մի հուշագիր, որ ահռելի մանրամասնություններ էր տալիս հայերի նկատմամբ գործադրվող կամայականությունների և բռնությունների։

«Պատերազմական գործողությունների սկսելով,— ասում էր այդ հուշագիրը,— հանրապետության կառավարությունը Վրաստանի հողի վրա ապրող բոլոր հայերին հայտարարեց ռազմագերի՝ կիրառելով նրանց վերաբերմամբ ճնշումներ՝ բանտարկությունների, Քութայիսի նահանգն աքսորելու և այլ ձևերով... Հպատակության օրենքի թերությունների պատճառով, պատերազմի հենց առաջին օրից ստեղծված թշնամական մթնոլորտը՝ խուզարկություններ, ձերբակալություններ և աքսորումներ կատարող միլիցիայի և հատուկ զորամասի պաշտոնյաների առջև, բաց արավ լայն հեռանկարներ ամեն կարգի ապօրինությունների հայերի նկատմամբ՝ ակներև կերպով չձերբակալվելիք անձերի ձերբակալությունից սկսած մինչև բաց ու անպատիժ դրամաշորթություն։ Հայերի վիճակը է՛լ ավելի վատացավ, երբ հրապարակվեցին ընդհանուր-նահանգապետի պարտադիր որոշումները, որոնք, վարչական օրենսդրության կարգով, ընդարձակում էին ռազմագերիների տեսակները՝ մտցնելով նրանց մեջ Հայաստանի Հանրապետության զորքերով գրավված Բորչալուի շրջանն էլ»։

«Այս բոլորի հետևանքով վրաց իշխանության տակ ապրող կես միլիոն հայ ազգաբնակչությունը զրկվեց ամեն իրավունքից, նրա պատկվը, ունեցվածքը, ազատությունն ու գույքերը դարձան միլիցիայի և հատուկ զորամասի պաշտոնյաների ազատ քմահաճույքի առարկա»։ «Այն պատրվակով, որ, իբր թե, Արամյանի շենքում, ուր Հայ. ազգ. խորհրդին կից տեղավորված էին և մի շարք ուրիշ հիմնարկություններ, կատարվում է կամավորների արձանագրություն հօգուտ Հայաստանի, կնքվեցին Հայ. ազգ. խորհրդի տոմարները և գրավեցին նրա բոլոր նյութական միջոցները և գաղթականներին հատկացված դեղերն ու դրամները»։ Եվ Ազգ. խորհուրդը փաստորեն դադարեց գոյություն ունենալուց։

«Ահա երկու շաբաթ է, որ Թիֆլիսի հայ բնակչությունը ենթակա է վարչական իշխանության ամեն տեսակ կամայականությանց։ Զինված միլիցիոներները գիշերները այցելում են, առանց հպատակության ու դիրքի խտրության, հայերի տները, բռնություններ են գործ դնում, առնում-տանում են թանկարժեք իրեր, ձերբակալում են ոչ միայն ոչ հայահպատակ, այլև վրացահպատակ անձանց. ցերեկով շուրջկալներ են կատարում և հայերին հարյուրներով քշում են բանտ ու Քութայիսի նահանգը՝ առանց նույնիսկ հնարավորություն տալու գեթ մնաս-բարև ասելու իրենց հարազատներին ու անհրաժեշտ իրեր առնելու. հազարավոր հայ բանվորներն ու մտավորականները, որոնց հանում են գործից և ուղարկում Մետեխի բերդը կամ՝ միջնադարյան բանտերի վատագույն կարգերով զերիների կայանի վերածված Ներսիսյան դպրոցի շենքը՝ սովորական երևույթներ են դարձել Թիֆլիսի հայերի կյանքում։ Այդ բոլորին զուգընթաց, տեղի են ունենում բոլորովին անմեղ մարդկանց ձերբակալություններ՝ դրամ կորզելու նպատակով. մերժման կամ իշխանության հայտնելու պարագային սպառնում են գնդակահար անել։ Այլասերման աստիճանի մասին կարելի է գաղափար կազմել նրանով, որ միլիցիոներները և հատուկ զորամասի պաշտոնյաները, հաստատել են փրկագնի որոշ սակ՝ 50-ից սկսած մինչև 50 000 ռուբլի, և սակավ չեն դեպքեր, երբ միևնույն անձին հերթով դիմում ու դրամ են պահանջում երկու հիմնարկության ներկայացուցիչներն էլ, և եթե միամիտը հայտնի, թե ինքը արդեն տվել է, այդ փաստն ինքնին ամրացնում է նոր պահանջողի իրավունքը»։

Այս բոլորի թագ ու պսակը եղավ հունվ. 5-ի այլանդակ դեպքը, երբ, կնքված զինադադարից հետո արդեն, Թիֆլիսում տեղի ունեցան հայերի զանգվածային ձերբակալություններ։ «Միլիցիայի գործակալները,— գրում էր Վ. ազգ. խորհուրդը,— վայրենիների պես, բառիս բուն նշանակությամբ, որսի ելան հայերի դեմ. մի քանի ժամվա մեջ ձերբակալեցին 6000 հոգի և ազատ թողին այն մի քանի հարյուր բախտավորներին, որոնք տեղն ու տեղը, մարդկանց աչքի առջև, կարողանում էին վճարել պահանջված գումարը կամ, հնարավորություն էին ստանում,

միլիցիոներների ուղեկցությամբ գնալ տուն և ավելի մեծ գումար վճարելով՝ ազատվել բռնակալների ձեռքից»։

«Եվ եթե այս ամենը կատարվում էր Թիֆլիսում, դժվար չէ երևակայել հայերի վիճակը Վրաստանի գավառներում, որոնք թողնված էին սեփական ճակատագրին և վրաց մամուլի հակահայ քարոզչության ոգով տոգորված տեղական վարչության ողորմածությանը»։

Անկասկած, գավառներում ավելի վատ էր, քան Թիֆլիսում։ Ապօրինություններից, թալանից ու բանտարկություններից զատ այնտեղ տեղի էին ունենում և լլկումներ ու սպանություններ, մանավանդ ժողովրդական գվարդիականների կողմից, որոնք, սովորաբար, մնում էին անպատիժ իրենց արարքների համար։ Անտանելի էր հայերի դրությունը, մանավանդ, հայկական սահմանին մոտ գտնվող վայրերում, ուր ճնշումներն ու կամայականությունները պատերազմից հետո էլ չվերջացան։ Այսպես, Բոլնիս-Խաչեն գյուղը վրաց զորքի կողմից գրավելու ժամանակ, բնակիչները թողին-հեռացան՝ չկարողանալով տանել որևէ բան։ Գյուղում մնացին մի քանի չքավոր ընտանիքներ, ծերեր ու որբեվայրիներ։ Գյուղը գրավելուց հետո կարմիր գվարդիականները անցան թալանի ու բռնությունների։ Թալանեցին ամեն ինչ, ուտելեղենը տարան կազմակերպված կերպով։ Տարան հաց, ցորեն, դարի, գետնախնձոր, լոբի, ընկույզ, հագուստ, կարի մեքենա, պղնձեղեն, երկրագործական պիտույքներ, արծաթ և ոսկի իրեր, կահ-կարասիք, նույնիսկ բարձերի փետուրը թափեցին և կտորը տարան։ Ինչ որ չկարողացան տանել, ոչընչացրին։ Փչացրին տների դռները, պատուհանները, կարասիքը, մեղվի փեթակները։ Տարան կենդանիները՝ կով, ձի, եզ, գոմեշ, ոչխար, հավ, սագ։ Զինվորներն ու սպաները խմում էին գինի և օղի, քեֆ էին անում. բռնաբարում էին գյուղում մնացած կանանց և աղջիկներին։ Հետո, բոլոր գյուղացիներին, առանց սեռի ու հասակի խտրության, հավաքեցին մի նկուղ և պահեցին իբրև գերի։ Կանանց մի քանի օրից հետո բաց թողին, իսկ այր մարդկանց պահեցին երկու շաբաթ և ազատ արձակեցին միայն հունվ. 13-ին։ Այդ երկու շաբաթվա ընթացքում գյուղը մաքուր կերպով թալանեցին ու հավաքված իրերը փոխադրեցին Եկատերինֆելդ, այնտեղից էլ Թիֆլիս։

Հունվ. 18-ին Բելիյ-Կլուչ մտավ վրացական 2-րդ հեծյալ գունդը, որից հետո սկսվեցին բռնություններն ու թալանը։ Զինվորները զանազան պատրվակներով մտնում էին գյուղացիների տները և առնում աչքը տեսածը։ Ամենից առաջ թալանեցին բոլոր հայ գաղթականներին. բռնաբարում էին կանանց։ Գյուղացիները գանգատվեցին շրջանի կոմիսարին և զորամասի պետին՝ ապարդյուն։ Բելիյ-Կլուչից թալանը տարածվեց և շրջանի գյուղերը՝ Սամդրեթ, Վայխուն, Շամշուլգա, ուր տեղի ունեցան ծեծ ու բռնություն։

Սակայն, ամենազզվելի դեպքը պատահեց Բելիյ-Կլուչի կենտրոնը գտնվող ամառանոցում. գիշերվա ժամը 1-ին մի խումբ զինվորներ մտան որբանոց և կին պահանջեցին իրենց համար։ Որբանոցի ծառայող չափահաս կանայք փախան։ Զինվորները սկսեցին ծեծել որբերին և պահանջել, որ ցույց տան փախածների տեղը։ Ապա բռնաբարեցին 10—12 տարեկան երկու որբուհիների ու հեռացան։ Երկու օր հետո կրկնվեց նույն պատմությունը. դարձյալ ծեծ ու բռնաբարություն։ Որբանոցի վարչությունը դիմեց տեղական իշխանությանը, բայց այդ դիմումը թողնվեց անհետևանք։

Այսպիսի քստմնելի տեսարաններով լեցուն են Թիֆլիսի այն օրերի մամուլի էջերը, բայց գիրքը չծանրաբեռնելու համար՝ սահմանափակենք այսքանով։ Այս անտանելի դրությունը ստիպեց Վրաստանի Խորհրդարանի հայ պատգամավորներին հարցապնդում ուղղել կառավարությանը։ Եվ ի՞նչ. «Առանց կուսակցական խտրության, հայ պատգամավորների մտցրած հարցապնդումը Վրաստանի Խորհրդարանում՝ ազգային հալածանքների մասին, կառավարական կուսակցության լռության հետ մեկտեղ այնպիսի թշնամական վերաբերումի հանդիպեց մյուս կուսակցությունների կողմից, որ, բնականաբար, բարոյական նվիրագործում էր գործվող խայտառակությունների։ Իսկ ներքին գործոց նախարարի բացատրությունը, որը այդ ազգային հալածանքը վերածեց մի քանի անհատ պաշտոնյաների աննշան զեղծումի, չէր կարող հայ հասարակության վրա չթողնել ծայր աստիճանի ճնշիչ տպավորություն, մանավանդ որ այդ բացատրության հետևում էր վերջերս այնքան սովորական դարձած խոսքը դեպի հայ ժողովուրդը տածած հարգանքի մասին, մի խոսք, որ միայն վիրավորում է ամենալկտի հալածանքների պայմաններում ապրող ժողովրդի զգացմունքները»։

Հայերի գլխին թափվող ապօրինությունների, հարստահարությունների ու ճնշումների մասին բազմաթիվ արձանագրություններ ու բողոքագրեր է կազմել Ռուսական ազգային խորհուրդը, որ ամենամռայլ գույներով է ներկայացնում Թիֆլիսի հայերի այն ժամանակվա վիճակը։ Մենք զանց ենք առնում ուրիշ բազմաթիվ փաստերն ու վկայությունները և սահմանափակվում ենք հետևյալ երկու պերճախոս վավերագրերով։ Առաջինը Թիֆլիսի ընդհանուր նահանգապետի տված վկայականն է ոմն Արտուշ Քեռասապայանին։ Այդ վկայականով Քեռասապայանին իրավունք է տրվում ազատ ապրելու Թիֆլիսում. նա «իբրև հայ, ենթակա չէ ձերբակալության կամ բանտարկության»։ Ուրեմն, վկայական չունեցող բոլոր հայերը կարող էին և՛ ձերբակալվել, և՛ բանտարկվել։

Երկրորդը՝ 56 Թիֆլիսաբնակ հայ քաղաքացիների մեկ գրությունը, որ լույս տեսավ Թիֆլիսի մամուլում։ «Մենք,— գրում են նրանք,— շարունակ լոյալ և անպայման հանդուրժելի ենք մնացել տեղական նոր իշ-

խանության վերաբերմամբ, բայց չնայած դրան, Հայաստանի և Վրաստանի միջև բախում ծագելիս՝ փաստորեն օրենքից դուրս և ազատությունից զրկված հայտարարվեցինք նրա կողմից... Մենք չէինք կարող ռազմագերիներ լինել՝ այն պարզ պատճառով, որ զինվորականներ չէինք։ Բացի այդ՝ մենք Հայաստանի հպատակներ չենք։ Մեզնից շատերը ընկնում են վրաց խորհրդարանի հրատարակած հպատակության օրենքի տակ և, հետևաբար, հանդիսանում են Վրաստանի հպատակներ։ Ուրիշները ռուսահպատակ էին և շարունակում են իրենց համարել իբր այդպիսին։ Վերջապես, ձերբակալվածների և աքսորվածների մեջ կային և Պարսկաստանի, Թուրքիայի և այլ հպատակներ։ Մեր մեջ կային մտավորականներ, հիվանդներ, թևազուրկներ, ոտազուրկներ, կույրեր. կային և մինչև 75 տարեկան ծերունիներ ու 15—16 տարեկան երեխաներ։

Մեզ ո՛չ մի մեղադրանք չներկայացվեց ձերբակալելիս և ձերբա-

№ 41.

ТИФЛИССКОЕ ГЕНЕРАЛЬНОЕ ГУБЕРНАТОРСТВО

ГЕНЕРАЛЬ-ГУБЕРНАТОРСКАЯ КАНЦЕЛЯРІЯ

„3 Января 1919 г.

№ 40

УДОСТОВѢРЕНІЕ.

Дано сіе Келабдяну Аршакуни въ томъ, что Тифлисскимъ Генералъ-Губернаторомъ разрѣшено ему свободное проживаніе въ г. Тифлисѣ и что онъ какъ армянинъ задержанію или аресту не подлежитъ, что подписью и приложеніемъ печати удостовѣряется.

Управляющій канцеляріей

Дѣлопроизводитель

կալությունից հետո։ Մեզ հարցրին միայն՝ «Դուք հա՞յ եք»,— և այդ բավական էր։ Մեզ, առաջին հանդիպող պատահական անձերիս, որ մտել էինք կոմիսարիատ՝ մեծ մասամբ այլ գործով՝ տուրքեր վճարելու, զանազան տեղեկություններ ու թույլտվություններ ստանալու համար— խլեցին մեր ընտանիքից և պարապմունքներից և թույլ չտալով հրաժեշտ տալ մերձավորներին կամ վերցնել ամենից անհրաժեշտ առարկաներն ու որևէ կարգադրություններ անել— ուղարկեցին հայտնի չէ՝ ինչ պատճառով, հայտնի չէ՝ ուր, հայտնի չէ՝ ինչ պայմանաժամով...

Երբ մեզ տանում էին, կայարաններում՝ վագոնների շուրջը հավաքվում էր բազմություն։ Նրանց ասվում էր, որ ճակատից հայ ռազմագերիներ են բերում։ Մեզ ստիպեցին զինվորական քայլով անցնել Քութայիսի փողոցներով՝ շրջապատված պահակախմբով ու ժողովրդի բազմությամբ։ Մեզ դարձրին ծաղրանքների ու վիրավորանքների առարկա։ Մեզ քաղցած պահեցին։ Ձերբակալությունից միայն երեք օր հետո մեզ տվին եգիպտացորենի հաց և մի զզվելի կերակուր։ Մեզ դատապարտեցին երկու շաբաթ ապրել բանտերում ամենից հակաառողջապահական պայմաններում, կեղտոտ հատակի վրա, առանց անկողնի, առանց ջրի...

«Մեզ հետ վարվում էին որպես ոճրագործների։ Մեզնից ոչ նվազ քան 75 %-ը այժմ հիվանդ է։ Մի քանիսը հիվանդացան բծավոր տիֆով ու մեռան (երդ.-հավատ. Պապովյանը, Իսախանյանը, հարմոնիկ նվագող Գևորգ—Լեքան)։ Քութայիսում հիվանդները զուրկ մնացին բժշկական օգնությունից։ Թախանձագին խնդրանքից հետո մի քանիսը զետեղվեցին բանտի հիվանդանոցում բծավոր տիֆով հիվանդների և այլ ոճրագործների կողքին, որոնցից ամեն օր մի քանի հոգի մեռնում էր խնամքի բացակայության պատճառով։ Բանտի հիվանդանոց տեղավորված հայերից մեռան մոտ 10 հոգի, որոնց անունները հայտնի է Քութայիսի հայ քահանային։ Բոլոր այդ օրերի ընթացքին՝ մեզնից յուրաքանչյուրը չէր դադարում կախում ունենալ այս կամ այն պաշտոնյայի կամ զինվորի քմահաճույքից ու կամայականությունից։ Մեզ տանում էին՝ ատրճանակների փողը մեզ վրա ուղղած, մեզնից շատերին ենթարկում էին պահակապետների և զինվորների ծեծին։ Շատերին կողոպտեցին, խլեցին դրամները. շատերի վրայից հանեցին քիչ թե շատ լավ զգեստը (ուսանող Շամոյանի, վատման Ալեքսանյանցի, Սարգիս Մուրադյանի, Գ. Խաչատրյանցի և ուրիշների)։ Մեզ հայտնի չէ ձերբակալվածների և Քութայիս տարվածների որոշ թիվը. համենայն դեպս, այդ թիվը հասնում է երկու հազարի։ Դրանցից, իրոք, ճակատից բերված ռազմագերիները 3—4 տասնյակ մարդկանցից ավելի չէին, որոնց նկատմամբ մենք վկա եղանք առանձնապես վայրագ վերաբերմունքի։ Զինվորները զրկվեցին տաք հագուստից ու կոշիկից։ Սպաներից խլում էին լավ կոշիկներն ու փոխարինում տրեխներով (շտ.-կապ. Տեր-Ղազար-

յան)։ Մի ռազմագերի զինվորի դաշույնով վիրավորեց պահակ զինվորին, և նա մեռավ՝ առանց բժշկական օգնության։ Թիֆլիսում այդ ռազմագերիներից մի քանիսը մտրակով ծեծվեցին՝ Բորչալուի թաթարներից առնված ձիավոր պահակների կողմից*։ Ներկայացված փաստաթղթերը, հայտարարությունները, հարցաքննություն կատարելու մասին խնդիրները, պաշտոնատարների նկատմամբ գանգատները ո՛չ մի արդյունք չունեցան։ Մենք չենք բերում մեր կրած վնասները...

Մեզնից ոմանք, ձերբակալված դեկտ. 23-ին և աքսորված Քութայիս, հետո զանազան պատճառներով վերադարձած՝ Թիֆլիսի ճանապարհին ու հաղիվ Թիֆլիս հասած նորեն ձերբակալվեցին և մինչև անգամ հետ ուղարկվեցին Քութայիս։ Եղան դեպքեր, երբ միևնույն անձը ձերբակալվեց մինչև չորս անգամ»**։

Այս ամենից հեշտ է տեսնել, թե ի՞նչ լարված հարաբերություններ էին ստեղծված հայերի և վրացիների միջև՝ մի բան, որ, իհարկե, շատ դժվարացրեց երկու ժողովուրդների մերձեցման ու բարի հարևանական համակեցության գործը։ Պատերազմը մեծ չարիք պատճառեց երկու կողմերին էլ։ Ճիշտ է, նա մասամբ մաքրեց անառողջ մթնոլորտը Հայաստանում, բարձրացրեց հայ ժողովրդի կորովը, հայերին տվեց երկաթուղային ու զինվորական թանկարժեք նյութեր, մասամբ թուլացրեց վրացիների հարձակողական ազգայնամոլությունն ու հարկադրեց, որ, որոշ չափով, Հայաստանի շահերն էլ հաշվի առնեն, բայց տվեց և շատ ծանր հետևանքներ, որոնց մեջ, առաջին շարքում, անկասկած, այն չափազանց աննպաստ անդրադարձումն էր, որ ունեցավ արտաքին աշխարհում. երկու նորաստեղծ պետությունների պատերազմը, իրենց ինքնուրույն կյանքի արշալույսին, չէր կարող նկատվել բարենիշ նրանց համար։

* * *

Զինադադարի հաջորդ օրն իսկ, հայկական հաշտարար պատվիրակությունը Ղարաքիլիսայից հասավ Թիֆլիս, և մի շարք նախապատրաստական աշխատանքներից հետո, հունվարի կեսերին, բացվեց հայ-վրացական խորհրդաժողովը, որը զբաղվեց ո՛չ միայն պատերազմի հաշվեհարդարով, այլև երկու երկրների փոխհարաբերություններին վերաբերվող բոլոր կարևոր խնդիրներով։ Հայերի կողմից խորհրդաժողովին մասնակցում էր Ղարաքիլիսա ուղարկված պատվիրակության ամբողջ կազմը՝ լրացված զինվորական մասնագետ զոր. Ղորղանյանով։ Վրացիների պատվիրակության անդամներն էին Ե. Գեգեչկորին, Ն. Ռամիշվիլին, Սաբախտարաշվիլին և զոր. Գեդևանովը։

Օրակարգի հարցերն էին. 1) փոխադարձ անկախության ճանաչումն ու դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը. 2) հաղորդակցության և երթևեկության պայմանների կարգավորումը. 3) տրանզիտ. 4) փոստ-հեռագրական համաձայնություն. 5) Հայկական կորպուսի գրավված զույքերի վերադարձը. 6) հայկական կառավարության պատկանող և վրացիներից գրավված 13 միլիոն ռուբլի գումարը վերադարձնելու խնդիր։

Խորհրդաժողովը տևեց շատ երկար, մոտ 3 ամիս։ Վրացիները ակընհայտ կերպով աշխատում էին ձգձգել՝ քաջ գիտակցելով, որ ինչքան ժամանակ անցնի, այնքան դրությունը Հայաստանում կծանրանա, հետևաբար, և այնքան հայ պատգամավորները կլինեն զիջող։ Վեճի գլխավոր նյութը սահմանների հարցն էր, որի վերաբերմամբ կողմերը մինչև վերջ էլ համաձայնության չեկան։

Տեսնելով վրացիների դիտումնավոր ձգձգումը՝ Հայաստանի կառավարությունը փետր. 10-ին հրահանգեց իր պատվիրակությանը՝ մինչև մարտ վերջացնել բանակցությունները և մեկնել Երևան։ Մի պահ դադարից հետո, խորհրդաժողովը վերսկսեց փետր. 28-ին և այնուհետև աշխատանքները ընթացան ավելի արագ։ Ընդունվեց փոխադարձ անկախությունների ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների վերականգնման դաշինքը։ Մշակվեց Լոռիի չեզոք գոտու վարչության առանձին կանոնագիր։ Մարտի 1-ին ստորագրվեց և ուժի մեջ մտավ փոստ-հեռագրական համաձայնությունը։ Մարտի 4-ին վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը. վերացվեցին ճամփորդական արտոնագրերը Հայաստանի և Վրաստանի միջև, բացի գաղթականներից։ Մարտի սկզբին բացվեց Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Մ. Թումանյանի պաշտոնակատարությամբ. քիչ հետո պաշտոնի կոչվեց Լ. Եվանգուլյանը։ Մարտի 8 թվակիր հայտարարությամբ Վրաստանի կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը, որին ի պատասխան Հայաստանի կառավարությունը ուղարկեց հետևյալ հայտագիրը, որ մարտի 24-ին Թիֆլիսի ներկայացուցչի ձեռքով հանձնվեց վրաց արտաքին գործոց նախարարին.

«Մեր կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանի կառավարության մոտ ուղարկել է ինձ 1664, մարտ 8 թվակիր հայտագիրը, որի մեջ Դուք, պ. նախարար, Ձեր կառավարության հանձնարարությամբ, հայտնում եք ի գիտություն Հայաստանի կառավարությանը, թե նա ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը իբրև ինքն-

* «Աշխատավոր», 30 հունվար, 1919 թ.։

** Ձենք կարող այստեղ չհիշել, որ վրացի գերիները Հայաստանում բոլորովին այլ վերաբերումի էին արժանացել. նրանք պահվում էին առանձին զորանոցներում, ստանում էին նույնքան ուտելիք, որքան և զինվորները. սպաների համար տրվել էին հատուկ հարմարություններ. նրանք ստանում էին սպայական ռոճիկ։ Վրացական 4-րդ և 5-րդ գնդերի գերի ու վիրավոր զինվորները «Բորբայի» խմբագրությանն ուղղված մի նամակով գրում էին, որ իրենք «հայերի կողմից հանդիպել են ամենաչքամ ու սրտակից վերաբերումի։ Թե քաղաքացիական և թե զինվորական իշխանությունները գործ են դնում ամեն ջանք, որ դյուրացնեն մեր վիճակը։ Իսկ մեզ գերի առնող զինվորների վերաբերումը ամենաեղբայրականն է, որից լավը կարելի չէ ցանկանալ»։

օրե՛ն անկախ պետություն։ Հայաստանի կառավարությունը լիովին համակիր է այն նկատառումներին, որոնց համաձայն Վրաստանի կառավարությունը հարկ է գտել հիշյալ հայտագրի մեջ ծանուցանելու, որ ճանաչում է Հայաստանի Հանրապետության պետական ինքնօրենությունն ու անկախությունը։

Խորապես գիտակցելով Անդրկովկասի հողի վրա կազմված հանրապետությունների շահերի ընդհանրությունն ու միությունը մի շարք խնդիրներում, որոնք էական նշանակություն ունեն նրանց գոյության և ապահով բարգավաճման համար, Հայաստանի կառավարությունը ուրախ է վրաց կառավարության այդ ակտը նկատելու իբրև ապացույց համերաշխության և փոխադարձության գիտակցության այդ տեսակետից։

Իր կողմից Հայաստանի կառավարությունը իր պարտքն է համարում հաստատել Ձեր կառավարությանը, որ ինքը ճանաչել է և ճանաչում է վրաց դեմոկրատական հանրապետությունը իբրև անկախ և ինքնօրեն պետություն։ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար՝ Ս. Տիգրանյան»։

Այսպիսով, վերականգնվեցին հայ-վրացական հարաբերությունները։

ԳԼՈՒԽ Ի

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

1919 թվի սկզբից, Հայաստանը հետզհետե սկսեց դուրս գալ այն դժոխային վիճակից, որի մեջ ընկել էր Թուրքական արշավանքի հետևանքով։

Ճիշտ է, կացությունը դեռ շատ էր ծանր։ Թուրքերի գործած ավերը զգացվում էր չափազանց սուր։ Սովն ու հիվանդությունները, որոնք առատ հունձ էին անում 1918 թ. վերջերին, շարունակում էին կոտորել և այժմ։ Մանավանդ, բծավոր տիֆը, որ փոխարինել էր խոլերային, ամեն օր խլում էր հարյուրավոր կյանքեր. մարդիկ մեռնում էին հիվանդանոցներում, հանրակացարանների մեջ, տներում ու փողոցներում, ամենքի աչքի առջև։ Մեռնում էին գաղթականներն ու տեղացիները, աղքատներն և ունևորները։ Մահը խտրություն չէր դնում*։ Բազմաթիվ թանկագին կյանքեր խլեց նա. դեկտ. 2-ին մեռավ հին հեղափոխական, ներքին գործոց նախարարության կարևոր հանձնարարությունների պաշտոնյա Սարգիս Օհանջանյանը (Ֆարհատը), հունվ. 5-ին՝ հանրապետության բժշկաառողջապահական մասի վարիչ՝ բժ. Զ. Անդրեասյանը, հունվ. 11-ին՝ Հայաստանի անդրանիկ պետական վերահսկիչ Մ. Բերբերյանը, հունվ. 23-ին՝ Երևանի արքունական պալատի վարիչ Գ. Կամսարականը, հունվ. 30-ին՝ խճուղիների առաջին մասի պետ ինժ. Թորգոմ Նիկողոսյանը։ Մեռավ Երևանի քաղաքային վարչության անդամ՝ Հակ. Հարությունյանը, երիտասարդ գործիչ Փառնակ Հակոբյանը։ Բծավոր տիֆին զոհ գնաց և Հայաստանի Հանրապետության կերտողն ու մեծագույն գործիչը՝ Արամը, որ քառասունօրյա տաժանելի տառապանքներից հետո, հունվ. 26-ին փչեց վերջին շունչը։ Նրա մահը անդարմանելի հարված էր Հայաստանի համար, և հասկանալի է այն խորունկ վիշ-

* Պաշտոնական ցուցակագրության համաձայն, 1919 թվին, 5 ամսվա ընթացքում, միայն Երևանում 3 972 մահվան դեպք էր պատահել։ Ըստ ամիսների այդ մահերը դասավորվում էին այսպես. ապրիլ՝ 742, մայիս՝ 764, հունիս՝ 899, հուլիս՝ 766, օգոստ.՝ 801։ Եթե Երևանի այն ժամանակվա բնակչությունը, միջին թվով, հաշվենք 60 000 մարդ, յուրաքանչյուր հազարին կընկնի 161,2 մահ։ 1913 թվին Եվրոպական Ռուսաստանում յուրաքանչյուր հազար մարդուց մեռնում էր 27,9 մարդ։

տը, որ պատեց ամենքին. Արամի հուղարկավորությունը փետր. 1-ին համաժողովրդական սուգի օր էր։

Հիվանդությունների պակաս թողածը լրացնում էր սովը։ Մինչև արտասահմանից ալյուր ստացվելը, երկրի բոլոր կողմերից աղեկտուր կոչ ու հեծկլտանք էր լսվում. «Հա՜ց, հա՜ց հասցրեք, մեռնում ենք»...

«Գյուղը ապրում է սովի ճիրաններում,— գրում էին Վերին-Ղարանլուխից «Հայաստանի Աշխատավորին» (25 ապր.)։— Սրանից մի քանի օր առաջ մի գաղթական սովածությունից մեռավ տեղացի Խաչատուրի դռանը։ Շատերը, տեղացի թե գաղթական, հապճեպ փախչում են էս կողմ-էն կողմը, որպեսզի մի կտոր հաց ճարեն։ Սրանից 3 օր առաջ 3 հոգի գաղթական սովածությունից ճանապարհին մեռել են, այնպես որ սովը հնձում է։ Գյուղում ապրում է 1000—1200 շունչ գաղթական, իսկ բնակիչ գյուղացիք 2300 շունչ են։ Հացի գինը բարձրացել է՝ 1 փութ ցորենը 300—400 ռուբլու, գարին՝ 200 ռ., ձուն հատը 1 ռ. 20 կ., մյուս մթերքները կրկնապատիկ և եռապատիկ գին են ստացել, այն էլ ձեռք չի բերվում»։

Նոր Բայազետի Քյոլաղռան գյուղից հեռագրում էին նույն թերթին (27 ապր.). «Ժողովուրդը ապրում է սոսկալի պայմաններում։ Սովամահության դեպքերը տասնյակների են հասնում. օր օրի վրա սաստկանում է։ Խնդրում ենք հաց։ Ի սեր Աստուծո, մի՛ թողեք մեռնինք»։

«Ախտայի շրջանի տեղացի և փախստական հայությունը ծայր աստիճանի սոված է,— հեռագրում էին Ներքին Ախտայից,— սովամահության դեպքերը բազմաթիվ են։ Եթե անմիջապես նպաստ և սերմացու չհասնի, ուշ կլինի»։

Քեշիշքյանդից գրում էին նույն թերթին (9 մայիս). «Սոսկալի տեսարաններ... Գաղթականությունը նորից գաղթի ճանապարհը բռնած՝ չվում է դեպի Երևան։ Մերկ, ոտաբոբիկ կամ զանազան ցնցոտիներով իր այլանդակ մարմնի մի մասը ծածկած և ծանրաբեռնված իր փոքրիկներով՝ գյուղից գյուղ թափառում, հաց է մուրում, բայց հաց չի գտնում։ Հացի փոխարեն կանաչով սնվող գաղթականության մեջ հաճախ թունավորման դեպքեր են պատահում և կամ գժվածի նման թափառում են փողոցները՝ անկապ և կցկտուր խոսքեր արտասանելով։ Շրջանիս գաղթականության մի մասը դեռ մինչև օրս էլ բացօթյա է անցկացնում իր օրերը ձյունի, անձրևի տակ և ցեխերի մեջ։ Լինում են դեպքեր, որ սոված, ուժասպառ եղած գաղթականները թաղվում են ցեխերի մեջ և առանց կողմնակի օգնության չեն կարողանում ազատվել այդ դրությունից։ Ավելի սոսկալի և անելանելի դրության մեջ գտնվողների մեծ տոկոսը կազմում է Նախիջևանի ժողովուրդը... Սովն ու ցավը մեջք մեջքի տված հնձում են 17 000 խեղճ գաղթականությունը... Պատահում են, հաճախ, մեռելներ, որոնք 6—7 օրով մնում են գոմերի մեջ, առանց թաղվելու»։

«Կողբը սովի ճարակ է դարձել,— ճչում էին աղահանքից («Հ. Աշխ.» 21 մայիս)։— Հացի գրվանքան 15 ռ. է։ Նպաստ չստանալու պատճառով սովից մեռնում են օրական 20 մարդ։ Օգնեցե՛ք մեզ»։

«Ժողովուրդը սովամահությունից բնաջնջվեց,— նորից աղաղակում էին Ներքին Ախտայից։—Կմախքացած մարդիկ խոտ են ճարում, սատկած լեշեր ուտում գյուղերում։ Հարյուրավորներ մեռնում են։ Շրջանը ձեռքից գնաց»։

«Քյոսամահմատ գյուղի մեծ մասը,— հեռագրում էին մայիսի 19-ին Նոր Բայազետից,— կանաչով է կերակրվում։ Կանայք և երեխաները նման են ուրվականների։ Ի սեր Աստծո, փրկեցե՛ք մեզ մեռնելուց, հաց հասցրեք»։

«Գավառի և քաղաքի ազգաբնակչության վիճակը անտանելի է,— հաղորդում էր Հայաստանի հեռ. գործակալությունը մայիսի 20-ին։—Սովամահության դեպքեր են եղել։ Ամերիկյան կոմիտեն 10 օրից ի վեր ոչինչ չի ստանում։ Ալյուր չլինելու պատճառով իզուր է մոտ ապագայում ամերիկացիներից որևէ օգնություն սպասել»։

Եվ այսպես անվերջ ու ամեն կողմից։

Դրությունը հուսահատական էր։ Մայիսի վերջերին Երևանի հացաբաժինը իջեցվեց մեկ քառորդ ֆունտի, իսկ գավառի ժողովուրդը արածում էր դաշտերում։ Սով Արքայի ուրվականը սավառնում էր Հայաստանի գլխին։

Կառավարությունը նախատեսում էր այդ վտանգը և գերագույն ճիգ թափում առաջն առնելու։ Սակայն, նրա բոլոր դիմումներն ու թախանձանքները արձագանք չգտան ոչ մի կողմից։ Անգլիացիք միայն հունվարին Կարսից Ալեքսանդրապոլ բերին 6 գնացք ցորեն և ալյուր ու մի քանի վագոն էլ՝ Շարուրից։ Աննշան քանակությամբ ալյուր եկավ և Թիֆլիսից և այնուհետև մինչև ապրիլի վերջերը Հայաստան դրսից մթերք չմտավ. ապր. 28-ին խնամատարության նախարարությունը ստացավ 15 վագոն ալյուր։

Հունվ. 22 նիստին, վարչապետ Հ. Քաջազնունին բերեց հետևյալ առաջարկը. «Երկրին սպառնացող սովի առաջն առնելու համար անհրաժեշտ է դիմում անել դաշնակից պետություններին, մասնավորապես Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներին, օտար շուկաներից (առանձնապես Ամերիկայից) Հայաստան խոշոր քանակությամբ հաց ներմուծելու համար։ Սպառնացող աղետի ծավալը պահանջում է, որ այս դիմումը անի Հայաստանի Խորհրդի և կառավարության հանձնարարությամբ անձամբ ինքը՝ վարչապետը, իբրև երկրի ամենաբարձր պաշտոնյան՝ ունենալով ուղեկիցներ պարենավորման նախարարին և ելմտական նախարարության կողմից մի ձեռնհաս խորհրդատու։ Բացի հացի խնդրից, նպատակահարմար և կարևոր է հանձնարարել սույն անձնավորություններին՝ ա) համաձայնության գալ պետությունների կամ մեծ

առևտրական տների հետ ներմուծելու Հայաստան երկրին պակասող առաջին անհրաժեշտության ապրանքներ և բ) հնար եղած դեպքում բանակցություններ վարել և պարզել, թե ինչ պայմաններով Հայաստանի Հանրապետությունը կարող կլիներ դրամական փոխարինություն անել արտասահմանում»։

Կառավարությունն՝ ընդունեց առաջարկի կարևորությունն ու նպատակահարմարությունը և հանձնարարեց վարչապետին կազմել զեկուցում, նախահաշիվ և օրինագիծ Հայաստանի Խորհրդին ներկայացնելու համար։

Հունվ. 27-ին վարչապետը ներկայացրեց զեկուցումը, նախահաշիվն ու օրինագիծը, որը ընդունվեց և շտապ կարգով մտցվեց Հայաստանի Խորհուրդ։ Այս վերջինն էլ, փետր. 4-ին, որոշեց. «Հանձնարարել վարչապետին ուղևորվել Եվրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Խորհրդի անունից դաշնակից պետությունների և Հյուս. Ամեր. Միաց. Նահանգների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքներ։ Ուղևորության ծախսերը ծածկելու համար բաց անել վարչապետին 550 000 ռուբլու վարկ»։

Փետր. 15-ին վարչապետի պաշտոնակատար նշանակվեց Ա. Խատիսյանը, իսկ Հ. Քաջազնունին մեկնեց Թիֆլիս։ Սակայն, անգլիական հրամանատարությունը երկար ժամանակ արտասահման անցնելու արտոնություն չտվեց, այնպես որ Քաջազնունին ստիպված եղավ վերադառնալ Երևան, ապր. 2-ին նորից ստանձնեց վարչապետի պաշտոնը և միայն ապր. 16-ին կարողացավ մեկնել՝ հետը առնելով ելևմտական նախարար Ա. Էնֆիաջյանին, գյուղատնտես Հ. Փիրալյանին և սպա Ս. Մելիքյանին։

Նույն նպատակով, մարտի 12-ին Թիֆլիս գնաց և Հայաստանի Խորհրդի նախագահ Ավ. Սահակյանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին՝ պարենի ու սերմացուի խնդրանքով։

Հայաստանի Խորհրդի ու կառավարության դիմումները, ինչպես նաև արտասահմանում կատարված աշխատանքները, վերջապես, լսվեցին, և օգնությունը շատ չուշացավ։ Այս անգամ օգնության հասնողը Ամերիկան էր՝ Միացյալ Նահանգների պարենավորման դիկտատոր Հուվերը, Եվրոպայի փրկիչը հետպատերազմյան սովից։ Հուվերը եղավ և Հայաստանի ժողովրդի իրական փրկիչը։ Ինչ էլ լինի մեր վերաբերումը դեպի Ամերիկայի քաղաքական դերը հայկական խնդրում, ամերիկյան մարդասիրական նպաստն ու պարենը երբեք չենք մոռանա, չպե՞տք է մոռանանք։

Մայիսի քսանին Բաթում եկավ ամերիկյան առաջին նավը 125 000 փութ ալյուրով, մի շաբաթ անցած, հասավ ևս 600 000 փութ։ Այդ մթերքը Հայաստան փոխադրելու համար վրաց կառավարությունը հայկական

Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՎ

ՍՈՎԱՅԻՆ ՍՊԱ ԿԱՐ. ԳԱՐԱԳԱՇՅԱՆ
Սևանի ճավաշինարանի պետ



ՋՈՐԱՀԱՆԴԵՍ
(Աջ, սրով՝ զոր. Ք. Արարատյանը)



ՄԱՐՋԱՆՔ

կառավարությունից պահանջեց 579 վագոն և 14 շոգեշարժ, ա՛յն ժամանակ, երբ Հայաստանի ունեցած վագոնների ընդհանուր թիվը 520 էր և շոգեշարժներինը՝ 16: Պետք եղավ ամերիկացիների և անգլիացիների միջամտությունը, 4 օրով կանգնեցվեց Հայաստանի երկաթուղային մարդատար հաղորդակցությունը և բոլոր միջոցները հատկացվեցին ալյուրի փոխադրության։

Ամերիկյան ալյուրի հասնելով՝ կամաց-կամաց սովը մեղմացավ, երկիրը սկսեց մտնել բնականոն հունի մեջ, և ժողովուրդն ու կառավարությունը կարողացան նվիրվել երկրի վերաշինության ու պետության կազմակերպման գործին։ Հունիսին կառավարությունը հնարավորություն ստացավ Ախալքալաքի ժողովրդին էլ հաց հասցնել. վրաց կառավարությունը, որ այնքան եռանդ էր թափում Ախալքալաքը ստանալու համար, սովից կոտորվող ախալքալաքցիներին օգնելը իր պարտականությունը չէր համարում*։

* * *

Որքան էլ դժվար լիներ կացությունը, սովն ու հիվանդությունները չէին այլևս հայ ժողովրդին զբաղեցնող գլխավոր ցավերը։ Կառավարության առջև կանգնած էին մի շարք պետական ու ազգային լուրջ խնդիրներ, որոնց մեջ առաջին տեղը բռնում էին սահմանների ընդարձակման և ներգաղթի հարցերը։ Հարցեր, որոնց վերաբերմամբ Անդրկովկասի անգլիական հրամանատարության բռնած վարանոտ կամ անբարյացակամ դիրքը արդար դժգոհություն էր պատճառում հայերին։ Մարտի 26-ին Հայաստանի կառավարությունը զոր. Թոմսոնին ներկայացրեց մի ընդարձակ հուշագիր, որով պահանջում էր անհապաղ լուծել Ղարաբաղի, Կարսի ու Շարուրի և ներգաղթի խնդիրները, ինչպես նաև պարենավորման, հաղորդակցության, տնտեսական ու զինվորական մի շարք հարցեր։

Մասնավորապես սուր վրդովում էր առաջ բերում անգլիացիների գործելակերպը Զանգեզուր—Ղարաբաղի և Կարսի հարցերում։ Կարսը այդ ժամանակ կառավարվում էր Թուրքերի նշանակած տեղական կառավարության՝ Շուրայի ձեռքով, որը խիստ թշնամական էր տրամադրված դեպի հայերը և աշխատում էր Կարսում պահել Թուրքիայի տիրապետությունը կամ, եթե այդ անհնար է, ստեղծել Կարսի, Բաթումի և Ախալցխայի շրջաններից առանձին անկախ պետություն՝ Հարավարևմտյան Անդրկովկաս անունով։ Անգլիացիք չէին ուզում զրգռել մահմեդականներին և զանազան պատրվակներով արգելք էին լինում, որ հայերը գրավեն Կարսը։ Հայաստանի կառավարության համառ պնդումների վրա, 1919 թ. հունվ. 8-ին, Արևմտյան Անդրկ. բրիտանական ուժերի հրամանատար զոր. Ֆորեստիե Ուոկերի և Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանի միջև կնքվեց Կարսի մասին մի համաձայնություն, որով, մինչև հաշտության դաշնագրի ստորագրումը, Կարսում պիտի նշանակվեր անգլիական զինվորական նահանգապետ, քաղաքացիական իշխանությունը պիտի կազմվեր հայերից և զինվորական նահանգապետի ենթակա՝ վարեր պիտի քաղաքի ու նահանգի քաղաքացիական գործերը։ Հայկական պաշտոնեությունը պետք է պատրաստ լիներ Ալեքսանդրապոլում և հունվ. 12-ին զինվ. նահանգապետի հետ պիտի անցներ Կարս։ Համաձայնագրի մեջ մանրամասն նշանակված էին երկաթուղու և հեռագրի ու փոստի թուրքերից փոխանցելու առիթները ու կառավարության եղանակը. մինչև Կարս բոլորովին հայ պաշտոնյաներ, Կարսում՝ խառն, սահմանում՝ թուրք-անգլիական՝ զինվ. նահանգապետի հսկողության տակ։

Համաձայնագրի 10-րդ և 11-րդ կետերում ամփոփված էր ոչ հայ տարրի կառավարության ձևը. հիշվում էր, որ «մահմեդականները վախենում են հայկական վարչությունից, հետևաբար, անհրաժեշտ է գործել զգուշությամբ և ջրվել ամեն վախ ցույց տալու համար, որ հայերը ընդունակ են մոռանալու ցեղային նախապաշարումները, երբ որ իշխանության գլուխ են կանգնում»։ Մասնավորապես հրահանգվում էր խիստ լինել ժանդարմաների գործած ճնշումների և բռնությունների դեմ. «Սա կլինի հիանալի հաջողություն հայկական իշխանությունների համար և կառավարությունը արժանի կլինի դաշնակից պետությունների շնորհավորության, եթե մինչև Անդրկովկասի ապագայի որոշումը հաշտության խորհրդաժողովի կողմից անդորրությունը չխախտվի» (10-րդ կետ։)

12-րդ կետում ասվում էր, որ այս համաձայնությունը արդելք չէ, որ հայերը հետապնդեն իրենց պահանջները հաշտության վեհաժողովի առջև։

Այս համաձայնության հիման վրա, անգլիական զինվորական նահանգապետն ու հայկական գլխավոր պաշտոնեությունը մեկնեցին Կարս։ Բայց հայկական իշխանության երևալը Կարսում Շուրայի կողմից ընդունվեց թշնամաբար և սպառնալիքներով, և անգլիական նահանգապետի խորհրդով հայերը հեռացան Ալեքսանդրապոլ։ Այսպիսով, անգլիացիները, մի տեսակ, ճանաչեցին Շուրայի իշխանությունը։

Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների մահմեդականները դի-

* 1919 թվի ընթացքում Հայաստանը Ամերիկայից ստացավ 1 295 243 փութ ալյուր, 256 758 փ. ցորեն, 125 000 փ. լոբի, 68 563 փ. բրինձ, 20 000 փ. կորեկ, 8.010 փ. երիցացորեն, 10 738 փ. վարսակ, 5 950 000 տուփ խտացված կաթ, 12 000 փ. կակաո, 44 000 փ. շաքար, 5 000 փ. ճարպ, 1 500 փ. թեյ։ Համաձայն կնքված պայմանի, 1920 թվի սկզբին էլ գալու էր 2 170 000 փ. ալյուր։ Ամերիկայից ստացվող ալյուրից 238 449 փութ ուղարկվեց Ախալքալաք։ Ալյուրի մի մասն էլ գրավեց վրաց կառավարությունը, որն փոխադրության վարձագին։

մեցին Փարիզի խորհրդաժողովին, Վիլսոնին, Պուանկարեին ու Լլոյդ Ջորջին՝ բողոքելով իրենց շրջանները հայերին և վրացիներին հանձնելու դեմ և պահանջելով ճանաչել իրենց անկախությունը։ Նրանք հայտնում էին, որ հայերը կոտորել են հարյուր հազար մահմեդականներ։

Այս դեպքը, ինչպես և ուրիշ առիթներով անգլիացիների ցույց տված թրքասիրությունը սաստիկ հուզում ու զայրույթ պատճառեց հայկական շրջաններում։ Մարտի 6-ին, Հ. Հ. Պատվիրակության գրած մի նամակում, աշտ. գործոց նախարար Ս. Տիգրանյանը երկարորեն, կանգ է առնում այն օրերի անգլիացիների հետևած քաղաքականության վրա։ «Կարսի դեպքը,— գրում է նա,— ի միջի այլոց, շատ վատ և ընդարձակ հետևանքներ ունեցավ, ինչպես և սպասում էին։ Թուրքերը տեսան, որ բավական է ցուցադրել որևէ հակառակություն և բողոք հայերի, Հայաստանի կառավարության դեմ, և Անգլիան իսկույն ևեթ հանդես կգա զսպելու, կասեցնելու մեր կառավարության ամեն մի ներգործական քայլն ու ծրագիրը։ Բրիտանական զորահրամանատարությունը Անդրկովկասի մի շարք ակտերով ավելի և ավելի ուժ է տալիս թուրքերի այդ համոզմանը։

«Մեր զորամասերը առաջ էին ընթանում դեպի Շարուր, Նախիջևան, Ջուլֆա, օսմանյան զորքերի դատարկած այդ վայրերը գրավելու. թուրքերը դիմադրում էին։ Վոլչի Վարոտայից (Երևանի և Շարուրի ուեզդների սահմանակից) մեր զորամասը հետ եկավ մինչև Դավալու (հայ-վրացական պատերազմի ժամանակ), հետո պատրաստվեց նորից առաջ գնալ։ Եկան Շարուրի և Նախիջևանի թուրքերի ներկայացուցիչները. մեր կառավարության հետ բանակցեցին. համաձայնեցինք, թե 8—10 օր մեր զորքը Դավալուից առաջ չի շարժվի, մինչև որ նրանք կերթան կպատրաստեն խաղաղ ժողովուրդը, թե հայոց զորքը իրենց որևէ վնաս չի հասցնելու, և կգան ընդառաջ հայ զորքն ու հայ ադմինիստրացիան խաղաղ և հաշտ ընդունելու. բայց վրա հասավ անգլիական կապիտան Լոտենը, անցավ Նախիջևան տեսնելու՝ ինչ կա, ինչ չկա... և իր զեկուցման հետևանքով նշանակվեց Նախիջևանի բրիտանական զորական նահանգապետ և փոխգնդապետ, հետո եկավ Երևան պահանջելու, որ մեր զորքերը հետ քաշվեն նույնիսկ Դավալուից հյուսիս... Ոչ առանց դժվարության համաձայնության եկանք երիտասարդ փոխգնդապետի հետ, որ մինչև Վոլչի Վարոտան մնա մեր ադմինիստրացիան, բայց մեր զորքը հետ կբերենք այդ շրջանից՝ թողնելով մի փոքրիկ խումբ (50 հոգի) Դավալուում. բրիտանական մի զորամաս կլինի այդ տեղը, որը կպաշտպանի կարգը և խաղաղությունը։ Ուրեմն, Շարուրն ու Նախիջևանն էլ մեր ձեռքից գնաց (թո՛ղ ժամանակավորապես), դառավ բրիտանական զորական նահանգապետություն (Կարսի օրինակով), և մենք պարտավորվեցինք նույնիսկ դրան սահմանակից մեր տերիտորիայում (Վեղի Բասար) զորք չպահել։

Նույն խաղը խաղալու լուրջ պատրաստություններ են տեսնում թուրքերը այժմ Սուրմալուում...

Ղարաբաղը բրիտանական հովանավորության տակ Ազրբեջանի գեներալ-նահանգապետության մեջ է գցվում։

Ախալցխան, Ախալքալաքը Բաթում—Կարսի թրքության ձեռքն են անցել ռազմական եղանակով՝ վրացիների զորքերը պարտվելով։

Այսպիսով, Անդրկովկասի թրքությունը բրիտանական զորահրամանատարության օրով ավելի նպաստավոր պայմանների մեջ է գրտնվում, քան գերման-օսմանյան հաղթական օկուպացիայի ժամանակ։

Փաստեր ու հանգամանքներ են սրանք, որոնք լուրջ մտածմունքների և ծանր մտատանջությունների տեղիք են տալիս մեզ...

Անշուշտ, գլխավորագույն պատճառը անգլիական զինված ուժերի թուլությունն է այստեղ։ Ինչպես Գերմանիան ամառն ու աշնանը տեղի էր տալիս թուրք հրամանատարության պահանջների ու քմահաճույքների առաջ, այնպես էլ այժմ անգլիական գեներալներն են նահանջում օսմանյան օֆիցերների այս նվաճողական ծրագրերի և գործունեությունների առաջ... Որովհետև արձանագրածս փաստերը հայերի հաղթահարումը չէ միայն, այլ ավելի ևս Անգլիայի պարտությունը։ Բրիտանական զորական նահանգապետությունները լոկ մի քող են, նուրբ ու թափանցիկ, որի տակից պարզ երևում է իրական թուրքական իշխանությունն ու ուժը։

Սակայն, թվում է, թե մի ուրիշ պատճառ էլ կա։ Անգլիացին չի հավատում հային, ավանդաբար համարելով սրան անուղղելի ռուսասեր, ռուսական օրիենտացիայի անհողդողդ հետամտող... Բնորոշ է, որ գեն. Ֆորեստիե Ուոկերի պահանջով Կամավորական զորաբանակի ներկայացուցիչը հեռացավ Երևանից դեպի Եկատերինոդար. այդ մի նոր փաստ է ապացուցանելու Անգլիայի ունեցած վերաբերմունքը դեպի Ռուսիայի ներկայությունը Անդրկովկասում։ Այն համարումն ու այս վերաբերմունքն է, որ տրամադրում է բրիտանական զորահրամանատարությանը չնպաստել մեր ուժերի կազմակերպմանը և զորեղացմանը թուրքության դեմ Անդրկովկասում, որովհետև թուրքն է նրա աչքում ամենավստահելի պատվարը Ռուսիայի դեմ այստեղ։ Նա զիջում էր մեզ Կարսը, բայց հենց որ տեսավ, որ այնտեղ ավելի վստահելի և ոչ աննշան հակառուսական ուժ կա հանձին թրքության, իսկույն շտապեց ուղղել իր այդ սխալը. Կարսը տվեց թուրքերին... և ոչ միայն Կարսը։

Կարսի նահանգի համար բրիտանական զորահրամանատարությունը մինչև 1000 հոգուց բաղկացած միլիցիա է կազմակերպում. հավաքում է տարրեր, որոնք կծառայեն իրեն ոռճիկի համար, առանց քաղաքական ձրգտումների (օրինակ, օսեր, ռուս հին ստրածնիկներ). հայի չեն ընդունում «առայժմ», որովհետև տեղական թուրքերը զրգռված են հայերի դեմ (այս է պաշտոնական պատճառաբանությունը), բայց թվում է, թե Անդ-

լիան չի ուզում հենվել որևէ հայ ուժի վրա, որովհետև իր կարծիքով (և, դժբախտաբար, ոչ միայն իր կարծիքով) հայն ավելի է ռուս, քան ռուսն ինքը, և չի կարելի հենվել հայի վրա, երբ Ռուսիայի դեմ բան է ծրագրվում։

Մեր հավատարիմ վերաբերմունքը դեպի Ռուսիան գիտեք, թե ինչ չափով է գնահատվել և մեզ օգուտ բերել. գիտեք, որ ներկայիս այդ վերաբերմունքը չի կարող սոսկ պլատոնական սիրո չնմանվել, որը ունայն է և անիրական փոխադարձաբար, սակայն, անօգուտ լինելով՝ վնասակար է այսօր և վաղը, իսկ վաղը չէ մյուս օրը թե ինչ է լինելու, ոչ ոք չի իմանում։

...Ամեն կողմից մեզ շրջապատել է Թուրքական վտանգը, սպառնական և հանդուգն. մեր քաղաքական ծրագրին հակառակ Թուրքիան առաջ է տանում իր ծրագրերը Հայաստանի վերաբերմամբ, որոնց մեջ հայ տարրի ֆիզիկական բնաջնջումը էական և հիմնական կետն է հանդիսանում, և մենք ոչինչ գրավական և վստահություն չունենք, թե անգլիական զորահրամանատարությունը ցանկություն ու կարողություն ունի մեզ փրկելու այդ վտանգից, որը, կրկնում եմ ու պնդում. այսօր էլ իրական է և սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առաջ։

Բրիտանական զորահրամանատարությունը արգելեց մեզ գրավել Հայաստանում որոշ կարևոր վայրեր, կարևոր թե ստրատեգիական, թե ռազմամթերքի (Կարսի պահեստները) տեսակետով. այդ բոլորը մնաց Թուրքերի ձեռքին. մեր քայլերն ու ընթացքը կաշկանդված են, Թուրքերինը՝ ազատ. մեզ օգնող չկա, Թուրքերին աջակից են և ղեկավար Թուրքիան իր օֆիցերներով (նույնիսկ բարձրաստիճան), ռազմամթերքով և ռազմական ամեն տեսակ գործիքներով...

Կառավարության կողմից ձեր հատուկ ուշադրությունը հրավիրելով այս փաստերի և հանգամանքների վրա՝ խնդրում եմ, որ ամենաբուռ դիմումներով ում հարկն է հաջողեցնեք, որպեսզի.

1) Անդրկովկասից և Թուրքիայի նախկին վիլայեթներից հեռացվեն շուտափույթ Թուրքական ուժերն ու զորականները սպառնալով, որ այդ ուժերի կողմից որևէ զինված գործառնության ռեպքում պատիժ և պատասխանատվություն կկրի Թուրքիան։

2) Թեկուզ փոքր զորամասեր (անգլիական, ֆրանսիական, ամերիկյան) ուղարկվեն Տրապիզոն—Էրզրում—Սարիղամիշ—Կարս—Նախիջևան—Ջուլֆա—Շուշի. Կարսում և այլ տեղերում եղած անգլիական զորախմբերը դեմոբիլիզացիայի են ենթակա և հեռանում են։

3) Աջակցեն մեր զորքերի կազմակերպմանը և սպառազինմանը (փամփուշտ, հրացան, գնդացիր...)։

4) Հայաստան փոխադրեն հայ զորամասերին և զորականներին զանազան երկրներում ներկայումս գտնվող՝ օժտելով նրանց հարկ եղած ռազմական միջոցներով և նյութերով։

Այս մասին Ձեզ նաև հեռագրում ենք՝ խնդրի ստիպողականությունը աչքի առաջ ունենալով։

Իսկ խնդիրը, իրոք որ, ստիպողական էր։ Հայաստանը խեղդվում էր՝ կծկված նեղ լեռներում ու ձորերում։ Գարունը վրա էր հասնում. պետք էր գաղթականությունը վերադարձնել իր տեղերը, ցանքս անել հաջորդ տարվա համար, կառավարությունը ազատել խնամատարի ու որբապահի դերերից։ Այդ էր պատճառը, որ հայկական ներկայացուցիչները ռմբակոծում էին դաշնակիցներին հեռագրերով ու հուշագրերով՝ պահանջելով անմիջական կարգադրություն Հայաստանի սահմանների ընդարձակման համար։

Ապրիլ ամսից սկսած, Անդրկովկասի անգլիական հրամանատարության քաղաքականությունը զգալի կերպով փոխվեց հօգուտ հայերի, և Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիրը ստացավ նոր մղում։ Հայկական կառավարության և անգլիական բարձր հրամանատարության համաձայնությամբ, որոշվեց հայ-անգլիական ուժերով գրավել Կարսը։ Կարսի զինվորական նահանգապետ կարգվեց գնդ. Թեմբրրլեյը, ապր. 12-ին քաղաքացիական նահանգապետ նշանակվեց Ստ. Ղորղանյանը և հայկական գրավող զորամասի պետ՝ զոր. Հովսեփյանը։ Հայ և անգլիական զորքերը, երկաթուղով ու խճուղիով շարժվեցին առաջ և, առանց դիմադրության հանդիպելու, ապր. 24-ին, մտան Կարս։ Շուրան, Շուքրի փաշայի դրդումով, փորձեց հակառակություն ցույց տալ, բայց անգլիացիք ձերբակալեցին Շուրայի անդամներին և ուրիշ աչքի ընկնող Թուրքերին, մոտ 150 հոգի, և արտակարգ գնացքով ուղարկեցին Մալթա կղզին։ Շուքրի փաշան հաջողեց փախչել։

Առաջին օրերը, իշխանությունը և քաղաքի ու բերդի պահակությունը անում էին անգլիական զինվորները. ապր. 28-ին իշխանությունն ամբողջապես փոխանցվեց հայերին. անգլիական զինվորներին փոխարինեցին հայերը. բերդապետ նշանակվեց փոխգնդ. Մատվեևը։

Մայիսի 2-ին հայերի ձեռքն անցավ Արփաչայ—Սարիղամիշ երկաթուղին, և մայիսի 4-ից սկսվեց կանոնավոր երթևեկությունը։

Մայիսի 9-ին հայկական զորքերը գրավեցին Մերդենեկը, մայիսի 13-ին, առանց կռվի, մտան Օլթի և Կաղզվան։ Քրդերն ու Թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով։

Մայիսի 10-ին Կարս հասան և մեծ հանդիսավորությամբ ընդունվեցին վարչապետ Խատիսյանը և զոր. Դևին։ Մայիսի 11-ին համաժողովրդական մաղթանք եղավ պատմական Առաքելոց եկեղեցում, ուր Խատիսյանն իր ճառում հայտարարեց. «Մինչև մայիսի 15 մեր զորքերը պետք է գրավեն Ալաշկերտի հովիտը և Բասենը»։

Եվ, հիրավի, հայ ժողովրդի հայացքը հառած էր ա՛յն կողմ։ Այդ ուղղությամբ էր շարժվում և գաղթականությունը։

Նույն ձևով, առանց միջադեպի, տեղի ունեցավ և Նախիջևանի գրա-

վումը։ Ապր. 9-ին կառավարությունը որոշեց Շարուր—Նախիջևանի վարչական ձևը. շրջանը պիտի բաժանվեր 3 գավառի. 1) Գողթան՝ կենտրոնը Ագուլիս, 2) Նախիջևան՝ Նախիջևան քաղաքը, և 3) Շարուր՝ Բաշ-Նորաշեն։ Մայիսի 3-ին Նախիջևանի ընդհանուր նահանգապետ նշանակվեց իրավաբան Գևորգ Վարշամյանը և գրավող զորքերի հրամանատար՝ Երևանի զորամասի պետ Դրոն։ Գրավման ծրագիրը կազմվեց զոր. Դևիի, զոր. Հախվերդյանի և Դրոյի կողմից։

Նույն օրը, մայիսի 3-ին, հրատարակվեց զոր. Դևիի և Դրոյի ստորագրությամբ մի հրաման՝ ուղղված Նախիջևանի ազգաբնակչությանը, որով Նախիջևանը հայտարարվում էր կցված Հայաստանին, պարտք էր դրվում ժողովրդի վրա՝ ապրել խաղաղ ու համերաշխ և կառավարության կողմից խոստացվում էր օրենքի հարգանք ու հավասար վերաբերում դեպի բոլոր բնակիչները՝ առանց ցեղի և կրոնի խտրության։

Ապա, հայկական զորքերը ճանապարհ ընկան և մի քանի օրից արդեն Դավալուում էին, ուր գտան խանգավառ ընդունելություն։ Զորքին դիմավորելու համար դուրս էր եկել գյուղի ամբողջ բնակչությունն ու գաղթականությունը։ Ժողովրդի առջևից գնում էին Սասունի դիվիզիոնի ձիավոր հարյուրյակը Մուշեղի գլխավորությամբ, տեղական վաշտը և Յապոնը մի քանի ձիավորներով։ Ապա գալիս էին որբերը՝ հայկական և ամերիկյան գրոշակներով։ Որբերին հետևում էր հոգևորականությունը՝ խաչ ու խաչվառով և աղ ու հացով։ Տեսարանը վերին աստիճանի սքրտառուչ էր. հրդեհի ու փոթորիկների բովից անցած ժողովուրդը ընդունում էր իր հարազատ իշխանությունը...

Մայիսի 12-ին զորքերն առաջ շարժվեցին դեպի Շարուր—Նախիջևան։ Նույն օրը, փոխվարչապետ Խատիսյանը, զոր. Դևին, Գրոն և Գ. Վարշամյանը առաջին գնացքով Երևանից մեկնեցին Նախիջևան։ Նախիջևանցիները սկզբում մերժեցին ճանաչել Հայաստանի իշխանությունը, բայց զոր. Դևիի կտրուկ պահանջի վրա տեղի տվին և ընդունեցին Գ. Վարշամյանի ընդհանուր նահանգապետությունը։ Մայիսի 20-ին Նախիջևան մտան և հայկական զորքերը։

Այսպիսով, ապրիլ-մայիս ամիսներին կատարվեց Ռուսահայաստանի ամբողջացման գործը. հայկական զորքերը կանգնած էին Ջուլֆայում, Զինգիլում և Կարաուրգանում։

Հայկական շրջանների գրավման հետ և դեռ առաջ տեղից շարժվեց և գաղթականությունը։ Թուրքերի հեռանալու լուրը էլեկտրական արագությամբ տարածվեց երկրի բոլոր մասերում և աննկարագրելի ցնծություն առաջ բերեց ամեն տեղ։ Սկսվեց տարերային մի շարժում։ Առանց սպասելու կառավարության կարգադրությանը, առանց նույնիսկ ճշտելու լուրի ճշտությունը, գաղթականությունը ուղղվեց թափով դեպի սահման։ Էջմիածնում ու Ղարաքիլիսայում կուտակվեցին ահագին բազմություններ։ Եվ որովհետև գանգաղում էին պարպել գրավված վայրերը, գաղթականության համար ստեղծվեց անտանելի կացություն՝ շաբաթներով մնում էին բաց երկնքի տակ, ենթակա սաստիկ ցրտերի կամ անձրևների։ Եվ չնայած դրան, ամեն օր հասնում էին նորանոր խմբեր՝ սայլերով, եզներով, ֆուրգոններով, ոտով։ Մասնավորապես անհամբեր էին սուրմալուեցիները, ղամարլուեցիներն ու սարդարապատցիները։ Միայն Էջմիածնի շրջանում խոնվել էր մոտ 140 000 գաղթականություն։

Կառավարության ճիգերը՝ կազմակերպելու և ծրագրված ձև տալու այդ հոսանքին՝ առանձին հաջողություն չունեցան։ Տարերքը ավելի ուժեղ էր։ Բայց և այնպես, կարելի եղավ, որոշ չափով, մեղմացնել գաղթականության տառապանքը և, հնարավորության սահմաններում, կազմակերպված ձև տալ վերագարձի գործին։ Ներքին գործոց նախարարությունը, առաջին հերթին, հատկացրեց մեկ միլիոն ռուբլի գաղթականության սնունդ ու դեղորայք հասցնելու համար, իսկ Հայաստանի Խորհուրդի գաղթականական հանձնաժողովը հանեց հետևյալ որոշումները.

«1. Հենց այստեղ և այժմվանից նշանակել վերագրավված վայրերի համար գավառական, գավառակային և գյուղական կոմիսարներ՝ հաշվելով դրանց պետական պաշտոնյաներ, ներկայացնել նախահաշիվ և խնդրել Խորհրդից վարկ այդ ծախքերը գոցելու համար։

2. Հենց այստեղ և այժմվանից կազմակերպել յուրաքանչյուր գավառի համար ձիավոր միլիցիայի կադրեր՝ 100—200 մարդ ամեն մի գավառի համար։

3. Ադմինիստրացիան նախօրոք, կամ գաղթականության առաջին հոսանքի հետ միասին գնում է գյուղերը և կարգավորում գաղթականներին ընդունելու և տեղավորելու գործը։

4. Գլխավոր ճանապարհների վրա ունենալ սննդատու կայաններ բժշկաֆելդշերական բաժիններով միասին, նախ՝ գաղթականության դյուրություն տալու համար և երկրորդ՝ գաղթականական հոսանքը մի ճանապարհով տանելու նպատակով, որպեսզի նա չփռվի ամեն կողմ և հսկողությունից ազատ լինելով զանազան անախորժություններ չառաջացնի։

5. Ճանապարհների վրա, որոշ կետերում, ունենալ շրջիկ ձիավոր պահակներ՝ ճանապարհների ապահովության համար։

6. Ժամանակավորապես արգելել ոչ տեղացի գաղթականներին գնալ այս կամ այն գավառը։ Օրինակ, ոչ սուրմալուեցի գաղթականը ժամանակավորապես իրավունք չունի Սուրմալու գնալու, մինչև որ տեղացիները գնան ու տեղավորվեն։ Երբ սրանք գնացին ու տեղավորվեցին և երևաց, որ ազատ գյուղեր ու տեղեր էլի մնում են, այդ դեպքում կարող են և ոչ տեղացի գաղթականներն ևս գնալ Սուրմալու և այնտեղ տեղավորվել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Վ. ՎԻԼՍՈՆ

ՀՈՒՎԵՐ



Ջ. ՋԵՐԱՐԴ

ԳՆԴ. Վ. ՀԱՍԿԵԼ

7. Զորքի հետ միասին և միաժամանակ վերագրավված վայրերն են գնում և պարենավորման գործի ներկայացուցիչները՝ տեղերում պարենավորման խնդիրը լուծելու համար։

8. Գաղթականության վերադարձի ու տեղավորման գործի բարձրագույն ղեկավարությունն ամեն մի գավառում իրենց վրա են վերցնում Խորհրդի մեկ-մեկ անդամները, իհարկե, նույն գավառից՝ պառլամենտական կոմիսար անունով»։

Այս ձևով էլ տարվեց գործը։

Մայիսի վերջերին արդեն Թուրքիո պարպած բոլոր շրջանները՝ Շիրակ, Կարս ու Կաղզվան, Կողբ ու Սարդարապատ, Սուրմալու ու Վեդի Բասար՝ բնակեցված էին վերադարձած հայերով, որոնք ագահությամբ կպան վերաշինական աշխատանքի։ Կազմակերպվեց այդ վայրերում և վարչությունը, պարենավորման գործը, և կյանքը կամաց-կամաց սկսեց բարելավվել։

* * *

Արտաքին քաղաքականության մեջ գլխավոր տեղը գրավում էր, իհարկե, հայ-վրացական պատերազմը և դիվանագիտական ու տնտեսական հարաբերությունների կարգավորումը Հայաստանի և Վրաստանի միջև։ Մարտից սկսած Հայաստանի համար բացվեց Եվրոպայի և Ռուսաստանի ճանապարհը Թիֆլիս—Բաթումի վրայով։

Երևանում հաստատվեցին անգլիական ու ֆրանսիական ներկայացուցչություններ։ Ֆրանսիայի ներկայացուցիչն էր կապ. Պուադեբարը, անգլ. ներկայացուցիչ կապիտան Գրեյսին, որ մինչև վերջն էլ մնաց հայերի ու Հայաստանի բարեկամ։ Հետզհետե ներկայացուցիչներ ունեցան և Իտալիան, Կամավորական բանակը, Վրաստանը, Ազրբեջանը և այլն։

Դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի ու Ազրբեջանի միջև սկսվեցին մարտի կեսերին, երբ Երևան եկավ վերջինիս դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկին։ Պարսից կառավարությունը իր Երևանի ընդհանուր-հյուպատոսին պաշտոն տվեց ներկայացնելու Պարսկաստանը Հայաստանի կառավարության մոտ։ Ապր. 29-ին Երևան եկավ Անգլիայի Մերձավոր արևելքի ուժերի ընդհանուր հրամանատար զոր. Միլնը՝ զոր. Թոմսոնի և ուրիշների հետ. տեսնվեց կառավարության հետ, ապա գնաց Էջմիածին՝ կաթողիկոսին այցելության։ Մայիսի 19-ին Երևան հասավ Պարսկաստանի ելևմտական նախարարության ներկայացուցիչը՝ Հայաստանի հետ մաքսային ու տրանզիտային համաձայնության նախապատրաստական բանակցություններ վարելու համար։

Իր հերթին, Հայաստանն էլ դիվանագիտական ներկայացուցիչներ նշանակեց օտար կառավարությունների մոտ. հունվ. 18-ին որոշվեց Ռուս. կամավորական բանակում ունենալ ներկայացուցիչ, առանց քաղաքական լիազորությունների, և այդ պաշտոնին կոչվեց Պետ. դումայի նախկին անդամ Հ. Սաղաթելյանը։ Ապրիլի 11-ին Սաղաթելյանը ներկայացուցիչ կարգվեց և Կուբանի կառավարության մոտ. փետրվարին մի պատվիրակություն ուղարկվեց Թավրիզ՝ Պարսկաստանի հետ սերտ բարեկամական հարաբերություններ մշակելու նպատակով։ Մարտին Բաքվում դիվանագիտական ներկայացուցիչ նշանակվեց Տ. Բեգզադյանը, Թիֆլիսում՝ Լ. Եվանգուլյանը։

Ներքին աշխատանքների շարքում, սահմանների ընդարձակումից և գաղթականների տեղավորումից հետո, առաջին տեղը բռնում էր բանակի կարգավորումն ու որբերի խնամատարությունը։ Հայաստանի խորհրդի հունվ. 7-ի որոշումով կատարվեց զորացրում, և զենքի տակ պահվեցին միայն հինգ տարվա —1894 հունվ. 1—1899 հունվ. 1— ծնունդները։ Հայաստանի խորհուրդը հատկացրեց խոշոր գումարներ՝ բարելավելու համար զորքի նյութական ու տեխնիկական վիճակը։

Երկրի բազմաթիվ վայրերում բացվեցին որբանոցներ ու աշխատանոցներ։ Այդ նպատակով ևս հատկացվեցին խոշոր գումարներ և գործի կանչվեցին ձեռնհաս վարիչներ։ Հայաստանից դուրս գտնվող որբերին ու գաղթականներին օգնելու համար՝ մարտի 27-ին Թիֆլիսում խնամատարության ներկայացուցիչ նշանակվեց Գ. Դավիթխանյանը։ Մայիսի սկզբին 3 միլիոն ռուբլի հատկացվեց Ախալքալաքի սովյալներին նպաստ բաշխելու, և 74000000 ռ.՝ նույն շրջանում սերմացու բաժանելու համար։ Մարտի 11-ին պայման կնքվեց և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին հանձնվեց 15000 որբերի 2 տարվա հոգատարությունը։ Ըստ կազմած նախահաշվի, Նպաստամատույցը այդ նպատակով պիտի ծախսեր 90 միլիոն ռուբլի։

Մարտի 15-ին հաշվեհարդարի ենթարկվեց բծավոր տիֆի դեմ պայքարող արտակարգ հանձնախումբը. համաճարակը այլևս վերջացած էր։

Կառավարության հատուկ ուշադրության առարկա էր երկաթուղու բարեկարգման գործը, որի համար դրսից հրավիրվեցին ձեռնհաս մասնագետներ. բացվեցին խոշոր վարկեր, ձեռք բերվեցին անհրաժեշտ նյութեր։ Փետր. 15-ին հանրապետության երկաթուղիների ընդհանուր կառավարիչ նշանակվեց հայտնի մասնագետ ինժ. Միքայել Օգանեզյանը, սպասարկության պետ՝ ինժ. Մ. Ալիբեգյանը, ուրիշ պաշտոնների՝ ինժ. Արշ. Պիչիկյանը, ինժ. Բ. Փիրումյանը։ Մարտից սկսած երկաթուղային վարչության կենտրոնը փոխադրվեց Ալեքսանդրապոլ։ Ապր. 29-ին հատկացվեց 11230537 ռ. երկաթուղիները, կայարանները և երկաթուղային շենքերը վերանորոգելու համար։

Համեմատաբար, թույլ էր ընթանում պարենավորման գործը։ Պարենավորման նախարարության մեջ սաեղծվել էր բազմիշխանություն. նախարար Լ. Ղուլյանը և պաշտոնակատար Ս. Հարությունյանը Թիֆլիսում և Ս. Հարությունյանի պաշտոնակատար Գ. Մելիք-Ղարագյոզյանը՝ Երևանում միաժամանակ կարգադրություններ էին անում, որոնք, հաճախ, խաչաձևում էին իրար և առաջ էին բերում իրավացի դժգոհություն ու գանգատներ Գ. Մելիք-Ղարագյոզյանի կողմից։ Վերջինս փետր. 2-ին նախարարական խորհրդի նիստում հարց հարուցեց, թե պետք է միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու համար բազմիշխանությունը։ Հայտարարվեց, թե պարենավորման նոր նախարար է հրավիրված և շուտով գալու է Քր. Վերմիշյանը, սակայն, Վերմիշյանը դեռ երկար չերևաց Երևանում, իսկ պարենավորման գործերը երթալով՝ ավելի և ավելի խճողվում էին։ Փետր. 25-ին Մելիք-Ղարագյոզյանը նորից գանգատ ներկայացրեց Ս. Հարությունյանի քայլերի դեմ և հարց դրեց, թե՝ արդյոք ինքը պարտավո՞ր է ենթարկվել նրա հրահանգներին. կառավարությունը որոշեց, որ պարենավորման նախարարության վերաբերմամբ Մելիք-Ղարագյոզյանից զատ ուրիշ ոչ ոք կարգադրություններ անելու իրավունք չունի։ Այսպես տևեց դրությունը, մինչև որ մարտի 1-ին պարենավորման նախարար նշանակվեց Քր. Վերմիշյանը։ Պարենավորման տագնապի դեմ պայքարելու նպատակով մարտի 26-ին հատկացվեց 50 միլիոն ռուբլի գյուղացիության սերմացու հայթայթելու համար։

Կառավարության կազմի մեջ եղան և ուրիշ փոփոխություններ. մարտի 27-ին զինվորական նախարարի պաշտոնից հրաժարվեց զոր. Հ. Հախվերդյանը և նույն օրը նրա փոխարեն նշանակվեց գնդ. Քր. Արարատյանը՝ բարձրացվելով միաժամանակ զորավարի աստիճանի։ Զինվորական նախարարի օգնական նշանակվեց Դրոն։ Ապր. 25-ին կազմվեց զինվորական խորհուրդ, որի նախագահ կարգվեց զոր. Թ. Նազարբեգյանը, անդամներ՝ զոր. Հ. Հախվերդյանը և զոր. Հ. Բաղրամյանը։ Զոր. Նազարբեգյանին հանձնվեց և Հայաստանի բանակի սպարապետությունը։

Առհասարակ, կառավարությունը իրեն կայուն չէր զգում. ժողովրդական նախարարների աչքը ավելի Թիֆլիս էր, քան Երևան։ Դրանից դժգոհ էին ամենքը, որոնց թվում և Երևանի ժողովրդականները։ Հայաստանի խորհրդի ժողովրդական պատգամավորները, որոնք սկզբում ուժ էին տալիս կառավարությանը, կամաց-կամաց կրկին անցան ընդդիմադիրների կողմը, և խորհրդի ամբիոնը նորից դարձավ կուսակցական կրքոտ վեճերի տեղ. կառավարությունը ստիպված էր լինում՝ բան ու գործ թողած՝ օրերով զբաղվել հարցումներով ու հարցապնդումներով և քննադատություններին պատասխանելով։

Նման քննադատություններն ու հարձակումները հուզում էին հանրային միտքը։ Հայաստանի խորհրդի նիստերին ներկա եղած հասա-

բակությունը հաճախ արտահայտում էր իր դժգոհությունը, երբեմն նույնիսկ անթույլատրելի ձևերով։ Այս հողի վրա, փետր. 28-ին տեղի ունեցավ մի դեպք, որ ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի Խորհրդի համար։

Քննվում էր Սուրմալուի գավառում զինվորական դրություն հայտարարելու առաջարկը։ Կառավարությունն այդ առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ գավառի թուրք ազգաբնակչությունը բացահայտ թշնամական դիրք էր բռնել դեպի Հայաստանի պետականությունը, զինված հարձակումներ էր գործում հայ բնակչության և պաշտոնեության վրա, կտրել էր ճանապարհները, մշտական վտանգի տակ էր պահում Էջմիածին—Իգդիր խճուղին և այլն։ Ընդդիմադիրները, բնականաբար, դեմ էին օրինագծին։ Խորհրդի նիստի միջոցին, ներկա գտնվող ամբոխը, հավանաբար, ո՛չ առանց որոշ պատգամավորների դրդումի, խուժելով ժողովասրահը՝ հարձակվեց ընդդիմադիր պատգամավորների վրա։ Տեղի ունեցավ վեճ ու կռիվ, և նիստը խանգարվեց։

Այս դեպքից հետո, Խորհուրդը, կարելի է ասել, կանոնավոր աշխատանք չունեցավ։ Կուսակցությունները երկար բանակցություններից հետո որոշեցին ձեռնարկել Խորհրդարանի ընտրություն. երկիրն արդեն մտնում էր բնականոն դրության մեջ և ժամանակն էր նշանակովի Խորհուրդը ընտրված Խորհրդարանով փոխարինելու։

Ի վերջո, ապր. 27-ի նիստում, Հայաստանի Խորհուրդը որոշեց. «1. Խորհրդի պարապմունքները դադարեցնել մեկ ամսվա ժամանակամիջոցով. 2. Դադարի միջոցին Խորհրդի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը. 3. Կառավարությանը հանձնարարել արտակարգ կարևորություն ունեցող դեպքում հրավիրել Խորհրդի արտակարգ նիստ»։

Այս որոշումով փաստորեն վերջ գտավ Հայաստանի Խորհուրդը, որ հայոց պատմության ամենախռովահույզ շրջանում հանդիսացավ երկրի գերագույն իշխանությունը։

ԳԼՈՒԽ ԻԱ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Մայիսի 28-ի ակտը

1919 թ. գարնանը Հայաստանի կյանքի կարևոր երևույթներից մեկն էր և Արևմտահայ երկրորդ համագումարը։

Հայաստանի Հանրապետության գոյության սկզբի շրջանում, արևմտահայությունը իրեն մեկուսացած էր պահում պետական կյանքից։ Այդ արտահայտվում էր շատ բաներում. պետական հիմնարկություններում, համեմատաբար, քիչ արևմտահայ պաշտոնյաներ կային. արևմտահայ երիտասարդությունը պարտադիր զինվորակոչից խուսափում էր։ Ուրիշ պետական պարտավորությունների հանդեպ էլ արևմտահայությունը վերապահ էր և, առհասարակ, հարազատ չէր զգում իրեն հանրապետության մեջ։ Անդրանիկը, որ Բաթումի դաշնագրից հետո իր զորամասով ու գաղթականներով հեռացել էր Հայաստանից և ապա ամրացել Զանգեզուրում՝ թշնամական դիրք բռնելով «թուրքերի ձեռքով ստեղծած» հանրապետության վերաբերմամբ, զգալի չափով արտահայտիչ էր արևմտահայերի այն ժամանակվա մտայնությանը։ Ազգային պատվիրակությունը Փարիզում Պողոս փաշա Նուբարի գլխավորությամբ ավելի հեղինակություն էր վայելում արևմտահայերի մեջ, քան Հայաստանի Հանրապետության կառավարությունը։ «Հայաստանի Հանրապետություն» խոսքն էլ ընդունելի չէր շատերի համար եղածը սոսկ «Արարատյան Հանրապետություն էր»։

Ընդհակառակը, «Արարատյան Հանրապետության» կառավարությունը ամեն կերպ աշխատում էր վերացնել այդ խորթությունը և, առհասարակ, հատվածական խնդիրը Հայաստանում՝ մի գործ, որ, իհարկե, հեշտ չէր այն ժամանակվա պայմաններում։ Տասնյակ տարիներ հայ քաղաքական միտքը դաստիարակվել էր այն ուղղությամբ, որ Հայաստանը այնտեղ էր, Բարթողյան լեռնաշղթայի մյուս կողմը, հայկական հարց, Հայաստանի ինքնավարություն, հայ պետություն կարող էր լինել միայն Թուրքահայաստանում, և, հանկարծ, բոլորովին չսպասված տեղից՝ մեջտեղը բռնում է ինչ-որ մի «Հայաստանի Հանրապետություն՝ մարսելի՞ բան էր այդ։ Հետո, այդ «Հանրապետության» մեջ դեռ շատ բանից՝ օրենքներից ու լեզվից սկսած մինչև ներքին կարգերը, մինչև

հանրային կենցաղն ու բարքերը՝ ռուսի հոտ էր բուրում։ Արևմտահայության մտքին ու զգացմունքներին խորթ էր այդ, անհարազատ։

Ուստի և զարմանալի չէ, որ անկախության առաջին օրերից հենց նրանք սկսել էին մտածել «ինքնորոշման», իրենց քաղաքական դիրքն ու ընթացքը որոշելու մասին։ Այդ նպատակին ծառայեց Արևմտահայ երկրորդ համագումարը Երևանում փետր. 6—13-ին։

Համագումարը ծրագրվեց միջկուսակցական մի շարք խորհրդակցությունների մեջ, ուր դեկտ. 19-ին կազմվեց համագումարի կազմակերպիչ կոմիտե։ Այս վերջինիս դիմումի վրա՝ Հայաստանի Խորհուրդը դեկտ. 28-ին տրամադրեց 35000 ռ. համագումարի կարիքների համար։ Համագումարը ենթադրվում էր բանալ հունվ. 25-ին, բայց շրջանների պահանջով՝ հետաձգվեց տասն օրով։ Խորհրդակցությունների մեջ կազմվել էր հետևյալ օրակարգը.

«1. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության քաղաքական նպատակներու ձևակերպումն ու արտահայտությունը։

2. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության ներգաղթի խնդիրը և կազմակերպությունը։

3. Արևմտյան Հայաստանի գաղթական հայության ներկայացուցչական և հաշվեհարդարի մարմնի ընտրությունը»։

Համագումարը կազմվեց ժողովրդական քվեարկությամբ՝ երկաստիճան ընտրական սկզբունքով։ Համագումարը ներկայացնում էր հետևյալ կազմը*։

Երևան՝ 31700 գաղթական—8 պատգամավոր. Հ. Կոսոյան, Ջ. Կորկոտյան, Հ. Հայրապետյան, Հ. Կարինյան, Ռ. Շատվորյան, Ե. Ալեքսանյան, Մ. Մալոյան, Ա. Ավետիսյան։

Էջմիածին՝ 46600 գաղթական—3 պատգ. Եղնիկ վարդ. Ներկարարյան, Հ. Մուղոյան, Վ. Համբարձումյան։

Աշտարակ՝ 12880 գաղթական—2 պատգ. Գ. Ոսկերիչյան, Ռ. Թերլեմեզյան։

Մաղկաձոր՝ 23750 գաղթական—3 պատգ. Տ. Ղիմոյան, Շ. Բասենցյան, Տ. Թերլեմեզյան, Մ. Մանուկյան, Հ. Աբրահամյան։

Կոտայք՝ 17570 գաղթական—5 պատգ. Ա. Մանուկյան, Շ. Շարանբեյան, Ա. Ղուկասյան, Ս. Գալստյան, Հ. Շահբազյան։

Սուրմալու՝ 25700 գաղթական—4 պատգ. Ա. Միրզոյան, Օ. Ղորղանյան, Թեյմուր բեգ և Թեմուր աղա։

Միլլի ձոր՝ 10670 գաղթական—1 պատգ. Ա. Մխիթարյան։

Ալեքսանդրապոլ՝ 10000 գաղթական—1 պատգ. Ս. Խալոյան։

Դիլիջան՝ 12000 գաղթական—2 պատգ. Վ. Առաքելյան, Ղ. Հովսեփյան։

* Բոլոր բաղվածքները առնում ենք «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի, 1919 թ., Թիֆլիս. հրատ. Արևմտահայ Գործադիր մարմնի» գրքույկից։

Բաշ-Դարանի՝ 5000 գաղթական— 1 պատգ. Մ. Դարմանյան։

Նոր Բայազետ՝ 27973 գաղթական— 7 պատգ. Վ. Քրոմյան, Բ. Աբոյան, Ա. Խաչիկյան, Մ. Գրիգորյան, բժ. Մուրադյան, Ա. Խոջայան, Գ. Ասլանյան։

Կազմակերպիչ կոմիտե՝ Գրիգոր Բուլղարացի, Սմբատ, Վ. Տերոյան, Ռ. Դրամբյան, Ա. Սասունի, Վ. Հոխիկյան, Հ. Մխիթարյան, Ա. Կիտուբ, Ն. Բուռնուիյան։

Արևմտահայ խորհրդի անդամներից՝ բժ. Բոնապարտյան, Վանփուշ։

Հայաստանի խորհուրդ՝ Ս. Վրացյան։

Եղբայրական օգնության կոմիտե՝ Կոբյուն վարդ. Սահակյան։

Կովկ. Հ. բարեգ. ընկերություն՝ Ե. Հարությունյան։

Լորդ Մեյբրս կոմիտե՝ Ս. Թոփալյան։

«Աշխատանք», «Վան-Տոսպ» թերթերից՝ Ա. Գազանջյան, Հ. Վարդապետյան։

Այսպիսով, համագումարին մասնակցում էին 55 պատգամավորներ։ Պատգամավոր չէին ուղարկել Սիսիանի, Ղամարլուի և Դարալագյազի գաղթականները։ Բացակայում էին նաև Ղարաքիլիսայի 2 պատգամավորները։ Հրավիրված էին նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչը, Անդրանիկը և ուրիշներ։ Անդրանիկի մոտ ուղարկվել էր հատուկ մարդ՝ խնդրելով, որ անպատճառ ներկա գտնվի համագումարին, բայց նա չէր համաձայնվել մասնակցել մի ժողովում, որը գումարվելու էր «Թուրքերի ձեռքով ստեղծած Հայաստանի» մայրաքաղաքում։ Իր պաշտոնական նամակում (հունվ. 25) նա գրում էր. «Մտածելով, որ չեմ կրնար այդ համագումարին մասնակցելովս օգտակար դառնալ և թեթևացնել ձեր աշխատանքները, ուստի հրաժարվում եմ ներկա լինել այդ համագումարին»։ Կաթողիկոսը ուղարկել էր օրհնության կոնդակ և Գ. եպ. Չերեքչյանին՝ ներկայացուցիչ իր կողմից։ Շնորհավորական նամակներ էին ուղարկել Հ. Հ. Դաշնակցության Արևմտյան Հայաստանի Կենտր. կոմիտեն և Հայ ռամկավար կուսակցության Երևանի շրջանային վարչությունը։

Փետր. 4-ին և 5-ին տեղի ունեցած նախապատրաստական նիստերում կազմվեց համագումարի նախագահությունը՝ 3 նախագահներ՝ Գր. Բուլղարացի, Վ. Տերոյան և Վ. Քրոմյան, երկու քարտուղարներ՝ Ա. Կիտուր և Հ. Վարդապետյան, լիազորությունները քննող մարմին և 4 հանձնաժողովներ՝ շրջանների զեկուցումների, քաղաքական, ներգաղթի և հաշվեհարդար կազմակերպչական։

Համագումարի պաշտոնական բացումը տեղի ունեցավ Հայաստանի Խորհրդի սրահում, փետր. 6-ին, Գր. Բուլղարացիի նախագահությամբ։ Կաթողիկոսական կոնդակի ընթերցումից հետո ողջույնի ճառեր խոսեցին Հ. Քաջազնունին, որ հայտնեց կառավարության ցանկությունը՝ այս

համագումարով վերացած տեսնել հայության հատվածական բաժանումը, Ս. Վրացյանը, Կորյունը վարդ.-ը, Ս. Թոփալյանը, Ե. Հարությունյանը, Ա. Տեր-Հակոբյանը և Խաչիկյանը։ Վ. Տերոյանը կարդաց մի զեկուցում համագումարի աշխատանքների մասին։ Վ. Քրմոյանը հարգանքի խոսք ուղղեց նահատակված զոհերի հիշատակին։ Հասարակությունը, որ խռնված էր սրահում, ջերմ վերաբերմունք ցույց տվեց համագումարին։ Բազմաթիվ կազմակերպություններ, հիմնարկություններ և գործիչներ գրավոր ողջունել էին համագումարը։

Համագումարի աշխատանքները անցան համերաշխության մթնոլորտում. միայն քաղաքական բանաձևի շուրջ տեղի ունեցան բուռն վիճաբանություններ ու բախումներ։ Եվ հենց այդ հարցն էր կազմում համագումարի առանցքը։ Բժ. Բոնապարտյանի զեկուցումից հետո երկարորեն քննության առնվեցին առաջարկված բանաձևի հատվածները 1, 2 և 5 կետերը։ Հոդված առ հոդված քննելուց և մաս-մաս ընդունվելուց հետո, ամբողջական բանաձևը երրորդ քվեարկությամբ, դրվեց վերջ. 12-ին և ընդունվեց միաձայնությամբ ու ջերմ ծափահարություններով։ Արևմտահայության քաղաքական կամքի ձևակերպումն էր այդ։ Բանաձևն ասում է.

«Արևմտահայ երկրորդ համագումարը՝ քննելով հայ ժողովրդի ներկա կացությունը՝

1. Սրտագին կողջունե և կհայտարարե Ազատ և Միացյալ Հայաստանի անկախությունը։

2. Լիակատար վստահություն կհայտնե Ազատ և Միացյալ Հայաստանի Պողոս Նուբար փաշայի անդրանիկ դահլիճին*։

3. Կհայտարարե իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մեկ միություն համազգային հատվածներու և երկրամասերու միավորությամբ։

4. Կպարտադրե ընտրված «Գործադիր մարմնին»՝ նախարարական դահլիճին հետ անմիջական հարաբերության մեջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկավոր են Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյությունը հիմնավորելու համար։

5. Միաժամանակ կպարտադրե ընտրված Գործադիր մարմնին՝ գործնական քայլեր առնել Արարատյան Հանրապետության նախարարության և Խորհրդարանի հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և իր մասնակցությունը բերելու գոյություն ունեցող պետական և օրենսդրական հաստատություններու մեջ համազգային միությունը իրականացնելու համար*։

6. Կպահանջե Ազատ և Միացյալ Հայաստանի պետական գոյության երաշխավորումը՝ դաշնակից պետություններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակությամբ և աջակցությամբ։

7. Կպահանջե Հայկական Մեծ եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիվաղներուն՝ Վիլհելմի, Էնվերի, Թալեաթի, Ջեմալի, Նազիմի, Բեհաէդդին Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և բոլոր ղեկավարներու գինվորական դատարանով պատժվիլը։

8. Կպահանջե հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիվ օսմանյան կառավարության»։

Թեթև ակնարկն իսկ բավական է հասկանալու համար, թե ի՞նչ սուր պայքար է տեղի ունեցել բանաձևի շուրջ. նա մեքենայական միացումն է երկու՝ բոլորովին անհաշտելի տեսակետների՝ մի կողմից «լիակատար վստահություն... Պողոս Նուբար փաշայի անդրանիկ դահլիճին», մյուս կողմից՝ «գործնական քայլեր Արարատյան Հանրապետության և Խորհրդարանի հետ Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու» և այլն։ Անկասկած, ռամկավար պատգամավորները ավելի հետևողական էին իրենց հակաարարատյան տրամադրություններով։ Պետք էր կանգնել կա՛մ Հայաստանի, կա՛մ Փարիզի տեսակետի վրա. ռամկավարները ընտրեցին վերջինը. համագումարի մեծամասնությունը դեռ տատանվում էր Արարատի և Փարիզի միջև։

Այս տեսակետից, բնորոշ էին նաև համագումարի կողմից «Հայկական պատվիրակության նախագահ Նորին վսեմափայլության Պողոս Նուբար փաշային» և «Արարատյան Հանրապետության պ. վարչապետին» տրված ողջույնի հեռագրերը։ Առաջինում ասվում էր, թե համագումարը «իր սրտագին ողջույնները կուղղե Ձերդ վսեմության և իր լիակատար վստահությունը կհայտնե, որ Ձեր կարող և արդյունավետ գործունեությամբ պետք է վերջնականապես ձևակերպվեն հայ բնաշխարհի պետական հիմքերը և հայ բազմաչարչար ժողովրդին հնարավորություն տրվի աշխատել և վերստեղծել իր հայրենի տունը։ Համագումարը տեսնելով Ձեր մեջ յուր իղձերու և ցանկություններու լավագույն արտահայտիչը՝ հույս ունի, որ յուր քաղաքական և ազգային ձգտումները կջանաք լուծել հայ ժողովրդի արհեստականորեն անջատված հատվածներու միավորությամբ և մեկ պետական-քաղաքական իրավակարգի ստեղծմամբ»։

«Արարատյան Հանրապետության պ. վարչապետին» ուղղված հեռագրում համագումարը «ողջունելով հայության մեկ հատվածի կառա-

* Այդ օրերին Երևանում լուր էր շրջում, թե Փարիզում Պողոս Նուբարը հայտարարել է Հայաստանի անկախությունն ու միությունը և կազմել Միացյալ Հայաստանի կառավարություն։

* Այս կետին դեմ արտահայտվեցին ռամկավար 5 պատգամավորները և պատճառաբանված հայտարարություն ներկայացնելով՝ նիստից հեռացան։

վարությունը՝ լիահույս է, որ ան ևս կմիացնե իր ձայնը Արևմտահայ համագումարի վճռին՝ ունենալ մեկ հայրենիք և մեկ Միացյալ Ազատ Հայաստանի պետական կազմակերպություն։

Համագումարը գտնելով սույն խնդիրը հայության համար պատմական մեկ կարևոր խնդիր՝ հավատացած է, որ Արարատյան Հանրապետության կառավարությունը կիմանա օր առաջ հայտարարել Միացյալ Ազատ Հայաստանի անկախությունը և գործնական քայլեր առնել՝ միացումը իրականացնելու համար կյանքի մեջ»։

Այս վերջին միտքը շեշտվում է «Արարատյան Հանրապետության Խորհրդարանին» ուղղված հեռագրում. «Արևմտահայ Բ համագումարը՝ ողջունելով Հանրապետության անդրանիկ Խորհրդարանը՝ վստահ է, որ ան ևս իր հեղինակավոր ձայնը պիտի միացնե հայության ամենեն շատ տանջված և զոհաբերած խոշոր հատվածի ձայնին՝ ունենալ մեկ հայրենիք, Միացյալ Անկախ Հայաստան, մեկ պետական կազմակերպությամբ։ Համագումարը հավատացած է, որ Խորհրդարանը չի ուշանար իր որոշումը տալու հայության համար խիստ կարևոր այս խնդրի մասին»։

Համագումարը բանաձևեր հանեց և արևմտահայ նախկին մարմինների հաշվեհարդարի ու ներգաղթի մասին։ Առաջինը ասում էր.

«Արևմտահայ Բ համագումարը՝ լսելով հաշվեհարդար հանձնաժողովի զեկուցումը արևմտահայ նախկին մարմիններու մասին և տեսնելով, որ անոնք կազմալուծ վիճակի մը մեջ կգտնվին շնորհիվ այն հանգամանքին, որ 1918 թ. մայիս ամսեն ի վեր ոչ մի տեղ չեն հաջողած մեծամասնություն կազմել, իրենց ընտրողներուն հավաքել և իրենց տնտեսական-բարոյական գործունեության հաշիվը ներկայացնել, ինչպես նաև շնորհիվ այն հանգամանքին, որ ոչ միայն իրենց ընտրողներու մոտ չեն վերադարձած և Բ համագումարին չեն ներկայացած, մի բան, որ ըստ ամենայնի անոնք հնարավորություն ունեին, այլև միայն 2—3 հոգիի համաձայնությամբ հանձն են առած արևմտահայ փախստականության հանդեպ այնպիսի պարտականություններ կատարելու, որ երբեք իրենց վրա դրված չէ եղած, անոնց գումարները անձնական պատասխանատվությամբ զանազան գործերու հատկացնելով, մի բան, որ ո՛չ համագումարը, ո՛չ կոնֆերանսը և ո՛չ ալ խորհուրդները չէին թույլատրած։ Արևմտահայ Բ համագումարը, որպես Հայաստանի Հանրապետության սահմաններու մեջ ապաստանած փախստական ներկայացուցչությունը՝ կհայտարարե նախկին խորհուրդները լուծված՝ պահանջելով բարոյական և նյութական հաշվետվություն իրենց ամբողջ գործունեության վերաբերմամբ թե՛ հավաքականորեն և թե՛ անձնապես»։

Ներգաղթի համար «համագումարը կհրահանգե ընտրվելիք մարմնին այժմեն անհրաժեշտ միջոցները ձեռնարկել պատմական Միացյալ Հայաստանի կառավարության մոտ և դաշնակիցներու ներգործոն միջամտությամբ և աջակցությամբ պետականորեն ապահովել ներգաղթող ժողովրդի ֆիզիկական գոյությունը և պարենավորման անհրաժեշտ պայմանները, ինչպես նաև անոր հետևող վերաշինության գործի իրականացման անհրաժեշտ տվյալները հավաքել»։

Ի վերջո, փետր. 13-ի նիստում, գաղտնի քվեարկությամբ ընտրվեց «Արարատյան Հանրապետության մեջ ապրող արևմտահայ հատվածի Գործադիր մարմին՝ բաղկացած հետևյալ 9 անձերից. Սմբատ Բորոյան, Խաչ. Բոնապարտյան, Ար. Սասունի, Գր. Բուլղարացի, Վար. Տերոյան, Ռուբ. Դրամբյան, Վահագն Քրմոյան, Վաղ. Հոխիկյան և Արս. Կիտուր։ Գործադիր մարմնի համար մշակվեցին հետևյալ հրահանգները.

1. Նա կիրականացնե համագումարի որոշումները։

2. Կշարունակե մնալ իր ստանձնած պարտականություններու և իրավասության մեջ մինչև Միացյալ Ազատ Հայաստանի պետական-օրենսդրական հաստատություններու իրականացումը՝ հայության մյուս հատվածներու՝ Պոլոս Նուբարի կաբինետի, Արարատյան Հանրապետության կառավարության և Խորհրդարանի գործակցությամբ և համաձայնությամբ։

3. Բացառիկ և համազգային արժեք ներկայացնող որևէ դեպքի առթիվ կհրավիրվի սույն համագումարն իր լրիվ կազմով՝ Գործադիր մարմնի անդամներուն մեկ երրորդին կամ համագումարի անդամներու կեսեն ավելիի պահանջմամբ։

4. Գործադիր մարմինը հաշվետու և պատասխանատու է համագումարի առաջ իր գործունեության համար։

5. Համագումարի 2-րդ նստաշրջանը կհրավիրվի մայիսի 1-ին, եթե մինչ այդ ներգաղթը չէ կատարված և եթե հնարավոր է պատգամավորներու կեսեն ավելին հավաքել։

6. Գործադիր մարմնի օրենսդրական գործունեությունը կսահմանափակվի միայն այն չափով, որ չափով որ չի հակասեր համագումարի որոշումներուն և բանաձևերուն։

7. Գործադիր մարմինը կաշխատե մյուս շրջաններեն ևս, որոնք զանազան պատճառներով ներկա կազմեն կբացակայեն, պատգամավորներ բերելով՝ լրացնել յուր կազմը»։

Այսպիսով, ստեղծվում էր մի նոր կառավարություն՝ «Արարատյան կառավարության» կողքին։ Գործադիր մարմինը կազմակերպվեց պետական հիմունքներով՝ տալով իրեն մի տեսակ նախարարության բնույթ. իր նախագահին և անդամներին տրվեց նախարարական դեր։ Անգամ նյութական կողմով հետ չմնաց կառավարությունից. նախագահին նշանակեց վարչապետական ռոճիկ, անդամներին՝ նախարարական դրամը, իհարկե, ստանալով «Արարատյան Հանրապետության» գանձարանից։

Այս դրությունը, սակայն, երկար չտևեց. կյանքը ստիպում էր գնալ միակ հնարավոր ճանապարհով՝ հատվածական տարբերությունների վերացման ուղիով։ Եվ ամենից շատ արևմտահայությունն էր զգում այդ պահանջը։ Գործադիր մարմինը ընդառաջ գնալով հանրային շեշտված տրամադրության՝ մի շարք ժողովներում քննության առավ համագումարի որոշումը՝ «մեկ հայրենիք, Միացյալ Անկախ Հայաստան» ունենալու մասին և եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է օր առաջ հայտարարել Հայաստանի երկու հատվածների միացումը։ Եվ այդ իմաստով պաշտոնական դիմում արավ կառավարությանը։

Արևմտահայ Գործադիր մարմնի դիմումը միանգամայն համապատասխան էր այն օրերին Հայաստանի գրեթե բոլոր խավերում տիրող տրամադրությանը։ Փետր. 25-ին կառավարությունը քննության առավ Գործադիր մարմնի դիմումը և միաձայնությամբ համաձայնվելով առաջարկին՝ հանձնարարեց արտաքին գործոց նախարարին պատրաստել մի զեկուցում Հայաստանի Խորհուրդ մտցնելու համար։ Նման քայլի անհրաժեշտությունը չէր մերժվում կառավարության ո՛չ մի անդամի կողմից։

Այնուհետև կատարվեցին նախապատրաստական աշխատանքները Հայաստանի անկախության և միության հայտարարությունը հանդիսավորապես կատարելու համար։ Այդ նպատակով կազմվեց մի հանձնախումբ հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանի նախագահությամբ։ Գ. Մելիք-Ղարագյոզյանը հանուն հանձնախմբի մի կոչ հրատարակեց, որով հրավիրում էր ժողովրդին արժանավոր վայելչությամբ տոնել Մայիսի 28-ը. «Թո՛ղ Մայիսի 28-ի օրը լինի զոհերի հիշատակին, բայց և համազգային մեծ ուրախության օր՝ օ՛ր նոր պետության ստեղծման բիբլիական Արարատի շուրջը, օ՛ր ազգային բարձր իղձերի և համաշխարհային արդարության հաղթանակի»։

Նախարարների խորհրդի մայիսի 27-ի նիստում, որին ներկա էին Ա. Խատիսյանը, զոր. Արարատյանը, Ս. Մանասյանը, Քր. Վերմիշյանը, Ս. Թորոսյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը, Հ. Ջմշկյանը և ուրիշներ, լսվեց վարչապետի զեկուցումը այն բոլոր ձեռնարկների մասին, որոնք կատարվել էին Հայաստանի անկախության տարեդարձի օրը միության հայտարարությունը անելու համար և կարդացվեց հայտարարության նախագիծը։ Կառավարությունը հավանություն տվեց արված աշխատանքին, որոշեց, Հայաստանի Խորհրդի ապր. 27 օրենքի հիման վրա, հաստատել հայտարարության նախագիծը և հանձնարարեց վարչապետին հրապարակել։ Որոշեց նաև «հրավիրել Հայաստանի Խորհրդի նիստերին մասնակցելու, որպես Խորհրդի անդամներ, Արևմտահայ Գործադիր մարմնի 12 անդամներին»*։

* Քաղվածք Նախարարների խորհրդի 1919 թ. մայիսի 27-ի նիստի արձանագրությունից։

Նույն նիստում քննվեց հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանի առաջարկը՝ Հայաստանի անկախության և միության հայտարարությունը հավերժացնելու համար. 1) մայրաքաղաքում հուշարձան կանգնեցնել հայ ազատամարտում ընկած հերոսներին ի հիշատակ և այդ նպատակով կազմել հիմնադրամ՝ կառավարության կողմից հատկացնելով 1000000 ռ. և 25000 ռ. էլ արձանի մրցանակաբաշխության համար, 2) հրատարակել հայկական ազատագրության վերջին շրջանի պատմությունը, որի համար տրամադրել 285000 ռ., 3) բաց թողնել առանձին շքանշան «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» մակագրությամբ։ Այս առաջարկն ևս հաստատվեց միաձայնությամբ։

Երկու օր վերջը, մայիսի 28-ին, Հայաստանի Խորհրդի հանդիսավոր նիստում կատարվեց Հայաստանի միության և անկախության հայտարարությունը։

Այդ օրը Երևանը ստացել էր շքեղ, տոնական կերպարանք։ Ամբողջ քաղաքը զարդարված էր դրոշակներով, գորգերով, կանաչներով ու ծաղիկներով։ Վաղ առավոտվանից փողոցները լիքն էին բազմություններով։ Շրջակա գյուղերից քաղաք էին գալիս խումբ-խումբ գյուղացիներ, պատգամավորություններ դրոշակներով՝ հանդեսներին մասնակցելու համար։

Առավոտյան, քաղաքային ինքնավարության շենքի ընդարձակ հրապարակում տեղի ունեցավ հոգեհանգիստ հայրենիքի ազատության համար զոհվածների հիշատակին, ապա՝ մաղթանք և զորահանդես։ Հրապարակն ու մոտակա փողոցները բռնված էին ծովածավալ բազմությամբ, զորքով, դպրոցական աշակերտներով, արիներով, որբերով։ Մեջտեղը տեղավորված էին Հայաստանի Խորհրդի ու կառավարության անդամները, բարձր հրամանատարությունը՝ զոր. Նազարբեգյանի գլխավորությամբ, զոր. Դևին, Պարսկաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները, Ամերիկյան կոմիտեի անդամները և ուրիշներ։ Պատվո պահակախմբի ուղեկցությամբ էջմիածնից եկել էր Ամենայն Հայոց կաթողիկոսը, որ նախագահում էր հոգեհանգստի և հացամաղթանքի արարողությանը։

Հոգեհանգստից ու մաղթանքից և վարչապետի՝ բանակին ուղղած խոսքից հետո, սկսվեց զորահանդեսը՝ հազարավոր ներկաների ծափերի ու ցնծության աղաղակների մեջ։ Զորամասերը՝ հետևակ, հրետանի, այրուձի, զինվորական նվագի ընկերակցությամբ, անցնում էին խրոխտ շարքերով՝ հույզերով ու ոգևորելով հանդիսատեսներին։

Զինվորներից հետո սկսվեց աշակերտների, որբերի, արիների, արհեստակցական միությունների ու ժողովրդի շքերթը։

Հանդեսից հետո տեղի ունեցավ հայտարարության արարողությունը։ Հայաստանի Խորհրդի մուտքն ու դահլիճը նույնպես զարդարված

էին շքեղ՝ դրոշակներով, գորգերով ու ծաղիկներով։ Օթյակները բռնված էին օտար պետության ներկայացուցիչներով։ Մի օթյակ հատկացված էր կաթողիկոսին և իր շքախմբին։ Բեմի վրա աեղավորված էին խորհրդի և կառավարության անդամները։ Դահլիճի առջևի մասում երևում էր գոր. Նազարբեգյանի պատկառելի դեմքը, մյուս կողմը՝ նստած էր գոր. Փիրումյանը։ Սրահը բերնեբերան լեցված էր հյուրերով ու հանդիսականներով։

Հանդեսին նախագահում էր հանրային կրթության և արվեստի նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանը, որ մի գրավոր ճառով բացատրեց հանդեսի նշանակությունը, որից հետո նվագախումբը հնչեցրեց «Մեր հայրենիքը», որ լսվեց հոտնկայս։ Մի պահ տիրեց խորհրդավոր լռություն, ապա վարչապետ Խատիսյանը արտասանեց մի փոքրիկ ճառ և ժողովականների խանդավառ ծափերի մեջ կարդաց հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետական միություն։

Ուղիղ մի տարի առաջ ռուսահայերի համագումարից բնտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն։ Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ բաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությանց ներկայացուցիչներին հայտնելուց հետո, այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունն Անդրկովկասի հայկական գավառներում։

1919 թ. փետրվար ամսին Երևան քաղաքում գայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում։

Այժմ, Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական երկրների միացման և անկախության այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ միացյալ Հայաստանի պետական ձևն է ռամկավար հանրապետություն և որ ինքը հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամբողջացած հայրենիքի գերագույն տերն ու տնօրենը, և Հայաստանի խորհուրդարանն ու կառավարությունը հանդիսանում են միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր և գործադիր իշխանությունը։

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919 թ. ապրիլի 27-ի խորհրդարանի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա»*։

Նախարարների խորհրդի նախագահի և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար — Ա. Խատիսյան
Ներքին գործերի նախարարի պաշտոնակատար — Ս. Մանասյան
Զինվորական նախարար գեներալ-մայոր — Ք. Արարատյան
Արդարադատության նախարարի պաշտոնակատար — Հ. Զմշկյան
Հանրային կրթության նախարար — Գ. Մելիք-Ղարագյոզյան
Խնամատարության նախարար — Ս. Թորոսյան
Պաշտպանության նախարար — Ք. Վերմիշյան
Ֆինանսների նախարարի պաշտոնակատար — Գ. Ջաղեբյան
Գործերի կառավարիչ — Գ. Խատիսյան

1919 թ. մայիսի 28-ին, Երևան քաղաք.

Հայտարարության ընթերցումից հետո, համաձայն նախօրոք եղած որոշման, բեմ բարձրացան և նստեցին Հ. Խորհրդի անդամների շարքում, Արևմտահայ գործադիր մարմնի ընտրած 12 պատգամավորները՝ Հմ. Մանուկյան, Վ. Քրմոյան, Զ. Կորկոտյան, Վ. Հոխիկյան, Վան-Փուշ, Վ. Առաքելյան, Ա. Մաքսապետյան, Ա. Միրզոյան, Ա. Կիտուր, Հ. Կոսոյան, Ա. Սասունի, Հ. Հայրապետյան։ Երկու հատվածների միացման հայտարարության առաջին գործնական արտահայտությունն էր այս, որ հասարակությունը ողջունեց ոգևորված ծափերով։

Այնուհետև կառավարության կողմից հայտարարվեց ընդհանուր ներում վարչական կարգով բանտարկվածների համար, իսկ քրեական հանցագործների պատիժը կրճատվեց կես առ կես։ Եվ նախագահի՝ հուշարձանի, շքանշանի ու հրատարակությունների մասին կառավարական որոշումները հայտարարելուց հետո, հաջորդաբար ողջույնի ճառեր խոսեցին Հ. Խորհրդի նախագահ Ավ. Սահակյանը, արևմտահայերի ներկայացուցիչ Վ. Քրմոյանը, կաթողիկոսը, Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչ հարյուրապետ Էլդրը, Պարսկաստանի, Վրաստանի և Ազրբեջանի ներկայացուցիչները, Հ. Հ. Դ. բյուրոյի կողմից՝ Ս. Արարատյանը, Հ. Հ. Դ. Երևանի և Վրաստանի կ. կ.-ի կողմից՝ Վ. Խորենին, Հանուն Ղարաբաղի հայության՝ Գ. Բալայանը, Ամերիկահայ գաղութի կողմից՝ Ա. Միքայելյանը, պետական ծառայողների կողմից՝ Վ. Ահարոնյանը, Ուսուցչական միության կողմից՝ Ա. Տեր-Թովմասյանը, Կանանց միու-

* Այս ակտը կազմել էին Նիկոլ Աղբալյանը և Գևորգ Խատիսյանը։

թյան կողմից՝ օր. Լ. Տեր-Սարգիսյանը, Երևանի քաղաքային ինքնավարության կողմից՝ Մ. Մուսինյանը և ուրիշներ։

Առանձնապես տպավորիչ էր Գևորգ Ե կաթողիկոսի ճառը, որ անգլիական զինվորականների ներկայությամբ հրավեր էր կարդում հայ ժողովրդին «հույս չդնել օտարի վրա, որովհետև մեր ժողովրդի բարօրությունն ու առաջադիմությունը մեզանից է կախված բացառապես։ Այժմ, երբ Մասիսը մագնիսի պես քաշեց ու միացրեց հայության երկու հատվածները, երբ ստեղծվեց Միացյալ Հայաստան, այժմ պետք է լարենք մեր ազգային բոլոր կարողությունները՝ փրկելու և դաստիարակելու համար մեր ժողովուրդը ի փառս իր ազատ հայրենիքի»։

Վ. Քրմոյանը Արևմտահայ Գործադիր կոմիտեի կողմից կարդաց հետևյալ հայտարարությունը. «Կանգնած մնալով Արևմտահայ Բ համագումարի ընդունած քաղաքական բանաձևի տեսակետին վրա՝ Արևմտահայ Գործադիր մարմինն իբրև Հայկական Հանրապետության սահմաններու մեջ ապրող արևմտահայերու ներկայացուցչական օրգան, լսելով կառավարության հայտարարությունը Հայաստանի միացման և անկախության մասին, սրտագին կողջունե կառավարության կատարած ակտը և իր լիակատար պատրաստակամությունը կհայտնե Հայաստանի Խորհրդարանի և կառավարության մեջ իր գործոն մասնակցությունը բերել՝ իրագործելու Միացյալ Հայաստանի գաղափարը և ամրապնդելու հայ ժողովրդի ազատությունն ու բարգավաճումը»։

Ճառերից հետո, կարդացվեցին բազմաթիվ շնորհավորական գրություններ ու հեռագրեր Հայաստանի զանազան կողմերից և արտասահմանից։ Շնորհավորում էին Վրաստանի Սահմանադիր ժողովն ու վարչապետը, Ազրբեջանի Խորհրդարանն ու կառավարությունը, Լեռնականները, Վրահայոց ազգ. խորհուրդը, Անդրկովկասյան Ասորական ազգ. խորհուրդը, երիտասարդ գրողներ Ստ. Զորյանը, Մ. Մանուելյանը, Լեյլին և շատ ուրիշներ։

Ժողովը խորունկ լռության մեջ, հոտնկայս, հարգեց Արամի հիշատակը և խանդավառ ոգևորությամբ ցույցեր արավ հայկական բանակի ներկայացուցիչներ զոր. Նազարբեգյանին, զոր. Փիրումյանին ու Դրոյին։

Հանդեսը փակվեց «Մեր հայրենիքով», որից հետո վարչապետը պաշտոնական անձերով շրջապատված՝ դուրս եկավ Խորհրդարանի սրատշգամբը և ժողովրդին ու զինվորությանը կարդաց Միացյալ Հայաստանի անկախության հայտարարությունը, որ ընդունվեց որոտագին «կեցցեներով» և թնդանոթի 30 հարվածներով։

Ժողովուրդը մինչև ուշ գիշեր շքերթներով, երաժշտությամբ, երգ ու պարով տոնում էր օրվա մեծ դեպքը։

Խանդավառ հանդիսավորություններ տեղի ունեցան և Հայաստանի գավառներում ու գաղութահայության մեջ։

ԳԼՈՒԽ ԻԲ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ. ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ԽԶՈՒՄԸ

Հայաստանի Խորհրդարան

Մայիսի 28-ի հանդեսները անցան ընդհանուր ոգևորության ու համերաշխության մթնոլորտում։

«Կեցցե՛ Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանը»,— գրում էր մեծատառ՝ ժողովրդականների «Ժողովուրդ» պաշտոնաթերթը, իսկ մեկ օր վերջը, Մայիսի 28-ի ակտը անվանում էր «պետական հեղաշրջում», արդյունք նախարարական կազմի պատահական մեծամասնության։ «Այդ ակտը կունենար խոշոր բարոյական նշանակություն,— գրում էր թերթը,— եթե նա հայտարարվեր խորհրդարանի կողմից»։ Ուրեմն, ակտի էությունը չէր կարևորը, այլ՝ ձևը, մի ձև, որ մշակվել էր և իրենց՝ ժողովրդականների մասնակցությամբ ու հավանությամբ։

Մի քանի օր անցած, Երևան վերադարձավ Ս. Հարությունյանը, որ Թիֆլիսումն էր և մայիսյան հանդեսներին չէր մասնակցել։ Եվ այդ ժամանակ մեջտեղ եկավ ժողովրդականների բողոքը ընդդեմ Մայիսի 28-ի ակտի, որը, իբր թե, չէր համապատասխանում հայ ժողովրդի շահերին։ Ս. Հարությունյանը հիմնավորում էր իրենց տեսակետը նրանով, որ Մայիսի 28-ի ակտը կրում է միակողմանի բնույթ, չունի Պողոս Նուբար փաշայի հավանությունը, չի բխում հայկական հարցի միջազգային կացությունից, և հետևաբար, պետք է հայտարարվի չեղյալ։ Նրան պատասխանում էին, որ հայտարարությունը պատրաստված ու կատարված է ամբողջ կառավարության, հետևաբար և ժողովրդական նախարարների հավանությամբ, որ Մայիսի 28-ի հայտարարության տակ հոժար կամքով ստորագրել են և կառավարության ժողովրդական անդամները, որ հանդեսին նախագահողը ժողովրդական նախարար էր և որ, այդ բոլորից հետո, անտեղի է ինչ-որ առարկություններ առաջ քաշելը։ Բայց ժողովրդականները պնդեցին իրենց պահանջի վրա, որը նրանց պաշտոնաթերթ «Ժողովուրդը» (Հունիսի 4) հետևյալ կերպով էր ձևակերպում. «Միացյալ Հայաստանի պետական իշխանությունը պիտի կազմակերպվի Փարիզի գործադիր մարմնի և Հայաստանի հանրապետական կառավարության փոխադարձ համաձայնությամբ։ Պիտի ստեղծվի մի ժամանակավոր խառն կառավարություն, որը պիտի գումարի Միացյալ Հայաստանի հիմնադիր ժողով, կամ խորհրդարան, եթե մինչ այդ մշակ-

ված լինի երկրի սահմանադրությունը։ Ուրիշ կերպ լուծել միացյալ Հայաստանի իշխանության պրոբլեմը անկարելի է, քանի որ Հայաստանի երկու մասերը մինչև այժմ գտնվել են տարբեր քաղաքական և տնտեսական պայմաններում և ապրել են տարբեր կուլտուրական կյանքով»։

Եվ երբ կառավարությունը մերժեց ընդունել այս պահանջը, հունիսի 24-ին նախարարական կազմից դուրս եկան Ս. Հարությունյանը, Ս. Էնֆիաջյանը, Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ք. Վերմիշյանը, որով և վերջ դրավ կոալիցիան։ Նրանց տեղը նշանակվեցին՝ ելևմտական նախարար՝ Գ. Ջաղեթյանը, պարենավորման՝ Ս. Թորոսյանը, հանրային կրթության՝ Ս. Տիգրանյանը և արդարադատության՝ Հ. Ջմշկյանը։ Այս վերջինը անդամ էր Ժող. կուսակցության, բայց Ս. Հարությունյանը քայլից հետո բողոքեց ու հեռացավ կուսակցությունից*։ Ս. Տիգրանյանի հանր. կրթ. նախարար նշանակվելով՝ արտաքին գործոց նախարարությունը անցավ ստորագրշապետ Ա. Խատիսյանին։ Այս փոփոխությունը որևէ անդրադարձում չունեցավ կառավարական քաղաքականության վրա։

Ժողովրդականների վարմունքը, սկզբի շրջանում, դժվար էր բացատրել. վերջ ի վերջո, ի՞նչ էր կատարվածը Մայիսի 28-ին, ինչո՞վ կարող էր վնասել Հայաստանի միջազգային դիրքին, ի՞նչ սարսափելի հետևանքներ կարող էր տալ ներքին կյանքում։ Ոչի՞նչ։ Լավագույն դեպքում, նա կարագացներ Երևանի ու Փարիզի մերձեցումը ու կհամախմբեր բովանդակ հայ ժողովրդի կամքը Հայաստանի շուրջ, վերջ կտար ներքին պառակտումին, կբարձրացներ հայ ժողովրդի հոգեկան կորովը և կամրացներ Հայաստանի դիրքը հարևանների աչքին. վատ դեպքում՝ կմբնար մեռած տառ։ Ի՞նչ պատճառ կար այդքան հուզվելու, իրար անցնելու և, նույնիսկ, կառավարությունից դուրս գալու։

Շատ չանցած, սակայն, առեղծվածը լուծվեց, և լուծումը գալիս էր բոլորովին չսպասված կողմից։ Շուտով հայտնի դարձավ, որ ժողովրդականների քայլը թելադրված էր Փարիզից։ Հայտնի դարձան նաև շատ ուրիշ բաներ, որոնց մասին Հայաստանում, այն ժամանակ, ոչ ոք ոչինչ չգիտեր։ Հաշտության պատվիրակությունը Եվրոպա ուղարկելուց հետո, Հայաստանի գործիչները այնքան էին ծանրաբեռնվել ու կլանվել երկրի ներքին աշխատանքներով, որ ո՞չ ժամանակ ունեին, ո՞չ էլ տրամադրություն զբաղվելու փարիզյան անց ու դարձերով։ Պետք է ասել, որ հնարավորություն էլ չունեին, Փարիզը շատ էր հեռու ու կտրված Երևանից։ Ի՞նչ էր կատարվում այնտեղ՝ Երևանում գրեթե ոչինչ հայտնի չէր։ Այնինչ, Թիֆլիսը ավելի արագ և անմիջական հարաբերության մեջ էր Փարիզի հետ և ավելի էր իրազեկ այնտեղի դեպքերին։ Եվ Հայ ժող. կուսակցության կենտրոնական կոմիտեն, Թիֆլիսում, ավելի շատ ականջ էր դնում Փարիզին, քան թե Երևանին։ Իսկ Փարիզում այդ օրերին հետաքրքրական դեպքեր էին տեղի ունենում։

Ինչպես հայտնի է, զինադադարից մոտ 3 շաբաթ վերջը, 1918 թ. նոյեմբերի 30-ին, Պողոս Նուբար փաշան հրատարակել էր հետևյալ հայտարարությունը. «Հայկական ազգային պատվիրակությունը, պատասխանելու համար հայ ազգին միակամ իղձին, որուն մեկ մասը արդեն իսկ իբրև անկախ հանրապետություն կազմված է, կհայտարարե ամբողջական Հայաստանի անկախությունը, Կիլիկիայով միասին, Համաձայնական պետություններու և Միացյալ Նահանգներու հովանավորության տակ, կամ Ազգերու Դաշնակցության, երբ ան կազմվի»*։

Ապա. Ազգ. պատվիրակությունը, շարունակելով հանդերձ, հանուն հայ ազգի, քաղաքական հետապնդումներ Եվրոպայում, ծրագրել էր հրավիրել ազգային մի համագումար՝ որոշելու համար «հայ ազգին միակամ իղձերը»։ Համագումարի նախապատրաստությունները զուգադիպեցին Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի Եվրոպա հասնելուն, փետր. 4-ին։ Այս վերջինի երևալը Փարիզում առաջ բերեց լուրջ դժգոհություն Ազգ. պատվիրակության շրջանակներում, որոնք Հայաստանի Հանրապետության անունն իսկ դրժկամությամբ էին լսում և ավելի սիրով փոխարինում էին «Արարատյան Հանրապետություն» դարձվածքով. Արարատը հո Հայաստան չէ՞ր, և ի՞նչ իրավունք ունեին Երևանի այդ ինչ-որ անհայտ մարդիկ Հայաստանի կառավարություն կոչելու իրենց և ինչ-որ պատվիրակություն ուղարկելու պետությունների մոտ։ Չէ՞ որ «ազգին միակամ իղձը» արտահայտող պատվիրակությունն արդեն կար և ներկայացված էր ո՞չ թե գավառացի վարժապետ-բանաստեղծով, այլ տիտղոսավոր և հանրահռչակ մի անձով, որի հոր արձանը կանգնած էր խղուների երկրում, իսկ իր առջև բաց էին Եվրոպայի բոլոր դռները։

---

* Խորհրդայնացումից հետո. Հ. Ջմշկյանը մնաց Թիֆլիսում և հոգեկան ու ֆիզիկական ծանր տանջանքների ենթարկվեց բոլշևիկների կողմից։ Եվ չկարողանալով տոկալ անհնարին զրկանքներին՝ հիվանդացավ հոգեկան հիվանդությամբ ու մեռավ 1928 թվի սկզբներին։ Ջմշկյանը շնորհալի փաստաբան էր, լուսամիտ ու եռանդուն հասարակական գործիչ։

* Միաժամանակ Ազգ. պատվիրակությունը ձեռնարկել էր ամբողջական Հայաստանի սահմանների ճշտորոշման։ «Թայմսի» 31 դեկտ. համարում հրատարակված Պողոս Նուբարի հայտարարությունը Հայաստանի անկախության և սահմանների մասին. նույնաբեռ դրված էր և անկախ Հայաստանի քարտեզը, որի վրա Ռուսահայաստանի սահմանները ցույց էին տրված խիստ համեստ չափերով, մինչդեռ Թուրքահայաստանի մեջ մտցված էին ոչ միայն Վանը, Բիթլիսը, Մուշն ու Կարինը, այլև Սվազը, Աղանան, Ալեքսանդրետը, Դիարբեքիրը և մի ահագին կտոր Սև ծովի եզերքից, Սամսոնի ու Բաթումի միջև։ Ազգ. պատվիրակության նախագահը հավատացած էր, որ Հայաստանը, նման սահմաններում, կարող էր իրականություն դառնալ մի քանի ամիսների ընթացքում։ Առհասարակ, սահմանների հարցը ընդհանուր զբաղումի առարկա էր արտասահմանում։ Շատերը նույնիսկ Պողոս Նուբարի գծած սահմանները գտնում էին անբավարար և պահանջում էին նորանոր գավառներ մտցնել Հայաստանի մեջ։

Մյուս կողմից, Հ. Հ. պատվիրակության ներկայացուցիչն էլ՝ համակված իր դերքի ու պաշտոնի վեհության գիտակցությամբ՝ չէր դիջում լիաբուռն հարգանքի տուրքը մատուցանել փաշայական և էֆենդիական սնապարծության։

Այդ պատճառով, Ազգային և Հանրապետական պատվիրակությունների ջուրը հենց սկզբից միևնույն առվով չգնաց։ Առաջին իսկ օրից սև կատու անցավ նրանց միջև, և թեև, ժամանակի ընթացքում, կարելի եղավ ստեղծել ձևական գործակցություն և աշխատանքի ընդհանուր ճակատ, հոգեկան մոտիկությունը, անկեղծությունն ու հարաբերությունների շիտակությունը մինչև վերջ էլ բացակայեցին։ Ո՞վ էր մեղավորը, Լամ, ավելի ճիշտ, ո՞ր կողմն էր ավելի մեղավորը այդ հիվանդոտ դրության համար՝ մինչև այսօր էլ մեկը ամբաստանում է մյուսին։ Եվ քանի երկու պատվիրակությանց գործունեության մանրամասն տեղեկագրերն ու վավերագրերը չեն հրատարակված, անկարելի կլինի ճշտել պատասխանատուներն ու պատասխանատվության չափը, ինչպես, առհասարակ, պատմության ա՛յս փուլի մեջ և ներկա տվյալներով դժվար է պատասխանատվությունների ճշտումը։ Բայց մեր գործի համար այդ այնքան կարևոր էլ չէ, էականը փաստի արձանագրությունն է՝ եզրակացությունը թող ուրիշներն անեն։ Իսկ փաստը՝ մթնոլորտը Փարիզում լավ չէր։

Ազգային համագումարը կոչված էր մաքրելու այդ մթնոլորտը և ազգային գործերը դնելու առողջ հիմքի վրա, բայց հաջողություն չունեցավ. նա ոչ իր կազմով, ոչ էլ մտայնությամբ կարող էր նման դեր կատարել։

Նախ կազմը։ Համագումարը ներկայացված էր հետևյալ ձևով. Պոլիս՝ Եղիշե արք. Դուրյան, պրոֆ. Ա. Տեր-Հակոբյան, դոկտ. Ա. Բարսեղյան, Գ. Սինապյան, Պողոս բեյ Մսրը, Կովկաս՝ (արևմտահայ փախըստականների կողմից) Վ. Փափազյան, Ա. Թերզիբաշյան, Լ. Շանթ՝ Եգիպտոս՝ դոկտ. Ներուզ, Վ. Թեքեյան, Բուլղարիա՝ դոկտ. Սայան, Ս. Հինդլյան, Պարսկաստան՝ Հ. Խան-Մասեհյան, Մ. Վարանդյան, Անգլիա՝ Գ. Հակոբյան, Գ. Ֆնտքլյան, Հնդկաստան և Ճավա՝ Պողոս փաշա Նուբար, Զվիցերիա՝ Գ. Նորատունկյան, Իտալիա՝ դոկտ. Ն. Տեր-Ստեփանյան, Վենետիկ՝ Հովհ. վարդ. Թորոսյան, Ռումելիա՝ Մ. Տերպետրյան, Ֆրանսիա՝ Ն. Խան-Ներսիսյան, Տ. Խան-Քելեկյան, Ամերիկա՝ Ե. Աղաթոն, Մ. Համբարձումյան, Զ. Մաթիկյան, Ա. Միքայելյան, Միջագետք՝ Ե. Դերվիշյան, պրոֆ. Ա. Խաչատրյան, Հալեպ և Այնթապ՝ դոկտ. Ալթունյան, Հունաստան՝ Հ. Մոստիչյան, անդամ Ազգ. պատվիրակության՝ Ճ. Մալքոմ, Ամենայն Հայոց կաթողիկոսի Ամերիկայի ներկայացուցիչ՝ Գ. Փաստրմաճյան, հրավիրվածներ՝ Մ. Տամատյան, Ա. Զոպանյան, Ա. Հանըմյան, Մ. Ս. Դավիթ բեգ, պրոֆ. Կ. Թումանյան, Հ. Հ. պատվիրակությունից՝ Ա. Ահարոնյան, Հ. Օհանջանյան՝ խորհրդակցական ձայնով։

Այս 4 տասնյակ անձերից քչերը կարող էին ասել, թե իրենք, որոշ չափով, արտահայտում էին Հայաստանի ժողովրդի բաղձանքները. մեծամասը վաղուց գաղութներում ապրող մարդիկ էին՝ բոլորովին անծանոթ երկրի պայմաններին և հայ ժողովրդի կացությանը։ Նրանցից շատերը— անգամ ամենապատասխանատու դերքեր գրավողները— Հայաստանի երեսն անգամ չէին տեսել, Հայաստանի աշխարհագրության, տնտեսական կարողություններին, ազգագրական կազմին ու շրջապատին իսկ տեղյակ չէին, և Հայաստանի մասին ունեին աղոտ պատկերացում։

Հետո, տարօրինակ «ազգային» ներկայացուցչություն էր այդ. Շվեյցարիա, Իտալիա, Հնդկաստան, Միջագետք, Եգիպտոս՝ այդտեղի գաղութները գալիս էին «հայ ազգին միակամ իղձը» արտահայտելու. ի՞նչ իրավունքով։ Ո՞վ էր տվել նրանց լիազորություն խոսելու բովանդակ Հայաստանի և հայ ժողովրդի անունից։

Ավելին. հազիվ մեկ-երկու հարյուր ցաք ու ցրիվ հայեր ունեցող Իտալիան կամ Շվեյցարիան «տվել էին» մեկական պատգամավոր, 30—40000 հայ ունեցող Ռումելիան էլ՝ մեկ. Անգլիայի Երկու զույգ մեկ կենտ առևտրականները ուղարկել էին 2 մարդ, 2 մարդ էր «ուղարկել» և 100000 անդամ ունեցող պարսկահայ գաղութը, այնինչ նույնքան հայ հաշվող Ամերիկան տվել էր 4 պատգամավոր։

Ժողովուրդ, աշխատավորությունից ընտրված մարդ այդ համագումարում շատ չկար. բեյ, փաշա, էֆենդի, եպիսկոպոս, հարուստ վաճառական, արհեստով ազգային գործիչ՝ ահա ովքեր էին հավաքվել «ազգին միակամ իղձը» արտահայտելու։ Լավագույն դեպքում, եթե մի պահ հրաժարվելու լինենք բոլոր ժողովրդապետական նախապաշարումներից, այդ հավաքույթը կարող էինք կոչել «գաղութահայ» համագումար, բայց «ոչ ազգային»։ Առավելաբար գաղութահայությունն էր խոսում նրա մեջ՝ անպատասխանատու, զառանցող, անհող ու սնապարծ։ Որպես անհատ, անոր բոլոր ժողովականներն էլ հարգելի և հայրենասեր մարդիկ էին, իհարկե, բայց այդքան միայն։

Առաջ բերենք համագումարի արդյունքները այնպես, ինչպես որ ներկայացված են պաշտոնական հրատարակությամբ*։

«Ահավասիկ համագումարի նախապատրաստական հինգ նիստերուն և պաշտոնական բացումեն մինչև փակումը, այն է փետրվարի 24-են մինչև ապրիլ 22 գումարված 38 նիստերուն, ընդամենը 43 նիստի մեջ կատարված աշխատությանց համառոտ մեկ ամփոփումը։

1. Ընտրություն համագումարի դիվանին։ Ընտրվեցան՝ նախագահ վսեմ. Գ. Նորատունկյան, դեր-նախագահներ պպ. պրոֆ. Տեր-Հակոբյան

* Ամփոփում Հայ ազգային համագումարի աշխատությանց և որոշմանց (փետր. 24-են մինչև ապր. 22)։

և Ա. Զոպանյան, ատենադպիրներ՝ պպ. Վ. Թեքեյան և Ն. Տեր-Ստեփանյան. այս վերջնույն հրաժարելեն հետո՝ պ. Գ. Ֆնտզյան։

2. Քննություն և վավերացում համագումարի ներքին կանոնագրին։

3. Քննություն և վավերացում ժողովի իրավասության և աշխատության ծրագրին։

4. Վավերացում նախապես պատրաստված և խաղաղության վեհաժողովին ներկայացված Հայկական պահանջներու հիշատակագրին։

5. Զեկուցում Ազգ. պատվիրակության նախագահ վսեմ. Պողոս Նուբար փաշայի՝ Պատվիրակության ի սկզբանե մինչև այժմ կատարած աշխատություններուն և ստացած արդյունքներուն վերաբերմամբ։

6. Քննություն և վավերացում հայ ազգին Թուրքիո և Կովկասի մեջ այս պատերազմի ընթացքին կոտորածներու, տեղահանության և այլ աղետներու հետևանոք կրած վնասներուն հատուցման վերաբերող Հիշատակագրին, որ ներկայացվեցավ խաղաղության վեհաժողովին և որուն համաձայն վերոհիշյալ վնասուց ամբողջական գումարը կհանդի 19 միլիարդ 130 միլիոն 982 հազար ֆրանկի։ Այս գումարին 14 միլիարդ 598 միլիոն 510 հազարը արևմտյան հայոց պահանջներուն և մնացյալ 4 միլիարդ 532 միլիոն 472 հազարը արևելյան հայոց պահանջներուն համար։

7. Քննություն և ավերացում ելևմտական հանձնաժողովին կողմե Ազգ. պատվիրակության հառաջիկա վեց ամսվան գործունեության համար պատրաստված ելևմտացույցին, որուն համաձայն ազգային զանազան պետքերու համար նվազագույն 15 և առավելագույն 30 միլիոն ֆրանկի ծախուց գումար մը կնախատեսվի, հասույթի զանազան եղանակներու առաջարկությամբ, որոնց հարմարագույն գործադրությունը հանձնված է նոր Ազգային պատվիրակությանը։

8. Քննություն և վավերացում հատուկ հանձնաժողովի մը կողմե պատրաստված նոր Ազգ. պատվիրակության տրվելիք ուղեցույցներու (դիրեկտիվ) ծրագրին, որուն մեջ մանրամասնված են պետության հետ բանակցություններու ընթացքին պատվիրակության հետևելիք ուղղությունն ու դնելիք պահանջները՝ հիմնված Հիշատակագրի գլխավոր սկզբունքներուն վրա։

9. Քննություն և վավերացում Հայկական լեգեոնի ներկա վիճակին, կամավորներու վերստին հանձնառագրումին և լեգեոնի ապագա գործածության հարցերուն մասին հատուկ հանձնաժողովի մը կողմե բերված առաջարկներուն։

10. Քննություն Պատվիրակության տրվելիք ուղեցույցներու առթիվ վերապահված հավելվածական մասի մը, որով կփափագվեր համագումարի ընթացքին իսկ կարելի դարձնել թրքական և ռուսական Հայաստաններու միացումը՝ միակ ներկայացուցչության մը և միակ կառավարության մը ստեղծմամբ. հետ բազմաթիվ խորհրդակցությանց

որոշվեցավ սույն խնդրույն իրականացումը հանձնել նորընտիր Պատվիրակության՝ ըստ ուղեցույցներու տրամադրությանը։

11. Ընտրություն ապրիլի 2-ի նիստին մեջ Հայ ազգային պատվիրակության՝ բաղկացած վեց անդամե, որ, համաձայն նոր պատվիրակության համար ընդունված ուղեցույցներուն, Հայ հանրապետության պատվիրակության հետկ.ազմե «Ամբողջական Հայաստանի Պատվիրակությունը» և անոր հետ միասին պիտի աշխատի ձեռք բերել Հիշատակագրով բանաձևված հայկական պահանջներու գործադրությունը և պիտի հետապնդե ազգային դատին հարակից բոլոր հարցերուն բարվոք լուծումը։ Նորընտիր Պատվիրակության անդամ ընտրվեցան՝ վսեմ. Պողոս փաշա Նուբարը, պպ. պրոֆ. Տեր-Հակոբյանը, Ա. Զոպանյանը, Գ. Փաստրմաճյանը, դոկտ. Հ. Ներուզը, Վ. Թեքեյանը։

12. Քննություն Հայկական Վնասուց Հատուցման Հիշատակագրին վրա ավելցվելիք նոր հուշագրի մը՝ վնասուց պատասխանատվության և գանձման վերաբերյալ։ Սույն հուշագրին ամբողջացումն ու առաքումը հանձնվեցավ Պատվիրակությանը։

13. Ընտրություն, համաձայն համագումարի իրավասությունն ու գործունեությունը ճշտող ծրագրին, հանձնաժողովի մը, որուն պաշտոնն է մոտավոր փոխանցման շրջանին համար Հայաստանի վարչական կազմը ճշտող առժամյա, ծրագիր մը կազմել և զայն ենթարկել համագումարի վավերացման, երբ համագումարը վերստին ի նիստ հրավիրվի Պատվիրակության կողմե, ինչպես պարտավոր է ընել այն ատեն, երբ Հայաստանի քաղաքական բախտին մասին խաղաղության վեհաժողովն իր որոշումը տա, կամ երբ Պատվիրակությունը հարկ տեսնե համագումարին դիմել ուրիշ որևէ անակնկալ հարկեցուցիչ պարագայի առջև»։

Օրակարգի նյութ կազմող և վերև թվված այս խնդիրներեն զատ, համագումարը իր նստաշրջանի միջոցին զբաղեցավ նաև կարգ մը խնդիրներով, որոնցմե հիշենք՝ հայկական հողամասերու զինվորական գրավման, Կիլիկիո և Սուրիո մեջ ապրող տարագիր հայ ժողովուրդին ապահովության, Արևելյան Հայաստանի սովաբեկ հայ ժողովուրդին պարենավորման, Կիլիկիո համար բժշկական միսիոնի մը, հիվանդանոցի կազմածներու, դեղորեից և զգեստեղենի. ինչպես նաև Արևելյան Հայաստանի համար դեղորեից առաքման խնդիրները։ Ասոնցմե վերջիններուն համագումարը հաջողեցավ մասամբ գոհացում տալ Պատվիրակության տրամադրելի միջոցներով։

Համագումարը իր նստաշրջանին միջոցին դժբախտությունն ունեցավ լսելու Հալեպի մեջ հայերու վրա գործադրված կոտորածի մը գույժը, ինչպես նաև Իսկենտերուն և Ադանա գտնվող Հայկական լեգեոնի վաշտերուն մեջ պատահած հույժ ցավալի դեպքերը։ Համագումարը թե՛ Հալեպի կոտորածին և թե՛ մյուս պատահարներուն կրկնության առաջ-

քը առնելու համար հնարավոր միջոցները խորհեցավ և անոնց գործադրությունը հանձնարարեց Պատվիրակությանը։

Ի բաց առյալ Հայաստանի տնտեսական և քաղաքական կացության մասին Պատվիրակության հասած կարևոր տեղեկագրերու ընթերցումը, համագումարը լսեց, իր նստաշրջանի տևողության միջոցին, Ազգային պատվիրակության նախագահին և Հայկ. Հանրապետության ներկայացուցչին խաղաղության վեհաժողովին կողմե ունկնդրության զեկուցումը, Թուրքիայեն և Կովկասեն հասնող պատգամավոր և ոչ պատգամավոր ձեռնհաս հայրենակիցներու բերանացի և գրավոր ընդարձակ զեկուցումները, ինչպես նաև գաղութներե եկած պատգամավորներուն՝ գաղութներու հայկ. կյանքին և գործունեության վերաբերմամբ բրած մանրամասն տեղեկատվությունները։

Համագումարը ստիպվեցավ նաև նկատի առնել Երուսաղեմի Ս. Հակովբյանց վանուց միաբանութենեն հասած հեռագրական դիմումները, և հանձնարարեց հիշյալ վանուց համար մատակարար մարմնի մը կազմությունը՝ համաձայն Երուսաղեմի զինվորական կառավարչին կատարած կարգադրության՝ նկատելով, որ Պոլսո պատրիարքությունը այս միջոցին ի վիճակի չէր այս հարցով զբաղելու։

Այս առաջին նստաշրջանի փակման առթիվ, համագումարը պարտք համարեց իր եղբայրական ջերմ ողջույններն ուղղել Հայկական Հանրապետության՝ անոր մեջ տեսնելով վեց հարյուր տարիե ի վեր առաջին անգամ վերազարթնող հայ ազատության հրճվառիթ պատկերը, և հոտընկայս իր խորին հարգանքն ու պաշտամունքը հայտնեց մեր ցեղի բազմաշարշար նահատակներուն և այն բյուրավոր մարտիկներուն հիշատակին, որոնք իրենց հերոսական պայքարներով պատրաստեցին հայկական դատին հաղթանակը։

Համագումարը որոշեց նույնպես, որ Դիվանը սույն առթիվ ղրկե համագումարի զգացումները հայտնող ուղերձներ՝ նախագահ Վիլսոնի, պպ. Կլեմանսոյի, Լլոյդ Ջորջի և Օրլանդոյի, կոչ մը դաշնակից ազգերուն՝ լրագրաց մեջ հրատարակվելու համար և հեռագիր մը Հայ Հանրապետության, Երևան։

«Այն պահուն երբ համագումարը իր աշխատությանց գլխավոր մասը կատարելե ետք՝ կդադրեցնե իր Ա նստաշրջանը, նորընտիր Ազգ. պատվիրակությունը՝ Հայկական Հանրապետության հետ ձեռնարկած է արդեն իրմե սպասված աշխատության, և, ուղեցույցներու տրամադրության համաձայն, շուտով ամբողջացնելով իրեն գործակցել կոչված Ներգաղթի, Ելևմտական, Պրոպագանդի և այլ գլխավոր հանձնաժողովներու կազմությունը՝ պիտի պսակե, անշուշտ, համագումարին իր վրա դրած հույսերը»։

Փակվելուց առաջ, համագումարը դաշնակից ազգերին ուղղեց մի կոչ, որով, «կհռչակեր անգամ մը ևս հայ ազգին կամքը իր ազատ հայ-

բենիքն ունենալու՝ անկախ տերության մը մեջ իր բոլոր հողամասերուն միացմամբ կազմված» և կխնդրեր դաշնակից ազգերից՝ «իրենց ձայնը մերինին միացնեն պահանջելու համար հաշտության վեհաժողովեն, որ փութացնե լուծումը հայկական հարցին»։

Ապա մի հեռագիր էլ ուղղեցին Հայաստանի Հանրապետության. «Փարիզ համախմբված Հայ համագումարը, իր առաջին նստաշրջանի փակման առթիվ, Հայկական Հանրապետությանը կուղղե իր եղբայրական խանդաղատագին ողջույնը։ Սրտագին կմաղթենք, որ ընդհուպ իրականանա Միացյալ Հայաստանի Հանրապետության կազմակերպությունը և լիահույս ենք, որ ձեր և մեր ջանքերով պիտի պսակվին մեր իղձերը՝ ընդհանուր խաղաղության կնքման պահուն՝ ազգային դատին կատարյալ հաղթանակովը»։

Համագումարի պաշտոնական բանաձևերի մեջ, կարծես, ոչինչ արտակարգ բան չկար. ըստ էության նրանք նույնն էին, ինչ որ և Երևանի արևմտահայ համագումարի որոշումները։ Ավելին. նրանք, շատ կողմերով, հիշեցնում էին և ա՛յն օրերին Հայաստանում տիրող տրամադրությունները։ Սակայն, համագումարում արտահայտված ոգին, Ազգ. պատվիրակության և պատգամավորներից շատերի բռնած դիրքը Հայաստանի Հանրապետության հանդեպ և Ազգ. պատվիրակության ու Հ. Հ. պատվիրակության միջև ստեղծված փոխհարաբերությունները, վերջ ի վերջո, առաջ բերին այնպիսի մթնոլորտ, որ Ազգ. պատվիրակությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու պատվիրակությունը դարձան, մի տեսակ ներհակ, մրցակից կողմեր։ Համագումարի մեջ լսվում էին ուղղակի թշնամական ճառեր, որոնք Հայաստանի Հանրապետության գոյությունը համարում էին վնասակար հայկական դատի համար. «Արարատյան Հանրապետության» հարցը զուտ ռուսական հարց է, ասում էին նրանք, մինչդեռ հայկական խնդիրը վերաբերվում է Թուրքահայաստանին։ Ազգ. համագումարը պետք է Ռուսահայաստանը թողնե իր ճակատագրին և ամբողջապես նվիրվե Թուրքահայոց դատին՝ պահանջելով, ի հարկին, «Արարատյան Հանրապետության» կցումը Հայաստանին։ Հ. Հ. պատվիրակությունը, երկվություն չստեղծելու համար, պարտավոր է քաշվել ասպարեզից կամ ենթարկվել Ազգ. պատվիրակությանը։

Իր Հերթին, Հ. Հ. պատվիրակությունը մեկնում էր իրական փաստից. Հայաստանի Հանրապետության գոյությունը իրողություն է, Հայաստանում ապրում է մեկ միլիոն ժողովուրդ. Երևանում կա խորհրդարան, կառավարություն, բանակ. երկիրը հետզհետե կազմակերպվում է պետականորեն։ Մինչդեռ, Թուրքահայաստանը ամայի է. ո՛չ ժողովուրդ ունի, ո՛չ կառավարություն։ Հետևաբար, անհրաժեշտ է ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայ-

դական պետության կորիզի, և հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով։

Կողմերը խոսում էին տարբեր լեզուներով և իրար չէին հասկանում։ Այս տրամադրությունից օգտվում էին չարամիտ մարդիկ՝ թշնավորելու համար գաղութահայ ազգայինների միտքը նրանով, որ իբր թե դաշնակցականներն են միայն այդպես մտածողները, դաշնակցական պարագլուխները, որոնք «Արարատյան Հանրապետությունը» գործիք են դարձրել իրենց կուսակցական նպատակների, ձգտում են բռնագրավել* Թուրքահայաստանը, խլել Պողոս փաշա Նուբարից ազգային գործերի ղեկավարությունը և այլն։ Քաղաքական ընդհանուր տեսակետների տարբերությունը, կուսակցական նեղմտությունը և անձնական նախանձն ու քենը Փարիզում առաջացրին խեղդիչ մթնոլորտ, որի թունավոր հոսանքները հետզհետե սկսեցին հասնել և Երևան։

Մայիսի 28-ի հայտարարությունը բոլորովին անսպասելի էր Ազգային պատվիրակության համար։ Պողոս Նուբարն ու իր գործակիցները սկզբունքով դեմ չէին նման քայլի։ Ընդհակառակը, ինչպես տեսանք, դեռ նոյեմբ. 30-ին նրանք հայտարարել էին «ամբողջական Հայաստանի անկախությունը»։ Եվ այժմ էլ գործում էին այդ ուղղությամբ, բայց նրանց զայրացնողը այն էր, որ հայտարարություն անողը Երևանն էր և ոչ իրենք, երկրորդ՝ որ Երևանի կառավարությունը ինքզինքը հռչակում էր միացյալ Հայաստանի կառավարություն, այնինչ բոլոր մարդկային և աստվածային օրենքներով միացյալ Հայաստանի կառավարությունը պետք է կազմվեր Փարիզում և անպայման Պողոս փաշա Նուբարի նախագահության տակ։

Եվ հասկանալի է այն անսահման վրդովումը, որ Մայիսի 28-ի ակտը առաջ բերեց Փարիզում, ուր նա ընդունվեց, իբրև բռնաբարում Ազգ. պատվիրակության իրավունքների։ Պողոս Նուբարը, անմիջապես մղումով, ուղեց հրապարակային հայտարարությամբ բողոքել այդ ակտի դեմ, սակայն, Հ. Հ. պատվիրակության ներկայացուցիչների և ուրիշ ավելի պաղարյուն մարդկանց ստիպումով հետ կեցավ այդ մտադրությունից։ Եվ սկսվեցին բանակցություններ նրա և Ահարոնյանի միջև, որոնք տևեցին երկար։ Այդ բանակցությունների համար Ա. Ահարոնյանը լիազորություն չուներ իր կառավարությունից, բայց, ընդհանուր առմամբ, ճիշտ էր ներկայացրել Երևանի տրամադրությունները։ Բանակցությունների առարկա էին ամբողջական Հայաստանի կառավարության, Խորհրդարանի և պատվիրակության կազմության հարցերը։ Պողոս Նուբարը պահանջում էր կազմել միացյալ Խորհրդարան՝ կեսը ռուսահայերից, կեսը Թուրքահայերից և միացյալ կառավարություն՝ նույնպես կես առ կես։ Կառավարության Թուրքահայ անդամները պիտի նշանակվեին Ազգ. պատվիրակության կողմից, ռուսահայերը՝ Հայաստանի օրվա կառավարությունից։ Նախարարական տեղերը պետք է բաժանվեին փոխադարձ համաձայնությամբ, բայց վարչապետ պետք է լիներ անպայման Պողոս Նուբարը՝ մնալով միանգամայն և պատվիրակության նախագահ։ Արտաքին գործոց և զինվորական նախարարները պետք է լինեին ոչ դաշնակցական։ Քանի որ վարչապետը պիտի ապրեր Փարիզում, Երևանում պիտի նշանակվեր փոխանորդ։ Ժամանակավոր կառավարության կազմությունից հետո Խորհրդարանին դադար պիտի տրվեր անորոշ ժամանակով, մինչև միացյալ Խորհրդարանի գումարումը։ Միացյալ պատվիրակությունը պիտի կազմվեր Փարիզում՝ երկու կողմից չորսական կամ երեքական անդամով։ Թուրքահայ անդամները պիտի նշանակվեին Պողոս Նուբարից, մյուսները՝ կառավարությունից։ Պողոս Նուբարի նշանակած անդամները պետք է լինեին անփոփոխելի, և նույնիսկ միացյալ կառավարությունը իրավունք չպիտի ունենար նրանց հրաժարեցնելու մինչև հայկական հարցի լուծումը։ Նոր պատվիրակության նախագահ պետք է լիներ Պողոս Նուբարը, որին պիտի տրվեին արտակարգ լիազորություններ։

Այս պահանջներից Հ. Հ. պատվիրակությունը ընդունում էր, որ կառավարությունն ու Խորհրդարանը կազմվեն կես առ կես Թուրքահայերից ու ռուսահայերից, բայց վարչապետը անպայման պետք է ապրեր Հայաստանում, որ երկու պատվիրակությունները կարող են ձուլվել Պողոս Նուբարի գլխավորությամբ՝ պայմանով, որ նոր պատվիրակությունը ենթարկվի և պատասխանատու լինի կառավարությանը, որ պատվիրակության Թուրքահայ անդամները կարող են նշանակվել Պողոս Նուբարի կողմից, զինվորական նախարարը կարող է լինել անկուսակցական և այլն։

Ինչպես տեսնում ենք, տարաձայնությունը երկու տեսակետների միջև բավական լայն էր։

Ի վերջո, երկու պատվիրակությունների նախագահների ստորագրությամբ հեռագիր տրվեց Երևան, որով առաջարկվում էր չեղեալ դարձնել

---

* Արժե արձանագրել մի պատմություն, որ լսեում էր հանգուցյալ Արմեն Գարոն։ Ազգ. համագումարի ժամանակ, երբ քննվում էր Թուրքահայկական գավառների գրավման հարցը, Արմեն Գարոն ասում է, թե շուտով Հայաստանի կառավարությունը կգրավե էրզրումը։

— Ինչպե՞ս թե կգրավե,— զարմանում է Պողոս Նուբարը՝ հանկարծակիի եկած։

— Հենց այնպես, զորք կուղարկե ու կգրավե,— պատասխանում է Արմեն Գարոն։— Իմ եղբայրն էլ հայկական բանակում է. հույս ունեմ առաջին էրզրում մտնողներից մեկն էլ նա կլինի։

— Mais c'est une ocupation! (բայց այդ բռնագրավում է),— վրդովված բացականչում է փաշան։

Եվ տեսնելով Արմեն Գարոյի շվարած դեմքը՝ ձեռքը զարնում է սեղանին ու.

— Այո՛, այո՛, բռնագրավում է այդ, և ես կբողոքեմ դրա դեմ... ես կբողոքե՛մ... Հայաստանի զորքը պիտի գրավեր էրզրումը, և Ազգ. պատվիրակության նախագահը պատռում էր բողոքել...

կառավարության և Խորհրդարանի վերակազմության և սպասել Փարիզից ուղարկվելիք պատգամավորներին, որոնք այդ առթիվ նոր առաջարկություններ էին բերելու։ Հայաստանի կառավարությունը սիրով ընդառաջեց այս առաջարկությանը։

* * *

Մինչ Փարիզում պատվիրակությունները հուզվում ու բանակցություններ էին վարում, Հայաստանում տեղի էին ունենում խորհրդարանական ընտրություններ, որոնք ձեռնարկվեցին Հայաստանի Խորհրդի փետր. 28-ի միջադեպից հետո։ Մարտի 12-ին կառավարությունը որոշեց Խորհրդարանի ընտրությունների համար հիմք ընդունել համառուսական Սահմ. ժողովի ընտրական օրենքը Անդրկ. առանձին կոմիտեի մըտցրած փոփոխություններով, ամբողջ երկիրը դարձնել մեկ ընտրական շրջան, թուրքահայերին տալ ընտրական իրավունք և այլն։ Այս որոշման հիման վրա մշակվեց «Օրենք Հայաստանի Խորհրդարանի ընտրությանց», որով յուրաքանչյուր 20 տարին լրացրած քաղաքացի, առանց սեռի, կրոնի ու ցեղի խտրության իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին, որոնք պիտի կատարվեին ընդհանուր, գաղտնի, հավասար, ուղղակի և համեմատական քվեարկությամբ։ Խորհրդարանի անդամների թիվը սահմանվում էր 80։ Ընտրությունները վարելու համար ստեղծվում էին կենտրոնական գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և թաղամասային ընտրական հանձնաժողովներ. կենտրոնական հանձնաժողովը նշանակվում էր Հայաստանի Խորհրդից, իսկ մնացածները՝ իրենցից գերադաս հանձնաժողովներից։

Հայաստանի Խորհուրդը նշանակեց ընտրական կենտրոնական հանձնաժողով և այս վերջինն անցավ գործի։ Նշանակեց գավառական ընտրական հանձնաժողովներ, հանձնաժողովի նախագահներ ու ընտրական հրահանգիչներ և գավառներն ուղարկեց ժողովրդական թերթիկներ՝ մանրամաս հրահանգներով։ Ապր. 25-ից Հայաստանի բոլոր վայրերում սկսվեց ընտրողների ցուցակագրությունը. քվեի իրավունք ունեցողների ընդհանուր թիվը դուրս եկավ, առանց Կարսի և Շարուր—Նախիջևանի, 365, 780 հոգի։ Խորհրդարանի ընտրությունների համար կազմվեց հետևյալ ժամանակացույցը.

Մայիսի 12— ընտրողների ցուցակների հայտարարման վերջնական ժամանակը։

Մայիսի 22— թեկնածուների ցանկը ներկայացնելու վերջին օրը։

Մայիսի 29— ներկայացված թեկնածուների ցանկի հայտարարության վերջին պայմանաժամը։

Հունիսի 6— վերջնական ժամանակը թեկնածուների ցանկ ներկայացնող ընտրողների հայտարարության՝ ցանկերը միացնելու մասին։

Հունիսի 11— ընտրողների ցանկերի երկրորդ հայտարարության վերջին օրը։

Հունիսի 21, 22, 23— ընտրություններ Հայաստանի բոլոր վայրերում։

Խորհրդարանի ընտրությունների համար ներկայացվեց թեկնածուների յոթը ցուցակ.

№ 1. Հ. Հ. Դաշնակցություն . . . 120 թեկնածու
№ 2. Հայ ժողովրդական կուս. . . 65 թեկնածու
№ 3. Սոց.-հեղափոխ. կուս. . . . 35 թեկնածու
№ 4. Քրդական ցանկ . . . . 2 թեկնածու
№ 5. Ասորական ցանկ . . . 3 թեկնածու
№ 6. Անկուսակց. գյուղաց. միություն . . . .
№ 7. Թրքական ցանկ . . . .

Նախընտրական պայքարն արդեն սկսված էր, երբ Թիֆլիսցիների և երևանցիների միջև ծագած կուսակցական ներքին անհամաձայնությունների հետևանքով՝ Ժողովրդական կուսակցությունը, թեկնածուների ցանկը ներկայացնելուց և ընտրական աշխատանքներ ձեռնարկելուց հետո, սնոտի պատրվակներով, հրաժարվեց մասնակցելուց, հունիսի 20-ին հետ պահանջեց իր ցուցակը և սկսեց պայքար մղել խորհրդարանական ընտրությունների դեմ։ Այդ պայքարում նա հենվում էր, գլխավորապես, Պողոս Նուբարի բռնած բացասական դիրքի վրա։ Պողոս Նուբարը դժգոհ էր, որ Հայաստանում խորհրդարանական ընտրություններ էին կատարվում. Հայաստանը նրա աչքին մի գավառ էր սոսկ, ուր կարող էր գոյություն ունենալ տեղական իշխանություն և ոչ թե խորհրդարան։

Նախընտրական պայքարը եղավ բավական տաք. ժողովներ, թռուցիկներ, ընտրական ցուցատախտակներ, կոչեր, անհաշիվ հոդվածներ թերթերում։ Կուսակցական գործիչները շրջում էին գյուղից գյուղ ու քաղաքից քաղաք և աշխատում ժողովրդականացնել իրենց թեկնածուների ցանկը՝ ճիշտ և ճիշտ Եվրոպայի և Ամերիկայի օրինակով։

Ամենից լայն ժողովրդականություն վայելողը, բնականաբար, Հ. Հ. Դաշնակցության ցանկն էր և նրա նշանախոսքերը. Հ. Հ. Դաշնակցությունը պահանջում էր «Միացյալ և Անկախ Հայաստան», «Ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին», «Հողը աշխատավորին», «Դործը՝ գործազուրկին», «Հաց ժողովրդին», «Ժողովուրդների համերաշխություն և եղբայրություն»։

Ընտրությունները տեղի ունեցան նշանակված ժամանակին և արդյունքը եղավ.

Հ. Հ. Դաշնակցությունը ստացավ	230 272 քվե —	72 պատգամավոր
Սոց.-հեղափոխականները՝	13 239 քվե —	4 պատգամավոր
Թուրքերը՝	8 187 քվե —	3 պատգամավոր
Անկուսակց. գյուղաց. միությունը՝	4,224 քվե —	1 պատգամավոր
Քրդական ցուցակը՝	1 305 քվե —	ո՛չ մեկ
Ժողովրդականները՝	481 քվե —	ո՛չ մեկ
Ասորիները՝	178 քվե —	ո՛չ մեկ

Նորընտիր խորհրդարանի բացումը տեղի ունեցավ օգոստոս 1-ին։ Բացումից առաջ խորհրդարանի շենքում տիրում էր եռուզեռ։ Կուսակցական ֆրակցիաները կատարում էին նախապատրաստական աշխատանքներ։ Բոլորի ուշադրությունը, բնական կերպով, կենտրոնացած էր դաշնակցական ֆրակցիայի վրա, որ ամեն օր գումարում էր երկարատև նիստեր, ուր քննության էին առնվում բազմաթիվ ընդհանուր-սկզբունքային և ընթացիկ-գործնական հարցեր։ Ամենից շատ զբաղեցնող խնդիրը երկրի ներսը և ճակատներում տիրող լարված դրությունն էր, որի մեղմացման համար մտածվում էին մի շարք միջոցներ։

Այդ խորհրդակցությունների ժամանակ լուծվեց և ֆրակցիայի ու կառավարության փոխհարաբերության հարցը. վարչապետը նշանակվելու էր ֆրակցիայից՝ կուսակցական բարձրագույն մարմնի հավանությամբ. կառավարությունը պետք է լիներ պատասխանատու խորհրդարանի և ֆրակցիայի առջև. ֆրակցիան իր հրահանգները պիտի ստանար կուսակցության բարձրագույն մարմնից։ Նշանակվեցին թեկնածուներ խորհրդարանի նախագահության հինգ անդամների՝ մեկ նախագահ, երկու փոխնախագահ, ավագ ու կրտսեր քարտուղարներ։ Քննվեց և հաստատվեց կառավարության հայտարարության նախագիծը, որից հետո որոշվեցին վարչապետության և նախարարության թեկնածուները։ Կառավարության վերակազմությունը հանձնարարվեց Ա. Խատիսյանին, որը իր հրավիրելիք նախարարների ցանկը պիտի ներկայացներ ֆրակցիային ի հաստատություն։ Կազմվեց խորհրդարանական ֆրակցիայի նախագահություն՝ Ա. Ջամալյան, Վ. Խորենի և Ս. Վրացյան։

Բացումը եղավ հանդիսավոր, խորհրդարանի ավագ անդամ Ավ. Սահակյանի նախագահությամբ, նախարարական ամբողջ կազմի, օտար ներկայացուցիչների և բազմաթիվ հյուրերի ու հանդիսականների ներկայությամբ։ Խորհրդարանի դահլիճը, ենթարկված հիմնական վերանորոգության, զարդարված էր դրոշակներով ու գորգերով։

Ավ. Սահակյանի բացման հակիրճ ճառը ընդմիջվում էր բուռն ծափահարություններով։ «Քաղաքացինե՛ր, Միացյալ Հայաստանի ներկայացուցիչներ,— սկսեց նա,— ուղիղ մի տարի սրանից առաջ, օգոստ. 1-ին, մեր երկիրը շրջապատված էր տաճկական զորքերի երկաթե օղակով, թշնամու սուրը կախված էր մեր գլխին, մեր հայրենիքը դարձել էր

բանտ։ Ես, որպես նախագահ գերագույն Ազգային խորհրդի, առաջին նիստին, անխախտ հավատով և խորը համոզմունքով հայտարարեցի, որ մեր հանրապետության նեղ հորիզոնը, որի սահմանները խեղդում էին նրան, պետք է ընդարձակվի, մեր հերոս ու մարտիրոս ժողովուրդը պետք է լինի տերը իր փայփայած ու գուրգուրած հայրենիքի (ծափեր)։ Այսօր երջանիկ եմ վկայելու, որ իմ գուշակությունը ոչ միայն արդեն կատարված փաստ և իրականություն է դարձել, այլև մեր ժողովրդի կամքը սրբազան, հայության երկու կեսերը զրկաբաց միացել են և հայտարարել մի պետություն, միացյալ, անկախ և ազատ Հայաստան, որի պաշտպանության համար մենք երդվել ենք զոհել մեր կյանքը և կռվել մինչև վերջին շունչը (ծափեր)։ Մենք հպարտանում ենք մեր նորածին պետությամբ. նա թույլ է, հեռու է կատարյալ լինելուց, բայց միացնում է իր ամբողջ հողամասը։ Ժողովուրդը սիրում է իր երիտասարդ հանրապետությունը. նրա մեջ արմատացել է անկախության գաղափարը. նա երբեք չի բաժանվի նրանից և երբեք չի զիջի։ Ճիշտ է, մեր առջև, Տաճկահայաստանի փակ դռների հետև, մեր թշնամին շարունակում է կատարել իր մութ գործերը և ինտրիգներ է սերմանում այս կողմը, մեր հանրապետության սահմաններում։ Բայց ես չեմ կասկածում, որ մենք կճեղքենք այդ դուռը մեր մեծ դաշնակիցների հետ միասին, կտիրենք մեր երկրին, որ ցողված է անհամար մարտիրոսների և հերոսների արյունով։ Հայ ժողովրդի արյան դատը, անկասկած, պետք է ստանա իր նպաստավոր և արդար լուծումը. այդ դատը մարդկության խղճի, պատվի և իրավունքների դատն է, մարդկային գոյության հարցն է, որ ոչ ոք չի կարող ժխտել... Երջանիկ և ոգևորված եմ ողջունելու մեր առաջին ընտրված խորհրդարանը այս պատմական վայրկյանին»։

Ապա ողջունեց դաշնակիցներին ու հարևան պետություններին, հանձին նրանց ներկայացուցիչների, և «մեր փառապանծ բանակը, որ հայրենասիրության անսահման անձնազոհությամբ կռվում է՝ պաշտպանելով մեր հայրենիքը արտաքին և ներքին թշնամիներից»։ Խորհրդարանը խանդավառ ծափերով ու հոտնկայս ցույց արավ հայ զորքին։

Երկրորդ նիստում խորհրդարանը կազմեց իր նախագահությունը։ Փարիզից եղած դիմումի վրա, ձևական նախագահ նշանակվեց Ա. Ահարոնյանը, իսկ իրական նախագահներ— փոխնախագահներ— ընտրվեցին Լ. Շանթը և Ս. Արարատյանը։ Քարտուղարներ՝ Հ. Տեր-Հակոբյանը (ավագ) և Արամ Սաֆրաստյանն ու Ա. Տեր-Միքայելյանը։

Երրորդ նիստում, օգոստ. 7-ին, 40 քվեով ընդդեմ 8-ի վարչապետ կարդվեց Ա. Խատիսյանը։ Կազմվեցին խորհրդարանական 12 հանձնաժողովները, որոնց մեջ մտան բոլոր պատգամավորները։ Որոշվեց խորհրդարանի նիստերը գումարել շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Չորրորդ նիստում, օգ. 10-ին, Հ. Արղությանի նախագահությամբ* վարչապետը հայտարարեց նոր կառավարության անդամների ցանկը՝ վարչապետ և արտաքին գործոց նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործոց և արդարադատության՝ Ա. Գյուլխանդանյան, պարենավորման և ելևմտական՝ Ս. Արարատյան, խնամատարության և աշխատանքի՝ Ա. Սահակյան, հանրային կրթության և արվեստի՝ Ն. Աղբալյան, զինվորական՝ զոր. Ք. Արարատյան։ Ցանկը վավերացվեց 37 քվեով 2-ի դեմ, որից հետո վարչապետը կարդաց կառավարական հայտարարությունը։

Ներկայացնելով Հայաստանի արտաքին ու ներքին քաղաքական բարդ դրությունը, Թուրք-ազրբեջանյան դավերը, պարենավորման ու ելևմտական անկայուն վիճակը, անգլիական զորքերի մեկնումը Կովկասից, հայկական հարցի ընթացքը Հաշտության վեհաժողովում՝ հայտարարությունը երկարորեն կանգ էր առնում կառավարության անելիքների և վարելիք քաղաքականության վրա. «Կառավարությունը պիտի ձգտե ստեղծել ամենամատչելի պետական վարկ շահագործելու և մըտցընելու մի շարք տնտեսական ձեռնարկություններ, ցույց տալ պետական օգնություն կարկտից, հեղեղից, մորեխից և այլ արհավիրքներից տնտեսապես քայքայված աշխատավոր դասակարգին, ամեն կերպ պիտի խրախուսի մասնավոր կապիտալի մուտքը մեր երկրի սահմանները, պիտի ապահովի նրա տարածումը և բնականոն զարգացումը, հեռացնելու համար մեր երկրի ծանր ֆինանսական դրությունը։ Կառավարությունը պիտի ջանա կարգավորել հարկային սիստեմը, կիրարկելով եկամտային հարկի պրոգրեսիվ սիստեմը՝ ուժեղացնելով ուղղակի հարկերը ի հաշիվ անուղղակի հարկերի։ Կնքելով արտաքին փոխառություններ՝ պիտի փութացնի սեփական բոների հրատարակությունը։ Աշխատանքի ապահովության և պաշտպանության համար կառավարությունը մտադիր է հրատարակել ազատ բանվորական օրենսդրություն, կիրարկել վարձատրության կենսական նորմաները, հիմնել աշխատանքի և արդյունաբերության տեսչություններ, հաշտարար ատյաններ, աշխատանքի բորսաներ, նպաստել բանվորական կազմակերպությունների ուժեղացմանը, կռվել անգործության դեմ տնտեսական և արդյունաբերական ձեռնարկությունների միջոցով։

Ժողովրդական լուսավորության գործի մեջ կառավարությունը պիտի ղեկավարվի հետևյալ սկզբունքով. ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական կրթություն։ Ժողովրդական լուսավորության գործը պիտի հիմնված լինի աշխատանքի հիմունքների վրա։ Կառավարությունը առանձնապես պիտի ղարկ տա պրոֆեսիոնալ կրթությանը։

Արտաքին քաղաքականության մեջ կառավարությունը հավատարիմ պիտի մնա նույն քաղաքականության, որին հարած է եղել մինչև այժմ հայ ժողովուրդը, և այն հավատին, որ նա տածում է դեպի դաշնակից պետությունները. միաժամանակ կառավարությունը պիտի ջանա ստեղծել բարեկամական փոխհարաբերություններ հարևան պետությունների հետ և փոխադարձ համաձայնությամբ կարգավորել Հայաստանի սահմանների հարցը, որ հանդիսանում է միակ պատճառը շարունակական դժգոհության և թյուրիմացության։ Ոչ մի դեպքում սահմանային վեճերը Հայաստանի և հարևան պետությունների միջև չպիտի լուծվեն զենքի ուժով։

«Կառավարությունը մեր երկրի ներսում ձգտում է Հայաստանի Հանրապետության դեմոկրատական նպատակներին, աշխատելով իրականացնել բոլոր քաղաքական ազատությունները. այդ բանի համար կառավարությունը ենթարկում է հիմնական բարենորոգությունների վարչական ամբողջ կազմը՝ ձգտելով աղգայնացնել այն, մայրենի լեզուն գործածության մեջ մտցնելով, պիտի փութացնի զեմստվոն (գավառային ինքնավարությունը) և քաղաքային ինքնավարությունները։

Մեր երիտասարդ պետության կազմակերպման համար ազատություն պիտի տա լայն հասարակական-քաղաքական խավերին, պիտի կիրառի ազգային կուլտուրական լայն ինքնավարության սկզբունքը օտարացեղ ժողովուրդների վերաբերմամբ, առանց որի մեր երկիրը գոյություն ունենալ չէ կարող։

Հողային հարցի վերաբերյալ՝ կառավարությունը պիտի իրականացնի կալվածատիրական, եկեղեցապատկան, վանքապատկան և մասնավոր գինեգործական բոլոր հողերի ազգայնացումը, պիտի բաժանի այդ հողերը սակավահող գյուղացիության ըստ աշխատանքի նորմայի և կարիքի։

Ժողովրդի տնտեսությունը բարձրացնելու համար կառավարությունը պիտի աշխատի ղարկ տալ արդյունաբերական ուժերի զարգացմանը՝ ցույց տալով պետական աջակցություն քաղաքային ինքնավարության հիմնարկություններին և նրանց միություններին՝ իրենց քաղաքային և տնտեսական ձեռնարկությունների մեջ։

Կառավարությունը ամեն կերպ պիտի աջակցի կոոպերատիվներին, ամեն տեսակի միություններին՝ այս ձևով խրախուսելով ժողովրդական նախաձեռնությունը գյուղատնտեսության և տնայնագործական արդյունաբերական վարկի շրջանում։

Արդարադատության գործը ամուր հիմքի վրա դնելու համար կառավարությունը մտցնում է դատարաններում ընտրական սկզբունքը։ Դատավարությունը պետք է հանրամատչելի լինի դատական ծախսերի տեսակետից։ Գործավարությունը դատարանում պետք է տարվի պետական լեզվով, դատավարությունը՝ մայրենի։

Երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու համար պիտի հեն-

* Ս. Արարատյանը նախարար նշանակվելով՝ հրաժարվել էր, իսկ Լ. Շանթը դեռ չէր եկել Եվրոպայից։

վի որոշ հասակի պարտադիր զինվորական ծառայության վրա։ Կազմակերպվում է ժողովրդական միլիցիա մշտական զորքի փոխարեն։ Զորքը պիտի ազգայնացվի։ Միջոցներ պիտի ձեռք առնվեն զորանոցների բարելավման և զինվորների կյանքի առողջապահական պայմանների կարգավորման վերաբերյալ։

Կառավարությունը ամեն միջոցներ ձեռք պիտի առնի Հայաստանի սահմաններից դուրս մնացած հայերի վերադարձը իրենց հայրենիքը փութացնել՝ նախօրոք երկրի ներսում ապահովելով նրանց գոյությունը և ստեղծելով հարմարություններ նրանց համար։

Առանձնապես կառավարությունը պիտի ջանա մինչև ձմեռ գաղթեցնել նախկին տաճկահայ գաղթականներին իրենց հայրենիքը, հակառակ դեպքում ամեն կերպ պիտի ապահովե նրանց։

Վերջապես, հերթական հարց է դառնում վերականգնումը Հայաստանի ավերակների։ Այս գործի մեջ պիտի երևան գա դաշնակիցների ակտիվ գործունեությունը։

Առաջադրելով ապագա գործունեության այս ծրագիրը, որի հիմունքներն ու կետերը ես այստեղ ընդգծեցի, նոր կառավարությունը հայտարարում է, որ նա համառորեն պիտի ձգտի իրականացնել այն՝ հիմնվելով օրինականության վրա»։

Հաջորդ նիստերում, այս հայտարարությունը առնվեց քննության և ընդունվեց հակառակ սոց.-հեղ. և անկուսակցական գյուղացիական պատգամավորների քվեների։ Ընդդիմադիրների կողմից Ա. Խոնդկարյանը երկար ու մանրակրկիտ վերլուծության ենթարկեց կառավարության հայտարարությունը՝ կանգ առնելով Հայաստանի պետականության թերի կողմերի վրա։

Ապա, խորհրդարանն ու կառավարությունն անցան իրենց հերթական աշխատանքներին։

* * *

Ազգ. պատվիրակության առաքելությունը Երևան հասավ հոկտեմբերի կեսերին։ Նա բաղկացած էր Վ. Թեքեյանից (նախագահ) և դր. Ն. Տեր Ստեփանյանից ու Սամ. Հարությունյանից։ Այս վերջինի մասնակցությունը Ազգ. պատվիրակության առաքելության՝ զարմանք ու տհաճություն առաջ բերեց Երևանում։

Քանի որ նույն օրերին Երևանում գումարված էր Հ. Հ. Դ. 9-րդ ընդհ. ժողովը, Ազգ. պատվիրակության հետ բանակցելու հարցն էլ հանձնվեց նրա քննությանը։ Ընդհ. ժողովը որոշեց, որ կառավարությունը սկսե բանակցությունները, և մշակեց այն պայմանները, որոնք հիմք պիտի ծառայեին, կնքվելիք համաձայնության։ Որից հետո կառավարությունը

նշանակեց իր պատվիրակությունը՝ Ս. Վրացյան (նախագահ), Շ. Միսաքյան և Մ. Հարությունյան, և հոկտ. 29-ին սկսեցին բանակցությունները, որոնք տևեցին մինչև նոյեմբ. 16։ 9 նիստեր գումարվեցին, եղան և անպաշտոն հանդիպումներ։ Կողմերը շատ ջանք թափեցին՝ գտնելու համար համաձայնության մի եզր, բայց հաջողություն չունեցան*։

Բանակցությունների հիմք կազմեց Վ. Թեքեյանի հոկտ. 21-ին Հայաստանի վարչապետին ներկայացրած հետևյալ գրությունը.

«Մրագիր Հայ ազգային պատվիրակության ամբողջական Հայաստանի վարչական առժամյա կազմի մասին. Անդրկովկասյան Հայաստանի մեջ ներկայիս իրականապես (de facto) գոյություն ունեցող Հայ հանրապետական կառավարության և նախկին Օսմանյան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային պատվիրակության միջև կկնքվի համաձայնություն մը հետևյալ հիմունքներուն վրա.

Ա. Կառավարություն.— 1. Կկազմվի առժամյա կառավարություն մը, որով նախարարական խորհուրդը կբաղկանա 9—13 անդամե։

2. Նախարարական խորհուրդին մեջ կմտնեն 4—6 արևելահայ և 4—6 արևմտահայ նախարարներ, յուրաքանչյուր կողմին համար հավասար թվով. պատերազմական նախարարի անձնավորությունը այս նկատողութենեն դուրս կմնա։

3. Նախարարական խորհուրդը նույնպես կես առ կես կկազմվի՝ առաջին կեսը դաշնակցական և երրորդ կեսը ժողովրդական և ռամկավար անդամներեն։ Պատերազմական նախարարը անկուսակցական է և կանվանվի երկու կողմերու համաձայնությունովը։

4. Վարչապետը կըլլա արևմտահայ մը, որ կը ներկայացվի Ազգ. պատվիրակության կողմե. հանրապետության ներկա խորհրդարանը կվավերացնե անոր վարչապետի պաշտոնը։

5. Ըստ որում վարչապետը Փարիզ կմնա իբրև նախագահ խաղաղության համաժողովին մեր Հայկական պատվիրակության (տե՛ս հետագա գլուխը), նախարարական խորհուրդին մեջ իր անձնավորությունը հաշվի կառնվի՝ թվի, հատվածի և հոսանքի տեսակետներեն։

6. Վարչապետին Փարիզ մնալու պատճառով հանրապետության խորհրդարանը կընտրե դեր-վարչապետ մը (vice-president), ով և ինչ հատվածե ու հոսանքե որ ինքը ուզե։ Դեր-վարչապետին ներկայացու-

* Բանակցությունների մանրամասնությունները հրատարակված են առանձին գրքույկով՝ Ս. Վրացյան. Բանակցություններ Ազգ. պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև, 1920, Բոստոն։ Բանակցությանց նիստերի արձանագրությունները «Հայ-Հայկական բանակցություններ» վերնագրով, հրատարակված են «Վեմ» երկամյա հանդեսում։

ցած հատվածն ու հոսանքը հաշվի կառնվին նախարարական խորհուրդի կես առ կեսի կազմին մեջ։

7. Նախարարական մյուս թղթապանակները կբաշխվին կողմերու փոխադարձ համաձայնությամբը։ Անոնց հատկացումը կմտնե կնքվելիք վերջնական համաձայնագրի մեջ։

8. Եթե որևէ պատճառով նախարար մը պակսի, իր հաջորդը կնշանակվի միևնույն հատվածեն և հոսանքեն և միևնույն եղանակով, որով նշանակված էր պակսող անդամը։

9. Նախարարական խորհուրդի անդամներուն մեջ Դաշնակցական հոսանքի պատկանող կես մասը կնշանակվի ներկա խորհրդարանի մեջ մեծամասնություն կազմող նույն կուսակցության բաժինեն (fraction), կամ ուրիշ որևէ պատասխանատու մարմինե մը՝ թե արևելահայ և թե արևմտահայ դաշնակցական նախարարներու վերաբերմամբ. գալով մյուս կեսը կազմող մասին՝ անոնցմե արևմտահայ նախարարները կներկայացվին Ազգային պատվիրակության կողմե և արևելահայ նախարարները՝ Ժողովրդական կուսակցության պատասխանատու մարմինին կողմե։

10. Նախարարական խորհուրդը արտաքին թե ներքին քաղաքականության վերաբերյալ և բացառիկ կարևորություն ունեցող որոշումներ տալու ժամանակ— ինչպես պատերազմի հայտարարություն և հաշտության կնքում, խորհրդարանական ընտրություններ, ընկերային բարենորոգումներ և այլն— կփնտրե բոլոր անդամներու թվին վրա 7-ի, եթե 9 է այդ թիվը, և 10-ի, եթե 13 է, մեծամասնությունը։

11. Եթե նախարարական խորհուրդը պետք ունենա հրահանգներ տալու պատվիրակությանը, այդ հրահանգները քվեարկված կհամարվին միայն այն ժամանակ, երբ նախարարներու երկու-երրորդը միաբանած են որոշման վրա։ Այս պարագային կդիմվի նաև արտասահման կամ այլուր բացակա գտնվող վարչապետին և ուրիշ նախարարներու ձայնին։

Բ. Պատվիրակություն.—1. Ամբողջական Հայաստանի միացյալ կառավարությունը կունենա միակ պատվիրակություն մը, որ կներկայացնե հայ ազգը խաղաղության համաժողովին մոտ։

2. Պատվիրակությունը կբաղկանա 7 անդամե, որոնց 4-ը՝ արևմտահայ և 3-ը՝ արևելահայ։

3. Պատվիրակության նախագահն է հանրապետության կառավարության վարչապետը։

4. Պատվիրակության կազմին մեջ՝ մեկ կողմե Դաշնակցական կուսակցությունը և մյուս կողմե ոչ դաշնակցականները ներկայացված կըլլան հավասար թվով, այսինքն՝ 3 առ 3. նախագահ վարչապետը, իբրև անկուսակցական դուրս կմնա ուժերու այս հարաբերությենեն։

5. Պատվիրակությունը, նման կառավարության, կմնա անփոփոխելի մինչև Ամբողջական Հայաստանի խորհրդարանի գումարումը։ Անդամներու պակասման պարագային՝ անոնց հաջորդները կորոշվին նույն հատվածեն և հոսանքեն և նույն եղանակով, ինչպես եղած էր պակսած անդամին համար։

6. Պատվիրակության արևմտահայ անդամները կառնվին Արևմտահայ ազգային համագումարին կողմե ընտրված ներկա Ազգային պատվիրակության անդամներու մեջեն՝ պահելով հոն ներկայացված հոսանքներուն համեմատությունը. այն է՝ 2 ոչ դաշնակցական և մի դաշնակցական. ի փոխարեն 3 արևելահայ անդամները կորոշվեն հանրապետության ներկա խորհրդարանի կողմե. այսպես՝ 2 դաշնակցական և մի ժողովրդական. սույն վերջինը կընտրվի և ցույց կտրվի Ժողովրդական կուսակցության պատասխանատու մարմինին կողմե։

7. Պատվիրակությունը լայն իրավասություն կունենա բանակցելու Համաձայնական պետությանց և խաղաղության համաժողովին հետ և հետապնդելու՝ համաժողովին ներկայացված հիշատակագրին սահմաններուն մեջ հայկական դատի լուծումը։

8. Պատվիրակությունը ինքը կնշանակե, երբ պետք ըլլա, վերոհիշյալ պետությանց մոտ Հայաստանի դեսպանները։ Եթե կառավարությունը պետք զգա նույն պետությանց մոտ քաղաքական առաքելություններ ղրկելու, նախապես կստանա այդ մասին պատվիրակության հավանությունը։

9. Պատվիրակությունը, նման կառավարության, իր գործունեության համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի խորհրդարանին։

Գ. Խորհրդարան.—1. Հանրապետության ներկա խորհրդարանը սույն համաձայնագիրը վավերացնելե ետք, երբ անոր հիման վրա կազմված նոր առժամանակյա կառավարությունը կձեռնարկե իր պաշտոնին, ինքզինք լուծված կհռչակե՝ տալով իր օրենսդրական իրավունքները առժամանակյա կառավարության և պարտք դնելով անոր վրա շուտով մշակել ընտրության հրահանգը և ընտրել տալ Ամբողջական Հայաստանի խորհրդարանը։

2. Ամբողջական Հայաստանի խորհրդարանը, որը իսկապես նախա-խորհրդարան (Pré-Parlement) մըն է, կգործե մինչև Սահմանադիր ժողովի (Constituante) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումեն և հայկական հողամասերու գրավումեն ետք։

3. Խորհրդարանը կբաղկանա ընդամենը 80 անդամե, որոնց կեսը կընտրեն արևմտահայերը և մյուս կեսը՝ Արևելյան Հայաստանի ժողովուրդը։

4. Նկատելով, որ Թուրքահայաստանը գրավված չէ տակավին, և արևմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրեն դուրս կգտնվի, արևմտահայոց մասին ընտրությունները կկատարվին երկրի մեջ և այլուր գրտ-

նրվող բոլոր արևմտահայերու կողմե, ուր որ հնար է։ Արտասահմանի մեջ քվեարկող արևմտահայերը այսպիսով հանձնառու եղած կլլկատվին, ինչպես պետք է հայտարարվի կանխավ, Հայաստանի քաղաքացիներ դառնալու։

5. Խորհրդարանը օրինավորապես իր առաջին նիստը կգումարե, երբ ընտրված արևմտահայ ներկայացուցիչներու առնվազն երեք-չորրորդը և Արևելյան Հայաստանի ներկայացուցիչներուն նույնպես երեք-չորրորդը հավաքված ըլլան։

Դ. Վավերացում և հրապարակում ներկա համաձայնագրի.— Ներկա համաձայնագիրը այժմու Խորհրդարանին կողմե վավերացվելե և երկու կողմե լիազորներու ստորագրությունը ստանալե ետք՝ կստանա օրենքի ուժ և կհրատարակվի։

Հրատարակությունը կկատարվի բանաձևով մը, որուն մեջ կշեշտվի թե նախկին Թուրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարությունը և անոր միացած է Անդրկովկասի մեջ իրականապես (de facto) գոյություն ունեցող Արևելյան Հայաստանի Անկախ Հանրապետությունը, թե Երևանը ընդունված է իբրև առժամյա մայրաքաղաք և թե Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլա նախապես Թուրքիոմաս կազմող Հայաստանի քաղաքներեն մին»։

Այս ծրագիրը տարօրինակ էր թե՛ իր ոգով և թե՛ մանավանդ էությամբ. նրա ամեն մի տողից անսահման արհամարհանք էր բուրում դեպի «իրականապես գոյություն ունեցող Հայ Հանրապետությունն» ու նրա վարիչները, և, ընդհակառակը, ամեն բան տարվում-կենտրոնացվում էր Փարիզի մի խումբ ազգայինների ձեռքը։ Ըստ Վ. Թեքեյանի ծրագրի, Պողոս փաշա Նուբարը, որ լինելու էր միաժամանակ և՛ վարչապետ, և՛ պատվիրակության նախագահ՝ օժտված արտակարգ լիազորություններով՝ Փարիզից պիտի վարեր Հայաստանի քաղաքական բախտը, իսկ Երևանում նստած նախարարները պիտի կազմեին տեղական կառավարություն, մի տեսակ «ազգային գավառական խորհուրդ»։

Պողոս Նուբարի պայմանները մանրակրկիտ քննության առնվեցին մի շարք նիստերում, և նոյ. 4-ին կառավարական պատվիրակությունը տվեց հետևյալ պատճառաբանված պատասխանը.

«1. Փարիզի պատվիրակությունը կազմել առանց հատվածական և կուսակցական խտրության. ցանկալի է, որ արևմտահայերը այնտեղ մեծամասնություն լինեն, իսկ կուսակցական տեսակետից Դաշնակցությունը կարող է լինել փոքրամասնություն։ Այսպես, եթե պատվիրակությունը կազմված է երեք անդամից, Դաշնակցությունը կտա մեկ անդամ, իսկ եթե հինգից՝ երկու անդամ։ Երկու դեպքումն էլ պատվիրակության մեկ անդամը պիտի լինի անկուսակցական։ Համաձայն ենք, որ պրն. Պողոս Նուբարը լինի Միացյալ պատվիրակության նախագահ, սակայն, պատվիրակությունը պիտի գործե Հայաստանի Հանրապետական կառավարության հրահանգներով։

2. Կառավարության կազմի մեջ Դաշնակցությունը պիտի ունենա կեսից մեկ անդամ ավելի։ Պատվիրակության նախագահը և վարչապետը պիտի լինեն տարբեր անձեր. թե վարչապետը և թե բոլոր նախարարները պետք է մնան երկրում և մեր երկրում գործեն։ Անընդունելի է Ազգային պատվիրակության ներկայացուցիչների առաջարկը, որ Պողոս Նուբարին տրվի վարչապետություն, թեկուզ իբրև լոկ տիտղոս։

3. Ներկա Խորհրդարանի լուծման մասին խոսք լինել չի կարող, նա պետք է շարունակե իր զբաղմունքները։ Անհնարին է նաև նրան դադար տալ Մինչև Հանրապետության առաջին բյուջեի քննության ավարտումը։ Համամիտ ենք, և դա մեր փափագն է, որ Խորհրդարանի արևմտահայ անդամների թիվը հավասարեցվի արևելահայերին։ Կրճատել պատգամավորների այժմյան թիվը իրավական հիմունքներով հնարավոր չէ։ Արևմտահայ նոր պատգամավորների մուտքը Խորհրդարանի մեջ պետք է կատարել լրացուցիչ ընտրությամբ։ Մենք կարծում ենք, որ ընտրություններ պիտի նշանակվեն Հայաստանի այն մասերում, ուր դեռևս ընտրություն չի եղել, ինչպես, օրինակ, Կարսի շրջանը, Կիլիկիա, և արտասահմանյան գաղութներում, այսինքն՝ Պոլիս, Բալկաններ, Եգիպտոս, Ամերիկա, Սև ծովի ափերը և այլ տեղեր, ուր հնարավոր է։ Ընտրությունները պիտի լինեն Հայաստանի օրենքներով, որոնք պետք է հարմարեցվեն տեղական պայմաններին։ Արևմտահայերի վերաբերմամբ կարելի է ընդունել, որ մի պատգամավոր ընտրվի ոչ թե 20 000-ից, ինչպես եղել է Հայաստանի Խորհրդարանի ընտրությունը, այլ ավելի պակաս ազգաբնակչությունից։ Նկատելով Խորհրդարանի անդամների այժմյան կազմը հատվածական տեսակետից, անհրաժեշտ կլինի ընտրել ևս 51 պատգամավոր, որով հատվածները թվով կհավասարվեն իրար, իսկ Խորհրդարանի անդամների ընդհանուր թիվը կդառնա 131։

4. Գալով Ազգային պատվիրակության վերջին առաջարկին, որ Հայաստանի Հանրապետությունը իրեն միացած հայտարարի անկախ Թուրքաց Հայաստանին, սկզբունքային որևէ առարկություն չունենք, սակայն, չենք տեսնում այն ձևը, որ քաղաքական ստեղծված պայմաններում կարող էր հնարավոր դարձնել այդ ակտը։ Ընդհակառակը, քաղաքական դեպքերի դասավորումով, Հայաստանի ներկա Հանրապետությունը դարձել է հենարանը, որի վրա կանգնած՝ հայ ժողովուրդը պիտի շարունակե Հայաստանի ամբողջացման գործը։ Մենք չենք կարողանում երևակայել Հայաստան առանց Տաճկահայաստանի կամ առանց Ռուսահայաստանի»։

Ինչպես տեսնում ենք, ո՛չ միայն ոգով, այլ հիմնական մտածելակերպով էլ տարբեր բևեռներ էին ներկայացնում այս երկու «ծրագրերը». մեկը ձգտում էր Հայաստանը փոխադրել Փարիզ դեպի գա-

զութահայությունը, մյուսը կառչել էր մայրենի հողին ու չէր ուզում պոկվել նրանից։ Մի մտածելակերպ, որ տիրական մնաց մինչև վերջ։

Նոր բանակցություններից, մի շարք պաշտոնական և անպաշտոն նիստերից ու փոխադարձ զիջումներից հետո, կողմերն, ի վերջո, հանգեցին հետևյալ եզրակացության։ Հանրապետական պատվիրակությունը, իբրև վերջին պայման, ընդունում էր, որ

Ա. Ներկա Խորհրդարանը պետական բյուջեն քննելուց և վավերացնելուց հետո 1—2 ամսով արձակուրդ կտանա։

Բ. Անմիջապես կձեռնարկվի լրացուցիչ ընտրությունների. կընտրվեն 51 արևմտահայ պատգամավորներ ևս։

Գ. Ընտրությունները կկատարվեն Հայաստանի ընտրական օրենքներով՝ տեղական պայմաններին հարմարեցնելով։

Դ. Ընտրական գործի կազմակերպությունն ու ղեկավարությունը կստանձնեն Պողոս Նուբարի պատվիրակությունը։

Ե. Միացյալ կառավարությունը կկազմվի անմիջապես, բայց եթե պահանջեն, կարելի է կազմել և բյուջեի քննությունը վերջացնելու ու Խորհրդարանի դադար ստանալու ժամանակ։

Զ. Կառավարությունը կկազմվի 9 նախարարներից՝ 5 դաշնակցական, 4 ոչ դաշնակցական։ Վարչապետը դաշնակցական։ Համաձայն ենք, որ արտաքին գործոց նախարարը լինի Պողոս Նուբարը։

Է. Երաշխավորում ենք, որ միացյալ կառավարությունը կմնա մինչև լրացված Խորհրդարանի գոյություն ունենալը։

Ը. Համաձայն ենք, որ Միացյալ պատվիրակության նախագահը լինի Պողոս Նուբարը։ Համաձայն ենք, որ Միացյալ պատվիրակության մեջ դաշնակցականները լինեն փոքրամասնություն։

Թ. Համաձայնության ակտը կհայտարարենք այն մտքով, որ Տաճկահայաստանն ու Ռուսահայաստանը միացել են միմյանց հետ։

Պողոս Նուբարի առաքելության վերջնական պայմանները.

Ա. Միացյալ պատվիրակություն Պողոս Նուբարի նախագահությամբ։

Բ. Միացյալ կառավարություն 9 կամ 11 նախարարներից, որոնցից պատերազմական նախարարը չեզոք, իսկ մնացյալները՝ կես առ կես՝ 4 արևելահայ, 4 արևմտահայ, դաշնակցական ու 4 ոչ դաշնակցական։ Սակայն, «մենք կրնանք նաև ընդունիլ 10 անձե կազմված կառավարություն մը դաշնակցական մեծամասնությամբ»՝ 5 դաշնակցական, 4 ոչ դաշնակցական և պատերազմական նախարարը չեզոք՝ «պայմանավ. սակայն, որ այդ կառավարությունը ամեն բացառիկ կարևորություն ունեցող որոշումները— արտաքին քաղաքականության և ընկերային բարենորոգումներու վերաբերյալ որոշումները, ինչպես և պատվիրակության տրվելիք հրահանգները— կայացնե երկու երրորդի մեծամասնությամբ, կամ լավ ևս՝ յոթ ձայնով տասնի վրա»։

Գ. Պողոս Նուբարին տալ արտաքին գործոց նախարարի պաշտոն կամ հանրապետության գերագույն ներկայացուցչի դիրք։

Դ. Ներկա Խորհրդարանը պետք է արձակվի մինչև արևմտահայ պատգամավորների ընտրությունը և նրանց երեք քառորդի Երևան հասնելը։ Կարելի է արձակուրդ տալ բյուջեի քննությունից հետո, բայց կոալիցիոն կառավարությունն էլ գործի պիտի սկսե Խորհրդարանի արձակուրդից հետո։

Ե. Արևմտահայ պատգամավորների ընտրության նախաձեռնության և ընտրական օրենքի որոշման իրավունքը պատկանում է Ազգ. պատվիրակությանը և կամ կոալիցիոն կառավարությանը։

Զ. Ներկա Խորհրդարանը արձակուրդի ընթացքում կարող է վերստին նիստ գումարել բացառիկ խնդիրների առթիվ՝ պայմանով, որ նշանակված հարցից զատ ուրիշ որևէ բանով չզբաղվի։

Է. Համաձայնությունը կհայտարարվի այն մտքով, որ Ռուսահայաստանն է միացել Թուրքահայաստանին։

Եթե ուշիուշով քննենք երկու կողմի տեսակետները, կտեսնենք, որ անհամաձայնության գլխավոր առարկան մնացել էր Խորհրդարանի արձակուրդի ժամանակը. երևանցիք համաձայնվում էին Խորհրդարանին տալ ժամանակավոր արձակուրդ, փարիզցիք պնդում էին, որ արձակուրդը լինի անորոշ ժամանակով։ Եվ հակառակ երևանցիների ծայրահեղ հաշտասիրության և զիջումների, Փարիզը մնաց անհողդողդ։ 9-րդ նիստում Վ. Թեքեյանը հայտարարեց. «Եզրակացնելով մեր բոլոր ստացած պատասխանները դրված առաջարկներուն՝ ես պետք է հաստատեմ, որ համաձայնության ո՛չ մեկ կետ չկա վերջին առաջարկներուն վրա, և կմնա, որ մենք գրավոր կերպով արձանագրենք այդ։ Ես այլևս որևէ հնարավորություն չեմ տեսնար միություն կայացնելու»։

Պարզ էր եզրակացությունը. բանակցությունները խզվում էին։ Եվ նոյ. 6-ին, վերջին նիստում, «գրավոր կերպով արձանագրվեց» խզումը։

Զուտ պատմական տեսակետից մոտենալով խնդրին՝ պետք է ասել, որ Հայաստանի կառավարությունն ու ղեկավար շրջանները իրենց մեծամասնության մեջ անկեղծորեն ուզում էին համաձայնության գալ Ազգ. պատվիրակության հետ։ Մասնավորապես հանրապետական պատվիրակությունը բոլոր հնարավոր և անհնար միջոցները ի գործ դրեց՝ համոզելու համար Հ. Հ. Դ. Ընդհ. ժողովին, Խորհրդարանի ու կառավարության անդամներին՝ անելու մի շարք կարևոր զիջումներ, որոնց մասին, ուրիշ պայմաններում, խոսելն իսկ անմտություն կլիներ։ Բայց Պողոս Նուբարի մարդիկ չըմբռնեցին վայրկյանի լրջությունը և մասամբ էլ զոհ գնացին Երևանի ընդդիմադիր շրջանների սխալ ներշնչումներին։ Մի քանի տարի հետո, երբ իշխանության գլուխ ոչ թե դաշնակցական ընկերվարականներն էին, այլ Լենինի աշակերտները, նրանք փորձեցին Երևան մտնել շատ ավելի համեստ պայմաններով՝ «լորձնաշուրթն

գետնաքարշությամբ», ինչպես անողոք կերպով բնորոշեց նույն ինքն Վ. Թեքեյանը, բայց նրանց երեսին նայող չեղավ։

Հակառակ Վ. Թեքեյանի խզումի հայտարարության ու մեկնումին, վարչապետ Ա. Խատիսյանը դեկտ. 9-ին Պողոս Նուբարին ուղարկեց մի ընդարձակ նամակ՝ պարզելով բանակցությունների ընթացքն ու վախճանը և աշխատելով համոզել, որ Ազգ. պատվիրակությունն ընդունե կառավարության պայմանները։ «Ես ուզում եմ հավատալ,— գրում էր Խատիսյանը,— որ Ազգ. պատվիրակության առաքելության մեկնումը Երևանից դեռևս բանակցությունների վերջնական խզումը չի նշանակում։ Սիրում եմ հուսալ, որ հարցի մանրամասնություններին ծանոթանալուց հետո, դուք բավարար կհամարեք մեր կողմից առաջարկված պայմանները և գործնական քայլ կառնեք երկուստեք ցանկալի համաձայնությունն իրականություն դարձնելու համար։ Եվ ինչ էլ լինի ձեր վճիռը, դուք միջոցներ ձեռք կառնեք ձեր հեղինակավոր ազդեցությամբ թույլ չտալու հրապարակային պայքարի վերսկսման, որ արտաքին աշխարհում այնպիսի տպավորություն կթողնե, որ, իբր թե, մեր մեջ գոյություն ունի էական անհամերաշխություն ու պայքար ազգային-քաղաքական հիմնական հարցերի վերաբերմամբ։ Ընդհակառակը, մոտիկ ծանոթությունը ձեր ներկայացուցիչների հետ ցույց տվեց, որ Հայաստանի քաղաքական այսօրվա ճակատագրին վերաբերվող գլխավոր հարցերի նկատմամբ մեր մեջ հայացքների նույնություն է տիրում և նկատվող անհամաձայնությունը, ավելի շուտ, արդյունք է փոխադարձ անվստահության, ինչ որ դժվար չպիտի լինի վերացնել գործի ընթացքում»։

Այսպիսով, Վ. Թեքեյանի «խզումի» հայտարարության Հայաստանի կառավարությունը պատասխանում էր «դադարով» և առաջարկում բանակցությունները շարունակել։ Եվ այս Խատիսյանի անհատական կարծիքը չէր միայն. այդպես էր մտածում և բանակցող պատվիրակությունը, որի նախագահի ձեռքով էր գրված Խատիսյանի ուղարկած նամակը։ Այդպես էին մտածում և Խորհրդարանի ու կառավարության ղեկավար անդամները։

Երևանում այն հույսն ունեին, որ հենց որ Թեքեյանի առաքելությունը վերադառնար Փարիզ ու զեկուցաներ Հայաստանի դեպքերի ու տրամադրությունների մասին, Ազգ. պատվիրակությունը կփոխեր իր անհաշտ ընթացքը և կշտապեր ընդունել կառավարության պայմանները։ Դեպքերը չարդարացրին այս հույսերը։ Պողոս Նուբարի առաքյալները Պոլիս հասան թե չէ՝ սկսվեց մի կրքոտ ու թունավոր պայքար Երևանի բանակցությունների շուրջ, որ լայն ալիքներով տարածվեց բովանդակ գաղութահայության մեջ։ Ազգ. պատվիրակությունն էլ տարվեց այդ թունավոր մթնոլորտով, և Հայաստանի կառավարության պարզած ձեռքը մնաց կախված օդի մեջ։

Հետզհետե, սակայն, դեպքերը սկսեցին դասավորվել հօգուտ «Արարատյան Հանրապետության». հունվ. 19-ին Գերագույն խորհուրդը ճանաչեց Հայաստանի կառավարության դե ֆակտո գոյությունը. Երևանը սկսեց դառնալ քաղաքական հետաքրքրության առարկա։ Ավելի և ավելի սկսեց ակնհայտ դառնալ, որ թուրքահայկական խնդիրը կարող է լուծվել միայն որոշ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության հետ։ Գուցե կային և ուրիշ պատճառներ, որոնք առաջ բերին հանկարծական փոփոխություն Ազգ. պատվիրակության տրամադրության մեջ. փետր. 18-ին, ուրեմն, Երևանի բանակցությունների վերջանալուց երեք ամիս հետո, Հայաստանի կառավարությունը Պողոս Նուբարից ստացավ մի հեռագիր, որով փաշան հայտնում էր, թե ինքը ընդունում է այն պայմանները, որ Վ. Թեքեյանը մերժել էր։ Միևնույն հեռագրում Պողոս Նուբարը առաջարկում էր անհապաղ միացնել Փարիզի պատվիրակությունները և իմացնում էր, թե ինքը ներկայացուցիչ է նշանակել Ս. Հարությունյանին ու Ա. Մխիթարյանին, որոնք Հանրապետության կառավարության հետ պիտի կազմեին միացյալ կառավարություն։

Երևանում հաշտվել էին արդեն այն մտքի հետ, որ Ազգ. պատվիրակությունը մերժել է կառավարության պայմանները։ Հիմա ի՞նչ պատահեց, որ, հանկարծ, ընդունում է։ Եվ եթե արևմտահայ ու արևելահայ խառն կառավարություն պիտի կազմվեր, ինչացո՞ւ են Ս. Հարությունյանն ու Ա. Մխիթարյանը՝ երկուսն էլ ռուսահայ ծանոթ հակադաշնակցականներ ու կառավարության դեմ ազմկահույզ պայքար մղողներ։ Պարզ էր, որ մեջտեղը ինչ-որ անշիտակ խաղ էր խաղացվում, բայց թե ի՞նչ՝ Երևանում չէին հասկանում։ Միակ բացատրությունը այն էր, որ Հայաստանի Հանրապետության իրական ճանաչումից հետո Պողոս Նուբարի քաղաքական բաժնեմղթերը սկսել էին ընկնել, և նա շտապում էր ա՛յդ ձևով փրկել դրությունը։

Մարտի 25-ին տեղի ունեցավ հանդիպում Ս. Հարությունյանի և հանրապետական պատվիրակության նախագահ Ս. Վրացյանի միջև վարչապետ Ա. Խատիսյանի ներկայությամբ։ Ս. Վրացյանը բացատրեց, որ հոկտեմբերից ի վեր կացությունը մեծ չափով փոխվել է. նախ՝ հայկական անկախության ճանաչման փաստով նոր կացություն է ստեղծվել արտաքին ճակատում. երկրորդ՝ Ազգ. պատվիրակության հարուցած պայքարը այնքա՞ն է հուզել կրքերը, որ Հայաստանում կոալիցիայի գաղափարը բոլորովին վարկաբեկվել է։ «Պետք է ցավել, որ հոկտեմբերին սկսված բանակցությունների պատասխանը միայն փետրվարին տրվեց, մինչդեռ Ազգ. պատվիրակությունն ամեն հնարավորություն ուներ ավելի առաջ ասելու իր վերջնական խոսքը։ Ներկա պայմաններն ավելի քան երբեք պահանջում են, որ Հայաստանն ունենա ուժեղ և ժողովրդական վստահությունը վայելող կառավարություն։ Այն մթնոլորտը, որ ստեղծել են Ազգային պատվիրակության կուսակիցները, այն, եթե ոչ

թշնամական, առնվազն պաղ վերաբերումը, որ նրանք ցույց են տալիս դեպի հանրապետությունը, ավելի ևս դժվարացնում է հոկտեմբերին առաջարկված կոալիցիոն ձևով հեղինակավոր կառավարության կազմակերպումը. հոկտեմբերից ի վեր կացությունը մի շարք տեսակետներից փոխվել է»։ Եվ առաջարկում էր սպասել մինչև Հ. Հ. Դաշնակցության մոտերս գումարվելիք խորհրդաժողովը, որը քննելու էր և այս հարցը։

Ս. Հարությունյանը, ընդհակառակը, այդ բոլոր մտահոգությունները համարում էր հարցից խուսափելու մի միջոց։ Նրա համար դրությունն ու անելիքը պարզ էր. «Այժմ մեզ հարկավոր է փոխադարձ համաձայնությամբ որոշել միայն երեք հարց. նախարարական պաշտոնների բաժանումը, նախարարական թեկնածուների որոշումը և արտաքսման մեր 2 պատվիրակություններից կազմել մեկ պատվիրակություն»։ Ս. Հարությունյանը ամեն կերպ աշխատեց համոզել, որ Պողոս Նուբարի առաջարկն ընդունվի անայլայլ, սակայն, այս անգամ էլ հակառակ կողմը մնաց անդրդվելի։ Եվ պետք է ասել, որ կառավարությունը, եթե ուզենար էլ, չէր կարող ուրիշ կերպ վարվել. Ազգ. պատվիրակության կատարած հակահանրապետական աշխատանքների մասին այնպիսի մռայլ տեղեկություններ էին ստացվում Փարիզից, Ազգ. պատվիրակության կուսակից մամուլը այնպիսի թունավոր լեզու էր բանեցնում, որ «կոալիցիայի» գաղափարին ոչ մի տեղ չէր մնացել Հայաստանում։

Այսպես վերջ դրան անառողջ պայմաններում անառողջ մտայնությամբ սկսված «Հայ-Հայկական» բանակցությունները, և Ազգ. պատվիրակությունը շարունակեց մնալ խռովածի և ընդդիմադիրի դիրքում Հայաստանի Հանրապետության հանդեպ։

ԳԼՈՒԽ ԻԳ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԳՆԴԱՊԵՏ ՀԱՍԿԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1919 թվականի Հայաստանի ներքին կյանքի ամենացավոտ երևույթը մահմեդական հակապետական շարժումներն էին՝ կազմակերպված Թուրքիայի և Ազրբեջանի ձեռքով՝ Հայաստանի անկախությունը խորտակելու դիտավորությամբ։

Հայաստանի Հանրապետության գոյության առաջին օրից իսկ երկրի ներսը ապրող և Ազրբեջանի ու Թուրքիայի մահմեդական տարրը թշնամական դիրք բռնեց դեպի հայ պետականությունը։ Ներքին թշնամությունը չէր ուզում հաշտվել Հայաստանի անկախության հետ և ձգտում էր միանալ կա՛մ Ազրբեջանին, կա՛մ Թուրքիային։ Ազրբեջանն ու Թուրքիան էլ, իրենց հերթին, աշխատում էին միմյանց ձեռք մեկնել, միանալ Հայաստանի վրայով։ Միության կամուրջ պետք է լիներ Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջևան շերտը, թերևս, և Սուրմալուն ու Կարսը։

Թուրքերի պարտությունից ու Կովկասից հեռանալուց հետո, թուրք հրամանատարության դրդումով, Հայաստանում ու Վրաստանում, ամեն տեղ՝ Աջարիա, Ախալցխա, Կարս, Սուրմալու, Շարուր-Նախիջևան և այլն՝ կազմվեցին տեղական «անկախ հանրապետություններ» իրենց կառավարություններով՝ «շուրաներով» և սկսեցին պայքարել Հայաստանի ու Վրաստանի տիրապետության դեմ։ Հայաստանի հողի վրա կային «Արևմտյան Կովկասի Հանրապետությունը» Կարսի «շուրայով» և Արևելյան Կովկասի կամ «Արաքսյան Հանրապետությունը», որի մեջ մտնում էին Սուրմալուն, Զանգի և Վեդի Բասարները, Միլլին, Շարուրն ու Նախիջևանը՝ Նախիջևան կենտրոնով։ Այս «հանրապետություններից» յուրաքանչյուրը, իր հերթին, բաժանվում էր ավելի փոքր գավառակ միությունների՝ իրենց տեղական «շուրաներով»։ Այդ «հանրապետությունները» պահում էին սեփական «բանակներ»՝ զինված թուրքական թնդանոթներով, գնդացիրներով ու հրացաններով, թուրք սպաների ու շաուշների հրամանատարության տակ։ Ազրբեջանը հայթայթում էր նրանց դրամը։ Թուրքիան և Ազրբեջանը ուղղություն էին տալիս նրանց գործունեությանը։

Հայաստանը ներսից պայթեցնելու համար մասնավորապես մեծ ճիգ էր թափում Ազրբեջանը, որը 1919 թ. մարտին դիվանագիտական

ներկայացուցչի պաշտոնով Երևան ուղարկեց իր մոլեռանդ համաթուրքապաշտ գործիչներից մեկին՝ Խան Թեքինսկիին՝ պաշտոն տալով նրան՝ Հայաստանի ներսում մահմեդական խռովություններ կազմակերպելու*։

Խան Թեքինսկին Երևան հասավ մարտ ամսի քսաններին։ 22-ին նա այցելեց Էջմիածին կաթողիկոսին, և ահա թե ինչ է հեռագրում իր կառավարությանը. «Նա (կաթողիկոսը) շեշտեց հայերի և մահմեդականների բարեկամության անհրաժեշտությունը և խոստացավ կոչ ուղղել հայ ժողովրդին՝ հաշտ ապրել մահմեդականների հետ։ Կաթողիկոսը ինձ պահեց ճաշի և մինչև վերջին րոպեն չհեռացավ ինձնից։ Նավթ չլինելու պատճառով Էջմիածին վանքն ու կաթողիկոսարանը զրկված են էլեկտրական լույսից։ Ես խոստացա մեքենաների համար նավթ տալ, ուստի խնդրում եմ շուտով տակառներով նավթ ուղարկեք կաթողիկոսի համար»։ Ու նույն հեռագրում, ծածկագրով, իբրև շարունակություն, գրում է. «Ուղարկեցե՛ք միայն 200 փութ նավթ. ավելին կարող է կառավարությունը օգտագործել... Մարտի 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացավ 14 միլիոն բոն, բայց եթե դրամական տեսակետից դժվարություններ հանեք, շուտով կընկնի ծանր դրության մեջ։ Հացի բացակայության պատճառով Հայաստանը չի կարող ապրել ինքնուրույն կյանքով։ Հնդիկ զինվորները ուղևորվեցին դեպի Նախիջևան։ Եթե անհրաժեշտ գտնեք, Կարսի կառավարության հետ կապ կհաստատեմ»։

Ուրեմն, առաջին իսկ քայլից, հարևան «քույր հանրապետության» ներկայացուցիչը «դժվարություններ հանելու» մասին է մտածում։

Ապրիլի 10-ին Թեքինսկին մանրամասն տեղեկություններ է հեռագրում Բաքու հայկական բանակի մասին, իսկ ապր. 16-ին, թե «լուրերի համաձայն անգլիացիք Կարսը հանձնել են հայերին. պատրաստվում են հանձնել նաև Շարուր—Նախիջևանը։ Խնդրում եմ ստուգել և հարցնել անգլիացիներին. եթե ճիշտ է, կարծում եմ, անհրաժեշտ է բողոքել Հնդկաստանի, Թուրքեստանի, Աֆղանստանի, Մալայան կղզիների և Կովկասի ողջ մահմեդականության, նույնպես և Հաշտության վեհաժողովին ընդդեմ անգլիացիների այն ցանկության, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թվով կես միլիոն հայերին»։

Ապա, մի շարք հեռագրերով, հաղորդում է Նախիջևանի գրավման նախապատրաստական աշխատանքների մանրամասնությունները և ապրիլի 29-ի № 72 հեռագրով շտապ հարցնում է. «Եթե Նախիջևանը դիմադրություն ցույց տա հայկական զորքերին, կառավարությունը ի՞նչ օգնություն կհասցնե և զորքեր կուղարկե՞ թեկուզ կամավորների անվան տակ»։

Ապր. 30-ին, հետները մեծ գումարներով, Երևան են հասնում Ազրբեջանի գործակալներ Նախիջևանսկին և Մակինսկին՝ Նախիջևան գնալու համար։ «Զոր. Թոմսոնը Երևանում,— հեռագրում է մայիսի 1-ին Թեքինսկին,— արգելեց Մակինսկիին անցնել Նախիջևան՝ այն պատճառաբանությամբ, թե այդ շրջանը գտնվում է Հայաստանի կառավարության վարչության ներքո։ Մակինսկին դրամները հանձնեց ինձ. սպասում եմ ցուցմունքների, թե ինչպե՞ս գործադրեմ Նախիջևանին հատկացված գումարները։ Նախիջևանսկին հարկադրված է վերադառնալ։ Անգլիացիք զրավեցին Մակինսկիի վագոնը»։

Ու երեք օր վերջը, մայիսի 4-ին, իրար հետևից հղում է 2 հեռագիր։ Առաջինով հաղորդում է. «Հայկական գնդերը ուղևորվեցին դեպի Նախիջևան։ Հայաստանի վրա ճնշում գործ դնելու համար անհրաժեշտ եմ գտնում, որ անհապաղ հայկական սահմանների վրա կենտրոնացվեն մեր գնդերը։ Նախիջևանի ազգաբնակչությունը պատրաստ է ցույց տալու դիմադրություն... Դիլիջանում կանգնած է միայն 4-րդ գունդը՝ թերի կազմով»։ Երկրորդ հեռագրով խնդրում է. «Շտապ պատասխանեցե՛ք 29 ապրիլի № 72 հեռագրիս։ Նախիջևանցիները ինձ հարցնում են, ինչպե՞ս վարվել, և արդյոք Ազրբեջանը օգնության կգա՞, եթե իրենք հայերին դիմադրություն ցույց տան»։

Մայիսի 5-ին Բաքվի կառավարությունը պաղ ջուր է լցնում Խան Թեքինսկիի գլխին. արտ. գործ. նախ. պաշտոնակատար Զիաթխանովը հեռագրում է. «Դեպի Նախիջևան զորամասեր և կամավորներ ուղարկելու մասին ներկայումս խոսք լինել չի կարող. այդ հարցը եռանդուն կերպով քննվում է կառավարության և (Խորհրդարանի) ավագների խորհրդի մեջ։ Հետևանքը կհաղորդեմ։ Եռանդագին բողոքեցեք Նախիջևանը գրավելու նպատակով ձեռնարկվող ամեն տեսակ գործողությունների և Ազրբեջանի ինքնիշխան իրավունքների նսեմացման դեմ»։

Իսկ մի օր հետո, մայիսի 5-ին, վարչապետ Խան-Խոյսկին հրամայում է. «Անհապաղ կապ հաստատեցեք Կարսի կառավարության հետ։ Ցույց տվեք նրան ամեն տեսակ աջակցություն. իմացե՛ք, թե ի՞նչ կարիք ունի. հեռագրեցեք մեզ, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնենք»։

Թեքինսկին Նախիջևան է ուղարկում իր զինվորական կցորդին ու գործավարին, որ ոտքի հանեն մահմեդականներին։ Եվ մայիսի 9-ին հեռագրում է. «Մինչև ապր. 27-ը զինվորական կցորդն ու գործավարը պետք է Նախիջևան լիներին, բայց նրանցից դեռ տեղեկություն չի ստացված»։

Մայիսի 12-ին Թեքինսկին դրամ և իր ոռճիկն է պահանջում վրդով-

---

* Խան Թեքինսկիի Երևան հասնելու առաջին իսկ օրից Հայաստանի արտաքին գործոց նախարարությունը ծանոթ էր նրա ծածկագրին. Խան Թեքինսկիի ուղարկած և ստացած բոլոր հեռագրերը, նախքան իրեն հասնելը, հայտնի էին դառնում Հայաստանի կառավարությանը։ 1920 թ. մայիսին, Ազրբեջանի խորհրդայնացումից հետո, այդ հեռագրերը հրատարակեցին առանձին գրքույկով՝ «Գազտնի Փաստաթղթեր» (Ազրբեջանի գավազրական գործունեության մի էջ), 1920 թ., Երևան, հրատ. «Ռազմիկի»։

ված. «Ես պարտական չեմ առանց ռոճիկի ծառայելու և ստանալու ավելի քիչ, քան մյուս դիվանագիտական ներկայացուցիչները։ Գործի օգուտը նկատի առնելով՝ չպետք է սահմանափակեք իմ ծախքերը։ Եթե իմ ծախքերը մեծ եք համարում, խնդրում եմ ինձ հետ կանչեք և փոխարինեք ուրիշով, մանավանդ որ ես Խոյսկիի հետ պայմանավորվել եմ Երևանում մի ամսից ավելի չմնալ»։

Մարդը եկել էր մի ամսում Հայաստանը տակն ու վրա անելու և հեռանալու նպատակով։

Թեքինսկիի պնդումների վրա Բաքվի կառավարությունը մայիսի 18-ին նրից պատասխանում է, որ «հանգամանքների բարդացման հետևանքով՝* նախիջևանցիները մոտ ապագայում չեն կարող մեզանից սպասել զինվորական իրական օգնություն։ Եթե տեղական բնակչությունը կարող է կանգնեցնել հայկական զորքերի առաջխաղացումը, այդ ուրախությամբ կընդունվի Ազրբեջանի կողմից, մանավանդ որ Ղարաբաղի հայերը, հակառակ մեզ աջակցելու համար Ղարաբաղ եկած անգլիացիների ներկայության, կտրականապես ընդդիմանում են Ազրբեջանի իշխանության հաստատմանը այնտեղ»։

Այնուամենայնիվ, հակառակ Թեքինսկիի թափած ջանքերի, հայկական զորքերը, ինչպես տեսանք, առանց դիմադրության հանդիպելու, գրավեցին Կարսն էլ, Շարուր—Նախիջևանն էլ։ Դրանից հետո, սկսվեց ազրբեջանյան գործակալների դավերի մի նոր շրջան։

Մայիսի 10-ին Թեքինսկին խորհուրդ է տալիս իր կառավարությանը. «Բոլշևիկների կողմից Բաքվին վտանգ սպառնալը պատրվակ բռնեցեք և խնդրեցեք անգլիացիներին, որ Կարսի թնդանոթները փոխադրեն Բաքու»**։ Հունիսի 4-ին, թե՝ «որևէ պատճառ բռնելով՝ հեռաձգեցե՛ք Հայաստանի երկաթուղիների համար նավթ ուղարկելը, որովհետև Նախիջևանի շրջանում դեպքեր են սպասվում»։ Եվ նույն օրը, № 130 հեռագրով. «Կամավորական բանակի առաջխաղացումը հայերին ուրախություն է պատճառում... Եթե մեր հարաբերությունը Կամ. բանակի հետ լարվի, հայերը թշնամական դիրք կբռնեն դեպի մեզ, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ ստեղծել Շարուր—Նախիջևանում։ Գործը կազմակերպելու համար անհապաղ պետք է դրամ բաց թողնեք։ Իմ ձեռք առած միջոցների շնորհիվ Շարուրը, Նախիջևանը և Օրդուբադը արդեն միացել են մեկ ազգային խորհրդի մեջ, որը մշտական հարաբերության մեջ է ինձ հետ»։

Հունիսի 8-ին արտ. գործ. նախ. Ջաֆարովը հեռագրում է կառավարության հավանությունը. «Պատասխան № 130 հեռագրի։ Հավանություն եմ տալիս Շարուր—Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն եմ դրամ տալ զինվորական կազմակերպության համար։ Հաղորդեցեք ինչպե՞ս և ո՞ւմ բաց թողնել դրամը։ Հաղորդեցեք, թե ի՞նչ միջոցներով պիտի իրագործվեն մատնանշված ծրագիրն ու կազմակերպությունները»։

Հունիսի 11-ին Թեքինսկին պատասխանում է. «Շարուր—Նախիջևանի շրջանը ունի մոտ 6000 կիսականոնավոր զորք՝ ձիավորով, թնդանոթով ու գնդացիրներով։ Ռազմունակությամբ հետ չեն մնում հայերից, որոնց օժանդակում են անգլիացիները։ Պատերազմական գործողությունների ժամանակ զինված ուժերի թիվը կարող է հասնել մինչև 10 000։ Կարծում եմ, որ մենք պետք է պահենք միայն 6000 ասկյար, հին հրամանատարական կազմի հետ միասին՝ տեղավորելով նրանց այն վայրերում, ուր գտնվում էին մինչև հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանգեզուրի սահմանի վրա՝ լեռներում։ Ծախքերի ստուգումը լիովին երաշխավորել դժվար է։ Գործի կարևորությունը ստիպում է, որ հաշտվենք մի քանի հնարավոր զեղծումների հետ։ Դրամը հրամանատարներին բաց կթողնեմ մաս-մաս, բացի այդ, վերահսկիչներ կնշանակեմ։ Վաղը մեկնում է զինվորական կցորդը. լսեցեք նրա զեկուցումը և միասին քննեցեք։ Այսօր սուրհանդակ ուղարկեցի Նախիջևան»։

Ու նույն օրը նոր հրահանգ Բաքու. «Ո՛չ մի ֆունտ նավթ ու մազութ բաց չթողնեք Հայաստանին»։

Հունիսի 22-ին Թեքինսկին հեռագրում է. «Թվում է, որ այժմ Ազրբեջանը Հայաստանից բացի՝ ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրություն դարձնել։ Պետք է քուրդ Սմկոյին քաշել մեր կողմը, որի համար լիազորություն եմ խնդրում ինձ. զինվորական կցորդին հարց ու փորձ արեք Սմկոյի մասին»։

Հուլիսի 21-ին. նորից պահանջ, որ Ազրբեջանը զորք ուղարկի դեպի Հայաստանի սահմանները. «Մեր զորքերի երևալը սահմանների վրա խուճապ կձգե հայերի մեջ, կուժեղացնե դասալքությունը և կբարձրացնե մահմեդականների ոգին... Եթե ուզում եք օգտվել բոպնիը. ձեռք առեք շտապ և վճռական միջոցներ»։ Ու կրկին. «Սպասվում են խոշոր դեպքեր։ Հայաստանը լարում է իր բոլոր ուժերը»։

Եվ, իրոք, Հայաստանը լարում էր իր բոլոր ուժերը։ Մահմեդականությունը ոտքի էր ելել հայ ժողովրդի ու Հայաստանի գոյության դեմ։ Վերջապես, հունիսի 14-ին, Փարիզի վեհաժողովը օսմանյան պատվիրակությանը հանձնել էր հաշտության պայմանները, հույները գրավել էին Իզմիրը, մեջտեղը դրված էր Մեծ Հունաստանի ու ծովից ծով Հայաստանի ծրագիրը։ Եվ մահմեդական աշխարհը հուզվում էր զայրացած։ Սկսվում էր քեմալական շարժումը, որի ազդեցության տակ Կովկասի մահմեդականները համախոսականներով ու հեռագրերով ոմբակոծում էին Հաշտության վեհաժողովն ու դաշնակիցների անդրկովկասյան

* Այդ ժամանակները Ազրբեջանը ապրում էր զոր. Դենիկինի կամավորական բանակի սպառնալիքի տակ։

** Կարսը գրավելուց հետո, անգլիացիները բերդի թնդանոթների ու ռազմամթերքի մի մասը փոխադրեցին Կամավորական բանակին։

ներկայացուցիչներին՝ բողոքելով Հայաստանի տիրապետության դեմ և պահանջելով իրենց կցումը Թուրքիային կամ Ազրբեջանին։

Մյուս կողմից, հունիս ամսից սկսած, հայկական հետաղոտությունը նկատում էր Թուրքերի կողմից զինվորական շտապ պատրաստություններ Հայաստանի ուղղությամբ։ «Թուրքահայաստան ուղարկված գործակալները, կարդում ենք Հայաստանի Գլխավոր սպայակույտի հունիսի 17 դաղտնի զեկուցման մեջ, վկայում են Թուրք կանոնավոր զորամասերի ներկայությունը Օլթիի և Սարիդամիշի ուղղությամբ և Ալաշկերտի շրջանում։ Կատարելապես ստույգ կերպով հաստատված է, որ Թուրքական 12-րդ դիվիզիան գտնվում է Խորասան—Զիվինում՝ կենտրոնն ունենալով Խորասանում... Քարոզչությունը Թուրքիայի և Անդրկովկասի շրջաններում ուժեղանում է։ Այդ նպատակով մեծ քանակությամբ Թուրք գործակալներ են ուղարկված Հայաստանի ներսերը, մահմեդական գյուղերը, և ամեն տեղ հայտնաբերվում են մեր վարչության և հակահետաքրքրությունների կողմից։ Մասնավորապես զորավոր է Թուրք գործակալների խուզությունը կողմից։ Մասնավորապես զորավոր է Թուրք գործակալների ազդեցությունը Արդահան—Օլթիի և Բարդուսի շրջաններում, ուր նրանք կազմակերպել են գնդացիրներով զինված քրդական հրոսախմբեր։ Նույն պատրաստությունը կատարվում է և՛ Սարիղամիշ—Կաղզվան տարածության վրա, և՛ ավելի հեռուները՝ Բարթողյան լեռնաշղթայի քրդաբնակ մասերում մինչև Արարատ»։

Նախապատրաստվելով ներսից ու դրսից՝ Թուրք-ազրբեջանցիները անցան գործի, որը հեշտանում էր և նրանով, որ անգլիացիք պաշտոնապես հայտարարել էին, թե շուտով հեռանալու են Կովկասից. մինչև մայիսի 15 Կարսում և մայիսի 30 Նախիջևանում արդեն ոչ մի անգլիական զինվոր չէր մնացել։ Հայերը մնացել էին միայն իրենց ուժերով։ Այդ օրերին Հայաստանը ուներ երեք հետևակ բրիգադ՝ յուրաքանչյուրը երկու գնդից և գունդը՝ երեք դիմադրակից, երկու ձիավոր գունդ՝ յուրաքանչյուրը վեց հարյուրյակով, 12 մարտկոց՝ ամեն մեկը 4 թնդանոթ, 3 զրահապատ գնացք և մի քանի տեղական զորամասեր։ Այս ուժերը ցրված էին երկրի բոլոր կողմերում, ունեին թերի կազմ, չնչին քանակությամբ ռազմամթերք, վատ հագուստ ու պարենավորում։

Այսպիսի թույլ և ուժացրիվ վիճակում շատ դժվար պիտի լիներ դրությունը, եթե մահմեդական խռովությունները վերածվեին ընդհանուր ապստամբության։ Այդպես էլ պատահեց։ Անգլիացիների հեռանալուց հետո, Օլթիից մինչև Օրդուբադ, ամբողջ տարածության վրա բռնկվեց մահմեդական ապստամբությունը։

Շարժումը սկսվեց Բեյուք-Վեդի գյուղից, որը վաղուց կես-ապրատամբ վիճակի մեջ էր, և հարևան գյուղերի հետ ուներ մոտ 4000 կրակողներ։ Մերտ կապ պահելով Արաքսի մյուս ափի՝ Արալբեխի քրդության հետ՝ նա մշտական սպառնալիք էր Շարուր—Նախիջևանի հայկական զորքերի և երկաթուղային հաղորդակցության համար։ Բեյուք-Վեդիցիները բազմաթիվ հարձակումներ էին գործում, թալանում ու սպանում էին հայերին և, առհասարակ անհանգիստ հակապետական տարր էին։ Հուլիսի 1-ին, Դավալուի մոտերը նրանք սպանեցին 9 հայ զինվորներ և 12 գյուղացիներ։ Այդ դեպքը առիթ դարձավ, որ հայկական հրամանատարությունը, համաձայնությամբ անգլիական Ներկայացուցչի, վճռե գրավել Բեյուք-Վեդին։ Այդ նպատակով, դեպքի վայրը ուղարկվեց մի զորամաս՝ հրամանատարությամբ գնդ. Ապրեսյանի, որը իր մոտ կանչելով գյուղի կոմիսարին և օգնականին՝ պահանջեց հանձնել հանցավորներին, վերադարձնել սպանվածների զենքերն ու գույքերը և վարձատրել սպանվածների ընտանիքներին։ Կոմիսարն ու օգնականը համաձայնվեցին կատարել պահանջը, և հուլ. 4-ին գնդ. Ապրեսյանը իր զորամասով, Բեյուք-Վեդիի ներկայացուցիչների ուղեկցությամբ, մոտեցավ գյուղին և բանակ դրեց։ Եվ երբ Բեյուք-Վեդիի ներկայացուցիչները գնացին գյուղ, վերջնական պատասխան բերելու, այնտեղից, հանկարծ, հայերի վրա բացվեց հրացանային ու գնդացիրային սաստիկ կրակ։ Հանկարծակիի եկած հայերը տվին ծանր զոհեր— սպանվեց 5 սպա և 30 զինվոր, վիրավորվեց 7 սպա և 120 զինվոր— և անկարգ նահանջեցին։ Հուլ. 8-ին հայկական հրամանատարությունը փորձեց ուժով գրավել Բեյուք-Վեդին, բայց հաջողություն չունեցավ։ Եվ այնուհետև սկսեց ուժեր հավաքել ու պատրաստվել վճռական գործողություններին։

«Բեյուք-Վեդիի դրությունը լուրջ է,— հեռագրում է 14 հուլ. Թեքինսկին։— Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ուժերը։ Քահանաներն իրենց քարոզներում կոչ են անում հարձակվել Բեյուք-Վեդիի վրա՝ սրբազան արշավանք համարելով այդ։ Մահմեդականներին կարող է ազատել Ազրբեջանի զինված միջամտությունը... Մահմեդականների զիմումին՝ օգնության համար՝ հայտարարեցի, որ առայժմ Ազրբեջանը չի կարող զորքով օգնել, բայց մահմեդականների բոլոր ծախքերն ու վնասները անմիջապես կվերադարձվեն Ազրբեջանի կողմից։ Սպասվում են մեծ դեպքեր ամբողջ Շարուր—Նախիջևան—Օրդուբադում և Կարսի շրջանում։ Առանց մի օր կորցնելու՝ ուղարկեցեք խոշոր գումար զինվորական կազմակերպությունների համար»։

Եվ, հիրավի, Բեյուք-Վեդիի ազդանշանի վրա գլուխ բարձրացրին և Շարուրի ու Նախիջևանի Թուրքերը։ Հուլիսի կեսերին շտապով Շահթախթ հասավ Թուրքական բանակի գնդապետ Խալիլ բեյը, Թուրք սպաների ու 2—3 հարյուր ասկյարների հետ և անցավ մահմեդական շարժման գլուխը։ Եվ հուլիս 20—21-ին, միաժամանակ, ապստամբություն ծագեց Շարուր—Նախիջևանի բոլոր կողմերում։ Հայկական սակավաթիվ զորամասերը Ջուլֆայում, Նախիջևանում, Շահթախթում ու Բաշ-Նորաշենում շրջապատվեցին Թուրք զինված բազմություններով։ Մի քանի օրվա արյունահեղ կռիվներից հետո, հուլ. 25-ին, Նախիջևանի հայկական զորքերը, իրենց հետ առնելով և հայ ազգաբնակչության որոշ մասը,

նահանջեցին դեպի Զանգեզուր։ Անգլիական զինվորական առաքելությունը և ամերիկյան նպաստամատույցի պաշտոնյաները անցան Թավրիզ։ Շարուրի զորքերի մի մասը երկաթուղով քաշվեց հյուսիս, իսկ մյուս մասը, Բաշ-Նորաշենի շրջանում, հուլ. 25—26-ին, գնդ. Կարաքեշիշյանի գլխավորությամբ, ճեղքելով թշնամու ամուր շղթան, նահանջեց դեպի Զանախչի ու Զինջիրլու գյուղերը։ Մի քանի օրից, այս գյուղերն էլ, Ղարախաչ, Ուլուխանլու, էլփին գյուղերի բնակիչների ու զորքի հետ միասին, կռվով նահանջեցին Զիվինի վրայով, դեպի Արաջան։

Թուրքերը հետևեցին հայերին Նախիջևանից Զանգեզուրի ուղղությամբ Նախիջևան գետի կիրճով և Շարուրից՝ դեպի Դարալագյազ՝ Արփա գետի ձորով, բայց Խաչիկ—Նորս գծից հետ մղվեցին։

Այս հաջողություններից արբեցած, օգ. 1-ին, Թեքինսկին հեռագրում է Բաքու. «Բեյուք-Վեդիի, Շարուրի և Նախիջևանի շրջաններում կռիվներ են տեղի ունենում։ Հայկական գնդերը փախչում են կամ ոչնչանում։ Հաղորդեցեք, թե ես ի՞նչ պետք է անեմ։ Մահմեդականները դեռ չեն ցանկանում զրավել Երևանը»։ Ու նորից. «Վերջապես, թղթի հայտագրերից բացի մենք պե՞տք է աննենք իրական քայլեր... պե՞տք է անհապաղ պատերազմ հայտարարենք»։ Միաժամանակ, «մեր կառավարությունը պետք է վճռական առաջարկ անե անգլիացիներին, որ մեզ հանձնեն Ջուլֆա—Շահթախթ երկաթուղին՝ Ալեաթ—Ջուլֆա գծով՝ Պարսկաստանի հետ առևտուր սկսելու համար։ Հանձնման ենթակա այդ գիծը պետք է երկարի մինչև Դավալու գյուղը» (28 հուլ.)։

Իսկ երկու օր վերջը, օգ. 3-ին, ռազմաշունչ խանը հեռագրում է վարչապետ Խան Խոյսկիին. «Անհրաժեշտ է, որ Ազրբեջանը երկու շաբաթվա ընթացքում մաքրե Զանգեզուրի հաշիվը և զորքերը առաջ քաշե մինչև Ղամարլու։ Այժմ ամենահարմար ժամանակն է։ Հայաստանի կոմիսար ամերիկյան գնդապետի ժամանումից հետո ուշ կլինի։ Եթե իմ առաջարկը կընդունվի ձեր կողմից, իրագործեցեք առանց պատերազմ հայտարարելու։ Շատ եմ խնդրում, որ օգտվեք րոպեից և ժամանակ չկորցնեք»։

Օգ. 4-ին Թեքինսկին Խան Խոյսկիին տեղեկություններ է հաղորդում հայկական զինվորական տեղափոխությունների մասին, և սրանով վերջանում է նրա դավադրական գործունեությունը Հայաստանում. հայկական կառավարության պահանջով անգլիացիք քշեցին նրան Երևանից, և ի հատուցումն իր մատուցած ծառայությունների նա նշանակվեց Ազրբեջանի արտ. գործ. նախարարի օգնական։ Նրա տեղը Երևան եկավ Ազրբեջանի «ազգային բանաստեղծ» Հախվերդովը, որ անշեղ շարունակեց իր նախորդի քաղաքականությունը։

Բեյուք-Վեդիի և Շարուր—Նախիջևանի դեպքերը մեծ հուզում առաջ բերին Երևանում և Հայաստանի բոլոր կողմերում։ Կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ. հուլ. 23-ին Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում հայտարարվեց՝ 26, 27 և 28 տարեկանների զորակոչ (օգ. 18-ին այս որոշումը տարածվեց ամբողջ Հայաստանի վրա)։ Հուլ. 24-ին մտցվեց մահապատիժ պետական դավաճանության և դասալքության համար։ Նույն օրը որոշվեց ազգաբնակչությունից հարկադրական միջոցներով զենք ու ռազմամթերք հավաքել և սահմանել զինային պարտադիր տուրք։ Հուլ. 25-ին հաստատվեց զինաժողովի կոմիսարի պաշտոնը և Արշ. Ջամալյանը նշանակվեց զինաժողովի կոմիսար։ Հուլ. 28-ին զենքի տակ առնվեցին մինչև 40 տարեկան բոլոր սպաները։ Հուլ. 30-ին կազմվեց երեք հոգիանոց Ապահովության կոմիտե՝ վարչապետից և ներքին գործոց ու զինվորական նախարարներից։ Ապահովության կոմիտեն պիտի վարեր երկրի պաշտպանության գործը՝ լիազորություն ունենալով դիմելու արտակարգ միջոցների նույնիսկ առանց նախարարական խորհրդի որոշման։

Այս միջոցներն ինքնին բավական են տեսնելու համար, թե ի՞նչ վտանգավոր կացություն էր ստեղծվել Հայաստանում։ Կառավարությունն ու ժողովուրդը զգում էին, որ միայն իրենցից է կախված փրկությունը և լարում իրենց բոլոր ուժերը։ Կառավարության կոչի վրա, մի քանի օրվա մեջ, Երևանի բնակչությունը մեծ քանակությամբ փամփուշտ ու հրացան հանձնեց զինվորական իշխանություններին։ Ժողովուրդը իր տրամադրությունն արտահայտում էր բազմաթիվ ժողովներով ու բանաձևերով։

Կառավարությունը դիմեց և դաշնակիցներին՝ զինվորական աջակցություն հասցնելու խնդրանքով։

Հուլ. 26-ին Երևան հասան անգլիական ու ֆրանսիական հրամանատարության ներկայացուցիչները մի քանի հարյուր հնդիկ զինվորների հետ, և օգոստ. 2-ին հանդիպում ունեցան ապստամբների պետ Խալիլ բեյի հետ, որը հայտարարեց, թե եղածը ապստամբություն չէ բնավ, այլ ազգային իրավունքների պաշտպանություն. Շարուր—Նախիջևանի թրքությունը մինչև Փարիզի վեհաժողովի վերջնական վճիռը, ուզում է կառավարվել սեփական ազգային խորհրդով, ինչպես Ղարաբաղը կառավարվում է հայկական ազգային խորհրդով։

Անգլիական ու ֆրանսիական սպաների փորձերը ո՛չ մի արդյունք չավին։ Այդ պատճառով, օգ. 10-ի առավոտյան, հայկական զորքերը դիմեցին նոր հարձակման Բեյուք-Վեդիի վրա և մի շարք հաջող ընդհարումներից հետո, երեկոյան դեմ գրավեցին Բեյուք-Վեդիից 2 վերստ հեռու գտնվող Կոթուզի բարձունքները և Գիջա, Շիրազու, Կարալար, Ճաթղոան և Ռեհանլու գյուղերը։ Թուրքերը դիմադրում էին կատաղի կերպով, ռազմագիտական արհեստով փորված դիրքերից, հրացանների ու գնդացիրների սպանիչ կրակով։ Մի քանի օր տևեցին արյունահեղ կռիվներ, որոնց ամբողջ երկիրը լարված հետևում էր։ Ամենքը զգում

էին, որ պարտությունը Բեյոլուք-Վեդիի տակ ճակատագրական հետևանքներ կունենար Հայաստանի համար։

Օգոստ. 15-ին, խորհրդարանում, փոխվարչապետ Ա. Սահակյանը զեկուցում տվեց մահմեդական շարժումների մասին. «Մենք,— ասաց նա,— հետզհետե շրջապատվում ենք երկաթե օղակով։ Թշնամին ուզում է ներխուժել մեր երկիրը... Կառավարությունը բավարար չգտնելով ներկա զինվորական ուժը՝ կոչ է անում ժողովրդին զոհաբերել իր գույքն ու կյանքը։ Այժմ կառավարությունը դիմելով այս բարձր ժողովին՝ հայտնում է, որ կարիք ունի հեղինակավոր գործիչների և պատգամավորներից օգնություն ստանալու հույս ունի»։

Խորհրդարանը ընդառաջ գնաց կառավարության դիմումին և որոշեց՝ 1) հայտարարել հայրենիքը վտանգի մեջ և հրավիրել ժողովուրդը՝ լարել բոլոր ուժերը երկրի պաշտպանության համար, 2) բժ. Հ. Տերլարել բոլոր ուժերը երկրի պաշտպանության համար, 2) բժ. Հ. Տեր-Դավթյանից, Լ. Թադևոսյանից, Հ. Արղությանից և Հ. Մանուկյանից բաղկացած խորհրդարանական մի հանձնախումբ ուղարկել զորաճակատ՝ ողջունելու համար զորքին և բանակի բարելավման ծրագիր բերել, 3) կոչ ուղղել դաշնակից երկրների խորհրդարաններին։

Մի քանի օրվա արյունահեղ կռիվներից հետո, հայկական զորքերը ամրացման դիրքերում Բեյոլուք-Վեդիի առջև և վերջ տվին գործողություններին. դրությունը սկսել էր լրջանալ երկրի մյուս մասերում էլ*։

Շարուր—Նախիջևանի դեպքերը, ամենից առաջ, արձագանք գտան և Սուրմալու—Կողբի շրջանում, ուր հայկական իշխանությունը հաստատվել էր մայիսի 27-ին։ Օգոստ. 7-ին հարձակումներ սկսվեցին Կողբից հարավ կանգնած հայկական զորամասի վրա։ Առաջին հարձակումը հետ մղվեց, բայց օգոստ. 18-ին թուրքերը գրոհ տվին նոր թափով։ Ապստամբվեցին և հայ զորքերի թիկունքում գտնվող Ղամբշլու, Ագարակ և Արաս Գյոլ գյուղերը, և հայկական զորամասը ստիպված եղավ թողնել Կողբն ու քաշվել Արաքսի ափը։ Նրանց հետ հեռացան և մոտ 5000 հայ ու եզդի բնակիչներ։

Օգոստ. 23-ին թուրքերը սկսեցին սպառնալ և Էջմիածնի կայարանին ու սպանեցին շրջակա գյուղերից 8 հայ։ Օգոստոսի 24-ին, Ներքին Ղարխուն գյուղի մոտ ընդհարում տեղի ունեցավ ապստամբ թուրքերի և մի հայկական վաշտի միջև. վիրավորվեցին 5 հայ զինվորներ և 1 սպա։ Օգոստ. 25-ին Շոռոլու գյուղի բնակիչները հրաժարվեցին ճանաչել Հայաստանի իշխանությունը։ Օգոստ. 26-ին թուրքերը կրակ բաց արին Էջմիածնից Ղարխուն մեկնող ամերիկացիների վրա։ Օգոստ. 29-ին Ուլուխանլու—Էջմիածին ճանապարհին սպանվեցին հիվանդանոցից իրենց զորամասը վերադարձող 4 զինվորներ։ Ամբողջ Զանգիբասարը հայտարարեց իրեն ապստամբ և մերժեց ճանաչել հայկական իշխանությունը։ Զանգիբասարցիներին ղեկավարում էր Խալիլ բեյի համհարզ Մահմեդ բեյը և մի շարք թուրք չաուշներ։

Ընդհարումների և կռիվների թատերաբեմ դարձավ և Կարսի նահանգը։ Օգոստ. 18-ին մոտ 1500 զինված քրդեր ու թուրքեր հարձակվեցին Կաղզվանի վրա, բայց հետ մղվեցին։ Օգոստ. 21-ից սկսվեցին մի շարք ընդհարումներ քրդերի և հայկական կանոնավոր ուժերի միջև։ Օգ. 22-ին 400 թուրքեր գրավեցին Բայքարա գյուղը, Սելիմից 15 վերստի վրա՝ կամենալով փչացնել երկաթուղին Բեգլի-Ահմեդի մոտ և կտրել Սարիղամիշի հայկական զորամասի հաղորդակցության գիծը։ Դևիկի մոտ քրդերը գնդակահարեցին անգլիական մի ինքնաշարժ և վերավորեցին մի զինվոր*։ Հայկական հողերի վրա երևացին և թուրքական ուժեր։

Օգոստ. 30-ին, Սարիղամիշի հայկական զորամասերը անցան հակահարձակման և հաջող կռիվներով հետ շպրտեցին թշնամուն ու գրավեցին նրա դիրքերը Կարաքուրդի շրջանում։ Օգոստ. 31-ին Դևիկի հայկական մասերը գրավեցին Վերին Բաշքեո, Բեգքեո, Բողդուտ և Մեխրետ գյուղերը. քրդերը փախան՝ ջարդված։ Նույն օրը Կարաքուրդի զորամասը գրավեց Բաշքեոյի դիրքերը և մինչև 1914 թ. սահմանը մաքրեց քրդերից։ Անհաջող անցավ նույնպես թշնամու փորձը՝ գրավելու Կաղզվանը. մեծ զոհեր տալով՝ փախավ խուճապահար։

Սեպտ. 1-ին քրդերն ու թուրքերը շրջապատեցին Կոնզ և Դորդ Կիլիսա գյուղերը և Մերդենեկի զորամասի պետից պահանջեցին՝ մաքրել անհապաղ Մերդենեկի շրջանը և զորքերը հեռացնել Կարս։ Պատասխանը եղավ՝ հարձակում Մերդենեկի զորքերի կողմից և թշնամու փախուստը դեպի Կանջուրետի լեռները։ Սեպ. 2-ին Սարիղամիշի հայկական զորամասը կռվով գրավեց Գյումրի սարն ու Ղզըլ Կիլիսա գյուղը։ Ապստամբների ղեկավար էյուբ փաշան փախավ Օլթիի շրջանը, իսկ մի ուրիշ ղեկավար անձնատուր եղավ։

Այսպիսով, իբրև հետևանք հայկական զենքի հաջողության, մահմեդական շարժումը Կարսի նահանգում վերջ գտավ։ Դրան նպաստեցին և այն զգույշ ու հաշտասեր քաղաքականությունը, որ վարում էր այս-

* Բեյոլուք-Վեդիի կռիվների ժամանակ, հայ կոմունիստները Երևանում բաց թողեցին կառավարության դեմ ուղղված մի թռուցիկ, որով դասալքվության էին հրավիրում զինվորներին։ Թռուցիկի հեղինակները ձերբակալվեցին և արտաքսվեցին Հայաստանից։

* Հակառակ Մուղրոսի զինադադարի, թուրքերը շարունակում էին թշնամությանը անգլիացիների դեմ։ Այսպես, հուլիսին անգլիացիք իրենց ձեռքն էին առել Էրզրումը, զինթափել էին քաղաքը և հուլիսի վերջերին սկսել դուրս տանել բերդի զենքն ու ռազմամթերքը։ Երբ Էրզրումից դուրս եկավ առաջին գնացքը՝ բեռնավորված 15 թնդանոթով, 500 հրացանով և մեկ միլիոն փամփուշտով, քաղաքից ոչ հեռու, մի խումբ թուրք զինվորներ հարձակվեցին նրա վրա, զինաթափ արին անգլիացի պահակներին և գնացքը դարձրին Էրզրում։ Անգլիացիք մարսեցին այս անպատվությունը, ինչպես մարսեցին և շատ ուրիշ, ավելի ծանր անպատվություններ։

տեղ հայկական իշխանությունը։ Այնուհետև, եթե չհաշվենք 1920 թվի սկզբի Զարուշատի դեպքերը, Կարսի շրջանում լուրջ հակապետական դեպքեր տեղի չունեցան։

* * *

Մահմեդական շարժումների ամենատաք շրջանին Հայաստան հասավ Հաշտության վեհաժողովի Հնգի խորհրդի կողմից նշանակված՝ Հայաստանի կոմիսար գնդ. Ուիլիամ Հասկելը։ Նրա ժամանումը մեծ ոգևորություն առաջացրեց հայերի մեջ։ Բաթումից մինչև Երևան, ամեն տեղ, նրան ցույց տրվեց խանդավառ ընդունելություն։ Ընդունելությունը շատ ջերմ էր, մանավանդ, Հայաստանում։

Օգոստ. 20-ին գնդ. Հասկելը իր շքախմբով հասավ Ղարաքիլիսա։ Գնացքը կանգ առավ ծաղիկներով զարդարված կամարի տակ։ Հասկելի վագոնի առջև դրվեցին պատվո պահակներ։ Կայարան էր հավաքված ահագին բազմություն։ Քաղաքացիական և զինվորական պատգամավորները ներկայացան Հասկելին, որը դուրս եկավ վագոնից և ժողովրդի ոգևորված ծափերի ու «կեցցեների» տակ դիտեց շարված զորքը, հարց ու փորձ արավ զինվորներին, հետաքրքրվեց նրանց վիճակով։ Որբերի կողմից մի աղջիկ ծաղկեփունջ ներկայացրեց տիկ. Հասկելին։

Նույն հանդիսավորությամբ Հասկելը անցավ և Ալեքսանդրապոլից և օգոստ. 21-ի առավոտյան հասավ Երևան։ Քաղաքն ամբողջ զարդարված էր դրոշակներով, գորգերով ու կանաչով։ Բոլոր խանութները փակ էին։ Փողոցներում տիրում էր արտակարգ եռուզեռ։ Ամենքը դուրս էին եկել վեհաժողովի ներկայացուցչին ընդունելու։ Վարչապետը, բոլոր նախարարները, խորհրդարանի նախագահը, զինվորական հրամանատարական կազմը, քաղաքապետը, քաղաքագլուխը, թեմական առաջնորդը, ամերիկյան, անգլիական և ֆրանսիական ներկայացուցիչները՝ ամենքը կայարանում էին, ուր շարքով կանգնած էին զինվորները իրենց նվագախմբով։ Ընդունելության ծիսական մասը վարում էր մայրաքաղաքի պարետ Ա. Շահխաթունին։

Ընդունելության արարողությունից, վարչապետ Խատիսյանի ողջույնի խոսքից, Հասկելի պատասխանից ու պատվո պահակի ընդունելությունից հետո, շքերթը մեկնեց քաղաք։ Առջևից գնում էին Սասունի և Շատախի ձիավորները՝ ազգային տարազով և դաշնակից պետությունների դրոշակներով։ Նրանց հետևում էին Հասկելի ու վարչապետի և մյուս դիմավորողների ինքնաշարժերը։ Քաղաքային ինքնավարության շենքի առջև կանգնած էին որբերը թարմ պսակներով։ Աբովյան պողոտան լիքն էր անհաշիվ բազմությամբ։ Հասկելին հատկացված էր Երևանի լավագույն տներից մեկը, որի առջև կանգնած էին քաղաքացորը,

Մուշեղ Ավետիսյան
(Սասունի ուժերի պետ)

Զոր. Մելիք-Մուրադյան

Սպա Մ. Տեր-Հովհաննիսյան

Մ. Արաբեգյան
(Կրթական նախարար)

Ա. Խատիսյան
(Վարչապետ)

Բժ. Ա. Բաբալյան
(Խնամատարության նախարար)



Վ. Փափազյան



Ն. Ադբալյան
(Կրթական նախարար)

Կ. Սասունի

Փարիզի ազգ. համագումարի մի խումբ պատվիրակներ

Վահան Թեքեյան

Նավարշ Միսաքյան

Պողոս Նուբար





Ա. Միքայելյան

Ծդ. Իշխանյան

Վահան Խորենի



Գ. Խատիսյան

Հովակ Ստեփանյան

Ղազար Քոչարյան

Հ. Տերունի

Եմբ. Հրաչ

Ցապոն
(Վայոց Ձորի ա. գավ.)



Ն. Հակոբյան
(Վայոց Ձորի գավ.)



Վահան Մինախորյան



Դր. Ա. Աբեղյան

Ս. Ջալալյան
(Երևանի միլիցապետ)

Լ. Ամիրխանյան
(Երևանի փոխնահանգապետ)



Տիկ. Վ. Սահակյան

Խոսրով Պապայան



Մ. Տեր-Գևորգյան
(Բայազետի հայ հեղ. կոմ-ի անդամ)

Պ. Կանդուրայան
(Պետակ. գույք. բաժնի վարիչ)

Դ. Փաստրմաճյան
(Վաշինգտոն)

Մ. Վարանդյան
(Հոովմ.)



Տիկին Դիանա Աբգար
(Հ. Հ. Ներկայացուցիչ Ճապոնիայում)



Մարտիրոս Հարությունյան
(Հ. Հ. դեսպան Բաքվում)

Նշարիշ Արշակ Ֆերվանյան



Ակադ. Ա. Թամանյան



Արշակ Զոպանյան

Ձախից աջ. նստած՝ Ա. Էնֆիաջյան, Զոր. Բագրատունի, Հ. Քաջազնունի, Զոր. Անդրանիկ, պրոֆ. Ա. Տեր-Հակոբյան: Ոտքի՝ Հ. Փիրաջան, Մ. Տեր-Պողոսյան, Ս. Մելիքյան, Արմեն Դարո, Բոնապարտյան: 1929, Մ. Նահանգներ



Մանուկ Աբեղյան



Լ. Շանթ

Դրո Կանայան
(Զինվորական նախարար)

Գնդ. Մազմանյան

Փոխգնդ. Տ. Բաղդասարյան

Ս. Փրացյան
(Վարչապետ)

Մարզար Սարգսյան



Բժ. Ս. Կամսարական
(բժշկապետ զին. հիվանդանոցի)

Խմբապետեր Մուշեղ, Սմբատ և Ասլան
իրենց գործակիցներով

Սեպուհ

Ա. Խոնդկարյան
(Արդարադատության նախարար)

Ս. Տեր-Թովմասյան
(Հայր. Փրկ. կոմ.-ի քարտ.)

Նստած ձախից աջ՝ Գարեգին Սարգիսբեգյան և սպարապետ Կուռո։
Ոտքի՝ Նաթան Տեր-Ասատրյան և Լևոն Հարությունյան

անգլիական հնդիկ զինվորները, համքարությունները իրենց դրոշակներով։

Հասկելի հասնելուն պես նվագախումբը հնչեցրեց «Մեր հայրենիքը»։ Հասարակությունը ողջունեց որոտընդոստ ծափերով ու «կեցցեներով»։ Հասկելը դիտեց զորքը, հարց ու փորձ արավ զորքի սպառազինության և հագուստի մասին։ Զորամասերը հանդիսավոր քայլերով անցան նրա առջևից։

Ապա, բնակարանում, Հասկելը ընդունեց կառավարության, բանակի, քաղաքի և օտար պետությանց ներկայացուցիչներին ու շնորհակալություն հայտնեց իրեն ցույց տրված ջերմ ու սրտաբաց ընդունելության համար։ Ժողովուրդը, խռնված նրա բնակարանի առջև, երկար չէր ցրվում։ Վերջապես, մեզ էլ հիշեց Վեհաժողովը...

Նույն օրը ևեթ Հասկելը երկար տեսակցություն ունեցավ կառավարության նախագահի հետ։ Հուսատու էին նրա խոսքերը. նա հաղորդեց, որ ինքը Վեհաժողովից հանձարարություն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնվեն նրանք՝ Հայաստանում, Ադրբեջանում, Թուրքիայում թե Վրաստանում։ Զինվորական օգնություն առայժմ չի կարող տալ, բայց արդեն Փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապես զորք հասցնել Հայաստան, այլև խնդրել է, որ անգլիական զորքերի մի մասը թողնվի Հայաստանում։ Ինքը ամեն միջոց ձեռք կառնե պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կպահանջե, որ Ադրբեջանի կառավարությունը վերջ տա գրգռիչ գործունեության Հայաստանի մահմեդականների մեջ։ Ձեռք կառնե նաև կտրուկ միջոցներ, որ Հայաստանը ստանա զենք ու ռազմամթերք և որ վրաց կառավարությունը արգելք չլինի նրանց փոխադրության։ Մասնավորապես, կաշխատե ապահովել Հայաստանի պարենավորման գործն ու մթերքի հայթայթումը։ Դրա համար նա Բաթումում թողել է իր սպաներից մեկին՝ Հայաստանի համար ստացվող ապրանքները փոխադրելու համար։ Շուտով Բաթում կհասնի 7000 թոն ալյուրով բեռնավորված մի նավ, ապա կստացվեն պահածոներ, մսեղեն, դեղորայք, երկրագործական գործիքներ ու մեքենաներ և այլն։ Դրամական օժանդակություն Ամերիկան չի տա, քանի հոգատարության հարցը որոշված չէ, բայց ինքը. հույս ունի, որ նպաստամատույցը կտրամադրե մինչև 50 միլիոն դոլար։ Հույս ունի նույնպես հայթայթել զորքի, որբերի և գաղթականների հագնելիքը, այլև բանակի համար 150 ջորիներ՝ իրենց սարքով միասին։ Մինչև ձմեռ Թուրքահայերի ներգաղթը անհնար է, բայց գարնանից նրանք կարող են վերադառնալ իրենց տեղերը։ Հայկական հարցի լուծումը Վեհաժողովում որևէ կասկած չի հարուցանում. վճռված-վերջացած խնդիր է. մնում է միայն որոշել սահմանները և հոգատար պետությունը։

Հաջորդ օր. օգոս. 22-ին Հասկելը ներկա գտնվեց խորհրդարանի

նիստին, ուր նախագահող Հ. Արղությանը ողջունեց նրան ջերմ խոսքերով։ Հասկելը պատասխանեց հետևյալ ճառով.

«Ես հասկանում եմ, որ ձեզ բոլորիդ զբաղեցնում է երկրի ապահովության և դաշնակիցների օգնության հարցը։ Դուցե տարօրինակ թվա, թե ինչու այսքան երկար է ձգձգվում հայկական խնդրի լուծումը։ Ամերիկացիները ընդհանրապես ծանր են շարժվում։ Մենք դանդաղ սկսեցինք պատերազմը, դանդաղ վարեցինք այն, բայց ավարտեցինք ամենայն թափով։ Դանդաղ ենք շարժվում նաև հաշտության խնդրում։ Մինչև որ չվավերացվի հաշտության պայմանագիրը, չընդունվի Ազգերի լիգան, չի կարող լուծվել Հայաստանի մանդատի խնդիրը։ Սակայն, այդ չի կարող բավարարել ո՛չ ձեզ և ո՛չ ինձ։ Հարկավոր է այժմեն իսկ մտածել՝ ինչպե՞ս օգնել հայ ժողովրդին։ Կասկած չկա, որ մեզ անհրաժեշտ է զինված ուժ, ո՛չ թե նրա համար, որ խլենք Վրաստանից կամ Ադրբեջանից նրանց պատկանող անվիճելի հողերը, այլ՝ ապահովելու համար հայ ժողովրդի գոյությունը։ Մեզ հարկավոր է զորք պաշտպանելու համար այն ժամանակավոր սահմանները, որոնք ցույց են տրված մեզ։ Փարիզում դեռևս մանրամասնորեն ծանոթացած չլինելով իրերի դրությանը՝ ես անհրաժեշտ էի համարում զինվորական ուժի ներկայությունը Հայաստանում։ Դրա համար ես իմ Հայաստան գալուն իբրև պայման դրի առայժմ անգլիական զորքերի թողնելը Հայաստանում, մինչև որ մի երրորդ ուժ գա նրանց փոխարինելու։ Երբ ես Պոլսում լսեցի անգլիական զորքերի Կովկասից հեռանալու մասին՝ հեռագրով բողոքեցի Փարիզ Կլեմանսոյին և Վեհաժողովին այդ որոշման դեմ։ Այժմ այդ հարցը քննվում է Փարիզում, և ես հույս ունեմ, որ անգլիական զորքերը կմնան այստեղ։ Իսկ եթե նույնիսկ հեռանան էլ, մեր գործը պետք է լինի գտնել դրանց փոխարինող ուրիշ զորքեր։

Երկրի պարենավորման, զինման, ելևմուտքի կարգավորման և այլ խնդիրների մասին ես արդեն կարգադրություններ արել եմ, սակայն, նայում եմ դրանց վրա, իբրև երկրորդական խնդիրների։ Անկասկած է, որ Ադրբեջանի կառավարությունը խախտել է անգլիական իշխանությունից ստացած հրահանգները, և այդ խնդիրն է այս րոպեիս ինձ զբաղեցնում։ Ես մեկնում եմ Թիֆլիս և կպահանջեմ, որ Ադրբեջանը վերջ տա այդ բանին, հակառակ դեպքում Ադրբեջանի կառավարության անդամները կենթարկվեն անձնական պատասխանատվության։

Թիֆլիսում ես կհանդիպեմ զորավար Հարբորտին, որը Ֆրանսիայում գործող ամերիկյան բանակի սպայակույտի պետն է։ Ես նրա հետ պիտի խորհրդակցեմ այն հարցի մասին, թե ի՞նչ ձևով պետք է օգնել Հայաստանին։ Այս վայրկյանիս Փարիզից ճանապարհ են ընկել մի խումբ սպաներ, մասնագետներ՝ զինվորական և այլ ճյուղերի վերաբերմամբ։ Եթե տարածությունը խանգարի իմ հարաբերություններին Փարիզի հետ,

ես ինքս անձամբ կմեկնեմ Սև ծովում գտնվող ամենաարագընթաց ականակիրով Մարսել— Փարիզ՝ զեկուցանելու համար Վեհաժողովին և խնդրելու Վեհաժողովից և ամերիկյան ժողովրդից շուտափույթ օգնություն հասցնել հայ ժողովրդին։ Միևնույն ժամանակ հայ ժողովրդի և կառավարության վերաբերմունքը դեպի իր հարևանները պետք է լինի բարյացակամ, որպեսզի հարևանները պարենավորման և այլ խնդիրներում դժվարություններ չհարուցանեն։ Ես միանգամայն կախված եմ ժողովրդի և կառավարության աջակցությունից։ Այժմ քաղաքական վեճերի ժամանակը չէ։ Պետք է մտածել ժողովրդի փրկության մասին։

Ո՛չ մի նշանակություն չպետք է տալ այն բանին, որ այս կամ այն երկիրը խլում է մյուսից մի քանի վերստ հողամաս, Այդ հանգամանքը ոչ մի նշանակություն չի կարող ունենալ այս կամ այն երկրի սահմանները վերջնականապես որոշելու համար Փարիզում. ինչպես որ եղավ Բելգիայի և Ռումելիայի վերաբերմամբ։

Այսպիսով, հայ ժողովրդին մնում է սպասել դաշնակիցների օգնությանը։ Շնորհակալ եմ ինձ ցույց տրված ջերմ ընդունելության համար և ցանկանում եմ ձեզ եռանդ և ոգևորություն»։

Օգոստ. 23-ին Հասկելը շտապով մեկնեց Թիֆլիս և այնտեղից Բաքու՝ Ադրբեջանի կառավարության հետ կարգադրելու համար Շարուր—Նախիջևանի հարցը։ Եվ օգոստ. 29-ին, Ուսուպբեգովի հետ ստորագրեց մի պայմանագիր, որ բոլորովին հակասում էր Երևանում տված խոստումներին։

Այդ պայմանագրի համաձայն «Շարուր—Դարալագյազի և Նախիջևանի գավառներում պիտի հաստատվի չեզոք շրջան», որի կառավարությունը պիտի հանձնվի գնդ. Հասկելի նշանակած ընդհանուր նահանգապետին։ Երկու կողմերն այդ շրջանից հանում են իրենց զորքերին ու գործակալներին, և կազմակերպվում է տեղական իշխանություն։

Այսպիսով, Շարուր—Դարալագյազ—Նախիջևանի շրջանները հայտարարվում էին վիճելի, որով գնդ. Հասկելը յուրացնում էր ազրբեջանյան տեսակետը։

Ավելին դեռ. պայմանագրի 9-րդ կետը ասում էր. «Հայաստանի կառավարությունը պիտի գործադրե իր ամբողջ ազդեցությունը հանգստացնելու համար հայ ազգաբնակչությունը չեզոք շրջանում և Զանգեզուրում»։ 12-րդ կետով «Ադրբեջանի կառավարությունը համաձայնում է ամեն կերպ դյուրացնել Ամերիկյան նպաստամատույցի պարենավորման և սնունդ տալու գործը Շուշիի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակչությանը»։ 15-րդ կետով «Բաքու—Ջուլֆա շինվող երկաթուղագիծը պիտի լինի բացառապես Ադրբեջանի կառավարության իշխանության տակ և ոչ ոք չպիտի խառնվի նրա կառուցման գործում»։ 16-րդ կետ. «Հայաստանի և չեզոք շրջանի սահմանը պիտի լինի այն տեղը, որը կոչվում է Գայլի Դրունք»։

Այսպիսով, «Հայաստանի գերագույն կոմիսարը» Ղարաբաղ—Զանգեզուրն էլ տալիս էր Ազրբեջանին։ Ու հասկանալի է այն զարմանքն ու ցասումը, որ պատեց ամենքին Երևանում, երբ ստացվեց Հասկելի կարգադրությունը՝ «առանց դանդաղելու ստորագրել և հետ ուղարկել» պայմանագիրը։ Ցկամություն ու թշնամանք փնտրելը Հասկելի քայլի մեջ անտեղի էր, իհարկե, այնքան բաց էր կատարված խաղը։ Մարդը պարզապես զոհ էր իր անգիտության ու դյուրահավատության և Բաքվում լարված մեքենայություններին։ Նրան ամեն կողմից ներկայանում էին թուրք պատգամավորություններ՝ գանգատով ու բողոքով Հայաստանի իշխանության դեմ. Ազրբեջանի կառավարությունը նրան հաղորդում էր ընդվզեցուցիչ փաստեր ու թվեր, և խեղճ մարդը չգիտեր՝ ո՞ւմ հավատալ, ի՞նչ անել։

Այսպես, սեպտ. 9-ին Հասկելին ներկայացան «Հարավ-Արևմտյան Ազրբեջանի» ներկայացուցիչները և հանձնեցին 10 կետից բաղկացած մի հուշագիր, որի մեջ գրում էին.

«Նկատի ունենալով, որ ամեն ազգ իրավունք ունի անկախության և իր ձեռքն առնելու իր իրավունքներն ու ճակատագիրը, Սուրմալուի, Վեդի—Բասարի, Միլիստանի, Շարուրի, Նախիջևանի և Օրդուբադի շրջաններն իրենց համարում են անբաժանելի մասն Ազրբեջանի»։ Այդ շրջանների ժողովուրդը «պահանջում է թե Ազրբեջանի կառավարությունից և թե Անդրկովկասի գերագույն կոմիսարից, որ այլևս նրան չենթարկեն Հայաստանի հպատակ լինելու դրության», այլապես՝ նա «կնախադասե վենքը ձեռքին պատվով մեռնել, քան անպատիվ կերպով ոչնչանալ դաշնակցական ավազակների ձեռքից»։ Հուշագիրը համաձայնվում էր, որ, մինչև Փարիզի Վեհաժողովի վերջնական կարգադրությունը, հաստատվի ժամանակավոր մի դրություն գերագույն կոմիսարի հակակշռի տակ, պայմանով, որ վերոհիշյալ շրջանները չանջատվեն Ազրբեջանից։ Միաժամանակ, հուշագրի հեղինակները պահանջում էին կազմել «մի խառն քննիչ մարմին բոլոր դաշնակիցների ներկայացուցիչներից»՝ քննելու համար «հայ ավազակ դաշնակցականների կատարած բռնությունները Երևանի վիլայեթի ազրբեջանցիների դեմ»*։

Հուշագրի պատճենները ուղարկվեցին և անգլիական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպին և Ազրբեջանի կառավարությանը։ Ներկայացուցիչները տեսակցություն ունեցան և Ազրբեջանի վարչապետի և Ղարաբաղի ընդհանր նահանգապետ Սուլթանովի հետ, որոնք այդ միջոցին Թիֆլիսում էին։

Մի քանի օր հետո, գնդ. Հասկելին հուշագիր ներկայացրին և «Երևանի նահանգի վաղեմի բնակիչ թուրքերը», որոնք գանգատվում էին

* Բաքվի «Ազրբեջան», 1919 թ., № 176։

հայերի դեմ և խնդրում ամերիկացիների միջամտությունը։ Հուշագրին կցված էր մի ցուցակ, որի համաձայն հայերը Երևանի նահանգում ավերել էին 88 մահմեդական գյուղեր, այրել 1920տուն և սպանել 131 970 մարդ։

Ազրբեջանի կառավարությունը հաղորդում էր, որ «1918 թ. հունվարից սկսած, նախքան թուրքերի Երևանի նահանգ գալը՝ հայերը քանդեցին ավելի քան 300 գյուղեր՝ կոտորելով այդ գյուղերի մահմեդականների մեծ մասը... Թուրքերի Երևանի նահանգից հեռանալուց հետո, 1918 թվի դեկտեմբերին Սասունի գունդը զինաթափեց Երևանի գավառի Ղարախաչի և Վեդի-Զայի գյուղական համայնքների մահմեդականներին և քանդեց Ղադելու, Շահարլու, Ղարախաչ, Դահնազ, Ղարաբեգլյար, Աղասի—Բեգլի և այլ գյուղերը՝ կոտորելով հիշյալ համայքների բոլոր մահմեդականներին։ Նույն ճակատագրին ենթարկվեցին Միլլի Դարասի շրջանի մի շարք գյուղերի մահմեդականները։ Համարյա միաժամանակ, հայ զորքերը շրջապատեցին Բասար—Գեչարի ավաններն ու կոտորեցին Կրզըլ-Վան, Սուրաթան, Զագալու, Շահաբ և այլ գյուղերի մահմեդականներին՝ բռնաբարելով կանանց և Շահաբ գյուղի բազմաթիվ երեխաներին այրեցին թոնիրներում։ Բնաջնջեցին և էջմիածնի ու Սուրմալուի գավառների մահմեդականներին. օգոստ. 17-ին հայկական վարչությունը հայկական միլիցիայի անմիջական մասնակցությամբ սկսեց բնաջնջել էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր Բայազետի գավառների մահմեդականներին... Հայկական վարչությունը օգոստ. 17—31-ի կարճատև միջոցում կարողացել է ջարդել և կոտորել էջմածնի, Սուրմալուի, Երևանի և Նոր Բայազետի գավառների միջև 50 գյուղ մահմեդականներին»*։

Հասկանալի է, որ նման դիմումներն ու փաստերը պիտի ազդեին ամերիկացի Հասկելի վրա, որը ո՛չ ծանոթ էր կովկասյան պայմաններին ու բարքերին, ո՛չ էլ գաղութներ կառավարելու վարժությունն ունեցող անգլիացու խորագիտությամբ էր օժտված։

Հասկելի գրությունը քննվեց խորհրդարանում ու կառավարության մեջ և որոշվեց Հասկելի մոտ ուղարկել մի հանձնախումբ՝ պարզելու համար դրությունը։ Սեպտեմբերի կեսերին Թիֆլիս մեկնեցին Ա. Խատիսյանն ու Ռ. Տեր-Մինասյանը, որոնց բացատրությունները լսելուց հետո՝ Հասկելը չեղյալ համարեց Ուսուպբեգովի հետ կնքած պայմանագրի Ղարաբաղին ու Զանգեզուրին վերաբերվող կետերը։ Բայց այս անգամ էլ Ազրբեջանը մերժեց ընդունել այդ համաձայնությունը։

Երկար բանակցություններից ու ձգձգումներից հետո, սակայն, Հասկելը պնդեց իր տեսակետի վրա և Նախիջևանի ամերիկացի նահան-

* «Աշխատավոր», 27 սեպտ, 1919 թ.։

գապետ նշանակելով՝ կարգադրեց մտցնել այնտեղ ամերիկյան իշխանություն։

Հոկտ. 16-ին նրա ներկայացուցիչ գնդ. Ջեյմս Ռեյը Նախիջևանի զորամասի հրամանատարին ու մահմեդական ազգային խորհրդին ուղղեց մի նամակ, որով, ի միջի այլոց, ասում էր. «Իբրև ներկայացուցիչ դաշնակիցների գերագույն կոմիսարի, նրա բացակայության ժամանակ, պատիվ ունեմ հայտնելու ձեզ, որ Նախիջևանի և Շարուրի շրջաններում խաղաղություն հաստատելու նպատակով Ազրբեջանի և Հայաստանի կառավարությունները համաձայնության են եկել, որ այդ երկու շրջանները առաջիկայում ևս մնան դաշնակցական վարչության շերտում, ամերիկյան նահանգապետի վարչական իշխանության ներքև։ Միացյալ Նահանգների բանակի երկրաչափ գնդ. Էդմոնդ Լ. Դեյլին նշանակված է նահանգապետ։ Նրա իր պարտականություններին անցնելը ենթադրվում է հոկտ. 23-ին Նախիջևանում։ Միաժամանակ ենթադրվում է շրջանի կառավարության վերաբերյալ Ազրբեջանի և Հայաստանի՝ դաշնակիցների գերագույն կոմիսարի հետ կապված համաձայնության հայտարարումը։ Մի խումբ մարդիկ, որոնց թվում ես և սպայակույտի սպաները, գնդ. Դեյլին ու իր սպայակույտը և Ազրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, Նախիջևան կժամանեն հոկտ. 23-ին՝ հիշյալ արարողությանը մասնակցելու համար։ Հրավիրում ենք Նախիջևանի մահմեդական ազգային խորհրդին, այլ զինվորական ու քաղաքացիական ներկայացուցիչներին նույնպես ներկա լինել»։

Ազրբեջանի և Հայաստանի կառավարությունները խոստացել էին նշանակել երեքական ներկայացուցիչներ՝ գնդ. Դեյլիի հետ Նախիջևան գնալու համար, բայց Ազրբեջանի կառավարությունը, վերջին րոպեին, մերժեց նշանակել։ Գնդ. Դեյլին իր գործակիցներով Երևանից դուրս եկավ հոկտ. 24-ին և Նախիջևանում ընդունվեց պատշաճ ձևով։ Նրա նահանգապետությունը, սակայն, իրական փոփոխություն չմտցրեց գրության մեջ. Նախիջևանը փաստորեն մնաց ինքնավար, մինչև 1920 թվի ամառվա դեպքերը։

ԳԼՈՒԽ ԻԴ

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ*

Շարուր—Նախիջևանի դեպքերին զուգընթաց Ազրբեջանը գործոն քայլերի դիմեց ղարաբաղցիներին ընկճելու համար։

Ղարաբաղը բռնում է Հայաստանի հյուսիս-արևելյան մասը և իր աշխարհագրական ու բնական պայմաններով, իր ազգագրական կազմով հանդիսանում է Հայկական բարձրավանդակի անմիջական շարունակությունը։ Ցարական իշխանության օրով նա միացված էր Թրքական հարթավայրերի հետ և մտնում էր Գանձակի նահանգի մեջ, որի գավառները ձևված էին այնպես, որ ամեն տեղ հայերը կազմում էին փոքրամասնություն։ Մինչդեռ Լեռնային Ղարաբաղը, այսինքն՝ Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի լեռնային մասերը— Խաչեն, Վարանդա, Դիզակ, Ջրաբերդ— կազմում են մի ամբողջություն՝ հայ հոծ ազգաբնակչությամբ։

Ղարաբաղի ազգային կազմի մասին Դ. Անանունը հետևյալ տեղեկություններն էր տալիս «Հայաստանի կոոպերացիայի» 1920 թ. սեպտեմբերի համարում.

«Ղարաբաղի լեռնաստանում 1917 թ. տվյալներով ապրում էին՝ հայեր՝ 150 000 (70%), մուսուլմաններ՝ 58 000 (27%), մնացած ազգեր՝ 5000 (3%)։ Այժմ ազգությունների թվական հարաբերությունը միանգամայն փոխված է։ Ուրիշ ազգերից ռուսները հեռացել են Ռուսաստան։ Ապա Լեռնային Ղարաբաղի որոշ գյուղերից հեռացել են նաև թուրքերը։ Դրա դիմաց լեռներն են ապաստանել տափաստանում եղած հայ գյուղերի բնակիչները (Ջիվանշիր գավ.)։ Այսպիսով, Հայկական Ղարաբաղում (Ջրաբերդ, Խաչեն, Վարանդա, Դիզակ) հայ տարրը ավելի է ամրացել թվով։ Իսկ եթե սրան ավելացնենք նաև, որ հին Ղարաբաղի անբաժան մասը կազմող Գյուլիստանը վերջին տարիների անց ու դարձի մեջ վերականգնեց իր կապը նախկին միավորի հետ և ընթացավ հայկա-

* Այս գլխի համար, բացի տպված նյութերից, օգտվել եմ նաև Ղարաբաղ-Զանգեզուրի գործիչների, 1922 թ. հուլիսին, Թավրիզում, կազմած զեկուցումից և Հ. Հ. Պատվիրակության ու Հ. Հ. Թիֆլիսի զիվ. ներկայացուցչության «Գործերից»։

կան քաղաքականության հունով, պատկերն ավելի կատարյալ կլինի»։

Ռուսական հեղափոխությունը Ղարաբաղում ևս ընդունվեց խանդավառությամբ։ Հեղափոխության առաջին օրերից Շուշիում կազմվեց հայ-թրքական միջկուսակցական մի բյուրո, որի կողմից նշանակվեց շրջանային գործադիր կոմիտե, որը պետք է վարեր Ղարաբաղ—Զանգեզուր միացյալ շրջանի կառավարական գործերը, բայց, իրոք, դարձավ միայն Ղարաբաղի իշխանությունը։ Հայերն ու թուրքերը համերաշխ էին. գավառի հայկական մասերում ղեկավարում էին հայերը, թրքականում՝ թուրքերը։ Անգամ հոկտեմբերյան հեղաշրջումից և Երևանի, Կարսի, Գանձակի ու Բաքվի թրքական շարժումներից հետո էլ անդորրությունը Ղարաբաղում չխանգարվեց։

Այսպես տևեց դրությունը մինչև 1918 թվի ամառը, երբ լուծվեց Անդրկովկասի միությունը։ Կովկասում երևացին թուրքերը, և Նուրի փաշան Գանձակում ձեռնարկեց իսլամական բանակի կազմակերպությունը։ Միջկուսակցական բյուրոն՝ չկամենալով ենթարկվել նորաստեղծ Ազրբեջանին՝ որոշեց կազմել տեղական ինքնուրույն իշխանություն և իր տեղը նշանակեց կոմիսարների խորհուրդ անունով մի մարմին, խառն՝ հայերից ու թուրքերից։ Իսկ մի ամիս անցած էլ այս մարմինը փոխարինվեց ազատ Ղարաբաղի ժողովրդական կառավարությամբ։

Սակայն, թուրք-ազրբեջանյան սադրանքների հետևանքով հետզհետե Ղարաբաղի կյանքն էլ խառնափնթորվեց։ Անիշխանությունը սկսեց գլուխ բարձրացնել ամեն կողմ։ Եվլախ—Շուշի ճանապարհը փակվեց հայերի առջև։ Մի շարք վայրերում թուրքերի կողմից տեղի ունեցան հայերի թալան ու սպանություններ։ Իրենց հերթին, հայերն էլ պատասխանում էին նույն ձևով. ռուսական ռազմաճակատից վերադարձած զինվորները կամ սովահար գյուղացիք, հաճախ, հարձակվում էին քոչվորների վրա՝ թալանի և կողոպուտի նպատակով։ Բայց և այնպես, հայ և թուրք ղեկավարների ջանքերով, մինչև 1918 թ. ամառը ընդհանուր խաղաղությունը չխախտվեց։ Շուշի քաղաքում իրար հետևից հրավիրվեցին երեք խառն համագումարներ, որոնք նպաստեցին հայ-թրքական բարիհարևանական հարաբերությունների պահպանման։

Դրությունը փոխվեց արմատապես, երբ Ղարաբաղի հորիզոնի վրա երևացին թուրքերը։ Թուրքական մի բրիգադ, Ջեմիլ Ջահիդ բեյի հրամանատարության տակ և տեղական թուրք բեգերի առաջնորդությամբ, Եվլախից, ուղղվեց դեպի Շուշի՝ ճանապարհին ոմբակոծելով ու զինաթափելով հայկական գյուղերը։ Միաժամանակ հարձակման ենթարկվեց ու ոչնչացվեց Շուշիից դեպի Զանգեզուր տանող ճանապարհին ընկած Ղարաղշլաղ հայկական մեծ գյուղը, որը շաղկապի դեր էր կատարում Ղարաբաղի և Զանգեզուրի միջև։

Համաղարաբաղցիական երրորդ համագումարը, որ տեղի ունեցավ սեպտ. 18—20-ին, Շուշիում, թուրքերի առաջխաղացման առթիվ, որոշեց չդիմադրել և ընդունել Ազրբեջանի իշխանությունը։ Սեպտ. 26-ին թուրքերը առանց կռվի մտան Շուշի և անմիջապես զինաթափ արին հայերին։ Այս բանը սաստիկ գրգռեց հայերին, և երբ թուրքերը տեղափոխում էին գրավված զենքերը, նրանք հարձակվեցին ու գրավեցին, որի պատճառով թուրքերը կախեցին երեք հայեր։ Հոկտ. 1-ին, զինաթափությանը հաջորդեցին ձերբակալություններ. բազմաթիվ հայ գործիչներ բռնվեցին ու նետվեցին բանտ։

Ղարաբաղի գյուղացիությունը՝ վրդովված քաղաքացիների փոքրոգությունից ու դավաճանությունից՝ մերժեց հպատակվել թուրքերին և սկսեց պատրաստվել դիմադրության։ Շրջանը բաժանվեց 4 զինվորական մասերի՝ յուրաքանչյուրի գլխին ընտրելով մի-մի ժողովրդական հրամանատար։ Ամեն կապ գավառի ու քաղաքի միջև խզվեց։ Միաժամանակ Դիզակի ու Վարանդայի գործիչները մարդ ուղարկեցին Զանգեզուր, Անդրանիկի մոտ՝ թախանձելով նրան օգնության հասնել։

Թուրքական հրամանները գյուղերում չէին գործադրվում. թուրքերի իշխանությունը Շուշիից և խճուղուց այն կողմ չէր տարածվում։ Այս դրությանը վերջ տալու նպատակով թուրքերը որոշեցին դիմել զենքի և միաժամանակ վերջնագիր ուղարկեցին զանգեզուրցիներին։ Հոկտ. 18-ին թուրքական մի զորամաս, տեղական թուրքերի և մի քանի հայերի առաջնորդությամբ, մտավ Վարանդայի Մամնա գյուղը, բայց հանդիպեց հայ մարտիկների ուժեղ դիմադրության, ջարդվեց և ամոթահար փախավ հետ՝ հայերին թողնելով 2 թնդանոթ ու մեծ քանակությամբ պատերազմական ավար։ Ու քիչ հետո, հոկտ. 31-ին, դաշնակիցների պահանջով, թուրքերը թողին Ղարաբաղն ու հեռացան։

Անդրանիկը լսելով ղարաբաղցիների խնդիրը՝ շտապով պատրաստվեց և նոյեմբ. 16-ին շարժվեց դեպի Շուշի ու հասավ Ավդալլար գյուղը՝ Շուշիից 40 վերստի վրա։ Անդրանիկի հրամանի համաձայն, Դիզակի զինված ուժերի հրամանատար Սոկրատ բեգ Մելիք-Շահնազարյանը պետք է գրավեր Քիրսի ու Սաղսաղանի գագաթներն ու Թթու ջուրը, բայց փոխանակ այդ հրամանը կատարելու՝ նա անցավ քաղաքի մոտի Քարին Տակ գյուղը և հարաբերության մեջ մտավ քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի հետ, որը հակառակ էր Անդրանիկի արշավանքին։ Մելիք-Շահնազարյանը իր և Սոկրատ բեգի կողմից նամակ ուղարկեց Անդրանիկն և կանգնեցրեց նրա առաջխաղացումը։ Նույն ժամանակ հեռագիր հասավ զոր. Թոմսոնից, որը հրահանգում էր Անդրանիկին դադարեցնել կռիվները։ Դրա վրա Անդրանիկը առավ իր ուժերն ու քաշվեց Զանգեզուր։ Նրա հեռանալուց հետո, թուրքերը ոչնչացրին Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած Հարար, Սպիտակաշեն և Պետրոսաշեն հայկական գյուղերը՝ ավելի ևս դժվարացնելով Ղարաբաղի և Զանգեզուրի հարաբերությունը։

Դեկտեմբերի սկզբին Շուշի հասավ անգլիական զինվորական առա-

քելությունը։ Այդ առթիվ ղարաբաղցիք որոշեցին հարաբերության մեջ մտնել անգլիացիների հետ։ Գավառի 4 շրջանների և քաղաքի մեկական ներկայացուցիչներից կազմվեց Ղարաբաղի ժամ. խորհուրդ, որը բանակցության մեջ մտավ անգլիացիների հետ՝ կամենալով որոշել Ղարաբաղի քաղաքական դրությունը։ Անգլիացիք խուսափեցին այդ հարցից՝ պատասխանելով, թե իրենք քաղաքական լիազորություններ չունեն, թե այդ հարցով կզբաղվեն զոր. Թոմսոնից հրահանգ ստանալուց հետո, բայց ձեռքի տակից աշխատեցին համոզել հայերին՝ ընդունել Ազրբեջանի իշխանությունը։

Անգլիացիների համար Ղարաբաղի, ինչպես և Զանգեզուրի ճակատագիրը որոշված էր. նրանք վճռել էին այդ հողամասերը միացնել Ազրբեջանին։ 1919 թ. հունվ. 15-ին, Ազրբեջանի կառավարությունը զոր. Թոմսոնի հավանությամբ, Ղարաբաղ—Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ նշանակեց գր. Խոսրով բեգ Սուլթանովին, որը հայերի աչքին հայատյացի և ջարդարարի համբավ էր վայելում։ Այդ լուրն առնելուն պես, հունվ. 26-ին, Հայաստանի արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանը վճռական բողոք ուղարկեց Ազրբեջանի կառավարությանը՝ հայտարարելով, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են։

Այս բողոքին Ազրբեջանի կառավարությունը պատասխանեց, որ խնդրի առարկա եղող «շրջանները Ազրբեջանի անվիճելի և անխախտ մասն են կազմում» և որ «ընդհանուր նահանգապետություն հաստատելու որոշումը ոչ մի դեպքում չի խախտում Հայաստանի հողային իրավունքները։ Ընդհակառակը, Հայաստանի կառավարության բողոքը մենք համարում ենք խախտում մեր գերիշխանության և մեր ներքին գործերին միջամտելու փորձ»։

Մի քանի շաբաթ հետո, փետր. 24-ին, Հայաստանի կառավարությունը ստացավ բրիտանական գերագույն կոմիսարի Երևանի ներկայացուցիչ զոր. Վ. Ասբրից զոր. Ֆորեստիե Ուոկերի մեկ գրությունը, որով հաղորդում էր զոր. Թոմսոնի կողմից, թե «դր. Սուլթանովը գնում է Շուշի, իբրև ընդհանուր նահանգապետ Զանգեզուրի, Շուշիի և Ղարաբաղի շրջանների։ Նա այդ անում է առանց դնելու որևէ պահանջ Ազրբեջանի ապագա վարչության վերաբերմամբ. նա գնում է այնտեղ միայն օրենքը և կարգը պահպանելու համար»։ Արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանը անմիջապես պատասխանեց զոր. Ֆորեստիե Ուոկերին, թե «Հայաստանի կառավարությունը չի կարող զոր. Թոմսոնի հեռագրի հաղորդելու փաստը համարել արտահայտություն նույնիսկ անուղղակի ճանաչման Ազրբեջանի կառավարության թեկուզ ժամանակավոր գերիշխանության իրավունքի դր. Սուլթանովի իշխանությանը ենթարկվելիք գավառների վիճելի շրջանների վրա»։

Զոր. Թոմսոնի կարգադրության հետ չէր կարող հաշտվել և Ղարաբաղի ազգաբնակչությունը։ Կամենալով անգլիացիների ներկայությամբ հանդես բերել ղարաբաղցիների հավաքական կամքը՝ ժամ. խորհուրդը, փետր. 12-ին, հրավիրեց համաղարաբաղցիական 4-րդ համագումարը, որը մի անգամ ևս որոշեց՝ Ղարաբաղը համարել Հայաստանի անբաժան մաս, ո՛չ մի դեպքում չճանաչել Ազրբեջանի իշխանությունը և մերժել ազրբեջանյան կառավարության պահանջը՝ ուղարկելու խորհրդարանի պատգամավորներ։ Բացի այդ, համագումարը ընտրեց ազգային խորհուրդ և հանձնեց նրան որոշումների գործադրություն։

Փետրվարի վերջերին Շուշի եկավ անգլիական նոր ներկայացուցիչ մայոր Մաք Մեզենը 400 զինվորներով։ Նրա հետ եկան և զոր. Թոմսոնի և ազրբեջանյան կառավարության համաձայնությամբ Բաքվի Հայոց ազգ. խորհրդի և Հ. Հ. Դաշնակցության Կենտ. կոմիտեի ներկայացուցիչներ Գ. Բալայանը և Լ. Զարաֆյանը։ Սկսվեցին բանակցություններ Մաք Մեզենի, դր. Սուլթանովի և երկու հայ ներկայացուցիչների միջև։ Մաք Մեզենը առաջարկեց Բաքվից եկած հայ ներկայացուցիչներին ստորագրել մի հայտարարություն, որ Ղարաբաղը մինչև Զաբուղ ժամանակավորապես հանձնվում է Ազրբեջանին։ Պատասխանը եղավ կտրուկ մերժում։ Այն ժամանակ Մաք Մեզենը զրահապատ ինքնաշարժ նստեցրեց Գ. Բալայանին ու Լ. Զարաֆյանին ու հեռացրեց Ղարաբաղից։ Հայ ազգաբնակչությունը վրդովված՝ փակեց խանութները և բողոքի ցույց արավ անգլիական ներկայացուցչության առջև։

Անգլիացիների բոլոր ջանքերն անցան ապարդյուն. ղարաբաղցիները մերժեցին ճանաչել դր. Սուլթանովի իշխանությունը։

Ի պատասխան Հայաստանի կառավարության բողոքների և ղարաբաղցիների հակառակության, Բաքվի անգլիական զորքերի հրամանատար գնդ. Շատելվորտը, ապր. 3-ին, հրատարակեց հետևյալ հայտարարությունը.

«Անգլիական հրամանատարությունը հայտարարում է ի գործադրություն Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գավառների բովանդակ ազգաբնակությանը, որ 1) Ազրբեջանի կառավարության 1919 թ. հունվ. 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակված է Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գավառների ընդհանուր նահանգապետ և վայելում է անգլիական հրամանատարության աջակցությունը։ 2) Գոյություն ունեցող օրենքների համաձայն, ամբողջ ազգաբնակչության կարիքների գոհացման համար, ընդհ. նահանգապետին կից կազմակերպվում է հայ ու մահմեդական վեց իրազեկ ներկայացուցիչներից մի խորհուրդ։ 3) Անգլիական հրամանատարության ներկայացուցչի հանձնմանքով կարող է խորհրդի մեջ մտնել անգլիական առաքելության սպաներից մեկը։ 4) Ընդհ. նահանգապետության սահմաններում ծառայող բոլոր պաշտոնյաների ռոճիկը և մյուս ծախսերը հոգացվում են ազրբեջանյան գանձարանից։ 5) Բոլոր վիճելի հարցերը իրենց վերջնական լուծումը կստանան

Հաշտության վերաժողովում։ 6) Ընդ. նահանգապետության սահմաններում կատարվող բոլոր զինվորական տեղափոխությունների մասին նախօրոք տեղեկացվում է անգլիական առաքելությանը։ 7) Սույն հաղորդագրությամբ անգլիական հրամանատարությունը ուզում է մատնանշել, որ ընդհ. նահանգապետի վրա դրված պարտականությունների գործադրությունը՝ ի մասին ընդհ. նահանգապետության մեջ կարգի և անդորրության պահպանման, ընդհ. նահանգապետից և նրա մարմիններից բխող բոլոր հրամաններն ու կարգադրությունները պետք է իրագործվեն առանց առարկության, և անգլիական հրամանատարությունը աջակցություն է ցույց տալիս ձեռք առնված բոլոր օրինական միջոցներին»։

Այս հայտարարությունը հանդիպեց Հայաստանի կառավարության և ղարաբաղցիների բուռն բողոքին ու դիմադրության։ Հայաստանի արտ. գործ. նախարարը, ապր. 16-ին, բրիտանական կովկասյան հրամանատարությանը հղեց հետևյալ հեռագիրը. «Ապր. 3-ին Բաքվի բրիտանական ուժերի հրամանատար գնդ. Շատելվորտի ստորագրությամբ անգլիական զինվորական առաքելության կողմից հայտարարություն է տրված, որով Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գավառների ազգաբնակչությունը պարտադրվում է «առանց հակաճառելու՝ կատարել» Ազրբեջանի կառավարության նշանակած ընդհանուր նահանգապետ դր. Սուլթանովի և իր պաշտոնյաների «հրամաններն ու ձեռնարկները»։ Դեռևս հունվար ամսին Հայաստանի կառավարության կողմից բողոքվել էր Ազրբեջանի կառավարության առաջ Զանգեզուրը և հայկական Ղարաբաղը Ազրբեջանի կողմից նշանակված ընդհանուր նահանգապետության սահմանների մեջ հայտարարելու դեմ։ Բրիտանական հրամանատարության ուղղված մի քանի գրություններով Հայաստանի կառավարության կողմից, ես պատիվ եմ ունեցել հայտարարել, որ թե տեղական բնակչությունը և թե մեր կառավարությունը չեն կարող հաշտվել, որ Զանգեզուրն ու Հայկական Ղարաբաղը ենթարկվեն Ազրբեջանի կառավարության կողմից կարգված իշխանության, բայց հոժարությամբ խնդրում են, որ բրիտանական հրամանատարությունը գործադրե իր հեղինակավոր և հաշտարար միջամտությունն ու ազդեցությունը այդ շրջանում։ Հայաստանի կառավարության հատուկ հանձնարարությամբ պարտք ունեմ հաղորդելու ձերդ գերազանցության, որ մեր կառավարությունը մնում է նույն կարծիքին և հայեցակետին»։

Միաժամանակ Հայաստանի կառավարությունը, անգլիական բարձր հրամանատարության հավանությամբ, Շուշի ուղարկեց ներկայացուցիչ Մ. Արզումանյանին։ Մաք Մեզենը սրան էլ առաջարկեց հայտարարել, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը ենթարկվում են Ազրբեջանին։ Մերժելով՝ Արզումանյանը ևս արժանացավ Բալայանի ու Զարաֆյանի բախտին. արտաքսվեց Ղարաբաղից։ Ղարաբաղից հեռացվեց նաև Ազգ. խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը։

Այս բոլոր անհաջող փորձերից հետո գնդ. Շատելվորտը, ապրիլի վերջերին, մեկնեց Ղարաբաղ՝ անձամբ պարտադրելու Ազրբեջանի իշխանությանը։ Այդ առթիվ. ապր. 23-ին, Շուշիում, գումարվեց Ղարաբաղի հինգերորդ համագումարը, որի առաջին նիստում Շատելվորտն ու դր. Սուլթանովը աշխատեցին համոզել ժողովականներին՝ ենթարկվել Ազրբեջանին։ Համագումարի պատգամավորները բուռն ցասումով բողոքեցին ու մերժեցին համակերպվել Շատելվորտ—Սուլթանովի պահանջներին։ Համագումարը միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը, 1919 թ. ապր. 23-ին (ն. տ.) իր անպաշտոն նիստում լսելով անգլիական հրամանատարության ներկայացուցիչ գեներալ Շատելվորտի Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը և քննելով նույն համագումարի ապր. 24-ի պաշտոնական նիստում՝ որոշեց.

1. Միանգամայն կողմնակից և ծարավի լինել կարգի և խաղաղության վերահաստատմանը Ղարաբաղում.

2. Բոլոր ցանկությամբ և անկեղծությամբ ընդառաջ գնալով անգլիական հրամանատարության առաջարկին՝ խաղաղ բարեկամական հարաբերություններ պահպանել հարևան թուրք ժողովրդի հետ, որը միշտ էլ իրագործել է Ղարաբաղի հայությունը.

3. Նկատի առնելով, որ Ղարաբաղի վերաբերյալ տերիտորիալ և սահմանային հարցերը պետք է վերջնական լուծում ստանան խաղաղարար կոնֆերանսում, ինչպես և ինքը գեն. Շատելվորտը հայտարարեց այդ մասին, Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը գտնում է, որ այդ ծրագիրը չի համապատասխանում համագումարին պատգամավորներ ուղարկող Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությանը և կենսական շահերին, ինչպիսի համախոսակներ և գրավոր իմպերատիվ մանդատներ տվել է նա իր ընտրած պատգամավորներին։

Համագումարը անընդունելի է համարում Ազրբեջանի հետ առընչություն ունեցող որևէ վարչական ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջյան լուրջ խռովություններ ու արյունահեղություններ, որի պատասխանատվությունը իր վրա վերցնել ո՛չ մի դեպքում չի կարող Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը»։

Այս բանաձևը դիվանի ամբողջ կազմի և 48 պատգամավորների ստորագրությամբ հանձնվեց Շատելվորտին, որը դժգոհ ու զայրացած վերադարձավ Բաքու։ Դրանից հետո, դր. Սուլթանովը, անգլիացիների օժանդակությամբ սկսեց զորքեր և զինվորական պատրաստություններ տեսնել, որպեսզի բռնի ուժով հնազանդեցնի ղարաբաղցիներին։ Մայիսի վերջերից ազրբեջանյան զորքերը շրջապատում էին քաղաքը և ամուր դիրքեր գրավում։

Հունիսի 3-ին մայոր Մաք Մեզենը իր մոտ կանչեց Ազգ. խորհրդի

նախագահ Եղիշե Իշխանյանին և անդամներ Հ. Թումանյանին և Ա. Տեր-Աստվածատրյանին և ուրիշներին՝ 7 հոգի և ստորագրություն առավ, որ այդ օրվանից այլևս քաղաքականությամբ չպիտի զբաղվեն։ Նույն օրը ազրբեջանյան զորքերը դիրքեր գրավեցին հայկական թաղում։ Հայերի մեջ սկսվեց խուճապ։ Փակվեցին խանութներն ու արհեստանոցները և հավաքվեցին անգլիական ներկայացուցչության առջև՝ պահանջելով ձեռք առնել շտապ միջոցներ, որպեսզի տեղի չունենա արյունահեղություն։ Մաք Մեզենը վստահացրեց, թե ոչինչ չի պատահի, բայց նույն ժամին տեղեկություն ստացվեց, որ դր. Սուլթանովը պահանջում է իրեն հանձնել վերոհիշյալ 7 գործիչներին՝ սպառնալով, հակառակ դեպքում, քաղաքը ռմբակոծել թնդանոթներից։ Մաք Մեզենի խորհրդով, 7 գործիչները հեռացան քաղաքից, անգլիական զինվորների հսկողության տակ։ Սուլթանովի ուզածն էլ այդ էր։

Հաջորդ օրը հունիս 4-ին, թրքական թաղից սկսվեց հրացանաձգություն ու հարձակում հայերի վրա։ Քաղաքում գտնվող հայ ինքնապաշտպանողական խմբերը դիմեցին հակահարձակման և գրավեցին հայկական դիրքերը, որ մի օր առաջ բռնել էին թուրքերը։ Ամբողջ օր տևեց հրացանաձգությունը, և քաղաքի հայ բնակչությունը ապրեց տագնապալի ժամեր։ Տեսնելով, որ ընդհարումը կարող է խորանալ, Մաք Մեզենը հրամայեց թուրքերին և հայերին վերջ տալ հրացանաձգության և մաքրել դիրքերը. հայերը հնազանդվեցին, և նրանց դիրքերը գրավեցին անգլիական զինվորները. թուրքերը դուրս չեկան իրենց դիրքերից։ Թուրքերի գնդակով սպանվեց անգլիական մի զինվոր և վիրավորվեց մեկ ուրիշը։

Հունիսի 5-ին, անգլիական ներկայացուցչության և ազրբեջանյան հրամանատարության աչքի առջև, թուրք ու քուրդ զինված խուժանը կոտորեց Շուշիից 2 վերստ հեռու գտնվող Ղայբալիքենդ հայկական մեծ գյուղը։ Անլուր բռնություններ գործվեցին անպաշտպան կանանց ու երեխաների վրա։ Մի քանի հարյուր մարդ սպանվեց, գյուղը ավարի տրվեց ու քարուքանդ եղավ։

Ղայբալիքենդի կոտորածից հետո, մոտակա Կրկժան գյուղի հայ բնակիչները սպիտակ դրոշ բարձրացնելով՝ ուղևորվեցին Խանքենդ դիվիզիայի պետի մոտ՝ պաշտպանություն խնդրելու նպատակով։ Խանքենդից ուղարկվեց մի զորամաս սպայի գլխավորությամբ, որը առաջարկեց հայ գյուղացիներին իրենց զույգը հանձնել ի պահ հարևան թուրքերին և տեղափոխվել Խանքենդ։ Այսպես էլ արվեց, բայց Կրկժանը այնուամենայնիվ ավերվեց ու թալանվեց հուլ. 7-ին. բոլոր հայերի տները հրդեհվեցին զորքերի աչքի առջև, զինվորական շտաբից մի վերստ հեռավորության վրա։

Նույն պայմաններում, զորքի աչքի առջև, հաջորդ օրը, ավերվեց ու թալանվեց և Փահլյուլ հայաբնակ գյուղը, որի ավերածության մասնակցեցին և ասկյարները։

Խանքենդից ոչ հեռու, իր կալվածում, թուրք պահակների ներկայությամբ սպանվեց Նատալյա Աթաբեգյանն ու իր աղախինը. դիակները կորան անհետ։

Թուրք ամբոխը, մասնակցությամբ քրդական հեծելազորքի, հարձակվեց Դաշալթի գյուղի վրա, որը փրկվեց միայն անգլիացիների միջամտությամբ։ Հարձակում եղավ և Դաշքենդ գյուղի վրա, որի բնակիչները ցույց տվին դիմադրություն։ Սուլթանովը պատժելու համար գյուղացիներին՝ գնդացիր ուղարկեց նրանց դեմ։

Ասկերանի կիրճի մոտի Նախիջևանիկ և ուրիշ հայ գյուղերը տառացի իմաստով դրվեցին պաշարողական վիճակի մեջ։ Գյուղական տների դեմ հանդիման կանգնեցվեցին կանոնավոր զորքեր, որոնք նեղում էին գյուղացիներին, թալանում ու փչացնում նրանց այգիները, բռնություններ գործ դնում, կանանց հետևից ընկնում և հրացանաձգությամբ վախի տակ պահում ամենքին։

Անզոր որևէ իրական դարման հասցնելու, հունիսի 12-ին մայոր Մաք Մեզենը անգլիական ներկայացուցչության և զինվորների հետ հեռացավ Ղարաբաղից՝ տանելով իր հետ հայ ժողովրդի անսահման ատելությունը, որին այնպես արժանի էր։ Սուլթանովի ձեռքերն այլևս բոլորովին ազատ էին։

Ղարաբաղի կոտորածները սաստիկ հուզում առաջ բերին Կովկասի հայության բոլոր խավերում։ Առաջին արձագանքը լսվեց Էջմիածնից։ Ամենայն Հայոց կաթողիկոսը զոր. Քորիին ուղղեց հետևյալ հեռագիրը. «Մենք համոզված ենք, որ դաշնակիցների հովանավորության շնորհիվ մեր հոտի համար հասել է փրկությունը երկաթ տանջանքներից ու չարչարանքներից։ Բայց և այնպես, Ղարաբաղում հոսում է անմեղ արյունը կանանց, երեխաների և նրանց հերոսական պաշտպանների, որոնց ողբն ու աղաղակը հասնում է մինչև մեր պատրիարքական աթոռը։ Մենք չենք կարող մնալ անկարեկից դիտող կատարվող սարսափների և ձայն չբարձրացնել ի պաշտպանություն անմեղ զոհերի։ Այդ պատճառով դիմում ենք ձեզ, իբրև Մեծն Բրիտանիայի ներկայացուցչի և խնդրում պաշտպանել նոր բնաջնջման նախօրյակին գտնվող մեր հոգևոր զավակներին և վերացնել վիճելի խնդիրը։ Կատարելապես հավատում ենք, որ հզոր Մեծն Բրիտանիայի ներկայացուցիչը կիրադործե մեր օրինական բաղձանքները»։

Հունիսի 16-ին Երևանում տեղի ունեցավ հրապարակային մեծ ժողով, ուր կրակոտ ճառեր խոսեցին Դ. Անանունը, Ա. Խոնդկարյանը, Վ. Խորենին, Դրոն և ուրիշները։ Ժողովը ընդունեց հետևյալ բանաձևը.

«Հունիսի 16-ի հրապարակային ժողովը խորը հուզումով լսեց այն լուրը, որ Ղարաբաղում անգլիական միսիայի աչքերի առջև Ազրբեջանի զորքը Սուլթանովի գլխավորությամբ ավերել է հայկական վեց գյուղեր, կոտորել է ավելի քան 600 կին ու երեխաներ, սպառնում է շարու-

նակել կոտորածը և ստիպել Հայկական Ղարաբաղը արյան մեջ ողողելու։ Մենք համոզված ենք, որ այս շարունակությունն է էնվեր—Թալեաթյան քաղաքականության։ Այնտեղ, Թուրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքերի առջև կոտորածի ենթարկվեց միլիոնավոր հայ ժողովուրդը. այստեղ, Ազրբեջանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջև աշխատում են ոչնչացնել Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը և հաստատել իրենց արյունոտ կարգերը այս երկրում։ Խորը գիտակցելով մեր պարտականությունը՝ վճռականապես բողոքում ենք այն բարբարոսության դեմ, որ գործադրում է Ազրբեջանը։ Պահանջում ենք անհապաղ հեռացնել Ղարաբաղի սահմաններից Սուլթանովի ավազակախումբը։ Մենք հայտարարում ենք, որ Ղարաբաղի իրավունքների պաշտպանության հարցում մեր կառավարությունը լիակատար աջակցություն կարող է գտնել մեր կողմից։ Բա՛վ է, որքան կոտորվեց հայ ժողովուրդը Թուրքիայում, Ղարաբաղում, Ազրբեջանում։ Մենք այլևս չենք կարող թույլ տալ, որ եվրոպական մեծ ժողովուրդների ներկայացուցիչների աչքերի առջև մեր կանայք ու երեխաները ենթարկվեն կոտորածի։ Պահանջում ենք, որ դաշնակից պետությունների Կովկասում գտնվող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի և ավերի քաղաքականությանը։ Պահանջում ենք հայկական կառավարությունից բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին և հանուն քաղաքակրթության ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանել հայ ժողովրդին ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով։ Մենք բողոքում ենք և մեր հիացմունքն ենք հայտնում Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռվում են Սուլթանովի բռնակալության դեմ հանուն ժողովուրդների ինքնորոշության ու քաղաքակրթության»։

Ապա, հազարավոր բազմությունը ցույց արավ Խորհրդարանի ու կառավարական շենքի առջև և նվագախմբի ուղեկցությամբ շարժվեց դեպի անգլիական ներկայացուցչությունը, որի առջև նույնպես արտասանվեցին ճառեր և հանձնվեց բանաձևը։

Թիֆլիսում տեղի ունեցան երկու բազմամարդ հրապարակային ժողովներ՝ հունիսի 8-ին և 22-ին։ Վերջինին մասնակցում էին քառասունից ավելի ազգային ու հայրենակցական կազմակերպություններ ու հազարավոր ներկաներ։ Նախագահում էր Հովհ. Թումանյանը։ Ընդունված բանաձևը պահանջում էր դաշնակիցների միջամտությունը, դր. Սուլթանովի վտարումը. Ղարաբաղից, կոտորածի հեղինակների ձերբակալությունն ու պատժվելը և Ղարաբաղի միացումը Հայաստանին։

Բողոքի ձայն բարձրացրին և Հայաստանի կառավարությունը, Ազրբեջանի Խորհրդարանի հայ պատգամավորներն ու Ղարաբաղի Ազգ. խորհուրդը։ Վերջինս, Ղայբալիքենդի կոտորածից անմիջապես հետո մի ընդարձակ հաղորդագրությամբ դիմեց դաշնակից հրամանատարությանը ու հանրային կարծիքին՝ պնդելով, որ պատահած դեպքերի միակ

պատասխանատու դր. Սուլթանովն է։ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունն ու Ազգ. խորհուրդը միշտ խուսափել են ընդհարումների առիթներ տալուց. նրանց գլխավոր պահանջը եղել է՝ Ղարաբաղը նկատել վիճելի շրջան և այնտեղ հաստատել անգլիական լեզոք իշխանություն, մինչև որ սահմանների հարցը վերջնականապես որոշվի։ Հակառակ ծանր պայմանների, Ազգ. խորհրդին հաջողվել է պահել հայ-թրքական խաղաղությունը և խուսափել բախումներից։ Սուլթանովը Ղարաբաղ գալով՝ ձեռնարկում է հարձակողական քայլերի՝ որոշելով զենքի ուժով հնազանդեցնել հայկական շրջանները։ Հանդիպելով դիմադրության՝ դիմում է բռնության և պրովոկացիայի, հայերի դեմ գրգռում է մահմեդական տգետ զանգվածներին ու քոչվորներին և գործիք դարձնում քուրդ հրոսակախմբերը։ 580 հայ է սպանվել Ղարաբաղում, և այդ արյան պատասխանատվությունն անմիջապես ընկնում է Սուլթանովի վրա։ Մանրամասնորեն թվելով Ղարաբաղի դեպքերը՝ Ազգ. խորհուրդը հավատացնում է, որ Շուշին գրավելը դեռևս Ղարաբաղի նվաճում չի նշանակում և որ ո՛չ մի համաձայնության չի կարելի հասնել Սուլթանովի հետ։ Հայտնում է նույնպես, որ շուտով գումարվելու է Ղարաբաղի հայության 6-րդ համագումարը, որը նորից քննության կառնե իր և Ազրբեջանի փոխհարաբերության հարցը։

Նույն իմաստով զեկուցում բերեց և Շատելվորտի ներկայացուցիչ գնդ. Գլատերբերգը, որը ուղարկվել էր Ղարաբաղ ծանոթանալու համար կոտորածների մանրամասնություններին։ Նա ևս պնդում էր, որ կոտորածի ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Սուլթանովի վրա, որը նախօրոք քաղաքի և Ղայբալիքենդի մոտերը դրել էր քրդական խմբեր և նրանց միջոցով ջարդել հայերին։ Եթե Սուլթանովը կամենար, կոտորած չէր լինի և անդորրությունը Ղարաբաղում չէր խանգարվի։ Գնդ. Գլատերբերգը առաջարկում էր պատասխանատվության ենթարկել Սուլթանովին։

Միևնույն պահանջի վրա պնդում էին և Ազրբեջանի Խորհրդարանի հայ պատգամավորները, որոնց կողմից պատգամավոր Պ. Ջուբարը գնացել էր Ղարաբաղ, տեղնուտեղը ուսումնասիրել դեպքերը և նույնպես հանդել այն եզրակացության, որ պատահածների ամբողջ պատասխանատուն Սուլթանովն էր։ Խորհրդարանում արտասանած իր ընդարձակ ճառով Ջուբարը բազմաթիվ փաստերով ու պաշտոնական վավերագրերով հաստատեց, որ Ղայբալիքենդի և մյուս գյուղերի կոտորածը Սուլթանովի գործն էր։ Խորհրդարանը, սակայն, գտավ, որ Ղարաբաղի «տեղական իշխանությանց և, ի մասնավորի, ընդհանուր նահանգապետի գործողությունների մեջ չկա ապօրինության և ոչ մի փաստ»։

Ղայբալիքենդի կոտորածների և անգլիացիների հեռանալու տպավորության տակ, Սուլթանովի հրավերով, հունիսի 28-ին, Վարանդայի Շոշու գյուղում (Շուշիից 4 վերստի վրա) հավաքվեց Ղարաբաղի 6-րդ հա-

մագումարը, որին մասնակցում էին Բաքվի ղարաբաղցիների ներկայացուցիչներն ու Ազրբեջանի կառավարության ներկայացուցիչ Ռուստամբեգովը։ Օրակարգի հարցն էր՝ Ազրբեջանի իշխանության ճանաչումը։ Սուլթանովը կանչված էր Բաքու. անգլիացիք էլ ներկայացուցիչ չէին ուղարկել։ Այդ պատճառով համագումարը ընտրեց 3 հոգիանոց մի մարմին— Ռուբեն Շահնազարյան, Արամայիս Տեր-Դանիելյան, Գերասիմ Խաչատրյան— տալով նրան Ղարաբաղի կողմից Ազրբեջանի կառավարության հետ բանակցելու լիազորություն և ինքը ցրվեց։

Ընտրվածները մեկնեցին Բաքու՝ տանելով իրենց հետ համաձայնության մի նախագիծ։ Ճանապարհին Գեր. Խաչատրյանը սպանվեց թուրքերի ձեռքով, իսկ մյուս երկուսը հասան Բաքու և ղարաբաղցիների Հայրենակցական միության ու Ազգ. խորհրդի հետ խորհրդակցելուց հետո՝ բանակցության մեջ մտան Ազրբեջանի կառավարության և Սուլթանովի հետ և հանգեցին որոշ համաձայնության։

Նախնական համաձայնությունը կայացնելուց հետո, Ղարաբաղի ներկայացուցիչները և Սուլթանովը վերադարձան Ղարաբաղ։ Սուլթանովը արտաքնապես փոխեց իր վերաբերումը. շատ սիրալիր էր դեպի հայերը և ամեն կերպ աշխատում էր գրավել նրանց համակրանքը, Հաստատվեց հայկական թաղում ֆի հայի տանը և հայտարարեց, որ Շուշի—Եվլախ ճանապարհը այլևս բաց է, և հայերը ազատ են ճամփորդելու. նրանց գլխից մի մազ իսկ չի ընկնի։ Հայերն էլ, իրենց հերթին, աշխատում էին առիթ չտալ դժգոհության ու բարդությունների։

Այս երևութական խաղաղության տակ, սակայն, կրքերը շարունակում էին եռալ, և երկու կողմերն էլ տենդագին պատրաստություններ մեջ էին։ Հայերը պատրաստվում էին 7-րդ համագումարին, որը պիտի որոշեր Բաքվում կնքված համաձայնության ճակատագիրը. ղարաբաղցիները պետք է ասեին, թե ի՞նչ է իրենց վճիռը՝ ընդունել Ազրբեջանի իշխանությո՞ւնը, թե շարունակել պայքարը։ Այս հողի վրա սուր տարակարծություններ կային քաղաքացիների և գյուղացիների միջև. վերջինները մեղադրում էին քաղաքացիներին, որ նորից դավաճանել են Ղարաբաղին՝ համաձայնվելով համակերպվել Ազրբեջանի պայմաններին։

Մյուս կոմից պատրաստություններ էր տեսնում և Սուլթանովը. մի կողմից աշխատում էր կողմնակիցներ որսալ հայերի մեջ՝ պառակտելով նրանց, մյուս կողմից շտապում էր գրավել ռազմագիտական կարևոր կետերը, ավելացնել զորքերի թիվը, մարզել և ամրացնել նրանց։ Հավաքում էր սպառնական բռունցք, ազդելու համար համագումարի վրա։

Օգոստ. 12-ին, Շոշու գյուղում, բացվեց 7-րդ համագումարը։ Սուլթանովը չներկայացավ նրան և ուղարկեց առաջնորդ Վահան եպ.-ին մի քանի քաղաքացիների հետ։ Համագումարը մերժեց լսել սրանց և մի խիստ բողոք ուղղեց Սուլթանովին՝ Գ. Խաչատրյանի և ուրիշների սպա-

նության դեմ։ Ի պատասխան, օգոստ. 14-ին, Սուլթանովը ներկայացրեց համագումարին մի վերջնագիր՝ պահանջելով 48 ժամվա ընթացքում ընդունել Բաքվում մշակված համաձայնագիրը՝ սպառնալով, հակառակ պարագային, «դիմել զինվորական ուժի»։

Համագումարը երկարորեն քննեց ստեղծված դրությունը և համոզվելով, որ դրսից ոչ մի օգնություն չի կարող ստանալ— անգլիացիները պաշտպանում էին ազրբեջանցիներին, իսկ Հայաստանի կառավարությունը ի վիճակի չէր լուրջ օգնություն հասցնելու— այլև կշռելով սեփական ուժերը՝ խոհեմություն համարեց զիջելու և օգոստ. 15-ին որոշեց ընդունել Բաքվի համաձայնագիրը։ Հաջորդ օր. օգոստ. 16-ին նրա 16 ներկայացուցիչները գնացին Շուշի, Սուլթանովի մոտ և օգոստ. 22-ին ստորագրեցին հետևյալ համաձայնագիրը.

«Նկատելով, որ Լեռնային Ղարաբաղի ճակատագրի հարցը լուծվելու է Հաշտության վեհաժողովում, որ ամեն մի ընդհարում վնասակար է Ղարաբաղի ազգաբնակչության համար, որ Ղարաբաղի հարցը ինչ ձևով էլ լուծվելու լինի, հայերն ու մահմեդականները ապրելու են միասին, Ղարաբաղի Հայոց 7-րդ համագումարը իր 1919 թ. օգոստ. 15-ի առավոտյան նիստում որոշեց կանգ առնել Ազրբեջանի Հանրապետության կառավարության հետ կայացված համաձայնության հետևյալ կետերի վրա.

1. Սույն ժամանակավոր համաձայնությունը կողմերն ընդունում են մինչև որ այդ հարցը վճռվի Հաշտության վեհաժողովում, որպիսի լուծումը հավասարապես պարտադիր է երկու կողմերի համար էլ։

2. Ղարաբաղի Շուշի, Ջիվանշիր և Ջիբրայիլ գավառների հայերով բնակեցված լեռնային մասը (Դիզակ, Վարանդա, Խաչեն, Ջրաբերդ) ժամանակավորապես իրեն համարում է Ազրբեջանի Հանրապետության սահմաններում։

3. Շուշիի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի գավառները մնում են իբրև առանձին վարչական միավոր Ղարաբաղի ընդհանուր նահանգապետության և նրա ներքին կազմակերպությունն այնպես է, որ լեռնային հայկական մասում վարչությունը նշանակվում է հայերից՝ փոքրամասնության իրավունքների երաշխավորությամբ։

4. Ղարաբաղի լեռնային մասում (Դիզակ, Խաչեն, Վարանդա և Ջրաբերդ) վարչական պաշտոնատար անձինք նշանակվում են խորհրդի հայ անդամների աջակցությամբ։

5. Ղարաբաղի ընդհանուր նահանգապետության կից հիմնվում է 6 հոգիանոց մի խորհուրդ՝ 3 հայ և 3 մահմեդական։

6. Խորհրդի հայ անդամները ընտրվում են Լեռնային Ղարաբաղի հայ. ազգաբնակչության համագումարից։ Համագումարն իրավունք ունի վերընտրելու։

7. Միջցեղային բնույթ ունեցող սկզբունքային բոլոր հարցերը չեն կարող կիրառվել կյանքում առանց նախօրոք խորհրդում քննվելու։

8. Խորհուրդն ունի նախաձեռնության իրավունք ընդհանուր նահանգապետության կարգավորման ու կառավարության վերաբերվող հարցերում։

9. Խորհուրդն ունի ընդհանուր նահանգապետության վարչության վրա հսկելու ու հակակշռելու իրավունք՝ առանց վարչության գործողություններին խառնվելու իրավունքի։

10. Հաստատվում է ընդհանուր նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտոն, որպիսի պաշտոնին նշանակվում է հայ։

11. Քաղաքացիական մասի օգնականի պաշտոնի համար հայկական համագումարը ներկայացնում է Ազրբեջանի կառավարության երկու թեկնածու, որոնցից մեկը հաստատվում է։

12. Ղարաբաղի հայերը վայելում են մշակութային ինքնավարության իրավունք։

13. Մշակութային ինքնավարության իրավունքը կիրառվում է Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի կողմից, որը ընտրվում է Ղարաբաղի հայերից պարբերաբար հրավիրվող համագումարներում։ Համագումարը հրավիրում է Ազգ. խորհուրդը։

14. Ազրբեջանի Հանրապետության կառավարությունը հակակշռում է Հայոց ազգային խորհրդի գործունեությունը հայ լիազորների միջոցով։

15. Զորամասերը կենում են Խանքենդում և Շուշիում, խաղաղ ժամանակվա կազմով։

16. Զորամասերի ամեն տեղափոխում Ղարաբաղի, Շուշի, Ջիվանշիր և Ջիբրայիլ գավառների լեռնային հայաբնակ մասերում կարող է կատարվել խորհրդի անդամների երկու երրորդի համաձայնությամբ։

17. Քաղաքական համոզումների համար ոչ ոք չի կարող հետապնդման ենթարկվել ոչ դատական, ոչ էլ վարչական կարգով։

18. Քաղաքական պատճառներով մեկնելու հարկադրված բոլոր հայերը իրավունք ունեն վերադառնալու իրենց տեղերը։

19. Ղարաբաղում դադարեցվում է հայ և մահմեդական բնակչության զինաթափումը մինչև Ղարաբաղի հարցի որոշվելը հաշտության վեհաժողովում։

Մանոթություն. Քանի որ ամբողջ Ազրբեջանում հայտարարված է զինաթափում, խոսք կարող է լինել միայն դադարեցման մասին։

20. Ազրբեջանի Հանրապետության կառավարությունը ցույց է տալիս նյութական և բարոյական աջակցություն Ղարաբաղի ազգաբնակչությանը՝ մահմեդական ու հայ քանդված գյուղերը շուտով վերականգնելու համար։

21. Միջցեղային հարաբերությունները ավելի լավ կարգավորելու նպատակով խորհուրդը պարբերաբար հրավիրում է հայ մահմեդական ընդհանուր և տեղական համագումարներ։

22. Միությունների, խոսքի ու մամուլի կատարյալ ազատություն։ Իսկ ժողովները, քանի որ ամբողջ Ազրբեջանում տիրում է զինվորական դրություն, արտոնվում են վարչության կողմից։

23. Մասնավոր և պաշտոնատար անձանց բոլոր հանցագործությունները հետապնդվում են դատական եղանակով, բացի պետական Պաշտպանության կոմիտեի 1919 թ. հունիս 11-ի պարտադիր որոշումով ընդհանուր դատաստանական ենթակայությունից հանված հանցանքներից։

24. Մինչև այժմ տեղի ունեցող միջցեղային ընդհարումներին մասնակցելու համար ոչ ոք չի ենթարկվում պատասխանատվության։

25. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մտնում Ղարաբաղի Հայոց 7-րդ համագումարի ընդունած վայրկյանից։

26. Սույն համաձայնությունը իր ուժի մեջ է մնում բոլոր դեպքերում՝ պաշարողական, զինվորական և այլն։

Ղարաբաղի 7-րդ համագումարի նշանակած պատվիրակները լիազոր են՝ ստորագրելու համագումարի բոլոր անդամների ընդունած վերջնական ժամանակավոր համաձայնությունը Ազրբեջանի կառավարության հետ, ընտրելու 2 թեկնածու Ղարաբաղի ժամանակավոր ընդհանուր նահանգապետի օգնականի պաշտոնի համար և Ղարաբաղի ընդհանուր նահանգապետի կից գտնվող խորհրդի 3 անդամներ ու լուծելու բոլոր այն տեխնիկ հարցերը, որոնք կապված են Ղարաբաղի կառավարության հետ՝ ընդունված ժամանակավոր համաձայնության հիման վրա։

1. Դանիել Առաքելյան, 2. Աբրամ Գեսիբեգյան, 3. Սիմոն Պողոսյան, 4. Հիվանդ է, 5. Սմբատ Բալայանց, 6. Բենիամին Բաբաջոխվյանց, 7. Իսրայել Գյուլիքյոխվյանց, 8. Աբրամ բեգ Իշխանյան, 9. Բաշխի Մուրադյան, 10. Հովհաննես Աբրամյան, 11. Ստեփան Ստեփանյան, 12. Հակոբ Բալասանյան, 13. Տիգրան Մելիք-Գասպարյան, 14. Ավանես Գասպարյան, 15. Լևոն Վարդանյան, 16. Արսեն Հովհաննիսյան»։

Այս համաձայնագրի բոլոր կետերի ամփոփումը նույն օրը եղավ, օգ. 22-ին, Սուլթանովը հրատարակեց առանձին հայտարարությամբ և հանդիսավորապես պարտավորություն ստանձնեց՝ կատարելու կյանքի մեջ։ «Այսուհետև,— ասում էր նա այդ հայտարարության մեջ,— նոր դարագլուխ է բացվում Ղարաբաղի ազգաբնակչության կյանքում»։

Նոր դարագլուխ, դժբախտաբար, չբացվեց, բայց Սուլթանովը իրավունք ուներ հպարտանալու, որվհետև, թեև ժամանակավոր կերպով, Ղարաբաղը դառնում էր Ազրբեջանի մաս։ «Ժամանակավորը», «մշտական» դարձնելը ապագայի հարց էր, և ազրբեջանցի գործիչները չէին հրաժարվում այդ մտքից։ Մի ուրիշ հայտարարության մեջ, հետագայում, Սուլթանովը ավելի ցայտուն կերպով արտահայտեց այդ տրամադրությունը. «Նրանք, որ երազում են Ղարաբաղի հայկական լեռնային

մասը բաժանել նրա մահմեդական մասից,— ասում էր նա,— կարող են համարվել կամ ցնորամիտներ և կամ իբենց ժողովրդի թշնամիներ։ Ղարաբաղի գաշտավայրից պոկված լեռնամասի ազգաբնակչությունը սովից կկոտորվի. գաշտավայրի բնակչությունն էլ, առանց լեռների, կկործանվի թե տնտեսապես (անասնաբուծություն) և թե ֆիզիկապես (մալարիա)։ Իսկ եթե մի անգամ ընդունենք իբրև անժխտելի ճշմարտություն, որ Ղարաբաղը տնտեսապես և քաղաքականապես անբաժան է, հեշտ կլինի լուծել այն հարցը, թե ո՞ր պետության է պատկանելու նա։ Եվլախից սկսած մահմեդական հոծ բնակչության շրջանն է տարածված։ Մոտենալով լեռան ստորոտին՝ տեսնում ենք հայ-մահմեդական խառն բնակչության շրջան։ Բարձրանալով լեռները՝ գտնում ենք համարյա բացառապես հայ ազգաբնակչություն։ Այդ վերջին շրջանի հետևը դարձյալ մահմեդական շրջաններ են՝ Զանգեզուրը և ավելի հեռուն՝ Նախիջևանը, որից հետո սկսվում է Հայաստանի հողը։ Այսպիսով հայկական շրջանը շրջապատված է մահմեդական շրջաններով։ Բացի այդ, պետք է նկատել, որ ձմեռվա երեք ամիսների ընթացքում ճանապարհը Նախիջևանից Զանգեզուր, ուրեմն, և Հայաստանից Զանգեզուր բոլորովին կտրվում է։

Այսպիսով, Ղարաբաղը, իբրև տնտեսական մի ամբողջություն, ճընշիչ մեծամասնությամբ բաղկանալով մահմեդական ազգաբնակչությունից և հայկական շրջանը լինելով շրջապատված մահմեդական շրջաններով, իր ո՛չ մի մասով կապ չունի Հայաստանի հետ և ֆիզիկական հնարավորություն չունի հարաբերություն պահելու նրա հետ։ Մյուս կողմից Ղարաբաղը գտնվում է տնտեսական և, այսպես ասենք, բնախոսական սերտ կապակցության մեջ Ազրբեջանի հետ և միացումը այս վերջինի հետ պահանջում են Ղարաբաղում ապրող երկու ազգությունների շահերը»։

Պարզ ու կտրուկ. Ղարաբաղի հարցը միայն Ղարաբաղը Ազրբեջանին կցելու խնդիր չէ, այլև Զանգեզուրն ու Նախիջևանը Ազրբեջանին միացնելու։

Օգոստ. 22-ի համաձայնությունը ցնծությամբ ընդունվեց ամբողջ Ազրբեջանում։ Մուսավաթի պարագլուխ Ռասուլ Զադեն թարգմանը եղավ ընդհանուր ուրախության։

«Ղարաբաղը,— գրում էր նա ,— մեր հայրենիքի այդ սիրուն վայրը ազատվեց մեր համառ դրացիների ոտնձգություններից, որոնք չլատում էին մեր տնտեսական կյանքը, և մեր ջրերի վերին հոսանքը բռնելով՝ ուզում էին մեզ նեղ դրության մատնել։ Առանց տեղի տալու ավելորդ արյունահեղության՝ հայ ժողովուրդը բռնեց հարցի խաղաղ լուծման ճանապարհը և ընդունեց Ազրբեջանի գերիշխանությունը։

Նախիջևանը, որ իր բնական պայմաններով իսկապես «Նախշը-Ջիհան» (աշխարհի զարդանկար) է և անբաժան մասը Ազրբեջանի, շնորհիվ իր հերոս ու անձնվեր զավակների հայրենասիրության, օգտվեց ապստամբվելու իրավունքից՝ միանալու համար հայրենիքին, որից բաժանվել էր խաբվելով։ Նախիջևանը իր սահմանից դուրս շպրտեց բռնագրավող Հայաստանի բանակը։

Գալով Զանգեզուրին, որ ցավ է դարձել մեզ համար և մեջտեղը կանգնած է սպառնալով մեր նպատակներին, կարող ենք հույս ունենալ, որ նա էլ մոտ ժամանակում կդրվի անվնաս դրության մեջ, և որ Առտարա գետից և Սամուրի կամուրջից սկսած մինչև Արաքս գետն ու Ջուլֆայի կամուրջը կբացվի անարգել մի ճամփա։ Այդ նշանակում է, որ այս կերպով Ազրբեջանի հողային պահանջների կարևոր մասը լուծում է ստացել»*։

Եվ, իրոք, Ղարաբաղի հարցը «լուծելուց» հետո, Ազրբեջանը սկսեց տենդագին պատրաստություններ տեսնել Զանգեզուրն էլ «անվնաս դրության մեջ» դնելու համար։

* «Ազրբեջան» (թուրքերեն), Բաքու, 28 օգ., 1919 թ.։

ԳԼՈՒԽ ԻԷ

ԶԱՆԳԵԶՈՒՐ—ԳՈՂԹՆ*

Ղարաբաղից հետո Զանգեզուրը...

1919 թ. պետ. 7-ին, Ազրբեջանի գլխավոր սպայակույտի պետը հետևյալ գաղտնի մտքերն էր թելադրում Ղարաբաղի ընդհանուր նահանգապետ դր. Սուլթանովին. «Ղարաբաղի հարցի խաղաղ կարգադրությունը հարկադրում է մտածել, որ Զանգեզուրի գավառի կցումը տեղի կունենա առանց զինված կռվի, որովհետև նրա հայ ազգաբնակչությունը, Նախիջևանի փլուզումից հետո, դրված է երկու կրակի մեջ և հազիվ թե համարձակվի դիմադրելու մեզ, առանց թիկունքում նախկին աջակցությունն ունենալու։ Սակայն և այնպես, Ղարաբաղի անդորրության ապահովումը եղել է ու կլինի մեր մշտական մտահոգությունը՝ Կամավորական բանակի և նրա բնական ու մնայուն դաշնակից Հայաստանի հետ ընդհարվելու պարագային։ Գործերի ներկա վիճակում Հայաստանը մեզ համար վտանգավոր չէ, բայց նման բարենպաստ կացությունը չի կարող երկար տևել, և մենք պետք է պատրաստվենք ավելի վատ դրության համար։

Ղարաբաղի վերջնական կորուստի հետ հայերը չեն կարող հաշտվել և, անկասկած, կաշխատեն օգտագործել ամեն հարմար առիթ կորուստը հետ դարձնելու նպատակով։ Այդ բոլորը մեզանից կպահանջե, զորաշարժի դեպքում, զորքեր թողնել Խանքենդում, իսկ ապագայում նաև Գորիսում՝ հայերի վրա հսկելու համար։ Այդպիսով, Ղարաբաղը կարող է մեր ոչ մեծ բանակից բավական զգալի ուժեր գրավել ճակատից։ Սակայն, կան միջոցներ Ղարաբաղի պահպանության համար ո՛չ միայն դաշտային զորքերը չթուլացնելու, այլ ճակատի համար կենդանի ուժ էլ հանելու նրա խորքերից՝ թողնելով բավականաչափ զորամասեր Ղարաբաղի ընդհանուր նահանգապետության շրջանի կարգի ապահովության համար։

* Այս գլուխը կազմելիս աղբյուր եմ ունեցել «Кавказский Календарь», 1917 г., А. Шахатунянъ. «Административный предѣлъ Закавказского Края», 1917, Тифлисъ. Այլև լայնորեն օգտվել եմ զանգեզուրցի ծանոթ գործիչ Հ. Տերունիի «Կառավարական օրգանները Զանգեզուրում» ձեռագիր աշխատությունից ու Հ. Հ. Պատվիրակության դիվանի նյութերից։

Այդ նպատակով հարկավոր է օգտագործել քրդական հիանալի մարտական ուժը, կազմակերպել նրանցից հետևակ ու ձիավոր մասեր «համիդիե» գնդերի օրինակով, որոնց գործնական օգտակարությունը փորձված է Թուրքերի կողմից վերջին պատերազմի ընթացքում։ Քրդական գնդերի անվեհեր գործունեության մասին փոքրասիական, պարսկական և Միջագետքի ռազմաճակատներում՝ միաձայն խոսում են պատերազմին բոլոր մասնակցողները։

Քուրդ զորամասերի խաղաղ ժամանակի շարքեր ստեղծելու համար ենթադրվում է կազմակերպել քրդական ձիավոր գունդ և մի հրացանաձիգ գումարտակ, որը պատերազմի ժամանակ կվերածվի 4 գումարտակի։ Զինապարտ տարիքի քրդերը զինվորական պարտականություն կկատարեն իրենց մասերում, իսկ պատերազմի դեպքում կկազմվեն նոր մասեր էլ (երկրորդ և երրորդ հերթի գնդեր ու գումարտակներ), որոնց մի մասը կհատկացվի ռազմաճակատին, մյուսները կմնան Ղարաբաղում։

Քրդական զորամասերի կազմակերպությունը հանգամանորեն մշակելու համար անհրաժեշտ է առայժմ պարզել, թե որքան հետևակ ու ձիավոր մարտիկներ կարող են տալ քրդերը։ Հաղորդելով ձեզ այս մասին՝ խնդրում եմ ձերդ գերազանցության՝ հայտնել ձեր կարծիքը և հաղորդել խնդրված թվերը»։

Այս նամակը կատարյալ հստակությամբ պարզում է, թե ի՞նչ ուղղությամբ էր զարգանում ազրբեջանյան պետական միտքը, որի համար թուրքական «համիդիե» գնդերը համարվում էին իդեալ։ Ցույց է տալիս նաև, որ ազրբեջանցիների համար հերթի էր դրվում Զանգեզուրի կցումը, որպեսզի Սամուրից մինչև Արաքս հատատվի Ազրբեջանի իշխանությունը։

Զանգեզուրը, ցարական իշխանության օրով, կազմում էր Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մեկ գավառը՝ Ղարաբաղի ու Պարսկաստանի միջև՝ արևմուտքից ունենալով Նախիջևանն ու Դարալագյազը, իսկ արևելքից Կարյագինի գավառը։ Զանգեզուրի գավառը բռնում էր 6743 քառ. վերստ տարածություն և 1916 թ. ուներ 226 398 բնակիչ, որից հայ՝ 95 054, թուրք շիա՝ 110 637, թուրք սունի՝ 8 366, քուրդ՝ 3 938, ռուս՝ 1 709 և այլն։

Զանգեզուրի վարչական սահմաններն էլ արհեստական կերպով գծված էին այնպես, որ ո՛չ մի ժողովուրդ նրա մեջ զգալի մեծամասնություն չէր կազմում։ Ըստ հայկական վարչական վերաբաժանման ծրագրի Զանգեզուրից պետք է զատվեին մի շարք զուտ թրքաբնակ շրջաններ ու կցվեին Կարյագինի թրքական գավառին, որով Զանգեզուրը կդառնար հայ մեծամասնություն ունեցող (65%), մի գավառ՝ 136 հազար բնակչությամբ, որից 88 հազարը՝ հայ, 46-ը՝ թուրք և 2-ը՝ ուրիշ ազգություններ։

Ռուսական հեղափոխության լուրը Զանգեզուրում էլ առաջ բերեց ընդհանուր ոգևորություն։ Հետզհետե ամեն կողմ կազմվեցին հեղափոխական կոմիտեներ՝ փոխարինելու համար հին իշխանությանը։ Դեպքերի բերումով՝ գավառը կտրվեց նահանգական կենտրոն Գանձակից և իր գործերը վարում էր ինքը՝ Գորիսի ու Հանքերի խառն կոմիտեների միջոցով։ Այստեղ էլ հայերն ու թուրքերը սկզբի շրջանում ապրում էին հաշտ ու համերաշխ։

Մարտի սկզբներին Ղարաբաղն ու Զանգեզուրը միացվեցին և կազմվեց Գանձակից անկախ մի առանձին շրջան՝ Շրջանային գործադիր կոմիտեի գլխավորությամբ։ Այս վերջինի ջանքերով կազմվեց Գորիսի գործադիր կոմիտե, որին ենթարկվում էին բուն Զանգեզուրն ու Սիսիանը, իսկ Ղափան—Մեղրի շրջանը մնաց Հանքերի կոմիտեի իշխանության տակ։

Սակայն, շրջանային նոր կազմակերպությունը հաջողություն չունեցավ. փաստորեն Ղարաբաղն ու Զանգեզուրը ապրում էին առանձին, իրարից կտրված, և Զանգեզուրի կացությունը երթալով վատանում էր։ Մի կողմից նյութական ու պարենավորման սուր տագնապը, մյուս կողմից՝ հողային վեճերը, հայ-թրքական հարաբերությունների լարվելը՝ այս ամենը անհրաժեշտ դարձրին ավելի ուժեղ իշխանության ստեղծումը։ Օգոստ. 15-ին գումարվեց համազանգեզուրյան գործադիր կոմիտեի նիստը՝ բաղկացած 31-ական հայ ու թուրք պատգամավորներից, որոնք ընտրվել էին Օզակոմի ներկայացուցիչների ղեկավարությամբ, գավառի 31 գյուղախմբերից։ Հայ պատգամավորներից 24-ը դաշնակցականներ էին, մնացած 7-ը՝ սոց.-դեմոկրատ, սոց.-հեղափոխական և այլն։ Թուրքերից՝ 28 մուսավաթական և 3-ը՝ սոց.-դեմոկրատ։

8 օրվա նիստերի ընթացքում լուծվեցին գավառին վերաբերվող խնդիրները և ընտրվեց 4 հոգիանոց մի դիվան, 7 անդամներից հողային կոմիտե, գավառապետ, օգնական, շրջանների ոստիկանապետներ, որոնք և կազմեցին գավառի իշխանությունը՝ դիվանի վերին հսկողության տակ։ Դիվանի նախագահ ընտրվեց Նազար բեգ Սուլթանովը, փոխնախագահ՝ Հ. Տերունին, հողային կոմիտեի ղեկավար՝ Արշ. Շիրինյանը և Մ. Հ. բեգ Խոջահանսկին, գավառապետ՝ Մեսրոպ բեգ Սարատիկյանը, օգնական՝ Խանլար բեգը։

Գործադիր կոմիտեի նիստերի ժամանակ տեղի ունեցավ կրքոտ պայքար, մասնավորապես, մուսավաթականների կողմից, որոնք աշխատում էին իշխանությունը առնել իրենց ձեռքը։ Այդ պայքարը, Ջալիլ բեգ Սուլթանովի գլխավորությամբ, շարունակվեց դուրսն էլ և ծայրաստիճան սրեց հայ-թրքական հարաբերությունները։ Դրան նպաստում էին և բախումները թուրք քոչվորների և տեղական հայ ու ռուս գյուղացիների միջև։ Տեղական թուրքերը բռնում էին քոչվորների կողմը, որից առաջ էին գալիս ընդհարումներ տեղական հայերի ու թուրքերի միջև։ Սեպ-

տեմբերին ազուդիվազուդեցի թուրքերի ձեռքով սպանվեցին մի քանի սիսիանցիներ։ Երթևեկությունը խանգարվեց. ճանապարհները դարձան վտանգավոր։

Գործերը էլ ավելի խճճվեցին, երբ թուրքերը Զանգեզուրի թրքական մասը հայտարարեցին Գորիսից անկախ, և Դոնդարլու գյուղում կազմեցին առանձին կառավարություն՝ Մահմեդական կոմիտե անունով՝ Ջալիլ բեգի նախագահությամբ։ Թրքական շրջանների հայերը տեղափոխվեցին հայկական վայրեր. Գորիսից թուրքերը քաշվեցին թրքական շրջանները։ Փաստորեն Զանգեզուրը բաժանվեց երկու, իրարից անկախ մասերի։ Նոյեմբեր ամսից լուծվեց և Գործադիր կոմիտեի դիվանը, պետական հիմնարկությունները փակվեցին, գավառապետը քաշվեց գործից, և ամեն բան խառնվեց իրար։

Այսպես տևեց դրությունը մինչև 1918 թ. հունվարի վերջերը։ Հունվ. 25-ին Գորիսում կազմվեց 18 հոգիանոց միջկուսակցական մի խորհուրդ՝ 9 դաշնակցական և 9 մյուս կուսակցություններից, որը աշխատեց կազմակերպել հայկական շրջանների իշխանությունը, բայց նյութական միջոցների ու պետական մեքենայի բացակայության պատճառով հաջողություն չունեցավ։

Գարնան բացվելով՝ անիշխանությունը ավելի ևս սաստկացավ։ Մայիսին սկսվեց քոչը. թուրք քոչվորները պատրաստվում էին իրենց հոտերով բարձրանալ Զանգեզուրի սարերը։ Հաջողության դեպքում այդ պիտի նշանակեր ստույգ մահ զանգեզուրցիների համար։ Եվ ահա, ինքնաբերաբար, իրարից անկախ, Սիսիանում, Գորիսում, Ղափանում ու Մեղրիում կազմվեցին տեղական մարմիններ, որոնք իրենց ձեռքն առան ինքնապաշտպանության գործը։ Նշանակեցին շրջանապետներ և անցան կազմակերպական աշխատանքի։

Մայիսի վերջերին Զանգեզուր հասավ և Խնուսի, Սասունի ու Վանի գաղթականների մի մասը՝ զինված ուժերով։ Խնուսցիների մի հարյուրյակը Եղոյի գլխավորությամբ և վանեցիների մի վաշտը իրենց դրին Սիսիանի մարմնի տրամադրության տակ, իսկ Սասունցի Մանուկը, Մուշեղը և Զոլոն երեք հարյուրակով անցան Գորիս։ Այդ ուժերը կազմեցին այն կորիզը, որի շուրջ համախմբվեցին զանգեզուրցի մարտիկները։

Հունիսի սկզբներին, հազարավոր զինված քոչվորներ խռնվեցին Հագարի գետի ափին՝ պատրաստ զենքի ուժով բանալու սարերի ճամփան։ Նրանց օգնության էին եկել Հաջի-Սամլուի ու Մուսուլմանլարի թուրքերը։ Հարամի Դյուզ վայրում տեղի ունեցան թուրքերի և հայերի միջև արյունահեղ ճակատամարտեր, և թուրքերը պարտված՝ դիմեցին փախուստի՝ կովի դաշտում թողնելով բազմաթիվ դիակներ։ Կարճ ժամանակ հետո, Հաջի-Սամլուի թուրքերը հարձակվեցին Սիսիանի վրա՝ կամենալով միանալ թրքական Ջուլ շրջանին և այդպիսով Զանգեզուրը կտրել

Դարալագյազից, բայց ջարդված քշվեցին այստեղից էլ։ Ընդհարումներ եղան և Զեյվա—Հագարակ գծի վրա, Մեղրիում. այստեղ ևս թուրքերը չդիմացան ու փախան Օրդուբադի կողմերը։

Այսպիսով, Զանգեզուրն ազատվեց քոչի մղձավանջից։ Հուլիսին Սիսիան եկավ Շուշիի գնդի սպայակույտը՝ գնդապետ Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ։ Իսկ, հուլիսի վերջերին, զանգեզուրցիների կողմից Երևան ուղարկվեց մի հատուկ պատվիրակություն՝ հայտնելու համար Հայաստանի կառավարությանը, որ Զանգեզուրը վճռել է մնալ Հայաստանի մաս և պատրաստ է մինչև մահ կռվել, և խնդրելու, որ Հայաստանի կառավարությունը Զանգեզուր ուղարկե 8—10 ձեռնհաս սպա ու դրամական միջոց. Հայաստանի կառավարության վիճակն այն օրերին այնպես էր, որ իհարկե, շոշափելի օգնություն չէր կարող հասցնել. վարչապետ Հ. Քաջազնունին սահմանափակվեց միայն բարոյական քաջալերանքով։ Ըստ էության, ավելի դրական չեղավ և ներքին գործոց նախարար Արամի արածը, բայց նա խոստացավ կենդանի կապ պահել Զանգեզուրի հետ և մոտիկ ապագայում ուղարկել մի ձեռնհաս հրամանատար ու սպաներ։

Հուլիսի վերջերին Զանգեզուր մտավ Անդրանիկը և հրամանատարի պահանջը այդպիսով որոշ ժամանակի համար լուծվեց*։

Օգոստոսի սկզբներին, Կարսի ու Շարուր—Նախիջևանի հետ միաժամանակ, թուրքերն ընդհանուր հարձակման անցան և Զանգեզուրի վրա, բայց նորից հանդիպեցին համառ դիմադրության։ Զանգեզուրցիների խնդրանքով ինքնապաշտպանության գլուխն անցավ Անդրանիկը, որ ընդհանուր զորահավաք հայտարարեց և հետ շպրտեց թրքական բոլոր գրոհները՝ գրավելով և ամրանալով Զաբուղի բերանում։

Նոյեմբերին թուրքերը նորից դիմեցին գործողությունների Զանգեզուրի դեմ։ Կռիվները տևեցին մինչև դեկտեմբեր։ Անդրանիկը, որ ստացել էր զարաբաղցիների օգնության կոչը, ջարդեց թշնամուն և շարժվեց դեպ Շուշի, բայց, ինչպես տեսանք արդեն, կես ճանապարհին անգլիացիների կողմից կանգնեցվեց ու վերադարձվեց Զանգեզուր։ Ճանապարհները բացվելուն պես Անդրանիկը, անգլիական սպա Գիբբնի ուղեկցությամբ անցավ Էջմիածին, ուր մի առ ժամանակ մնալուց հետո, զենքերն

* Բաքոմի դաշնագրից հետո, Անդրանիկը ունենալով իր հետ մոտ 3000 հետևակ, 700 ձիավոր, 150 թնդանոթաձիգներ, 80 գնդացրավորներ, 1 դաշտային և 3 լեռնային թնդանոթ, 40 ուղտ, 15 սայլ և մի քանի տասնյակ հազար գաղթականներ՝ Նոր Բայազետի, Դարալագյազի ու Զուլֆայի վրայով անցել էր Խոյ՝ անգլիական բանակի հետ միանալու հույսով։ Հունիսի 21-ին, Սեյդավար գյուղի մոտ թուրքերի հետ կռվի բռնվելով ու մոտ 150 հոգի սպանված ու գերի տալով՝ նահանջել էր Զուլֆա, ապա Նախիջևան, ուր փորձել էր կազմակերպել հայկական ինքնապաշտպանությունը։ Այստեղից էլ, սովից, հիվանդություններից ու թուրքերից նեղված՝ Օխչի շայի հովտով, անցել էր Ղափան։

ու ռազմամթերքը կաթողիկոսին հանձնելով՝ անցավ Թիֆլիս և այնտեղից, մայիսի 6-ին արտասահման*։

Անգլիացիների երևալը Զանգեզուրում առաջ բերեց անխառն ուրախություն, որը, սակայն, շուտով պղտորվեց անգլիացիների բռնած երկդիմի դիրքով. «մեր մեծ դաշնակցի» ներկայացուցիչներն էլ աշխատում էին Զանգեզուրը դնել Ադրբեջանի իշխանության տակ։ Զանգեզուրցիք ցասումով բողոքեցին և ըմբոստացան այդ ծրագրի դեմ։ Այդ առթիվ Զանգեզուր գնաց զոր. Թոմսոնի տեղակալ զոր. Շատելվորտն և Հայաստանի ներկայացուցիչ Հ. Արղությանը։ Զանգեզուրցիք Շատելվորտին էլ ընդունեցին զայրույթով ու միակ պահանջով՝ միացնել Զանգեզուրը Հայաստանին։ Շատելվորտի սպառնալիքների վրա՝ զանգեզուրցիները զինված ցույց արին նրա ինքնաշարժի շուրջ և քիչ էր մնում ձերբակալեին նրան։ Շատելվորտը հեռացավ ձեռնունայն, իսկ Հ. Արղությանը, որ Ղարաբաղի հարցում կուսակից էր փոխադարձ զիջումի, զեկուցում տարավ Երևան, թե, ստեղծված պայմաններում, ո՛չ միայն Զանգեզուրը, այլև Ղարաբաղն էլ չի կարելի թողնել Ադրբեջանի տիրապետության տակ։

Թուրքերի պարտությունից հետո, կուսակցությունների և կազմա-

* Արժե այստեղ արձանագրել և հետևյալ փաստը։ Ապրիլին Անդրանիկը մտավ Երևանի զավառ։ Հայաստանի կառավարությունը նրան ընդառաջ ուղարկեց ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանին և Երևանի զորամասի պետ Դրոյին՝ բարի գալուստ մաղթելու և Երևան հրավիրելու համար։ Անդրանիկը չդայնացած և լուտանքներ թափելով կառավարության գլխին՝ մերժեց մտնել «տաճիկների ձեռքով ստեղծված «Հայաստանի» մայրաքաղաքը և, ինչպես գրված է իր հրատարակած «Կովկասյան ճակատի պատմական օրագրության» մեջ (էջ 137), «առանց Երևան մտնելու և դավաճաններու երեսները տեսնելու», անցավ Էջմիածին։

Ապր. 19-ը Զատկի նախօրյակ էր, և Երևանի շուկան լիքն էր գյուղացիներով, քաղաքի բնակիչներով, զինվորներով։ Մեկ էլ, կշեռքի տակ, ինչ-որ վեճ ու կռիվ է սկսվում Անդրանիկի կամավորների և Երևանցի զինվորների միջև։ Անդրանիկի զինվորներից մեկը վիրավորվում է, մեկ ուրիշը շտապում է Էջմիածին՝ հաղորդելու «փաշային», թե՝ Երևանի Կառավարությունը հրաման է տվել կոտորելու կամավորներին, որոնցից մի քանիսն արդեն սպանված են Երևանի շուկայում։

Անդրանիկը կրակ է կտրում։ Հրամայում է անմիջապես հավաքել բոլոր զինվորներին, դասավորում է նրանց և հետևակով, ձիավորով, թնդանոթով ու գնդացիրով արշավում Երևանի վրա։ Կեսօրին Երևանի բլուրներին, այգիների հետևը երևում են Անդրանիկի առաջապահները։ Շուտով հասնում է և ինքը։ Բլրի գլխին տնկում է դաշնակիցների գրոշակները, թնդանոթների բերանները ուղղում մայրաքաղաքի վրա, դիրքեր բռնում և պատգամավորների միջոցով կառավարությունից բավարարություն ու հանցավորների պատիժ է պահանջում, հակառակ պարագային սպառնալով ռմբակոծել քաղաքը...

Կարելի է երևակայել, թե ինչ զայրույթ ու վրդովում առաջ եկավ կառավարական ու զինվորական շրջաններում ու քաղաքի բնակչության մեջ։ Զոր. Նազարբեգյանն ու Հախվերդյանը արտոնություն խնդրեցին՝ զենքի ուժով վերջ տալու խայտառակությանը, կառավարությունը, սակայն, տատանվում էր. չէր ուզում տեղիք տալ եղբայրասպան ընդհարումների։ Եվ միայն ամերիկյան ներկայացուցչին և հայ հոգևորականներին մեջտեղ ծգելով, երեկոյան դեմ, Երևանի «պաշարումը» վերացվեց, և Անդրանիկը իր զորքով վերադարձավ Էջմիածին։

կերպությունների փոխադարձ համաձայնությամբ որոշվեց կյանքի կոչել Զանգեզուրի Կենտրոնական ազգային խորհուրդը 9 անդամներով, որոնք պիտի ընտրվեին շրջաններից։ Ընտրվեցին Սիսիանից Մ. Զաքարյան, Հ. Տերունի և Գ. Տեր-Մկրտչյան, Բուն Զանգեզուրից՝ Տ. Սազանդարյան, բժ. Մ. Պարոնյան, Ն. Հովսեփյան, Ղափան—Մեղրիից՝ Ս. Մ.-Քարամյան, Ա. Շիրինյան, Ս. Մ.-Ստեփանյան։ Խորհուրդը գործի անցավ դեկտեմբերի սկզբին և այդ օրից լուծված համարվեցին բոլոր հին մարմինները։

Ազգային խորհուրդը ձեռնարկեց գավառի իշխանության հիմնական կազմակերպություն։ Ամեն ինչ նորից պետք էր սկսել։ Խորհրդի նախագահ և միանգամայն գավառապետ ընտրվեց Մ. Պարոնյանը, որին, երկու ամիս անցած, գավառապետի պաշտոնում փոխարինեց Ն. Հովսեփյանը։ Նշանակվեցին շրջանային կոմիսարներ։ Վերընտրվեցին գյուղական կոմիսարները։ Ստեղծվեց գավառական պարենավորման կոմիտե. շրջաններում նշանակվեցին պարենավորման կոմիսարներ։ Գորիսում հիմնվեց շրջանային դատարան։ 1919 թ. հունվարին հայտարարվեց 20—22 տարեկան զանգեզուրցիների զորահավաք և ստեղծվեց տեղական մնայուն զորամաս։ Պետական կարիքների համար հարկ դրվեց ազգաբնակչության վրա։

Հունվարի վերջերին Ազգ. խորհրդի կողմից Երևան ուղարկվեց Ա. Շիրինյանը՝ ստանալու համար դրամ ու ռազմամթերք և խնդրելու, որ Հայաստանի կառավարությունը փութացնե Զանգեզուրի նահանգապետի առաքումը։ Վերջինիս գալը անհրաժեշտ էր, որովհետև, ձյունը հալելուն պես, Անդրանիկը պիտի հեռանար և նրան պետք է փոխարիներ մեկ ուրիշը։

1919 թ. մարտի 6-ին, Գորիս հասավ Հայաստանի կառավարության նշանակած Զանգեզուրի ընդհանուր կոմիսարը՝ փոխգնդ. Արսեն Շահմազյանը, որից հետո Զանգեզուրն այլևս կապվեց Երևանի հետ։ Շահմազյանի պաշտոնը կես գաղտնի էր. Ղարաբաղ—Զանգեզուրը Ադրբեջանին կցել աշխատող անգլիացիների ճնշման տակ, Հայաստանի կառավարությունը պաշտոնական ձև չէր տալիս իր գործունեությանը Զանգեզուրում։ Հակառակ դրան, Զանգեզուրը, երկրի մյուս մասերին հավասար, օգտվում էր Հայաստանի պետական միջոցներից։

Մարտի 31-ին Գորիսում հրավիրվեց համազանգեզուրյան մի համագումար, ուր Ազգ. խորհուրդը ներկայացրեց իր հրաժարականը։ Եվ նրա տեղ, ընդառաջ գնալով ժողովրդի միահամուռ փափագին, ընտրվեց Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային խորհուրդ անունով մի մարմին՝ այդ ձևով հանդիսավորապես նվիրագործելով Ղարաբաղ—Զանգեզուրի միությունը և այս երկուսի կցումը Մայր Հայաստանին։ Շրջ. խորհրդի անդամներ ընտրվեցին Ա. Շիրինյանը, Մ. Զաքարյանը, Հ. Տերունին, Խ. Դանիելյանը (չորսն էլ դաշնակցական), Եր. Բագունցը, Սահ. Տեր-Հայրապետյանը (բոլշևիկ) և Ս. Մ.-Ստեփանյանը (անկուս.)։ Ղարաբաղի կողմից խորհրդի մեջ մտան՝ Գեր. Բալայանը, Եղիշե Իշխանյանը, Մելիք-Եսայանը, Ավ. Ասատուրյանը և Արս. Բագունցը։ Վերջիններս այդ ժամանակ՝ խուսափելով անգլիացիների հալածանքներից՝ գտնվում էին Գորիսում, որտեղից և հետևում էին Ղարաբաղի անց ու դարձերին։

Վերակազմվեց երկրի ինքնապաշտպանության գործը։ Շրջ. խորհրդի անդամներից կազմվեց զինվորական խորհուրդ, իսկ սպաներից՝ գլխավոր սպայակույտ։ Շրջաններում նշանակվեցին զինվորական հրամանատարներ՝ Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանը, Տաթևում՝ Խ. Մալինցյանը, Տեղ-Խնձորեսկում՝ Մ. Հուսեյնյանը, Ղափանում՝ Հ. Տեր-Պետրոսյանը, Մեղրիում՝ Շահպազյանը։ Կարգվեցին նաև ճակատապետներ՝ Զաբուղում, Զեյվա-Հագարակում, Բազարչայում, Նորս-Գոմրիում։

Զուգընթացաբար տարվում էր նաև քաղաքացիական մասի կազմակերպական աշխատանքը։ Գավառապետ նշանակվեց Ն. Հովսեփյանը, օգնական և միլիցիապետ՝ Սաքոն։ Միլիցիայի թիվը կրկնապատկվեց։ Բացվեցին փոստատները և կանոնավորվեց փոստային հարաբերությունը Երևանի հետ։ Վերաբացվեց Գորիսի պետական գանձարանը։ Հիմնվեց պետական վերահսկողություն։ Վերաբացվեցին Գորիսի և Հանքերի հիվանդանոցները, բուժական կայաններն ու դեղատները։ Սկսեց գործել զինվորական ատյանը։

Մինչև հուլիսի վերջերը կազմակերպական աշխատանքներն արդեն վերջացած էին։ Օգոստոսին Շրջանային խորհուրդը աշխատանքների բաժանում կատարեց իր անդամների միջև՝ հիմնելով հետևյալ վարչությունները. վարչապետ և ներքին գործերի վարիչ՝ Ա. Շիրինյան, օգկան՝ Ս. Մ.-Ստեփանյան, հազորդակցության՝ ինժ. Ա. Բագունց, կրթական՝ Հ. Տերունի, առողջապահության և խնամատարության՝ Ա. Ավետիսյան, օգն. Խ. Դանիելյան, երկրագործական՝ Մ. Զաքարյան, արդարադատության՝ Եր. Բագունց։ Զանգեզուրի կառավարությունն էր այս, որ, այնուհետև, ձեռք ձեռքի ընդհանուր կոմիսարի հետ՝ տարավ երկրի կազմակերպության ու կառավարության գործը։ Խորհրդի մյուս անդամները զբաղվում էին Ղարաբաղի հարցերով։ Շրջանային խորհուրդն իր ամբողջության մեջ վարիչների գործունեության վերին հսկողի դերում էր և շաբաթը մի անգամ նիստ գումարելով՝ լսում էր վարիչների զեկուցումները։

Պետք է՝ավելացնել և այն, որ այդ բոլոր աշխատանքները կատարվում էին գրեթե պատերազմական պայմաններում։ Ապր. 15-ից սկսած մինչև նոյեմբերի վերջը տեղի ունեցան մի շարք լուրջ բախումներ հայերի և թուրքերի միջև Երիցաթումբի, Զեյվա-Հագարիի, Ներքին Հանդինյուաղիի, Նորս-Գոմրիի, Մազրայի, Բազարչայ-Ղուշչի-Բիլագի, Մինքենդ-Խոզնավուրի և այլն։ Ամեն անգամ կռիվներին մասնակցում էին

երկու կողմից 1500—3000 զինված ուժեր։ Համարյա բոլոր դեպքերում էլ նախահարձակը թուրքերն էին. նրանք էին և չարաչար պարտվողը։ Թուրքերի ձգտումն էր միացնել Զանգեզուրը Ազրբեջանին։

Այս բանին ուժ էին տալիս և անգլիացիները։ Այսպես, մայիսի 2-ին Շուշիից Գորիս եկավ անգլիական միսիայի պետ մայոր Մաք Մեզենը և հրավիրելով Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային խորհրդի անդամներին՝ արավ հետևյալ հայտարարություն-պահանջը.

1. Ճանաչել Ազրբեջանի իշխանությունը՝ երկրում կարգ, իշխանություն հաստատելու, ճանապարհները բանալու և ժողովրդին պարեն հասցընելու համար։

2. Հարմարություններ տալ քոչվորներին բարձրանալու Զանգեզուրի լեռները։

Շրջանային խորհուրդը մայիսի 3-ին տվեց հետևյալ գրավոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին գյուղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկրամաս Զանգեզուրի դեմ կատարված յուրաքանչյուր հարձակողական գործողություն կհանդիպի ամենահամառ և կատաղի դիմադրության Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից։

Հայաստանի Հանրապետության երկրամասում չապրող քոչվորներին ո՛չ մի դեպքում և ո՛չ մի պայմանով չի թույլատրվում բարձրանալ Զանգեզուրի սարերը։

Ինչ վերաբերվում է իշխանություն հաստատելուն, պետք է ասենք, որ ո՛չ միայն այժմ, այլև համատարած անիշխանության օրերին Զանգեզուրում միշտ թագավորել է օրինակելի իշխանություն, և այժմ հարկ չկա իշխանություն հաստատելու այնտեղ, ուր անիշխանություն չկա։

Ուղիղ երկու տարի է ինչ Զանգեզուրը կտրված է քաղաքակիրթ աշխարհից, նրա առաջ փակված են հաղորդակցության ճանապարհները։ Զանգեզուրը հաշտվել է այդ հանգամանքի հետ՝ գտնելով, որ իր ազատությունը վեր է ամեն տեսակ հարմարություններից և կուլտուրական բարիքներից։

Համաշխարհային խաղաղարար կոնֆերենցիայի հայտարարությունը ցարզորոշ թելադրում է ամենքին՝ պահպանելու եղած դրությունը, մինչև վերջնական որոշման հայտարարությունը։

Թուրք-ազրբեջանյան ավանտյուրայի ամբողջ ընթացքում Զանգեզուրը եղել է միշտ ինքնուրույն, և դաշնակից հրամանատարությունը այդպես էլ տեսել է Զանգեզուր մտնելիս։

Ամեն մի ոտնձգություն մեր ինքնուրույնության դեմ ում կողմից էլ որ երևան դա, այդ ստատուս քվոյի խանգարումն է և մեր կողմից կհանդիպի ամենաուժեղ դիմադրության»։

Այս հանդուգն պատասխանը ստանալուց հետո անգլիական ներկայացուցիչը շտապեց հեռանալ։ Եվ գործի անցավ Ազրբեջանը։

Ղարաբաղի խնդիրը փակելուց և Հայաստանի մահմեդական ապըստամբությունների վայր դարձնելուց հետո, Ազրբեջանի կառավարությունը սկսեց ուժեր հավաքել Զանգեզուրի շուրջը զորավար Ալի Աղա Շիխլինսկիի գլխավորությամբ։ Հոկտեմբերին, Շուշիի և Կարյագինի ուղղությամբ համախմբվեցին 3 հետևակ ու 2 ձիավոր գնդեր, 8 թեթև ու 4 ծանր թնդանոթներ և 400 քուրդ կամավորներ։ Նախիջևանի և Շարի կողմից շարժման մեջ դրվեցին ավելի քան 3000 կովողներ։ Ազրբեջանը ուզում էր 3 ծայրերից օղակել և արագ ու կտրուկ հարվածներով գրավել Զանգեզուրը։

Վճռական գործողությունների անցնելուց առաջ, դր. Սուլթանովը մի կոչ ուղղեց զանգեզուրցիներին, որով համոզում էր հետևել ղարաբաղցիների օրինակին և հոժարակամ ճանաչել Ազրբեջանի իշխանությունը։ «Ես դիմում եմ,— գրում էր նա,— Զանգեզուրի աղգաբնակչության, բանվորներին ու գյուղացիներին... ապացուցե՛ք, որ դուք կապ չունեք անիշխանական և արկածախնդիր տարրերի հետ։ Ես ապահովում եմ ձեր անձի ու գույքի անձեռնմխելիությունը, իսկ ես միշտ հարգում եմ իմ խոսքը։ Իսկ եթե դուք շարունակեք օգնել անիշխանական տարրերին, ես այնքան ուժ կունենամ, որ ստիպեմ ձեզ ճանաչել Ազրբեջանի հանրապետության իշխանությունը, բայց այն ժամանակ արյունահեղության պատասխանատվությունը կընկնի ձեր վրա»։

Զանգեզուրցիք ականջ չդրին Սուլթանովի հորդորներին, և նոյեմբ. 1-ին ազրբեջանյան զորքերը Զարուղից, Կարյագինի կողմից, Նախիջևանից ու Դարալագյազից անցան ընդհանուր հարձակման։ Ամբողջ 6 օր Զանգեզուրի լեռներում որոտում էին թնդանոթներն ու գնդացիրները։ Առաջին օրերը թշնամին գրավեց Խնածախ, Խոզնավար, Բայանդուր, Կոռնիձոր գյուղերն ու Քաչալ Դաղը և սպառնում էր Գորիսին։ Նոյ. 4-ին զանգեզուրցիները, Ա. Շահմազյանի հրամանատարությամբ, կանգնեցրին թշնամու առաջխաղացումը և կատաղի հակագրոհներով ու հարվածներով, նոյ. 6-ին, փախուստի մատնեցին ազրբեջանյան բանակը, որը թողեց բազմաթիվ դիակներ, ավելի քան 150 գերի, մեկ թնդանոթ, 20 գնդացիր և հարուստ ավար։ Ազրբեջանյան 2-րդ ձիավոր գունդը ամբողջապես ոչնչացավ։ Զանգեզուրը, շնորհիվ իր զավակների հերոսական ճիգերի, մի անգամ էլ փրկվեց մահացու վտանգից։

Զանգեզուրի դեպքերը ահագին հուզում առաջ բերին դուրսը։ Գնդ. Հասկելի փոխանորդ գնդ. Ռեյը և բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպը շտապեցին պահանջել Հայաստանի ու Ազրբեջանի կառավարություններից՝ վերջ տալ արյունահեղության և փոխադարձ համաձայնությամբ լուծել Զանգեզուրի հարցը։ Մինչ Հայաստանը անմիջապես տվեց իր համաձայնությունը, Ազրբեջանը սկզբում բավական անզիջող դիրք

բոնեց. «Զանգեզուրում պատերազմական գործողություններ չկան, Ազրբեջանի կառավարության կողմից,— պատասխանեց գնդապետ Ռեյին վարչապետ Ուսուպբեգովը,— Զանգեզուրը Ազրբեջանի անբաժան մասն է... Ազրբեջանի կառավարությունը հարկադրված էր զինվորական օգնություն ուղարկել Ղարաբաղի ընդհ. նահանգապետին՝ կարգը վերականգնելու և հայ ապստամբների անիշխանական-բոլշևիկյան հրոսախմբերը ճնշելու նպատակով»։ Սակայն, պարտության լուրը առնելուց հետո փուքսը բավական իջավ, և նույն Ուսուպբեգովը փութաց ընդունել գնդ. Ռեյի առաջարկը՝ նոյ. 20-ին, իր մոտ հանդիպում ունենալու Հայաստանի վարչապետի հետ։

Նոյեմբ. 20-ին տեղի ունեցավ Խատիսյանի և Ուսուպբեգովի տեսակցությունը գնդ. Ռեյի առանձնասենյակում։ Երկու կողմերի բանակցությունները հանգեցին նոյեմբ. 23-ի համաձայնության, ըստ որի՝

«1. Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները պարտավորվում են դադարեցնել տեղի ունեցող ընդհարումները և նոր ընդհարումների չդիմել։

2. Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները համաձայնվում են ձեռք առնել իրական միջոցներ բանալու և նորոգելու Զանգեզուր տանող ճանապարհները՝ խաղաղ երթևեկի համար։

3. Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները պարտավորվում են լուծել բոլոր վիճելի հարցերը, մեջը լինելով և սահմանավեճերը, խաղաղ համաձայնությունների ճանապարհով, մինչև հաջորդ հոդվածում նախատեսված խորհրդաժողովի վճիռը։ Այն դեպքում, երբ կարելի չլինի հասնել խաղաղ համաձայնության, երկու կողմերը պարտավորվում են իրավարար ընտրել մի շեզոք անձնավորություն, որի վճիռը պիտի լինի պարտադիր երկու կողմերի համար էլ։ Ներկայումս այդ անձը համարում է Միացյալ Նահանգների բանակի գնդ. Ջեյմս Ս. Ռեյը։

4. Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները պարտավորվում են իսկույն և եթե հավասար թվով պատգամավորներ նշանակել, հոկտեմբերի, նոյ. 20-ին, Բաքվում գումարվելիք խորհրդաժողովի համար, որը պետք է տեղափոխվի Թիֆլիս դեկտ. 4-ին, ուր կշարունակվեն խորհրդաժողովի նիստերը, եթե փոխադարձ համաձայնությամբ պետք չնկատվի այլ վայր փոխադրելու։ Այդ խորհրդաժողովը պիտի քննե բոլոր այն հարցերը, որոնք վեճ ու բախում են առաջ բերում երկու կառավարությունների միջև, և լիազորություն կունենա լուծել այդ հարցերը համաձայնության կամ իրավարարության միջոցով։

5. Սույն համաձայնությունը համարվում է իրական ատորագրության օրից և մնայուն ուժ կստանա երկու պետությունների խորհրդարանների վավերացումից հետո»։

Այս համաձայնությամբ վերջ գտավ Զանգեզուրի արյունահեղությունը, որ քիչ մնաց պատճառ դառնար հայ-ազրբեջանյան պատերազմի։ Ճիշտ է, կռիվները փաստորեն շարունակվեցին, բայց այս անգամ արդեն նախահարձակը զանգեզուրցիներն էին։ Նոյեմբերի վերջերին, դափանցիները, Երևանից նոր հասած Գ. Նժդեհի գլխավորությամբ, մաքրեցին Օխչի շայի ապստամբ շրջանը։ Դեկտեմբերի սկզբին մաքրվեցին Գեղվա ձորի մոտ 40 թրքաբնակ գյուղերը։ Այդ դեպքերը նորից բողոքի ու սպառնալիքի նյութ դարձան գնդ. Ռեյի և Ուորդրոպի կողմից։ Ազրբեջանի կառավարությունը ցասկոտ հեռագրեր տվեց ու պատասխաններ ստացավ, բայց կյանքը գնաց իր ճանապարհով. Զանգեզուրն այլևս մաքրված էր ներքին թշնամուց։

* * *

Թուրքիայի և Ազրբեջանի միացման մեկ օղակն էլ Գողթն* գավառակն է՝ հազիվ 20—25 գյուղ** ունեցող հայկական մի շրջան՝ կծկված Ալանգյոզ ու Ղազանգյոլ բարձրաբերձ լեռների և Արաքսի միջև։ Գողթնը և Արևիքը (Մեղրի) զատում են Ազրբեջանը Նախիջևանից. վերացնել մեջտեղից այս հայկական շրջանները՝ նշանակում է բանալ ուղիղ ճանապարհ Բաքվի, Անգորայի*** և Պոլսի միջև։ Ուստի, տարօրինակ չպիտի թվա այն համառությունը, որով թուրք-ազրբեջանցիները, ամեն ուժով, աշխատում էին գրավել Գողթնը։

Երբ, Բաթումի դաշնագրից հետո, թուրքերը եկան Նախիջևան, նրանց առաջին գործը եղավ Գողթնի նվաճումը. 1918 թ. հուլ. 25-ին թուրք զորքերը մտան Ագուլիս։

Օգոստ. 8-ին, կովկասյան իսլամական կառավարության կողմից Օրդուբադ քաղաքի և շրջանի զինվորական կառավարիչ նշանակվեց թուրքական բանակի սպա Խալիլ բեյը, որը իր ձեռքի տակ ուներ 5—6 թուրք, սպաներ, 12 թնդանոթ, 20—22 գնդացիր և հազարի չափ տեղական թաթար զինվորներ։ Օրդուբադ հասնելուն պես նա հրատարակեց հետևյալ հայտարարությունը՝ ռուսերեն և թուրքերեն լեզուներով.

«Կովկասյան Իսլամական կառավարության կողմից ես նշանակված եմ Օրդուբադ քաղաքի և շրջանի զինվորական կառավարիչ և Աստծու օգնությամբ այսօրվանից ստանձնեցի իմ պարտականությունների կատարումը։

Կովկասյան Իսլամական կառավարությունը ցանկանում է, որ իր բոլոր հպատակները, առանց կրոնի և ազգության խտրության, ապրեն խաղաղ, անդորր կյանքով և արյունահեղություն չլինի։

* Գողթան շրջանի դեպքերը գրելիս՝ օգտվել եմ նաև Քոչարյանի ձեռագիր հուշերից և Ագուլիսի հաշտարար դատավոր Հ. Տեր-Անտոնյանի զեկուցումից։

** Որից 10-ը գտնվում են լեռնային շրջանում։

*** Անգորա— իմա Անկարա։

Մեր սահմաններում գտնվող հայ գյուղերը, եթե կցանկանան հպատակվել մեզ, պետք է հանձնեն զենքերը, որովհետև բոլոր մահմեդական գյուղերը, մինչև այժմ ենթարկվել են և ենթարկվում են հայերի հարձակման։ Այն օրվանից, որ ես Նախիջևանի շրջանում եմ, ամբողջ Անդրկովկասում, իմ հավաքած ստույգ տեղեկություններով, ավերված են 300 մահմեդական գյուղեր, այնինչ հայկական գյուղեր, միայն 3-ից մինչև 5։

Այսպես, ուրեմն, փաստերը ցույց են տալիս, որ հանգիստը և խաղաղությունը խանգարող հանդիսանում են ոչ թե մահմեդականները, այլ հայերը, որի պատճառով մենք, այսինքն՝ Կովկասյան Իսլամական կառավարությունը, չենք կարող կատարելապես հավատալ հայերին։

Զենքերը հանձնող հայերը կլինեն մեր թանկագին հպատակները, որոնց պատիվը, կյանքն ու գույքը կգտնվեն մեր հովանավորության տակ. նրանց վերաբերմամբ ամենափոքրիկ ցույցն իսկ չի թույլատրի։ Զենքեր չհանձնող հայ գյուղերը կհամարվեն կառավարության թշնամի և նրանց դեմ ձեռք կառնվեն խիստ միջոցներ»։

Շնորհիվ իրենց ճկուն բնավորության, գողթնեցիք կարողացան գլուխ պահել «Իսլամական կառավարության» իշխանության տակ։

1919 թ. մայիսին, Նախիջևանի գրավումից հետո, Գողթնը դարձավ նրա երեք գավառներից մեկը՝ Ագուլիս կենտրոնով։ Ընդ. նահանգապետ Գ. Վարշամյանը Գողթնի գավառապետ նշանակեց Աշոտ Մելիք-Մուսյանին, իսկ միլիցիապետ՝ երիտասարդ ու քաջ սպա Մովսես Գյուլնազարյանին։ Սրանք նոր էին հասել իրենց պաշտոնավայրը, երբ տեղի ունեցավ մահմեդական ապստամբությունը Նախիջևանում, և Գողթնը նորից կտրվեց Հայաստանից։

Օգոստ. 3-ին, Ա. Մելիք-Մուսյանն ու Մ. Գյուլնազարյանը, Վերին Ագուլիսից, Հայաստանի Խորհրդարանին, Հայաստանի կառավարության, Գորիսի, Ղափանի, Գենուազի պետական ներկայացուցիչներին, Ազգային խորհուրդներին և ի լուր համայն հայության արին հետևյալ դիմումը.

«Նախիջևանն ընկավ. շրջանի հայության բավական խոշոր մասը սրի է քաշված, Արաքսի մեջ նկատված են մեծ թվով դիակներ։ Նախիջևանի մեր զորքերը, ըստ թուրքական լուրերի, կոտորածից ազատված հայության մնացորդների հետ նահանջել են դեպի Դարալագյազ։ Նույն աղբյուրներից իմանում ենք, որ Նեհրամում հազարից ավելի հայ գերյալներ կան։ Ջուլֆայում ու Ջուղայում խոշոր դեպքեր տեղի չեն ունեցել, ժողովրդի մեծագույն մասը և մեր փոքրաթիվ զորքը անցել են Պարսկաստան։ Ազա և Դեր գյուղերը անվնաս գաղթեցին Ցղնա։ Երնջակի ձորում, ականատեսների պատմելով, տեղի են ունեցել սոսկալի կոտորածներ։ Ղազանչիից ազատվել և Գողթն են ապավինել մոտ 500

հոգի։ Մի օր տևող կռիվներից հետո Գյազը, Փորադաշտը և Շուռուիը շատ քիչ զոհեր տալով՝ քաշվել են Գողթն։

Հուլ. 25-ից Գողթնում ուժեղ կռիվներ են տեղի ունեցել։ Վերին գյուղերում (Փառակա-Բիստ) հաջողություններն առայժմ մերոնց կողմն են։ Տանակերտը 8 օր է պաշարման վիճակի մեջ է. այստեղ տեղի են ունենում դիրքային անընդհատ կռիվներ։ Պաշարված կարելի է համարել Վերին և Ներքին Ագուլիսները։ Թուրքերը խոշոր պատրաստություններ են տեսնում մաքրելու Գողթնը հայությունից։ Ժողովուրդը աննկարագրելի նեղության մեջ է հացի կողմից։ Արտաքին աշխարհից կտրված ենք բառի ամենալայն իմաստով։ Մի քանի անգամներ սուրհանդակներ ենք ուղարկել Գենուազ օգնություն և լուր ստանալու համար, բայց մինչև օրս չեն վերադարձել։ Գողթնը լքված իր հարազատներից և կտրված արտաքին աշխարհից, իր անելիքների մասին ճիշտ հաշիվ տալ իրեն չի կարող։ Ապավինել թուրքերի ողորմածությանը՝ ներկա հանգամանքներում անհնարին է։ Ի սեր Աստծո, ցույց տվեք մեզ փրկության ճանապարհ։ Սեփական միջոցներով ամենաշատը 10—15 օր ևս հազիվ կարող ենք պահպանել ներկա դրությունը։ Սարսափելի չէ մահը... երկրորդ տարին է, որ մենք արդեն հաշտվել ենք այդ մտքի հետ։ Գողթնը կմեռնի հերոսի մահով, սակայն, թո՛ղ ամբողջ աշխարհը իմանա, որ այս անգամ մեզ մահվան դուռ հասցնողը Երևանի մեր կառավարությունն է։ Փրկված է Գողթնը, եթե մոտ օրերում 400 սրտացավ զինվոր մեզ օգնության հասնի»։

Հուսահատի ճիչ էր այս։ Գողթնում չգիտեին, որ Երևանը ինքն էլ օրհասական ժամեր էր ապրում և նույնպես ճչալով՝ օգնություն սպասում արտաքին աշխարհից։

Բայց և այնպես, կառավարությունը շտապեց կազմակերպել Գողթնի օգնության գործը. մի կողմից նյութական միջոց ու պարեն փութացրեց, մյուս կողմից՝ հանձնարարվեց Գ. Նժդեհին ու բաշգառնեցի հայտնի խմբապետ Ղազար Քոչարյանին կազմել մի զորամաս՝ Գողթն ուղարկելու համար։ Մի քանի շաբաթից զորամասը արդեն պատրաստ էր, և սեպտ. 4-ին, Ղազարի հրամանատարության տակ, դուրս եկավ Երևանից ու հոկտ. 2-ին, Դարալագյազի ու Զանգեզուրի վրայով, հասավ Գողթն։

Տխուր էր այնտեղի կացությունը։ 6 լեռնային գյուղերը միայն մնացել էին ազատ, մյուսները կամ տեղահանվել ու կոտորվել էին, կամ ապրում էին ջարդի մղձավանջի տակ։ Ազատ մնացած գյուղերն էին Բիստ, Ալահի, Նասրրվազ (Մեսրոպավան), Փառակա, Ցղնա և Ռամիս, որոնք գտնվում էին պաշարված վիճակում։ Ագուլիսները համակերպվել էին թրքական իշխանությանը, հեռացրել էին իրենց միջից կռվող ուժերը և դրանով էին ուզում պահել իրենց գոյությունը։ Տիրում էր պարենի անասելի տագնապ. հարաբերության և մթերք ստանալու միակ ճանա-

պարհը Ղափուչուխի լեռնանցքն էր՝ 12 853 ոտք բարձրությամբ, այն էլ վտանգված էր Օխչի ձորի ապստամբ թուրքերի կողմից։

Հայկական զորքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրությունը։ Ղազարը Մովսես Գյուլնազարյանի և տեղական ուժերի գործակցությամբ կազմակերպեց շրջանի ինքնապաշտպանությունը՝ 7—800 կովողներ, 2 թնդանոթ, 6 գնդացիր, և այնուհետև Գողթնը ո՛չ միայն դիմացավ թրքական հարձակումներին, այլև ինքն էլ դարձավ նախաձեռնարկ։ Նոյեմբերի կեսերից սկսվեցին անվերջ կռիվներ գողթնեցիների և թուրքերի միջև. նոյեմբ. 12-ին թշնամին առաջ խաղաց Բիստի վրա ու հետ շպրտվեց. Նոյեմ. 25-ին թուրքերն ավելի մեծ ուժերով, երկու զորասյունով, հարձակվեցին Բիստի, Ալահիի, Մեսրոպավանի և Ռամիսի վրա։ Տեղի ունեցան տաք կռիվներ. թշնամին պարտված՝ դիմեց խուճապային փախուստի՝ հայերի ձեռքը թողնելով առատ ավար, գերիներ ու մի դրոշակ։

Իր վրեժը, սակայն, մի ամիս հետո լուծեց Վերին Ագուլիսից։ Օխչի ձորի ու Գեղվա ձորի ավերից հետո, Օրդուբադի ու Նախիջևանի թրքությունը, կազմակերպեց Ագուլիսների թալանն ու կոտորածը։ Մանրամասնությունները Երևան հասցրեց Գողթնի հաշտարար դատավոր Հ. Տեր-Անտոնյանը, որի պատմությունը նյութ ծառայեց բազմաթիվ բողոքների ու հեռագրերի փոխանակության Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունների միջև։

Դեկտ. 18-ին Օրդուբադի և շրջանի զինված թուրքերը հարձակվեցին ու սկսեցին թալանել Ներքին Ագուլիսը։ Ազգաբնակչությունը թողնելով իր ամբողջ ունեցվածքը՝ փախավ Վերին Ագուլիս։ Վերջինիս ներկայացուցիչները դիմեցին Օրդուբադ, թուրքական հրամանատար Էդիֆ բեյին՝ խնդրելով ապահովել հայերի կյանքը։ Էդիֆ բեյը անձամբ եկավ Վ. Ագուլիս ու խոստացավ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել Ագուլիսի պաշտպանության համար։ Սակայն, շրջակայքում հետզհետե սկսվեցին հավաքվել թրքական զինված խմբեր։ Ագուլիսցիների դիմումների վրա՝ Էդիֆ բեյը հանգստացնում ու երդվում էր անվերջ, թե հայերի գլխից մի մազ անգամ չի վնասվի։

Դեկտ. 25-ին Վ. Ագուլիս եկան Օրդուբադի շեյխն ու գավառապետ Թայիրովը։ Սրանց հասնելուց մի ժամ հետո, քաղաքում լսվեց հրացանաձգություն և աղմուկ. թուրք զինված խուժանը թալանում ու կոտորում էր հայերին։ Վառվեց Սարգիս Հախնազարյանի տունը, և հրդեհը սկսեց տարածվել։ Հայերը շեյխի առաջնորդությամբ փոխադրվեցին թրքական թաղը։ «Գիշերը,— պատմում է Տեր-Անտոնյանը,— հրդեհը բռնեց ամբողջ քաղաքը, և քաղաքում խրախճանք էր կատարվում։ Առավոտյան գավառապետ Թայիրովը հայտարարեց, որ ինքը գնում է Օրդուբադ դիմավորելու համար խալիլ փաշային, որը, իբր թե, մեկնում է Պարսկաստան։ Եվ ասաց, որ այնտեղից կհայտնե, թե ո՞ւր պետք է ուղարկել հայ գաղթականներին՝ հայկական Ցղնա գյո՞ղը թե Պարսկաստան։ Նրա գնալուց հետո, ժամը 12-ի մոտերը, հայտարարվեց, որ կարգադրության համաձայն, հայերը պիտի ուղարկվեն Ցղնա և որ նրանց ուղեկցելու է ինչ-որ Սաթթար (Դոնիս գյուղացի, հայտնի ավազակ, տաժանակիր աշխատանքից փախած)։ Ազգաբնակչությունը երբ որ իմացավ, սարսափահար եղավ. դիմեց Էդիֆ բեյին, որ ինքը ուղեկցե հայերին։ Բայց Էդիֆ բեյը պահվել էր սենյակում ու խուսափում էր հայերից։ Ես վազեցի ոստիկանապետ Մունշիևի մոտ (15 տարի առաջ եղել էր իմ գրագիրը), որը պահեց ինձ իր մոտ։ Երբ բնակիչները մտրակներով դուրս քշվեցին, ես լսեցի հրացանաձգություն, ոչ թե անկարգ, այլ հաջորդաբար մի մազարկերով։ Համազարկերը շարունակվեցին մոտ երկու ժամ։ Ո՛չ մի կասկած չկար, որ համազարկերը տրվում էին կատարելապես կազմակերպված զորամասերի կողմից։ Երբ համազարկերը լռեցին, իմ պահված սենյակը բերին 30-ի չափ գեղեցիկ հայուհիներ՝ օրիորդներ ու տիկիններ։ Սկսեցին սենյակ մտնել ոստիկանապետ Մունշիևը, նախկին տանուտեր Վահաբ էֆենդին, Սաթթարը և ուրիշներ, որոնք մեկ-մեկ, երկու-երկու ընտրում ու դուրս էին տանում գեղեցիկ հայուհիներին՝ նախօրոք խլելով նրանց մոտի զարդեղեններն ու դրամը։ Դուրս տարված հայուհիներին բռնաբարում էին հարևան սենյակում։ Նույն սենյակում, մահճակալի տակ, պառկած էր թալանված Սարգիս Մարխանյանը, որի կնոջ ու երկու զավակներին սպանել էին հենց իր աչքի առջև։ Նրա խորհուրդով, մենք դուրս եկանք հետևի դռնից— ոչ ոք չէր հսկում, ամենքը զբաղված էին բռնաբարություններով— և այգիների միջով հասանք ավերակ։ Դանակերտ գյուղը ու այստեղից էլ Ցղնա ու Զանգեզուր, որտեղից ես եկա Երևան։ Ես ինքս տեսա, թե ինչպես թալանին ու սպանություններին մասնակցում էին տեղական թուրքերը, որոնցից կարող եմ տալ վաճառականներ Համզայի, Հյուսեյին Կուլիի, Իբրահիմի և ուրիշների անունները։ Կոտորածն ուներ բոլորովին կազմակերպված բնույթ։ Անկասկած, նախաձեռնությունը բխում էր բարձր իշխանությունից, իսկ թալանին ու կոտորածին մասնակցում էր տեղական պաշտոնեությունը։ Իհարկե, եթե իշխանությունը կամենար, ո՛չ թալան կլիներ և ո՛չ կոտորած»*։

Ագուլիսի կոտորածը մեծ հարված էր հայ ժողովրդի համար, և հասկանալի է այն հուզումն ու ցասումը, որ առաջ բերեց հայկական բոլոր շրջաններում։ Լուրը Երևան հասավ դեկտ. 29-ին, Գորիսից։ Երկու օր հետո, դեկտ. 31-ին, հնդկա-եվրոպական հեռագրագծով հեռագիր ստացվեց Թավրիզից, թե «քարտեզի վրա Ագուլիսն այլևս գոյություն չունի, Ներսես եպ.»։ Հունվ. 4-ին Մելիք-Թանգյան եպ.-ը հաղորդեց, թե՝

* Տե՛ս Զանգեզուրի ու Գողթնի «Գործը» Հ. Հ. Պատվիրակության դիվանում։

«ամենքը կոտորված են։ Մանրամասնությունները թույլ չեն տալիս»։

Նույն օրերին Հայաստանի կառավարությունը Բաքվից էլ տեղեկություն ստացավ, որ այնտեղ արտ. գործ. նախարարի օգնական Խան Թեքինսկիի նախաձեռնությամբ հատուկ խորհրդակցություն է գումարվել, որին մասնակցել էին և Ուսուպբեգովն ու Խան Խոյսկին և որտեղ մշակվել էր Հարավային Զանգեզուրը, Գողթնը, Օրդուբադն ու Նախիջևանը Ազրբեջանին ու Թուրքիային հավատարիմ մարտական մահմեդական տարրերով բնակեցնելու և այդ նպատակով, առաջին հերթին, «Նախիջևանի շրջանի հարավային մասը հայ տարրից մաքրագործելու» ծրագիրը։ Ագուլիսի կոտորածը այս ծրագրի սկզբնական քայլն էր. Ներքին Ագուլիսում կոտորվեց մոտ 400 մարդ, Վերին Ագուլիսում 1000։ Ողջ մնացին միայն մի քանի տասնյակ կանայք ու օրիորդներ, որոնք նվեր տրվեցին թուրք սպաներին ու կոտորածի ղեկավարներին. այսպես, վաճառական Փանյանի 16-ամյա գեղեցկուհի աղջիկը բաժին հասավ Էդիֆ բեյին։

Հայաստանի կառավարությունը ստացված տեղեկությունները օրը օրին հաղորդեց գնդ. Հասկելին ու դաշնակիցների ներկայացուցիչներին և բողոքներ ուղարկեց Բաքու։ Ազրբեջանի կառավարությունը սկզբում ուրացավ եղելությունը, ապա հեռագրեց, թե «լուրերը չափազանց մեծացված են» և, ի վերջո, հունվ. 23-ին միայն, Հայաստանի կառավարության վճռական մերկացումների ու բողոքների տակ, ստիպված եղավ ընդունել փաստը, որը, սակայն, արդարացնում էր նրանով, որ կոտորածը եղել է Էջմիածնի, Երևանի ու Զանգեզուրի շրջաններից հայերի ձեռքով քշված մահմեդական դաղթականների կողմից։

Հայկական բողոքները իրական դարման չհասցրին և Հասկելից ու դաշնակից ներկայացուցիչներից. նրանք սահմանափակվեցին միայն ցավակցություններով, պաշտոնական նկատողություններով, խորհուրդներով ու սաստումներով և գործնական միջամտությունից խուսափեցին. երկու գյուղ էր ավերվել, 1000—1500 մարդ էր կոտորվել՝ արժե՞ր դրա համար աշխարհ իրար խառնել...

Գողթնեցիք իրենք, սակայն, այլ կերպ էին մտածում։ Կոտորածի լուրն առնելուն պես՝ Ղազարի մարտական ուժերը շարժման մեջ դրվեցին*, և դեկտ. 27-ին, փոխվրեժի զայրույթով լցված, հարձակվեցին Փառակայից 3 վերստ հեռու գտնվող Բլավ ավազակաբարո թուրք գյուղի վրա, գիշերային գրոհով գրավեցին ու ոչնչացրին նրան։ Ու այդուհետև ամիսներ շարունակ, անընդհատ հարձակումներ էին գործում շրջակա մահմեդականության վրա՝ ահ ու սարսափի մատնելով, մանավանդ օրդուբադցիներին։ Փոխվրեժը օրդուբադցիներից՝ դարձավ Գողթնի ազատ մնացած վեց գյուղերի ոգևորության աղբյուրը։ Նույն նպատակի համար քայլեր էին առնվում և Ղափանում Գ. Նժդեհի կողմից։ Մի քանի ամիս հետո, Ագուլիսի վրեժը լուծվեց։

* Հենց ագուլիսցիների պահանջով ինքնապաշտպանողական ուժերի ազդեցությունը չէր տարածվում Ագուլիսների վրա. այդ ձևով հույս ունեին մեղմել թուրքերին և արժանանալ նրանց բարեհաճությանը։ Բնորոշ է, որ այստեղ էլ առաջին սպանվողները եղան աչսպես կոչված «Քրքասեր» հայերը։

ԳԼՈՒԽ ԻԶ

ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՃԻԳԵՐ

Որքան և ծանր լինեին թուրք-ազրբեջանյան դավերի հետևանքները Հայաստանում, այնուամենայնիվ, անզոր էին կանգնեցնելու երկրի կենսական ուժերի զարգացումը. հայ ժողովուրդը մի ձեռքով պայքարում էր դավադրությունների դեմ, մյուս ձեռքով՝ վերաշինում ու կարգավորում իր նորաստեղծ պետությունը։ Հերոսական ճիգ, սիզիֆյան աշխատանք թափեց նա, որ ապարդյուն չկորավ։ 1919 թ. տարվա ընթացքում Հայաստանը ո՛չ միայն չխորտակվեց մահմեդական գրոհից, այլև մի շարք վայրերում տվեց շշմեցնող հակահարվածներ և ունեցավ աչքի ընկնող գործունեություն արտաքին ու ներքին կյանքի ասպարեզներում։ Արտաքին ասպարեզում, հայ-վրացական պատերազմի դադարելուց անմիջապես հետո Եվրոպա մեկնեց Հայաստանի պատվիրակությունը՝ հայկական խնդիրը Հաշտության վեհաժողովին ներկայացնելու համար։ Փետրվարի 4-ին Ա. Ահարոնյանը արդեն Փարիզում էր, ուր հայկական պահանջները արդեն վերջնական ձևակերպում էին ստացել Ազգ. պատվիրակության կողմից։ Այդ պահանջները չէին համապատասխանում Երևանում մշակված պայմաններին. Երևանում որոշվել էր Վեհաժողովից պահանջել չորս վիլայեթների հողամասերից բաղկացած Հայաստան՝ ելքով դեպի Սև ծով, Ազգ. պատվիրակությունը գծել էր ծովից ծով Հայաստան՝ Մերսինից մինչև Շուշի։ Եվ այդ էլ ոմանց քիչ էր թվում։ Գաղութահայ մտայնությունը Ա. Ահարոնյանին էլ հարկադրեց տալ իր ստորագրությունը Ազգ. պատվիրակության մշակած ծրագրին, և փետր. 12-ին, երկու պատվիրակությունների նախագահների ստորագրությամբ, հայկական պահանջները ներկայացվեցին Հաշտության վեհաժողովին։

Հայերը պահանջում էին՝

1. Ճանաչումը հայկական անկախ պետության, որ պիտի բաղկանար 1) Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի և Տրապիզոնի 7 վիլայեթներից՝ դուրս ձգելով Տիգրիսի հարավակողմը և Օրդու—Սեբաստիա գծից դեպի արևմուտք գտնվող շրջանները. 2) Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշ, Սիս, Ջեբել—Բերեքեթ և Ադանա՝ Ալեքսանդրեթով հանդերձ. 3) Կովկասի Հայկական Հանրապետությունը՝

Երևանի ամբողջ նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Կարսի նահանգը՝ բացառությամբ Արդահանից հյուսիս գտնվող շրջանի։

2. Հայկական պետությունը դրվի դաշնակից պետությանց և Միացյալ Նահանգների կամ Ազգերի լիգայի հոգատարության տակ։

3. Հաշտության վեհաժողովի կողմից պետք է մասնավոր մանդատ արվի պետություններից մեկին, որն իր օժանդակությունը պիտի ընծայի Հայաստանին՝ փոխանցման մի ժամանակաշրջանի համար։ Այդ պաշտոնն ստանձնող պետության ընտրությունը պիտի լինի համախորհուրդ Հայկական համագումարի հետ, որ այժմ գումարված է Փարիզում և որը ներկայացնում է ամբողջ հայ ազգը։ Մանդատի տևողությունը լինելու է առնվազն 20 տարով։

4. Հատուցում ջարդերի, տարագրության, հափշտակության և ավերումների պատճառած վնասների։ Հայաստանը պատրաստ է իր բաժինը ստանձնելու օսմանյան նախապատերազմական պարտքից։

5. Մանդատ առնող պետությունը պետք է ստիպի թուրքերին՝ պարպել հայկական հողերը, ձեռնարկել բնակչության ընդհանուր զինաթափության, պատժե ջարդարարներին ու հայերի վերաբերմամբ անիրավության գործողներին, երկրից հեռացնե կարգը խանգարող տարրերին, իրենց տեղերն ուղարկե մուհաջիրներին և այլն։ «Հայկական ծագում ունեցող յուրաքանչյուր անհատ, որ հաստատվել է կամ բնիկ դարձել օտար երկրում, պետք է լինի ազատ հինգ տարվա ընթացքում ընտրելու նոր հպատակություն թե՛ իր և թե՛ իր անչափահաս զավակների անունով և դառնա հայ քաղաքացի՝ նախապես գրավոր կերպով տեղեկացնելով երկու երկրների ձեռնհաս իշխանություններին»։

Այս պահանջները կազմեցին հայ քաղաքական շրջանների հետապնդման և հայ ժողովրդի ոգևորության առարկան։ Գործնականորեն հաշվի առնվեցին նրանք միայն մի տարի հետո, երբ Վեհաժողովի սեղանի վրա եկավ Օսմանյան կայսրության հարցը։ Երկու պատվիրակությունների դերը եղավ մտքեր պատրաստել այդ ուղղությամբ և Վեհաժողովի շրջանակներում ու պետությունների մոտ դիմումներ կատարել հօգուտ հայկական պահանջների։

Հայկական պատվիրակությունները առանձնապես մեծ ճիգ էին թափում՝ հայկական հարցով հետաքրքրելու Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները Վեհաժողովում և հատկապես ինքը, նախագահ Վիլսոնը սրտին մոտիկ էր ընդունում հայերին ու տրամադրություն ցույց տալիս ստանձնելու Հայաստանի մանդատը։ Եթե որևէ մեկ մանդատ ընդունելու լինի, Ամերիկան առաջինը կընդունե Հայաստանի մանդատը, այս էր ամերիկացիների բանաձևը։ Եվ, անշուշտ, վիլսոնյան շրջանակը կկամենար, որ Ամերիկան լինի Հայաստանի հոգատարը, և ինչո՞ւ միայն Հայաստանի. գուցե և Անդրկովկասի և ողջ Փոքր Ասիա-

յի։ Հայկական «ծովածավալ կայսերապաշտության» մեջ, ինչպես կծու կերպով հեգնում էր ֆրանսիական կիսապաշտոնական «Թանը», քիչ տեղ չէր բռնում և վիլսոնյան ներշնչումը՝ ուղղակի կամ անուղղակի։

Նախագահ Վիլսոնի նախաձեռնությամբ, 1919 թ. հունվ. 30-ին, Վեհաժողովը վճռեց ազատել Հայաստանը և նշանակել հոգատար (մանդատեր)։ Մարտի 20-ին դարձյալ Վիլսոնի առաջարկությամբ Վեհաժողովը որոշեց Մերձավոր արևելք ուղարկել Ամերիկայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձախումբ՝ քննելու համար Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները։ Փաստորեն գնացին միայն Ամերիկայի ներկայացուցիչները՝ Քինգն ու Քրեյնը. մյուս կառավարությունները ներկայացուցիչ չնշանակեցին։ Քինգի ու Քրեյնը հարցաքննություն կատարեցին Պոլսում հունիսի 10-ից մինչև հուլ. 21 և եկան այն եզրակացության, որ նախկին Օսմանյան կայսրությունից պետք է կազմել 3 նոր պետություն՝ Հայաստան, Թուրքիա և Պոլիս, որոնցից յուրաքանչյուրը առանձին-առանձին և բոլորը միասին պետք է հանձնվեն մի պետության հոգատարության (մանդատ)։ Մասնավորապես դժվար էր երևում Հայաստանի հոգատարությունը, որի ստանձնումը պայմանավորվում էր նրանով, որ Պոլիսն ու Թուրքիան էլ դրվեն միևնույն պետության հոգատարության տակ։ Իրենց տեղեկագրում Քինգն ու Քրեյնը առաջարկում էին, որ Հայաստանի, Թուրքիայի և Պոլսի մանդատը տրվի Ամերիկային։

1919 թ. ամառը նախագահ Վիլսոնը մի նոր հանձնախումբ ուղարկեց Առաջավոր Ասիա՝ քննելու համար մանդատի պայմանները։ Հմուտ մասնագետների բազմամարդ մի առաքելություն էր այդ զորավար Հարբորդի գլխավորությամբ։ Առաքելությունը իր քննական պտույտը սկսեց Պոլսից, անցավ Կիլիկիա, Հյուսիսային Սիրիա, Տիգրանակերտ, Խարբերդ, Սըվազ, Երզնկա, Կարին, Կարս։ Ամեն տեղ հարցաքննեց ազգաբնակչության ներկայացուցիչներին, հարաբերության մեջ մտավ տեղական իշխանությունների հետ, հավաքեց պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնաշխարհագրական, մշակութային, ռազմագիտական և այլ կարգի տեղեկություններ։ Սըվազում զոր. Հարբորդը տեսակցություն ունեցավ Մուստաֆա Քեմալի հետ, որը նոր էր ձեռնարկում «Միլլի» շարժմանը։ Հարբորդի ասելով՝ Քեմալը խնդրել է հայտնել Հայաստանի կառավարությանը, որ այս վերջինը ձեռք քաշե մեծ պետություններից և անմիջական համաձայնության գա Թուրքերի հետ։

Հարբորդի առաքելությունը, Կարսից, Կաղզվան—Կողբ—Սուրմալուի ճանապարհով հասավ Երևան և ջերմ ընդունելություն գտավ կառավարության ու ժողովրդի կողմից։ Առաջուց արդեն ուղարկված էին ընդարձակ հարցացուցակներ, և կառավարությունը պատրաստել էր պահանջված նյութը։ Տեղի վրա էլ Հարբորդն ու իր ընկերները կատարեցին մանրակրկիտ քննություն և նույն ջերմությամբ ճանապարհ դրվեցին դեպի Թիֆլիս։ Այստեղից անցան Բաքու և սեպտեմբերի վերջին մեկնեցին Փարիզ, որտեղից զոր. Հարբորդը «Մարթա Վաշինգտոն» նավով վերադարձավ Ամերիկա և նավի վրա էլ պատրաստեց իր տեղեկագիրը՝ ստորագրված 16 հոկտ. 1919 թ.*։

Այդ տեղեկագրի մեջ զորավար Հարբորդը խտացրել էր երեսուն օրվա ճամփորդության ընթացքին հավաքած տեղեկություններն ու հանած եզրակացությունները։ Շատ էլ մխիթարական չէին նրանք հայերի համար։ Նա պնդում էր, որ ծրագրվող Հայաստանում հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ այժմ՝ առավել ևս, որ հայ ժողովուրդը օժտված է դրական հատկություններով, բայց չգիտե հարմարվել իր շրջապատին։ Հայերը պետք ունեն արտաքին հոգատարության, և Միացյալ Նահանգները պետք է ընդունեն հոգատարությունը, բայց ո՛չ միայն Հայաստանի։ Հարբորդը առաջարկում էր միացնել ամբողջ Թուրքահայաստանը, Անատոլիան, Պոլիսը, Թրակիան և Անդրկովկասը մեկ մանդատի տակ։ Այդ դեպքում Ամերիկան կարող է ստանձնել հոգատարությունը։ Հնդուստ մանդատն ընդունելու Հարբորդը բերում էր 14 հիմք, ընդդեմ՝ 13-ի։ Մի եզրակացություն, որ, իհարկե, ոչնչով չէր կարող ուժեղացնել Վիլսոնի դիրքը և, ընդհակառակը, ջուր էր լցնում վիլսոնյան քաղաքականության թշնամիների ջրաղացին։

Եվրոպայում արված քայլերին զուգընթաց՝ Հայաստանի կառավարությունը աշխատում էր հարևանների հետ էլ համակեցության եթե ոչ լավագույն, գեթ տանելի ձևեր ստեղծել։ Այս նպատակով կատարվում էին մասնավոր տեսակցություններ, տեսակետների գրավոր փոխանակություններ, խորհրդաժողովներ և այլն։ Այս ուղղությամբ մասնավորապես եռանդուն գործունեություն էին ցույց տալիս Հայաստանի Հանրապետության Բաքվի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեզդադյանը և Թիֆլիսի ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանը՝ երկուսն էլ հարդված, ձեռնհաս և ազդեցիկ գործիչներ, որոնց ներկայությունը Թիֆլիսում ու

---

* Այս տեղեկագիրը հրատարակվեց 1920 թվին ամերիկյան ծերակույտի կողմից։ Բացի տեղեկագրից առաքելությունը կազմել էր և 12 մասնագիտական տեսություններ. 1) Քաղաքական գործոններն ու խնդիրները. 2) Թուրքիայի և Անդրկովկասի կառավարությունը. 3) Թուրքիայի և Անդրկովկասի պետական և մասնավոր ֆինանսները. 4) Նույն երկրների առևտուրն ու արդյունաբերությունը. 5) Հանրային առողջությունն ու առողջապահությունը. 6) Ազգաբնակչությունը, արդյունաբերության հատկությունները, կենցաղը. 7) Կլիման, բնական հարստությունները, անասնաբուծությունը, երկրագործությունը. 8) Աշխարհագրությունը, հանքային գործը և սահմանները. 9) Մամուլը Թուրքիայում և Անդրկովկասում. 10) Մանդատատիրող զինվորական անելիքները. 11) Հաղորդակցության միջոցները Փոքր Ասիայում և Անդրկովկասում. 12) Կենսագրություններ։

Բաքվում, մանավանդ Տ. Բեգզադյանի հմուտ ներկայացուցչությունը խոշոր օգուտներ էր բերում Հայաստանին։ 1919 թվի վերջերին Լ. Եվանգուլյանը*, հիվանդության պատճառով, պաշտոնից հրաժարվեց, և նրա տեղը անցավ Տ. Բեգզադյանը, իսկ վերջինիս փոխարինեց Խորհրդարանի անդամ Մարտ. Հարությունյանը։

Պետք է այստեղ արձանագրել— հարգանքով ու երախտագիտությամբ— և ա՛յն անգնահատելի ծառայությունը, որ մատուցանում էր Հայաստանին վերջին երեսնամյակի հայ ամենաինքնատիպ գործիչներից մեկը՝ Ստ. Մամիկոնյանը՝ Մոսկվայի Հայկական կոմիտեի համբավավոր նախագահը։ Նաև մի ուրիշ վաստակավոր գործիչ՝ Սմբ. Խաչատրյանը, զրեթե մշտական պատվիրակներն էին հայկական կառավարության՝ Թիֆլիսում գումարվող խորհրդաժողովներին։ Նա իր պաշտոնը կատարում էր առանձին սիրով ու ձեռնհասությամբ։ Անձնվեր հայրենասեր, զարգացած և իմացական հարուստ կարողություններով օժտված գործիչ, ուժեղ ու հետևողական կամքի տեր՝ նա կարողանում էր հայկական շահերը պաշտպանել այնպես, ինչպես չէր կարողանում ուրիշ ո՛չ մեկը իր միջավայրում։ Ստ. Մամիկոնյանը ամբողջ կյանքում մնաց հավատարիմ իր գաղափարներին և հայրենասերի դառն բաժակը քամեց մինչև վերջին մրուրը։ Մեռավ Թիֆլիսում, հետին աղքատության մեջ՝ մերժելով նյութական աջակցությունը հայ բոլշևիկների, որոնց համարում էր, Թուրքերից հետո, հայ ժողովրդի վատթարագույն թշնամին։

Հեշտ բան չէր Հայաստանի շահերի ներդաշնակումը հարևանների հետ։ Ո՛չ միայն սահմանային ու գործնական ուրիշ խնդիրներ էին բաժանում հայերին ազրբեջանցիներից ու վրացիներից, այլև միջազգային քաղաքականության գնահատությունը, օրիենտացիայի խնդիրը, Կովկասի ապագայի ըմբռնումը և այլն։ Մինչ հայերը իրենց ազգային պահանջների գոհացումը որոնում էին դաշնակիցների հաջողության և Թուրքիայի քայքայման մեջ, կովկասյան մահմեդականները դժբախտություն էին համարում Թուրքիայի պարտությունը և ամեն կերպ աշխատում էին ուժեղացնել նրա ազդեցությունը Կովկասում։ Մինչ, մյուս կողմից, ազրբեջանցիներն ու վրացիները անվերապահ կռիվ էին հայտարարել հյուսիսին՝ խորհրդային թե կամավորական Ռուսաստանին, առհասարակ, ռուսության, հայերը դեռ հոգով Ռուսաստանի հետ էին, բնազդորեն Ռուսաստան էին որոնում։ Հայաստանի ներկայացուցիչները զոր. Դենիկինի ու Կոլչակի մոտ արտահայտությունն էին այդ վերաբերումի։ Եվ, վերջապես, վրացիները, բայց, մանավանդ, ազրբեջանցիները իրենց

* Լ. Եվանգուլյանը վախճանվեց 1920-ին։ Նա Թիֆլիսի հայ բուրժուական մտավորականության լավագույն դեմքերից էր՝ զարգացած ու կենցաղագետ, որ վրացիների ու հայերի մեջ ունեցած իր ազդեցությամբ և օտարների շրջանում վայելած հարգանքով՝ Հայաստանը ներկայացնում էր վայել արժանապատվությամբ։

համար ձեռնտու էին համարում և համառորեն առաջ էին մղում կոնֆեդերացիայի ստեղծումը կովկասյան երկրներից՝ ուղղելով միացյալ Կովկասը Ռուսաստանի դեմ, հայերը, պահելով հանդերձ արտաքին համակրական վերաբերումը դեպի կոնֆեդերացիայի գաղափարը, ըստ էության հակառակ էին նրան։

Կոնֆեդերացիայի խնդիրը առաջին անգամ եկավ կովկասյան չորս հանրապետությունների անդրանիկ խորհրդաժողովին, որ բացվեց ապրիլի 27-ին Թիֆլիսում՝ մասնակցությամբ Հայաստանի կողմից արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանի, արդ. նախ. Ս. Հարությունյանի և Հ. խորհրդի անդամ Ստ. Մամիկոնյանի, Վրաստանի կողմից՝ արտ. գործ. նախարար Ե. Դեգեչկորիի, ներք. գործ. նախ. Ն. Ռամիշվիլիի, և ելմբտական նախարար Կանդելակիի. Ազրբեջանի կողմից՝ վարչապետ Խան Խոյսկիի, Թիֆլիսի դիվ. ներկ. Մ. Ջաֆարովի և Խաս-Մամեդովի. Լեռնականների միության կողմից՝ Կանտեմիրովի, Բուգդաևի և Պանգուրաևի։

Խորհրդաժողովը տևեց ավելի քան 3 շաբաթ, բայց և ո՛չ մեկ հարցի շուրջ համաձայնության չեկավ։ Օրակարգի հարցերն էին՝ սահմանաբաժանման խնդիրը, քոչը, գաղթականության վիճակի կարգադրությունը, հաղորդակցության ու ելևմտական միջոցները, դիվանագիտական ու պաշտպանողական համագործակցությունը և այլն։ Բոլոր հիմնական հարցերը համարյա առաջ բերին տարակարծություն, և խորհրդաժողովը ցրվեց անարդյունք։ Խորհրդաժողովի ընթացքում ավելի որոշ դարձավ կամավորական բանակի սպառնալիքը Կովկասին, և վրացիներն ու ազրբեջանցիները դրին զորավար Դենիկինի դեմ զինակցություն կնքելու առաջարկը։ Հայերը մերժեցին։ Այն ժամանակ, վրացիներն ու ազրբեջանցիները կնքեցին առանձին դաշինք, որով կողմերը պարտավորվում էին, ռուսական հարձակման պարագային, մեկմեկու զինվորական աջակցություն ցույց տալ։ Դաշինքի կնքումից հետո Թիֆլիս եկավ Ազրբեջանի զինվորական նախարար զոր. Մեխմանդարովը և տեղի ունեցան աղմկոտ ցույցեր վրաց-ազրբեջանյան բարեկամության մասին։

Այդ առթիվ, արտ. գործ. նախ. Ս. Տիգրանյանը գրում էր իր 1919 թ. հունիսի 16 զեկուցման մեջ. «Մդիվանին օրեր առաջ ասել էր, թե՝ եթե հայերդ չզիջեք, մենք ստիպված կմիանանք թաթարների հետ։ Մեր քաղաքական գործակցության անհրաժեշտությունը մերժել էին, իսկ մեր չեզոքությունը, առանց դաշնագրի ու կոմբինացիայի, ապահովելու հաստատ ու բավարար միջոցը գտել էին Հայաստանի ներսը և դուրսը մուսուլմանների հարձակումներով ու սպառնալիքներով մեր ուժերը զբաղեցնելու, ջլատելու և չեզոքացնելու մեջ (Ղարաբաղի, Օլթիի, Կաղզվանի, Շարուրի, Նախիջևանի դեպքերը)։ Եվ այն երևաց, երբ մենք՝ Հայաստանի մինիստրներս՝ անշուք և անուշադիր մեկնում էինք Թիֆլիսի կայարանից, նույն կայարանում Վրաստանի մինիստրները պատվո պա-

հակով, երաժշտախմբով, շքով դիմավորում էին Թիֆլիս ժամանող զոր. Մեխմանդարովին՝ Ադրբեջանի զորական մինիստրին»։

Սեպտ. 17-ին, Թիֆլիսում, բացվեց հայ-վրացական մի նոր խորհրդաժողով՝ բաղկացած Ն. Ռամիշվիլիից, Ս. Մդիվանիից ու Կ. Սաբախտարաշվիլիից (Վրաստան) և Ստ. Մամիկոնյանից, Ս. Խաչատրյանից ու զորավար Քիշմիշյանից (Հայաստան)։ Օրակարգի հարցերն էին. 1) տրանզիտ, 2) երկաթուղային շարժական միջոցների բաժնում, 3) անդրկովկասյան գույքերի բաժանում, 4) հպատակության հարց, 5) Հայաստանի պետական վարկային գործողությունների կատարում Թիֆլիսում և 6) մաքսային արգելքների վերացում։

Նորից ու նորից շատ երկար քննության ու վիճաբանության առարկա դարձավ սահմանային հարցը։ Այս անգամ կողմերը որոշ զիջումներ արին, բայց համաձայնությունը նորից մնաց անհասանելի։ Վրացիները հայտնեցին, որ իրենք տրամադիր են որոշ զիջումներ անել Լոռիի շրջանում, բայց Ախալքալաքի գավառում՝ ո՛չ մի զիջում։ Նրանք առաջարկեցին հետևյալ սահմանագիծը Վրաստանի և Հայաստանի միջև.

«Սկսելով Զաթընդաղ 7378 գագաթից Թիֆլիսի և Գանձակի նահանգների սահմանագծից՝ սահմանը պետք է անցներ Բոլոր-Կոնտ 6475 լեռան կատարով, ապա, ջրաբաշխի ուղղությամբ, Աքոր գյուղի հարավային կետին, ուր ձախ կողմից թափվում է մի գետակ Դեբեթաչայի մեջ։ Այստեղից, ուղիղ գծով դեպի Ակուտկայա սարը և ապա ջրաբաշխով մինչև 7252 նշանը, այստեղից լեռնաշղթայով Կրեստովայա լեռան կատարը 6488։ Հետո, ջրաբաշխով, Գայլի Դրունք լեռնանցքով— Օսինովայա լեռը— Լոկ լեռը— Լոկի լեռանցքը— 5752 բարձունքը, Սաաթի գյուղը հարավից առնելով՝ 6132 բարձունքը։ Այստեղից ջրաբաշխով՝ Ինգանչայ գիծը, ապա Կարանլիխ գետով Լեյլի դաղ բարձունքը։ Ապա՝ Թիֆլիսի նահանգի նախկին սահմանը, Օրկյուզդաղ 8018 լեռան վրայով՝ Օրտուլդաղ 8030 լեռը, 8127 նշանը մինչև Ուչ-Թափալար 9783 լեռը»։

Այսպիսով, ամբողջ Լոռիի դաշտը և երկաթուղին մինչև Սանահին պիտի անցնեն Հայաստանին։ Այս գիծը վրացիները համաձայնվում էին նկատել իբրև ժամանակավոր սահման. եթե Հայաստանի ակնկալությունները Թուրքիայից իրականանային, սահմանագիծը պետք է վերաքննվեր։

Հայերը համաձայնվում էին պայմանական կերպով զիջել Ախալքալաքի մեծ մասը՝ պահելով իրենց ձեռքին լճերի շրջանը։ Լուրջ զիջումներ էին անում և Լոռիի շրջանում։ Հայերն առաջարկում էին հետևյալ սահմանագիծը. Կողբ գյուղից 4 վերստ հյուսիս-արևմուտք գտնվող Շումալ (3465) լեռը. ապա՝ 1603 բարձունքով, 3938 (Գեղիկ-Բուռուն լեռը) բարձունքի վրա գտնվող ձմեռանոցով դեպի Քեչել Կոնդ (4865) լեռը, Բուղաքար լեռը. ապա՝ 7364 բարձունքի վրա գտնվող ձմեռանոցից դեպի Լալվար սարը (8386), 7262 բարձունքը, որտեղից սահմանը շուռ է գալիս դեպի հյուսիս-արևմուտք, Կրեստովայա (6488) լեռը, 5810 բարձունքով (Գայլի Դրունք լեռնանցքը) Օսինովայա սարը, Լոկ սարը (7038), ապա՝ Լոկի լեռնանցքը (5999), «Սաաթի» մակագրության վրայով դեպի 5752, 5334 բարձունքը, որտեղից ուղիղ գծով Ադրիքար (9765) լեռը, Եվ Ախալքալաքի գավառով՝ Ադրիքար (9765) լեռը՝ դեպի Շիշ Թափա (8820) լեռը, 7637 (Սուրբ Հովհաննես) բարձունքը 7168 (Պոտ-Չանա-Թափա լեռը) բարձունքը, 6741 բարձունքը, Էշտիա գյուղի (որ պիտի մնա Հայաստանին) վրայով Ուչ-Թափա (6254) լեռը, որտեղից ուղիղ գծով 4319 բարձունքը, որ Քուռից արևմուտք է գտնվում (Օկամ և Ազմանա գյուղերը թողնելով Վրաստանին). ապա՝ սահմանը անցնում է դեպի հարավ-արևմուտք, Քուռ գետի հոսանքով, մինչև Արդահան։

Ինչպես տեսնում ենք, հայ-վրացական սահմանագծի հիմնական տարբերությունը Լոռիում Ալլահվերդիի պղնձահանքերն էին. վրացիները պահանջում էին Ալավերդին իրենց, հայերը՝ իրենց։ Եվ երբ վրացիները խոսք բացին այն մասին, թե իրենք ահագին տնտեսական զիջումներ արին այն պայմանով, որ հայերն էլ զիջեն սահմանային խնդրում, հայկական պատվիրակության նախագահ Ստ. Մամիկոնյանը կտրուկ կերպով ընդհատեց. «Հողային հարցը չպետք է կապել տնտեսական հարցի հետ. հողային հարցերը քաղաքական հարցեր են և զիջումը այս ասպարեզում կարող է լինել միայն բարձրագույն կարգի քաղաքական պատճառներով։ Վագոնների ու շոգեշարժերի փոխարեն հող չի կարելի զիջել»։

Սահմանային հարցը այս անգամ էլ մնաց անլուծ։ Նա վեճի առարկա էր և արտասահմանում հայ և վրացի պատվիրակությունների միջև և նույն խոշընդոտներին էր հանդիպում, ինչ որ և Կովկասում։ Խորհրդաժողովը, սակայն, մի քայլ արավ ուրիշ հարցերում. նոյեմբ. 3-ին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրվեցին երկու դաշնագրեր, որոնք անպայման նվաճում էին հայ-վրացական մերձեցման տեսակետից։ Առաջին դաշնագիրը ասում էր.

«Վրաստանի կառավարությունը՝ ներկայացված ի դեմս ներքին գործերի և զորական նախարար Նոյ Վիսարիոնովիչ Ռամիշվիլու և Վրաստանի Հանրապետության Հիմնադիր ժողովի փոխնախագահ՝ Սիմեոն Գուրգենովիչ Մդիվանու մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Ստեփան Գրիգորյան Մամիկոնյանի և Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի անդամ Սմբատ Հարությունյան Խաչատրյանի մյուս կողմից՝ ծանոթանալով լիազորությունների հետ և, գտնելով դրանք պահանջված ձևի և պատշաճ կարգի, կնքեցին սույն դաշնագիրն առ այն, որ.

«1. Հայաստանի երկաթուղիներով Հայաստանի վրայով Վրաստան, կամ Վրաստանից Հայաստանի սահմանները և վրաց երկաթուղիներով

Վրաստանի վրայով Հայաստան կամ Հայաստանից Վրաստանի սահմանները փոխադրվող ապրանքների համար սահմանվում է ազատ փոխադրություն, այսինքն՝ փոխադրություն առանց մաքսի։

2. Սույն դաշնագիրը կնքվում է երեք տարով, ըստ որում դաշնագրի հաստատման օրից մի տարի անցած՝ դաշնագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի հայտարարել վերաքննել դաշնագիրը և այս դեպքում՝ դաշնագիրն ուժի մեջ մնում է այդ հայտարարության օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում։ Եթե այդ ժամանակամիջոցում կողմերը դաշնագրի վերաքննության մասին համաձայնության չգան՝ դաշնագիրը կորցնում է իր ուժը։

3. Հաստատված դաշնագրի փոխանակությունը կատարվելու է Թիֆլիսում երկու շաբաթվա ընթացքում։

4. Ներկա, դաշնագիրը կազմվում է երկու օրինակ»։

Երկրորդ դաշնագիրը վերաբերվում էր «Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունների՝ վիճելի խնդիրները համաձայնությամբ կամ պարտադիր իրավարքի միջոցով լուծելու» հարցին.

«1. Դաշնագիրը կազմող պետությունները՝ Հայաստանի և Վրաստանի Հանրապետությունները՝ պարտավորվում են իրանց մեջ գոյություն ունեցող, այլև ծագելիք հնարավոր բոլոր վեճերը լուծել համաձայնությամբ, իսկ եթե դա չկայանա, պարտադիր իրավարքի միջոցով։

2. Վավերացված սույն դաշնագրի փոխանակությունը կատարվելու է Թիֆլիսում, երկու շաբաթվա ընթացքում։

3. Ներկա դաշնագիրը կազմվում է երկու օրինակ»*։

Երկու դաշնագրերն էլ վավերացվեցին Հայաստանի Խորհրդարանի նոյեմ. 11-ի նիստում և, փոխանակությունից հետո, մտան ուժի մեջ։

Դրանից առաջ, օգոստ. 29—30-ին, անգլիացիների հեռանալու առթիվ, հայ ու վրացական պատվիրակությունների խորհրդաժողովում, զոր. Բիչի մասնակցությամբ, մշակվել էր վարչական մի ձև Լոռիի չեզոք շրջանի համար։ Որոշվել էր 1) չեզոք շրջանի վարչությունը թողնել խառն անգլիական սպայի ղեկավարության ու հակակշռի տակ, 2) անգլիական սպայի բնակության վայր կարող է լինել Ալավերդին կամ Թիֆլիսը. 3) չեզոք շրջանի վարչության ծախսերը բաժանվում են Հայաստանի և Վրաստանի միջև, Սեպտ. 1-ին նույն պատվիրակությունները որոշեցին 1) անփոփոխ թողնել չեզոք շրջանի հայ և վրացի զորամասերի քանակն ու բնակության վայրը. 2) կազմել զինվորական մասնագետներից մի հանձնախումբ ստուգելու համար, թե արդյոք 1919 թ. հունվ. 9—17-ին հաստատված գիծը և զորքերի դասավորությունը պահպանվա՞ծ է։

* Դաշնագրերը— ռուսերեն ու հայերեն— հրատարակված են Հայաստանի Խորհրդարանի «Օրենքների հավաքածուի» 1919 թ. դեկտ. 31 № 10-ում։

Այս որոշումները հաստատվեցին Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից և մտան ուժի մեջ, որով անգլիացիների հեռանալուց հետո էլ Լոռիի չեզոք շրջանը մնաց հայ-վրացական խառն իշխանության ներքո։

Սակայն, եթե հայ-վրացական փոխհարաբերությունները, արագ կամ դանդաղ, քայլ առ քայլ բարելավվում էին, Ազրբեջանն ու Հայաստանը շարունակում էին մնալ թշնամի կողմեր. պաշտոնապես պատերազմ չկար նրանց միջև, բայց փաստական վիճակը պատերազմից էլ վատ էր։ Հասկացողության գալու մի փորձ էր հայ-ազրբեջանյան խորհրդաժողովը, որ բացվեց Բաքվում, 1919 թ. դեկտ. 14-ին։

Հայաստանի կողմից խորհրդաժողովի պատգամավորներ էին նշանակված Մ. Հարությունյանը, Տ. Բեգզադյանը և Վ. Փափազյանը։ Վերջինիս հիվանդության պատճառով՝ փոխարինեց Հ. Արղությանը, որ Բաքվի վրայով Թեհրան էր գնում, իբրև դեսպան։ Ազրբեջանյան պատգամավորության կազմն էր՝ Ֆաթալի Խան Խոյսկի, Մամեդ Հասան Գաջինսկի և դոկտ. Վեքիլով։ Իբրև իրազեկ անձ, նիստերին ներկա էր լինում և խալիլ բեգ Խասմամեդովը։ Խորհրդաժողովի օրակարգն էր. 1) սահմանների հարցը, 2) երկաթուղային և առևտրական պայմանագրեր, 3) գաղթականների վիճակի կարգավորում, 4) երկու հանրապետությունների քաղաքացիների դատաստանական-իրավական հարաբերությունների և 5) հյուպատոսական հարցը։

Խորհրդաժողովը ունեցավ 4 մասնավոր խորհրդակցական և 2 հրապարակային նիստեր։ Ազրբեջանի ղեկավար շրջաններն ու կառավարությունը խիստ ուշադիր էին դեպի հայ պատվիրակությունը, իսկ Մուսավաթի համագումարը նույնիսկ մի ուղերձ հանձնեց նրան, բայց հենց սկզբից երևան եկավ, որ կողմերը կանգնած են անհաշտելի տեսակետների վրա։

Սահմանների հարցի համար հայկ. պատվիրակությունը առաջարկում էր որոշել ժամանակավոր սահմանագիծ, իսկ ազրբեջանցիք պնդում էին վերջնական լուծման վրա։ Հայկ. պատվիրակությունը հարմար էր համարում սկզբից կարգադրել գործնական խնդիրները և որոշ նպաստավոր մթնոլորտ ստեղծելուց հետո միայն անցնել սահմանային հարցին. ազրբեջանցիք, ընդհակառակը, անհրաժեշտ էին համարում սկսել հենց սահմաններից։ Երկու դեպքում էլ հայկ. պատվիրակությունը տեղի տվեց։ Բայց այն օրը, երբ պետք է սկսվեր սահմանագծի քննությունը, ազրբ. պատվիրակությունը հայտարարեց, թե, երկար մտածելուց հետո, ինքը եկել է այն եզրակացության, որ ներկա պայմաններում անհնար է անցկացնել այնպիսի սահմանագիծ, որ բավարարի երկու կողմին էլ, ուստի պետք է բավականանալ միայն ընդհանուր սահմանորոշումով։ Իսկ դրանից առաջ հարկավոր է բոլորովին վերացնել փոխադարձ անվստահությունը, տարբեր օրիենտացիաները և ստեղծել կով-

կասյան ժողովուրդների միություն, կազմել կոնֆեդերացիա։ Դրանով ոչ միայն կհեշտանա ներքին խնդիրների լուծումը, այլև արտաքին ճանաչումը։ Թե թանձրացյալ կերպով ի՞նչ ձևով էր հասկանում կոնֆեդերացիան, ազրբեջանյան պատվիրակությունը չպարզեց։

Հայաստանի պատվիրակությունը առարկեց, թե կոնֆեդերացիայի համար պակասում են մի շարք էական պայմաններ. մեր հանրապետությունների անկախությունը դեռևս չի ճանաչված, մեր հանրապետությունների չեզոքությունը դեռ չէ ապահովված, սահմանները որոշ չեն և այլն։ Այս պայմաններում կոնֆեդերացիան անիրագործելի բան է։

Սրա վրա խորհրդաժողովը, ընդհատվեց, և հայկ. պատվիրակությունը մեկնեց Երևան՝ նոր հրահանգներ ստանալու և խորհրդաժողովը Թիֆլիսում շարունակելու որոշումով։

* * *

Հակառակ աննպաստ պայմանների, ներքին կյանքում էլ Հայաստանը հետզհետե ամրանում ու բարգավաճում էր։ 1919 թ. ամառը Հայաստանը արդեն կազմակերպված պետություն էր. երկիրը բաժանված էր 10 գավառների՝ համապատասխան վարչությամբ ու դատաստանական իշխանությամբ. բոլոր գավառներում կային հաշտարար դատարաններ, որոնք, բացի Արդահանի գավառից, դատավորությունը անում էին հայերեն լեզվով, Երևանում կար շրջանային դատարան, դատաստանական պալատ, Սենատ։ Մայիսի 28-ին Ղամարլու, Վաղարշապատ, Աշտարակ, Իգդիր, Կողբ, Ղարաքիլիսա, Ջալալ-Օղլի, Դիլիջան գյուղերը վերածվեցին քաղաքի։

Երկրի վարչությունը բարելավելու նպատակով, մայիսի 25-ին Երևանում գումարվեց գավառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանի նախագահությամբ։ Ներկա էին Երևանի գավառապետ Լ. Ամիրխանյանը, Էջմիածնի՝ Սեդրակ Ջալայանը, Դարալագյազի՝ Ն. Հակոբյանը, Նոր Բայազետի՝ Բենո Նալչաջյանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարատիկյանը, Ղարաքիլիսայի՝ Սիգո Տեր-Սարգսյանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանյանը, Կարսի նահանգից՝ Ստ. Ղորղանյանը, Զանգեզուրից՝ Նիկ. Հովսեփյանը, Սուրմալուից՝ Հ. խորհրդի անդամ Յուսուֆ բեգ Թեմուրյանը (եզդի)։ Համագումարին, մեջ ընդ մեջ, մասնակցեցին նաև Հայ. խորհրդի ու կառավարության անդամները, նախարարությանց ներկայացուցիչները և այլն։ Օրակարգի մեջ դրված էին բազմաթիվ հարցեր։ Զուտ վարչական-ոստիկանական հարցերից հիշենք 1) երկրի վարչական սահմանների սրբագրության հարցը, 2) մասնագետ ոստիկանների պատրաստությունը և ոստիկանական դպրոցի բացումը, 3) պաշտոնեության ու ոստիկանության տնտեսական

վիճակի բարելավումը, 4) ոստիկանների համազգեստի խնդիրը։ Համագումարը ջերմ հետաքրքրություն առաջ բերեց իր շուրջը։ Նրա ոգին էր Ս. Մանասյանը՝ մեկը այն անաղմուկ, բայց անձնվեր գործիչներից, որոնց, ամեն բանից առաջ, հետաքրքրում է կենդանի գործը։ Հին հեղափոխական, պատասխանատու դերակատար ժողովրդական ինքնապաշտպանության կազմակերպության շրջանում, Մանասյանը, որպես ներքին գործոց նախարարության վարիչ էլ երևան բերեց վարչական բարձր կարողություն։ Երկար ժամանակ, փաստորեն նա էր ներքին գործոց նախարարության ղեկավարը, և Հայաստանի ներքին կազմակերպությունն ու զարգացումը շատ բանով նրան է պարտական։

Կառավարությունը աշխատեց աստիճանաբար հայացնել բոլոր պետական հիմնարկությունները՝ խուսափելով, սակայն, կտրուկ միջոցներից։ Այս պարագան ջղայնացնում էր հասարակության որոշ մասերին, մանավանդ, արևմտահայերին, որոնք պահանջում էին անմիջապես հայացնել ամբողջ պետական մեքենան։ Մամուլը, մանավանդ, անողոք քննադատության էր ենթարկում այն հիմնարկությունները, ուր ազգայնացումը, ընթանում էր դանդաղ։ Ապր. 17-ին Երևանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հայ թերթերի ներկայացուցիչների առաջին ժողովը՝ մասնակցությամբ «Աշխատանքի» խմբագիր Հմ. Մանուկյանի, «Հայաստանի աշխատավորի» խմբագիր Վ. Խորենիի, «Հայաստանի կոոպերացիայից» Զ. Կորկոտյանի և «Վան-Տոսպից»՝ Ա. Ավետիսյանի, որ կայացրեց հետևյալ որոշումները. 1. Կոչ ուղղել պետական, հասարակական ու մասնավոր հիմնարկություններին՝ խոսել ու գրել հայերենով։ 2. Մերժել ո՛չ հայերենով գրություններ, լուրեր ու հայտարարություններ ընդունել։ Վերջինի համար բացառություն համարել միայն այն պարագան, երբ անոր կընկերանա հայերենը և կամ թե երբ ոչ հայերու կողմե է տրված։ 3. Պահանջել հայերեն լեզվի պաշտոնականացում, իսկ մյուսների գործածությունը թույլատրել միայն որպես օժանդակ լեզուներ։ 4. Թերթերի մեջ ունենալ «Հայացման» բաժին, ուր տրվելու են լուրեր թե դրական և թե բացասական, նույնիսկ ագիտացիոն բնավորություն ունեցող՝ հայ լեզվի գործածության շուրջ։ 5. Կազմված հռչակել «Հայացման կոմիտե», որի մեջ մտնելու են ներկաները, ինչպես նաև հրավիրվում են մասնակցելու բացակա թերթերի, նախարարությունների ու քաղաքապետարանի ներկայացուցիչները։ Այդ կոմիտեի դռները բաց պիտի ըլլան. վերոհիշյալներեն ցանկացողները կարող են ներկայացուցիչ ուղարկել և կամ ուզած ժամանակ իրենց ներկայացուցչին հետ կանչել։ Կոմիտեն պիտի զբաղվի նաև գործնական խնդիրներով՝ ցուցմունքներ անելով և օգնելով ի պահանջել հարկին զանազան հիմնարկությունների արագ հայացման։ Կոմիտեն ունի իր մնայուն դիվանը՝ վարելու համար ծրագրված աշխատանքները։

Անշուշտ, որոշ չափով այս շարժման ազդեցության տակ էր, որ մայիսի 15-ին ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանը ուղարկեց հետևյալ շրջաբերականը.

«Առաջարկում են այսուհետև գավառում բոլոր գրագրությունը գավառական, հասարակական և գյուղական կոմիսարների և նմանապես բոլոր հիմնարկությունների պաշտոնյաների հետ վարել հայերեն՝ հասկացնելով ազգաբնակչության, որ խնդիրները, բացատրությունները հիմնարկություններին և պաշտոնյաներին պետք է գրել հայերեն։ Նոր պաշտոնյաներին ընդունելիս պետք է պահանջել և գերադասություն տալ նրանց, որոնք տիրապետում են հայոց լեզվին։ Թե գավառական կոմիսարների և թե բոլոր ստորադրյալ պաշտոնյաների կազմած արձանագրությունները պետք է լինեն հայերեն, իսկ եթե մեղավորը հայ չէ, արձանագրությունը կարելի է կազմել և ռուսերեն։ Կարգադրեցեք, որ բոլոր հայ գյուղերում համախոսականներ, հրամաններ և, ընդհանրապես, ամբողջ գործավարությունը կազմվեն և կատարվեն հայերեն»։

Տարվա վերջը պետական և հանրային հիմնարկությունների մեծ մասը արդեն հայացված էր. դեկտ. 26-ի օրենքով հայերենը հայտարարվեց պետական լեզու։

Երկրի վերաշինության և տնտեսական բարեկարգության համար կատարվեցին մի շարք արժեքավոր ձեռնարկներ. ապրիլ-մայիս ամիսներին բանակցություններ կատարվեցին Անդրկովկասի ջրային գործի հեղինակավոր մասնագետ Ս. Զավալիշինի հետ և նրան հանձնվեց Հայաստանի սահմանների ջրային ուժի և ոռոգման ուսումնասիրության աշխատանքը։ Այդ նպատակով հատկացվեց 4 միլիոն ռուբլի։ Ս. Զավալիշինը գործի կանչեց մի շարք առաջնակարգ մասնագետներ— Պ. Վեյնմարն, Զվորիկին, Կոժևնիկով և ուրիշներ— մոտ 70 ինժեներներ, տեխնիկներ, հանքաբաններ, հողագետներ ու բուսաբաններ և ավելի քան մեկ տարի անընդհատ հետազոտության ենթարկեց ու ծրագրեր կազմեց Հայաստանի ջրային կարողությունների մասին՝ որոշելով ոռոգման գրությունը, ջրանցքների ուղղությունը, էլեկտրակայանների կազմն ու տեղը և այլն։ Հետագայում, այս հետազոտության արդյունքները ընդունվեցին ակադ. Ա. Թամանյանի նախագահությամբ կազմված հանձնախմբի կողմից և անգնահատելի նյութ եղան Հայաստանի համար և հետագայում հիմք ծառայեցին Սևան-Զանգու էլեկտրակայանների ծրագրին։

Մայիսի 1-ին պարեն. նախ. Ք. Վերմիշյանի առաջարկով և արդ. նախ. Ս. Հարությունյանի իրավաբանական եզրակացությամբ կառավարությունը ոչնչացված համարեց Կողբի աղահանքի կապալի պայմանները և աղահանքները գրավեց հարքունիս՝ պետական միջոցներով կազմակերպելով աղի արտադրությունն ու վաճառքը։

Մայիսի 26-ին կառավարությունը որոշեց բանալ Կարս—Բաթում

խճուղին և պարենի փոխադրության գործը կազմակերպել այդ ճանապարհով։ Գործի ղեկավարությունը հանձնվեց Գ. Խատիսյանին, որին հաջողվեց հաղորդակցություն հաստատել Բաթումի ու Կարսի միջև և որոշ քանակությամբ այլուր էր տեղափոխել։ Աջարիայում ծայր տված հակավրացական շարժումները, սակայն, արգելք եղան սկսված գործի շարունակության։

Օգոստ. 25-ին քննության առնվեց ժողովրդական տնտեսության նախարարություն հիմնելու ծրագիրը և որոշվեց երկրի վերաշինության վերաբերվող բովանդակ աշխատանքը կենտրոնացնել մի հիմնարկության մեջ։

Հոկտ. 17-ին Խորհրդարանը 5 միլիոն ռուբլի վարկ բացեց Հայաստանի Կոոպերատիվների միության։

Նույն հոկտեմբերին արդեն վերջացել էր կառուցումը Երևանի ուժեղ ռադիոկայանի, որ գործում էր մինչև Բասարա, Թաշկենդ ու Հաշտարխան։

Կրթական-մշակութային պահանջների համար ևս ձեռք առնվեցին լուրջ միջոցներ. մայիսի 30-ին կառավարությունը որոշեց մինչև հունիսի 15 պարպել բոլոր դպրոցական շենքերը, նորոգել և պատրաստել ուսումնական նոր տարվա համար և տարրական ու միջնակարգ դպրոցներին հուլ.-դեկտ. շրջանի համար հատկացրեց 10 970 925 ռ.։ Տարվա վերջը Երևանի, Կարսի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Փամբակ-Լոռիի, Իջևանի և Նոր Բայազետի ու Զանգեզուրի գավառներում կար 431 տարրական դպրոց 1096 ուսուցչով և 38 015 աշակերտով։ Միջնակարգ դպրոցների թիվն էր 20, որոնց մեջ կային 288 ուսուցիչ և 5162 աշակերտ։

Մայիսի 16-ին որոշվեց բանալ համալսարան։ Հուլ. 15-ին հիմնվեցին հուշարձանների պահպանման և արվեստի հովանավորության բաժինները։

Մայիսի 25-ին Երևանում բացվեց Հայ արվեստագետների միության անդրանիկ պատկերահանդեսը Հայաստանում, որ կազմակերպված էր հանրային կրթության և արվեստի նախարարի հովանավորության տակ։ Ցուցադրված էին բազմաթիվ նկարներ՝ Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Մ. Սարյանի, Ս. Խաչատրյանի, Ախիկյանի, Ս. Երկանյանի և շատ ուրիշների։ Պատկերահանդեսը մեծ հետաքրքրություն առաջ բերեց հասարակության մեջ. կառավարությունը գնեց 100 000 ռ. նկարներ պետական թանգարանի համար։ Պատկերների գնումներ կատարեցին և Հայկոոպը, Երևանի քաղաքային ինքնավարությունը և այլն։

Հայ գրողների միության նախագահ Հ. Թումանյանի դիմումի վրա, հուլ. 9-ին կառավարությունը հատկացրեց 100 000 ռ., որպես նպաստ հայ գրողներին, գիտնականներին ու հրապարակախոսներին, Հայ գրողների միության վարչությունը այդ գումարը բաժանեց 8 ամենից հեղինակավոր ու կարիքավոր գրողներին։

Սեպտ. 10-ին խորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական-Մարդաբանական թանգարան-գրադարան, որին հանձնել ի սեփականություն Հայոց ազգագրական ընկերության շարժական և անշարժ գույքը՝ համաձայն վերջինիս ընդհանուր ժողովի որոշման։ Ազգ. ընկերությունը նվիրել էր Հայաստանին իր ամբողջ գրադարանը՝ մոտ 10 000 գրքեր, պարբերականներ, 120 գրչագիր-ձեռագրեր, ազգագրական նյութեր, թերթեր և այլն։ Ընկերության հիմնադիր ու վարիչ Ե. Լալայանն էլ տեղափոխվում էր Հայաստան միևնույն պաշտոնով։

1919 թ. վերջին Երևանում արդեն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզվի, մանկավարժական դասընթացքներ և մի շարք ուրիշ կրթական նոր հիմնարկություններ։

Կառավարությունը խոշոր գումարներ ծախսեց ներդաղթի վրա. մայիսի 3-ին հատկացվեց 36 200 800 ռ. Կարսի ներդաղթի գործին։ Այդ գումարից 15 միլիոնը պիտի գնար գաղթականների փոխադրության և մի ամսվա ապրուստի, 17 486 800 ռ. պիտի տրվեր փոխարինաբար տնտեսության վերականգնման համար, իսկ մնացածը պիտի գործադրվեր վարչական կազմակերպության, բժշկաառողջապահական և այլ կարիքների։ Հունիսի 24-ին հատկացվեց 9 744 100 ռ. Ազրբեջանի, Նուխիի, Արեշի, Շամախիի, Գյոքչայի և Ղուբայի գավառների 20 000 հայերին Հայաստան փոխադրելու համար։ Մեկ միլիոն ռուբլին պիտի ծախսվեր Իբրև ճանապարհի վարձ, 3 600 000 ռ.՝ երկու ամսվա ապրուստի միջոց և 944 000 ռ., որպես կազմակերպական ծախս։

Այս մի քանի ոչ լրիվ տեղեկությունները բավական են ցույց տալու համար, որ ներքին լարված աշխատանք էր կատարվում Հայաստանում։ Տարվա վերջը արդեն երկիրը գտնվում էր համեմատական բարեկարգության մեջ և ոգևորության ու գուրգուրանքի առարկա էր ո՛չ միայն Հայաստանում, այլև դուրսը ապրող բոլոր հայերի համար։ Հայաստանը դարձել էր այն հուսատու փարոսը, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը փռված հայությունը։ Իբրև արտահայտություն նման տրամադրության, արձանագրենք Թիֆլիսի հայ մտավորականության մղումը։ Դեկտեմբերի վերջերին այնտեղ կազմվեց Հայ կուլտուրական հաստատությունների միություն՝ բաղկացած Հայ գյուղատնտեսական ընկերությունից, Հայոց տեխնիկական ընկերությունից, Հայ բժիշկների միությունից, Ազգագրական ընկերությունից, Հայ կանանց միությունից, Հայ իրավաբանների միությունից, Կովկ. Հայոց բարեգործական ընկերությունից և այլն։ Միության նպատակն էր համաձայնեցնել առանձին ընկերությունների աշխատանքները և, ըստ կարելվույն, բազմակողմանի օգնություն և լայն աջակցություն ցույց տալ Հայաստանի կառավարությանը՝ երկրի վերաշինության գործում։ Միության մեջ մտնում էին Թիֆլիսի գրեթե բոլոր հայ մասնագետներն ու հասարակական գործիչները, որոնք, առանց որևէ ակնկալության, պատրաստակամություն էին հայտնում ծառայելու Հայաստանին, ի հարկին, տեղափոխվելով նաև Հայաստան։

Իրականանում էր բանաստեղծի երազը՝

Եվ ամեն կողմից Հայկա հեգ որդիք
Դիմեն դեպ իրենց սիրուն հայրենիք...

ԳԼՈՒԽ ԻԷ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

1920 թվականը Հայաստանի Հանրապետության համար սկսվեց ըստ ամենայնի բարեհաջող պայմաններում։ Ներքին կյանքում և սահմանների վրա տիրում էր համեմատական խաղաղություն։ Երկրի բոլոր մասերում ժողովուրդը զբաղված էր շինարարական աշխատանքով։ Վերից վար, Խորհրդարանից սկսած մինչև վերջին գյուղական իշխանություն՝ ամենքը համակված էին իրենց պարտականության գիտակցությամբ. պետություն էին ստեղծում։ Եվ պետությունը օր օրի վրա զարգանում ու կատարելագործվում էր։ Նրանք, որ տեսել էին Հայաստանը մի տարի առաջ, այլևս չէին ճանաչում. այնքա՜ն փոխվել էր ամեն ինչ՝ երկաթուղու կայարանից ու փողոցների տեսքից սկսած մինչև հասարակության ինքնազգացումը։ Այլևս ոչ ոք չէր կասկածում Հայաստանի ապագայի մասին. ամեն ոք աշխատում էր ամրացնել նրա հիմքը, արագացնել վերաշինությունը։

Այս տրամադրության արտահայտություն կարելի է համարել իրար հաջորդող համագումարներն ու հասարակական հանդեսները, որոնք սկսվեցին 1920 թ. առաջին օրերից։ Արտակարգ ոգևորություն էր տիրում այդ հավաքույթներում, անհողդողդ հավատ դեպի հայ ժողովրդի ստեղծագործական հանճարը, դեպի Հայաստանի ապագան։

Հունվ. 4-ին, Երևանում, առանձին հանդիսավորությամբ, Խորհրդարանի ու կառավարության անդամների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և խուռն բազմության ներկայությամբ, բացվեց Հայաստանի քաղաքների անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Աշտարակ և Ղամարլու քաղաքների ներկայացուցիչները։

Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը բանալով համագումարը և ընդգծելով, որ «մեր կյանքը մտնում է նորմալ հունի մեջ, և մենք կանգնած ենք վերաշինության ճամփի վրա»՝ պարզեց Հայաստանի քաղաքային ինքնավարությունների կատարելիք կարևոր դերը երկրի շինարարության գործում։ Ապա ողջույնի ճառեր արտասանեցին վարչապետ Ա. Խատիսյանը, որ շեշտեց քաղաքների միություն կազմելու անհրաժեշտությունը, ներք. գործոց նախարար Ա. Գյուլխանդանյանը, որ ծանրացավ

քաղաքային ինքնավարությունների պետական դերի վրա, Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչ Ա. Աբեղյանը հիացումով մատնանշեց, որ «մի տարի առաջ մահվան դատապարտված ժողովուրդը այսօր ինքնավարության համագումար կազմակերպելու հնարավորությունն ունի»։ Խորհրդարանի սոց.-հեղափ. ֆրակցիայի ներկայացուցիչ Վ. Մինախորյանը կանգ առավ «ինքնավարությունների կատարելիք բացառիկ դերի վրա՝ պարզել մեր երկրի վիճակը, տալ մեզ նրա իսկական պատկերը»։ Ա. Աստվածատրյանը խոսեց Հ. Հ. Դ. Երևանի կենտ. կոմիտեի կողմից, Գ. Շահինյանը՝ Երևանի Բանվորական Խորհրդի։ Գրավոր ողջույններ էին ուղարկել Հայ ժողովրդ. կուսակցության Հայաստանի Կենտր. կոմիտեն, Կարսի քաղաքային ինքնավարությունը և ուրիշ հիմնարկություններ։

Հաջորդ, հունվ. 5-ի նիստում, Խորհրդարանին, կառավարության ու բանակին ուղղված ողջույնի բանաձևեր քվեարկելուց հետո, համագումարը կազմեց նախագահություն՝ Մ. Մուսինյան, Հ. Բուդաղյան և Հ. Նոհրատյան և 5 հանձնաժողովներ. 1) Քաղաքների միության կանոնագիրը մշակող՝ Ա. Բարխուդարյան, Ա. Տիրոսյան, բժ. Նահապետյան. 2) Ելևմտական՝ Հ. Բուդաղյան, Լ. Թաղեոսյան, Ա. Մարգարյան, Վ. Աֆրիկյան, Մ. Մարգարյան. 3) Պարենավորման՝ բժ. Մելքոնյան, Ավանյուզբաշյան, Մ. Տեր-Աբրահամյան, Զալդրանյան. 4) Կրթական-գեղարվեստական՝ Մելիք-Շահնազարյան, Ս. Մանուկոզլյան, Վ. Շահազիզ. 5) Գաղթականական՝ Ա. Շարաֆյան, Ա. Բարխուդարյան, Ա. Մարգարյան։ Որից հետո, անցավ օրակարգի հարցերին՝ զեկուցումներին ու դրված խնդիրների քննության։

Համագումարը զբաղվեց Հայաստանի քաղաքների կյանքին վերաբերվող բազմաթիվ իրավական, տնտեսական, ելևմտական, պարենավորման, կրթական-մշակութային, բժշկաառողջապահական, շինարարական խնդիրներով։ Ներկայացվեցին խնամված ու լուրջ զեկուցումներ, մասնագիտական հետազոտություններ, բարենորոգման հիմնական ծրագրեր։ Աշխատանքներն անցան լարված հետաքրքրությամբ ու ջերմ մտերմական մթնոլորտում։ Ընդունվեցին քաղաքային կյանքի բոլոր կողմերը շոշափող բանաձևեր։ Եվ, ի վերջո, հիմքը դրվեց Հայաստանի Քաղաքների միության՝ մի կազմակերպություն, որին ահագին դեր էր վիճակվելու Հայաստանի կյանքում։

Երկու շաբաթ հետո, տեղի ունեցավ Հայաստանի իրական (de facto) ճանաչումը, որ աննկարագրելի ցնծությամբ ընդունվեց ժողովրդի կողմից։

Հունվ. 19-ին, Գերագույն խորհուրդը հանեց հետևյալ որոշումը.

«1. Հայկական պետության կառավարությունը ճանաչված է (de facto)

2. Սույն ճանաչումը չի կանոխորոշում այս պետության ապագա սահմանների խնդիրը»։

Հունվարի 23-ին ճանաչման լուրը ստացվեց Երևանում և կայծակի արագությամբ տարածվեց հասարակության մեջ։ Մի ժամ հետո ամբողջ քաղաքն արդեն ոտքի վրա էր։ Ժամը 3-ին քաղաքի պարետի շենքի առջև խռնվեց ահագին բազմություն. եկավ և զորքը նվագախմբով։ Պարետ Ա. Շահխաթունին մի ոգևորված ճառ խոսեց օրվա նշանակության մասին և առաջարկեց ծնկի գալ ի հարգանս Հայաստանի ազատության զոհերի։ Զորքը և բազմահազար բազմությունը մի մարդու պես լուռ իջան ծնկի։ Ապա զորքն ու հասարակությունը, նվագով, դիմեցին դեպի Խորհրդարան, ուր պատշգամբից, հուզված խոսք ասաց նախագահ Ավ. Սահակյանը։ Այստեղից, բազմությունը շարժվեց դեպի կառավարության շենքը և խանդավառ ցույցեր արավ։ Վարչապետ Ա. Խատիսյանի ճառի միջոցին թնդանոթները ավետեցին ժողովրդի ուրախ լուրը։

Այնուհետև, զորքը՝ ձիավոր ու հետևակ, նվագախմբի ուղեկցությամբ հանդիսավոր շքերթով անցավ Երևանի փողոցներով՝ ժողովրդի ցնծագին ծափահարությունների տակ։ Քաղաքն ընդունել էր տոնական կերպարանք։ Տներն ու խանութները զարդարված էին դրոշակներով ու գորգերով։ Երեկոյան եղավ հրավառություն, իսկ կայարանից «Ազատամարտ» զրահագնացքը լուսավորում էր քաղաքը։

Ամբողջ օր, մինչև ուշ գիշեր, մայրաքաղաքը տենդագին վիճակի մեջ էր։ Երկրի զանազան կողմերից և արտասահմանից տեղում էին շնորհավորական հեռագրեր։ Հեռագրեր ստացվեցին և օտար պետությանց Անդրկովկասի ներկայացուցիչներից, Վրաստանի և Ազրբեջանի խորհրդարաններից ու կառավարություններից։ Համաժողովրդական ցույցեր ու հանդեսներ եղան և գավառում։ Մասնավորապես շքեղ էր հանդեսը Կարսում. հունվ. 24-ին, ուր տեղի ունեցավ համաժողովրդական միտինգ ու զորահանդես։ Անկեղծ ու անբռնազբոսիկ խանդավառությամբ էր տոնում ժողովուրդը իր անկախության ճանաչումը։

Հունվարի 26-ին Երևանում գումարվեց Արհեստակցական միության խորհրդի անդրանիկ նիստը, մասնակցությամբ 13 միությանց 38 ներկայացուցիչների՝ կոոպերատիվների, ավտոբաժնի, դեղագործների, ուսուցչական միության, փոստ-հեռագրական պաշտոնյաների, քաղաքային ինքնավարության ծառայողների, բանկային ծառայողների, կաշվի գործարանի աշխատավորների, երկաթուղային բանվորների, ջուլհականոցի, տպագրական բանվորների, հացթուխների և որբանոցների ծառայողների միությունների։

Ժողովը քննեց ու վավերացրեց Միության կանոնադրությունը և ընտրեց Միության գործադիր մարմին, որի մեջ մտան՝ Ա. Աղաջանյան, Տ. Մուշեղյան, Պոպով, Մ. Աբգարյան, բժ. Բ. Նազարյան, Ս. Վարդիկյան, Գ. Տեր-Զաքարյան և Ա. Հախվերդյան։

Ժողովի զբաղումի առարկա եղավ նաև Հայաստանի դե ֆակտո ճանաչումը։ Ընդունվեց մի բանաձև, որի մեջ արտահայտվում էր հայ աշ-

խատավորության վերաբերումը. «Միությունների միության անդրանիկ խորհուրդը,— ասում էր բանաձևը,— ողջունում է հայ աշխատավորության և նրա կառավարության այս հաղթանակի համար, որը հաղթանակի մի քայլ է հայ քաղաքական ազատագրության տեսակետից։ Միությունների միության խորհուրդը հավատում է, որ Հայաստանի կառավարությունը թույլ չի տա, որ ստացված ազատությունը ծառայե որևէ իմպերիալիստական պետության շահերին և Հայաստանի պետական նավը կտանե դեպի Հայաստանի աշխատավորության բարօրությունն ու սոցիալիստական նոր հաղթանակներ և կջանա Հայաստանի ներկա սահմանների մեջ առնել նաև Տաճկահայաստանի այն մասերը, որոնք հանդիսանում են հայ աշխատավորության հայրենիքը»։

Քիչ վերջ ստացվեց և զորավար Դենիկինի ճանաչումը։ Հարավային Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատարի զինվորական ներկայացուցիչը Հայաստանում՝ գնդապետ Զենկևիչը գրում էր փետր. 10-ին. «Պատիվ ունեմ տեղեկացնելու Հայաստանի կառավարության Մեծ Բրիտանիայի անդրկովկասյան կոմիսարի և Թիֆլիսի մեր ներկայացուցչի միջոցով հին տոմարով հունվ. 21-ին (նոր տոմ. 3 փետր.) ինձ ուղարկված մի հեռագրական հաղորդագրությունը, որով հայտնվում է, թե Հարավ. Ռուսաստանի զինվորական ուժերի գլխավոր հրամանատարը ճանաչում է փաստորեն գոյություն ունեցող Հայաստանի, Ազրբեջանի և Վրաստանի կառավարությունները։ Ուրախ եմ առիթից օգտվելով հիշեցնելու, որ Փարիզում դաշնակիցների կողմից ընդունված կատարելապես միևնույն ակտը Հայաստանի վերաբերմամբ զոր. Դենիկինի կողմից իրականացված էր դեռ 1919 թ. օգոստ. 20-ին (հին տոմ.), երբ Հայաստանի կառավարության մոտ նշանակում էր իր զինվորական ներկայացուցչին»։

Պետք է ասել, որ հայերի մեջ անխախտ համոզում էր տիրում, որ Կամավոր. բանակը Հայաստանի նկատմամբ ունի առանձին վերաբերում։ Այդ համոզումը ամրանում էր և զոր. Դենիկինի մի շարք համակրական արտահայտություններով ու կարգադրություններով։ Այսպես, 1919 թ. նոյեմ. 9-ին նա հրատարակել էր իր ծանոթ հրամանը, որի մեջ ասում էր. «Ինձ նկատի ունենալով ազրբեջանյան իշխանությունների թշնամական վերաբերումը դեպի ռուս բանակը և նկատի ունենալով ազրբեջանյան զորքերի դավադիր հարձակումը Հայաստանի հողերի վրա՝ հրամայում եմ ազրբեջանյան զորքերի մեջ գտնվող ռուսական ծառայության բոլոր սպաներին հեռանալ նրանց շարքերից»։

Քաղաքական տեսակետից, սակայն, զոր. Դենիկինը դեպի Հայաստանը ցույց էր տալիս նույն վերաբերումը, ինչ որ և դեպի Ազրբեջանն ու Վրաստանը։ 1919 թվի հուլ. 2-ին նա այսպիսի հրահանգ էր տալիս զոր. Բարատովին, որը գնում էր Թիֆլիս՝ բանակցելու համար անդրկովկասյան հանրապետությունների հետ.

«Կատարելապես համակրելով հայ ժողովրդի ձգտումներին՝ միանալու ազգային սահմանների մեջ և համարելով, որ հայերը իրենց պատմական ու տնտեսական շահերով սերտ կերպով կապված են Մեկ, Անբաժան Ռուսաստանի հետ, որի սահմանների մեջ է մտնում Հայաստանի ամենից ավելի ծաղկած մասը, Հարավ. Ռուս. զինվ. ուժերի գլխ. հրամանատարությունը նույն ձևով, ինչպես և Վրաստանի ու Ադրբեջանի վերաբերմամբ, ընդունում է հայկական շրջանների անջատ ինքնուրույն կառավարությունը, մինչև համառուսական իշխանության վերջնական հաստատումը, առանց ունենալու որևէ հարձակողական դիտավորություն Հայաստանի վերաբերմամբ, բայց միշտ մնալով կանգնած ռուս պետականության միության տեսակետի վրա»։

Նույն միտքը մենք տեսնում ենք արտահայտված և հրապարակորեն։ 1920 թ. հունվ. 16-ին, Գերագույն կրուգում արտասանած ճառում զորավար Դենիկինը, հետևյալ ձևով էր բնորոշում իր վերաբերումը դեպի Ռուսաստանից անջատված հողամասերը.

«Դաշնակիցների այն առաջարկին, որ որոշեմ իմ վերաբերումը դեպի ծայրամասերը, ես տվի որոշ և պարզ պատասխան։

Առաջին՝ ես ճանաչում եմ բոլշևիկների դեմ կռվող ծայրամասերի իրական կառավարությունների գոյության փաստը։

Երկրորդ՝ ծայրամասերի նկատմամբ Ռուսաստանի ունենալիք ապագա հարաբերությունները սահմանվելու են համառուսական կառավարության և ծայրամասերի կառավարությունների միջև կնքվելիք պայմանագրով. ընդսմին թույլ է տրվում դաշնակից պետությունների միջնորդությունը։

Երրորդ՝ որովհետև հունվ. 1-ին Վեհաժողովի կողմից հայտարարված վերաբերմունքը դեպի Ադրբեջանն ու Վրաստանը առիթ տվեց կարծելու, թե այդ նորակազմ պետությունների անկախության հայտարարությունն է, ես դիմեցի բողոքով, բայց այսօր պաշտոնական բացատրություն ստացա, թե պետությունները ճանաչել են միայն փաստական կառավարության ինքնուրույնությունը և ոչ ծայրամասերի ինքնուրույնությունը։ Այս անհանդուրժողություն չէ. ռուս պետության բարձր շահերի պաշտպանություն է, և այս պատասխանը բնավ չի ժխտում այս հիմունքներով բարի հարևանական հարաբերություններ հաստատելը»։

Հարաբերությունները, սակայն, Հայաստանի ու Կամավորական բանակի, ինչպես և Դոնի, Կուբանի ու Թերեքի կառավարությունների միջև մնաց բարեկամական։

Մարտի 7-ին Երևան հասավ Գերագույն կրուգի պատվիրակությունը՝ Կովալ (Դոն), Զոզուլյա (Կուբան), Բիգաև (Թերեք)՝ նպատակ ունենալով սերտ համագործակցություն հաստատել երկու կողմերի միջև։ Երևանում պատվիրակությունը գտավ սրտագին ընդունելություն։ Մարտի 8-ին կառավարության հետ ունեցավ խորհրդակցություն և դրեց մի շարք

հարցեր. 1) հակաբոլշևիկյան մեկ ճակատի ստեղծում, 2) փոխադարձ օժանդակություն, 3) նահանջի դեպքում արդյոք կամավորականները կարո՞ղ են ընդունվել Հայաստանում և այլն։ Հայաստանի աշխարհագրական դիրքը ինքնին արդեն պատասխանում էր տրված հարցերին։

Բնորոշ ու հետաքրքրական է և մի ուրիշ այցելություն։

Կաթողիկոսին այցելելու պատրվակով, հունվ. 1-ին Երևան եկավ Պոնտոսի հույն մետրոպոլիտ Խրիսանֆը, որ պոնտոսյան պատվիրակության նախագահն էր Փարիզում և Վենիզելոսի մոտիկ գործակիցը։ Պոնտոսի հույները պահանջում էին Պոնտոսի անջատումը Թուրքիայից և առանձին հունական պետության ստեղծումը։ Այդ պետության մեջ պիտի մտներ Ռիզա—Սինոպ ամբողջ տարածությունը Պոնտոսյան լեռների և Սև ծովի միջև՝ 1 220 000 բնակչությամբ, որից 800 000 մահմեդական, 350 000 հույն և 70 000 հայ։ Խրիսանֆը եկել էր որոշելու Հայաստանի և Պոնտոսի փոխհարաբերությունները և առաջարկում էր. կամ 1) Պոնտոսի հանրապետությունը կկազմե մեկ դաշնակից մասը Հայաստանի Հանրապետության, կամ 2) Պոնտոսը կլինի ինքնուրույն և Հայաստանի հետ կմիանա համադաշնակցային հիմունքներով և կամ 3) անկախ և հավասարազոր Պոնտոսն ու Հայաստանը իրար հետ կկապվեն դաշնակցությամբ կամ զինակցությամբ։ Վերջին դեպքում, Հայաստանը կունենա սեփական ծովային ելք Աթինեում։

Խրիսանֆին Երևանում ցույց տվին սիրալիր ընդունելություն, և մի շարք խորհրդակցություններից հետո երկուստեք ընդունվեցին հետևյալ պայմանները. 1) Պոնտոսը, վերոհիշյալ սահմաններում, մտնելու է Հայաստանի մեջ, իբրև նրա դաշնակցային (ֆեդերատիվ) մեկ մասը. իր ներքին գործերում Պոնտոսը կառավարվելու էր սեփական Սեյմի միջոցով. 2) Հայկական և Պոնտոսյան պատվիրակությունները Փարիզում գործելու էին համերաշխ. 3) Ի հարկին, եթե Հայաստանի ու Պոնտոսի անկախությունը մերժվի, հայերն ու հույները միասին քայլեր էին առնելու, մինչև ապստամբություն՝ հարկադրելու համար, որ ճանաչվի ընդհանուր անկախությունը. 4) Սույն պայմանագրությունը պետք է համաձայնեցվեր հույն և հայկական պատվիրակությունների գործունեությանը Փարիզում, ինչպես և Վեհաժողովի որոշելիք սահմաններին։ (Ե.)

Սակայն, մենք շեղվեցինք պատմության ընթացքից։

Հունվ. 31-ին, Ալեքսանդրապոլում՝ «Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում» տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը։ Երևանից ու Թիֆլիսից, հատուկ գնացքներով, եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպը, Հայաստանի գերագույն կոմիսար գնդ. Հասկելը իր կնոջ ու շքախմբի հետ, ֆրանսիական ներկայացուցիչ կապ. Պուադեբարը, Կամավորական բանակի ներկայացուցիչ գնդ. Զենկևիչը, պարսից ընդհանուր-հյուպատոս

Ասադուլլա խանը, Ազրբեջանի դիվ. ներկ. Հախվերդովը, հանր. կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, արդար. նախ. Ա. Ջիլինգարյանը, ելևմտ. նախ. Ս. Ասատրյանը, խնամ. նախ. օգն. բժ. Հ. Տեր-Միքայելյանը, Խորհրդարանի անդամներ բժ. Հ. Տեր-Դավթյանը, Մ. Հարությունյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Վ. Մինախորյանը, Ս. Վրացյանը, Ա. Խոնդկարյանը, Ա. Սաֆրաստյանը, Տ. Ծամհուրը, Ա. Ղազարյանը, զոր. Նազարբեգյանը, զոր. Հախվերդյանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարյանի գլխավորությամբ, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, պրոֆ. Ա. Խաչատրյանը և շատ ուրիշ պետական ու հասարակական, գրական ու գիտական դեմքեր։ Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն։ Կայարանում պատրաստված էր թեյասեղան։ Համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով։ Նվագում էր զինվորական խումբը։

Հանդեսը բաց արավ համալսարանի տեսուչ վաստակավոր գիտնական պրոֆ. Իվ. Ղամբարյանը, որից հետո նախարար Ն. Աղբալյանը, մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության և մշակույթի զարգացման գործում։ «Այն ջահը,— ասաց նա,— որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորե Առաջավոր Ասիան»։ Եվ մաղթեց, որ Հայաստանի համալսարանը լինի մատչելի ամենքի համար, մտնելը լինի հեշտ, ելնելը՝ դժվար, որ ուսումը լինի ձրի, գիտությունը վարվի գործնական եղանակով, որ հիմք դրվի համայնական գիտական աշխատանքին Հայաստանում։

Հանրային կրթության նախարարից հետո պրոֆ. Ղամբարյանը արավ համալսարանի կազմակերպության պատմությունը, որից հետո խոսեցին Ավ. Սահակյանը, Ուորդրոպը, գնդ. Հասկելը, Պուադեբարը, գնդ. Ջենկինը, Ասադուլլա խանը, Հախվերդովը, զոր. Նազարբեգյանը։

«Մի քանի օր առաջ,— ասաց Ուորդրոպը,— մենք տոնեցինք մի ուրիշ մեծ դեպք՝ Հայաստանի անկախության դե ֆակտո ճանաչումը։ Ես կարծում եմ, որ առաջին համալսարանի բացումը նույնքան կարևոր է, որքան և անկախությունը։ Պատմության մեջ եղել են դեպքեր, որ պետությունները կարճ ապրեն, բայց չի եղել դեպք, որ մի անգամ բացված համալսարանը կարճ կյանք ունենա... Ոմանք մեծ կարևորություն էին տալիս դե ֆակտո բառին. Հայաստանը, հանձին Էջմիածնի ճեմարանի, Վիեննայի ու Վենետիկի վարժարանների արդեն իսկ դե ֆակտո գոյություն ուներ, և դուք այնքան շատ գիտնականներ և ուսուցչապետներ ունեք, որքան որ պետք կլինի ամբիոնների համար»։

Գնդ. Հասկելը. «Ես բախտավոր եմ ներկա լինելու այս պատմական դեպքին։ Անօգուտ է ասել, որ պատրաստ չեմ խոսելու այս նյութի մասին, որն իմ գործունեության սահմանից դուրս է։ Ներկա Հայաստանում

Մասիս՝ արքուն պահակ Հայաստանի

Հ. Հ. Դ. 8-րդ բնդհ. ժողովը. Կարին

Արամ Երկանյան

Սողոմոն Թեհլիրյան

Հ. Հ. Դ. 8-րդ բնդհ. ժողովի պատգամավորներ. ոտքի՝ Վ. Մինախորյան և Ս. Վրացյան, նստած՝ Ա. Վռամյան և Դ. Տեր-Մինասյան

Անդրանիկ
Հրամանատար կամավորական Առաջին գնդի

Դրո
Հրամանատար կամավորական Երկրորդ գնդի

Կամավորական գնդերի հրամանատարներ
Վարդան, Քեռի և Համազասպ

Իշխան Հովսեփ Արղությյան
Հրամանատար կամավորական Հինգերորդ գնդի

Ներսես Արք. Մելիքթանգյան
Առաջնորդ Ատրպատականի



Գալուստ Ալոյան
(հին հեղափոխական)

Դաշնակցական խեշո, Սարգիս և Նիկոլ Օդաբաշյան

Լևոն Էսետյան
«Մահվան գնդի» սպա

Սաֆո Հակոբյան
(Բասենի գավառապետ)



Բասենի վարչական կազմը

Հայ մտավորականների ծերբակալություններ Էրզրումում
(ձախ կողմից՝ Շահ-Արմեն)

Ա. Անարոնյան

Լ. Աբաբեգյան

Զոր. Թ. Նազարբեգյան



Զոր. Անդրանիկ

Զոր. Բ. Արարատյան



Թ. Մուսինյան

Ա. Աստվածատրյան

Իոստում

Մտ. Շահումյան

Գարեգին եպիսկ. Հովսեփյանց



Գևորգ Թարխանյան

Արամ Մանուկյան





Հ. Հ. կառավարության շենքը



Հայաստանի անդրանիկ համալսարանը

Ավ. Սահակյան
(Հայաստանի խորհրդի նախագահ)



Հ. Քաջազնունի
Հայաստանի անդրանիկ վարչապետ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Էջմիածնի միաբանների հետ

կատարվող դեպքերը, աչքի առաջ ունենալով պետության հանդիպած դժվարությունները, շատ նշանակալից են։ Եվ մեծ գոհացում է ներշնչում, որ գոյության ծանր հոգսերը չեն ճնշում ժողովրդի կրթության ծարավը։ Եվրոպայի և Ամերիկայի շատ քաղաքներում մենք հանդիպում ենք շատ հայերի, որ համալսարաններում բարձր կրթություն են ստանում, և այդ տվել է իր պտուղները. մի շարք աչքի ընկող հայեր կան, որ կարևոր տեղ ունեն և որոնց անունները հայտնի են ամենքին։ Այդ համալսարաններում սովորող անձինք հաջողություն են ունեցել, բայց Հայաստանի համալսարանում մարդիկ պետք է դաստիարակվեն ավելի հայրենասեր ոգով, քան արտասահմանում։ Գլխավոր բանը, որով ես շատ շահագրգռված եմ, որ հայ ժողովուրդը լինի անկախ քաղաքականապես, տնտեսապես և կրթությամբ (բուռն ծափեր)։ Ես հույս ունեմ, որ կարճ ժամանակում Հայաստանը բոլորովին ազատ կլինի և կախում չի ունենա ոչ ոքից (բուռն ծափեր)։ Եթե կա որևէ կարիք, որին պետք լինի օգնել Ամերիկայի կամ իմ ներկայացրած ուրիշ պետություններից, ես հաճույքով կիմացնեմ նրանց և կհաջողացնեմ նրանց օգնությունը։ Ճանաչելով այս գործի գլուխ կանգնածներին՝ ես համոզված եմ, որ համալսարանը անպայման հաջողություն կունենա»։

Հասկելի ճառը հանդիսականների կողմից ընդունվեց առանձին ոգևորությամբ։ Ջերմ խոսքերով արտահայտեցին և մյուս հռետորները, որոնց ճառերը ընդհատվում էին որոտընդոստ ծափերով։

Ողջույնի ճառերից հետո, Ս. Տիգրանյանը կարդաց արտասահմանից և Հայաստանի զանազան կողմերից ստացված հարյուրավոր հեռագրերից մի քանիսը։ Շնորհավորում էին Վրաստանի դիվ. ներկ. Գ. Մախարաձեն, Վրաստանի հանր. կրթ. նախարարի պաշտոնակատար Ցինցաձեն, զորավար Կարալովը և ուրիշներ։

Ապա համալսարանի ուսուցչապետ Մեսրոպ եպ.-ը ակադեմիական ճառ արտասանեց՝ «Հայ վանքերի նշանակությունը Հայաստանի կուլտուրական գործերում» նյութի մասին, որից հետո խոսեցին բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ Հ. Մելքոնյանը, Երևան քաղաքի ներկայացուցիչ Ա. Շարաֆյանը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նոհրատյանը, Նոր Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը, Ա. Խոնդկարյանը սոց.-հեղ. և Ա. Ղազարյանը՝ Հ. Հ. Դ. կուսակցությունների կողմից և մի շարք ուրիշ հիմնարկությունների ու միությունների ներկայացուցիչներ։ Հայտարարվեց ցանկը համալսարանին արված նվերների. մեկ միլիոն ռուբլի Մայիլյան եղբայրներից, 100 000 ռ. «Շիրակ կոոպերատիվից. Ալեքսանդրապոլում սկսվել էր ժողովրդական հանգանակություն։ Հանդեսի օրվա առթիվ հրատարակվել էր միօրյա թերթ «Հայաստանի համալսարան» անունով։

Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում, դուրսը խռնված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից։ Հասարակությունը

խանդավառ ցույցերով ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին։ Այնտեղ էր խոսքին օտար պետության ներկայացուցիչները, վարչապետ Խատիսյանը, Հ. Հ. Դաշնակցության կողմից Ս. Վրացյանը և ուրիշներ։ Հավաքված բազմությունը հանեց մի բանաձև, որով պահանջում էր դաշնակիցներից Թուրքահայաստանի հարցի լուծումը։

Հանդեսից հետո, Քաղաքային ակումբի դահլիճում տեղի ունեցավ ճոխ հացկերույթ քաղաքագլուխ Հ. Մելքոնյանի նախագահությամբ, ուր նույնպես եղան բազմաթիվ ճառախոսություններ հայ և օտար ներկայացուցիչների կողմից։ Երեկոյան, առևտրական դպրոցի սրահում, կայացավ գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որ մեծ աշխույժով անցավ և տևեց մինչև ուշ գիշեր։ Պարահանդեսից հետո հյուրերը արտակարգ գնացքով վերադարձան Երևան։

Հոյակապ դեպք էր Հայաստանի բժիշկների անդրանիկ համագումարը, որ բացվեց Երևանում ապր. 18-ին։ Քաղաքային տան դահլիճը լիքն էր հանրապետության բոլոր ծայրերից եկած պատգամավոր բժիշկներով, բուժակներով, դեղագործներով, անասնաբույժներով, ունկնդիր հասարակությամբ։ Եկել էին 72 պատգամավորներ։

Համագումարը բաց արավ կազմակերպիչ հանձնաժողովի նախագահ բժ. Հ. Տեր-Միքայելյանը, Ապա ողջույնի խոսք ասացին Խորհրդարանի նախագահ Ե. Սահակյանը, վարչապետ Խատիսյանը, Երևանի քաղաքագլուխ Մուսինյանը և բազմաթիվ ներկայացուցիչներ զանազան հիմնարկությունների և միությունների կողմից։

Հանդիսավոր մասից հետո համագումարը կազմեց իր նախագահությունը՝ նախագահներ՝ բժ. Տեր-Միքայելյանը, Պապիկյանը և Լազարյանը, քարտուղարներ՝ Զարիֆյան, Բաղդասարյան, Ավալյան, Տեր-Պողոսյան, Ավետիսյան, Քալանթարյան։

Հաջորդ օրը, համագումարը բաժանվեց 5 հատվածի՝ 1) քաղաքական հարցերի՝ 29 բժիշկ, 2) զինվորական՝ 20, 3) դեղագործական՝ 13, 4) անասնաբուժական՝ 4 և 5) ատամնաբուժական՝ 3 և օրակարգի հարցերը քննության առնվեցին այդ հատվածների նիստերում։

Համագումարն ունեցավ հանձնաժողովային և ընդհանուր բազմաթիվ նիստեր, ուր քննության առնվեցին Հայաստանի բժշկաառողջապահության վերաբերվող բոլոր սուր հարցերը։ Ի վերջո, ընտրվեց կենտրոնական մարմին՝ Հայաստանի լավագույն բժիշկներից։

Անընդհատ առաջ էր գնում և պետական կազմակերպական աշխատանքը, ինչպես և երկրի տնտեսական վերականգնումը։ Կառավարությունը առանձին ուշադրություն դարձրեց ժողովրդի ապրուստի միջոցների հայթայթման գործին. հունվ. 27-ին կազմվեց «Սերմանման հատուկ կոմիտեն», որ մեծ եռանդով վարեց սերմահավաքման գործը՝ ամբարելով ավելի քան 350 000 փութ սերմացու։ Փետրվարին 225 միլիոն ռուբլու վարկ բացվեց սերմացու գնելու համար։ Մարտի 25-ին կառավարությունը հաստատեց այն պայմանները, որով գյուղատնտեսության նախարարությունը կատարելու էր սերմացուի բաշխումը. պետական պահեստներից սերմացու պիտի տրվեր գյուղական համայնքներին, գյուղատնտեսական ընկերություններին, հասարակական ու պետական հիմնարկություններին, պետական պաշտոնյաների ընկերություններին ու հասարակական խմբակցություններին։ Ստացված սերմացուն պիտի վերադարձվեր կալի ժամանակ՝ բերքով կամ դրամով։

Մինչև մայիսի սկիզբը կառավարությունը ժողովրդին բաժանեց 332 660 փութ սերմացու*, որից գարի՝ 206580 փ., ցորեն՝ 65431 փ., կորեկ՝ 15225 փ., չալթուկ (բրինձ)՝ 4026 փ., հաճար՝ 2677 փ., կտավատ՝ 1300 փ., գետնախնձոր՝ 24204 փ., եգիպտացորեն՝ 12368 փ., բանջար՝ 534 փ., գանգար՝ 315 փ.։ Ամենից շատ ստացավ Կարսը՝ 76855 փ., ապա՝ Շիրակը՝ 74605 փ., Երևանի գավառը՝ 52372 փ., Ղարաքիլիսան՝ 46932 փ., իսկ ամենից քիչ Դարալագյազը, 732 փ.։ Բացի այդ բաժանվեց 500 փ. բանջարանոցային սերմ, բամբակի ու ծխախոտի սերմ։ Բամբակ ցանվեց ընդամենը 1517 դեսյատին, ծխախոտ՝ 61 դես.։ Կառավարությունը հող, վարկ, գործիքներ ու սերմացու տրամադրեց դրսից՝ Սուխումի շրջանից եկած ծխախոտագործներին։ 30 միլիոն ռուբլի հատկացվեց բամբակագործներին օժանդակություն հասցնելու համար, 15 միլիոն ռուբլի՝ այգեգործների համար։

Մարտի 1-ին Խորհրդարանը բաց արավ 50 միլիոն ռուբլու վարկ գյուղատնտեսական գործիքներ դնելու համար։ Բաթումից բերվեցին տրակտորներ, հնձելու և քամելու մեքենաներ, գութաններ, սերզատներ, այգեգործական ու մեղվաբուծական գործիքներ, գերանդիներ, մանգաղ և այլն։ Բերվեց մեծ քանակությամբ պղնձի արջասպ այգիների համար։ Գյուղատնտ. նախարարության կենտրոնական պահեստը իր բաժանմունքների միջոցով կատարում էր մեքենաների, գործիքների և նյութերի բաշխումը երկրում։

Պակաս կարևոր դեպք չէր և երդվյալ ատենակալների դատարանի բացումը, մարտի 15-ին դատական նիստի դահլիճը զարդարված էր եռագույն ժապավեններով։ Ներկա էին վարչապետ Ա. Խատիսյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, Խորհրդարանի անդամներ, դատաստանական ու հասարակական գործիչներ և խուռն բազմություն հետաքրքրվողների։ Դատական նիստի սկզբին ողջույնի խոսք ասացին վարչապետը, արդարադատության նախարարը և դատարանի նախագահ Մակ. Մելիք-Միրզախանյանը։ Ապա՝ բեմ բարձրացավ դատական կազմը. նախագահ՝ Մ. Մելիք-Միրզախանյան, անդամներ՝ Ջ. Գեղամյան և Ա. Տեր-Հակոբյան. դատախազ Ա. Մալխասյան, դատախազի օգնական՝ Վ. Ահարոնյան, քարտուղարներ՝ Ն. Տեր-Հակոբյան և Ս. Շմավոնյան։ Երդվյալ ատենակալներից ներկա էին 19 հոգի և 1 տե-

* Սերմանման շրջանի վերջում բաժանված սերմացուի գումարը հասավ 375 000 փթի։

ղակալ՝ բոլորն էլ տղամարդիկ։ Նիստի բացումից և ընթացիկ ձևակերպումները լրացնելուց հետո, ատենակալները հայտարարեցին, թե իրենք հրաժարվում են կրոնական երդումից և ազնիվ խոսք են տալիս գատելու խղճի մտոք։

Կարճ ընդմիջումից հետո, վիճակահանությամբ կատարվեց 12 ատենակալների ընտրությունը։ Հայաստանի անդրանիկ ատենակալների ատյանի անդամ լինելու պատվին արժանացան՝ Արշ. Տեր-Աբրահամյանը, Սարգ. Հախնազարյանը, Նշ. Ժամագործյանը, Վարդ. Մամաջանյանը, Գր. Տեր-Հակոբյանը. Սիր. Տեր-Մարտիրոսյանը, Գր. Վարդանյանը, Հմ. Սողոմոնյանը, Հովս. Ավետիսյանը, Զավ. Կորկոտյանը, Միհր. Աթանեսյանը և Թադ. Դրամփյանը. տեղապահներ՝ Մովս. Գյուլխանդանյանը և Ներվ. Ֆրանգյանը։ Ընտրվածները մի քանի րոպեով հեռացան և ընտրեցին իրենց համար ավագ՝ Սիր. Տեր-Մարտիրոսյանին։ Ատենակալները հասարակական տարբեր խավերի պատկանող մարդիկ էին։

Առաջին գործը Դարալագյազի Ուլնիանորաշեն գյուղացի Ենովք Հովհաննիսյանի և Ջանախչի գյուղացի Մանուկ Մովսիսյանի դեմ հարուցվող մեղադրանքն էր պարսկահպատակ Մամեդ Ասքյար Ալի օղուլուին կողոպտելու փորձի դեմ։ Ամբաստանյալներին պաշտպանում էր երդվ. հավատարմատար Գ. Տեր-Գրիգորյանը։ Հարցաքննությունից, վկաներին և կողմերի ճառերը լսելուց հետո, երդվյալ ատենակալները առանձացան և 10 րոպեի խորհրդակցությունից հետո մեղադրյալներին հայտարարեցին անպարտ։

Երդվյալ ատենակալների դատարանի առաջին նստաշրջանը տևեց մինչև մարտի 26-ը։

Խորհրդարանի մարտի 1-ի օրենքով արդարադատության նախարարության դիվանին կից կազմվեց 3 հոգիանոց արևմտահայ իրավագիտական բաժին, որի նպատակն էր ա) մասնակցել օրինագրքերի քննության, մշակման և խմբագրման գործին, բ) ուսումնասիրել արևմտահայ հատվածի մեջ գոյություն ունեցող ընտանեկան, ժառանգական և այլն սովորություններն ու իրավական հասկացողությունները, նրանց հարազատ ոգին մեր նոր մշակվող օրենքների մեջ պահպանելու համար։

Հանրային կրթության ասպարեզում մշակվեցին մի շարք օրենքներ։ մարտին Խորհրդարանը սկզբունքով հաստատեց դպրոցական հանձնախմբի հետևյալ օրինագիծը եկեղեցական-ծխական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին։

«1. Հոգևոր եկեղեցական-ծխական դպրոցների կայքերն ու գույքերը և նրանց շենքերը պետականացվում են, եթե նրանց դպրոցը բացված չլինի այս օրենքի հրատարակման օրը, կամ բացվելուց հետո փակվի և կամ, եթե նա Հայաստանի պետական գանձարանից նպաստ է ստացել։

2. Պետականացվող կայքերն ու գույքերը և նրանց շենքերը հանձնվում են հանրային կրթության և արվեստի նախարարությանը, որը ծառայեցնում է նրանց դպրոցական նպատակների համար։

3. Որոշ պայմաններով և նպատակներով կուտակված կամ հատկացված և այս օրենքի ուժով պետականացվող կայքերը, գույքերն ու շենքերը անցնում են հանրային կրթության և արվեստի նախարարությանը այն պայմանով, որ վերջինս կատարում է կուտակողների և հատկացնողների կամքը անշեղ»։

Ապրիլին ընդունվեց մի ուրիշ օրինագիծ տարրական կրթության մասին.

«1. Պետական դպրոցներում տարրական կրթությունը վեցամյա տևողություն ունի, որ բաժանվում է երկու եռամյակների։

2. Տարրական դպրոցներում ավանդվում են հետևյալ առարկաները. հայոց լեզու, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, բնագիտություն, առողջապահիկ գիտելիքներ, երգեցողություն, նկարչություն, մարմնամարզ և ձեռքի աշխատանք ըստ հանրային կրթության և արվեստի նախարարության մշակած ծրագրի և կազմած դասաբաշխման տախտակի։

Մանրություն. Այլազգի դպրոցներում պետական լեզուն ավանդվում է, ըստ համայնքի ցանկության, սկսած ուսման երրորդ տարվանից։

3. Այն գյուղերում, որ այսօր բավարար թվով դպրոցական հասակի մանուկներ չունեն, բացվում են եռամյա դասընթացքով դպրոցներ։

4. Կենտրոնական գյուղերում բացվում են վեցամյա դասընթացքով դպրոցներ նույն և մերձավոր գյուղերի աշակերտության համար։

5. Այն սաների համար, որ հնար չունեն վեցամյա դպրոց հաճախելու կամ վեցամյան ավարտելով՝ միջնակարգ դպրոց անցնելու, համապատասխան դպրոցներում բացվում են չորրորդ և յոթերորդ լրացուցիչ դասարաններ»։

Մարտի 28-ին դրամատիկական դասընթացքները տվին իրենց անդրանիկ երեկույթը՝ դասընթացքների վարիչ դերասան Վ. Միրզոյանի առաջնորդությամբ։ Հանդեսը անցավ մեծ հաջողությամբ։ Դասընթացքների մի շարք ուսանողներ աչքի ընկան իրենց շնորհալի խաղով։

Ապր. 18-ին բոյ-սկաուտների օր էր Երևանում։ Քաղաքը ստացել էր տոնական տեսք։ Փողոցներում տուփերով հանգանակություն էր կատարվում։ Բոյ-սկաուտները երաժշտությամբ կենդանություն էին մտցնում ամեն կողմ։ Ամառային ակումբում տեղի ունեցավ հրապարակային մարզանք։ Բոյ-սկաուտները, իրենց վարիչ հունգարացի Ալբերտ Սեդմայի առաջնորդությամբ, գեղեցիկ խաղեր խաղացին՝ արժանանալով խռնված հասարակության խանդավառ ծափերին։ Սկաուտական շարժումը հանրային կրթության նախարարության գուրգուրանքի առար-

կա էր և շուտով լայն ծավալ ստացավ Հայաստանում, մանավանդ, երբ արտասահմանից հասան փորձված ղեկավար մարզիկներ՝ Վ. Ջերազ, Տ. Խոյան և այլն։

Փետր. 18-ին հիմնվեց Հայաստանի Կարմիր խաչը, որի կանոնադրությունը հաստատվեց Խորհրդարանում մարտի 19-ին։ Կենտրոնական վարչության անդամներ ընտրվեցին Գր. Ջալխուշյանը (նախագահ), բժ. Հ. Տեր-Դավթյանը, բժ. Ս. Կամսարականը, բժ. Հ. Մելիքյանը, տիկ. Օ. Արարատյանը, բժ. տիկ. Ջալյան-Մանուկյանը, տիկ. Քալանթարյանը, բժ. Ա. Տեր-Պողոսյանը, Վ. Բաբայանը, Ա. Մակարյանը։ Կարմիր խաչը ճյուղեր ունեցավ Կարսում, Ալեքսանդրապոլում, Վաղարշապատում, Աշտարակում, Ջալալ-Օղլիում, Ղարաքիլիսայում և Իգդիրում։ Նրան հարեցին և Թիֆլիսի, Պոլսի, Փարիզի և Ամերիկայի Հայ Կարմիր խաչերը։ Կարմիր խաչի գլխավոր գործն էր՝ օգնություն հասցնել բանակին։ Դրա համար նա կազմակերպեց 2 հիվանդանոց՝ ողջ սարքով, մի թուցիկ խումբ, մի սննդատու կայան զինվորների համար, բաղնիք, լվացարան և այլն։ Կարմիր խաչի մենաշնորհն էր խաղաթուղթը. հունիսից սկսած կառավարությունը տուրք դրեց երկաթուղու տոմսակների վրա էլ հօգուտ Կարմիր խաչի և 4 միլիոն ռուբլու վարկ բացեց։

Այսպես, կյանքի բոլոր ասպարեզներում, դրությունը բարելավվում էր զգալապես։ Ապրուստի պայմաններն էլ հետզհետե դառնում էին ավելի տանելի. հակառակ որ ժողովուրդը ագահությամբ ցանում էր ունեցած հացահատիկները, հացն ու կենսական միջոցները անհամեմատ ավելի առատ էին, քան 1919 թվին։ Գաղափար տալու համար ապրուստի պայմանների մասին՝ առաջ բերենք մի քանի թվեր. փետրվարի 7-ին Երևանի շուկայում մթերքները արժեին. հացը՝ 26—28 ռուբլի ֆունտը, միսը՝ 70—140 ռուբլի, ալյուրը՝ 1400 ռ. փութը, ցորենը՝ 1300 ռ., գարին՝ 1300 ռ. բրինձը՝ 1400—1800 ռ., լոբին՝ 35 ռ. ֆունտը, սիսեռը՝ 30 ռ., սոխը՝ 12 ռ., կաղամբը՝ 8 ռ., բազուկը՝ 7 ռ., գազարը՝ 8 ռ., մածունը՝ 30 ռ., կաթը՝ 25 ռ., պանիրը՝ 60—100 ռ., կարագը՝ 180—200 ռ., մեղրը՝ 170—180 ռ., գետնախնձորը՝ 15 ռ., ընկույզը՝ 40 ռ., չամիչը՝ 80—90 ռ., նավթը՝ 40 ռ., սապոնը՝ 30 ռ., հավկիթը՝ 13—14 ռ., հատը, լուցկին՝ 8—10 ռ., տուփը, փայտածուխը՝ 110 ռ. փութը, փայտը՝ 70 ռ. փութը։ Ապր. 15-ին կոոպերատիվներում տղամարդկանց կոշիկները արժեին 3000 ռ. զույգը, կանանց՝ 4000 ռ., երեխաների՝ 1200 ռ., կրկնակոշիկները՝ 1300 ռ., թելի բաժակները՝ 120 ռ. հատը, ափսեներ թելի՝ 120 ռ. հատը, մոմ՝ 320 ռ. ֆունտը, սուրճ՝ 360 ռ., երեսսրբիչներ՝ 160 ռ. հատը, ծխախոտի թուղթ՝ 6 ռ. գրքույկը, լուցկի՝ 5 ռ., տուփը, սապոն՝ 50 ռ. ֆունտը։

Իսկ դրամը մարտի 1-ին՝ 1 դոլարը արժեր 580 ռուբլի, 1 թուրքական հնչուն ոսկին՝ 3000 ռ., 1 ֆունտ ստեռլինգը՝ 2000 ռ.։

Պաշտոնյաների ռոճիկներն էին՝ վարչապետի՝ 8150 ռ. ամսական,

նախարարների՝ 7 450 ռ., խորհրդարանի անդամների՝ 6 800 ռ., Սենատի նախագահի՝ 8 150 ռ., անդամների՝ 7 450 ռ., շրջանային դատարանի անդամների՝ 6 600 ռ., հաշտարար դատավորների՝ 6 600 ռ.։ 40 կարգի ռոճիկ գոյություն ուներ, նվազագույնը 2000 ռ., բարձրագույնը՝ 8 150 ռ.։

Երկրի կյանքի կայունացումը զգացվում էր և ժողովրդի, մանավանդ, ոչ հայ տարրերի վերաբերումից։ Այլևս այնքան հեշտ չէր հակապետական տարրերին ոտքի հանելը։ Այդ ցույց տվին Կարսի դեպքերը։

Տարվա սկզբին դեռևս Կարսի մահմեդական շրջաններում նկատվում էր տատանում. մի մասը կողմնակից էր Հայաստանի իշխանության, մյուսները՝ թուրքերի և ազրբեջանցիների դրդումով դեմ էին հայերին։ Հունվ. 12-ին Ջարուշատի, Աղբաբայի և Ջըլդրրի ներկայացուցիչները ժողով գումարեցին Գեղարշին գյուղում և որոշեցին. 1) դադարեցնել առևտրական և ամեն հարաբերություն հայերի հետ. 2) արտաքսել հայկական իշխանությունը և կազմել տեղական իշխանություն՝ Ազրբեջանից ստացված դրամով. 3) 18—40 տարեկանների զորաշարժ անել և մարզել թուրք սպաների ղեկավարության տակ. 4) երկաթուղու շրջանում և Ղըզել-Ջախչախում դնել սեփական պահակներ։

Հունվարի կեսերին Ջարուշատ եկան մի քանի ազրբեջանցի սպաներ Նազարալիևի գլխավորությամբ, խոշոր գումարներով, և սկսվեցին հակահայ հարձակումները։ Հունվ. 20-ին Իբիշ գյուղում սպանվեցին 8 հայեր։ Հունվ. 24-ին Ջարուշատից և մյուս շրջաններից դուրս քշվեց հայ պաշտոնեությունն ու միլիցիան։ Թուրքերը դիրքեր գրավեցին Ջուրզունայում և դեպի Արդահան ուղղեցին 500 ձիավորներ։ Հունվ. 27-ին 400 զինված թուրքեր գրավեցին Շայնալար գյուղը։ Ջարուշատը, Աղբաբան և Ջըլդրրը ապստամբվեցին Հայաստանի դեմ։ Այս շրջաններում բավական ուժեղ էին և Հայաստանի կուսակիցները, բայց թուրք-ազրբեջանցի գործակալներից ահաբեկված՝ չէին կարող արտահայտվել։

Կառավարությունը ամեն միջոց սպառելուց հետո, հրաման տվեց զորքին զենքի դիմելու։ Հակառակ արտակարգ ձյան ու սառնամանիքին, զորավար Հովսեփյանի զորամասերը արագությամբ անցան գյուղից գյուղ, և ջախջախիչ պարտության մատնելով թշնամուն՝ փետր. 15-ին գրավեցին բոլոր ըմբոստ վայրերը։ Խռովարար պարագլուխները փախան, և Ջարուշատից, Աղբաբայից ու Ջըլդրրից 25 ներկայացուցիչներ եկան հայտնելու ժողովրդի հնազանդությունը։ Շրջանը հանգստացավ։

Հանգիստ չմնաց, սակայն, Ազրբեջանը։ Այս դեպքերի առթիվ, մարտ 8-ին Ազրբեջանի Խորհրդարանում Մուսավաթ, էհրար և Իթթիհատ կուսակցություններին պատկանող 21 պատգամավորներ մտցրին հարցապնդում, որի մեջ ասում էին, թե՝ «Հայկական կառավարությունը, զինաթափության պատրվակով, քարուքանդ է անում Կարսի շրջանի մահմեդական գյուղերը և բնաջնջում մահմեդական խաղաղ բնակչությունը։ Մոտ 10 000 մահմեդականներ, հակառակ որ հոժար կամքով հանձնել

են զենքերը, շրջապատված են կանոնավոր հայ զորքերով և ենթարկվում են վերջնական կոտորածի»։

Նույն օրը, ժամը 12-ին, նշանակվեց Խորհրդարանի արտակարգ նիստ, ուր վարչապետ Ուսուպբեգովը տվեց մանրամասն բացատրություններ, որից հետո տեղի ունեցան փոթորկահույզ վիճաբանություններ։ Գրեթե անխտիր, բոլոր ճառախոսները անզուսպ հարձակումներ էին գործում Հայաստանի կառավարության և Դաշնակցության վրա։ Խորհրդարանի դաշնակցական պատգամավորների փորձերը՝ զգաստության հրավիրելու՝ առաջ էին բերում աննկարագրելի աղմուկ ու բողոք։ Բանը հասավ այնտեղ, որ պատգամավորներից մեկը՝ սոց.-հեղափոխական Ստֆիքյուրդսկին առաջարկեց հեռացնել Ադրբեջանի Խորհրդարանից դաշնակցական պատգամավորներին։ Միայն երկու հոգի փորձեցին քննադատել և Ադրբեջանի կառավարության պրովոկացիոն ընթացքը։ Ընկերվարական Աղամալի Օղլի և Ասադ Քարաևը բաց կերպով ամբաստանեցին կառավարությունը, որ Կարսի արյունոտ դեպքերը, ստեղծված են Բաքվի դրդումով։ «Եթե կառավարությունը անմեղ է,— բացականչեց Քարաևը,— այն ժամանակ ինչացո՞ւ են այն միլիոնները, որոնք ուղարկվում են Հայաստան»։

Եվ մինչ Ադրբեջանում ջանք ու կայծակ էին թափում, Կարսում կյանքը արդեն խաղաղել էր։ Հենց որ ըմբոստ շրջանները հայտնեցին հպատակություն, զինվորական միջոցները վերջ գտան, և ժողովուրդը անցավ սովորական աշխատանքի։ Հայաստանի ոչ մի շրջանում հայ-մահմեդական հարաբերությունները այնքան լավ չէին, որքան Կարսում։ Այդ բարի-հարևանական հարաբերությունների ցուցադրություն եղավ Կարսի քաղաքային խորհրդի արտակարգ նիստը փետրվարի 17-ին՝ մասնակցությամբ քուրդ և թուրք բնակչության ներկայացուցիչների։

Խորհրդի նախագահը բանալով ժողովը՝ դիմեց քուրդ և թուրք ներկայացուցիչներին ողջույնի խոսքով՝ ասելով, որ եթե նրանք որոշել են հայերի հետ ապրել հաշտ ու խաղաղ, հայերի կողմից էլ կգտնեն նույն եղբայրական անկեղծ վերաբերումը։ Պատասխանեց Գյուլի շրջանի ներկայացուցիչ Թալի բեգը՝ հայտարարելով, թե պատահած ցավալի դեպքերի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է եկվոր խռովարարների վրա։ Եթե Հայաստանի կառավարությունը մոռանա այդ թյուրիմացությունները և լավ վերաբերվի իրենց հետ, իրենք խոստանում են լինել Հայաստանի Հանրապետության խաղաղ և օրինապահ քաղաքացիները։

Ապա, ի պատասխան բանվորների և գյուղացիների ողջույնների, խոսեց Մուրղանի շրջանի ներկայացուցիչ Արիֆազանը։ Սա ևս պնդեց, որ բոլոր դեպքերի պատճառը դրսից եկած դրդիչներն են և որ տեղական ազգաբնակչությունը ձգտում է խաղաղության։ «Առանց հայերի,— ասաց նա,— մահմեդականները չեն կարող ապրել. մի քանի ամիս ևս

այսպիսի կյանք, և մահմեդական շրջանները քարուքանդ կլինեն ու կփչանան սովից»։

Նույն միտքը հայտնեցին և Զարուշատի ներկայացուցիչները՝ Բաղրը աղա Մահմեդ Օղլին և Ջալիլ աղա Մահմեդ Օղլին։ Սրանք ևս «ցավալի դեպքերը» բացատրում էին արտաքին դրդումներով և խոստանում լինել հավատարիմ Հայաստանի Հանրապետությանը՝ այն հույսով, որ «հայերն ու մահմեդականները կապրեն եղբոր պես, ինչպես ապրում էին Նիկոլայի ժամանակ»։

Նիստից հետո տեղի ունեցավ հանդիսավոր հացկերույթ, ուր նույնպես խոսվեցին տաք ճառեր՝ երդվելով, որ այսուհետև երբեք չեն կրկնվի անցյալի մռայլ օրերը։

Նման հավաստիացումներ սկսեցին հասնել և ուրիշ շրջաններից։ Մարտի սկզբին կառավարությունը ստացավ հետևյալ դիմումը. «Մենք՝ Օրգով, Բարբար և այլ քրդական գյուղերի ներկայացուցիչներս այսօր ներկայանալով Իգդիրի բանակի հրամանատար Սեպուհին՝ հայտնում ենք ձեզ, որ պարտավոր ենք սրտանց ընդունել Հայաստանի Հանրապետության հպատակությունը և որպեսզի այդ լինի Արարատի ստորոտի բոլոր գյուղերի կողմից, մեզ մնում է խորհրդակցել թե նրանց և թե մեր ցեղապետների հետ։ Եթե նույնիսկ նրանք չհամաձայնեն, մենք ներքեն ենթարկվելու ենք, թեկուզ առանց նրանց համաձայնության։ Ավդալ Մատո Օղլի, Մատո Խազի Կարնո Օղլի, Հասո Սիքաշ Օղլի, Մամադ Խազի Օղլի, Ալո Իսմայիլ Օղլի, Դավրիշ Աբա Օղլի, Ուսուֆ Սարո Օղլի»։

Մարտի 15-ին նման բազմաստորագիր դիմում եկավ Զբլդերի շրջանի մահմեդականներից, իսկ ապր. 25-ին Արդահանի մահմեդականների ներկայացուցիչներից, որոնք բողոքում էին Ադրբեջանի գործակալների սադրանքների դեմ։

Նույն օրերին կառավարությունը «հավատարիմ հպատակության» դիմումներ ստացավ և Միջագետքի եզդիներից ու ասորիներից, որոնք ցանկություն էին հայտնում տեղափոխվել Հայաստան։

***

Շատ ժամանակ չանցած, շուտով պարզվեց Կարսի դեպքերի շուրջ ադրբեջանցիների հանած աղմուկի իսկական դրդապատճառը. մարդիկ նոր դեպքեր էին պատրաստում Ղարաբաղում, և անհրաժեշտ էր հասարակության ուշադրությունը ուրիշ կողմ դարձնել։

Պետք է նկատել, որ օգոստ. 22-ի համաձայնությունը էական փոփոխություն չմտցրեց Ղարաբաղի դրության մեջ, ինչպես և նոյեմբերի 23-ի համաձայնությունը չփոխեց Զանգեզուրի վիճակը։ Նոյեմբ. 23-ից

հետո էր, որ, ինչպես տեսանք, զանգեզուրցիք մաքրեցին Օխչի ու Գեղավա ձորերը։

Նոյեմբերի վերջերին Զանգեզուրում Ա. Շահմազյանին փոխարինեց Ս. Մելիք-Յոլչյանը, որպես քաղաքացիական մասի կոմիսար, իսկ զինվորական մասը ենթարկվեց զոր. Ղազարյանին։ Սրանց գալով՝ Զանգեզուրը ձևականորեն էլ կազմակերպվեց իբրև Հայաստանի մաս։ Քաղաքացիական իշխանությունը ամփոփվեց վարիչների խորհրդի ձեռքում՝ Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ։ Շրջանը բաժանվեց 2 գավառի. 1) Բուն Զանգեզուր, Տաթև, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուրի գավառ անունով, 2) Ղափան, Բաղաբերդ—Գեղվա ձոր, Արևիք և Գողթն՝ Կապար Գողթ անունով։ Զինվորական տեսակետից շրջանը բաժանվեց 3 մասի. 1) Սիսիան՝ հրամանատար Պ. Տեր-Դավթյան, 2) Կապարգողթ՝ հրամանատար Գ. Նժդեհ և 3) Զանգեզուր։ Յուրաքանչյուր շրջանի հրամանատարության կից կազմվեց զինվորական շտաբ, որոնց ենթարկվում էին ճակատապետներն ու վաշտապետները։ 20—50 տարեկան բոլոր տղամարդիկ դրված էին զենքի տակ, երկրապահ զինվորության դրությամբ, 20—25 ընտիր սպաների ղեկավարության տակ։ Դեկտեմբերի կեսերին Գորիս հասավ Դրոյի էքսպեդիցիոն զորամասը, և Դրոն հայտարարվեց Զանգեզուր—Ղարաբաղի ընդհանուր հրամանատար։

Այսպես կազմակերպված, հունվ. 19-ին, զանգեզուրցիք մի գրոհով մաքրեցին Բուն Զանգեզուրի և Ղափանի միջև ընկած տարածությունը՝ Դոնդարլու—Շուռ—Նուխ—Ասկիլումի թրքական շրջանը, մոտ 30 գյուղ։ Մարտին գրավվեց Ավդալար—Ալեանշու—Մուսուլմանլար—Բարգյուշատ շրջանը, ուր գտնվում էին մոտ 120 թրքական գյուղեր։ Թրքությունը թողեց ու հեռացավ Ադրբեջան։

Իր հերթին, գործի վրա էր և Սուլթանովը։ Նոյեմբերի պարտությունից հետո, նա եռանդով պատրաստվում էր Զանգեզուրի և Ղարաբաղի գրավման։ Օգոստ. 22-ի համաձայնությունը նրա ձեռքին ժամանակ վաստակելու միջոց էր լոկ։ Մի կողմից աշխատում էր պառակտել զարաբաղցիներին, մյուս կողմից զինվորական ուժեր համախմբել՝ Ղարաբաղը զենքով ընկճելու դիտավորությամբ։ Փետրվարին համարյա ադրբեջանյան ամբողջ բանակը—մոտ 10 000 հոգի—հավաքված էր Ղարաբաղի ճակատում։ Լուրեր էին տարածվում, որ ադրբեջանյան զորամասերի ընդհանուր ղեկավարն է Նուրի փաշան, օգնականը՝ զոր. Նևրուզովը և նրանց տրամադրության տակ գտնվում են բազմաթիվ թուրք սպաներ։

Ղարաբաղցիք տեսնում էին այդ և նույնպես պատրաստվում վիճեցնելու համար Սուլթանովի ծրագրերը։ Գավառում գործում էր Ինքնապաշտպանության մարմինը սպա Զ. Մեսյանի, Ա. Միքայելյանի և ուրիշների մասնակցությամբ։ Ղարաբաղի և Զանգեզուրի միջև հաստատ-

ված էր համագործակցություն, և Ղարաբաղը դրսից ստանում էր ռազմամթերք ու նյութական օգնություն։

Երկու կողմերը՝ Սուլթանովն ու ղարաբաղցիք պատրաստվում էին տենդագին և առանց ծածկելու։ Փետր. 19-ին, երբ Ադրբեջանն արդեն բավականաչափ զորք էր համախմբել Ղարաբաղի շուրջ, Սուլթանովը դիմեց Շուշիի Հայոց ազգ. խորհրդին՝ պահանջելով Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս։ Սուլթանովի համար այլևս Հաշտության վեհաժողով գոյություն չուներ, և «սահման քաջաց զենն յուրյանց» սկզբունքը մնացել էր միակ հեղինակավորը։

Այս պահանջի առթիվ, փետր. 22-ին, Շոշու գյուղում գումարվեց Ղարաբաղի 8-րդ համագումարը, որին ներկա էին 96 պատգամավորներ Գյուլիստանից, Ջիվանշիրից, Խաչենից, Դիզակից ու Վարանդայից։ Համագումարը որոշեց՝ մերժել Սուլթանովի պահանջը և շարունակել կռվել օգոստ. 22-ի համաձայնության գետնի վրա։ Միաժամանակ, համագումարը բուռն կերպով բողոքեց Սուլթանովի գործած կամայականությունների, բռնությունների դեմ։

Նույն պահուն, 45—50 հոգի էլ, գլխավորապես քաղաքացիներ, հավաքվեցին Շուշիում, կազմեցին առանձին համագումար և ընդունեցին Սուլթանովի պահանջը՝ Ղարաբաղը ճանաչել Ադրբեջանի մաս։

Երկու համագումարների բանաձևերը ներկայացվեցին Սուլթանովին, որը, իհարկե, մնաց դժգոհ և սկսեց պատրաստվել ավելի վճռական քայլերի։ Մարտի սկզբից Շուշիի երթևեկը առնվեց հսկողության տակ։ Մարտի 4-ին հայկական թաղում տեղավորվեցին ադրբեջանցի սպաներ։ Մարտի 5-ին ցուցակագրվեցին Շուշիի հայ սպաները, Բաքվից հասան նոր զորամասեր։ Մարտի 7-ին Շուշի եկավ ադրբեջանյան բանակի ղեկավար պրինց Մահմեդը։ Մարտի 7-ին դեպի խանածախ տանող ճանապարհի վրա սպանվեցին 5—6 հայեր։ Մարտի 10-ին Եվլախ—Շուշի խճուղու վրա սպանվեցին 10 հայեր։ Մարտի 10-ից Շուշի բերվեցին 150 հաշի-սամլուեցի քրդեր։ Նույն օրը Սուլթանովը հրամայեց գավառի բոլոր հայ ոստիկանապետներին իրենց ձիավորներով, մարտի 23-ին, բայրամի օրը, ներկայանալ իրեն քաղաքում։ Նույն ժամանակ, Սուլթանովը գրավոր հրաման ուղարկեց Մուսուլմանլարի կայազորի պետին, թե՝ «հողի երեսից մաքրել Խծաբերդ, Տումի և Հին Թաղլար գյուղերը»։

Այս և նման դեպքերը կասկած չէին թողնում հայերի մեջ, որ Ադրբեջանը որոշել է հրով ու սրով ընկճել Ղարաբաղը։ Եվ որոշեցին կանխել, իրենք նախահարձակ լինել. մարտի 22 լույս 23-ի գիշերը Ղարաբաղում ծագեց ընդհանուր ապստամբություն Ադրբեջանի դեմ։ Ասկերանի կիրճի գրավումով Շուշիում և Խանքենդում մնացած թուրք զորամասերը կտրվեցին արտաքին աշխարհից։ Արյունոտ կռիվներ տեղի ունեցան Խանքենդում, ուր սպանվեցին ապստամբների հրամանատարներ Ալեք-

սան-Դային, սպա Լալայանը և ուրիշներ։ Շուշին մատնվեց թուրք խուժանի և զորքի հարձակման. հայ բնակչության մեծ մասը փախավ, իսկ մոտ 3—400 հոգի մնաց թուրքերի ձեռքը և բանտարկվեց. կանայք ենթարկվեցին զանգվածային բռնաբարության։ Առաջնորդ Վահան եպ. գըլխատվեց, և գլուխը պտտցնում էին քաղաքի փողոցներում։

Մարտի 26-ից Ազրբեջանի զորքերը ամեն կողմից սկսեցին հակահարձակման։ Մի քանի օր կատաղի կռիվներ տեղի ունեցան Ասկերանում։ Ապր. 3-ին, ազրբեջանյան բանակը, 8 թնդանոթով ու բազմաթիվ գնդացիրներով անցավ գրոհի Ասկերանի, Խաչենի և Վարանդայի ուղղությամբ։ Օրհասական ճակատամարտում հերոսի մահով սպանվեց Ասկերանի ճակատի հրամանատար Դալի Ղազարը։ Թուրքերը ճեղքեցին հայկական շղթան և ամեն ինչ ավերելով՝ ապր. 4-ին մտան Շուշի ու կոտորեցին քաղաքում մնացած հայերին։ Հայկական տների մեծ մասը ավարի տրվեց ու հրդեհվեց։ Հայկական Շուշին նստավ մոխիրների վրա։

Դեպքերը ցույց տվին, որ ապստամբությունը կազմակերպված էր անփորձ մարդկանց ձեռքով։ Հետևանքները կարող էին լինել շատ ավելի աղետավոր, եթե ապր. 13-ին Ղարաբաղ չհասներ Դրոն իր էքսպեդիցիոն զորամասով։ Նա իր ձեռքն առավ շրջանի իշխանությունը, ապր. 15-ին զորահավաք հայտարարեց Վարանդայում ու Դիզակում, ամրացրեց ճակատները և 45 օր շարունակ մնաց Ղարաբաղում։ Ապր. 22-ին Թաղավարդ գյուղում հրավիրվեց Ղարաբաղի 9-րդ համագումարը, որը 44 ձայնով մեկի դեմ մի անգամ էլ որոշեց մերժել Ազրբեջանի իշխանությունը և Ղարաբաղը համարել Հայաստանի մաս։

Դրոյի հասնելուց հետո Ազրբեջանի բանակն այլևս առանձին կենդանություն ցույց չտվեց. մի կողմից Բաքվում տեղի էին ունենում ներքին խմորումներ ու բոլշևիկյան շարժումներ, մյուս կողմից Թիֆլիսում դաշնակիցները և Անդրկովկասյան խորհրդաժողովը պահանջում էին վերջ տալ արյունահեղության։ Չենթարկվել չէր կարելի. աղմուկն ու սպառնալիքը շատ մեծ էր։

Եվ, իրոք, Ղարաբաղի ապստամբության և Շուշիի կոտորածի լուրը Թիֆլիսում ցնցող տպավորություն գործեց։ Այն պահուն, երբ կարմիր բանակի առաջապահները կանգնած էին Անդրկովկասի դռանը, ընդհարումը հանրապետությունների միջև կարող էր դառնալ ճակատագրական։

Մարտի 27-ին Ղարաբաղի Հայրենակցական միության ներկայացուցիչներ Գ. Բալայանը և Լեոն մի հուշագիր ներկայացրին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու Հունաստանի ներկայացուցիչներին, գնդ. Հասկելին, Հայաստանի վարչապետին և Վրաստանի կառավարությանը՝ խնդրելով նրանց միջնորդությունը Ղարաբաղի հարցում։ Նրանք պահան-

ջում էին՝ անմիջապես հեռացնել ազրբեջանյան զորամասերը, բանալ բանտարկյալները և հարգել օգոստ. 22-ի համաձայնությունը։

Նույն օրը Վրաստանի վարչապետ Ժորդանիան դիմեց դաշնակիցների ներկայացուցիչներին՝ խնդրելով նրանց միջնորդությունը՝ մարելու համար Ղարաբաղի հրդեհը։ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ներկայացուցիչներ Ուորդրոպը, կոմս Մարտելը և գնդ. Գաբբան, ապր. 1-ին, հավաքական մի հեռագրով դիմեցին Բաքու և Երևան՝ «եռանդագին հրավիրելով» խաղաղ միջոցներով և անհապաղ լուծել Ղարաբաղի և ուրիշ գավառների հարցերը, ուր «խաղաղությունը վտանգված է»։ «Հաշտության այս հանդիսավոր կոչը, եթե չլսվի ճիշտ այն ժամին, երբ, թերևս, ամբողջ Անդրկովկասի բախտի վճռվելու վրա է, կարող է շատ ծանր հետևանքներ ունենալ ձեր կառավարությունների համար»։

Հայաստանի կառավարությունը իսկույն ևեթ, ապր. 2-ին, պատասխանեց, թե ինքը բոլորովին համամիտ է դաշնակից ներկայացուցիչների առաջարկին և իր պատգամավորները ապրիլ 5-ին կլինեն Թիֆլիսում՝ մասնակցելու համար անդրկովկասյան խորհրդաժողովին՝ նպատակ ունենալով խաղաղությամբ լուծել բոլոր վիճելի խնդիրները։ Ապր. 4-ին Հայաստանի խորհրդարանն էլ զբաղվեց Ղարաբաղի դեպքերով և հավանություն տվեց կառավարության հետևած քաղաքականությանը։

Ազրբեջանցիների որոշ ձգձգումից հետո, ապր. 9-ին, բացվեց անդրկովկասյան 3 հանրապետությունների խորհրդաժողովը։ Հայաստանի ներկայացուցիչներն էին Հ. Օհանջանյանը, Տ. Բեգզադյանը, Ս. Մամիկոյանը և Ս. Խաչատրյանը, Ազրբեջանինը՝ Հ. Աղաևը, Ֆ. Վեքիլովը, Ս. Կրիչինսկին. Վրաստանինը՝ Ե. Գեգեչկորին, Գ. Լորդկիպանիձեն և Գ. Մախարաձեն։

Օրակարգին անցնելուց առաջ, Հայաստանի և Վրաստանի պատվիրակությունները առաջարկեցին, առաջին հերթին, դնել Ղարաբաղի արյունահեղությունների դադարեցման խնդիրը, պնդելով, որ առանց դրան անկարելի է հանգիստ և արդյունավետ աշխատանք կատարել։ Ազրբեջանի պատվիրակությունը սկզբունքով չառարկեց, բայց պնդեց, որ պետք է նկատողության առնվեն և Օրդուբադի, Նախիջևանի, Վեդիի ու Ղազախի շրջանները։ Եվ որովհետև ինքը լիազորություն չուներ, առաջարկեց նիստը հետաձգել, մինչև որ Բաքվից ստացվեն համապատասխան հրահանգներ։

Հաջորդ նիստում, ապր. 10-ին, կազմվեց խորհրդաժողովի նախագահությունը՝ Ս. Մամիկոնյան, Հ. Աղաևը և Ե. Գեգեչկորի։ Աղաևը Ազրբեջանի պատվիրակության կողմից կարդաց Բաքվի կառավարության հեռագիրը. «Խորհրդաժողովի հարուցած հարցը [illegible] վաղը, ապր. 10-ին, խորհրդարանի ավագների կողմից։ Պատասխանը կստանաք վաղը երեկոյ։ Հայ պատվիրակները եռանդով բողոքեցին այդ ձգ-

ձգման դեմ։ Որոշվեց նորից նիստը ընդհատել և սպասել Բաքվի պատասխանին։

Պատասխան չստացվեց և երրորդ նիստում, որը նույնպես հետաձգվեց։ Չորրորդ նիստին, ապր. 11-ին, վերջապես Աղաևը հայտնեց Ազրբեջանի կառավարության պատասխանը, որով նա «համաձայնվում էր խորհրդաժողովի քննությանը ենթարկել ամբողջ Անդրկովկասի տարածության վրա ընդհարումներն ու արյունահեղությունները դադարեցնելու միջոցների հարցը»։ Որից հետո, երկար ու բարակ, քննվեց օրակարգի հարցը և ընդունվեց խորհրդաժողովի հետևյալ օրակարգը. 1) արյունահեղ ընդհարումները դադարեցնելու հարց. 2) անդրկովկասյան պետությունների մնայուն մարմնի ստեղծում. 3) հողային հարցեր. 4) արտաքին քաղաքականության համաձայնեցում. 5) կոնֆեդերացիայի հարց. 6) տնտեսական խնդիրներ։

Ապա խորհրդաժողովը քննության առավ օրակարգի առաջին կետը, որի առթիվ սուր վիճաբանություններ եղան հայերի և ազրբեջանցիների միջև։ Վերջիններս պահանջում էին, որ տեղի ունեցող ընդհարումները նկատվեն իբրև «պատերազմ հայերի և մահմեդականների միջև»։ Ի վերջո ընդունվեց հետևյալ բանաձևը, որ Աղաևի, Մամիկոնյանի և Գեգեչկորիի ստորագրությամբ անմիջապես հեռագրվեց Հայաստանի և Ազրբեջանի կառավարություններին. «Ազրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների խորհրդաժողովը իր աշխատանքներին ձեռնարկելով՝ որոշում է 1) անմիջապես դադարեցնել բոլոր այն արյունահեղ ընդհարումները, որոնք այժմ տեղի են ունենում Ղազախում, Նախիջևանում, Օրդուբադում և Ղարաբաղում. 2) Միաժամանակ, խորհրդաժողովը պնդում է, որ Հայաստանի և Ազրբեջանի կառավարությունները ամենակտրուկ միջոցներ ձեռք առնեն վերացնելու համար հայ և մահմեդական ազգաբնակչությունների միջև ընդհարման բոլոր հնարավորությունները՝ համապատասխան հանրապետությունների սահմաններում. 3) Այս որոշման մասին շտապով տեղեկացնել Ազրբեջանի և Հայաստանի կառավարություններին, որպեսզի նրանք ձեռք առնեն համապատասխան միջոցներ»։

5-րդ նիստում, ապր. 12-ին, խորհրդաժողովը զբաղվեց արյունահեղությունը դադարեցնելու պայմաններով, դարձյալ երկար վեճ ծագեց հայերի և ազրբեջանցիների միջև Ղարաբաղի մասին։ Վերջիններս պնդում էին, որ Ղարաբաղը Ազրբեջանի մասն է և Ղարաբաղի խնդիրը՝ Ազրբեջանի ներքին խնդիրը. հայերը, ընդհակառակը, համարում էին, որ Ղարաբաղը Ազրբեջանի մասը չէ։ Երկու կողմերը մնացին իրենց տեսակետին, և որոշվեց «անմիջապես լիովին վերականգնել այն իրավական վիճակը, որ գոյություն ուներ ընդհարումներից առաջ և հիմնված էր հայ-ազրբեջանյան և անդրկովկասյան հանրապետությունների խորհրդաժողովներում ձեռք բերված համաձայնության վրա՝ կառավարությունների հետ ազգային խորհուրդների պայմանագրի հիմամբ»։

Նույն նիստում որոշվեց ընտրել 6 հոգիանոց հանձնախումբ՝ 2-ական ամեն մի պատվիրակությունից և ուղարկել Ազրբեջան ու Հայաստան խորհրդաժողովի որոշումը գործադրելու համար։

Ապա ուղարկվեց 3 հանձախումբ. մեկը՝ Մախարաձեն, Մամիկոնյանը, Աղաևը՝ Ղազախ, ուր նույնպես հայ-թրքական ընդհարումներ էին պատահել. մյուսը՝ Ի. Ռամիշվիլի, Ա. Աբեղյան ու Ջ. Սուլթանով՝ Շարուր—Նախիջևան և երրորդը՝ Ղարաբաղ։ Հանձնախումբը մեկնեցին համապատասխան վայրերը, բայց հետագա դեպքերի պատճառով շոշափելի գործ չկատարեցին։

Այնուհետև խորհրդաժողովը երկարորեն զբաղվեց կոնֆեդերացիայի հարցով։ Ազրբեջանի պատվիրակությունը ներկայացրեց «Անդրկովկասյան Հանրապետությունների խորհրդի» նախագիծը։ Առաջարկվում էր երեք հանրապետությունների ներկայացուցիչներից կազմել մնայուն միջազգային մի խորհուրդ, որի պարտականությունը պիտի լիներ. «1) հոգալ հանրապետությունների արտաքին ապահովությունը և նրանց անկախության ու չեզոքության պահպանումը, 2) հսկել, որ հանրապետությունների միջև ծագող վիճելի խնդիրների լուծումը միջնորդ դատարանի կողմից՝ գործադրվի, 3) հետևել, որ կիրառվեն դաշնագրերը հանրապետությունների միջև, 4) մշակել միջհանրապետական դաշնագրերի նախագծեր, 5) ձգտել խաղաղությամբ լուծելու հանրապետությունների միջև ծագող վեճերը և եզրակացություններ տալ առանձին հանրապետությանց կառավարությունների առաջարկով»։ Խորհուրդը պիտի կազմվեր 12 հոգուց. յուրաքանչյուր հանրապետություն պիտի տար 2 ներկայացուցիչ խորհրդարանից և երկու՝ կառավարությունից, մեկ տարի ժամանակով։ Խորհուրդը պիտի ունենար սովորական և արտակարգ նստաշրջաններ։ Եվ այլն։

Իհարկե, այս դեռ կոնֆեդերացիա չէր, բայց մի քայլ էր դեպի կոնֆեդերացիա։ Ազրբեջանցիք քայլ առ քայլ հետապնդում էին իրենց հիմնական նպատակը՝ Անդրկովկասի միացումը։ Վրացիք էլ դեմ չէին որոշ միության, պայմանով, որ Վրաստանի վեհապետական իրավունքները չտուժեն։ Հայերի համար, քանի թուրքա-հայկական հարցը մնում էր անորոշ, գոյավիճակի ամեն փոփոխություն համարվում էր վաղաժամ։ Այս դեպքում էլ նրանք չմերժեցին իրենց համաձայնությունը, բայց այդ արվեց այնպես, որ հավասար էր մերժումի։

Դեռ կոնֆեդերացիայի խնդիրը չփակած, ապր. 16-ին ազրբեջանցիք բերին զինվորական գործակցության առաջարկը Խորհրդային Ռուսաստանի դեմ։ Վրացիք չառարկելով հանդերձ՝ առաջ քաշեցին սահմանագծման հարցը։ Հայերն էլ դեմ արտահայտվեցին արտաքին ճակա-

տով զբաղվելուն։ «Այժմ, երբ անդրկովկասյան հանրապետությունների առջև կանգնած է մի նոր վտանգ և նոր արյունահեղություններ են հնարավոր, հայկական պատվիրակությունը մերժում է զբաղվել արտաքին քաղաքականությամբ»,— վրդովված նկատեց ազրբեջանի Վեքիլովը։

«Այո՛,— առարկեց հայերի կողմից Տ. Բեգզադյանը,— քանի հողային հարցերը չեն լուծված, խորհրդաժողովի որոշումները ո՛չ մի արժեք չեն ունենա։ Եթե ենթադրենք, որ խորհրդաժողովը որոշե ընդհանուր ուժերով դուրս գալ արտաքին ոտնձգությունների դեմ ի պաշտպանություն մեր հանրապետությունների անկախության, այսինքն՝ հյուսիսի վտանգի դեմ, այն ժամանակ հայկական պատվիրակությունը կառաջարկե քննել հարավային վտանգի հարցը, որովհետև Թուրքերը, որքան հայտնի է, դաշնակից են բոլշևիկների հետ։ Բացի այդ, խորհրդաժողովը պետք է ստույգ տեղեկություններ ունենա այն համաձայնության մասին, որը, իբր թե, գոյություն ունի Թուրքիայի և Ազրբեջանի միջև։ Մեզ համար անհրաժեշտ է պարզել նաև Ազրբեջանի կառավարության վերաբերումը դեպի մեր պետականությունը»։

Նորից հին հարցը՝ «հյուսիսի» ու «հարավի» վտանգը։ Ազրբեջանցու համար «հյուսիսն» էր սարսափելի. հայերը վախենում էին «հարավից». էլ ի՞նչ խորհրդաժողով, ի՞նչ կոնֆեդերացիա, ի՞նչ համաձայնություն։ Եվ ո՛չ մի համաձայնություն էլ չկայացավ։

Իսկ մինչ պատգամավորությունները խորհրդաժողովում ճառեր էին արտասանում, մինչ Ազրբեջանն իր ամբողջ բանակը կենտրոնացրել էր Ղարաբաղի դեմ, ապր. 28-ի գիշերը, բոլշևիկները, Թուրքերի աջակցությամբ և Ազրբեջանի խորհրդարանի համաձայնությամբ, առանց մի հատիկ փամփուշտ պարպելու, մտան Բաքու և Ազրբեջանում հայտարարեցին խորհրդային իշխանություն։ Նոր գործոն էր մտնում Անդրկովկաս, որ գալիս էր բոլորովին այլ ընթացք տալու նորաստեղծ հանրապետությունների կյանքին։ Եվ այդ նոր գործոնի ուշադրության առաջին առարկան եղավ Հայաստանը։ Հեղաշրջման հաջորդ օրը Բաքվից Երևանի կառավարության ուղարկվեց հետևյալ վերջնագիրը.

«Ազրբեջանի խորհրդային Հանրապետության բանվորագյուղացիական կառավարությունը, հանձինս հեղափոխական կոմիտեի, պահանջում է՝ նախ մաքրել ձեր զորքերից Ղարաբաղի և Զանգեզուրի հողամասերը. երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները. երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածը։ Հակառակ դեպքում, Ազրբեջանյան ընկերվարական խորհրդային հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի պատերազմական դրության մեջ Հայաստանի Հանրապետության հետ։ Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակամիջոց։ Ազրբեջանի խորհրդային Հանրապետության արտաքին գործերի ժողովուրդ Հուսեյնով»։

ԳԼՈՒԽ ԻԸ

ՄԱՅԻՍՅԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն ժամանակ, երբ Վրաստանում, Ազրբեջանում, Հյուսիսային Կովկասում և ամենուրեք հայ բոլշևիկները ենթարկվում էին անողոք հալածանքի, Հայաստանի կառավարությունը նրանց տվեց հնարավորություն ապրելու և աշխատելու Հայաստանում։ Հայ բոլշևիկ գործիչներից շատերը՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ս. Խանոյան, Դ. Շահվերդյան, Մ. Սահակյան, Ե. Երզնկյան, Ավիս Նուրիջանյան և ուրիշներ իրենց կյանքը փրկեցին Հայաստանի կառավարության շնորհիվ։ Նրանք Հայաստանում վարում էին զանազան պաշտոններ պետական կամ հասարակական հիմնարկությունների մեջ՝ դպրոցներում, կոոպերատիվներում, նախարարությունների, պետական վերահսկողության, ինքնավարությունների մեջ։

Ընդունվելով Հայաստանի սահմանների մեջ՝ կառավարությունը մի պայման էր դրել հայ կոմունիստներին. Հայաստանում քաղաքական աշխատանք չկատարել։ Եվ նրանք ամենքը պատվո խոսք էին տվել հարգելու այդ պայմանը։ Նրանցից ոմանք իրենք հենց անմտություն էին համարում բոլշևիկյան գործոն աշխատանքը Հայաստանում։ Եվ քանի պատերազմական գործերը խորհրդային Ռուսաստանում հաջող չէին, ընդհանուր առմամբ, պահվում էր տված խոսքը։ Ճիշտ է, պատահում էին մասնակի խախտումներ, ինչպես երիտասարդ «Սպարտակյանների» թռուցիկը Բեոյուք-Վեդիի կռիվների ժամանակ, բայց կառավարությունը ներողամիտ աչքով էր նայում։

Սակայն, երբ կարմիր զորքերը սկսեցին մոտենալ Կովկասին, Հայաստանում հյուրընկալված բոլշևիկներն էլ չդիմացան և անցան հակապետական գաղտնի գործունեության։ Նրանք պրոպագանդ էին մղում զորքի և բանվորության մեջ. բաց էին թողնում գաղտնի թռուցիկներ ու թերթեր։ Իրենց կողմը քաշելով խորհրդարանի անկուսակցական պատգամավոր Արտաշես Մելքոնյանին, նրա միջոցով, հրատարակում էին «Գյուղացիական ձայն» թերթը, որ անհաշտ պայքար էր մղում տիրող վարչաձևի դեմ և, առանց ծածկելու, անում էր խորհրդային իշխանության գովքը։

Ա. Մռավյանը պատմում է, որ 1919—20 թվականներին բոլշևիկյան եռանդուն գործունեություն կար Հայաստանում։ Գաղտնի բջիջներ էին կազմվում, գրականություն էր տարածվում, ժողովներ էին գումարվում, քարոզչություն էր արվում զորքի և բանվորության մեջ։

«Ընկ. Ղուկաս Ղուկասյանի և նրա մոտիկ ընկերներ Արմենակ Բուգաղյանի և Աղասի Խանջյանի միջոցով,— գրում է նա,— մենք Երևանում կատարում էին կոնսպիրատիվ (գաղտնի) մեր բոլոր գործերը։ Թռուցիկներ տպել և կպցնել պատերին, գրականություն փոխադրել, ժողովատեղի գտնել, նամակ տանել Թիֆլիս՝ Երկրային կոմիտե և այլն՝ այս բոլորը նրանք կատարում էին արագ, ճիշտ, կոնսպիրացիայի բոլոր օրենքներով»։

Նույն Ղ. Ղուկասյանը «1919 թ. օգոստոսի վերջերին հատուկ հանձնարարությամբ անցնում է Դիլիջան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ՝ տեղական կազմակերպություններին հայտնելու Երևանում գումարվելիք կուսխորհրդակցության, նրա օրակարգի և կազմակերպման հետ կապված հարցերի մասին»*։

Բոլշևիկները համեմատաբար ուժեղ էին Ալեքսանդրապոլում։ Այստեղի նրանց կոմիտեն մեծ գումարներ էր ստանում Թիֆլիսից ու Ռուսաստանից, գաղտնի թերթ էր հրատարակում և քարոզիչներ ու կազմակերպիչներ ուղարկում երկրի զանազան կողմերը։ Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող չեզոք գոտին հենակետ էր բոլշևիկների համար, որտեղից նրանք, գաղտնի ճանապարհներով, մարդ, դրամ և գրականություն էին ներմուծում Հայաստան։ 1920 թվականի սկիզբներին Հայաստանը արդեն թատերաբեմ էր բոլշևիկյան գործոն քարոզչության և կազմակերպության։

Կառավարությունը տեղյակ էր բոլշևիկների գործունեությանը, բայց դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնելու։ Ներքին գործոց նախարարությունը մոտից հետևում էր նրանց գաղտնի շարժումներին ու պարագլուխների քայլերին, ծանոթ էր նրանց ծրագրերին և բանակի ու բանվորության մեջ մղած հակակառավարական գործունեության։ Հայաստանի քաղաքական հետախուզության և պահեստի միլիցիայի գլուխը կանգնած էր Լևոն Քալանթարյանի պես մի հմուտ ու եռանդուն գործիչ, որի տեսողությունից խուսափելը շատ էլ հեշտ չէր։ Բայց կառավարությունը դանդաղում էր վճռական միջոցներ ձեռք առնել. հոգեբանորեն պատրաստ չէր «մեզ պես ընկերվարական կոմունիստներին», «մեր երեկվա ընկերներին» ձերբակալելու։ Կար և Վրաստանի օրինակը. դեռ երեկ Հայաստանի հասարակաց կարծիքը այնպես խիստ դատապարտում էր վրաց մենշևիկների գործադրած դաժան միջոցները բոլշևիկների դեմ՝ հիմա ինչպե՞ս անել նույնը մեզ մոտ։

* «Խորհրդ. Հայաստան», 14 մայիս, 1927։

Սակայն, թե Դաշնակցության մեջ և թե չեզոք շրջաններում կար և հակառակ վերաբերում. ամեն կողմից մատնանշվում էր այն վտանգը, որ բոլշևիկները կարող էին հասցնել Հայաստանին։ Այս տրամադրության և եղած պահանջների հետևանքով, ներքին գործոց նախարարությունը, հունվ. 31-ին Երևանում և Դիլիջանում ձերբակալեց մի քանի կոմունիստների։

Այս փաստը բոլշևիկներն ընդունեցին իբրև մարտահրավեր։ Մի քանի օր անցած, սոցիալ-դեմոկրատ գործիչ Արշակ Զոհրաբյանի հուղարկավորության առթիվ, նրանք կազմակերպեցին աղմկոտ մի ցույց, որի նպատակն էր ցուցադրել իրենց ուժերը և Հայաստանի իշխանության դեմ պայքարին հրապարակային բնույթ տալ*։

Հունվ. 31-ի ձերբակալությունները նյութ դարձան և խորհրդարանական հարցապնդման։ Փետր. 20-ին սոց.-հեղափոխական պատգամավոր Վահան Մինախորյանը կառավարությանն ուղղեց հետևյալ հարցապնդումը.

«Հունվ. 31-ին ներքին գործոց նախարարի կարգադրությամբ Երևանում և Դիլիջանում ձերբակալվել են մի քանի անձնավորություններ. պատճառաբանությունն այն է, թե հիշյալ անձինք ունեցել են հակապետական և հակակառավարչական ընթացք, սակայն, նրա կարգադրության մեջ չի հիշատակվում որևէ օրենք, ազդ կամ նույնիսկ բերանացի նախազգուշացում, որի հիման վրա կարելի լիներ արգելափակման ենթարկել քաղաքացիներին։ Ժամ. կառավարության հրատարակած օրենքը, որի վրա հիմնված պիտի լինի հիշյալ կարգադրությունը, բոլորովին այլ բան է ասում, և հենց այդ տեսակետից կատարված փաստը ապօրինություն է։

Մյուս կողմից, պարզ պիտի լիներ, թե քաղաքական հոսանքի դե՞մ է ուղղված այդ հալածանքը, թե սոսկ անհատների։ Եթե առաջինն է, ապա դա ապօրինություն է, որովհետև քաղաքական հոսանքը պիտի ազատ լինի որևէ հետապնդումից. եթե երկրորդն է, ապա ո՞ւր է այն կոնկրետ մեղադրանքը նրանց կատարած գործերի։ Նրանց հրատարակած մեկ գիրքը, բաց թողած թռուցիկը չեն պարունակում որևէ հակապետական կամ հակակառավարչական բովանդակություն, իսկ տաճիկ

* Արշակ Զոհրաբյանը ռուսական սոցիալ-դեմկրատիայի հայտնի դեմքերից էր և մտերիմ բարեկամ Ժորդանիայի ու Ռամիշվիլիի։ Ռուսական հեղափոխությունից հետո գործում էր Կովկասում, վրաց մենշևիկների հետ միասին, հակառակորդ էր բոլշևիկների և դաշնակցականների։ Վրաստանի անկախությունից հետո, անցել էր ընդդիմադիրների կողմը և, իբրև միջազգայնական, քննադատում էր վրաց մենշևիկների արարքները։ Այս պատճառով, հալածանքի ենթարկվեց Վրաստանում և իր երեկվա ընկերների ձեռքից ազատվելու համար՝ փախավ Երևան։ Հայաստանի կառավարությունը խոստացել էր նրան կարևոր մի պաշտոն, սակայն, նա վարակվեց բծավոր տիֆով և հունվարի 4-ին մեռավ։

փաշաների հետ համաձայնություն կնքած լինելու լուրերը փաստացիորեն ապացուցված չեն։ Այսպես նայելով խնդրին՝ սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիան կատարված ձերբակալությունները համարում է ապօրինի և առաջարկում է ազատել նրանց»։

Զուտ ձևական-իրավաբանական տեսակետից սոց.-հեղափոխականների մեղադրանքը, գուցե և իրավացի էր. այն ժամանակները պետական ո՞ր պաշտոնյան էր այնքան հմուտ գոյություն ունեցող օրենքներին, որ կարողանար անթերի կերպով, պետական օրենքի բոլոր պահանջներին համապատասխան ձևակերպել իր գործերը։ Սակայն, ըստ էության սոցիալիստ-հեղափոխականները, իհարկե, անարդար էին. նրանք շատ լավ ծանոթ էին բոլշևիզմի էությանը և հայ բոլշևիկների գործունեության բնույթին, որպեսզի կարողանային պնդել, թե՝ «նրանց հրատարակած մեկ գիրքը, բաց թողած թռուցիկը չեն պարունակում որևէ հակապետական կամ հակակառավարչական բովանդակություն»։ Եվ նախարարի տված բացատրություններն ու հետագա վիճաբանությունները լիովին հաստատեցին այս պարագան։

Ներքին գործոց նախարար Ա. Գյուլխանդանյանը տվեց հետևյալ բացատրությունները. «Նրանք, ովքեր ընդունում են Հայաստանը որպես անկախ պետական միավոր, այսպիսի հարցապնդում չպիտի անեին, քանի որ նորակազմ պետությունը ամենահասարակ վտանգներից իսկ կարող է տուժել, և կառավարությունը ամեն միջոց պիտի ձեռք առնի երկիրը զերծ պահելու որևէ պատահարից։ Հայաստանում կան բավական թվով բոլշևիկներ, որոնք՝ իրենց ասելով եկել են այստեղ միայն ապաստան գտնելու և ո՛չ մի գործունեություն չպիտի ունենան։ Սակայն, դեռ հուլիս ամսին, Բեյուք-Վեդիի կռիվների ժամանակ, նրանք տպեցին մի թռուցիկ, որով կոչ էին անում զորքին չգնալ կռվի։ Այնուհետև, տեղի ունեցան մի քանի դեպքեր Սարիղամիշ—Ալեքսանդրապոլ երկաթուղագծի վրա և այլն։ Հայաստանի անկախության տոնի օրը պատերին փակցվեցին թռուցիկներ, որոնք ուղղված էին մեր պետական կազմի դեմ։

Վերջին տեղեկությունները ցույց են տալիս, որ օրեցօր Հայաստան են գալիս նոր մեծամասնականներ, որոնք իրենց հետ բերում են խոշոր գումարներ՝ ագիտացիայի համար։ Մյուս կողմից, անհերքելի փաստ է, որ ռուս մեծամասնականները դաշն են կապել երիտասարդ թուրքերի հետ։ Այդ համաձայնությամբ տաճկական զորքերը պիտի անցնեն Հայաստանի վրայով Գենիկինի թիկունքին խփելու համար։ Ի՞նչ դրության մեջ կընկնի Հայաստանը այդ պարագային, պարզ է ամենքին, բայց մեծամասնականների համար դա արժեք չունի և, եթե կուզեք, հայ ժողովրդի բնաջնջման գնով նրանք կիրագործեն իրենց ծրագիրը։ Ազրբեջանում և Անդրկովկասյան երկրում բոլշևիկյան շարժման գլուխ են անցել տաճիկ ջարդարարներ, որպիսիք են Նուրի փաշան, Քյազիմ բեյը և այլն։ Վերոհիշյալ փաստերը կառավարությունը նկատել է որպես հանցանք և միջոցներ է ձեռք առել նրանց դեմ, որոնք ակտիվ քայլերն են անում մեր պետության կամ կառավարության դեմ»։

Նախարարի բացատրություններից հետո տեղի ունեցան բուռն վիճաբանություններ։ Սոց.-հեղափոխական Ա. Խոնդկարյանը՝ ընդարձակորեն վեր առնելով հարցապնդման նյութը՝ հայտնեց, որ ինքը հակառակ է բոլշևիզմին, բայց պնդում է, որ յուրաքանչյուր հանցանք պետք է ձևակերպվի և գործը հանձնվի դատարանին։ Այս հողի վրա, իհարկե, հարցապնդման դեմ չէր կարելի առարկել, բայց հարցապնդման իսկական իմաստը այդ չէր։

Իր ճառի մեջ հետաքրքրական մերկացումներ արավ Ա. Ջամալյանը. «Միլլի շարժման և բոլշևիկների դաշինքը,— ասաց նա,— դժբախտաբար, ճշմարտություն է. դրա հետևանքը այն է, որ մեր ժողովրդի գոյությունը թղթախաղի վրա է դրվում։ Թիֆլիս եղած ժամանակս, բոլշևիկների Անդրկովկասյան Գերագույն գործադիր մարմնի շրջանային կոմիտեի ականավոր անդամներից մեկը հայտնեց ինձ, որ նոյեմբ. 27-ին Բաքվում, բոլշևիկների և երիտասարդ թուրքերի միջև կայացել է մի համաձայնություն, որ տաճկական զորքերը Հայաստանի վրայով պիտի անցնեն Դենիկինի թիկունքը բռնելու համար։ Նույն այդ անձնավորությունը ասաց, որ իրենք միջոցներ պիտի ձեռք առնեն հայերի կոտորածի առաջն առնելու համար, բայց, իհարկե, կարող է իրենց այդ չհաջողվի. սրանք փաստեր են և ոչ ոք հերքել չի կարող։

Այժմ տեսնենք, ձերբակալված բոլշևիկները կապ ունե՞ն այս ամենի հետ. կուսակցական կարգապահությամբ ստորին մարմինը ենթարկվում է վերին մարմնի կարգադրություններին. բոլշևիկների Անդրկովկասյան կոմիտեի հրահանգները պարտադիր են Հայաստանի կոմիտեի համար, և սա պետք է ի կատար ածե, եթե հակառակ էլ լինի։ Ահա իսկական պատկերը գործի, որ ըմբռնել է կառավարությունը և միջոցներ է ձեռք առել, բայց, ցավոք սրտի, կիսատ։ Պետք է կռվել ամբողջ կազմակերպության դեմ, որպեսզի նա հնար չունենա ուժ դառնալու»։

Այս հարցապնդման առթիվ տեղի ունեցած վիճաբանություններից երեք խնդիր դառնում էր ակնհայտ ու անհերքելի. նախ՝ որ հայ կոմունիստները Հայաստանի սահմաններում կատարում են գործոն աշխատանք՝ պետական հեղաշրջում առաջ բերելու նպատակով, երկրորդ՝ որ բոլշևիկների և թուրքերի միջև գոյություն ունի իրական համաձայնություն, որի հետևանքով թուրքերը պարտավորվել են օգնել բոլշևիկներին Դենիկինի դեմ, և, հետևաբար՝ երրորդ՝ բոլշևիկներին օգնության գնալիս՝ թուրքերը պետք է անցնեն Հայաստանի վրայով՝ նոր քայքայումների ու կոտորածի մատնելով մեր երկիրը։

Հայաստանում առանձնապես մեծ անհանգստություն պատճառեց բոլշևիկ-քեմալական գործակցությունը։ Հայ կոմունիստները վրդովումով հերքում էին այդպիսի գործակցության գոյությունը, և մամուլի մեջ

տարածված լուրերը համարում էին «դաշնակների պրովոկացիայի» արդյունք։ Այն օրերին հայ բոլշևիկները դեռ ամոթ էին համարում բարեկամությունը թուրք ջարդարարների հետ։ Հետո ժամանակները փոխվեցին, փոխվեցին և բարքերը...

Հայաստանի կառավարությունը, ինչպես և Դաշնակցության բարձրագույն մարմինը մեկից ավելի անգամներ քննության առան բոլշևիկ-քեմալական համաձայնության փաստը, ինչպես և այդ փաստից բխելիք հետևանքները։ Պարզ էր, որ համաձայնության մեջ, ուղղակի կամ անուղղակի ձևով որոշ տեղ պետք է ունենար և Հայաստանը հենց, թեկուզ, իր աշխարհագրական դիրքի պատճառով։ Իրերի առարկայական ընթացքը թելադրում էր միջոցներ ձեռք առնել, որպեսզի ապագա իրադարձությունների պարագային՝ հայ ժողովուրդը ոտքի տակ չգնա։ Այս մտահոգությամբ, Դաշնակցության բյուրոն, հունվարի սկզբներին Թիֆլիս ուղարկեց իր անդամներից երեքին՝ Ա. Ջամալյանին, Ռ. Տեր-Մինասյանին և Ս. Վրացյանին, որպեսզի հարաբերության մեջ մտնեն Դուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոյի հետ և պարզեն վերոհիշյալ հարցի մանրամասնությունները, ինչպես նաև այդ հարցից բխելիք գործնական հնարավորությունները։ Հայտնի էր, որ բոլշևիկների ղեկավարության կենտրոնը Թիֆլիսում էր, ուր գաղտնի աշխատում էին մի շարք աչքի ընկող կոմունիստ գործիչներ։ Հ. Հ. Դ. բյուրոյի անդամները մեկնեցին Թիֆլիս՝ ունենալով իրենց հետ բոլշևիկ-քեմալական համաձայնագրի պատճենը։

Տեսակցությունը տեղի ունեցավ Կովկասյան բյուրոյի ընդհանուր քարտուղար Հ. Նազարեթյանի հետ, և, վերջին հաշվով, խիստ ճնշիչ տպավորություն թողեց։

Նազարեթյանին տրվեց երկու հարց։ Առաջին՝ ճի՞շտ է, որ բոլշևիկների և քեմալականների միջև կնքված է գաղտնի համաձայնություն։ Երկրորդ՝ ճի՞շտ է, որ այդ համաձայնությունը ուղղված է նաև Հայաստանի դեմ։ Բոլշևիկ-քեմալական համաձայնության փաստը նա չհերքեց, բայց շատ երկար խոսում էր այն մասին, որ կոմունիստական հեղափոխությունը պաշտպան է ճնշված ազգերին և, ուրեմն, չի կարող չպաշտպանել նաև հայ ժողովրդին։ Հ. Հ. Դ. բյուրոյի ներկայացուցիչները հեռացան այն համոզումով, որ եթե բոլշևիկ-քեմալական բարեկամության շահերը պահանջեն, Հայաստանը կզոհաբերվի հանուն բոլշևիկների արևելյան քաղաքականության։ Տեսակցության միջոցին, հիշելով Լենինի դեկրետը Հայաստանի անկախության մասին, ինչպես նաև գաշնակցականներից ոմանց գործակցությունը Ս. Շահումյանին, Հ. Հ. Դ. բյուրոյի անդամները հայտնեցին այն միտքը, թե հայ ժողովրդի շահը պահանջում է որոշ հասկացողություն բոլշևիկների և Հայաստանի ղեկավար կուսակցության միջև։ Պատասխանը եղավ շոր հեգնական ժպիտ։ Ինչ հասկացողություն, հարկավոր է արագացնել խորհրդային

իշխանության տարածումը նաև Կովկասի վրա։ Ընդառաջ գնալու, համաձայնության եզր գտնելու ո՛չ մի ցանկություն չարտահայտվեց կովկասյան բյուրոյի վարիչի կողմից։

Թե՛ նախորդ դեպքերը, թե՛ այս փաստը և թե՛ այն գաղտնի տեղեկությունները, որ ամեն օր ստացվում էին կառավարության հետախուզական բաժնում, ո՛չ մի կասկած չէին թողնում այլևս, որ Հայաստանի դեմ նյութվում է մի դավ և որ այդ դավի անմիջական մասնակիցներն ու դերակատարները Հայաստանում հյուրընկալված հայ կոմունիստներն են։ Դանդաղելն այլևս հանցանք էր, և կառավարությունը ձեռք առավ կտրուկ միջոցներ. իրար հետևից տեղի ունեցան ձերբակալություններ։ Բռնվեց աչքի ընկնող կոմունիստների մեծ մասը, որոնք որոշ ժամանակ բանտում պահվելուց հետո՝ արտաքսվեցին Հայաստանի սահմաններից։ Ձերբակալվածների մեջ էր և Ավիս Նուրիջանյանը, որը կարողացավ փախչել և հետագայում դարձավ հակապետական շարժման մոլի ղեկավարներից մեկը։

Կատարված ձերբակալություններն ու խուզարկությունները կառավարության ձեռքը տվին առատ նյութ, որից երևաց, որ բոլշևիկները պատրաստում էին Հայաստանում ընդհանուր ապստամբություն, այդ նպատակով արտասահմանից ստացել էին խոշոր գումարներ և ձեռնարկել էին մարտական խմբերի կազմակերպության։ Հայտնի դարձավ, ընդհանուր առմամբ, և ապստամբության հատակագիծը։ Պարզվեց նաև, որ բոլշևիկները որոշած են եղել օգտագործել Հայաստանի այլազգի տարրերի՝ մահմեդականների և ռուսների դժգոհությունը, ինչպես նաև երկրում տիրող պարենավորման ծանր կացությունը, որը սրվել էր այն պատճառով, որ կառավարությունը իր ունեցած հացի պաշարի մեծ մասը հատկացրել էր ցանելու, իսկ ամերիկյան ալյուրը ուշացել էր փոխադրության միջոցների թերության հետևանքով։

Պարենավորման հողի վրա, փետրվար և մարտ ամիսներին, նույնիսկ մի քանի ցույցեր էին տեղի ունեցել քաղաքային ինքնավարությունների և պարենավորման նախարարության դեմ։ Բոլշևիկները գրգռում էին ամբոխի մութ բնազդները. խոսում էին այն անսպառ հացի, շաքարի, հագուստեղենի ու նավթի մասին, որ պիտի լցվի Հայաստան, եթե նրա հաստատվի խորհրդային իշխանություն, և հրավիրում էին տապալելու «դաշնակների բռնապետությունը»։ Սոված ու տկլոր մարդիկ, իհարկե, հեշտությամբ ենթարկվում էին այսպիսի քարոզչության և կույր գործիք էին դառնում բոլշևիկների ձեռքին։ Պետք է արձանագրել և այն իրողությունը, որ տնտեսական տագնապն ու սովը իբրև քաղաքական պայքարի զենք գործ էին ածում ո՛չ միայն միջոցների մեջ խբտրություն չդնող բոլշևիկները, այլև ուրիշ՝ ավելի չափավոր տարրերը, ինչպես, օրինակ, ժողովրդական կուսակցությունը։

Առաջ հայ բոլշևիկները ժխտում էին այն մեղադրանքը, թե իրենք

հանրապետության օրով աշխատել են պետական հեղաշրջում առաջ բերել, թե մայիսյան օրերին որոշել են ընդհանուր ապստամբություն անել։ Այժմ արդեն, հենց իրենց կողմից հրատարակված բազմաթիվ փաստերով ու վավերագրերով, հաստատվում է, որ 1919 և 1920 թվականների ընթացքում հայ կոմունիստները Հայաստանում պատրաստվելիս են եղել, ապստամբության միջոցով, խորտակելու Հայաստանի անկախությունը*։

Այս տեսակետից հետաքրքրական են հայ բոլշևիկ պարագլուխների վկայությունները.

«Բոլշևիկյան ակտիվ և խտացած գործունեությունը Հայաստանի տերիտորիայում,— գրում է Ս. Կասյանը*,— իրապես սկսվել է 1919 թվի ամառվանից։ Ճիշտ է, առաջ էլ եղել են այդտեղ խմբեր, բայց որովհետև մեր կուսակցության Երկրային կոմիտեն կտրված է եղել Հայաստանից, նա չի կարողացել ոչ կազմակերպչական գործ կատարել այդ խմբերի միջոցով, ո՛չ էլ ուղղություն տալ նրանց գործունեությանը։ Անգլիացիների գալուց հետո, երբ դաշնակներն ավելի էին երես առել և իշխանությունն ամբողջապես կենտրոնացրել իրենց ձեռքը, այդ խմբերի գործունեությունը լիկվիդացիայի է ենթարկվում համարյա ամբողջապես։ Նույն տարվա սեպտեմբերին, նախապատրաստական աշխատանքներից հետո, Երկրային կոմիտեի ներկայացուցիչները կազմակերպում են Երևանում՝ գավառներից հրավիրված պատասխանատու ընկերների գաղտնի խորհրդակցություն, ուր մշակվում է այդ երկրում մեր գործունեության հիմնական տակտիկան և ստեղծվում կենտրոնական մարմին՝ «Հայաստանի կոմիտե»**։

Այս խորհրդակցությունը, ըստ Կասյանի, մեկնում է այն փաստից, որ Հայաստանում «արդյունագործական կապիտալիզմի նշույլն անգամ գոյություն չունի», «առևտրական կապիտալիզմի դեմքն էլ վաղուց մոռացվել է», «գյուղացիության խոշորագույն մասը անծանոթ է լատիֆունդիական, նույնիսկ կալվածատիրական հարաբերություններին, ուր աղգաբնակչության 90% աղքատության և զրկանքի մեջ է քարշ տալիս իր խղճուկ գոյությունը», և առաջադրում է հետևյալ նշանաբանները. «1. վճռական պայքար Անտանտի դեմ. 2. վճռական պայքար այն ներքին ուժերի դեմ, որոնց վրա հենվում է նա՝ դաշնակ կառավարության և արտասահմանյան հայ բուրժուազիայի ագենտների. 3. անխնա վարկաբեկումն ցարական և բուրժուական Ռուսաստանի և 4. որպես դրական

* Տե՛ս Շ. Ամիրխանյան, *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1926. Մոսկվա* և Աշ. Հովհաննիսյան, *Հայաստանի հեղափոխության Հուլիսն ու Հոկտեմբերը, Երևան, 1925 թ.*։

** «Նոր աշխարհ», ամսագիր, սեպտեմբեր, 1922 թ., № 2։

հակադիր այդ բացասական լոզունգների՝ միջազգային հեղափոխական պրոլետարիատի կոմունիստական պայքարի ու բանվորագյուղացիական Ռուսաստանի բարոյական հմայքի բարձրացումը և խորհրդային հանրապետության հաստատումը Հայաստանում»։

«1920 թվի հունվարի երկրորդ կեսին Երևանում տեղի ունեցած կուսակցական անլեգալ կոնֆերենցիան, հիմնվելով կուսակցության քառամսյա փորձառության վրա, ամբողջապես ընդունեց և հաստատեց այդ վարքագիծը։ Տարաձայնությունը վերաբերվում էր միայն այն հարցին, թե կուսակցությունը մասնակցելո՞ւ է բոլոր հասարակական հաստատությունների գործառնությանը, օրինակ զեմստվոների, թե՞ միայն դասակարգային հիմնարկությունների՝ արհմիությունների և գյուղացիական միությունների»։

«...Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, որ գլխավորապես բաղկացած էր համարյա բացառապես Բաքվից ու Թիֆլիսից եկած երկաթուղային բանվորներից, իր ներկայացուցիչների բերանով հարց էր հարուցել իշխանությունը վերցնելու մասին, բայց կոնֆերենցիան կտրականապես մերժեց այդ», որովհետև «կոնֆերենցիան կանգնեց այն տեսակետի վրա, թե որքան էլ հեշտ լինի բլանկիստական հարվածով գրավել իշխանությունը ինքնուրույնաբար և մեկուսացած, այնուամենայնիվ իշխանությունը ձեռքում պահելը անկարելի պիտի լինի՝ այն հասարակ պատճառով, որ 1) կուսակցությունը, բաղկացած լինելով ո՛չ ավելի քան 500 անդամից, չափազանց աղքատ լինելով փորձված ու պատրաստի ուժերով, չպիտի կարողանա ո՛չ միայն դիմադրել այն ժամանակվա քաղաքական և հոգեբանական սիտուացիայում անխուսափելիորեն առաջ գալիք քաղաքացիական կռվին, այլև իշխանություն կազմակերպել կենտրոնում և տեղերում. 2) որ նա հնարավորություն չպիտի ունենա կազմակերպելու այնպիսի բանակ, որը կարողանա, առանց «դրսի» օգնության, դիմադրել արտաքին թշնամիների՝ մենշևիկյան Վրաստանի, մուսավաթական Ազրբեջանի և քեմալական Տաճկաստանի ամենաթեթև արշավանքին անգամ. 3) որ ծայրաստիճան քայքայված և սովի ճիրաններում գալարվող երկրի ցուրտն ու քաղցը մի կողմից, իսկ տրնտեսական անխուսափելի բլոկադան մյուս կողմից՝ հենց սաղմի մեջ պիտի խեղդեն խորհրդային իշխանությունը»։

«Կացությունը,— բացատրում է Կասյանը,— պահանջում էր զբաղվել ո՛չ թե այդ տհաս մտքով, այլ կուսակցական կազմակերպությունների և սրանց ազդեցության ու նշանաբանների տարածմամբ ու խորացմամբ, արհեստակցական և գյուղացիական միությունների միջոցով իներտ մասսաների քաղաքական գաստիարակությամբ՝ զարթեցնելով նրանց մեջ ինքնագործունեության և ինքնիշխանության ձգտումը։ Այդպիսով, պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական

Ռուսաստանի հետ։ Միայն երկու դեպքի համար էր կոնֆերենցիան առաջադրել անպայմանորեն բարձրացնելու ապստամբության դրոշը և ընդհանուր ճակատ ստեղծելու՝ ինչ գնով էլ ուզում է լինի. նախ՝ եթե դաշնակ կառավարությունը հանդգնություն ունենա Անտանտի թելադրանքով և մենշևիկյան Վրաստանի հետ միասին օգնել մուսավաթական կառավարությանը՝ խոշընդոտ հանդիսանալու կարմիր բանակին՝ Բաքուն հարկադրանոք գրավելու դեպքում. երկրորդ՝ եթե նա Ազրբեջանի կամ Վրաստանի բանվորագյուղացիական ապստամբությունը թիկունքից խանգարել ուզենա»։

Կասյանի այս հավաստիացումներն, ըստ երևույթին, ավելի շուտ իր անձնական համոզումներից են բխում, քան իրական փաստերից։ Անկարելի չէ, որ նա ինքը այդպես էր մտածում, բայց կոնֆերենցիան, հնշուշտ, ավելի համամիտ էր «Ալեքսանդրապոլի կազմակերպության ներկայացուցիչներին», որոնց առաջնորդ Ավիսը խիստ մարտական մի բանաձևով առաջարկում էր անմիջապես «վերցնել իշխանությունը»։ Կասյանը հավատացնում է, որ այդ բանաձևը ո՛չ միայն չի անցել, այլ չի էլ քննվել, մինչդեռ կոմկուսի կենտրոնական պաշտոնաթերթ «Իզվեստիայի» 1922 թ. 25 հունվ. № 1-ում այդ բանաձևը տպված է, որպես խորհրդակցության կողմից ընդունված և հայ կոմունիստների համար պարտադիր մի որոշում։ Հետագա դեպքերն էլ զարգացան Ավիսի բանաձևի ուղղությամբ, և Կասյանի հոգեշահ խորհրդակցությունները «ղանգվածի օբյեկտիվ կացության», «երկրի իրական պայմանների» ու «տնտեսական-դասակարգային ստրուկտուրայի» մասին միայն գայլի շարականներ էին «մեր դոկտրինյորների, դիալեկտիկորեն մտածելու շնորհքից զրկվածների և ձախության հիվանդությամբ բռնվածների համար»։

Այդ երևում է և Աշ. Հովհաննիսյանի վկայությունից։

«Սովետիզացիայի խնդիրը,— ասում է նա,— պարտավորիչ էր ամենից առաջ կոմունիստական կուսակցության Հայաստանի կոմիտեի— Արմկոմի— համար։ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գաղտնի կոնֆերանսը, որ տեղի ունեցավ Երևանում, 1920 թվի հունվարին, ընդունել էր թեզիսներ այն իմաստով, որ կարմիր բանակի մերձեցման և հարևան հանրապետությունների հեղաշրջում լինելու դեպքում պետք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը։ Վերահաս դեպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղությամբ։ Հայաստանի կոմիտեն ենթադրում էր, որ Ղազախն ու Ղարաբաղը, որպես սահմանակից շրջաններ, հեղաշրջման հենակետներ պետք է դառնային Հայաստանի համար։ Մինչ այդ պետք էր խուսափել վճռական գործողություններից, բավականանալ միայն կազմակերպչական աշխատանքով»*։

* «Խորհրդ. Հայաստան», 1925 թ., մայիս 1., № 98։

Հայ կոմունիստների հակապետական շարժման դրդիչ և ազդանշան հանդիսացավ Ազրբեջանի խորհրդայնացումը։ Անտարակույս, հայերը տեղյակ էին Ազրբեջանում սպասվող դեպքերին և իրենք էլ պատրաստվում էին այդ ուղղությամբ։

Հայ բոլշևիկները որոշ հույսեր կապում էին և այդ միջոցին Ղարաբաղում զարգացող պատերազմական գործողությունների, ինչպես և ռուս ու մահմեդական տարրերի դժգոհության հետ։ Նրանց հաշիվը պարզ էր. շահագործելով սովը, տնտեսական ճգնաժամը, ռուսների ու մահմեդականների կենտրոնախույս բնազդները մի կողմից և մյուս կողմից՝ բոլշևիկների արտաքին ուժն ու կարմիր բանակի հմայքը՝ պայթեցնել Հայաստանի Հանրապետությունը։ Զինված ապստամբությունն ու քաղաքացիական կռիվը այդ նպատակին հասնելու ուղիղ ճանապարհն էին։

Ազրբեջանի հեղաշրջումը զուգադիպեց մայիսի մեկի տոնին։ Երևանում և Հայաստանի մյուս վայրերում հայ աշխատավորությունը պատրաստվում էր առանձին հանդիսավորությամբ տոնելու աշխատավորների միջազգային համերաշխության օրը։ Բոլշևիկները օգտվեցին դրանից և աշխատեցին մայիսյան տոնը վերածել ընդհանուր հակապետական ապստամբության։ Երևանում այդ չհաջողվեց, բայց գավառական մի շարք քաղաքներում նրանք ունեցան կարճատև հաջողություն։

Շարժումները զարգացան հետևյալ ձևով։ Երևանում Մայիսի մեկը տոնվեց աննախընթաց շուքով։ Ամբողջ քաղաքը զարդարված էր կարմիր դրոշակներով, գորգերով ու ծաղիկներով։ Վաղ առավոտվանից փողոցները լցված էին խուռն բազմություններով։ Հրապարակներն ու Աբովյան պողոտան բռնված էին արհեստակցական միությունների անդամներով, դրոշակներով ու նշաններով։ Կազմակերպված թափորին մասնակցում էին բոլոր հասանքները։ Քրիստափորի, Ռոստոմի ու Զավարյանի պատկերների կողքին դրված էին և Լենինի ու Շահումյանի պատկերները։ Դաշնակցության նշանախոսքերին ու մակագրություններին զուգընթաց կային և բոլշևիկյան աղմկարար կարգախոսներ։ Զորահանդեսից հետո խորհրդարանի առջև տեղի ունեցավ հրապարակային փառահեղ ժողով, ուր ճառեր արտասանեցին խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանը, արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը, վրաց սոց.-դեմոկրատ հայտնի գործիչ Ի. Ռամիշվիլին, Սեպուհը և ուրիշներ։ Ապա տեղի ունեցավ Երևանի նոր կայարանի հանդիսավոր բացումը, ուր նույնպես արտասանվեցին բազմաթիվ ճառեր։ Օրվա ճառախոսների գլխավոր նյութն էր կարմիր դույն առած Ազրբեջանի վերջնագիրը, որ նոր էր ստացված Երևանում և որով պահանջվում էր երեք օրվա ընթացքում մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից։ Այդ առթիվ ընդունվեց մի բանաձև, որի մեջ ժողովը «հայտնում էր իր բուռն զայրույթը թուրք գյուղացիության և բանվորության անունը չա-

հագործող դահիճներին, որոնք խորհրդային իշխանության և կոմունիզմի անունը օգտագործելով՝ շարունակում են նախորդ կառավարության արյունոտ գործը։ Հայաստանի աշխատավորությունը իր եղբայրական ձեռքն է մեկնում Ազրբեջանի աշխատավորությանը և պահանջում է վերջ տալ արշավանքին դեպի Ղարաբաղ և Զանգեզուր՝ թույլ տալով, որ այդ գավառների գյուղացիությունն ու բանվորությունը ինքը ազատորեն արտահայտե իր կամքը։ Հայաստանի աշխատավորությունը խորապես հավատալով, որ Ռուսաստանի խորհրդային իշխանությունը թույլ չի տա Ազրբեջանին հարձակողական քաղաքականություն՝ միևնույն ժամանակ պահանջում է իր կառավարությունից անհողդողդ պաշտպանել Հայաստանի և հայ աշխատավորության ազատությունն ու անկախությունը և առաջարկում է արհեստակցական միությունների միության այս բանաձևը անմիջապես հայտնել բոլոր երկրների աշխատավորությանը և խորհրդարանների սոցիալիստական ֆրակցիաներին»։

Բանաձևը, որ առաջարկված էր արհեստակցական միությունների կենտրոնական վարչության կողմից, դնում էր տարբերություն խորհրդային Ռուսաստանի և Ազրբեջանի քաղաքականության միջև։ Թեև հետագա դեպքերը ցույց տվին, որ ո՛չ մի տարբերություն չկար։ Նա արտահայտում էր այն նպաստավոր տրամադրությունը, որ կար Երևանի արհեստակցական միությունների որոշ մասերում, հատկապես ավտոգարաժի ծառայողների մեջ։ Եվ թափորների ու ժողովների ընթացքում էլ փորձեր եղան տոնին տալ բոլշևիկյան բնույթ, նույնիսկ արտասանվեցին հակակառավարչական ճառեր, բայց, ընդհանուր առմամբ, ժողովուրդը մնաց անտարբեր բոլշևիկների հանդեպ հարուցած աղմուկ-ժխորին։ Պարզ էր, որ Երևանը բոլշևիկների հետ չէր, բայց անվիճելի էր նաև, որ բոլշևիկյան տարրերն ու տրամադրությունները այնքան էլ արհամարհելի չէին։

Գավառում դեպքերը բոլորովին ուրիշ ընթացք ստացան։

Հիշեցինք արդեն, որ Ալեքսանդրապոլը կազմում էր բոլշևիկների գործունեության կենտրոնը։ Ապրիլի վերջերին այստեղ էին հավաքված նրանց գլխավոր գործիչներն ու մարտական ուժերը՝ հեղաշրջում առաջ բերելու որոշումով։ Մայիսի մեկին տեղի ունեցան բոլշևիկյան բուռն ցույցեր։ Ի միջի այլոց հարձակում գործվեց Դաշնակցության ակումբի վրա, պատերից փրցվեցին և ուռքի տակ նետվեցին Քրիստափորի, Զավարյանի և ուրիշների նկարները։ Ո՛չ մի կողմից ո՛չ մի դիմադրություն։ Տեղական իշխանությունը շվարած չքանում է. դաշնակցականները խուսափում են արյունահեղությունից։ Հրապարակը մնաց բոլշևիկներին։ Հակապետական շարժման կենտրոն էր «Վարդան Զորավար» զրահագնացքը։

Լուրը Երևան հասնելուն պես՝ զինվորական նախարարը կարգադրեց, որ «Վարդան Զորավարի» պետ գլխապետ Մուսայելյանը գնացքը

առնելով՝ մեկնի Ղամարլուի ճակատը։ Մուսայելյանը ո՛չ միայն չկատարեց իր բարձրագույն իշխանավորի հրամանը, այլև կարգադրեց, որ Ղամարլուի ճակատից անմիջապես Ալեքսանդրապոլ մեկնի զրահապատ գնացքի մի մասը, որ պահպանում էր Հայաստանի սահմանները Վեդիբասարի թուրքերի դեմ։

Հրամանը կրկնվեց և սպարապետ զոր. Նազարբեգյանի կողմից, բայց Մուսայելյանը նորից չենթարկվեց։ Ընդհակառակը, զրահապատ գնացքի վրա բարձրացրեց բոլշևիկյան դրոշը, որից հետո նույն Մուսայելյանի նախագահությամբ կազմվեց Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտե, որը հայտարարեց իրեն երկրի գերագույն իշխանություն։ Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ դերերը բաժանված էին հետևյալ ձևով. նախագահ և զինվորական կոմիսար՝ Մուսայելյան, արտաքին գործերի կոմիսար՝ Ավիս Նուրիջանյան, ներքին գործերի կոմիսար՝ Արտաշես Մելքոնյան։ Ռազմահեղափոխական կոմիտեն բռնեց Ալեքսանդրապոլի կայարանը, իր կողմը քաշեց տեղական զորքի մի մասը և կտրեց երկաթուղային հաղորդակցությունը դրսի աշխարհի հետ։

Ապա՝ Մուսայելյանը անմիջապես ուղիղ հեռագրաթելով վերջնագիր ուղարկեց Երևան՝ պահանջելով, որ կառավարությունը իրեն հանձնի իշխանությունը։ Ռազմահեղափոխական կոմիտեի անունից հեռագրեր տրվեցին Կարս, Սարիղամիշ, Ղարաքիլիսա և ուրիշ վայրեր, որոնցով հայտարարվում էր Հայաստանի խորհրդայնացումը և զինվորական ու քաղաքացիական իշխանություններին հրահանգվում էր ճանաչել նոր վարչաձևը։

Այս հեռագրերը արձագանք գտան գլխավորապես զորամասերի և այլազգիների մեջ։ Ալեքսանդրապոլից ստացված հրամանի վրա, մայիսի 9-ին, գլխավորապես ավտոգարաժի ծառայողներից, Ռազմահեղափոխական կոմիտե ստեղծվեց Կարսում, որ մի գրությամբ դիմեց նահանգապետ Ղորղոնյանին, բերդապետ Փիրումյանին և քաղաքագլուխ Նոհրատյանին՝ պահանջելով 24 ժամվա ընթացքում կտրել ամեն կապ Երևանի հետ, ճանաչել Ալեքսանդրապոլի խորհրդային կառավարությունը և շարունակել իրենց պաշտոնավարությունը։ Նման կարգադրություն հասավ և Մուսայելյանից ու Մելքոնյանից։ Ըմբոստների կողմն անցան և բերդի զորքերի մի մասը և մարդկան ու հույն բնակչությունը։ Երկու որ քաղաքը մնաց խռովարարների ձեռքը։

Կարսից շարժումը փոխադրվեց Սարիղամիշ ու Կաղզվան։ Դրսից եկած բոլշևիկների ազդեցության տակ Սարիղամիշի զորքի փոքր մասը կազմեց հեղափոխական կոմիտե և փորձեց ձեռքը առնել իշխանությունը։ Զինվորների մեջ կարգապահությունը խանգարվեց։ Հեղափոխական կոմիտեն փորձեր արավ հարաբերության մեջ մտնելու և «եղբայրանալու» սահմանի վրա գտնվող թուրք զինվորների հետ։

Ավելի աղմկահույզ եղան դեպքերը Նոր Բայազետում։ Մայիսի 13-ին, բոլշևիկների գրգռումով Բասար-Գեչարում կանգնած Համազասպի գնդի կամավորների մի մասը ըմբոստացավ և դիրքերը լքելով՝ գնաց Ղարանլուխ, որ շրջանի զինվորական կենտրոնն էր։ Այստեղ խռովարարներին միացան տեղի զինվորները, Ըմբոստացած զորքի գլուխը անցավ ուսուցիչ Սարուխանյանը, որը գրգռիչ ճառերով դրդեց ամբոխին տապալելու կառավարությունը։ Զինվորները ձերբակալելով զորքերի հրամանատար զոր. Սիլիկյանին և ամբողջ սպայությունը՝ աղմուկով շարժվեցին դեպի Նոր Բայազետ և փոքրիկ ընդհարումից հետո գրավեցին քաղաքը մայիսի 17-ին։

Այսպիսով, գրեթե միաժամանակ և միևնույն ձևով, Հայաստանի զանազան կողմերում բռնկվեցին ապստամբություններ։ Ամեն տեղ ապստամբությունը կրում էր զինվորական բնույթ։ Տեղ-տեղ միայն միացան և բանվորները։ Պարզ էր, որ շարժումը կազմակերպված էր նախօրոք. տևական աշխատանք էր թափված բանակում և բանվորության մեջ։ Շարժման ղեկավարները հույս ունեին, որ կարմիր բանակը կհասնի իրենց օգնության։ Ապստամբները բոլոր տեղերում միևնույն նշանախոսքերն էին գործածում. Ռուսաստանի կարմիր բանակը գալիս է ժողովրդին ազատելու «դաշնակների լծից». եղբայրական Ռուսաստանը հաց է ուղարկում սովահար Հայաստանին. արդեն Բաքվից դեպի Հայաստան են շարժվել ալյուրով և նավթով բեռնված գնացքները և այլն։ Շատ գրավիչ խոստումներ, և բոլշևիկները լավ էին հաշվել ամբոխային հոգեբանությունը։ Սակայն, դեպքերը ստացան բոլորովին տարբեր ընթացք։

Հայաստանի բոլոր կողմերից հասնող հեռագրերը խռովությունների և ապստամբությունների մասին մի պահ շփոթեցրին Երևանի զեկավար շրջաններին։ Ակներև էր, որ կառավարական մեքենան ի վիճակի չէր բռնկված հրդեհը մարելու։ Ճիշտ է, ապրիլի 3-ին կատարվել էր նարարության մասնակի լրացում. կառավարության մեջ մտցվել էին Ա. Ջամալյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Վրացյանը, որով Հ. Հ. Դ. բյուրոյի անդամների մեծ մասը դառնում էին նախարար, բայց կառավարելու եղանակը՝ խորհրդարանական դանդաղաշարժ մեքենայով՝ չէր համապատասխանում վայրկյանի պահանջին։ Անհրաժեշտ էր արագաշարժ ու վճռական իշխանություն։ Հարկավոր էին կտրուկ միջոցներ։ Այդ կարող էր տալ միայն Հ. Հ. Դաշնակցությունը։

Մայիսի 5-ին գումարվեց Խորհրդարանի արտակարգ նիստը, որը ընդունեց Ա. Խատիսյանի նախարարության հրաժարականը և նշանակեց նոր կառավարություն. Հ. Հ. Դաշնակցության բյուրոն իր ամբողջ կազմով անցավ իշխանության գլուխը*։ Փաստորեն հայտարարվում էր Դաշնակցության դիկտատուրա, Խորհրդարանը մի ամսով դադարեց։

Նոր կառավարությունը անմիջապես հայրենիքը հայտարարեց վտանգի մեջ և ժողովրդին ուղղեց հետևյալ կոչը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին.

«Քաղաքացինե՛ր.

Հերոսական պայքարով և անօրինակ զոհողությամբ հայ աշխատավոր ժողովուրդը տիրացել է անկախության և ազատության և միացնելով բռնավորների կամքով դարեր շարունակ իրարից բաժանված հայրենիքի երկու հատվածները՝ հիմք է դրել պետական առաջադեմ շինարարության։ Հայաստանի խորհրդարանի և կառավարության ամբողջ մտահոգությունն է եղել ապահովել աշխատավոր ժողովրդի ֆիզիկական գոյությունը ու սոցիալական անարգել զարգացումը և անսասան պահել հանրապետական դեմոկրատիկ իրավակարգը։

Քաղաքացինե՛ր, այսօր, Հայաստանի ժողովրդի այս բախտորոշ վայրկյանին, նորից ամպեր են կուտակվում մեր երկրի գլխին։ Մահվան ճիրաններում պայքարող տաճիկ փաշաները մի կողմից և բոլշևիզմի կարմիր պատմուճանը հագած ազրբեջանյան խաները մյուս կողմից՝ նորից սպառնում են Հայաստանի անկախությանը և ազատությանը։ Գիտակցաբար կամ անգիտակցորեն նրանց օգտին են գործում և մի շարք տարբեր երկրի ներսում, որոնք աշխատում են օգտագործել պարենավորման ճգնաժամն ու ժողովրդի հոգնածությունը, որպեսզի առաջ բերեն անկարգություններ և իրենց նեղ եսական տենչերին հագուրդ տան։

Եվ այն ժամանակ, երբ Ազրբեջանի զորքերն ու հրոսախմբերը շարունակում են արյունահեղությունը Ղարաբաղում և Գանձակում, այն ժամանակ, երբ տաճիկ ասկյարները շարժումներ են անում Շարուրի և Նախիջևանի շրջաններում և հրդեհում հայ գյուղերը, զանազան անպատասխանատու խմբակներ վերջ չեն տալիս իրենց գրգռիչ ընթացքին և կամենում են պառակտում առաջ բերել երկրի մեջ, առանց հաշվի առնելու, որ ամեն մի խլրտում առաջ կբերե անիշխանություն ու պարենավորման սուր տագնապ և կզրկե ժողովուրդը ապրուստի միջոցներից։

* Բյուրո-կառավարության կազմն էր. վարչապետ և արտ. գործ. նախարար Հ. Օհանջանյան, ներքին և զինվորական՝ Ռ. Տեր-Մինասյան, ելևմտական՝ Ա. Գյուլխանդանյան, հաղորդակցության՝ Ա. Ջամալյան, գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի՝ Ս. Վրացյան, խնամատարության՝ Ս. Արարատյան, հանրային կրթության և արվեստի՝ Գ. Ղազարյան։

Քաղաքացինե՛ր, Հայաստանը կարիք ունի հանգստի և համերաշխության. ո՛չ մի հուզում, ո՛չ մի խլրտում՝ ամեն ոք պետք է գտնվի իր գործի և պաշտոնի գլխին։ Զինված խորհրդարանից ստացած արտակարգ լիազորություններով՝ կառավարությունը դիմում է ձեր քաղաքացիական գիտակցությանը և հրավիրում ամենքիդ, հայ ժողովրդի գոյության այս ճգնաժամային վայրկյանին, համախմբվել կառավարության շուրջը, որի նշանաբանն է՝ Հայաստանի անկախության և ազատության պաշտպանությունն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապնդումը։ Այս նպատակներն իրագործելու համար կառավարությունը չի խնայի և ո՛չ մի ճիգ, և նա կհաղթի ձեզ հետ և ձեզ համար*։

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝ Հ. Օհանջանյան
Զորական և ներքին գործերի նախարար՝ Ռ. Տեր-Մինասյան
Գյուղատնտեսության և աշխատանքի նախարար՝ Ս. Վրացյան
Ֆինանսների և արդարադատության նախարար Ա. Գյուլխանդանյան
Հաղորդակցության նախարար՝ Ա. Ջամալյան
Հանրային կրթության և արվեստի նախարար՝ Գ. Ղազարյան
Խնամատարության և վերաշինության նախարար՝ Ս. Առարատյան»։

Միևնույն ժամանակ հայտարարվեց բոլոր դաշնակցականների ընդհանուր զորաշարժ։ Ամեն կողմ ուղարկվեցին դաշնակցական հայտնի գործիչներ լայն լիազորություններով։ Ամեն տեղ սկսվեցին կազմվել կամավորական գնդեր։ Ալեքսանդրապոլը վերագրավելու համար կազմվեց առանձին մի զորամաս, որի գլուխ դրվեց ժողովրդական խմբապետ Սեպուհը։ Արագությամբ շարժման մեջ դրվեցին և կանոնավոր զորամասերը։ Հիմնվեց արտակարգ դատարան, և, առհասարակ, երկիրը դրվեց արտակարգ վիճակի մեջ։ Կառավարությունը հայտնաբերեց բացառիկ եռանդ և կարճ ժամանակում ստեղծեց հասարակական բարձրը տրամադրություն։

Հասարակական կարծիքը ամբողջապես վավերացնում էր կառավարական քայլերը, Քաղաքական կուսակցությունները, պետական և տեղավարական հիմնարկությունները, հանրային կազմակերպությունները ու անհատ քաղաքացիները իրենց դնում էին կառավարության տրամադրության տակ։ Նման չեղած ոգևորություն ու եռուզեռ էր սկսվել մայրաքաղաքում ու գավառներում։ Հայ սոցիալ-դեմոկրատների Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և քաղաքացիներին ուղղած

* Այս և մայիսյան շարժումների ընթացքին հրատարակված կառավարական բոլոր կոչերն ու հաղորդագրությունները գրված են, կառավարության հանձնարարությամբ, Ս. Վրացյանի ձեռքով։

մայիսի 14-ի կոչը հետևյալ ձևով էր արտահայտում այն օրերի հասարակական տրամադրությունը։

«Պատահեց այն, ինչ ամենից քիչ սպասելի էր և ամենից շատ դատապարտելի։

Բաքվի քաղաքական կոմեդիան վերածվեց Ալեքսանդրապոլի ողբերգության. իսլամական խաբուսիկ կոմունիզմից նվաճվեց ստրկամբտորեն հայկական բերդը, հայության օրրանը։

Մի խումբ ստորահոգի բախտախնդիրներ հանդգնեցին բարձրացնել քաղաքացիական կռվի արյունաշաղախ դրոշը, ապստամբել հայ ժողովրդի ինքնորոշված կամքի դեմ և ճեղքել հայ դեմոկրատիայի ներքին մի ուրույն ճակատը։

Դաշնակցած բոլշևիզմն ու պանիսլամիզմը, ծափ զարկեցին, որովհետև նրանց հոգեվաճառ ագենտներին հաջողվել էր անգամ ծվատված երկիրը, արյունաքամ ժողովուրդը, որբերի ու գաղթականների տխուր հայրենիքը Մոսկվայի և Էրզրումի քաղաքագետների դիվային ծրագրերին ենթարկելու փորձեր անել։

Բանվորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր։

Զրահապատ գնացքի մեջ պատսպարված մի խումբ անորակելի ոճրագործներ՝ պարզելով «Խորհրդային Ռուսաստանի» դրոշակը՝ ամենամեծ դավը նյութեցին հայ ժողովրդի դեմ այն վայրկյանին, երբ նրա ֆիզիկական գոյությունը մահացու չափ վտանգված է ողջ շրջապատից և երբ նրա քաղաքական բախտը որոշելու վերջին օրերն ենք ապրում։ Հայ դավաճանները իրենց խելագար արարքով օգնում են միայն արտաքին թշնամիներին՝ թե՛ Հայաստանը օղակող թուրք-թաթարական սպառազեն բանդաներին և թե՛ Պոլսի քաղաքագետներին։

Բանվորնե՛ր, ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր։

Ամեն մեկիդ սրբազան պարտականությունն է այս ծանր օրերին ձեր ուժի ու եռանդի, շնորհքի և ընդունակության մաքսիմումը նվիրաբերել վտանգված հայրենիքի պաշտպանության գործին։ Բոլոր նրանք, որոնց մեջ առկայծում է պատասխանատվության վառ զգացումը մի բուռ դժբախտ ժողովրդի գոյության և նրա գերազանցորեն արդար դատի համար, պե՛տք է ոտքի ելնեն որպես ծառացած ըմբոստություն, և աջակցեն Հայաստանի կառավարության՝ բնի մեջ խեղդելու համար այն հայրենադավ ոճրագործների ապստամբությունը, որոնք փորձում են փորփորել մեր դեմոկրատական իրավակարգի հիմքերը և մտցնել բռնապետական-տեռորիստական արդեն դատապարտված վարչաձևը։

Թո՛ղ կորչեն պետական ոճրագործները և բոլոր հակապետական տարրերը։

Կեցցե՛ սոցիալիզմը և դեմոկրատիզմը Հայաստանում։

Հայաստանի սոց.-դեմ. բանվ. կուսակցության Երևանի կոմիտե»*։

Ժողովրդին հորդոր ուղղեց և Ամենայն Հայոց կաթողիկոսը.

«Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա, որոնք չտեսնողս են ձևանում, որ մեր տան մեջ մեր դեմ դավեր են լարվում՝ պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագրերի քայլ առ քայլ և հետևողական իրագործումը, զգո՞ւմ են, թե ինչ պատասխանատվություն է ծանրանում նոքա հանդեպ պատմության առաջ։ Այս րոպեիս, երբ ամենքիս պարտականությունն է համախմբվել ո՛չ միայն հայրենիքի պահպանության և վերաշինության գործի շուրջը, այլ, նամանավանդ, հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու դժվարին աշխատանքի շուրջը, ցավալի է տեսնել ներքին երկպառակությունները։

Մենք, ինչպես և մեր երջանկահիշատակ նախնիները, որ աշխատանք ենք թափել տաճկահայ դատի համար լավ օրերի հույսի ակնկալությամբ, չենք կարող անտարբեր մնալ այս նեղ րոպեներին, և երբ վտանգված ենք տեսնում հայրենիքի միության գործը, բայց, նամանավանդ, հայ ազգի ֆիզիկական գոյության ճգնաժամային գործը, իբր ընդհանրական հայրապետ, մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կասենք օրհասական րոպեներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստության կոչ անել՝ հա՛յ ժողովուրդ, համախմբվի՛ր քո հայրենի հանրապետության պահպանության գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկության միակ ճանապարհը։ Վտանգը և խիստ ծանր վտանգը քո դռանն է, հայ ժողովուրդ, զգույշ եղիր և պատմության առաջ ծանր պատասխանատվության բեռի տակ մի՛ ընկնիր»։

Նույնքան վճռական են և Անկուսակցականների միության, Հայ ժողովրդական կուսակցության և Հայ Ռամկավար կուսակցության ու Հայաստանի խորհրդի կոչերը՝ անվերապահ դատապարտություն բոլշևիկների սկսած ապստամբության և ջերմ հրավեր աջակցելու կառավարության՝ ճնշելու համար այդ ապստամբությունը։ Անկուսակցականների միությունը բոլշևիկներին անվանում է «ազգի տականքներ՝ կապուռված թրքական դրամով», «հայրենիքի գաղափարը ժխտող չարագործներ», «ազգի մատնիչներ և դավաճաններ»։ «Մեզ՝ անկուսակցականներիս համար ոչ մի կասկած չկա և կարող էլ չի լինել, որ Մելքոնյանները, Նուրիջանյանները, Մուսայելյանները և նրանց ընկերները հայ ազգի դավաճաններ են»։ «Անկուսակցականների միությունը իր լիովին վստահությունն է հայտնում կառավարությանը և հավատում է, որ վերջինս կանգ չի առնելու վճռական և կտրուկ միջոցների առաջ, որ-

* Այս կոչի հեղինակն է Դավիթ Անանունը Բ. Իշխանյանի աշխատակցությամբ։

պեսզի ապագայում անհնար դարձնե մեր մեծ ու փոքր Վասակների չար դավերը»։

Ուշագրավ էր Ռամկավար կուսակցության կոչը. «Մեր ավերակ և քանդված հայրենիքի մեջ, ասված էր այնտեղ, հայ ժողովուրդը բնաջնջող, մեզ կոտորող, մեր հայրենյաց լեռ ու ձոր, գետն ու վտակը հայաբյունով ներկող իթթիհատ կուսակցությունը, որ Նուրի ու Խալիլ փաշաներու միջոցով փոխադրված էր Ազրբեջան, գառան մորթը վրան առած՝ մի օր, հանկարծ, Բաքվի մեջ հայտարարեց խորհրդային իշխանություն և առաջին օրն իսկ իր նշանավոր ուլտիմատումով պահանջեց հայկական հանրապետությունեն երեք օրեն հանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը և իր զորախմբերն արդեն շարժման մեջ դրավ Հայաստանի վրայեն երթալ միանալու Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որը մինչև այժմ կշարունակե ջարդել տասնյակ հազարավոր հայեր Կիլիկիո մեջ, հակառակ մինչև իսկ ֆրանսիական բանակի ցույց տված պաշտպանության։

Խելագար և երկու աչքերով կույրը միայն կարող էր չտեսնել այս կերպով հայկական հանրապետության ընդհանրապես և Թուրքահայաստանին մասնավորապես սպառնացող նոր վտանգը. և, սակայն, գտնվեցան հայ անուն կրող մարդեր և հայ իրականության մեջ գործող, բայց հայ ոգին ու զգացումներուն խորթ խմբակներ, որոնք փոխանակ Հայաստանի սահմանները պաշտպանելու այդ վտանգին դեմ, կողմնակից հայտարարեցին զիրենք այդ հայադավ շարժման և Ալեքսանդրապոլի ու Կարսի մեջ դիմեցին եղբայրասպան կռվի։

Այդ խելագարները ո՛չ միայն չմտածեցին, որ այդ կերպով վերջին անբուժելի հարվածը կուտան լուծման օրերու մեջ գտնվող հայկական հարցին, այլ մինչև անգամ հոգ չդրին, որ երկրի սահմանները կբանան և կհրավիրեն տաճիկ-ադրբեջանյան գառնազգեստ գայլերը, որպեսզի մնացյալ հայության դիակներու վրայեն երթան ու միանան մեր դարավոր թշնամիին, Էնվերի ու Թալեաթի հարազատ հաշորդ Մուսթաֆա Քեմալին։

Տարակույս չկա, որ ամեն հայ մարդ, որ իր երակներու մեջ հայ արյուն կկրե և իր գլխուն մեջ փոքր-ինչ խելք ունի, կդատապարտե այդպիսի խելագար շարժումը, և առավել թուրքահայերս, որ անոր անմիջական հետևանքները կկրենք։ Այդ շարժումն ինչ տեսակ շարժառիթներ ալ ունեցած լինի, չի կրնար արդարանալ, և մենք մասնավորապես պետք է ծառանանք անոր դեմ և մեր բոլոր ուժերը ի սպաս դնենք կառավարության՝ իր բնին մեջ խեղդելու զայն և շեղեցնելու իր ոճրապարտ նպատակեն։

Հայ Ռամկավար կուսակցությունը, մանավանդ, որ տոգորված է եղած միշտ հայ ազգի կրած տառապանքներով, որ կեցած է այն ուղիին վրա, որ նախորդ բազմահազար նահատակներն իրենց արյունով գծած

են նորա առաջ, ամենեն ավելի իրավունք ունի զայրույթով մերժելու այդ հայրենադավ ոճիրը, դատապարտելու անոր հեղինակները՝ միաժամանակ իր ուժերը տրամադրելով հայրենիքին սպառնացող ներկա վտանգին հանդեպ։

Բնա՛վ չենք կասկածեր, որ այդպես կմտածեն նաև բոլոր մեր ընկերները և բոլոր անոնք, որ հայ անուն և հայ զգացում կկրեն։

Կորչի՛ եղբայրադավ և հայրենադավ ոճիրը։

Կեցցե՛ հայ ոգին։

Կեցցե՛ միացյալ և անկախ Հայաստանը»։

Հայ ժողովրդական կուսակցությունը ևս, որ մինչև այդ շատ բուռն կերպով քննադատում էր կառավարության գործերը, մայիսի 6-ին մի նամակ ուղղեց Նախարարապետին, որի մեջ հայտնում էր. թե «Հայ ժողովրդական կուսակցության Կենտր. կոմիտեն միաձայն որոշեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյության և ազատության սպառնացող խոշոր վտանգի հանդեպ ցույց տալ Հայաստանի կառավարության եռանդուն աջակցություն՝ պաշտպանելու իրավակարգը երկրում և պաշտպանելու Միացյալ Հայաստանի անկախությունը ամեն տեսակ ոտնձգություններից»։

Այս ինքնաբուխ հայտարարությունները, ինչպես նաև Հայաստանի բոլոր կողմերից տեղացող հակաբոլշևիկ հեռագրերը ցույց էին տալիս, որ ժողովուրդն ու կառավարությունը ապրում ու զգում էին միևնույն ձևով։ Եվ կառավարությունը՝ հենված երկրի բացարձակ վստահության վրա, անցավ վճռական գործի։

Քաղաքացիական կռվից ու արյունահեղությունից խուսափելու նպատակով՝ կառավարությունը փորձեց խաղաղ միջոցով կարգադրել խնդիրը։ Վարչապետը մի հեռագիր ուղղեց Մուսայելյանին և բացատրելով երկրի ծանր դրությունը ու ներքին ընդհարումներից ծագելիք աղետը՝ առաջարկեց վերջ տալ ըմբոստությանը՝ խոստանալով միաժամանակ, որ հանցավորները կարժանանան ներման։ Ռազմահեղափոխական կոմիտեն, ի պատասխան այս դիմումի, ուղղեց մի հայհոյալից հեռագիր, որի մեջ ասում էր, թե ինքն իրեն Հայաստանի կառավարություն հորջորջող մարմինը ավազակների և մարդասպանների մի խումբ է և որ Հայաստանի օրինավոր կառավարությունը Ալեքսանդրապոլի Ռազմահեղափոխական կոմիտեն է, որին արդեն ճանաչել է ամբողջ երկիրը և որը պահանջում է Երևանի կառավարությունից էլ անհապաղ ճանաչել իր իշխանությունը՝ սպառնալով, հակառակ պարագային, ընդդիմացողներին պատժել հեղափոխական ժամանակի օրենքներով։

Կառավարությունը տեսնելով, որ բոլոր ճիգերն անցան ապարդյուն, ապստամբների դեմ շարժեց զինված ուժեր։ Կանոնավոր զորամասերին միացան ամեն կողմից հասնող կամավորական խմբեր։ Մայիսի 18-ի լուսաբացին Անի և Աղին կայարանների միջև, Մուսայելյանի զրահապատ գնացքը հարձակվեց կառավարական զորքերի վրա։ Տեղի ունեցավ տաք կռիվ, որի ընթացքում, ապստամբներից վիրավորվեց 6 հոգի, որոնց մեջ և Մուսայելյանի օգնական սպա Եվանգուլյանը։ Զրահապատը չդիմացավ և փախուստի դիմեց՝ ճանապարհի կամուրջները պայթեցնելու փորձեր անելով։

Այս անհաջող կռվից հետո Ռազմահեղափոխական կոմիտեի ներքին գործոց կոմիսար Ա. Մելքոնյանը ուղիղ հեռագրաթելով դիմեց Երևան, և հետևյալ բնորոշ խոսակցությունը տեղի ունեցավ նրա և ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսյանի միջև.

Ա. Մելքոնյան. «Ես՝ բժ. Արտաշես Մելքոնյանս առաջարկում եմ կարգադրել դադարեցնել ռազմական գործողությունները, որպեսզի կողմերը կարողանան խաղաղ հանգամանքներում համաձայնության գալ մի քանի ընդհանուր շատ կարևոր հարցերում»։

Ս. Թորոսյան. «Մենք ձեզ կողմ չենք ճանաչում, այլ մի խումբ ավանտյուրիստներ, որոնք դավաճանելով հայ ժողովրդին՝ խառնակություններ են սերմանում։ Մենք գիտենք, որ ձեզ հետ չէ նաև Ալեքսանդրապոլի զորքը։ Ձեզ մի խումբ բախտախնդիրներիդ հետ՝ վարվելու ենք իբրև խառնակիչների։ Արդեն գիտենք, որ դուք շարդվել եք ու նեղն ընկած՝ խաղաղության մասին եք խոսում։ Դուք, պարոն Մելքոնյան, իբրև խորհրդարանի անդամ կրկնակի դավաճանություն եք գործում և արժանի հատուցումը կստանաք։ Ձեզ համար փրկության մի միջոց կա՝ անձնատուր լինել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և նրա զինությանը դիմել»։

Ա. Մելքոնյան. «Ես խոսում եմ իբրև միջնորդ* ձեր և Ալեքսանդրապոլի միջև, ուր հայտարարված է խորհրդային իշխանություն և որի կողմն են Կարսի և Սարիղամիշի զորքերը։ Գյուղացիական զանգվածները բռնված են քաղաքացիական կռվով, և ես ուժ չունեմ, անզոր եմ անխուսափելի արյունահեղությունների առաջն առնելու։ Որպեսզի ընդհանուր լեզու գտնենք և խուսափենք ավելորդ արյունահեղությունից, անհրաժեշտ է, որ դադարեցվեն ռազմական գործողությունները և երկու կողմից ուժ գործադրենք ելք գտնելու համար»։

Ս. Թորոսյան. «Կարսից և Սարիղամիշից մի շարք հեռագրեր ունենք. այնտեղ ամբողջ զորքը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմն է և այդպես էլ կմնա, որովհետև փորձված և իմաստուն հայ ժողովուրդը ավանտյուրիստների հետևից չի գնա։ Ինչ վերա-

---

* Ա. Մելքոնյանը սուտ էր խոսում. «Արմենկոմը,— գրում է Ե. Ամիրխանյանը իր «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» գրքում (109 էջ),— Ալեքսանդրապոլ ուղարկեց իր երկու լիազոր անդամներին՝ ընկ. ընկ. Դ. Տեր-Սիմոնյանին և Ա. Մելքոնյանին՝ ծանոթանալու իրերի դրությանը տեղում և սանկցիա տալու իշխանության գրավմանը, եթե դա անհրաժեշտ լինի»։

բերվում է ձեր այն ստին, որ գյուղացիական զանգվածները բռնված են քաղաքացիական կռվով, պիտի ասեմ, որ հայ գյուղացին դատարկ բաներով զբաղվող չէ։ Մեր կողմից ոչ ոք ձեզ չի լիազորել միջնորդի դեր ստանձնելու, որովհետև մենք ո՛չ բանակցություններ ենք վարում բախտախնդիր մարդկանց հետ և ոչ էլ ձեզ նման միջնորդի կարիք ունենք. մեր իսկական ներկայացուցիչներին շուտով կտեսնեք Ալեքսանդրապոլում։ Եթե հայ արյուն է թափվում, մենք գիտենք, թե ում հանցանքի պատճառով է այդ»։

Եվ, հիրավի, ապստամբների վիճակը լավ չէր Ալեքսանդրապոլում։ Շարժման սկզբին նրանց էր հարել և զորքի մի մասը։ Սպայությունը՝ զորքի ամբողջությունը փրկելու և ներքին կռիվների պատճառ չտալու հաշվով, նույնպես ճանաչել էր Ռազմահեղափոխական կոմիտեի իշխանությունը, Բանակն իր կողմը գրավելուց հետո՝ Ռազմահեղափոխական կոմիտեն իր իշխանությունը տարածել էր և քաղաքի վրա, ուր Գին պաշտոնությունը հայտարարվել էր հեռացած և ներքին գործոց կոմիսար Մելքոնյանի կողմից նշանակված էին նոր կոմիսարներ. անասնաբույժ Պրիբիլսկի՝ ինքնապաշտպանության շտաբի պետ. Սիկորսկի՝ թնդանոթաձիգների կոմիսար. Ամատունի (Հնչակյան)՝ քաղաքային միլիցիայի պետ. Լևոն Սարգսյան՝ պարենավորման կոմիսար. Կոշուբինսկի՝ Կազաչի պոստի պետ և այլն։ Այս կոմիսարները փաստորեն ո՛չ մի աղդեցություն չունեին, որովհետև քաղաքի ազգաբնակչությունը հենց սկզբի օրերից թշնամական դիրք բռնեց դեպի ըմբոստները։ Բազմամարդ ժողովների մեջ քաղաքացիները դատապարտեցին խռովարարների ընթացքը և նույնիսկ փորձեր արին գրավելու կայարանը, բայց զրահապատ թնդանոթները արգելք եղան։ Քաղաքացիների այս վերաբերումը անդրադարձավ և զորքի տրամադրության վրա։ Հետզհետե ամենքը տեսան, որ ապստամբները, իրոք, մի խումբ բախտախնդիրներ են, որոնց ուժն ու իշխանությունը զրահապատի սահմաններից դուրս չի տարածվում։

Ա. Մելքոնյանի փորձի վիժումից հետո ապստամբները Լ. Սարգսյանից ու Հ. Զոլախյանից կազմված հատուկ պատվիրակություն ուղարկեցին կառավարական զորամասի հրամանատար Սեպուհի մոտ։ Պատվիրակությունը խնդրեց առաջխաղացումը դադարեցնել և իրեն արտոնություն տալ գնալու Երևան՝ կառավարության հետ բանակցելու համար։ Զորամասի պետը, կառավարության հրահանգն ստանալուց հետո, հայտնեց, որ ինքը լիազորություն ունի հարցը տեղն ու տեղը վճռելու և առաջխաղացումը չի կանգնեցնի, սակայն, պատրաստ է հարցը առանց կռվի լուծելու պայմանով, որ ամենաուշը մինչև մայիսի 14-ի առավոտյան ժամը 6 Ռազմահեղափոխական կոմիտեն անձնատուր լինի և զրահապատ գնացքը հանձնե անվնաս։

Մայիսի 13-ի գիշերը ապստամբները թողին զրահագնացքը և փախան՝ ոմանք դեպի Աղբաբա՝ թուրքերի մոտ, ոմանք պահվեցին քաղաքում։ Մայիսի 14-ի առավոտյան հանրապետական զորքերը, առանց կռվի, մտան քաղաք և խանդավառ ընդունելություն գտան ազգաբնակչության կողմից։ «Վարդան Զորավարի» վրա բարձրացավ հանրապետական դրոշը։ Բոլոր զորամասերը միացան կառավարական զորքերին։ Ո՛չ մի անկարգություն չպատահեց. միայն ատրճանակի մի քանի հարվածներով, փողոցում, սպանվեց զորավար Խաչատրյանը, որ անցել էր բոլշևիկների կողմը։ Նույն օրն ևեթ ձերբակալվեցին փախստական կոմիսարներ՝ Մուսայելյանը, Մելքոնյանը և ուրիշներ։ Ավիս Նուրիջանյանին հաջողվեց ճողոպրել։ Ձերբակալվածներին հանձնեցին արտակարգ դատարանին։

Ավելի կարճ տևեց Կարսի «Ռազմահեղափոխական կոմիտեի» կյանքը։ Մայիս 10-ին Խորհրդարանի անդամ Ն. Աղբալյանը զորքի և հասարակության խուռն բազմության առաջ մի կուռ դասախոսություն կարդաց «ներկա մոմենտի մասին», որ ահագին տպավորություն թողեց ունկընդիրների վրա։ Հաջորդ օրը, ժողովուրդն ու զորքը շրջապատեցին ավտոգարաժը, ուր ամրացել էին բոլշևիկները, և պահանջեցին վերջ տալ ապստամբությանը։ Ապստամբները ապաստանեցին «Ալեքսանդր Բ.» ամրոցը, որտեղից սկսեցին թնդանոթ պարպել քաղաքի վրա։ Մայիսի 12-ին ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե», որ իր ձեռքն առավ քաղաքի բովանդակ իշխանությունը։ Հայրենիքի փրկության կոմիտեի ղեկավարությամբ ժողովրդական բազմահազար բազմությունը «Մեր հայրենիք» երդելով շարժվեց դեպի ապստամբները, որոնք դիմավորեցին հրացանային ու թնդանոթային կրակով։ Գազազած ամբոխը խլեց բոլշևիկների գնդացիրներն ու զինված ինքնաշարժը և առավ մի շարք գերիներ։ Բոլշևիկները, որոնց թիվը մի քանի տասնյակից չէր անցնում, համառ դիմադրություն ցույց տվին՝ պահանջելով իրենց հանձնել քաղաքի և բերդի իշխանությունը։ Մայիսի 13-ին, երբ Հայրենիքի փրկության կոմիտեն պատրաստվում էր վերջնական գրոհով գրավել ամրությունը, պարզվեց, որ ապստամբները գիշերը բեռնակիր ինքնաշարժով փախել են Ալեքսանդրապոլի ուղղությամբ։ Իսկույն հետապնդում կազմակերպվեց և Արգինա գյուղի ջրաղացների մոտ տեղի ունեցավ տաք կռիվ փախստականների և հետապնդողների միջև. բոլշևիկներից սպանվեցին 10 և ձերբակալվեցին 7 հոգի. մյուսները կարողացան փախչել։ Ձերբակալվեցին նաև ռուս, թուրք և հույն ազգային խորհուրդների անդամները, որոնք իրենց միացյալ ժողովում որոշել էին և արձանագրություն կազմել բոլշևիկների հետ համագործակցելու մասին. Ձերբակալվածները հանձնվեցին արտակարգ դատարանին։

Ալեքսանդրապոլի և Կարսի դեպքերը վճռական նշանակություն ունե-

ցան և Սարիզամիշի համար։ Երբ այնտեղի ապստամբները իմացան, որ Կարսի շարժումը ճնշված է, փորձեցին փախչել, բայց ձերբակալվեցին։ Խռովարարների կողմը անցած զինվորները «Մեր հայրենիք» երգելով գնացին և միացան կառավարական զորքերին։ Ձերբակալվածները հանձնվեցին արտակարգ դատարանին։

Նույնը եղավ վախճանը և Նոր Բայազետի ըմբոստների։ Իշխանությունն իրենց ձեռքը առնելուց հետո՝ բոլշևիկները սկսեցին բռնություններ գործ դնել հակառակ նկատված քաղաքացիների վերաբերմամբ, թալանեցին պետական գանձատունը, պահեստները և մասնավոր քաղաքացիների բնակարանները։ Հեղաշրջման օրը քաղաքից հեռացած իշխանությունը, օգնական ուժեր ստանալով, մայիսի 19-ին վերադարձավ քաղաքը, և ազատ արձակեց բանտարկվածներին։ Կռվի ժամանակ սպանվեցին 2 խռովարարներ և վիրավորվեցին 3. կառավարական զորքերից սպանվեց 1 հոգի և վիրավորվեց 2։ Բռնվեց և պարագլուխ Սարուխանյանը, որը մյուս ձերբակալվածների հետ հանձնվեց արտակարգ դատարանի։

Այսպիսով, երկու շաբաթվա ընթացքում կառավարությունը ամբողջ երկրում վերջ տվեց ապստամբական շարժմանը։ Հայաստանից փախած բոլշևիկները մեծ իրարանցում առաջ բերին Ազրբեջանում. դիմումներ արին 11-րդ բանակին, հեռագրեր ուղարկեցին Մոսկվա՝ ջանալով ամենին հավատացնել, որ Հայաստանում կոմունիստների կոտորած է կատարվում և որ արդեն սպանված են հազարվոր մարդիկ։ Միաժամանակ, ազրբեջանյան իշխանության օգնությամբ Ղազախի շրջանում հավաքվեցին հայ ու մալական փախստականներից խմբեր և պատրաստվում էին հարձակվելու Հայաստանի վրա։ Մայիսի 21-ին, երբ ապստամբությունն արդեն ամեն տեղ համարվում էր ընկճված, հանկարծ, Ղազախի կողմից, կարմիր դրոշակներով, առաջ շարժվեցին բոլշևիկյան ուժեր և առանց կռվի մտան Իջևան։ Ծկողներին միացան և որոշ քանակությամբ տեղացիներ։ Զորքը չդիմադրեց։ Բոլշևիկները ձերբակալեցին ներքին գործոց նախարարի օգնական Սարգիս Մանասյանին, զորքերի հրամանատար զոր. Բաղդասարյանին, Իջևանի գավառի ինքնավարության նախագահ Ն. Ջաղեթյանին, Մ. Սարատիկյանին և ուրիշ պաշտոնյաներ ու սպաներ և տարան Բաքու։ Ապա անցան Դիլիջան և առանց արգելքի հանդիպելու գրավեցին քաղաքը։ Սակայն, շուտով օգնության հասան կառավարական զորքեր ու կամավորական խմբեր, որոնք, զինված ժողովրդի հետ միասին, հարձակվեցին թշնամու վրա, որը խուճապով դիմեց փախուստի թողնելով սպանված իր պարագլուխ Հակոբջանյանին։ Այս առթիվ կուսակցությունները բաց թողին հետևյալ հավաքական կոչը.

«Հայաստանի քաղաքացինե՛ր, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիզամիշի, Նոր Բայազետի խռովություններին հետևեց Դիլիջանի գավառը։ Ներքին ոճրագործ տարրերի պետական դավաճանությանը հաջորդեց

արտաքին նույնօրինակ տարրերի անհանդուրժելի արշավանքը դեպի մեր երկրի խորքերը։

Մեր հայրենիքի ներքին ու արտաքին թշնամիները միացած՝ դիվային ծրագրեր են որոճում Հայաստանի ազատության և անկախության դեմ։ Հայ ժողովուրդը, որի ինքնորոշված կամքի մարմնացումն է կազմում իր պետական անկախությունը, պիտի աթոռն պահապանի նման փայփայի ու պաշտպանի իր այնքա՜ն թանկ գնով նվաճած ազատությունն ու անկախությունը։

Թո՛ղ հայ քաջարի բանակը սուրը ուխտի երդումը տա կազմ ու պատրաստ դիմագրավելու համար Հայաստանի անկախությունը բոլոր թշնամիների դեմ՝ ո՛վ, ո՛ր կողմից և ի՛նչ անվան տակ ուզում են թող լինեն նրանք։

Իսկ դու, հա՛յ ժողովուրդ, մի սիրտ մի հոգի դարձած պետք է քո ուժն ու աջակցությունը չխնայես մեր քաջարի բանակին և մեր կառավարությանը անշեղորեն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու գործում։

Կեցցե՛ ազատ, անկախ և միացյալ Հայաստան։

Կեցցե՛ Հայաստանի դեմոկրատիկ հանրապետություն։

Հայ Ժողովրդ. կուսակց. Հայաստանի Կենտր. կոմիտե. Հայաստանի սոց.-դեմ. բանվ. կուս. Երևանի կոմիտե. Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհուրդ. Հայ. անկուսակցականների միության վարչություն»։

Իջևան—Դիլիջանի դեպքերը վերջին օգակն էին բոլշևիկների առաջ բերած ապստամբությունների շղթայի մեջ։

Ապստամբության հաշվեհարդարից հետո Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում և Դիլիջանում կազմվեցին արտապոլում, Կարսում, Նոր Բայազետում և Դիլիջանում կազմվեցին արտակարգ դատարաններ, որոնց հանձվեց ձերբակալվածների դատը։ Ընդհանուր առմամբ այս դատարանները գտնվեցին համբերատար ու նեղանուր առմամբ այս դատարանները գտնվեցին համբերատար ու նեղրող և բացառիկ դեպքերում միայն հանեցին մահապատիժներ, որոնց ընդհանուր թիվը 10-ից չի անցնում։

Մայիսյան խռովությունները վերջացան բոլշևիկների ջախջախիչ պարտությամբ։ Այդ շարժումը Հայաստանի համար տվեց մի շարք ծանրակշիռ հետևանքներ, որոնք ահագին նշանակություն ունեցան հետագա դեպքերի վրա։ Եվ առաջին ու ամենից ավելի ճակատագրական հետևանքը պետք է համարել հայկական բանակի բարոյալքումն ու քայքայումը։ Արդեն ըմբոստության դեպքերի պատմությունից էլ երևաց, որ շարժումը, ընդհանուր առմամբ, զինվորական էր. բոլշևիկներին հաջողվել էր մուտք գործել զորամասերի մեջ, իրենց կողմը քաշել զինվորների մի մասը և այսպիսով բաժանում ու թշնամություն մտցնել բանակի

կի մեջ։ Քաղաքացիական կռիվների ընթացքում զորքը կտոր-կտոր եղավ. մի մասը գործոն աջակից էր բոլշևիկների, մյուսը՝ կռվում էր նրանց դեմ. մի ահագին զանգված էլ տատանվում և «չեզոքություն» էր պահպանում։ Պետականության գաղափարը, որ առանց այն էլ ուժեղ չէր մեր նորաստեղծ ազգային բանակում, ավելի ևս թուլացավ։

Բոլշևիկյան ապստամբության հաշվեհարդարը զուգադիպեց Մայիսի 28-ին, անկախության տարեդարձին, որը տոնվեց արտակարգ հանդիսավորությամբ, ամբողջ Հայաստանում, բայց, մանավանդ, Երևանում։

Քաղաքը զարդարված էր առանձին շքեղությամբ։ Խորհրդարանը, գիմնազիայի նոր շենքը, քաղաքապետարանը, պետական հիմնարկությունները ու մասնավոր տները թաղված էին ծառերի ոստերի ու ծաղիկների, գորգերի ու դրոշակների մեջ։ Աբովյանի վրա կանգնած էր հաղթական շքեղ կամար։ Փողոցների ու շենքերի զարդարանքը ստանձնել էր ակադ. Ա. Թամանյանը իր օգնականներով։ Կուսակցությունները բաց էին թողել բոլշևիկների դավաճանությունը դատափետող և Միացյալ ու Ազատ Հայաստանի անկախությունը ջատագովող թռուցիկներ։

Հայաստանի զանազան կողմերից եկել էին բազմաթիվ պատգամավորություններ։ Ժողովրդական կուսակցության Կենտր. կոմիտեն Թիֆլիսից Երևան էր ուղարկել Սամ. Հարությունյանին և Լեոյին՝ անկախության հանդիսավորություններին ներկա գտնվելու համար։ Հանդեսին մասնակցում էր և Ամենայն Հայոց կաթողիկոսը։

Արհեստակցական միությունների միությունը, դպրոցները, որբանոցները, անհաշիվ բազմություն գյուղերից ու քաղաքից՝ վաղ առավոտվանից լցվել էին փողոցները։ Առավոտյան հանրապետական մաղթանքից ու զորահանդեսից հետո տեղի ունեցավ զորամասերի շքերթը. հետևակ շարքերը, այրուձին, հրետանին՝ խլելով ներկաների ցնծագին ծափահարությունները։ Ապա անցան արհեստակցական միությունները իրենց դրոշակներով ու նշաններով, բոյ-սկաուտները, աշակերտները, որբերը, գյուղացիական խմբերը։ Մեջ ընդ մեջ շարժվում էին բեռնակիր ինքնաշարժներ զանազան խորհրդանշաններով, տրակտորներ, գյուղական սայլեր, գութաններ, կենդանի պատկերներ։

Մինչև ուշ գիշեր քաղաքը հրճվանքի մեջ էր։ Երեկոյան հրավառություն։ Ցերեկը գիմնազիայի նոր շենքի ընդարձակ և ճաշակով զարդարված սրահում տեղի ունեցավ հրապարակային ժողով-հանդես, որին հրավիրված էին օտար պետության ներկայացուցիչները, կառավարության և Խորհրդարանի անդամները, բարձր հրամանատարությունը, բազմաթիվ պատվիրակություններ ու պետական-հասարակական գործիչներ։ Երեկոյան նույն սրահում կազմակերպվեց գրական-երաժշտական շքեղ երեկույթ և պարահանդես։

Փառահեղ հանդեսներ կատարվեցին և գավառներում։ Ալեքսանդրապոլում, բազմահազար ժողովուրդը, համքարությունները, կազմակերպ-

ված բանվորությունն ու գյուղացիությունը մեծ խանդավառությամբ տոնեց անկախության տարեդարձը։ Քաղաքը ամբողջ զարդարված էր եռագույն դրոշակներով, գորգերով, կանաչով ու պատշաճ նշանաբաններով։ Հսկա թափորը կայարանից, կտրելով քաղաքը, անցավ կանգնեց քաղաքային ինքնավարության շենքի առջև, ապա դիմեց դեպի նահանգապետարանը, Հ. Հ. Դաշնակցության ակումբը։ Այստեղից շարժվեց Կարզաչի պոստ, ուր սպասում էր զինվորությունը։ Այստեղ Գարեգին եպ.-ը կատարեց հանդիսավոր մաղթանք, որից հետո տեղի ունեցան զորահանդես և սկաուտական խաղեր։ Թափորի ժամանակ ընդհանուր ուշադրության և խանդավառ ծափերի առարկա էր Մայր Հայաստանը խորհրդանշող ինքնաշարժը, Հայաստանը ներկայացնող մի օրիորդ, սուրը ձեռքին կանգնած, կողքին՝ հրացանավոր հայդուկ, մեջտեղը՝ կռանը ձեռքին մի դարբին՝ սալի առջև գութանը կոփելիս։ Մայր Հայաստանի հետևից գնում էին գյուղացիներ՝ երեք լուծ եզով գութանը առջևից, հորովելի երգով։ Ապա հետևում էր ջուլհականոցի սայլը՝ մանող ու գզող աշխատավորուհիներով։ Երեկոյան քաղաքը հրավառված էր։ Ժողովրդի համար կազմակերպված էին ձրի դասախոսություններ, շարժապատկերի ներկայացումներ, զբոսանք քաղաքային պարտեզում։

Նույն խանդավառությունն ու հանդիսավորությունը նաև վաղարշապատում էր։ Քաղաքը պճնաղարդված էր գույնզգույն։ Քաղաքի հրապարակում և ճեմարանի դռան առջև կանգնեցված էին ազատության կամարներ։ Շրջակա գյուղերից ժողովուրդը խումբ-խումբ, դրոշակներով ու երգերով, լցվել էր քաղաք։ Զորք, ժողովուրդ, բանվորներ, աշակերտներ, հիմնարկությունց ներկայացուցիչներ խռնվում էին էջմիածնի բակում։ Հանդիսավոր պատարագից ու հանրապետական մաղթանքից հետո։ Հանդիսավոր պատարագից ու հանրապետական մաղթանքից հետո եղան ողջույններ ու ճառեր և կատարվեց զորահանդես։ Հետո քաղաքի զանազան մասերում տեղի ունեցան միտինգներ, շքերթ, ժողովրդական հանդեսներ ու ճաշկերույթ։ Երեկոյան՝ հրավառություն։

Համաժողովրդական հանդեսներ կատարվեցին և Կարսում, Նոր Բայազետում, Դիլիջանում, Ղարանլուխում, Փարաքարում, Արդահանում, Իգդիրում, Ջալալ-Օղլիում, Քեշիշքենդում՝ ամեն տեղ։ Երբե՛ք, մինչև այդ, Հայաստանի ժողովուրդը նման ուրախություն չէր հայտնաբերել, երբե՛ք «Մեր Հայրենիքը» չէր հնչել այնպես անկեղծ, լիաթոք ու խրոխտ, Հայաստանի բոլոր ծայրերում, ամենքի բերանից լսվում էր.

Մեր Հայրենի՛ք, ազա՛տ, անկա՛խ,
Մեր թշնամուց ազատված...

***

Մայիսյան խռովությունները վերջացան բոլշևիկների ջախջախիչ պարտությամբ՝ ծանր վնաս հասցնելով Հայաստանի նորաստեղծ պետականությանը։

Այնուհետև բոլշևիկ պարագլուխների մեջ ծայր տվեց ինքնաքննադատությունը և փոխադարձ մեղադրանքը։ Այսօր իսկ բոլշևիկների մեջ ընդհանուր կարծիք գոյություն չունի մայիսյան խռովությունների մասին։

Հայաստանի պատմության համար խիստ հետաքրքրական են այն մերկացումները, որ մայիսյան խռովությունների հեղինակները արին՝ բացատրելու կամ արդարացնելու համար իրենց ապստամբական ձեռնարկների անհաջողությունը։

1932 թվին Երևանում լույս տեսավ մի հատոր «Առաջին մասայական հեղափոխական շարժումները» անունով և որ շուտով արգելքի տակ դրվեց, իբրև հակահեղափոխական հրատարակություն։ Այդ հատորում առաջ են բերված մայիսյան բոլշևիկյան խռովություններին վերաբերվող վավերական նյութեր, նամակներ ու տեղեկագրեր, որոնք վարկաբեկիչ փաստերով ներկայացնում են այն օրերի հայ բոլշևիկների դավադիր գործունեությունը Հայաստանի Հանրապետության դեմ։ Պատմության այդ սև էջը պատկերացնենք այստեղ հենց իրենց՝ բոլշևիկների խոսքերով, որոնք որևէ արդարացման տեղ չեն թողնում։

Բոլշևիկների պարտության գլխավոր պատճառը այն անվիճելի փաստն էր, որ բոլշևիզմը հայ ժողովրդի մեջ ոչ մի հող չուներ։ Հայ ժողովուրդը չէր համակրում բոլշևիկներին, բացի այն սակավաթիվ հայերի, որոնք բոլշևիկության մեջ Ռուսաստանն էին տեսնում։ Հայաստանի առարկայական և ենթակայական պայմանները հակառակ էին խորհրդային իշխանության։

Իսկ ինչպե՞ս են բացատրում իրենք բոլշևիկները իրենց պարտությունը։

Հունիսի 1-ին, Ալեքսանդրապոլի բանտից Թիֆլիս Երկրային կոմիտեին ուղարկած մի զեկուցման մեջ, Մուսայելյանը, ապստամբության դեպքերը մանրամասնորեն պատմելուց հետո, անհաջողության պատասխանատվությունը ձգում է Արմենկոմի և Ալեքսանդրապոլի բոլշևիկների վրա։ Նա գրում է. «Արմենկոմը, որի գործունեության մասին ես առանձին զեկուցում եմ տալու, դժբախտաբար, այդպիսի մի սուր մոմենտում բավականաչափ գործունեություն չցուցադրեց։ Վերջապես, մայիսի 7-ին և 8-ին մեր հարցապնդման հետևանքով, Արմենկոմից մեզ մոտ եկան բժ. Մելքոնյանը և Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, որոնք ծանոթանալով դրությանը՝ վավերացրին վճռականապես հանդես գալու մեր որոշումը։ Զորքերը մարտական դրության մեջ դնելով՝ ամսի 10-ին

մենք Ռազմահեղափոխական կոմիտեի անունից քաղաքը հանձնելու համար վերջնագիր ներկայացրինք իշխանություններին, Քաղաքը հանձնվեց առանց մի զնդակ արձակելու։

Սրանից հետո է, որ մեզ մոտ սկսվում է ներքին տրագեդիան. տեղական ընկերները ստեղծարար, օրգանական աշխատանքներին բացարձակ անընդունակ գտնվեցին։ Աշխատանքը վաղորոք բաշխված էր ընկերների միջև, սակայն իշխանությունը գրավելուց հետո, նրանցից ոչ մեկը գրեթե մատը մատին չխփեց իրեն դիրքերում։ Ամբողջ աշխատանքը գլխավորապես ինձ վրա էր բարդվել։ Ես ֆիզիկապես ի վիճակի չէի բոլորը ինքս անելու և միաժամանակ, իբրև Կարմիր զորքերի հրամանատար, տանելու իմ հատուկ աշխատանքը։ Իսկ Երևանի կողմից արդեն թշնամու ուժերը շարժվում էին։ Արմենկոմի անդամները համարյա ոչինչ չէին անում։ Ամբողջ Հայաստանում զորքերը գրեթե մեր կողմն էին, բայց տեղերում ուժեղ ձեռքեր չգտնվեցին։ Ամենուրեք պահանջվում էր իմ ներկայությունը, իսկ Ալեքսանդրապոլը թողնել՝ ինձ թույլ չէին տալիս։

Կառավարությունը մեր դեմ զինել էր գրեթե բացառապես տաճկահայերին, գաղթականներին, մաուզերիստներին և կուսակցական դաշնակներին։ Մեր պարենավորման կոմիտեն ոչնչից ոչինչ չէր անում։ Իշխանության ներքին ճգնաժամը, պարենավորման բացակայությունը և այլ բազմազան պատճառներ ստիպեցին համաձայն Ռազմահեղափոխական կոմիտեի որոշման քաղաքն առանց կռվի հանձնել»։

Որքան և երկար լինի, մենք առաջ կբերենք նաև հետևյալ երկու վավերագրերը.

Առաջին վավերագիրը Ալեքսանդրապոլի կոմիտեի հետևյալ նամակն է Հայաստանի կոմիտեին՝ կազմված և ստորագրված Ավիս Նուրիջանյանի ձեռքով.

«Կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի կոմիտեն մայիսի 1-ից 10—12 օր առաջ, հետևապես, Բաքուն գրավելուց առաջ ընդունեց մայիսմեկյան լոզունգները. այդ թվում էին «Կեցցե՛ Խորհրդային Հայաստանը», «Կորչի՛ կոտորածներ սարքող կառավարությունը» և այլն։ Հենվելով բանվորական մեծամասնության մանավանդ, երկաթուղու վրա, Կոմիտեն որոշեց առանձին երթով դուրս գալ՝ ուժերի հաշվառման համար։ Ազրբեջանում տեղի ունեցած հեղաշրջումը վաղորոք ապահովեց մեր հաջողությունը. չնայած ճնշումներին և զուսպ նախազգուշացումներին, տենդային աշխատանքը կատարվում էր։ Ապրիլի 30-ին ձերբակալեցին ընկերներից մեկին, որին մի քանի ժամից ազատ արձակեցին, նախազգուշացնելով «Կորչի՛ դաշնակների կառավարությունը» և մյուս լոզունգների անթույլատրելիության մասին։ Մյուսներին ձերբակալելու փորձ ևս կատարվեց, սակայն նրանց չգտան։ Մայիսի մեկի գալիքը մի զորատես էր Ալեքսանդրապոլի պրոլետարիատի և զորքի համար, որ դուրս եկավ բոլշևիկյան գրոշակի տակ և Հայաստանի պատ-

մության մեջ չտեսնված լոզունգներով։ Մեր դեմ էին մի բուռը սպեկուլյանտներ դաշնակների պրոշակների տակ՝ 200 մարդուց ոչ ավելի։ Մեր մասսան 5 000-ից ավելի էր։ Դաշնակների տապալումը կատարյալ էր։ Սկզբում ամեն ինչ ընթանում էր առանց միջադեպերի, սակայն Ալեքսանդրյան փողոցի անկյունում մաուզերիստ դաշնակցականներից մեկը Խորհրդային Ազրբեջանի հասցեին պրովոկացիա արեց և դրանով վրդովեցրեց զինվորներին և բանվորներին։ Դրա հետևանքն այն եղավ, որ հենց տեղն ու տեղը՝ դաշնակների բյուրոյի մուտքի առաջ զինվորները ծեծեցին դաշնակ վարժապետ-սպեկուլյանտ Մացոյին։ Դրան իբր պատասխան՝ մաուզերիստները երկու գնդակ արձակեցին և թեթև վիրավորեցին հենց իրենցից՝ դաշնակներից մեկին*։ Մեր կողմից նույնպես երկու գնդակ արձակվեց օդի մեջ։

«Շնորհիվ զինվորների և բանվորների գիտակից վերաբերմունքին, որով նրանք ենթարկվում էին բոլշևիկների կոմիտեի պահանջներին, միջադեպը սպառվեց և մաուզերիստների պրովոկացիան չհաջողվեց։ Զինվորների փորձը դիմել դեպի բանտ ձերբակալվածներին ազատելու համար՝ չիրագործվեց դարձյալ կուսակցության կոմիտեի պահանջի հետևանքով, որ խուսափում էր դաշնակների նոր պրովոկացիայից։ Ցույցը, Ավիսի և մյուսների ճառերից հետո, ժամը 4-ին, կայարանի մոտ ցրվեց, մինչդեռ երթն սկսվել էր առավոտյան ժամը 10-ին։ Անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի հաջողություն կուսակցությունը չէր սպասում նույնիսկ այդ օրն առավոտյան։ Ընդունված էին մեր առաջարկություն-պահանջները՝ ձերբակալվածներին ազատ արձակելու, պատգամավորների Խորհուրդ կազմակերպելու և Խորհրդային Ազրբեջանը ողջունելու մասին։ Ողջույնի հեռագիրը կազմված էր կոմունիստական և շատ սուր ոգով՝ հիշատակելով հայ մուսավաթիստների խմբապետական կառավարության դեմ միասնորեն կռվելու մասին, Խորհրդ. Ազրբեջանի բանվորների, գյուղացիների և ասկյարների պատգամավորների խորհուրդը ողջունելու մասին և այլն։ Բանաձևն ընդունվում էր միաձայն, բուռն և երկարատև ծափահարություններով, «ուռա»-ի բացականչություններով։ Եթե այդ օրն իշխանությունը գրավված չէր, այդ ոչ թե այն պատճառով, որ մենք անզոր էինք, այլ միայն զինվորական մասսայի անբավարար կազմակերպված լինելու և թալաններից երկյուղ կրելու պատճառով։

Նույն գիշերը ձերբակալված է ընկերներից մեկը, մյուսների մոտ էլ են եղել, բայց նրանց տներում չեն գտել։ Այժմ դրությունը այսպես է։ Այդ օրը բոլոր զինվորական մասերը կազմել են գնդի կոմիտեներ և ներկայացել ընկ. Մուսայելյանի զրահապատ գնացքը՝ բանակցությունների համար։ Հաստատված է ամենասերտ կապը։ Ամբողջ զորքը Մուսայելյանի զրահապատի հետ մեր տրամադրության տակ է։ Ավելին. քաղաքային և երկաթուղային միլիցիայի մեծագույն մասը ևս մեր ձեռքքն է։ Զորքի մեջ կարգապահությունը պաշտպանվում է հենց իրենց իսկ ղեկավարների միջոցով, ընդ որում ավելի լավ, քան մինչև այժմ։ Հնարավորություն չկա կանգ առնելու բոլոր այն մանրամասնությունների վրա, որոնք բնորոշում են դաշնակների կուսակցության կատարյալ սնանկությունը և մեր կուսակցության հսկայական բարոյական ուժը և ֆիզիկական գորությունը։

Համենայն դեպս իշխանությունը գրավելու խնդիրը— դա մեր ցանկության հարցն է— ոչ թե օրվան, այլ բոպեի խնդիր է։ Դաշնակների այն պրովոկացիան, թե իբր Խորհրդային Ազրբեջանի կողմից Հայաստանի դեմ պատերազմ է սկսված, որ իբր թե նպատակ ունի հայ բոլշևիկների հետ միացած՝ ոչնչացնելու բոլոր հայերին, ոչ մի հաջողություն չունեցավ և այժմ էլ չունի։ Պրովոկատորները քիչ էր մնում ծեծի ենթարկվեին կանանց և զինվորների ձեռքով։ Այժմ դաշնակները մտածում են զինաթափ անել զրահապատը։ Վերջինս ռազմական դրության մեջ է գտնվում, ամբողջ օր ու գիշեր հերթապահություն կա. որոշակի հայտնված է՝ զրահապատը չենք հանձնելու։ Զրահապատի զինվորները երդվել են մինչև վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել։

Զորքը ամեն բոպե կարելի էր ոտքի կանգնեցնել մեկ մարդու նման։ Զրահապատի զինաթափման փորձը կլինի մի մարտակոչ, որ մենք ամեն բոպե պատրաստ ենք ընդունելու։ Հայաստանի կոմիտեի որոշումը սկսել Ղազախի գավառից, իսկ Ալեքսանդրապոլը դեռ սպասի, մեզ դրդում է անել դրության մեջ։ Մենք ամեն ջանք գործ ենք դնում խուսափելու համար կոնֆլիկտից՝ ձերբակալություններից, զրահապատը զինաթափ անելուց, տեռորներից և այլն։ Սակայն, հակառակ սպասածին, եթե այդպիսիք տեղի ունենան, մարտակոչը պետք է ընդունվի։ Այս է Ալեքսանդրապոլի կոմիտեի անշեղ որոշումը. մենք թույլ չենք տա գրավել այն մասսան, որի ուժի և կարողության վրա հենվում ենք հենց ինքներս։

Մենք խնդրել ենք տալ մեզ հրահանգներ՝ ինչպես վարվենք։ Հայաստանի կոմիտեի ամեն մի որոշում մենք պատրաստ ենք կատարելու, սակայն, նախազգուշացնում ենք Հայաստանի կոմիտեին. եթե վերջինս մեզանից պահանջելու լինի՝ ձերբակալություններին, գաղտագողի տեռորին, զրահապատի զինաթափման և այլն, չպատասխանել իշխանությունը գրավելով, ապա մենք մեզանից վերցնում ենք ամեն մի պատասխանատվություն այն անխուսափելի հետևանքների նկատմամբ, որ պետք է տրվի Ռուսաստանի Խորհրդային իշխանության և պատմության առաջ պատասխան պիտի տա կուսակցության կազմակերպության ջախջախման և իշխանության գրավումը մեկ ամսով, գուցե և երկու ամսով հետաձգելու

* Գնդակ արձակողը բոլշևիկներն էին։— Ս. Վ.։

համար։ Մենք խնդրում ենք Հայաստանի կոմիտեին այսօր եթ պատասխան տալ մեզ՝ համաձա՞յն է արդյոք նա մեր բռնած դիրքին, այն է՝ մենք ամեն ջանք գործ ենք դնում էխցեսները կանխելու համար, մինչև ձեզնից հրահանգներ ստանալը, իսկ մասսայական ձերբակալությունների, անկյունից կատարվող տեռորի և, առավել ևս, զրահապատը զինաթափ անելու փորձերի դեպքում, մենք ընդունում ենք մարտակոչը և գրավում ենք իշխանությունը։ Եթե Հայաստանի կոմիտեն սրան համաձայն չէ, խնդրում ենք անհապաղ կերպով հրահանգներ տալ։

1. Եթե դուք լիովին համաձայն եք մեր տեսակետին, ապա հայտնեցեք ուղիղ գծով. «Միշան առողջ է»։

2. Եթե դուք կարծում եք, թե անհրաժեշտության դեպքում պետք է հանձնել զրահապատը, Կազմակերպությունը ցրել տալ և մինչև ձեր հրահանգներն ուղարկելը ելույթ չունենալ, ապա նույնպես ուղիղ գծով ասացեք՝ «Միշան վախճանվեց»։

3. Ավիսը՝ Գրիշան է։
4. Զրահապատը՝ հիվանդանոց։
5. Ապստամբությունը՝ դեղորայք։
6. Պարենավորումը քիչ է, չի բավականացնի իշխանությունը գրավելու դեպքում, մինչև Ռուսաստանից ստանալը՝ անմիջապես փող փոխադրի՛ր։

7. Տասը-տասնհինգ օր լիովին կբավի հացը և այլ մթերքներ. փողը փոխադրված է։ Մնացածն ամբողջ այնպես կազմեցեք, որ մոտավորապես կարելի լինի հասկանալ։ Այսօր երեկոյան ժամը 9-ից մինչև 10-ը դուք ուղիղ գծով կանչեցեք Ալեքսանդրապոլից այն ընկերոջը, որին դուք գիտեք, և խոսեցեք հիշյալ ութ կետերի համաձայն։ Եթե ուղիղ գծով չհաջողվի, հեռագիր տվեք Ալեքսանդրապոլ՝ ընկ. (անունը չկա. Ս. Վ.) հասցեով նույն կետերի համաձայն։

ԱՎԻՍ»

Ալեքսանդր. Կոմիտեի կնիքը,
3-ն մայիսի, 20 թ.

Ավիսի այս թեթևսոլիկ ու պարծենկոտ գրության վրա էր, որ Արմենկոմը Դր. Տեր-Սիմոնյանին և Արտ. Մելքոնյանին ուղարկեց Ալեքսանդրապոլ։

Պետք է համաձայնվել Բորյանի հետ, որ Արմենկոմը իսկապես որ անջիղ և ղեկավարելու անընդունակ մարդկանցից էր բաղկացած։ Արմենկոմը, 1919-ի գաղտնի ժողովում կազմված էր հետևյալ անձերից՝ Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ավիս Նուրիջանյան, Ս. Ալլահվերդյան, Դան. Շահվերդյան, Դ. Տեր-Սիմոնյան, Հ. Կոստանյան և Ղ. Ղուկասյան։

Ճհա և Արմենկոմի սեփական բացատրությունները ապստամբության պատմության մասին։

«Ընկերնե՛ր,— գրում էր Արմենկոմը Կովկասյան Երկրային կոմիտեին*,— Արմենկոմը կամենում էր Դորայի միջոցով ուղարկել գրավոր զեկուցում Հայաստանի դեպքերի մասին, բայց որովհետև բոլոր մեկնողներին հետևում էին, այդ պատճառով այն ժամանակ չհաջողվեց այդ անել։ Ուղարկում ենք հիմա։

Ազրբեջանի դեպքերից, այլև Հյուսիսային Կովկասում մերոնց տարած հաղթանակներից հետո, այստեղ տրամադրությունը խիստ փոխվել է մեր օգտին։

Հաշվի առնելով այդ ամենը և նկատի ունենալով Հայաստանի կազմակերպությունների կոնֆերանսի որոշումը՝ Հայաստանում, Խորհրդային զորքերը մոտենալիս, այլև հարևան հանրապետություններում հեղաշրջումներ լինելուց հետո իշխանությունը գրավելու նպատակով ելույթ ունենալու մասին, Արմենկոմը սկսեց այդ ուղղությամբ աշխատանք կատարել։

Շարժման սկզբի համար իբրև բազա նշանակված էր Ղաղախը և դրա հետ միաժամանակ ելույթներ պետք է սկսեին ամենուրեք։ Արմենկոմը կանգնեց հենց այդ տեսակետի վրա, որովհետև նախ՝ Ղաղախը կպած էր Խորհրդային Ազրբեջանին, իսկ մյուս կողմից՝ նկատի ունենալով ղազախցիների հեղափոխականությունն ու տոկունությունը։ Այդ նպատակով համապատասխան հրահանգներ ուղարկվեցին այնտեղ։ Առաջարկված էր այնտեղից եկած ընկերոջը կազմել Ռազմ. հեղկոմիտե, մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերը և պատրաստվել ելույթի՝ կապվելով միաժամանակ Ազրբեջանի ընկերների և Ազրբեջանի միջոցով այն կողմի հետ։ Նույնը կատարված էր և Ղարաբաղի վերաբերմամբ (մոտավորապես ապրիլի վերջին), բայց ընկերների ուղարկելու գործը ձգձգվեց։

Մայիսի մեկին ելույթի համար մենք պատրաստվում էինք ամենուրեք. մեզ համար այդ օրը խաղաղ ցույցի միջոցով մեր ուժերի զորատեսի օր պետք է հանդիսանար։

Մայիսմեկյան ցույցերի հաջողություններն ամենուրեք ակնհայտորեն ցույց տվին, թե որպիսի խոր արմատներ է ձգել կուսակցությունը լայն մասսաների՝ այդ թվում նաև գինվորական մասսաների մեջ։ Եղել էին տեղեր, որտեղ բնակչությունը և զորքը բացառապես մեր դրոշակի տակ էին հավաքվել (Ղարաքիլիսա, Սարիղամիշ)։

* Այդ Երկրային Կովկասի կոմունիստական բոլոր գործերը վարող վերին մարմինն էր, որ ենթարկվում էր Մոսկվային և որին ենթարկվում էին Հայաստանի, Վրաստանի, Ազրբեջանի և Կովկասի մյուս մասերի համայնավար կազմակերպությունները։

Այդ օրը (մայիսի մեկին) իշխանությունը գրավելու խնդիրը չէր դրված մեր առաջ, սակայն, այդ օրվանից արդեն պարզ էր, որ այդ հարցը ամենամոտ ապագայի հարցն է հանդիսանում։ Այդ ուղղությամբ տեղային աշխատանք սկսվեց և այդ իսկ նպատակով կազմակերպությունները ռազմական դրության մեջ էին դրված։

Մայիսի երկուսին մենք Թիֆլիս ուղարկեցինք ընկ. Հ. Հայկազին, որպեսզի արտակարգ կերպով այստեղ ուղարկեն Ս. Կ. (ասյանին) և Ա. (սքանազ Մոավյանին), արդեն պատրաստվելով Հայաստանում հաստատել խորհրդային իշխանություն, որովհետև, կրկնում ենք, հավատացած էինք, որ դա ամենամոտ ապագայի խնդիր է։

Մայիսի երկուսին մենք տեղեկություն ենք ստանում Ալեքսանդրապոլում կատարված մայիսմեկյան տոնի մասին, այլև ընկ. Ավիսի լրիվ անունով ստորագրված ողջույնի մի ընդարձակ հեռագիր Բաքու ընկ. Նարիմանովի անունով։ Քանի որ մի կողմից ինքը՝ Արմենկոմը, ողջույնի հեռագիր էր ուղարկել Խորհր. Ազրբեջանին դեռևս մայիս մեկին և մյուս կողմից՝ նկատի ունենալով Ավիսի հեռագրի յուրահատուկ տողը, որ անընդունելի էր տակտիկական տեսակետից, Արմենկոմը որոշեց այդպիսին չուղարկել և ամեն կողմից ստացված տեղեկությունների հիման վրա կազմել արդեն ընդհանուր բնույթ կրող մի ողջույն։

Այդ արված է։

Մայիսի 8-ին մենք ընդարձակ զեկուցում ստացանք Ալեքսանդրապոլի դեպքերի մասին։

Ալեքսանդրապոլի բոլոր փաստաթղթերի պատճենները սրա հետ ուղարկում ենք։ Զեկուցման մեջ մանրամասնորեն հաղորդվում էր այնտեղ՝ Ալեքսանդրապոլում տիրող դրության, զրահագնացքի մասին և այլն։ Այդ զեկուցումն, ինչպես ինքներդ էլ կտեսնեք, լի է հակասություններով և բավական տարօրինակ տպավորություն է թողնում։

Ելույթի տարերայնությունն ու անկազմակերպությունն արդեն երևում են հենց այն բանից, որ նրանք իրենք են գրում, թե՝ «առավոտյան այդպիսի հաջողության չէինք սպասում»։ Պարզ է, որ եթե նրանք հույս չէին ունեցել մայիսմեկյան ցույցի հաջողության վրա, ապա ևս առավել խոսք անգամ չէր կարող լինել արդեն իշխանությունը գրավելու նպատակով հաջող և կազմակերպված ելույթ ունենալու մասին։

Այստեղ ամբողջ բանակն ու բնակչությունը մեկ անդամից անցան նրանց կողմը և որ դաշնակների մոտ երկու հարյուր մարդ կար, իսկ նրանց կողմում՝ հինգ հազար։ Եթե նույնիսկ «իշխանությունը չէր գրավված, ապա ոչ այն պատճառով, որ մենք անզոր էինք, այլ զինվորական մասսաների անկազմակերպության պատճառով և թալաններից երկյուղ կրելուց»։ Հանկարծ, մեկ անգամից ամբողջ «զորքն ու զրահապատը մեր տրամադրության տակ են անցնում և այդ պատճառով այստեղ իշխանություն գրավելու հարցը մեր ցանկության խնդիրն է և ոչ թե օրվա այլ բոպեի հարցը։ Իսկույն ևեթ, մի օրվա ընթացքում, կազմակերպված զինվորներն արդեն երդվեցին մինչև վերջին մարդը մեռնել, բայց անձնատուր չլինել։ Թե ինչպես նրանք այդ իրագործեցին, ձեզ, ընկերներ, արդեն հայտնի է։ Այնուհետև, այդ բանն ընդգծում ենք, ընկերներ, որ Ալեքպոլում նրանք իշխանությունը ձեռք ձգելու խնդիրը կապում էին ձերբակալությունների, անկյունից կատարվող տեռորների հետ։ Միաժամանակ հաղորդում են, թե պարենը շատ քիչ է, իշխանությունը գրավելու դեպքում մինչև Ռուսաստանից ստանալը չի բավականացնի և այլն։

Առաջինը, ուշադրության առնելով նրանց այսօրինակ հաղորդագրությունները, ընկեր Ավիսի մշտական հափշտակվիլը, որ մինչև արկածախնդրության էր հասնում (մենք նկատի ունենք հինգ ամիս սրանից առաջ Բաքվում եղած նրա ելույթը, որով նա հանուր աշխարհին ազդարարում էր կոմունիզմի լիակատար հաղթանակը Հայաստանում և դաշնակների սնանկության մասին) և որ այդ բոլորը նրանք կատարում էին զրահապատի մեջ նստած, այսինքն՝ լարված, ներվային դրության մեջ, նրանց վախը ձերբակալություններից, ճնշումներից և «անկյունից կատարվող տեռորից», մենք հավատացած էինք, որ այդ բոլորը չափազանցված է, և որ, նույնիսկ այնտեղ ինչ որ լինի, ելույթի խնդիրը արդեն կաշվի խնդիր է հանդիսանում նրանց համար, սեփական կյանքը փրկելու մի հարց և այլն։

Դեռ ավելին. մենք հավատացած էինք, որ նրանց հաջողությունը չի կարող կայուն լինել, որ անհրաժեշտ է ամենուրեք համաձայնեցնել մեր գործողությունները, քանի որ անջատ ելույթները փոշիացման և պարտության կհասցնեն, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ ունենալ և այլն, և այլն։

Ազգանշան տվողը Ղազախը պետք է լիներ, ահա Արմենկոմի նախագիծը։ Այս որոշումն էլ տեղեկացված էր ալեքսանդրապոլցիներին և առաջարկված էր նրանց սկսած գործը անհիվանդագին կերպով լիկվիդացիայի ենթարկել ըստ կարելվույն, կամ գոնե ձգձգել։

Ալեքսանդրապոլի բոլշևիկները չցանկացան հաշվի առնել այդ։ «Ինչո՞ւ Ղազախը և ոչ Ալեքպոլը»,— ահա նրանց պատասխանը։ «Մենք նույնիսկ հակառակ ենք սկզբից կապ հաստատելուն»։

Նրանք առաջնության մասին էին դրել խնդիրը, մոտենալով այն հարցին, ըստ երևույթին, սպորտիվ տեսակետից։

Նրանք սկսում են ոմբակոծել մեզ իրենց պահանջներով ելույթին սանկցիա տալու մասին, մինչդեռ բանից դուրս եկավ, որ այդ բանը նրանք արդեն արել են և այժմ այլևս ոչ մի կասկած չկա, որ հաղորդագրությունները մեզ ուղարկելիս են եղել հենց այնպես, նույնիսկ դիտավորյալ, որովհետև բնավ հաշվի չառնելով Արմենկոմին և բացահայտորեն նախատեսելով իրենց ելույթի անհաջողությունը՝ նրանք դիտ-

մամբ ոմբակոծում էին մեզ իրենց պահանջներով, որպեսզի հետևանքների մեղքը մեզ վրա ձգեն։

Եվ այսպես ահա՝ խորհրդային իշխանություն, թեպետև բավականին յուրահատուկ (ապստամբության պարագլուխները 12 օր նստած են զրահապատի մեջ և համառորեն չեն իջնում այնտեղից)։ Պարզ է, որ եթե նրանք լուրջ տրամադրություններ ունենային, ապա դեպքերի բնական ընթացքով պետք է իրենց հաջողությունը զարգացնեին և ծավալեին մոտակա շրջանների հետ և նույնիսկ առաջխաղացման դիմեին Երևանի ուղղությամբ։

Մայիսի 5-ին գալիս է այնտեղից նրանց կողմից ուղարկված մի ընկեր, երկաթուղային մի բանվոր, որ իր բանավոր զեկուցման մեջ արդեն ինֆորմացիա է տալիս իրերի դրության մասին, որ հիմնովին հակասում է ընկ. Ավիսի հաղորդագրություններին։ Այդ բանի վրա ուշադրություն է դարձրել ամբողջ Արմենկոմը, ի դեպ, նա ասաց, որ «այնտեղ ընկերները չափազանց ոգևորված են» և այլն։ Հենց նա էլ բերել էր ալեքսանդրապոլցիների նամակը։

Հենց նույն գիշերը, այսինքն՝ մայիսի 5-ին, մենք Ա.-ի և Մ.-ի* ստորագրությամբ կրկին մի հեռագիր ենք ստանում դարձյալ Բաքու ուղարկելու համար, որ մենք պետք է ռադիոյով հաղորդեինք ընկեր Նաբիմանովի անունով։

Նման բովանդակությամբ հեռագիր մենք այն պահին խպառ անընդունելի համարեցինք, մի հեռագիր, որ այն ժամանակ ստեղծված պայմաններում անպայման պրովոկացիոն դեր էր խաղալու։ Դա վերջնականապես պիտի խորտակեր մեր կազմակերպությունները։ Մի՛ մոռանաք, ընկերներ, որ մեզ հաղթեցին նրանով, որ անտանելի ծանր մթնոլորտ ստեղծեցին Ադրբեջանի շուրջը, ազգայնական թշնամանք [illegible] բերին և Հայաստանի սահմաններում ամենուրեք հակամուսուլմանական ելույթներ էին նախապատրաստում (դրա մասին տե՛ս ստորև)։

Այդ օրերին գրության տերերն էին հանդիսանում սասունցի, զեյթունցի, վանեցի մաուզերիստներ, գլխավորապես տաճկահայերը։ Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր հարկավոր ալեքսանդրապոլցիներին այս ամենը։ Հեռագիրը որոշ տեսակի ռևկլամայի բնույթ էր կրում, իսկ գործին խոշոր վնաս էր հասցնում, քանի որ առանց այն էլ մեր թշնամիները խոսում էին «Զանգիբասար—Բոյուքվեդյան բոլշևիկյան ելույթների» մասին։

Հենց այդ միջոցին էլ Մ.-ից հրաման ստացվեց իր օգնականի անունով՝ Ղամարլուում կանգնած զրահապատի հետ միասին շարժվել դեպի Ալեքսանդրապոլ։

Պարզ է, որ մենք գործ ունեինք արդեն կատարված փաստի հետ և որոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպված բնույթ տալ և

* Ավիս և Մուսայելյան։

գիմանալ, մինչև այլ վայրերում գործողությունների սկսվելը, նույնիսկ Երևանում։

Ուրիշ ելք մենք այլևս չունեինք։ Այդ նպատակով մյուս օրը, այսինքն՝ մայիսի 6-ին, ուղարկեցինք այնտեղ ընկերներ Դ.-ին և Ա.-ին*, լայն լիազորություն տալով նրանց և պարտավորեցնելով, որ եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտորեն պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանների, չեզոք գոտու և հարակից շրջանների հետ։

Այստեղ զինվորական մասերում տենդային աշխատանք էր կատարվում։ Ընկերներից մեկին՝ Արմենկոմի անդամի միջոցով այն զինվորականների հետ, որոնք այդ ժամանակում կազմակերպված էին՝ շարունակաբար խորհրդակցություններ էին կազմակերպում։

Կապ է հաստատված Քանաքեռում կանգնած զորամասի հետ, և երբ որ մայիսի 7-ին Դ.-ից և հանգուցյալ Ա.-ից մենք գրություն ստացանք, որ նրանք կանգնած են կատարված փաստի առաջ և խնդրում են ագիտացիա մղել ուղարկվելիք զինվորական մասերում, այլև թիկունք տալ իրենց Նոր Բայազետի շրջանում, Ելենովկայի ուղղությամբ, երկուսնեք համերաշխ գործողությունների համար, ապա մենք այդ ուղղությամբ ինչ որ կարելի էր, անում էինք։ Համապատասխան հրահանգով մենք Նոր Բայազետի շրջան ուղարկեցինք այժմ հանգուցյալ ընկեր Սարուխանյանին (նա մեկնեց 9—10-ին), որ ի կատար ածեց Արմենկոմի առաջարկությունը և սկսեց գործողությունները։

Անհրաժեշտ է նշել, որ Նոր Բայազետի շրջանի ուժեղ կազմակերպությունը, որի մեջ մտնում էին նաև զինվորականները, ապրիլի կեսերին ջախջախված էր և ընկերները ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ և մի սպայի հետ արտաքսվել էին Նոր Բայազետի շրջանի սահմաններից։ 6-ի գիշերը լույս 7-ին այստեղ սկսվեցին բռնություններ և չտեսնված հալածանքներ։ Դա կապ ուներ Ալեքսանդրապոլի հետ։ Մենք անցանք անլեգալ դրության։ Կազմակերպության հետ կապը չէր կորցված։

Հետևյալ օրը, մայիսի 8-ին, այն զինվորներին, որոնց հետ կապ էինք հաստատել, մեր կողմից շեշտակի հարց դրվեց, կարելի՞ է արդյոք այստեղ հենց հիմա ելույթ ունենալ։ Այդ հարցին նրանք պատասխանեցին, որ առայժմ այդ հնարավորությունը չկա, որ զորամասերում տատանումներ կան, որ դեռ պետք է աշխատել, սակայն Ալեքսանդրապոլի ուղղությամբ առաջացող զինվորական մասերը խոստացան Ալեքսանդրապոլի մոտենալուց անցնել ապստամբների կողմը։

Այսպիսի պատասխան ստացանք մենք գիշերվա ժամը մեկին, մթնոլորտը հետզհետե խտանում էր։ Թերթերում անընդհատ ցուցա-

* Դրաստամատ Տեր-Սիմոնյան և Արտաշես Մելքոնյան։

դրանք սկսվեց, կազմակերպվեցին արտակարգ դատարաններ, մահվան պատիժը սահմանված, խորհրդարանը արդեն ցրված էր։

Իշխանությունը իրենց ձեռքին պահելու նպատակով, դաշնակները պրովոկացիայի ենթարկեցին թուրքերի շարժումը Զանգիբասարի, Փարաքարի և այլ շրջաններում. կազմակերպվում էին հարձակումներ, չուր չէին բաց թողնում, անասունները գրավում էին և այլն։ Թերթերում գրում էին, թե այդ ելույթը բոլշևիկներն են կազմակերպել։ Մինչև ատամները զինեցին բոլորին՝ սպեկուլյանտներից սկսած մինչև դիմնազիստները։ Մեր դեմ պայքարը Դաշնակցություն կուսակցությունը վերցրել էր իր ձեռքը։ Ձերբակալումների համար բացառապես մաուզերիստներին էին ուղարկում։ Մեզանից ոմանք փաստորեն օրենքից դուրս էին հայտարարված։ Ձերբակալում էին նույնիսկ նրանց, ովքեր հենց միայն հանդիպում էին մեզ։

Այսպիսի պայմաններում աշխատանքն այնուամենայնիվ շարունակվում էր, և Արմենկոմը ոչ մի բոպե կազմակերպությունների հետ կապը չկորցրեց։ Պետք է նկատել, որ սկզբի օրերին ակտիվ ընկերներից քչերը ձերբակալվեցին այստեղ։

Այդպիսի մթնոլորտում, ամսի 8—9-ին, Արմենկոմին հաջողվեց իր ստորագրությամբ բաց թողնել երեք օր առաջ պատրաստած թերթիկը (մինչ այդ ժամանակ չհաջողվեց տպագրել). այդ թերթիկով մենք ցանկանում էինք ցրել թունավորված այն մթնոլորտը, որ ստեղծված էր Ազրբեջանի շուրջը։ Տպարանը կնքված էր, և մեզ չհաջողվեց թերթիկը բաց թողնել։

Մայիսի 12-ին թերթերից իմանում ենք, որ Ալեքսանդրապոլը բանակցություններ է վարում կառավարական ներկայացուցիչների հետ։ Դաշնակները գրում էին. «Ալեքսանդրապոլի դավաճանները փրկություն են խնդրում», Դա բոլորի վրա ճնշող տպավորություն թողեց։ Մայիսի 13-ին Ալեքսանդրապոլի ընկերները, առանց կռվի, հանձնում են քաղաքը և այստեղ, իհարկե, ամեն ինչ վճռվում է։ Եվ այսպես արագ կերպով գրավելով իշխանությունը՝ նրանք նույնպիսի արագությամբ անձնատուր եղան։

Ինչպես պարզվում է, ալեքսանդրապոլցիներին ամբողջ ժամանակ թերթ չեն եղել բաց թողած. եթե նրանք մի երեք օր էլ դիմանային, բանն ուրիշ ընթացք կստանար, որովհետև Ալեքսանդրապոլի ընկնելուց սկսվեց ապստամբությունը Նոր Բայազետի շրջանում, որտեղ ղեկավարում էր ամբողջ ժամանակ դիրքերում գտնվող ընկ. Սարուխանյանը։ Այնտեղ նրանք կարծում էին, թե Ալեքսանդրապոլը դեռ դիմանում է և իրենք էլ սկսում են առաջխաղացումը։ Եղավ մի մոմենտ, երբ կառավարական ուժերը տատանվեցին և սկսեցին նահանջել, սակայն, վերջիններիս թվական գերակշռությունը (նրանց օգնել մեկնեցին Ալեքսանդրապոլից արդեն վերադարձած մաուզերիստները), և մի խմբի դավաճանությունն,

ինչպես ասում են, հարցն այլ կերպ վճռեց և 4—5 օրվա համառ դիմադրությունից հետո, նորբայազետցիները կռվով հանձնեցին քաղաքը։ Այս բոլոր դեպքերին ականատես եղած ընկերն անձամբ այս ամենը զեկուցեց Արմենկոմին։

Եվ այսպես, համառ դիմադրությունից հետո, Նոր Բայազետը հանձնվեց։ Ապստամբների մի մասը քաշվեց սարերը, մի մասը ձերբակալվեց և նրանցից մի քանիսը, ընկ. Սարուխանյանի գլխավորությամբ, գնդակահարվեցին։ Սարսափելի կերպով վարվեցին ընկ. Սարուխանյանի հետ, ուղղակի ինկվիզիտորների նման։ Այսպես, օրինակ, երկու ձիավոր նրա երկու ձեռքից բռնած և ձիերը քշելով քարշ էին տալիս նրան քաղաքի միջով։ Մեր ընկերները տեսել են նրան ֆուրգոնի մեջ պառկած, ուշաթափ վիճակում, Ռազմադաշտային դատարանի որոշմամբ նա գնդակահարվել է։ Նրա վերջին խոսքերի մասին «Հառաջի» գրածը ամբողջովին մտացածին է։

Ղազախում ելույթն սկսվեց նույնպես Ալեքսանդրապոլի և նույնիսկ Նոր Բայազետի անկումից հետո։ Մեր կողմից երեք օր առաջ Դիլիջան էր ուղարկված մի ընկեր՝ ինֆորմացիայի համար։ Գիտենք, և ձեզ էլ հայտնի է, որ այնտեղ մտել են խորհրդային զորքերը և իրենց հետ տարել են դաշնակներին։

Կարսում և Սարիղամիշում նույնպես տեղի են ունեցել ապստամբության ելույթներ, սակայն այդպիսիներն այնտեղ էլ են ճնշվել։ Այնտեղ, ընդհարման ժամանակ ընկավ ընկ. Ղուկասը (այսպես են մեզ հայտնում) այլ ընկերների հետ (դեռևս ստուգված չէ)։

Մենք չէինք կարող ավանտյուրայի դիմել և արդեն հավանություն էինք տվել Իգդիրի ելույթներին, որտեղ այդ միջոցին շատ ուժեղ զինվորական կազմակերպություն կար և անձնվեր զորամաս։

Այժմ այնտեղի ամբողջ շտաբը (5-ը զինվորական և 5-ը քաղաքացիական) գտնվում է Երևանի բանտում։

Ինչպես ինքներդ էլ տեսնում եք, հողը գրեթե ամենուրեք լրջորեն պատրաստված էր. դա մի պատահական արմատազուրկ ապստամբություն չէր, բնավ երբեք։

Եթե այդ բոլորն անհաջող վերջացավ, դա միմիայն ալեքսանդրապոլցիների վաղաժամ ելույթի պատճառով էր։

Անհնար լինելով ամենուրեք արագորեն կազմակերպել գործողությունները և անջատ գործողություններին ձևավորում տալ, այլև շնորհիվ շրջանների միջև երկաթուղային հաղորդակցության բացակայության, կանոնավոր ինֆորմացիան և գործողությունների համաձայնեցումը հնարավոր չեղավ։

Բնականաբար, այդպես չէր լինի մի երկու շաբաթ հետո։

Ընկ. Արտաշեսը ձերբակալվելուց հետո խիստ ծեծի ենթարկվեց։ Եվ երբ նրան էջմիածնի վրայով բերում էին Երևան, քաղաքից 5 վերստ-

տի վրա գնդակահարվեց։ Այդ բանին սանկցիա էր տրված դաշնակների կուսակցության և կառավարության կողմից։ Այսպես վարվեցին ամա մեր ընկերների հետ մեր հակառակորդները, մինչդեռ այն տեղերում, որտեղ իշխանությունը մերոնք էին գրավել, ոչ մի բռնություն չէր գործադրված մեր հակառակորդների վերաբերմամբ։ Այդ բանն իրենք էլ չեն ժխտում։ Այսպես, օրինակ, Նոր Բայազետում գերի առնված զորավար Սիլիկովը հենց ինքը հաստատում է այդ։

Ներկայումս ամբողջ քաղաքը (Երևանը) զինվորական ճամբարի է վերածված։ Աննկարագրելի բաներ են կատարվում. բռնում են փողոցում ում ասես, ինքը՝ ներքին գործերի մինիստրը, «ձախ» դաշնակցական Ջամալյանը փողոցում ձերբակալում էր մեր ընկերներին։ Կուսակցության (Դաշնակցության) ամեն մի անդամ օգտվում է ինչպես փողոցներում, այնպես էլ տներում ձերբակալություններ կատարելու իրավունքից։

Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատվել. ընկերներին ամեն օր հրահանգներ են տրվում. տասն օր առաջ հրավիրված էր արտակարգ քաղաքային խորհուրդ, որտեղ լսվեց Արմենկոմի զեկուցումը։ Ընտրվեց Քաղաքային բյուրոն, որի վրա ժամանակավորապես դրված էին Քաղաքային կոմիտեի ֆունկցիաները։ Գրեթե ամեն օր Բյուրոն նիստեր է ունենում. կազմակերպված էր «Կարմիր խաչը», որ կապված է կալանավորների հետ։ Վերականգնվում են կապերը շրջանների հետ՝ տեղերում կազմակերպությունները վերականգնելու նպատակով։ Ներկայումս Արմենկոմը բաղկացած է երկուսից։ Մենք մեր դիրքերում ենք, բայց այս վիճակում Երևանում երկար մնալու ոչ մի հնարավորություն չկա։ Ձերբակալությունն այժմ անխուսափելի հատուցմամբ է սպառնում յուրաքանչյուրին, որովհետև դաշնակների կուսակցությունը այդ ոգով որոշում է կայացրել։

Վրաստանում կուսակցության լեգալիզացիայի հետևանքով անհրաժեշտ է այնտեղից սրանց սեղմել։

Ուղարկեցեք ընկերներին։ Թող Բաքվում դաշնակցականներին շարձակեն, սրանք այդ բանից արդեն շփոթված են։

Երևանում ձերբակալված են 50 մարդ, որոնցից 14-ը ուղարկված են Սևանի կղզին։ Սարիղամիշից բերված են 5 (զինվորական), Իգդիրի շրջանից՝ 9 (զինվորական), 64 մնացյալներից։ Աշտարակից՝ 3, Արտաշատից՝ 3 և Ղամարլուից՝ 4։ Մի քանի ընկերներ թաքնվել են, Հաղորդում են, որ Ալեքսանդրապոլում նստած են 100-ից ավելի ընկերներ։ Կարիքը մեծ է։ Նախահաշիվը կարող ենք ուղարկել միմիայն տեղերում կազմակերպությունները վերականգնելուց հետո։ Ուղարկված դրամը մի կաթիլ է ծովի մեջ։

Կազմակերպությունը վերականգնելու նպատակով մենք ընկերներ ենք ուղարկել Դիլիջան։ Ուղարկում ենք Ղարաքիլիսա։ Շրջանների համար ազատ ընկերներ քիչ կան։ Ահա ընդհանուր գծերով երկրի ներկա դրությունը, մեր վերաբերմունքը դեպքերին և նրանց գնահատումը։ Մենք ամեն ժամանակ պատրաստ ենք բանավոր բացատրություններ ևս տալու, եթե այդպիսին կպահանջվի։

Այսօր տեղեկություն ստացանք, որ մաուզերիստների խմբերը ուղարկված են և ուղարկվում են Ղարաբաղ։ Շրջապատում են նաև Զանգեզուրի շրջանը»*։

Ռ. Կ. Կ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ
(ԱՐՄԵՆԿՈՄ)

1920 թ. մայիսի 31, Երևան

Ինչ էլ լինեն Արմենկոմի և մյուս պատասխանատու բոլշևիկների շփոթանքները, փաստը մնում է փաստ. Հայաստանի քաղաքական կյանքի ամենածանրակշիռ վայրկյանին, հայ բոլշևիկները չքաշվեցին խռովություններ հանել երկրի ներսը, եղբայրասպան քաղաքացիական պատերազմ առաջ բերելու, զինված ապստամբության միջոցով Հայաստանի անկախությունը խորտակելու և պետական իշխանությունը հափշտակելու փորձ անելով։ Հայ ժողովրդի կամքով այդ դավը վիժեց, բայց անհաշիվ վնասներ հասցրեց թե՛ ներքին և թե՛ արտաքին կյանքում։

* Վավերագրերի արժեքը բոլշևիկների արած խոստովանությունների մեջ է։

ԳԼՈՒԽ ԻԹ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ. ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ

Բոլշևիկյան խռովությունները ճնշելուց հետո, իրերի տրամաբանական թելադրանքով, կառավարության առջև եկավ թրքաբնակ վայրերի գրավման հարցը։ Մի շարք շրջաններ՝ Զանգիբասարում, Վեդիբասարում, Ջուլ, Կողբ և այլն— էլ չենք խոսում Շարուր—Նախիջևանի մասին— մնում էին Հայաստանի իշխանության նկատմամբ ապստամբ վիճակում. ո՛չ միայն չէին ճանաչում նրան, այլև անվերջ հարձակումներով, սպանություններով ու թալանով դժվարացնում էին Հայաստանի կազմակերպման և վերաշինության գործը։ Շարուր—Նախիջևանում իշխանությունը փաստորեն անցել էր Անգորայի զինվորական գործակալ Խալիլ բեյի ձեռքը։ Սրա ազդեցությունը տարածվում էր և Վեդիբասարի ու Զանգիբասարի վրա, որոնք ամրացված էին ոչ միայն տեղական այլև թուրք ասկյարներով։ Զանգիբասարում փորված էին անառիկ դիրքեր։ Իլխի-Ղորուղի գյուղում դրված էր թնդանոթ։ Ռազմագիտական կարևոր դիրքերը բռնված էին զորամասերով ու գնդացիրներով։ Գլխավոր կետերը միացված էին իրար հետ հեռախոսով։ Թուրքիայից ստացվում էր մեծ քանակությամբ փամփուշտ ու ռազմամթերք։ Զինվորական տեսակետից, շատ լավ կազմակերպված ու ամրացված էր և Թեյուք-Վեդին։ Այս բոլոր շրջանները միասին կազմում էին «Հարավ-Արևմտյան Ազրբեջանը», ուր իշխանությունը խառն էր՝ թուրք-ազրբեջանյան։

Օգտվելով մայիսյան դեպքերից հետո ստեղծված ռազմական ու հոգեբանական նպաստավոր դրությունից՝ կառավարությունը անցավ գործի. հունիսի 18-ին Զանգիբասարին ներկայացվեց վերջնագիր՝ ճանաչելու Հայաստանի իշխանությունը, զինաթափվելու և հեռացնելու թուրք-ազրբեջանյան գործակալներին։ Ստանալով պատասխան՝ կառավարությունը հրամայեց Վաղարշապատի զորախմբին՝ զենքի ուժով գրավելու Զանգիբասարը։ Եվ մի քանի օրում շրջանը գրավվեց։

Զորախմբի հրամանատար գնդ. Շահմազյանը այսպես էր նկարագրում զինվորական գործողությունները.

«Հունիսի 19-ին Նորագավիթի զորասյունը ճեղքեց հակառակորդի դիրքերը Աղջա-Ղշլաղ-425 բարձունք-411 բարձունք ճակատի վրա և գրավեց Հաջի-Էյլաղ գյուղը։ Այսպիսով ողջ զանգիբասարյան դիրքերի

բանալին խլվեց խռովարարների ձեռքից, որով և Զանգիբասարի բախտը նախորոշվեց։ Փարաքարի զորասյունը գրավեց Գեոյգումբեթ, Քելալի և Արբաթ գյուղերը։ Ղարխունի զորասյունը գրավեց Թազա Ղարխուն գյուղը և ակտիվ գործողություններ վարեց Զորան-Քյարա և Շոռլու-Մեհմանդար գյուղերի դեմ։ Հակառակորդը մաքրեց երկաթուղագծից հյուսիս ընկած բոլոր գյուղերը, բացի Խաչափարուխ, Ղարաղշլաղ, Շոռլու-Մեհմանդար և Զորան-Քյարա գյուղերից ու սկսեց փախչել դեպի հարավ՝ երկաթուղագծի այն կողմը։ Ինձ հանձնված զորախմբին հրամայեցի վերջնականապես մաքրել խռովարարներին երկաթուղագծի հյուսիսային կողմը ընկած գյուղերից, իսկ հետո հարձակվել հարավային գյուղերի վրա։

Հունիսի 20-ին մեր զորամասերը շարունակեցին հետապնդել խռովարարներին։ Հունիսի 21-ի լուսաբացին, կարճ ու վճռական կռվից հետո, գրավվեց Սարաջալար գյուղը, որով և կատարվեց զորախմբին հանձնարարված խնդիրը։ Սկսված հաջողությունն ընդլայնելով և եռանդուն կերպով հետապնդելով հակառակորդին՝ զորասյունը, կոտրելով թշնամու դիմադրությունը, գրավեց Ռամազան Քենդ գյուղը և ցրեց թաթար խուժանը։ Այսպիսով, Զանգիբասարի շրջանը միանգամայն մաքրվեց հանրապետական կառավարության անհնազանդ ազգաբնակչությունից և վերջնականապես միացավ մեր սահմաններին, չնայած որ Զանգիբասարը երկու տարվա ընթացքում կազմակերպվեց տաճիկ սպաների և ենթասպաների ղեկավարությամբ ու աչքի ընկնող զինվորական ուժ էր ներկայացնում՝ ամենահամեստ հաշվով 400-ից ոչ պակաս տեղական մարտիկներ և 600—800 ասկյար, որ տեխնիկական տեսակետից հաջող ամրացված էր, ուներ 3 թնդանոթ, 8 գնդացիր և առատ փամփուշտ»*։

Հայկական զորքերը գրավեցին 1 թնդանոթ, 2 գնդացիր, 40 000 փամփուշտ և առատ մթերք։

Զանգիբասարի կռիվների ընթացքում սպանվածների մեջ էր և Հ. Քաջազնունիի սպա որդին։

Զանգիբասարի հետ միաժամանակ, հունիսի 18-ին զինվորական գործողություններ սկսվեցին և Կարսի նահանգում՝ ածխահանքերի գրավման նպատակով։ Հայկական զորքերը զոր. Հովսեփյանի ընդհանուր ղեկավարության տակ և գնդ. Միրիմանյանի անմիջական հրամանատարությամբ շարժվեցին երեք ուղղությամբ. աջ զորասյունը գնդ. Մազմանյանի գլխավորությամբ՝ Դորա Քիլիսեից, միջինը՝ գնդ. Շահբուդաղյանի հրամանատարությամբ՝ Մերդենեկի մոտից և աջը՝ փոխգնդ. Նեստերովսկիի գլխավորությամբ Բեկկեի դիրքերից։ Հունիսի 19-ին ամբողջ ճակատը դիմեց ընդհանուր հարձակման, և երկու օրվա համառ

* Վաղարշապատի զորախմբի հրամանատար գնդ. Ա. Շահմազյանի հրամանից։ «Հառաջ», 1920 թ., հունիս 27։

ու հաջող կռիվներից հետո, հունիսի 21-ին, զորամասերը միացան հանքերի արևմտյան մասում։ Հակառակորդը, խալիլ բեյի հրամանատարության տակ, պարտված փախավ՝ թողնելով հայերին 2 արագաձիգ լեռնային թնդանոթ, 4 մաքսիմ գնդացիր, ավելի քան 100 000 մոսինի փամփուշտ, լեռնային թնդանոթ, 300 ռումբ, բազմաթիվ ձեռքի ռումբեր, փոքր, հարուստ պահեստներ՝ 1200 փութ հացահատիկ, 2000 պահածո, մխ, 50 փութ շաքար, 50 փ. թխած հաց, 50 փութ պաքսիմատ, մեծ քանակությամբ անասուններ և այլն, և հարյուրավոր սպանվածներ, որոնց մեջ նաև թուրք սպաներ։ Հայերի կորուստն էր՝ 5 սպանված, 22 վիրավոր։ Գրեթե մինչև Օլթի, ամբողջ տարածությունը անցավ հայերի ձեռքը։

Զանգիբասարից հետո կազմակերպվեց և իրականացվեց նաև Բեռյուք-Վեդիի գրավում։ Այնտեղ թշնամին ուներ մոտ 3000 կռվող, 3 թնդանոթ, 9 գնդացիր և առատ փամփուշտ։ Ընդհանուր հրամանատար էր թուրք սպա Մուստաֆա բեյը։

Հայերը հանեցին 26 վաշտ հետևակ, 7 հարյուրյակ ձիավոր, 16 թնդանոթ, 1 զրահագնացք, կամավորական խմբեր։ Ընդհանուր հրամանատարն էր զոր. Շելվոնիկյանը։

Կռիվները զարգացան հետևյալ ձևով*։

«Հուլիս 10-ին երեկոյան մեր զորամասերը Ղամարլուից ու Նոր Բայազետից հարձակման դիմեցին Բեռյուք-Վեդի գյուղը գրավելու նպատակով։ Հուլիս 11-ին, Ղամարլուի ուղղությամբ, համառ կռիվներից հետո, գրավեցին Կարայազ, Ճաթղռան, Ալի Մամեդ, Ենգիջա, Կոթուդ Աղասի, Բեգլու և Ներքին Կարաբաղլար գյուղերը։ Բեռյուք-Վեդիից հյուսիս մի վերստ հեռավորության վրա՝ Գյավուր Ղալասի լեռան մոտ մենք հանդիպեցինք թուրքերի կողմից հուսահատ դիմադրության. Նոր Բայազետի ուղղությամբ, հուլ. 11-ի երեկոյան, մենք գրավեցինք Աղքիլիսա, Մաղուկ, Գյոլ, Զիդին, Մոգյուղ, Զագին, Գերմանիս, Դոխնազ գյուղերը։ Մութն ընկնելուց հետո, երեկոյան ժամը 9-ին, Գյավուր Ղալասի լեռան կողմից թուրքերը դիմեցին հակահարձակման, բայց 2-րդ գնդի հանդիպակաց գրոհով հետ շպրտվեցին։ Նահանջողներին հետապնդելով՝ երկրորդ գունդը, տաք սվինամարտից հետո, գրավեց Գյավուր Ղալասի սարը, ուր թուրքերը թողեցին բազմաթիվ սպանվածներ և մի Մաքսիմ գնդացիր։

Հուլ. 12-ին, առավոտյան ժամը 5-ից 25 րոպե անցած մեր զորամասերը մտան Բեռյուք-Վեդի։

Թուրքերը փախչում են Դավալու Ջինջիրլիի վրայով»։

Բեռյուք-Վեդիում հայերի ձեռքը անցավ 1 թնդանոթ, մի քանի գնդացիր, ռումբ ու փամփուշտ, ուտելիք։ Նույն օրը երեկոյան գրավվեց

* Հայաստանի Գլխ. սպայակույտի հուլ. 12 հաղորդագրություն։

Դավալուն, ապա Գայլի Դրունքը, և վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը Ղամարլուի հետ։ Միաժամանակ գործողություններ էին կատարվում և Դարալագյազից, և հուլ. 16-ի երեկոյան մեր զորքերը գրավել էին արդեն Արաքս—Աղ-Ահմեդ գյուղ—Ղուշչի—Դեմուրչի—Բաշ-Նորաշեն—Ուլիա—Նորաշեն—Ախուր գիծը։ Ամեն տեղ, ուր երևում էին հայերը, թուրքերը թողնում և խուճապով փախչում էին։

Բեռյուք-Վեդիի կռիվներում սպանվեցին 15 սպաներ ու զինվորներ, որոնց հանդիսավոր թաղումը տեղի ունեցավ Երևանում, հուլ. 13-ին։ Զանգիբասարի ու Բեռյուք-Վեդիի մաքրագործումը աննկարագրելի ցնծություն առաջ բերեց Հայաստանի բոլոր կողմերում։

Հուլ. 16-ին, հայկական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց, որովհետև Նախիջևանի Մահմեդական ազգային խորհուրդը պատգամավորություն էր ուղարկել Երևան՝ հաշտության խնդրանքով։ Կառավարությունը, զինվորական նախարարի միջոցով, ներկայացրեց խիստ ծանրը պահանջներ. անպայման հնազանդություն, երկաթուղագծի ապահովություն, կառավարությանը հանձնել մեծ քանակությամբ զենք, ձի, մթերք, երկաթուղու երկու կողմը որոշ տարածության վրա մահմեդականներ չբնակեցնել և այլն։ Պատգամավորությունը հետ գնաց՝ զեկուցանելու համար Ազգ. խորհրդին և այլևս չվերադարձավ։ Հուլ. 22-ին կռիվները վերսկսվեցին։ Թուրքերը 3 օր ցույց տվին հուսահատ դիմադրություն։ Հուլ. 25-ին մերոնք գրավեցին Շահթախթը։ Թուրքերը փախան դեպի Մակու ու Պարսկաստան՝ պարպելով ամբողջ շրջանը մինչև Նախիջևան։

Քիչ առաջ գրավված էր և Սևանա լճի արևելյան եզերքը, մաքրված էր Ղարաղոյինլի ձորը։ Այս կռիվներում մեր կողմից տրվեցին ծանր զոհեր. սպանվածների մեջ էին խմբապետ Մուրադը, ուսանող Հ. Զարիֆյանը և ուրիշներ։



Այսպիսով 1920 թ. ամառը Հայաստանի Հանրապ. սահմանները փաստորեն սարածվում էին Ղարաբաղից սկսած մինչև Օլթիի ածխահանքերը։

Նույն թափով առաջ էին գնում և ներքին աշխատանքները կազմակերպության և շինարարության ասպարեզում։

1920 թ. ամառը Հայաստանը բաժանված էր 4 նահանգապետությունների. 1) Արարատյան՝ նահանգապետ ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսյան, օգնական՝ Է. Ամիրխանյան, 2) Շիրակի՝ նահանգապետ Կ. Սասունի, 3) Վանանդի՝ Ստ. Ղորղանյան, 4) Սյունյաց՝ Ս. Մելիք-Ցոլլյան, իսկ նրա հրաժարվելուց հետո՝ Զ. Ցոլլյան։ Նահանգները իրենց հերթին, բաժանվում էին գավառների։ Վարչությունը կազմակերպված, հետզհետե բարելավվում ու կատարելագործվում էր, թեև մայիսյան շարժումներն ու թրքական շրջանների դեպքերը մեծապես դժվարացնում էին կյանքի և պետական մեքենայի կարգավորումը։

Այս դեպքերը խորապես անդրադառնում էին և գավառական ինքնավարությունների գործունեության, բայց, մանավանդ, երկրի ֆինանսական վիճակի վրա։

Ճիշտ է, Զանգիբասարի և Շարուրի գրավումը մեծարժեք հարստություն տվեց կառավարության ձեռքը։ Այսպես, Շարուրի գրավումից անմիջապես հետո գյուղատնտեսական նախարարության վիճակագրական բաժինը այնտեղ ուղարկեց վիճակագիրներ՝ Բ. Իշխանյանի անձնական հսկողության ակտ։ Եվ թեթև հավաքված սեղեկությունները լրիվ չէին, բայց ստացված թվերը հարստության մեծ պաշար էին ցույց տալիս։

Շարուրում կար 70 գյուղ, որոնցից 6 հայկական և 1 ասորական. մնացյալը՝ թուրք։ Բնակիչների թիվը հավասար էր 90 հազարի, որից հայերը, բացառությամբ 30 ընտանիքի, սրի էին քաշված դեռ 1919-ի նահանջի ժամանակ։

1919 թ. աշնանը և 20-ի գարնանը Շարուրում ցանվել էր 300 000 փութ ցորեն, 150 000 փ. գարի, 50 000 փ. չալթուկ (բրինձ), 4000 փ. վարսակ, 1000 փ. եգիպտացորեն, 500 փ. կորեկ, 1000 փ. սիսեռ., 1000 փ. սեխ ու ձմերուկ, 200 փ. լոբի, 200 փ. սոխ, 20 փ. ոսպ, 7 փ. ծխախոտ— ընդամենը՝ 507 927 փութ սերմացու։

Բերքը եղել է չափից ավելի առատ և մոտավոր հաշվով սեխ ու ձմերուկ 10 000 000 փ., ցորեն 3 500 000 փ., գարի 1 500 000 փ., կորեկ 20 000 փութ, վարսակ 20 000 փ., եգիպտացորեն 25,000 փ., սոխ 50 000 փ., սիսեռ 25 000 փ., լոբի 10 000 փ., ոսպ 1 000 փ., ծխախոտ 20 000 փ., ընդամենը 15 153 000 փութ։ Այս թվի վրա պետք էր ավելացնել և չալթուկի բերքը, որ հավաքված չլինելու պատճառով կարելի չէր չափորոշել, բայց որի քանակը շատ խոշոր էր։ Պետք էր ավելացնել և 500 000

փ. տանձ, 80 000 փ. խնձոր, 60 000 փ. դեղձ, 25 000 փ. սալոր և այլն։

Նման առատություն էր տիրում և Զանգիբասարում, ուր միայն բրնձի քանակը հաշվում էր մոտ 400 000 փութ։

Բայց այս հարստության մեծ մասը չմտավ պետության պահեստները, այլ, զանազան ձևերով, անցավ ժողովրդի ձեռքը, մասամբ դարձավ շարաշահության առարկա կամ փչացավ։ Կառավարությունը աշխատեց կազմակերպել լքված հարստությունների օգտագործումը, գործի կանչեց հմուտ ու բարեխիղճ պաշտոնյաներ, բայց, ա՛յն ժամանակվա պայմաններում, մասամբ միայն հաջողություն ունեցավ։

Պետական օրավուր աճող ծախսերը կառավարությունը հոգում էր թղթադրամներով. տպագրական մեքենան գործում էր կանոնավոր և արագ. ամսական տպվում էր 6—800 միլիոն ռուբլի։ Մինչև օգոստոս արդեն բաց էր թողնված երկու միլիարդ ռուբլու հայկական չեկ։ Լոնդոնում պատրաստվում էին հայկական դրամանիշեր։ Շրջանառության մեջ էին և անդրկովկասյան բոները։

Բնականաբար, դրամական այս հեղեղը մեծ չափով անդրադառնում էր և երկրի առևտրաարդյունաբերական վիճակի և ապրուստի ցուցության վրա։ Մթերքների գները բարձրանում էին խելահեղ արագությամբ։

Կառավարությունը դրա դեմ պայքարում էր առևտրաարդյունաբերական կյանքի կազմակերպումով, ասկու հիմնադրամի ստեղծումով, կոոպերացիան քաջալերելով մաքսերի ու հարկերի հավելումով և փոխառության միջոցով։ Առևտրաարդյունաբերության գործերը կարգավորում էր ելևմտական նախարարի օգնական՝ հայտնի դրամատեր և հասարակական գործիչ Հ. Մելիքյանը։ Ապա՝ Մ. Շաթիրյանը։ Արտաքին առևտուրը ղեկավարվում էր Ապրանքափոխության կոմիտեի միջոցով։ Փետր. 8-ից Երևանում սկսեց գործել և Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատը, որի նպատակն էր՝ զարկ տալ երկրի առևտրաարդյունաբերական գործին և օտար երկրների համապատասխան պալատների միջոցով կապ ստեղծել արտասահմանի շուկաների հետ։ Պալատի նախագահն էր Երևանցի հայտնի առևտրական և հասարակական գործիչ Հ. Մելիքյանը։

Հարկային գործի ասպարեզում պետք է արձանագրել առաջատվական տուրքի սահմանումը հունիսի 15-ին։ 1920 թ. ընթացքում մտցվում էր առաջատվական տուրք. տարեկան մինչև 18 000 ռ. հասույթ ունեցողները ազատվում էին տուրքից։ 18 000 ռուբլուց ավելի հասույթները ենթարկվում էին տուրքերի՝ հետևյալ համեմատությամբ. 18 000-ից մինչև 19 000 ռ. հասույթ ունեցողը պիտի վճարեր 206 ռ., 28 000-ից մինչև 29 000 ռ. ունեցողը՝ 556 ռ. 38 000-ից մինչև 40 000 ռ. ունեցողը՝ 1 000 ռ., 58 000-ից մինչև 60 000 ռ. ունեցողը՝ 6 600 ռ., 100 000-ից մինչև 110 000 ռ. ունեցողը՝ 22 550 ռ., 200 000-ից մինչև 210 000 ռ. ունեցողը՝ 56 550 ռ., 300 000-ից մինչև 310 000 ռ. ունեցողը՝ 94 550 ռ. 390 000-ից

մինչև 400 000 ռ. ունեցողը՝ 140 000 ռ., 400 000-ից ավելի հասույթ ունեցողներից յուրաքանչյուր 10 000 ռուբլուց պետք է գանձվեր 6 100 ռուբլի։

Այս թվերից երևում է այն սկզբունքը, որը հիմք էր դրված Հայաստանի հարկային քաղաքականության. ինչքան քաղաքացու հասույթը ավելանում էր, այնքան պետության ստացած տոկոսը պիտի բարձրանար։ Մի սկզբունք, որի համար պայքար են մղում դեռ ժամանակակից ռամկավարության առաջավոր շարքերը։

Հայաստանի արդյունաբերության և ելևմուտքի բարելավման տեսակետից, սակայն, վճռական դեր պիտի կատարեր Անկախության փոխառությունը, որի օրենքը հրատարակվեց հունիսի 10-ին։ Օրենքը ասում էր.

«1. Հայաստանի Հանրապետության արդյունաբերական ուժերը և ինտեսությունը վերականգնելու և հանրապետության թղթադրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն ամերիկյան դոլարի անվանական գումարի պետական փոխառություն 6 տոկոսով։ Փոխառության 75 տոկոսը հատկացնել վերոհիշյալ նպատակին, իսկ 25 տոկոսը գործադրել պետական այլ կարիքների համար»։

Փոխառությունը արվելու էր 10 տարով, Հայաստանում և արտասահմանում։ Բաց էին թողնվելու 10, 25, 50, 100, 500 և 1000 դոլարնոց պարտաթղթեր, որոնք ազատ էին լինելու տուրքերից։ Փոխառությունը ապահովվում էր Հայաստանի Հանրապետության ամբողջ գույքով։ Փոխառության գործի ղեկավար նշանակվեց Ա. Խատիսյանը, որը այդ առաքելությամբ ուղարկվեց արտասահման։

Անկախության փոխառությունը անօրինակ խանդավառություն առաջ բերեց Հայաստանի և արտասահմանի հայկական բոլոր խավերի մեջ։ Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, մամուլ, անհատ գործիչներ՝ ամենքը աջակցեցին կառավարությանը, որ փոխառությունը ունենա հաջող արդյունք։ «Միջկուսակցական մարմինը հետևյալ կուսակցությունների,— հեռագրում էին հունիս 21-ին Խատիսյանին— Հայ Ժողովրդական կուսակցության, Հայաստանի Սոց.-Դեմոկրատ բանվորական կուսակցության, Հայ Ռամկավար կուսակցության և Անկուսակցականների միության՝ գտնելով, որ Հայաստանի անկախության փոխառությունը 20 միլիոն դոլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական և տնտեսական դրության բարելավման համար, ամեն կերպ պաշտպանում է կառավարությունը այդ փոխառության իրականացման գործում, և դիմում է բոլոր հայերին՝ առաջարկելով եռանդուն մասնակցություն ցույց տալ նրա տարածման մեջ։ Լիազորներ, Հ. Ժ. կուս.՝ Տեր-Խաչատրյան, Ստեփանյան, Հ. Ս.-Դ. բանվ. կուս.՝ Իշխանյան, Անանուն, Հ. ռամկ. կուս.՝ Դարբինյան, Շատվորյան, Անկուս. միության՝ Արեշյան, Չալխուշյան»։

Փոխառության բացումը Երևանում կատարվեց մեծ հանդիսավորությամբ, օգոստ. 1-ին։ Բազմաթիվ անհատներ, հիմնարկություններ, հանրհրդարանի և կառավարության անդամներ տեղն ու տեղը արձանագրվեցին որոշ գումարներ։ Կաթողիկոսը էջմիածնի կողմից արձանագրվեց 1 միլիոն ռուբլի։ Մի քանի ժամվա մեջ հավաքվեց 45 միլիոն ռուբլի։ Նույն ոգևորությամբ արձանագրությունը տեղի ունեցավ և գավառներում։ Արդահանի մահմեդականությունը փոխառության մասնակցեց 50 միլիոն ռուբլով, որը, սեպտ. 5-ին, գավառապետ Կադիմովը անձամբ մտցրեց Կարսի պետական գանձարանը։ Սեպտ. 5-ին արդեն Հայաստանին հատկացվածը ավելիով ծածկված էր, և կառավարությունը փակեց բաժանորդագրությունը Հայաստանի սահմաններում։

Նույն օրը, օգոստ. 1-ին, անկախության փոխառության բացումը տեղի ունեցավ և Թիֆլիսում ու Բաթումում, նույնպես ժողովրդական խանդավառ տրամադրությամբ։ Թիֆլիսում բոլոր հայ կազմակերպությունները մի թռուցիկ-կոչ բաց թողին, փոխառության կազմակերպիչ մարմինը հրատարակեց միօրյա թերթ՝ բազմաթիվ հայ և օտար գրողների և գործիչների աշխատակցությամբ՝ Հ. Թումանյան, Դ. Դեմիրճյան, Ա. Թադևոսյան, Ս. Կանայան, Ս. Մալխասյան, Ս. Լիսիցյան, Ռ. Խան-Ազատ, Ա. Պապովյան, Գ. Մելիք-Ղարագյոզյան, պրոֆ. Ա. Մանուչարով, Օ. Գրուզենբերգ, Մ. Մանդելշտամ և ուրիշներ։

Հուզիչ էր Հով. Թումանյանի գրությունը.

«Մեր սերունդը էն սերունդն է,— գրում էր նա,— որ դեռ երեկ ազատ Հայաստան էր երազում։

Ազատ Հայաստան էին երազում ռուսահայը, տաճկահայը, պարսկահայը և բոլոր հեռավոր գաղութները։

Ազատ Հայաստան էին երազում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության։

Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ ազատ Հայաստանը։

Ու հանկարծ...

Արդեն իրականություն է երեկվա մեծ երազը. ազատ է Հայաստանը, ամբողջ աշխարհքի կողմից ճանաչված ինքուրույն հանրապետություն է նա, իր եռագույն դրոշակով կանգնած է մյուս պետությունների շարքում»։

Թիֆլիսի բաժանորդագրությունը տվեց փայլուն արդյունք։

Նույնը եղավ և Բաթումում, ուր Հայ կանանց միության կողմից հիմք դրվեց և Ոսկու ֆոնդի։

Նույն խանդավառությունն առաջ բերին Անկախության փոխառությունն ու Ոսկու ֆոնդը և գաղութահայության մեջ՝ Պոլսում, Իզմիրում, Եգիպտոսում, Բալկանյան երկրներում, Պարսկաստանում։ Փոխառության բաժանորդագրությունը հանդիսացավ գաղութահայության, մանավանդ աշխատավոր խավերի հայրենասիրության արտահայտության մեկ ակիթ։

Հայաստանի Հանրապետությունը ամեն տեղ արդեն առարկա էր ոգևորության, պաշտամունքի ու զոհաբերության։

Եվ միայն փոխառությամբ ու Ոսկու ֆոնդով չէր արտահայտվում զաղութների և Հայաստանի Հանրապետության փոխադարձ ջերմ սիրո զգացումը. Հայաստանը դարձել էր ձգողական մի հզոր ուժ, որ իրեն էր քաշում աշխարհիս բոլոր ծայրերում ապրող հայերի հոգին և նյութական ու բարոյական աջակցությունը։ Սև ծովի եզերքներից, Գերմանիայից, Անգլիայից, Ռումանիայից ու Բուլղարիայից, Պոլսից և Իզմիրից, Իտալիայից, Ֆրանսիայից, Բելգիայից, Կանադայից, Միացյալ Նահանգներից, Հարավային Ամերիկայից, Պարսկաստանից, Միջագետքից, Զիբուտիից, Հնդկաստանից, Ճապոնիայից, Հեռավոր արևելքից, Ճավա կղզուց՝ ամե՜ն, ամե՜ն կողմից նվերներ էին հասնում ուղիղ Երևան կամ Փարիզի պատվիրակության՝ Հայաստանի համար։ Եվ ինչե՜ր ասես չէին ուղարկվում՝ զինվորական հագուստ ու սարք, դեղորայք, գրենական պիտույքներ, ինքնաշարժ, սավառնակներ, ուտելիք, հագնելիք, ամբողջ դրադարաններ, գրամեքենաներ, ծխախոտ, խինին, բժշկական գործիքներ, նկարներ, զարդարանքներ... Սկսեցին Հայաստանին անել մեծագումար կտակներ, նոր շենքերի շինության խոստումներ, կազմել արդյունաբերական խոշոր ծրագրեր։

Արձանագրենք միայն մի քանիսը, պատահաբար քաղած հիշողությունից. Եգիպտոսի գործարանատեր Մելքոնյան եղբայրները ընդունեցին Հայաստանի քաղաքացիությունը և իրենց ամբողջ հարստությունը — մոտ 6 միլիոն դոլար — կտակեցին Հայաստանին։ Հայաստանին նվիրեց իր փառահեղ տունը Թիֆլիսում — մեկ միլիոն դոլարի արժողությամբ — հայտնի դրամատեր Ա. Մելիք-Ազարյանը*։ Բաքվի հայտնի դրամատեր Արշակ Ղուկասյանի թողած կտակը՝ մոտ 8 միլիոն ռուբլու՝ փոխանցվեց Հայաստանին։ Ստավրոպոլի հայ դրամատեր Պոպովը իր ամբողջ հարստությունը՝ մոտ 25 միլիոն ռուբլի կտակեց Հայաստանի համալսարանին։ Գ. Կյուլպենկյանը խոստացել էր Հայաստանում կառուցել մի շարք պետական մեծ շենքեր։ Հ. Մելիքյանը պատրաստվում էր շինել Երևանում ժողովրդական տուն։ Պոլսի «Ժող. ձայն» թերթը օգ. 20-ին հաղորդում էր, որ Հայ ռամկ. կուսակցությունը Եգիպտոսում որոշել էր Հայաստանին մատուցանել 50 օդանավ՝ «Ռամկավար Հայաստանի օդային տորմիզ»։ Հ. Հ. Դաշնակցությունը Ամերիկայում ձեռնարկեց բանակի հանգանակության, որը տվեց ավելի քան կես միլիոն դոլար. Երևան, բանակի համար, ուղարկվեց մեծ քանակությամբ պաքսիմատ ու պահածո։ Հայաստանի համալսարանին և Հանրային գրադարանին նվիրվեցին մի շարք մեծարժեք գրադարաններ՝ Զոհրաբի, դր. Տաղավարյանի, Գ. Հակոբյանի, Կ. Կոստանյանի, Հ. Հակոբյանի, բանաստեղծ Ա. Ծաուրյանի և այլն։ Կարևոր գործ էր և «Մայիլյան եղբայրների գիտական արշավախումբը», որը մի շարք մասնագետների միջոցով նյութեր էր հավաքում և ուսումնասիրում Հայաստանի տնտեսական հարստությունները։ Այսպիսի օրինակներ դեռ կարելի է շատ բերել։

Եվ այս դեռ սկիզբն էր երկանց։

Կային, իհարկե, և վատ, չարաշահ տիպեր, որոնք աշխատում էին Հայաստանը շահագործել իրենց անձնական օգտին ու երբ հանդիպում էին կառավարության արգելքին, ամեն տեսակ սուտ ու զրպարտություններ էին տարածում Հայաստանի վարիչների մասին, մանավանդ, հաճախ, հոլովելով նրանց ընկերվարական լինելը։ Դրանց մասին էր գրում Դ. Անանունը իր թունավոր տողերը, թե՝

«Հայ բուրժուազիան իմ աչքում դատապարտության արժանի տարր է նրա համար, որ նա իր ստոր ապազգային արարքները քողարկում է մտացածին պատճառաբանություններով վասն հայ վտանգավոր սոցիալիստների և այլն։ Սուտ է։ Հայ Զիմզիմովի գրոշին ոչ մի վտանգ չի սպառնում Հայաստանում, որովհետև բոլոր հայերը մեծ ու փոքր զիմզիմովներ են, սեփականության մոլի ֆանատիկոսներ։ Եվ եթե այնուամենայնիվ հայ Զիմզիմովը չի բարեհաճում թողնել Թիֆլիսն ու Բաքուն և իր այդ տատանումը պատճառանում է սոցիալիզմի վտանգով՝ դրա մեջ պիտի տեսնել արբեցողի ծամածռությունները լիքը բաժակի առջև։

Թող բուրժուազիան գա և մասնակից դառնա մեր պայքարին և ոչ թե հեռվից հեռու պահանջ առաջադրե, թե՝ մաքրեցեք ասպարեզը, որ ես բարեհաճեմ ինձ՝ հայությանը հարազատ հռչակելու և ոտք կոխելու նրա երկիրը։ Բուրժուազիայի ո՞ր առավելության համար պիտի տեղի ունենա այդ նահանջը...

Նորից ու նորից կրկնում ենք, որ Հայաստանը պատկանում է բոլոր նրանց, որոնք անկեղծորեն ցանկանում են քրտնել նրա վրա և նպաստել նրա բարօրությանը։ Թե որ տանջանաց կցորդ լինիմք, ապա և փառաց հաղորդ լինելոց եմք՝ այսպե՜ս պիտի նայի խնդրին հայ բուրժուազիան։ Բայց ոչինչ չարած, պինդ փակած իր գրպանի բերանը՝ նա պատռում է իր կոկորդը լոկ փառքի և իշխանության համար։ Այս վերաբերմունքի համար նույնիսկ քարերը պիտի աղաղակեն, իսկ կենդանի մարդիկ՝ ավելի ևս»*։

Ճիշտ էր ասում Դ. Անանունը. «Հայ Զիմզիմովի գրոշին ո՜չ մի

* Այդ տունը 1920 թ., բոլոր օրինական ձևակերպումները կատարելուց հետո, փոխանցվեց Հայաստանի Հանրապետության Թիֆլիսի դիվ. ներկայացուցչության, որը պատրաստվում էր տեղափոխվել նրա մեջ։ Բոլշևիկների գալուց հետո, շատերի հետ այդ շենքն էլ, բռնագրավվեց և այժմ Հայաստանին չի պատկանում։

* Դ. Անանուն. Առանց քինախնդրության, «Հառաջ», 14 հունվ., 1920 թ.։

վտանգ չէր սպառնում Հայաստանում»։ Ընդհակառակը, իշխանությունը ամեն կերպ աջակցում էր, որ արտաքին նախաձեռնությունն ու դրամագլուխը մուտք գործեն Հայաստան, իրենց միջոցն ու կարողությունը նվիրեն երկրի վերաշինության գործին։ Գուցե, պահանջվածից էլ ավելի փութկոտությամբ ու լայնախոհությամբ ընդառաջ էր գնում մասնավոր դրամագլխի ամեն դիմումին կամ առաջարկության։ Այս տեսակ լայնախոհ վերաբերումի և շարաշահության մեկ օրինակ կարելի է համարել այն բազմապիսի դյուրությունները և արտոնությունները, որ կառավարությունը տրամադրեց Մայիլյան եղբայրներին Հայաստանի զանազան մասերում արդյունաբերական ձեռնարկություններ սկսելու համար։ Մայիլյանները ստացան մի շարք մենաշնորհներ— էլեկտրականացման, ապակու գործարանի— բայց և ո՛չ մեկ փորձ արին՝ որևէ գործ կատարելու և իրենց անգործությունը դուրսը արդարացնում էին նրանով, որ, իբր թե, «ընկերվարական» կառավարությունը արգելքներ է հարուցանում մասնավոր դրամագլխի առջև։

1920 թ. ամառը հայ և օտար դրամատերերի կողմից եղան մի շարք տնտեսական առաջարկություններ, որոնց մի մասին ընթացք էլ տրվեց։ Հիշենք շվեյցարական և շվեդական մի քանի լուրջ ընկերությունների դիմումը Հայաստանում կաթնատնտեսական գաղութներ, երկրագործական մեքենաների պահեստներ և արհեստանոցներ հիմնելու մասին։ Հայ և ճապոն դրամատերերի մի խումբ իր ներկայացուցիչն էր ուղարկել Երևան՝ էլեկտրաերկաթուղագծի մենաշնորհ ստանալու համար. ենթադրվում էր շինել Երևան—Ելենովկա—Դիլիջան—Աղստաֆա և Ելենովկա—Նոր Բայազետ—Քեշիշքենդ—Գորիս գիծը։ Մի խումբ հայ դրամատերեր ծրագրում էին Վեդի-Բասարի շրջանում հիմնել ցեմենտի և կրի գործարաններ։ Մեկ ուրիշը՝ ատաղձի, շենքի փայտեղեն մասերի գործարան Սարիղամիշում։

Հունիսի վերջերին մի խումբ հայ և օտար դրամատերերի կողմից Երևան եկավ ինժ. Կ. Ս. Արղության-Երկայնաբազուկը՝ խնդրելու համար Բաթում—Կարս—Սարդարապատ երկաթուղի անցկացնելու իրավունքը։ Հայերից հիշյալ խմբի մեջ մտնում էին Ռոստով-Նախիջևանցի ու մոսկվացի հայտնի հայ դրամատեր Ժամհարյանը, Կայալյանը, Քիստյանը, Խրմաճյանը և ուրիշներ։

Արղությանը ներկայացրած պայմանագրի էությունը հետևյալն էր. Ընկերությունը, սեփական միջոցներով, առանց կառավարական նպաստի, պետք է կառուցաներ էլեկտրաշարժ երկաթուղի, որը պիտի սկսվեր Բաթումից կամ Հայաստանին տրվելիք որևէ նավահանգստից, անցնելու էր Ճորոխի ձախ ափով, ապա՝ Օլթի գետի հովտով, Փենեաք գետի հովտով, Օլթիի ածխահանքերի մոտով, կտրելու էր Կարս—Սարիղամիշ երկաթուղին Սելիմ կայարանի մոտ և անցնելով Ջարաբխանա ոսկեհանքերի և Ջոնեխի հանքերի և Կաղզվանի ու Կողբի աղահանքերի մոտով՝ միանալու էր Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղագծին, մոտավորապես Սարդարապատ կայարանում։

Այսպիսով, բացվելու էր նոր ճանապարհ Սև ծովից դեպի Թավրիզ, Երևանի վրայով, որը շուրջ 250 վերստով լինելու էր ավելի կարճ, քան Բաթում—Թիֆլիս—Ջուլֆա—Թավրիզ երկաթուղին։ Տնտեսական տեսակետից ճանապարհը պիտի ունենար ահագին նշանակություն. պարսկա-եվրոպական տրանզիտը ամբողջապես Վրաստանից պիտի անցներ Հայաստանին։

Ներկայացված պայմանագրի համաձայն պետք է երկու տարի ժամանակամիջոց տրվեր հետախուզական աշխատանքների և երկաթուղագծի ու էլեկտրակայանների նախագծեր պատրաստելու համար։ Ապա, չորս տարվա ընթացքում, պետք է շինվեր ու շարժման մեջ դրվեր երկաթուղին իր ամբողջ սարքով։ Շարժիչ ուժ ստանալու համար պետք է օգտագործվեին Ճորոխ, Արաքս, Ախուրյան և Հրազդան գետերը, որոնցից ստացվելիք էլեկտրականությունը, երկաթուղուց զատ, պետք է բաներ ուրիշ նպատակների համար էլ։

Պայմանագրի նախագծի համաձայն երկաթուղու ամբողջ հասույթի 10%-ը պետք է տրվեր պետությանը, ինչպես նաև էլեկտրակայանների 15%-ը, էլեկտրական ուժը վաճառվելու էր կիլովատ-ժամը 4 ոսկի կոպեկով, իսկ արդյունաբերական, գյուղատնտեսական և այլ տեխնիկական կարիքների համար՝ 3 կ.։ Պայմանագիրը կնքվելու էր 55 տարով։ 30 տարի անցնելուց հետո կառավարությունը իրավունք պիտի ունենար գնելու ամբողջ ձեռնարկությունը՝ երկաթուղին ու էլեկտրակայանները։ Այդ պարագային, կառավարությունը պետք է վճարեր մնացած տարիներին կոնցեսիոներների ստանալիք օգուտի միջինը։ Պայմանագիրը ստորագրելիս ընկերությունը պետք է մտցներ Հայաստանի գանձարանը 3 միլիոն ոսկի ռուբլի, որը պետք է ապահովեր մենաշնորհի բարեխիղճ իրագործումը։ Բացի այդ, ընկերությունը գնելու էր կես միլիոն ոսկի ռուբլի գրավ. պայմանագրի կետերի լուրջ խախտման դեպքում զրկվելու էր գրավից։

Այս պայմանագիրը, հաղորդակցության նախարարության առաջարկությամբ քննվեց Հայաստանի Տեխնիկական ընկերության նիստերում և, ընդհանուր առմամբ, արժանացավ դրական գնահատության։ Հետո, խորհրդակցության նյութ դարձավ հաղորդակցության, ելևմտական և արդարադատության նախարարությանց ու պետական վերահսկողության ներկայացուցիչների և մի շարք մասնագետների խառն նիստերում, որից հետո, հունիսի 29-ին, հաղորդակցության նախարարը նախագիծը ներկայացրեց նախարարների խորհրդին ի հաստատություն։ Բաթում—Կարս երկաթուղագծի մասին կային և օտար առաջարկություններ. կառավարությունը գերադասում էր հայկական դրամագլուխը։ Բացի այդ, նա կա-

մենում էր, որ բաժնեթղթերի կարևոր մեկ մասը տրվի պետությանը, որով վերջինս գառնալու էր երկաթուղու սեփականատերերից մեկը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ աչքառու դեր էր խաղում և ենամ. նախ. աշխատանքի բաժանմունքը, որ ամբողջ երկիրը պատել էր արհեստանոցների, գործարանների և աշխատանոցների ցանցով։ Առ 1 օգ. բաժանմունքը ուներ հետևյալ ձեռնարկությունները։ Երևանում՝ ջուլհականոց (կտավ), վերանորոգումների բաժին, կարուձևի արհեստանոց փականագործական, ատաղձագործարան. Սարիղամիշում՝ տախտակի սղոցարան, ջուլհականոց (կտավ), ատաղձագործարան, փայտի չոր թորման, որ պատրաստում էր սև ձուլ, ածուխ, սոսինձ և այլն. Ալեքսանդրապոլում՝ ջուլհականոց (բրդեղեն), 2-րդ ջուլհականոց (կտավ, զուլպա)։ Կարսում՝ ջուլհականոց (բրդեղեն), կաշվեգործարան. Էջմիածնում՝ կոշկակարանոց, ջուլհականոց (կտավ), Դիլիջանում՝ ջուլհականոց (բրդեղեն), շինվածանյութերի արհեստանոց, կահկարասիքի արհեստանոց. Նոր Բայազետում՝ կոշկակարանոց, ջուլհականոց (բրդեղեն). մանարան Բաշ-Ապարանում, ջուլհականոց (բրդեղեն) Ջալալօղլիում, կոշկակարանոց Ղամարլուում, մանարան Սարդարապատում, բրուտանոց Յուվայում և այլն։ Կտավի, մահուդի, կոշկեղենի մի ահագին մասը երկրում հոգացվում էր այս արհեստանոցներից. որբանոցների և բանակի սպիտակեղենը, վրայի հագուստը կարվում էին հայկական կտորներից։ Լուրջ հաջողություն ունեին, հատկապես, կաշվեգործարանները. բաժանմունքը ձեռնարկել էր երկու մեծ գործարանների շինության գիտության վերջին հարմարություններով։ Բաժանմունքի ղեկավարն էր Ակունյանը։

Պետական կարևոր գործոն էր և մայիսի 8-ին հաստատված «Գլխավոր ճարտարապետի վարչությունը» խնամատարության նախարարության կից՝ ակադ. Ալ. Թամանյանի ղեկավարության տակ։ Այս հիմնարկությունը լինելու էր Հայաստանի վերաշինության կենտրոնական ազդակը, Ա. Թամանյանի հմուտ և անձնվեր ղեկավարության տակ մի շարք մասնագետներ* կատարում էին նախապատրաստական աշխատանքներ. ուսումնասիրվում էին Հայաստանի շինվածանյութերը, հավաքվում նախանյութ, պատրաստվում վերաշինական ծրագրեր ու հատակագծեր։ Ակադ. Թամանյանը կազմել էր Երևան քաղաքի բարեփոխված նոր հատակագիծը**, պատրաստել էր տիպար գյուղերի, դպրոցների, հիվանդանոցների, ժողովրդական տների, պետական և հասարակական շենքերի հատակագծեր, որոնք բոլորն էլ հիմքում ունեին հայկական ազգային ոճը։

---

* Սրանց շարքին էր երիտասարդ երկրաբան Այվազյանը, որ Հայաստանի շինվածքարերի լավագույն մասնագետներից մեկն էր և որ այնպես անժամանակ մեռավ 1926-ի շրջանին։

** Այս հատակագիծը, Թավրիզում կատարված որոշ լրացումներով, հետագայում ընդունվեց և գործադրության դրվեց։

վարչությունը սկսել էր կառուցանել Երևանի մանրէաբանական հիմնարկության շենքը, հիմնական վերանորոգության էր ենթարկել քաղաքային առաջին հիվանդանոցը, կազմակերպել էր գաջ այրելու գործարան, Ենիի շրջանում ձեռնարկել էր հուշարձանների հավաքման, ցուցակագրության և պահպանման գործին։

Նույն խնամատարության նախարարության կից գործում էր և Գլխավոր բժշկասանիտարական վարչությունը խնամատարության նախարարի օգնական բժ. Հ. Տեր-Միքայելյանի գլխավորությամբ։ 1919 թ. սկզբին Հայաստանում կար միայն 9 հիվանդանոց 300 մահճակալով։ Նույն տարվա վերջը արդեն գոյություն ուներ 30 հիվանդանոց 1 600 մահճակալով. 5 բժշկական, 5 բուժակի կայան։ 1920 թ. դրանց վրա ավելացան մի շարք ուրիշ նոր հիվանդանոցներ ու կայաններ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ջալալօղլիում և այլն։ Կային պետական դեղատներ, որտեղից դեղ էր տրվում չքավորներին՝ ձրի, իսկ աշխատավորներին 50% զեղչով։ Երևանում կար կենտրոնական դեղապահեստ։ Մալարիայի դեմ պայքարելու նպատակով Երևանի, Իգդիրի, Էջմիածնի, Հրազդանի, Ղամարլուի շրջաններում գործում էին բժշկական թռուցիկ խմբեր և այցելու հիվանդանոցներ։ Սկսվել էին ջրանցքային աշխատանքներ Ղամարլուի ճահիճների չորացման համար։ Երևանում կազմվել էր հատուկ մի մարմին՝ «Տրոպիկ հիվանդությունների հանձնաժողով», որ ուներ տրոպիկական հիվանդանոց, կազմակերպեց «տրոպիկական ցուցահանդես», հրատարակեց «Մալարիա» պարբերականը և նպատակ ուներ կռվել մալարիայի դեմ։ Հետագայում այս «Հանձնաժողովը» վերածվեց Տրոպիկական ինստիտուտի։

Տնտեսական տեսակետից կարևոր աշխատանք էր կատարվում և գյուղատնտեսական ու պետական գույքերի նախարարության մեջ։ 1920 թվի ամառը վերջացան Ս. Զավալիշինի ջրային ընդարձակ հետազոտությունները։ Եվ սկսվեցին հանքային լայն հետազոտություններ նախարարության հանքային բաժնի պետ Ս. Թուրյանի ղեկավարությամբ։ Հրավիրվեցին մի շարք հեղինակավոր մասնագետներ՝ ինժ. Կարապետյանը, ինժ. Ն. Տեր-Միքայելյանը, ինժ. Մ. Տեր-Դավթյանը և ուրիշներ, որոնցից կազմված հանձնախմբերը այցելեցին Կաղզվանի աղահանքերն ու Փենեաքի ածխահանքերը և բերին մշակված զեկուցումներ աղի և ածուխի արտադրության և ածխացման մասին։ Աղն էլ, ածուխն էլ շահագործվում էին կառավարության միջոցներով։ Բացի այդ, ինժ. Կարապետյանը գիտական-հետախուզական ճամփորդությունը կատարեց Շիրակում, Նոր Բայազետում և Սևանի լճի շուրջը։ Մասնավոր ուսումնասիրության ենթարկվեցին ցեմենտի, չեչաքարի, հանքային ներկերի վայրերը։ Պիտի հետազոտվեին նաև Սուրմալուի ոսկետեղերը, Կաղզվանի զոնեխը, Շարուր-Դարալագյազի արծաթաարճճային հանքերը, տորֆի շրջանները, մի շարք շինարարական քարեր և այլն։ Հաջորդող պատերազմական գործողությունները արգելք եղան ծրագրի մի մասի իրա-

գործման։ Այդ գործողություններին նաև զոհ գնացին ինժ. Լ. Խատիսյանը, ինժ. Մելիք-Այվազյանը և տեխնիկ Միքայելյանը, որոնք զբաղված էին ածուխի արտադրությամբ։ Հանքերն արդեն տալիս էին օրական 5—6000 փութ ածուխ, որը Կարս—Մերդենեկ ձիաքարշով փոխադրվում էր Կարս՝ երկաթուղային կարիքների համար և մասամբ մեղմացնում վառելիքի սովը։ Ազրբեջանը նավթ չէր տալիս, և կառավարությունը գերմարդկային ճիգ էր գործ դնում երկաթուղիները կենդանի պահելու համար։

Ամառը Լեռնային բաժինը ձեռնարկեց հանքային հին օրենքների փոփոխության և նոր օրենքների հիմքը կազմում էր հողերի պետականացման ընդհանուր սկզբունքը։ Ըստ նոր օրենսդրության գետնի տակ գտնվող բոլոր հարստությունները համարվում էին պետական սեփականություն. մասնավոր սեփականատերերը իրավունք ունեին օգտվելու միայն գետնի երեսից։ Նախկին իշխանության օրով կնքված բոլոր պայմանագրությունները, 6 ամսվա ընթացքում, կորցնում էին իրենց արժեքը։ Այդ անձանց իրավունք էր տրվում կնքել նոր պայմանագրություններ։

Լեռնարդյունաբերությունը զարգացնելու նպատակով կազմակերպվում էր հատուկ ընդունարան լեռնային բաժնի կողմից՝ հանքավայրեր գտնողների համար։ Հանք գտնողներին պիտի տրվեր վարձատրություն հետևյալ հաշվով. ոսկի և թանկագին քար գտնողներին՝ 1000—5000 ռուբլի ոսկով. արծաթի, կլայեկի, նիկելի, ցինկի, արճիճի, բիսմուտի համար՝ 500—1000 ռ., ուրիշ հանքերի համար՝ 100—500 ռ., նավթի, քարածուխի համար՝ 300—3000 ռ. և այլն։ Օրինագիծը մտցվեց նախաբարական խորհուրդ և ընդունվեց հիմնական գծերով։

Լեռնային բաժնին կից հիմնվելու էր Հանքային խորհուրդ նախարարի նախագահության տակ։ Սեպտեմբերին կազմվեց Հանքային տեխնիկական հանձաժողով՝ բաղկացած Լեռնային բաժնի վարիչ ինժ. Ս. Թուրյանից, օգնական ինժ. Ա. Տեր-Գրիգորյանից, ինժ. Մ. Տեր-Դավթյանից, ինժ. Ն. Տեր-Միքայելյանից և մեկ շրջանային ինժեներից։ Հանձնաժողովի նպատակն էր հանքային և արդյունաբերական ուսումնասիրություններ կատարել երկրում։ Նոյեմբերին ծրագրվում էր հրավիրել լեռնարդյունաբերողների խորհրդակցություն, ապա՝ համագումար և այլն։

Հասունացած և կարևոր գործ էր նաև Հողային հատուկ կոմիտեների կազմությունը հողային հարցի արագ լուծման համար։ Կոմիտեները պիտի արձանագրեին և, սահմանված չափով, գյուղացիությանը պիտի բաշխեին մասնատիրական, եկեղեցական-վանական և լքյալ հողերը, ինչպես նաև պիտի լուծեին գյուղացիների և գյուղերի միջև եղած հողային վեճերը։ Երևանի գավառի հողային հատուկ կոմիտեն— նախագահ՝ Ե. Սարգսյան, անդամներ Լ. Ջոհրաբյան և հողաչափ Հակոբջանյան— մինչև օգոստոսի սկիզբը վերջացրեց աշխատանքները Մաղկաձորի շրջանում, ուր պետականացրեց թրքական 12 լքված գյուղերի 16 234 դես. հողերը։ Պղնձահանք (Միսխանկա) և գետի աջ ափի մացառապատ հողերը միացվեցին անտառին՝ ապահովելու համար վերջինիս անվտանգ աճումը։ Անտառին միացվեց ընդամենը 11 233 դես.։ Մնացած 5000 դեսյատինը բաժանվեց սակավահող Ալափարս, Գումիշ և Օզանլար գյուղերի միջև։ Մաքրավանք, Բաբաքշի և Ֆարուխ խիստ սակավահող գյուղերը որոշեց տեղափոխել ուրիշ տեղ՝ լքյալ հողառատ գյուղերը։ Լուծեց նաև մի շարք միջգյուղյան և գյուղմիջյան հողային վիճելի հարցեր և հաշտեցրեց հողային վեճերով պառակտված գյուղացիներին։ Մաղկաձորից հետո մարմինը անցավ Կոտայքի շրջանը։

Էջմիածնի հողային կոմիտեն— նախագահ՝ Հ. Արիստակեսյան, անդամներ՝ Մկ. Ստեփանյան և Ավ. Պողոսյան— գործը սկսեց հուլ. 19-ին։ Նրանք ավարտեց համարյա ամբողջ գավառի աշխատանքները, բացի Սարդարապատի շրջանից։ Կոմիտեն առանձնապես ուշադրություն դարձրեց հողազուրկ Ապարանի վրա, ուր հողը բավական էր հազիվ 10—12 000 հոգու, մինչդեռ ապրում էր 25 000 մարդ։ Կոմիտեն որոշեց Ապարանի գյուղացիության կեսը տեղափոխել Կարսի նահանգը, որի կլիման նման է Ապարանի կլիմային և ուր կային բավական թվով լքյալ գյուղեր, մանավանդ հույների հեռանալուց հետո։ Տեղափոխվող գյուղերի հողերը բաժանվելու էին մնացող գյուղերին։ Փոխադրվելիս ենթակա գյուղերը տվել էին իրենց համաձայնությունը։ Աշտարակի շրջանի Բաբաքշի, Քիրաջլու, Յաթաղլու և Քյալաշքյանդ լքյալ գյուղերի հողերը կոմիտեն տվեց մոտակա գյուղերին՝ պայմանով, որ Բաբաքշի և Քիրաջլու գյուղերում Ապարանի Նորաշեն, Սալլու և Ղարաբուլաղ գյուղերի հողազուրկ գյուղացիները հիմնեն նոր գյուղ։ Արագածի և մոտակա լքյալ արոտատեղիները տրվեցին հարևան գյուղերին։ Լուծվեց և Եղվարդի շրջանի լքյալ գյուղերի հարցը։

Նոր Բայազետի հողային հատուկ կոմիտեի կազմն էր՝ Մեր. Օզանյան՝ նախագահ, Միք. Տեր-Գևորգյան և Ե. Նազարյան՝ անդամներ։ Կոմիտեն հաջորդաբար այցելեց գավառի գյուղերը, տեղն ու տեղը ծանոթացավ հողային հարաբերությունների վիճակին։ Որոշեց գյուղացիության մի մասը փոխադրել ուրիշ տեղ և հողազուրկ գյուղացիությանը բաժանել լճի հարավ-արևմտյան կողմը՝ Ելենովկայի և Նոր Բայազետի միջև գտնվող էֆենդիքյանդ, Հաջի-Մուխան, Աղզիբիր և այլ լքյալ գյուղերի հողերը, ինչպես նաև Այրիջայի հարուստ արոտավայրերը և լճի հյուսիսային ափի լքյալ գյուղերի հողերը։ Այս վերջին շրջանում հայ բնակչության տեղավորելը ուներ և ռազմական-քաղաքական նշանակություն։ Ելենովկայի և մի շարք ուրիշ հողեր մտցվեցին պետական ֆոնդի մեջ։

Մյուս գավառներում հողային հատուկ կոմիտեները մասամբ կազմված էին, բայց դեռ գործի չէին անցած. որոշ գավառներում էլ չէին

կազմված։ Հողային հատուկ կոմիտեների գործունեությունը ղեկավարում էր ինքը՝ գյուղատնտեսական նախարարը պետական գույքերի բաժնի վարիչ Պ. Կանդուրալյանի գործակցությամբ։

Գյուղատնտեսական նախարարության գործունեությունից հիշենք և պետական կաթնատնտեսական օրինակելի ագարակի և պանիր-յուղ գործարանի կազմակերպումը Կարսի շրջանի Պետրովկա գյուղում։ Գործի ղեկավարությունը հանձնված էր փորձված կաթնատնտես Դիլանյանին։ Ագարակի համար ձեռք էին բերված 300 ընտիր կովեր և անհրաժեշտ շենքերն ու գործիքները։ Պատերազմը խանգարեց սկսված գործը։

Պատերազմը թույլ չտվեց ավարտել և Էջմիածնի առվի կառուցումը։ Այդ նպատակով 23 միլիոն ռուբլու վարկ էր բացված և աշխատանքներն արդեն սկսված էին։ Էջմիածնի առվի ավարտումը վիճակվեց խորհրդային իշխանությանը։ Նույն իշխանությունը գլուխ բերեց և Շիրակի առվի շինությունը, որ նույնպես ծրագրված ու ձեռնարկված էր հանրապետության օրով։

Չի կարելի լռությամբ անցնել և Հայաստանի կոոպերացիայի վրայից, որ զարգանում էր արտակարգ թափով։ Հուլ. 1-ը Հայաստանի կոոպերացիայի օրն էր, որ տոնվեց շքեղ հանդիսավորությամբ։ Այդ օրը, Հայկոոպը—Հայաստանի կոոպերատիվների միությունը— իր մեջ պարփակում էր 350 կոոպերատիվ ընկերություններ։ Հայաստանի կոոպերացիան ուներ 95 000 անդամ։ Եթե հաշվենք, որ յուրաքանչյուր անդամի ընտանիքը, միջին թվով, բաղկացած էր 4 հոգուց, ապա՝ Հայկոոպը պարենավորում էր մոտ 400 000 մարդ։ 1919 թվի ընթացքում Հայկոոպը կառավարությունից ստացել էր փոխառություն 5 միլիոն ռուբլի, բայց հասարակությանը մատակարարել էր 15 844 191 ռուբլու մթերք և ապրանք, 1920-ին կառավարությունը տվեց՝ վարկ ու փոխառություն, 30 միլիոն ռուբլի։ Կառավարության աջակցությամբ տեղական մի առաքելություն ուղարկվեց Իտալիա, որտեղից բերվեց խոշոր քանակությամբ հագուստեղեն և այլ կարգի ապրանքներ։

Աչքի առաջ ունենալով Հայկոոպի կարևոր տնտեսական դերը երկրում՝ կառավարությունը որոշեց բաց թողնել նրան, իբրև փոխառություն, ևս 250 միլիոն ռուբլի, մեկ տարի ժամանակով և տարեկան 6 տոկոսով։ Այդ դրամով կատարվելու էին գնումներ ներքին շուկայում, գնվելու էին հում նյութեր արտասահմանի հետ ապրանքափոխություն անելու համար և զարգացվելու էին արդյունաբերական ձեռնարկները։

Հայկոոպի պաշտոնաթերթ «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը Ս. Վրացյանի, ապա Դ. Անանունի խմբագրությամբ, ուներ և լուրջ գրական-հասարակական բաժին։

Առ 1 հուլիսի Հայաստանի վարկային կոոպերատիվների միությունը՝ Հայվարկը, ուներ 23 անդամ ընկերություններ. 12121 ադամով, 550 640 ռ. դրամագլխով. ընդունված ավանդը հասնում էր 1 142 812 ռ.։

Փոխառություն էին կնքել 103 175 ռ. և անդամներին մինչև հունիսի 1 փոխառություն արել 815 350 ռ.։ Հիշյալ 23 ընկերություններից 10 հին գործող ընկերություններ էին, 11 վերաբացված, իսկ 2 նոր հիմնված։ Այդ 23 ընկերություններին Հայվարկը 10 900 000 ռ. վարկ էր բաց արել, որից առ 1 հուլիսի օգտվել էին 7 ընկերությունները՝ 1 500 000 ռուբլու։ Կառավարությունը Հայվարկին տրամադրել էր 40 միլիոն ռուբլու վարկ։ Հայվարկն ընդունում էր առանց սահմանափակման զանազան ավանդներ և ընթացիկ հաշիվներ ու անարգել վճարում էր ինչ գումար և պահանջվեր։ Իր անդամ-ընկերությունների համար Հայվարկը տպագրել էր կանոնադրություն, մատյաններ, պատրաստել բլանկներ ու գիվանական պիտույքներ և այլն։

Նույն եռանդն ու կենդանությունը տեսնում ենք և կյանքի մյուս ասպարեզներում։ Ապրիլի 20-ի նիստում կառավարությունը որոշել էր կազմել միջվարչական հանձաժողով՝ արագացնելու համար կառավարական մի շարք գործառնությունների փոխանցումը զավառական ինքնավարություններին։ Հանձնաժողովի նախագահ էր նշանակվել ներքին գործոց նախարարության տեղական ինքնավարությունների և քաղաքային բաժնի վարիչ Հ. Մելքումյանը, անդամներ գյուղատնտեսական նախարարությունից՝ Ստ. Կամսարականը, աշխատանքի՝ Վ. Բաբայանը, խնամատարության՝ Ռ. Քաջբերունին, հանրային կրթության՝ Պ. Ստեպանյանը, արդարադատության՝ Հ. Ամիրխանյանը, հաղորդակցության՝ Ինժ. Մելիք-Շահնազարյանը, ելևմտական՝ Պ. Զաքարյանը, Երևանի զավառային ինքնավարության նախագահ Հ. Թադևոսյանը։ Միջվարչական հանձնաժողովը մի շարք նիստերում մշակել էր այն պայմանները, որոնց հիման վրա զավառային ինքնավարություններին պետի փոխանցվեին կառավարական մի շարք իրավունքներ ու հիմնարկություններ։

Մինչև հունիսի 1 արդեն պետական բոլոր տարրական դպրոցները, բոլոր հիվանդանոցներն ու բժշկական կայանները, գյուղատնտեսական տեղական պահեստները, սերմանման մարմիններն ու գյուղատնտեսական կայանները, միլիցիան և այլն փոխանցված էին զավառական ինքնավարություններին, որոնք հետզհետե կարևոր տեղ էին գրավում պետության կյանքում։ Մասնավորապես հաջող գործունեություն էին ցույց տալիս Երևանի և Էջմիածնի զավառական ինքնավարությունները։

Արդարադատությունը զարգանում էր անկանոն պայմաններում։ Մովրական դատարանները չէին վերացված, բայց դատերի մեծ մասը տեսնվում էր արտակարգ դատարանների միջոցով։ Մայիսի 14-ից մինչև սեպտեմբերի սկիզբը Հայաստանում 234 քաղաքական բանտարկություններ էին կատարվել, որոնցից 120 հոգի ազատ էին արձակվել, 3 հոգի դատապարտվել մահապատժի և բանտերում մնում էին 15 հոգի բանտարկության դատապարտված, 50՝ քննության տակ, 61՝ տեղափոխված զանազան բանտեր և 5՝ արտաքսված Հայաստանից։ Արտակարգ

դատարանները ոմանք շփոթում են «չեկայի» հետ, որ բոլորովին սխալ է։ Արտ. դատարանը զուտ դատաստանական ատյան էր, միայն պարզացված գործավարությամբ և մահապատժի իրավունքով։ Նրա դերն էր արագ դատավարությամբ պայքարել պետական դավաճանության և շրջաշրջության դեմ։ Երևանի արտ. դատարանի կազմն էր. նախագահ՝ բժ. Հ. Տեր-Դավթյան, անդամներ՝ Ա. Աբեղյան և բժ. Հ. Մելիքյան, դատախազ՝ Խ. Թութունջյան։ Մինչև հուլ. 15 Երևանի արտակարգ դատարանը 41 հոգի արտաքսեց հանրապետության սահմաններից։ Ալեքսանդրապոլի արտակարգ դատարանի նախագահն էր Գ. Վարշամյանը, դատախազ՝ բժ. Բ. Բաղդասարյանը։ Արտակարգ դատարաններ կազմվեցին նաև Կարսում, Դիլիջանում, Նոր Բայազետում։ Բոլշևիկները անհեթեթ լուրեր էին տարածում նրանց մասին։ Հուլ. 6-ին Մոսկվայի ռադիոն հեռագրում էր՝ «ամենքին, ամենքին, ամենքին», որ Երևանի արտակարգ դատարանում դատված են 22 կոմունիստներ, որոնցից 2 հոգի դատապարտված է մահվան, 4 հոգի՝ ցմահ տաժանակիր աշխատանքների և որ, իբր թե, դատավարության օրը տպարանական, երկաթուղային և այլ ձեռնարկությանց բանվորները բողոքի գործադուլ են արել։ Մոսկվայի մի ուրիշ ռադիո հաղորդում էր, որ Կարսի շրջանում գնդակահարված են 100-ից ավելի կոմունիստներ։ Ավելորդ է ասել, որ երկուսն էլ շինծու էին։

Արտակարգ պայմաններում արդարադատության նախարարությունը զբաղվում էր երկրի դատաստանական գործի կարգավորումով։ Նախարարության կից գործում էր մասնագետների մի հանձնաժողով օրենքների հայացման, նոր օրենքների մշակման, դատաստանական բառակազմ ու բառարան խմբագրելու համար։ Օգոստոս ամսին Հայաստանի ամբողջ դատաստանական գործը արդեն՝ վերից վար՝ ազգայնացված էր։ Օգոստոսի 18-ին հանդիսավոր կերպով բացվեց Կարսի շրջանային դատարանը՝ Հ. Մելքումյանի նախագահությամբ և Կայալյանի դատախազությամբ, որով Հայաստանը ունենում էր երեք շրջանային դատարաններ՝ Երևանի, Շիրակի և Կարսի։

Կրթական գործը առանձնապես խոստումնալից ապագա էր ցույց տալիս։ Որոշվել էր 1920—21 ուս. տարում բանալ 1500 տարրական դպրոց, հիմնական բարեփոխության ենթարկել միջնակարգ կրթությունը, բանալ մի շարք մասնագիտական կրթարաններ։ «Թուրքահայ», «ռուսահայ» դպրոցների դրությունը ջնջված էր։ Հունիսի 21-ին կառավարությունը վճռեց Երևան փոխադրել համալսարանը, հատկացնել նրան նախկին Ուսուցչական սեմինարիայի շենքը, մշակել, համալսարանի կանոնադրությունը, հրավիրել նոր ուսուցչապետներ և այլն։ Այդ նպատակով կազմվեց մի հանձնախումբ վարչապետից, հանրային կրթության ու խնամատարության նախարարներից և ակադ. Ա. Թամանյանից։ Համալսարանը պիտի բացվեր հոկտ. 16-ին, 4 բաժիններով՝ պատմա-լեզվաբանական, իրավաբանական, բնագիտական և ֆիզիկա-մաթեմատիկա-

կան։ Հաջորդ տարվանից պիտի բացվեր և բժշկական բաժինը։ Մինչև հոկտ. 1 արձանագրվել էին 632 երկսեռ ուսանողներ, որոնցից 403 հոգին կամենում էին մտնել բնագիտական բաժինը, շատերը գյուղատնտեսական մասը։

Երևանում բացվելու էր պետական երաժշտանոց, որի համար տեսուչ էր հրավիրվում Մոսկվայի երաժշտանոցի նախկին տեսուչ, հայտնի երաժշտագետ Իպոլիտով-Իվանովը, իսկ դասատուներ՝ ազատ արվեստագետ Բարխուդարյանը, նշանավոր երաժշտագետ Ալ. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը և ուրիշներ։

Պետական թատրոնի կազմակերպման համար, Պոլսում վախճանված դերասան Սևումյանի առաջարկով, մտածվում էր հրավիրել Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հիմնադիրներից՝ հռչակավոր ռեժիսոր Գ. Բուրջալյանին և հայ բեմի առաջնակարգ ուժերին։ 1920 թ. ամառվա ընթացքում դերասաններ Զարիֆյանը, Աբելյանը, Մայսուրյանը, ընտիր խմբով, Երևանում տվին մի երկար շարք ներկայացումներ և ունեցան բացառիկ հաջողություն։

Սեպտեմբերին Ալեքսանդրապոլում բացվելու էր ժողովրդական գեղարվեստի ուսումնարան, որի նպատակն էր լինելու արտահայտել ժողովրդական ստեղծագործության արժեքները՝ գորգագործությունը, ազնիվ մետաղների մշակումը, պղնձի, քարի մշակման գործը, ձեռարվեստի և նուրբ գործվածքների մշակման գործը և այլն։ Դպրոցին կից լինելու էր տնայնագործական կոմիտեի գեղարվեստական-արդյունաբերական թանգարանը, որի համար խնամ. նախարարության աշխատանքի բաժինը արդեն ձեռք էր բերել 100-ից ավելի ընտիր գորգեր, կապերտներ և ուրիշ գործվածքներ։ Դպրոցի կազմակերպումը հանձնված էր խնամ. նախարարության աշխատանքի բաժնի վարիչ Ակունյանին։

Սեպտ. 27-ին Ալեքսանդրապոլում, մեծ հանդիսավորությամբ, բացվեց հաղորդակցության նախարարության տեխնիկական միջնակարգ դպրոցը ինժ. Շերմազանյանի տեսչությամբ։ Մի ամիս հետո, հոկտ. 25-ին, Երևանում պիտի բացվեր երկրորդ տեխնիկական դպրոցը։

Կարսում բացվելու էր Ռազմական գիմնազը։ Էջմիածնում վերաբացվելու էր ճեմարանը, Երևանում բացվելու էր միջնակարգ բժշկական վարժարան, Ուսուցչական սեմինար և այլն։ Բացի այդ, Երևանում և ուրիշ քաղաքներում կային բազմաթիվ մասնագիտական դպրոցներ ու դասընթացներ, ինչպես սղագրության, կար ու ձևի, գորգագործության, զինվորական, հաշվապահական, բժշկական, երկաթուղային, մանկավարժական, երկրաչափական, հայերեն և օտար լեզուների, սկաուտական և այլն։

Գործում էին և այլազան ընկերություններ ու միություններ. Հայաստանի Գրական ընկերությունը, Հայաստանի Մարմնամարզական ընդհանուր միությունը, Հայաստանի Տեխնիկական, Իրավաբանական,

Բժշկական, Ուսուցչական, Ուսանողական միությունները, Հրատարակչական ընկերությունը, Ջորա-Տնտեսական ընկերությունը, Հայաստանի Շախմատիստների ընկերությունը, «Դյուցազն» մարզական ակումբը Երևանում, Երիտասարդ գրագետների «Պանդոկ» խումբը, Երևանի Հայուհյաց միությունը, Հայաստանի «Մանկապարտեզ» ընկերությունը, Վասպուրականի Կանանց միությունը, «Ռոստոմ» գրադարանը, 20-ի չափ հայրենակցական ընկերություններ և այլն։

Հանրային կրթության և արվեստի նախարարության կից ստեղծվեց Հայաստանի Հնության պահպանության կոմիտե, որի նպատակն էր պահել Հայաստանի հնությունները, թույլ չտալ, որ փչանան մարդկանց ձեռքով կամ բնական պատահարներից ու ժամանակի ազդեցությունից, փլլելու ենթակա շենքերին հասցնել ճարտարապետական օգնություն, ոչնչացման դատապարտված հնությունները նկարել, քանդակել և այլն։ Կոմիտեին էր վերապահված նաև հսկողությունը պեղումների վրա կամ անմիջապես պեղումներ կատարելը։

Հնության պահպանության կոմիտեի կազմն էր. պրոֆեսորներ Գարեգին եպ. Հովսեփյան, ակադ. Ա. Թամանյան, Աշխարհբեգ Մելիք-Քալանթարյան։ Կոմիտեի հետաքրքրության ու զբաղումի առաջին առարկան եղան Անիի ավերակները։ Ճարտարապետ Թ. Թորամանյանի զեկուցման հիման վրա գյուղատնտեսության նախարարությունը որոշեց Հնության պահպանության կոմիտեին հատկացնել լքյալ Անի գյուղի հողերը, տրամադրեց սերմացու, և այդ գյուղը դարձավ Անիի հնությունների պահպանության կենտրոն։ Ճարտ. Թորամանյանը հաստատվեց այնտեղ։

1920 թ. հուլիսին, Կոմիտեն կազմակերպեց գիտական մեծ արշավանք, որին մասնակցեցին ճարտարապետներ Թորամանյանն ու Տեր-Միքայելյանը, հայ արվեստին քաջածանոթ ռուս ճարտարապետ Գալկինը, նկարիչ Եղիշե Թադևոսյանը իր աշակերտներ Մկ. Մարգարյանի և Ստ. Թարխարարյանի հետ, նկարիչ Տեզոյան ամուսինները, «Գեղարվեստի» խմբագիր Գ. Լևոնյանը, լուսանկարիչ Վաղ. Հակոբյանը և ուրիշներ։ Արշավախմբին մասնակցում էին և Կոմիտեի անդամներ Գարեգին եպ.-ը և Մելիք-Քալանթարյանը։

Արշավախումբը իր աշխատանքների կենտրոն ընդունեց Անին, որտեղից աստիճանաբար պիտի տարածվեր դեպի Կարս, Ալեքսանդրապոլ և Արարատյան դաշտ։ Այսպիսով, ամբողջ երկիրը հետազոտելուց հետո, պիտի կազմեր Հայաստանի հնագիտական քարտեզը։ Հետազոտությունները կատարվում էին նախօրոք մշակված ծրագրի համաձայն։ Ջուղընթացաբար հանվում էին որմնանկարներ, հատակագծեր, շենքերի և արժեքավոր տեղերի, խաչքարերի, արձանագրություն կրող քարերի ու շենքերի, քանդակների, պատկերների նկարները։ Հավաքված նյութերը պիտի կենտրոնացվեին մայրաքաղաքի պետական թանգարանում, պիտի

հիմնվեին տեղական թանգարաններ։ Հնագիտական հետազոտությունների տեսակետից երկիրը բաժանվել էր մի քանի շրջանների, որոնք հետզհետե պիտի ուսումնասիրվեին։

Օգոստոսի կեսերին, Անիում, նախագահությամբ ակ. Ա. Թամանյանի, տեղի ունեցավ խորհրդակցություն կոմիտեի և արշավախմբի տեղ հասած անդամների՝ կատարվելիք աշխատանքների մասին. մշակվեց հետազոտությունների գործադրական ծրագիրը, բաժանվեցին աշխատանքները և ամեն ոք անցավ գործի։ Մի խումբ՝ գլխավորությամբ Աշխարհբեգ Մելիք-Քալանթարյանի և մասնակցությամբ ճարտ. Ա. Գալկինի, ճարտ. Լ. Հակոբյանի, լուսանկարիչ Վաղ. Հակոբյանի, ուսանողուհիներ Ս. Մելիք-Քալանթարյանի, Վարս. Հովհաննիսյանի ու Հեղ. Թառայանի և Ե. Ամիրյանի, Գ. Հակոբյանի ու Մ. Պապայանի մեկնեց Տիկոր, ուր աշխատեց մի ամիս, մինչև սեպտ. 18, պտտեց ծրագրված շրջանը՝ Անի—Արջու—Առիճ—Ալաման—Տիկոր—Խծկոնք (Բեշ-Քիլիսա)—Ագարակ—Ջալալ—Ծպնի—Նախճավան—Բագարան—Մրեն, որտեղից դուրս եկավ Արագած կայարանը։ Իր գիտական ճամփորդության ընթացքում խումբը հավաքեց մեծ քանակությամբ նյութեր, կատարեց հուշարձանների մանրամասն չափագրություն, քաշեց բազմաթիվ լուսանկարներ, հանեց քանդակների էստամպաժներ, գտավ մեծ թվով անհայտ արձանագրություններ։ Բացի քրիստոնեական հնություններից, գլխավորապես 5-րդ և 7-րդ դարերի, խումբը երևան բերեց ընդարձակ ծավալով և լավ պահպանված նախապատմական հնագույն ժամանակների բնակության և շինության մնացորդներ։ Միաժամանակ տեղերում ստեղծվեցին հատուկ մարմիններ՝ ապահովելու համար հնությունների պահպանությունը։

Անիում կատարվեցին և նկարչական աշխատանքներ՝ նկարիչներ Թարխարարյանը և Մարգարյանը նկարեցին բազմաթիվ արժեքավոր որմնանկարներ։

Երկրորդ խումբը՝ առաջնորդությամբ Գարեգին եպ.-ի և մասնակցությամբ ճարտ. Եղիազարյանի և քանդակագործ Պետրինի մեկնեց Երևանից հուլ. 8-ին և վերադարձավ 28-ին՝ ունենալով շատ հաջող աշխատանքներ։

Պատերազմը արգելք եղավ այս աշխատանքներին էլ։

Կառավարության հոգածության առարկա էր և Սևանա լճի նավարկությունը։ Սեպտեմբերից սկսած լճի վրա սկսեց բանել առաջին շոգեմակույկը։ Մի քանի շաբաթ հետո սկսեց գործել «Աշոտ Երկաթ» «ռազմանավը» մի արագահարված թնդանոթով։ Հիմք դրվեց մի ավելի մեծ շոգենավի շինության։ Սեպտ. 3-ին Շահթախթից Երևան բերվեց «Սեստրիցիա Նյուշա» շոգենավը, որ ռուսները տանում էին Վան և թողել էին կես ճանապարհին։ Նավը վերանվանվեց «Գեղանուշ» և նույնպես պիտի փոխադրվեր Սևան։ Ենթադրվում էր Սևանի բոլոր եզերքնե-

ը կապել նավային հաղորդակցությամբ և հետզհետե զարգացնել նավագնացությունը։

Սևանի նավագնացության ոգին էին խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը — «Ծովակալ Սեյմուր» — և երիտասարդ ծովային սպա Թումանյանը, որ այնպես դաժանորեն սպանվեց բոլշևիկների ձեռքով՝ բոլորովին անմեղ տեղը։ Հոր՝ պրոֆ. Թումանյանի հետ եկել էր Բեսարաբիայից։ Հայրը վարում էր դրամների տպագրության գործը, ինքը, պատանի հոգու ամբողջ եռանդով, նվիրվել էր «հայկական նավատորմիղի» ստեղծագործման։ Քաղաքականությամբ չէր հետաքրքրվում, բայց, Հայաստանի խորհրդայնացումից հետո անմիջապես, դարձավ քաղաքական առաջին զոհը։

Հուլիսին կառավարությունը հաստատեց ակադ. Ալ. Թամանյանի կազմած և նկարիչ Կոջոյանի գծած Հայաստանի պետական զինանշանի (գերբի) նախագիծը։ Զինանշանի կենտրոնում կար վահանաձև մի տարածություն՝ բաժանված չորս մասի. յուրաքանչյուր մասում տեղավորված էր հին Հայաստանի չորս անկախ շրջաններից մեկի զինանշանը՝ Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց, Ռուբինյանց։ Մեջտեղը դրված էին մեծ ու փոքր Մասիսները և նրանց վերև՝ Հ. Հ. տառերը։ Վահանի աջ ու ձախ կողմերը բռնել էին մի արծիվ և մի առյուծ, իսկ ներքևը՝ սուր, գրիչ, հասկեր և շղթա։

Այս զինանշանը լուրջ առարկություններ առաջ բերեց թե կառավարության մեջ և թե դուրսը։ Ոմանք դժգոհ էին, ընդհանրապես, զինանշանի գաղափարից ու ոգուց. վերարտադրում էր հին, անցած դարերի ավատապետական գաղափարները, չէր համապատասխանում նոր Հայաստանի պարզ, ոամկավար, առաջադեմ ոգուն։ Ուրիշներ գտնում էին շատ ծանր, ահեղ, աշխարհակալական, միապետական ձգտումների արտահայտիչ։ Կային մարդիկ էլ, որոնք նույնիսկ պատմական ճշտության հակասող փաստեր էին գտնում զինանշանի մեջ, օրինակ, որ հայոց մեջ ընդունված չի եղել երկգլխյան արծիվը, որ Տիգրան Մեծի թագի վրայի թռչունները եղել են աղավնիներ և ոչ արծիվներ և այլն։ Եվ, վերջապես, զինանշանը չէր գոհացնում մարդկանց գեղասիրական ճաշակին. իր մեջ պարունակում էր շատ կենդանիներ. «կատարյալ գազանանոց» սրախոսում էին ոմանք։

Բայց և այնպես, կառավարությունը հաստատեց ներկայացված նախագիծը, որովհետև պատմական կամ գեղագիտական ուսումնասիրություններ անելու ժամանակ չկար։ Հաստատեց ժամանակավոր կերպով, մինչև Սահմանադիր ժողով, ինչպես և պետական դրոշը, բնականաբար։

Հուլիսի 5-ին հաստատվեց Հայաստանի քաղաքացիության հետևյալ օրենքը.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացի է ճանաչվում ամեն մի նախկին ռուսա և տաճկահպատակ, որը սույն օրենքի հրատարակման ժամանակ ապրում է Միացյալ Հայաստանի սահմաններում։

2. Միացյալ Հայաստանի սահմաններում ապրող նախկին ռուսա կամ տաճկահպատակներն իրավունք ունեն սույն օրենքի հրատարակման օրից երեք ամսվա ընթացքում հրաժարվել Հայաստանի Հանրապետության հպատակությունն ընդունելուց, խնդիր ներկայացնելով տեղական հաշտարար դատավորին։

Մանրություն. 1. Հայկական ծագում ունեցող զինապարտ տղամարդիկ կարող են հրաժարվել Հ. Հանրապետության հպատակություն ընդունելուց միայն զինվորական ծառայությունը ավարտելուց և կամ նրանից ազատվելուց հետո։

3. Հպատակություն ընդունելուց հրաժարվող անձինք պարտավոր են հեռանալ Հայաստանի Հանրապետության սահմաններից։ Հեռանալու ժամանակամիջոցը, գույքերի լիկվիդացիայի կարգը, ինչպես նաև այդ անձանց Հայաստանի սահմաններում մնալու թույլտվության կանոնները, կորոշվի հատուկ օրենքով։

4. Հայաստանի Հանրապետության հպատակ են ճանաչվում հայկական ծագում ունեցող այն անձինք, որոնք ծնված են Միացյալ Հայաստանի տերիտորիայում, բայց այժմ ապրում են Հայաստանի սահմաններից դուրս։

Մանրություն. 1. Ներքին գործերի նախարարի թույլտվությամբ Հայաստանի Հանրապետության հպատակությունը կարող են ընդունել նաև ոչ հայ ծագում ունեցող այն անձինք, որոնց ծնողները կամ իրենք ծնվել են կամ մշտապես ապրած են եղել Միացյալ Հայաստանի սահմաններում, բայց սույն օրենքի հրատարակելու ժամանակ գտնված են եղել Հայաստանի սահմաններից դուրս, եթե այդպիսիները սույն օրեն-



քի հրատարակումից հինգ տարվա ընթացքում ներքին գործերի նախարարության ներկայացնեն հայտարարություն իրենց հպատակ արձանագրվելու մասին։

5. Բոլոր հայ ծագում ունեցող օտար պետության հպատակները և կամ այդ պետության քաղաքացիություն ձեռք բերողները իրավունք ունեն իրենց և կամ իրենց ոչ չափահաս երեխաների անունից սույն օրենքի հրատարակումից հինգ տարվա ընթացքում հայտարարելու իրենց Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելու մասին՝ ներկայացնելով այս առթիվ համապատասխան հայտարարություն երկու պետությունների ձեռնհաս հաստատությանց»։

Հպատակության հարցը երկար բանակցությունների նյութ դարձավ և հայ-վրացական խորհրդաժողովում, որ 1920 թ. ամառն էլ շարունակվեց։ Վրացիները հակառակում էին, որ Վրաստանի հայ հին բնակիչները դառնան հայահպատակ։ Նույն խորհրդաժողովում նորից քննվեց և լուծվեց սահմանների խնդիրը. այս անգամ վրացիները պահանջում էին Լոռին մինչև Սանահին, ամբողջ Ախալքալաքի գավառը, Արդահան և Օլթի գավառների որոշ մասերը։ Հայաստանի և Վրաստանի միջև կընքվեց դատական համաձայնություն և 1919 թվի տրանզիտի օրենքը լրացվեց բացատրությամբ, որով ռազմանյութն էլ փոխադրվելու էր սովորական ապրանքների պայմանով։ Մինչև այդ վրացիները արգելքներ էին հարուցանում և, օրինակ, Հայաստանի համար Ղրիմից «Ֆենիկս» նավով եկած 3 միլիոն փամփուշտը բաց թողին միայն 30%-ը ստանալուց հետո։

Օգոստ. 2 խորհրդարանի նիստում Հայաստանի ներքին շինարար աշխատանքը նյութ դարձավ վարչապետի ընդարձակ զեկուցման։ Այդ նիստում, Սոց.-Հեղափ. կուսակցության Հայաստանի կազմակերպությունը հայտարարեց, որ ինքն այլևս ճանաչում է Հայաստանի անկախությունը։ Պատգամավոր Ա. Խոնդկարյանը արավ հետևյալ հայտարարությունը.

«Մեր պատգամավորությունը Եվրոպայում միշտ խոսում էր եվրոպական պետությունների մանդատի մասին, իսկ այսօր քաղաքական պայմաններն այնպես են դասավորված, որ ժամանակն է հայտարարել, թե մեր պետությունը պիտի ապրի ինքն իր ուժով։ Այսօր, սակայն, ռուսական օրիենտացիան նույնպես գործնական օգուտ չի տալիս մեր պետությանը՝ թե Անդրկովկասում ստեղծված դրությամբ և թե իր ներկա իդեոլոգիայով։ Եվ ես պարտք ունեմ հայտնելու այստեղ սոցիալիստ-հեղափոխական ֆրակցիայի կողմից, որ մենք եկած ենք այն համոզման, որ Անդրկովկասի դեմոկրատիան պիտի ապրի ինքն իրեն, անկախ։ Ծուրաքանչյուր ուժ, որ դեմ կգնա այդ շահերին, կդիմվի նույնպես թշնամի, և մենք դեմ պիտի գնանք նրան»։

Զգույշ ու վարանոտ՝ հայ սոցիալիստ-հեղափոխականներն ևս գալիս էին կանգնելու Հայաստանի անկախության տեսակետի վրա, և խորհրդարանը բուռն ծափերով ու բացականչություններով ողջունեց նրանց այդ քայլը։ Այսպիսով, այսուհետև Հայաստանի բոլոր քաղաքական հոսանքները, բացի բոլշևիկներից, կողմնակից էին անկախության։

Հայաստանի բնակիչներից ոչ պակաս խանդավառ Հայաստանի անկախությամբ ոգևորվում էին և Հայաստանից դուրս գտնվող հայերը, որոնցից շատերը բուռն կերպով ձգտում էին տեղափոխվել Հայաստան։ Կառավարությունը անհաշիվ համախոսականներ ու դիմումներ էր ստանում, պատգամավորություններ ընդունում Թուրքեստանից, Հյուսիսային Կովկասից, Դոնի շրջանից, Մոսկվայից, Սև ծովի եզերքներից, Բալկաններից, Միջագետքից, Պարսկաստանից, Հունգարիայից, անգամ Արժանթինից, որոնք խնդրում էին փութացնել ներգաղթը։ Շատերը արտոնության էլ չէին սպասում. վերջացնում էին իրենց գործերը, ծախսում-ծախծխում ունեցածը և շտապում Հայաստան։ Շատերին հաջողվեց հասնել, ոմանք մնացին ճանապարհին, շատ շատերն էլ իրենց տեղերում, մեկնելու պատրաստ վիճակի մեջ։ Երևանը հետզհետե դառնում էր համահայկական քաղաք։ Մի ճամփորդ հետևյալ ձևով էր նկարագրում իր առաջին տպավորությունները Հայաստանի մայրաքաղաքից.

«Երբ մտնում էի Երևանի ակումբը, տեսա, որ իմ բոլոր ծանոթները Բաքվից, Թիֆլիսից, Ռուսաստանից, բոլորը այնտեղ էին։ Տեր Աստված, ո՞վ չկար այնտեղ... Կազմվել էր մի հասարակություն, որի անդամները հենց նոր եկած, իրար գլխի թափված՝ ուզում էին ստեղծել նոր մայրաքաղաքի բնակչություն, նոր պետության քաղաքացիություն։

Երազ է թվում այս բոլորը։

Բայց սա իրականություն է։ Հայաստանը կա և պիտի լինի։

Երևան եկողը առաջին անգամ մի բան կնկատե, որ ոչ ոք պարապ չէ։ Ամեն մարդ բանի է, ամեն ոք շտապում է հոգածու հապճեպով։ Զգիտեմ, Հայաստանի ավերմո՞ւնքն է շատ և հայ ժողովուրդը չանում է վերաշինել, թե՞ հարյուրավոր տարիների խանգարիչ հանգամանքները վերանալուց հետո հայը մի հանգիստ սրտով եկել է իր ազատ տունը և իրեն տվել է մի մոլորության, որ հատուկ է հային. շինել, վերաշինել հենց միայն, կարծես, շինելու համար...

Ամբողջ ճամփան, որով եկա Հայաստան և անցա նրա մայրաքաղաքը, ավերի հետքեր էին և շինող ձեռքի արդյունքներ։ Երևանի փողոցներում տեսնում ես այդ աշխատավոր ժողովրդին։ Արևաո, խստադեմ, տրեխավոր, կարկատնած, մտահոգ. դա հայ գյուղացին է՝ գործի է գնում... Այժմ հայ գյուղացին հաց և պաշար ունի՝ արյուն-քրտինքի գնով ձեռք բերած»*։

* «Աշխատավոր», 22 հոկտ., 1920։

Անկախությունը խոսք չէր այլևս, այլ իրական փաստ, որ վավերացվեց և միջազգային իրավական ճանաչումով։ Օգոստ. 10-ին ստորագրվեց Սևրի դաշնագիրը։ Հայաստանը դաշնադիր կողմ էր։ Ստեղծվում էր Միացյալ Հայաստան։ Հայի նվիրական երազը իրականություն էր դառնում։

Ա. Ահարոնյանը հետևյալ ձևով էր ներկայացնում «պատմական անցքի նկարագիրը», կառավարության ուղարկած զեկուցման մեջ*։

«Ճաշից հետո, ժամը 4-ին, երկու օթոմոբիլներով Փարիզից հասանք Սևր։ Ինձ ուղեկցում էին խորհրդականներ Ա. Էնֆիաջյանը, բժ. Հ. Ներուզը և 2 քարտուղարներ։ Սևրի հախճապակու հայտնի գեղարվեստական գործարանի գլխավոր դահլիճը պատրաստված էր խաղաղության համաժողովն ընդունելու համար։ Այդ դահլիճի ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետությանց պատվիրակները. աջ ու ձախ պատերի տակ երկու թևերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր։ Հայաստանը իր տեղն ուներ ձախ թևում, ռումեններին և չեխոսլովակներին կողքին, ուր և ես տեղ բռնեցի, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղավորվեցին պատվիրակների թիկնաթոռների հետևում, հատուկ պատրաստված աթոռների վրա։ Իմ առջևի, սեղանի վրա, դրված էր փոքրիկ քարտ, որի վրա գրված էր Plénipotentiaire d'Arménie.

Ժամը 4-ից անց էր։ երբ գրեթե նստած էին բոլոր պետությունների ներկայացուցիչները. ներս մտավ համաժողովի նախագահ պ. Ա. Միլերան։ Բացակայում էին միայն թուրք պատվիրակները, որոնք սպասում էին վարի հարկում։ Նախագահի նշանի վրա նրանց ներս բերին, և առաջնորդող սպասավորը մուտքի առաջ կոչեց բարձրաձայն՝ «Messieurs les Plénipotentiairs de l'Empire Ottoman!»։ Համաժողովը ոտքի կանգնեց ի նշան ողջույնի։ Կարմիր ֆեսերը գլուխներին, երկար բռնենգոտ հագած՝ ներս մտան երեք թուրք պատվիրակները, գլխի թեթև շարժումով ողջունեցին համաժողովը և իրենց տեղերը գրավեցին հույներից վեր։ Գրեթե անմիջապես հետո, ոտքի ելավ պ. Ա. Միլերան և ասաց հետևյալը.

«Պարոննե՛ր, ես հայտարարում եմ, որ այս դաշնագիրը, որ պիտի ստորագրենք, միանգամայն համապատասխան է երկու կողմերի ընդունածին»։

Ապա հրավիրվեց թուրքերին ստորագրել։ Ոտքի ելան Համդի փաշան, Ռիզա Թևֆիկ բեյը և Խալիլ բեյը, վճռական քայլերով մոտեցան կենտրոնի սեղանին, ուր դրված էր դաշնագիրը և իրար հետևից ջղուտ շարժումներով ստորագրեցին այն և գրեթե հապճեպով գնացին իրանց տեղերը, Այնուհետև ստորագրեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և

* Հ. Հ. Պատվիրակության «Գործ» № 101, Ահարոնյանի 19 օգ. նամակը Հայաստանի արտ. գործոց նախարարին։

Ճապոնիայի ներկայացուցիչները և նրանցից անմիջապես վերջը հրավիրեցին ինձ։ Այսպիսով, պետությունների այբբենական անվանակարգի շնորհիվ Հայաստանի (Arménie) կրտսեր դաշնակիցների մեջ ստորագրեց առաջինը... Ես ստորագրեցի երեք ակտ. 1) Թուրքական դաշնագիրը. 2) Մեր երկրի փոքրամասնության վերաբերյալ դաշնագիրը. 3) Մի արձանագրություն Հեջազի և Հարավ-Սլավիայի բացակայության մասին*։ Օգոստ.

* Սևրի դաշնագրի մեջ Հայաստանին հատկացված էր մի ամբողջ բաժին՝ «բաժին VI»— 88—93 հոդվածները, որ առաջ ենք բերում ամբողջությամբ.

«Հոդ. 88. Թուրքիան հայտարարում է, որ ինքը ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ արել են արդեն դաշնակից պետությունները, որպես ազատ և անկախ պետություն։

Հոդ. 89. Թուրքիան և Հայաստանը այլև ուրիշ բարձր դաշնադիր կողմերը, համաձայնվում են Ամերիկ. Միաց. Նահանգների նախագահի իրավարար վճռին հանձնել սահմանի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում և ընդունել նրա վճիռը, այլև բոլոր այն միջոցները, որ կարող է նա հրահանգել Հայաստանի դեպի ծով ելք ունենալու և հիշյալ սահմանին կից գտնվող օսմանյան որևէ հողի զինաթափման մասին։

Հոդ. 90. Այն պարագայում, երբ սահմանի որոշումը 89-րդ հոդվածի հիման վրա ունենա այն հետևանքը, որ Հայաստանին հանձնվի հիշյալ նահանգների հողի ամբողջությունը կամ մեկ մասը, Թուրքիան անհապաղ հայտարարում է, որ ինքը հրաժարվում է վճռի օրից սկսած բոլոր իրավունքներից ու իրավահիմունքներից հանձնված հողի վրա։ Սույն դաշնագրի այն կետերը, որոնք կիրառելի են Թուրքիայից անջատված հողերի վերաբերմամբ, այս վայրկյանից պիտի կիրարկվեն և այլ հողի վերաբերմամբ։

Թուրքիայի ելմտական պարտավորությունների այն բաժինն ու բնույթը, որ կրելու է Հայաստանը, ինչպես նաև բաժինն ու բնույթը այն իրավունքների, որոնց վրա կարող է հենվել նա՝ իր գերիշխանության տակ տրված հողի կապակցությամբ, տնօրինվելու են համաձայն սույն դաշնագրի 8-րդ մաս հոդ. 241—244-ի (ելմտական դրություններ)։

Հետագա համաձայնությունները կկարգավորեն, եթե այդ անհրաժեշտ լինի, բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն լինի սույն դաշնագրով և որոնք կարող կլինեն առաջ գալ հիշյալ հողամասի հանձնումով։

Հոդ. 91. Եթե 89 հոդվածի մեջ ցույց տրված հողի մեկ մասը հանձնվի Հայաստանին, այն ժամանակ սահմանագծող հանձնաժողովը, որի կազմը կորոշվի հետագայում, կկազմվի ընթացս երեք ամսվա հիշյալ հոդվածում նախատեսված վճռից հետո՝ նպատակ ունենալով տեղն ու տեղը գծել սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև, որպիսին հայտնի կլինի համաձայն հիշյալ վճռի։

Հոդ. 92. Հայաստանի սահմանները Ադրբեջանի և Վրաստանի հետ համապատասխան կերպով կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ։

Եթե այս կամ այն դեպքում, երբ արդեն 89 հոդվածում նախատեսված վճիռը տրված լինի, շահագրգռված պետությունները չկարողանան հասնել, ընդհանուր համաձայնությամբ, իրենց սահմանների որոշման, վերջինս կորոշվի գլխավոր դաշնակից պետությունների կողմից, որոնք միաժամանակ պետք է հոգ տանեն անցկացնելու այն տեղում։

Հոդ. 93. Հայաստանը ընդունում է, համաձայնվելով մտցնել դաշնագրի մեջ գլխավոր դաշնակից պետությունների հետ՝ այն որոշումները, որ այդ պետությունները անհրաժեշտ կգտնեն պաշտպանելու Թամար Հայաստանում շահերը այն բնակիչների, որոնք

15-ին, դաշնագիրն ստորագրելու առթիվ, հանդիսավոր մաղթանք կատարվեց Փարիզի եկեղեցում և ճաշից հետո, ժամը 4-ին, տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն մեր պատվիրակության շինության մեջ։ Շատ մեծ բազմություն հավաքվեց տոնելու համար համազգային մեծ օրը՝ ճառեր ու բանաստեղծություններ արտասանվեցին, հայրենասիրական երգեր երգվեցին ի պատիվ Ազատ և Անկախ Միացյալ Հայաստանի»։

Սևրի դաշնագրի ստորագրության առթիվ ժողովներ ու հանդեսներ տեղի ունեցան և Հայաստանում, ուր նույնպես «ճառեր ու բանաստեղծություններ արտասանվեցին» և «հայրենասիրական երգեր երգվեցին», բայց այնտեղ շուտով պիտի երգվեին և ուրիշ տեսակ երգեր։ Այս նշաններն արդեն երևում էին...

մեծամասնությունից տարբերվում են ցեղով, լեզվով կամ կրոնով։

Հայաստանը համաձայնվում է, հավատարապես, մտցնել դաշնագրի մեջ գլխավոր դաշնակից պետությունների հետ այն որոշումները, որ այդ պետությունները անհրաժեշտ կդտնեն՝ պաշտպանելու համար տրանզիտի ազատությունը և արդար իրավակարգը ուրիշ ազգերի առևտրի համար»։

ԳԼՈՒԽ Լ

ՀԱՅ-ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես տեսանք, խորհրդայնացումից անմիջապես վերջը, Ազրբեջանի հեղկոմը վերջնագիր ուղարկեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով դատարկել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայկական ուժերից։ Դեռ պատասխան չառած, մայիսի 1-ին, Հայաստանի կառավարությունը ստացավ մի ուրիշ վերջնագիր, այս անգամ 11-րդ կարմիր բանակի հրամանատարության կողմից։ Վերջնագիրը ասում էր.

«Հայաստանի և մեր բարեկամ խորհրդային Ազրբեջանի սահմաններում շարունակվում են պատերազմական գործողությունները Հայաստանի և Ազրբեջանի միջև։ Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունը իր սրբազան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնության հասնել Ազրբեջանի համայն աշխատավորության անունից օգնություն խնդրող խորհրդային կառավարությանը, որպեսզի Ազրբեջանում վերջնականապես հաստատվի բանվորագյուղացիական կառավարությունը։ Անգլիայի և Դաշնակցություն ու Մուսավաթ կուսակցությունների գրգռումով հայկական և ազրբեջանական զորքերի միջև ազգային հողի վրա տեղի ունեցող թշնամությունները շահավետ են միայն ճնշված ժողովուրդներին հաղթողների և Հայաստանի ու Ազրբեջանի աշխատավոր դասակարգերի շահագործողների համար։ Ազրբեջանի և Հայաստանի միջև եղած սահմանային բոլոր վիճելի հարցերը կարող են լուծվել միայն աշխատավոր և ինքնորոշվող ժողովուրդների կամքով։ Խորհրդային Ազրբեջանը չի կարող պաշտպանել և ո՛չ մի շովինիստական ազգայնամոլ և հարձակողական գործ։ Ազրբեջանում այլևս չի կարող գոյություն ունենալ միջցեղային թշնամանք։ Հանուն Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնակցային Խորհրդային Հանրապետության առաջարկում եմ Հայաստանի կառավարությանը անմիջապես դադարեցնել ռազմական բոլոր գործողությունները Խորհրդային Ազրբեջանում և իր զորքերը դուրս հանել նրա սահմաններից։ Այդ բանը պետք է արվի ներկա հեռագրի ստացումից հետո 24 ժամվա ընթացքում Սույն պահանջի չգործադրվելը կնկատվի իբրև մարտահրավեր ուղղված Ռ. Ս. Դ. Խ. Հ. հասցեին։ Առաջարկը կիրագործվի Ռուսաստանի կարմիր բանակի ուժերով, իսկ հետևանքների պատասխանատվությունը կընկնի

հայկական կառավարության վրա։ Կովկասյան ճակատի Հեղափոխական բանակի խորհուրդ՝ Օրջոնիկիձե, Առաջին բանակի ռազմահեղափոխական խորհուրդ՝ Կիրով, Մեխանոշին, Լևանդովսկի. 1 մայիս 1920 թ.»։

Պարզ էր, ուրեմն. Խորհրդ. Ազրբեջանը Հայաստանի վերաբերմամբ անշեղ շարունակում էր մուսավաթական Ազրբեջանի քաղաքականությունը, իսկ Խորհրդային Ռուսաստանը ամեն կերպ աջակցում էր նրան։ Ի՞նչ էր մնում անել Հայաստանին. բողոքել։ Եվ ահա սկսվում է հեռագրական բողոքների մի երկար շարք՝ Լենինին, Չիչերինին, Օրջոնիկիձեին և «ամենքին, ամենքին, ամենքին»։ Իսկ մինչ այդ Ղարաբաղի ուղղությամբ շարժվում էին մեծ քանակությամբ ռուս և ազրբեջանցի զորքեր։ Եվ երբ բոլշևիկյան ուժերը Ղարաբաղի ճակատում սրդեն այնքան էին, որ կարելի էր սկսել վճռական գործողության, մայիսի 21-ին Դրոյի մոտ եկան Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Ս. Տեր-Գաբրիելյանը, Կայդալովը ու Պերնանին և հայտարարեցին, որ խորհրդային իշխանությունը որոշել է գրավել Ղարաբաղը մինչև Հաքյարի գետը։ Դրոն բողոքեց՝ հայտնելով, որ նման հարցերի համար պետք է դիմել Հայաստանի կառավարությանը, բայց ստիպված տեղի տվեց և մայիսի 26-ին, իր էքսպեդիցիոն զորամասով հեռացավ Զանգեզուր։

Հայաստանի կառավարությունը վճռական բողոք ուղարկեց Մոսկվա, բայց այս էլ, մյուս բոլոր բողոքների նման, մնաց անհետևանք։

Հետևանք չունեցան և Հայաստանի ու Խորհրդային Ազրբեջանի միջև սկսված բանակցությունները։ Հեղաշրջումից հետո ուրիշ ներկայացուցիչների հետ ձերբակալվել էր և Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը՝ ներկայացուցչության բոլոր անդամների հետ միասին։ Ներկայացուցչությունը մատնվել էր Թալանի։ Այդ, ինչպես և Հայաստանի ու Ազրբեջանի միջև վեճի առարկա եղող հարցերը լուծելու նպատակով՝ սկսվեցին բանակցություններ Ազրբեջանի հեղկոմի և Հայաստանի կառավարության միջև։ Բանակցությունները վարում էին Ազրբեջանի հեղկոմի անդամ Հուսեյնովը և Հայաստանի Թիֆլիսի դիվանագ. ներկայացուցիչ Տ. Բեգզադյանը։ Առաջարկվեց գումարել խորհրդաժողով. ազրբեջանցիք ուզում էին Բաքվում, հայերը՝ Ղազախում։ Հայաստանի կողմից պատվիրակության անդամ նշանակվեցին Մ. Հարությունյանը*, Տ. Բեգզադյանը, Ն. Աղբալյանը և Կ. Ղազազյանը։ Ազրբեջանի կողմից՝ նախագահ Իբրահիմ Աբալով, անդամներ՝ Լոմինաձե և Միկոյան։ Խորհրդաժողովի հետ կապված խնդիրները, ինչպես և Ազրբեջանի Երևանի ներկայացուցչության վիճակը կարգավորելու համար, օգոստոս 14-ին, Երևան եկավ Ազրբեջանի հեղկոմի ներկայացուցիչ Դովլաթյանը քարտուղար Գասպարյանի և սուրհանդակ Մորիս Ֆաբրի

* Խորհրդաժողովի առթիվ Մ. Հարությունյանը ազատվեց բանտից։

հետ։ Ավելի շուտ լրտեսական մի խումբ էր այդ։ Իհարկե, այդ բանակցություններից էլ բան դուրս չեկավ. Ազրբեջանի վարիչները դիտմամբ դրությունը թողնում էին անորոշ ու խճողված, որպեսզի ավելի հեշտությամբ իրականացնեին իրենց «մուսավաթական ծրագրերը»։ Նրանց ջանքն էր, ինչ գնով և լինի կցել Ազրբեջանին Ղարաբաղ—Զանգեզուր—Շարուր—Նախիջևան։ Ազրբեջանցի բոլշևիկներն էլ, մուսավաթականների և իթթիհատականների պես, աշխատում էին Ազրբեջանը կապել «հեղափոխական» Թուրքիային, ինչպես և թուրքերը ջանք էին թափում Ազրբեջանը պահել իրենց ազդեցության տակ և օգտագործել իրենց քաղաքական նպատակներին։ Հենց Ազրբեջանի խորհրդայնացումը թուրքերի գործն էր։ «Կարմրացնելով» Ազրբեջանը, թուրքերը առնում էին նրան բոլշևիկ-քեմալական ազդեցության շրջանի մեջ և մի կողմից դարձնում համաթուրքական գործունեության հենարան Կովկասում և Թուրքեստանում, մյուս կողմից՝ հաղորդակցության ուղիղ ճանապարհ Մոսկվայի և Անգորայի միջև։

Բոլշևիկ-քեմալական գործակցության ուժեղացման տեսակետից ահագին դեր կատարվեց և Արևելյան ժողովուրդների համագումարը Բաքվում։ Այստեղ հավաքվեցին համիսլամական և համաթուրքական շարժման ամենակարկառուն դեմքերը՝ Էնվեր, Խալիլ փաշաները, Քյուչուք Թալեաթ, Բեհաեդդին Շաքիր և ուրիշ շատ ջարդարարներ։ Արևելյան ժողովուրդների համագումարը ոչ միայն միջոց եղավ հեղափոխության քարոզչությանը Արևելքում, այլև նրա մեջ հիմք դրվեց բոլշևիկ-քեմալական գործնական քաղաքականության Առաջավոր Ասիայում և, մասնավորապես, Հայաստանի դեմ։ Կասկած չկա, որ Բաքվում գործնական ձև ստացավ և պատերազմի խնդիրը Հայաստանի դեմ։ Ըստ կայացած համաձայնության, Հայաստանի խորհրդայնացման նպաստելու դիտավորությամբ, թուրքերը պիտի շարժվեին Հայաստանի վրա մինչև Սարիղամիշ։

Բոլշևիկ—քեմալական—ազրբեջանյան գործակցության մասին շատ նյութեր կան հրատարակված* և հազիվ թե կարիք լինի երկար վիճաբանություններ բերելու, բայց մի երկու փաստ, այնուամենայնիվ, արձանագրենք. 1920 թ. ապրիլի 15-ին, Էրզրումում, Ազրբեջանի զինվ. նախարարի օգնական զոր. Ալի Աղա Շիխլինսկիի և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի միջև։ Այդ համաձայնագիրը պիտի փոխարիներ 1919 թվի նոյեմբ. 29-ին, Գոլսում կնքված, թուրք-ազրբեջանյան գաղտնի դաշնագիրը**։ Ինչպես և այս վերջինը,

* Հենց Անգորայի 1926 թ. կառավարության արձանագրությունները բավական են հաստատելու համար, որ թուրք-բոլշևիկյան գործակցությունը 1920 թ. փաստ էր։

** «Մաղմիկ», 1920 թ., հոկ. 12, № 9, Երևան։ Տե՛ս նաև Ս. Վրացյանի, Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, Բեյրութ, 1953, այլև Զոր. Ալի Ֆուատ Ջուլերը։ «Moskova Hatıraları» (31-11-1920—2-6-1922), 1955, Istanbul.

Էրզրումի դաշնագիրն էլ իր մի մասով ուղղված էր Հայաստանի դեմ։

Այդ դաշնագրի 5-րդ կետը բառացի կերպով ասում էր. «Ազրբեջանի կառավարությունը խոստանում է շարունակել նպաստել Խորհրդ. Ռուսաստանին և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեի» միջև մերձեցումն իրականացնելու։ Անհրաժեշտության դեպքում ինքն էլ է հարում այդ միությանն»։ 7-րդ հոդվածը խոսում էր Հայաստանի մասին. «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կոմիտեն վճռականորեն խոստանում է, որ այն դեպքում, երբ Հայաստանը հարձակում գործե Ազրբեջանի վրա, և Ազրբեջանի կառավարությունը վճռականորեն խոստանում է, որ այն դեպքում, երբ Թուրքիայի արևելյան շրջանները կտրվեն և կմիացվեն Հայաստանին, այս երկու դեպքում էլ համաձայնության եկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմիանց շահերը և գործելու են որպես միացած բանակ»։

Այս համաձայնության առթիվ էր, որ Քյազիմ Կարաբեքիրը գրում էր իր մի նամակում. «Մեր, Ազրբեջանի և բոլշևիկների միջև կնքված պայմանների հիման վրա, մեծ թիվ մեր սպաների, բժիշկների և պաշտոնյաների գնացել են Ազրբեջան։ Բոլշևիկները մեզ առաջարկեցին անհապաղ պատերազմական գործողություններ սկսել հայկական սահմանների վրա, հայերի դեմ, Կիլիկիայի սահմաններում՝ ֆրանսիացիների դեմ։ Դաղստանում կազմված կանաչ բանակը՝ Էնվերի, Նուրիի և Խալիլի ղեկավարությամբ՝ պե՛տք է ապրիլի սկզբներին աշխատե մտնել Բաքու։ Ազրբեջանյան զորքերը պետք է ցույց տան կեղծ-խարուսիկ գիմադրություն, որպեսզի կարողանան իրենց արդարացնել դաշնակիցների հանդեպ։ Միանալով կանաչ բանակին՝ ազրբեջանյան զորքերը պետք է առիթ որոնեն ընդհարվելու Հայաստանի հետ և Անատոլիայում գտնվող Թուրք զորքերի հետ միասին անցնեն Հայաստանի սահմանները ու սկսեն զինվորական գործողություններ Հայոց Հանրապետության դեմ»։

Մի ուրիշ վկայություն. հայտնի կոմունիստ Սուլթան Գուլիևը 1920 թվի մայիսին գրում էր «Իզվեստիայում». «Միլլի կազմակերպությունը Դենիկինի Մոսկվայի վրա գործած հարձակման ժամանակ նրա թիկունքում առաջացրեց ապստամբություն և ստիպեց կովի վճռական բոպեներին նրա բանակից մի քանի զորամասեր ուղղել դեպի հետ՝ ճնշելու համար ապստամբությունը։ Այդ ձևով է աշխատել «Միլլի կազմակերպությունը», և Բաթումի, Կարսի, Արդահանի շրջաններում։ Ազրբեջանի բանակում աշխատող տաճկական սպաները գաղտնի քարոզչություն էին անում միանալու Խորհրդային Ռուսաստանի հետ։

Քաղաքական այդ գիծը «Միլլի կազմակերպությունն» ավելի պարզորեն ցուցահանեց դաշնակիցների Պոլիսը գրավելուց և թրքական ազգային երևսփոխանական ժողովը ցրելուց հետո։ Բաքվի հեղաշրջումից ամիս ու կես առաջ այնտեղ հասավ Մուսթաֆա Քեմալի հատուկ պատվիրակությունը հայտնելու համար, որ Անատոլուի ապստամբները ցանկանում են հարաբերության մեջ մտնել Խորհրդային Ռուսաստանի հետ և առաջարկում նրան կամ ուղարկել Անատոլու իրենց պատվիրակներին, կամ ընդունել իրենց առաքելությունը»։

1926 թ. փետր. 1-ին, Անգորայի անկախության ատյանի առջև, Էրզրումի ըմբոստության դատավարության միջոցին, ամբաստանյալներից մեկը՝ հանգստյան կոչված հարյուրապետ գրավաճառ Իսմայիլ Էֆենդին հետևյալ ուշագրավ ցուցումները տվեց։ Նա հայտնեց, որ «1336-ին Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանով գնաց Բաքու արևելյան ազգերի համաժողովին մասնակցելու համար. իր հետ ուրիշ ընկերներ էլ ուներ։ Բաքվում այդ միջոցին գումարված էր նաև մի կոմունիստական համաժողով. իրենք այդ համաժողովին մասնակցեցին լոկ իբրև խորհրդատուներ։ Համաժողովին մասնակցեցին նաև Մուստաֆա Սուբհի, Բեհահեդդին բեյերը, Էնվեր փաշան, Քյուչուք Թալեաթ բեյը»։

Իր ցուցումները շարունակելով Իսմայիլ Էֆ. ասաց. «Քյազիմ Կարաբեքիր փաշան իր բանակով կատարելապես դեպի համայնավարություն էր գնում։ Հասան Կալեում զինվորներն ու սպաները միասին էին լվացվում բաղնիքում և միասին էին ճաշում։ Փորձ եղավ համայնավարության նմանող մի շարժում առաջ բերելու։ Նրա գլուխն էր գտնվում Բեհահեդդին Շաքիրը։ Մի շարք ծրագրեր էին ուղարկվել Էրզրում. բայց նրանք լավ չէին. շփոթություն հարուցանելու բնույթն ունեին։ Դրա վրա տեսնվեցինք Արիֆ և Շիվքրի բեյերի հետ և որոշեցինք մեր հարաբերությունները խզել նրանցից։ Այդ միջոցին Քյազիմ Կարաբեքիր փաշան արդեն այնպիսի նշանակ էր արել համայնավարությունից, որ դուք անգամ կզարմանայիք։ Այդ միջոցին կազմվեց Նվիրականության պահպանման ընկերությունը։ Մուստաֆա Սուբհին Բաքվում արդեն գլուխ էր բերել իր կազմակերպությունը, զինվորներին պատրաստել էր, նույնիսկ կոմունիստներ անգամ նշանակել էր և մեր երկիրը պիտի գար»*։

Այս փաստերը կասկած չեն թողնում, որ բոլշևիկների և թուրքերի միջև գոյություն ուներ շատ սերտ բարեկամություն և գործակցություն։ 1920 թ. ամառը Մոսկվա էր գտնվում Անգորայի մի մեծ պատվիրակություն՝ Բեքիր Սամիի գլխավորությամբ։ Բաքվի «Կոմունիստը» հուլիսի 20-ին հաղորդում էր Արմավիրից, թե Մոսկվա անցավ Թուրքական մի պատվիրակություն Բեքիր Սամի բեյի նախագահությամբ։ Պատվիրակության ասելով Թուրքիայում մեծ հաջողություն ունի կոմունիստական

* Անատոլուի գործակալության հեռագիրը, «Մարմարա», 1926 թ., փետր. 3։

շարժումը։ Բեքիր Սամի բեյը հայտնել է, որ իրենք գնում են Մոսկվա Երրորդ ինտերնացիոնալի երկրորդ համագումարին մասնակցելու և խորհրդային իշխանության հետ կապեր հաստատելու նպատակով։

Մյուս կողմից, Բաքուն դառնում էր քեմալականների գործնական աշխատանքի կենտրոն։ Հուլիս 20-ին Մոսկվայից Բաքու վերադարձավ Խալիլ փաշան և մեծ հանդիսավորությամբ ընդունվեց խորհրդային իշխանության կողմից։ Նա անմիջապես ձեռնարկեց «իսլամական բանակի» կազմակերպության։ Այդ բանակի կենտրոն նշանակվեց Ղուսար ավանը, ուր տեղի էր ունենում կամավորների արձանագրությունը, մարզանքն ու կազմակերպումը։ Խորհրդային իշխանությունը աջակցում էր Խալիլ փաշային. հոգում էր բանակի ծախսը, հագուստը, զենքն ու ռամբամթերքը և այլն։ Բանակի սպայակույտի պետը խորհրդային գլխավոր սպայակույտի մի սպա էր։ Ռուսաստանի զանազան կողմերից՝ Ղրիմից, Կաղանից, Ուֆայից, Թուրքեստանից խումբ-խումբ ուղարկվում էին մահմեդական երիտասարդներ և մտցվում բանակը։ Խալիլ փաշայի տրամադրության տակ էին և Սիբիրից վերադարձող թուրք գերիները, կարգապահությունը «իսլամ բանակում» շատ դաժան էր։ Զորամասերը պատրաստվում էին արագությամբ, այդ բանակով Խալիլ փաշան, Ղարաբաղի ու Զանգեզուրի վրայով, պիտի անցներ Թուրքիա։

Այսպես, մինչ ազրբեջանցիներն ու թուրքերը բացահայտ կերպով դավեր էին լարում Հայաստանի դեմ, կոմունիստները, մանավանդ հայ կոմունիստները, անսանձ ու մոլեգին պայքար էին մղում նույն Հայաստանի դեմ։ Անհաշիվ են և անորակելի այդ դավերը։ Բոլշևիկները անվերջ գրում ու խոսում էին Հայաստանում տիրող «սպիտակ տեռորի» մասին, տարածում էին շինծու և գրգռիչ տեղեկություններ, Հայաստանը ներկայացնում էին իբրև մի երկիր, ուր դահիճներն են թագավորում, ուր ամեն օր կոմունիստների զանգվածային սպանություններ են կատարվում։

Ազրբեջանի խորհուրդների պաշտոնաթերթ «Կոմունիստի» մայիսի 20-ի համարում կարդում ենք Հայաստանից Ազստաֆա հասած բոլշևիկյան մի պատվիրակության դիմումը 11-րդ բանակին.

«Ընկերնե՛ր, ապրիլի 28-ին ռադիոն հաղորդեց մեզ այն ուրախալի լուրը, որ ազրբեջանական բեգերի ու խաների հակահեղափոխական կառավարությունն ընկել է և իշխանությունը անցել է մեր կոմունիստ ընկերների ձեռքը։ Այս ուրախալի լուրն իսկույն տարածվեց ամբողջ Հայաստանում։ Հենց որ կատարված դեպքը հայտնի դարձավ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, նրանք սկսեցին պատրաստվել՝ թոթափելու դաշնակների հակահեղափոխական կառավարության լուծը և մայիսի 11-ին բարձրացրին ապստամբության կարմիր դրոշը։ Զգալով կարմիր վտանգը՝ դաշնակները դիմեցին իրենց սովորական զենքին ու պրովոկացիային։ Նրանք տարածեցին, որ նոր Ազրբեջանում իշխանու-

թյունը բոլշևիկյան չէ և որ Բաքվի կարմիր հեղաշրջման լուրերը տարածում են տեղական հայ կոմունիստները, որը չի համապատասխանում իրականությանը։ Նրանք սպառնում էին, որ եթե ազգաբնակչությունը հետևի բոլշևիկներին, Ամերիկան Հայաստանին հաց չի տա։ Նրանց հորինեցին կեղծ նոտաներ, որոնք, իբր թե, խորհրդային Ազրբեջանի կողմից ուղղված են եղել Հայաստանին՝ նրա վրայով զորք տեղափոխելու Տաճկաստանին օգնելու նպատակով։ Բարեբախտաբար, այս պրովոկացիաները հաջողություն չունեցան և մայիսի 12-ին Ալեքսանդրապոլի պրոլետարիատը չքավոր գյուղացիության ու զինվորների հետ տապալեց Ալեքսանդրապոլում դաշնակների ատելի իշխանությունը և սկսեց առաջ շարժվել Կարսի, Սարիղամիշի, Ղարաքիլիսայի և Երևանի ուղղությամբ։

Ի պատասխան դրան դաշնակները արտաքին պատերազմ առաջացրին Յեդիսուբ-վեդիցիների և Իգդիրի, Սարիղամիշի ու Կարսի քրդերի հետ, որով գրավեցին կարմիր զինվորների ուշադրությունը, մինչև իրենք մաուզերիստների 3000-նոց բանդայի ու կաշառված դենիկինյան սպաների գլուխ անցած՝ թիկունքից հարձակվեցին կարմիր Ալեքսանդրապոլի փոքրաթիվ պահակախմբի վրա, կոտորելով երկու հազար անպաշտպան բանվորներ ու գյուղացիներ՝ նրանք վերականգնեցին իրենց հակահեղափոխական իշխանությունը։

Դաշնակների ահաբեկման սիստեմը սոսկալի է. ամեն մի կոմունիստի տեղն ու տեղը խփում են։ Շատ ընկերների վիճակը մեզ անհայտ է։ Բայց դա չի ընկճել հայ պրոլետարիատի կամքը. նա պատրաստ է նորից ապստամբելու։ Մենք եկել ենք ձեզ հետ կապ հաստատելու։ Հայաստանը սպասում է ռուս կարմիր զորքերին, և երբ նրանք ոտք կդնեն Հայաստանի հողի վրա, ո՛չ մի հայ զինվոր, նույնիսկ դաշնակցական չի համարձակվի կրակել նրանց դեմ։

Դիլիջանի գավառի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ՝ Կաստյա Այվազյան. տեղական կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ՝ Հակոբ Հակոբյան»։

Նույն «Կոմունիստը» հունիսի 20-ին հրատարակում էր հետևյալ դիմումը Հայաստանի կառավարությանը.

«Ազրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեին և խորհրդային Ազրբեջանում գտնվող Ռուսաստանի կարմիր զորքերին հայտնի է, որ ձեր կառավարությունը Հայաստանում այժմ խեղդում է բանվորների և գյուղացիների շարժումը։ Կովկասյան հակահեղափոխական կառավարություններից ո՛չ մեկը իր բանվորների և գյուղացիների դեմ չի ցուցահանել այնպիսի դաժանություն, ինչպիսին գործադրում է ձեր կառավարությունը Հայաստանում կոմունիստ գյուղացիների և բանվորների դեմ։ Հենվելով մաուզերիստների գլխավոր դահիճ Սեպուհի և դենիկինյան սպաների վրա՝ դուք Հայաստանի գյու-

ղացիներին և բանվորներին օրենքից դուրս եք հայտարարել։ Զանգվածային գնդակահարությունները Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում, հեղափոխական բանվորներին, գյուղացիներին և նրանց ղեկավարներին անխնա ձերբակալելը, ծեծելը, թալանելը՝ ա՛յս ամենը վրդովում է Ազրբեջանի պրոլետարիատի և Խորհրդային Ռուսաստանի կարմիր զորքերի հեղափոխական խիղճը։

Հայաստանի և Ղազախի գյուղացիներն իրենց ընտանիքներով փախչում են ձեր բաշիբոզուկների ձեռքից։ Ինչպես փախչում էին մուսավաթականների ձեռքից և ապաստարան են գտնում Խորհրդային Ազրբեջանի հեղափոխական գյուղացիների մոտ։ Այդ ամենալավ ապացույցն է, որ մուսավաթականները ձեր գաղափարական եղբայրներն են ու զինակիցները, և որ Հայաստանի գյուղացիներն ու բանվորները համերաշխ են Ազրբեջանի աշխատավորների հետ դաշնակների և մուսավաթականների դեմ կռվելու գործում։

Խորհրդային Ազրբեջանում ամենուրեք, Խորհրդային Ռուսաստանի կարմիր զորքի օգնությամբ մենք անխնա կերպով խեղդում ենք մուսավաթականների հակահեղափոխությունը, իսկ ձեր կառավարությունը Հայաստանում խեղդում է բանվորների և գյուղացիների կոմունիստական հեղափոխությունը։ Դրանով դուք օգնում եք մուսավաթականներին հեղափոխության դեմ կռվելու։

Մեզ հայտնի է, որ ձեր կառավարությունը Կարսի շրջանում գնդակահարել է 300 հոգի։ Կարսում հակահեղափոխականների տրիբունալը, Խորենու և Աղբայյանի գլխավորությամբ, ձերբակալել է կոմունիստական կուսակցության անդամներին և գնդակահարել։ Դուք գնդակահարել եք Խորհրդ. Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ բժ. Մելքոնյանին, Կարսի հեղափոխական կոմիտեի անդամ ընկ. Ղուկասյանին, Նոր Բայազետի հեղ. կոմիտեի անդամ ընկ. Սարուխանյանին և մի շարք մեր ամենալավ ընկերներին։ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Հայաստանի ներկայացուցիչը՝ և Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի Բաքվի ներկայացուցիչը՝ վրդովված այն դահճային անսրտությունից, որ ցուցահանում եք Հայաստանում մեր ընկերների նկատմամբ, որոշել է դիմել Մոսկվա, որտեղ անամոթաբար դիմել եք և դուք՝ ուղարկելով ձեր ներկայացուցիչներին և միաժամանակ Հայաստանում անխնա կոտորելով կոմունիստներին։ Մենք համոզված ենք, որ Խորհրդային Ռուսաստանը ձեռք կառնի բոլոր միջոցները՝ վերջ տալու ձեր արյունոտ վարմունքին։

Առաջարկում ենք դադարել մեր ընկերներին ձերբակալել ու գնդակահարել, ազատել բոլոր ձերբակալվածներին և այդ մասին հայտնել մեզ մեր ընկեր Սերգեյ Արկադիևիչ Վարդանյանի միջոցով։

Պատասխանի համար տալիս ենք երկու օր ժամանակ։ Եթե չպատասխանեցիք, մենք կհամարենք, որ ուզում եք շարունակել նույն քաղաքականությունը։

Ազրբեջանի կոմ. կուս. Կենտ. կոմիտե՝ Նանեշվիլի, Միկոյան։ Ռուսաստանի կոմ. կուս. ներկայացուցիչ՝ Կոստանյան։ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի ներկայացուցիչ՝ Ավիս»։

Եվ մինչ մի կողմից Միկոյանները սպառնալիքներ էին կարդում Հայաստանի կառավարության, մյուս կողմից, անշուշտ, Բաքվի կոմունիստների ներշնչումով, Չիչերինը, հունիսի 4-ին, հեռագրում էր Երևան, թե՝ «Արժանահավատ տեղեկությունների համաձայն, Ալեքսանդրապոլում, Երևանում, Սարիղամիշում, Կարսում և Հայաստանի այլ քաղաքներում հարյուրավոր կոմունիստներ են ձերբակալված։ Հայաստանի կառավարությունը թույլ է տալիս ինքնադատաստան և գաղտնի գնդակահարում է կոմունիստներին։ Հատկապես գնդակահարված է ընկ. Միկոյանը։ Խորհրդային կառավարությունը մեծ վրդովմունքով իմացավ Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների վերաբերմամբ գործադրվող կամայականությունների մասին»։

Մարդիկ խոսում էին հազարավոր սպանվածների մասին, այն ինչ, ամբողջ բոլշևիկյան շարժման ընթացքում բոլոր ձերբակալված բոլշևիկների թիվը Հայաստանում 234 էր, որոնցից 120 հոգին ազատ էին արձակված և մահապատժի էին դատապարտված 3 հոգի։ Լուրեր էին տարածում, որ գնդակահարված է Միկոյանը, մինչ Միկոյանը Հայաստանի երես անգամ չէր տեսած։

Հայ բոլշևիկների նման ընթացքն էր, որ անհաջողության մատնեց Հայաստանի Հանրապետության ու Խորհրդային Ռուսաստանի միջև սկսված բանակցությունները։

Հյուսիսային Կովկասը Խորհրդային իշխանության ձեռքն անցնելուց հետո Խորհրդային Ռուսաստանի պատասխանատու ներկայացուցիչներից ոմանք, Հայաստանի հյուսիսային ներկայացուցիչների միջոցով, քանիցս խորհուրդ էին տվել պաշտոնական բանակցություններ սկսել Մոսկվայի հետ՝ բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Հայաստանի կառավարությունը ինքն էլ զգում էր նման քայլի անհրաժեշտությունը, մանավանդ, երբ կարմիր բանակը մոտեցավ Ազրբեջանին։ Ապրիլի վերջերին Երևանում կազմվեց մի պատվիրակություն՝ նախագահ՝ Լ. Շանթ, անդամներ՝ Հ. Տերտերյան և Լ. Զարաֆյան, որին հանձնարարվեց անմիջապես մեկնել Մոսկվա Խորհրդային իշխանության հետ, հանուն Հայաստանի, բանակցություններ վարելու և բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Պատվիրակությանը տրվեցին հետևյալ հրահանգները. 1. Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչե Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում և Ղարաբաղն ու Գյուլիստանը, 2. Խորհրդային Ռուսաստանը, գոնե սկզբունքով, պետք է ընդունե թուրքահայ հողերի կցումը Հայաստանին, 3.

Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտե Հայաստանի ներքին գործերին. չպիտի Հայաստանում կոմունիստական գործունեություն ցույց տա, 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թույլ տա, որ Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնվող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի շարք ուրիշ հարցեր։

Պատվիրակությունն անհապաղ մեկնեց Մոսկվա։ Այդ առթիվ, մայիսի 4-ին վարչապետ Օհանջանյանը Չիչերինին հղեց հետևյալ հեռագիրը.

«Բանվորական, զինվորական ու գյուղացիական պատգամավորների համառուսական երրորդ համագումարի որոշման համաձայն, որ հայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատությունը, և հիմնվելով ժողովրդական կոմիսարների նախագահ Լենինի 1918 թ. հունվ. 13 դեկրետի վրա՝ անկախ, միացյալ, դեմոկրատիկ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է Ռուսաստանի ընկերվարական կառավարությանը բանակցությունների մեջ մտնել նրա հետ երկու Հանրապետությունների միջև պայմանագրային հարաբերություններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման և ինքնիշխանության հիմունքների վրա։ Իմ կառավարության լիազորված պատվիրակությունն արդեն ձեր Հանրապետության սահմաններում է հիշված բանակցությունները ձեր կառավարության հետ վարելու համար. № 2740»։

Մայիսի 17-ին Չիչերինը պատասխանեց. «Խորհրդային կառավարությունը սրանով հայտնում է իր համաձայնությունը կնքելու Հայաստանի կառավարության հետ պայմանագիր՝ երկու ժողովուրդների միջև բարեկամական հարաբերություններ հաստատելու նպատակով։ Խորհրդ. կառավարությունը սպասում է ձեր պատվիրակներին, որոնք արդեն ճանապարհվել են դեպի Մոսկվա։ Ձեր պատվիրակության Մոսկվայից Երևան հաղորդակցության մեջ մտնելու տեխնիկական դժվարությունները վերացնելու նպատակով տրամադրեցինք մեր ուղիղ հեռագրաթելը՝ Ռոստովի և Թիֆլիսի վրայով։ Խնդրում ենք այդ մասին նախօրոք համաձայնության գալ Վրաստանի կառավարության հետ։ № 150»։

Թե Մոսկվայում այդ օրերին ինչ տրամադրություն էր տիրում հայերի և Հայաստանի նկատմամբ, ցույց է տալիս Ղարաբաղի կոմիտեի ներկայացուցիչներ Ա. Երզնկյանի և Ս. Փիրումյանի զեկուցումը՝ տպված Թիֆլիսի «Սլովո» թերթում։ «Պատվիրակ Երզնկյանի ընդարձակ զեկուցումից հետո,— գրում է թերթը,— առանձնապես ուշագրավ էր ռուսական շրջանակներում ստեղծված այն բնորոշ տրամադրությունը, որ առաջացել էր նախքան հայկական պատվիրակության Մոսկվա մեկնելը, թուրք-թաթարական պրովոկացիայի շնորհիվ՝ նպատակ ունենալով մոլորության մեջ պահել Ռուսաստանի հասարակական կարծիքն ու նրա ղեկավար շրջանները։ Պատվիրակները Մոսկվա հասնելով՝ շվարած են

մնում այն ստերից, որոնցով կերակրելիս են եղել ընթերցողներին կառավարական օրգանները՝ «Իզվեստիան», «Պրավդան» և այլ թերթեր։

«Այդ լրագրական հոդվածներում շարունակ այն միտքն է արծարծվել, թե Հայաստանը, Լեհաստանի նման, դաշնակիցների գործիքն է, թե իմպերիալիստ դաշնակիցները համարյա թե ամեն օր Հայաստան են ներմուծում լեհերի չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու՝ ռազմամթերք են պատրաստում, թե գործը փայլուն կերպով է դրված և երկաթուղային ցանցի վրա աշխատանքը եռում է։ Ամբողջ աշխարհի բուրժուաները հավաքվել են Հայաստանում շահագործելու համար պրոլետարիատին և այնպիսի քաղաքականություն են մտցրել, որ ուղղված լինի սոցիալիստական Ազրբեջանի և սոցիալիստական Տաճկաստանի խեղճ ու կրակ աշխատավոր զանգվածների դեմ։ Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանգիստ չունեն հակահեղափոխական հայոց կառավարության հսկայաթիվ զորքերի նվաճողական հարձակումներից։ Հայ հակահեղափոխականների ձեռքով ստեղծված Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թե հայերը, այլ խորհրդային իշխանության մշտական կողմնակից մուսուլման աշխատավորությունը։

Այդ անպատկառ գործունեությունը մերկ, քաղցից ու ցրտից մեռնող Հայաստանի դեմ վերջին տարիներս վարում էին կոմունիստական դիմակի տակ ծածկված խալիլ փաշաները, Կազանի թաթարները, որոնք արտոնյալ դիրք ունեին Մոսկվայի ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատում, և իրենց կոմունիստ անվանող Բաքվի թաթարները։

Ռուս հասարակությունը, որ դեռ ցարական ժամանակաշրջանում անտեղյակ էր կովկասյան գործերից, հեղափոխության վերջին երեք տարիներում բոլորովին կտրված լինելով Անդրկովկասից, սկսեց ավելի քիչ բան հասկանալ Անդրկովկասում տեղի ունեցած անցքերից, առավել ևս Անդրկովկասի ծայրամաս Հայաստանից։ Բացի դրանից, անհեթեթ գաղափար ունեին կազմած և նրա դերի մասին, վերջին տարիներս, նույնիսկ խորհրդային կառավարության պատասխանատու ներկայացուցիչները։

Ինչ վերաբերվում է հայ կոմունիստներին, դրանց մի մասը Հայաստանից կտրված լինելու պատճառով նույնպես ոչ մի տեղեկություն չուներ Հայաստանի ու նրա ազգաբնակչության ծանր կացության մասին, իսկ մյուսներն էլ դեպի Դաշնակցությունը տածած ատելությունից կուրացած՝ դիտավորյալ չափազանցրած միտումնավոր լուրեր էին տարածում ի վնաս հարազատ երկրի։ Առանձնապես այդ ուղղությամբ ուժ էին տալիս Բաքվի, Վլադիկավկազի, Ռոստովի և այլ գավառական քաղաքների հայ կոմունիստները։ Պատվիրակությունը ստիպված էր շատ ժամանակ և աշխատանք վատնել, որպեսզի ցրի Հայաստանի ու

հայ ժողովրդի վրա հյուսված այդ ստերի ու բամբասանքների պատմությունը։

Հայերի և հայ կոմունիստների մեջ կարդացած մի շարք զեկուցումներից, տեղական թերթերում տված մի շարք հոդվածներից ու պաշտոնական զեկուցումներից հետո, պատվիրակությանը հաջողվեց նպաստավոր տրամադրություն ստեղծել Մոսկվայի հասարակական ու կառավարական շրջաններում և բռնել իսկական բույնը այն բոլոր ստերի, որ այնքան անպատկառորեն տարածել են կոմունիստ կոչեցյալ թուրքերն ու թաթարները՝ ռուս հասարակությունը մոլորեցնելու համար՝ նպատակ ունենալով ռուսական կարմիր բանակի օգնությամբ իրագործել իրենց հակահայկական ծրագրերը։ Այդ ծրագրերը իրագործելու համար, ինչպես հայտնի է, Բաքվի թաթարները սկզբում խորհրդային իշխանություն մտցրին Բաքվում. հայտարարելով իրենց բոլշևիկներ՝ սուլթանովներն ու նրանց ընկերները ռուսական կարմիր բանակի անվան տակ իրենց թաթարական ասկյարներից կազմված դնդեր մտցրին Ղարաբաղի խորքերը՝ բնաջնջելու համար հայ գյուղացիությունը, շարունակելով այն քաղաքականությունը, որ այնքան փայլուն կերպով սկսված էր նախքան բոլշևիկների գալը մուսավաթական կառավարության կողմից»*։

Մոսկվա հասնելուց հետո, Հայաստանի պատվիրակությունը անմիջապես տեսակցություն ունեցավ Չիչերինի հետ, և իսկույն սկսվեցին բանակցությունները։ Մայիսի 31-ին Շանթը ուղիղ հեռագրաթելով հաղորդում էր Երևան, թե բանակցություններն արդեն սկսված են և ընթանում են հաջող։ Խորհրդային Ռուսաստանի կողմից բանակցում է կարախանը։ Պատվիրակությունը տեսնվել է նաև արտաքին գործերի կոմիսար Չիչերինի հետ։ Խորհրդային կառավարությունը շարունակ կրկնում է, թե ինքը բնավ ցանկություն չունի Հայաստանում խորհրդային կարգեր մտցնելու։

Բանակցություններն ընթացան շատ հաջող։ Խորհրդային պատվիրակությունն ընդունեց Հայաստանի բոլոր պայմանները, և հունիսի 10-ին արդեն Շանթը հաղորդում էր Երևան, որ ռուս-հայկական դաշնագիրը կազմված է և մի երկու օրից կստորագրվի։ Խորհրդային Ռուսաստանը անվերապահ պատրաստակամություն հայտնեց ճանաչելու Հայաստանի անկախությունը և չմիջամտելու նրա ներքին գործերին։

Բայց 20 օր անցած, հուլիսի մեկին, Շանթը արդեն հեռագրում էր Երևան. «Հենց առաջին տեսակցությունից պարզվեց, որ միակ դժվարությունը Ազրբեջանի սահմանն է, որովհետև Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքումը։ Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջների արդար լինելը և չի փափագում գոհացում տալ Խորհրդային Ազրբեջանի և հայ բոլշևիկների բոլոր բաղձանքներին։ Այնուամենայնիվ վերջիններիս համար պնդումի և սուտ տեղեկությանց ազդեցության հետևանքով դաշնագրի կնքումը դանդաղում է։ Խորհրդային Ազրբեջանի կառավարիչները ցանկանում են օգտագործել ռուսական հեղինակությունից և ռուս զորքերի ներկայությունից՝ իրագործելու համար մուսավաթական ծրագիրը՝ զրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով ամրապնդելու համար իրենց դիրքը Թուրք ազգաբնակչության մեջ։ Ռուսաստանը ցանկանում է ստանձնել իրավարարի դեր հայ-թաթարական վեճը լուծելու համար։ Մոսկվայի կառավարությունը պատրաստակամություն է հայտնում Թուրքահայաստանի խնդրում հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի և Մուստաֆա Քեմալի միջև»։

Եվ Ազրբեջանի կոմունիստները Բաքվում գտնվող հայ կոմունիստների* աջակցությամբ հաջողեցին ազդել Մոսկվայի վրա, որ դաշնագրի ստորագրությունը Հայաստանի հետ հետաձգվի։

---

* Իսկ թե Մոսկվայում Երզնկյանն ու Փիրումյանը իրենք ինչպե՞ս են ներկայացրել Հայաստանը կամ ինչպե՞ս կատարել իրենց վրա դրված պարտականությունը Ղարաբաղի վերաբերմամբ, երևում է «Մշակի» № 14 և 16-ում տպված «Ինչպե՞ս պաշտպանեցին Ղարաբաղի շահերը» հոդվածից։ Արտագրենք հետևյալ կտորը. «Մի-երկու ամիս առաջ Ղարաբաղի կոմիտեն հանձնարարում էր Ար. Երզնկյանին և Սիմ. Փիրումյանին գնալ Մոսկվա և պաշտպանել խորհրդային կառավարության առաջ Ղարաբաղի հայության շահերը։ Թե ինչպե՞ս են կատարել Երզնկյանը և Փիրումյանը իրենց տրված հանձնարարությունը, ցույց է տալիս նրանց կողմից խորհրդային իշխանության ներկայացված և թարգմանելու արժանի զեկուցագիրը։ Նրա մեջ՝ Երզնկյանը և Փիրումյանը խեղաթյուրելով պատմական փաստերը՝ կաշվից դուրս են գալիս ապացուցելու, որ այս երկու-երեք տարվա ընթացքում Ղարաբաղը կռվել է մեծամասնական գաղափարների համար, սպասել է մեծամասնականներին և ոչ թե գլխավորապես արյուն է թափել արյունռուշտ Ազրբեջանից ազատվելու և Հայաստանին միանալու համար։ Արտակարգ հետաքրքրություն և ուշադրություն է գրավում այդ զեկուցագրի մեջ արտահայտված այն միտքը, թե Ղարաբաղի հայ գյուղացիությունը իր «յոթը համագումարներում, զենքը ձեռքին պաշտպանել է իր հողն ու ինքնորոշման իրավունքը՝ համարելով վատթարագույն դեպքում ավելի ընդունելի միանալ մանր բուրժուական Հայաստանին, քան. բուրժուական-կալվածատիրական Ազրբեջանին»։ Դուրս է գալիս, որ Ղարաբաղի հայ գյուղացիության համար չարիք է իր երկիրը Հայաստանին միացնելը»...

* Այդ ժամանակ Բաքուն հայ կոմունիստների կենտրոնն էր. այնտեղ էին, մայիսյան ապստամբությունից հետո, Հայաստանից փախած և Ռուսաստանի ու Կովկասի զանազան կողմերից հավաքված հայ բոլշևիկները՝ Միկոյան, Ավիս, Ս. Կասյան, Ա. Մռավյան և շատ ուրիշներ։ Այստեղ էր Հայաստանի կոմ. կուսակցության Կենտր. կոմիտեն։ Բաքվում և Ղազախում կազմվում էին հայկական զորամասեր, որոնք պիտի ծառայեցվեին Հայաստանը խորհրդայնացնելու համար։ Առհասարակ, հայ բոլշևիկները տենդոտ աշխատանք էին կատարում ընդդեմ Հայաստանի Հանրապետության։ Արևելյան ժողովուրդների համագումարին հայ կոմունիստները մասնակցեցին մի բազմամարդ պատգամավորությամբ։

Այնուհետև, դեպքերն ստացան զահավեժ ընթացք։ Բաքվի հայ և ազրբեջանցի կոմունիստները պատվիրակություն ուղարկեցին Մոսկվա, պահանջելու համար, որ խորհրդային իշխանությունը պայման չկնքի «դաշնակ» Հայաստանի հետ։ Մյուս կողմից, Ազրբեջանի հեղկոմը 11-րդ բանակի օգնությամբ միջոցներ ձեռք առավ՝ կանխելու համար Նախիջևանի գրավումը հայերից։ Հուլ. 5-ին 11-րդ բանակի մասերը մտան Գորիս և հետզհետե առաջ անցան մինչև Դարալագյազի սահմանները։ Մի ձիավոր գունդ շտապեց Նախիջևան։ Օգոս. 1-ին Դրոյի զորամասը Դարալագյազից դիմեց հակահարձակման և հետ գրավեց ամբողջ Զանգեզուրը։ Բոլշևիկները փախան խուճապահար՝ անլուր վայրագություններ գործելով ճանապարհին։ Այդ դեպքերի ժամանակ էր, որ սպանվեցին Վ. Խորենին, Ա. Շիրինյանը, Սաքոն և բազմաթիվ ուրիշ տեղական գործիչներ։ Նոր ուժեր ստանալով՝ բոլշևիկները վերադարձան, նորից գրավեցին Գորիսը և անցան Հանքերի կողմը, ուր, երեք շաբաթվա համառ կռիվներից հետո, գրավեցին ամբողջ Ղափանը։ Ազատ մնաց միայն Արևիքը։ Հայաստանի զորքերը հեռացան Զանգեզուրից։ Գ. Նժդեհը միայն մի խումբ մարտիկներով մնաց լեռներում։ Այսպիսով, Ղարաբաղ—Զանգեզուրը անցավ խորհրդային իշխանության ձեռքը, և բոլշևիկ ու հայ զորամասերի միջև կռիվներ սկսվեցին Նախիջևանի ճակատում։

Հուլ. մեկին Չիչերինը հեռագրեց Հայաստանի կառավարությանը, որ առաջարկում է բանակցությունները տեղափոխել Երևան և այդ նպատակով Մոսկվայից մեկնում է ընկ. Լեգրանը։ Վարչապետ Օհանջանյանը պատասխանեց, որ ինքը դեմ չէ այդ առաջարկին, բայց բանակցությունները կարող են սկսվել Շանթի պատվիրակության վերադարձից հետո։

Հուլ. 20-ին, Խալիլ փաշայի ընկերակցությամբ, Լեգրանը հասավ Բաքու և Ազրբեջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց հետո անցավ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Զանգեզուրում, Նախիջևանում և Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշևիկյան կռիվները դադարեցնելու նպատակով գումարվեց խորհրդաժողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Ջամալյանի ու Ա. Բաբալյանի և Լեգրանի միջև և օգոս. 10-ին ստորագրվեց հաշտության համաձայնագիր, որով օգոստոսի 10-ը ժամը 12-ից սկսած վերջ էին դնում պատերազմական գործողությունները խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Հայաստանի զորքերը գրավելու էին Շահթախթ—Խոկ—Ազնաբերդ—Սուլթանաբեգ և ապա Քիվկիից հյուսիս և Բազարչայից արևելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին հուլիսի 30-ին։ Խորհրդային Ռուսաստանի զորքերը պիտի գրավեին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան շրջանները։ Այդ գրավումով չէր նախորոշվում այդ գավառների վերջնական պատկանելությունը. այդ հարցը պիտի որոշվեր խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելիք դաշնագրով։ Մինչև այդ

դաշնագրի կնքումը Շահթախթ—Ջուլֆա երկաթուղին պիտի բանեցվեր Հայաստանի երկաթուղային վարչության կողմից*։

Սեպտ. 14-ին վերադարձավ Շանթի պատվիրակությունը, և միայն հոկտ. 11-ին Երևան եկավ Լեգրանը՝ պատվիրակության բոլոր անդամների հետ։ Նրա պատվիրակությունը բաղկացած էր 47 հոգուց, որոնց մեջ էին և Սահ. Տեր-Դաբրիելյանը, Աշ. Հովհաննիսյանը։ Հայաստանի կառավարությունը ցույց տվեց նրան փայլուն ընդունելություն։ Լեգրանին կայարանում ողջունեցին զինվ. նախ. օգնական զոր. Հախվերդյանը, արտաքին գործոց նախ. օգնականը, Շանթի պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը և ուրիշներ։ Երբ Լեգրանը դուրս եկավ վագոնից, զինվորական երաժշտախումբը նվագեց «Ինտերնացիոնալը», և զորքերը պատվի կեցան։ Լեգրանը անցավ զորաշարքի առջևով և ողջունեց զինվորներին։ Ու հանդիսավորությամբ անցավ քաղաք և նույն օրն ևեթ տեսակցություն ունեցավ վարչապետ Հ. Օհանջանյանի հետ։

Հաջորդ օր սկսվեցին բանակցությունները Լեգրանի և Շանթի միջև։

Հոկտ. 13-ին Լեգրանը ներկայացրեց մի շարք պահանջներ, որոնցից գլխավորներն էին՝ 1) հրաժարվել Սևրի դաշնագրից, 2) թույլ տալ խորհրդային զորքերին, իրենց ռազմամթերքով, անցնել Հայաստանի երկաթուղիներով ու խճուղիներով՝ միանալու համար Մուստաֆա Քեմալի զորքերին, դաշնակիցների հետ կռվելու նպատակով, 3) սահմանավեճը Հայաստանի և հարևանների միջև լուծել խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ։

Հայաստանի պատվիրակությունը վճռականապես մերժեց ընդունել առաջին կետը, իսկ մյուս բոլոր կետերի վերաբերմամբ կայացավ համաձայնություն և կազմվեց դաշնագրի նախագիծ, որով 1) խորհրդ. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի անկախությունը և ներքին անձեռնմխելիությունը, Հայաստանի մեջ պիտի մտներ և Զանգեզուրը,

---

* Բնորոշ է, որ օգ. 10-ի համաձայնությունը ահագին դժգոհություն առաջ բերեց Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչների մեջ։ Անգլիայի ներկայացուցիչ կոմանդոր Լիվքը մեզադրում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշնակիցներից և այլևս չպիտի կարողանա օգտվել նրանց օգնությունից, իսկ Ֆրանսիայի բարձր կոմիսար դը Մարտելը գտնում էր, որ հայերը անցնում են դաշնակիցների թշնամիների բանակը։ Դը Մարտելի դժգոհությունը մեծ էր և այն պատճառով, որ Հայաստանի կառավարությունը մերժել էր առնել Ֆրանսիայի վաշխառուական պայմանների առաջարկած զենքերն ու ռազմամթերքը։ Օգ. 31-ին Երևան գնաց կոմ. Լիվքը, ուր ընդունվեց հանդիսավորությամբ, և կառավարության հետ շփվելով ու գրությանը անձն ու տեղը ծանոթանալով համոզվեց, որ իր կասկածներն անհիմն են։ Նույն ժամանակ Լիվքը Հայաստանի կառավարությանը ներկայացրեց տնտեսական պայմանագրի մի նախագիծ՝ Հայաստանի նավահանգիստները և երկաթուղիները Անգլիային հանձնելու խմբագրով և առաջարկեց երեք օրվա ընթացքում ստորագրել։ Հայաստանի կառավարությանը մերժեց ստորագրել։

իսկ Ղարաբաղի և Նախիջևանի վիճակը պիտի որոշվեր իրավարարությամբ. 2) Խորհրդ. Ռուսաստանը իսկույն պետք է միջամտեր՝ կասեցնելու համար պատերազմը Հայաստանի և Թուրքիայի միջև. 1914 թ. սահմանի վրա պետք է ստեղծվեր չեզոք գոտի և հայ-թուրքական սահմանավեճը լուծվեր Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտությամբ. 3) Հայաստանը համաձայնվում էր թույլ տալ անցնելու իր ճանապարհներով ռուսական զորքերին. Հայաստանի վրայով դեպի Թուրքիա փոխադրվելիք զենքի 30 %-ը պետք է մնար Հայաստանում իբրև ինքնապաշտպանության միջոց. 4) Հայաստանն ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդությունը իր և հարևանների հողային վեճերը լուծելու համար. 5) Խորհրդ. Ռուսաստանը պետք է վճարեր Հայաստանին երկու և կես միլիոն ոսկի ռուբլի, պետք է բանար նավթային ճանապարհը, տար երկրագործական գործիքներ, հանձներ Մոսկվայում գտնվող էջմիածնական գույքերը, գրություններ տար Ռուսաստանի մի քանի կենտրոններում հավաքված հայ գրենական և գեղարվեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտոներ և աջակցեր հայ գաղթականների վերադարձին և այլն։

Համաձայնությունը երկուստեք կայացավ, և Լեգրանը մեկնեց Բաքու՝ ստանալու համար Մոսկվայի վերջնական հավանությունը, որից հետո պիտի վերադառնար Երևան, ուր և պիտի ստորագրվեր «բարեկամության և խաղաղության դաշինքը Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև»։ Գնաց, և այլևս դաշնագրի խոսքը չլսվեց։

ԳԼՈՒԽ ԼԱ

ՄՈՒՐՃԻ ԵՎ ՍԱԼԻ ՄԻՋԵՎ ՊԱՏԵՐԱԶՄ

Մինչ մի կողմից Թուրքիան Ազրբեջանի և բոլշևիկների միջոցով օղակում էր Հայաստանը, մյուս կողմից տենդագին պատրաստություններ էր տեսնում, որպեսզի զենքի ուժով վերացներ «հայկական սեպը»։ Օլթիի ածխահանքերի գրավումից հետո Անգորայի կառավարությունը դիմեց Հայաստանի կառավարությանը՝ պահանջելով հետ քաշել հայկական զորքերը։ Այդ առթիվ տեղի ունեցավ գրագրություն Թուրքիայի արտաքին գործոց կոմիսար Բեքիր Սամի բեյի և Հայաստանի արտաքին գործոց նախարարության միջև. Թուրքիան խոսում էր Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերի լեզվով, որ անհասկանալի էր Հայաստանում։

Ածխահանքերի գրավումը, իհարկե, սոսկ պատրվակ էր. Թուրքիան միջոցներ էր փնտրում՝ ստիպելու համար հայերին, որ հրաժարվեն Եվրոպայի միջամտությունից և այն դաշնագրից, որի նախագիծը կազմված էր Սան-Ռեմոյում և շուտով պիտի ստորագրվեր Սևրում։ Ընդհակառակը, հայերը հենց Եվրոպայի և այդ դաշնագրի հետ էին կապել իրենց հույսերը և ոչ մի հավատ չէին ընծայում անմիջական համաձայնությանը Թուրքիայի հետ։ Այդ գիտեին Թուրքերը և պատրաստվում էին՝ Սևրին հակադրել երկաթե բռունցք։

Այս տեսակետից պատմական արժեքավոր վավերագիր է Մուստաֆա Քեմալի ճառը, որ արտասանեց Ազգային մեծ ժողովում՝ պատգամավորների արած հարցապնդումի վրա. «էֆենդիներ,— ասում էր Մուստաֆա Քեմալը,— մայիսի 30-ին և հունիսի 4-ին Արևելյան բանակի հրամանատարի կողմից հետևյալ առաջարկներն էին եղած. 1) Կարինում գտնվող մեր պատվիրակության շուտափույթ մեկնումը դեպի Մոսկվա՝ Կարսի և Բաթումի ճամփով. 2) Հայաստանում տեղի ունեցող իսլամական ջարդերի դադարեցումը։ Որովհետև հայերը նպատակ ունեին առաջին իսկ առթիվ գրավել Կարինը. Բաթումի և Բրեստ-Լիտովսկի դաշնագրերով մեր բանակի տիրապետությունը հայկական բանակի դեմ արդեն ապահովված լինելով՝ պետք է, որ գրավենք Սարիղամիշի և Սողանլուի կիրճերը։ Այս առաջարկություններից մանավանդ վերջինը

քննելով՝ գործադրությունը հարմար նկատվեց և հունիսի 6-ին հրաման տրվեց, որպեսզի հարձակողականի համար պատրաստություն տեսնվի։

Նույն միջոցին Մոսկվայից վերադարձավ մեր պատվիրակներից մեկը՝ հետը բերելով Չիչերինի նամակները՝ ուղարկված նախարարներին և Ազգ. ժողովին։ Այդ նամակներով հայտնվում էր, որ Պարսկաստանի, Հայաստանի և Թուրքիայի սահմանների հարցը ռուս խորհրդային կառավարության միջամտությամբ դիվանագիտական միջոցներով կարգադրել կարելի լինելով՝ ռուս կառավարությունը չէր ուզի մեր հարձակողականներով խնդիրը լուծել։ Սակայն, մենք՝ նկատի ունենալով, որ երեք նահանգներում (Կարս, Օլթի և Արդահան) մեր գործողությունները Հայաստանի դեմ հարձակողական չեն նշանակում, արդեն իսկ մեր տված որոշումի մեջ որևէ հակասություն չնկատեցինք և հրամայեցինք մեր արևելյան հրամանատարության, որ կարելի եղածին չափ շուտ և արագ կերպով շարունակե հարձակողականը։

Մի քանի օր վերջը, պաշտոնապես հասած մի տեղեկության համաձայն, ռուս գործակալը Կարսի ճամփով այնտեղ պիտի գար։ Կարին հասնող մի ռուս գործակալ տեսակցություն ունեցավ մեր պատվիրակության հետ. այդ տեսակցությունից անմիջապես հետո ստիպված եղանք արգելել մեր հարձակողականները։

Բոլշևիկները իրենց ծրագրերը իրականացնելու համար Թուրք ժողովրդի մեծ օգտակարությունը գնահատելով՝ մեր աջակցությանը դիմեցին։ Նրանց առաջին ձեռնարկը եղավ 10-րդ և 11-րդ զորաբանակները կովկասյան ճակատ ղրկել։ Այս բանակները դյուրությամբ հաջողեցին անցնել Հյուսիսային Կովկաս և մտան Ազրբեջան՝ շնորհիվ մեր ընծայած դյուրությունների և առաջնորդության։ Ազրբեջանցիները մեծ հաճույքով դիմավորեցին այդ զորամասերին։ Այս բանակները մեկ կողմից Հայաստանի, մյուս կողմից էլ Վրաստանի դեմ հարկ եղած զինվորական միջոցներին ձեռնարկեցին։ Այս դեպքերը պատահեցին մայիսին, ճի՛շտ այն միջոցին, երբ բոլշևիկները լեհական ճակատի վրա սկսեցին պարտվել և ստիպված էին իրենց ուժերի մեծ մասը ղրկել լեհական ճակատ։ Նուրի փաշան, որ անգլիացիներից կաշառված էր, սկսեց բոլշևիկների դեմ ըմբոստություններ կազմակերպել, այդ պատճառով բոլշևիկները ստիպված եղան Գանձակի ըմբոստներին բնաջնջել և սաստել։

Հայերը՝ կարմիր բանակների իրենց սահմաններից քաշվելուց օգուտ քաղելով, հունիսին Օլթիի և Զանգեզուրի ուղղությամբ զինվորական գործողությունների ձեռնարկեցին։ Մեր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով Երևանում ձեռնարկներ արինք. մյուս կողմից ամեն վայրկյան հարձակման պատրաստ մեր բանակներով մի կարգ միջոցներ ձեռք առանք։ Հայերը հաջողեցին գրավել Օլթիի ածխահանքերը, որովհետև մեր ուժերը այդ կողմերը անբավարար էին անմիջապես այդ հարձակողականը կատարելու։ Սրա համար մեր բանակը ձախ

կողմից սահմանն անցնելով՝ աղահանքերի գիծը բռնեց և մյուս կողմից Բայազետից դեպի Զանգեզուր անցավ և դեպի Արաքս անցնող մեր ուժերի հետ միանալով՝ հաջողեց բոլոր կողմերից էլ առաջխաղացումը խափանել։

Օգոստոսի սկզբին հայերը զրահապատների միջոցով հաջողեցին գրավել մինչև Ջուլֆա երկաթուղագիծը։ Այդ գծի վրա մեր փոքրաքանակ զինվորները թվով մեծ բանակի առջև չեզմվելու համար հետ քաշվելու հրաման ստացան։ Մեր ուժերը քաշված են Արաքսի հյուսիսային կողմը»։

Այստեղից պարզ երևում է, որ դեռ հունիսին թուրքերը պատրաստվում էին հարձակվել Հայաստանի վրա։ Վայրկյանը շատ էր հարմար։ Հունաստանը կանգնեցրել էր արշավանքը Իզմիրի ճակատում, և Վենիզելոսը փորձեր էր անում հասկացողության գալու քեմալականների հետ։ Ֆրանսիան, Ֆրանկլեն Բույոնի միջոցով, փնտրում էր քեմալականների բարեկամությունը՝ անգամ Կիլիկիան պարպելու գնով։ Իտալիան բացահայտ կերպով օգնում էր Անատոլուի ըմբոստներին։ Մեծ օգնություն էր ցույց տալիս և Խորհրդ. Ռուսաստանը. «Բոլշևիկյան բանակը,— գրում էր օգոս. 16-ին Քյազիմ Կարաբեքիրը,— իր թշնամիներին քայքայելու և բնաջնջելու շրջանում է գտնվում։ Մեր ժողովուրդը վկա է մեր կովկասյան սահմանը։ Ի՞նչ դաշնակից բոլշևիկները անընդհատ մատակարարում են մեզ զենք ու ռազմամթերք։ Կարող ենք վստահ լինել, որ վատ օրերը մեզ համար անցել են արդեն»։

Սակայն, մասամբ բոլշևիկների ազդեցության տակ և մասամբ հունական ճակատի դեպքերի փոփոխության հետևանքով, այլևս այն պատճառով, որ Հայաստանի ձեռն ու ոտը փաստորեն կապված էր խորհրդային Ազրբեջանի և բոլշևիկների կողմից, գաղտ և ներքին հակամարտություններից դրդված՝ Մուստաֆա Քեմալը վարանում էր վճռական գործողությունների անցնելու։ Ընդհակառակը, Քյազիմ Կարաբեքիրը պահանջում էր անհապաղ պատերազմ հայտարարել Հայաստանին։ Բստ երևույթին, այս հողին վրա սուր տարակարծություն կար միլիտարական երկու պետերի միջև։ Այս տեսակետից, չափից ավելի հետաքրքրական վավերագիր է «Էնկիվրիի ազգային կառավարության սպայակույտի պետ գնդ. Իսմեթի» 1336 թ. (1920) օգոս. 1 նամակը՝ ուղղված «Նորին գերազանցության 15-րդ զորաբաժնի և հայկական ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշային».

«Ձերդ գերազանցություն,— գրում է Իսմեթը,— ներկայացուցչական ժողովը Մուստաֆա փաշայի նախագահության տակ, ծանոթանալով Ձեր և Սելահեդդին բեյի Ազգային մեծ ժողովին ներկայացրած հիմունքներին և գտնելով ամեն կասկածից դուրս ձեր հայրենասիրական զգացմունքները

մունքը, որ ապացուցված է ձեր գործերով էլ, հանձնարարեց ինձ միանգամ էլ հաղորդել ձեզ հետևյալը։

Ներկայացուցչական ժողովը, հակառակ մեր վիճակի թուլության այլև Հունաստանի հանկարծական հարձակման, պահելով հավատն ու պազարյունությունը՝ չի ընկճվում, որովհետև իրերի նման դրությունը նախատեսված էր դեռ Էրզրումի խորհրդաժողովից և համապատասխան միոցներ էլ ձեռք էին առնված։

Դուք տեսնում եք գրագրությունից, մեր և բարձր հրամանատարության միջև, որ այն դեպքերը, որոնք պիտի վճռեն մեր ժողովրդի և նույնիսկ ամբողջ մահմեդական աշխարհի և իսլամության ճակատագիրը պիտի ունենան եվրոպական, այլև կենտրոնական-ասիական նշանակություն։ Այդ երկրներում արյունը շարունակում է հոսել այժմ էլ։ Թուրք բանակը զոհերի գնով պետք է ապահովե մեր ժողովրդի ազատությունը, որ խոստացել է նրան։

Իրերի այս վիճակում բոլոր հայրենասերները, իմանալով ձեր անջատ գործունեության ձգտումը՝ վհատվում են։ Դուք գտնվում եք ըստ ամենայնի մեր հարգանքի և վստահության արժանի երկու զորաբաժինների գլուխը։ Մինչդեռ մեր թշնամիները, իրենց նզովյալ բարեկամների հետ, սպասում են մեր ուժերի պառակտման և մեր միության խախտման. նրանց ուրախացնում է ամեն մի երևույթ այդ ուղղությամբ։

Մենք հույս ունենք, որ դուք, որ անձնական և պաշտոնի պատվով երդվել եք հավատարիմ լինել Անատոլուի և Ռումելիայի պաշտպանության կոմիտեին և Ազգ. մեծ ժողովին, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ երկու հիմնարկությունների միությունը, թույլ չեք տա, որ այս դրությունը շարունակվի ապագայում էլ։ Քիչ է հավանական, որ Հայաստանը՝ զբաղված լինելով մեր դաշնակից Ազրբեջանի կողմից, ընդունակ լինի հարձակվելու ձեր շրջանի վրա։ Խալիլ փաշան, որ գտնվում է թուրք-ազրբեջանցի-ռուս ուժերի հրամանատարական կազմում, մեզ հանգստացնում է Մոսկվայից՝ հավաստիացնելով, որ Հայաստանը մեր սահմանների վրա հարձակվելու դեպքում սպառնական ուժի կհանդիպի իր թիկունքում։ Հետևաբար, հարկավոր է, որ ձեր հրամանատարության տակ գտնվող և թուրք բանակի պահեստի մասեր կազմող զորաբաժինները, թողնելով մի դիվիզիա հնարավոր անակնկալների համար, օգոստ. 1-ին մեկնեն հունական ուժերի դեմ և կենտրոնական ձեզ հայտնի վայրերում։ Ձեր չհնազանդվելը այս հրամանին շատ անբաղձալի ազդեցություն կունենա հունական ուժերի դեմ վճռական կռվի պատրաստվող զինվորների վրա։

Այն նկատումները, որոնցով Դուք հիմնավորում եք Ձեր անջատ ձգտումները, նկատի առնված են Ազգային մեծ ժողովի կողմից։ Ձեր առաջարկությունը, թե անհրաժեշտ է որոշ զինվորական շրջանակի մեջ մտցնել ոչ մի կարգապահության չենթարկվող ավազակների կազմակեր-

պության գործերը, ժողովի կողմից հավանություն է գտած և անհրաժեշտ կարգադրություններն այդ ուղղությամբ արված են հուլիսի 16-ին։ Մեծ ազգային ժողովը վճռեց նույնպես, որ Սելահեդդին բեյը մնա Սրվազի զորաբաժնի հրամանատար։

Այս պատմական վայրկյանին, երբ մենք շրջապատված ենք վրեժխնդիր թշնամիներով, Ձեր վրա է ընկնում դրության ծանրության պատասխանատվությունը։ Այդ ծանրությունը նմանը չունի պատմության մեջ և մեր ամբողջ հույսը ժողովրդի ինքնապահպանության զգացումի վրա է։ Ձեր անջատ ձգտումների պաշտպանությամբ, Դուք բաժանում-բաժան կանեք մեր ուժերը և կարժանանաք ապագա սերունդների անեծքին։

«Քանի որ, Ձեր բացատրությունները նկատողության առնված են ժողովի կողմից և մատնանշված միջոցները կիրառվում են, ես հավատացած եմ, որ Դուք չպիտի հրաժարվեք գործելու մեզ հետ համերաշխությամբ։ Հակառակ պարագային, Ձեր անջատ քայլերը, որոնց արդարացում չկա, կդիտվեն իբրև դավաճանություն։ Հաղորդում եմ Ձեզ նույնպես, որ բարձր հրամանատարությունը Ձեզանից սպասում է հեռագրական պատասխան երկու օրվա ընթացքում»*։

Այնուհետև ի՞նչ անցավ-դարձավ Անգորայի և Քյազիմ Կարաբեքիր փաշայի միջև։ Այդ մասին պատմում էր Պոլսի «Ժուրնալ դ'Օրիան» թերթ Անգորայի թղթակիցը, հոկտ. 19-ի համարում. «Ձեզ հավանորեն հայտնի չեն,— գրում էր նա,— այն պատրաստությունները, որոնք նախորդեցին Հայաստանի վրա հարձակում գործելու որոշման»։

Էրզրումի 15-րդ զորաբաժնի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը սեպտ. 7-ին հասավ Անգորա։ Հետևյալ օրը Մուստաֆա Քեմալի նախագահությամբ գումարվեց զինվորական գերագույն խորհուրդ, որին մասնակցեցին Ահմեդ Ֆեզի, Մուհեդդին Ալի Ֆուադ, Նիհատ, Նուրեդդին զորավարները և սպայակույտի պետ Իսմեթ բեյը։

Զորավար Քյազիմ Կարաբեքիրը զեկուցեց, թե անհրաժեշտ է Հայաստանի դեմ ընդհանուր հարձակում գործել, քանի որ բոլշևիկների հետ հարաբերվելու միակ գիծը հայերի կողմից թուրքական հողերի վրա գործվող ասպատակությունների պատճառով՝ սպառնում է թուրքերին ընդմիշտ կտրել բոլշևիկներից։

Զինվորական խորհուրդը դիմեց Կարաբեքիրին հետևյալ հարցով. ինքը ունի՞ բավական ուժ և հավատացա՞ծ է, որ քեմալական բանակը կատարյալ հաղթություն կունենա։

Քյազիմ Կարաբեքիրի տրամադրության տակ գտնվում է 4 դիվիզիա, որից երկուսը գտնվում է Ռեմզիի հրամանատարության ներքո։ Այս դիվիզիաներից յուրաքանչյուրը կլինի բաղկացած 8—9 հազար ա-

* Сводка Развед. Отд. Штаба Ком. Войсками Армении, 3 сент., 1920 г., № 31 (Приложение).

կյարից, որոնց կաջակցեն նաև քուրդ ու թուրք հրոսախմբերը։ Թուրքական հրետանին, ասում է Կարաբեքիրը, չնայած որ լրիվ չէ, բայց կարող է բավարարել արևելյան ճակատին։

Բայց և այնպես, Մուստաֆա Քեմալի համար դեռ մնում էր մի մութ կետ. Հայաստանի դեմ հարձակվելու դեպքում պետք էր գիտնալ, թե ի՞նչ դիրք կբռնե Վրաստանը, որը իր տրամադրության տակ ուներ, ինչպես հայտնի է, թեև փոքր, բայց լավ կազմակերպված բանակ։ Այս առթիվ բոլորովին ապահով լինելու համար Մուստաֆա Քեմալը ծածկագիր ռադիոյով դիմեց Բաքու, ուր գտնվում էր թուրքական պատվիրակությունը Արևելյան համագումարին մասնակցելու համար։ Անհրաժեշտ պատրաստությունները տեսնելուց հետո, Բաքվից Անգորա ստացվեց հետևյալ լակոնիկ պատասխանը. «Ճանապարհը բաց է»։ Ռեմզի փաշան, որ այնտեղ էր գտնվում, հանձն առավ հող պատրաստել Բաքվում և աշխատեց ազրբեջանյան-բոլշևիկյան շրջանները այդ հարցին կողմնակից դարձնել։ Մյուս կողմից, համագումարի անդամ երկրագործության նախկին նախարար Յուսուֆ Քեմալ բեյը ստանձնեց մի գաղտնի առաքելությունը Թիֆլիսում և Բաքվից անցավ Վրաստան։

Մի քանի օր հետո, քեմալական պատվիրակությունը Յուսուֆ Քեմալ բեյի նախագահությամբ, եկավ Թիֆլիս և իջավ «Օրիանտ» հյուրանոցը, ուր նախօրոք սենյակներ էին պահված այդ պատվիրակության համար։ Հաջորդ օրը, Յուսուֆ Քեմալ բեյը ընդունվեց Վրաստանի նախագահ Ժորդանիայի և հետո, անմիջապես՝ արտաքին գործոց նախարար Գեգեչկորիի կողմից։ Տեսակցությունը տևեց մի ժամից ավելի, որից հետո նրան ճաշ տրվեց Կովկասյան ակումբում։ Յուսուֆ Քեմալ բեյի պաշտոնը վերջացել էր հաջողությամբ։ Այդ պաշտոնը զուտ խորհրդակցական էր և շատ կարճ տևեց։ Երկու օր անց, խորհրդային դեսպան ընկ. Կիրովի հետ վերջին անգամ տեսակցելուց հետո, մեկնեց։

Ռեմզին անմիջապես իր 13 զորաբաժնի գլուխն անցավ և սեպտեմբերի 19-ին դիմեց դեպի սահման։ Զորքին հայտարարվեց, թե պատերազմը սկսված է։ Պատերազմական գործողությունները հետաձգվեցին մինչև Քյազիմ Կարաբեքիրի ինքնաշարժով հասնելը։ Վերջինս, ճանապարհ ընկնելուց առաջ, ծածկագիր ռադիոյով Բաքու հաղորդեց իր ծրագիրը։

«Բանակը պատրաստ էր գործողություններն սկսելու։ Սեպտ. 23-ին դիմեցին հարձակման»։

Եվ իսկապես, զարգացող դեպքերը կետ առ կետ արդարացրին «Ժուրնալ դ'Օրիանի» տեղեկությունները։ Սեպտ. 11-ին, Հայաստանի սպարապետի սպայակույտը հաղորդում էր.

«Օլթիի ուղղությամբ սեպտ. 9-ին, ժամը 14-ին, թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վոսկուտ սարի վրա. մեր հրետանին պատասխան տվեց։ Սեպտ. 10-ի գիշերը Վակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ 5005 բարձրության վրա և Ղարադաշ գյուղից երկու վերստի վրա գտնվող մեր պահակախմբերին, բայց հրետանիի և գնդացիրային կրակով հետ շպրտվեց։ Սեպտ. 10-ին, առավ. ժամը 8-ին թուրքական երկու սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ, և միաժամանակ թուրքերը Բարդուսի մոտ թնդանոթային կրակ բացին մեր դիրքերի վրա։ Մեր հրետանին պատասխանում էր։ Նույն օրը ժամը 15-ին կրկին երևացին թշնամու երկու սավառնակներ. թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների ուղղությամբ Քիրօղլի Բաշ սարի վրա։

Սեպտ. 9-ին ժամը 18 և 45 րոպեին, երկու օրվա կռիվներից հետո, մերոնք գրավեցին Կողբ գյուղը և աղահանքերը։ Առնված է մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային գործիք և այլ ռազմական ավար։ Մեր կորուստները աննշան են։ Փիրլու գյուղի մոտ, թշնամու հակագրոհը հետ վանելու ժամանակ, սպանված է Սասունի ձիավոր խմբերի պետ Մանուկը»։

Սեպտ. 13-ին թուրքական խոշոր ուժեր, անսպասելի կերպով, հարձակվեցին Սարիղամիշի հայ զորամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրավեցին 4-րդ մարտկոցի երկու լեռնային թնդանոթներ։ Տեղի ունեցավ կատաղի կռիվ հայկական 4-րդ գնդի և թուրքերի միջև, ուր առանձին համառություն ու քաջություն ցույց տվեց տեղակալ Գանթարջյանի գումարտակը։ Տաք և արյունահեղ կռիվներով մեր զորամասերը նահանջեցին և սեպտ. 14-ի առավոտյան ամրացան Բեգլի-Ահմեդի դիրքերում։ Ստիպված եղավ նահանջել և Կաղզվանի զորամասը (5-րդ գունդ, գնդ. Շաղուբարյանի) և գրավել Բեռնայի դիրքերը։ Հեռացավ և Կաղզվանի ազգարնակչությունը։ Համանման կռիվներ տեղի ունեցան և ուրիշ վայրերում, որոնց հետևանքով Կարսի ճակատը ստացավ հետևյալ պատկերը. Ղարախաչ լեռ—Նոր Սելիմի և Բեգլի Ահմեդի միջև գտնվող բարձունքը—Բեռնա գյուղ—Աղադավա լեռ։

Սեպտ. 23-ին, առանց պատերազմի հայտարարության, թուրքական բանակը դիմեց ընդհանուր հարձակման Հայաստանի դեմ։ Սկսվում էր հայ-թուրքական պատերազմը։

Ինչպես էին արդարացնում թուրքերն իրենց այդ հարձակումը։ Հոկտ. 23-ին Անգորայի կառավարությունը հրատարակեց հետևյալ հաղորդագրությունը.

«Անատոլուի գործակալությունը պարտք է համարում համաշխարհային հանրային կարծիքին տալ հետևյալ լուսաբանությունները այն կռիվների մասին, որոնք վերջերս սկսվեցին Կովկասում՝ միլլի ուժերի և հայ դաշնակ հրոսախմբերի միջև։

Հայաստանի Հանրապետության կազմությունից ի վեր Երևանի կառավարությունը նպատակ է դրել բնաջնջելու կամ ստիպելու գաղթել

երկրում հաստատված թուրքերին, որոնք հանրապետության ամբողջ ազգաբնակչության կեսն են կազմում։ Համառորեն ու կանոնավոր ծրագրով հետապնդված այս քաղաքականության նպատակն է եղել ընդարձակել ազգային հայրենիքը՝ թուրքերի մահով կամ փախուստով թափուր թողնված տեղերում ներգաղթած հայերի հաստատումով։

Օգտվելով այն հանգամանքից, որ մահմեդական ազգաբնակչությունը անզոր էր իր ձայնը լսելի դարձնելու արևմտյան աշխարհին՝ դաշնակները ամբողջ երկու տարի շարունակեցին իրենց ավերման գործը։ Երևանի Մահմեդական միության կազմած պաշտոնական վիճակագրությունների համաձայն, որ հաղորդագրված է և դաշնակից պետությունների Կովկասի և Պոլսի ներկայացուցիչներին՝ այդ փաստաթղթերը տակավին պիտի դանվեն նրանց «գործերի» մեջ, մինչև 1919 թ. վերջը միայն Հայաստանը կազմող գավառներում այրվել են 199 թուրքական գյուղեր և նրանց 135 000-ի հասնող բնակիչները բնաջնջվել են մեծ մասամբ և միայն մի փոքր մասին է հաջողվել ապաստան գտնել Ազրբեջանում, ուր Բաքվի մուսավաթական խորհրդարանը 260 միլիոն ռուբլի վարկ է քվեարկել նրանց կերակրելու համար։ Այդ գումարը կարող է որոշ գաղափար տալ դաշնակցական վայրագության զոհերի թվի և թշվառության մասին։

«Դաշնակները չբավականացան այդ բնաջնջումը կատարելով հանրապետության սահմաններից ներս. հայկական հրոսախմբերը թափանցեցին Ազրբեջանը և Ղարաբաղի գավառում այրեցին մոտ 50 թուրք գյուղեր՝ կոտորելով ամբողջ ազգաբնակչությունը։ Այդ ոճիրները պաշտոնապես հաղորդվեցին բոլոր դաշնակից պետություններին՝ Ազրբեջանի կառավարության կողմից։

Այդ հետևողական բնաջնջման ծրագիրը գործադրվեց նաև հանրապետությունից հարավ գտնվող շրջաններում։ Հայտարարելով ինքնորոշման իրավունքը, որ դաշնակից պետությունները իրականության մեջ միայն իրենց պաշտպանյալներին են թույլ տալիս, Կարսի շրջանում ապրող թուրքերը մերժեցին ընդունել հայկական տիրապետությունը։ Ջորավար Արամյանը (*) անցյալ տարի հրատարակել տվեց մի վերջնագիր՝ հրավիրելով նրանց 24 ժամվա ընթացքում ընդունել այդ տիրապետությունը։ Արդ՝ նախքան գյուղերին մեծ մասը այդ որոշման ծանոթանալու՝ տեղեկատվության միջոցների պակասության պատճառով՝ նյութական ժամանակ ունենալը, հայերը թնդանոթային հարվածներով հրդեհեցին ու քանդեցին այդ գյուղերից մոտ 40-ը։

Շնորհիվ այն դենքերի ու ռազմամթերքի, որ Ամերիկայի և Եվրոպայի իմպերիալիստները քրիստոնեության անունով առատորեն տալիս են դաշնակներին, այս վերջինները կարողացան կոտորածներն ու թալանները ծավալել մինչև օսմանյան սահմանները, և մեր ցեղակից ու կրոնակից եղբայրները սկսեցին հազարներով փախչել դեպի մեր

երկիրը։ Մեր սահմանագլխային գավառների բնակիչները՝ հուզված ու վրդովված այդքան ոճիրներից՝ մի քանի ամիս առաջ արդեն որոշել էին օգնության հասնել իրենց եղբայրներին և միայն կառավարության ձեռք առած միջոցներն էին, որ այն ժամանակ արգելեցին թուրք միլի ուժերին խիստ դաս տալ հայ հրոսախմբերին։ Բայց սրանք՝ իրենց գործը լրացնելով սահմանի այն կողմը՝ հանդգնությունը ունեցան անցնելու օսմանյան սահմանը և գործադրելու իրենց ավերման ձևերը՝ այն նպատակով, որ նախագահ Վիլսոնի որոշումներին սպասելով՝ ստեղծեն կատարված փաստ։ Սեպտ. 24-ին մեր սահմանագլխային դիրքերը, հանկարծ, հարձակում կրեցին. մեր զորքերը թշնամուն հաղթելուց հետո՝ հաղթականորեն հետապնդեցին նրանց Սարիղամիշի շրջանում, որ բնակեցված է բացառապես թուրքերով։ Մեր ձեռքն ընկած փաստաթղթերը ապացուցում են, որ հայկական հարձակումը նախապատրաստված է եղել մեծ խնամքով և նպատակ է ունեցել էրզրումի գրավումը։

Սահմանի մյուս կողմը մեր եղբայրներին կոտորող և մեր խաղ գյուղերին հուսալքում ու մահ բերող հայկական հրոսախմբերին հեռատպանդելը հանդիսանում է օրինական պաշտպանության մի հանգամանք և մեր ազգի համար կենսական իրավունք։ Թուրք ժողովուրդը ոչ մի հարձակողական նպատակներ չի սնուցանում ո՛չ հայ ժողովրդի, ո՛չ էլ որևէ այլ ժողովրդի նկատմամբ։ Թափված արյան պատասխանատվությունը ընկնում է միմիայն հայերի և նրանց իմպերիալիստ պաշտպանների վրա, որոնք հետապնդում են թուրք ազգը քայքայելու նպատակներ։

Դժվար չէ տեսնել, որ տրված բացատրությունները չէին համապատասխանում իրականությանը և որ թուրքերի իսկական նպատակը Հայաստանի քայքայումն ու Սևրի դաշնագրի ոչնչացումն էր։ Թուրքական հարձակողականը այդպես էլ հասկացվեց ամենքի կողմից։ Հայկական բոլոր շրջաններն անխտիր, ամեն տեղ, ցասումով ընդունեցին պատերազմի լուրը։ Ընդհանուր վրդովումի և դիմադրության վճռական կամքի արտահայտություն եղավ կառավարության կոչը ժողովրդին.

Հայաստանի բաղաքացիներին

«Քաղաքացինե՛ր, Հայաստանը նոր փորձությունների առաջ է կանգնած։ Տաճիկ փաշաները չեն ուզում հանգիստ թողնել մեզ. նրանք ձգտում են քար ու քանդ անել մեր երկիրը, բնաջնջել հայ ժողովրդին։

Սեպտեմբերի կեսերին կենտրոնանալով Մերդենեկի և Բարդուսի շրջաններում՝ տաճիկ զորքերը հարձակման դիմեցին։ Դաշտային աշխատանքների պատճառով մեր զինվորների մի մասը իրենց տները ցրված լինելով՝ մեր զորամասերը, համառ կռվից հետո, ստիպված եղան

նահանջել և գրավել ռազմագիտական նոր գիծ, որով ածխահանքերի շրջանը անցավ Թշնամու ձեռքը։

Սեպտ. 28-ի գիշերը տաճիկները ուժեղ հարձակման դիմեցին Փենեակի և Բարդուսի ճակատներում։ Մեր զորամասերը սաստիկ դիմադրություն ցույց տալով՝ ամրացան Վերիշենի բարձունքների վրա։ Նույն սեպտ. 23-ին տաճկական խոշոր ուժեր գրոհ տվին դեպի Կարաուրգան, որտեղից մեր զորքերը քաշվեցին Սողանլուխ լեռնաշղթան։ Հայտնի է դարձել, որ տաճիկների անմիջական նպատակն է կտրել Սարիղամիշ—Կարս երկաթուղին և ազատությունից զրկել Սարիղամիշի և Կաղզվանի զորքերն ու ժողովուրդը։ Անակնկալներից և զոհերից խուսափելու և ավելի հարմար դիրքեր գրավելու նպատակով՝ մեր հրամանատարությունը սեպտ. 29-ի գիշերը դատարկել էր Սարիղամիշն ու Կաղզվանը։

Ժողովուրդը նույնպես տեղափոխվել է անվնաս։ Նահանջը եղել է ռազմագիտական նպատակներով, կանոնավոր և առանց որևէ կորուստի։ Մեր զորքերի ոգին բարձր է։ Թշնամին հանդիպում է ամենաբուռն դիմադրության։ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում սկսված է ուժեղ շարժում հօգուտ երկրի պաշտպանության։ Ամեն կողմից հասնում են կամավորներ և վերադառնում են դասալիքները։ Դաշտային աշխատանքներով կլանված ժողովուրդը ոտքի է կանգնում։

Քաղաքացիներ, տեղեկացնելով ձեզ այս մասին՝ հանրապետության կառավարությունը հայտնում է, որ ինքը ձեռք է առնում ամեն միջոց՝ պետության անվտանգությունն ապահովելու համար և վստահ է, որ նենգ Թշնամին շուտով դուրս կշպրտվի մեր երկրից։ Այն ժողովուրդը, որ կարողացավ ձեռք բերել իր ազատությունը, որ դեռ նոր ճնշեց բոլշևիկյան խռովությունները, թույլ չի տա, որ տաճկական փաշաներին հաջողվի իրագործել իրենց դիվային ծրագրերը։ Հայաստանի կառավարությունը, իր հետ ունենալով հեղափոխական ժողովրդի կամքն ու վստահությունը, կանե այն, ինչ որ իրենից պահանջում է պատմական վայրկյանը։ Սակայն, ժողովուրդը ևս պետք է լարե իր բոլոր ուժերը։ Տաճիկ զորքերի առաջ մե՛կ անելիք է մնում միայն մեզ՝ ճաղթել կամ մեռնել։ Մենք պետք է հաղթենք։

Քաղաքացիներ, որքան և աննպաստ լինեն պայմանները, թողե՛ք ձեր անձնական գործերը։ Ամեն ոք և ամեն ինչ պե՛տք է հատկացվի ֆրոնտին։ Ո՛չ մի դասալիք չպիտի մնա Հայաստանում։ Ո՛չ մի երիտասարդ չպիտի նստի տանը։ Ամե՛ն ինչ զորքի համար։ Գյուղացի, բանվոր, մտավորական, պաշտոնյա, արհեստավոր, ուսանող, կանայք՝ բոլորդ պետք է նպաստեք մեր բանակին, որովհետև միա՛յն ամենքիս միահամուռ ջանքերով կխորտակվի փաշաների գարշելի բռնակալությունը, և Հայաստանը բոլորովին ազատ կլինի տաճիկ չովինիստների մղձավանջից։

Ոտքի՛, ժողովուրդ։

Կեցցե՛ Միացյալ և Անկախ Հայաստանը։

Հայաստանի Հանրապետության կառավարություն»

Կառավարության կոչը անմիջապես արձագանք գտավ բոլոր կողմերից։ Հրապարակային ժողովներ, բանաձևեր, թռուցիկներ, լրագրական հոդվածներ. ամենքը նեցուկ կանգնեցին կառավարության թիկունքում։ Իբրև նմուշ, առաջ բերենք Սոց.-հեղափոխ. կուսակցության Հայաստանի կոմիտեի հրատարակած կոչը հոկտ. 2-ին։

Կովով կխլես քո իրավունքը

«Ընկերնե՛ր։ Տաճիկ փաշաները, քուրդ ու թուրք հորդաների գլուխն անցած, ներս են խուժել մեր երկիրը։ Բազմահազար հայ գյուղացիներ Կարսի շրջանից տեղահան են եղած ու կրկին դրկել են «գաղթականի» ցուպը։ Հայ դեմոկրատիայի հաղիվ ապաքինված վերքը զարձյալ նոցուպը։ Հայ դեմոկրատիայի հաղիվ ապաքինված վերքը զարձյալ նորոգվել է, և առատորեն հոսում է արյունը նրա կրծքից։ Նորից մեր ֆիզիկական գոյության խնդիրն է դրված պատմության կշռաթաթի վրա։

Օրհասի այս ժամին Հայաստանի դեմոկրատիան մնացել է մենակ ու անօգնական։ Երկու տարվա քաղաքական անկախ կյանքի ընթացքում մենք չկարողացանք ունենալ դրսի այնպիսի բարեկամներ, որոնց օգնության վրա կարողանայինք հույս դնել վտանգի ժամին։ Չկան եվրոպական իմպերիալիստները, մեր այդ «հավատարիմ բարեկամները» ...ճաշկերույթների ժամանակ։ Չկան բարեկամներ և մեր հարևանների շարքերում։ Հայ դեմոկրատիան այսօր իր ուժերով է, որ պետք է ապահովե իր գոյությունը և հետ վանե արյունռուշտ Թշնամուն։

Այսօրվա հաջողության միակ պայմանը, ընկերներ, մեր դեմոկրատիայի բովանդակ ուժերի կազմակերպումն է հայրենիքի ինքնապաշտպանության գործի շուրջը։

Հայ քաղաքական կյանքի ձևավորման ու նրա սոցիալական բովանդակության շուրջը եղել են մեծ տարաձայնություններ մեր և Հայաստանի ղեկավար հոսանքի մեջ, որի հետևանքով ստեղծվել է ծանր ու գաղջ մթնոլորտ միակուռ ու միակամ գործունեության համար։

Բայց վտանգն այսօր սպառնում է հայ բազմատանջ դեմոկրատիայի ո՛չ միայն քաղաքական իդեալներին, այլ նաև նրա ֆիզիկական գոյությանը, և այդպիսի մոմենտում մենք պե՛տք է մոռանանք ամեն ինչ,

պե՛տք է բովանդակազուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին և նվիրվենք միայն և միայն մի գործի՝ ճակատի պաշտպանության։

Մեր կյանքի այս փլուզումի օրերին յուրաքանչյուր ազնիվ գործի աշխատանքը կրկնակի արժեք ունի։ Եվ այդպիսի մի մոմենտում սոցիալիստ-հեղափոխականը պետք է գտնվի առաջին շարքերում՝ իր անկաշառ կարողությունները ի սպաս դնելու հայրենիքի պաշտպանության գործին։

Դեպի՛, ճակատ, ընկերնե՛ր։

Դեպի՛ մեր իրավունքների ընձեռումը՝ հաղթական կռվում»։

Ռամկավարների Երևանի պաշտոնաթերթ «Հայաստանի ձայնը» գրում էր. «Ամբողջ հայությունը, առանց տատանվելու ոտքի պիտի կանգնի իր կրծքով պաշտպանելու տասնյակ հազարավոր նահատակներու արյունով գնված իր հայրենիքն ու ազատությունը։ Պիտի վճռական ու վերջնական հարված հասցնել մեր թշնամուն ու փութացնել իր օրհասականի մեջ ջղաձգորեն գալարվող թշնամու մահը։

Այս վախճանին հայ ժողովուրդը պիտի հասնի միայն մի ճանապարհով՝ ուժի դեմ ուժ հակադրելով։ Ատոր համար մենք ունենք ազգային հավաքական ուժ, կազմակերպված բանակ։ Պետք է հույս կտրել արտաքին միջոցներե և միջամտություններե, պետք է հենվիլ մեր սեփական հայ քաջարի բանակի վրա։ Հայ ժողովուրդը գիտակ է իր գոյության սպառնացող վտանգին. պետք է գիտակցի նույնպես և վստահի իր սեփական ուժին՝ իր հերոս բանակին։

Այս է միակ հնարավոր ճանապարհը։

Մեր վերջնական փրկությունը այս ճակատագրական կռվի հաջող ելքին կախում ունի։

Ուրեմն, հաղթության վստահությամբ դեպի՛ ընդհանուր աշխատանք։

Բոլո՛ր պիտանի ուժերու հավաքումն ու կենտրոնացում ճակատի և թիկունքի համար։

Համերաշխություն կուսակցական շրջաններու մեջ։

Ժողովուրդը պետության հետ»։

Եվ, իրոք, համերաշխությունը Հայաստանում և հայկական բոլոր խավերում դարձավ կատարյալ։ Ընդհանուր հուզումի և համերաշխության արտահայտություն եղավ և Թիֆլիսի բողոք-ցույցը հոկտ. 6-ին. «Մոտավորապես 10 000 հոգի,— հեռագրում էր կառավարության Հայաստանի Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեգզադյանը,— կազմված ազգաբնակչության բոլոր խավերից՝ այր, կին, բանվորներ, համքյարներ և աշակերտներ դրոշակներով և մակագրություններով՝ եկան կանգնեցին հայոց ներկայացուցչության շենքի առջև։ Հռետորների ճառերից հետո, ինձ հանձնեցին միտինգի որոշումը և խնդրեցին հաղորդել Հայաստանի կառավարությանը, որ միտինգի մասնակիցները

բոլորն էլ պատրաստ են ոտքի կանգնելու հայրենիքի պաշտպանության համար։ Տեսարանը սրտաշարժ դարձավ, իմ ճառի ժամանակ, երբ առաջարկեցի գլխարկները վերցնել ի հարգանս հայրենիքի պաշտպանության համար ընկածների հիշատակի, ցուցարարներն ինքնաբերաբար ծունկի իջան և դրոշակները խոնարհեցրին»...

Բոլոր պետությունների ներկայացուցչությունների առջև միտինգներ կազմելուց հետո ծովածավալ բազմությունը խռնվեց Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության առաջ։ Հուզումը հասավ իր գագաթնակետին։ Արտասանեցին սուր, հանդիմանական, կրակոտ ճառեր՝ ընդդեմ բոլշևիկ-բեմալական գործակցության։ Խոսեցին սոցիալիստ-հեղափոխական Թարխանյանը, վրահայոց Ազգ. խորհրդի նախագահ Թոփչյանը, վրաց ժողովրդական գվարդիայի պետ Ջուղելին, «Աշխատավորի» խմբագիր Կ. Ղազազյանը։ Մասնավորապես ուժեղ ճառ արտասանեց վերջինը, որ էլեկտրականացրեց ամենքին։

«Ընկերնե՛ր,— սկսեց նա,— Մեծ Արևելքի հեղափոխական աշխատավորության անունից եկել ենք այստեղ հարց տալու նրանց, ովքեր հավակնություն ունեն հեղափոխական անվանելու իրենց, մինչդեռ փաստորեն զազիր հակահեղափոխականների հետ են դաշնակցել։ Ի՞նչ իրավունքով կամ ո՞ր հեղափոխական ավանդի հիման վրա գալիս են նրանք մեր՝ Արևելքի աշխատավորության դիրքերը թուլացնելու, սոցիալիստական ո՞ր հասկացողությամբ համագործակցում են մեր երկրի տիրող դասակարգի՝ խաների, բեգերի, փաշաների հետ։ Մենք այսօր այստեղից բողոքում ենք, իբրև հեղափոխականներ նրանց դեմ, որոնք վարկաբեկում են հեղափոխությունը, զազիր գործ կատարում մեր իրականության մեջ և հարյուր հազարավոր անմեղ կյանքերի դահիճ էնվերփաշաներին, Թալեաթներին ձեռք մեկնում ու հեղափոխական կարմիր դրոշակով քողարկվում։

Դեմ առ դեմ կանգնած՝ մենք ուղղում ենք այս հարցը բոլշևիկներին և սպասում ենք պատասխանի։ Հեղափոխությունը վերածելով դիվանագիտության, սակարկելով սոցիալիզմը՝ այսօր նրանք Արևելքում երևան են գալիս իբրև աշխատավորության թշնամիներ, իբրև բարեկամ տիրող դասակարգի։ Սակայն, մոտ է այն օրը, երբ Արևելքը կբռնկվի հեղափոխական հրդեհով, բայց ո՛չ ձեր՝ Լենինի ու Թալեաթի, այլ մեր՝ տեղական հեղափոխականների ու հազարավոր նահատակների շնորհիվ։ Ապագա պատմությունը և ազատ աշխատանքը կասե իր խոսքը ձեր այսօրվա կատարած զազիր գործի համար»։

Պատշգամբ դուրս եկավ խորհրդային ներկայացուցիչ Ստարկը՝ շրջապատված յուրայիններով և սկսեց խոսել։ Նրա ամեն մի խոսքը ծածկվում էր սուլոցներով, «կորչի»-ներով, վրդովումի ու բողոքի արտահայտություններով։

«Դուք ուզում եք գիտնալ,— ասաց նա,— մեր վերաբերմունքը դեպի

Հայաստանի սահմաններում կատարվող դեպքերը (Ձայներ՝ «մենք գիտենք, պատասխանեցե՛ք, թե ի՞նչ է ձեր արածը»): Ես կպատասխանեմ։ Ռուսաստանի բանվորագյուղացիական հանրապետությունը իր գոյության հենց առաջին օրերից վճռեց ճանաչել ազգերի ինքնորոշումը, նույնիսկ մինչև անջատում և անկախություն (Ձայներ՝ «դրանք խոսքով էին, իսկ գործո՞վ»): Մենք այդ իրավունքը ճանաչեցինք ո՛չ միայն խոսքով, այլև գործով (Ձայներ՝ «սո՛ւտ է, փաստեր»): Համեցե՛ք փաստեր. մենք ճանաչեցինք Լատվիայի, Լիտվայի, Ֆինլանդիայի, Լեհաստանի անկախությունները (Ձայներ՝ «լավ ճանաչեցիք, երբ ձեր ատամները ջարդեցին»): Ճանաչեցինք Վրաստանի անկախությունը. ճանաչել ենք, ճանաչում ենք և կճանաչենք Հայաստանի անկախությունը, քանի որ այդպես է ցանկանում հայ աշխատավոր ժողովուրդը (Ձայներ՝ «էնվերը կնեղանա», «ձեր դաշնակից Մուստաֆա Քեմալ փաշան էլ ձեզ պես է ցանկանում և ճանաչում», «իսկ Ղարաբա՞ղը, Զանգեզո՞ւրը, Ղազախի դեպքե՞րը»: Մեկը հուժկու ձայնով՝ «շատ մի խոսիր, Ղարաբա՛ղը տուր»): Մեր քաղաքականությունը եղել է խաղաղության քաղաքականություն (ծիծաղ, սուլոց, ձայներ՝ «սո՛ւտ է, սո՛ւտ է»): Բազմաթիվ ճակատներում մեր թափած արյան մեղքը մերը չէ (Ձայներ՝ «ձե՛ր մեղքն է, մի օր կպատասխանեք ռուս ժողովրդին այդ արյան համար»): Այդ արյունը ընկնում է Անտանտի վրա։ (Ձայներ՝ «ո՛չ ձեր վրա, բոլշևիկներիդ վրա, ավազակնե՛ր»): Արևելքում մենք օգնում ենք և պաշտպանում ենք ճնշված ազգերը ընդդեմ Անտանտի։ Մեզ համար թանկ են հայ աշխատավոր զանգվածների շահերը (Ձայներ՝ «սո՛ւտ է, մի՛ վիրավորեք այդ ժողովրդին»): Թանկ են և Պարսկաստանի, Հնդկաստանի և Տաճկաստանի աշխատավորության շահերը։ (Ձայներ՝ «ո՛չ թանկ են ձեզ համար էնվեր փաշաների ու բեգերի շահերը»): Բայց Դաշնակցությունը իմպերիալիստների կողմն է բռնել և Հայաստանը դարձնում է զենք Անտանտի ձեռքին։ (Ձայներ՝ «սո՛ւտ եք ասում, Դաշնակցությունը ինքը հայ աշխատավորությունն է»)։ Հայ ժողովուրդը պետք է ընտրի երկուսից մեկը՝ ցանկանում է լինել մե՞զ հետ (ձայներ՝ «հայ ժողովուրդը էնվեր չէ»), թե՞ շարունակել հին քաղաքականությունը։ Երկու ամիս առաջ մենք մեր միջնորդությունը առաջարկեցինք Հայաստանին և Տաճկաստանին։ (Ձայներ՝ «սուտ եք խոսում, ձեր միջնորդությունը արտահայտվեց Ղարաբաղում, Զանգեզուրում, Ղազախում, Նախիջևանում»)։ Հայաստանը մինչև այսօր չի պատասխանել, իսկ Տաճկաստանը համաձայնվեց (սուլոցներ, «կորչի»-ներ): Իմ կառավարությունը այսօր էլ նույն վճռի վրա է։ Ահա իմ պատասխանը»։

Սուլոցների, անվերջ «կորչի»-ների և սպառնական աղաղակների տարափի տակ Ստարկը թողեց պատշգամբը, իսկ միտինգը դեռ երկար շարունակվում էր խորհրդային ներկայացուցչության պատուհանների տակ։

Նույն անվերապահ թշնամանքով ընդունեցին պատերազմի լուրը և վրաց քաղաքական շրջանները, բացի ծայրահեղ ազգայնականներից, որոնք Քեմալի հարձակումը համարում էին հարմար առիթ լուծելու համար Լոռիի և Ախալքալաքի հարցերը. «Որ Քեմալ փաշան Հայաստանը ատում է,— գրում էր կառավարական կուսակցության «Էրթոբադ» թերթը (№ 227Թ),— այդ ոչ ոքի համար գաղտնիք չէ։ Բայց մենք չէինք կարծում, որ կոմունիստները այն աստիճան կստորանային, որ իրենց ձեռքը կմեկնեին այդ մարդուն՝ վերջին պատերազմի ընթացքում սարսափելի մերկությամբ հանդես եկած իր մարդակերությամբ և բռնակալությամբ... Այսօր ռուսական իմպերիալիզմի մերկանալն ու Թուրքիայի հետ բարեկամանալը անվիճելի փաստ է... Ինչո՞վ կարելի է արդարացնել Քեմալի հարձակումը. միմիայն նրա վայրենի դիտավորություններով։ Ինչպիսի՞ դրդապատճառներ են գործի մղում նրան. միմիայն ատելությունը դեպի Հայաստանը»։ «Թուրքերը նպատակ ունեն Կարս—Սարիղամիշի ուղղությամբ,— գրում էր «Բորբան»,— ամբողջ Հայաստանի վրայով միանալ բոլշևիկներին։ Հայ ժողովրդին, Հայաստանին անմիջապես վտանգ է սպառնում։ Մենք պարտավոր ենք հուժկու ձայն բարձրացնել հայ ժողովրդի ինքնապաշտպանության իրավունքի համար... Եթե Քեմալին հաջողվի իրագործել իր ծրագիրը, այն ժամանակ Վրաստանը օղակված կլինի քեմալական-բոլշևիկյան ուժերով»։ Նույնն էր ասում և ազգ.-դեմ. «Սաքարթվելոն». «Ընդհանուր վտանգը թելադրում է Հայաստանին ու Վրաստանին լարել բոլոր եռանդն ու պահպանել ազգային ազատությունը, որ մեր լավագույն զավակների արյունով է ձեռք բերված։ Դավադիր թշնամին վռնդելու համար մենք զինվորական դաշինք պետք է կապենք... Վրաստանի և Հայաստանի զինվորական դաշինքի հարցը պետք է մեր ընթացիկ քաղաքականության հարցը դառնա»։ Նմանապես և սոց.-ֆեդ. «Սախալխո Սաքմեն». «Հայաստանի դժբախտությունը մեր՝ Վրաստանի դժբախտությունն է. բռնապետական բռունցքը միայն Հայաստանին հարվածելու նպատակով չէ բարձրացած, այլև Վրաստանի կուրծքը ջախջախելու համար է պինդ սեղմված։ Հայաստանի դեմ ուղղված սուրը Վրաստանի ազատությանն էլ է մահացու հարված սպառնում»։

— Ընդհակառակը, Թուրքերի հարձակումը Հայաստանի վրա անխառն հրճվանք առաջ բերեց բոլշևիկների շարքերում։ Վրաստանի կոմկուսի պաշտոնաթերթ «Կոմունիստը» (հոկտ. 24), Թուրքերի առաջխաղացման առթիվ գրում էր ցնծությամբ. «Մնում է միայն ուրախանալ, որ դաշնակցական Հայաստանը գտնվում է այն պոզահարող կովի դրության մեջ, որին Աստված եղջյուրներ չի տվել»։ Բաքվի «Կոմունիստը» բուռն խմբագրականներ էր գրում ի նպաստ Մուստաֆա Քեմալի և ընդդեմ Հայաստանի։ Պակաս չէին մնում և հայ կոմունիստները. նրանք ևս շարունակում էին կատաղի հարձակումները Հայաստանի վրա և աշխա-

տում էին վարկաբեկել Հայաստանի կառավարությունը հաշս Խորհրդային Ռուսաստանի։ Այս տեսակետից պերճախոս մարդկային վավերագիր է հետևյալ կոչը՝ ամբողջ աշխարհին, որ հրատարակվեց Բաքվի «Կոմունիստի» հակտ. 8 համարում։

«Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանվորներին և գյուղացիներին, Կոմունիստական ինտերնացիոնալին, Արհեստակցական միությունների Միջազգային խորհրդին և Գործունեության ու Պրոպագանդի խորհրդին.

Ալեկոծվող Արևելքի սրտում, Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանվորագյուղացիական լայն զանգվածների համար աննկատելի կերպով, միջազգային իմպերիալիզմի գործակալների — դաշնակների ողորմելի ավազակների կառավարությունը գնդակահարում է Հայաստանի լավագույն զավակներին — կոմունիստական կուսակցության և արհեստակցական միության անդամներին։ Հայաստանի բանտերը լի են կոմունիստներով և ապստամբված բանվորներով ու գյուղացիներով։

Լայն զանգվածների աչքում սնանկացած, բայց ազգայնական պատերազմների փորձով հմուտ «Դաշնակցություն» կուսակցությունը՝ ժամանակավոր հաղթություն տանելով ապստամբ բանվորագյուղացիական զանգվածների վրա, բռնություններ գործ դնելով մահմեդական խաղաղ զանգվածների դեմ, այժմ հաշիվ է տեսնում Հայաստանի ապստամբված բանվորների ու գյուղացիների և նրանց ղեկավարների՝ կոմունիստների հետ։

Հայաստանի կառավարությունը հաճեց նորից ու նորից տաքանալ արյունով՝ այս անգամ կռվելով նրանց դեմ, ովքեր ուզում էին բանվորագյուղացիական Հայաստանը խլել նրա արյունոտ ձեռքերից, որպեսզի հաղորդակից անեն նրան աշխատանքի և կապիտալի միջև մղվող մեծ կռվին։

Հայաստանի մռայլ ու խոնավ բանտերը, որոնք ոչ քիչ կյանքեր խլեցին արյունալի ցարի օրով, վերածվել են կառավարական տաճարների, ուր մաուզերիստները արյունալի խնջույքներ են սարքում Հայաստանի կոմունիստների նկատմամբ։ Հայաստանի ներսում կոմունիստական բանվորական շարժումը հաղթահարելով միայն դաշնակները կարողացան Հայաստանը վերածել իմպերիալիստների համար հուսալի մի հենարանի՝ Արևելքի հեղափոխության դեմ կռվելու համար։

Այն ժամանակ, երբ ամբողջ Արևելքը բռնված է ապստամբության բոցով, երբ Արևելքի ժողովուրդների համագումարը երդվեցնում էր արևելյան ժողովուրդներին ոտքի կանգնելու Կոմունիստական ինտերնացիոնալի դրոշակի տակ, միջազգային իմպերիալիզմի դեմ վերջին վճռական կռիվը մղելու համար, այդ ժամանակ Հայաստանի սպիտակ ավազակային կառավարությունը, հրով ու սրով չափելով ամբողջ հեղափոխական Հայաստանը, քայքայելով բոլոր բանվորական արհեստակցական կազմակերպությունները, անգլո-ամերիկյան իմպերիալիստների հետ միասին նոր Գողգոթա է պատրաստում Արևելքի հեղափոխական զանգվածներին։

Սակայն, ո՛չ կոմունիստական շարժումը Հայաստանում, ո՛չ էլ, մանավանդ, Արևելքի ժողովուրդների հեղափոխական շարժումը ոչ մի րոպե չեն կասեցնի իրենց հաղթական արշավը։ Ընդհակառակը, արհեստով դահիճների ձեռքով ընկած ընկերներ Ալլահվերդովի, Ղարիբջանովի, Ղուկասի և ուրիշ շատ շատերի մահը, տասնյակ ու հարյուրավոր տպրատամբների մահացումը Հայաստանի խուլ ձորերում, լավագույն ապացույցն է, որ «խաղաղեցված Հայաստանը» իր մեջ թաքցնում է ներքին հեղափոխական ուժ, որ որոշ պատմական րոպեին դարձյալ կռիվ կսկսի, որպեսզի երկրի երեսից վերացնե պատմության ընթացքը հրով ու սրով կասեցնել ձգտողներին։

Մենք ուխտել ենք տալիս Հայաստանի արյունաքամ եղած բանվորագյուղացիական զանգվածներին, չենթարկվել ավազակային խմբերի ցածրդի պրովոկացիային, այլ համառորեն ու համբերությամբ հավաքել իրենց ցան ու ցիր եղած ուժերը իրենց դասակարգային մարմինների շուրջ արթուն ունկնդրել կոմունիստական կուսակցության ձայնին, որի լավագույն անդամները իրենց հերոսական մահով բացին ազատագրման ճամփան։

Մենք դիմում ենք Խորհրդային Ազրբեջանի բոլոր բանվորական կազմակերպություններին, Կոմունիստական ինտերնացիոնալին, Գործունեության ու Պրոպագանդի խորհրդին և Արհեստակցական միությունների Միջազգային խորհրդին՝ մեզ հետ միասին բողոքի ձայն բարձրացնելու Հայաստանում իշխող սպիտակ տեռորի դեմ։

Թո՛ղ իմանան դեղին Ինտերնացիոնալի սոցիալ-դավաճանները, որոնք Թիֆլիս եկան և սրտազեղ ընդունելություն գտան իրենց բարեկամների՝ դաշնակների ու մենշևիկների կողմից, որ այդ երկրների երևութական բարօրությունն ու անդորրությունը պահվում է ահաբեկումով ու հեղափոխականների դաժան սպանումով, Հայաստանի խոնավ բանտերում, կալանավորված հարյուրավոր բանվորների ու գյուղացիների տառապանքներով ու քաղցով։

Մա՛հ Հայաստանի բանվորների ու գյուղացիների վրա բռնություն կատարողներին։

Կեցցե՛ հեղափոխական Արևելքը։

Կեցցե՛ Ինտերնացիոնալը։

Հայաստանի կոմունիստ. կուսակց. կենտր. կոմիտե։ Ազրբեջանի Արհեստ. միությունների խորհրդին կից գտնվող Արհեստակցական միու-

թյուններ արևելյան բյուրո։ Նախագահություն Ազրբեջանի Արհեստակցական միություններ խորհրդի»։

Իսկ ի՞նչ վերաբերում ունեին դեպի Թուրքական հարձակումը դաշնակիցները։ Դեռ օգոստ. 8-ին, Հայաստանի կառավարությունը շրջաբերական հայտագիր էր ուղղել բոլոր դաշնակից պետությունների կովկասյան ներկայացուցիչներին՝ ցույց տալով, որ քեմալականները ձգտում են Հայաստանի վրայով միանալ բոլշևիկների հետ և նրանց օգնությամբ շարունակել պայքարը դաշնակիցների դեմ։ Հայաստանի կառավարությունը փաստերով հաստատել էր, որ բոլշևիկներն ու քեմալականները Ազրբեջանն ու Պարսկաստանը դարձնում են իրենց անմիջական գործունեության վայր և որ բոլշևիկ համիսլամական-համաթուրքական ծովի մեջ միայն Հայաստանն է մնացել մի փոքրիկ օազիս, որը հեշտությամբ ոտքի տակ կերթա, եթե դաշնակիցներից լուրջ օգնություն չստանա։ Ոչ մի շոշափելի օգնություն չստացվեց դաշնակիցներից, եթե չհաշվենք Անգլիայի ծախած մեկ միլիոն ոսկու ռազմամթերքն ու զինվորական հագուստը։ Պատերազմը սկսելուց հետո, Հայաստանի կառավարությունը նորից դիմեց դաշնակիցներին։ Պատասխանը եղավ նույնը. համակրական խոսքեր և ոչ մի գործնական օգնություն։

Այսպիսի պայմաններում սկսվեց Թուրք-հայկական պատերազմը. Հայաստանը բառիս բուն նշանակությամբ մնացել էր մենակ։ Նա բոլորովին պատրաստ չէր այդ պատերազմին։ Դեռ նոր էր դուրս եկել ներքին քաղաքացիական կռիվների շրջանից։ Մայիսյան բոլշևիկյան շարժումները գրեթե կազմալուծել էին նրա բանակը. Թուրքական շրջանների նվաճման գործողությունները ավելի ևս թուլացրել էին երկրի մարտական ուժերը։ Ազրբեջանը նավթ չէր տալիս և Հայաստանի երկաթուղին հազիվ շունչ էր քաշում։ Բոլշևիկյան հարձակումները Ղազախի, Բասարգեչարի, Դարալագյազի և Շարուրի շրջաններում անընդհատ ջղային վիճակի մեջ էին պահում Հայաստանը և ստիպում, որ հայկական զորքերը մնան ցրված վիճակի մեջ։ Բացի այդ, ժողովուրդը զբաղված էր բերքը հավաքելով. անձրևոտ եղանակի պատճառով հունձքը վերջացավ ուշ և ամեն ոք շտապում էր կալսել ու պատրաստել իր ձմեռվա պաշարը։ Զինվորական իշխանությունը թույլ էր տվել, որ բանակի զինվորների մի մասը գնա տուն դաշտային աշխատանքներ կատարելու համար։ Թուրքերի ընդհանուր հարձակումը հանկարծակի բերեց հայկական բարձր հրամանատարությանը։ Ամբողջ ճակատի վրա, Սուրմալուից մինչև Օլթի, պատերազմը սկսվելուց առաջ, հայկական ուժերի թիվը վեց հազարից չէր անցնում, որից շուրջ 2500 Սուրմալուում, մնացածը՝ Կարսի ճակատի վրա։

Իսկ այդ ժամանակ ի՞նչ ուժ ունեին Թուրքերը։ Համաձայն Հայաստանի սպարապետի սպայակույտի հետախուզական բաժնի հուլիսի 6 տեղեկության* Թուրքական բանակը Հայաստանի սահմանի վրա հետևյալ կերպով էր դասավորված. 15-րդ կորպուս՝ հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշա։ Էրզրումում գտնվում էր 17-րդ գունդը և 9-րդ դիվիզիայի սպայակույտը — հրամանատար՝ Ռուշտի բեյ։ Հասան Ղալայում գտնվում էր 28-րդ գնդի կենտրոնը և չորս լեռնային թնդանոթ. Թորթումում՝ 28-րդ գնդի երկու գումարտակ. Բարդուսում՝ 28-րդ գնդի մեկ գումարտակ և 20-րդ գնդի մասեր. Խորասանում՝ 12-րդ դիվիզիայի սպայակույտը — հրամանատար Խալիլ բեյ. Զիվինում՝ 34-րդ գունդը. Քյոփրիքեոյում՝ 35-րդ գունդը. Ալաշկերտում՝ 36-րդ գունդը։ Օլթիի ուղղությամբ շարժվում էր Խալիլ բեյի երրորդ դիվիզիան՝ 7, 8 և 11-րդ գնդերը։ Տրապիզոնի և Էրզրումի միջև նկատված էին 31-րդ դիվիզիայի մասերը։ 11-րդ դիվիզիայի կենտրոնը, ինչպես և 18-րդ գունդը՝ Բայազետում. 32-րդ գունդը՝ Վանում. 30-րդ գունդը՝ Բայազետ-Արշայում։ Բացի այդ Մերգենեկի շրջանում կային 1200 հոգի անկանոն կովողներ. Օլթիում՝ 350 ժանդարմներ. Օլթիից դեպի հյուսիս՝ 1500 հոգանոց չեթա. Հասան-Ղալայում՝ 1600 կամավորներ. Տրապիզոնում՝ 300 ժանդարմներ. Լազիստանում՝ լազ կամավորներ։

«Թանի» զինվորական թղթակցի ասելով, 1920 թ. ամառվա վերջը, արևելյան նահանգներում Թուրքերն ունեին 3-րդ, 13-րդ և 15-րդ կորպուսները—ընդամենը՝ 50 000 հետևակ, 2 600 այրուձի և 306 հին ձևի թնդանոթ։ Ուրիշ զինվորական հեղինակություններ Հայաստանի դեմ գործող Թուրք բանակը ցույց էին տալիս՝ 3-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ և խառն դիվիզիաները, երկու աշիրեթական գնդեր, մի բրիգադ այրուձի, այսպես կոչված ազրբեջանյան ձիավոր հարյուրյակը, թրքական և քրդական հրոսախմբեր և այլն։ Կանոնավոր զորքերի թիվը հասնում էր 28 000-ի, որից 3 000 ձիավոր։ Զորքը պարենավորված էր շատ լավ, ուներ առատ ռազմամթերք, տաք հագուստ, որ ստանում էր իտալացիներից, ֆրանսիացիներից և Խորհրդ. Ռուսաստանից։

Նման անհավասար պայմաններում սկսվեց պատերազմը։ Հայաստանը լարեց իր բոլոր ուժերը։ Սեպտ. 30-ին, կառավարությունը արտակարգ նիստում, երկիրը հայտարարեց պատերազմական դրության մեջ։ Մինչև 35 տարեկանները զենքի տակ առավ։ Խիստ օրենքներ սահմանեց դասալիքների դեմ։ Զինվորական նախարարությանը տվեց արտակարգ լիազորություններ, նրան ենթարկեց երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրության միջոցները։ Որոշեց, արագացնելու համար կառավարության գործունեությունը և շրջաններում հեղինակավոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով, նախարարների մի մասին և

* Секретная сводка развед. отд. шт.-ком войсками Армении, 6 июля, 1920 г., № 20.

մի շարք գործիչներ ռազմաճակատ և գավառներ ուղարկել։ Ալեքսանդրապոլ ուղարկվեցին Ա. Ջամալյանը և Գ. Ղազարյանը, Կարս՝ Ս. Վրացյանը և Ա. Բաբալյանը, Սուրմալու՝ Ս. Արարատյանը, Իջևան՝ Ա. Գուլխանդանյանը, Նոր Բայազետ՝ Ս. Մելիք-Յոլչյանը, Աշտարակ՝ խորհրդարանի անդամներ՝ Հ. Տեր-Հակոբյանը և Հ. Տերտերյանը։ Կենտրոնում մնացին՝ Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր-Մինասյանը։ Կառավարությունը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին։ Զինվորական նախարարի հրամանով Երևանի և Կարսի հրապարակներում կանգնեցրեց կախաղաններ։ Կառավարության հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը դիմադրելու համար իր թշնամուն։

Արտասահմանյան հասարակության մեջ այն կարծիքն է տիրում, որ թուրքերը, առանց որևէ արգելքի հանդիպելու, հաղթեցին հայերին, որ հայկական բանակը ոչ մի դիմադրություն ցույց չտվեց։ Այս կարծիքը արդյունք է բացարձակ տգիտության։ Ընդհակառակը, եթե հայ բանակի մի մասը չգտնվեց իր կոչման բարձրության վրա, մյուս մասը ցույց տվեց անձնազոհության, անվեհերության և հայրենասիրության սքանչելի օրինակներ։ Հայ-թուրքական վերջին պատերազմի պատմությունը, որը դեռ իր պատմաբանին է սպասում, կբանա մեր առջևը շատ ուսանելի էջեր, որոնք թուլության և անկազմակերպության կողքին ցույց կտան պետական գիտակցության և ռազմական կարողության շքեղ օրինակներ։ Մասնավորապես բուռն կռիվներ տեղի ունեցան Սուրմալուի ճակատում. իրենց հարձակումը թուրքերը սկսեցին երկու ուղղությամբ։ Քյազիմ Կարաբեքիրի ուժերի մի մասը շարժվեց Կարսի ճակատում. մյուս մասը՝ մի դիվիզիա հետևակ, մոտ 2 000 քուրդ խուժան, 8 թնդանոթ, ձիավոր մասեր, ուղղվեցին դեպի Սուրմալու, ըստ երևույթին կամենալով արագ հարվածով գրավել մինչև Արաքս և հարվածի տակ առնել Երևանը։ Իգդիրի ճակատի ընդհանուր հրամանատար նշանակվեց Դրոն, որի ձեռքի տակ կային 9-րդ գունդը — 1 200 հետևակ, 25 ձիավոր, 16 գնդացիր, հրամանատար՝ գնդապետ Խուդաբաշյան. 8-րդ գունդը — 600 հետևակ, 40 ձիավոր, 8 գնդացիր, հրամանատար՝ Տ. Բաղդասարյան. էքսպեդիցիոն զորամասը — 5 վաշտ — 500 հետևակ, 16 բեռնակիր և 8 ձեռքի գնդացիր. Կուռո Թարխանյանի այրուձին 260 ձիավոր, 6 գնդացիր։ Հոկտեմբեր 1-ին 8-րդ գունդը փոխադրվեց Կարսի ճակատ, որ Սեպուհի բրիգադի մի մասն էր. դրա փոխարեն նոր լրացումներ եղան, որով ամբողջ Սուրմալուի զորամասի թիվը հասավ մինչև 2 000 հոգի։ Զորամասը շատ լավ կազմակերպված ու պարենավորված էր. բոլոր մասերը կապված էին իրար և կենտրոնի հետ հեռախոսով. սերտ հարաբերություն էր ստեղծված և զորամասի ու ազգաբնակչության, ինչպես և էջմիածնի գավառային ինքնավարության միջև։ Այս վերջինս էր վարում Սուրմալուի զորամասի պարենավորման գործը. ինչպես

նաև շատ հաջողությամբ կատարեց Սուրմալուի ազգաբնակչության տեղափոխությունը։

Հոկտեմբեր 20-ից սկսած, թուրքերը գործոն շարժումներ կատարեցին Սուրմալուի ճակատում։ Նրանք հարձակվեցին Կարաբուլաղ և Սոգութլի գյուղերի վրա։ Հոկտ. 20-ի ամբողջ օրը տեղի ունեցան տաք կռիվներ. թնդանոթները երկու կողմից որոտում էին անընդհատ։ Թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ մերոնք նահանջեցին մինչև Արաքս. հաջորդ օրը դիմեցին հակահարձակման և հետ շպրտեցին թշնամուն ծանր կորուստներ պատճառելով նրան։ Մեր զոհերն էին սպանված և վիրավոր՝ երկու սպա և 60 զինվոր։ Հոկտ. 24-ից կատաղի կռիվներ սկսեցին Քուլլուկ, Կարակալա, Վերին Զարուխչի, Դաշբուռունի շրջանում։ Վաղ լուսաբացին, մոտ մեկ դիվիզիա կանոնավոր ուժեր ու բազմաթիվ քրդական խմբեր հարձակման անցան Քուլլուկ—Վերին Զարուխչի, Սուլթանաբադ—Իգդիր, Դաշբուռուն—Կարակոյունլու—Մարգարա ուղղությամբ։ Արյունահեղ կռիվներ տեղի ունեցան։ Թշնամին բազմաթիվ անգամներ դիմեց գրոհի և միշտ հետ շպրտվեց։ Թուրքերը առանց կանգ առնելու զոհերի առաջ, ձգտում էին, ինչ գնով էլ լինի, գրավել Սուրմալուն։ Հայերն էլ վճռել էին ավելի շուտ մեռնել, բայց տեղի չտալ և երեք օր շարունակ, առանց ընդմիջումի, ամբողջ ճակատի վրա մղվում էին արյունահեղ կռիվներ։ Տեղ-տեղ, ինչպես Դալիգդաշի դիրքերում, որ պաշտպանում էր Կուռո Թարխանյանը, զինվորների ու սպաների հիսուն տոկոսը սպանվեց կամ վիրավորվեց, բայց չնահանջեց։ Սուլթանաբադի դիրքերում թշնամին կռվում էր մի քանի հարյուր քայլ հեռավորությունից։ Սպանությունը՝ գնդ. Խուդաբաշյան, Մամաջանյան Գալուստյան, Հովասափյան, Թարվերդյան, Թարխանյան, Մակ-Մալիցկի, Թոփչյան, Աբգարյան, Պետրոսյան, Ղամբարյան և ուրիշներ ցույց տվին հերոսության փայլուն օրինակներ։ Առաջ բերենք մի օրինակ միայն։ Կռվի երկրորդ օրը, Դրոյի հրամանով, Քանաքեռից, բեռնատար ինքնաշարժերով, օգնության է շտապում Կուռո Թարխանյանը։ Մարգարայում պարզվում է, որ խճուղին բռնված է թշնամու կողմից. առաջ գնալու հնարավորություն չկա։ Առանց երկար մտածելու, Կուռոն դասավորում է զինվորներին ինքնաշարժերի վրա, ինքը նստում է առաջին ինքնաշարժի վարիչի մոտ և չորս ինքնաշարժերը, իրարից հիսուն քայլ հեռու, արագությամբ քշել է տալիս խճուղիով, միաժամանակ, գնդացիրներից սաստիկ կրակ բանալով ճանապարհի երկու կողմով։ Թշնամին հանկարծակիի է գալիս և սարսափահար պահվում առուներում։ Տալով ութ զինվոր վիրավոր և գնդացիրային մասի պետ հերոս Մալիցկիին սպանված՝ Կուռոն ճեղքում է թշնամու շղթան և հասնում օրհասական դիմադրություն ցույց տվող Դալիգդաշին օգնության։

Հոկտ. 26-ին մեր զորամասերն անցան հակահարձակման։ Թշնամին բոլոր կետերում, կատաղի դիմադրությունից հետո, բազմաթիվ դիակ-

ներ թողնելով, դիմեց խուճապային փախուստի։ Ու հետզհետե հեռացավ Բարթողյան լեռների մյուս կողմը։ Երևանը, որ մի քանի օր ապրում էր Սուրմալուից հասնող թնդանոթների որոտի տակ և սարսափահար սպասում էր ճակատամարտի ելքին, հանգիստ շունչ քաշեց։ Թշնամին այլևս Սուրմալուի ճակատում կենդանի գործունեություն ցույց չտվեց։

Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերը Կարսի ճակատում։ Այստեղ գործում էին զորավար Հովսեփյանի բրիգադը — առաջին գունդ՝ գնդ. Մազմանյան, 4-րդ գունդ՝ գնդ. Միրիմանյան, 5-րդ գունդ՝ գնդ. Շաղուրադյան, Սեպուհի բրիգադը. 7-րդ գունդ՝ գնդ. Իշխանյան, 8-րդ գունդ՝ փոխգնդ. Բաղդասարյան. գնդ. Ղորղանյանի ձիավոր բրիգադը և մի քանի կամավորական խմբեր՝ Փիլոսի, Մուրադյանի, Սմբատի և այլն։ Կարսի ճակատում գործում էին սավառնակներ և «Ազատամարտ» զրահագնացքը։ Կարսի բերդապետն էր զորավար Փիրումյանը, իսկ բերդի հրետանիի պետն էր բուլղար սպա գնդ. Բաբաջանովը։ Կարսի զորախմբի ընդհանուր հրամանատարն էր զորավար Սիլիկյանը, սպայակույտի պետ՝ գնդ. Վեքիլյանը։ Թե բերդի և թե դաշտային մասերը թույլ էին կազմակերպված. զինվորների մեծ մասը նոր էր հավաքված և չէր մերված գնդերում։ Սպաների և զինվորների փոխհարաբերությունը շատ մասերում մտերմական չէր։ Լավ չէին և զոր. Փիրումյանի ու զոր. Հովսեփյանի, ինչպես նաև նահանգապետ Ղորղանյանի հարաբերությունները, որ անդրադառնում էին շրջապատի վրա։ Զորքերի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված ռոս հրացաններով, որոնց վարժ չէր։ Թիկունքը լավ կազմակերպված չէր և հակապետական տարրերը՝ բոլշևիկները կարողանում էին դժվարություններ առաջացնել։ Այսպես, հոկտ. 2-ին, Կարայալ կայարանից յոթ վերստ հեռու, Շահնալար գյուղի մոտ, խորտակվեց ճակատը զինվորներ տանող գնացքը, 14 վագոններ ջարդվեցին, սպանվեց 12 և վիրավորվեց 43 հոգի։ Բոլշևիկների գործն էր այս։

Փորձելու համար մեր զորքերի մարտունակությունը, այլև ռազմական ոգին բարձրացնելու նպատակով, բարձր հրամանատարությունը որոշեց ձեռնարկել ընդհանուր հարձակման։ Հաջողության դեպքում ենթադրվում էր առաջ շարժվել։ Հարձակումը հաջողություն չունեցավ։ Թշնամու ուժեղ դիմադրության հետևանքով մեր զորամասերը նահանջեցին գրեթե մինչև Կարս։ Այնուհետև նախաձեռնությունն ամբողջապես անցավ թուրքերի ձեռքը։ Քայլ առ քայլ ճնշելով մերոնց, հոկտ. 28-ին, նրանք գրավեցին Վեզենքոյի բարձունքները։ Ամբողջ հոկտ. 28-ին տաք կռիվներ տեղի ունեցան։ Մազմանյանի զորամասը ձգտում էր հետ խլել Վեզենքոյը։ Այս կռիվներում երկու կողմերն էլ ունեցան ծանր կորուստներ. վիրավորվեց ճակատի պետ գլխապետ Գնդունին։ Հոկտ. 29-ին տեղի ունեցավ զորամասերի վերախմբում։ Համաձայն տրված հրամանի, հոկտ. 30-ի առավոտյան, մեր զորքերը պիտի անցնեին հակահարձակման Վեզենքոյը գրավելու նպատակով։ Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը և տեղից չշարժվեց։ Հուսահատ և անզոր մերժեց կատարել հրամանը և տեղից չշարժվեց։ Մազմանյանը ամենքի աչքի առջև մաուզերի երկու գնդակից ինքնասպանություն գործեց։ Այս ևս չազդեց զորքի տրամադրության վրա։ Այդ միջոցին մեծ ուժով հարձակման դիմեցին թուրքերը։ Սկսվեց խուճապային փախուստ։ Մեր զորքերի մի մասը և զրահագնացքը նահանջեցին դեպի Մազրա. ժողովուրդը և զորքի մյուս մասը խուժեց դեպի Երևան։ Կարսն ընկավ թշնամու ձեռքը։ Գերի մնացին զոր. Փիրումյանը, զոր. Արարատյանը, գնդ. Շաղուրադյանը, գնդ. Վեքիլյանը, գնդ. Բաբաջանովը, փոխգնդ. Տեր-Առաքելյանը, 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ և մոտ 3 000 զինվորներ. նախարար Ա. Բաբալյանը, Գարեգին Արք. Հովսեփյանցը, փոխնահանգապետ Ջալխուշյանը, քաղաքագլուխ Նոհրատյանը և ազգաբնակչության մեծ մասը։ Երեք օր անընդհատ թուրքերը թալանեցին, բռնաբարեցին, սպանեցին և ամեն տեսակ վայրենություններ գործ դրին քաղաքում։

Նախարար Ա. Բաբալյանը, իբրև դեպքերի ականատես, զարհուրելի գույներով է նկարագրում թուրքերի գործած վայրագությունները։ Հայերը ենթարկվում էին կոտորածի, գեղեցիկ կանայք տարվում էին հարճության, տղամարդիկ քշվում էին Թուրքիայի ներսը։ Ի միջի այլոց, ցնցող տեղեկություններ է տալիս նա բոլշևիկների կատարած դերի մասին։ «Մեր գերության հինգերորդ օրը,— գրում է նա,— մեզ այցելեցին չորս հայեր՝ ուղեկցությամբ մի քանի տաճիկ սպաների, զարդարված կարմիր լաթերով։ Կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պտտում էին հանրակացարանները և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին։ Հեղկոմների անդամներ էին։ Այնպես էին հավատացրել սրանց տաճիկ սպաները, որ իբր թե Կարսը պիտի հանձնեն բոլշևիկյան իշխանությանը։ Եվ ամեն կերպ փայփայում էին կոմունիստ տականքներին. փոխարենը սրանք մատնություններ էին անում և ցույց տալիս պահեստների տեղերը և անհրաժեշտ տեղեկություններ էին տալիս հայ զորքի և երկրի վերաբերյալ»։

Իսկ Բաքվի հայերեն «Կոմունիստը» (№42) հետևյալ ձևով է նկարագրում թուրքերի ընթացքը Կարսում.

«Հոկտ. 30-ին տաճկական զորքերի առաջապահ մասերը չհանդիպելով ոչ մի դիմադրության հայկական զորամասերի կողմից՝ գրավեցին Կարսը։ Մինչև թուրքական զորքերի մտնելը, հայկական զորքերը խորը համոզված էին, որ Կարսի վրա հարձակվող զորքերը բոլշևիկներն են, որի պատճառով և նրանք դիմադրություն ցույց չտվին տաճիկներին։ Այդպիսի կարծիքի էր և Կարս քաղաքի աշխատավոր ժողովուրդը, որը

բացարձակապես համոզված էր, որ կարմիր դրոշակի տակ, հարձակվում է կարմիր Տաճկաստանի հեղափոխական բանակը։ Բայց քաղաք թափված այդ զորքերը չխնայեցին ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին և ո՛չ էլ ծերերին։ Հինգ օրվա ընթացքում արյունռուշտ զինվորները և քրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր գազանությունները, որոնք վեր են մարդու երևակայությունից։ Սպանում էին բացառապես հայերին։ Թալանում էին ամենքին անխտիր։

Չէին խնայում նույնիսկ կոմունիստների, որոնք իրենց կոմունիստ լինելը ապացուցանող վկայականներ էին ներկայացնում։ Տաճկական գազանություններին զոհ գնացին Կարսում միմիայն 6 000 հայեր։

Սարսափելի կոտորածներին հաջորդեցին խմբական ձերբակալություններ հայերի մեջ։ Ոտքից գլուխ մերկացնելով նրանց հարյուրներով ուղարկում էին Կարին և Սարիղամիշ աշխատելու։ Ուղարկվածները ցրտահար էին լինում և մեռնում քաղցից ու տանջանքից։

Միևնույն ժամանակ սկսվել էր թուրք գաղթականների շարժումը դեպի Կարսի շրջանը։ Տեսնողները սարսափով պատմում էին, թե ինչպես բազմահազար ամբոխը՝ ծերեր, կանայք, երեխաներ, այդ ցրտին շարժվում էր դեպի Սարիղամիշ ու Կարս օր առաջ տեղավորվելու համար փախած հայերի գյուղերում և տներում։

Կարսի շրջանը դատարկված էր արդեն հայերից. Կարս քաղաքը նույնպես։ Քեմալականների համար ստեղծվել էր հնարավորություն իրենց ծրագրի մի մասը իրագործելու։ Տաճկական հրամանատարությունը աշխատում էր Կարսի շրջանը թրքացնել, որպեսզի հին կառավարության հետ կնքած պայմանի համաձայն, կազմվելիք հանրաքվեն հօգուտ իրեն վճռի, իսկ առաջին խորհրդաժողովին կարողանա հայտարարել, որ Կարսի շրջանը թրքաբնակ է»։

Կարսի գրավման հաջորդ օրը, Քյազիմ Կարաբեքիրը մի կոչ ուղղեց քաղաքի և շրջանի հայ ազգաբնակությանը, որի մեջ պատերազմի ամբողջ պատասխանատվությունը բարդում էր «դաշնակների» վրա և իրեն ներկայացնում էր իբրև քրիստոնեության պաշտպան. ապա պահանջում էր, որ իշխանությանը հանձնվեն հայերի մոտ գտնվող զենքն ու ռազմամթերքը, սպաներին և «ամեն տեսակ գործակալներին ու լրտեսներին»։

Այնուհետև դեպքերը վարգացան շատ արագ։ Կարսից հետո, մեր զորքերը համախմբվեցին Ղզլչախչախի տակ, ուր նոյ. 4-ից սկսվեցին տաք կռիվներ վրա հասնող թուրքերի հետ։ Թշնամին աշխատում էր կտրել կիրճի բերանը և գերի առնել մեր զորամասը։ «Ազատամարտ» զրահագնացքի խիզախ շարժումներով և գնդացրային սպանիչ կրակի ուժով թուրքերի ծրագիրը ձախողության մատնեցին։ Մեծ կորուստ տալով, թշնամին այլևս չհամարձակվեց առաջ շարժվել։ Ղզլչախչախի կռիվն ահագին իրարանցում և խուճապ առաջ բերեց Ալեքսանդրապոլում։ Նահանգապետը միլիցիան առած հեռացավ, անպաշտպան թողնելով քաղաքը։ Քաղաքային ինքնավարության, երկաթուղային պաշտոնեության մեծ մասը փախավ։ Քաղաքում գլուխ բարձրացրին անիշխանական տարրերը։ Բանտից արձակվեցին բոլշևիկները, որոնք ստեղծեցին Հեղկոմ և փորձեցին իրենց ձեռքն առնել իշխանությունը։ Նոյ. 5-ին նրանք բաց թողին մի թռուցիկ, որով կոչ էին անում ազգաբնակչությանը մնալ քաղաքում։ Սակայն, Ջամալյանի, Սեպուհի և մի շարք քաղաքացիների ձեռք առած միջոցների շնորհիվ հաջողվեց քաղաքի անդորրությունը վերականգնել։ Լ. Սարգսյանի նախագահությամբ կազմվեց ժամանակավոր մի մարմին քաղաքը կառավարելու համար։ Նոյ. 6-ին կառավարությունը Լ. Սարգսյանին հաստատեց քաղաքապետի պաշտոնում և նրա տրամադրության տակ դրեց նյութական միջոցներ և միլիցիոներներ։ Միևնույն ժամանակ որոշեց խիստ պատասխանատվության ենթարկել պետական, քաղաքային և հասարակական այն պաշտոնյաներին, որոնք հակառակ կառավարության նախօրոք տրված հրահանգի, լքել էին դիրքերը և թուլամորթությամբ փախել։

Կարսի անկումից հետո, համարյա միաժամանակ և Անգորայի, և Հայաստանի կառավարությունները դիմեցին միմյանց հաշտության առաջարկով։ Նոյ. 6-ին Քյազիմ Կարաբեքիրը առաջարկեց զինադադարի հետևյալ պայմանները.

1. Այժմ Արփաչայից արևմուտք գտնվող հայ զորամասերը Ալեքսանդրապոլը մաքրելով Արփաչայից առնվազն 15 կիլոմետր դեպի արևելք պետք է քաշվեն։

2. Ալեքսանդրապոլ քաղաքը չպիտի գրավվի, միայն թե բերդը և կայարանը մեր կողմից զինվորական գրավման տակ պետք է առնվեն։ Ալեքսանդրապոլում հանրային ապահովությունը, կարգի պահպանության տակ գտնվելը Ալեքսանդրապոլի բնակչությանը պետք է հանձնվի։

3. Նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլն ունի մեծ նշանակություն, որպես Թիֆլիս—Երևան երկաթուղու միացման կետ, արգելք պետք է լինել, որ Ալեքսանդրապոլի շրջանը, տաճիկ բանակի վստահության համար, գրավվի զորամասերի կողմից։

4. Զինադադարի տևողության միջոցին՝ տաճկական զորքերի վրա ո՛չ մի կողմից և ո՛չ մի պատրվակի տակ հարձակում չպետք է արվի և կրակ չպետք է բացվի։

5. Վերի հոդվածները վաղը (7 նոյ. 1920 թ.), կեսօրից հետո, մինչև ժամը 5 ամբողջապես գործադրել և Արփաչայի արևմուտքը գտնված հողամասը և Ալեքսանդրապոլը հիշված կեսօրից առաջ մինչև ժամը 10 ամբողջապես պարպել։

Հայաստանի կառավարությունը ընդունեց այս պայմանները, որոնք նոյ. 7-ին իրագործվեցին։ Հայկական զորքերի մի մասը քաշվեց դեպի Ջաջուռ, մյուս մասը՝ դեպի Աղին։ Բայց հաջորդ օրը, նոյ. 8-ին, Քյա-

զիմ Կարաբեքիրը, հանուն իր կառավարության ներկայացրեց հետևյալ պահանջները.

«Զինադադարի պայմանները. Առայժմ 24 ժամվա ընթացքում, հանձնել Ալեքսանդրապոլում, բոլորովին գործածելի վիճակի մեջ 2000 արագահարված հրացան, սարքով և կենդանիներով միասին, 20 հատ ծանր և 40 հատ արագահարված գնդացիր, երեք մարտկոց թնդանոթ, 4000 ջորի, 1000 սնդուկ հրացանային ռազմամթերք, 6000 թնդանոթի ռումբ, 2 շոգեշարժ մեքենա և 50 վագոն պիտի հանձնվի մեզ։ Կանոնավոր և անկանոն հայկական զինվորական ուժերը Արփաչայի ընթացք—Ալագյազ կայարան—Կիրմիզլի—Կոլիջան, Նալբանդ կայարան—Վարանցովկա գծից արևելք պիտի քաշվեն. այս գծից արևմուտք գտնվող երկաթուղագիծը չքանդված և անվնաս պիտի թողնվի։

Երկրորդ՝ առ առավելն 3 օրվա ընթացքում դարձյալ հայկական կանոնավոր և անկանոն զինված ուժերը Սուրմալու—Արաքս կայարան—Կիզիլլի — Արեթ — Ալագյոզ լեռան լանջը — Ցանագերմազ — Նովո-Միխայլովկա—Լոռիքենդ—Շերմուտ Յալվանդաղ գծից արևելք պիտի քաշվեն։

Երրորդ՝ զինադադարի կնքումից անմիջապես հետո Սանահին կայարանի և Ալեքսանդրապոլի միջև երկաթուղագծի վրա ամեն տեսակ ռազմական պիտույքների փոխադրությունը պիտի կանգ առնի։ Այս փոխադրությունները ստուգելու համար Սանահին կայարանը և Ղարաքիլիսա մեկ-մեկ հանձնախմբեր պիտի ուղարկվեն, և հայկական կառավարությունը վերոհիշյալ հանձնախմբերի անձեռնմխելիությունը և Ալեքսանդրապոլի շրջանում նրանց արևելյան ճակատի հրամանատարության հետ կանոնավորապես և ապահովապես կապ ունենալը պիտի երաշխավորի։

Չորրորդ՝ մինչ զինադադարի երրորդ օրը երեկոյան, երկու կողմի պատվիրակները հաշտության բանակցություններ սկսելու համար Ալեքսանդրապոլ պիտի գտնվեն և այս ժամանակի ընթացքում, եթե առաջին և երկրորդ պայմանների բովանդակությունը իրագործված է, իսկույն հաշտության բանակցությունները պիտի սկսվեն։

Հինգերորդ՝ զինադադարի ժամանակի ընթացքում մեր զորամասերը Ալեքսանդրապոլի շրջանում առաջին պայմանում հիշված Արփաչայ հոսանք—Նալբանդ կայարան— Վարանցովկա գծից արևելյան կողմը և մյուս շրջաններում իրենց գտնված գծից առաջ չպիտի անցնեն։

Վեցերորդ՝ զինադադարի կնքումից անմիջապես հետո երկու կողմից թշնամական գործողություններին վերջ պիտի տրվի։

Սույն զինադադարի պայմանները Ալեքսանդրապոլի շրջանում գտնվող հայկական առաջավոր մասերին հանձնվելու ժամից գործադրության մեջ են մտնում և պայմանաժամը, ի վերջո, եթե կարիք զգացվի, երկարաձգելու պայմանով, յոթ օր է։ № 2378»։

Հայաստանի կառավարությունը ամենավճռական կերպով բողոքեց այս պահանջների դեմ, նկատելով այդ՝ զինադադարի խախտում և որոշեց մերժել նոր պայմանները։ Խոսքը նորից անցավ զենքին։ Նոյեմբերի 11-ին վերսկսվեց պատերազմը, որը, սակայն, տևեց շատ կարճ։ Նոյեմբերի 14-ին Թուրքերը հարձակվեցին Ջաջուռի մեր զորամասի վրա։ Կռիվները սկզբում նպաստավոր էին մեզ համար, բայց թշնամուն հաջողվեց թիկունքային շարժումով ոմբակոծել Ղալթախչին, ուր գտնվում էր զորամասի կենտրոնը, և սպառնալ երկաթուղագծին։ Այդ պատճառով մեր զորքերը նահանջեցին Համամլու։ Տաք կռիվներ տեղի ունեցան և Աղինի ճակատում, ուր ծանր վիրավորվեցին Սմբատը և Նիկոլ Օդաբաշյանը։ Թուրքերին հաջողվեց այստեղից էլ հետ մղել մերոնց։ Վերջին կռիվներն էին սրանք։

Հայաստանի կառավարության դիմումի վրա կնքվեց նոր զինադադար և նոյ. 22-ից Թուրքերին հանձնվեց նրանց պահանջածը։ Հայաստանի կառավարությունը միաժամանակ դիմեց և Մոսկվայի միջնորդությանը։ Չիչերինը դրական պատասխան տվեց և իր կողմից նշանակեց Բոդու Մդիվանիին մասնակցելու համար հայ-թուրքական բանակցություններին։ Միաժամանակ, Թիֆլիս ուղարկվեց Ա. Խատիսյանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին։ Խատիսյանը Երևանից մեկնեց նոյեմբերի 18-ին և հետը տարավ հետևյալ տեղեկագիրը, որ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանը պատրաստել էր պատերազմի սկզբին դաշնակիցների համար.

«Հայաստանը ունի չորս ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում՝ Կարս—Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան—Ղազախ։

Ինչպե՞ս են բաժանված դրանց մեջ Հայաստանի զինվորական ուժերը։ Կարս—Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետևյալ զորամասերը. խոսքը վերաբերվում է կանոնավոր զորքերին և, հատկապես, հետևակ զորքերին։ Այդտեղ են առաջին գունդը (Մադմանյան) — 1500 սվին, 4-րդ գունդը (Միրիմանյան) — 2000 սվին, 5-րդ գունդը (Շաղուբադյան) — 700 սվին, 6-րդ գնդի մի բատալիոն — 700 սվին, 7-րդ գնդի մի բատալիոն (Իշխանյան—Գնդունի) — 800 սվին և 8-րդ գունդը (Տիգր. Բաղդասարյան) — 1500 սվին, ընդամենը՝ 7 200 սվին։ Բացի դրանից կան նաև Սմբատի խմբերը։

Սուրմալուի ճակատում (Դրոյի մոտ) կան 9-րդ գունդը — 2000 սվին. 8-րդ գունդը (1 բատալիոն) — 1000 սվին և 7-րդ գունդը (մի բատալիոն) — 700 սվին, Ղարաբաղի առանձին զորամասը (Կուռո) — 800 սվին, ընդամենը՝ 4500 սվին և փոքրիկ եզդիական զորամաս։

Նախիջևանի ուղղությամբ կանգնած են՝ 3-րդ գունդը—2000 սվին,

2-րդ գունդը (երկու բատալիոն) — 1000 սվին, ընդամենը՝ 3000 սվին։

Դիլիջան—Ղազախի ճակատում գտնվում է 6-րդ գունդը (Մանիևի) — 2000 սվին։

Այս թվերի մեջ չեն մտնում հեծելազորքը, հրետանին և հատուկ նպատակ ունեցող մասերը, ինչպես սապերներն և հեռագրական ջոկատները։

Այսպիսով, բոլոր չորս ուղղությունների վրա մենք ունենք ընդամենը 16 700 սվին, բացի դրանից, Զանգեզուրում գտնվում է 800 սվին, ուրեմն, վերոհիշյալի հետ՝ 17 500 սվին։

Երևանում պահեստում մնում է 10-րդ գունդը (Հալապյանի)— 1500 սվին, ընդամենը, ուրեմն, 19 000 սվին։

Ընդունելով և մյուս տեսակի զենքերը՝ 6000 հոգի — ուրեմն, գործող բանակում կանոնավոր մարտական ուժեր կան 25 000 հոգի։

Ավելացնելով դրանց վրա նաև թիկունքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակույտը, առողջապահական սպասավորներին — ընդհանուր թվի 30 տոկոսը, կստանանք բանակի ամբողջ կազմը 34 000 հոգի, խմբերի հետ միասին — մոտ 40 000 հոգի։

Կանոնավոր թուրքական ուժեր Կարս—Ալեքսանդրապոլ ուղղության վրա պետք է ընդունել 4 դիվիզիա, յուրաքանչյուրի մեջ 3000 հոգի, ընդամենը 12 000: Սուրմալուի ուղղության վրա՝ 1 թուրքական դիվիզիա՝ 8000 հոգի, որը սպառնում է Երևանին։ Նախիջևանի ուղղությամբ՝ բոլշևիկյան ուժեր մոտ 2000 հոգի։ Եվ Ղազախ—Դիլիջանի ուղղությամբ՝ ազրբեջանցիք և բոլշևիկներ։ Այդ կանոնավոր զորքերի թիվը պետք է, ընդհանուր առմամբ, հաշվել 20 000 սվին։

Եթե դրանց ավելացնենք ոչ կանոնավոր ժողովրդական ուժերը, քրդերին և թշնամի զինված աղգաբնակչությունը, այդ դեպքում թշնամու ուժերի թիվը պետք է որոշել բոլոր չորս ուղղությունների վրա ոչ պակաս 30 000 հոգուց։ Ահա մրցակից կողմերի անկողմնապահ թվահամարը։

Սրա հետ միաժամանակ պետք է նկատի ունենալ Հայաստանի մեկուսացած դրությունը, նավթից, նավահանգստից զուրկ լինելը, արտաքին աշխարհից կտրված լինելը (որովհետև ամբողջ հաղորդակցությունը Վրաստանի և Եվրոպայի հետ կախված է մարդից՝ երկաթուղային գծից, որը շուտով կտրվեց)։ Թնդանոթի ռումբերի պաշարը վերջանում է։ Ցրտերը ավելի սաստկանում են։ Հայաստանը շրթայվում է երկաթե օղակով։ Գրավված և վտանգի ենթարկված շրջաններից ազգաբնակչությունը հավաքվում է Հայաստանի սրտի մեջ»։

Դաշնակիցները, սակայն, ոչինչ չունեին ասելիք։ Անգլիայի ներկայացուցիչ Ստոկսը միայն որոշ պատասխան տվեց Ֆորեյն Օֆիսի կողմից. Անգլիան ոչնչով չի կարող օգնել. հայերին ոչինչ չի մնում անել, բայց եթե իբրև երկու չարյաց փոքրագույնը՝ հաշտվել Խորհրդային Ռուսաստանի հետ։

Հաշտվել Խորհրդային Ռուսաստանի հետ, բայց ո՞ւր էր նա՝ այդ Ռուսաստանը և ի՞նչ կարող էր անել տվյալ պայմաններում, երբ թուրք բանակը կեցած էր Ախուրյանի և Արաքսի եզերքներին՝ ամեն վայրկյան ներխուժելու պատրաստ։

Կառավարությունը փութաց Ալեքսանդրապոլ ուղարկել հաշտության պատվիրակություն։ Պատվիրակության կազմն էր՝ Ա. Խատիսյան (նախագահ), նախարար Ա. Գյուլխանդանյան, Կարսի նահանգապետ Ստ. Ղորղանյան, Խորհրդարանի անդամներ Վ. Մինախորյան և Լ. Զարաֆյան՝ իրենց հետ ունենալով մասնագետներ, քարտուղարներ։

Պատվիրակությունը Ալեքսանդրապոլ մեկնեց նոյեմբ. 23-ին, և նույն օրը վարչապետ Հ. Օհանջանյան Խորհրդարանին ներկայացրեց կառավարության հրաժարականը։

ԳԼՈՒԽ ԼԲ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Օհանջանյանի Բյուրո-կառավարությունը իշխանության գլուխ եկավ բոլշևիկների առաջ բերած մայիսյան հակապետական խռովությունների հետևանքով։ Ազրբեջանի խորհրդայնացումից անմիջապես վերջը, երկրի զանազան կողմերում տեղի ունեցան ըմբոստացումներ և կառավարությունը տապալելու փորձեր, խորհրդային վարչաձև հաստատելու նպատակով։ Ներքին բոլշևիզմին ուժ էր տալիս և արտաքին թշնամին, հանձին մի կողմից խորհրդային իշխանության և մյուս կողմից՝ քեմալական Թուրքիայի։ Երկիրը իսկապես գտնվում էր լուրջ վտանգի առջև։ Անհրաժեշտ էր ձեռք առնել կտրուկ միջոցներ միակամ իշխանություն ստեղծելով։

Այս պայմաններում էր, որ կյանքի կոչվեց Բյուրո-կառավարությունը բժ. Համո Օհանջանյանի նախագահությամբ, որի կազմի մեջ մտան Հ. Հ. Դաշնակցության բյուրոյի բոլոր անդամները։ Ուրիշ խոսքով՝ հաստատվեց կուսակցական դիկտատուրա, իբրև ժամանակավոր իշխանություն, որի նպատակը պիտի լիներ հաշվեհարդարի ենթարկել մայիսյան հակապետական շարժումները և ներքին բոլշևիզմը։

Բյուրո-կառավարությունը մեծ հաջողությամբ, կարելի է ասել, փայլուն կերպով կատարեց իր դերը։ Բոլշևիկյան խռովությունների ճնշումով և Զանգի-Բասարի մաքրագործումով նրա վրա դրված անմիջական պարտականությունը իրագործված էր։ Կառավարության ներսը և դուրսը, հասարակության մեջ, առաջարկներ էին լինում, որ Բյուրո-կառավարությունը քաշվի գործից և նրան հաջորդե խորհրդարանական կառավարություն։ Հունիսին, այս գետնի վրա, նույնիսկ ներքին տագնապ առաջ եկավ կառավարության մեջ, նախարարներից մեկի հրաժարումով։ Սակայն, կառավարությունը մեծամասնության որոշումով մնաց իշխանության վրա այն պատճառաբանությամբ, որ երկրի ներքին անգորրությունը լրիվ կերպով ապահովված չէ դեռ, և որ արտաքին պայմանները, մանավանդ Թուրքիո հետ խաղաղության դաշնագրի կնքումը ի մոտո, պահանջում են ուժեղ իշխանության գոյությունը երկրում։

Եվ, հիրավի, 1920 թ. օգոստոս 10-ին, Սևրի դաշնագրի ստորագրությամբ նոր և զգլխիչ հեռանկարներ բացվեցան հայ ժողովրդի առջև։ Մոտենում էր ժամը Միացյալ Հայաստանի իրականացման։ Բյուրո-կառավարության առջև բացառիկ կարևորություն ունեցող պատմական մեծ խնդիրներ էին դրվում։ Արտասահմանից, Փարիզի պատվիրակությունից ստացվող տեղեկությունները, մեծապես հուսադրիչ էին այդ ուղղությամբ։ Կառավարությունը ոգևորված էր Թուրքահայ նահանգների Սևրի դաշնագրով Հայաստանին հատկացված մասը գրավելու հեռանկարով։ Վարչապետության գրասենյակներում և զինվորական նախարարության մեջ, բացահայտորեն խոսակցության նյութ էր Էրզրումի և Վանի գրավման հարցը։ Օլթիի զինվորական ձեռնարկն էլ, հուլիսին, եթե մի կողմից հետևանք էր առանց վառելիքի մնացած Հայաստանի ածուխով ապահովումը, մյուս կողմից կառավարական և զինվորական շրջաններում նկատվում էր նախաքայլ շարժում դեպի Էրզրում։

Այս լավատեսությունը, սակայն, հանդիպեց անհաղթահարելի արգելքի. փոխանակ Սևրի դաշնագրի իրագործման, Հայաստանը ունեցավ նոր պատերազմ փաստորեն երկու ճակատի վրա՝ Թուրքիայի և Ռուսաստանի հետ։ Կառավարության դիվանագիտական բոլոր քայլերը խուսափելու համար պատերազմից կամ արտաքին աջակցություն ձեռք բերելու վերջացան ձախողությամբ։ Պատերազմի հենց սկզբից, վարչապետի կարգադրությամբ նախարարների մեծ մասը հեռացավ մայրաքաղաքից դեպի ռազմաճակատները և պատերազմի համար կարևորություն ներկայացնող գավառները. պատերազմը վարելու գործը մնաց վարչապետի և զինվորական նախարարի ձեռքերում։ Ցեսանք արդեն, թե ինչ ընթացք ու վախճան ունեցավ այդ գործը։

Զինադադարի դաժան պայմանների կնքումով Օհանջանյանի կառավարությունը այլևս հեղինակությունը կորցրել էր ժողովրդի աչքին։ Ամեն կողմից պահանջում էին նրա հրաժարականը։ Եվ կառավարությունը ինքն էլ, մասնավորապես վարչապետը և զինվորական նախարարը աշխատում էին օր առաջ ազատվել իրենց ուսերի վրա ծանրացած պարտականությունից։

Քյազիմ Կարաբեքիրի վերջնագրի վրա հաշտարար պատվիրակության կազմությունը և Ալեքսանդրապոլ ուղարկելը եղավ կառավարության վերջին գործը։ Նույն օրը վարչապետ Օհանջանյանը խորհրդարանի նախագահությանը ներկայացրեց կառավարության հրաժարականը։ Փաստորեն մի քանի օր էր արդեն, որ կառավարությունը զգում էր իրեն հրաժարված, և խորհրդային դաշնակցական ֆրակցիան և խորհրդարանի նախագահությունը հանձնարարել էին Հ. Քաջազնունիին կազմել նոր կառավարություն։ Քաջազնունին մեծ դժվարությամբ համաձայնվեց ընդունել այդ պարտականությունը։ «Պարոններ,— ասում էր նա,— ես գիտակցում եմ, թե ինչ է պահանջվում ինձանից։ Դուք զոհ եք փնտրում ալեկոծության մատնված նավը փրկելու համար, և ուզում եք, որ ես

լինեմ այդ զոհը։ Եթե այդ է Հայրենիքի փրկության միջոցը և հայ ժողովրդի կամքը, ես խոնարհվում եմ նրա առջև»։

Քաջազնունին սկսեց բանակցությունները կուսակցությունների հետ։ Նրա ցանկությունն էր կազմել համազգային կառավարություն՝ հայկական բոլոր հոսանքների համախմբումով։ Բայց հենց առաջին քայլից նա հանդիպեց դժվարության։ Ժողովրդական կուսակցությունը, որին դիմել էր նա, մերժեց մասնակցել Քաջազնունիի կառավարության, այն առարկությամբ թե Դաշնակցությունը պետք է բոլորովին հրաժարակից քաշվի և դաշնակցականները մաս չունենան կազմվելիք նոր կառավարության մեջ. իսկ թե այդ ժամանակվա պայմաններում, ի՞նչ տարբերից և ինչպե՞ս կարելի պիտի լիներ կառավարություն կազմել առանց Դաշնակցության. ժողովրդականները միջոց ցույց չէին տալիս։ Մերժումով պատասխանել էին և հայ սոց.-դեմոկրատների կողմից՝ Դավիթ Անանունը և Բ. Իշխանյանը։ Սոցիալիստ-հեղափոխականների կարծիքը հայտնի էր, նրանք հենց սկզբից բացասական վերաբերում էին ցույց տալիս դեպի Քաջազնունիի ձեռնարկը։

Անկարող լինելով ստանձնած հանձնարարությունը կատարել՝ Քաջազնունին ներկայացրեց իր հրաժարականը խորհրդարանի նախագահության և դաշնակցական ֆրակցիային՝ միաժամանակ իր կողմից վարչապետության թեկնածու առաջարկելով գյուղատնտեսության և պետական գույքերի նախարար Ս. Վրացյանին։ Զոհ էր պետք, և եթե այդ էր հայ ժողովրդի կամքը, որևէ մեկը իրավունք չուներ հրաժարվելու։ Վրացյանը ստիպված եղավ ընդունելու այդ տարապայմանորեն ծանր պարտականությունը։

Այնուհետև դեպքերը զարգացան ողբերգական արագությամբ։

Նոյեմբերի 23-ին գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստը։ Սրահի հասարակության վերապահված մասը բերնեբերան լցված էր հուզումնալից բազմությամբ, պատգամավորները մռայլ նստած էին իրենց բաժնում՝ լուռ ու տխուր։ Նախագահ Հ. Քաջազնունին կարդաց վարչապետ Հ. Օհանջանյանի նամակը կառավարության հրաժարականի մասին։ Ապա խոսք առավ վարչապետը ինքը.

«Հայաստանի խորհրդարանի հարգելի պատգամավորներ,— ասաց նա,— խորհրդարանի վերջին նիստից հետո անցել էր 10—12 օր։ Այդ ժամանակամիջոցում մեր կյանքում այնպիսի մեծ փոփոխություններ են առաջ եկել, որ կառավարությունը նորից դիմում է խորհրդարանին։ Հաղթող թշնամին մեզ առաջարկել էր զինադադարի այնպիսի պայմաններ, որոնց անհնար էր ընդունել և կռիվը շարունակվեց։ Հետագա դրությունը, որ ստեղծվեց ռազմաճակատում, ցույց տվեց, որ արյունահեղությունն անիմաստ է։ Եվ մենք ստիպված եղանք ընդունել զինադադարի պայմանները և անցնել հաշտության բանակցություններին։ Ամսիս 18-ին իրագործվեցին զինադադարի պայմանները։ Վաղը, երեկոյան, Ալեքսանդրապոլում հաշտության բանակցությունները սկսվելու են պաշտոնապես։

Կառավարությունն առանց սպասելու խորհրդարանի նիստին, ընտրել և ուղարկել է հաշտության պատվիրակություն հետևյալ կազմով. նախագահ՝ Ալ. Խատիսյան, անդամներ՝ Աբր. Գյուլխանդանյան և Ստ. Ղորղանյան. որպես խորհրդականներ մեկնել են խորհրդարանի անդամներ՝ Լ. Զարաֆյանը և Վ. Մինախորյանը և մի շարք մասնագետներ։ Պատվիրակությունն Ալեքսանդրապոլ մեկնեց երեկ գիշեր, ուր թշնամու պատվիրակները սպասում են նրանց։ Թե ի՞նչ վախճան կունենա, դժվար է ասել։

Անցյալ անգամ ես այստեղ կարդացի մեր և հակառակորդի միջև փոխանակված գրությունները, որոնց մեջ հոգատարության պայմաններ կային ընդհանուր գծերով։ Այժմ բացվում է նոր շրջան, քաղաքական ուժերի նոր սիտուացիա, և որպեսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը ցույց տալու, իմ կառավարությունը ներկայացրեց իր հրաժարականը՝ նկատի ունենալով հանրապետության շահերը»։

Խորհրդարանական վեճն ու պայքարը այլևս անտեղի էին։ Կացությունը պարզ էր և որոշ։ Հարկավոր էր միայն վերջին խոսքը ասել։ Եվ ահա, դաշնակցական ֆրակցիայի կողմից, պատգամավոր Ս. Թորոսյանը արտահայտեց ընդհանուրի մտքերը.

«Սրանից վեց ամիս առաջ,— ասաց նա,— մեր հանրապետությունը կանգնած էր ծանր օրերի առջև. մենք ընտրեցինք այժմ հեռացող կառավարությունը։ Այդ կառավարությունը պատվով դուրս եկավ մայիսյան դեպքերի ծանր բեռի տակից։ Նա ուղիղ գծով տարավ հանրապետության պաշտպանության գործը՝ համախմբելով դրա համար երկրի անհրաժեշտ ուժը։ Ամառվա վերջին դժվար սպասելի անցքեր տեղի ունեցան մեր հանրապետության սահմանների վրա։ Մենք գիտեինք, որ Տաճկաստանը մի օր պիտի շարժվի մեզ վրա, վերջնական մի հարված տալու համար։ Պարզ չէր սակայն, որ այդ կկատարվի այդքան արագ և այդքան շուտ։ Մուստաֆա Քեմալը, որ կարողացավ իր ձեռքերում կենտրոնացնել Տաճկաստանի զինական ամբողջ ուժը, բավական հաջողություններ ունեցավ. նա հաղթանակեց։

Մեր զորքերի հաղթվելու պատճառն ունի հոգեբանական հիմք, և մենք հավատացած ենք, որ դա շուտով և հեշտությամբ կանցնի։ Պետք է լինենք ավելի զգաստ և վերաքննենք քաղաքական դրությունը։ Ժողովուրդն ուզում է հաշտվել Թուրքերի հետ և դա կլինի։ Նա միշտ ցանկացել է հաշտվել, միշտ պաշտպանելով ինքն իրեն՝ կռվել է, սակայն, ոչ երբեք նոր նվաճումներ անելու նպատակով։

Այն կառավարությունը, որ վեց ամիս պայքարել է և կարողացել է անվնաս դուրս բերել երկիրը և ժողովուրդը, այսօր, քաղաքական

դրության այլ դասավորման պատճառով, պետք է հեռանա։ Կառավարության փոփոխությունը անհրաժեշտաբար պետք է կատարվի. Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան կառավարության հրաժարականը գտնում է հարգելի և ընդունում է այն»։

Գրեթե նույն իմաստով արտահայտվում է և սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր Ա. Խոնդկարյանը.

«Խորհրդարանի վերջին նիստում,— ասում է նա,— մենք հայտնեցինք, որ կառավարությունը պետք է տա իր հրաժարականը։ Այդ հրաժարականը մենք ըմբռնում ենք այն ձևով, որ այսօրվանից կատարվում է պատմական մի փոփոխություն։ Մենք ընդունում ենք կառավարության հրաժարականը։ Կառավարությունը, անշուշտ, ունեցել է սխալներ, բայց այդ պիտի վերագրել ոչ այնքան կառավարության մեջ եղած անձերին, որքան տիրող սիստեմին։ Մենք հավատացած ենք, որ մեր քաղաքական կյանքը կկարողանա կարող ուժեր հրապարակ հանել մեր երկրի կառավարության համար»։

Այնուհետև, նախագահը կարդում է Դաշնակցության ֆրակցիայի առաջարկած բանաձևը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի ղեկուցումը կառավարության հրաժարականի մասին և պատգամավորների ճառերը՝ հարգելի է համարում, ընդունում է հրաժարականը և անցնում նոր նախարարապետի ընտրության»։

Առաջարկված բանաձևն անցնում է 34 ձայնով. ընդդեմ՝ ոչ մի ձայն, ձեռնպահ՝ մի ձայն։

Ի վերջո, խորհրդարանը կատարում է նոր նախարարապետի ընտրությունը։ Թերթիկներով առաջարկվում են թեկնածուներ։ Նախարարապետության համար թեկնածու է առաջարկվում Սիմոն Վրացյանը (նախկին գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի նախարար)։

Նախագահը Ս. Վրացյանից քվեարկվելու համաձայնություն ստանալով՝ առաջարկում է խորհրդարանին քվեատուփերով անցնել գաղտնի քվեարկության։ Քվեարկության արդյունքը լինում է հետևյալը. թեկնածուն ստանում է 34 սպիտակ քվե, ոչ մի սև, ձեռնպահ մեկը։

Նորընտիր վարչապետը անում է հետևյալ հայտարարությունը.

«Ես գիտակցում եմ, թե քաղաքական այս բացառիկ պայմաններում խորհրդարանն ինչպիսի ծանր բեռ է դնում իմ ուսերին։ Իմ կազմելիք կառավարությունը հաջողություն կունենա, եթե երկիրը և Հայաստանի գերագույն օրենսդրական մարմինը լինեն նրա հետ։ Ես հավատացած եմ, որ ձեր և երկրի աջակցությամբ կհաջողվի մեզ տագնապալի այս վիճակից դուրս գալ պատվով։ Իմ կողմից ես խոստանում եմ թափել ամեն ճիգ և ոչինչ չխնայել մեր հանրապետության բարգավաճման համար։ Խնդրում եմ 24 ժամ միջոց տալ՝ կառավարության կազմը ձեզ ներկայացնելու համար»։

Կայուն չէ ժողովրդի հոգեկան դրությունը, որ իրեն սպառնացող հավոր վտանգի դիմաց անկարող եղավ բավարար կամք և վճռականություն ցույց տալ։ Եվ այսպես, երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ, որ ավելի ևս սաստկանում է արտաքին դժվարությունների պատճառով։

Հաջորդ 24 ժամվա ընթացքում նորընտիր վարչապետը բանակցություններ է վարում կուսակցությունների և առանձին անհատների հետ՝ նպատակ ունենալով կազմել միատարր ընկերվարական կառավարություն. «ռուսական օրիանտացիային» հակամետ անձերից բաղկացած։ Որքան էլ պատգամավոր Թորոսյանը հավատացներ, թե հայ ժողովուրդը ուզում էր հաշտվել Թուրքերի հետ, իրողությունը այն էր, որ, պատմական այդ վայրկյանին հայության մեծ մասի աչքերը հառած էին դեպի հյուսիս. փրկությունը Ռուսաստանից էր սպասվում։ Եվ, հետևաբար, նոր կառավարությունը թե իր կազմով և թե քաղաքական ուղղությամբ պետք է աշխատեր ընդհանուր լեզու գտնել Ռուսաստանի հետ։

Բացի դաշնակցական թեկնածուներից, վարչապետի կողմից հրավեր ուղղվեց կազմվելիք կառավարության մեջ մտնելու հայ սոց.-դեմոկրատների և Թիֆլիսի «աշխատավորական» խմբակին, որոնք, սակայն, մերժեցին՝ վախենալով իրենց ճակատագիրը կապել այնքան մեծ պատասխանատվությամբ բեռնավորված, մեծ վտանգի առջև կանգնած կառավարության հետ։

Ի պատիվ հայ սոցիալիստ-հեղափոխականների, Հայաստանի ամենատագնապալի վայրկյանին, նրանք կարողացան իրենց անձնական ու կուսակցական շահը ստորադասել հայ ժողովրդի բարիքին և, հակառակ ակներև դժվարություններին, մտան կառավարության մեջ։

Նոյեմբերի 24-ի երեկոյան նոր կառավարության անդամների ցանկը արդեն պատրաստ էր. ներկայացվեց խորհրդարանի աթոռակարգ նիստի շարունակության։

Նախագահ Քաջազնունին ժողովը բանալով՝ հայտարարեց.

«Նախագահությունը նախարարապետ Ս. Վրացյանից այսօր ստացել է կառավարության կազմի անվանացանկը։ Նոր կազմը հետևյալն է. Նախարարապետ և արտաքին գործերի նախարար՝ Ս. Վրացյան, զինվորական նախարար՝ Դրաստամատ Կանայան, ֆինանսների՝ Համբարձում Տերտերյան, արդարադատության՝ Արշամ Խոնդկարյան, գյուղատնտեսության, պետական գույքերի և աշխատանքի՝ Արշակ Հովհաննիսյան, հանրային կրթության և արվեստի՝ Վահան Մինախորյան, ներքին, խնամատարության և հաղորդակցության նախարարների պորտֆելներն առայժմ ազատ են և ժամանակավորապես բաժանված են հետևյալ ձևով. ներքին գործերի՝ ինքը նախարարապետը, խնամատարությանը՝ ֆինանսների նախարար Հ. Տերտերյանը և հաղորդակցությանը՝ արդարադատության նախարար Արշ. Խոնդկարյանը»։

Այնուհետև վարչապետը, կառավարության անունից, կարդում է հետևյալ հայտարարությունը.

«Տարապայման դժվարին ժամանակներում է կյանքի կոչվում ներկա կառավարությունը։ Տաճիկ զինված ուժերը գրավել են մեր երկրի խոշոր մասը։ Ազգաբնակչությունը գրավված վայրերից տեղահան է եղած և գաղթական վիճակի մեջ անխնա կոտորվում է ցրտից և սովից։ Պետության ներսը կյանքի բնականոն ընթացքը խանգարված է։ Վարչական մեքենան թուլացած է մեծապես, ֆինանսական և հաղորդակցության միջոցները՝ քայքայված, արդարադատությունը՝ անհնարին վիճակում, պարենի մուտքը դրսից կանգ է առել, իսկ ներսի աղբյուրները ցամաքում են արագությամբ։

Ինչի՞ պետք է ձգտի այսպիսի հանգամանքներում նոր կառավարությունը։

Վերջին տարիների ընթացքում անդրկովկասյան ժողովուրդներին հասած բոլոր աղետների և դժբախտությունների պատճառը աշխարհի հզորների վարած իմպերիալիստական քաղաքականությունն է, որի հետևանքով անվերջ և արյունահեղ կռիվների և ավերածությունների թատերաբեմ է դարձել նաև Հայաստանը։ Այդ քաղաքականությունը սպառել է Հայաստանի դեմոկրատիայի շինարարական եռանդը։ Այսպիսի քաղաքականության հետևանքներից մեկն է նաև վերջին պատերազմը իր բոլոր արհավիրքներով։ Ներկա կառավարության առաջին և գլխավոր նպատակն է լինելու հանել մեր երկիրը քաղաքական այս ջրապտույտից և ազատել նրան օտար ուժերի քայքայիչ ազդեցությունից։ Նա Հայաստանի պետական կառույցվածքը խարսխելու և բոլորանվիրելու է ելնելով ոչ թե օտարների սին և վտանգավոր ներշնչումներից, այլ Հայաստանի դեմոկրատիայի իրական կարողությունից և հարևան ժողովուրդների հետ խաղաղ համակցություն ստեղծելու ցանկությունից։

Հայաստանի կառավարությունն ամուր ոտք դնելով այս հողի վրա՝ հույս ունի, որ վերջին մեր քաղաքական կյանքը վրդովող այս պատերազմը կվերջանա հաշտությամբ և մեր հարևան տաճիկ ժողովրդի արդարացի իրավունքների նույնքան արդարացի բաշխումով։ Մեր գործունեության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ և համերաշխություն ու խաղաղ համակեցություն բոլոր հարևանների հետ։

Այսուհանդերձ, մենք գիտակցում ենք, որ հասարակական ներկա կարդերում, տարաբախտաբար, իշխողը դեռ ոչ թե արդարությունն է, այլ ուժը։ Եվ պետական ամեն մի կազմավորում իր դոյության և արդար իրավունքներն ապահովելու համար ստիպված է ունենալ կազմակերպված և ամուր ռազմական ուժ։ Ուստի և կառավարության գլխավոր հոգսերից մեկը պիտի լինի երկրի ուժերի հավաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը։ Այդ նպատակով մենք աշխատելու ենք

առողջացնել զորքի շարքերը և ուժեղացնել պետական գիտակցությունն և անձնազոհության զգացումը բանակի մեջ։ Նույն նպատակով մենք մտածում ենք ազատել բանակն անվարժ և հոգնած տարրերից՝ զորացրումն կատարելով բարձր հասակի զինվորների, որով ավելի բնական ընթացքի մեջ կմտնի թիկունքի կյանքը և զարկ կտրվի երկրի տընտեսական զարդացմանը։

Դավանելով «ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին» սկզբունքը՝ ներքին կյանքում, կառավարությունն ուժգնորեն պայքարելու է պետության հիմքերը փորող բոլոր ուժերի և երևույթների դեմ։ Նա պետք է աշխատի հաստատել երկրի ներսում ապրող բոլոր ցեղերի իրական հավասարություն. Հայաստանը նրա սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների սեփականությունն է կազմում։ Կառավարությունը պիտի ձգտե առողջացնել վարչական և դատաստանական խանգարված մեքենան, բարեկարգել հաղորդակցության միջոցները, կռվել ֆինանսական սուր տագնապի դեմ, կրճատել պետական ծախսերը և նպաստելով երկրի արդյունաբերական ուժերի զարգացմանը՝ ուժեղացնել տեղական ինքնավարությունները և վերացնել ամեն տեսակի արտակարգ դրությունը և երկիրը կառավարելու արտակարգ ձևերը։

Օրենքի գիտակցությունը, որ այնպես թուլացել է մեզ մոտ, պետք է ուժեղացվի, և հանցավորները պետք է պատժվեն անխնա։ Պատերազմի արհավիրքների արդյունք բազմահազար գաղթականության վիճակը թեթևացնելու և պարենավորման սուր ճգնաժամը մեղմացնելու խնդիրը կառավարության լուրջ հոգսերից մեկը պետք է լինի։

Էլն ընկերային խնդիրների մասին մենք չենք խոսում այստեղ, որովհետև մեր նպատակն է ընդգծել մոմենտի հարցերը։ Ինչ ասել կուզե, որ առաջին իսկ հնարավոր դեպքում կառավարությունը կզբաղվի սոցիալական լուրջ բարենորոգումներով, և այստեղ կարիք չկա բացատրելու բնույթը այդ բարենորոգումների, որովհետև նրանք բխելու են սոցիալիստներից կազմված կառավարության աշխարհայացքից։

Ապավինելով Հայաստանի աշխատավոր ժողովրդի ռազմական ուժերին և հենվելով Խորհրդարանի վստահության և աջակցության վրա՝ կառավարությունը կլարե իր բոլոր ուժը, որպեսզի հետու պահե երկիրը արտաքին փոթորիկներից և տա ժողովրդին խաղաղություն և անարգել զարգացման հնարավորություններ։

Մեր բուռն փափագն է դարձնել ազատ և անկախ Հայաստանը ապահով և բարգավաճ»։

Հայտարարությունը ընդունվում է երկարատև ծափահարությամբ։

Ապա արտահայտվում են կուսակցությունների ներկայացուցիչները։

Պատգամավոր Ս. Թորոսյան. «Հայաստանի Խորհրդարանի պատգամավորներ, Հայաստանի անկախությունը, որի համար երազել են տասնյակ տարիներ և դարեր շարունակ, կյանքի կոչվեց շատ ծանր

օրերում, երբ աշխարհի հզորները բախվում էին, երբ կառավարությունը չէր կարող ուրույն ճանապարհով գնալ։ Նորակազմ փոքր պետությունների, մանավանդ մեծ ճանապարհների վրա ապրողների դրությունը շատ խախուտ էր։

Մեր ցանկությունները չեն իրագործվել, որովհետև բախվելով ուժեղների կամքի հետ ջարդվում են։ Մեր հանրապետության նախկին կառավարություններն ունեցել են սխալներ։ Սխալներ կունենա նոր կառավարությունը ևս։ Բայց այդ սխալները նման են նորածնունդի արարքներին։ Մեր հանրապետությունը նորածնունդ է՝ երկուս և կես տարեկան։ Նրա կյանք առնելու նախօրյակին կատարվեց ռուսական մեծ հեղափոխությունը, երբ ամեն ոք լցվում էր նորանոր ցանկություններով և ձգտումներով։ Դեգերումների նպատակը նորը և լավը գտնելն էր, որ սակայն, չէր գտնվում։ Վերջին դեպքերը մեզ ապացուցեցին, որ մեր հանրապետական զորքը որակով էլ այնքան բարձր չի եղել, ինչպես քանակով։ Կառավարության դեկլարացիան լսելուց հետո անհրաժեշտ ենք համարում ասելու, որ նախ զորքի լավ մարզվելը նպատակ դարձվի, աշխատելով որակը մեծապես բարձրացնել։ Լայն ուշադրություն դարձնել տեղական ինքնավարությունների զարգացման և ուժեղացման վրա։ Արդարադատությունը և դատարաններն ուժեղացնել՝ ստեղծելով իսկական ուժեղ դատարաններ, խստիվ պատժելով բոլոր հանցավորներին և չարագործներին։ Խնամատարությունը, որ բարեկարգ վիճակում է եղել, աշխատել չթուլացնել։ Հաղորդակցության վրա դարձնել ամենամեծ ուշադրություն. գաղտնիք չէ, որ հաղորդակցությունը շատ թույլ է մեզանում։ Հաղորդակցության կանոնավոր միջոցներից է կախված մեր ներքին բնականոն կյանքը։ Նորմալ հաշտություն կնքել Ազրբեջանի հետ, որի հետ կողք կողքի վիճակված է մեզ ապրել, պահպանելով խաղաղություն և բարեկամական հարաբերություններ։ Հայաստանը՝ Հայաստանում ապրող ժողովուրդների հայրենիք է. պետք է ուժեղացնել ներքին համերաշխությունը։ Թուրքիայի հետ պետք է կնքել անկեղծ հաշտություն։ Ռուս ժողովրդի հետ մենք չենք եղել թշնամի և չենք ուզում լինել։ Նա պետք է հաշտվի մեր անկախ գոյության հետ, իսկ եթե նա շարժվի մեր վրա անկախությունը ոչնչացնելու նպատակով՝ մենք նրան զենքով կդիմավորենք։ Մեզ պետք է պատվավոր հաշտություն բոլորի հետ։

Հայաստանը ստեղծել է հայ գյուղացիությունը և նրա մեջ ապրողները գյուղացիներ ու բանվորներ են. ժողովրդական կառավարությունը պետք է ստեղծե ընդհանուր կամք։

Մի մեծ պարտականություն ևս ունի կառավարությունը՝ պայքարել տնտեսական ճգնաժամի դեմ չեզոքացնելով շահագործումը։ Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիան վստահություն է հայտնում այս կառավարությանը։

Սոցիալիստ-հեղափոխականների կողմից խոսում է պատգամավոր Թումանյանը. «Մեր վերաբերմունքը այս կառավարության հանդեպ բխում է այն բանից, որ մենք տվել ենք նրան մեր երկու ներկայացուցիչները։ Կառավարության դեկլարացիան ընդհանուր գծերով մեր ֆրակցիային բավարարում է։

Մենք կուզեինք իմանալ, թե ի՞նչ նոր գծեր է մտցնում այս կառավարությունը եղած քաղաքականության մեջ։ Մեծ խոստումներ չի տալիս հեղ այս կառավարությունը. մենք ցանկանում ենք, որ այդ փոքր խոստումները լինեին անկեղծ։

Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան այս կառավարությանը խոստանում է իր աջակցությունը»։

Ի վերջո, նախագահը կարդում է Հ. Հ. Դաշնակցության ֆրակցիայի առաջարկած հետևյալ բանաձևը. «Խորհրդարանը լսելով նախարարապետի դեկլարացիան՝ հավանություն է տալիս»։

Ուրիշ բանաձևեր չկան։ Բանաձևը քվեարկվում է և ստանում կողմ 30 ձայն, դեմ՝ ոչ մի և ձեռնպահ՝ 2 ձայն։

Հայաստանի խորհրդարանի վերջին գումարումն էր այս՝ հուզումնալից, չասելու համար ողբերգական. այնուհետև խորհրդարանը նիստ չունեցավ։ Հետագա դեպքերը տեղի ունեցան անմիջապես կառավարության կողմից, երբեմն խորհրդարանի անդամների և նախագահության անպաշտոն խորհրդակցությամբ։

Հայ ժողովուրդը սրտատրոփ հրաշք էր սպասում նոր կառավարությունից, բայց հրաշքների ժամանակը անցել է։ Քաջազնունին իրավունք ուներ, նոր կառավարությունը պիտի զոհաբերվեր հայրենիքի փրկության սեղանի վրա։

ԳԼՈՒԽ ԼԳ

ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Ի՞նչ էր սպասում հաշտարար պատվիրակությանը Ալեքսանդրապոլում։ Լավատեսության ոչ մեկ հիմք կարելի չէր նախատեսել։

Պատերազմի ընթացքը և, մանավանդ, զինադադարի պայմանները ցույց տվին, թե Քյազիմ Կարաբեքիրը անողոք է դեպի հայերը։ Անհաշիվ փաստեր վկայում էին նույնպես, որ, բոլշևիկները իրական օգնություն չպիտի հասցնեն Հայաստանին հայ-թրքական հարաբերությունների հարցում։ Հայաստանը լքված էր թե, այսպես կոչված, բարեկամներից, մատնված էր անողորմ թշնամիներին։

Երևանից մեկնելուց առաջ, պատվիրակության նախագահ Ա. Խատիսյանը տեսակցություն է ունենում Չիչերինի ներկայացուցիչ Բուդու Մդիվանիի հետ, որ Երևան էր եկել, իբր թե, որպես խորհրդային միջնորդ հայերի և թուրքերի միջև։ Խոսքը տանք իրեն՝ Խատիսյանին։

«Մեկնելուց առաջ,— պատմում է նա,— մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիո ներկայացուցիչներին (Լեգրան և Բ. Մդիվանի, որոնք մի քանի օր առաջ հասել էին Երևան։—Ս. Վ.) ազդեցություն գործ դնել թուրքերու վրա մեզ համար նպաստավոր մտքով։ Մենք ծանոթացուցինք Լեգրանին և Մդիվանիին մեր ցանկություններուն և ի պատասխան լսեցինք խոստում օգնելու»*։ Բ. Մդիվանին, Մոսկվայի լիազորությամբ, պիտի մեկներ Ալեքսանդրապոլ և պիտի մասնակցեր բանակցություններին, իբրև միջնորդ թուրքերի և հայերի միջև։

Մդիվանին Հայաստան էր ուղարկվել Մոսկվայի կառավարության կողմից, որի օգնության էր դիմել Հայաստանի կառավարությունը։

Թե Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները ինչպես օգնեցին Հայաստանին, այդ երևում է նույն Խատիսյանի պատմածից. «Բանակցությունների ընթացքում,— ասում է նա,— թուրքերը մերժեցին որևէ միջամտություն Խորհրդային Ռուսաստանի կողմից, ոչ էլ ընդունեցին Մդիվանիի միջնորդությունը։ Խատիսյանի դիմումի վրա՝ Մդիվանին խոստանում է դրսից աջակցություն ցույց տալ, բայց,— ասում է Խատիսյանը,— հարկ կհամարեմ վճռականապես հայտարարելու, թե ան ավելի շատ խանգարեց մեզ, քան թե օգնեց։ Խանգարեց այն բանով, որ, ինչպես Ալեքսանդրապոլի, այնպես և Կարսի մեջ, կկազմեր միտինգներ, ճառեր կարտասաներ մեր դեմ, կպախարակեր Հայաստանի կառավարությունը և պատվիրակությունը, կքարոզեր բոլշևիկյան ծրագրեր և այսպիսով ցույց կուտար թուրքերուն, թե ան իրոք մեր դեմ է և ոչ թե մեզ հետ... Ես կարող եմ հաստատել, որ Ալեքսանդրապոլի մեջ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը բացարձակապես ոչ մեկ օգնություն ցույց չտվավ Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը»*։

Տարբեր չէր և Լեգրանի ընթացքը. նա գնաց Բաքու և վերադարձավ միայն հոկտեմբերի սկիզբը։ Ի՞նչ արավ նա Բաքվում, կամ ի՞նչ տեղի ունեցավ այնտեղ, մանրամասնությունները հայտնի չեն մեզ, բայց ինչ որ հայտնի է կասկած չի թողնում, որ Բաքվում որոշվեց, օգտվելով դեպքերի նպաստավոր դասավորությունից՝ Հայաստանը ենթարկել խորհրդայնացման։

Այսպես՝ նոյեմբ. 4-ին, Բաքվում, տեղի է ունենում Ազրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի Քաղբյուրոյի և Համամիութենական կոմունիստական կուսակցության Կենտր. կոմիտեի Կովկասյան բյուրոյի անդամների լիագումար ժողովը, որին մասնակցում է և ինքը՝ Ստալինը։ Օրակարգի հարցեր են լինում՝ բանակցություններ Վրաստանի հետ և կացությունը Հայաստանում**։

Պաշտոնական հաղորդագրություն չկա այդ ժողովի որոշումների մասին, բայց զարտուղի տեղեկություններից և դեպքերի հետագա ընթացքից կարելի է ստույգ կերպով ասել, թե այնտեղ ծանրակշիռ որոշում է տրվել Հայաստանի մասին՝ միջոցներ ձեռք առնել անմիջապես խորհրդային վարչաձև մտցնել Հայաստանում։ Քան երևույթին, որոշված է եղել նաև, արտաքին աշխարհի առջև «դավիչ» չերևալու համար, խորհրդայնացումը կատարել «խաղաղ» եղանակով, այսինքն՝ Հայաստանի կառավարության «հոժարությամբ»։ Դրանով են բացատրվում Լեգրանի հետագա քայլերը։

Անկասկած, նոյեմբ. 4-ի այդ ժողովը նկատի ունի տիկ. Օրջոնիկիձեն՝ այն օրերին Ստալինի աջ բազուկ և նույն Ստալինի կողմից հաշվեհարդարի ենթարկված Սերգո Օրջոնիկիձեի այրին, երբ իր ամուսնուն նվիրված «Մի բոլշևիկի ուղին» իր հատորում գրում է.

«Երբ 1920-ին Կովկաս ժամանեց Ի. Վ. Ստալինը, հետևյալ առաջադրանքը արավ՝ օժանդակել Հայաստանի ապստամբած աշխատավորությանը։

* Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 257։

* Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 262—263։

** Ի. Ստալին, Ամբողջական երկեր, հատոր 4, 1947, Մոսկվա, էջ 476։

Դաղստանի և Թերեքի համագումարների ավարտումից հետո, Սերգոն Բաքու վերադարձավ և 19 նոյեմբ. 1920-ին, 11-րդ բանակի զորամասերը ուղարկեց տապալելու համար դաշնակների ատելի կառավարությունը»։

Եվ Օրջոնիկիձեն ինքն էլ հաստատում է այս փաստը։ Նա վկայում է, որ «Պարտիան որոշել էր Հայաստանում իշխանությունը գրավելուց հետո զգույշ քաղաքականություն վարել։ Ուստի Ռևկոմը ստեղծվեց այնպիսի ընկերներից, որոնց դիրեկտիվ տրվեց չշտապեցնել Հայաստանի կոմունիզացիան, ստեղծել հայկական ժողովրդական կառավարություն, չվանել ինտելիգենցիայի լայն շրջանները և այլն»*։ Եվ մեղադրում է հայ բոլշևիկներին, որ սրանք «պարտիայի» գծից շեղվել են, բայց ինքը, իր ընթացքով, թե Փետրվարյան ապստամբության օրերին, թե դրանից առաջ համամիտ ու գործակից էր հայ բոլշևիկներին։ Քիչ վերջը կտեսնենք, թե ինչպես վարվեց նա իր գթությունը ողոքող Հ. Թուլյանյանի հետ։

Բայց այդպես չէր Օրջոնիկիձեի վերաբերումը դեպի վրացի բոլշևիկներն ու վրացի ժողովուրդը։ Նա պահանջում էր վրացի կոմունիստներից «ճկուն» քաղաքականություն վարել և թույլ չտալ, որ Վրաստանում դաժանություններ կատարվեն։ Երբ Հայաստանի Հեղկոմը խելագար բռնություններ էր գործադրում Երևանում և գավառներում, Օրջոնիկիձեն և նրանից բարձր կանգնած Լենինն ու Ստալինը լուռ հանդիսատես մնացին։ Երբ հերթը հասավ Վրաստանին, լեզուները բացվեցին, և ահա ինչ էր հեռագրում Լենինը, Օրջոնիկիձեի միջոցով, վրաց համայնավարներին.

«Անհրաժեշտ է զիջումների հատուկ քաղաքականություն վարել վրացական մտավորականության և մանր առևտրականների նկատմամբ...

Վիթխարիորեն անհրաժեշտ է ընդունելի կոմպրոմիս փնտրել բլոկ կազմելու Ժորդանիայի կամ նրա նման վրացական մենշևիկների հետ։

Խնդրում եմ հիշել, որ Վրաստանի ներքին և միջազգային պայմանները վրացական կոմունիստներից պահանջում են ոչ թե կիրառել ռուսական շաբլոնը, այլ հմուտ և ճկուն կերպով ստեղծել յուրահատուկ մի տակտիկա, որը հիմնված լինի ամեն տեսակ մանր-բուրժուական տարրերին մեծ զիջողություններ անելու վրա»**։

Հայաստանի «ներքին և միջազգային պայմանները» չէին թելադրում «մեծ զիջողություններ» անել, այնտեղ կարելի էր «կիրառել ռուսական շաբլոնը»։ Եվ կիրառեցին։ Եվ Օրջոնիկիձեն եղավ գլխավոր կիրառողներից մեկը...

* Ի. Կ. Օրջոնիկիձե, *Ընտիր հոդվածներ և ճառեր*, Երևան, 1950, էջ 58։
** Նույն տեղը, էջ 38։

Նոյեմբերի 20-ին, Մդիվանիի հետ, Բաքվից Երևան վերադառնալով՝ սրանը շարունակեց իր երկդիմի ընթացքը՝ մի կողմից ձևանալով հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, մյուս կողմից աշխատելով փութացնել Հայաստանի խորհրդայնացումը՝ թե՛ անձամբ և թե՛ դեսպանության հայ բոլշևիկների միջոցով։

Կարսի անկումից հետո, պատերազմի ընթացքը հայերի համար դարձավ այլևս հուսահատական։ Տեղի ունեցավ կառավարության փոփոխություն և նոր վարչապետ Ս. Վրացյանին վիճակվեց բանակցությունները վարելու պարտականությունը Լեգրանի հետ։

Պաշտոնի անցնելուց անմիջապես հետո, նա հարաբերության մեջ մտավ Լեգրանի հետ։ Կառավարության նպատակն էր սերտ բարեկամություն հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ և ապահովել նրա աջակցությունը։ Ամենքի համար պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պետք է լիներ, կամ պետք է դառնար Թուրքերի ձեռքին խաղալիք, եթե չբնաջնջվեր իսպառ։ Նա հարցը դնում է հստակ ու վճռական կերպով՝ Ռուսաստանը կարո՞ղ է Հայաստանին օգնել և, եթե այո՝ ինչո՞վ և ինչպե՞ս։ Նույնքան պարզ ու վճռական է լինում և Լեգրանի պատասխանը։ Նա առաջարկում է հետ կանչել Խատիսյանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլից, մերժել Թուրքերի պահանջները և խորհրդային զորք մտցնել Հայաստան։

Վրացյանի հարցումին, թե ի՞նչ երաշխավորություն, որ մինչև խորհրդային զորքերի տեղ հասնելը Թուրքերը չեն շարժվի Երևանի վրա ու նոր կոտորածներ առաջ չեն բերի, Լեգրանը պատասխանում է, թե Թուրքերը այդպիսի քայլ չեն առնի։

Վրացյանը ցույց է տալիս Լեգրանին, որ մինչև ռուսները կարողանան շոշափելի ուժ հասցնել Երևան, առնվազն մեկ շաբաթ պիտի պահանջվի, մինչդեռ Թուրք բանակը կանգնած էր Արաքսի ափին, Մարգարայի կամուրջի մոտ, հազիվ 20—25 մղոնի վրա Հայաստանի մայրաքաղաքից։ Եթե կառավարությունը խզե բանակցությունները, այդ պիտի նշանակե պատերազմի վերսկսում. ի՞նչ ուժ կարող էր արգելել Թուրքերին Հայաստանի մնացած մասն էլ գրավելու։ Խորհրդային իշխանության խո՞սքը։ Ի՞նչ երաշխիք, որ Թուրքերը կարևորություն կտան այդ խոսքին։

Ծանոթ էր բոլշևիկյան զորքերի քանակն ու որակը Հյուսիսային սահմանների մոտ։ Նրանք ի վիճակի չէին պաշտպանելու Հայաստանը Թուրքերի ներխուժման դեպքում։

Փորձից հայտնի էր նաև, որ Թուրքերը հաշվի չէին առնում բոլշևիկյան սպառնալիքները։

Այն ժամանակվա պայմաններում այս հարցերը խիստ ծանրակշիռ նշանակություն ունեին, իսկ այսօր արդեն ծանոթ է, որ բոլշևիկները շատ ավելի մեծ կարևորություն էին տալիս Թուրքերին, քան այս վեր-

ջինները՝ բոլշևիկներին։ Կասկած չկար, որ բոլշևիկները Հայաստանի պատճառով կռիվ չէին անի Թուրքերի հետ, եթե այս վերջինները չանսային Լեգրանի խոսքին և նորից հարձակվեին Հայաստանի վրա։

Լեգրանի խոսքերից պարզ էր և մի ուրիշ պարագա. նրան հայ ժողովրդի ապահովությունից ավելի հետաքրքրում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը, բայց այդպիսի պահանջ դեռ չէր կարող դնել, որովհետև շատ լավ տեսնում էր, որ հայ ժողովուրդը համակիր չէր Հայաստանի խորհրդայնացման։

Կառավարությունը նորից ու նորից պնդեց խորհրդ. Ռուսաստանի դիվանագիտական արագ աջակցության վրա։ Եթե, համոզում էր Վրացյանը Լեգրանին, խորհրդային իշխանությունը վստահ էր, որ Թուրքերը խորհրդային իշխանության հակառակ քայլ չէր առնի, ուրեմն, նրանց խոսքն էլ բավական պիտի լիներ, որպեսզի Թուրքերը ծայրահեղ պահանջներ չդնեին Հայաստանին։ Իսկ եթե խորհրդային կառավարությունը կարծում էր, թե Թուրքերը իրենց խոսքին ականջ չէին դնի, նշանակում էր մի քանի հարյուր ռուս զինվորների մուտքն էլ Հայաստանի սահմաններից ներս արգելք չէր լինի Թուրքերին վերջնականապես մաքրելու իրենց հաշիվը հայերի հետ, մանավանդ որ Թուրքերի գլխավոր մեղադրանքը հայերի դեմ այն է, թե նրանք գործիք են ռուսների ձեռքին։ Ուրիշ խնդիր, եթե ռուսները խոշոր բանակ ունենային Հայաստանի մոտ և պահանջված վայրկյանին կարողանային բավարար ուժ հասցնել, այն ժամանակ, հավանական էր, Թուրքերը չէին համարձակվի առաջ շարժվելու, բայց բոլշևիկները այդպիսի բանակ չունեին մերձակա վայրերում։

Վրացյանը խորհրդային զորքեր մտցնելու, և Հայաստանը խորհրդայնացնելու դեմ առաջ է բերում և այլ կարգի առարկություններ։ Խորհրդայնացման դեպքում Հայաստանը բոլորովին պիտի կտրվեր Եվրոպայից ու Ամերիկայից և պիտի զրկվեր այն պարենից, որ ստանում էր այնտեղից։ Այդ պիտի նշանակեր սովամահություն հայ ժողովրդի համար, որովհետև Ռուսաստանը ինքն էլ սովահար՝ ի վիճակի չէր Հայաստանին ուտելիք հասցնելու։

Երկրորդ՝ Հայաստանի խորհրդայնացումը մահացու հարված պիտի հասցներ՝ Հայկական հարցին և Հայաստանին տրված բոլոր միջազգային հանձնառություններին ու դաշնագրերին։ Մինչդեռ, եթե Հայաստանը պահվեր անկախ, թե՛ դրսի աշխարհից չէր կտրվի, թե՛ կմնար Հայկական հարցի իրավատեր։ Խորհրդ. Ռուսաստանին հարկավոր էր Հայաստանի բարեկամությո՞ւնը՝ հայերը այդ կապահովեին։ Բոլշևիկների համար անհրաժեշտ էին Հայաստանի ճանապարհնե՞րը՝ հայերը կտային։

Լեգրանը պատասխանում է. հայերը ընդմիշտ պետք է հրաժարվեն Եվրոպայից և Ամերիկայից և խաչ քաշեն Սևրի դաշնագրի վրա։ Հայերը իրենց հույսը պետք է կապեն միայն համաշխարհային հեղափոխության և բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ։ Ծիծաղելի է խոսել ինչ-որ ալյուրի մասին, որ ամերիկյան բանկիրներն ու պատվելիները, իբրև ողորմություն, շպրտում են հայերի առջև. ի՞նչ բան է Ռուսաստանի համար Կուբանից մի քանի միլիոն փութ ալյուր հասցնելը Հայաստան։

Լեգրանը առարկում է և Հայաստանի սահմանների վրա ռուս զորքեր կենտրոնացնելու դեմ. այդ կարող էր դժգոհություններ առաջացնել Թուրքերի կողմից և առիթ դառնալ անբաղձալի հետևանքների։ Թուրքերին պետք էր դնել կատարված փաստի առջև և մինչև Ալեքսանդրապոլ գրավել ռուսական զորքերով։

Բանակցությունները դրական արդյունք չտվին. կառավարությունը վախենում էր, որ եթե կարմիր բանակը Հայաստան մտներ հյուսիսից, Թուրքերը առաջ կշարժվեին հարավից և ռուսների հասնելուց շատ առաջ կգրավեին Երևանը։ Այդ պատճառով, կառավարությունը աշխատում էր Ալեքսանդրապոլի բանակցությունները չխզել և հաշտության հարցը հասցնել իր տրամաբանական վախճանին։ Բայց այդ էլ հեշտությամբ լուծվելիք խնդիրներից չէր. Թուրքերը անզիջող էին և խոսում էին վերջնագրերով։

Մինչ բանակցությունները Լեգրանի հետ շարունակվում էին, վերջին, նոյեմբ. 29-ին, վերջնագրի ձևով, կառավարությանը արավ հետևյալ հայտարարությունը. «Ռուսաստանի կոմունիստ. կուսակցության Կենտրոնական կոմիտեն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր։ Հայաստանի Հեղկոմը արդեն ոտք է դրել Հայաստանի հողի վրա։ Դանդաղելը հղի է ծանր հետևանքներով։ Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»։ Եվ հաջորդ առավոտ ներկայացրեց Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ։

Եվ հիրավի ինչպես հետո իմացվեց, նոյեմբ. 29-ին Բաքվից մի խումբ հայ բոլշևիկներ մտել էին Իջևան գյուղը, Ազրբեջանի սահմանի վրա, և Հայաստանի խորհրդայնացման հայտարարություն արել։

Այսպես, ուրեմն, մի կողմից Թուրքերն էին ապառնալիքով և վերջնագրերով խոսում, մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները։ Հայաստանը ընկել էր երկու կրակի միջև։ Կառավարությանը ուրիշ ելք չէր մնում, բայց եթե ընտրելով փոքրագույն չարիքը, տեղի տալ և հակացողությունը զալ խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցչի հետ։ Հայաստանի խորհրդայնացումը այլևս դառնում էր անխուսափելի։

Նոյեմբ. 30-ին սկսվեցին բանակցությունները կառավարության ներկայացուցիչ Գրոյի ու Հ. Տերտերյանի և Լեգրանի միջև, որոնք տևեցին երկու օր։

Եվ մինչ Երևանում տեղի էին ունենում այդ բանակցությունները, անդին Բաքուն ցնծությամբ տոնում էր իր դավադրության հաղթանակը։

Դեկտեմբերի 1-ին, երբ Հայաստանը դեռ խորհրդայնացած չէր, տե-

ղի ունեցավ Բաքվի խորհուրդների հանդիսավոր նիստը «Հայաստանի խորհրդայնացման առթիվ»։ 11-րդ բանակի ռազմակոմիսար Օրջոնիկիձեն վերամբարձ հռետորությամբ սկսեց իր ճառը. «Ընկերներ, դժվար թե որևէ մի տեղ կարելի՛ է գտնել երջանիկ մի սրահ, որքան այս սրահը... Այսօր, հենց այս սրահում, Բաքվի պրոլետարիատը ողջունում է հայկական սովետական ռեսպուբլիկայի ծնունդը...»

Նույն նիստում Ազրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովը կարդաց Հեղկոմի դեկլարացիան, որով հանդիսավոր կերպով հայտարարվում էր, որ խորհրդ. Ազրբեջանը զիջում է եղբայրական Հայաստանին Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը։

Օրջոնիկիձեն այդ մասին էլ բարձր հռետորություն արավ.

«Ընկերներ,— ասաց նա,— շատ բնորոշ է ընկ. Նարիմանովի ելույթը. նա մեզ կարդաց իր դեկլարացիան։ Զանգեզուր, Նախիջևան և Ղարաբաղ անունները այդ խոսքերի բովանդակությանն անծանոթ ռուս մարդու ականջին բոլորովին ոչինչ չեն ասում։ Ինչ-որ Զանգեզո՜ւր՝ անբերրի լեռներ. ո՛չ հաց կա, ոչ ջուր։ Այնտեղ ոչինչ չկա։ Ինչ-որ Նախիջևան՝ ճահիճ, մալարիա և ուրիշ ոչինչ։ Ինչ-որ Լեռնային Ղարաբաղ։ Ի՞նչ կա այդ Ղարաբաղում։ Ոչի՛նչ չկա։ Եվ ահա ընկ. Նարիմանովն ասում է. «Դրանք ձե՛զ վերցրեք։ Այդ անբերրի հողերը վերցրեք Հայաստանի համար»։ Կարծես թե խորհրդային Ազրբեջանը ազատվում է մի ավելորդ բեռից։ Բայց ո՛չ։ Այդ գավառներում, այդ անբերրի հողերի մեջն է կայանում այստեղ, Անդրկովկասում, այսպես կոչված, հայ-մուսուլմանական հարցի հանգույցը»։

Եվ հիշելով ցարական շրջանի հայ-մուսուլմանական արյունոտ բախումները՝ Օրջոնիկիձեն ոգևորությամբ ասում է.

«Եվ ահա այսօր՝ Ազրբեջանական հանրապետության ղեկավարը հանդես է գալիս ու ասում. «Այդ սարսափելի հարցն այլևս գոյություն չունի...» Այստեղ կարդացված այս ակտը մեծագույն կարևորություն ունեցող ակտ է. սա պատմական մի ակտ է, որ մարդկության պատմության մեջ իր օրինակը չունի»*։

Վերջը հայտնի եղավ, որ թե Նարիմանովի, թե Օրջոնիկիձեի ճառաբանությունները անկեղծ չէին, այլ նպատակ ունեին խաբել հայ բոլշևիկներին և հանրային կարծիքը. Ղարաբաղն ու Նախիջևանը մնացին և մինչև այսօր էլ մնում են Ազրբեջանի տիրապետության տակ։ Մի խաբեություն, որ «մարդկային պատմության մեջ իր օրինակը չունի...»

Այդ նույն պատմական անօրինակ դեպքի մասին իր հիացումը հայտնեց և Ստալինը. «Դեկտեմբերի մեկին,— գրում էր նա «Պրավդայի» դեկտ. 4 համարում.— խորհրդ. Ազրբեջանը հոժար կամքով հրաժարվում է վիճելի գավառներից և հայտարարում է Զանգեզուրի, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հանձնումը խորհրդ. Հայաստանին... Դարավոր թշնամությունը Հայաստանի և նրան շրջապատող մուսուլմանների միջև վճռվեց մեկ հարվածով՝ եղբայրական համերաշխության հաստատումով աշխատավոր Հայաստանի, Ազրբեջանի և Թուրքիո միջև»*։

Դեկտ. 2-ին ստորագրվեց հետևյալ համաձայնագիրը Հայաստանի կառավարության ներկայացուցիչների և Լեգրանի միջև։

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

«2 դեկտ. 1920 թ., մի կողմից Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանը Ռ. Կ. Կ. Կ. Կ.-ի լիազորությամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարության, և մյուս կողմից, ընկերներ Դրոն և Տերտերյանը, ի դիմաց Հայաստանի Հանրապետության կառավարության՝ կնքեցին համաձայնություն հետևյալի մասին.

1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական խորհրդային Հանրապետություն։

2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը, կազմվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում։

3. Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգը իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովե երկաթուղու տիրապետությունը՝ Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գավառը և Ղազախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիս նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտ. 28:

4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարումը։

5. Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների (ս-հ., ս-դ.) անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկվեն կուսակցության պատկանելու և կոմունիստական կուսակցության դեմ մղված կռիվներին մասնակցելու և խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարած գործերի համար։

6. Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնում են Գինդ ան-

* Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 32—33։

* Ի. Ստալին, Երկեր, Մոսկվա, հատոր 4, էջ 414։

դամներ կոմունիստական կուսակցության կողմից նշանակված և երկու անդամ ձախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնելով կոմունիստական կուսակցության հետ։

7. Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետության պաշտպանության համար անհրաժեշտ զինվորական ուժեր։

8. Սույն համաձայնագիրը ստորագրվելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը քաշվում է իշխանությունից։ Իշխանությունը ժամանակավոր կերպով, մինչև Հեղափոխական կոմիտեի գալը, անցնում էր զորահրամանատարության, որի գլուխն է կանգնում Դրոն։ Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կողմից Հայաստանի զորահրամանատարության կից կոմիսար է նշանակվում ընկ. Սիլինը։

Պատրաստված է երկու օրինակ։

Ռ. Ս. Ֆ. Ս. Հ., լիազոր ներկայացուցիչ՝ ԼԵԳՐԱՆ։

«Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությամբ՝ ԴՐՈ և ՏԵՐՏԵՐՅԱՆ»*։

Միաժամանակ Լեգրանի և կառավարության միջև համաձայնություն կայացավ, որ դեկտ. 2-ի գիշերվա ժամը 12-ին իշխանությունը հանձնվի զին. նախարար Դրոյին և սա, խորհրդական ունենալով Լեգրանի ներկայացուցիչ Սիլինին, կառավարե երկիրը, մինչև Հեղկոմի ժամանումը Ազրբեջանից։ Նույն իմաստով խմբագրվեց ու հրատարակության տրվեց նաև հետևյալ «ակտը», որ հեռագրվեց գավառական իշխանություններին ու զորամասերի պետերին ի գործադրություն և փակցվեց Երևանի պատերին։

ԱԿՏ

«Նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր 1920 թվի դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական և քաղաքացիական բովանդակ իշխանությունը զորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին։

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ս. ՎՐԱՑՅԱՆ.

Նախարարներ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ, Հ. ՏԵՐ-ՏԵՐՅԱՆ, Դ. ԿԱՆԱՅԱՆ։

Իսկականի հետ ճիշտ է՝

Դիվանապետ՝ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ»

* «Ժողովածու Գործող Դաշնագրերի». ռուսերեն, 3-րդ պրակ, Մոսկվա՝ 1922 թվ. 79, էջ 14-15. հրատ. Ռուսաստանի արտաքին գործավարության։

Այսպիսով Հայաստանը խորհրդայնանում էր բոլորովին խաղաղ կերպով, առանց որևէ հեղափոխության, առանց մեկի քիթը արյունելու։

Բայց այս հաբեի մեկ մասն էր միայն, կար և պատերազմի խնդիրը։ Թուրքերը հևիհև հետևում էին Երևանի դեպքերին և շտապում էին կանխել։

Նոյեմբ. 30-ի երեկոյան Քյազիմ Կարաբեքիր փաշան Հայաստանի պատվիրակության ներկայացրեց թրքական պայմանները և հաջորդ առավոտյան վերջնագրի ձևով պահանջեց այդ պայմանների ընդունումը, հակառակ պարագայում սպառնալով վերսկսել պատերազմական գործողությունները։

Թրքական պահանջները քննության առնվեցին նոյեմբերի 30-ի գիշերը, հատուկ մի ժողովում, որին մասնակցում էին Խորհրդարանի դիվանը, երեսփոխաններ, կառավարության անդամներ, Հ. Հ. Դ. բյուրոն իր ամբողջ կազմով և մի շարք անհատ գործիչներ ու զինվորականներ։

Հաշտության խնդրից առաջ արդեն որոշված էր ընդունել Լեգրանի վերջնագիրը, այժմ պետք էր գտնել թրքական դաժան պայմաններից խուսափելու միջոցը։ Զևականորեն այդ միջոցը արդեն գտնված էր. որոշված էր իշխանությունը զիջել բոլշևիկներին, հեշտ էր դաշնագրի ստորագրությունն էլ թողնել նրանց։ Բայց արդյոք ա՞յդ կլիներ լավագույն ելքը։ Անձնապես Հայաստանի ղեկավարության համար, իհարկե, այդ կլիներ բարիք. պատմության առաջ նա ազատ կլիներ Ալեքսանդրապոլի «խայտառակ» դաշնագիրը ստորագրելու պատասխանատվությունից, բայց դրանից հայ ժողովուրդը կշահե՞ր։

Այս անողոք հարցը ցցված էր նոյեմբ. 30-ի գիշերվա ժողովին մասնակցողների առջև։ Եթե մերժեին դաշնագրի ստորագրությունը, թուրքերը Հայաստանի մնացած մասն էլ չէի՞ն կործանի։ Բոլշևիկները կկարողանայի՞ն ազդել թուրքերի վրա, ընդունակ կլինեի՞ն փրկելու երկիրը սպառնացող մահացու վտանգից։

Լսվեցավ նախարարի և զինվորական մասնագետների կարծիքը։ Պատասխանը եղավ բացասական. եթե մերժեին Քյազիմ Կարաբեքիրի պահանջը, թուրք բանակը, ամենայն հավանականությամբ, առաջ պիտի շարժվեր և մինչև ռուս զորքերի հասնելը Էջմիածինն ու Երևանն էլ պիտի գրավեին, հարակից շրջաններով միասին։ Հետագայում ռուսները կարող էին հեռացնել թուրքերին, բայց սրանք արդեն ավերն ու կոտորածը գործած կլինեին։

Նույն էր և գրեթե բոլոր ժողովականների կարծիքը։ Հանուն հայ ժողովրդի փրկության, պետք էր ստանձնել պատասխանատվությունը պատմության առջև և ստորագրել դաշնագիրը։ Եթե բոլշևիկները, իրոք, այնքան ազդեցիկ էին թուրքերի առջև, նրանց համար դժվար չէր լինի մերժել «Դաշնակների» ստորագրությունը և Հայաստանի համար ավելի նպաստավոր դաշնագիր կնքել։ Եթե բոլշևիկները այդ կարողությունը

պիտի չունենան վաղը, նշանակում է այսօր էլ նրանց խոստումները անարժեք էին։

Այս նկատումներով և այս գիտակցությամբ ժողովը որոշեց լիազորել Ալեքսանդրապոլի պատվիրակության ընդունելու Թրքական պայմանները և ստորագրելու հաշտության դաշնագիրը։

Կասկած չկա, որ հայ բոլշևիկներն էլ, Մոսկվայի ճնշումով, ստիպված պիտի լինեին ստորագրել Ալեքսանդրապոլի դաշնագիրը, ինչպես մոտ մի տարի վերջը ստորագրեցին Կարսի ավելի խայտառակ դաշնագիրը։ Ազգային տեսակետով Ալեքսանդրապոլի դաշնագիրը պատմական անհրաժեշտություն էր, դժբախտ, բայց անխուսափելի։

Դեկտ. 2-ի գիշերը ստորագրվեց հայ-թրքական հաշտության դաշնագիրը, որի ամփոփումը հետևյալն է։ Այս ամփոփումը արել է Պատվիրակության նախագահ Ա. Խատիսյանը։ Դաշնագրի բնագիրը, որ ժամանակին հանձնվել է հեղկոմի նախագահ Ս. Կասյանին, չի հրատարակված պաշտոնապես։

«1. Թուրքիայի Ազգային մեծ ժողովը պարտավորվում է ճանաչել Հայաստանի անկախությունը հետևյալ սահմաններում. Ախալքալաքի գավառի հարավային մասից Ուշ-Թափալար սարը դեպի հարավ մինչև Բաշ Շորագյալ, մինչև Արփաչայ՝ Արփաչայի հոսանքը մինչև նրա խառնվելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչև Արաքս կայարանը, այստեղից դեպի Մարտիրոս մինչև Չայքենդ գյուղը։

2. Կարսի նահանգը և Սուրմալուն համարվում են վիճելի, մինչև երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների։ Հանրաքվեի ժամանակ պետք է մտնեն այնտեղ խառն հայ-թրքական ժանդարմերիա։

3. Հայերը հրաժարվում են Սևրի դաշնագրից. հետ՝ են կանչում բոլոր այն կոմիտեները և ներկայացուցիչները, որոնք գոյություն ունին Եվրոպայում, չեն պահում Հայաստանում դաշնակիցների ո՛չ մի ներկայացուցիչ, մինչև որ Թուրքիան հաշտության դաշն կնքե նրանց հետ։

4. Հայաստանը իրավունք ունի պահելու զորաբանակ ոչ ավելի քան 1500 սվին և դրան համապատասխան քանակով սպաներ, նաև անհրաժեշտ քանակությամբ ժանդարմներ։ Երկիրը պաշպանելու համար կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են զինվել միայն պաշտպանողական ծանր թնդանոթներով։ Վերացվում է պարտադիր զինվորությունը։

5. Հայաստանի վրա հարձակման դեպքում Թուրքիան պաշտպանում է հայոց կառավարության պահանջմամբ և աջակցում է Հայաստանին զորքով։

6. Թուրքիան և Հայաստանը փոխադարձաբար օգտվում են ազատ տրանզիտից, ինչպես երկաթուղիներով, այնպես և բոլոր ճանապարհներով։

7. Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր։

8. Պայմանները կնքվելուց հետո, սկսում են աշխատել երկաթուղիները, վերադառնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսվում են աշխատանքները Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանները որոշելու համար, վերադառնում են բոլոր ռազմագերիները։

9. Հայաստանի կապած բոլոր պայմանները Թուրքիայի դեմ համարվում են անվավեր։

10. Բոլոր գաղթականները կարող են վերադառնալ իրենց տները մի տարվա ընթացքում՝ օգտվելով բոլոր քաղաքացիական իրավունքներից, բացի այն գաղթականներից, որոնք զինված դիմադրություն են ցույց տվել իրենց կառավարության դեմ։

11. Հայերը Թուրքիայում և Թուրքերը Հայաստանում վայելում են հավասար քաղաքացիական իրավունքներ։

12. Դիվանագիտական, ինչպես և հյուպատոսական հարաբերությունները, ինչպես և քաղաքացիական ազատ երթևեկությունը երկու երկրների միջև, սկսվում է դաշնագիրը ստորագրվելուց հետո, որից հետո վերսկսվում են փոստային և հեռագրական հաղորդակցությունները Թուրքիայի և Հայաստանի միջև։

13. Շարուրը և Նախիջևանը ժամանակավորապես օժտվում են ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որ որոշվի նրանց բախտը։

14. Այս դաշնագիրը պետք է ենթարկվի վավերացման Հայաստանի Խորհրդարանի և Ազգ. մեծ ժողովի կողմից մի ամսվա ընթացքում։

15. Թուրքիան պարտավորվում է Հայաստանի գրավված հողամասերը դատարկել, երբ Հայաստանը կսկսե զորացրում, և վերջնականապես կդատարկե, երբ հայկական զորքի թիվը կհասնի պայմաններում որոշված չափին»։

Տարիներ հետո, Ազգ. ժողովի մեջ արտասանած իր նշանավոր ճառում, Մուստաֆա Քեմալը այսպես արտահայտվեց այդ դաշնագրի մասին. «Հաշտության բանակցությունները, որոնք սկսվել էին նոյեմբ. 26-ին, վերջացան դեկտ. 2-ին, և դեկտ. 2-ի լույս 3-ի գիշերը ստորագրվեց Գյումրիի դաշնագիրը։ Պարոններ, Գյումրիի դաշնագիրը առաջին դաշնագիրն է, որ ստորագրել է ազգային կառավարությունը... Արևելքում առաջ եկած կարևոր փոփոխությունների հետևանքով, այս դաշնագիրը փոխարինվեց հետագայում կնքված դաշնագրով, այսինքն՝ 1921 թ. մարտի 16 Մոսկվա և 1921 թ. հոկտ. 13 Կարսի դաշնագրերով»*։

* «Discours du Ghazi Moustafa Kemal», 1929, Leipzig, p. p. 390–92:

Ճակատագրի ի՞նչ հեգնանք. 1918 թ. հունիսի 4-ին, Բաթումի դաշնագրով Թուրքիան եղավ առաջին պետությունը, որ ճանաչեց Հայաստանի անկախությունը։ Այժմ Հայաստանը առաջին պետությունն էր, որ ճանաչում էր քեմալական Թուրքիայի անկախությունը։

Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում վեր առնել և հետևյալ կետը. Ի՞նչ իրավական հիմք ունի այդ դաշնագիրը։ Բոլշևիկները և ուրիշներ ասում են, որ Հայաստանի կառավարությունը, դեկտ. 2-ին, Լեգրանի հետ Հայաստանի խորհրդայնացման պայմանը ստորագրելուց հետո, այլևս իրավունք չուներ օտար պետությունների հետ դաշնագրեր ստորագրելու։ Սրան կարելի է առարկել այն փաստով, որ, ըստ Լեգրանի հետ կնքված պայմանի, իշխանության փոխանցումը տեղի պիտի ունենար դեկտ. 2-ի գիշերը և, ուրեմն, մինչև այդ՝ Հայաստանի կառավարությունը սահմանափակված չէր իր իրավունքների մեջ։ Դաշնագիր ստորագրելու լիազորությունը Խատիսյանի պատվիրակության՝ կառավարությունը տվել էր դեկտ. 1-ին, հետևաբար, միջազգային օրենքի և փաստական կացության տեսակետով՝ Հայաստանի կառավարության ընթացքը հակաօրինական հանգամանք չուներ։

Մյուս կողմից, ինչպես ասում է Մուստաֆա Քեմալը—«դեկտեմբ. 2-ի լույս 3-ի գիշերը»—և ինչպես վկայում է Ա. Խատիսյանը, դաշնագիրը ստորագրվել է դեկտ. 2-ի գիշերվա ժամը 12-ից հետո։ Արդյո՞ք այս պարագան բավարար հիմք է մերժելու համար դաշնագրի օրինականությունը։ Այս առթիվ էլ կարելի է դիտել տալ, որ Հայաստանի կառավարության հրաժարումից հետո, եկող նոր իշխանությունը — Դրոն և Սիլինն—տեղյակ էր, որ դաշնագիրը պիտի ստորագրվի և կարող էր արգելել, բայց չի արգելել։ Դեկտ. 2-ի երեկոյան հետևյալ խոսակցությունն է տեղի ունենում Ալեքսանդրապոլի պատվիրակության նախագահ Ա. Խատիսյանի և Հայաստանի նոր իշխանության ներկայացուցիչ Դրոյի միջև. «Երեկոյան ժամը 6-ին,— պատմում է Խատիսյանը,— ինձ հրավիրեց ուղիղ հեռագրաթելի մոտ Դրոն, որ ըսավ հետևյալը.

«Հեղափոխական կառավարության անունից հայտնում եմ ձեզ, որ դուք ազատ եք ստորագրել կամ ոչ»։

Լավ գիտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու ամբողջ պատասխանատվությունը, ես երկրորդ անգամ հարցուցի. «Արդյոք կառավարությունը ստորագրելո՞ւ կողմն է, թե մերժելու։ Մենք սպասում ենք որոշ և պարզ հրահանգների»։

«Դրոն պատասխանեց. «Ես ձեզ ասացի արդեն։ Գործեցե՛ք համաձայն ձեր հասկացողության։ Ես խոսում եմ ընկեր Սիլինի և իմ անունից»։

Սիլինը խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչն էր»*։

Այստեղից պարզ երևում է, որ ոչ միայն Դրոն, այլ խորհրդային իշխանության ներկայացուցիչն էլ առարկություն չուներ Ալեքսանդրապոլի դաշնագիրը ստորագրելու դեմ և, բնականաբար, Հայաստանի այն ժամանակվա պայմաններում չէր էլ կարող ունենալ։

Մինչև այստեղ թե՛ կառավարության և թե՛ պատվիրակության արածը, իրավական տեսակետից, անխոցելի էր։ Բայց դաշնագրի մեջ կար մի կարևոր պայման. ստորագրությունից հետո, մեկ ամսվա ընթացքում, դաշնագիրը պետք է վավերացվեր Հայաստանի խորհրդարանի և Թուրքիո Ազգ. մեծ ժողովի կողմից։ Այդ վավերացումը տեղի չունեցավ։ Հետևաբար, և դաշնագիրը իր օրինական հանգամանքը կորցրեց։ Միակ այս փաստը բավական էր, որպեսզի Հայաստանի Հեղկոմը չճանաչեր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, եթե իսկապես բոլշևիկները ուզում էին Հայաստանի համար ավելի նպաստավոր պայմաններ ապահովել։ Բայց բոլշևիկները չուզեցին կամ չկարողացան օգտվել այդ փաստից, որովհետև նրանց համար Թուրքիան ավելի մեծ արժեք էր, քան Հայաստանը։

* Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, էջ 270։

ԳԼՈՒԽ ԼԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՂԿՈՄԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Այսպես, ուրեմն, ո՛չ հայ ժողովրդի հոժար կամքով, այլ արտաքին ուժերի ճնշման տակ, 1920 թվի դեկտ. 2-ին, Հայաստանում տեղի ունեցավ վարչաձևի փոփոխություն. ժողովրդավար իրավակարգի տեղը բիրտ ուժով բռնատիրական իշխանությունը հաստատվեց։ Խորհրդարանական կառավարությանը հաջորդեց Հայաստանի Հեղկոմը, ռուսական սվինների պաշտպանության տակ։

Ի՞նչ էր Հայաստանի ժողովրդի վերաբերումը դեպի նորեկ վարչաձևն ու իշխանությունը։

Մայիսյան շարժումներին և հայ-թուրքական պատերազմի առաջին օրերին հայ ժողովուրդը, իր բոլոր խավերով, երևան բերեց միահամուռ և վճռական կամք պաշտպանելու հայրենիքի անկախությունը՝ հյուսիսից և հարավից սպառնացող վտանգի դեմ։ Անհաշիվ զոհերի և արյան գնով ձեռք բերված անկախության գաղափարը այլևս արմատներ էր ձգել, սակավ բացակայությամբ, բոլոր հայերի գիտակցության մեջ*։

Ռազմաճակատի անհաջողությունները, ինչպես և Եվրոպայի ու Ամերիկայի Պիղատոսի դիրքը արնաքամ եղած Հայաստանի հանդեպ՝ աստիճանաբար բեկում առաջ բերին հայ ժողովրդի միաձույլ կամքի մեջ. ո՞ւր ենք գնում այսպես, ի՞նչ պիտի լինի գահավեժ դեպքերի վախճանը, ո՞վ կարող է մեզ օգնել։

«Խորհրդային Ռուսաստանը,— պատասխանում էին հայ բոլշևիկները։— Կարմիր բանակը, որ մոտեցել է Հայաստանի սահմաններին, նա՛ է հայ ժողովրդի փրկիչը։ Թոթափեցե՛ք ձեր ուսերից դաշնակների լուծը, բացե՛ք երկրի դռները ռուս զորքի առջև, և ձեր դժբախտությունը վերջ կգտնե»։

Բոլշևիկների խայծերը անծանոթ չէին. հայ ժողովուրդը այլևս պատրանքներ չուներ նրանց արժեքի մասին, բայց ուրիշ ի՞նչ ելք էր մնացել։ Թուրքը առաջանում էր՝ իր հետ բերելով անխնա ավեր ու կոտորած։ «Մեր մեծ դաշնակիցները», պլատոնական խոսքերից զատ, մատը մատի չէին խփում օգնելու համար իրենց ուժասպառ «փոքր դաշնակցին»։ Ո՞ւր էր փրկության լաստը։

Եվ հետզհետե հայության սրտերում—վա՜յ պարտվածներին—սկսեց նորից տեղ գրավել «խաչապաշտ ռուսը»։ Նոյեմբերի կեսերին այլևս նշմարելի էր շերտավորումը պետական գործիչների և հասարակության զանազան խավերի մտքերում։ Հ. Օհանջանյանի կառավարությունը իր մեծամասնությամբ դեռ շարունակում էր կանգնած մնալ հակառուս գետնի վրա։ Անհաշտ հակառակորդ էր Խորհրդային Ռուսաստանին և հայ սոց.-դեմոկ. փոքրաթիվ խմբակը՝ Բաշխի Իշխանյանի և Դավիթ Անանունի գլխավորությամբ։ Հայ սոց.-հեղափոխականների զգացումները, դեպի բոլշևիկները մնալով հանդերձ բացասական՝ ռուսն ու Ռուսաստանը քաղաքական դրական գործոն էին նրանց աչքում։ Հայ ժողովրդական կուսակցությունը, քաղքենիների այդ անջիղ կազմակերպությունը, բերանի մեկ կողմով անկախություն էր հոլովում, մյուս կողմով ռուսիասիրություն քարոզում։ Ռամկավար կուսակցությունը, Խորհրդային Ռուսաստանը նկատում էր Հայաստանի և հայ դատի մահացու թշնամի։

Պետք է ասել նաև, որ կառավարական կուսակցության՝ Դաշնակցության շարքերում էլ վարանում ու շփոթ էր տիրում։ Անկախության շուրջ ընդհանուր առմամբ վարանում չկար, բայց ստեղծված կացությունից ելք գտնելու համար կարիքները տարբերվում էին։ Ոմանք պնդում էին, թե պետք է շարունակել անհաշտ թշնամական դիրքը դեպի Ռուսաստանը, առանց սակայն կարողանալու ցույց տալ, թե ի՞նչ պետք է անել վերջնական կործանումից խուսափելու համար։ Ուրիշները անհրաժեշտ էին համարում անմիջապես «լեզու գտնել» Խորհրդային Ռուսաստանի հետ։ Իսկ շարքայինները տատանվում էին հույսի և վհատության միջև։

Անկուսակցական զանգվածը, մանավանդ, քաղքենի տարրը սկսում էր օրորվել հին հուշերով Ռուսաստանի մասին. կգա ռուսը, կբերե հեռը խաղաղություն, «հաց ու մանուֆակտուրա», կառնե երկիրը իր հովանու ներքև, և ռուս զինվորի սվինի պաշտպանության տակ գյուղացին, արհեստավորն ու խանութպանը, հին տարիների նման, հանգիստ կապրեն և դրամ կվաստակեն։

Ավելի հեռուն չէին մտածում։ Ոչ էլ ծանոթ էին բոլշևիզմի բնույթին և Ռուսաստանի ներսերը կատարվող քաոսին։

«Խաչապաշտ ռուսն» էր եկողը, վերջապես. հո նա էլ թուրքի պես մեզ չի կոտորի։ Բարի՛ թող գա։

Այսպես էին, ընդհանուր առմամբ, Հայաստանում տիրող տրամադրությունները 1920 թվի նոյեմբեր ամսին, Կարսի անկումից հետո։

* Հետաքրքրական է հայ քաղքենի Ռամկավար և ժողովրդական կուսակցությունների ա՛յն օրերի դիրքը. նրանք գործով թե մամուլով հակառակ էին արտահայտվում, անհաշտ պայքարի մեջ էին ոչ միայն բոլշևիկության, այլև Ռուսաստանի դեմ։

Հոռետես թե լավատես՝ չէին կարող պատկերացնել իրական գալիքը։ Հոռետես թե լավատես՝ սպասում էին, որ

1. Վերջ կգտնե երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը։

2. Վերջ կգտնե պատերազմը, և՛ Թուրքը կհեռանա Հայաստանի սահմաններից։

3. Խորհրդային Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերությունները կհաստատվին Հայաստանի և Թուրքիայի միջև. Խորհրդ. Ռուսաստանի աջակցությամբ, այս կամ այն ձևով կլուծվի և Թրքահայկական հարցը։

4. Կվերականգնվի երկրի ներքին անդորրությունը, և ժողովուրդը նորից հնարավորություն կստանա լծվելու խաղաղ ու շինարար աշխատանքի։

Բոլշևիկները իրենց հերթին պաշտոնական թե անպաշտոն շռայլ խոստումներով ուժեղացնում էին այս տրամադրությունները։

Այսպիսի պայմաններում և այս տրամադրությամբ ու հույսերով Հայաստանի Հանրապետությունը դարձավ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, 1920 թվի դեկտ. 2-ին։

Բոլշևիկները առանց ծիծաղելի լինելու վախից, շարունակում են պնդել, թե Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ նոյեմբ. 29-ին՝ Հայաստանի գյուղացիության և բանվորության ապստամբության հետևանքով։ Նոյեմբերի 29-ին, ինչպես հայտնի է, հայ բոլշևիկների մի փոքրաթիվ խմբակ, մտավ Ազրբեջանին սահմանակից Իջևան գյուղը և ցրեց Բաքվից բերված թուրքիկներ, որոնք հայտարարում էին, թե Հայաստանում «դաշնակների» կառավարությունը տապալված է և տեղը բռնած է խորհրդային իշխանությունը, մինչ նույն այդ միջոցին Խորհրդ. Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Երևանում խաղաղ բանակցություններ էր վարում «դաշնակների» կառավարության հետ։ Երեք օր վերջը, դեկտ. 2-ին միայն, Հայաստանի կառավարության և Խորհրդ. Ռուսաստանի միջև կնքված համաձայնության հիման վրա, Հայաստանը հայտարարվեց խորհրդային։ Ինչպես ասացինք, ո՛չ մի գնդակ չարձակվեց այդ առթիվ, ո՛չ մի ապստամբություն տեղի չունեցավ, ո՛չ մեկի քիթը չարյունեց, իսկ Հայաստանի գյուղացիությունն ու բանվորությունը լուռ էր։ Լուռ էր ու կսկիծը սրտում՝ ողբում էր հայրենիքի կործանումը։ Եվ սպասում էր «խաչապաշտ ռուսին»։

Սպասում էին որ գա ռուսը. բայց ռուսի փոխարեն Հայաստան մուտք գործեց Հեղկոմը և հետը մի քանի հարյուր քոսոտ կարմիր բանակայիններ ու հայ բոլշևիկներ՝ շատերը ծանոթ մայիսյան խռովություններից իրենց զանազան արարքներով՝ Ս. Կասյան, Ասք. Մռավյան, Ավիս Նուրիջանյան, Աշ. Հովհաննիսյան, արյունկզակ Աթարբեգյան և ուրիշներ։ «Մուտք գործեց», որովհետև Հեղկոմը իսկապես իրեն

լատում էր իբրև հաղթական կերպով մուտք գործող մի ուժ, որ իր ոտքերի տակ պատրաստ էր տրորելու պարտված թշնամուն։

Հակառակ որ ժողովուրդը և նախկին իշխանության մարդիկ խիստ բարյացակամ վերաբերում ցույց տվին և պատրաստակամություն հայտնեցին ամեն բանով աջակցելու նոր կառավարությանը, Հեղկոմը առաջին օրից իսկ թշնամական դիրք բռնեց դեպի երկրի բոլոր ոչ բոլշևիկ տարրերը և իրեն պահում էր ճիշտ այնպես, ինչպես պահում է թշնամի երկիրը մտնող նվաճող մի բարբարոս ուժ։

Լեգրանի հետ ստորագրված դաշնագիրը հայտարարվեց չեղյալ։ Դեկտ. 6-ին կազմվեց և անմիջապես գործի անցավ Չեկան, ու սկսվեցին ձերբակալություններ։ Իրար ետևից բանտարկվեցին նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը, նախկին նախարար Ռ. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), խորհրդարանի անդամներ բժ. Հ. Տեր-Դավթյանը. Վահ. Նավասարդյանը, Վ. Բաբայանը, Գ. Վարշամյանը, Երևանի քաղաք խորհրդի անդամ Ա. Աստվածատրյանը, սոցիալ-դեմոկրատ պարագլուխ Բ. Իշխանյանը, խմբապետ Համազասպը և ուրիշներ։ Քիչ վերջը. բանտ նետվեցին խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, առողջապահության և գյուղատնտեսության նախարարների օգնականներ բժ. Հ. Տեր-Միքայելյանը և Թ. Տոշյանը, խորհրդարանի անդամ բժ. Ա. Ղազարյանը և ուրիշներ։

Դեկտեմբերի վերջերը արձանագրության ենթարկվեցին հայկական բանակի բոլոր սպաները և 70 ընտիր զինվորականներ անմիջապես աքսորվեցին Բաքու։

Հունվարի 10-ին Ռուսաստան աքսորվեց Դրոն իր զինակից սպաների հետ։

Հունվարի 24-ին Ռուսաստան աքսորվեցին և Հայաստանի բանակի մնացած սպաները, 1200 հոգի, որոնց մեջ էին և սպարապետ Նազարբեգյանը, զորավարներ Սիլիկյանը, Հախվերդյանը, Ղամազյանը։ Զբմռան անասելի ցրտին ու ձյունին, շրջապատված ռուսական հրացանավոր ու գնդացրավոր պահակներով, հետիոտն, ժողովրդի ընդհանուր սուգի մեջ, հայկական բանակի զինվորականները քշվեցին անծանոթ ուղղությամբ։

Երկրի բոլոր կողմերում խուզարկություններ և անվերջ ձերբակալություններ էին տեղի ունենում։ Հայաստանի բանտերը բերնեբերան լցվեցին կալանավորներով։ Բացի վերոհիշյալներից՝ բանտարկվեցին և Լևոն Շանթը, Հովհ. Քաջազնունին, Նիկոլ Աղբալյանը, Երևանի քաղաքագլուխ Մ. Մուսինյանը և ուրիշ հարյուրավորներ։ Բանտարկյալները պահվում էին անտանելի պայմաններում, գնդակահարության մշտական սպառնալիքի տակ։

Միևնույն ժամանակ, Երևանում և ամբողջ երկրում կատարվում էին անկանոն և անհաշիվ բռնագրավումներ։ Գրավում էին ամեն ինչ՝

բնակարան, կարասիներ, հագուստ, ուտելիք, ձի, տավար, հավ ու հավկիթ, մինչև իսկ թել ու ասեղ։ Ժողովուրդը Ռուսաստանից էր սպասում օգնություն, այժմ իրենից էր խլվում հացի վերջին պատառը և ուղարկվում Ռուսաստան։ Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նվեր էր ուղարկվում պետական պահեստների և ժողովրդից բռնագրավված պաշարը՝ սպիտակ ալյուր, խտացված կաթ, կակաո, շաքար, կոշիկի կաշի, հագուստեղեն և այլն։

Թե ինչ էր կատարվում այդ օրերին Հայաստանում, շատ ցայտուն կերպով նկարագրել է բոլշևիկ պատմաբան Բորյանը։ Ավելի լավ է խոսքը տանք նրան։

«Հեղկոմը,— ասում է նա,— ձեռնարկեց անխնա և վճռական բռնագրավումների, առանց խտրության և առանց դասակարգային սկզբունքի, առանց հաշվի առնելու գյուղացիության ընդհանուր տնտեսական դրությունը և նրա հոգեբանական վիճակը։ Բռնագրավումը տեղի էր ունենում անկազմակերպ ձևով, ծրագրված ու հեղափոխական-դասակարգային բնույթ չուներ և կատարվում էր անհարկի բռնություններով։ Առանց կազմակերպված ու կարգապահ մեքենայի, առանց նախնական քարոզչական պատրաստության և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները, հեղկոմը կարգախոս է ուղղում՝ բռնագրավել և պետականացնել պարենը քաղաքներում մասնավոր մարդկանցից և հացի պաշարը գյուղացիներից։ Անկարգ կերպով գրավվում ու պետականացվում էր ամեն ինչ՝ զինվորական հագուստներ, արհեստավորների գործիքներ, մասնավոր և ամեն տեսակ բրինձի աղորիներ, անխտիր բոլոր ջրաղացները, սափրիչի գործիքներ, մեղվի փեթակներ, սպիտակեղեն, հագուստ, քաղաքացիների տան կահ-կարասիները, առանց նկատի ունենալու նրանց դասակարգային վիճակը և այլն... Բնական է, որ այս բռնի միջոցները եղան երկրի ապստամբության հիմնական պատճառները»*։ Խոսքը փետրվարյան ապստամբության մասին է։

Ու Բորյանը մեկիկ-մեկիկ թվում է Հեղկոմի հանած հակաօրինական հրամանագրերը և կատարած ապօրինի գործերը։

Ցույց է տալիս, որ Հայաստանի բոլշևիկները ոտքի տակ էին տվել խորհրդային օրենքներն ու հրամանագրերը և կատարել էին բազմաթիվ հակաօրինական և վնասակար գործեր, որոնց պատճառով ժողովուրդը, որ սկզբից համակրական վերաբերում ուներ դեպի խորհրդային իշխանությունը, ի վերջո, ստիպված եղավ ապստամբության դրոշ բարձրացնել նույն այդ իշխանության դեմ։

Մի ուրիշ վկայություն, որ, կարծում ենք, նույնպես կարող է համարվել անկողմնակալ և, համենայն դեպս, վստահության արժանի։

* Բ. Բորյան, Հայաստան, Դրվանագիտություն և խորհրդ. Միություն, Բ հատոր, էջ 126։

Խոսքը տանք Հայաստանի Հանրապետության անդրանիկ վարչապետ Հ. Քաջազնունիին։

«Անցել էր մոտ երկու ամիս այն օրից,— գրում է նա իր հուշերում,— երբ բոլշևիկները մտել էին Հայաստան, կազմակերպվել և հաստատվել էին։

Հայկական եռագույն դրոշակը և «Մեր Հայրենիքը»—իբրև հակահեղափոխական սիմվոլներ— վերացվել էին ասպարեզից. նրանց փոխարինել էին պրոլետարական կարմիրն ու պրոլետարական «Ինտերնացիոնալը»։

Կարմիր բանակի զինվորները տեղավորվել էին քաղաքացիների բնակարաններում, ուտում էին նրանց հացը և վառում էին նրանց վառելիքը։

Պաշտոնյաներն ու կուսակցական գործիչները գրավել էին քաղաքի լավագույն տները, կահ-կարասին, անկողինները։

Հեղկոմը հրատարակում էր ամեն օր դեկրետներ ու հրամաններ, որոնք նպատակ ունեին ամրացնելու Հայաստանում պրոլետարական դիկտատուրան և միաժամանակ լայնացնելու ու խորացնելու համաշխարհային մեծ հեղափոխությունը։

Չեկաները անսպառ եռանդով կատարում էին իրենց փրկարար գործը, այնպիսի մեծ եռանդով, որ Հայաստանի բանտերում այլևս ասեղ ձգելու տեղ չէր մնացել։

Ժողովրդական (կամ հեղափոխական) տրիբունալներում (դատարաններում) ընկեր դատավորները դատում էին ու լուծում քաղաքացիների մեջ ծագած վեճերը, դրական օրենքի բացակայության պատճառով, համաձայն իրենց հեղափոխական գիտակցության»։

Գյուղերում «կոմբջիջները» հին ու նոր հաշիվներ էին մաքրում անհաճո դրացիների հետ։

Քաղաքներում հաստատվել էին քաղաքային ու տնային կոմիտեներ։ Ամեն մի տասնյակ տան վրա կարգված էին տասնապետներ։ Տասնապետներն ու տանտերերը հսկողություն պիտի ունենային իրենց տների վրա և եթե նկատեին որևէ «հակահեղափոխական» երևույթ, անմիջապես պետք է տեղեկացնեին Չեկային։

Վարչական սիստեմը հիմնված էր ամբողջովին փոխադարձ հսկողության ու փոխադարձ լրտեսության վրա։ Հսկելու, լրտեսելու և տեղեկություններ հաղորդելու պարտականությունը դրված էր ոչ միայն պաշտոնյաների, այլև ամեն մի քաղաքացու վրա։ Քաղաքացին պարտավորված էր ոչ միայն ինքը բարեմիտ լինելու խորհրդային իշխանության հանդեպ, այլև արթուն աչքով հսկելու հարևանների բարեմտության վրա. եթե չաներ, անձնապես կնկատվեր «հակահեղափոխական», այսինքն՝ ենթակա Չեկայի խնամատարության։

«Կոմունիստը» (կառավարական պաշտոնական օրաթերթը) ջարու-

նակ գրում էր ջարդարար հոդվածներ. «Հեղափոխության հաղթանակը,— ասում էր,— ապահովված չէ Հայաստանում, որովհետև այստեղ չի եղել քաղաքացիական պատերազմ։ Կռի՛վ է հարկավոր, որպեսզի իսկապես բնաջինջ լինեն հակահեղափոխական տարրերը. կռիվ է հարկավոր, որպեսզի խորանա բանվորագյուղացիական դասակարգային գիտակցությունը։ Հեղափոխական պրոլետարիատը պիտի թափե իր ձեռքով բուրժուազիի արյունը, որպեսզի անանցանելի վիհ բաց անի իր և նրա միջև»։

Նույն բովանդակությունով ճառեր էին արտասանվում և կոչեր արվում հրապարակային միտինգներում։

Պատերի վրա փակցվում էին ֆուտուրիստական ոճով նկարված ահագին պատկերներ, ուր գետերով հոսում էր «դաշնակների» և ուրիշ հակահեղափոխականների պիղծ արյունը... Ասենք՝ արյունը հոսում էր ոչ միայն պատկերների վրա, այլև «չեկայական» բանտերում։

Բնակչությունը բաժանված էր երկու անհավասար մասի. բոլշևիկներ (կամ բոլշևիկ ձևացողներ), որոնց տրված էին բոլոր իրավունքները, և ոչ բոլշևիկներ (այսինքն՝ ահագին մեծամասնությունը), որոնց վրա դրված էին բոլոր պարտականությունները։

Եվ առաջին հերթին՝ բոլշևիկներին կերակրելու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտականությունը։

Բոլշևիկյան եռանդի մի կեսը ծախսվում էր Չեկայի և հարակից գործողությունների վրա, մյուս կեսը՝ խուզարկությունների ու բռնագրավումների վրա։

Բռնագրավվում էր ամեն բան՝ սկսած տնից, կառքից, գրաստից, վառելիքից և վերջացրած երաժշտական գործիքով, լվացքի սապոնով, թել-ասեղով... Բավակա՛ն է, որքան բուրժուաները վայելեցին կյանքի բարիքները, այժմ հերթը կարմիր բանակինն է և հեղափոխական պրոլետարիատինը։

Սա մի սկզբունք էր, որ գործադրվում էր ամեն ուղղությամբ, ամենայն հետևողականությամբ ու արտակարգ եռանդով։

Ժողովուրդը հանկարծակիի էր բերվել, շշմել, ահաբեկվել էր։ Չէր հասկանում, թե ինչ էր կատարվում շուրջը։ Չէր հասկանում, թե ինչ են ուզում իրանից այս կարմիր աստղանի, պոպողավոր գլխարկներ կրող անծանոթները, այս մաուզերներով ու նագաններով զինված, երեսները փիս ներկած դեռահաս օրիորդները, այս բազմաթիվ կոմիսարներն ու կոմընկերները, որ օտոմոբիլները նստած՝ օր ու գիշեր վեր ու վար էին անում Երևանի փողոցներում...

Մենակ «բուրժուան» չէր, որ շշմել էր. շշմել էին նաև աշխատավոր դանգվածները, որոնք «բուրժուազիայի» հետ հավասար տուժում էին բոլշևիկյան իրավակարգից։ Մենակ «բուրժուան» չէր, որ թալանված էր, անարգված, իրավազրկված. նույնն էր և ամբողջ ժողովուրդը (բացի

բոլշևիկներից, իհարկե), օրվա աշխատանքով ապրող բազմությունները։

Այլևս ոչ ոք տեր չէր ո՛չ իր ունեցածի, ո՛չ իր աշխատանքի։ Կոմունիզմը հասկացվել էր ու իրականացվում էր այն մտքով, թե ոչ բոլշևիկի ունեցածը հալա՛լ է բոլշևիկին»։

Բորյանի և Քաջազնունու առաջ բերած փաստերը բավական են հասկանալու համար այն ներքին պայմանները, որոնք առաջ բերին հակախորհրդային համաժողովրդական հեղափոխությունը փետրվարին։ «Փաստերի այս բավական մակերեսային թվումը,— եզրակացնում է Բորյանը,— բացատրում է Հայաստանի ժողովրդական ապստամբության պատճառները»։

Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ոտքի հանեցին խորհրդային իշխանության դեմ։ Հակառակ իրենց տված հանդիսավոր խոստումների և հանձնառությունների՝ բոլշևիկները ապիկար գտնվեցին և արտաքին քաղաքականության մեջ։

Նրանք խոստանում էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապես հետո, վերականգնել հարաբերությունները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց և մանուֆակտուրա», կարգավորել հարևանների հետ հողային վեճերը և Ռուսաստանի օգնությամբ բարիհարևանական կապեր հաստատել Թուրքիայի հետ։ Արդ՝ Հայաստանի Հեղկոմը ինչպե՞ս արդարացրեց ժողովրդի հույսերը և իր խոստումները։

Նախ՝ ճանապարհների խնդիրը։ Խորհրդայնացումից հետո էլ Հայաստանը կտրված մնաց արտաքին աշխարհից։ Բաթումի պահեստներում դիզված հայկական պարենն ու ապրանքները տեղից չշարժվեցին, և Վրաստանը ավելի ևս ամուր գոցեց իր դռները հայերի առջև։ Հեղկոմի դիմումները, թախանձանքներն ու սպառնալիքները ո՛չ մի ազդեցություն չգործեցին Վրաստանի կառավարության վրա։ Անօգուտ անցավ և Մոսկվայի միջամտությունը։

Այսպես, Խորհրդային Ռուսաստանի լիազոր դեսպանը 1920 թ. դեկտ. 25 դիմումագրով, մատնանշելով, որ «սովահար Հայաստանի շրջափակումը շարունակվում է ամբողջ ծավալով»՝ պահանջեց բանալ երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի հետ։ Պատասխանը եղավ մերժում։ 1921 թ. հունվարի 21-ին Մոսկվան նորից պահանջեց՝ «անմիջապես իրականացնել տրանզիտի իրավունքը Վրաստանի վրայով դեպի Հայաստան»։ Արդյունքը եղավ նույնը. վրաց կառավարությունը մերժեց։

Վրաստանը տեղի չտվեց և սահմանավեճի հարցում։ Իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, Հայաստանի Հեղկոմը, իրար հետևից, մի շարք հեռագրերով պահանջեց, որ վրացիները հեռանան հայկական հողերից և վրացական զորքերը հետ քաշվեն Լոռվի չեզոք

գոտուց։ Վրացիները բնավ կարևորություն չտվին այդ պահանջներին։

Ահա մեկ նմուշ Հայաստանի Հեղկոմի կատարած դիմումներից։

Դեկտ. 30-ին, Խորհրդային Հայաստանի արտաքին գործոց վար Ա. Բեգզադյանը հետևյալ ծանուցագիրը ուղղեց վրաց կառավարությանը։

«Երևան, 30 դեկտ. (ռադիո). Վրաստանի դեմոկրատիկ հանրապետության արտաքին գործոց նախարարին։

Ձեզոք գոտուց ձեր զորքերը հետ քաշելու մասին սույն դեկտ. 7-ին և 10-ին ձեզ ուղղած դիմումների մեջ Հայաստանի Խորհրդային կառավարությունը արտահայտել էր ազատագրված ժողովրդի կամքը՝ վերադառնալու խաղաղ աշխատանքի իր երկրի այն մասում, որ թեև պատերազմող կողմերի թշնամական գործողությունների անմիջական վայր չէր, սակայն Թուրքիայի հետ վարած պատերազմի ընթացքում ձեր կառավարության կողմից ստիճանաբար վերածված էր զինվորական գրավման վայրի՝ իր բոլոր քաղաքացիների համար անտանելի ծանր հետևանքներով։

Նկատի ունենալով, որ ձեր կառավարությունը իր սույն դեկտ. 10-ի և 21-ի պատասխաններով մերժում է գոհացում տալ ձեզոք գոտու հայ աշխատավոր բնակչության այնքան հասկանալի ցանկության և ձեր կրկնակի մատնանշումները, թե ձեր կառավարությունը Դաշնակցականների հետ սույն տարվա նոյեմբ. 13-ին համաձայնություն է կնքել այդ մասին, Հայաստանի Ս. Խ. Հանր. կառավարությունը ստիպված է նորից մատնանշել այն հանգամանքը, թե նա ինքը առհասարակ մերժում է ամեն մի հնարավորություն ձեր կառավարության կողմից մատնանշելու նոյեմբ. 13-ի համաձայնագիրը, որ ձեր իսկ կառավարության գործողություններով չեղյալ է նկատված։ Ձեր կառավարության ձևական պնդումը, թե իր կողմից ճշտիվ կատարվում են նոյեմբերի 13-ի համաձայնագրի պայմանները, չի կարող ընդունել Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարության կողմից՝ նկատի ունենալով այն հանրածանոթ իրողությունները, որ ձեր զորքերը համաձայնության առաջին իսկ օրերն անցել են ձեզոք գոտու սահմանները, գրավել են Քոլագերանը, Շահալին, Ջալալ Օղլին, Նիկոլաևկան և Հայաստանի տերիտորիայի ուրիշ անվիճելի կետեր, որ այդ տեղերում նշանակված են վրացի հրամանատարներ, արձակված են հայ ծառայողները և փոխարինված են վրացիներով. որ նոյեմբերի 19-ին բռնագրավված է Քոլագերան կայարանի գործիքների սենյակը, ձերբակալված են առանց պատճառների որևէ բացատրության և հրամանի կայարանի հեռագրական պաշտոնյաներ Գարեգին Տեր-Հարությունյանը, Համբարձում Պետրոսյանը և Արտաշես Շահվերդյանը, որոնք հետո տարված են Աշաղա-Սաբայլ, որ, վերջապես, պատժիչ զորամաս է ուղարկված Շնող գյուղի հայ գյուղացիների դեմ և ամբակոծված է հիշյալ գյուղը։

Սրանից անկախ, Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարությունը չի կարող

նույնպես համաձայնվել ձեր կառավարության նոյեմբերի 13-ի համաձայնագրի վրա ունեցած հայեցակետին, որովհետև այդ համաձայնագիրը չի պայմանավորված ոչ մի փաստացի հանգամանքով։ Բացի այն, որ խնդրի այդպիսի մեկնաբանությունը, առհասարակ, անընդունելի է պայմանագրի փոխհարաբերությունների ասպարեզում, որքան վերջիններս միշտ հենվում և պահպանում են իրենց օրինական ուժն ու նշանակությունը միայն իրենց առաջ քաշող պայմանների սահմաններում, նոյեմբ. 13-ի համաձայնության բնագիրն ինքն իսկ լիովին բացասում է մի այդպիսի մեկնաբանություն։ Այդ բնագիրը, իբրև կնքված համաձայնության հիմունք, ճշտիվ առաջ է քաշում երկու հանգամանք՝ Անատոլուի կառավարության զորքերի հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա և այլ բանի հետևանքով չեզոք գոտիի և բուն Վրաստանի համար ստեղծվող սպառնալիքը։ Այդ երկու հանգամանքների վերացվելուց հետո, վրաց զորքերի մնալը չեզոք գոտում այլևս կորցրնում է ամեն արդարացում և չի կարող ընդունվել Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարության կողմից։ Հայաստանում քաղաքական նոր իրավակարգ և ընկերային նոր փոխհարաբերություններ հաստատվելուց հետո, հնացած են դառնում այն արհեստական կապերը, որոնք փաթաթվում են Անդրկովկասի հանրապետությունների վզին նրանց հովանավորների կողմից։ Շահագրգռված լինելով վերջ տալու հիշյալ կացության ձեզոք գոտու և Հայաստանի անվիճելի երկրամասի սահմաններում, որ գրավել են վրաց զորքերը, Հայաստանի Խորհրդային կառավարությունը՝ ելնելով ինչպես Խորհրդային կառավարության ընդհանուր քաղաքականությունից, այնպես և նրա հռչակած սկզբունքներից՝ պատրաստ է օգտագործել ամենից առաջ վիճելի խնդիրների խաղաղ լուծման եղանակ։ Իսկ հիշյալ վեճը արագորեն լուծելու և այդպիսի դեպքերում սովորական ձգձգումների առաջն առնելու համար, իմ կառավարությունը ամենից ավելի նպատակահարմար է համարում ձեզոք գոտու վիճելի խնդիրը լուծել Ռուսաստանի Ս. Ֆ. Խ. Հանրապետության ներկայացուցչի մասնակցությամբ։

Այս խնդրի վրաբերմամբ Հայաստանի Ս. Խ. Հ. կառավարությունը սպասում է ձեր կառավարության շուտափույթ պատասխանին»։

Խորհրդային Ռուսաստանի դիմումն ու վերջինիս միջնորդությունն էլ չօգնեցին. վրացիները մնացին անդրդվելի և շարունակեցին գրաված պահել Լոռին և երկաթուղային հաղորդակցությունը չվերականգնեցին։

Ավելի փայլուն չէր վիճակը և «Ծղբայրական» Ազրբեջանի ուղղությամբ, հակառակ որ այնտեղ իշխանությունը բոլշևիկների ձեռքին էր։

Ինչպես տեսանք, Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրերին, Ազրբեջանի կառավարության պետ «ընկեր Նարիման Նարիմանովը» Հայաստանի Հեղկոմին ուղղած հեռագրով և Բաքվում արած հանդիսավոր հայտարարությամբ ծանուցեց, որ այլևս Հայաստանի և

Ազրբեջանի միջև ամեն վեճ վերջացած է, և Խորհրդային Ազրբեջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Հայաստանին։ Այնուհետև այս հողամասերը պետք է մտնեին Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ, և այդ հանգամանքը գոհունակությամբ ընդունվեց հայերի կողմից։ Բայց հետո ի՞նչ անցավ-դարձավ, հայտնի չէ, հավանաբար, Թուրքերը ճնշում գործ դրին Մոսկվայի վրա, և Ղարաբաղն ու Նախիջևանը, Հայաստանին չմիացվեցին։ Այդ առթիվ, հայ կոմունիստական շրջաններում տրվում էր այն բացատրությունը, թե Նարիմանովը Ղարաբաղը զիջելու մտքով չէր արել հայտարարությունը, այլ, իբրև պրոպագանդ, հայ բոլշևիկների գործը դյուրացնելու նպատակով։

Ղարաբաղը մնաց Ազրբեջանի ձեռքը, Նախիջևանն էլ՝ Թուրք բոլշևիկյան գրավման տակ։

Ռուսաստանից պարեն ստանալու հույսն էլ ի դերև ելավ։ Նախ՝ Ռուսաստանը ինքը անոթի էր։ Երկրորդ, ձմռան սառնամանիքների և բուք ու բորանի պատճառով հաղորդակցությունը շատ էր դժվարացել, թեև, ինչպես տեսանք վերը, հաղորդակցության դժվարությունները արդելք չէին, որ Հայաստանի պարենն ու ապրանքները փոխադրեին Բաքու և Մոսկվա։

Ավելի վատ եղավ հայ բոլշևիկների գործը Թուրքերի հետ։ Նրանք հավատացնում էին ամենքին, թե Թուրքերի թշնամությունը դեպի հայերը հետևանք էր դաշնակցականների վերաբերմամբ տածած ատելության. բավական է Հայաստանը հայտարարել խորհրդային և եղբայրական ձեռք մեկնել Թուրքերին, Թուրք-հայկական հարաբերությունները կբարելավվեն և Թուրք բանակը անմիջապես կհեռանա Ալեքսանդրապոլից և Կարսից։

Այս ոգով էր ներշնչված և Հեղկոմի առաջին «դեկլարացիան», ուր հետևյալ տողերն են նվիրված Թուրքիային. «Հայաստանի Հեղափոխական կոմիտեն լի է հավատով, որ ինքը վայելում է Թուրքիայի աշխատավոր զանգվածների վստահությունն ու համակրանքը, այն ժողովրդի, որ արդեն հասկացել է Անտանտի դարավոր լծից ազատվելու անհրաժեշտությունը և որ կոչված է խոշոր դեր կատարելու Արևելքի հեղափոխականացման գործում։ Հավատում ենք, որ իմպերիալիստական լծից ազատագրվող հասարակական Թուրքիան, հաշվելով մեզ Թուրքիայի հետ միասին Սևրի դաշնագրի թշնամի, անմիջապես եղբայրական ձեռք կմեկնե մեզ, երբ մենք կտապալենք մեր թշնամուն (դաշնակցականներին) և նրա հետ միասին պայքար կմղենք Անտանտի գիշատիչների դեմ։ Մենք համոզված ենք նույնպես, որ հաղթողի սուրը չէ, որ պիտի թելադրե առաջիկա հաշտության դաշնագիրը Խորհրդային Հայաստանի և աշխատավոր Թուրքիայի միջև, այլ Խորհրդ. Հայաստանի

և աշխատավոր Թուրքիայի ազատ ժողովուրդների եղբայրական համերաշխությունն ու համաձայնությունը»*։

Ինչպե՞ս պատասխանեց «աշխատավոր Թուրքիան» Հեղկոմի պարզած «եղբայրական ձեռքին»։

«Դուրս եկավ,— ասում է Բորյանը,— որ Հեղկոմը շատ մեծ հույսեր էր կապում «աշխատավոր Թուրքիայի» հետ։ «Հասարակական Թուրքիան» մեկից ավելի անգամներ ցույց է տվել իր «համակրանքը» հայերին ու Հայաստանին։ Նա դաշնագրով պարտավորեցրեց Խորհրդային Ռուսաստանին ճնշում գործ դնել Խորհրդային Հայաստանի վրա» (Բ հատոր, էջ 151)։

Եվ, հիրավի, խորհրդայնացումը ո՛չ մի նշանակություն չունեցավ Թուրքերի համար. նրանք մազաչափ անգամ չփոխեցին իրենց վերաբերումը դեպի հայերը, չպարպեցին Ալեքսանդրապոլը, վերջ չտվին հալածանքներին, բռնություններին, թալանին ու սպանություններին հայկական շրջաններում։

Հայաստանը գրավված էր ռուսական զորքերով, Հայաստանում տիրում էր խորհրդային իշխանություն, Ալեքսանդրապոլում էլ Հեղկոմ էր հաստատված, Հայաստանի Հեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում Թուրքերին և կաշվից դուրս գալիս ցույց տալու համար, որ ինքը «դաշնակներից» տարբեր բան է, Թուրքիային բարեկամ իշխանություն է, Երևանից բարեկամական հավաստիացումներ էին ուղարկվում Անգորա. այդ ամենը չփոխեց Թուրքերի հակահայ ընթացքը։ Ընդհակառակը, կարծես է՛լ ավելի գրգռեց նրանց հայերի դեմ, որ նորից բռնել էին ռուսների փեշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական ավանդական քաղաքականությունը։ Երևանից «եղբայրական» ոգով հեռագրեր էին հղվում Անգորա, իսկ Թուրք կառավարությունը պատասխանում էր, թե ինքը ոչ մի տարբերություն չի տեսնում «դաշնակների» և հայ բոլշևիկների միջև։ Եվ ռուսների աչքի առջև, Թուրք զորքերը շարունակում էին դաժանորեն ամայացնել Շիրակի հայկական գյուղերը, ավերել ու կողոպտել և հազարներով հայեր կոտորել։

Հայաստանի Հեղկոմը բազմաթիվ առիթներով դիմեց Անգորա՝ աղաչանքով ու բողոքով՝ վերջ տալու համար Թուրք բանակի կողմից հայ խաղաղ բնակչության դեմ գործվող դաժանություններին, բայց ո՛չ մի հաջողություն չունեցավ. Թուրքերը պարզապես արհամարհում էին հայ բոլշևիկներին, երևի, վստահ, որ ռուսները չեն պաշտպանի նրանց։

Սոսկ նմուշի համար առաջ բերենք Հայաստանի արտաքին գործավար Ա. Բեգզադյանի 21 հունվարի հեռագիրը Թուրք կառավարությանը։ Նա ավելի պերճախոս է, քան որևէ խոսք։

---

* Բ. Բորյան, հատոր Բ, էջ 151։

«Անգորա, Տաճկաստանի Մեծ ազգային ժողովի կառավարության արտաքին գործերի կոմիսարին: Պատճենը՝ Մոսկվա, արտ. գործ. ժող. կոմիսար Չիչերինին, Տեր-Գաբրիելյանին: Պատճենը՝ Բաքու, արտ. գործ. ժող. կոմ. Հուսեյնովին, Աթաբեգովին.

Խորին վրդովմունքով հաղորդում է ձեզ Հայաստանի կառավարությունն այն անբնական երևույթների մասին, որոնք ստացել են մասսայական ու խրոնիկական բնույթ և որոնք նկատվում են մեր սահմանակից շրջաններում: Խորհրդ. Հայաստանի կառավարության ստացած ստույգ տեղեկությունների համաձայն, Կարսի, Ալեքսանդրապոլի գավառներում և չեզոք գոտիում ձեր գրավման զորքերի կողմից տեղի են ունենում խաղաղ աշխատավոր բնակչության վրա՝ անընդհատ բռնություններ, թալան և սպանություններ: Տաճիկ զորքերի կողմից գրավված բոլոր վայրերից ժողովվում են Խորհրդ. Հայաստանին պատկանող պետական գույքերը, ավարի են ենթարկվում մասնավոր անձերի գույքն ու տնտեսությունը, քշվում են գյուղացիների անասունները և գրավվում է բնակչության վերջին պարենավորումը: Այդպես, Ալեքսանդրապոլ քաղաքից վերջին ամսվա ընթացքում տարված են գյուղատնտեսական մեքենաները, շոգեկառքերը, հեռագրի ու հեռախոսի կազմածները, օթոմոբիլները, մասնավոր գույքը և այլն: Գավառն ամայացած է, բոլոր անասունները քշված: Նալբանդ կայարանում կենտրոնացած է հացահատիկների մեծ պաշար Տաճկաստան ուղարկելու համար, որպիսին խլված է շրջակա գյուղերում և այդպիսով գյուղացիները դատապարտվում են սովամահության:

Աշխատանքի ընդունակ բոլոր 18—50 տարեկան հասակի տղամարդիկ բռնի քշվում են իրենց հայրենի տեղերից և խլելով նրանցից այլուրի պարկերից կարված ամբողջ վերնազգեստը՝ քշվում, տարվում են ձմեռվան ցրտին դեպի Սարիղամիշի և Էրզրումի շրջանները՝ ծանր ու բռնի աշխատանքների: Այնուհետև, Ղարաքիլիսայից եկող փախստականների խմբերին ձեր գրավման զորամասերի ներկայացուցիչները փորձում են ուղարկել Կարսի վրայով դեպի Էրզրում՝ նույնպես բռնի աշխատացնելու համար վերոհիշյալ պայմաններում:

Կարսում, ձեր զորքերի կողմից գրավվելուց հետո, առաջին երեք օրերը տեղի են ունեցել և մասսայական բնույթ են ստացել թալանը, բռնություններն ու սպանությունները, որոնք ավելի կրճատված չափերով շարունակվում են մինչև օրս: Հիշյալ գյուղերի ամբողջ վառելիքը գրավված է, մինչև իսկ վառելիքը չէ թողնված նաև որբանոցներում: Տղամարդիկ քշված են Սարիղամիշ և Էրզրում, պարենավորումը խլված է և տավարը քշված: Աղբուլաղի և Համամլուի շրջաններում, ասկյարների առանձին զինված խմբեր ներս են խուժում հայ գյուղերը, թալանում և սպառնում են, իսկ կանանց բռնաբարում: Դեկտ. 13-ին Կուլինջի գյուղում տեղի ունեցավ այդպիսի դեպք: Դեկտ. 26-ին տաճկական 36-րդ գնդի զորամասի կողմից Քաֆթաուլի գյուղը գրավվելուց հետո, բանվորների թվում, նույն գյուղացիներից ինը հոգի երիտասարդ կոմունիստներ՝ Վարդ Տեր-Պետրոսյան, Պետրոս Մինասյան, Իգնատիոս Վարդանյան, Մարտին Մուրադյան, Ստեփաննոս Մուրադյան, Մանվել Ամանյան, Թումաս Ատոմյան, Խաչատուր Կուսիկյան և Մանվել Ասլանյան, աշխատանքների վերջացնելուց հետո, գազանաբար սպանվեցին նույն գյուղի մի դարմանոցում: Նրանց դիակները դուրս բերվեցին Քաֆթաուլիի բնակիչ Ստեփաննոս Բոյաջյանի սայլով, և ոճրագործության հետքերը ծածկելու համար՝ սպանվեց սայլի տերը: Հունվարի 13-ին, ասկյարների մի խումբ, առանց պատճառի, հարձակվեց Եգանյատ գյուղի վրա և կատաղի կրակ բացեց վրան:

Չեզոք գոտու կից գյուղերում գյուղացի խաղաղ հայ բնակչության վրա կատարված թալանը, բռնություններն և սպանությունները սովորական երևույթ են դարձել: Միայն չորրորդ կոմիսարիատի գավառամասում ցուցակագրված են ավելի քան երկու հարյուր այդպիսի սպանություններ:

Շրջանի բնակչությունը տեռորի է ենթարկված, բնակիչների գյուղական ու տնային տնտեսությունն ավերված է, անասունները՝ քշված և հարկերի անվան տակ խլված են բնակչության բոլոր կենսամթերքները: Զինված զորամասերի հարձակումները չեզոք գոտու վրա վերջերս խրոնիկական բնույթ են ստացել և եթե այդպես շարունակվի, նույն ավերումը տեղի կունենա ինչ-որ կատարվեց Ալեքսանդրապոլի շրջանում, ուր ավերված են ավելի քան 50 գյուղեր:

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի բնակչությանը, չնայած այն հանգամանքին, որ հաղորդակցությունը դժվար է և կաշկանդված մեր հանգամանքին, որ հաղորդակցությունը դժվար է և կաշկանդված մեր հեռագրի վրա դրված ձեր կոնտրոլով (մինչև իսկ Հեղկոմի վերաբերմամբ), այլև այն հանգամանքին, որ ձեր կողմից չի թույլատրվում մեր ընկերներին դուրս գալ Ալեքսանդրապոլից, բայց այնուամենայնիվ մեզ հաջողվեց անկասկածելիորեն հաստատել, որ Հեղկոմի իշխանությունը ձեր զորքերով գրավված քաղաքում ոչ այլ ինչ է, եթե ոչ մի ֆիկցիա և կարող է իրական լինել այն չափով, ինչ չափով կարևոր է զինվորական հրամանատարությունը:

Զինվորական հրամանատարության կողմից հեղափոխական կոմիտեին ներկայացված մշտական պահանջները և վերջնագրերը, որոնք ոչ մի առնչություն չունին Հեղկոմի խնդիրների հետ, որպես խորհրդային իշխանության օրգանի (ինչպես բռնի աշխատանքների համար մարդիկ տալը, 10 հազար հրացանների պահանջը, ասկյարներ սպանողին հանձնելը, որ հայտնի չէ, թե ո՞վ է սպանել, ե՞րբ և կամ որտե՞ղ և այլ), որ ստիպեցրել է Ալեքսանդրապոլի հեղափոխական կոմիտեին և փաստորեն դարձրել է նրան զենք Ալեքսանդրապոլը գրավող զորամասերի

Հեռքին, Հայաստանի Հեղափ. կոմիտեն ստիպված է, այսուհետև, նման օրգանի գոյությունը բոլորովին ավելորդ համարել, քանի որ դա խորհրդային իշխանության վարկը ձգում է թե՛ աշխատավոր մասսաների և թե՛ քաղաքացիների աչքում։

Այնտեղ, ուր գոյություն ունի վերոհիշյալ տեսակի զինվորական գրավում և ուր ստրկացում և ավերում են տիրում, այնտեղ չի կարող տեղի ունենալ բանվորագյուղացիական իշխանություն։

Հիշատակված բոլոր փաստերի անկողմնակալ վերլուծությունը ակներև է դարձնում, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը չի կարող թույլ տալ նման արարքներ այն հողամասերի վրա, որոնք իրավամբ նա ճանաչում է իր սեփականությունը, որովհետև դրանց նպատակն է հայտնապես երկիրը տնտեսապես ավերել և նրա բնակչությունը դատապարտել քաղցի և արհեստական ոչնչացման։

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, այդպիսով, ստիպված է նայել ձեր հրամանատարության գործողությունների վրա այն հայեցակետով, որ դրանք բերում են անխուսափելի արյունաքամում և լիակատար տնտեսական քայքայում այն շրջաններում, որպիսիները պատերազմի ժամանակ, տաճկական զենքի հաջողությամբ, ընկել են և գտնվում են նրա ժամանակավոր տիրապետության տակ և որոնք պետք է անցնեն մի այլ պետության։ Ձեր զորքերի մեջ գտնված կարգապահության հանրածանոթ փաստը և ասկյարների ունեցած անկասկած համակրանքը դեպի խորհրդային իշխանությունը ենթադրել չեն տալիս, որ վերը հիշատակված բռնության դեպքերը ինքնակամ գործողություններ են, որով ուժեղանում է կատարվող անկարգությունների նշանակությունը։

Խորհրդային Հայաստանի աշխատավոր բնակչության անունից, որ խորհրդային իշխանությունն ընդունելուց հետո ցույց է տվել իր ջերմ ցանկությունը ապրելու հեղափոխական Տաճկաստանի հետ խաղաղությամբ և եղբայրաբար և որ միանգամ ընդմիշտ ազատվել է իր հայրենիքի նացիոնալիզմի լծից, ես ստիպված եմ մատնանշել, որ վերոհիշյալ փաստերը, որպես սպառնալից նշան, կարող են արգելք լինել խորհրդային Հայաստանի և ազատվող Տաճկաստանի հեղափոխական խնդիրների իրականացմանը։

Լիապես հավատացած, որ ցույց տրված փաստերի վերաբերությամբ մեր մեջ տարակարծություններ չեն լինի, իմ կառավարությունը չի կասկածում, որ Տաճկաստանի կառավարությունը չի հապաղի արմատական միջոցներ ձեռք առնել դադարեցնելու նման փաստերը, որին ամենաշուտ կերպով կարելի է հասնել միայն հեռացնելով զորքերը Ալեքսանդրապոլի գավառից և Կարսի հյուսիսային և արևելյան շրջաններից։ Խորհրդային Հայաստանի կառավարությունը լիովին հավատացած է, որ նրա արդարացի պահանջները չեն կարող չճանաչվել Տաճ-

կաստանի Ազգային մեծ ժողովի բարեկամ կառավարության կողմից, և շուտափույթ պատասխանի է սպասում ձեր կառավարությունից՝ այդ անոնորմալ կացությանը վերջ տալու համար ձեռնարկված քայլերի մասին, որոնք պետք է հաստատեն նրա անկեղծ մտադրությունների զգացմունքները դեպի իր հարևան խորհրդային իշխանությունը։ 21 հունվարի, 1921։

Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդ. կոմիսար՝ Ա. ԲԵԳԶԱԴՅԱՆ»։

Այս հեռագիրն էլ արժանացավ նույն բախտին, ինչպես սրանից առաջ և հետո տրված մյուս հեռագրերը։ Թուրքերը ո՛չ մի կարևորություն չտվին նրան։ Փաստորեն մատը մատին չդարկեց և Մոսկվան՝ սանձահարելու համար թուրքերին։ Եվ հասկանալի է, թե ինչ հիասթափություն և հուսահատություն առաջ եկավ հայ ժողովրդի մեջ։

«Խորհրդային իշխանությունը,— գրում է Բորյանը,— ոչ մի գործնական քայլ չարավ հեռացնելու համար թուրքերին Հայաստանից, այն ինչ ժողովուրդը համոզված էր, որ խորհրդայնացումից և Խորհրդ. Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումից հետո, թուրքերը այլևս անելիք չունեին Հայաստանում, և Ռուսաստանը թույլ չի տա թուրքերին գրավելու Հայաստանի հողերը, որոնց վրա թուրքերը ոչ մի իրավունք չունեին։ Ժողովուրդը «համոզված» էր, որ թուրքերը եկել են Խորհրդ. Ռուսաստանի գիտությամբ և օգնությամբ, որպեսզի տապալեն դաշնակցականների կառավարությունը և Խորհրդ. Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ։ Մինչդեռ պարզվեց, որ թուրքերը եկել են իբրև նվաճողներ, և երկրի վիճակը վատթարացավ, մի բան, որ ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանության «գալուց» Հայաստան... Թուրքերի ավանդական քաղաքականությունը հայերի նկատմամբ և հայերի պատմականորեն հաստատված ոչ բարեկամական հարաբերությունները թուրքերի հանդեպ ստեղծեցին անտանելի ծանր մթնոլորտ հայկական զանգվածների համար, և նրանք ազատություն էին սպասում։ Բայց միայն սպասում էին, որովհետև Հեղկոմի և Ռուսաստանի քաղաքականությունը, որ հիմնված էր այնելյան օրիենտացիայի վրա, ցույց տվեց ժողովրդին, որ թուրքերը չպիտի հեռանան։ Ժողովուրդը ջղայնանում էր, և հակահեղափոխական քարոզչությունը նպաստավոր հող էր գտնում նրա մեջ»*։

Հայ բոլշևիկները, իհարկե, այնքան անխելք ու անմիտ չէին, որ չըմբռնեին իրենց վիճակի անհույս լինելը։ Նրանք գիտեին, որ այն ժամանակ, երբ Քյազիմ Կարաբեքիրի զորքերը անպատիժ քարուքանդ էին անում հայկական գյուղերը և բնաջնջում հայությունը, Մուստաֆա Քեմալի ներկայացուցիչները Չիչերինի հետ բանակցություններ էին վարում Մոսկվայում, որոնք հանգեցին 1921 թ. մարտի 16-ի «բարեկամության

* Բ. Բորյան, հատոր Բ, էջ 135—136։

և եղբայրական դաշնագրության», որ Հայաստանի համար անհամեմատ ավելի ծանր պայմաններ էր պարունակում, քան նույնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագիրը։

Այսպես, Ալեքսանդրապոլի դաշնագրով «Կարսի նահանգը և Սուրմալուն համարվում էին վիճելի մինչև երեք տարի, որի ընթացքում հայոց կառավարությունը կարող է հայտարարել հանրաքվե՝ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների»։ Մոսկվայի դաշնագրով այդ նահանգները վերջնականապես և առանց պայմանի հանձնվում էին Թուրքիային։

Ալեքսանդրապոլի դաշնագրով «Շարուրը և Նախիջևանը ժամանակավորապես օժտվում էին ինքնավարությամբ՝ գտնվելով Թուրքիայի հովանավորության տակ, մինչև որ որոշվի նրանց բախտը»։ Մոսկվայի դաշնագրով Շարուրն ու Նախիջևանը հանձնվում էին Ազրբեջանին, և այս վերջինը իրավունք չուներ փոխանցելու մի երկրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին։

Մոսկվայի դաշնագիրը վերջը վավերացվեց և Կարսի դաշնագրով Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև, խորհրդ. Ռուսաստանի խնամակալության ներքո։

Եթե ավելացնենք, որ հետագայում, ստալինյան սահմանադրությամբ, Ախալքալաքն ու հայկական Լոռիի մի մասն էլ վերջնականապես հանձնվեցին Վրաստանին և հայկական Ղարաբաղը՝ Ազրբեջանին, պատկերը կլինի կատարյալ։

Ահա այս ներքին և արտաքին, առարկայական ու ենթակայական պատճառները, հաստատված հենց բոլշևիկյան վկայություններով, փաստերով ու վավերագրերով, կարճ ժամանակամիջոցում, ընդհանուր հիասթափություն և զայրույթ առաջ բերին հայ ժողովուրդի մեջ և, ի վերջո, հանգեցին համաժողովրդական տարերային ապստամբության՝ Փետրվարի 18-ին։

Բորյանը շատ ճիշտ է դատում, երբ գրում է, թե արտաքին քաղաքականության և, մասնավորապես, Թուրքիայի խնդրում կրած պարտության և ներքին սխալների և անուժության հետևանքով էր, որ Հեղկոմը մատնվեցավ ձախողանքի։ «Այդ բոլորը անմիջապես մի շարք բախումներ առաջ բերեց բնակչության հետ և հանգեց այն բանին, որ Հայաստանի խորհրդայնացումից երկուս և կես ամիս հետո, հակահեղափոխությունը, օգտագործելով իրեն համար ստեղծված չափազանց նպաստավոր պայմանները՝ ապստամբություն առաջ բերեց երկրում։ Հեղկոմը հասկանալով իր անզորությունը օգնություն խնդրեց խորհրդային Ռուսաստանից և փախուստի մեջ փնտրելով իր փրկությունը, փոքրաթիվ զորամասի պահպանության տակ, Հայաստանի փրկության գործը փոխանցեց կարմիր բանակին»*։

* Բ. Բորյան, Հատոր Բ, էջ 156։

ԳԼՈՒԽ ԼԵ

ՓԵՏՐՎԱՐԻ 18

Այսպես, ուրեմն, երկուս և կես ամիս բավական եղավ, որպեսզի Հեղկոմի իշխանությունը բոլորովին վարկաբեկվի ժողովրդի աչքում և Հայաստանում տեղի ունենա հեղափոխություն։

Բոլշևիկները համառորեն պնդում են, թե այդ հեղափոխությունը նախապատրաստված էր Դաշնակցության կողմից։ Ծիծաղելի է։ Նախորդ գլխում առաջ բերած փաստերը ավելի քան բավական են հերքելու համար բոլշևիկների այս պնդումը։ Առողջ տրամաբանությունն էլ չի կարող ընդունել, որ երկուս և կես ամիս առաջ առանց դիմադրության, իշխանությունը բոլշևիկներին հանձնող Դաշնակցությունը, այն ժամանակվա պայմաններում, չէր կարող իշխանությունը վերագրավելու նպատակ ունենալ։ Եթե, դեկտ. 2-ին իշխանությունը բոլշևիկներին փոխանցելիս, Դաշնակցությունը մտածեր շուտով իշխանությունը խլել Հեղկոմի ձեռքից, ինչ իմաստ պիտի ունենար նրա ընթացքը դեկտ. 2-ից սկսած մինչև փետրվար։ Նա ինչո՞ւ պիտի թույլ տար, որ իր գործոն ուժերը հեռանան կամ հեռացվեն Հայաստանից։

Դեկտ. 1-ին Հ. Հ. Դաշնակցության բյուրոն որոշեց, որ քաղաքացիական բարդությունների առիթ չտալու համար, բյուրոյի անդամները հեռանան երկրից, և Հայաստանում մնա միայն Ս. Վրացյանը, իբրև կուսակցության ներկայացուցիչ և վերջին կառավարության նախագահ։ Բյուրոյի նույն որոշումով Հայաստանից պետք է հեռանային նաև մի շարք նախկին նախարարներ և պատասխանատու գործիչներ, որոնց ներկայությունը երկրում Հեղկոմին կարող էր հաճելի չլինել։ Եվ նույն օրը Երևանից հեռացան, Զանգեզուրի վրայով Պարսկաստան անցնելու համար, նախկին զինվորական նախարար՝ Ռուբեն Տեր-Մինասյանը, զորաղտնի ոստիկանության պետ՝ Լևոն Քալանթարյանը և ուրիշներ։ Հաջորդ օրը, Վրաստանի վրայով արտասահման անցնելու համար, Երևանից մեկնեցին նախկին վարչապետ՝ Համո Օհանջանյանը, նախկին նախարար՝ Ա. Չիլինգարյանը (Ռ. Դարբինյան), նախկին նախարար՝ Ս. Արաբաջյանը, խորհրդարանի անդամ՝ բժ. Հ. Տեր-Դավթյանը, Վ. Նավասարդյանը, Երևանի պարետ Ա. Շահխաթունին և ուրիշներ, որոնց մի մասին միայն հաջողվեց հասնել Թիֆլիս, իսկ մյուսները՝ Համո Օհան-

ջանյանը, Ա. Ջիլինգարյանը, բժ. Հ. Տեր-Դավթյանը, Վ. Նավասարդյանը և այլն, ձերբակալվեցան, հետ բերվեցան նվաստացուցիչ պայմաններում և նետվեցան Երևանի բանտը։ Եթե Դաշնակցությունը իշխանությունը վերագրավելու մասին մտածեր, թույլ կուտա՞ր, որ նման դեպքեր տեղի ունենային, երբ դեռ ինքն էր իշխանությունը։

Անհեթեթություն չէ՞ ենթադրել, որ իշխանությունը վերագրավելու պատրաստվող Դաշնակցությունը, որի ձեռքին ամփոփված էր պետական ամբողջ հարստությունը և նյութական ու մարդկային ուժերը, անվարան կերպով, օրինական կարգով Հեղկոմին հանձներ այդ ամենը։ Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի ձեռքով ստորագրված ստացականները պետական գույքերի, դրամների և թղթերի փոխանցման մասին, որոնք պահված են Հայաստանի կառավարության արխիվներում, վկա են այդ մասին։

Հեղկոմի դեմ ապստամբություն նախապատրաստող Դաշնակցությունը այնքան կարճամի՞տ էր, որ թույլ տար, որպեսզի Հայաստանի ժողովրդի պաշտամունքի առարկան՝ Դրոն իր լավագույն սպաների հետ, հեռացվեր Հայաստանից, իբրև պատանդ բոլշևիկների ձեռքում, կամ թույլ տար, որ հանրապետական բանակի 1200 զինվորականներ աքսորվեին երկրից։ Կամ, վերջապես, հայ մտավորականության ամենաընտիր դեմքերը բանտարկվեին անարգել։ Դաշնակցությունը ի վիճակի էր բոլշևիկյան այդ արարքների մեծ մասի առաջը առնելու նույնիսկ զենքի ուժի դիմելով, բայց նա խուսափում էր նման քայլերից, զգուշանալով՝ որ երկիրը քաղաքացիական կռիվների ասպարեզ չդառնա։ Մեկից ավելի անգամներ Ս. Վրացյանը, կուսակցության ներկայացուցչի և նախկին վարչապետի հանգամանքով, դիմումներ արավ Ջեկայի պետ Աթարբեգյանին, Հեղկոմի նախագահ Կասյանին, Հեղկոմի անդամ Ա. Մռավյանին, զինվորական կոմիսար Ավիսին՝ հորդորելու համար նրանց, որ վերջ տան հալածանքներին, այլապես երկիրը կարող է մատնվել քաղաքացիական կռիվների քաոսի։ Նման դիմում կատարեց, գրավոր զեկուցումով, և Հայաստանի անդրանիկ վարչապետ՝ Հ. Քաջազնունին։ Ամեն անգամ էլ պատասխանը եղավ նույնը. «Հայաստանը պետք է անցնի քաղաքացիական կռիվների բովից, պետք է բուրժուազիայի արյունը հոսի պրոլետարիատի վերջնական հաղթանակը ապահովելու համար»։ Եվ արյունը հոսեց։ Դրոյի աքսորից, բայց մանավանդ, Հայաստանի բանակի սպաների, տաժանելի պայմաններում, Ռուսաստան տարվելուց հետո, երբ Հայաստանի բանտերը և Ջեկայի զնդանները բերնեբերան լեցված էին բանտարկյալներով, երբ բռնագրավումները և ապօրինությունները ծայրահեղ աստիճանի հասան, երկրի բոլոր կողմերում ժողովուրդը հուսահատության մատնված՝ սկսեց վրդովումի նշաններ ցույց տալ։ Տեղի ունեցան իշխանություններին ընդդիմության դեպքեր, նույնիսկ բռնագրավումների կամ ձերբակալությունների համար

եկող կառավարական գործակալների սպանություններ։ Այստեղ և այնտեղ, գավառներում, առաջ եկան գաղտնի խմբակներ, որոնց գլուխը անցան բանտարկությունից խուսափած տեղական գործիչներ, խմբապետներ, կամ զինվորականներ։ Մայրաքաղաքում էլ կազմվել էր նման մի մարմին Հայրենիքի փրկության կոմիտեի անունով։ Այդ բոլոր գաղտնի, իրարից անկախ կազմված խմբակների նպատակն էր ժողովրդի պաշտպանությունը Հեղկոմի գործակալների բռնություններից։ Զուտ ժողովրդական, տարերային մի շարժում էր՝ ինքնապաշտպանության բնազդից մղված։ Ժողովրդական ցասումի բաժակը առատ լեցված էր և առիթ էր պետք, որպեսզի պոռթկար։

Առիթը չուշացավ։ Փետրվարի 9-ի լույս 10-ի գիշերը տեղի ունեցան զանգվածային նոր ձերբակալություններ։ Ամբողջ գիշեր, փողոցները հսկողության տակ առնվեցին և ինքնաշարժերով ու հետիոտն, խիստ հսկողության տակ, Ջեկայի շենքը փոխադրվեցին ավելի քան 200 ձերբակալվածներ։ Սրանց թվում էին և Հայաստանի անդրանիկ վարչապետ և խորհրդարանի փոխնախագահ Հ. Քաջազնունին, նշանավոր գրող և խորհրդարանի երկրորդ փոխնախագահ Լևոն Շանթը, ականավոր քննադատ Նիկոլ Աղբալյանը և բազում ուրիշներ, ամենքը քաղաքացիական պարտականությունները կատարող, օրինապահ մարդիկ։

Արդարացուցիչ ոչ մեկ պատճառ չկար Հեղկոմի այս նոր վայրագության համար։ Փետրվարի 10-ի առավոտյան Երևանը սուգի մեջ էր։ Ժողովուրդի վրդովումը սահման չուներ։

Ս. Վրացյանը մի անգամ ևս փորձեց զգաստության հրավիրել Հեղկոմին։ Նախագահ Ս. Կասյանը, հիվանդություն պատրվակելով, խուսափեց տեսակցությունից։ Նրա փոխանորդ Ասքանազ Մռավյանը զարմանք հայտնեց լսելով, թե գիշերը զանգվածային ձերբակալություններ են տեղի ունեցել և Շանթն ու Աղբալյանն էլ բանտարկվել են Ջեկայում։ Իր ասելով՝ մի քանի աննշան մարդիկ ձերբակալված պիտի լինեին։

Քիչ վերջը, սակայն, ստույգ աղբյուրից հայտնի դարձավ, որ Բաքվից հեռագրական հրաման է ստացվել ձերբակալելու նաև Ս. Վրացյանին և նրա կառավարության դաշնակցական անդամներին։ Սրանով պարզվում էր և գիշերվա զանգվածային բանտարկությունների իմաստը. Բաքվի հրահանգով նոր փորձություններ էին պատրաստվում Հայաստանի գլխին։ Ս. Վրացյանը և իր կառավարության դաշնակցական անդամները չհանձնվեցին Ջեկային...

Փետրվարի 9—10 գիշերվա ձերբակալությունները աննկարագրելի հուզում առաջ բերին մայրաքաղաքի և գավառների ժողովրդի մեջ։ Երկրի զանազան կողմերում, իրարից անկախ, ծայր տվին տարերային ըմբոստացումներ Հեղկոմի իշխանության դեմ։ Տեղական այս շարժումները հետզհետե միացան Երևանի Հայրենիքի փրկության կոմիտեի միջոցով և ընդհանուր բնույթ ստացան։

Ապստամբության ազդանշանը տվին Արագածի փեշերի սասունցիները, որոնք անվանի խմբապետների ղեկավարության տակ՝ դուրս քշեցին իրենց գյուղերից Հեղկոմի գործակալներին և գրավեցին Աշտարակը, ապա Էջմիածինը։ Միաժամանակ ապստամբությունը ծայր տվեց Բաշ-Գառնիի շրջանում՝ տարածվելով դեպի Կոտայք և Ախտա։ Ամեն տեղ ժողովուրդը, մեկ մարդու պես ոտքի ելավ տապալելու համար Հեղկոմի ատելի բռնկալությունը։

Փետրվարին, Կոտայքի* Զառ գյուղում, Երևանի Փրկության կոմիտեի նախաձեռնությամբ հապճեպ տեղի է ունենում մի խորհրդակցություն, ուր որոշվում է ընդհանուր ապստամբություն առաջ բերել։ Իրապես ընդվզումը Հեղկոմի դեմ արդեն սկսված էր. Զառի ժողովը անզոր մի ճիգ էր ալեկոծված տարերքին որոշ ուղղություն տալու։

Փետրվարի 16—17-ին մայրաքաղաքը ամեն կողմից շրջապատված էր ապստամբ ժողովրդով։ Հեղկոմը հուսահատական դիմադրության փորձեր արավ, բայց անհաջող։ Երևանի բանտում փետր. 16—17-ի գիշերները Չեկայի կողմից տեղի ունեցան բանտարկյալների վայրագ սպանություններ, որոնց զոհ պիտի երթային հայ մտավորականության լավագույն դեմքերը, եթե Հեղկոմը մի քանի օր ևս կանգուն մնար։ Բայց, ժողովրդական ապստամբ ուժերի սպառնալիքի տակ գլուխը կորցրած՝ Հեղկոմը դիմեց փախուստի, լցնելով Երևանի կայարանում գտնվող գնացքները իր տրամադրության տակ եղած զինվորական ուժերն ու համայնավար պաշտոնեությունը, պետական գանձարանից հափշտակված գումարները և պետական պահեստներից հավաքած մթերքները և զենքն ու ռազմամթերքը, զրահապատ երկու գնացքի պաշտպանության տակ փախավ դեպի Ղամարլու միանալու համար Շարուրի բարեկամ թուրքերի հետ։

Փետրվարի 18-ը հարության օր եղավ Հայաստանի ժողովրդի համար։ Վաղ առավոտյան ազատագրված շրջաններից Երևան իջան Ախտայի, Կոտայքի և Բաշ-Գառնիի ժողովրդական ապստամբ ուժերը Կուռո Թարխանյանի և խմբապետ Մարտիրոսի ղեկավարության տակ։ Թաքստոցից դուրս եկան վերջին կառավարության անդամները։ Չեկայի ու բանտի դռները բացվեցան, և հազարավոր բանտարկյալներ ազատություն ստացան։ Կարծես հրաշագործ մի ձեռքով Երևանի բոլոր շենքերը զարդարվեցին եռագույն դրոշակներով և գույնզգույն գորգերով ու կարպետներով։ Ժողովուրդը խռնված էր փողոցներում նմանը չտեսնված խանդավառության մեջ և ցնծությամբ անվերջ «կեցցե»-ներով, և ծափահարություններով ողջունում էր օրվա հերոսներին և բանտից ու Չեկայի նկուղներից ազատվածներին։ Ծանոթ և անծանոթ համբուրվում էին և շնորհավորում ազատության օրը։

Մինչ այդ Երևանը մաքրվում էր բոլշևիկներից։ Հեղկոմը, լուսաբացին վերջին փամփուշտները պարպելով՝ փախուստի էր դիմել Շարուրի ուղղությամբ՝ տանելով իր հետ նաև զինվորական մի ռադիոկայան, որից հաղորդում էր Ազրբեջան, իր կուսակիցներին, թե՝

«Մի խումբ մաուզերիստներ, ավազակապետ Վրացյանի գլխավորությամբ, դավադրությամբ տիրելով Երևանի ռադիոկայանին, շինծու լուրեր էին տարածում Հայաստանում, իբր թե տեղի ունեցած հեղաշրջման մասին...»

Սա նախազգուշական միջոց էր ապագա ինքնարդարացման համար և միաժամանակ պատասխան Երևանի պետական ռադիոկայանի հաղորդագրություններին Հայաստանում տեղի ունեցող դեպքերի մասին։

Փետրվարի 18-ի առավոտյան Հայաստանի խորհրդարանի շենքում, խանդավառ ցույցերից ու ճառախոսություններից հետո, տեղի ունեցավ Երևանի Փրկության կոմիտեի ու նախկին կառավարության անդամների, խորհրդարանի նախագահության և անդամների, ինչպես և անհատ պատասխանատու գործիչների և ապստամբների շրջաններից հասած վարիչների մասնակցությամբ մի ժողով, ուր որոշվեց կյանքի կոչել Վրացյանի կառավարությունը՝ լրացնելով նոր անդամներով, Հայրենիքի փրկության կոմիտեի անունով։ Հայրենիքի փրկության կոմիտեն, որ դարձավ Հայաստանի հեղափոխական շրջանի գերագույն իշխանությունը, բաղկացած էր հետևյալ անդամներից. Ս. Վրացյան՝ նախագահ և արտաքին գործերի ու գյուղատնտեսության և պետական գույքերի վարիչ, Ա. Հովհաննիսյան՝ զինվորական գործերի վարիչ, Կ. Սասունի՝ ներքին գործերի վարիչ, Հ. Տերտերյան՝ ելևմտական գործերի վարիչ, Հ. Տեր-Հակոբյան՝ պարենավորման վարիչ, բժ. Ս. Եղիազարյան՝ խնամատարության վարիչ։ Հետո ավելացան նաև Ա. Խոնդկարյանը՝ արդարադատության վարիչ, Վ. Մինախորյանը՝ պարենավորման, ռազմաճակատ մեկնած Հ. Տեր-Հակոբյանի տեղը։ Ավելի ուշ երկու ներկայացուցիչներ Վասպուրականի Զինվորական մարմնի կողմից՝ Ս. Մեսրոպյան և Ա. Մաքսապետյան։

Այսպիսով՝ Հայրենիքի փրկության կոմիտեն իր մեջ մարմնացնում էր նախկին կառավարությունը և հեղափոխական իշխանությունը։

Բանակի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդ. Կուռո Թարխանյանը՝ Սպարապետ Սուրեն։

Կազմակերպվելուց անմիջապես հետո, Հայրենիքի փրկության կոմիտեն ժողովրդին ուղղեց, թիվ 1, հետևյալ կոչը.

«ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է։

Մինչև կառավարության կազմվելը՝ ամբողջ իշխանությունը գրոնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքը։ Ամեն քաղաքացի

* Տե՛ս հավելված։

պետք է պաշտպանի կարգն ու օրենքը։ Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից հրատարակված բոլոր կարգադրությունները խիստ կերպով պետք է կատարվեն քաղաքացիների կողմից։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՎՐԱՑՅԱՆ»

1921 թ. Փետրվ. 18
ԵՐԵՎԱՆ

Այնուհետև սկսվեց հեղափոխության ղեկավարների և ամբողջ երկրի փոթորկահույզ, տենդոտ աշխատանքը հայրենիքի և ազատության պաշտպանության համար, որ Երևանում տևեց մինչև ապրիլի 2 և ամբողջ Հայաստանում՝ մինչև հուլիսի 10։

Առաջին երկու օրերը, փետր. 18–19, անցան իշխանության և բանակի կազմակերպության, ուժերի դասավորության և ընթացիկ բազմազան աշխատանքների մեջ։ Անմիջապես նշանակվեցին ճակատների հրամանատարներ և միջոցներ ձեռք առնվեցին հետապնդելու փախչող թշնամուն։

Հեղկոմը, ինչպես ասացինք փախել էր Շարուր—Նախիջևանի ուղղությամբ, Թուրքերի մոտ, բռնությամբ տանելով հետը երկու զրահապատ գնացքները, 2-րդ և 3-րդ հայկական գնդերը, հրետանին, քաղաքում գտնվող ռուսական զորամասերը, բոլոր կոմունիստներին, մի ամբողջ գնացք ռազմամթերք ու պարեն, որ առաջուց լցրել էին վագոններն ու բեռնակիր ինքնաշարժերը։ Ամրանալով Շարուրի դռանը և Արարատ կայարանի մոտ, բոլշևիկները ճակատ բացին Երևանի ուղղությամբ։

Մյուս կողմից, հյուսիսից, տեղական ռուս և Թուրք զինված գյուղացիների և Ազրբեջանից հասած բոլշևիկների ու կարմիր բանակային-ների գլուխն անցած, Երևանի դեմ ճակատ էր բացել Հայաստանի Ջեկայի պետ Մ. Աթարբեգյանը։

Հայրենիքի ֆրկության կոմիտեն շտապով միջոցներ ձեռք առավ թե այդ ճակատների և թե, առհասարակ, երկրի ընդհանուր պաշտպանության համար։

Միաժամանակ կարգադրություններ եղան մայրաքաղաքի և գավառների ներքին կյանքի ապահով ընթացքը երաշխավորելու համար։ Հրամանագրվեց, որ բոլոր պաշտոնյաները մնան իրենց տեղը։ Պետական և հասարակական բոլոր հիմնարկությունները անշեղ կատարեն իրենց գործը. արգելվեց ոգելից ըմպելիքների վաճառքն ու գործածությունը, հրավեր ուղղվեց հասարակությանը աշխատանքով հսկել ներքին կարգի վրա և ձերբակալել ու իշխանությանը հանձնել բոլշևիկներին ու հակապետական արարք ցույց տվողներին, պատսպարել և կերակրել դրսից եկած մարտիկներին. նշանակվեցին քաղաքի նոր պաշտոնյաներ,

վերակազմվեցին տնային կոմիտեները, որոնց հանձնվեց հսկողությունը քաղաքի ներքին կարգապահության վրա. արգելվեց գիշերը, ժամը 7-ից հետո, առանց արտոնության փողոց դուրս գալը և այլն։ Մայրաքաղաքը և ամբողջ երկիրը հայտարարվեցին զինվորական վիճակի մեջ, հեղափոխական օրենքի ներքև։

Հայրենիքի փրկության կոմիտեն, առաջին օրն իսկ, մի շարք ռադիոհեռագրերով ջանաց արտաքին աշխարհի առջև ճշգրիտ պատկերով ներկայացնել Հայաստանում տեղի ունեցած դեպքերը։ Երևանի ռադիոկայանից, Բասրայի վրայով, քաշված ընդարձակ հեռագրով Փարիզ, Հ. Հ. պատվիրակությանը հաղորդվեց փետր. 18-ի հեղաշրջման մասին։ Նույն բովանդակությամբ հեռագրեր ուղղվեցին մեծ պետությունների կառավարություններին՝ Փարիզ, Լոնդոն, Հռոմ, Ազգերի Դաշնակցության, Ժնև։ Հեռագրեր հղվեցին Մոսկվա Լենինին և Չիչերինին՝ ներկայացնելով Հայաստանի Փետրվարյան շարժման իսկական բնույթը, որ Հեղկոմի բռնություններից հուսահատ՝ աշխատավոր ժողովրդի տարերային պոռթկում էր և ուղղված չէր Ռուսաստանի կամ ընդհանրապես խորհրդային իշխանության դեմ. Հայր. փրկության կոմիտեն խնդրում էր Լենինի և Չիչերինի բարյացակամ միջամտությունը և Հայաստանի անկախության ճանաչումը։

Քիչ վերջը, օգտվելով ստեղծված առիթից, Հայրենիքի փրկության կոմիտեն ընդարձակ զեկուցում ուղարկեց Հ. Հ. պատվիրակությանը Փարիզ*։

Թե այս զեկուցումը և թե վերջը հղված հեռագրերն ու կատարված դիմումները մնացին ձայն բարբառո անապատի. Հայաստանը բոլորովին կտրված էր դրսի աշխարհից։ Պատասխանեց միայն Վրաստանի կառավարությունը, որ վերջին օրերն էր ապրում։

Փետր. 18-ին, Հայրենիքի փրկության կոմիտեն հեռագրեց նաև Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիային, Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման մասին՝ խնդրելով վերահաստատել Տ. Բեգզադյանին Հայաստանի դեսպանի իրավունքների մեջ և արտոնել նրան և մի շարք հայ գործիչներին խոսելու ռադիոյով Երևանի հետ։

Ինչպես վերջը հայտնի եղավ, Հայաստանի խորհրդայնացումից հետո, Վրաստանում սկսվել էին հալածանքներ ու բռնություններ հայերի դեմ, որոնք հիշեցնում էին հայ-վրացական պատերազմի օրերը։ Հայրենիքի փրկության կոմիտեի հեռագրին կառավարությունը չի հավատացել, կարծելով, թե բոլշևիկ Կասյանն ու դաշնակցական Վրացյանը միացած՝ դավ են լարում Վրաստանի դեմ։ Երեք օր վերջը միայն, փետր.

* Զեկուցման բնագիրը գրված Հ. Քաջազնունիի ձեռքով։ Գտնվում է Հ. Հ. Պատվիրակության թղթերում։ Տե՛ս հավելված։

21-ին, Թիֆլիսում համոզվել են, թե իսկապես բոլշևիկյան իշխանությունը տապալվել է Հայաստանում։ Եվ դրանից հետո երեք օր անցած, Երևանում ստացվեց պատասխանը, այն էլ ոչ թե Ժորդանիայից, այլ արտաքին գործոց նախարարի օգնականի ստորագրությամբ։

«Երևան, Թիֆլիսից, 74, Հայր. փրկ. կոմիտեի նախագահ Վրացյանին.

Ձերդ շնորհավորություններ Ձեր երկրի օտար լծից ազատվելու առթիվ։ Մեզ հաճելի է իմանալ, որ հայ ժողովուրդը մասնակից չէ բոլշևիկների մեր դեմ լարած պատերազմին և որ դուք հաստատ վճռել եք պաշտպանել Ձեր երկրի անկախությունը։ Վրաստանի կառավարությունը առաջարկում է Ձեզ անմիջապես դուրս գալ մեզ հետ միասին և հարվածել բոլշևիկների թիկունքին. այդ են պահանջում երկու ժողովուրդների շահերը։ Վրաց ժողովուրդը ամբողջությամբ ոտքի է ելել պաշտպանելու իր իրավունքները. բոլշևիկյան զորքերի բոլոր գրոհները երեկ և այս գիշեր հետ են շպրտված մեծ կորուստներով թշնամու համար։ Ֆրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը և նրա նավատորմը ռմբակոծում էր Մեխադիրի անցքը բռնել ձգտող բոլշևիկ զորքերին։ Մահմեդականները ամբողջապես հակառակ են բոլշևիկներին և Անդրկովկասի շատ վայրերում, մեզ հետ միասին, ապստամբություն են բարձրացրել։ Սկսված է կովկասյան ժողովուրդների ընդհանուր արշավանք մոսկովյան լծից ազատվելու և իրենց կյանքի համերաշխ շինարարության համար։ Խնդրում ենք անմիջապես դիմել համապատասխան միջոցների խելքի բերելու համար բոլշևիկների կողմից մոլորեցված հայ գյուղերը։ Ձեր ներկայացուցչությունը Թիֆլիսում վերականգնված է։ Ձեր ռադիոյի մեջ հիշված անձինք այսօր կմոտենան ռադիոյին Ձեզ հետ խոսելու համար։ Անցքերի մասին հայտնեցեք ամեն օր։ Փետր 21. ի. տ. արտ. գործ. նախարարի՝ Սաբախտարաշվիլի»։

Հեռագրի «թռուցիկային» ոճը լավ տպավորություն չգործեց Երևանում։ Թերահավատությամբ ընդունվեց նաև, որ «Ֆրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը», ինչպես և Կովկասի մահմեդականների մասին հաղորդվածը։

Շատով պիտի պարզվեր, որ վրացիները հուսահատական կռվի մեջ էին բոլշևիկների հետ։ Կարմիր բանակը սպառնում էր Թիֆլիսին։ Իրենց պարտությունները արդարացնելու և վրացի ժողովրդի բարոյական կորովը բարձրացնելու նպատակով, Ժորդանիան և իր ընկերները անհերելի ճառեր էին խոսել ու հոդվածներ գրել հայերի դեմ։

Հայաստանի հեղաշրջման հետևանքով Վրաստանի հայերի վիճակը անմիջապես փոխվեց. բանտարկյալները ազատվեցին, հալածանքները վերջ գտան. վերաբացվեց Հայաստանի դեսպանատունը և ռադիոյով հաղորդակցություն հաստատվեց Երևանի և Թիֆլիսի միջև, մինչև փետր. 25, երբ Վրաստանի մայրաքաղաքը գրավվեց կարմիր բանակի կողմից։ Վրաստանի խորհրդայնացումը ծանր հարված էր և Հայաստանին։ Հայրենիքի փրկության կոմիտեն երկար ժամանակ հասարակությունից գաղտնի պահեց Թիֆլիսի անկումը։

Վրաստանի խորհրդայնացումով՝ Հայաստանը բոլորովին մեկուսանում էր հյուսիսից։ Հարավում թուրքն էր նստած։ Քեմալական Թուրքիան այդ օրերին, բանակցում էր դաշնակիցների հետ Լոնդոնում և միաժամանակ Ռուսաստանի հետ Մոսկվայում։ Հայաստանի նկատմամբ դիտողի դիրք էր բռնել և սպասում էր դեպքերի զարգացման։ Լոնդոնի բանակցությունների ձախողանքով և Մոսկվայի դաշնագրի կնքումով, մարտի 16-ին, վերջ պիտի գտներ և թուրքերի «չեզոքությունը» Հայաստանի վերաբերմամբ. թուրքն ու բոլշևիկ ռուսը այժմ բարեկամներ էին և զինակից։

Այսպես, ուրեմն, Հեղկոմի լծից ազատագրված Հայաստանը բոլորովին կտրված էր արտաքին աշխարհից. մեկուսացած էր լեռներում, բոլորովին մենակ, լքված ամենքից, անօգնական, անհաց, անվառելիք, անդեղ, անհուն ատելությամբ դեպի բոլշևիզմը և ազատ ու անկախ ապրելու վճռական կամքով։

Եվրոպան լուռ էր և անտարբեր։ Խորհրդային Ռուսաստանը պահանջում էր անպայման անձնատվություն, բայց անձնատվության մասին մտածելն իսկ ոճիր էր համարվում Հայաստանում։ Պետք էր կռվել. ազատություն կամ մահ. ուրիշ հեռանկար չէր երևում հայ ժողովրդի աչքին։ Եվ կռիվը շարունակվեց անընդհատ ու համառ բոլոր ճակատների վրա։

Ո՞վ էր կռվողը։ Փաստորեն զորք չէր մնացել Հայաստանում։ Սպայությունը աքսորված էր Ռուսաստան, մի քանի հոգի միայն, այս կամ այն ձևով, մնացել էին Հայաստանում։ Զորամասերը՝ բարոյալքված ու կազմալուծված։ Ռազմական արժեք ներկայացնող ամեն բան կամ փչացած էր, կամ բոլշևիկներն էին տարել։ Կռվողը ինքը հայ ժողովուրդն է, գյուղացիներն ու քաղաքացիները, միահամուռ կամքով։ Ճակատ ու թիկունք միախառնվել էին, ամբողջ երկիրը վերածված էր ռազմաճակատի, ողջ ժողովուրդը դարձել էր բանակ։

Հակիրճ գծերով ներկայացնենք ռազմական դեպքերի ընթացքը, փետր. 18-ից հետո։

Փետր. 18-ին ճակատները արդեն բռնած էին մարտական ուժերը։ Երեկոյան պարզվեց և բանտում կացինահարվածների և կռվում սպանվածների թիվն ու ինքնությունը։ Բանտում նախորդ երկու գիշերները հաջորդաբար տեղի էին ունեցել տմարդի կոտորածներ։ Սպանվածների մեջ էին խմբապետ Համազասպը, գնդ. Ղորղանյանը, խմբապետ Մամիկոնը, Արտուշ խանը, բանվոր Սերգոն և ուրիշ մի քանի տասնյակ

բանտարկյալներ։ Առավոտյան կոիվներում սպանվել էին խորհրդարանի անդամ Տիգրան Ծամհուրը, սպա Մ. Գուլնազարյանը և ուրիշներ։

Փետր. 19–20 օրերը ամբողջապես անցան կազմակերպական աշխատանքներով։

Փետր. 19-ից սկսվեց լույս տեսնել Հայրենիքի փրկության կոմիտեի պաշտոնաթերթ «Ազատ Հայաստան» օրաթերթը։ Մինչև ապրիլի 2 լույս տեսավ 36 թիվ։ Շուտով նրան պիտի հաջորդեին և ռուսերեն «Սվոբոդնայա Արմենիան» ու թուրքերեն «Ազատ Էրմենիստանը»։

Փետր. 21-ից արդեն սկսվեցին կանոնավոր կերպով գործել պետական և քաղաքային բոլոր հիմնարկություններն ու վերաբացվեցին դպրոցները։ Բոլշևիկների կողմից ձերբակալվածների կամ սպանվածների աննեցուկ ընտանիքների օգնության համար կազմված էր մի հանձնախումբ, Հ. Քաջազնունիի նախագահությամբ։ Բախշի Իշխանյանի ղեկավարությամբ ներքև սկսեց գործել վիճակագրական հատուկ մի մարմին հաշվառման ենթարկելու համար բոլշևիկների պատճառած վնասները մայրաքաղաքում և գավառներում։ Կառավարությունը իր հսկողության տակ առել էր բոլշևիկների «պետականացրած» բոլոր գույքերը և կազմել մի հանձնախումբ այդ գույքերը իրենց տերերին վերադարձնելու համար։ Վերակազմվել էր Երևանի քաղաքապետարանը։ Մայրաքաղաքում ընդհանուր հարգանք վայելող անձերից — Մ. Մուսինյան, Խ. Գրիգորյան և Հ. Տեր-Խաչատրյան — նշանակվել էր հատուկ լիազորություններով օժտված մի մարմին մայրաքաղաքի պարենավորման և գաղթականների խնամատարության գործի հակակշռման համար։ Վերսկսել էր գործել «Հայկոոպը» իր բոլոր մասնաճյուղերով։ Վերաբացվել էին պետական ճաշարանները։ Հայր. փրկության կոմիտեին կոչ էր ուղղել բոլոր նրանց, ովքեր կռվում էին Հայաստանի դեմ բոլշևիկների հետ միասին, որ ներման կարժանանան, եթե վար դնեն զենքը և ենթարկվեն Հայր. փրկության կոմիտեի իշխանությանը։

Մի խոսքով կյանքը սկսում էր մտնել բնականոն ընթացքի մեջ, որքան թույլ էին տալիս հեղափոխական ժամանակի պայմանները։ Ամենքը լարված ուշադրությամբ, հետևում էին ռազմաճակատի գործողություններին։

Ռազմաճակատի հաջողությունը, սակայն, պայմանավորված էր թիկունքի ժողովրդի տրամադրությունից։ Ժողովուրդը մեկ մարդու պես կանգնած էր Հայրենիքի փրկության կոմիտեի կողքին, բայց վերջինս, գտնվում էր չափազանց մեծ դժվարությունների առջև։ Ամենից սուր զգացվում էր պարենավորման տագնապը, մթերքների պակասը, ապրուստի պակասը, սղությունը և դրամական արժեքի անկումը։

Փետր. 22-ին, իր թիվ 25 հետևյալ հրամանով, Հայրենիքի փրկության կոմիտեն ջանաց կանոնավորել շրջանառության մեջ գտնվող դրամանիշերը.

«Աչքի առաջ ունենալով, որ մեծամասնականներն իրենց իշխանության օրով բաց են թողել խոշոր գումարի «հայկական կտրոններ» ու հեռանալով տարել են իրենց հետ կտրոնների կլիշեների մեծ մասը, որպիսի հանգամանքը մի կողմից հնարավորություն չէ տալիս շարունակել կտրոնների տպագրությունը, իսկ մյուս կողմից մեծամասնականները կարող են տպագրել և հեղեղել շուկան կեղծ կտրոններով՝ Հայրենիքի փրկության կոմիտեն՝ նկատի առնելով ժողովրդի շահերը և ցանկանալով սահմանել օրինակելի դրամական շրջանառություն՝ որոշեց.

1. Աստիճանաբար հանել շրջանառությունից բոլոր հայկական կտրոնները։

2. Կտրոնների փոխարեն բաց թողնել հայկական նոր դրամանիշերը, որոնք ապահովված են Հայաստանի ամբողջ գույքով և պետական գանձարանում ու արտասահմանում գտնվող ոսկու ֆոնդով։

3. Հայաստանի պետական բանկը և բոլոր գանձարանները անարգել փոխանակում են կտրոնները նոր դրամներով՝ հաշվելով նոր դրամի մեկ ռուբլին հավասար հարյուր ռուբլու կտրոններով։

4. Կտրոնների փոխանակումը նոր դրամներով՝ տեղի կունենա մինչև սույն տարվա հունիսի մեկը, որպիսի ժամանակամիջոցից հետո չփոխանակված կտրոնները կհամարվեն ոչնչացված։

5. Բոլոր պետական և հասարակական հիմնարկություններն և մասնավոր անձինք հաշվեհարդարի ժամանակ պարտավոր են՝ «հայկական» նոր դրամները ընդունել հարյուր անգամի հավելումով։

6. Նրանք, ովքեր, որ կխախտեն սույն հրամանի 5-րդ կետը, կենթարկվեն ամենախիստ պատժի հեղափոխական ժամանակի օրենքով։

7. Այս հրամանը մտնում է ուժի մեջ հայտարարության օրից։

Հայր. փրկ. կոմ.-ի նախագահ՝. Ս. ՎՐԱՑՅԱՆ
Ֆինանս. նախար. ընդհ. վարիչ՝ Հ. ՏԵՐՏԵՐՅԱՆ»

Նոր, այսպես կոչված, «հայկական դրամանիշերը» ինչպես և նամակադրոշմները պատրաստված Լոնդոնում, Հայաստան հասել էին խորհրդայնացումից առաջ և շրջանառության դեռ չէին դրվել։ Արտասահմանում միայն հրապարակ էին հանվել Հ. Հ. պատվիրակության կողմից։ Դրամանիշերը և նամակադրոշմները նկարել էր նկարիչ. Ա. Ֆեթվաճյանը։

Վերջը, ժողովրդին ուղղված հետևյալ կոչով, Հայրենիքի փրկության կոմիտեն աշխատեց մեղմացնել նաև երկրի պարենավորման սուր տագնապը։

«Քաղաքացիներ.

Բոլշևիկյան իշխանությունը Հայաստանի աշխատավորության համար եղավ տնաքանդության և սարսափի շրջան։ Հայ իրականության հետ ոչ մի կապ չունեցող այդ ցնորամիտները մորեխի նման անցան մեր երկրի վրայով, սրբեցին-տարան ամեն ինչ։ Եվ հայ գյուղացին ու բանվորը, որբն ու զինվորը, որ հազիվ մի քիչ շունչ էին քաշել և իրենց մի կտոր շոր հաց ապահովել, նորից մնացին ձեռնունայն ու սոված։

Հայրենիքի փրկության կոմիտեն՝ տապալելով բոլշևիկյան բռնապետությունը՝ ամենից առաջ մտահոգված է հաց չունեցող քաղաքացիներին, զորքին ու որբերին հաց հասցնելու գործով։ Եվ որովհետև Հայաստանի սահմանները դեռ փակ են դրսի աշխարհից պարեն ստանալու համար, առայժմ հացը պետք է ստացվի միայն երկրի ներսից։ Որքան էլ թալանված լինի Հայաստանը, գյուղերում և քաղաքներում դեռ կա որոշ քանակությամբ հացի ավելցուկ, որը պետք է տրամադրվի կառավարությանը, իհարկե, վարձատրությամբ։

Այդ նպատակով Հայրենիքի փրկության կոմիտեն հանձնարարել է տեղական Հայր. փրկ. կոմիտեներին, պարենավորման նախարարության վարիչի անմիջական ղեկավարության ներքո, շտապով կազմակերպել հացի գնումը։ Նմանապես հանձնարարել է նաև կամավոր նվերներ հավաքել ժողովրդից պետական կարիքների համար։ Գնելիք հացահատիկի գները և այլ պայմանները պետք է որոշվեն տեղում Հայր. փրկ. տեղական կոմիտեի կողմից, պարենավորման նախարարության վարիչի հավանությամբ։

Կազմակերպելով հացի գնումն ու հավաքումը՝ Հայր. փրկ. կոմիտեն խորապես համոզված է, որ այն ժողովուրդը, որը հանուն ազատության թնդանոթների դեմ դուրս եկավ և ահագին զոհեր տվեց, չի խնայի և նյութական միջոցը և կտա կառավարությանը իր հացի ավելորդ մասը։ Հայաստանի ազատության ամրացումն ու ապահովությունը ամենից շատ կախված է պարենավորման հարցի լուծումից և առաջին հերթին՝ չունևոր ժողովրդին հաց հասցնելուց։

Հայր. փրկության կոմիտեն կոչ է անում բոլոր քաղաքացիներին և գյուղացիներին օգնելու իրեն՝ պարենավորման ճգնաժամից էլ պատվով դուրս գալու։

Տվեք ձեր ավելորդ հացը Հայրենիքի փրկության կոմիտեներին։
Կեցցե՛, Ազատ Հայաստանը։

Հայր. փրկ. կոմիտեի նախագահ՝ Ս. ՎՐԱՑՅԱՆ
Պարենավորման գործերի վարիչ՝ Վ. ՄԻՆԱԽՈՐՃԱՆ»

Թե այդ օրերին ինչքան դժվարին էին ապրուստի պայմանները, ցույց են տալիս մթերքների հետևյալ գները, որ Հայրենիքի փրկության կոմիտեն, մարտի 9-ին սահմանել էր Երևանի համար. հաց՝ զրվանքան 3000 ռուբլի, լորին՝ 3500, բրինձ՝ 3–4000, չամիչ՝ 5–7000, գետնախնձոր՝ 2000, տավարի միս՝ 3500, ոչխարի միս՝ 4500, կաթ՝ 2000, մածուն՝ 2000, աղ՝ 2500 և այլն։

Թե՛ կառավարական մարմինները, թե՛ տնային կոմիտեներն ու կուսակցությանց ներկայացուցիչները խիստ հսկողությամբ հետևում էին, որ առաջին հերթին հակատների մարտիկները ուտելիք ունենային և չարաշահության չենթարկվեին։

Մթերքով համեմատաբար ավելի ապահովված էին մահմեդական շրջանները, որոնք պարեն էին ստանում և Թուրքիայից։ Հայրենիքի փրկության կոմիտեն առաջին օրից իսկ մտահոգված էր մահմեդական բնակչությունը պետության հետ կապելու հարցով։ Հեղաշրջումից մի քանի օր անց, նա ժողովրդին ուղղեց հետևյալ կոչը՝ հայերեն, թուրքերեն և ռուսերեն լեզուներով։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Քաղաքացիներ.

Բոլշևիզմի անարգ լուծը թոթափելով՝ Հայաստանի աշխատավորությունը նպատակ ունի իր Հայրենիքում հաստատել լայն ժողովրդապետական կարգեր։

Ազգային և հասարակական բոլոր այն շարիքները, որոնք գոյություն են ունեցել անցյալում, պետք է վերացվեն և ամենից առաջ պետք է վերացվեն ազգային անհավասարությունը և ազգային թշնամությունները։ Հայաստանը սեփականությունն է բոլոր ժողովուրդների, որոնք ապրում են նրա սահմաններում։ Ոչ մի խտրություն չի կարող լինել հայի, թուրքի, ռուսի, քրդի, ասորու, եզդու և ուրիշների միջև։ Ամենքը Հայրենիքի հարազատ զավակներ են՝ հավասար իրավունքներով և հավասար պարտականություններով։

Դժբախտաբար, անցյալում քիչ չեն եղել դեպքեր, երբ զանազան վատ ուժեր աշխատել են կռվեցնել Հայաստանում ապրող ժողովուրդներին և նրանց թշվառության վրա կառուցանել իրենց դիրքն ու բարեկեցությունը։ Դժբախտաբար, դեռ այսօր էլ կան անազնիվ մարդիկ, որոնք անձնական շահասիրությունից դրդված կամ քաղաքական մութ նպատակներով՝ ձգտում են թշնամություն սերմանել ազգերի մեջ։ Նրանք կամենում են վերակենդանացնել անցյալի ցավալի դեպքերը և նորից կրակի և արյան թատերաբեմ դարձնել Հայաստանը։

Քաղաքացիներ, այդպիսի մարդիկ թշնամի են Հայաստանի ազատության, թշնամի են Հայաստանում ապրող ժողովուրդներին։ Այդպիսիների դեմ պետք է կռվել անխնա և ամենավճռական կերպով։ Հայրե-

նիքի փրկության կոմիտեն հանդիսավորապես հայտարարում է, որ ինքը թույլ չի տա որևէ ազգային անհավասարություն և ազգամիջյան ընդհարումներ Հայաստանում։ Ազգային խտրություններ հարուցանողները պետք է պատժվեն հեղափոխական ժամանակի օրենքներով։

Հայրենիքի փրկության կոմիտեն առանձնապես կոչ է անում Հայաստանի թուրք ժողովրդին, որը հայ ժողովրդի պես շատ տառապանքներ է տեսել անցյալում և դեռ տառապում է այսօր էլ, մոռացի՛ր անցյալի տառապանքները, եղբայրորեն ձեռք մեկնիր հայ աշխատավորությանը և ամուր փարիր ազատ Հայաստանին. ինչ և լինեն միջազգային դեպքերը, այս երկրում մենք կողք կողքի ենք ապրելու, միասին ենք ողողելու մեր հայրենի հողը քրտինքով, միասին ենք լալու և ուրախանալու։ Թո՛ղ այսօրվանից մոռացվեն անցյալի սխալները և անցյալի դառնությունները։ Հայրենիքի փրկության կոմիտեն հրավիրում է ձեզ լայնորեն մասնակցելու Հայաստանի պետական և հասարակական կյանքին։

Կեցցե, Ազատ և Անկախ Հայաստանը։

Կեցցե, Հայաստանի բոլոր ազգերի եղբայրությունը։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ»

Երևան, 22 փետրվ. 1921

Մարտի 6-ին, Գեոյ Մեչիդում, Երևանի թուրք ազգաբնակչությունը կազմակերպեց համաժողովրդական մի մեծ ժողով, ուր ելույթ ունեցավ Հայր. փրկության կոմիտեի նախագահը՝ խոսելով ազգային համերաշխության և փոխադարձ վստահության անհրաժեշտության մասին։ Թուրք ներկայացուցիչները խոստացան մոռանալ անցյալը, ամեն կերպ աջակցել կառավարությանը ամրացնելու պետության հիմքերը և պաշտպանելու հայրենիքի ազատությունը բոլշևիկների դեմ։

Քիչ վերջը, Հայրենիքի փրկության կոմիտեի կազմի մեջ առնվեցին, օգնականների պաշտոնով, Երևանի հայտնի թուրք գործիչներից չորս հոգի, և հատկացվեցին որոշ վարկեր Երևանի և Էջմիածնի շրջանների թուրք բնակչությանը օժանդակելու համար։ Առահասարակ, Հայր. փրկության կոմիտեն ամեն ճիգ թափեց ազգամիջյան բախումներից խուսափելու համար, որպեսզի առիթ չտրվի Արաքսի ափին կանգնած թուրք բանակին միջամտելու Հայաստանի ներքին գործերին։ Թրքական սպառնալիքը դամոկլյան սրի պես կախված էր հայ ժողովրդի գլխին։ Այդ սպառնալիքով են բացատրվում Հայրենիքի փրկության կոմիտեի մի շարք քայլերը կամ արտաքին հարաբերությունները։ Որոշ չափով նույն դգացումով ներշնչված են և Հ. Հ. պատվիրակության և Չիչերինին հղված հեռագրերը Լոնդոնի և Մոսկվայի խորհրդաժողովների առթիվ, ինչպես և Անգորայի կառավարության ուղղված դիմումները։ Հայրենիքի

փրկության կոմիտեն, անշուշտ, լրիվ կերպով գիտակցում էր թրքական և ռուսական գործոնների նշանակությունը Հայաստանի ճակատագրի համար։ Եթե մի կողմից թուրքերի բարյացակամությունը շահելու ճիգ էր թափվում, մյուս կողմից էլ, բազմաթիվ առիթներով, հավաստիքներ էին տրվում խորհրդային վարիչներին, որ փետր. 18-ի հեղափոխությունը ուղղված չէր Ռուսաստանի դեմ։ Այսպես, մարտի 10-ին, Հայր. փրկության կոմիտեն Չիչերինին ուղղած մի ընդարձակ հեռագրով նորից ու նորից փորձում էր համոզել, թե Փետրվարյան ապստամբությունը թշնամական քայլ չէր Ռուսաստանի կամ ռուս ժողովրդի դեմ։

«Ռուսաստանը,— ասվում էր այդ հեռագրում,— չի կարող չճանաչել հայ ժողովրդի իրավունքը և չի կարող հաշվի չառնել նրա անհողդողդ կամքը, ապրելու անկախ, առանց օտար սվիններ խնամակալության։ Հայաստանի աշխատավոր զանգվածները հավատ ունեն, որ սվիններ ու գնդացիրներ ուղարկելու փոխարեն Խորհրդ. Ռուսաստանը հայ ժողովրդին օրինակ կտա ավելի կուլտուրական և ավելի արժանավայել միջոցներով լուծելու վիճելի խնդիրները և բարեկամական հարաբերություններ ստեղծելու Խորհրդ. Մեծ Հանրապետության և փոքր, բայց ազատ կյանքի բուռն ձգտումով տոգորված Հայաստանի միջև»։

«Մեծ» Ռուսաստանը, սակայն, ականջ չուներ լսելու «Փոքր» Հայաստանի ճիչերը։ Հայրենիքի փրկության կոմիտեի բոլոր ջանքերը՝ համաձայնության հող պատրաստելու և խաղաղությամբ դարմանելու համար Հայաստանի ցավը, անցան ապարդյուն։ Ցավի դարմանումը հանձնված էր կարմիր բանակին, որ հետզհետե ուժեր էր համախմբում Հայաստանի սահմանների վրա։ Հեղկոմի բոլոր փորձերը, սեփական ուժերով հետ գրավելու Երևանը, հաջողությամբ չպսակվեցին։ Ռուս բանակը պիտի գրավեր և հայ բոլշևիկներին հանձներ Հայաստանը, հակառակ հայ ժողովրդի կամքին։

Փետր. 18-ի առավոտյան, Հեղկոմը իր ուժերով նահանջելով Երևանից՝ աշխատեց ամրանալ Ղամարլուի շրջանում, բայց ապստամբ ժողովրդի գրոհի տակ՝ ստիպված եղավ խուճապով փախչել դեպի Շարուր՝ անօրինակ դաժանություններ գործադրելով հեռանալիս։ Բոլշևիկները բռնությամբ զինվորագրել և իրենց հետ էին տարել տեղական երիտասարդությունը, թալանել ու ավերել էին գյուղացիների այգիներն ու տները, քշել-տարել էին տավարը և 60 մարդ էին սպանել գյուղերում։

Բոլշևիկների պարտությունը աննկարագրելի խանդավառություն առաջ բերեց ամեն տեղ, ժողովրդի բոլոր խավերում։ Արագ կերպով կազմակերպվեցին և ռազմաճակատ մեկնեցին հայրենակցական ու կուսակցական մարտական խմբերը, ինչպես Վանպուրականի, սուրմալուցիների, տարոնցիների, եզդիների զորամասերը։ Նմանապես գործոն մասնակցություն ունեցավ և Ռամկավար կուսակցության 60 հոգիանոց կամավորական խումբը։

Շարուրի մուտքի առջև ամրանալուց հետո, երբ առաջին սարսափը անցավ, փետր. 26–27-ին բոլշևիկները ձեռնարկեցին ընդհանուր հարձակման մայրաքաղաքը վերագրավելու ցանկությամբ։ Փետր. 27-ին, նրանց զրահապատը արդեն Երևանի տակ էր և երկաթուղու կայարանից երկու կիլոմետր հեռվից, ռմբակոծում էր քաղաքը։

Երևանը գերմարդկային ճիգ էր թափում հետ մղելու համար թշնամուն։ Հայրենիքի փրկության կոմիտեի կոչի վրա ամբողջ բնակչությունը զենքի տակ մտավ։ «Ամեն ոք դեպի ռազմաճակատ»,— այս էր բոլորի խոսքն ու միտքը։ Տնային կոմիտեները, Միջկուսակցական խորհուրդը, ողջ պաշտոնեությունը, ամենքը գործի վրա էին։ Քաղաքը բերդի էր վերածված։ Գիշերը քաղաքը անքուն անցկացրեց։

«Փետր. 28-ին վաղ լուսաբացից սկսած, ամբողջ օրը, որոտում էին թնդանոթներն ու գնդացիրները, արձանագրել է իր հուշատետրում Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներից մեկը։ Թշնամու ռումբերը ընկնում են քաղաքում՝ գերեզմանոցի և ամերիկյան որբանոցի վրա։ Մեր «շտաբը» ռադիոկայանի մոտ է, սպարապետը այստեղից է ղեկավարում կռիվը։ Թշնամու զրահապատը Շենգավիթի կողքից սպառնում է մեր առաջավոր դիրքերին և անընդհատ ռումբեր ուղարկում դեպի քաղաք։ Մեր «ռեզերվը» Երևանի կայարանում է, իսկ դիրքերը՝ մերձակա բլուրների վրա։ Թշնամին դիմում է կատաղի գրոհի կենտրոնից. մերոնք հետ են շպրտում։ Նոր գրոհ ու նոր հակահարված։ Ժողովրդական վաշտերը երկաթե տոկունություն են ցույց տալիս։ Բոլշևիկների բոլոր փորձերը պատռելու նրանց դիրքերը, անցնում են անհաջող։ Տեղ-տեղ կռվի նախաձեռնությունը անցնում է մերոնց ձեռքը։ Երևանը դարձել է պողպատե ամրություն։ Կռվողը ժողովուրդն է. կանոնավոր զորք չկա այստեղ։

Մերոնք միաժամանակ իրագործում են լայն ռազմական ծրագիր. ժողովրդական վաշտերը, Հրազդանի կողմից, հետզհետե անցնում են թշնամու թիկունքը։ Մյուս կողմից սպառնում են Ազյաշի ուղղությամբ։ Բոլշևիկ հրամանատարությունը ճիգ է թափում գրավելու մայրաքաղաքը։ Ժողովուրդը անհողդողդ դիմադրում է՝ տալով թանկագին զոհեր։ Փետր. 27–28-ի կռիվներում հերոսական մահով ընկավ Շապուհը (Խնուս), Միհրդատ Միրզախանյանը (Վան), Մարգար Գալեմքարյանը (Վան), Սարգիս Բրուտյանը (Ռզմ), Աղասի Գալարթմյանը (Վան), Հովսեփ Չավուշը (Վան), Վահան Պետրոսյանը (Վան), Ավետիք Օհանյանը (Վան), գնդ. Մինաս Մինասյանը, Մանաս Պողոսյանը (Գողթն), Հայրապետ Բաբայանը (Երևան), Աբել Խաչատրյանը, Միհրան Աբաջյանը (Ալաշկերտ), սպա Միհրան Հազարապետյանը (Ախալցխա), Լևոն Շալճյանը (Վան) և Հայկ Կարապետյանը (Վան)։

Մարտի 1-ի օրը բացվում է խորունկ լռության մեջ։ Քաղաքը սպասում է թնդանոթների որոտին։ Անցնում են ժամեր, բայց լռությունը չի

խանգարվում։ Թշնամին դիշերը փախել էր՝ կրելով ծանր կորուստներ... Ժողովրդի ոգևորությունը անպատմելի է։ Քաղաքից անցնում են ճակատ գիմող կամավորական խմբեր, որոնք ընդունվում են խանդավառությամբ։ Շարունակվում է թշնամու հետապնդումը։

Բոլշևիկները նահանջեցին ճանապարհին թալանելով գյուղերը և սպանելով անմեղ մարդկանց։ Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից ուղարկված քննիչ հանձնախումբը պարզեց ահռելի տեսարաններ Ղամարլուի շրջանում. բոլշևիկները սպանել էին մոտ 1000 գյուղացիներ, որոնց մի մասը կացնահարված նետել էին հորերը և գինու մեծ բրասների մեջ, բռնադրավել էին հացն ու մթերքը, քշել-տարել էին տավարը։ Ժողովուրդը մնացել էր անհուն թշվառության մեջ։

Բոլշևիկների համար աննպաստ հետևանքներով վերջացան և նրանց հարձակումները մյուս ճակատների վրա։ Ամեն տեղ ժողովրդական վաշտից ուժեղ դիմադրություն ցույց տվին։ Միայն Նոր Բայազետում նրանց հաջողվեց վերագրավել քաղաքը և գյուղերի մի մասը։

Այնուհետև մոտ երկու շաբաթ ճակատները մնացին համեմատաբար հանգիստ։ Բոլշևիկները ջախջախիչ հարվածներ կրելուց հետո չէին համարձակվում նոր արկածախնդրություններ փորձելու, բայց Հայրենիքի փրկության կոմիտեն տեղեկություն ստանում էր, որ Ազրբեջանից կարմիր բանակի նորանոր զորամասեր էին ջարժվում Հայաստանի ուղղությամբ։ Ակներև էր, որ բոլշևիկները պատրաստվում էին վճռական գրոհի ավելի լայն ծավալով։ Հայրենիքի փրկության կոմիտեի հեռագրական նոր դիմումներն էլ Մոսկվա և Թիֆլիս մնացին անպատասխան։

Իր հերթին Հայրենիքի փրկության կոմիտեն էլ շարունակում էր եռանդով պատրաստվել թշնամուն ուժեղ հակահարված տալու։

Մարտի 15-ին 20—32 տարեկանների զորակոչ հայտարարվեց Երևանում, Վաղարշապատում և Աշտարակում։ Պարտավոր էին երեք օրվա ուտելիքով և սեփական զենքով ներկայանալ զինվորական իշխանության զորամասերում դասավորվելու համար։

Այդ առթիվ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը այցելեց էջմիածին, Օշական և Աշտարակ, ուր ազգաբնակչության կողմից ընդունվեց ցնծությամբ։ Տեղի ունեցան հրապարակային ժողովներ և զորահանդեսներ, խորհրդակցություններ քաղաքացիական ու զինվորական իշխանությունների և գավառական ինքնավարությունների հետ, պարենավորման և ռազմաճակատի ուժեղացման հարցերի շուրջ։ Ժողովուրդը ամեն տեղ անհողդողդ կեցած էր կառավարության կողքին։

Նույն նպատակով մյուս շրջաններն ու ռազմաճակատ մեկնեցին և Հայրենիքի փրկության կոմիտեի ուրիշ անդամներ ու հեղինակավոր գործիչներ։ Միաժամանակ ռազմաճակատ ուղարկվեցին նոր ուժեր։ Օդի մեջ զգացվում էր, որ բոլշևիկները շուտով նորից պիտի փորձեն գրավել Երևանը։

Եվ, իսկապես, մարտի 15-ին, Հեղկոմի ուժերը դիմեցին ընդհանուր այս անգամ ավելի կատաղի հարձակման։ Խոսքը դարձյալ տանք Հայրենիքի փրկության կոմիտեի անդամին, որ իր հուշատետրում արձանագրել է.

«Մարտի 16. Նոր կռիվներ։ Կամոքն ժողովրդին ճակատ են մեկնում խմբերը, որոնց մեջ և շատ մտավորականներ։ Երևանի փողոցները դատարկվում են, ժողովրդի տրամադրությունը նորից բարձր է։ Տնային կոմիտեների կենտրոնական կոմիտեն արտակարգ գործունեություն է ցույց տալիս. հավաքում է կամավորներ, զենք, փամփուշտ, ուտելիք։ Սկսվում է կատաղի կռիվ։ Թշնամին գրավում է Ղամարլուն և դարձյալ երևում է մայրաքաղաքի տակ։ Այս անգամ գլխավոր գրոհները Աղբաշի ուղղությամբ են։

Մարտի 18-ի կռիվները տևում են մի քանի օր։ Թշնամին առաջխաղացման է դիմում նաև Ախտայի ճակատում և Արագածի կողմից։ Սկիզբը ընդհանուր հարձակման։

Հայրենիքի փրկության կոմիտեն կոչ է ուղղում Կոկվասի բոլոր ժողովուրդներին՝ հրավիրելով նրանց համերաշխ և միացյալ ճակատով դուրս գալ հասարակաց թշնամու դեմ։

Մարտի 19. Մերոնք հինգ օրվա համառ կռիվներից հետո դիմեցին ընդհանուր հարձակման Ղամարլուի ճակատում. վերագրավեցին Աղբաշը, առան մեծ քանակությամբ գերիներ և ռազմամթերք։ Թշնամին ջախջախված՝ սկսեց նահանջել։

Մարտի 20. Մերոնց ընդհանուր առաջխաղացումը զարգանում է. ժամը 1-ին մեր առաջապահները մտան Ղամարլու և գրավեցին 2 թընդանոթ, 2 գնդացիր, մի քանի հարյուր հրացան, ռումբ, փամփուշտ, 200-ից ավելի գերիներ, 2 սպա։ Թշնամին խուճապահար փախավ և ամրացավ Շիրազլու—Ավշար գծի վրա, զրահապատների պաշտպանության ներքո։ Անցած բոլոր վայրերում բոլշևիկները ավերեցին և թալանեցին գյուղերը։

Նույն օրը, Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահը, Քաջազնունին և Հ. Օհանջանյանը այցելեցին Ղամարլու և առաջավոր դիրքերը և խորհրդակցություն ունեցան զորահրամանատարության հետ»։

Ղամարլուի ճակատի հրամանատարն էր խմբապետ Սմբատը՝ մի քաջ, շատ ճակատամարտերում եղած ու վերք ստացած մարտիկ։ Որքան և անհավատալի կարծվի, Սմբատը եղավ առաջիններից մեկը, որ խոսք բացեց թուրքերից օգնություն խնդրելու մասին։ Այդ հարցը զբաղեցնում էր և ուրիշների մտքերը, նույնիսկ Քաջազնունիի նման զգաստ մարդկանց՝ այնքան ատելություն կար դեպի Հեղկոմի իշխանությունն ու բոլշևիզմը, առհասարակ։

Մարտի 20-ի երեկոյան Երևան եկավ բանաստեղծ Հովհ. Թումանյանը։ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահին տված զեկուցումից

պարզվեց, որ Թիֆլիսում այն կարծիքն է եղել, որ իսկապես փետրվարյան հեղաշրջումը զուտ կուսակցական գործ է և կարող է աղետաբեր լինել հայ ժողովրդի համար։ Թիֆլիսի հայ մտավորականների ժողովում որոշվել է Երևան ուղարկել Թումանյանին։ Ինչ առաքելությամբ՝ որոշ չէր Թումանյանի բացատրությունից, բայց քանի որ նա գալիս էր Օրջոնիկիձեի արտոնությամբ, պետք էր ենթադրել, որ որոշ հանձնարարություն ուներ վերջինից։ Համենայն դեպս, նույն օրն իսկ Թիֆլիս ուղարկվեց հետևյալ հեռագիրը.

«Թիֆլիս, Օրջոնիկիձեին.

Այսօր Երևան հասավ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, որի հաղորդածներից երևում է, որ դուք բոլորովին սխալ տեղեկություններ ունեք Հայաստանի դեպքերի մասին։ Հայաստանի հեղաշրջումը անպատասխանատու մարդկանց գործ չէ, այլ բառացի կերպով ամբողջ ժողովրդի, որը կռվում է իր գոյության համար։ Իմացեք, որ միայն հայ գյուղացիների և բանվորների դիակների վրայով կարելի է հասնել Երևանին։ Թումանյանին տրվում է լիակատար հնարավորություն ծանոթանալու իրերի իսկական դրությանը և տեղեկացնելու ձեզ։

Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ՝ Ս. ՎՐԱՑՅԱՆ»։
20 մարտի

Եվ, իսկապես, Թումանյանին տրվեց ամենալայն հնարավորություն այցելելու պետական և հասարակական հիմնարկությունները, տեսնվելու ուզած մարդկանց հետ և ծանոթանալու իրերի կացությանը։ Մի քանի օր վերջը, մարտի 24-ին Թումանյանը Օրջոնիկիձեին հեռագրեց հետևյալը.

«Թիֆլիս, Օրջոնիկիձեին.

Հինգերորդ օրն է ես Երևանում եմ։ Ծանոթանալով գործերի դրությանը՝ բոլորովին համոզվեցի, որ մեզ մոտ, Թիֆլիսում, կազմված համոզումը Հայաստանի դեպքերի մասին չի համապատասխանում իրականությանը։ Շարժումը սկսվել է գյուղացիության մեջ, զանազան շրջաններում, տարածվել է մինչև Երևան և իր հետևից քաշել է մտավորականությունը։ Ստեղծվել է հետևյալ դրությունը. զենքը ձեռքերին միմյանց դեմ են դուրս եկել մի կողմից Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, մյուս կողմից կոմունիստների զինված խմբերը, և հոսում է արյունը առանց որևէ հիմքի թշնամության և փո-

խաղարձ բնաջնջման համար։ Ռազմաճակատում ընկեր կոմունիստները որոշ կերպով ասում էին, թե ամբողջ հեղափոխության ընթացքում կարմիր բանակը ավելի անմիտ կռիվ չի վարել։ Այդ պատճառով ջերմորեն խնդրում եմ ձեր հեղինակավոր միջամտությունը, որպեսզի շուտափույթ կերպով վերջ տրվի այս ոչ ոքի համար պետք չեղած արյունահեղությանը։ Անհրաժեշտ եմ համարում ավելացնել, որ հեղաշրջումից հետո ձերբակալված կոմունիստներից և ոչ մեկը և ոչ մի ռազմագերի այստեղ չէ գնդակահարված։ Նման հաղորդագրություն անում եմ և ռազմաճակատում գտնվող ընկեր կոմունիստներին։ Եթե կպահանջվեն լրացուցիչ տեղեկություններ, խնդրում եմ կանչել ինձ ռադիոյի մոտ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ»

Ոչ Օրջոնիկիձեն, ոչ էլ «ռազմաճակատում գտնվող ընկեր կոմունիստները» չպատասխանեցին Թումանյանին։ Ընդհակառակը, Հայրենիքի փրկության կոմիտեն Օրջոնիկիձեից ստացավ հեռագրական մի վերջնագիր, որով Կովկասի կարմիր փոխարքան անպայման անձնատվություն էր պահանջում հայերից։ Եվ մարտի 25-ին կարմիր բանակը ընդհանուր հարձակման հրաման ստացավ։ Մեծ Ռուսաստանը իր վիթխարի ուժով ոտքի էր ելել ճզմելու համար փոքրիկ և ուժասպառ Հայաստանը։

Ի՞նչ էր ընդհանուր կացությունը և հայ-ռուսական ուժերի փոխհարաբերությունը 1921 թ. մարտի վերջերը։

Խորհրդային Ռուսաստանը հաջողությամբ դուրս էր եկել 1920-21 թվականների ներքին և արտաքին ծանր տագնապներից։ Դաժան միջոցներով ճնշված էին Կրոնշտադտի, Վոլգայի և մյուս շրջանների ապստամբությունները։ Գրավված էին Ազրբեջանն ու Վրաստանը։ Հաշվեհարդարի էր ենթարկված ռուս-լեհական պատերազմը։ Թուրքերի հետ 1921 թ. մարտի 16-ին կնքվել էր բարեկամության և փոխադարձ օգնության դաշնագիրը։ Կարմիր բանակը այլևս ի վիճակի էր ռազմական լայն գործողությունների դիմելու Հայաստանի դեմ և մարտ ամսի ընթացքին, կարևոր ուժեր էր հավաքել հայկական ճակատի վրա։ Այդ մասին հետևյալ տեղեկություններն է հաղորդում Հայաստանի դեմ կռվող կարմիր զորամասերի հրամանատար Վելիկանովը*։ Ըստ Վելիկանովի, Ղամարլուի ճակատում, բացի երկու զրահապատ գնացքներից, կոմունիստական խմբերից և բռնությամբ տարված հայկական մասերից, գործում էին նաև 60-րդ բրիգադայի 178 և 180 գնդերը։

* «Համառոտ տեղեկություններ 20-րդ դիվիզիայի 1920-21 թ. Հայաստանում ունեցած ռազմական գործողությունների մասին»։ «Խորհրդ. Հայաստան», 1923 թ. հուլիսի 15։

Մինչև մարտ հյուսիսային ճակատի վրա, բացի կոմունիստներից և ռուս գյուղացիական խմբերից, գործում էր 18-րդ դիվիզիայի պետ Ֆրմախերի հրամանատարության տակ գտնվող Դիլիջանի զորախումբը, որ բաղկացած էր 53 և 54 բրիգադներից*. 179 գնդից և հայերի պարտիզանական խմբերից. Դիլիջանի զորախումբը, տեղեկագրում է Վելիկանովը. «մի քանի անգամ արշավանք սկսվեց Երևանի ուղղությամբ, բայց այդ գործողությունները հաջողությամբ չպսակվեցին»։

Վրաստանի գրավումից հետո, ըստ Վելիկանովի, Հայաստանի ճակատի վրա կային հետևյալ զորամասերը. 179-րդ գունդը Վարթնա և Սիպաակ գյուղերում, 53 ու 54-րդ բրիգադաները, 18-րդ կովկասյան գունդը և կամավորական խմբեր Ախտայի ճակատում։ 20-րդ դիվիզիայի մասերը — 58-րդ բրիգադան Համամլու կայարանում, 172 ու 176 գնդերը և 20-րդ կովկասյան գունդը՝ նույնպես Ախտայի ճակատում։ «Այս բոլոր զորքերից,— գրում է Վելիկանովը,— կազմվեց՝ այսպես կոչված «Երևանյան զորախումբը»։

Իր տեղեկագրում, Վելիկանովը մանրամասնորեն խոսում է հայերի դեմ մղված «համառ կռիվների», ունեցած հաղթանակների և կրած պարտությունների մասին։ Ի միջի այլոց, նա պատմում է, որ 177-րդ գունդը ծանր հարված կրելով հայերից՝ խուճապով նահանջել է դեպի Օրդուբադ՝ տալով մոտ 150 սպանվածներ ու վիրավորներ։

Հայերը ի՞նչ կարող էին հակադրել «զավթիչների» այս ուժերին՝ բացի դեպի բոլշևիզմն ու դեպի բոլշևիկները տածած անհուն ատելությունից և ցասումից։

Ինչպես հայտնի է, ապստամբությունը ծագել էր տարերային բռնկումով, առանց որևէ պատրաստության, կամ արտաքին օգնության, և ահա հինգ շաբաթ անընդհատ ժողովուրդը կռվում էր, կարելի է ասել, մերկ բազուկներով։ Ոչ կանոնավոր կազմակերպված զորք ու կարող զինվորական մասնագետներ, ոչ փորձված հրամանատարներ, ոչ պարեն, ոչ ռազմամթերք՝ ոչինչ, բառի բուն նշանակությամբ ոչինչ։ Այո, միայն նմանը քիչ պատահող բուռն ատելություն, անսահման ցասում դեպի բոլշևիզմն ու բոլշևիկները։

Ժողովուրդն իր միջից դուրս բերեց քաղաքական ու զինվորական ղեկավարություն, ինչպես ընդհանուր հրամանատար գնդ. Կուռո Թարխանյանը, սպարապետ Սուրենը և Զանգեզուրում սպարապետ Գարեգին Նժդեհը։

Ժողովրդի ծոցից ելան բազմաթիվ անձնվեր հերոսներ, ինչպես Բաշ Գառնեցի Մարտիրոսը, Եկեղն, Կոռնետ Նավասարդյանը, Գարեգին Ֆարգիսբեգյանը, Սասունցի Մուշեղը, ոզմցի Ասլանը, մտավորական

* Բոլշևիկյան բրիգադը կախված էր 3 գնդերից. գունդը՝ 3 գումարտակից. գումարտակը՝ 1000 զինվորից։

սպա Հովհաննես Լազարյանը, որ նահատակվեց Ղամարլուի ճակատում և շատ ուրիշներ։

Ռազմաճակատում նահատակված հերոսների կարգին պետք է հիշել և Երևանում հարդված ծերունիներ Գևորգյանի ու Թաղիանոսի անունները։ Այս վերջինի կոմունիստ որդին հեռացել էր Հեղկոմի հետ և կռվում էր Հայրենիքի դեմ։ Հայրը երդվել էր իր ձեռքով սպանել որդուն և հրացանը ուսին գնաց ռազմաճակատ, ուր և նահատակվեց տաք կռվում։

Հակառակ ուժերի գերազույն լարումի, փոքրիկ Հայաստանը, ի վերջո, պիտի պարտվեր, առանց արտաքին օգնության։ Հայրենիքի փրկության կոմիտեի համար պարզ էր, որ Վրաստանի անկումից հետո Հայաստանն էլ դատապարտված էր նույն ճակատագրին, եթե հրաշք չպատահեր. Թումանյանը Երևան հասնելուց հետո Վրաստանի անկումը իմացվեց հասարակության մեջ, և, բնականաբար, լավ չանդրադարձավ ժողովրդի տրամադրության վրա։

Ամուր պահելով հանգերձ ճակատները՝ Հայրենիքի փրկության կոմիտեն սկսեց պատրաստվել նահանջի։

Հայրենիքի փրկության կոմիտեի Երևանում գտնվող անդամները, պատասխանատու գործիչների հետ միասին, խորհրդակցություն ունեցան նահանջի հետ կապված խնդիրների մասին։ Նախատեսվում էր երկու հնարավորություն. Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների մի մասը տրամադիր էր բովանդակ ուժով գրոհ տալ և խորտակելով Ղամարլուի ճակատի բոլշևիկյան պատնեշը, Շարուր—Նախիջևանի վրայով միանալ Զանգեզուրին։ Ոմանք գերադաս էին հաճարում բռնել Բաշ—Գառանի—Միլի ձոր—Դարալագյազ գիծը, որ թեև դեռ փակված էր ձյունով, բայց շուտով կարող էր բացվել։

Մինչ տեղի էին ունենում խորհրդակցություններ, Զանգեզուրից Երևան հասավ տարոնցի ծանոթ հայդուկ Պոլոյի Արշակը՝ բերելով Ռուբեն Տերնասյանից մի նամակ։ Ռուբենը ողջունում էր «արարատյան հերոսներին» և լավատես գույներով նկարագրում Զանգեզուրի վիճակը։ Սելիմի լեռնանցքը, Ղարաբաղ տանող կիրճը, Դարալագյազը մինչև Քյոմուրլու թրքական գյուղը Շարուրի գլխին, ըստ Ռուբենի, գտնվում էին Զանգեզուրի իշխանության տակ։ Հետևաբար, Զանգեզուրի հետ միանալը ոչ միայն պիտի անվտանգ դարձներ մեր նահանջի գիծը, այլև պիտի դյուրացներ Շարուր—Նախիջևանի ծրագրի գործադրությունը։ Հարցը լուծվեց օգուտ Բաշ-Գառանի—Դարալագյազ գծի։

Հայրենիքի փրկության կոմիտեն Բաշ-Գառնիում կենտրոնացրեց որոշ քանակությամբ ուտելիք, ռազմամթերք ու դեղորայք, այլև այնտեղ փոխադրեց մտավորականության այն մասը, որի ներկայությունը Երևանում անհրաժեշտ չէր։ Միևնույն ժամանակ, Հայրենիքի փրկության

կոմիտեի նախագահը անձնական տեսակցություններով կազմեց պարոնց Հյուպատոսից, ամերիկացի դոկտ. Լոշերից, իտալական առևտրական ներկայացուցչից և Հ. Թումանյանից մի հանձնախումբ, որին պիտի հանձնվեր մայրաքաղաքը նահանջի դեպքում և հանձնախումբը պիտի ընդուներ նվաճողներին։ Այնուհետև մնում էր սպասել դեպքերի զարգացմանը, թեև երկար սպասելու պետք չեղավ։

Մարտի 25-ի թշնամու ընդհանուր հարձակումը սաստիկ էր։ Հայրենիքի փրկության կոմիտեի ուժերը թողին Ախտայի դիրքերը և, ամրանալով Սուխոյ ֆոնտանի բարձունքների վրա՝ համառ դիմադրություն ցույց տվին։ Սկսվեց կատաղի կռիվների մի շարք։ Երևանը ջղային վիճակ էր ապրում։ Հայրենիքի փրկության կոմիտեն մի կոչով հրավիրեց ժողովուրդը հանգստության և ճակատի պաշտպանության։ Հայաստանի ընկերվարական կուսակցությունները միացյալ ռադիոհեռագրով դիմեցին աշխարհի բոլոր ընկերվարականներին՝ բողոքելով բոլշևիկների հարձակման և գործադրած բռնությունների դեմ։ Նորից հեռագրեր տրվեցին Մոսկվա։ Բայց ականջ դնող չկար։

Հակառակ ուժերի գերազանցության՝ կարմիր բանակը չկարողացավ արագ հարվածով գրավել Երևանը։ Հայերը հուսահատական դիմադրություն ցույց տվին՝ կրծքով պաշտպանելով յուրաքանչյուր մի թիզ հող։

Ապրիլի 2-ի առավոտյան, հայկական դիրքերը Սուխոյ ֆոնտանից այս կողմ չդիմացան ու նահանջեցին։ Սասունցիների ձիավոր խումբը սրարշավ անցավ Երևանի փողոցներով՝ խուճապի մատնելով բնակիչներին։ Բոլշևիկյան թնդանոթը որոտաց Քանաքեռի բարձունքից։

Կեսօրին մայրաքաղաքը արդեն գրեթե պարպված էր։ Կառավարություն ու զորք, պաշտոնեություն, մաքրելով հիմնարկությունները, հեռացան քաղաքից։ Տասնյակ հազարներով բնակիչներ արդեն Բաշ-Գառնիի ճանապարհին էին։ Քաղաքում մնացել էին միայն ծերեր, կանայք ու երեխաներ, որոնք լալով ճանապարհ էին դնում ուսանողական պահակախմբով շրջապատված դեպի անհայտություն դիմող Հայրենիքի փրկության կոմիտեի անդամներին։ «Աստված պահե ձեզ։ Մենք կսպասենք ձեզ։ Բարի վերադարձ»,— լսվում էր ամենքի բերանից։

Երևանի հարավային ծայրը խռնված բազմությունը մի պահ արցունքը աչքերին կեցավ։ Մեկը բարձր բռնել էր եռագույնը։ Թնդանոթաձիգները հետ դարձրին հաուբիցը։ Ռումբը որոտաց Երևանի վրայով Քանաքեռի ուղղությամբ։

Հայաստանի արևը փախչում էր Արարատյան դաշտից դեպի արևմուտք։ Բազմահազար բազմությունն էլ խուճապահար փախչում էր հա-

բազատ երկրից։ Երևանում երիտասարդ չէր մնացել։ «Զավթիչները» վախով, Քանաքեռի բարձունքից, մտան ամայի փողոցները, ուր նրանց, նույնպես վախով, դիմավորեցին պարսից հյուպատոսը, ամերիկացի բժիշկը և վրացի Օրջոնիկիձեի ուղարկած հայ բանաստեղծը։ Ժողովուրդը սարսափահար լուռ էր...

Երբեք և ոչ մի տեղ հաղթական մի բանակ այսպիսի անփառունակ մուտք չի ունեցել իր նվաճած քաղաքը...

ԳԼՈՒԽ ԼԶ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Երևանի անկումով՝ Հայաստանի անկախության պայքարի թատերաբեմը փոխադրվում է Զանգեզուր. հետևաբար, անհրաժեշտ է մի պահ կանգ առնել այդ շրջանի դեպքերի վրա։

Մանոթ ենք արդեն ցարական իշխանության վերացումից հետո Զանգեզուրում տեղի ունեցած դեպքերի մասին, մինչև 1919 թ. վերջերը, երբ Զանգեզուրի գյուղացիության բողոքով վերջ տրվեց Ազրբեջանի նվաճողական ախորժակներին և զուտ հայկական ինքնավար Զանգեզուրի կազմությանը։ Զանգեզուրը Ռուսաստանի Ելիզավետպոլ—Գանձակ նահանգի մեկ գավառն էր, լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի միջև։ Բարձրաբերձ լեռներով շրջապատված, անդնդախոր ձորերով կտրատված, անտառներով կամ արոտավայրերով ծածկված լեռնային գեղեցիկ մի շրջան էր, ուր, դարերից ի վեր, ապրում էր աշխատասեր, քաջ, իր հողը և ազատությունը սիրող մի ժողովուրդ, որի ապրուստի աղբյուրն էր գլխավորապես երկրագործությունն ու խաշնարածությունը, կամ պանդխտությունը լեպի Բաքվի նավթաշխարհ։

Զանգեզուրը կազմված էր Սիսիանի, Բուն Զանգեզուրի, Արևիք—Գենվազի և պղինձի հանքերով հարուստ Ղափանի գավառակներից։

Ինչպես ամբողջ Անդրկովկասում, այստեղ ևս բուռն բախումներ տեղի ունեցան հայերի և մահմեդականների միջև։ Ի վերջո, Զանգեզուրը մաքրվեց մահմեդական բնակչությունից, որ տեղափոխվեց Նախիջևանի շրջանը կամ Ազրբեջանի հայերի լքած գյուղերը։

Խրոխտ լեռներին ապավինած՝ արի զանգեզուրցին իրեն միշտ զգացել է մեկ անբաժան մասնիկը Հայաստանի։ Հակառակ Ազրբեջանի թափած ջանքերի, Հայաստանի անկախության հենց առաջին օրից Զանգեզուրը իրեն կապված համարեց Հայաստանի Հանրապետության հետ և իր այդ վճռական կամքը մեկից ավելի անգամներ արտահայտել է համագումարներով։

Անդրանիկին իր զորամասով Զանգեզուրից հեռացնելուց հետո, անգլիացիք ջանացին զանգեզուրցիներին ենթարկել Ազրբեջանին, բայց հաջողություն չունեցան։ Ազրբեջանի կառավարությունը, Նուրի փաշայի ասկյարների օգնությամբ փորձեց զենքի ուժով գրավել Զանգեզուրը,

մի քանի հարձակումներ կազմակերպեց, բայց ամեն անգամ էլ պարտված նահանջեց։ Զանգեզուրի ինքնապաշտպանության կռիվները, իրենց վիպական դրվագներով, ժողովրդի երկաթե տոկունությամբ, առանձին էջ են կազմում Հայ Ազատամարտի պատմության։

Ինչո՞վ կվերջանար այդ հերոսական կռիվների շարքը, Զանգեզուրի գրավումո՞վ Ազրբեջանի ձեռքով, թե՞ նաև Ղարաբաղի կցումով Հայաստանին, դժվար է ասել։ Վրա հասավ Ազրբեջանի խորհրդայնացումը, և դեպքերը նոր ընթացք ստացան։

Թեև Ազրբեջանի Հեղկոմը վերջնագրով պահանջեց Հայաստանի կառավարությունից պարպել Ղարաբաղ—Զանգեզուրը, կռիվները մի առ ժամանակ ընդհատվեցին, և բոլշևիկները փորձեցին խաղաղ միջոցով հասնել իրենց նպատակին։ Միևնույն ժամանակ հայկական զորամասը հեռացավ Ղարաբաղից, որը շուտով գրավվեց բոլշևիկների կողմից։ Ժողովուրդը տեսնելով, որ մուսավաթական իշխանությունը վերացված է և իր մոտ է գալիս ռուսը, հոժարությամբ վար դրեց զենքը և գրկաբաց ընդունեց եկվորներին։

Բոլշևիկները՝ մուտք գործելով Ղարաբաղ, առատ դրամ և պրոպագանդիստներ մտցրին Զանգեզուրի գյուղերը, որպեսզի առանց կռվի կարողանան նվաճել երկիրը։ Սակայն, զանգեզուրցիք հեշտությամբ տեղի չտվին։ Հունիսի 29-ին բոլշևիկները 15 հոգիանոց մի պատվիրակություն են ուղարկում Զանգեզուրի Տեղ. դյուցազ՝ պահանջ դնելով, որ Զանգեզուրի ներկայացուցիչները ընդունեն խորհրդային իշխանությունը, բայց մերժում են ստանում։ Տեսնելով զանգեզուրցիների անհողդողդ կեցվածքը և վախենալով ժողովրդական դատաստանից՝ պատվիրակությունը գիշերով փախչում է։ Սակայն, բոլշևիկներն ամենևին համբերել չէին ուզում. Հայաստանի Հանրապետության զորքերը Շարուրը նվաճելուց հետո շարժվում էին դեպի Նախիջևան։ Բոլշևիկյան 11-րդ բանակը որոշել էր Շուշի—Նախիջևան ճանապարհն իր ձեռքը պահել քեմալականների հետ անմիջական հարաբերության մեջ գտնվելու համար, իսկ հայկական բանակի մոտքը Նախիջևան կարող էր դրությունը կնճռոտել։ Այդ պատճառով գարմիր զորքերը հուլիսի 5-ի գիշերը հանկարծ առաջ են շարժվում Զաքատալից, ձերբակալում են մի քանի հայ սպաների և թալանի ու կոտորածի են ենթարկում Կանձակ գյուղը։ Հայկական փոքրաթիվ զորամասը Քարաշենի մոտ կարճատև դիմադրություն է ցույց տալիս թշնամու մեծ ուժերին և քաշվում Դարալագյազ։ Հուլիսի 5-ին բոլշևիկները մտնում են Գորիս, գրավում են Սիսիանը մինչև Բազարչայի արևմտյան բարձունքները և անմիջապես Նախիջևան ուղարկում 252-րդ զորագունդը և մի հարյուրյակ ձիավոր։ Նախիջևանցիք՝ Հայաստանի Հանրապետությունից ազատվելու հույսով՝ ընկնում են բոլշևիկների գիրկը։

Զանգեզուրն ու Սիսիանը գրավելուց հետո բոլշևիկները հուլիսի 8-ին

մի զորամաս են ուղարկում դեպի Ղափան, սակայն Խոտանան գյուղի մոտ գյուղացիների լուրջ դիմադրության հանդիպելով, հուլ. 13-ին քաշվում են հետ՝ խաբեբայությամբ իրենց հետ տանելով պատվիրակ եկած Ղափանի հարգված գործիչ Սմբատ Մելիք-Ստեփանյանին։ Զանգեզուր ու Սիսիան մտնելով՝ բոլշևիկներն սկսում են գործադրել քաղաքական տեռորն և բանտերը լցնում են տեղական գործիչներով։

Ստի, բռնության ու թալանի վրա հիմնված իշխանությունն իհարկե չէր կարող հարատևել Զանգեզուրում։ Գյուղացիությունը շատ շուտով համոզվեց, թե ինքը խաբված է, և սկսեց միջոցներ որոնել ստեղծված դժոխային կացությունից դուրս գալու համար։ Գյուղերի երիտասարդությունը համարյա ամեն տեղ հալածական՝ քաշվել էր լեռները կամ ապաստան գտել Դարալագյազում։ Նա է գլուխ բարձրացնում բոլշևիկների դեմ։

Ապստամբությունը միաժամանակ հղացվում է երկու տեղ՝ Ղափանում և Սիսիանում։ Ղափանն իր հետևն ուներ ազատ Արևիքը, Սիսիանը՝ Դարալագյազը։ Ղափանի շրջանում էր Գ. Նժդեհն իր գործակիցներով։ Սիսիանի շարժման գլուխը կանգնեց Խոտանանցի ապա Պողոս Տեր-Դավթյանը՝ մի անձնազոհ ու գաղափարական երիտասարդ, որ լայն ժողովրդականություն էր վայելում իր շրջանում։ Հոկտ. 5-ին Տեր-Դավթյանը խորհրդակցության է կանչում իր ընկերներին, ուր աչքի առաջ ունենալով նյութական անելանելի վիճակը՝ որոշվում է վերջ տալ բոլշևիկների իշխանությանը։ Որոշվում է նաև հարաբերության մեջ մտնել Զանգեզուրի մյուս մասերի հետ և շարժումը դարձնել ընդհանուր։ Ապրստամբությունը արագացվում է, որովհետև հայտնի է դառնում, որ Գորիսի Հեղկոմը կարգադրել է Սիսիանից պատանդներ հավաքել և կատարել մի շարք բռնագրավումներ, որից հետո զինակոչի ենթարկել երիտասարդությունը։ Հոկտ. 12-ին Տեր-Դավթյանը 200 երիտասարդներով անցնում է Սիսիան։ Նրան միանում են ամբողջ գյուղացիությունն ու հայ զինվորները։ Բոլշևիկների մի մասը ձերբակալվում է, մյուս մասը սարսափահար փախուստի է դիմում։ Հոկտ. 14-ին ամբողջ Սիսիանն ազատվում է բոլշևիկյան լծից։

Ղափանում ապստամբությունը բռնկում է հոկտ. 19-ին Գուտկոմ, Վաշագան, Ճակատեն, Կավարտ և Բարաբաթամ գյուղերում։ Ժողովրդի ոգին այնքան բարձր էր, որ ամեն տեղ հաղթությունը լինում է արագ և կատարյալ։ Բոլշևիկների այդ շրջանում ունեցած ուժերի մեծ մասը գերի է ընկնում, քչերը միայն կարողանում են փախչել։ Ժողովրդի ձեռքն է անցնում առատ ռազմամթերք և գնդացիրներ. ժողովուրդը ցնծությամբ տոնում է իր փրկությունը։

Այդ ապստամբությունների հետևանքով ստեղծված դրությունը այսպես է բնորոշվում 28-րդ դիվիզիայի պետ Նեստերենկոյի 14 հոկտ. 29 մարտական հրամանում. «Համարյա ամբողջ Զանգեզուրում բռնվել

է ապստամբություն։ Ապստամբած հայերը գրավել են Անգեղակոթ—Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը և Օխչի չայի ու Մեղրի չայի ավազանները։ Նիվագի պյուռի շրջանում գործող 252-րդ հրաց. և կովկասյան 2-րդ գնդի հետ ունեցած կապը խզված է։ Ղափանի աննշան զորամասը շրջապատված է, նրա վիճակն անհայտ է։ 251-րդ հրաց. գունդը կռվում է թշնամու հետ Ցանձքերից 4 վերստ դեպի հարավ գտնվող Ինչաբելի բարձունքներում»։

Բոլշևիկյան հրամանատարությունը ձեռք է առնում դաժան միջոցներ և ծրագրում արյունով ու երկաթով ճնշել Ղափանի ու Սիսիանի ըմբոստ գյուղացիությունը։ Շտապ բերվում են նոր զորամասեր։ Զանգեզուր է գալիս հերոսի հռչակ վայելող Կուրոչկինը իր 1400 ձիավորներով։ Գործադրության են դրվում նաև Բաքվից Գորիս հասած 1200 տաճիկ ասկյարները, որոնք, իբր թե, Զանգեզուրի վրայով գնում էին Մուսթաֆա Քեմալին օգնության։ Այսպիսով, կազմվում է մի ահարկու բանակ բաղկացած 83-րդ և 84-րդ բրիգադաներից, Կուրոչկինի հեծելազորից, տաճիկ գնդից և կոմունիստական խառն խմբերից։ Այս ուժերն ունեին մեծաքանակ փամփուշտ ու գնդացիրներ, առատ թնդանոթներ, ժողովրդից խլած հարուստ պարենավորում և տեղափոխության միջոցներ։ Թիկունքն ապահովելու համար Գորիսից ու գյուղերից առնված էին հարյուրավոր պատանդներ։ Զորամասերի պետերին խիստ հրաման էր տրված՝ լինել անողոք, չխնայել ոչ ոքի, գյուղերը հողին հավասարեցնել, մեծ ու փոքր չխնայել, գերի չվերցնել։

Հոկտ. 15-ին սկսվում են ռազմական գործողություններ Սիսիանի և Ղափանի դեմ։ Ամբողջ ժողովուրդը մի մարդու պես ոտքի է կանգնում իր գոյությունը պաշտպանելու համար։ Կռվում են և ծերերը, և կանայք, և երեխաները, կռվում են բահերով ու քարերով։ Տեղի են ունենում համառ ու հուսահատական կռիվներ։ Ժողովրդին առաջնորդում են երկու սիրված հերոսներ՝ Գ. Նժդեհն ու Պ. Տեր-Դավթյանը և օգնում են խրոտաշունչ ձմեռը, մութ գիշերները ու խոր ձորերը, որոնցից այնպես սարսափում էին ռուս զինվորները։ Մի քանի զորամասերի զինվորներ հրաժարվում են կռվելու ժողովրդի դեմ. բոլշևիկները ձեռք են առնում դաժան միջոցներ. Գորիսի բանտում գնդակահարվում են 20 կարմիր զինվորներ. 70 հոգի էլ հրացանազարկ են արվում Ղարաղշլաղի ձորում։

Կռիվները տևում են շաբաթներ։ Բոլշևիկները, մանավանդ ասկյարները գործում են աներևակայելի բարբարոսություններ։ Նոյեմբ. 17-ին գլխավճանությամբ գրավելով Արցևանիկը՝ նրանք հիմնահատակ ավերում են ու թալանում գյուղը՝ մնացած ամբողջ բնակչությունը սրի քաշելով։ Սակայն, Ղափանի հանքերի մոտ, հանկարծ շրջապատվում են ապստամբներից, սարսափելի չարդ կրում կռվի դաշտում և հարյուրից ավելի գնդացիրներ, մեծաքանակ ռազմամթերք և մոտ 500 գերի թողնելով՝ խուճապի մատնված փախչում են՝ ջատերը կորչելով ձորերի ու ձյունների մեջ կամ գերի ընկնելով ժողովրդի ձեռքը։

Սիսիանի ուղղությամբ շարժվող բոլշևիկ զորքերը հոկտ. 20-21-ին հասնում են Ցայջի և Անգեղակոթ և վերջնագիր են ներկայացնում։ Զինված ժողովուրդը Տեր-Դավթյանի գլխավորությամբ ի պատասխան այս վերջնագրի բուռն հարձակում է գործում և թշնամուն դուրս քշում Անգեղակոթից և Ղարաքիլիսայից։ Ապա ապստամբները տաք ճակատամարտից հետո գրավում են Ցայջին և Տաթևի վրայով միանում ղափանցիներին։ Բոլշևիկները շտապում են սիսիանցիների դեմ ուղարկել տաճկական զորամասը, որը ճանապարհին հայ գյուղերում անօրինակ գազանություններ է գործում։ Նոյեմբերի 5-ին, մառախուղից օգտվելով, ապստամբներն Ուզ գյուղի մոտ խելագար հարձակում են գործում իրենցից մի քանի անգամ ուժեղ թշնամու վրա։ Տեղի է ունենում արյունոտ կռիվ։ Տաճիկները հարյուրի չափ զոհեր տալով՝ փախչում են դեպի Ցայջի և սոսկալի վրեժ լուծում անպաշտպան ժողովրդից։ Գյուղը թալանվում և այրվում է։ Կատարվում են առևանգումներ ու բռնաբարություններ։ Ուզի կռվում ապստամբները ունենում են անփոխարինելի մի կորուստ. գլխից մահացու վերք է ստանում ժողովրդական անկեղծ հերոս Պ. Տեր-Դավթյանը։ Կռիվը երթալով սաստկանում է։ Հետզհետե ապստամբներին են միանում և բուն Զանգեզուրի գյուղերը։ Ոտքի է կանգնում Հալիձորը, որը նոյեմբերի 1-ին կատաղի հարձակման էր ենթարկվել ռուս, հայ և տաճիկ բոլշևիկների կողմից։ Օգնության են հասնում Տաթևի ապստամբները և երեք օրվա տաք ճակատամարտերից հետո՝ ջարդում ու փախուստի են մատնում թշնամուն։ Նոյեմբերի 20-ին ապստամբում է և Գորիսի ազգաբնակչությունը։ Բոլշևիկներն ահաբեկված՝ անհաշիվ կորուստներով՝ փախստի են դիմում։ Ետևում ունենալով հալածող ապստամբներին՝ բոլշևիկյան քայքայված ու բարոյալքված զորքերը փախչում են դեպի Զաբուղ՝ թալանելով ճանապարհի հայ գյուղերը։ Նոյեմբերի 21-ին այլևս ամբողջ Զանգեզուրը ազատ է բոլշևիկյան անասելի մղձավանջից։ Ապստամբ ժողովուրդն անմիջապես ընտրում է 7 հոգիանոց գյուղացիական ժամանակավոր մի խորհուրդ, որը մինչև դեկտեմբերի 25-ը հանդիսանում է երկրի բարձր իշխանությունը։

Բոլշևիկյան հրամանատարությունը՝ պարտված կռվի դաշտում այնուհետև փորձեր է անում կոչերով ու նամակներով համոզել ապստամբներին նորից ընդունելու խորհրդային իշխանությունը։ Այդ տեսակետից շատ հետաքրքրական է բոլշևիկ հրամանատարության և Գ. Նժդեհի միջև տեղի ունեցած գրագրությունը*։

Չափից ավելի աննպաստ ժամանակ կատարվեց Զանգեզուրի ազատագրությունը։ Ազատվելով բոլշևիկներից՝ նա մնաց բոլորովին մենակ,

* «Արյունա գիրք», Գորիս, 1920 թ.։

կտրված ամբողջ աշխարհից, նաև Հայաստանից, որը այդ միջոցին պարտված տաճիկներից՝ արագ քայլերով դիմում էր դեպի բոլշևիզմ։ Խորհրդային Ռուսաստանը՝ ազատ արտաքին և ներքին բոլոր ճակատներից, իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Մերձավոր արևելքի վրա և պատրաստվում էր խորհրդային կարգեր մտցնելու նաև Անդրկովկասում։ Ինչ կարող էր անել հյուսիսից՝ անհեթեթ թափով խուժող ալիքի առջև մենակ մնացած զանգեզուրցին...

Չնայած դրան, անխառն ոգևորություն ու հավատ է տիրում ամբողջ երկրում։ Ժողովուրդը վստահ իր ուժերի վրա՝ վճռում է այլևս ոչ մի գնով չվերադառնալ «բոլշևիկյան դրախտ» և սեփական ուժերով տնօրինել իր ճակատագիրը։ Այս տրամադրությունը բուռն թափով արտահայտվում է նաև համազանգեզուրյան պատմական համագումարի մեջ։ Արժե մի քիչ ավելի երկար կանգ առնել այս վերին աստիճանի ուշագրավ ժողովի և նրա մեջ արտահայտված մտքերի և ընդունված հետաքրքրքրական որոշումների վրա*։

Համագումարը տեղի է ունենում 1920 թվի դեկտ. 25-ին, Տաթևի վանքում։ Ներկա են լինում Զանգեզուրի բոլոր շրջանների գյուղերից ընտրված 100 պատգամավորներ, Զանգեզուրի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչներ և սպարապետ Գ. Նժդեհը՝ ընդամենը 118 հոգի։ Նախագահ է ընտրվում տեղական գործիչ Գ. Տեր-Մինասյանը։ Ընդունվում է հետևյալ օրակարգը.

1. Զեկուցում Հայաստանի քաղաքական անցուդարձի մասին և համագումարի բնելիք դիրքը։
2. Զեկուցումներ բոլոր շրջանային խորհուրդների գործունեության մասին։
3. Ինքնավար Սյունիքի կառավարության ձևը։
4. Իշխանության կազմակերպումը.

ա. Սպարապետի հրավիրումը։
բ. Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի ընտրությունը։

5. Իշխանության կենտրոնատեղիի որոշումը։
6. Արտաքին քաղաքականություն։

Փոխհարաբերություն

ա. Հայաստանի հանրապետության հետ։
բ. Ադրբեջանի հանրապետության հետ։

* Ժողովի արձանագրությունը տե՛ս հատորիս հավելվածում։

գ. Պարսկաստանի կառավարության հետ։
դ. Հարևան թուրքերի հետ։

7. Ինքնապաշտպանության հարց։
8. Պարենավորում։
9. Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշում։
10. Մասնավոր և խոշոր սեփականությունների պետականացումը։

ա. Վանքապատկան և եկեղեցական։
բ. Խանների, բեկերի և մելիքների։
գ. Արդյունաբերության։

11. Ընթացիկ հարցեր.
ա. Որբանոցի։
բ. Ջուլհականոցի։
գ. Նախկին կառավարություններից ղանազան անձնավորությունների մոտ մնացած զումարների պահանջման հարց։
դ. Դրամների գործադրությունը։

Այսպիսով ուրեմն, համագումարը հանդիսանում է մի տեսակ Սահմանադիր ժողով, որ քննության է առնում մի շարք հիմնական պետական սկզբունքներ և որոշում երկրի պետական կառույցը։ Առաջ բերենք ընդունված որոշումներից գլխավորները.

«Մի շարք ներկայացուցիչների երկար ու բազմակողմանի արտահայտություններից հետո, համագումարը բուռն ծափահարություններով և «ուռաներով» ընդունում է միաձայն հետևյալ բանաձևը.

Զանգեզուրի մի բուռն տականքների և ազգուրացների հրավիրանոք, առանց ազգաբնակչության կամքն ու ցանկությունը հարցնելու, Զանգեզուր մտան խորհրդային զորամասերը, որոնք իրենց հինգ ամսվա ռիրապետության ընթացքում տնտեսապես քայքայեցին Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը։

Խորհրդային հրամանատարությունը հենց առաջին քայլից գավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկ-Թեմուրյան և արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը։ Հայ ազգատ գյուղացիության տնտեսապես քայքայված շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր և կապիտալիստների դեմ մղելիք քաղաքականությունը գործադրում աղքատ, անօգնական գյուղացիների ա այրի կանանց դեմ։ Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարավ մեր աղքատ գյուղացու միակ եզը, կովը, ձին ու ավանակը, զրավեց նրա անասունների կերը և թողեց մերկ ու զուրկ ամեն ինչից։ Խորհրդային

հրամանատարությունը՝ մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները, ավերեց, հողին հավասարեցրեց մեր գյուղերը և իր գրավածների հանդեպ մեզ չտվավ մի թել անգամ։ Նա անկարող եղավ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրվանքա նավթ անգամ, չնայած մեզ նավթ, մանուֆակտուրա և այլ մթերքներ տալու խոստումներին։

Այս բոլորից հետո, մենք համոզվեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն հափշտակելու մեր կայքն ու գույքը, թալանելու մեզ և իսպառ ոչնչացնելու։ Խորհրդային կառավարությունը իրեն հատուկ արյան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ և տասնյակներով կոտորեց նրանց՝ չխնայելով մեր գրական վաստակավոր գործիչներ Խորենուն, Շիրինյանին և տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին հոշոտելուց։ Առանց քննության և որոշ մեղադրանքների մեր ռանչպար գյուղական երիտասարդներից տասնյակներով գլխատեցին ու փոսերը թափեցին և վերջում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել՝ մեր գավառը մտցրեց հազարով տաճկական ասկյարներ, որոնք իրենց «հայի աստված» էին անվանում։

Խորհրդային կառավարությունը՝ մոռանալով տաճկական դարավոր հայաջինջ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ՝ դեպի հայ գյուղերն ուղղեց տաճկական ասկյարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Ցայջի, Զեյվա և ուրիշ գյուղերում իրենց բարբարոս և գազանային բնազդները գործադրեցին հայ կնոջ և կույս աղջիկների վրա՝ նրանց պատիվը ոտի տակ տալով։ Կոխոտեցին, ցեխի հավասարեցրին մեր պապենական ամեն տեսակի սրբություն, եկեղեցի, ընտանեկան պատիվ և պատկառանք։ Խորհրդային կառավարությունն իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները կատարյալ կերպով առաջ տանելու համար՝ հարյուրավոր անմեղ մարդիկ բանտ ձգեց ու խեղդեց։

Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունն այլևս չկարողանալով տանել նման բարբարոսություններ որոշեց դուրս վռնդել խորհրդային Ռուսաստանի զորքերին և նրա դիմակի տակ թաքնված ազրբեջանյան վարձկաններին, որոնք ավերեցին իր երկիրը, և ազատել իր օջախն ու պատիվը։

Տարվույս հոկտ. 10-ից սկսած զանգեզուրցին ապստամբական դրոշ պարզեց և իր սիստեմատիկ հարձակումներով նոյեմ. 21-ին դուրս քշեց իր սահմաններից անկոչ այն զորամասերը, որոնք իրենց հինգ ամսվա տիրապետության ընթացքում իրեն կորսյան դուռը հասցրին։

Խորհրդային Ռուսաստանն ու Ազրբեջանը՝ չբավականանալով այս ամենից՝ ցանկացան գլխատել և իսպառ ոչնչացնել հայ ժողովրդին, ներս հրավիրեցին տաճկական հորդաներին, Քեմալի գլխավորությամբ Հայաստան, և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին

ընդունելու, այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ և ծրագիր, որոնց չի կարող այլևս հանդուրժել բովանդակ հայ ժողովուրդը։ Նկատի առնելով վերոհիշյալները և այլն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու է մնալ նույնը, համազանգեզուրյան համագումարը իր սույն օրվա նիստում որոշեց.

Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար՝ մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ, մինչև որ քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր երկրի՝ Հայաստանի հետ։

Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները։

Ինքնավար Սյունիքի կառավարության ձևի գլխավոր գծերն են.

Սույն համագումարը ճանաչել ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին՝ խորհրդարան և վերապահել նրան Սյունիքի բախտի լիակատար տնօրենությունը։

ա. Խորհրդարանը հրավիրում է տարեկան առնվազն երկու անգամ իր դիվանի կողմից, իսկ բացառիկ պայմաններում իր անդամների կեսի կամ դիվանի պահանջով։

բ. Խորհրդարանի անդամներն ընտրվում են երկրի ազգաբնակչության կողմից հետևյալ ձևով. մինչև 100 ծուխ ունեցող գյուղական համայնքը տալիս է մեկ, 100-ից մինչև 200 ծուխ ունեցողները՝ երկու և 200-ից ավելի ծուխ ունեցողները՝ երեք ներկայացուցիչ։ Ընտրությունները կատարվում են ընդհանուր ընտրական քառանդամ սիստեմով։

գ. Խորհրդարանը ընտրում է 6 ամիս ժամանակով 9 հոգուց բաղկացած կառավարություն և ցրվում։ Մինչև խորհրդարանի նոր նստաշրջանը կառավարությանն է անցնում այդ երկրի զինվորական և քաղաքացիական բոլոր գործերի ղեկավարությունը, որը և կիրառում է կյանքի մեջ խորհրդարանից բխած բոլոր օրենքներն ու որոշումները։

Մանրություն. Խորհրդարանը կառավարության անդամ կարող է ընտրել նաև ոչ խորհրդարանի անդամներից։

դ. Կառավարությանն է վերապահվում զինվորական ընդհանուր-հրամանատարի-սպարապետի հրավիրումը և արձակումը։

ե. Կառավարությանն է վերապահվում պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքում այդ վերապահվում է նաև սպարապետին։

զ. Կառավարությանն է վերապահվում երկրի թե քաղաքացիական և թե զինվորական կառավարչական ձևերի հաստատումը և օրենսդրությունը։

է. Կառավարությունը բաժանվում է ըստ վարչությունների նախարարական կազմի ձևով։

ը. Զինվորական բոլոր տեսակի գործերը տարվում են սպարապետի ղեկավարությամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում կառավարությանը»։

Սյունիքը բաժանվում է 6 շրջանների. Բուն Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան։

Ինքնավար Սյունիքի կառավարությունը գաղտնի քվեարկությամբ ընտրվում է հետևյալ անձերից. Գ. Տեր-Մինասյան, Ն. Դորունց, Ի. Մելիք Փարսադանյան, Գ. Գրիգորյան, Ե. Հարությունյան, Մ. Տեր Մկրտչյան, Տ. Մելիք-Հուսեյնյան և Ս. Մաշուրյան։

Ընտրվում է պետական վերահսկողություն 3 անդամից։

Իշխանության կենտրոնատեղի որոշվում է Գորիսը։

Երկրի պաշտպանության վերաբերվող բոլոր հարցերի ձեռնարկումը և գործադրությունը միաձայնությամբ որոշվում է թողնել սպարապետին, Գարեգին Նժդեհին։

Խորհրդարանը ընդունում է մասնավոր խոշոր սեփականությունները, ինչպես վանքապատկան-եկեղեցական և բեգական նույնպես և ուրիշ խոշոր կալվածքների պետականացում։

Հայաստանի հետ ունենալիք հարաբերությունների մասին անցնում է հետևյալ բանաձևը.

«Զանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա ստիպված մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից հայտարարել է իրեն խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր ժողովուրդը, խորհրդարանը որոշեց, մինչև նրա այդ իրավակարգից բաժանվելը գործել անպարտ և ապրել ուրույն կյանքով»։

Մնացած ընթացիկ հարցերի լուծումը թողնելով կառավարությանը՝ համագումարը ընդհանուր ոգևորության մեջ վերջացնում է իր աշխատանքները դեկտեմբերի 27-ին։

Այնուհետև, մինչև նորից բոլշևիկների ձեռքն անցնելը, Զանգեզուրն ապրում է կատարելապես անկախ կյանքով։ Երկրի գերագույն իշխանությունը փաստորեն հանդիսանում է սպարապետ Նժդեհը։ Նժդեհի անձնական հատկությունները և նրա արտակարգ ազդեցությունը ժողովրդի վրա ստվերի մեջ են թողնում կառավարությունը։

Պարտված և ամոթահար փախած բոլշևիկները հանգիստ չեն թողնում Զանգեզուրը։ Նրանք շարունակում են փորձեր անել կորցրած իշխանությունը վերագրավելու, այս անգամ այլևս ոչ թե զենքի ուժով, այլ խարդախ ու նենգամիտ դիվանագիտությամբ։ Ապստամբ զանգեզուրցիներին ուղղած իրենց բազմաթիվ գրություններով, կոչերով ու թռուցիկներով նրանք մերթ համոզում են, հորդորում ու խաբում, մերթ սպառնում են, մերթ դիմում կեղծիքի, խաբեության ու պրովոկացիայի։ Սակայն նրանց բոլոր հիգերը կորչում են անհետևանք. Զանգեզուրը մնում է անհողդողդ և հետ է շպրտում բոլոր առաջարկությունները։ Արժե մի քանի նմուշներ բերել բոլշևիկյան «դիվանագիտությունից»՝ այնքա՜ն հատկանշական էր նաև ընդհանուր բոլշևիկների համար։

Զանգեզուրից քշվելուց երկու օր անցած, 28-րդ դիվիզիայի զինվորական կոմիսարը Շուշիից հետևյալ նամակն է ուղղում «Զանգեզուր գավառի ապստամբ ազգաբնակչության հրամանատարությանը». «Ռուսական կարմիր բանակը գտնվելով Զանգեզուրում՝ բնավ հետամուտ չի եղել նվաճման դիմելու կամ բռնագրավումներ կատարելու, մանավանդ երբեք չի համարել իրեն Հայաստանի հետ պատերազմական վիճակում։ Կարմիր բանակին լավ հայտնի է, որ Զանգեզուրի ժողովրդի ապըստամբությունն իր դեմ արդյունք է ձեր հերյուրած ոճրագործ պրոպագանդի, որ իբր թե, կարմիր բանակը չէ այդ, այլ ազրբեջանական վարձկանները և նաև շատ ուրիշ հերյուրանքներ։ Կարմիր բանակին հայտնի չէ նույնպես, որ Զանգեզուրի ժողովրդի մեծամասնությունն ապստամբվել է իր դեմ ինքնաբերաբար, այլ հանձին Հայաստանից եկած կանոնավոր զորամասերի, ձեր զանազան սպառնալիքների ազդեցությամբ։

«Այդ հիման վրա առաջարկում եմ.

«48 ժամվա ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած մեր հիվանդ ու վիրավոր և հոկտ. 15-ից կոչվներում գերված զինվորներին, Գորիսում մնացած ամբողջ գույքն ու ռազմամթերքը, ինչպես նաև հիշյալ ժամանակամիջոցում հեռացնել Զանգեզուրից կանոնավոր զորամասերը, իսկ ապստամբ ժողովրդին տեղավորել իրենց բնակավայրերում։ Միաժամանակ հայտարարում եմ. ապստամբների ստացվածքի ապահովությունը, անձի անձեռնմխելիությունը երաշխավորվում է այն պայմանով միայն, որ նրանք հանձնեն իրենց ունեցած զենքն ու ռազմամթերքը։ Հակառակ պարագայում ռուսական խորհրդային իշխանությունը կհրաժարվի Հայաստանի և տաճիկ հեղափոխական զորքերի միջև կնքվելիք հաշտությանը միջնորդելուց։

Սպասում եմ պատասխանի մինչև 24 ժամ։ 23 նոյեմբ. 1920 թվի ժամը 11-ին, 28»։

Նկատեցեք, որ այս տողերը գրողը այն կոմիսարն է, որ հոկտ. 14-ին իրեն ենթակա բրիգադների պետերին հրամայում էր «խուսափել ամեն տեսակ մարդասիրական միջոցներից և լինել դաժան ապստամբ բնակչության հետ», «գերի չվերցնել», «կանգ չառնել ամբողջ գյուղերը ավերելու առաջ» և «գրավված գյուղերը զորամասերին ապահովել սո-

վից ի հաշիվ ապստամբների»։ Ինչքան փոխված է երկում այժմ նրա տրամադրությունը, բայց զանգեզուրցիներն, իհարկե, այլևս չէին հավատում նրա խաղաղասեր ոգուն...

Երեք օր վերջը, ջարդված 84-րդ բրիգադի պետ և մարտական զորաճակատի հրամանատար Սիմեոնովը մի ընդարձակ գրություն է ուղարկում «Զանգեզուրի ապստամբ զորամասերի հրամանատար գնդ. Նժդեհին, որի մեջ հաղորդելով, որ «Հայ աշխատավոր ժողովուրդն արդեն ապստամբել է Հայաստանում, խորհրդային իշխանությունն հաստատելու նպատակով» և որ «ներկա րոպեին՝ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը միջնորդի դեր է կատարում՝ բանակցություններ վարելով Հայաստանի և տաճիկ հեղափոխական զորքի միջև հաշտություն կնքելու համար»՝ առաջարկում է անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները և այդպիսի կռիվը վերջացնելու համար դիմել բանակցության»։ Հաշտության մի շարք պայմանների մեջ հիմնական տեղն է բռնում, ինչպես միշտ, ժողովրդի կատարյալ զինաթափությունը և մարտական ուժերի ցրումը, որի փոխարեն «Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կարմիր բանակի զինվորական հրամանատարությունն ու Ազրբեջանի խորհրդային իշխանությունը երաշխավորում են կատարյալ ապահովություն հայ ժողովրդի խաղաղ աշխատանքի և ապստամբների անարգել վերադարձն իրենց բնակավայրերը»։ Ինչ խոսք, որ սակավ գիտակից հայ ժողովուրդը» գերադասում է սեփական միջոցներով երաշխավորել իր «խաղաղ աշխատանքը» և մնում է պինդ իր որոշման վրա. թեև հաշտության բանակցություններից չի հրաժարվում, բայց առաջարկում է բանակցություններ վարել ոչ թե Զաբուղում, որի վրա պնդում էր բոլշևիկ հրամանատարությունը, այլ Գորիսում։

Սիմեոնովի այս գրության մեջ ուշագրավ էր հատկապես այն կետը, ուր խոսվում էր Հայաստանում ծագած ապստամբության մասին։ Դեռ Ղարաբաղի լեռներում գտնվող բոլշևիկ զինվորականը խոսում էր Հայաստանի ապստամբության մասին, մինչդեռ բոլշևիկ զորքերը Իջևան խուժեցին միայն նոյ. 29-ին։ Այսպիսով, ուրեմն, 11-րդ բանակի հրամանատարության համար Հայաստանի գրավումը վաղուց արդեն վճռված հարց է եղել, և անհիմն են այն կարծիքները, թե, իբր, Հայաստանի բռնի բոլշևիկացումը կատարվել է միայն հայ բոլշևիկների սադրանքներով հակառակ կենտրոնի հրամանի։ Հայաստանի, ինչպես հետագայում և Վրաստանի նվաճումը կարմիր խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից, անշուշտ, անմիջական հետևանք էր վարած արևելյան քաղաքականության. Հայաստանը չէր կարող սեպի պես թողնվել «հեղափոխական տաճիկների» և «կարմիր բոլշևիկների» միջև։

Հայաստանի խորհրդային դառնալուց հետո, ինչպես արդեն տեսանք, «հակահեղափոխական Զանգեզուրը» չափազանց մեծ վախ ու մտահոգություն էր պատճառում Երևանի կոմունիստներին։ Զեռք առնելեցին մի շարք միջոցներ Զանգեզուրն ընկճելու համար։ Դեռ նոյեմբերի վերջերին Զանգեզուրի գործերով Երևան եկած հայտնի հասարակական գործիչ Աշոտ Մելիք-Մուսյանը վերադարձել էր, Հայաստանի Հեղկոմի հանձնարարությամբ համոզելու զանգեզուրցիներին, որ ընդունեն խորհրդային իշխանությունը։ Մելիք-Մուսյանի ջանքերն անցել էին ապարդյուն, և նա վարակվելով տիֆով՝ վերջ է տվել իր կյանքին Գորիսի հիվանդանոցում։ Դեկտ. 16-ին Զանգեզուրի գյուղացիությանը և հրամանատարությանն ուղղվել էր հետևյալ հեռագրական կոչը զինվորական կոմիսար Ավիսի և Դրոյի ստորագրությամբ։

«Թող հայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը հայտարարված է խորհրդային հեղափոխական հանրապետություն։ Հին կառավարությունը նետել էր երկիրը արյան և արցունքի անդունդը։ Զանգեզուրի բարձունքներում կռվելով կարմիր բանակի դեմ՝ դուք այդպիսով անգիտակցաբար խորացնում եք վիշտն ու դժբախտությունը ձեր ժողովրդի, որի միակ փրկությունը կախված է կարմիր բանակի և խորհրդային Ռուսաստանի օգնությունից։ Խորհրդային Ազրբեջանը զիջել է խորհրդային Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը։ Խորհրդային Ռուսաստանը, միմիայն նա է ընդունակ կանխելու այն վտանգը, որ սպառնում է դրսի ուժերի կողմից և հաշտեցնելու ձեր ժողովուրդն իր հարևանների հետ՝ վերականգնելով նրա իրավունքները։ Հայաստանը քայքայված է. մենք կարող ենք վերականգնել միայն այն օգնության միջոցով, որ ցույց կտան մեզ խորհրդային Ռուսաստանը և խորհրդային Ազրբեջանը՝ առաջինն իր ուժեղ բանակով, իսկ երկրորդն իր նավթով։ Խորհրդ. Ազրբեջանը հրաժարվեց Զանգեզուրից Լեռնային Ղարաբաղից և Նախիջևանից։ Այսօր նա արդեն ուղարկում է մեզ համար նավթ, մանուֆակտուրա և մթերք։ Մեր ժողովուրդը սուր կարիք է զգում երկաթուղագծերի բացման և խորհրդային իշխանության ամրապնդմանը Անդրկովկասում։ Ներկայումս ամբողջ Հայաստանում կազմակերպված է խորհրդային իշխանությունը։ Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդվում, բացի հին կառավարության անդամներից, որոնք Հեղկոմի ձեռքով ձերբակալված և հանձնված են ժողովրդական դատի։ Մենք համոզված ենք, որ մեր բոլորի հարազատ Զանգեզուրն ևս կմտնի խորհրդ. Հայաստանի մեջ, որպեսզի վերջ տրվի ամեն մի թշնամական գործողություն կարմիրների դեմ, որոնք բարեկամական և եղբայրական հարաբերության մեջ են գտնվում խորհրդ. Հայաստանի կարմիր զորքերի հետ։ Խորհրդ. Հայաստանի կառավարությունը դիմել է կարմիր զորքի հրամանատարությանը, որպեսզի իր զորքը հետ քաշի Զանգեզուրի շրջաններից այն հավատով, որ Զանգեզուրի գյուղացիությունը վերջ կտա թշնամական գործողությունը կարմիրների դեմ։ Խորհրդ. Հայաստանի անունից մենք հայտնում ենք բոլոր կռիվների մասնակցողներին ներումը՝ համարելով այդ կռիվը կործա-

նարար մեր ժողովրդի համար։ Մենք կոչ ենք անում Զանգեզուրին Խորհրդ. Հայաստանի իշխանության դրոշակի տակ կանգնել, մերձենալ Ռուսաստանին և Խորհրդ. Ազրբեջանին։ Մենք ազնվությամբ, բաց սրտով հայտարարում ենք մեր ժողովրդին, որ կարմիր զորքի դեմ հետագա կռիվները ձեռնտու են միայն հայ ժողովրդի թշնամիներին։ Խորհրդ. Հայաստանի անունից մենք կոչ ենք անում Զանգեզուրին դիմել խաղաղ աշխատանքի։ Պահանջում ենք անմիջապես դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություն և ենթարկվել Հայաստանի խորհրդային իշխանությանը։ Սույն հրամանի խախտելը մեր կողմից կնկատվի իբրև թշնամական գործողություն՝ ուղղված Խորհրդ. Հայաստանի և նրա դաշնակից Խորհրդ. Ռուսաստանի և նրա կարմիր զորքի դեմ։ Խորհրդ. Հայաստանի հանրապետության զինվորական կոմիսար՝ Ավիս, Խորհրդ. Հայաստանի կարմիր զորքերի հրամանատար՝ Դրո։ 16 դեկտ. 1920 թ.»։

Դիտմամբ առաջ բերինք այստեղ այս երկար գրությունն ամբողջությամբ ցույց տալու համար բոլշևիկների խարդախ գործելակերպի մի նմուշ ևս։ Կասկածից դուրս է, որ այս կոչի տակի Դրոյի ստորագրությունը կեղծված է։ Անկարելի բան է, որ Դրոն համաձայնած լինի իր ստորագրությունը դնել մի գրության տակ, որի մեջ դատապարտվում է «հին կառավարությունը, որը, իբր թե, նետել էր երկիրը արյան և արցունքի անդունդը». այդ կառավարության անդամ էր եղել և ինքը՝ Դրոն, իբրև զինվորական նախարար, իսկ դրանից առաջ հրամանատար զորքերի, որոնք կյանքի մեջ անց էին կացնում «հին կառավարության քաղաքականությունը»։ Բացի այդ, Դրոն չէր կարող ստել զանգեզուրցիներին, թե «Խորհրդ. Ազրբեջանն արդեն ուղարկում է մեզ համար նավթ, մանուֆակտուրա և մթերք», որովհետև նա գիտեր, որ այդ ճիշտ չէ։ Չէր կարող ասել նաև, որ «քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդվում», որովհետև նա տեղյակ էր, որ Հայաստանի բանտերն արագ կերպով լցվում էին։ Բացի «հին կառավարության անդամներից»՝ բանտարկված էին արդեն Բ. Իշխանյանը, Համազասպը, Ս. Մելիք-Ցոլլյանը, Նոր Բայազետի քաղաքագլուխ՝ Վ. Աֆրիկյանը, բժ. Հ. Տեր-Դավթյանը, Գ. Վարշամյանը, Վ. Բաբայանը, Ա. Աստվածատրյանը, բժ. Հ. Մելիքյանը և ուրիշ շատ շատերը։ Ինչպե՞ս կարող էր Դրոն այդպիսի անհեթեթ սուտ ասել զանգեզուրցիներին։ Պարզ է, որ նրա ստորագրությունը, հակառակ իր կամքի կամ նույնիսկ իրենից գաղտնի, դրված էր Ավիսի անվան կողքին Զանգեզուրի վրա տպավորություն գործելու հաշվով*։

Դրոն իսկապես համոզված էր, որ Զանգեզուրի անկախ գոյությունը վնասակար էր Հայաստանի համար և կողմնակից էր Զանգեզուրն ևս

* Հետագայում, Դրոն անձամբ հաստատեց, որ այս հեռագիրը ուղարկված էր Ավիսի առաջարկությամբ և Կասյանի ու Մռավյանի հավանությամբ։ Զանգեզուրցուն ասվելիքի մասին ընդհանուր որոշում է տրվել, իսկ հեռագիրը շարադրել և ստորագրությունները դրել է Ավիսը՝ ինքը։

Խորհրդային Հայաստանին միացնելուն։ Այդ նպատակով, 1921 թ. հունվ. 21-ին, Բաքվից 11-րդ բանակի հրամանատարի առաջարկությամբ, նա մի պատվիրակություն է ուղարկել Զանգեզուր և Զանգեզուրի գյուղացիական կոմիտեի ու Նժդեհի անունով գրել էր մի նամակ, որի մեջ ուզում էր հավատալ, որ «Զանգեզուրը և նրա ղեկավարները վերջ կտան իրենց բռնած քաղաքականությանը և կմիանան իրենց Մայր երկրին՝ Հայաստանին, որ Մոսկվայում տաճիկների հետ բանակցությունը կգա ապացուցանելու, որ Խորհրդ. Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը։ Ուստի, ձեզ պետք է անմիջապես հայտարարել խորհրդային և միանալ Խորհրդ. Հայաստանի հետ»։

Դրոյի և նրա պես մտածող ուրիշ շատերի հույսերն ու բարի տրամադրությունները այնպես գռեհկորեն ոտնահարվեցին Մոսկվայում, ուր Խորհրդ. Ռուսաստանը մարտի 16 դաշնագրով ոչ միայն չպաշտպանեց հայ աշխատավորության շահերը, այլ նրան ամբողջապես հանձնեց քեմալականների քմահաճույքին՝ զոհ դարձնելով Հայաստանի իր արևելյան քաղաքականությանը։

Դրոյի պատգամավորության հետ «ինքնավար Զանգեզուրի կառավարությանը», հունվ. 22-ին, գրություններ էին ուղարկել նաև Ծուզի քաղաքի ու շրջակայքի կայազորի պետ Վայցեխովսկին և 84-րդ բրիգադի պետ Սիմեոնովը։ Առաջինը վկայելով, որ «Ղարաբաղի աղքատ ժողովուրդը զանազան տեսակի թյուրիմացությունների ազդեցության տակ... առաջացնում է ապստամբություններ»՝ հայտնում է, որ ինքը գերագույն զինվորական հրամանատարության կողմից լիազորված է — Զանգեզուրի կառավարության հետ — մտքերի փոխանակություն ունենալու։ Երկրորդը հաստատելով, թե «ոտք դնելով Հայաստանի հողին վրա՝ կարմիր բանակն ունեցել է միայն մի նպատակ՝ Հայաստանի աշխատավորության ազատագրումը կապիտալիզմի չարանենգ ճնշումից», նույնպես առաջարկում էր «դադարեցնել ամեն տեսակի պատերազմական գործողություններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու»։

Այս բոլոր դիմումներին Զանգեզուրի ազգաբնակչության անունից հունվարի 25-ին, պատասխանել է Գ. Նժդեհը 11-րդ բանակի հրամանատարին։ Մերկացնելով բոլշևիկ բարձր հրամանատարության վարած կոծծանարար քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և կոմունիստների գործած վայրագությունները Երևանում ու դավառներում՝ Նժդեհը, իբրև նախապայման բանակցությունների, հայտնում է հետևյալ ցանկությունները.

«1. Երբ դուք ազատեք բանտերից Հայաստանի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների անդամներին.

2. Մաքրեք քեմալականներից այն հողամասերը, որոնք գրավված են նրանց կողմից.

«3. Հրաժարվեք Զանգեզուրում գաղտնի, ստորերկրյա աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական հարաբերություններ ինքնավար Սյունիքի և խորհրդային իշխանության միջև»։

Այս պատասխանը առիթ է դարձել մի նոր ընդարձակ գրության, որ 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի լիազորությամբ, նրա մեկ անդամը, փետր. 15-ին ուղղված է «քաղաքացի Նժդեհին և քաղաքացի Տեր-Մինասյանին»։ Ըստ այդ նամակի, «ռազմահեղափոխական կոմիտեի մեկ անդամը» հայտնում էր, որ գալիս է պարզելու մի քանի «թյուրիմացություններ»։ Ի միջի այլոց, «ռազմահեղափոխական կոմիտեի անդամը» գրում էր. «Մեր զորքերի մուտքը Հայաստան նպատակ է ունեցել պաշտպանել Խորհրդ. Հայաստանը վերջնական անկումից և առաջն առնել տաճիկների հետագա առաջխաղացման, և դուք տեսնում էք, որ այդ գործում մենք հաջողություն ունեցանք. կարմիր զորամասերի ներկայությունը միայն ստիպեց տաճիկներին կանգ առնել ներկա սահմանագծի վրա, որ ավելի բարվոք է, քան, որ գծել էին տեղի տվող դաշնակները»։

Տաճիկ զորամասի խժդժությունները Զանգեզուրում «ռազմահեղափոխական կոմիտեի անդամի» նամակում բացատրված են այսպես. «Զանգեզուրում, հիրավի, տեղի է ունեցել մի ամոթալի դեպք, որի համար մենք չենք գովում... խոսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քեմալի մոտ։ Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար։ Գնդին կարգադրված է եղել անցնել Նախիջևան. ամեն մեկի համար ակնբախ է, որ այդ գնդի ներկայությունը տաճկական զորամասերի մեջ անհրաժեշտ է եղել նրանց նվազագույն հեղափոխական լինելը հաստատելու համար։ Ո՞վ կարող էր ենթադրել, որ կարող են տեղի ունենալ գժբախտ դեպքեր կամ թյուրիմացություններ, որ թե ազգաբնակչությունը և թե այդ գունդը միմյանց դեմ զենք բարձրացնեն, այն էլ կարմիր զորքի անվան տակ»։

Հայաստանում կատարված հալածանքների առթիվ գրում էր.

«Դուք տգեղ կերպով չափազանցում եք։ Ինձ հայտն չէ գնդակոհարության և ոչ մի դեպք. ընդհակառակը, երեկ ուղիղ հեռագրաթելով Բաքվի հետ խոսելու ժամանակ ինձ հայտնեցին, որ Խորհրդ. Հայաստանի կառավարությունը հայտարարել է կատարյալ քաղաքական ամնիստիա։ Ես կարող էի Ձեզ հիշեցնել նաև նախկին կառավարության մի շարք պարագաների, որոնց, Խորհրդ. Հայաստանի կառավարության որոշմամբ, մեր զորամասերի կողմից թույլ է տրվել անցնել արտասահման։ Վերջապես ինչ վերաբերվում է Զանգեզուրի գրգռանի նկատմամբ գործիչներին, ես լիազորված եմ հայտնելու ձեզ, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը և բարձր հրամանատարությունը երաշխավորում են ձեզ կատարյալ և անպայման անձեռնմխելիություն»։

Կարո՞ղ էր զանգեզուրցին հավատալ 11-րդ բանակի խոստումներին այն ժամանակ, երբ նրա լիազոր ներկայացուցիչը օրը ցերեկով խաբում էր. փետր. 15-ին նա խոսում էր Հայաստանում հայտարարված քաղաքական ամնիստիայի մասին, այնինչ նույն ժամին հայ ամբողջ մտավորականությունը բանտերում էր փակված, ամբողջ Հայաստանում իշխում էր սարսափն ու տեռորը, և գյուղացիությունը ստիպված էր զենքի դիմելու 20-րդ դարի հոների ձեռքից ազատությունն ու աշխատանքը փրկելու համար։

Երեք օր վերջը, փետր. 18-ին, Հայաստանում տեղի է ունենում հեղաշրջում։ Վերջ են գտնում և բոլշևիկների «դիվանագիտական» խաղերը Զանգեզուրի նկատմամբ։ Հայաստանում կատարված փոփոխությունը շատ ուշ է իմացվում Զանգեզուրում։ Հայաստանի դեպքերից անկախ, իր ռազմագիտական սահմաններն ապահովելու նպատակով, փետր. 17-ին զանգեզուրյան հրամանատարությունը, ընդառաջ գնալով Դարալագյազի ժողովրդի ցանկությանը, գրավում է ամբողջ Դարալագյազը և միացնում ինքնավար Սյունիքին՝ վերջինս վերակոչելով ինքնավար Լեռնահայաստան։ Ինքնավար Լեռնահայաստանին կարևոր տեղ էր վիճակված իր ազատության համար մաքառող հայ ժողովրդի կյանքում։

ԳԼՈՒԽ ԼԷ

ՎԵՐՋԻՆ ԷՋ

1921 թ. ապրիլի 2 չարաշուք օր եղավ Հայաստանի ժողովրդի համար։ Կարմիր բանակի մոտենալու լուրը Երևանին կայծակի արագությամբ տարածվեց երկրում՝ շփոթ ու խուճապ առաջ բերելով ամեն կողմ։

Նվաճողները Երևան մտան երկու ուղղությամբ. Ռուսաստանից եկած կարմիր բանակը, Վելիկանովի հրամանատարության տակ, իջավ Քանաքեռից։ Ռուս զինվորների սվիններ պաշտպանության տակ, Ղամարլուի վրայով ամոթահար՝ մայրաքաղաք վերադարձավ Հեղկոմը, որով Հայաստանը կտրվեց երկու մասի։

Հրազդան գետից դեպի հարավ ընկած ժողովուրդն ու ռազմական ուժերը, անակնկալի եկած, խուժեցին Մարգարայի կամուրջի ուղղությամբ, Արաքսի վրայով Թուրքիա անցնելու ցանկությամբ։ Կարելի՞ է երևակայել բոլշևիկյան սարսափը, որ մարդիկ ապաստան էին խնդրում Թուրքից. կամուրջի վրայի ասկյարները մերժեցին ճանապարհ տալ, և բազմությունը խուժեց դեպի Արագածի փեշերը և կամ դեպի Էջմիածին և Աշտարակ, ուր աներևութացավ ինչպես կարող էր՝ Հեղկոմի իշխանության աչքին ստանալով «օրինապահ» կերպարանք։

Հրազդանից դեպի հյուսիս, Երևանից, Կոտայքից, Ախտայից, Ղամարլուի շրջանից ավելի քան 30 000 բազմություն, զինված և անզեն, խուժեց դեպի Բաշ Գառնի, որտեղից ճանապարհ պիտի բացվեր Միլի Զորի ու Դարալագյազի վրայով, Զանգեզուրի և Պարսկաստանի ուղղությամբ։ Բաշ Գառնին և հարակից շրջանները լցված զորամասերով, վերածվեցին ռազմակայանի, բերդի ու միաժամանակ գաղթականական ճամբարի։

Անհնարին պայմաններում Հայր. փրկության կոմիտեին հաջողվեց փախստական ժողովրդին հետ ուղարկել և մնացյալ բազմահազար բազմությունը — Զեկայից ազատված մտավորականություն, պետական պաշտոնյաներ, մարտիկներ և այլն—պարենավորել և Միլի ձորի ամայի, դժվարանցանելի շրջանից ճանապարհ դնել դեպի Դարալագյազ՝ այնտեղից Զանգեզուր և, ի վերջո, Պարսկաստան անցնելու համար։

Դարալագյազը մաս էր կազմում ինքնավար Լեռնահայաստանի Գորիս մայրաքաղաքով, ուր նստում էր Տաթևի համագումարում ընտրված կառավարությունը։ Փաստորեն իշխանությունը գտնվում էր սպարապետ Գ. Նժդեհի ձեռքը։ Այն վարդագույն տեղեկությունները, որոնք ստացվել էին Երևանում ու Բաշ Գառնիում Լեռնահայաստանի ռազմական հաջողության մասին, տեղում չարդարացան։ Երևանի անկման լուրը և տարագրության հոսանքը բնական կերպով աննպաստ ազդեցություն պիտի ունենար նաև Դարալագյազի գյուղացիության վրա, և Հայրենիքի փրկության ուժերի անցնելուց հետո, շուտով Դարալագյազը պիտի ընկներ բոլշևիկների ձեռքը։

Զանգեզուրը ի վիճակի չէր երկար ժամանակ պահել ու պարենավորել Երևանից եկած հազարավոր տարագրությունը, որ հետզհետե, կտրելով Արաքսը, անցավ Ատրպատական։ Հայրենիքի փրկության կոմիտեի ռազմական և քաղաքացիական գործոն ուժերը դրվեցին Լեռնահայաստանի կառավարության տրամադրության տակ։ Ապրիլի վերջերը Տաթևում հրավիրվեց Լեռնահայաստանի նոր համագումար, որ կազմեց նոր կառավարություն Գ. Նժդեհի նախագահությամբ։ Համագումարը որոշեց վճռական կերպով շարունակել պայքարը Լեռնահայաստանի անկախության համար, մինչև Հայաստանի վերջնական ազատագրումը բոլշևիկյան տիրապետությունից։

Այս ռազմաշունչ ոգին համապատասխանում էր և Երևանից եկած քաղաքական ու զինվորական ուժերի տրամադրությանը։ Հայաստանի բանակը, որ բռնած էր Գնդեվազ—Բազարչայի բարձունքները, Դարալագյազի սահմանի վրա երազում էր վերագրավել Դարալագյազը և վերադառնալ Երևան։

Բոլշևիկները փորձեցին խաղաղ միջոցներով գրավել Զանգեզուրը։ Այդ նպատակով Զանգեզուր եկավ Հեղկոմի կողմից Արտ. Կարինյանը 11-րդ կարմիր բանակի ներկայացուցիչ Մելնիկովի ընկերակցությամբ՝ բանակցելու համար Լեռնահայաստանի կառավարության հետ, բայց բանակցությունները դրական հետևանք չունեցան. բոլշևիկները պահանջում էին անպայման անձնատվություն. զանգեզուրցիք պնդում էին Լեռնահայաստանի անկախության վրա։ Երևանի ներկայացուցիչները պահանջում էին վերականգնել դաշտարշավ ազդրեջանցիների ոչնչի դրությունը դեպի Դարաբաղ—Զանգեզուրի լեռնային արոտավայրերը, զանգեզուրցիք լսել անգամ չէին ուզում այդ մասին։

Բանակցություններին հաջորդեց Դարալագյազի վերագրավումը Լեռնահայաստանի և Հայր. փրկության ուժերի կողմից։ Այս վերջինները ձգտում էին առաջանալ դեպի Երևան, վերադառնալ իրենց մայրենի տեղերը։ Սակայն, առաջանալն այլևս անկարելի էր։ Շուտով պետք եղավ, կարմիր բանակի ճնշման տակ, նորից հեռանալ Դարալագյազից՝ այս անգամ հոգեբանական ավելի աննպաստ պայմաններում։

Զանգեզուրը դեռ բավական ժամանակ դիմադրեց բոլշևիկյան հար-

ձակումներին ամեն կողմից։ Որևէ տեղից օգնության հույս չէր մնացել։ Բոլոր փորձերը, Պարսկաստանի վրայով, կապվելու արտասահմանի հետ և այնտեղից նյութական կամ քաղաքական օգնություն ստանալու, անցան անհաջող։ «Արտասահմանը» իր հոգսերով էր զբաղված և հայերին լսելու ականջ չուներ։ Ինչպես վերջը հայտնի եղավ, Լոնդոնի բանակցությունները քեմալական Թուրքերի հետ ձախողվել էին։ Թուրքերը մարտի 16-ին բարեկամական դաշինք էին կնքել Մոսկվայում Խորհրդ. Ռուսաստանի հետ, որի միջազգային դիրքը ամրացել էր։ Ի՞նչ կարող էր անել փոքրիկ Լեռնահայաստանը ռուսական ահարկու ուժի հանդեպ։ Եվ հերոսական ազատամարտը անխուսափելիորեն պիտի վերջանար կամ անպայման անձնատվությամբ և կամ կովով մինչև վերջին փամփուշտն ու պարտությամբ։

Վերջին փամփուշտը պարպելով՝ Հայաստանի մարտիկները, կառավարությունն ու պաշտպանությունը, բոլոր նրանք, որոնք մերժեցին ենթարկվել ստրկության անարգ լծին՝ հաշտվելով հայրենիքի անկախության կորստի հետ, հուլիսի 10-ին ճեղքեցին կամուրջներ չհանդուրժող կատաղի Արաքսը և անցան Պարսկաստան՝ տանելով իրենց հետ անկախ Հայաստանի դրոշը՝ շարունակելու համար. գաղափարական պայքարը հայրենիքի ազատության համար*։

* * *

Ռուսական կարմիր բանակի ուժով վերագրավելով Երևանը՝ Կասյանի Հեղկոմը իրեն գտավ ամայության մեջ. երկրի բոլոր կենդանի ուժերը կամ հեռացել էին Զանգեզուր ու Պարսկաստան, կամ պահվել էին Չեկայի վրեժխնդրության վախից։ Բառիս բուն նշանակությամբ Հեղկոմը պետք է իշխեր «ի վերա ավերակաց»։

Ժողովրդի վստահությունը ձեռք բերելու փորձերը հաջողություն չունեցան. անցյալի դասից խրատված ժողովուրդը կասկածով ու վախով էր նայում իշխանության վրա։ Ներման հրամանագիրն էլ ազդեցություն չունեցավ։ Կասյանի Հեղկոմը հեղինակությունը կորցրել էր և կոմունիստական բարձր իշխանությանց մոտ։ Անհրաժեշտ էր նոր իշխանություն Հայաստանի համար, մանավանդ որ Ռուսաստանում էլ, ռազմական կոմունիզմի հաշվեհարդարով և տնտեսական նոր քաղաքականության — Նէպի — հայտարարությամբ, բացվում էր ներքին քաղաքականության նոր՝ համեմատաբար ավելի տանելի շրջան։

Եվ ահա, վարկաբեկված, ժողովրդի և կոմունիստական բարձր իշխանության աչքին ամեն համակրանք ու վստահություն կորցրած Կասյանի Հեղկոմին հաջորդում է Ալ. Միասնիկյանի կառավարությունը՝ բաղկացած ավելի հասուն ու լուրջ, ավելի հայ մարդկանցից։

Հայաստանը վերանվաճելուց հետո, Մոսկվայից, հատուկ լիազորություններով, Կովկաս ուղարկվեց Բելոռուսիայում իր վարչական գործունեությամբ աչքի ընկած բոլշևիկ Ալ. Միասնիկյանը։ Լենինը նրա միջոցով Կովկասի կոմունիստներին ուղարկեց հետևյալ նամակը, որով այնուհետև պետք է ղեկավարվեին կովկասյան իշխանությունները։

«Ազրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնական Հանրապետությանց ընկեր կոմունիստներին.

Ջերմագին ողջունելով Կովկասի Խորհրդային Հանրապետություններին՝ թույլ եմ տալիս ինձ հայտնելու այն հույսը, որ նրանց սերտ միությունը կստեղծե հաշտության այնպիսի մի օրինակ, որ չի տեսնված բուրժուազիայի օրով և հնարավոր չէ բուրժուական կարգերում։

Բայց որքան էլ ազգային հաշտությունը կարևոր լինի Կովկասի ազգությանց, բանվորների և գյուղացիների միջև, ավելի կարևոր է պահպանել ու զարգացնել խորհրդային իշխանությունը, որպես ընկերվարական փոխանցման շրջան։ Դժվար է այդ խնդիրը, բայց կատարելապես իրագործելի։ Նրա հաջող լուծման համար ամենից կարևորը այն է, որ Անդրկովկասյան կոմունիստները հասկանան իրենց կացության յուրատեսակությունը, իրենց հանրապետությունների կարգ ու սարքը, որ տարբեր է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետության կացությունից և պայմաններից, հասկանան, որ անհրաժեշտ է ոչ թե ընդօրինակել մեր գործելակերպը, այլ մտածված կերպով ձևափոխել այն՝ կոնկրետ պայմանների տարբերության կիրառելի եղանակով։

Ռուսաստանում խորհրդային իշխանությունը ունեցել է Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետության քաղաքական և փոքր չափով էլ զինվորական աջակցությունը։ Այդ արմատական տարբերություն է։

Երկրորդ. Այժմ դաշնակիցներից վախենալու հարց չկա արշավանքների տեսակետից, ոչ էլ վրացական, ազրբեջանյան, հայկական, Դաղստանի, Լեռնական սպիտակ գվարդիականների աջակցությունից։

Երրորդ. Ռուսաստանը տնտեսապես կարված է եղել և մեծ չափով մնում է կտրված առաջավոր դրամատիրական երկրներից։ Կովկասը կարող է ավելի շուտ և ավելի հեշտ «համակեցություն» և ապրանքային փոխանակություն հաստատել դրամատիրական Արևմուտքի հետ։

Ամբողջ տարբերությունը այդ չէ։ Բայց մատնանշված տարբերություններն էլ բավական են՝ հասկանալու համար, որ անհրաժեշտ է այլ գործելակերպ։

---

*Լեռնահայաստանի պայքարը իր վիպական դրվագներով արժանի էր բազմակողմանի և լրիվ ներկայացման։ Դժբախտաբար, հեղինակը ի վիճակի չեղավ այդ աշխատանքը կատարելու։ Թերի է մնում և հաջորդ շրջանի աշխատանքը արտասահմանում մինչև Լոզան։ Այդ մասին կարելի է ծանոթություն ստանալ Վահ. Փափազյանի «Հուշերը» երրորդ հատորից և Ալ. Խատիսյանի «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գրքից։

Ավելի մեղմություն, զգուշություն, զիջողություն դեպի մանր բուրժուազիան, մտավորականությունն ու, հատկապես գյուղացիությունը։ Տնտեսական մեծ թափով և շուտափույթ օգտագործել դրամատիրական Արևմուտքը՝ մենաշնորհների ապրանքային փոխանակության քաղաքականությամբ։ Նավթը, մանգանեզը, ածուխը, Տկվարշնայան հանքերը, պղինձը՝ ա՛յս է հանքային ահագին հարստությունների ոչ լրիվ ցուցակը։ Լիակատար հնարավորություն կա լայն չափով զարգացնելու մենաշնորհների և ապրանքային փոխանակության քաղաքականությունը արտասահմանի հետ։

Այդ պետք է անել լայն չափով, հաստատակամորեն, հնարամտությամբ՝ ամեն կերպ օգտագործելով այդ՝ բարելավելու բանվորների և գյուղացիների վիճակը և հրավիրելու մտավորականությունը տնտեսական շինարարության գործին։ Օգտագործելով ապրանքային փոխանակությունը Իտալիայի, Ամերիկայի և այլ երկրների հետ՝ բոլոր ուժով զարգացնել հարուստ երկրի արտադրական ուժերը, սպիտակ ածուխը, ոռոգումը։ Ոռոգումը առանձնապես կարևոր է, որպեսզի ամեն գնով բարձրացվի հողագործությունն ու անասնապահությունը։

Ավելի դանդաղ, ավելի զգուշավոր, ավելի սիստեմատիկ փոխանցում դեպի ընկերվարությունը, ահա՛ թե ինչ է հնարավոր և անհրաժեշտ։ Կովկասի հանրապետությունների համար, ի զանազանություն Ռ. Ս. Ֆ. Խ. Հանրապետությունից, ահա՛ թե ինչ պետք է հասկանալ և կարողանալ իրագործել՝ տարբերելով մեր գործելակերպից։

Մենք բացինք առաջին ճեղքը համաշխարհային դրամատիրության մեջ։ Ճեղքը բացված է։ Մենք պաշտպանեցինք մեզ բոլոր դաշնակիցներից։ Նրանց պաշարման աջակցությունը, նրանց զինվորական օգնությունը վայելող սպիտակների՝ էսէռների, մենշևիկների դեմ՝ կատաղի, գերբնական, ծանր ու դժվարին, դաժանորեն գահավեժ պատերազմում։

Ձեզ, Կովկասի կոմունիստ ընկերներ, հարկավոր չէ ճեղքեր բանալ. պետք է գիտենալ մեծ զգուշավորությամբ ու սիստեմատիկորեն ստեղծել նորը՝ օգտագործելով 1921 թվականի ձեզ համար նպաստավոր միջազգային կացությունը։ 1921-ին և՛ Եվրոպան, և՛ ամբողջ աշխարհը այն չեն՝ ինչ որ էին 1917 և 1918 թվականներին։

Ո՛չ թե պետք է ընդօրինակել մեր գործելակերպը, այլ անկախորեն խորհրդածել նոր յուրատեսակության, պայմանների և արդյունքների պատճառների մասին. ձեզ մոտ պետք է իրագործել 1917—1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, միտքը, դասերը։

Տնտեսապես՝ միանգամից պետք է հենվել դրամատիրական արտասահմանի հետ ապրանքային փոխանակության վրա, ժլատ չլինել. թո՛ղ նա ստանա տասնյակ միլիոնավոր հանքային ամենաթանկագին արտադրություններ։

Աշխատել միանգամայն բարելավել գյուղացիների վիճակը և ձեռնարկել էլեկտրականացման, ոռոգման խոշոր աշխատանքների։ Ոռոգումը ամենից շատ է հարկավոր և ամենից ավելի կկերպարանափոխե երկիրը, կվերածնե այն, կթաղե անցյալը, կամրապնդե ընկերվարության փոխանցումը։

Ներողություն նամակիս անխնամության համար, որ պետք է գրեի հապճեպով՝ ընկեր Մյասնիկյանի հետ ուղարկելու համար։ Կրկին անգամ ուղարկում եմ ամենաջերմ ողջույններս և բարեմաղթություններս Կովկասի խորհրդային հանրապետությանց բանվորներին և գյուղացիներին։

Վ. ԼԵՆԻՆ»

Մոսկվա, 14 ապրիլ 1921

Այս նամակը որքան և արդյունք էր այն ժամանակվա Ռուսաստանի ընդհանուր պայմանների, Անդրկովկասին վերաբերվող մասում, անկասկած մեծապես թելադրված էր Հայաստանի փետրվարյան ապստամբության թողած տպավորությունից։ Այս տեսակետից կարելի չէ չընդունել, որ Հայաստանի փետրվարյան շարժման ազդեցությունը շատ ավելի լայն էր, քան Հայաստանի սահմանները։

Ինչ վերաբերվում է Հայաստանին, փետրվարյան ապստամբությունը ցնցող ու զգաստացնող տպավորություն թողեց խորհրդային իշխանության վրա։

Թիֆլիսում և ապա, ապրիլի 19-ին Երևանում, արտասանած իր ճառերի մեջ, կոմկուսի Անդրկովկասյան կոմիտեի քարտուղար Ս. Օրջոնիկիձեն ամենախիստ խոսքերով դատապարտեց հայ կոմունիստներին, որոնք պատճառ էին դարձել փետրվարյան ապստամբության և քաղաքացիական ավերիչ կռիվների՝ միաժամանակ զգաստության, աշալրջության և խոհեմության հրավեր կարդալով Հայաստանի բոլշևիկ իշխանավորներին։ Մի ամիս առաջ, սակայն, նույն Օրջոնիկիձեն թույլ էր տալիս, որ քաղաքացիական կռիվը շարունակվի Հայաստանում։

Ալ. Մյասնիկյանը ստանձնելով Հայաստանի Հեղկոմի նախագահությունը, ՆԷՊ-ի շրջանին հատուկ համեմատաբար ավելի մեղմ և շինարար քաղաքականության հետևեց երկրում՝ իրեն գործակից ունենալով Ս. Սրապիոնյան-Լուկաշինի և Ս. Տեր-Գաբրիելյանի նման ավելի լուսամիտ և անպայման հայրենասեր բոլշևիկներ։ Հայաստանի ժողովուրդը մի պահ ազատ շունչ քաշեց և նվիրվեց շինարարությանը։ Պարսկաստանից վերադարձավ և տարագրված մտավորականության մի մասը՝ ակադ. Ա. Թամանյանի գլխավորությամբ։

Ազգային քաղաքականության տեսակետից, սակայն, Մյասնիկյանի իշխանության շրջանում էլ հիմնական փոփոխություն տեղի չունեցավ, մասնավորապես Հայկական հարցի հետապնդման և ի սփյուռս աշխարհի ցրված հայության պաշտպանության գործում։ Հայկական Սփյուռքը

Երևանի համար շարունակեց մնալ խորթ, միջազգային հեղափոխությանը ծառայեցնելու նյութ։ «Մենք ամենայն հայոց կառավարություն չենք»... Մշակույթով էլ Սփյուռքը կտրվեց Մայր-Հայրենիքից, մանավանդ նոր ուղղագրության հետևանքով, որ անհաշտ մնաց արտասահմանի հայերի համար։

Քաղաքական տեսակետով Մյասնիկյանի օրով ավելի ևս շեշտվեց ռուսական կենտրոնացման ձգտումը, մասամբ իբրև հետևանք Կովկասի հայ տարրի տկարացման գիտակցության և ընդհանրապես հայ բոլշևիկների սկզբունքային դավանանքի պատճառով։

Հայաստանի խորհրդայնացումը տեղի էր ունեցել անկախության պահպանության պայմանով. Հայաստանի Հանրապետության տեղը պիտի բռներ Հայաստանի անկախ խորհրդային հանրապետությունը։ Ձևականորեն այդ սկզբունքը որոշ ժամանակ պահվեց, բայց փաստորեն անկախությունից ոչինչ չմնաց։ Ռուսական քաղաքականությունն էր միացնել Անդրկովկասյան երեք հանրապետությունները մեկ միության մեջ։ Հայ բոլշևիկները և, մասնավորապես, Ալ. Մյասնիկյանը ամենաջերմ պաշտպանն էին այդ քաղաքականության։

Անկախության կորուստը առանձնապես զգացվեց Կարսի խորհրդաժողովում, 1921 թ. սեպտ. 26 — հոկտ. 13-ին, որ կոչված էր, Թուրքերի պահանջով, վավերացնել տալու համար Մոսկվայի մարտի 16-ի ռուս-թուրքական դաշնագիրը։ Այդ խորհրդաժողովում, որի արձանագրությունը բերված է ներկա հատորի «Հավելվածում», Թուրքիան իր կամքը թելադրեց ոչ միայն Հայաստանին, այլև Ռուսաստանին, որի ներկայացուցիչը Կովկասյան հանրապետությունների խնամակալի դերն էր կատարում։

Կարսի դաշնագիրը եղավ վերջին միջազգային գործը, որ կատարվեց անկախ Հայաստանի անունով։ Երկու ամիս անց, Թիֆլիսում գումարվեց Հայաստանի, Ազրբեջանի և Վրաստանի խորհրդային «անկախ» հանրապետությունների ներկայացուցիչների ժողովը, որ հիմնեց Անդրկովկասյան դաշնակցությունը, իբրև մաս Խորհրդ. Ռուսաստանի, որով Հայաստանի ձևական անկախությունն էլ վերջ գտավ։

Այնուհետև եկավ Լոզանի անարդ դաշնագիրը, որով Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ, իր կամքը պարտադրեց և դաշնակից պետություններին։ Լոզանի դաշնագրում ոչ մի խոսք չկա Հայաստանի և հայերի մասին...

Դաշնագրում խոսք չկա, բայց հայ ժողովրդի սրտում Հայաստանի անկախության գաղափարը միշտ մնում է անշեջ փարոսի պես վառ։ Հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում ու հայրենիքից դուրս շարունակում է երազել ու պայքարել և հավատում է իր ազգային դատի արդար լուծմանը։ Բռնատիրությունները հավիտենական չեն։ Վերջ կունենա և նրանց չար գործը...

* * *

1921—22 մոայլ, գաժան տարիներին, երբ հայ ժողովուրդը Մայր Հայրենիքում, ճզմված քեմալական Թուրքիայի և Խորհրդ. Ռուսաստանի միջև, օրհասական պայքար էր մղում իր ազատ և անկախ գոյության համար, երբ Թուրքական բանակները «գեղեցիկ» Ֆրանսիայի հովանավորությամբ ամայացնում էին հայկական Կիլիկիան և կրակի ճարակ դարձնում Զմյուռնիան, Պոլսի փախստական իթթիհատական ջարդարարները Բեռլինից ու Մոսկվայից, այդպես կոչված, «քաղաքակիրթ» աշխարհի աչքի առջև, շարունակում էին դավեր լարել Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ։

Անգլիան և Ֆրանսիան մոռացել էին իրենց հանդիսավոր սպառնալիքը, որ համաշխարհային պատերազմի սկզբին ուղղել էին Թուրքիայի կառավարությանը՝ խիստ պատժի ենթարկելու հայերի դեմ խժդժություններ գործադրողներին։ Այժմ հայկական ջարդերի հեղինակ իթթիհատական պարագլուխները ոչ միայն պատասխանատվության չէին ենթարկվում, այլև հայտնապես վայելում էին նույն այդ մեծ պետությունների պաշտպանությունը։

Հայ ժողովուրդն իզուր սպասեց արդարադատության «մեծ դաշնակիցների» կողմից, որոնք մոռացել էին հայերի մատուցած ծառայությունները և հայերին տված հանդիսավոր խոստումները։ Այժմ ամեն մեկը աշխատում էր իր շահը ապահովել հայերի անունը շահագործելով. և ի վերա պատմուճանի հայոց վիճակս արկանեին...

Եվ ահա, ինչ որ զլացավ անել քաղաքակիրթ աշխարհը, հայ ժողովուրդը ինքը կատարեց «իր քաջ որդվոց» խիզախ բազուկով նույն այդ քաղաքակիրթ աշխարհի աչքի առջև։

1921 թ. մարտի 16-ին, երբ Մոսկվայում ստորագրվում էր «բարեկամության» դաշնագիրը Խորհրդ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև, Բեռլինում, մի անձնվեր երիտասարդի՝ Սողոմոն Թեհլիրյանի հանդուգն գնդակից շանսատակ ընկավ մեծ եղեռնի գլխավոր պատասխանատու՝ Թալեաթ փաշան։

Հազիվ մի քանի ամիս անցած, հուլիսի 19-ին Պոլսում, մի ուրիշ երիտասարդի՝ Միսաք Թոռլաքյանի վրիժառու գնդակով սպանվեց Բաքվի հայերի ջարդարար Ջիվանշիրը։

Դեկտ. 6-ին, Հռոմում, գրեթե պատանի մի երիտասարդի՝ Արշավիր Շիրակյանի ձեռքով մահապատիժ ստացավ Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշան, որի օրով տեղի էր ունեցել հայերի բնաջնջումը։

1922 թ. ապրիլի 17-ին, Բեռլինում, նույն Արշավիրի և Արամ Երկանյանի ձեռքով իրենց արժանի պատիժը կրեցին հայկական տեղահանությունների և ջարդերի կազմակերպիչ իթթիհատական բորենիներ Բեհաեդդին Շաքիրը և Ջեմալ Ազմին։

Երեք ամիս վերջը, Թիֆլիսում, Ստեփան Սաղիկյանի ձեռքով, բացառիկ հանդգնությամբ ահաբեկվեց իթթիհատական եռապետության անդամ Ջեմալ փաշան, որ գործակցում էր բոլշևիկներին Ռուսաստանում։ Քիչ վերջը նույն պատժին պիտի արժանանար և Թալեաթի ու Ջեմալի Հղբայրակից Էնվեր փաշան՝ ամենեն արկածախնդիրը իթթիհատականներից։

Թալեաթի և Ջիվանշիրի ահաբեկիչները ձերբակալվելով՝ գերման և անգլիական ոճրադատ դատարաններին հանձնվեցան Բեռլինում ու Պոլսում։ Հրապարակային դատավարությունը, գրավեց ամբողջ աշխարհի ուշադրությունը։ Սողոմոն Թեհլիրյանն ու Միսաք Թորլաքյանը անպարտ արձակվեցին՝ բարոյական մեծ գոհացում պատճառելով հայ ժողովրդին։

Ջեմալ փաշայի սպանության առթիվ բազմահարյուր ձերբակալություններ տեղի ունեցան Ռուսաստանում. Դաշնակցական երիտասարդությունը լցվեց բանտերն ու Չեկայի նկուղները և շատերը, առանց դատ ու դատաստանի, աքսորվեցին Սիբիրի սառուցյալ վայրերը։

Քառորդ դար անց, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, համանման պայմաններում, նացի ջարդարարների համար միջազգային դատ կազմակերպվեց Նյուրեմբերգում, նացի պարագլուխները մահապատժի ենթարկվեցան և գերման ժողովրդի վրա տուգանք դրվեց, իբրև հատուցում հրեաներին, հանգստացնելու համար «քաղաքակիրթ մարդկության» վրդովված խիղճը։ Տարբեր եղավ նույն այդ «քաղաքակիրթ մարդկության» վերաբերումը հայերի հանդեպ։ Թուրքիայի հայության կեսը կոտորվեց ամենատմարդի միջոցներով, մյուս կեսը հողմացրիվ եղավ։ Հայերի ստացվածքը հափշտակվեց։ Գյուղեր ու քաղաքներ ամայացան։ Եվ երբ հասավ հատուցման ժամը, «քաղաքակիրթ մարդկությունը» մնաց անտարբեր։ Հայ ժողովուրդը ինքը, իր «քաչ որդվոց սուրբ արյունով»... կազմակերպեց հայկական Նյուրեմբերգ՝ թուրք դահիճների համար։

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

Քառասուն տարի է անցել Հայաստանի Հանրապետության ծնունդի օրից—1918, մայիսի 28—1958, մայիսի 28—բայց հայության գիտակցության մեջ դեռևս համազգային ընդհանուր ըմբռնում չէ դարձած անկախության գաղափարը։ Կան հայեր, որոնք ուրանում են Հանրապետության գոյությունն անգամ։ Եվ, սակայն, փաստը մնում է փաստ. ուրացումով պատմությունը կարելի չէ ջնջել։

Մեծ եղելությունները մեծ ժամանակի են կարոտ ազգերի գիտակցությունը հեղաշրջելու համար։ Այսօր, օրինակ, Վարդանանց պատմության շուրջ հայ ժողովրդի հանրային մտքի մեջ տարակարծություն չկա. ամենքի համար Վարդանանց պատերազմը նվիրական է և 1036 նահատակները՝ սրբեր։ Բայց պատերազմի օրերին, առաջ և վերջը, ամենքը համախորհուրդ և համերաշխ էին, միևնույն գիտակցությամբ տոգորված։ Վարդանանց և Վասակյանց հակամարտություններն ու թշնամանքը, կուսակցական բախումներն ու կատաղի հակամարտությունները չե՞ն վրդովել ժամանակի հայ հասարակությանը։ Հենց Եղիշեի պատմությունը չի՞ վկայում, որ մոլեգին հակամարտություններ են եղել ազգային քաղաքականության շուրջ, որոնք շատ կողմերով հիշեցնում են մեր օրերը։ Բայց և այնպես ժամանակը արժեքավորել է պատմական իրողությունները, մոռացնել է տվել ինչ որ պետք է մոռացվեր և կենդանի ու անմահ է պահել ճշմարիտն ու իրավը, որպես ընդհանրական սեփականություն ազգի բոլոր հատվածների մտքում ու սրտում։

Նման եղելություն է և Մայիսի 28-ը։ Հայ ժողովուրդը երկար դարեր երազեց այդ օրը, և երբ օրը եկավ, անպատրաստ գտնվեց ազգովին տեսնելու և ընդունելու իրողությունը, «յիւրսն եկ և իւրքն զնա ոչ ընկալան»... Գաղափարական բաժանումը և պայքարը անկախության շուրջ ընդհանրապես և Հայաստանի Հանրապետության առթիվ ի մասնավորի ջարունակվում է անընդհատ։

Եվ զարմանալի չէ բնավ, որովհետև Հայաստանի Հանրապետությունը դեռ պատմություն չէ դարձած, այլ ներկա է։ Դեռ կենդանի են այն բոլոր գաղափարներն ու դեպքերի հուշերը, որոնց շուրջ բաժանված է հայությունը Հանրապետության օրերին, դեռ ողջ է ժամանակի

դերակատարների մի մասը, և վառ են կրքերն ու հակամարտությունները։

Ժամանակը վճռական գործոն է պատմական դեպքերի գնահատության համար և ժամանակի հետ նաև սերունդների փոփոխությունը։ Սակայն, քառասուն տարին բավական չեղավ, որպեսզի Հայաստանի Հանրապետության շուրջ հրահրված կրքերը մարեին, և անկախության գաղափարը իր արժանավոր տեղը գրավեր հայ ժողովրդի ընդհանուր գիտակցության մեջ։

Բայց, որքան և կարճ, ժամանակը իր դերը կատարում է արդեն։ Երևանի պատմագրությունը — վարանումով, անշուշտ — սկսել է արդեն դրական վերաբերում ցույց տալ դեպի հանրապետության հետ կապված որոշ դեպքերը։ Հիշատակվում է Սարդարապատի ճակատամարտը, Բաշ-Ապարանը, իբրև հերոսական դրվագ հայ ժողովրդի նորագույն պատմության, փույթ չէ թե կոմունիստ կուսակցության վերագրվի այդ դեպքը։ Բնավ պիտի չզարմանանք, եթե վաղը Մայիսի 28 էլ յուրացվի բոլշևիկների կողմից։ Թող յուրացնեն. կարևորը այն չէ, թե ով է հեղինակը պատմական դեպքերի, կարևորը դեպքերն են։

Ով և ինչպես ուրանա, անհերքելի է, որ երեկվա ուրացողները այսօր ստիպված են ընդունելու Հայաստանի Հանրապետության եղելությունը։ Ընդ հուր և ընդ սուր անցնելով, անհաշիվ զոհերի գնով, հայ ժողովուրդը 1918 թ. Մայիսի 28-ին հիմք դրեց ազգային անկախ պետության՝ Հայաստանի Հանրապետության։ Այս իրողությունը կարելի չէ ուրանալ և ո՛չ մի ուրացումով։

Որևէ ուրացումով կամ փաստերի խեղաթյուրումով կարելի չէ հերքել և այն փաստը, որ 1920 թ. դեկտ. 2-ին, կամ, եթե հաճելի է, նոյեմբ. 29-ին տեղի ունեցավ ոչ թե Հայաստանի նոր պետության ստեղծումը, այլ գոյություն ունեցող հանրապետության վարչաձևի փոփոխությունը. ժողովրդական անկախ հանրապետությանը տեղ հաստատվեց խորհրդային անկախ հանրապետություն։ Մի տարի անց, ոչ հայ ժողովրդի կամքով, այլ դրսից եկած հրամանով և օտար սվիններ սպառնալիքի տակ, Խորհրդային Հայաստանը զրկվեց անկախությունից՝ դառնալով Անդրկովկասյան Դաշնակցության անդամ։

Այսպիսով՝ պատմական իրողություն է, որ ներկա Խորհրդ. Հայաստանը շարունակությունն է Հայաստանի Հանրապետության։ Եթե տեղի չունենային այն մաքառումները, որոնք հանգեցին հայկական անկախ պետության ստեղծման 1918 թ. Մայիսի 28-ին, եթե գոյություն չունենար Հայաստանի Հանրապետությունը իր ազգային կազմով ու նկարագրով, այսօր գոյություն չէր ունենա և Խորհրդ. Հայաստանը ազգային կազմով ու դիմագծով։

Հայաստանի խորհրդային վարչաձևը շատ ճիգ թափեց, որպեսզի ազատագրվի հայ ժողովրդի քաղաքական ժառանգությունից. մերժեց

ընդունել «ամենայն հայոց կառավարության» դերը, հրաժարվեց Հայկական հարցի հետապնդումից, ուրացավ Հայկական Սփյուռքի գոյությունը։ Ի զո՞ւր, ժամանակը պարտադրեց նրան ճանաչել և Հայկական հարցը, և Հայկական Սփյուռքը, և անբնական չի լինի, եթե վաղը իր վրա առնե և «ամենայն հայոց կառավարության» պատմուճանն էլ։ Ժամանակը ունի իր խորհուրդը։ Հայաստանի Հանրապետության սերունդը և իր հաջորդները այդ օրվան են սպասում և պայքարում են այդ օրվա համար։

Վարչաձևերը ժամանակավոր երևույթ են։ Ժամանակավոր են և վարիչները։ Հավերժական են ազգերն ու հայրենիքները՝ հայրենի գոտի վրա նստած ժողովուրդները։ Հավերժական է ազատատենչ հայ ժողովուրդը, որ մահվամբ մահը կոխելով՝ կերտեց հայրենիքի անկախությունը։

Ժամանակները հղի են դեպքերով։ Պատմությունը վերջացած չէ։ Մենք հավատում ենք, որ Հայաստանը նորից կլինի ազատ և անկախ, ավելի լայն ազգային սահմաններով։ Ընդունակ տեղ տալու իր ծոցում ի սփյուռս աշխարհի հողմացրիվ եղած բոլոր զավակներին։

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է ապրել հայ ժողովրդի սրտում, որպես մշտավառ հուշ անցյալի և իբրև կենդանի հույս ապագայի։



Ա

Հ. Հ. Դ. ԿՈՎԿԱՍԻ ՇՐՋԱՆ. ԺՈՂՈՎ

(1914, սեպտ. 21—23)

Շրջանային ժողովը տեղի ունեցավ սեպ. 21-23-ին (1914), մասնակցությամբ 20 ձայնի իրավունքով և 12 խորհրդատու ընկերների։ Ձայնի իրավունքով ժողովին ներկայացուցիչներ ունեին հետևյալ մարմինները. Արևել. բյուրո 1 ձայն, Հայաստանի բյուրո 1, Կենտր. կոմիտեն 1, Տեղական կոմիտեն 1, Կենտր. կոմ. 2, Կենտր. կոմ, 1, Շուշի 1, Ախալքալաք 1, Շահաստան 1, Ջինվոր շտաբ 1, Ուսանողություն 1, այլև չորս գործիչ-ընկերներ։

Նախքան զբաղմունքներին անցնելը՝ ժողովը հոտնկայս հարգեց հանգուցյալ ընկ. Ս. Ջավարյանի հիշատակը։ Ժողովի օրակարգն էին կազմում հետևյալ հարցերը.

1. *Զեկուցում ութերորդ ընդհ. ժողովի.*
2. *Զեկուցում Արևել. բյուրոյի միամյա գործունեության,*
3. *Զեկուցում հայ կամավորների կազմակերպման և հարակից խնդիրների մասին.*
4. *Կուսակցական վերակազմության հարց.*
5. *Արևելյան բյուրոյի երկու անդամի ընտրություն։*

Ար. բյուրոյի և մյուս մարմինների ներկայացուցիչների զեկուցումներից երևում է, որ կուսակցությունը, մանավանդ վերջին ժամանակներս, արագ կերպով վերակազմվում է. կազմակերպվում են նոր խմբեր ու մարմիններ, վերանորոգվում են հները։ Հրապարակ են գալիս նոր ուժեր, հներն էլ նոր թափ են ստանում։ Հասարակական համակրանքը ընդհանրապես կուսակցության կողմն է։ Բանվորական կենտրոններում աճում է գործավորական խմբերի թիվը։ Տնտեսական պայքարների ժամանակ մերոնք բերում են իրենց բուռն մասնակցությունը։ Շատ տե-

ղեր գործը վարողները դեռ նշանակովի մարմիններ են, բայց շուտով հույս կա, որ ամեն ինչ կկանոնավորվի և կարելի կլինի կիրարկել ընտրական սիստեմը։ Հարաբերությունները կենտրոնական և գավառական մարմինների միջև համեմատաբար թույլ են եղել։ Բավարար չափով չեն եղել նաև պրոպագանդիստ ու կազմակերպիչ ուժեր։ Չի մատակարարվել նաև պետք եղած չափով գրականություն, այդ պատճառով խրմբական պարապմունքների համար շատ դժվարություններ են առաջ եկել։ Բոլոր ներկայացուցիչների զեկուցումների մեջ տիրող էր լավատեսության շեշտը, ամենքն էլ հույս էին հայտնում, որ շուտով կուսակցությունը կդրվի իր նախկին դիրքի վրա։

Զեկուցումներից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն կուսակցության վերակազմակերպման մասին։ Մի քանի ընկերներ մոմենտը անհարմար են գտնում, և առաջարկում են ուժեր չլատելու համար առայժմ մի կողմ թողնել կուսակցության գործը և ամբողջապես տարվել կամավորների և ինքնապաշտպանության հարցով։ Մեծամասնությունը, սակայն, դրա հակառակ է և գտնում է, որ պայմանները շատ հարմար են վերակազմության գործը շարունակելու, անհրաժեշտ է օգտագործել համեմատական ազատությունն ու պատերազմի՝ պրոպագանդի առարկա ընդունելով մոմենտը՝ առաջ մղել քաղաքական-տնտեսական հարցերը և կուսակցության շուրջ համախմբելով հասարակական կենդանի ուժերը։ Այս առթիվ ընդունվեց հետևյալը.

«Շարունակում ենք սկսված վերակազմության գործը՝ օգտվելով ներկա հարմար մոմենտից և տրամադրությունից։ Պրոպագանդի գործում գլխավորաբար պետք է ծանրանալ մոմենտի ստեղծած, կուսակցական ծրագրից բխած խնդիրների վրա։ Ուշք պետք է դարձնել տապնապի ժամանակ գյուղերում փոխադարձ օգնության գործը կազմակերպելու։

Նախքան հայ կամավորների կազմակերպության անցնելը՝ զեկուցում է տրվում վերջին ընդհանուր ժողովի մասին, որի որոշումները առանձին տետրակով կուղարկվեն ձեզ։ Ապա զեկուցում է Հայաստանի բյուրոյի ընկերը Պոլսի ընկերների կարծիքների մասին, որից երևում է, որ այնտեղի ընկերները «որոշել են լարել բոլոր ուժերը, կենտրոնացնել բոլոր տարրերը հայ ինքնապաշտպանության համար և առաջարկել Կովկասի մարմիններին, որպեսզի ուժեր կենտրոնացնեն սահմանագլուխներում և անկախորեն գործեն նույն ինքնապաշտպանության հողի վրա։ Այդ նպատակի համար անհրաժեշտ են գտնում ղեկավար ուժերին Կովկաս հրավիրել»։

Հայ կամավորների կազմակերպման զեկուցումից երևում է, որ այդ գործը արդյունք է կուսակցության և զանազան պետությունների հետ վարած բանակցությունների, ինչպես նաև Թուրք կառավարության համառ չկամության բարենորոգումներ մտցնելու։ Բարենորոգումների ծրագիրը, որ ռուս կառավարությունն առաջարկեց, Տաճկաստանի և Գերմանիայի կողմից մերժվեց։ Ռուս կառավարության հետ ունեցած մտքերի փոխանակությունից երևում էր, որ նա, զանազան քաղաքական նկատումներով, վճռել է տաճկահայերի դրությունը բարելավել, որ նրա քաղաքական կուրսը ներկայումս նպաստավոր է տաճկահայերի համար, բայց նրան խանգարում է Գերմանիան, որ արգելք է հանդիսանում հայկական ռեֆորմների։

Համաեվրոպական պատերազմի հենց սկզբից ռուս կառավարությունը ցանկացավ իմանալ, թե ինչ է լինելու հայերի դիրքը ռուս-տաճկական պատերազմի դեպքում։ Մյուս կողմից հայ շրջաններին շատ էին մտահոգում պատերազմի դեպքում ծագելիք արհավիրքները։ Այս հողի վրա սկսվեցին բանակցությունները հայերի և ռուս կառավարության միջև։ Հայերի զանազան հաստատությունների, միությունների և ընկերությունների ներկայացուցիչներից կազմվեց մի մարմին, որ կոչվեց Ազգային բյուրո. սա ընտրեց մի գործադիր մարմին, որը բանակցություններ սկսեց կովկասյան կառավարության հետ։ Կառավարությունը խոստանում էր իրագործել ռեֆորմների սկզբնական ծրագիրը և ցանկություն էր հայտնում, որ հայերը իրենց համակրությամբ աջակցեն ռուս զորքին պատերազմի դեպքում։ Այդ աջակցությունը պիտի կայանա զորքին թեթև ծառայություններ մատուցանելու, մանավանդ հետախուզումների ժամանակ, և ժողովրդական ինքնապաշտպանության մեջ։ Այսպես առաջ է գալիս կամավորներ կազմելու միտքը։ Այս կամավոր խմբերը գլխավորապես պետք է ծառայեն հայ գյուղերի ինքնապաշտպանությանը և հարկավոր դեպքում պետք է աջակցեն ռուս զորքին։ Կառավարությունը իր վրա է վերցնում դրանց զինելու և ապրեցնելու հոգը։ Ազգային բյուրոն որոշում է կամավորների կազմակերպությունը, վարչությունը և ամբողջ զինվորական գործը հանձնել մեր կուսակցությանը։ Թե Ազգային բյուրոն և թե մեր ընկերները որոշում են գործին համազգային բնույթ տալ, իհարկե, աշխատելով մեր տեսակետները անցկացնել գործի մեջ։

Այս զեկուցման առթիվ տեղի ունեցած վիճաբանությունների ընթացքում, որ եոյակ համաձայնության հաղթությունը մեզ համար նպաստավոր է, որ ռուս-թրքական պատերազմը անցանկանալի է, բայց թե նա ծագի, մեր բոլորիս իղձը պետք է լինի Ռուսաստանի հաղթությունը, մեր ակտիվ մասնակցությունը պատերազմին, ընկերների մի մասը հակառակ էր և պահանջում էր զբաղվել միայն ինքնապաշտպանությամբ, բայց ժողովականների խոշոր մասը՝ ընդունելով հանդերձ, որ մեր գործը պետք է լինի գլխավորապես ժողովրդի ինքնապաշտպանությունը, անհրաժեշտ է համարում, հարկը պահանջած դեպքում, աջակցել ռուս զորքին։ Ի վերջո ընդունվեց հետևյալ բանաձևը։

Շրջան. ժողովը՝ կանգ առնելով ներկա քաղաքական միջազգային մոմենտի վրա և ղեկավարվելով իր կուսակցության հիմնական սկզբունքներով և միջազգային համերաշխության գաղափարով, իր խորին ցավն է հայտնում այն սարսափելի պատերազմի համար, որ սպանդանոց է դարձրել ամբողջ Եվրոպան։

Վերհիշելով պատերազմի դրդապատճառները, կռվող կողմերի նպատակները, աշխատավոր դասակարգի, մանր ազգությունների, մասնավորապես հայ ժողովրդի ապագան, Շրջան. ժողովը ավելի ընդարձակ կհամարեր, եթե այս պատերազմը վերջանար շուտով և այն էլ եռյակ համաձայնության հաղթանակով։

Գալով սպասվելիք ռուս-տաճկական պատերազմին՝ Շրջան. ժողովը այդ համարում է անցանկալի և աղետաբեր, քանի որ նրա ընթացքում ժողովուրդը պետք է ենթարկվի կոտորածների, իսկ նրա տնտեսությունը՝ ավերմունքի։

Այդպիսի պատերազմ բռնկելու դեպքում ժողովը որոշում է Կովկասում կազմակերպել թռուցիկ խմբեր, որոնց նպատակն է լինելու, ռուսաց բանակի առաջխաղացության դեպքում, պաշտպանել հայկական վայրերի ազգաբնակչությունը ավերածություններից ու կոտորածներից և աջակցել ռուս բանակին։

Ժողովը նկատի ունենալով այն, որ ընդհանուր ժողովի որոշման համաձայն ռուս-տաճկական պատերազմի դեպքում մեր բռնելիք դիրքը որոշող կուսակցության օրգան հանդիսանում է Տաճկաստանում գոյություն ունեցող հատուկ մարմինը՝ ընտրված ընդհանուր ժողովի կողմից՝ և երկրորդ՝ մտնելով Արևելյան բյուրոյի դրության մեջ, որ ամեն րոպե սպասում էր ռուս-տաճկական պատերազմի բռնկումին, իսկ այն մարմնի մասին տեղեկություն չուներ, ստիպված է եղել որոշ քայլերի դիմել, խոստումներ անել. և արդեն փաստորեն տեղի է ունեցել ուժերի մոբիլիզացիան, ժողովը թեև իր իրավասությունից դուրս է գտնում կամավորներ կազմակերպելու հարցի վճիռը, բայց և չունենալով այդ խնդրի վերաբերյալ ավելի բարձր և իրավասու մարմինների որոշումը հաստատում է Բյուրոյի որոշումները և նպաստում է դրանց լավագույն իրագործմանը։

Շրջան. ժողովը ցանկություն է հայտնում՝ որ Բյուրոն, ըստ հնարավորության, հարաբերության մեջ մտնի Հայաստանի մարմնի հետ այս առթիվ։ Նույնպես շարունակե սկսված բանակցությունները եռյակ համաձայնության պատկանող մյուս պետությունների հետ և նրանցից որոշ խոստումներ ստանա։

Նույնպես վճռում է չտալ այս գործին նեղ կուսակցական բնույթ և վարել ըստ կարելվույն զգույշ, առանց հրապարակային բնույթ տալու։

Այս երկար վիճաբանություններ տեղի ունեցան Ազգային բյուրոյի

շուրջը։ Ոմանք գտնում էին այդ Բյուրոն ապօրեն, ոչ ազգային, այլ մի քանի հաստատությունների ներկայացչություն է։ Մեծամասնությունը նկատի ունենալով քաղաքական պայմանները՝ հնարավոր չէր համարում լայն, ընդհանուր ընտրության սկզբունքով ազգային մի ժողով գումարել, գործնական նկատումներով օգտակար էր համարում ներկա Ազգ. բյուրոյի գոյությունը, նրա գործադիր մարմինը ընթանում է համերաշխորեն մեր ընկերների հետ։ Ժողովը որոշեց այս մասին բանաձև չքվեարկել և հավանություն տվեց ընկերների բռնած դիրքին։

Առաջարկվեց նաև կազմել երկու մարմին, մեկը զուտ զինվորական, որ լինելու է մեր ընկերների ձեռքը, և մյուսը՝ ֆինանսական և այլ խնդիրների համար, ուր պիտի մասնակցեն Ազգային բյուրոյի կողմից ընտրված մարդիկ մեր ընկերների հետ միասին հավասար թվով։ Ցանկալի է, որ զինվորականից զատ, բոլոր հանձնաժողովներում մասնակցեն Ազգային բյուրոյի ներկայացուցիչները։

Ընկերներից ոմանք բողոքում են, որ Ազգային բյուրոն ամբողջ գործը իր ձեռքն է առել և հետ է մղում կուսակցությունը։ Առաջարկվում է ավելի շեշտել կուսակցության մասնակցությունը բոլոր ձեռնարկներում։ Այս առթիվ բուռն վիճաբանություն է տեղի ունենում։ Առաջ է բերվում Ազգային բյուրոյի կազմության, նրա գործունեության, իրավասության, կազմի հարց։ Երաշխավորվում է, որ մեր կուսակցության անկախ դիրքը ապահովված է և շեշտվում է համերաշխ գործունեության անհրաժեշտությունը։

Տեղի է ունենում Արևելյան բյուրոյի երկու անդամների ընտրությունը և ժողովը փակվում է ոգևորված տրամադրության տակ։

Հ. Հ. Դ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈ

Բ

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐ

ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԳԱԴՐԻՉ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԸ ԱԶԳ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

(1914 թ. դեկտեմբերի 27)

Ազգային բյուրոյի նախագահի զեկուցումից ժողովականները իմացան, թե ի՞նչ պայմաններում առաջացավ հայ կամավոր խմբերի կազմակերպման միտքը, կառավարությունը որոշ խոստումներ արավ տաճկահայոց ապագայի նկատմամբ, և Ազգ. բյուրոն հանձն առավ կազմակերպել կամավոր խմբեր, օգնելու համար ռուս զենքի հաջողությանը։ Այնուհետև ստեղծվեց զինվորական մի մարմին՝ Հայ կամավոր

խմբերի կարգադրիչ մարմին կամ ինչպես սովորաբար կոչում են, շտաբ անունով՝ բաղկացած զինվորական հմտություն, անուն ու փորձառություն ունեցող անձնավորություններից, որոնց և հանձնվեց խմբերի կազմակերպման և ղեկավարման գործը։

Սկզբում շարժումը կրում էր անլեգալ բնույթ. կառավարությունը խուսափում էր աղմուկից և չէր ուզում հրապարակային ձև տալ։ Այդ պատճառով ամեն բան արվում էր գաղտնի կերպով։ Զինվորական մարմինը որոշեց խմբերի գործունեության վայրը, նրանց թիվը, հրամանատարների կազմը և կազմելով զորաշարժի ծրագիրը՝ ամեն կողմ ուղարկվեցին մարդիկ ու հեռագրեր՝ կամավորներ արձանագրելու համար։

Որոշվեց խմբերի գործունեության չորս կետեր ընդունել, Սալմաստից պիտի շարժվեր Անդրանիկի գունդը 1500 հոգուց բաղկացած և պիտի արշավեր դեպի Վան, Իգդիրից պիտի դուրս գար Դրոյի խումբը 500 հոգուց կազմված՝ նույնպես դեպի Վան արշավելու նպատակով։ Կաղզվանից շարժվելու էր Համազասպի գունդը, իսկ Սարիղամիշից՝ Քեռիի գունդը։

Կառավարությունը առաջարկում էր նաև Օլթիի, Խոյի գծերը առնել, բայց զինվորական մարմինը մերժեց՝ աչքի առաջ ունենալով, որ այդ գծերը հայաբնակ շրջանում չեն գտնվում։ Գործը կազմակերպողների մեջ այն տրամադրությունը կար, որ բավական ժամանակ պետք պիտի լինի մոբիլիզացիան լրացնելու համար, բայց հասարակությունը այնպիսի խանդավառությամբ ընդառաջ գնաց, որ շատ կարճ ժամանակում ոչ միայն ստացվեց պահանջված թիվը, այլև շատերին ստիպված եղանք մերժելու։ Հայաբնակ բոլոր վայրերից ինքնաբերաբար գալիս էին կամավորներ, հակառակ մամուլի և զինվորական մարմնի ազդարարությունների՝ հոսանքը երթալով ավելի լայն ծավալ ստացավ. խմբեր եկան Բուլղարիայից, Ռումինիայից, Օդեսայից, Ղրիմից, Ռոստովից, Եկատերինոդարից, Աստրախանից, Անդրկասպյան երկրից և ուրիշ հեռավոր տեղերից։ Այդ հոսանքը շարունակվում է և այսօր՝ չնայած մեր կողմից եղած մերժումների։

Կամավոր խմբերի կազմակերպումը, ինչպես հայտնի է, սկսվեց սեպտեմբերի սկզբներին, երբ ռուս-տաճկական հարաբերությունները խիստ լարված էին և ամեն րոպե սպասվում էր պատերազմի հայտարարություն։ Այդ տրամադրության ազդեցության տակ մոբիլիզացիան կատարվեց շատ արագ. կարելի չեղավ ոչ խիստ բժշկական քննություն կատարել, ոչ էլ լավ ընտրություն անել զինվորական և այլ տեսակներով։ Այդ պատճառով խմբերի մեջ մտան բավական թվով և տկար ու կասկածելի տարրեր, որոնք անզոր գտնվեցին դիմանալու այն բոլոր դժվարություններին, որոնք վիճակվեցին մեր խմբերին։ Այդ հուզված տրամադրությունը տևեց մինչև Գանգստության, և արդեն հոկտեմբերի

կեսերին կառավարությունը մեզ հայտնեց, որ պատերազմը հետաձգվում է մինչև գարուն։ Ապահով, որ դեռ ժամանակ կա խմբերի պակասը լրացնելու և զինավարժությամբ պարապելու, զինվորական մարմինը, համեմատաբար, թեթև պատրաստությամբ նշանակված կետերն ուղարկեց կամավորներին։ Կամավորների համար որոշվեց առանձին, միանման համազգեստ, որ մշակեցին խմբերի հրամանատարները։ Հագուստի և այլ պետքերի համար նկատի էր առնվում անցյալի փորձը՝ բուլղարական պատերազմի, հայդուկային կռիվների և այլ օրերից։ Դժբախտաբար, շատ բան կարելի չեղավ նախատեսել, և խմբերը բավական նեղություններ կրեցին՝ սկիզբներում տաք ու հարմարավոր հագուստներ չունենալու պատճառով։

Չնայած կառավարության հավաստիացումներին, հանկարծ, պայթեց պատերազմը, որ հանկարծակի բերեց և մեզ։ Սկսվեց մի տենդային աշխատանք եղած պակասությունները լրացնելու մասին, բայց սպասելու ժամանակ չկար։ Խմբերը առանց կանոնավոր վարժության ստիպված էին կռվի վայր մեկնել։ Հրամանատարները դիմեցին իրենց տեղերը։ Բոլոր խմբերը հապճեպով պատրաստվեցին և հազար ու մի պակասություններով հանդերձ սկսեցին գործել։ Ամենամեծ պակասությունը ինչպես հիշեցինք, տաք հագուստ չլինելն էր, այլև խոհանոցի, բժշկական մասի պակասը։ Մեր բոլոր ճիգերը խմբերի համար բժիշկներ կամ ֆելդշերներ գտնելու անցան ապարդյուն։ Նույնիսկ 200 և ավելի ռուբլի ամսական նշանակվեց, թերթերում հայտարարություն տպվեց, բայց բժիշկներ չգտնվեցին։

Խմբերի գործունեությունը ամփոփ կերպով հետևյալն է եղել. Անդրանիկի խումբը շարժվել է Սալմաստից մոտ 1200 հոգով։ Ապա այդ խումբը ուժեղացավ մոտ 200 հոգով։ Խումբը ուներ ձիավոր մոտ 200 հոգի։ Զինված էր մոսիններով։ Խումբը առաջին կռիվը ունեցավ Բուրուշխուրան լեռնանցքի վրա։ Կռիվը անցավ շատ հաջող։ Խումբը ռուս զորքերի հետ գրավում է Ղոթուրը, ուր Բազի գյուղի մոտ լինում է տաք կռիվ։ Այստեղ մերոնց անձնատուր են լինում չորս քուրդ բեգեր՝ բինբաշիներ։ Ապա խումբը առանց դիմադրության դրավում է Սարայը։ Մի խմբակ Ավոյի ղեկավարությամբ շարդում է քրդերին Բարդողիմեոս առաքյալի վանքի մոտ և գրավում վանքը։ Ապա 14 հոգով գրավում է Բաշկալան և գալիս միանում Անդրանիկի գնդին։ Անդրանիկի գունդը՝ եղած հրամանի վրա թողնում է Սարայը և գալիս Ղոթուրի մոտ դիրքեր բռնում։ Դեկտ. 4-ին նոր հրաման է հասնում առաջ շարժվելու, խումբը նորից գրավում է Սարայը, բայց վերջին ընդհանուր նահանջի ժամանակ՝ մեր խումբն էլ հետ է քաշվում։ Մինչև վերջին արշավանքը ամբողջ գնդից սպանվում են 12 հոգի և վիրավորվում 18 հոգի։ Գնդի գործունեության մասին ամենանպաստավոր զեկուցումներ են տրվում Ատրպատականի ռուս բանակի հրամանատարների կողմից։ Ի նշան հատուկ ուշա-

դրության Անդրանիկը վարձատրվում է բարձր պատվանշաններով, իսկ խմբից շատ մարտիկներ ներկայացվում են Գեորգյան խաչերի։

Երկրորդ գունդը շարժվեց Իգդիրից 380 հոգուց բաղկացած, որոնց 50-ը ձիավոր։ Դրոյի ղեկավար խմբի առաջին գործը եղավ Կառվե Շամի գյուղի կռիվը, ուր վիրավորվեց Դրոն. և խմբի հրամանատարությունը անցավ Արմեն Գարոյին, նրա օգնականն էր Խեչոն։ Գնդի հաջորդ գործերն եղան նոյ. 23-ի և 28-ի, ապա դեկտ. 7-ի, 11-ի, 12-ի, 13-ի խիզախ կռիվները, որոնց մասին հիացումով են խոսում ռուս սպաները, անվանելով մեր տղաների հանդուգն հարձակումները «Աթաֆա սումասշեթշիխ» («Խենթերի հարձակում»)։ Գունդը գործել է շատ աննպաստ պայմաններում և գտնվել է հայատյաց գեներալ Ապացիևի հրամանատարության տակ և պատվավոր կերպով տարել է իր գործը։ Այնքան հաջող, որ Կորպուսի կոմանդիր Գեն՝ Օգանովսկին ինքնաբերաբար առաջարկում է խումբը մեծացնել և հայ խմբերի համար սպաներ պատրաստել։ Այդ նպատակով Իգդիրում հիմնվեցին հայ սպաների համար դասընթացներ, ուր շտաբի սպաների դասախոսությամբ պիտի պատրաստեին մեզ համար վարիչ ուժեր. երկրորդ գունդն էլ ընդհանուր նահանջի հետևանքով քաշվել է Իգդիր։

Երրորդ խումբը շարժվեց Կաղզվանից Համազասպի հրամանատարությամբ, նույնպես ունեցավ մի շարք փայլուն գործեր, որոնց մասին գրվեց թերթերում։ Դեկտ. 8-ին խումբը ենթարկվեց գիշերային հարձակման և տվեց զոհեր՝ սպանված ու վիրավորներ։ Խումբը այժմ սահմանի վրա է՝ Սրթահան գյուղում։

Ամենամեծ փորձությունների ենթարկվեց չորրորդ գունդը՝ Քեռիի հրամանատարությամբ։ Գունդը շարժվեց Սարիղամիշից մոտ 480 հոգով, առաջին հաջող ճակատամարտը ունեցավ Գզլար Կալա գյուղի մոտ։ Կորպուսի հրամանատար Բերխմանը առանձին ուշադրություն դարձրեց դեպի խումբը՝ կարևոր նշանակություն տալով նրան։ Վերջին խուճապի ժամանակ Քեռին ամենածանր պայմանների մեջ ընկավ՝ հանդիպելով անհամեմատ ավելի մեծ ուժերի։ Նարիմանի մոտ խումբը ցրվեց և մոտ 80 հոգի կորուստ ունեցավ։ Ցրված խմբակները այժմ հավաքվել են Ղարսում, և Քեռին պատրաստվում է նորից շարժվելու։ Բոլորովին թալանված է մեր պահեստը Սարիղամիշում, որով Քեռու և Համազասպի խմբերը մնացել են առանց հագուստի և պարենի։

Բոլոր գնդերի մոտ մենք ունեցել ենք մեր քաղաքացիական ներկայացուցիչները՝ Պարսկաստանում բժ. Զավրիևը, Սամսոնը և այլն, Իգդիրում՝ Ս. Տիգրանյանը, Ս. Մատենյանը, Կաղզվանում՝ Վալադյանը, Սարիղամիշում՝ Ֆրկ. Աղբալյանը, որոնք ամենապատվավոր կերպով տարել են իրենց ծանր պարտականությունները։ Օգտվում ենք առիթից հայտնելու համար մեր խորին հարգանքը թե հրամանատարներին ու քաղաքացիական ներկայացուցիչներին և թե բոլոր կամավորներին,

որոնք ոչ միայն արդարացրին իրենց վրա դրված հույսերը, այլև մեծապես բարձրացրին հայ ժողովուրդը հաշտ պետական ու զինվորական մարդկանց, ինչպես և թշնամիների։

Կամավոր խմբերի փայլուն գործունեությունը պատճառ եղավ, որ կառավարությունը համաձայներ խմբերի կազմը կրկնապատկել՝ խոստանալով 3000 հրացան էլ տալ և համաձայնելով սպա ու ենթասպա մարզիչներ 1000 հոգիանոց ռեզերվ պատրաստելու համար։ Այդ նպատակով արդեն 500 հոգի ուղարկվեց Ալեքսանդրապոլ, 500 հոգի էլ այս օրերս կուղարկվին։ Ռեզերվի պատրաստության գործը հանձնվեց Վարդանին, որի հմտությունը երաշխիք է այդ գործի հաջողության։ Աստիճանաբար պետք է մեծացվեն և գործող խմբերը, ուժեղացնելով նրանց ձիավոր մասերը, ռեզերվից պատրաստ նյութ պիտի հայթայթվի, որով պիտի լրացվի այն պակասը, որ խմբերը ունենում են սպանվողների, վիրավորների և զանազան առիթներով հեռացողների պատճառով։

Զինվորական մարմինը անհրաժեշտ է գտնում կենտրոնացնել ռեզերվի գործը, որպեսզի կարելի լինի մեր պայմաններին համապատասխան մարզանք տալ, կարգուկանոնի միանմանություն մտցնել, բաշխման գործը կանոնավորել և միանման հագուստ հագցնել։ Ռեզերվի կենտրոնացումը զգալի չափով կկրճատե և ծախսերը, որոնք այսօր բավական անկանոն կերպով են տեղի ունենում ուժերի ցրվածության պատճառով։

Այսպես, ուրեմն, հիմա մենք ունենք երկու, համեմատաբար, լրիվ խմբեր Պարսկաստանում և Իգդիրում, Համազասպի խումբը առանց օպոզի և Քեռու խումբը գրեթե նոր կազմած։ Վերջին երկու խմբերի վրա շատ խոշոր ծախսեր պետք է անել՝ նրանց գեթ նախկին վիճակին հասցնելու համար։ Ալեքսանդրապոլում ունենք ռեզերվի 500 հոգի, նույնքան էլ Թիֆլիսում, որ մի քանի օրից պիտի ուղարկվի Ալեքսանդրապոլ։ Իգդիրում ունենք սպաների դպրոց, որ նոր է կազմակերպվում։

Խմբերի պետքերը հոգալու համար թե տեղերում և թե Թիֆլիսում ունինք պահեստներ։ Թիֆլիսի կենտրոնական պահեստում են հայթայթվում բոլոր հարկավոր իրերը և կենտրոնացվում են նվերները։ Պահեստը պետք եղած իրերը կամ պատրաստ է գնում, կամ ապսպրում դրսի քաղաքներում։

Ինչպես ասացինք, խմբերը կազմելու և նրանց գործերը վարելու համար գոյություն ունի կարգադրիչ մարմինը կամ շտաբը, որ գործակցում է Ազգային բյուրոյի գործադիր մարմնին։ Վերջինս հոգում է գործի նյութական մասը։ Առաջինը տանում է զինվորական մարտական գործը։ Ընդհանուր գործի համար լինում են խառն ժողովներ։

Զինվորական մարմինը գործի կազմակերպման հենց առաջին օրից, որոշեց գործը դնել անպայման Համազգային անկուսակցական հողի վրա։ Եվ այս հանդիսացավ գործի առաջին պայմաններից մեկը։ Այս եղավ նաև ամենալավ միջոցը ամրացնելու այն համերաշխությունը, որ

վերջերս տիրում էր հայ ժողովրդի բոլոր խավերում և բոլոր վայրերում։

Ահա այս ամփոփ տեղեկությունները, որ կարելի եղավ հապճեպ կերպով պատրաստել։ Դժբախտաբար ժամանակ չկար ավելի մանրամասնորեն թվերով ու փաստերով ներկայացնելու կամավորների կազմակերպման գործը իր ամբողջ բարդությամբ։ Ավելի նպաստավոր պայմաններում կարելի կլինի այդ թերին էլ լրացնել։

Գործը շատ նոր էր, չափազանց բարդ ու պատասխանատու։ Գործի կազմակերպման մեջ պակասություններ շատ կան, որոնք հետզհետե պետք է ուղղվեն, մանավանդ որ դեռ շատ փորձեր սպասում են մեզ ապագայում։ Մենք համոզված ենք, որ այս գործին հավատացող բոլոր ուժերը ոչ մի ջանք չպիտի խնայեն պատվավոր կերպով դուրս գալու բոլորիս ստանձնած պարտականության տակից։

Ս. ՎՐԱՑՅԱՆ

ԷՆՎԵՐԻ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(ՆԱՄԱԿ՝ Հ. Հ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵՆՏՐ. ԿՈՄԻՏԵԻՆ)

(1915 թ. Հունվ. 1/14 Թիֆլիս)

Սիրելի ընկերներ,

Վերջին նամակը ձեզ գրել էինք մոտ մի ամիս առաջ. ապահով չէինք, ստանո՞ւմ էիք արդյոք և նրա համար զգուշանում էինք գրել. ընկեր Վարանդյանի վերջին հեռագրից իմացանք, որ մեր նամակը տեղ է հասել, ուստի շարունակում ենք գրել։ Այս նամակը, առիթից օգտվելով, մարդու ձեռքով ուղարկում ենք մինչև Ռումանիա, իսկ այնտեղից փոստով։ Գրում ենք վերջին ամառվա ընթացքում անցած-դարձածը և խընդրում ենք, որ դուք էլ հայտնեք ձեզ հետ կապ պահող վայրերին, մասնավորապես Եգիպտոս և Ամերիկա։

Կովկասը և հայ ժողովուրդը հենց նոր ազատվեց մի սոսկալի կատաստրոֆից։ Ռուս-տաճկական պատերազմը, որի վրա ռուսները շատ անհոգությամբ էին նայում, հանկարծ ստացավ անսպասելի կերպարանք. Թուրքերը հավաքելով իրենց ուժերը Էրզրումի գծի վրա, դեկտ. 10-ից գրավում են Օլթին տրորելով ու հետ մղելով ռուսներին. ապա արագ վազքով հասնում են Արդահան, գրավում և հասնում՝ դեպի Ախալքալաք, որից մոտ 25 վերստ հեռավորության վրա կռվի բռնվում ռուսների հետ։ Մյուս թևը ավելի ուժեղ, գրոհ է տալիս Սարիղամիշի վրա, կատաղի ռմբակոծում կայարանն ու երկաթուղին, արագ շարժու-

մով տոպրակի մեջ գցում է Բերխմանի կորպուսը և հաջող մի շարժումով անցնում Սարիղամիշի ետևը և կտրում Կարս—Սարիղամիշի երկաթուղին՝ Զաթախ կայարանի մոտ։ Օլթիի, Արդահանի և Սարիղամիշի տեղացի թուրքերը միանում են տաճկական զորքին և թուրք կորպուսները շշմեցնելով ռուսներին՝ սպառնում Թիֆլիսին, որից 3-4 օրվա հեռավորության վրա էին գտնվում։ Ռուսները շատ քիչ զորք ունեին այդ կողմերում։ Գլխավոր բանակը՝ Բերխմանի կորպուսը մնշոկի մեջ էր, իսկ նոր զորք անկարելի էր հասցնել։ Սկսվեց մի աննկարագրելի խուճապ, առաջավոր դիրքերից սկսվեց մի խելակորույս նահանջ, որի ժամանակ թողնվում էր ամեն ինչ՝ և զենք, և ռազմամթերք, և պաշարեղեն, միլիոնների հարստությունը անցավ թուրք խուժանի ձեռքը, թալանվեց կամ այրվեց։ Այն շրջանների հայությունը թողած ամեն ինչ՝ փախավ. ահագին գազթականություն սկսվեց։ Պատերազմի բեմից լուրերը ավելի չափազանցված էին հասնում Թիֆլիս, ուր ամեն ոք իր գլուխը կորցրել, կարծվում էր, որ թուրքերը առանց դիմադրության 3-4 օրեն Թիֆլիսում կլինեն, կարգադրություն եղավ էվակուացիայի. որոշեց հեռացնել բանկերը, պաշտոնական հիմնարկությունները և այլն. որոշվեց փոխարքային փոխադրել Եկատերինոդար, իսկ զինվ. շտաբը՝ Ստավրոպոլ. Պետերբուրգ ուղարկված անվերջ հեռագրերեն զորքի պահանջքով՝ եկավ մերժումի պատասխան։ Բերխմանին հրաման ուղարկվեց ինչ գնով էլ լինի ճեղքել թուրք զորքը և Սարիղամիշ օգնության հասնել։ Փոխարքայի զինվ. մասի օգնական Միշլաևսկին, որ թուրքերի գրոհի պահուն Սարիղամիշ էր, փախավ Ալեքսանդրապոլ և այնտեղ սկսեց կազմակերպել օպոլչենիա և ժողովրդին զենք բաժանել, Ղարսից, Ալեքսանդրապոլից, մանավանդ Թիֆլիսից, ժողովուրդը սկսավ փախչել. կայարանում կռվով էին տեղ ճարում. մի սոսկալի խուճապ, ահաբեկում էր տիրում ամեն տեղ, և ամեն ազգ իր դիրքն էր աշխատում որոշել։ Վրաց ազնվականությունը ժողով գումարելով, փոխարքային դիմում է անում, որ Թիֆլիսը առանց կռվի հանձնեն թշնամուն։ Նման դիմում են անում և քաղաքային դուման ու ժուռնալիստների ժողովը։ Քաղաքական բոլոր կուսակցությունների մի ժողով է գումարվում, որի մեջ վրացիները նույնպես առաջարկում են Թիֆլիսը առանց կռվի հանձնել։ Մերոնք միայն հակառակ կարծիք են ունենում։ Առհասարակ այդ օրերին թե կառավարական շրջաններում և թե մասսայի մեջ այն կարծիքն էր տիրում, թե ամբողջ Անդրկովկասը պիտի անցնի թուրքերի ձեռքը։ Օր օրի վրա սպառնում էր կովկասյան թաթարների ընդհանուր շարժում, արդեն նշաններ էլ կային։ Ադմինիստրացիան—վարչությունն—էլ կարծես հաշտվել էր այդ մտքի հետ՝ արագորեն հեռացնում էին իրենց ընտանիքները և արժեքավոր իրերը։ Սոսկալի էր հայ ժողովրդի վիճակը, նրա համար ազատում չկար, «ազգի երևելիները» ինչպես Ազգային բյուրոյի նախագահ Սամսոն Հարությունյանը, Դումայի անդամ Պապաջան-

յանը և ուրիշները զանազան պատրվակներով փախան Թիֆլիսից, մնացինք մենք ու մեր բոլորիս մտահոգությունն էր փրկել ժողովուրդը վերահաս վտանգից և պաշտպանել նրան։ Այս գործի համար մտածում էինք օգտվել մեր խմբերից. դիմում եղավ կառավարության և մի քանի տեղ՝ Ղարս, Ալեքսանդրապոլ և այլն, տրվեցին բերդաններ։ Մտածվում էր նաև դյուրություններ ստեղծել փախչող ժողովրդին օգնելու։

Այս միջոցին կառավարությունը դիմեց մեզ խոստանալով և ղենք, և սպաներ, միայն թե նոր խմբեր ուղարկենք, մենք անմիջապես կազմեցինք 500 հոգիանոց մի խումբ և Վարդանի հետ ուղարկեցինք Ալեքսանդրապոլ, ուր մտածվում էր հավաքել ռուսների դիմադրական ուժը։ Այսպես անցնում է մի քանի ծանր օր, երբ դեկտ. 20-ին, լուր է հասնում, որ Բերխմանի կորպուսը՝ զորաբանակը, դուրս է եկել թակարդից և մյուս ուժերի հետ կանգնեցնում է թուրքերի գրոհը. ապա մեծ հաղթանակ է տարվում թուրքերի վրա, որի մեջ ջարդվում են թուրքերի 10-րդ և 9-րդ կորպուսը վերջինիս հրամանատար Իհսան փաշան և շտաբը գերի են ընկնում. գերվում են և մոտ 10 հազար թուրք զինվորներ, Արդահանը հետ է առնվում, թուրքերը ստիպված են լինում հետ քաշվել և այժմ կռիվներ տեղի են ունենում Կարաուրգանի մոտ։ Թուրքերը շատ լավ են կռվում, ծրագիրը շատ հաջող էր կազմված, միայն ցուրտը և պաշարի պակասը պատճառ եղան, որ նրանք հաղթվեցին, եթե ոչ Թիֆլիսը ձեռքից գնացել էր։

Այդ խուճապի միջոցին տրվում է հրաման Պարսկաստանի և Ալաշկերտի զորամասերին հետ քաշվել, սկսվում է հետ գալ և Ատրպատականի ռուս զորքը, որի հետ գաղթում են Աղբակի և Սալմաստի հայերը։ Կարիք կա՞ ասելու, թե ինչ ահռելի կացության մեջ է ընկել այդ ժողովուրդը այս ցրտին։

Գաղթում են և Թավրիզից, որը անցել է թուրքերի ձեռքը։ Ալաշկերտից, որի բոլոր գյուղերը այրել են ռուսները հեռանալուց առաջ։ Շահ-Աբասի ժամանակներն են եկել մեր ժողովրդի վրա։ Ռուսները առայժմ, ուզում են ամրանալ Խոյ—Բայազետ—Կարաուրգան գծով պաշտպանողական դիրքով մինչև որ նոր ուժեր գան։

Ռուսաստանից հիմա գալիս են նոր կորպուսներ, ըստ երևույթին գարնանը տեղի կունենան վճռական դեպքեր։ Գաղթող հայերին օգնելու համար սկսվում է հանգանակություն, կարիքը անհաշվելի է, Կովկասի հայերը մեծ կարեկցանքով են ընդունում եկողներին։ Այս նոր տարին առայժմ բերեց մեզ մի քանի տասնյակ հազար տնավեր եղած ժողովրդի լաց ու սուգ։ Թուրքական գրոհի վտանգը թվում է անցած, թեև հայտնի չէ, թե Կարաուրգանի մոտ տեղի ունեցող թրքական նոր հարձակումների հետև նրանք որքան ուժ ունին։

Կամավոր խմբերն էլ մասնակցեցին վերջին դեպքերին։ Անդրանիկի

գունդը, որ հիմա ունի մոտ 1200 հոգի հետ է գալիս. Սարայի կողմից դեպի Խոյ ռուս զորքերի հետ, խումբը շատ հաջող գործունեություն ունեցավ ու արժանացավ բարձր գնահատման, ռուս զինվորականների և շտաբի կողմից։ Արմեն Գարոյի խումբը այժմ Իգդիրում է։ Նա էլ ունեցավ մի շարք հաջող կռիվներ, իսկ վերջին նահանջի ժամանակ անգնահատելի օգնություն հասցրեց գաղթող հայ գյուղացիությանը։ Խումբը կապված էր գեներալ Ապացիևի—Օսետին—Օտրյադի հետ. վերջինս հայատյաց և քրդասեր մի մարդ էր, այդ պատճառով տեղի են ունեցել նրա և Կարոյի մեջ մի շարք անախորժություններ, Ապացիևը վատ է տրամադրված եղել դեպի խումբը, և ամենավտանգավոր տեղերն է ուղարկել նրան։ Ի գնահատություն խմբի գործունեության՝ չորրորդ կորպուսի հրամանատար Օգանովսկին որոշել է խումբը կապել մի ուրիշ օտրյադի հետ։ Օգանովսկին շատ լավ է վերաբերվում դեպի մեր խումբը. նրա առաջարկությամբ և հովանավորությամբ հիմնվում է Քանաֆեռում մի հիսուն հոգիանոց դասընթաց, հայ խմբերի համար հայ սպաներ պատրաստելու համար. նրա պնդումով նույնպես Քանաքեռում հիմնվում է 1000 հոգիանոց ռեզերվ, որ պիտի մարզվի ռուս սպաների ղեկավարության տակ։ Որոշվել է Գարոյի խումբը մեծացնել, Վարդանի խումբն էլ այստեղ փոխադրել և ստեղծել 1200—1500 հոգիանոց հայկական մի դիվիզիոն. ցանկություն կա մեր ուժերը կենտրոնացնել հայաբնակ վայրերում, Օգանովսկու կորպուսի սահմաններում, նա շատ է ոգևորված մեր խմբերով, մեր շահն էլ պահանջում է ուժերի կենտրոնացում, թե Գարո-Վարդանի և թե Անդրանիկի խմբերը, գրավելու են մի ևնույն շրջանում։

Համազասպի խումբը այժմ Կաղզվանում է. ունեցել է մոտ 30 սպանված, 40 վիրավոր և բավական պաշարեղենի կորուստ։ Ունեցել է մոտ 13 կռիվ և միշտ հաջող, նրանից էլ շատ գոհ են, ստացվել է Գեորգևյան մեդալ երկրորդ աստիճանի։ Ամենից ծանր կորուստ է ունեցել Քեռին, որ թուրքերի գրոհին է ենթարկվել Նարմանի շրջանում, մոտ 7 սպանված է տվել Նարմանի մոտ։ Նրա խումբը թուրքերի հաղթական արշավի օրերին ընկնում է մեջոկի մեջ Նարմանի մոտ և շնորհիվ Քեռու ճարպիկության ազատվում է, խումբը ցրվում է և նրա բեկորները հետզհետե հավաքվում են Ղարսում։ Այժմ խումբը վերականգնվել է և պատրաստ է արշավելու։ Այս օրերս Գարոն ու Համազասպը Թիֆլիսումն են, հեռագրվեց, որ Վարդանն ու Քեռին էլ գան մի ընդհանուր խորհրդակցություն կատարելու համար։ Հարցեր շատ կան և ամենից առաջ պետք է համաձայնեցնենք մեր գործունեությունը։ Ռուս զորքի նոր տակտիկայի հետ, նկատի ունենալ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը, այլև ուժերի բաշխումը կատարել, որովհետև կառավարությունը կամենում է մեր խմբերը մեծացնել, կամավորների թիվը կրկնապատկելով։

Վերջին խուճապը առժամանակ մոռացնել տվեց ամեն բան, բայց մինչև այդ որոշ աշխատանք կատարված էր թե մամուլով և թե դիվանագիտական ճանապարհով՝ հայկական հարցի նպաստավոր լուծման համար։ Մեր լոզունգն է. «Ավտոնոմիա վեց վիլայեթների և Կիլիկիայի, ռուսական պրոտեկտորատի ներքև», այս մտքով հող է պատրաստվում, Պետերբուրգում, Սազոնովը և մյուս շրջանները ըստ երևույթին հակառակ չեն այս ծրագրին։ Այս մտքով դիմում եղավ և կաթողիկոսի կողմից փոխարքային գրավոր, իսկ բերանացի՝ ցարին. աուդենցիայի միջոցին վերջին տեսակցության ժամանակ, փոխարքան ասել է՝ «կմտածենք», իսկ ցարն ասել է. «Ձերդ սրբության ցանկությունները կիրագործվեն, պատերազմից հետո հայերի ապագան շատ լավ պիտի լինի»։ Ցարը հետաքրքրվել է ապագա Հայաստանով. նրա ժողովուրդներով և հայերի թվով։ Կաթողիկոսը տեղեկություններ է տվել։ Այդ աուդենցիայի, ինչպես և այցելության միջոցին դեպի հայերը ցույց տված ցարի բացառիկ ուշադրությամբ, հայկական բուրժուական շրջանները բավական ոգևորված էին, բայց իրապես մեջտեղը ոչ մի շոշափելի երաշխիք չկա, ընդհակառակը, ռուս ինտելիգենցիայի՝ Միլյուկով և մամուլի — «Ռեչ», «Ուտրո-Ռասսիի» և այլն, որոշ մասը շատ պարզ և կատեգորիկ կերպով դնում են Հայաստանի անեքսիայի խնդիրը։ Մեր շարքերում այս խնդրի մասին մի վճռական կարծիք չկա, թեև բոլորս էլ վախենում ենք «անեքսիայի» ուրվականից։ Կառավարության վերաբերմունքը այժմ դեպի հայերը շատ լավ է՝ գլխավորաբար զինվորականների և բարձր ադմինիստրացիայի, տեղական պաշտոնեությունը՝ մեծ մասամբ վրացի, թուրք, գերմանացի, միշտ էլ հակահայ են։

Քաղաքական պատճառներով փախչողները վերադարձել և ազատ ապրում են։ Մի ընդարձակ ցանկ անունների փոխարքայի կողմից ներկայացված է Պետրոգրադ, բայց դեռ ամնիստիա չկա։ Արտասահման գտնվողներն էլ անվտանգ կարող են վերադառնալ և մինչև պատերազմի վերջը առանց բռնվելու կապրեն. իսկ պատերազմից հետո հույս կա ընդհանուր լիկվիդացիա անել նրանց մեղքերի։

Ինչպես գիտեք կամավորների գործի նյութական մասը վարում է Ազգ. բյուրոն, իսկ զինվորականը՝ Զինվորական մարմինը։ Ազգային բյուրոյում վերջերս տեղի են ունենում խլրտումներ և պայքար, երևի մոտ օրերս կպայթի, Ս. Հարությունյանի հրաժարումով նախագահ ընտրվեց Պապաջանյանը, որը նույնպես հրաժարվեց, որովհետև իմացավ, որ մեր վստահությունը չի վայելում։ Մենք աշխատում ենք կացությունը փրկել և մինչև ընդհանուր ժողովը յոլա տանել, իսկ ընդհ. ժողովի մեջ ընտրել մի ձեռնհաս մարմին։ Ուզում ենք բժ. Զավրյանին, Անդրանիկի բանակից այստեղ բերել, բայց նա էլ պայման է դնում, որ ինքը կհեռանա, եթե իր տեղը գա մի կարող ընկ., օր. Ռոստոմը։ Ռոստոմի բացակայությունը այստեղ առհասարակ շատ ենք զգում և լավ

կլիներ, եթե նա գար, մինչև այժմ շատ ենք մտածել, հեռագրել ու խընդրել որ գա, բայց ի նկատի ունենալով դիվանագիտական քայլերի կարևորությունը՝ չենք արել։

Խնդրում ենք առանձնապես ջանք թափել մեզ համար նպաստավոր վերաբերում ստեղծելու Փարիզի և Լոնդոնի դիպլոմատիայի մեջ, որովհետև վերջ ի վերջո ամեն բան այնտեղից կախված պիտի լինի։

Այստեղ շատ է մտածվում այդ մասին, բայց զգուշացվում է պաշտոնական քայլեր առնելուց. դուք այդ ուղղությամբ խոշոր գործ կարող եք անել։

Զինվորական մասը վարում ենք մենք, ստեղծել ենք կարգադրիչ մարմին—Աբրահամ, Իշխան, Վրացյան—որոնք տանում են գործի ընթացիկ մասը, իսկ ընդհ. գործ՝ Աբրոն։

Տրամադրությունը դեռ շատ բարձր է, կամավորների հոսանքը շարունակվում է, պետք է առայժմ վերջացնել, որովհետև տեղումս էլ շատ մարդ կա։

Բոլոր ընկերները առողջ են։

Ընկերների կողմից ջերմ բարևներով՝

Ս. ՎՐԱՑՅԱՆ

Հ. Հ. Դ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

(1917 թ. ապրիլ)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԵՊԻ ՊԱՅԵՐԱՁՄԸ

1.

Հ. Հ. Դ. կովկասյան շրջանային ժողովը սրտի կսկիծով արձանագրում է այն փաստը, որ ազատագրված ժողովուրդը ստիպված է իր ազատությունը և ապագա նորմալ զարգացումը ապահովելու համար հսկայական պայքար մղել ոչ միայն հին կարգի մնացորդների, այլև Եվրոպայի կենտրոնական պետությունների ահարկու զորության դեմ։

1. Կասկածից դուրս է, որ անհավասար պայմաններում հաշտություն կապելը ծանրապես կվնասի երիտասարդ Ռուսաստանին, կխափանի նրա սոցիալ-տնտեսական զարգացումը և կզրկե մեր ռամկավար պետությունը ժողովրդի անհամար կարիքներին գոհացում տալու հնարավորությունից և այսպիսով կվարկաբեկե նրան ՝լայն մասսաների առաջ իր գոյության սկզբի օրերից։

2. Կասկածից դուրս է նույնպես, որ գերման կայսրության հաղթության դեպքում՝ Ռուսաստանի քաղաքական կարգերը չեն կարող արագությամբ ընթանալ ռամկավարական այն ճամփով, որով գնում են այսօր։ Հաղթական Գերմանիայի թե արքայական տունը, թե պահպանողական հոգեբանության տեր տիրող դասակարգերը չեն կարող իրենց սահմանին կից մի մեծ ռամկավար հանրապետություն հանդուրժել և հնար եղածին չափ ուժ կտան ռուս հետադեմ տարրերին և տապալված արքայական տան վերականգնումի գործին, որի իրականացումը կաշկանդելով Ռուսաստանի զարգացումը՝ կհասցնի նրան նախկին կախյալ վիճակին։

3. Ռուս դեմոկրատիայի առաջադրած սոցիալ-տնտեսական մեծ ծրագիրը — օր. հողային — նույնպես թշնամական վերաբերում առաջ կբերեն կենտրոնական միապետականների կողմից, որովհետև այդ ռեֆորմները այնքան արմատական են, որ ստանում են համաշխարհային բնույթ և կարող են մեծ սոցիալական շարժումներ առաջ բերել եվրոպական մասսաների, հատկապես գյուղացիության մեջ, այդ պատճառով Գերմանիան և նրա դաշնակիցները հաղթելու դեպքում կօգտվեն իրենց բռնի ուժից՝ ռուս դեմոկրատիայի վերանորոգչական եռանդը զրկելու համար։

Այս ծանրակշիռ հանգամանքները նկատի առնելով՝ Շրջ. ժողովը գտնում է, թե որևէ հաշտություն Գերմանիայի և ազատ Ռուսաստանի միջև վերջինիս համար աննպաստ և անհավասար պայմաններում անընդունելի է դեմոկրատիայի տեսակետից։

Եվ նկատելով, որ հաշտության նպաստավոր պայմաններ ստեղծել, ինչպես և ազատ և ռամկավար կարգերն ապահովել, հնարավոր է միմիայն ստվար կարգապահ և լավ պարենավորված բանակներում՝ Շրջ. ժողովը կոչ է անում բոլոր զինվորներին կրկնապատիկ եռանդով կատարել իրենց պարտքը, դասալիքներին — անմիջապես վերադառնալ իրենց զորամասերը և թիկունքի բոլոր գործոն ուժերին — աջակցել զորքի պարենավորման գործին։

Գալով հաշտության հիմնական պայմաններին՝ Շրջանային ժողովը հայտարարում է, որ անընդունելի են թե անեկսիոնիստական և թե հակաանեկսիոնիստական լոզունգները, եթե նրանք չունին կոնկրետ բովանդակություն։ Մեր կարծիքով հակադեմոկրատական է ոչ միայն գրաված երկրների բռնի միացումը, այլև նրանց բռնի վերադարձը հին տերերին։ Այն հարցերը, որ նախքան պատերազմը միջազգային բնույթ ունեին — ինչպես օր. հայոց հարցը,— ինչպես նաև այն ազգային հարցերը, որ ծագեցին պատերազմի ընթացքում, պետք է լուծվեն ազատագրվող ազգերի ինքնորոշման իրավունքով։

2.

Հ. Հ. Դ. շրջ. ժողովը Սահմ. ժողովի համար որոշեց.

Շրջ. ժողովը միանգամայն հնարավոր է համարում Սահմ. ժողովում առաջադրել կուսակցության նվագազույն ծրագիրը Ռուսաստանի և Անդրկովկասի վերաբերմամբ իր բովանդակ ծավալով՝ թե քաղաքական, թե հողային և թե բանվորական»։

Իսկ մինչև Սահմ. ժողով.

«Շրջ. ժողովը հրահանգում է ծրագրային բոլոր հարցերը դարձնել գրավոր և բանավոր պրոպագանդի առարկա։

Իրականացնել այն պահանջները, որ չեն կարող սուր պայքար հարուցանել ազգերի և հասարակության տարբեր խավերի մեջ։ Այդպիսի պահանջներ Շրջ. ժողովը ճանաչում է.

1. Անդրկովկասի վարչական բաժանումների փոփոխությունը, որն իրականացնելու համար Արևելյան բյուրոն և Կենտր. կոմիտեները ոչ մի ջանք պիտի չխնայեն։

2. Բանվոր դասակարգի դրությունը բարվոքելու համար ուր հնարավոր է, ստեղծել հաշտարար կոմիտեներ, իսկ ուր հնարավոր չէ, դիմել մասնակի բանակցությունների։

3. Գյուղացիների դրությունը բարվոքել նման միջնորդ մարմինների օգնությամբ՝ իջեցնելով կալվածատիրական հողերի կապալագինը և ստեղծելով գյուղացիների համար ուրիշ նպաստավոր պայմաններ՝ անտառներից, արոտներից, ջրերից և այլն օգտվելու համար։

4. Ընդունելով, որ հայկական շրջաններում ամենամեծ կալվածատերը եղած է պետությունը՝ Շրջ. ժող.-ը հրահանգում է կուսակցական մարմիններին և ընկերներին՝ միջոցներ ձեռք առնել, որ այսուհետև պետական հողերը տրվին ոչ մասնավոր անձանց, այլ միմիայն տեղական գյուղական համայնքներին, որոնք և պիտի որոշեն այդ կարգի հողերից օգտվելու եղանակը։

5. Դպրոցները մնալով պետական պիտի ազգայնական վարչության և դասավանդության տեսակետով։ Կուսակցական մարմինները և մամուլը պետք է կոչ անեն բոլոր ուսուցիչներին և վարժուհիներին, որ հին ռեժիմի հետևանքով ցրված են Ռուսաստանում, վերադառնալ հայրենիք։

6. Բոլոր վարչական և դատական հիմնարկությունների մեջ պետք է գործածական դարձնել տեղական լեզուները։ Իրավաբան ընկերները և այս սկզբունքին համակրողները պետք է աշխատեն հայրենիք կանչել Անդրկովկասից դուրս ցրված հայ իրավաբաններին և պիտի պատրաստեն ամենակարևոր օրենսգրքերի և կանոնագրքերի թարգմանությունը հայերեն։

8.

ԲԱՆԱՎՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՈՄԵՆՏԻ ՄԱՍԻՆ

ՄՈՄԵՆՏԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Ա. Ռուսաստանում

Վերլուծելով հեղափոխական վերջին անցուդարձը, Հ. Հ. Դ. Շրջ. ժողովը գալիս է այն եզրակացության, որ՝

1. Ռուսաստանի մեծ հեղափոխությունը հետևանք է.

ա. Այն խոշոր քաղաքական և սոցիալ-տնտեսական պահանջների, որ 1905 թվին գոհացում չստացան.

բ. Այն խելակորույս քաղաքականության, որ հին կառավարությունը վարեց հատկապես վերջին տասնամյակի ընթացքում.

գ. Այն զուտ դինաստիական և դավաճան քաղաքականության, որ նկատվեց այս մեծ պատերազմի ընթացքում.

դ. Իշխանության և ժողովրդական տնտեսության քայքայման.

ե. Այն երկարամյա հեղափոխական դաստիարակության, որ ստացել էր աշխատավորությունը։

2. Հեղափոխությանը մասնակցեցին.

ա. Զինված գյուղացիությունը, որ նույն է թե զորքը, մի զորք, որ մեծ մոբիլիզացիաների շնորհիվ՝ կորցնելով իր կաստայական բնույթը դարձել էր ժողովրդական բանակ և ապրում էր նույն արամադրությունները, ինչ որ ժողովրդի մեծամասնությունը.

բ. Բանվորությունը, որ 1905 թվի շարժումներից հետո ավելի փորձառություն էր ձեռք բերել և պատերազմի սկզբից մասնակցելով երկրի պաշտպանության գործին՝ քաղաքական շատ կարևոր ազդակ էր դարձել.

գ. Հառաջադիմական և չափավոր տարրերը, որ հասան այն վերջնական համոզման, թե հին ռեժիմը լիովին անընդունակ է հասցնելու պատերազմը նպաստավոր վախճանի։

3. Հսկայական թռիչքը ցարիզմից մինչև ռամկավար հանրապետություն՝ պետք է բացատրել.

ա. Այն կատարյալ վարկաբեկումով, որին հասան միապետական գաղափարները վերջին շրջանում.

բ. Այն հարաբերական թուլությամբ, որ ունեին չափավոր սահմանադրական տարրերը Ռուսաստանում և այն զորությամբ, որ ունեին սոցիալ-քաղաքական արմատական գաղափարները.

գ. Եվրոպական երկրների քաղաքական գանդաղ անցյալը և փորձը չկրկնելու ցանկությամբ.

դ. Այն դասակարգային կապով և հոգեբանական մերձեցմամբ, որ ստեղծվեց բանվորության և զորքի միջև։

4. Չգտնելով բնորոշել պետության քաղաքական կացությունը ներկա մոմենտում, Շրջ. ժողովը նկատում էր, որ ուժերի գերակշռությունն այսօր անցած է բանվորության և զորքի ներկայացուցիչներին, որոնք գտնվում են առավելապես սոցիալիստական, քան թե բուրժուական կուսակցության ազդեցության տակ։ Հառաջադիմական տարրերը ստիպված են հեռհեռ հետևել աշխատավորության վազքին։ Չի կարելի ուրանալ այն վճռականությունը, որով լիբերալ՝ կադետ և այլ տարրերը, հանուն պատերազմի հաջողության, ընդառաջում են գերիշխող աշխատավորության պահանջներին։

Չմոռանալ ամեն տեղ գոյություն ունեցող դասակարգային հակոտնյա շահերը՝ պետք է ասել, որ հասարակական խավերի գործակցությունը ընդհանրապես բավարար է համերաշխության տեսակետից։

Ներքին դժգոհություններն ու քննադատությունները գրեթե հակամարտ գործողություններ առաջ չեն բերում։ Նկատելով բանվորական և զինվորական խորհուրդների աջդեցությունը պետական կյանքի ընթացքի վրա՝ կարելի է ընդունել, որ կառավարությունը ներկայացնում է համարյա բոլոր հոսանքներն ու խավերը և չնայած իր այլատարր կազմության՝ նա մինչև այժմ ընթանում է դեմոկրատիկ ճամփով։ Պետք է նկատել սակայն, որ բանվորական և զինվորական խորհուրդներին կից՝ անհրաժեշտ է կազմել գյուղացիական խորհուրդներ, որոնք իբրև աշխատավորական ռեալ ուժ ի վիճակի են երկրի բախտի տնօրինության մեջ իրենց մասն ունենալու, որովհետև մեծ է գյուղացիության դերը Ռուսաստանի ապագա սոցիալական հեղաշրջումների ժամանակ։

Գալով ամբողջ Ռուսաստանի կենտրոնական և գավառական կառավարության վերակազմությանը և հաշվի առնելով հասարակության անփորձությունը քաղաքական-վարչական գործերում՝ ուրախությամբ պետք է արձանագրել ինքնագործունեության այն թափը, որ երևան բերեց հասարակությունը՝ թույլ չտալով անիշխանություն՝ հին կառավարության և վարչությունների կործանման շրջանում։ Ազգերն ու դասակարգերը առանց մոռանալու իրենց ուրույն շահերը՝ ընդհանուր առմամբ ներշնչված են այն գիտակցությամբ, թե ժողովրդի աղատությունը կարելի է ապահովել միմիայն միահամուռ գործակցությամբ։ Քաղաքական կուսակցությունների փոխադարձ վերաբերումը համեմատած 1905 թվի շրջանի հետ՝ շատ ավելի մխիթարական է, իսկ գործելակերպը՝ շրջահայաց։

Այս բոլորը նկատի առնելով՝ Հ. Հ. Դ. Շրջ. ժողովը գտնում է, որ՝

1. Մինչև սահմանադիր ժողովը պետք է ընթանալ նույն ճամփով և պահպանել նույն փոխադարձ վերաբերումն ու տրամադրությունները։

2. Պետք է պահպանել այն զորությունը, որ ձեռք են բերել բանվորական և զինվորական խորհուրդները, համանման կշիռ տալով ապագայում կազմվելիք գյուղացիական խորհուրդներին և ջանալով հակադրության մեջ դնել նրանց թե դեպի կենտրոնական կառավարությունը և թե դեպի երկրի հառաջադիմական տարրերը, որովհետև այդ աշխատավորական կազմակերպությունների վերացումով, ինչպես և հակամարտությամբ կվտանգվի ազատությունը և կստեղծվի երկրում անիշխանություն։

3. Պետք է շարունակել աջակցել ժամանակավոր կառավարությանը, քանի նրա գործունեությունը համապատասխան կլինի դեմոկրատիայի շահերին։

4. Պետք է հրապարակ հանել երկրի թաքնված կենսական ուժերը վարչական նոր կազմակերպությունը ապահովելու համար։

Բ. Անդրկովկասում

Քննելով երկրի դրությունը Անդրկովկասում՝ Շրջ. ժողովը նկատում է, որ այդ այլատարր ու բռնակալ կառավարության պրովոկացիոն գործունեության ասպարեզ դարձած երկրում ևս ազատության օրերին երևան եկավ շատ ավելի համերաշխ և խելացի գործունեություն, քան կարելի էր սպասել։

Մի երկրում, ուր դասակարգային և դասային հակամարտությունները բարդանում են ցեղամիջյան հարաբերություններով, չգտնվեց որևէ խոշոր հասարակական տարր, որ թեկուզ ներքուստ ափսոսար հին կարգերի անկումը։ Ազատ, իրենց կամքին թողնված ազգերը չգնացին փոխարքաների պատրաստած ճամփով, այլ կարողացան համախմբվել մի ընդհանուր գործի շուրջ և ըմբռնել օրվա հրամայականները։ Չնայած կուլտուրական խոշոր տարբերություններին, չնայած դասակարգային և ազգային հարցերի խառնակ դրության՝ հնարավոր է եղել առժամանակ ստեղծել մի կենսաձև — Modus Vivendi — մինչև Սահմանադիր ժողովը, որը մեր երկրի համար ևս պիտի լուծի մի շարք սոցիալական և ազգային հարցեր։

Մեկնելով այս մխիթարական փաստերից և մեր իրականության ռեալ պայմանների ճշգրիտ ըմբռնումից՝ Հ. Հ. Դ. Շրջ. ժողովը հրահանգում է կուսակցության բոլոր մարմիններին և ընկերներին կատարյալ համերաշխություն պահպանել Կովկասում ցեղամիջյան հարաբերությունների ժամանակ և միջդասակարգային ու ազգամիջյան խնդիրները լուծելիս միշտ աչքի առաջ ունենալ կուսակցության օրվա լոզունգները*։

---

* Այս բանաձևի հեղինակն էր Ա. Շահխաթունյանը, որ զեկուցանողն էր քաղաքական մոմենտի մասին։

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Մեկ կողմեն Օսմանյան կայսերական կառավարությունը և մյուս կողմեն Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որ ինքզինք անկախ հռչակած է, համաձայնած ըլլալով բարի դրացնության և բարեկամական հարաբերությանց հաստատման իրենց երկրներու միջև՝ քաղաքական, իրավական, տնտեսական և մշակութային հողի վրա, նշանակած են իրենց լիազորները.

Օսմանյան կայսրություն

Ն. Վ. ԽԱԼԻԼ ԲԵՅ, երեսփոխան, արդարության նախարար, նախագահ պետական խորհրդի և գլխավոր պատվիրակ։

Ն. Վ. տեղակալ զորավար ՎԵՀԻԲ ՄԵՀՄԵԴ ՓԱՇԱ, կովկասյան ճակատի օսմանյան բանակներու ընդհանուր հրամանատար, զինվորական պատվիրակ։

Հայաստանի հանրապետություն

Պ. Ալեքսանդր Խատիսով, նախագահ պատվիրակության.

Պ. Ռուբեն Քաջազնունի, պատվիրակ.

Պ. Միքայել Պապաջանով, պատվիրակ.

որոնց լիազորագրերը քննված և գտնված են օրինական։ Երկու պատվիրակությունները համաձայնած են հետևյալ տրամադրությանց շուրջ.

Հոդ. 1. Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև պիտի գոյանա տևական խաղաղություն և մնայուն բարեկամություն։

Հոդ. 2. Հետևյալ սահմանագծումը ունեցող սահմանագուխը կբաժնե Օսմանյան կայսրությունը Վրաստանի Հանրապետութենեն, Հայաստանի Հանրապետութենեն և Ազրբեջանի Հանրապետութենեն։

Սահմանը կմեկնի այն տեղեն, ուր ՉՈՂԱՔ գետակը Սև ծով կթափի և կհամապատասխանե Օսմանյան կայսրության և Ռուսիո 1877-ի պատերազմեն առաջվա սահմանագլխին, մինչև ՇԱՎՆԱՊԱՐ լեռը և, անցնելով բարձունքներու գծով, կհասնի ՀԱԼՀԱՄԱ և ՄԵՓԻՍՔԱՐՈ լեռներուն (1856-ի սահմանին համաձայն). հետո կդառնա դեպի հարավ, կանցնի ՓԻՐՍԱԿԱՏ լեռան գագաթեն և, ԱԲԱՍ ԹՈՒՄԱՆԵՆ երկու կիլոմետր հարավ, և դառնալով դեպի հյուսիս-արևելք, կհասնի ՔԱՐՀՈՒԼ-ՏԱՂԻ գագաթը. այնտեղեն, նախ ուղղվելով հինգ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք և ապա դեպի հարավ-արևելք, կհասնի ԿՈՒՐԳԵԼ ավանը, կանցնի, ՔՈՒՐԱ գետը ԱԹՍԽՈՒՐԻԵՆ երկու կիլոմետր հարավեն, և, ԳԱՅԱՊԱՇԻ, ՕՐԹԱԹԱՎԻ և ԳԱՐԱԳԱՅԱ լեռներու գագաթներու գծով անցնելով՝ կհասնի ԹԱՓԻՍՔՈՐՍՔԱ լիճը, Մոլիթայի վանքեն անմիջապես հարավ. այս գիծը կանցնի այնպիսի ձևով, որ օսմանյան հողամասին կձգի լճին ա՛յն մասը, որ հարավը կմնա ուղիղ գծի մը, որ Մոլիթա վանքին անմիջական հարավեն կմեկնի հակադիր եզերքի կետի մը, ուր կգտնվի մեկ և կես կիլոմետր հարավ-արևելք՝ լճի հյուսիսային ծայրամասեն և կհասնի ԹԱՎՔՈԹԵԼԻ լեռան. հետո կիջնե դեպի հարավ և կանցնի ՇԱՎՆԱՊԱՏ, ՔԱՐԱԳՈՒՋՈՒ և ՍԱՄՍԱՐ լեռներու գագաթներեն և արևելք դառնալով կանցնի ՏԵՎԵՔԻՐԱՆ լեռնաշղթայի գագաթներեն. հետո կուղղվի դեպի հարավ, անցնելով ԱՂՐԻՔԱՐ, ՊԱՇՔԻՐԱՆ և ՆՈՒՐՐԱՀՄԱՆ լեռներու գագաթներեն։ ՆՈՒՐՐԱՀՄԱՆ լեռնեն հետո, կշարունակե հարավի ուղղությամբ և միշտ անցնելով գագաթներու գծով, կհանդիպի ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ—ԹԻՖԼԻՍ երկաթուղիին, ԱՔՊՈՒԼԱՔ ավանեն հինգ կիլոմետր դեպի արևմուտք։ Այնտեղեն, գագաթներու գծով կհասնի ԽԱՆՎԱԼԻ ավանին, ուրկե, գրեթե ուղիղ գծով, կհասնի ԱԼԱԳՅՈՋԻ ամենեն բարձր գագաթին. և, դարձյալ ուղիղ գծով մը շարունակելով կկտրե ԷՋՄԻԱԾԻՆ-ՍԱՐԴԱՐԱՊԱՏ խճուղին, ԷՋՄԻԱԾՆԵՆ յոթը կիլոմետր արևմուտք գտնվող կետի մը վրա. հետո, այս վերջին քաղաքը յոթը կիլոմետր հեռավորութենեն դառնալով, կհետևի ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ—ՋՈՒԼՖԱ երկաթուղիին հորիզոնական ուղղության մը, մոտավորապես վեց կիլոմետր հեռու այդ երկաթուղիեն, ԲԱՇՔԻԱՐԱՆ ավանեն տասնվեց կիլոմետր հարավ-արևմուտքեն կանցնի այն ճամփայեն, որ այս վերջին ավանը կմիացնե երկաթուղիին. հետո կդառնա դեպի հարավ-արևելք, կանցնի ԱՇԱՂԻ-ԳԱՐԱՊԱՔԼԱՐ գյուղեն մեկ կիլոմետր արևմուտքեն և ՇԱԿԱՊԼՈՒ, ԳԱՐԱԽԱՋ և ԱՇԱՂԻ-ՋԱՆԱԽՋԻ ավաններեն և կհասնի ԷԼՓԻՆՋԱՅ, որուն կհետևի մինչև ԱՐՓԱ ավանը. այս վերջին ավանեն սկսյալ, կմիանա ԱՐՓԱՋԱՅԻ ձորուղիին, կհասնի ՔԱՅԱԼՈՒ ավանը և հետևելով ԳԱԻՏ գետակին կհասնի ԱՔԹԱՓԱՆ լեռան գագաթը. հետո կանցնի ՔԱՐԱԹՈՒՐՆԱ, ԱՐԱՃԻՆ և ԳԱՐԱՆԼԻՔ լեռներու գագաթներեն, կհասնի ՔԵԼԻԱՆՋԱՅԻ զառիվարը, կհետևի անոր ձորուղիին հասնելու համար ԱՋԱՅԻ ավանին հարավեն ԱԼԻՃԻՆԻ ավանը, որ կգտնվի ռուս-պարսկական նախկին սահմանի վրա։ Սահմանագլխի վերջնական ճշտումը պիտի կատարվի տեղվույն վրա, հանձնախմբի մը կողմեն, կազմված՝ երկու կողմերու անդամներեն։

Հոդ. 3. Հայաստանի Հանրապետության կառավարության և Ազըրբեջանի Հանրապետության կառավարության միջև կնքված համաձայնագիրը՝ իրենց հասարակաց սահմաններու ճշտումին համար, պիտի հաղորդվի Օսմանյան կայսերական կառավարությանը։

Հոդ. 4. Օսմանյան կայսերական կառավարությունը, հանձն կառնե օգնություն փութացնել, զենքի ուժով, Հայաստանի Հանրապետության կառավարությանը, այն պարագային երբ այս վերջինը պահանջե, երկրին մեջ կարգն ու անդորրությունը ապահովելու համար։

Հոդ. 5. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանձն կառնե ազդու կերպով հակառակիլ, որպեսզի իր հողամասի սահմաններու վրա որևէ հրոսախումբ չպատրաստվի և չզինվի, ինչպես նաև՝ զինաթափել և ցրվել բոլոր այն հրոսախմբերը, որոնք պիտի գային ապաստանիլ հոն։

Հոդ. 6. Հայաստանի Հանրապետության իսլամ բնակիչներուն կրոնքն ու սովորությունները պիտի հարգվին։ Նորին կայսերական վեհափառության անունը պիտի հիշվի իսլամներու հանրային պաշտամունքի ընթացքին։ Անոնք պիտի վայելեն, տարբեր դավանանքի պատկանող քաղաքացիներու իրավական և քաղաքական իրավունքները։ Անոնք պիտի կարողանան իրենց ցեղին և կրոնքին հատուկ լեզվով դաստիարակվիլ։

Ապահովելու համար պաշտամունքի և բարեգործության կիրարկումը, պիտի կազմակերպվին բարոյական անձնավորությամբ իսլամ համայնքներ, հիմնելու համար մզկիթներ, հիվանդանոցներ և դպրոցներ։ Կրոնական և բարեսիրական հաստատություններու մատակարարումի համար պիտի ունենան անշարժ և շարժուն հասութաբեր ստացվածքներ, որոնք պիտի հանձանձվին հոգաբարձուներու կողմե։

Մուֆթի մը կամ պետ մը պիտի հաստատվի Երևան քաղաքին մեջ, որ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է, և այլ մուֆթիներ պիտի հաստատվին Հանրապետության այլ կենտրոններու մեջ, հոն՝ ուր անոնց ներկայությունը անհրաժեշտ նկատված է։

Այս մուֆթիներու հարաբերությունները Շեյխ-Իվլ-Իսլամության հետ, ինչպես նաև անոնց իրավունքները և առանձնաշնորհումները ճշտված են այս դաշնագրին կցված թիվ 3 Համաձայնագրին մեջ*։

Հոդ. 7. Նկատի ունենալով, որ Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև որևէ դաշնագիր, պայմանագրություն, համաձայնագիր, պաշտոնագիր, համաձայնություն կամ միջազգային այլ վավերագիր գոյություն չունի, բանակցող երկու կողմերը կհամաձայնին կնքելու հյուպատոսային համաձայնություն մը, առևտրական դաշնագիր մը և անհրաժեշտ նկատված այլ վավերագրեր, իրենց իրավական և տնտեսական հարաբերությունները կարգավորելու համար։ Հյուպատոսային համաձայնությունը պիտի կնքվի, ներկա Դաշնագրի վավերացման թվականեն երկու տարվա ընթացքին։ Փոխանցման այս շրջանին, յուրաքանչյուր կողմի ընդհանուր հյուպատոսները, հյուպատոսները և դերհյուպատոսները իրենց առանձնաշնորհումներուն և պաշտոններուն մեջ պիտի վայելեն, Միջազգային ընդհանուր իրավանց հիմունքով, նախապատիվ ազգի վերաբերումը, փոխադարձության պայմանով։ Միջազգային ընդհանուր իրավանց հիմունքներով կնքելի առևտրական դաշնագրի բանակցությունները պիտի սկսին անմիջապես, որ կնքվի ընդհանուր խաղաղությունը մեկ կողմե՝ Թուրքիո, և մյուս կողմե, այս վերջինին հետ պատերազմական վիճակի մեջ եղող ազգերու հետ։ Մինչ այդ, և մինչև 31 դեկտ. 1919 բոլոր պարագաներու տակ, ներկա դաշնագրի թիվ 1 հավելվածով հաստատված առժամյա դրությունը պիտի գործադրվի երկուստեք. կարելի է չեղյալ նկատել 30 հունիսի 1919-են սկսյալ և արդյունքը վեց ամիս վերջ գործադրելի է։

Երկաթուղիով հաղորդակցությունները պիտի սկսին, ներկա Դաշնագրի վավերացված օրինակներու փոխանակումեն վերջ։

Հոդ. 8. Համաձայնող կողմերը հանձն կառնեն իրարու կարելի ամեն դրություն ընծայել, երկաթուղիով փոխադրությանց համար, հաստատելով և կիրարկելով զեղչյալ սակեր։ Մասնավորաբար, երկաթուղիներու և հանրօգուտ այլ շինությանց հատուկ կառուցման, շահագործման կամ հանձանձման նյութերու փոխադրության համար զեղչյալ մասնավոր սակեր պիտի կիրարկվին։ Համաձայնող կողմերու երկաթուղիներու վրա վագոններու և վայրաշարժներու փոխանակությունը պիտի կատարվի այս մասին հաստատված միջազգային սկզբունքներու հիման վրա։

Համաձայնող կողմերը անմիջապես խոսակցությանց պիտի սկսին, նախորդ տրամադրությանց մանրամասնությունները ճշտելու համար։

Հոդ. 9. Մինչև Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային թղթատարական և հեռագրական միության, թղթատարական և հեռագրական հարաբերությունները, Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև պիտի վերահաստատվին, ներկա Դաշնագրի վավերացված օրինակներու փոխանակումեն հետո, միջազգային միության թղթատարական և հեռագրական օրենքներու համաձայնությանց և հասկացողությանց հիման վրա։

Հոդ. 10. Համաձայնող կողմերու բնակիչները և համայնքները որոնք, սահմանին մյուս կողմը գտնվող կալվածներու վրա սեփականատիրության և օգտագործումի իրավունքներ ունին, պիտի կարողանան օգտագործել, շահագործել կամ վարձու տալ, հանձանձել կամ ծախել, իրենք՝ և կամ իրենց փոխանորդները։ Բացի այն պարագային, երբ խնդրո առարկա է հանրօգուտ ձեռնարկ մը, ոչ ոք պիտի զրկվի իր սե-

* Դաշնագրի հավելվածները չենք հրատարակել։

փականատիրության իրավունքեն, վերոհիշյալ կալվածներու վրա. այդ պարագային, պիտի ստանա համապատասխան հատուցում։

Ոչ մեկ արգելք պիտի դրվի վերոհիշյալ բնակիչներուն և համայնքներու ներկայացուցիչներուն, անցնելու սահմանը, երբ ներկայացնեն ազատ անցքի թուղթը, որ իրենց պիտի տրվի, իրենց բնակավայրի իրավասու իշխանությանց կողմե և պիտի վավերացվի՝ մյուս կողմի համապատասխան իշխանությանց կողմե։

Սահմանեն անցքին և սահմանամերձ շրջաններու երթևեկին համար դյուրություններ և մասնավոր առանձնաշնորհումներ պիտի ընծայվին։

Նախորդ տրամադրությանց մանրամասնությունները կկարգավորվին ներկա Դաշնագրի թիվ 2 Հավելվածով։

Հոդ. 11. Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանձն կառնե, ամեն ճիգ ի գործ դնել, պարպելու համար ԲԱՔՈՒ քաղաքը գտնվող հայկական ուժերը, ներկա Դաշնագրի ստորագրությունեն անմիջապես հետո և ապահովել՝ որ այս պարպումը որևէ բախումի տեղի չտա։

Հոդ. 12. ԲՐԵՍՏ-ԼԻՏՈՎՍԿԻ մեջ, Օսմանյան կայսրության ու իր դաշնակիցներուն և Ռուսիո միջև կնքված խաղաղության հավաքական և հավելվածական Դաշնագիրներու տրամադրությունները, որոնք չեն հակասեր ներկա Դաշնագրին, ի զուր են համաձայնող կողմերու համար։

Հոդ. 13. Ներկա Դաշնագրով ճշտված սահմաններեն դուրս եղող հողամասերու վրա գտնվող երկու երկրներու բանակները պիտի քաշվին, անմիջապես որ դաշնագիրը ստորագրվի։

Հոդ. 14. Ներկա դաշնագիրը պիտի վավերացվի և վավերացված օրինակները պիտի փոխանակվին Կոստանդնուպոլսո մեջ, մեկ ամսվա ժամանակամիջոցին և կամ, եթե կարելի է ավելի շուտ. ի զորու պիտի դառնա փոխանակության օրը։

Վերոգրյալ տրամադրություններու հիման վրա, լիազորները ստորագրեցին Խաղաղության և Բարեկամության ներկա Դաշնագիրը և կնքեցին իրենց կնիքով։

Պատրաստված՝ երկու օրինակով, Բաթում 4 հունիսի 1918։

Ստորագրված՝

ԽԱԼԻԼ ԱԼ. ԽԱՏԻՍՈՎ

ՎԵՀԻԲ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
ՊԱՊԱՋԱՆՈՎ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կնքված՝ մեկ կողմե Ամերիկյան օգնության վարչության և մյուս կողմե՝

Ա.— Հայ ազգ. պատվիրակության նախագահին

Բ.— Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահին միջև։

Նկատելով, որ Հայաստանի Հանրապետությունը և Հայ ազգ. պատվիրակությունը դիմած են Ամերիկայի Միացյալ Նահանգներու, Ֆրանսիայի և Մեծն Բրիտանիո, խնդրելով սննդական արտադրություններ՝ խափանելու համար սովը, որ ավեր կգործե Թրքահայաստանի և ռուսական Հայաստանի բնակչության մեջ, և նաև՝ սատարելու հայ կառավարություններուն կարգի պահպանման և անիշխանության տարածումը արգիլելու համար։

Նկատելով, որ Ամերիկյան օգնության վարչությունը կփափագի սննդական այս արտադրության մեկ մասը հայթայթել և հետևաբար ծրագրված է նավու միջոցով ղրկել հինգ հազար թոն ալյուր, որ ապրիլ ամսվա ընթացքին պիտի հանձնվի, և, եթե կարելի է, շարունակել նման հանձնումներ կատարել մայիս, հունիս և հուլիս ամիսներուն ընթացքին, և

Նկատելով, որ Ամերիկյան օգնության վարչությունը, եթե անհրաժեշտ է, կուզե ընդարձակել վարկը նման սննդեղեններու գնման համար, և, նկատելով որ նման վարկեր կտրվին այնպիսի պայմաններով, որոնք Ամերիկյան, օգնության վարչության հավանությանը արժանանան.

ՀԵՏԵՎԱԲԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՑԱՑԱՎ

1. Որ Հայաստանի Հանրապետությունը և Հայ. ազգ. պատվիրակությունը իրենք, և իրենց հաջորդներուն համար զորս կրնան ունենալ Հայաստանի կառավարության և Հայաստանի որևէ մեկ մասին համար, պիտի ընդունին ստանձնել նավահանգիստներու մեջ, Ամերիկյան օգնության վարչության կողմե ղրկված այն բոլոր սննդեղենները, որոնք պիտի ղրկվին Հայաստան. այս արտադրությանց համար Նյու Յորքի մեջ պիտի վճարեն դոլարով, իսկ եթե չկարողանան՝ Ամերիկյան օգնության վարչությանը պիտի տան կառավարական հանձնառություններ, որոնք Ամերիկյան օգնության վարչությունը գոհացնող բնույթ պետք է ունենա։ Այն պարագային, երբ Ամերիկյան օգնության վարչությունը կարողանա օգտագործել տեղական դրամանիշը ծախքերու վճարման համար, կամ այլապես, կառավարական հանձնառությամբ կատարվելիք որևէ ձևի վճարման փոխարեն, Հայաստանի Հանրապե-

տությունը կամ Հայ. ազգ պատվիրակությունը, պիտի կարգադրեն վերոհիշյալ արտադրություններու վճարումը տեղական դրամանիշով։

2. Ամերիկյան օգնության վարչության գործակալները Հայաստանի Հանրապետության և Հայ. ազգ. պատվիրակության հաշվեկշիռներ պիտի ներկայացնեն, որոնք վերջնական և եզրափակիչ պիտի նկատվին, ինչ որ կվերաբերի անոնց գումարին, գնին և հանձնումին այն բոլոր արտադրությանց, որոնք հայթայթված են ներկա պայմանագրության հիման վրա։ Հայաստանի Հանրապետությունը և Հայ ազգ. պատվիրակությունը պիտի վճարեն հանձնումի հետ կապված բոլոր ծախքերը, ներառյալ՝ նավահանգստի և ցամաքահանումի ծախքերը։ Հայթայթված արտադրությունները պիտի հանձնվին գնով մը, որ կներկայացնի Միացյալ Նահանգներու մեջ գնման գինը, հավելյալ՝ փոխադրության և այլ բոլոր ծախքերը, բավարար հավելումով մը՝ ապահովելու համար Ամերիկյան օգնության վարչությունը կորուստներու դեմ։

3. Հայաստանի Հանրապետությունը և Հայ ազգ. պատվիրակությունը կընդունին, որ եթե կարողանան արտածումի դյուրություններ և կամ միջազգային փոխանակության այլ ձև մը գտնել, զանոնք պիտի հայթայթեն Ամերիկյան օգնության վարչության, այս վարկեն զեղչվելու պայմանով։ Ընդհանրապես, Ամերիկյան օգնության վարչությունը իրավունք պիտի ունենա պահանջելու, վարկերու շուրջ, նույն այն պայմանները, որոնք կրնան ուրիշներու տրվիլ, սննդեղեններու ներածման համար, կանխիկ կամ արժեթուղթերու փոխանակությամբ։

4. Այս ձևով հայթայթված սննդեղենի արտադրությանց բաժանումը պետք է կատարվի արդարությամբ և ենթակա՝ Ամերիկյան օժանդակության վարչության ընդհանուր հավանության.

8 ապրիլ 1919

Վկաներու առջև կողմերը ստորագրեցին ստորև.

Ամերիկյան օգնության վարչության կողմե՝
ՀԵՐԲԵՐԹ ՀՈՒՎԸՐ

Ընդհանուր տնօրեն
Հայ. ազգ. պատվիրակության
լիազորված ներկայացուցիչ՝
ԳՈՂԱՍ ԴՈՒԲԱՐ

Հայաստանի Հանրապետության
լիազորված ներկայացուցիչ՝
Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ

Վկա՝
ՐԱՊԸՐԹ Ա. ԹԱՅԹ

ԶՈՐ. ՀԱՐԲՈՐԴԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ)

Երևան. 29 սեպտ. ժամը 3-ին էջմիածնից օթոմոբիլով Երևան ժամանեց գեն. Հարբորդը։ Գեներալին ընդունեցին վարչապետը, նախարարական ամբողջ կազմով, Վրաստանի, Ազրբեջանի դիպլոմատիական, ամերիկյան, անգլիական, ֆրանսիական դինվորականի ներկայացուցիչները։ Ներկա էին նույնպես քաղաքապետը, քաղաքապետը, բարձր զինվորականությունը և հայ ու թաթար ազգաբնակչության ներկայացուցիչները։ Չհասած Զանգվի կամրջի մոտ շինած կամարին, գեն. Հարբորդը իջավ օթոմոբիլից։ Նրան դիմավորելու առաջացավ ամերիկյան զինվորական ներկայացուցիչը, որը կարճ ճառով ողջունեց գեն. Հարբորդին։ Հետո նրանք մտան կամար, նրանց դիմավորեց վարչապետ Ա. Խատիսյանը, որը ողջունեց նրա գալուստը, շնորհակալություն հայտնեց Ամերիկային նրա՝ հայ ժողովրդին ցույց տված օգնության առթիվ և հայտնելով կառավարության կատարյալ պատրաստակամությունը աջակցելու նրա միսիան իրագործելու գործում, արտահայտեց հայ ժողովրդի բաղձանքը տեսնել անկախ և միացյալ Հայաստանը Ամերիկյան մանդատի տակ։

Պատասխան ճառով գեն. Հարբորդը շնորհակալություն հայտնեց Հայաստանին, նրա ցույց տված ընդունելության համար և ավելացրեց, որ «Ամերիկան հետաքրքրվում է Հայաստանով և նրա ճակատագրով, ապացույց իմ Հայաստան գալս։ Ես եկել եմ ոչ թե հաճույքի, այլ իմ վրա դրված պարտքը կատարելու։

Իմ միսիայի բոլոր անդամները յուրաքանչյուրն առանձին ունի իր պարտականությունները և պիտի աշխատի այդ շրջանակում։ Ես նույնպես իմ երկու օրվա ներկայության աշխատանքները պարտավոր եմ զեկուցել նախարարներին անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար»։

Ճառից հետո վարչապետը ներկայացրեց գեն. Հարբորդին ներկա եղող անձանց։ Հետո երկուսով օթոմոբիլ նստելով ուղղվեցին դեպի մայրաքաղաք։

Քաղաքը զարդարված էր հայկական, ամերիկյան դրոշակներով, գորգերով և կանաչներով։ Սկսած Զանգվի կամրջից ժողովուրդը խոնվել էր ամբողջ ճանապարհին։ Աստաֆյան փողոցում կանգնած էին զորախմբերն ու որբերը։ Առջևից գնում էր քաղաքապետը ազգային տարազով և 4 ամերիկյան դրոշակ ունեցող ձիավորներով։ Նրանց հետևում էին օթոմոբիլով գեն. Հարբորդն ու վարչապետը, ապա հետևակ ու հեծյալ զորքը, նրանցից հետո դիմավորելու եկած բոլոր պաշտոնական ներկայացուցիչները։

Գեն. Հարբորդի օթոմոբիլը երևալուն պես, որբերի և փողոցի եր-

կու կողմերում հավաքված խուռներամ ժողովրդի կողմից պայթեցին «կեցցեները»։ Նրա համար պատրաստած բնակարանը հասնելիս, զինվորական երաժշտախումբը նվագեց հայկական հիմնը, որից հետո գեներալը ընդունեց՝ զորանցք, շնորհակալություն հայտնեց իր պատվին եղած ընդունելության և զոհունակությունը զորքերի կարգապահության համար և մոտեցավ ու նայեց դիմավորող որբերին։

Երևան 29 սեպտ. Այսօր առավոտյան 7 օթոմոբիլներով Սարիղամիշ հասավ գեներալ Հարբորդը, մի գեներալի, 7 սպաների և 100 հոգուց բաղկացած զինվորական պահակախմբի ուղեկցությամբ։

Գեն. Հարբորդը իջևանեց սպայական ժողովատեղին, ուր ընդունվեց զինվորական զորանցք և տեղական ազգաբնակչության ողջույնները։ Ընդունելությունից զոհ երկաթուղով մեկնեց Կարս։

Գեն. Հարբորդի գնացքը, առավոտյան ժամը 8-ին հասավ Կարսի երկաթուղային կայարանը։ Գնացքը դիմավորվեց բոլոր ամրոցներից եղած 21 թնդանոթահարվածներով։

Գեներալը ընդունեց ողջույններ և բարեմաղթություններ քաղաքագլխի կողմից։

Տեղական ազգաբնակչության և վարչությունների ներկայացուցիչներին ընդունելուց հետո գեն. Հարբորդը օթոմոբիլով մեկնեց զորահրամանատարի մոտ, ուր ճաշի էր հրավիրված։

Խուռներամ բազմության թափորը Գեներալին մեծ օվացիաներ էր անում, իսկ զորքը «ուռաներով» ընդունում։

Գեներալին ուղեկցում էին պետական ներկայացուցիչներ։

Հայ. Ձեղ. գործ.

ՕՐԵՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաստատված է 1920 թ. հունիսի 10-ին, ճամանայն Հայաստանի խորհրդարանի 1920 թ. հունիսի 5-ի որոշմի։

1. Հայաստանի Հանրապետության արդյունաբերական ուժերը և տնտեսությունը վերականգնելու և հանրապետության թղթադրամների ֆոնդն ապահովելու նպատակով կնքել 20 միլիոն Ամերիկյան դոլարի անվանական գումարի պետական փոխառության 6 տոկոսով։ Փոխառության 75 տոկոսը հատկացնել վերոհիշյալ նպատակին. իսկ 25 տոկոսը գործադրել պետական կարիքներին համար։

2. Սույն փոխառությունը մտցնել հանրապետության պարտքերի մատյանը Հայաստանի Անկախության փոխառության անունով։

3. Փոխառության պարտաթղթերը (օբլիգացիաները) բաց թողնել 10, 25, 50, 100, 500, 1000 դոլար արժողությամբ ներկայացնողին վճարելու պայմանով։

4. Պարտաթղթերի տարեկան եկամուտը սահմանել 6 տոկոս, հաշվելով 1920 թ. հուլիսի 2-ից, իսկ վճարումն սկսել 1921 թ. հունվարի 2-ից և վճարել կես տարին մի անգամ։

5. Ամբողջ փոխառությունը աստիճանաբար մարել ոչ ուշ քան մինչև 1930 թ. հուլիսի 2-ը, սկսելով 1925 թ. հունվարի 2-ից և ամեն տարի վիճակ հանելով հուլիսի 1-ին և հունվարի 2-ին։ Վիճակով ելած պարտաթղթերի արժեքը վճարել ելած օրից 6 ամիս հետո։ Փոխառությունը մարելու նպատակով, սկսած 1925 թ. հունվարի 2-ից, հատկացնել փոխառության անվանական գումարի 8,3 տոկոսը առաջին 11 կիսամյակներից ամեն մեկի ընթացքում և 8,7 տոկոսը 12-րդ կիսամյակում։

6. Կտրոնների և վիճակով ելած պարտաթղթերի դրամագլխի վճարումը Հայաստանում կատարել պետական բանկում և նրա բաժանմունքներում դոլարներով կամ ռուբլիներով ըստ օրվա կուրսի, իսկ եվրոպական, ամերիկյան և ասիական պետությանց մեջ, վճարել ֆինանսների նախարարի մատնանշած հիմնարկություններում տեղական վալյուտայով և նույնպես ըստ օրվա կուրսի։

7. Պարտաթղթերի արժեքը դոլարներով չվճարելու դեպքում, տեղական վալյուտայի և դոլարի փոխհարաբերությունը որոշվում է օրվա կուրսով փոխառության բաժնեգրությունը սկսելու ժամանակ։

8. Մինչև 1930 թ. հուլիսի 2-ը կառավարությունը սույն փոխառու-

թյան ամբողջական կամ մասնակի վերագնում չպետք է կատարե, ինչպես նաև պետք չէ որևէ փոփոխության ենթարկե նրան։

9. Սույն փոխառության պարտաթղթերի կտրոնները, ինչպես նաև մարվելու ենթակա պարտաթղթերը իրենց վճարման ուժը պահում են 10 տարվա ընթացքում սկսած սույն օրենքի նախատեսած հատուցման օրից։

10. Հայաստանի Հանրապետության սահմաններում սույն փոխառության կտրոնները ընդմիշտ ազատ են ամեն տեսակի տուրքերից։

11. Ներկա փոխառության պարտաթղթերը տեղավորել ֆինանսների նախարարի մատնանշած բանկային տների, վարկային և այլ հիմնարկությունների միջոցով նախարարի մշակած և Նախարարների խորհրդի կողմից հաստատված պայմաններով։

12. Ֆինանսների նախարարը փոխառությունը բաց թողնելու պես որոշում է ներկա փոխառության պարտաթղթերի և կտրոնների վայելած իրավունքներն ու առավելությունները զանազան վճարումների (օրինակ մաքսային, պետական և այլ տուրքերի) ժամանակ։

13. Ներկա փոխառության պարտաթղթերի տոկոսները, ինչպես և նրա կնքման հետ կապված սույն տարվա ծախսերը հոգալ փոխառության գումարից, իսկ հետագա տարիների ընթացքում սույն փոխառության աստիճանական մարումը և տոկոսների հատուցումը կատարել պետական ելևմտացույցի մասին գոյություն ունեցող կանոնների հիման վրա։

14. Ներկա փոխառությունը ապահովել Հայաստանի Հանրապետության ամբողջ գույքով։

Նախարարապետ
ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Ֆինանսների նախարար
Ա. ԳՅՈՒԼԽԱՆԴԱՆՅԱՆ

Նախարարների խորհրդի գործերի կառավարիչ

Դիվանի վարիչ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ՝

ԴԵՊԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՇԵՆ ՀԵՌԱԳԻՐ

Ստացված պ. Ա. Խատիսյանի անվամբ Բաքումում

Հունիսի 21-ի 1920 թ.

Միջկուսակցական մարմինը հետևյալ կուսակցությունների, Հայ ժողովրդական կուսակցություն, Հայաստանի Սոցիալ-Դեմոկրատ բանվորական կուսակցություն, Հայ ռամկավար կուսակցություն և Անկուսակցականների միություն, գտնելով որ Հայաստանի անկախության փոխառությունը, 20 միլիոն դոլարի միանգամայն անհրաժեշտ է Հայաստանի ֆինանսական և տնտեսական դրության բարելավման համար, ամեն կերպ պաշտպանում է կառավարությունը այդ փոխառության իրականացման գործում, և դիմում է բոլոր հայերին առաջարկելով եռանդուն մասնակցություն ցույց տալ նրա տարածման մեջ։

Լիազորներ
Հայ ժողովրդական կուսակցության
ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայաստանի Ս. Դեմոկրատ բանվոր. կուսակցության
ԻՇԽԱՆՅԱՆ, ԱՆԱՆՈՒՆ

Հայ ռամկավար կուսակցության
ԴԱՐԲԻՆՅԱՆ, ՇԱՏՎՈՐՅԱՆ

Անկուսկցականների միության
ԱԲԵՇՅԱՆ, ՉԱԼԽՈՒՇՅԱՆ

Լ. ՇԱՆԹԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս հատորի առաջին տպագրությունը պատրաստելիս, դրանից առաջ և վերջը, բանից խնդրել եմ Լևոն Շանթին, որ գրի առնե իր հուշերը Մոսկվայի բանակցությունների մասին: Միշտ խոստանում էր, բայց մինչև մահն էլ խոստումը չկատարեց: Ինչ որ կարողացա «պոկել»՝ հետագա երկու նամակներն են, որոնց մեջ հստակ կերպով արտահայտված է Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահի վերաբերումը դեպի բոլշևիզմը և դեպի հարաբերությունները բոլշևիկների հետ:

Բուն նյութի հետ առնչություն չունեցող կետեր կան նամակներում, որոնք հետաքրքրական են Շանթի կենսագրության տեսակետից, ուստի ավելի առանց հապավումի:

Ա

Սիմոն ջան, ահա քանի օր է ուշացուցի նամակիդ պատասխանը հուսալով որ կերպ մը տրամադրեմ ինծի և գոնե համառոտ բան մը գրեմ քեզի քու ուզած հարցի մասին. բայց վերջապես եկա այն տխուր եզրակացության, որ անկարող եմ, այս վայրկյանին բոլշևիկներով ու բոլշևիկյան տխմարություններով զբաղվելու բնավ գլուխ չունիմ. հիմա ես իմ գլխիս մեջ ունիմ իմ սեփական բոլշևիզմը. այնպես խրվեր եմ պարտքերու, անփողության, վիճակի անորոշության և օրվա ապրուստի դժվարություններու մեջ, որ չգիտեմ ինչպես եմ տակեն դուրս գալու. մեր դպրոցի վիճակը խախուտ է, վճարածը չնչին ու անկանոն. իսկ իմ բոլոր ձեռնարկներես ու ծրագիրներես ոչինչ դուրս չեկավ, տված հայտարարությունս իմ անպետք աշխատանքներուս վրա նոր անպետք աշխատանք մը ավելցուց՝ տեղեկատու և խորհրդատու Բյուրու: Երբ օր մը գալու ըլլա այն երջանիկ ժամանակը, երբ հնար ունենամ քիչիկ մը աղատ գլուխ ունենալու, և ուտելու հացեն ու դպրոցի վճարեն դուրս ուրիշ բաներու մասին ալ մտածելու, կնստիմ ու կգրեմ մեր դեպի Մոսկվա առաքելությունը և իմ տպավորություններս, իհարկե, ոչ իբրև պատասխան ստախոս ու ցած Չիչերիններու ու Չիչերինիկներու, այլ անկախ աշխատանք մը ինքն իրեն համար, իբրև հուշեր:

Հիմա քու հարցերուդ պատասխանեմ մեյ-մեկ նախադասությամբ: 1. *Մեր պատվիրակությունը ուղարկվեցավ, որովհետև բոլշևիկները արդեն տեր էին Ազրբեջանին և անոնց հետ լեզու մը գտնելը դարձել էր անհրաժեշտ թե վրացիներուն համար և թե մեզի.* ռուսը նորեն եկեր էր Կովկաս: 2. *Մենք Մոսկվա հասանք այն ժամանակվա հաղորդակցության միջոցներու հնարավոր արագությամբ:* 3. *Կարախանի հետ համաձայնության եկանք բոլոր կետերու վրա. դաշինքը չստորագրվեցավ, որովհետև Բաքվի հայ, վրացի և թաթար կոմունիստները բոլոր միջոց-*

ներով սկսան ճնշում բանեցնել Մոսկվայի վրա, պահանջելով որ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Թուրքական հողեր են, անվիճելի Թուրքական և Հայաստանի հետ միացնելու խոսք անգամ լինել չի կրնար։ Մոսկվան 1–2 ամիս ժամանակ գործ դրավ իր Բաքվի ընկերներու հետ համաձայնության մը գալու և տեսնելով որ անկարելի է, որոշեց բանակցությունները տեղափոխել Կովկաս և ուղարկեց Լեգրանը Բաքու և հոնկե Երևան։ Մենք ո՛չ թե ուշացուցած կամ խանդարած ենք, այլ շարունակ դիմած ու պահանջած ենք, որ շտապեն, որ վերջապես պատասխան մը տան, որ մենք գործ ունինք և այդքան երկար Մոսկվա նստիլ չենք կրնար։ 4. Այդ է մեր ուշացման պատճառը. մեր ետ դալն ալ կատարված է այն ժամանակվա հնարավոր արագությամբ. կրնայինք Բաքվով շատ ավելի արագ տեղ հասնիլ, բայց մենք չուզեցանք։ 5. Լեգրանը անձնապես ոչ մեկ դեր չունի, հոն ներսը իրենց մեջ չգիտեմ, թեև ներսն ալ կարծեմ կարևորություն ունեցող դեմք մը չէր. մեզի հանդեպ խողովակ մըն էր, որ կկատարեր կենտրոնեն եկած հրահանգները. հարցերու ըմբռնման մեջ նույն դիրքը ուներ, ինչ-որ ուներ Մոսկվան մեզի դեմ. համաձայնության գալու ջանք մը, Հայաստանեն Թուրքիա անցքը բանալու ջանք մը։ 6. Լեգրանի հետ բանակցողը եղեր է մեր պատվիրակությունը, որը սակայն մինչև խորհրդակցություններ է ունեցեր կառավարության հետ, իսկ հիմնական պայմանները ստորագրելնես առաջ կառավարական խորհուրդին ներկա են եղած և իրենց հավանությունն են տված բոլոր կուսակցություններու ներկայացուցիչները։ Սխա՛լ է թե համաձայնության չեկանք։ Լեգրանի հետ լրիվ համաձայնություն գոյացած է. և երկու կողմեն բոլոր ձևականություններով ստորագրված է. և՛ հիմնական համաձայնագիրը, և՛ երկու գաղտնի հավելվածները. դեռ քեզի ալ ենք կատարեր երկու պատվիրակություններս միասին մեր աշխատանքներու հաջող ավարտման առիթով։ Լեգրանը առավ մեր համաձայնագիրը և գնաց Բաքու, «ամեն ջանք ի գործ դնելու», որ ընդունիլ տա իրենց Բաքվի ընկերներուն մեր փոխադարձաբար ընդունած կետերը. ուրկե ետքը մեր դաշնագրությունը պետք է ստանար մեր կառավարություններու վավերացումը և պետք է հայտարարվեր։ Եվ այդ բոլորը դարձավ ավելորդ Կարսի անկումով։ 7. Ո՞վ է այդ Ա. Կարինյանը. գրական հետաքրքրություններով և «Հարուստ» Մոսկվայի մոտերը ապրող երիտասա՞րդ մըն էր. եթե ան է, բարեկամ էր մեզի, իր կողմեն վատ ոչին չեմ նկատած. արդեն վատ ի՞նչ կրնար ըներ. խոսք տանի՞լ-բերել. մենք դիտմամբ մեր բոլոր քարտերը բաց էինք պահած. իսկ այն քարտերը որ բանալ չէինք կրնար, չէինք բացած և ոչ մեկուն։ Այդ անունը կա հիշողությանս մեջ, բայց չեմ հիշեր, թե ով է։ Եթե Բաքվի խումբին կպատկաներ՝ կրնա իրենց ժողովներուն մեջ իր դերը ունեցած ըլլալ։ Ահա՛, սիրելի՛ս, քու հարցարանիդ կարճ պատասխանները, չգիտեմ բանի մը պիտի ծառայեն թե ոչ, այդ հում վիճակին մեջ. ապահով եմ սակայն որ մնացածը դուն կեփես։

Մեջընդմեջ գրե՛ ինծի, ի՞նչ աստիճանի լրջություն ունի Փարիզի մեջ օրաթերթ մը հրատարակելու Բյուրոյի մտադրությունը, քանի մը կողմեր լսեցի։

Այլև պիտի խնդրեի քեզմե անգամ մը Խատիսյանեն տեղեկանալիր ի՞նչ եղավ Մարկոսյանի կտակի հարցը, արժի՞ որ դեռ հույս կապեմ այդ խնդրին, թե ապարդյուն աշխատանք է. կա՞ այդ կտակի գործադրությունը, որևէ մեկը մինչև հիմա ուսե՞ր է այդ հաշվով. 1924–25 թվին որևէ մեկը ընդունվե՞ր է, իբրև նոր սան. և վերջապես առաջիկա տարվան համար ընդունելություն կա՞. խելքի մոտի՞կ է, որ իմ տղաս ընդունին ըլլա Սուրենը,— բժշկություն—ըլլա Վիգենը — էլեկտրական էնժինիոր —։ Խոսե՛ անգամ մը Խատիսյանի հետ և գրե՛ ինծի քու մտածումը։ Ես արդեն հույսս կտրեր էի մեր անցած տարվան ըրած դիմումեն, երբ Խատիսյանը Մարսել եղած միջոցին նորեն հույս ձգեց մեջս. և հիմա չգիտեմ ինչ մտածեմ։

Շատ ու շատ բարևներ քեզի, տիկնոջդ ու մեր ընկերներուն։

Համբույրներով՝ ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

1925 մայիս 20, Մարսել

Հ. Գ. Աշոտը հոսկե անցնելու ժամանակ ըսեր է, որ դուն մեզի ուղարկելու ես իմ լուսանկարը՝ եթե ունիս ձեռքդ՝ ղրկե՛. տղաքս կխնդրեն։

Բ

Սիրելի՛ Սիմոն, ամենեն առաջ կետ-կետ պատասխանեմ տված հարցերուդ, թեև ատոնցմե մեկ քանիին կարծեմ անցած նամակիս մեջ պատասխանած եի։

1. Մենք Վլադիկովկաս հասանք թե չէ ներկայացանք տեղի բոլշևիկյան բարձր իշխանության, հասկցուցինք մեր ով և ինչացու ըլլալը և խնդրեցինք որ մեզի վագոն տրամադրվի. որովհետև այդ երջանիկ օրերուն բոլշևիկյան թագավորության մեջ մեր պրդի իմաստով ո՛չ գնացքներ կային կանոնավոր երթևեկով, ո՛չ ճամփորդի իր ազատ կամքի, ոչ ալ գնովի տոմսակով, ոչ ալ երթևեկող գնացքներուն մեջ տեղ ու վագոն. տեղ ունենալու համար կառավարութենեն պետք էր հատուկ իրավունք և կարգադրություն. մինչև Մոսկվա հեռագրվեց, մինչև պատասխան եկավ, մինչև վագոնի կարգադրություն եղավ, անցան քանի մը օրեր. եթե մենք ալ մեր քեֆի համար կիրակի օր մը ավելի մնացինք կամ պակաս, ան ալ արդեն չեմ հիշեր։ Նույն պատմությունը նաև Ռոստով. հոն մեկ-երկու օր գուցե կարողանայինք ավելի արագ շարժ-

վել. Տերտերյանի եղբայրը նոր մեռել էր տիֆեն և ընկերս պետք է անդամ մը իրենց գյուղը երթար ու գար։ Բայց այդպես օր մը ավելի շուտ կամ օր մը ավելի ուշի հարցը չկար մեր առջևը դրած. մենք ո՛չ վայրկյան մը ավելի շուտ հասնելու տենդն ենք ունեցեր, ո՛չ ալ ավելորդ ժամանակ ենք վատներ, և ընդհանուր առումով մեր դանդաղ կամ արագ շարժվիլը մեզմե կախված չէ եղեր, այլ բոլշևիկյան կարգերեն։ Պետք չէ մոռնաս, որ Հյուսիսային Կովկասը այդ օրերուն Մոսկվայի հետ սոլիտ կերպով կապված երկրամաս մը չէր։ Այս բոլորը ես գրեցի քեզի՛ համար. իմ կարծիքովս բոլշևիկյան այդ կարգի «ամբաստանություններուն» պատասխանելը զուր ժամավաճառություն է։ Ի՞նչ կարևորություն ունի, գիցուք շաբաթ մը ավելի շուտ հասած ըլլայինք. ի՞նչ էր փոխվելու. չէ՞ որ մեր հասնելեն ետքը ամբողջ երկու ամիս պարապ նստեցուցին մեզի այդ մեծապատիվ բոլշևիկները իրենց ավերակ Մոսկվային մեջ. շաբաթ մը ավելի պիտի նստած ըլլայինք՝ ահա՛ բոլոր տարբերությունը։

2. Մեր կառավարությունը մեզի իբրև տիրեթիվ տված էր երեք որոշում. ա. ռուսները պետք է ճանչնան մեր անկախությունը և զոնե սկզբունքով հակառալ ոչինչ չունենան թուրքական մասերու միացմանը մեր հողին. բ. բացարձակապես պետք է հարգեն մեր ազատությունը և մեր ներքին գործերուն չի պիտի խառնվին, ուրիշ խոսքով կոմունիզմի պահանջ պետք չէ ըլլա և գ. Զանգեզուրն ու Ղարաբաղը պետք է մրտնեն հայկական սահմաններուն մեջ. ծայրագույն պարագային համաձայնիլ Ղարաբաղի խնդիրը հանրահարցի միջոցով վճռելուն։ Այս երեք կետերն ալ ռուսները անմիջապես ընդունեցին շատ թեթև առարկություններով. անոնց համար թուղթն ու ստորագրությունը երբեք կարևորություն չէ ունեցած. նոր էին ստորագրեր վրացիներու հետ դաշինքը և մեր իսկ ներկայության կխնդային այդ դաշինքին վրա, «այո՛, ամսվան մը համար», ինչպես կըսեին կես կատակ, կես լուրջ։ Եվ մենք արդեն գիտեինք, որ 9-րդ թե՞ 11-րդ — լավ չեմ հիշեր — բանակը շարժման մեջ էր դեպի Վրաստան. լեհական պատերազմն էր, որ հետաձգեց Վրաստանի վրա հարձակումը։

3. Ռուսներու կողմեն մեզի առաջարկ չէ եղած Լեգրանի հետ ճամփորդելու մասին։ Եթե ըլլար ալ մենք չէինք ընդուներ. մենք միշտ պահեր ենք մեզի իբրև անկախ երկրի մը անկախ դեսպանություն և ո՛չ մեկ պայմանով Լեգրանի մը թևարկության տակը չէինք մտներ։ Իսկ ետ դառնալու որևէ հապճեպ չունեինք այդ աստիճանի. մենք մեր դերը արդեն ավարտած կհամարեինք, բոլոր էական խնդիրներու շուրջ մանրամասն զեկուցումներ ղրկած էինք մեր կառավարության և կկարծեինք, որ Լեգրանի հետ մեր կառավարությունը ինքը կխոսի Հայաստանի մեջ՝ մեր արտաքին գործերու նախարարը, կամ անոր փոխանորդը։ Ատկե զատ Նախիջևանով անցնիլ կցանկայինք՝ մեր կառավարության համար

քանի մը միլիոն բերելու հաշիվներ ունեինք, այլև ընկերներ ունեինք սահմանը անցնելու. կային նույնպես ուրիշ մանր հարցեր։ Նորեն այս բոլորը կգրեմ միայն քեզի՛ համար. թե չէ՝ դեպի դուրս տալիք պատասխանս մեկ է. Ռուս կառավարության կողմե մեզի առաջարկած եղած չէ, և եթե այդ առաջարկը եղած ալ ըլլար՝ չէինք ընդունելու, պետք չունեինք ենթարկելու ինքզինքիս այդ կարգի դիպլոմատիկ խաղերու։ Իբրև ի՞նչ պիտի մտնեինք Լեգրանի վագոնները, իբրև դաշնակի՞ց՝ չէինք, իբրև գերի՞, իբրև պատա՞նդ։ Սիրելիս, այս «նրբությունները» իհարկե չեն կրնար հասկնալ մեր բոլշևիկ ազբարները, որոնք անկախությունը ո՛չ ճաշակած են և ո՛չ ցանկացած. բայց մեր մեջ շատ ուժեղ էր այդ գիտակցությունը և այդ քաղաքացիական հպարտությունն ու քաջաքականությունը։

4. Թիֆլիսեն մինչև Մոսկվա մեզի հետ էին Երզնկյանն ու Փիրումյանը, մեր «դելեկացիոնը» վագոնին մեջ, ընկերներու նման, քանի մը դաշնակցական շատ մեղմացուցած քննադատություններե դուրս իբրև մեզի գաղափարակից. կուգային հատկապես Ղարաբաղը Հայաստանին կցելու համար աշխատելու. իբրև թե. պարզ էր, որ կուգային բոլշևիկներու հետ լեզու գտնելու, այն ժամանակ կմտածեի իրենց ղրկող մարմիններու կողմեն. իսկ հիմա կմտածեմ պարզապես իրենց անձնական կաշին։ Մոսկվա հասնելնուս պես իրարմե զատվեցանք. սկիզբները մեկ-երկու անդամ կուգային մեր դեսպանատունը և կհաղորդեին մեզի «բոլշևիկյան տրամադրությունները», շատ երկրորդական ու անմեղ հաղորդագրություններ, քիչ-քիչ ատ ալ կտրվեցավ. և անոնք սահեցան վերջնականապես բոլշևիկյան ծովին մեջ. ձուկը գտեր էր իր տարրը. և մեզի հետ այլևս ոչ մեկ կապ. վերադարձեր են չգիտեմ երբ և ինչպես։

5. Ես Լեգրանի հետ ո՛չ մեկ կապ չեմ ունեցած Մոսկվայի մեջ, երեսն ալ չեմ տեսած. անդամ մը միայն Տերտերյանը գնաց մասնավոր տան մը մեջ մասնավոր կերպով հանդիպելու, իբրև պատահական տեսակցություն, գաղափարները շոշափելու համար։ Մեզի հետ խոսողը արտաքին գործերու նախարարությունն էր, և անիկա մեզի հետ բնավ հարաբերության մեջ չէ դրած պաշտոնապես, ուրեմն պաշտոնապես մենք չէինք ճանչնար Լեգրանը. մեր վերջին կամ վերջնթեր տեսակցություններու միջոցին էր, որ Կարախանը հայտնեց մեզի պաշտոնապես, որ իրենք Լեգրանը ուղարկած են Հայաստան հոն շարունակելու մեր «ընդհատած» խորհրդակցությունը։ Նպատակն էր անդամ մը մուտք ունենալ Հայաստան, հետները «ցրվելու» ապրանք էին տարած ժողովուրդը գրավելու համար, ինչպես և ահագին «գրականություն» և պերսոնել. այսինքն՝ ներսեն քայքայելու ծրագիրը։ Երբ մենք Թիֆլիս հասանք, Լեգրանը անդամ մը Թիֆլիս եկած և վերադարձած էր. ես հոն ալ իրեն չեմ հանդիպած. և եթե Թիֆլիս ալ ըլլար՝ իհարկե իրեն չէի հանդիպելու, առանց մեր կառավարության նոր հրահանգին այլևս իրավունք

ալ չունեինք։ Ես Լեգրանին առաջին անգամ տեսած ու խոսած եմ Երևանի մեջ արտաքին գործերու նախարարության հարկին տակ, երբ մեր կառավարությունը որոշեց, որ Մոսկվա եղող կազմը շարունակե բանակցությունը Լեգրանի հետ։

6. Եվ 7 հարցերուդ պատասխանելը դժվար է առանց մեր ընդարձակ համաձայնագրերը աչքի տակ ունենալու, մանավանդ որ ես մեծ վստահություն չունիմ իմ հիշողությանս վրա։ Կրնամ պատասխանել միայն խոշոր գծերով։ Լեգրանի պահանջքներն էին. ա. բացարձակ հրաժարիլ Վերսալեն, Եվրոպայեն. բ. ազատ անցք տալ մեր հողերուն վրայով զորք ու ռազմամթերք անցնելու Ազրբեջանեն Թուրքիա և գ. թե մեկի, թե մյուսի և թե վրացիներու հետ մեր ունեցած վեճերը հարթել իրավարարությամբ ռուսներու արբիտրաժին տակ։ Այլև քանի մը մանր պահանջքներ, ինչպես օրինակ Կարսի մեջ գտնվող նեղ-գիծ երկաթուղային վագոնները հանձնել իրենց, որպեսզի տան Թուրքերուն, Ազրբեջանի և Թուրքիայի մեջ մեր հարավով երկաթուղային կապ հաստատելու համար։

Մենք ա. կետը կտրուկ մերժած ենք. անոնք քանի մը անգամ փոխեցին, փոփոխեցին և մնաց տակը անորոշ ու վերացական ոչինչ չբսող հայտարարություն մը։ Բ. կետի դեմ առարկեցինք, որ կվախնանք ռուսներեն ստացած զենքերը մեր դեմ գործածեն Թուրքերը, ինչպես և Թուրք բազմություններու մեր հողերուն վրա գտնվիլը։ Վերջ ի վերջո համաձայնեցանք մեր զինվորական մարմիններու քննությունն ու վավերացումն ստանալե ետքը, որ 1. զորք կրնան անցնել երկաթուղիով որոշ ճոկված պայմաններու տակ, անզեն և փոքր-փոքր քանակությամբ. 2. իսկ գալով զենքին ռուսները ընդունեցին, որ ինչքան զենք որ անցնի մեր հողերուն վրայեն, անոր — լավ չեմ հիշեր — 25 թե՞ 30 տոկոսը պետք է մնա մեզի, իբրև ինքնապաշտպանության միջոց։ Այդ երկու թիվերուն վրա գիտեմ որ սակարկություն եղավ, վերջը որը մնաց չգիտեմ, կարծեմ 30-ը։ Գ. կետը, այսինքն մեր 3 դրացիներուն հետ վեճերը կարգադրելու համար ռուսներու արբիտրաժը ընդունեցինք։

Փոխարենը անոնք կընդունեին մեր անկախությունը, մեր ներքին գործերուն չխառնվել, արևելյան սահմանի մեջ պետք է մտներ Զանգեզուրը, իսկ Ղարաբաղի համար իրավարարություն, ինչպես և Նախիջևանի համար, իբրև բալանս։ Իսկույն պետք է միջամտեին Թուրքերու հետ մեր պատերազմը կասեցնելու և իբրև առաջին պահանջ պետք է ստեղծեին չեզոք գոտի մը մեր ու Թուրքերուն մեջ ռուսական սահմանին վրա. և այս բոլորը իբրև մեր ու Թուրքերու ընդհանուր բարեկամ։ Մեզի անմիջապես պետք է վճարեին $2^1/_2$ միլիոն ոսկի, Բաքվի նավթային ճամփան պիտի բացվեր, պետք է տային երկրագործական գործիքներ, պետք է հանձնեին Մոսկվայի մեջ մեր էջմիածնական և այլ ինչքերը, դյուրություններ պիտի տային ռուսական քանի մը կենտրոններու մեջ

հավաքված հայ գրականական և գեղարվեստական երկերը Հայաստան փոխադրելու։ Ահա՛ խոշոր գծերով և ինչ-որ հիմա կրնամ հիշեր, ինչ-որ երկու կողմեն ստորագրած ենք։

8. Լեգրանը սաստիկ կշտապեր մեր բանակցություններու միջոցին, մենք քիչ մը ծանր կշարժեինք, ականջնիս Կարսի կողմը։ Ստորագրվելուն պես Լեգրանը գնաց ինքը, մեր կողմեն ոչ մեկ առաջարկ, համոզելու Բաքվի ընկերները, որ ընդունին մեր եկած համաձայնությունը. նույնը նաև պիտի աշխատեր Թուրքերուն հետ։ Բայց թե մեր կառավարությունը, թե մեր զինվորականները, թե անգլիական ներկայացուցիչը կզարմանային բոլշևիկներու այդ տեսակ պայմաններ ստորագրած ըլլալուն. կա՛մ Թուրքերը չէին ճանչնար ինչպես հարկ է, կամ մեզի օրորել կուզեին, կամ վստահ էին, որ անգամ մը Հայաստանի մեջ ոտքերնին դնելեն ետքը, ամեն ինչ կպայթեցնեին. գուցե և այս երեքը միասին։ Եվ վերջապես եղածը Թուղթի կտոր մըն էր և դատարկ ստորագրություն մը, ի՞նչ կարևորություն։

9. Լեգրանի դիրքը երկդիմի էր. մեզի, այսինքն՝ մեր կառավարության հանդեպ լիազոր բանագնաց մըն էր, մոտավորապես ինչպես մենք էինք Մոսկվա. բայց անատարակույս է, որ բոլշևիկյան մարմիններու հանդեպ անիկա ուներ մասնավոր իրավունքներ ու հրահանգներ թե՛ Հայաստանի մեջ և թե՛ Հայաստանեն դուրս Հայաստանի հետ կապված գործերու վերաբերմամբ, որ ըսել է գրեթե ամեն հարցի վերաբերմամբ Կովկասի մեջ։

10. Իր Թուրքերու հետ ունեցած կապի մասին ոչինչ ըսել չեմ կրնար։ Կհիշեմ, որ Երևանի մեջ շատերը — կամ գոնե քիչերը — կային, որ անոր վրա կնայեին իբրև պատերազմական լրտեսի վրա մեր շարքերու թիկունքին։ Ես բոլշևիկ մարդոց խոսքին ու կեցվածքին մեծ հավատք ունեցող մարդ չեմ. և վերջապես քաղաքականությունը սուտի ու խաբեության հյուսվածք մըն է. չեմ զարմանար, որ Լեգրանը Թուրքերու առաջխաղացումը դյուրացնելու և մեզի ճզմել տալու քաղաքականությունը վարած ըլլա, կա՛մ իր, կա՛մ Բաքվի կա՛մ Մոսկվայի թելադրանքով. բայց անկեղծ ըլլալու համար պետք է ըսեմ, որ ես այդ աչքով չեմ նայած անոր վրա. կարելի է իմ տիպլոմատիկ հոտառությունն թույլ է եղած՝ մանավանդ կեղտոտ գործերու մեջ. իմ տպավորությունս այն էր, որ ան կշանար իրոք որ հաշտության բերեր մեզի ու Բաքուն, մեզի ու Թուրքերը։ Ինծի կթվի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նույնիսկ ո՛չ բոլշևիկյան. ինծի կթվի, որ Կարախանը նմանապես այդ ուղղությամբ կաշխատեր. ինծի կթվի, որ ներքին կապ կար Լեգրանի ու Կարախանի մեջ։ Լենին-Կարախան-Լեգրանյան քաղաքականությունը պարավեցավ մեր Կարսի առջև ունեցած պարտությամբ. հաղթանակեց բաքվյան քաղաքականությունը, «բոլշևիկ Հայաստան անմիջապես» զենքով, և Հայաստանի կառավարությունը իրե՛նց ձեռքը

հայ բոլշևիկներու։ Ինծի կթվի, որ Աշ. Հովհաննեսյան ու Սահակ Տեր-Գաբրիելյանը Կարախան-Լեգրանյան խելքի մարդիկներեն էին և ճիշտ ատոր համար ալ դրված էին Լեգրանին հետ։ Վերջը ատոնք բնականաբար բոլորն ալ փոխվեցան, երբ Բաքվի բոլշևիկը տարավ հաղթանակը։ Ատոնք կամ պետք է սկսեին ջուրին տակ կամ պետք է բաքվեցիներու հանկերգը պոռային։ Մեկ երկուքը, որ ավելի խոր հոգի ունեին, լռեցին ու անցան երկրորդական շարքերը. մյուսները նետվեցան առաջ, Ա. Հովհաննիսյանին պես, խոշոր պատառներ խածնելու համար։ Մեր Կարսի կռիվներուն ժամանակը գիտեմ որ — բոլորովին կողմնակի ու մասնավոր ճամփով — թե Աշոտը և թե Սահակը կցանկային Կարսի առաջ մեր զինական հաջողությանը. դեռ հայ էին։

Եթե Կարինյանը Փափազյանի քեռորդին է, իմ անցած օրվան գրածները անոր չի վերաբերիր։ Ան ուրիշ մարդ է։ Փափազյանի քեռորդին գիտեմ, թեև դեմքը չեմ հիշեր. ոչ ալ հոգին կճանչնամ։

Սիմոն ջան, վերջացնելես առաջ երկու խոսք ալ իմ մասին։ Գիտցած եղի՛ր, որ Մարսիլիա մնալու չեմ։ Ո՛չ մարդ կա հոս մարդավարի, ո՛չ ալ դրամ. եթե մեկը ըլլար՝ կըլլար և մյուսը. այնպես որ ո՛չ իմ ծրագրերս, ո՛չ ալ իմ ապրուստս ոտքի հանել չեմ կրնար հոս։ Վերջին ամիսները շատ դժվար կվճարեն և շատ ողորմելի մարդիկ են. չգիտեմ ամառվան ամիսներու վճարը ինչ պիտի ընեն. կրնաս երևակայեր դրամական վիճակս։ Մտադիր եմ Եգիպտոս անցնելու, դեռ պաշտոնական հրավեր չունիմ, բայց մասնավոր նամակներու հենված հույս ունիմ, որ հաջողվի։ Ընտանիքս պետք է փոխադրեմ Փարիզ. այդ մասին արդեն գրած եմ Տիգրանին, որ բնակարանի հոգը քաշե։ Եթե հնար ունենա և եթե շուտով բնակարան ճարվի մեկ-երկու շաբաթ ես ալ կուգամ Փարիզ Եգիպտոս մեկնելես առաջ. և այն ժամանակ կխոսինք մանրամասն, եթե գալ չկարողանամ, քեզի իրազեկ կպահեմ։

Սրտագին բարևներով ու ջերմ համբույրներով՝

ԼԵՎՈՆ ՇԱՆԹ

1925 հունիսի 18, Մարսել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ-ՆԱՄԱԿԸ՝

Հ. Հ. ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ, ՓԱՐԻԶ (1921, մարտ)

«Անցյալ տարվա նոյեմբերի վերջերին մեր պատերազմը Թուրքիայի հետ վերջացավ մեր պարտությունով։ Կարսը և Ալեքսանդրապոլը գրավել էր արդեն մեր հակառակորդը և սպառնում էր Արարատյան

դաշտին, այսինքն՝ Հայաստանի գոյության։ Մեր կառավարությունը ուրիշ ելք չուներ. ստիպված էր հաշտության բանակցություններ սկսել և դաշն կապել, որքան էլ ծանր լինեին հաղթողի թելադրած պայմանները։ Բանակցությունները տեղի ունեցան Ալեքսանդրապոլում. այնտեղ էլ ստորագրվեց խաղաղության դաշնը։ Թուրքերի պահանջները շատ ծանր էին, բայց քանի որ մենք հաղթված էինք և պատերազմը շարունակելու ոչ մի հնարավորություն չունեինք, խոնարհվեցանք հաղթողի կամքի առաջ։

Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որքան էլ ծանր էր մեզ համար, այնուամենայնիվ ապահովում էր հանրապետության գոյությունը. ապա հնարավորություն էր տալիս ժողովրդին մի քիչ շունչ քաշել, ուժերը հավաքել և վերաշինել երկիրը — թեև շատ նեղ սահմաններում — ու վերականգնել ավերված տնտեսությունը։ Կառավարության որոշումն էր՝ կատարել ամենայն ճշտությամբ հաշտության դաշնը, առիթ չտալ Թուրքերին նորից հարձակվել մեր վրա, հաստատել Թուրքիայի հետ բարի դրացիական, նույնիսկ բարեկամական կապեր, վերսկսել առևտրական հարաբերությունները և խույս տալ ամեն տեսակի նոր բարդություններից։

Դժբախտաբար, այս ծրագիրը չիրագործվեց։

Նույն ժամին, երբ մեր լիազոր պատվիրակները ստորագրում էին Ալեքսանդրապոլում խաղաղության դաշնը, նույն ժամին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը Երևանում՝ պ. Լեգրանը՝ հայտնեց մեր կառավարությանը, որ Ազրբեջանի սահմաններից, Ղազախի և Դիլիջանի վրայով, մտել է Հայաստան ռուսական կարմիր բանակը՝ հետը ունենալով Հայաստանի Հեղկոմը—Հեղափոխական կոմիտեն—, կազմված դրսից եկած հայ բոլշևիկներից։ Պ. Լեգրանը հարցնում էր, թե ի՞նչ դիրք մտադիր է բռնելու մեր կառավարությունը այս փաստի հանդեպ։

Հայաստանին սպասում էր մի նոր պատերազմ, այս անգամ Խորհրդային Ռուսաստանի հետ։

Այդպիսի պատերազմ վարելու կամ, առհասարակ, որևէ ընդդիմություն ցույց տալու ոչ մի հնարավորություն չուներ մեր կառավարությունը, ուստի պատասխանեց, որ հաշվի է առնում իր դեմ ելած գերազանցորեն մեծ ուժը և խուսափելով անիմաստ արյունահեղություններից՝ տալիս է իր տեղը նոր եկվորներին։

Այսպիսի որոշման շատ նպաստեց նաև այն հանգամանքը, որ պ. Լեգրանը, Ռուսաստանի անունից, գրավոր կերպով տվեց մի շարք կարևոր խոստումներ։ Դրանցից գլխավորներն էին. Ա. Հայաստանի Հանրապետության լիակատար անկախությունը կհարգվի և կպաշտպանվի ամեն կերպ. Բ. Ռուսաստանը տնտեսական խոշոր օգնություններ կանի Հայաստանին, այն է. կվերահաստատե երկաթուղային հաղորդակցությունը Հայաստանի և հարևան Վրաստանի, Ազրբեջանի ու

Պարսկաստանի միջև. վառելիք ու կերոսին — քարիյուղ լուսավորության համար—կբերի Բաքվից, Ռուսաստանից կբերի, հաց, մանուֆակտուրա և այլ ապրանքներ և այլն. Դ. Չի ենթարկի որևէ հալածանքի ոչ կոմունիստական քաղաքական կուսակցություններին պատկանող անդամներին իրանց անցյալ գործունեության համար։

Այսպիսով, հաստատվեց Հայաստանում, խաղաղ ճանապարհով, առանց դիմադրության, բոլշևիկյան խորհրդային իշխանությունը։

Երկուս ու կես ամսվա կյանք ունեցավ այդ իշխանությունը մեզանում՝ դեկտեմբերի 2-ից մինչև փետրվարի 18:

Այդ կարճ ժամանակամիջոցում պարզվեց լիովին բոլշևիկյան ռեժիմի իսկական բնույթն ու էությունը։

Վերև հիշված խոստումներից ոչ մեկը չկատարվեց։ Հայաստանի անկախությունը մնաց մեռած տառ։ Մեր երկիրը դարձավ պարզապես Մեծ Ռուսաստանի նահանգներից մեկը։ Հայաստանի կառավարությունը ստանում էր հրամաններ կամ Բաքվից, ուր նստած էր կոմունիստական կուսակցության բյուրոն, կամ Մոսկվայից։ Հայաստանի զորքը ենթարկված էր ռուս հրամանատարության և կազմում էր ռուսական բանակի մի մասը։ Գերագույն դատական մարմինը, այսպես անվանված Արտակարգ հանձնախումբը՝ Չեկա, որը մահվան դատավճիռներ էր հանում և կատարում, ենթարկվում էր ոչ Հայաստանի կառավարությանը, այլ Ռուսաստանի կենտրոնական Չե-կային։ Ոչ մի տնտեսական օգնություն Ռուսաստանից չստացվեց. ոչ մի ֆունտ ապրանք Հայաստան չներմուծվեց։ Ընդհակառակը, սովից մեռնող Հայաստանից դուրս տարվեց Ազրբեջան այն ամենը, ինչ-որ հաջողվեց խլել ժողովրդի ձեռքից՝ նույնիսկ որբանոցներում մնացած խտացրած կաթի վերջին մնացորդները և հիվանդանոցներից՝ վերջին դեղերը։ Բռնագրավումները դարձան պետական տնտեսության միակ ձևն ու միջոցը։ Զանազան անուն կրող զինված խմբակներ օր ու գիշեր վխտում էին քաղաքներում և գյուղերում, խուզարկում էին տներն ու մառանները, գոմերն ու բակերը և բռնագրավում ամեն մի արժեքավոր բան։ Մի չտեսնված թալան էր, որ կատարվում էր ամենուրեք։ Եվ որովհետև քաղաքաբնակները այսօր համարյա ոչինչ չունին, թալանի գլխավոր ծանրությունը ընկնում էր գյուղացու վրա։ Գյուղացուց խլում էին անխնայորեն և օրվա պաշար հացը, և սերմացուն, և լծկանը։ Երկիրը ավերվում էր վերջնականապես ու զրկվում էր վերաշինման վերջին միջոցներից։ Երկաթուղային հաղորդակցությունը դադարեց վերջնականապես։ Ոչ վառելիք — նավթ—, ոչ կերոսին, ոչ հաց, ոչ մանուֆակտուրա Հայաստան չբերվեց։ Աղքատությունը, մերկությունը, անոթությունը աճում էին օր օրի վրա։ Սրա հետ զուգընթացաբար, աճում էին նաև ամեն տեսակի բռնություններ։ Բոլշևիկյան իշխանությունը ասպարեզ

հանեց բռնակալության այնպիսի ձևեր ու չափեր, որոնց նմանը հազիվ թե տեսած լինի պատմությունը։ Ժողովուրդը բաժանված էր երկու անհավասար մասի. մի կողմից իրանք բոլշևիկները և իրանց արբանյակները — մի քանի հազար մարդ — կարմիր բանակի հետ միասին, մյուս կողմից՝ բոլոր մնացածները։ Առաջիններին պատկանում էր բոլոր իշխանությունը, բոլոր իրավունքները, վայելելու եղած բոլոր հնարավորությունները։ Վերջիններին՝ բոլոր պարտականությունները, թալանվելու բոլոր ծանրությունը և հլու, անխոս հպատակվելու դառն արտոնությունը։ Քաղաքացիական բոլոր ազատությունները արմատախիլ էին արված լիովին։ Գրել, դատել, խոսել, հավաքվել, կազմակերպվել կարող էին միայն բոլշևիկները։ Մյուսները ծպտուն հանելու, կյանքի նշույլ ցույց տալու իրավունք չունեին։ Լրտեսությունը դարձել էր վարչական սիստեմի հիմքը։ Բանտերը թե Երևանում, թե գավառներում լեփ-լեցուն էին հազարավոր մարդկանցով։ Ոչ ոք չէր զգում իրան ապահով լրտեսի մատնությունից։ Հալածանքները և ձերբակալությունները կրում էին թե անհատական և թե խմբային բնույթ։ Բոլշևիկները նպատակ էին դրել մաքրել երկիրը բոլոր անհաճո տարրերից՝ առաջին հերթին քաղաքական կուսակցություններից, ապա մտավորականներից և, առհասարակ, բոլոր ղեկավար, ազդեցիկ, մտածող ու գործող տարրերից։ Զորքի կողմից ապահով լինելու համար հավաքեցին խաբեությամբ բոլոր հայ սպաներին — մոտ հազար երկու հարյուր մարդ — զինաթափ արին ու խումբ-խումբ աքսորեցին Բաքու՝ մասամբ էլ Ռուսաստանի խորքերը։ Նրանց տեղ դրին ռուս սպաներ ու բոլշևիկ կոմիսարներ ու այսպիսով ղլխատեցին հայ բանակը։ Ինչ վերաբերվում է ոչ զինվորական մտավորականությանը, սկզբից բավականացան բանտարկությունով, բայց վերջը սկսեցին գնդակահարել և կացիններով կոտորել բանտերում, առանց դատի ու դատավճռի, նույնիսկ առանց քննության։

Կացությունը դարձավ միանգամայն անհանդուրժելի, ապստամբությունը բռնկվեց։ Ապստամբողը գյուղացիությունն էր, միաժամանակ զանազան վայրերում, բայց առանց կանխամտածված ծրագրի, առանց համաձայնեցրած գործողությունների։ Շարժումը ուներ գերազանցորեն ժողովրդական բնույթ, մասսային ու տարրերային և այնքան ուժգին էր, որ 3–4 օրվա ընթացքում ապստամբ գյուղացիների զինված խմբերը խորտակելով ճամփին տեղական խորհրդային իշխանությունները՝ փետրվարի 18-ին առավոտ վաղ հասան Երևան ու դուրս վռնդեցին այնտեղից կենտրոնական կառավարությունը կարմիր զորքերի հետ միասին։

Այդ օրից հաստատվեց Երևանում, փոխարեն տապալված խորհրդային կառավարության, մի առանձին մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտեի անվան տակ, որի նպատակն է ազատել վերջնականապես Հայաստանը բոլշևիկներից ու ապա իր տեղը տալ համաժողովրդական կառավարության։

Կռիվները դեռ չեն վերջացած։ Երևանից փախած բոլշևիկյան կառավարությունը՝ իր հետը ունենալով այստեղի կարմիր բանակային ուժերը, ամբողջ հրամանատարությունը, երկու զրահակիր երկաթուղային գնացքները, երկաթուղային բոլոր շոգեմեքենաներն ու վագոնները, մեր թնդանոթները, առատ կենսապաշար, զենք ու զինամթերք՝ ապաստանել է Շարուրի մեջ և կռվում է համառորեն։ Բոլշևիկների մի ուրիշ մասը, թիկունքում ունենալով խորհրդային Ազրբեջանը՝ ամրացել է և կռվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափերում։ Երրորդ մասը՝ թիկունքում ունենալով խորհրդային Վրաստանը՝ կռվում է Փամբակի-Ղարաքիլիսեի շրջանում։ Կենտրոնական Հայաստանը ամբողջովին մեզ հետ է։ Մեզ հետ է նաև մեզանից արևելք գտնվող ամբողջ Լեռնային Հայաստանի՝ Դարալագյազ, Զանգեզուր, Հայկական Ղարաբաղ, բայց հաղորդակցության դժվարությունների պատճառով, ունի իր տեղական ինքնավար կառավարությունը, որ նստում է Գորիս քաղաքում։

Այս կռվում մենք չունինք ոչ կանոնավոր զորք, ոչ հրամանատարական կազմ և ոչ ռազմական տեխնիկական միջոցներ։ Կռվողը ինքը զինված ժողովուրդն է, գյուղացիներ ու քաղաքացիներ, ծերեր ու երիտասարդներ, որոնք հոժարակամ, առանց որևէ ստիպողական միջոցների, հաճախ իրանց սեփական զենքերով ու պաշարով, կազմում են խմբեր ու վազում կռվի դաշտ։ Հրամանատարության բացակայությունը և կանոնավոր կազմակերպության խոշոր պակասը մեզանում լրացվում է մեծ ու ընդհանուր ոգևորությունով, հաղթելու կամքով և անվերջ ատելությունով դեպի բոլշևիկների բռնակալությունը։

Այս է մեր այսօրվա դրությունը։

Ինչ է սպասում մեզ ապագայում—նույնիսկ մոտիկ ապագայում—դժվարանում ենք գուշակել։ Մի բան գիտենք հաստատապես. կամովին այլևս չենք ենթարկվի բոլշևիկյան լծին։ ՄԻԱՅՆ ՄԵՐ ԴԻԱԿՆԵՐԻ ՎՐԱՅՈՎ ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՈՅՔ ԿՈԽԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ։ Գիտենք և մի ուրիշ բան. եթե բոլշևիկները չստանան դրսից նոր օգնություն, եղածներից մենք կմաքրենք մեր երկիրը մեր սեփական ուժերով։ Բայց որովհետև բոլշևիկների դրսից՝ Վրաստանից, Ազրբեջանից, Ռուսաստանից — օգնություն ստանալը ավելի քան հավանական է, ահա այստեղ է մեր դրության ամբողջ տրագիզմը։ Այս օրհասական կռվի մեջ մենք լարել ենք մեր վերջին ուժերը։ Երկար ժամանակ չենք կարող մնալ այսպիսի լարված դրության մեջ։ Ժողովուրդը ուժասպառ է, արնաքամ։ Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությունով, իսկ մենք մնանք մենակ, պարտությունը անկասկած է և անխուսափելի։ Իսկ մեր այսօրվա պարտությունը կլիներ ամենամեծը այն բոլոր աղետներից, որ տեսել է հայությունը 15 թվականից դեսը, որովհետև այսօր ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉՈՒՆԻՆ ԱՎԵԼԻ ՄԵԾ ԹՇՆԱՄԻ, ՔԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԲՈԼՇԵՎԻԶՄԸ։

Այսքան երկար գրեցի այն նպատակով, որ դուք իրազեկ լինեք մեր իրականության։ Մեր արտասահմանի բարեկամները ֆաճախ խոշոր սխալներ են անում՝ անտեղյակ լինելով կամ հաշվի չառնելով մեր իրական դրությունը։

Բոլշևիզմի դեմ կռվելու և — ընդհանրապես — մեր երկրում խաղաղ կյանք վերսկսելու համար մենք մեծապես պետք ունինք հարևան Թուրքիայի բարեկամությանը, նույնիսկ աջակցությանը։ Ամեն մի քայլ՝ թե այստեղ, թե արտասահմանում, որ հակառակ է մեր և Թուրքերի մեջ բարյացակամ կապեր հաստատելուն, կարող է ճակատագրական լինել մեզ համար։ Այսօր մենք երկու իրական ուժ ունինք մեր կողքին. մեկը խորհրդային Ռուսաստանն է, մյուսը՝ Թուրքիան։ Մյուս ուժերը մեզանից շատ հեռու են։ ԱՌԱՋԻՆԻ ՀԵՏ, ԻՆՉՊԵՍ ՅՈՒՅՑ ՏՎԵՑ ԴԱՌԸ ՓՈՐՁԸ ՀԱՇՏՎԵԼ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ. ՄՆՈՒՄ Է, ՈՐ ՀԱՇՏՎԵՆՔ ՈՒ ԲԱՐԵԿԱՄԱՆԱՆՔ ՄՅՈՒՍԻ ՀԵՏ։ Այդ անհնարին չէ, որովհետև մենք և Թուրքերը ունինք ընդհանուր շահեր, որ ամենայն համերաշխությամբ կարող ենք պաշտպանել ընդհանուր ուժերով։ Բոլշևիկների վերաբերմունքը նույնքան անցանկալի է Թուրքերի համար, որքան և մեզ համար։ Բոլշևիկների վերաբերմունքը կնշանակե ոչ այլ ինչ, քան Հայաստանի կցումը Ռուսաստանին։ Այդ դեպքում Թուրքիան իրան սահմանակից կունենա դարձյալ իր դարավոր թշնամին, մեծ և ագրեսիվ Ռուսաստանը, ասում եմ ագրեսիվ, որովհետև ամենքի համար պարզ է, որ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՆՈՒՅՆՔԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ Է, ՈՐՔԱՆ ԵՂԵԼ Է ԻՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՑԱՐԱԿԱՆԸ։ Պահած ունենալով իր ձեռքին Ազրբեջանը, ամրանալով Վրաստանում և նվաճելով Հայաստանը՝ խորհրդային Ռուսաստանը հետևյալ հերթին պիտի հարձակվի Թուրքիայի վրա։ Հասկանալի է, թե Թուրքիայի համար, որքան ձեռնտու է ունենալ իր և Ռուսաստանի միջև այնպիսի անկախ պետություններ, ինչպիսի են Ազրբեջանը, Վրաստանը և Հայաստանը։ Այս նորակազմ, փոքր ու անզոր պետությունները ոչ մի սպառնալիք չեն կարող ներկայացնել իրան՝ Թուրքիային, բայց միևնույն ժամանակը բավականին ապահովություն են Ռուսաստանի ոտնձգությունների դեմ։ Եթե Թուրքիայի և Ռուսիայի միջև ծագին անհամաձայնություններ, որ անխուսափելի են, ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ Է ԹՈՒՐՔԵՐԻ ԲՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ։ ԱՅՍ ՀՈՂԻ ՎՐԱ ՄԵՆՔ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ ԷԻՆՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱԼ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ՝ նրա և մեր օգտի համար։

Բայց սրա համար անհրաժեշտ է, որ արտաքին գործոնները անհնարին չդարձնեն հայ-թուրքական մերձեցումը։ Ամենամեծ քաղաքական դործոնը այսօր Լոնդոնի կոնֆերանսն է և նրա որոշումները Մերձավոր արևելքի վերաբերմամբ։ Ստացել ենք Ամ., հեռագիրը Պոլսից, բայց և այնպես չգիտենք հաստատ, թե արդյոք ձևակերպվե՞լ է վերջնականապես մեր և Թուրքերի մեջ եղած դատի որոշումը, և եթե ձևակերպվել է, ի՞նչ

է այդ ձևակերպումը։ Բայց մենք գիտենք մի ուրիշ բան և շատ ենք ցանկանում, պահանջում ենք ամենակտրուկ կերպով, որ դուք ևս գիտենաք այդ ուրիշ բանը, այն է, որ այդ որոշումները փոխանակ մեր հոնքը ջինելու աչքը չփչացնեն։ Մեր իրական դրությունը պահանջում է հաշտ և բարեկամական կենակցություն մեր հարևան Թուրքիայի հետ։ Ուրեմն, մեր արտասահմանի բարեկամները, եթե նրանք, իրոք, բարեկամ են մեզ, չպիտի դնեն Թուրքիան այնպիսի դրության մեջ, ուր նա նկատի մեզ իբրև իրա դժբախտության պատճառը ու լցվի ատելության և վրիժառության զգացմունքներով հանդեպ մեզ։ Կոնֆերանսի որոշումները մեր վերաբերմամբ ընդունելի պիտի լինին Թուրքիայի համար, ահա մեր պահանջը»։

ՀԱՅՐ. ՓՐԿ. ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՎՐԱՑՅԱՆ

ՀԱՄԱԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1920 թ. դեկտեմբերի 25-ին Զանգեզուրի հայ ժողովրդի ցանկությամբ Տաթևի պատմական վանքում կայացավ համազանգեզուրյան համագումարը, ուր ներկա էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ընտրված և ուղարկած 100 պատգամավորները, Զանգեզուր-Գողթանի Սպարապետ Նժդեհը, Զանգեզուրի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, ընդամենը 118 հոգի։ Կեսօրվա ժամը 2-ին ժողովը բացում է Բուն Զանգեզուրի Գյուղական ժամանակավոր խորհրդի նախագահ Տ. Մելիք-Հուսեինյանը և առաջարկում է ընտրել համագումարի դիվանը։ Ձայների մեծամասնությամբ ընտրվում են. նախագահ՝ Գեղեոն Տեր-Մինասյան, փոխնախագահներ՝ Եզոր Հարությունյանը և Տիգրան Մելիք-Հուսեինյան, քարտուղարներ՝ Սամուել Մաշուրյան և Նիկոլայ Դորունց։ Նախագահը նիստը բաց հայտարարելուց հետո, համառոտ կերպով բացատրում է համագումարի պատմական նշանակության և նրա անելիքի մասին և առաջարկում է անցնել օրակարգի հետևյալ հարցերի քննությանը։

ՕՐԱԿԱՐԳ

1) Զեկուցում Հայաստանի քաղաքական անց ու դարձերի մասին և համագումարի բռնելիք գիրքը։

2) Զեկուցումներ բոլոր շրջանային խորհուրդների, իրենց գործունեության մասին։

3) Ինքնավար Սյունիքի կառավարության ձևը կոնստիտուցիա (սահմանադրություն)։

4) Իշխանության կազմակերպումը։

ա) Սպարապետի հրավիրումը։

բ) Ինքնավար Սյունիքի խորհրդային դիվանի բնույթը։

գ) Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի բնույթը։

5) Իշխանության կենտրոնատեղի որոշումը։

6) Արտաքին քաղաքականություն։

Փոխհարաբերություն

ա) Հայաստանի Հանրապետության հետ։

բ) Ազրբեջանի հանրապետության հետ։

գ) Պարսկաստանի կառավարության հետ։

դ) Հարևան թուրքերի հետ։

7) Ինքնապաշտպանության հարց։

8) Պարենավորման հարց։

9) Պետական ծառայողների ռոճիկների նորմաների որոշման հարց։

10) Մասնավոր խոշոր սեփականությունների պետականացումը։

ա) Վանքապատկան և եկեղեցական։

բ) Խաների, բեգերի և մելիքների։

գ) Արդյունաբերության։

11) Ընթացիկ հարցեր։

ա) Որբանոցի հարց։

բ) Զուլիականոցի հարց։

գ) Նախկին կառավարություններից զանազան անձնավորությունների մոտ մնացած գումարների պահանջման հարց։

դ) Դրամների գործադրությունը։

ՈՐՈՇԵՑԻՆ

1) Մի շարք ներկայացուցիչների երկար ու բազմակողմանի արտահայտություններից հետո համագումարը երկար ծափահարություններով և ուռաներով ընդունում է միաձայն հետևյալ բանաձևը։

«Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը, շնորհիվ իր մի շարք տականքների ու ազգուրացների, որոնց հրավիրանոք առանց ազգաբնակչության կամքը և ցանկությունը հարցնելու Զանգեզուր մտան խորհրդային զորամասերը, մոտ 5 ամսվա ընթացքում դատարկեց գանձանության բաժակը մինչև նրա վերջին կաթիլը։ Խորհրդային հրամանատարությունը հենց առաջին քայլից գավառիս գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ

նսեմանում են պատմական Լենկ-Թեմուրյան և արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը։ Հայ աղքատ գյուղացիության տրնտեսապես քայքայված շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր և կապիտալիստների դեմ մղելիք քաղաքականությունը գործադրում աղքատ, անօգնական գյուղացիների ու այրի կանանց դեմ։ Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարավ մեր աղքատ գյուղացու միակ եզը, կովը, ձին ու ավանակը, գրավեց մեր անասունների կերը և թողեց մեզ մերկ ու զուրկ ամեն ինչից։ Խորհրդային հրամանատարությունը մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները, ավերեց, հողին հավասարեցրեց մեր գյուղերը և իր գրավածների հանդեպ մեզ չտվավ մի թել անգամ։ Նա անկարող եղավ ամբողջ Զանգեզուրին տալ մի զբրվանքա նավթ անգամ, չնայելով, մեզ նավթ, մանուֆակտուրա և այլ մթերքներ տալու խոստումներին։ Այս բոլորից հետո մենք համոզվեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն հափշտակելու մեր կայք ու գույքը, թալանելու մեզ և իսպառ ոչնչացնելու։ Խորհրդային կառավարությունը իրեն հատուկ արյան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ և տասնյակներով կոտորեց նրանց չխնայելով մեր զրական վաստակավոր գործիչներ՝ Խորենուն, Շիրինյանին և տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին հոշոտելուց։ Առանց քննության և որոշ մեղադրանքների մեր ռազմական գյուղական երիտասարդներից տասնյակները գլխատվեցան ու փոսերը թափվեցան և վերջերում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել, մեր գավառը մտցրեց 1000-ով տաճկական ասկյարներ, որոնք իրենց հայու Աստված էին անվանում։ Խորհրդային կառավարությունը մոռանալով տաճկական դարավոր հայաջինջ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ դեպի հայ գյուղերը ուղղեց տաճկական ասկյարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Յայջի, Զեյվա և ուրիշ գյուղերում իրենց բարբարոս և գազանային ինստինքտները գործադրեցին հայ կնոջ և կույս աղջիկների վրա, նրանց պատիվը ոտի տակ տալով։ Կոխոտեցին, ցեխի հավասարեցրին մեր պապենական ամեն տեսակի սրբություն, եկեղեցի, ընտանեկան պատկառանք և պատիվ։ Խորհրդային կառավարությունը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները և տարածված սիֆիլիսը կատարյալ կերպով առաջ տանելու համար և վախենալով ժողովրդական բռնկումներից, նա հարյուրավոր անմեղ մարդիկներ բանտ ձգեց ու խեղդեց, սպառնալով ազգաբնակչությանը իր տեռորներով որևէ ցույցի և ապստամբության դեպքում կոտորելու նրանց։ Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը չկարողանալով տանել նման բարբարոսությունները, որոշեց դուրս վռնդել Խորհրդային Ռուսաստանի զորքերին և նրա դիմակի տակ թաքնված ազրբեջանյան վարձկաններին, որոնք ավերեցին իր երկիրը և ազատեց իր օջախն ու պատիվը տարվույս հոկտեմբերի 10-ից սկսած ապստամ-

բական դրոշ պարզելով իր սիստեմատիկ բռնկումներով՝ մինչև տարվույս նոյեմբերի լույս 21-ի գիշերը դուրս քշեց իր սահմաններից անկոչ այն զորամասերը, որոնք իրանց հինգ ամսվա ներկայությամբ նրան կորբստյան դուռը հասցրին. Խորհրդային Ռուսաստանն ու Ազրբեջանը չբավականանալով այս ամենից, ցանկացան գլխատել ու իսպառ ոչընչացնել հայ ժողովրդին և ներս հրավիրեցին տաճկական հորդաներին Քեմալի գլխավորությամբ Հայաստան և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ և ծրագիր, որոնց չէ կարող այլևս հանդուրժել թե մեր երկրի և թե բովանդակ հայ ժողովուրդը։ Նկատի առնելով վերոհիշյալները և այն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու մնալ նույնը, համազանգեզուրյան համագումարը իր սույն օրվա նիստում որոշեց.

1. Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, լինելով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ։

Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները։

2. Համագումարը լսում է շրջանային խորհրդների համառոտ զեկուցումները և դիտողությունները իրենց գործունեության մասին և առնում է ի գիտություն։

3. Մտքերի փոխանակությունից հետո համագումարը միաձայն ընդունում ու հաստատում է ինքնավար Սյունիքի կառավարության ձևի հետևյալ գլխավոր գծերը։

Սույն համագումարը ճանաչել ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին-խորհուրդ, որին վերապահել Սյունիքի բախտի լիակատար տնօրենությունը։

ա) Խորհուրդը հրավիրվում է տարեկան առնվազն երկու անգամ, իրա դիվանի պրեզիդիումի կողմից, իսկ բացառիկ պայմաններում իրա անդամների կեսի կամ պրեզիդիումի պահանջմամբ։

բ) Պառլամենտի-խորհրդարանի անդամները ընտրվում են երկրի ազգաբնակչության կողմից հետևյալ ձևով։ Մինչ 100 ծուխ ունեցող գյուղական համայնքը տալիս է մեկ, 100-ից մինչև 200 ծուխ ունեցողները երկու, և 200-ից ավելի ծուխ ունեցողները երեք ներկայացուցիչներ։ Ընտրությունները կատարվում են ընդհանուր սկզբունքներով և ընտրողական քառանդամ սիստեմով։

գ) Խորհրդարանը իր միջից և դրսից ընտրում է 6 ամսվա ժամանակով իրա պրեզիդիումը-դիվանը բաղկացած 9 հոգուց, որին է անցնում այդ երկրի զինվորական և քաղաքացիական բոլոր գործերի ղե-

կավարությունը, որը և կիրառում է կյանքի մեջ խորհրդարանից-պառլամենտից բխած բոլոր որոշումներն ու օրենքները:

դ) Խորհրդարանին է վերապահվում զինվորական ընդհանուր հրամանատարի սպարապետի հրավիրումը ու նրա արձակումը:

ե) Խորհրդարանին է վերապահվում պատերազմ հայտարարելու և հաշտության բանակցություններ վարելու իրավունքը, իսկ արտակարգ դեպքում այդ վերապահվում է նաև սպարապետին:

զ) Երկրի թե քաղաքացիական և թե զինվորական կառավարչական ձևերի հաստատումը և օրենսդրությունը:

է) Խորհրդարանի-պառլամենտի պրեզիդիումը ունենում է հետևյալ վարչությունները. 1) Ներքին-գործերի, 2), Արտաքին-գործերի, 3) Պարենավորման, 4) Արդարադատության, 5) Ֆինանսական, 6) Լուսավորության, 7) Առևտրաարդյունաբերության, 8) Հողային, 9) Ճանապարհների հաղորդակցության (փոստ, հեռագիր, հեռախոս և խնուղի) և 10) Խնամատարության:

ը) Բոլոր խոշոր կարևոր խնդիրները՝ մասնավորապես ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերվող, իրենց լուծումն ստանում են ոչ թե այս կամ այն վարիչի, այլ պրեզիդիումի կոլեկտիվի կողմից:

թ) Բոլոր պատասխանատու պաշտոնյաները հաստատվում են պրեզիդիումի կողմից վարիչների առաջարկությամբ:

ժ) Զինվորական բոլոր տեսակի գործերը տարվում են սպարապետի ղեկավարությամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում պրեզիդիումին:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ, ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

ա) Սյունիքը բաժանվում է 6 շրջանների այն է. Բուն-Զանգեզուր, Տաթևի ձոր, Ղափան, Դարաբասի ձոր, Սիսիան և Գենվազ։ Յուրաքանչյուր շրջանում կազմվում է շրջանային գործադիր մարմին՝ բաղկացած մեծ շրջաններում հինգ, իսկ փոքր շրջաններում 3 հոգուց, որի անդամները ընտրվում են խորհրդարանի նույն շրջանից ուղարկված անդամների կողմից։ Շրջանային գործադիր մարմնի կազմը ընտրվում է 6 ամսով։

բ) Շրջանային գործադիր մարմինները իրենց գործունեության մասին միշտ զեկուցում են պառլամենտի-խորհրդարանի դիվանին և ներկայացնում նրանց իրենց հաշվետվությունը ի հավանություն և ի հաստատություն։

գ) Շրջանային գործադիր մարմիններին է վերապահվում իրենց շրջանի ներքին այս կամ այն հարցի լուծումը, որոնք համապետական բնույթ չեն կրում։

դ) Շրջանային գործադիր մարմինները ունենում են իրենց հետևյալ մասնաճյուղերը. 1. Ներքին գործերի, 2. Պարենավորման և 3. Զինվորական։ Շրջանային մարմիններին կից բացվում է նաև ազատագրման բյուրո։

Ծանոթություն։ Շրջանային գործադիր մարմինները իրենց շրջանի գյուղերում կազմակերպում են գյուղական զինվորական վաշտեր և գյուղացիական ինքնապաշտպանության կոմիտեներ։

ե) Շրջաններին վերաբերվող բոլոր խոշոր ու կարևոր հարցերը վճռվում են խորհրդարանի դիվանի կողմից։

ԳԱՎԱՌԱՊԵՏՆԵՐ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Յուրաքանչյուր շրջան կամ գավառակ ունենում է իր գավառակապետը և շրջանային կոմիսարները, որոնց ընտրում է շրջանային գործադիր մարմինը իր միջից և նրա առաջարկությամբ հաստատվում խորհրդարանի դիվանի կողմից։

ա) Ղափանի շրջանն ունենում է 1 գավառակապետ և 3 շրջ. կոմիսարներ

բ) Սիսիանի	1	1
գ) Բուն-Զանգեզուրի	1	1
դ) Տաթևի ձորի	1	
ե) Դարաբասի ձորի	1	
զ) Գենվազի	1	

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ

Յուրաքանչյուր գյուղ կամ համայնք ունենում է իր գյուղական կոմիսարը։ 100-ից բարձր ծուխ ունեցող գյուղերը ունենում են նաև կոմիսարի օգնական, թե առաջինը և թե վերջինը ընտրվում են գյուղական հասարակության և համայնքի կողմից ընդհանուր սկզբունքներով և հաստատվում են տվյալ գյուղի շրջանային գործադիր մարմնի կողմից։

ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔԻ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԱՐՄԻՆ

Սյունյաց ինքնավարության վերահսկիչ մարմինը լիազոր է կոնտրոլի ենթարկել պետական բոլոր հիմնարկությունների, որոնց թվում նաև բոլոր վարիչների հաշվետվությունները ու գործողությունները։

4. ա. Համագումարը միաձայն որոշում է՝ հրավիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպես Սյունյաց Սպարապետ և բուն ծափա-

հարությունները իր կատարյալ վստահության քվեն տալով նրան իր բախտն է հանձնում նրան։

բ. Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի համար առաջարկված 15 թեկնածուներից ձայների մեծամասնությամբ գաղտնի քվեարկությամբ ընտրվում են հետևյալ 8 անձնավորությունները, Գեղեոն Տեր-Մինասյան, Նիկոլայ Դորունց, Իսրայել Մելիք-Փարսադանյան, Գևորգ Գրիգորյան, Եգոր Հարությունյան, Մկրտիչ Տեր-Մկրտիչյան, Տիգրան Մելիք-Հուսեինյան և Սամուել Մաշուրյան և դրանց անձնափոխանորդ Մինաս Մինասյան։ Գենվազի շրջանին իրավունք է տրվում ընտրել մի ներկայացուցիչ և ուղարկել դիվանի կազմը լրացնելու համար։

գ. Ինքնավար Սյունիքի վերահսկիչ մարմնի անդամները ընտրվում են հետևյալ 3 անձնավորությունները՝ Գասպար Խաչատրյան, Մուշեղ Ոսկանյան և Գևորգ Գևորգյան. իսկ դրանց անձնափոխանորդներ՝ Տիգրան Սազանդարյան և Շիրին Շիրինյան։

5. Մտքերի երկար փոխանակություններից հետո որոշվում է՝ իշխանության կենտրոնատեղին ընտրել Գորիսը։

6. Համագումարը մտքերի երկար փոխանակությունից հետո միաձայն ընդունում է հետևյալ բանաձևերը մեր վերաբերմունքի մասին դեպի հարևան պետությունները։

ա) Զանգեզուրը միշտ ձգտել է և ձգտում է լինել մայր երկրի՝ Հայաստանի Հանրապետության անբաժան մասը, բայց նկատի առնելով Հայաստանի վերջին քաղաքական փոփոխությունները, որ նա ստիպված մի շարք քաղաքական անբարեհաջող հանգամանքներից հայտարարել է իրեն խորհրդային, մի իրավակարգ, որի հետ երբեք չի կարող հաշտվել մեր ժողովուրդը, համագումարը որոշեց մինչև նրա այդ իրավակարգից բաժանվելը գործել սեպարատ և ապրել ուրույն կյանքով։

բ) Զանգեզուրի վերաբերմունքը դեպի Ազրբեջանի կառավարությունը լինելու է բարեկամական, բայց նա առայժմ չէ կարող սերտ հարաբերությունների և երթևեկության մեջ մտնել Ազրբեջանի հետ, մինչև երկու հարևան ժողովուրդների փոխադարձ վստահությունը կատարյալ չլինի։

գ) Զանգեզուրի փոխհարաբերությունը Պարսկաստանի հետ եղել է միանգամայն սերտ և բարեկամական և կմնա։ Նա Պարսկաստանում ունենալու է իր ներկայացուցիչը, որը ավելի քան սերտ հարաբերությունների մեջ պետք է մտնի այդ կառավարության հետ առևտրական և հաղորդակցության տեսակետներից։

դ) Զանգեզուրի փոխհարաբերությունները իր հարևան թուրքերի հետ 8 տարուց ի վեր, շնորհիվ արտաքին պրովոկացիաների և քաղաքական միջամտությունների՝ եղել է թշնամական, այսօրվանից համագումարը լիահույս է, որ այդ անտեղի թշնամանքը կդադարի երկու դարևոր հարևանների միջև տեղի տալով սերտ բարեկամության։

7. Համագումարը միաձայն որոշում է՝ ինքնապաշտպանության հարցի վերաբերմամբ բոլոր միջոցների ձեռնարկումը և գործողությունը թողնել սպարապետի կարգադրությանը։

8. Մի շարք թեր ու դեմ կարծիքներից հետո համագումարը ձայների մեծամասնությամբ ընդունում է Գ. Գրիգորյանի հետևյալ բանաձևը. որովհետև մեր երկրում դրսի ուժ չկա և տեղական ուժերը մնալու են տեղերում (շրջաններում), ուստի տեղերի զորքը դիրքապահության և այլ նպատակների պահելու համար շրջաններում կամավոր հանգանակություն կատարել և կենտրոնացնել խորհրդի շտեմարաններում։ Իսկ կոիվների ընթացքում շրջանները կմատակարարեն իրենց ուժերի պարենը։ Պետական հիմնարկությունների համար շրջանների պահեստներից բաժին հանել համապատասխան քանակությամբ ռասկլադկայի ձևով և մեծամասնականներից մնացած իրերը և պետական գույքերը փոխանակելով հացահատիկների հետ։

9. Համագումարը ռոճիկների նորմաների որոշման հարցը թողնում է սպարապետին։

10. Համագումարը ընդունում է մասնավոր խոշոր սեփականությունների պետականացումը, ինչպես վանքապատկան, եկեղեցական և բեգական, նույնպես և ուրիշ խոշոր կալվածատերերի։

11. Համագումարը օրակարգի ընթացիկ հարցերում զետեղված 4 հարցերի որոշումները թողնում է խորհրդարանի ընտրված պրեզիդիումին։

Օրակարգի հարցերը վերջացնելուց հետո կարդացվում է Արևիքի շրջանից ստացված հետևյալ հեռախոսագիրը։

Տաթև, Զանգեզուրի սպարապետ պ. Նժդեհին։

«Ձեր կարգադրությունը՝ ուղարկել ներկայացուցիչներ Տաթևի համագումարը, Արևիքի Փրկության կոմիտեն ստացավ 20-ին երեկոյան։ Զգալով որ կուշանանք, հրավիրեցինք ամսույս 22-ին շրջանային համագումար, որտեղ ներկա էին Արևիքի 12 գյուղերի ներկայացուցիչները թվով 68 հոգի, բացակայում էին Կարճևանի և Ապկեզի ներկայացուցիչները։ Արևիքի գյուղացիական պատգամավորների ժողովի օրակարգի հարցերն էին՝

ա) Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջումը և Արևիքի ժողովրդի բռնելիք դիրքը։

բ) Համազանգեզուրյան համագումարի ներկայացուցիչներ ուղարկելու հարցը։

Կարգադրված էր բոլոր գյուղերում հասարակական ժողով գումարել, քննել այդ հարցերը և ուղարկել ներկայացուցիչներին մանդատով։

Համագումարը որոշեց Տաթևի համագումարի շրջանի կողմից ներկայացուցիչներ ուղարկել Դավիթ Դավթյանին և Խաչատուր Դանիելյանին։ Պատգամավորները դուրս եկան Մեղրիից ամսույս 23-ին, Լիճք-Տաշտոնի սարը կապ լինելու պատճառով հետ դառան, անցան հանքերը կալերով։ Առաջին հարցին ժողովը պատասխանեց հետևյալ բանաձևով, որը ամբողջովին հեռախոսագրում ենք Ձեզ. «Արևիքի տասն և երկու գյուղերի ներկայացուցիչներս, թվով վաթսունութ հոգի, դեկտեմբերի 22-ին համագումարում քննության առնելով ներկա քաղաքական դրությունը ստեղծված Հայաստանում՝ հետևյալ որոշումը արձակեց։ Բոլշևիկական իշխանությունը բռնի կերպով է փաթաթված հայ ժողովրդի վզին, Հայաստանը խորհրդային է հայտարարված տաճկական և ռուսական զորքերի բռունցքի ճնշման տակ։ Նորմալ պայմաններում երբեք նման քաղաքական հեղաշրջում չէր կարող կատարվել Հայաստանում, ընդհակառակը բազմիցս անգամ հայ ժողովուրդը ցայտուն կերպով արտահայտվել է, որ ինքը ազատ և անկախ հայրենիք է ցանկանում, և որովհետև բռնակալական ստոր միջոցներով մի ժողովրդի վզից փաթաթված իշխանությունը տևական լինել չի կարող, ինչպես նաև այդ իշխանությունը վայելել չի կարող ժողովրդի մեծամասնության հավատը ու վստահությունը, Արևիքի ժողովրդի ներկայացուցիչներս այն ամուր համոզման մեջ ենք, որ շուտով Հայաստանի հայությունը ոտքի կկանգնի և զզվանքով դեն կշպրտի այն լուծը, որը այսօր ակամայից ընդունել է իր վրա։ Ոտքի կկանգնի նոր ցասումով, ջարդ ու փշուր կանի այն երկաթե կապանքները, որոնցով խորհրդային իշխանությունը կապկպել է իրեն և նորից Արարատյան սրբազան դաշտերում կծածանեցնի ազատ և անկախ կյանքի կարմիր դրոշակը։ Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս այն համոզման ենք, որ այս ապստամբությունը ավելի արագ կկատարվի, եթե Զանգեզուրը կանգուն մնա իր սահմաններում. իսկ ժողովրդի հոգին և կամքը անընկճելի է իր հերոսական որոշման մեջ, այն է՝ ապրել ազատ և այդ իսկ նկատումներով Արևիքի ժողովրդական ներկայացուցիչներս դեկտեմբերի 22-ի համագումարում գտանք, որ մեր հորիզոնների վրա դեռ փրկության ճառագայթները ընդմիշտ չեն մարել, որ կա փրկության ճանապարհներ, ուստի որոշեցինք պաշտպանվել մինչև վերջին հնարավորությունը։

Թույլ չտալով ոչ մի օտար զորքի և օտար մարդկանց ներս խուժելու մեր երկրի սահմանները և խառնվել մեր ներքին գործերի մեջ»։

Ներկայացուցիչներ՝ 1, Դավիթ Դավթյան և 2, Խաչատուր Դանիելյան 26 12 1920 թվի երեկ. ժամը 8-ին, հանքերից»։

Համագումարը բուռն ծափահարություններով լսում է Արևիքի ներկայացուցիչների հեռախոսագիրը և առնում է ի գիտություն։ Համագումարի նիստերը երեք օր տևելուց հետո փակվում է դեկտեմբերի 27-ին, երեկոյան ժամը 3-ին։

Համագումարի նախագահ
ԳԵՂԵՈՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

Փոխնախագահներ
ԵԳ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԼԻՔ-ՀՅՈՒՍԵԻՆՅԱՆ

Քարտուղարներ
ՍԱՄՈՒԵԼ ՄԱՇՈՒՐՅԱՆ
ՆԻԿ. ԴՈՐՈՒՆՑ

Ստորագրած են արձանագրության մեջ հարյուր վեց (106) ներկայացուցիչներ։

Սույն պատճենը իսկականի հետ համեմատ է։

Ինքնավար Սյունիքի խորհրդարանի ԴԻՎԱՆ։

3-ին հունվարի 1921 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՎԱՃԱՌՔԻ

(28 հուլիս 1921 թ.)

Փետր. 16-17-ին, ցերեկ ու գիշեր, Հեղկոմը մի կողմից դաժան միջոցներով աշխատում էր գավառներում ծագած ապստամբությունը ճնշել, մյուս կողմից արագ պատրաստվում էր փախուստի։ Ի միջի այլոց սնդուկներում լցրել էր տվել պետական գանձը, բայց փետր. 18-ին խուճապահար փախուստի միջոցին սնդուկների մեկ մասը միայն տարել էր հետը։ Մնացյալ մասը ընկավ Հայր. փրկության կոմիտեի ձեռքը։

Բոլշևիկների յուրացրած գանձի մասին երբեք և ոչ մի տեղ չխոսվեց. այնքա՞ն բնական էր բոլորի համար, որ բոլշևիկը պիտի յուրացներ։ Հայր. փրկության կոմիտեի ձեռքը ընկած սնդուկները մնացին չբացված, պետական գանձարանում։ Եվ դեպի Զանգեզուր նահանջելիս, Հայաստանի Փրկության կոմիտեն տարավ իր հետ, հատուկ հանձնախմբի միջոցով, զինվորական ջոկատի հսկողության ներքև։

Որևէ հաշվեցույց չկա, թե Հայաստանի պետական գանձի ո՞ր մասն Հեղկոմն է տարել և ո՞ր մասն Հայր. փրկության կոմիտեն։ Համենայն դեպս մեծ մասը բաժին ընկավ Հեղկոմին, որը, սակայն, որևէ հաշիվ

ներկայացրեց հասարակությանը։ Հայրենիքի փրկության կոմիտեի տարած գումարները ծախսվեցին կառավարական ընթացիկ պետքերու և բազմահազար տարագիրների պարենավորման համար և այդ մասին, 1921 թ. վերջերը, Հայ. կառավարությունը հաշիվ ներկայացրեց հանրության։ Այստեղ առաջ ենք բերում այդ հաշվետվությունը.

«Հայաստանի կառավարությունը միայն այժմ է հնարավորություն ստանում ի մի ամփոփելու իր տրամադրության տակ գտնված դրամական և վալյուտային արժեքների մուտքն ու ելքը և հանդես գալու հասարակության առաջ մի համառոտ հաշվետվությամբ՝ թողնելով ուրիշ անգամվա տալու սպառող հաշիվ դրամական բովանդակ շրջանառության մասին։

Նահանջից առաջ, Հայրենիքի փրկության կոմիտեի որոշումով, Երևանից դուրս հանված և հետագայում կառավարության տրամադրության տակ են ընկած երեք տեսակի դրամներ. ա) հայկական դրամանիշներ ու չեկեր, բ) խորհրդային դրամներ և գ) վալյուտային արժեքներ։ Այսպիսի կարգով էլ կտանք մուտքի և ելքի հաշիվները։

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐ

1921 թ. մարտի 25-ին Երևանից Բաշ-Գառնի են տարվել տասն և հինգ արկղեր հայկական դրամներով, հետևյալ համարներով՝ 18, 19, 20, 28, 30, 31, 32, 34, 36, 38, 40, 44, 46, 48 և 50: Այդ արկղերի ընդհանուր պարունակությունն է կազմում ինը միլիարդ չորս հարյուր միլիոն (9,400,000,000) ռուբլի, չեկերի հաշվով։

Բաշ-Գառնիում պետական ծախքերի համար բացվել են № 19, 32 և 34 արկղերը, որի համար կազմվել են համապատասխան ակտեր. (տե՛ս ֆին. նախ. գործ № 1)։ Այդ երեք արկղի մեջ եղել է մեկ միլիարդ ինը հարյուր միլիոն (1,900,000,000) ռուբլի։ Բացի այդ, երկու ուրիշ արկղեր (№ 18 և 31), մեկ միլիարդ յոթ հարյուր հիսուն միլիոն (1,750,000,000) ռ. գումարով հանձնվել է Բաշ-Գառնիի ճակատի հրամանատարին (տե՛ս ֆին. նախ. գործ № 1 փաստաթղթեր № 9, 24 և 25) ճակատի կարիքների համար։

Բաշ-Գառնիում բացված դրամները ծախսվել են և տրվել են ավանսներ հետևյալ փաստաթղթերով, որ կան ֆին. նախարարի № 1 գործում՝ № 1–23: Ծախսերի և տրված ավանսների ընդհանուր գումարն է երկու միլիարդ վեց հարյուր հիսուն միլիոն (2,650,000,000) ռուբլի, որոնց մեջ մտնում է և ճակատի հրամանատարին տրված մեկ միլիարդ յոթ հարյուր հիսուն միլիոն (1,750,000,000) ռուբլին։

Մնացած տասն արկղերը՝ հինգ միլիարդ յոթ հարյուր հիսուն միլիոն (5,750,000,000) ռուբլու պարունակությամբ և վերոհիշյալ երեք

բացված արկղերից չծախսված մեկ միլիարդ (1,000,000,000) ռուբլին տեղափոխվել են Զանգեզուր։

Դեպի Զանգեզուր տարված վեց միլիարդ յոթ հարյուր հիսուն միլիոն (6,750,000,000) ռուբլուց Ղաթարի հանքեր են հասել և պետական կենտրոնական գանձարկղ մտել հինգ միլիարդ ութ հարյուր ութսուն երկու միլիոն ութ հարյուր երեսունութը հազար (5 882 838 000) ռուբլի հայկական դրամանիշներով։ Պակաս ութ հարյուր վաթսունյոթ միլիոն հարյուր վաթսուներկու հազար (867,162,000) ռուբլին ծախսվել է ճանապարհին և կամ իբրև առհաշիվ գումարներ մնացել զանազան անձանց վրա։

Ղաթարի հանքեր հասած հինգ միլիարդ ութ հարյուր ութսուն երկու միլիոն ութ հարյուր երեսունութ հազար (5,882,838,000) ռուբլուց ֆինանս. նախ. № 2 և 3 գործերի մեջ ամփոփված փաստաթղթերով ծախսվել և ավանսներ են տրվել յոթ հարյուր քսան ինը միլիոն երեսունմեկ հազար (729,031,000) ռուբլի։

Ղաթարի հանքերը թողնելիս, մնացած հինգ միլիարդ հարյուր հիսուներեք միլիոն ութ հարյուր յոթ հազար (5,153,807,000) ռուբլուց, վեց միլիոն ութ հարյուր յոթ հազար (6,807,000) ռուբլին բերվել է կառավարության հետ, իսկ հինգ միլիարդ հարյուր քառասունյոթ միլիոն (5,147,000,000) ռուբլին մնացել է Ղաթարի հանքերում։

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՐԱՄՆԵՐ

Պետական բանկից երեք նվագում, այն է 1921 թ. մարտի 25-ին, 27-ին և 30-ին հանվել է վեց հարյուր հիսուն միլիոն (650,000,000) ռուբլի խորհրդային դրամ։ Այդ դրամից Բաշ-Գառնի է տարվել հինգ հարյուր ութսուն յոթ միլիոն (587,000,000) ռուբլի։

Բաշ-Գառնի բերված հինգ հարյուր ութսունյոթ միլիոն (587,000,000) ռուբլուց իննսունհինգ միլիոն հինգ հարյուր հազար (95,500,000) ռուբլին հանձնվել է ճակատի հրամանատարին ճակատի կարիքների համար (տե՛ս ֆին. նախ. գործ. № 1 փաստաթուղթ № 9)։ Մնացած չորս հարյուր իննսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար (491,500,000) ռուբլին փոխադրվել է Զանգեզուր։ Հիշյալ գումարից Ղաթարի հանքեր է հասել չորս հարյուր քսանյոթ միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար (427,763,000) ռուբլի. մնացորդ վաթսուներեք միլիոն յոթ հարյուր երեսունյոթ հազար (63,737,000) ռուբլին ծախսվել է և կամ իբրև առհաշիվ գումարներ մնացել զանազան անձանց վրա։ Այդ գումարից մինչև 1921 թ. հուլիսի 6-ը (Ղաթարի հանքերը թողնելու օրը) գործում գտնվող փաստաթղթերով եղել է ծախս և տրված են ավանսներ երկու հարյուր քառասունինը միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր հիսուն (249,684,750) ռուբլի։ Այսպիսով, Ղաթարի հանքերը թող-

Նիկու ժամանակ գանձարանում եղել է հարյուր յոթանասունութ միլիոն յոթանասունութ հազար երկու հարյուր հիսուն ռուբլի (178,078,250), որից տասնչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր հիսուն (14,578,250) ռուբլի դուրս է հանվել կառավարության հետ, իսկ մնացած հարյուր վաթսուներեք միլիոն հինգ հարյուր հազար (163 500 000) ռուբլին մնացել է Ղաթարի հանքերում։

8. ՎԱԼՅՈՒՏԱ

Համաձայն հատուկ հանձնաժողովի 1921 թ. մարտի 25-ի կազմած ակտի, պետական բանկից դուրս են հանվել և Բաշ-Գառնի են տարվել հետևյալ վալյուտային արժեքները։

Ռուսական դրամներ

Ոսկի	3110	ռ. կ.
Բանկային արծաթ դրամ	1234	» —
Մանր արծաթ	4143	» 95
Գղնձադրամ	14	» 38
Նիկոլաևյան թղթադրամներ	138243	» —
Մարկաներ	150	» 05
Ընդամենը	146,895	ռ. 38 կ.

(Հարյուր քառասունվեց հազար ութը հարյուր իննսունհինգ ռուբլի երեսունութ կոպ.)

Ամերիկական դոլարներ

Ոսկի	125	դոլար
Բանկնոտ	1980	»
Չեկ	21250	»
Ընդամենը	23,355	դոլար

(Քսաներեք հազար երեք հարյուր հիսունհինգ դոլար)։

Անգլիական ֆունտ ստեռլինգ

Ոսկի	349	
Բանկնոտ	3108,10	
Չեկ	5053,12,5	
Ընդամենը	8511,2,5	

(Ութ հազար հինգ հարյուր տասնմեկ ֆ. երկու շիլինգ հինգ պենս)։

Ֆրանսիական ֆրանկներ

Ոսկի	1315	ֆրանկ
Բանկնոտ	7025	»
Ընդամենը	8340	ֆրանկ

(Ութ հազար երեք հարյուր քառասուն ֆրանկ)

Տանկական լիրաներ

Ոսկի	1639	լիրա
Արծաթ		84 մեջիտ
Բանկնոտ	7654	լիրա 1 պիաստր
Ընդամենը	9293	լ. 84 մ. 1 պ.

(Ինը հազար երկու հարյուր իննսուներեք լիրա ութսունչորս մեջիդ մեկ պստ)

Պարսկական դրաններ

Արծաթ	1960	դրան

(Հազար ինը հարյուր վաթսուն դրան)

Գերմանական մարկեր

Ոսկի	60	մարկ

(Վաթսուն մարկ)

Զանազան երկրների ֆրանկներ

Ոսկի	260	ֆրանկ

(Երկու հարյուր վաթսուն ֆրանկ)

Իտալական լիրաներ

Բանկնոտ	1266	լիրա

(Հազար երկու հարյուր վաթսունվեց լիրա)

Դանիական կրոններ

Բանկնոտ	530	կրոն

(Հինգ հարյուր երեսուն կրոն)

Զվիցերական ֆրանկներ

Ոսկի	200	ֆրանկ

(Երկու հարյուր ֆրանկ)

Ռումինական լեյիներ

Արծաթ		5 լեյի
		111 »
Բանկնոտ	Ընդամենը	116 լեյի

(Հարյուր տասնվեց լեյի)

Բուլղարական լևաներ

Բանկնոտ	31,605 լևա

(Երեսունմեկ հազար վեց հարյուր հինգ լևա)

Մեկ կնքված արկղիկ

(օղեր, խաչեր, ականջի օղեր)

Ոսկե իրեր	մեկ ֆունտ, հիսունմեկ մսխալ,

հիսունչորս դոլյա

Երկու ավստրիական մեդալներ

Անհայտ մետաղ	տասնութ դոլյա
Կեղծ մարջան	տասն և ինը հատ
Անդրկովկասյան բոներ	28510 ռուբլի

(Քսանութ հազար հինգ հարյուր տասը ռուբլի)

Բացի վերոհիշյալ վալյուտային արժեքներից, Երևանից դուրս է բերված զանազան ժամանակներում պետական բանկից և գանձարանից հանված, հետևյալ վալյուտային արժեքները.

Տաճկական ոսկի	451 լիրա
Ամերիկական ոսկի	70 դոլար
Ամերիկական թղթադրամ դոլար չեկ	1250 »
Ռուսական ոսկի	110 ռուբլի
Ռուսական Նիկոլևյան թղթադրամ	15000 »
Կովկասյան բոներ	33700 ռուբլի
Ամերիկական արծաթ	1 դոլար
Հնդկական արծաթ	1 ռուփի
Ռուսական արծաթ	85 կոպ.
Պարսկական արծաթ	5 դրան

Ոչ մեծաքանակ գումարներ, որոնց չափը ստուգվում է, հանված են բանկից կամ գանձարանից և հանկարծակի տեղի ունեցած նահանջի պատճառով մնացել են Հայրենիքի փրկության կոմիտեի դրամարկղում կամ սեղանի արկղերում։

Գաղթի ճանապարհին և Թավրիզում վալյուտային ընդհանուր ֆոնդի վրա ավելացել են հետևյալ արժեքները։

Քեշիշքենդում ստացվել են Նոր Բայազետի Հայրենիքի փրկության կոմիտեից հետևյալ արժեքները.

Կանացի արծաթյա գոտի	7 հատ
Տղամարդու արծաթյա գոտի	7 »
Կոզակի արծաթյա գոտի	2 »
Ապարանջան արծաթյա	7 »
Կաթնաման արծաթյա	1 »
Դաշույն արծաթապատ	1 »
Վազմաներ արծաթե շղթայով	12 »
Ժամացույց արծաթյա	3 »
Ժամացույց հասարակ	1 »
Օղիի բաժակ արծաթյա	1 »
Արծաթի մանր կտորներ	13 »
Նապոլեոն	21 »
Ազիզիե ոսկի	10 »
Կես մեջիտ ոսկի	29 »
Ոսկե մանր օղակներ	28 »
Ոսկե մատանի	1 »
Կերենսկու թղթադրամ	580 ռուբլի
Անդրկովկասյան բոներ	883 ռուբլի
Նիկոլևյան թղթադրամներ	2067 ռուբլի
Տաճկական մեջիտիե արծաթ	6 հատ
Տաճկական կես մեջիտիե արծաթ	4 »
Ռուսական արծաթ դրամ	76 ռուբլի 35 կ.
Գերմանական մարկ արծաթ	1 հատ։

Քեշիշքենդում և Մալիշկայում Եղբ. Մակարյաններից ստացվել են՝ տասնմեկ հատ մեծ և չորս հատ փոքր տաճկական ոսկե դրամ զարդեր։

Թավրիզում Վահե Արծրունուց ստացվել է.

Ռուսական ոսկի	35 ռուբլի
Ռուսական արծաթ	60 կոպեկ

Մահմուդիե	2 հատ
Նապոլեոն	1 հատ

Գորիսի գանձարանից վերցվել և մուծվել է վալյուտային ընդհանուր ֆոնդ հարյուր ինը (109) ռուբլի հիսուն կոպ. (50) ռուսական արծաթ դրամ։

Ստացված է չորս նվագում Թեհրանից (Փարիզի պատվիրակության ուղարկած) հինգ հարյուր երկու հազար հինգ հարյուր (502,500) ղրան։

Պետական բանկից դուրս բերված վալյուտային արժեքները, որոնց ցանկը տրվեց վերևում, ամփոփված չորս կնքված արկղերի մեջ բերվել են Զանգեզուր։

Արկղերից մեկը, արծաթյա դրամներով և իրերով թաղված է Երևանի և Մեղրիի ճանապարհին, իսկ մնացած երեք արկղերը Մեղրիում բացվել են և վերստուգության են ենթարկվել հատուկ հանձնաժողովի կողմից՝ բաղկացած Երևանից եկած և տեղական հասարակական գործիչներից։ Հիշյալ վերստուգությունից պարզվել է։

1. Արկղում ռուսական ոսկի պակաս է եղել. 60 ռուբլի։
2. Զվիցերական երկու հարյուր ֆրանկ ոսկու փոխարեն արկղում եղել է երկու հարյուր ֆրանկ զվիցերական թղթադրամ։
3. Ռուսական պղնձադրամից և մարկաներից պակաս է եղել տասներեք ռուբլի 83 կոպեկ։
4. Հարյուր քսանհինգ ոսկե դոլարի փոխարեն դուրս է եկել հարյուր քսան դոլար։
5. Տասնինը կեղծ մարջանները բնավ Երևան չեն եկել։
6. Նիկոլաևյան թղթադրամ Մեղրիում Երևան է եկել երեք հազար հինգ հարյուր ռուբլով ավելի։

Բացի վաթսուն (60) ռուբլի ոսկին, որի տեղը հայտնի է կառավարությանը, մնացած անկարևոր անհամեմատությունները համարվելու են հաշվական թյուրիմացության և սխալանքի արդյունք։

Վերջին հանկարծակի նահանջի ժամանակ վալյուտային վերոհիշյալ ընդհանուր ֆոնդից Ղաթարի հանքերում մնացել և էվակուացիայի չեն ենթարկվել հետևյալ արժեքները.

Ռուսական զանազան թղթադրամ	143,557 ռուբլի*
Անդրկովկասյան բոներ	28,510 ռուբլի
Դանիական թղթադրամ	530 կրոն
Իտալական թղթադրամ բանկնոտ	1266 լիրա

* Սանոթություն.— Համաձայն 1921 թ. մարտի 25-ին հատուկ հանձնաժողովի կազմած ակտի Նիկոլաևյան թղթադրամների գումարն է 138,243 ռ., սակայն փաստական ստուգումից պարզվել է, որ գումարն է ոչ թե 138,243 ռ., այլ 143,557 ռուբլի։

Զվիցերական թղթադրամ	200 ֆրանկ
Բուլղարական թղթադրամ	35 լևա
Ռումինական թղթադրամ բանկնոտ	111 լեյի
Տաճկական թղթադրամ բանկնոտ	1 պիաստր
Ֆրանսիական թղթադրամ բանկնոտ	2,025 ֆրանկ
Ռուսակ. մանր փող (մարկաներ և պղնձադրամ)	150 ռ. 61 կ.
Ոսկե ձուլվածք	62 մսխալ 82 դոլ.
Ոսկե մատանի կորած ակով	1 հատ
Կերենսկու թղթադրամ	580 ռուբլի
Հայկական չեկեր	1185 ռուբլի
Կանացի արծաթյա գոտիներ	7 հատ
Տղամարդու արծաթյա գոտիներ	7 »
Կոզակի արծաթյա գոտիներ	2 »
Ապարանջան արծաթյա	5 »
Կաթնաման արծաթյա	1 »
Վազմաներ արծաթյա շղթայով	12 »
Արծաթի մանր կտորներ	18 »

Մնացած վալյուտային արժեքները զանազան ժամանակներում դուրս են հանվել և, կազմելով կառավարության վալյուտային միջոցները, ծախսվել ու ծախսվում են գլխավորապես գաղթականության կարիքների համար։

Ամփոփելով վալյուտային բոլոր արժեքները՝ տեսնում ենք, որ կառավարության գանձարկղն են մտել հետևյալ վալյուտային արժեքները.

1. Ռուսական ոսկի	3255 ռուբլի
2. Ռուսական արծաթ	187 ռուբլի 30 կ.
3. Տաճկական ոսկի	2090 լիրա
4. Տաճկական թղթադրամ	7654 լիրա
5. Ամերիկական ոսկի	190 դոլար
6. Ամերիկական արծաթ	1 դոլար
7. Ամերիկական բանկնոտ	1980 դոլար
8. Ամերիկական չեկ	22500 դոլար
9. Անգլիական ֆունտ ստեռլինգ ոսկի	349 ֆ. ստ.
10. Անգլիական ֆունտ ստեռլինգ բանկնոտ	3,108,10
11. Անգլիական ֆունտ ստեռլինգ չեկ	5,053,12,5
12. Ֆրանսիական ոսկի	1,575 ֆրանկ
13. Ֆրանսիական ոսկի բանկնոտ	5,000 ֆրանկ
14. Բուլղարական թղթադրամ	31,570 լևա

15.	Գերմանական ոսկի	60 մարկ
16.	Ավստրիական ոսկի	21 կրոն
17.	Հնդկական արծաթ	1 ռուփի
18.	Պարսկական արծաթ	502,505 ղրան
19.	Ավստրիական Նապոլեոն	33 հատ
20.	Տաճկական ոսկե դրամ զարդարանքներ	64 հատ
21.	Բելգիական ոսկե դրամ զարդարանքներ	3 հատ
22.	Ոսկի մատանիներ	9 հատ
23.	Տաճկական մեջիտիեներ	10 հատ
24.	Բուլղարական ոսկի	10 լևա
25.	Ոսկե օղակներ	28 հատ
26.	Այլևայլ զարդարանքներ	26 մսխալ
27.	Գերմանական արծաթ մարկ	1 հատ
28.	Զարդարանքի վերածած ոսկե դրամներ և երկու խաչ	
29.	Արաբական ոսկե դրամ	16 մսխալ
		76 դոլեա
30.	Ապարանչան արծաթյա	2 հատ
31.	Դաշույն արծաթապատ	1 (թալանվ. անապարհ.)
32.	Ժամացույց արծաթյա	4 հատ
33.	Օղիի բաժակ արծաթյա	1 հատ
34.	Նիկոլաևյան դրամ	15000 ռուբլի
35.	Անդրկովկասյան բոն	83700 ռուբլի

Գաղթականության համար և այլ նպատակներով վալյուտային արժեքները ծախսվել են թե իրանց իրական արժեքով և թե վերածվելով ղրաններին։

Վերջացնելով այս ամփոփ տեղեկագիրը՝ հարկ ենք համարում ավելացնելու, որ հատուկ մի հանձնաժողովի ձեռքով, ինչքան ներում են պայմանները, ի մի են հավաքվում և ամբողջացվում բոլոր հաշիվները, ինչպես նաև ըստ էության քննության են ենթարկվում կատարված ծախսերը և ստուգվում փաստաթղթերը։ Բացի հրապարակային հաշվետվությունից, Հայաստանի կառավարությունը իրեն պարտավոր է համարում հաշիվ ներկայացնել նաև Հայաստանի ապագա օրինական իշխանությանը։ Կառավարության դրամական գործառնությունների մասին եղած ամբողջ նյութը կպահվի և ապագայում կհանձնվի Հայաստանի պետական վերահսկողության*։

Հայաստանի կառավարության նախագահ
Ս. ՎՐԱՑՅԱՆ

Ֆինանս. նախարար
Հ. ՏԵՐՏԵՐՅԱՆ

Հաշվեքննիչ մարմնի անդամներ
Գ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ,
ԱՐՇ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՐՇ. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

---

* Հայկի 28-ից մինչև սեպտ. 1 ծախսվել են գաղթականության և այլ կարիքների համար հետևյալ գումարները.

1) Տաճկական ոսկի	5 լիրա
2) Պարսկական ղրան	212,527 ղր. 45 սբ.
3) Խարճղային դրամ	1,700,000 ռուբլի

ԿԱՐՍԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Ինչպես հայտնի է, Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեզրանի միջև, 1920 թ. դեկտ. 2-ին, կնքված համաձայնությամբ, Հայաստանը պիտի լիներ խորհրդային անկախ հանրապետություն: Այդ անունով էլ մնաց մինչև Անդրկովկասյան Դաշնակցության կազմությունը 1921 թ. դեկտեմբերին, երբ Կովկասի երեք հանրապետությունները զրկվեցին իրենց անկախությունից և Անդրկովկասյան Դաշնակցության միջոցով դարձան Խորհրդային Ռուսաստանի մեկ մասը:

Մինչև Անդրկովկասյան Դաշնակցության ստեղծումը Խորհրդային Հայաստանը անվանապես պահեց գերիշխան պետության ձևական բոլոր հատկանիշները, որոնց մեջ և արտաքին միջպետական հարաբերությունները, նույնիսկ դեսպան և հյուպատոսներ ունեցավ որոշ երկրներում:

Խորհրդային Հայաստանի «անկախ» գործերից մեկը եղավ և Կարսի խորհրդաժողովը, ուր 1921 թ. հոկտ. 13-ին Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց Կարսի դաշնագիրը:

Կարսի Խորհրդաժողովը նախորոշված էր Մոսկվայում 1921 թ. մարտ 16-ի ռուս-թուրքական դաշնագրով, որի Անդրկովկասին վերաբերող մասերը պետք է վավերացվեին նաև Անդրկովկասյան հանրապետությունների կողմից: Հետևաբար, Կարսի խորհրդաժողովը հավաքված էր վավերացնելու համար Մոսկվայի մարտի 16-ի դաշնագիրը:

Խորհրդաժողովը բացվեց սեպտ. 26-ին, Թուրքիայի ներկայացուցիչ Քյազիմ Կարաբեքիր փաշայի նախագահությամբ: Հայաստանի ներկայացուցիչն էր Ասք. Մռավյանը, Ազրբեջանի՝ Բեհրուտ Շահթախտինսկի, Վրաստանի՝ Շալվա Էլիավան: Սրանց, իբրև դայակ, Խորհրդային Ռուսաստանի կողմից ընկ. Գանեցկի:

Խորհրդաժողովի առաջին իսկ նիստում առաջ եկավ տարակարծություն Թուրք և Խորհրդային պատվիրակությունների միջև թե Խորհրդաժողովի կազմի, թե իրավասության և թե մի շարք ուրիշ հարցերի շուրջ: Բոլոր հարցերում Խորհրդային ներկայացուցիչները զիջեցին: Փաստորեն Գանեցկին և իր ընկերները ստիպված եղան ընդունելու Քյազիմ Կարաբեքիր փաշայի վերջնագրի բնույթ կրող պահանջները:

Կարսի դաշնագրով փաստորեն հայ բոլշևիկներն էլ իրենց կնիքը դրին Թուրքական զենքի ուժով խլված Ալեքսանդրապոլի դաշնագրի տակ: Որոշ կետերում Կարսի դաշնագիրը նույնիսկ ավելի ի վնաս էր Հայաստանի, քան Ալեքսանդրապոլինը:

Թուրք-Խորհրդային հարաբերությունների և Հայաստանի կառավարություն դարձած հայ բոլշևիկների քաղաքական տկարության և անճարակության բնորոշման տեսակետից էլ հետաքրքրական է Կարսի խորհրդաժողովը: Այստեղ առաջ կբերենք այդ ժողովի ամփոփ արձանագրությունները այնպես, ինչպես տրված են «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի 1921 թ. հոկտեմբերի համարներում:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

«Առաջին նիստը տեղի ունեցավ Խորհրդաժողովի բացումից անմիջապես հետո, սեպտ. 26-ին: Նախագահում էր Կարաբեքիր Քյազիմ փաշան: Թուրք պատվիրակության կողմից Կարաբեքիրը արավ հետևյալ երկու առաջարկները.

1. Նիստերի արձանագրությունները կատարել ֆրանսերեն լեզվով, որից հետո թարգմանվի թուրքերեն, ռուսերեն, հայերեն և վրացերեն լեզուներով:

2. Դաշնագրությունները կնքել երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին պայմանագրերով:

Անդրկովկասի հանրապետությանց պատվիրակություններից Կարաբեքիրի առաջին առաջարկը ընդունվեց, բայց և կտրուկ կերպով մերժվեց նրա երկրորդ առաջարկը:

Թուրք պատվիրակության նախագահը հայտնեց, որ իրենք իրավասություն չունենալով հավաքական դաշնագիր կնքելու առանձին-առանձին դաշնագրերի տեղ՝ այս հարցի մասին չեն կարող վճիռ տալ, որով ստիպված են հեռագրով հրահանգ սպասել Անգորայից:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Երկրորդ նիստը տեղի ունեցավ սեպտ. 27-ին: Նիստի սկզբին Կարաբեքիրը ներկայացրեց հետևյալ երկու առաջարկները, որոնք ընդունվեցին.

1. Մոսկվայի դաշնագրի անփոփոխ ընդունումը, գլխավոր պարագային դադարեցնել Խորհրդաժողովի աշխատանքները, մինչև որ նոր հրահանգներ ստացվին Անգորայից:

2. Մանր և զուտ տեղային նշանակություն ունեցող սահմանային հարցերի համար կազմել տեղվույն վրա ճշտող Գանձնաժողովներ:

Անդրկովկասյան հանրապետությունների կողմից ընկեր Գանեցկին ներկայացրեց հետևյալ երկու սահմանագծային պահանջները, որոնց առաջինը վերաբերում էր Անիի ավերակներին, և ասաց. «Դա հայերի համար ունի պատմական և գիտական մեծ արժեք»: Երկրորդը՝ Կողբի պահանջն էր, որ իր աղահանքերով ներկայացնում է համակովկասյան նշանակություն:

Թուրք պատվիրակության նախագահը հայտնեց, որ իրենք ոչ մի

իրավասություն չունին Մոսկվայի դաշնագրով գծված սահմանի մեջ փոփոխություն կատարելու, և դրա համար Անգորայից հրահանգ պետք է ուզել։

Վերոգրյալ հարցերի վիճաբանությունից հետո, ընկեր Գանեցկին ժողովին ներկայացրեց մի շարք գյուղերի անուններ՝ հարց դնելով, թե ո՞ւմ պետք է պատկանին։

Կարաբեքիրը շեշտեց, որ վերոհիշյալ հարցերը սահմանափակ, զուտ տեղական նշանակություն ունին, որով առաջարկեց նրանց ճշտումը թողնել տեղվույն վրա գործող հանձնաժողովներին, առաջարկեց սահմանագծումների համար մեկ-քանի ընդունված կանոններ, որ ընդունեցին նաև անդրկովկասյան պատվիրակությունները։

Ըստ այդ կանոնների, սահմանագիծ կարելի չէ ընտրել այն գյուղը, որից կարող են գյուղի բնակիչների համար տեղական նշանակություն ունեցող դժվարություններ ծագել։ Եթե սահմանի վրա ձոր կա, այդ ժամանակ ձորը կլինի սահմանը, եթե բլուրներ կան, բլուրները բարձրագագաթից երկուսի կկիսվին, իսկ եթե տափարակ դաշտ է, կամ բլրակները անկանոն են, իբրև սահման կընդունվի մի ուղիղ գիծ, որ երկուսի կբաժանե դաշտը։

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Երրորդ նիստը գումարվեց սեպտ. 28-ին։ Նիստի սկզբին ընկ. Գանեցկին հարց դրեց նիստերին նախագահելու խնդիրը և առաջարկեց, որ «ընդունված կանոն է մեջընդմեջ նախագահել»։ Այս առաջարկությունը առանց վիճաբանության ընդունվեց Թուրք պատվիրակության կողմից։

Կարաբեքիրը հայտնեց ժողովին, որ ստացել է պատասխան Անգորայից՝ դաշինքը ստորագրելու ձևի մասին և թե Թուրք կառավարությունը մնում է իր նախկին տեսակետի վրա՝ առաջարկելով կնքել դաշնագրությունը երեք հանրապետությունների հետ առանձին-առանձին։

Ընկ. Գանեցկին կրկնեց իր առարկությունները և ասաց, թե իրենք հաստատ են մնում իրենց տեսակետի վրա։

Այս խնդիրը անորոշ կերպով փակվելուց հետո, Թուրք պատվիրակությունը կարդաց Բաթումի մասին իրենց ունեցած պահանջները։

Բաթումի մասին Թուրք պատվիրակության արած առաջարկը մանրամասն քննադատության ենթարկվեցավ Գանեցկիի կողմից, որ առաջարկեց մի մասնավոր հանձնաժողով ընտրել այս խնդրով զբաղվելու համար։ Նա շեշտեց, որ Թուրքիան պետք է ունենա ազատորեն օգտվելու իրավունք Բաթումի մի նավահանգստից, բայց Թուրք պատվիրակության առաջարկների մեջ գտավ որոշ հակասություն Մոսկվայի դաշնագրի հետ, որ հիմք է կազմում Կարսում կատարված բանակցությանց։

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Չորրորդ նիստը ամբողջապես հատկացվեց դաշնագիրը ստորագրելու ձևի մասին առաջ եկած անհամաձայնությունը հարթելու խնդրին, որ տեղի տվեց երկար վիճաբանությունների։

Թուրք պատվիրակությունը հայտնեց, որ իրենք կհամաձայնին դաշնագիրը ստորագրել այն պայմանով, որ դաշնագրի մեջ առանձին-առանձին բաժանված լինեն Ադրբեջանին, Վրաստանին և Հայաստանին վերաբերող խնդիրները։

Այս առաջարկն էլ վճռաբար մերժվելով՝ Անդրկովկասի հանրապետության պատվիրակները առաջարկ ներկայացրին ուղղակի Անգորայի հետ հարաբերության մեջ մտնել՝ մի բացատրողական հեռագիր ուղարկելով, ուր գրված լինի այն բոլոր պատճառները, որոնք ստիպում են իրենց դաշնագիրը կնքել հավաքաբար, առանց առանձին բաժանումների և պայմանագրությունների։ Թուրք պատվիրակությունը ևս խոստացավ իր կողմից մի նոր հեռագիր ուղարկել Անգորա, և այս խնդիրը փակված նկատեց։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Հինգերորդ նիստը բացվեց երկուշաբթի օր, հոկտ. 10-ին, ժամը 3-ին։ Այս նիստում կարդացվեց դաշնագրի հոդվածները, որոնք փոքրիկ փոփոխությունների ենթարկվելուց հետո, վերջնականապես ընդունվեցին երկու կողմերից էլ։ Այդ հոդվածները մշակված էին պատվիրակությունների անպաշտոն նիստերում։ Այս տեսակ ինը նիստեր տեղի ունեցան։

Այս նիստում Թուրքերի և անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունների կողմից եղան պաշտոնական հայտարարություններ՝ համապատասխան հոդվածների ընթերցումից հետո։ Հայտարարությունները արձանագրվում էին քարտուղարների կողմից, նկատի առնվելու համար երկուստեք իրենց առաջիկա փոխհարաբերությունների ընթացքին։

Այս հայտարարությունները վերաբերվում էին կետերին, որոնց շուրջ երկու կողմի պատվիրակությունները չէին համաձայնած և կամ համաձայնվելով հանդերձ՝ ընդդիմացել էին դաշնագրերի մեջ իբրև հոդված մտցնելու։

Սահմանագծումի խնդիրներին վերաբերող հոդվածի ընթերցումից հետո, Անդրկովկասի պատվիրակությունների կողմից ընկ. Գանեցկին արավ հետևյալ հայտարարությունները, որոնք, խորը լռության մեջ, ազդու տպավորություն թողին։

Առաջինը Անիի և երկրորդը Կոզբի մասին էր։

Մենք այն հույսը ունեինք, որ Թուրք պատվիրակությունը դրական

պատասխան պիտի տա Անիի մասին Հայաստանի արած պահանջին, որ զուրկ էր ամեն տեսակ զինվորական, տնտեսական և աշխարհագրական նկատումներից և մեզ համար ունի զուտ գիտական կուլտուրական արժեք։ Վերջին պահուն, ինչպես Կողբի, նույնպես և Անիի մասին Թուրք պատվիրակությունը մերժողական պատասխան տվեց, առարկելով, թե Անին Ախուրյանի արևմտյան եզերքին է գտնվում, ուստի հայերին տրրվելով՝ կխախտվի Մոսկվայի դաշնագրի սկզբունքը։

Ահա այս առթիվ Գանեցկիի հայտարարությունները. «Անդրկովկասյան հանրապետությունների պատվիրակությունները ամենախորունկ ցավով արձանագրում են Անիի մասին իրենց արած առաջարկի մերժումը։ Անին ներկայացնում է հայերի համար ազգային-պատմական և գեղարվեստական արժեք։ Ավելացնում ենք նաև, թե Անդրկովկասի ժողովուրդները այդ մերժումը պիտի ընդունին ճշմարիտ ցավով։

Կողբի աղահանքերը ունենալով համակովկասյան նշանակություն, որովհետև տարիներով նրանք հայթայթել էին Անդրկովկասի աղի պահանջը, մենք նախապես ներկայացրել էինք Կողբի աղահանքերը Հայաստանին թողնելու մի առաջարկ։ Բայց նկատելով այս մասին Թուրք պատվիրակության առարկությունները՝ մեր այս առաջարկը փոխել էինք՝ վերածելով այն Կողբի աղահանքերը Հայաստանի կառավարության մենաշնորհ տալու առաջարկին։

Թուրք պատվիրակությունը ներկայումս մերժում է նաև այս առաջարկը. մենք արձանագրում ենք նշանակություն ունեցող այս խնդրի մասին և անցնում ենք ուրիշ հոդվածների քննության»։

Թուրք պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիր փաշան ի պատասխան Գանեցկուն, հայտնապես նեղված եղանակով, հետևյալ հայտարարությունները արավ.

«Անիի մասին մեր մերժումը Մոսկվայի դաշնագիրը չխախտելու սկզբունքի մեջ է կայանում։ Այսուհանդերձ ամեն ապահովություն կտրրվի այնտեղ ապրողների և գիտական աշխատանքներ կատարողների համար»։

Մերժելով Կողբի մասին եղած առաջարկները՝ Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարեց, թե Կողբը առաջվա պես պիտի գոհացնե Անդրկովկասի պահանջը։

Նախիջևանի անկախության վերաբերյալ հոդվածի ընթերցումից հետո, Քյազիմ Կարաբեքիր փաշան մի քանի հարցումներ արավ Նախիջևանի ինքնավարության վերաբերվող մի շարք խնդիրների շուրջ։

Ազրբեջանի ներկայացուցիչ Թեհրուտ Շահթախտինսկին պատասխանեց այդ հարցումներին։ Մոսկվայի դաշնագրի տրամադրության համաձայն, Նախիջևանը ինքնավարություն է ստանում Ազրբեջանի հովանավորության տակ։

Քյազիմ Կարաբեքիր փաշայի հարցումները հետևյալ կետերի շուրջ էին. պաշտոնական լեզվի, կրթական, ամուսնական, գերիների, կրոնական ազատության և այլ խնդիրների։

Թուրքական նավերին և ապրանքներին տրվելիք մի քանի առավելությունների վերաբերյալ հոդվածները անդրկովկասյան պատվիրակությունների կողմից երկրորդ անգամ փոփոխության ենթարկվեցին և հետո ընդունվեցին։ Այդ հոդվածների համաձայն, Թուրքիան իրավունք պիտի ունենա առանց տրանզիտի իր ապրանքները անցկացնել Վրաստանից Թուրքիա։ Թուրք նավերը պիտի վայելեն մասնավոր առավելություններ։

Թուրք պատվիրակությունը հետաքրքրվեց նաև Աջարիայի ինքնավարությամբ. Վրաստանի պատվիրակ Շալվա Էլիավան ցույց տվեց այդ մասին հրատարակված դեկրետը։

Գերիների վերադարձին և 1918-ից ի վեր Թուրքիայի դեմ գործող թրքահպատակների վերաբերյալ հոդվածի առթիվ Գանեցկին դիտողություն արավ պայմանաժամի մասին։

Քյազիմ Կարաբեքիր փաշան հայտարարեց, թե առանց պայմանաժամին սպասելու արդեն իսկ գերիները ազատ պիտի արձակվին և համապատասխան հրամանագիրն էլ իր ժամանակին պիտի հայտարարվի։

Գանեցկին Անդրկովկասի պատվիրակության կողմից շնորհակալություն հայտնեց։

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Վեցերորդ և վերջին նիստը տեղի ունեցավ հոկտ. 18-ին, ժամը 12-ին։

Նիստը բացեց Գանեցկին, որ առաջարկեց ստորագրել պատրաստված դաշնագիրը։

Ստորագրության արարողությունը կատարվեց հանդիսավոր կերպով։ Պատվիրակություններից զատ, ներկա էին քաղաքային և զինվորական իշխանությանց ներկայացուցիչները, որոնք ոտքի կեցած էին։ Ներկա էին նույնպես Թուրք սկաուտներից մի տասնյակ պատանիներ։

Խոր լռության մեջ կարդացվեց ֆրանսերեն բնագիրը, որից հետո ստորագրվեցին նիստերի արձանագրությունները։

Ժամը մեկուկեսին կատարվեց դաշնագրի ստորագրումը։ Կարսի բերդից, ստորագրության պահուն, արձակվեցին թնդանոթի չորս հարվածներ, և Թուրքական նվագախումբը նվագեց Ինտերնացիոնալը և Թուրք ազգային քայլերգը։

Այրուբենի կարգով ստորագրեցին Հայաստանի, Ազրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները։

Ստորագրվելուց հետո, ճառեր արտասանեցին Քյազիմ Կարաբեքիր

փաշան և Գանեցկին, և հետո խորհրդաժողովը փակված հայտարարվեց։

Առաջ բերենք նաև Կարսի դաշնագրի հիմնական հոդվածների բովանդակությունը։

1. Առաջին հոդվածով չեղյալ են հայտարարվում Թուրքիային վերաբերող բոլոր դաշնագրերը, որոնք ստորագրված են Թուրքիայի և Ռուսաստանի ու Անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև, բացի 1921 թ. մարտ 16-ի Մոսկվայի դաշնագրից։ Ասել է, թե չեղյալ են հայտարարված և Ալեքսանդրապոլի, Բաթումի ու Սևրի դաշնագրերը։

Երկրորդ հոդվածով Ռուսաստան և Անդրկ. հանրապետությունները պարտավորություն են ստանձնում չճանաչելու Թուրքիային վերաբերվող որևէ միջազգային համաձայնություն, որ ճանաչված չէ Ազգ. մեծ ժողովի Թուրքիայի կառավարության կողմից։ Այս վերջինս էլ, իր հերթին, պարտավորվում է չճանաչել որևէ դաշինք, որ չի ճանաչվում Հայաստանի, Ազրբեջանի և Վրաստանի կառավարությունների կողմից։

Չորրորդ հոդվածով գծվում է Թուրքիայի և Անդրկովկ. հանրապետությունների սահմանը, բառացի կերպով կրկնությունը Մոսկվայի մարտի 16, դաշնագրի համապատասխան հոդվածի։

Հինգերորդ հոդվածով Նախիջևանը վեր է ածվում ինքնավար շրջանի Ազրբեջանի հովանավորության տակ։

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբաջյան Մ. 572
Աբաշիձե 19, 44, 82
Աբացիև 618, 623
Աբգարյան Մ. 380
Աբեղյան Ա. 379, 399, 460
Աբելյան 461
Աբովյան 228, 229
Աբոյան Բ. 38, 271
Աբրամյան Հովհ. 341
Աբրահամյան Հ. 270
Աբրո 625
Ադոնց Ն., պրոֆ. 14
Ազատյան Հ. 187, 198, 206, 230
Ազիզյան Ց., սպա 241
Աթաբեկյան Մ. 206, 207
Աթաբեկյան Լ. 37, 40, 41, 43, 47, 165, 167, 171, 173
Աթաբեկյան Նատալյա 335
Աթաբեկյան 542, 552, 558
Աթանեսյան Միհր. 388
Ալիբեկյան Մ. 266
Ալթունյան, գոկտ. 284
Ալեքսանյան (Վատման) 247
Ալեքսանյան Ե. 270
Ալի Մարդան բեգ Թուքիքաչի 22, 74, 167
Ալլահվերդյան Ս. 432
Ալո Իսմայիլ Օղլի 393
Ախիկյան 375
Անարանյան Ավ. 37, 51, 106, 127, 159, 186, 193, 209, 214, 216, 235, 291, 295, 362, 468, 637
Անարանյան Վ. 279, 387
Աղան 74, 77, 78, 81, 397, 398
Աղամալյան Ց. 28
Աղաբոն Ե. 284
Աղամալի Օղլի 392
Աղաբաբեգով 132
Աղաչանյան, բժ. 41, 380
Աղբալյան Ն. 14, 44, 45, 48, 51, 107, 127, 187, 384, 423, 472, 478, 543, 559, 618
Անեմյան Մ. 14
Ամանյան Մ. 553
Ամատունի 422
Ամիրխանյան Հ. 459
Ամիրխանյան Լ. 372, 446
Ամիրյան Ե. 463
Ամիրյան Թագ. 174
Ամիրյան Իվ. 14
Այվազյան, բժ. 37
Այվազյան Կոստյա 477
Այզենման 187
Անանուն Դ. 39, 172, 385, 448, 451, 456, 518, 541, 643
Անդրանիկ 4, 10, 12, 30, 32, 37, 63, 64, 95, 96, 120, 269, 271, 329, 348, 350, 616—618, 622, 624
Անդրեասյան, բժ. 251
Անդրաբատով Ա., սպա 241
Անիյան Ց. 62
Աշոտ 647, 652
Ռազացին, գեն. 623
Ապրեսյան, գնդ 315, 316
Առաքելյան Ալ. 178
Առաքելյան Դանիել 341
Առաքելյան Հ. 41, 44
Առաքելյան Վ. 270, 279
Ասատուրյան Ա. 125, 126, 143, 379, 543, 594
Ասատուրյան Ավ. 351
Ասադուլլա խան 384
Ասաղ Քարան 392
Ասքր Վ., գեր. 330
Ասլանյան, փոխգլխավոր 234
Ասլան բեգ Սաֆիքուրդսկի 60
Ասլան (Ոզմցի) 577
Ասլանյան Գ. 271
Ասլանյան Մանուել 553
Ասրիբեգյան 14, 130
Ավալյան 386
Ավալով Զ. 118, 153, 154

Ավդալ Մարտո Օղլի 393
Ավետիսյան Տ. 75
Ավետիսյան, գնդ. 175
Ավետիսյան Հովսեփ 388
Ավետիսյան Ա. 270, 351, 373, 386
Ավերիանով, զոր. 27
Ավիս 479, 558, 593, 594
Ավո 617
Ատոմյան Թումաս 553
Առարատյան Ս. 41, 43, 165, 171, 180, 208, 279, 295, 296, 384, 416, 506, 509, 557
Առարատյան Ք., զոր. 267, 276, 279, 296
Առարատյան Ս. տիկ. 390
Աղղուբյան Հովսեփ 11, 296, 318, 349, 371, 625
Աղղուբյան Կ. Ս. 452
Արիստակեսյան Հ. 457
Արիֆազյան 393
Արիֆ բեյ 475
Արմեն Գարո 618, 623
Արզումանյան Մ. 116, 332
Արտուշ (խան) 565
Արեշյան, զոր. 64, 94, 448
Արզումանյան Մ. 75, 92
Արշավիր 605
Արծրունի 14
Արսենիձե 108
Արսեն-Կիտուր 271, 275, 279
Աֆրիկյան Վ. 379, 385, 594

Բաբաջանով, գնդ. 508, 509
Բաբայան Ա., բժ. 51, 159, 187, 484, 506, 509
Բաբայան Հ. 572
Բաբայան Վ. 390, 459, 543, 594
Բաբաև Բ. Ա. 168
Բաբաբեխովյանց Բենիամին 341
Բաբլաշյան-Բաբլումյան Ա., սպա 241
Բագրատ եպս. 165
Բագրատունի 181, 237
Բագունց Աբա. 351
Բագունց Եր. 350, 351
Բալայան Գ. 173, 175, 279, 331, 332, 351
Բալայանց Սմբատ 341, 396
Բալասանյան Հակոբ 341

Բաղդասարյան Տ. 62, 386, 424, 506, 508, 513
Բաղդասարյան Բ., բժ. 460
Բաղեր աղա Մահմեդ Օղլի 393
Բաղրամյան Հ., զոր. 267
Բաշինջաղյան Գ. 375
Բախտամյան, գնդ. 169
Բասենցյան Շ. 270
Բարխման 621, 622
Բարխուդարյան Ա. 379, 461
Բարսեղյան Ա. 284
Բեժան Բեգ, զոր. 148
Բերուքով Հ. 57
Բենաեղդին Շաֆիր 9, 273, 473, 475, 605
Բեգզադյան Տ. 51, 74, 106, 159, 266, 366, 371, 397, 400, 472, 498, 567
Բեգզադյան Ա. 548, 551, 555
Բեժիր Սամի 496,487
Բերբերյան Մինաս 205, 206, 251
Բիչերախով, գնդ. 177
Բիչ, զոր. 370
Բոյաջյան Ստեփանոս 553
Բոնապարտյան Խ. 275
Բոնապարտյան, զոր. 32, 271, 272
Բորյան 432, 543, 547, 556
Բորոյան Սմբատ 32, 275
Բրուտյան Ս. 572
Բուզդաև 367
Բուդաղյան Արմենակ 402
Բուդաղյան Հ. 379
Բուլղարացի Գ. 63, 271, 275
Բունիաթյան Մ. 118
Բուռնուքյան Ն. 271
Բուրշալյան Գ. 461

Գաբաև 113
Գաբբան, գնդ. 397
Գաբրիելյան Լ. 241
Գազանջյան 271
Գալաթյան Ա. 572
Գալեմբարյան Մ. 572
Գալիկյան Հրանտ 33
Գալկինի 463
Գալիցին 15
Գալստյան Ս. 270, 507
Գանեցկի 685—689
Գանթարջյան 493

Գաչինսկի Մ. 82, 111, 118, 168, 371
Գասպարյան Ավանես 341
Գասպարյան 472
Գեգեչկորի Ե. 57, 74, 101, 103, 110, 112, 249, 367, 397, 398, 492
Գեղևանով, զոր. 249
Գելեյշվիլի Պ. 57
Գեղամյան Ջ. 387
Գեորգաձե 108, 111, 139, 217
Գեսիբեգյան Աբ. 341
Գիբն, սպա 348
Գլատերբերգ 337
Գյուլնազարյան Մ. 355, 358, 566
Գյուլիֆյոխվանց Իսրայել 341
Գյուլխանդանյան Ա. 165, 171, 175, 182, 296, 378, 404, 416, 506, 515, 519
Գյուլխանդարյան Մ. 388, 642
Գնդունի 508, 513
Գոբեչյան 57
Գոգուաձե 217, 220, 224
Գոնինսկի 174
Գվազավա 82, 101
Գվոզդով 58
Գրին (սպա) 228
Գրիգորյան Գ. 590, 664
Գրիգորյան Խ. 566
Գրիգորյան Հ. 241
Գրիգորյան Մ. 371
Գրիգորյան Ստ. 369
Գրեյսին 265
Գրուզենբերգ Օ. 449
Գուլիև Սուլթան 474
Գուլկեիչ 5, 6
Գուրգենովիչ Ս. 369
Գևորգ Ե., կաթողիկոս 280
Գևորգյան Գ. 578, 664
Գևորգ Սուլթան Շահ 241

Դալիգդաշ 507
Դալի Ղազար 146, 187, 396
Դանիելյան Խ. 350, 351, 666
Դանիելյան Վ. 241
Դաստակյան Աբր. 165
Դարբինյան Արտակ 32
Դարբինյան 448, 643
Դարմանյան Մ. 28, 271
Դավթյան Դավիթ 666
Դավիթ բեգ Մ. Ս. 284
Դավիթիխանյան Դ. 266

Դավթյան Վ. 241
Դավրիշ Աբա Օղլի 393
Դեմիրճյան Դ. 449
Դենիկին 366, 367, 381, 382, 404, 405, 474
Դենստերվիլ, զոր. 181, 182
Դեն, զոր. 92, 115, 116
Դիլանյան 458
Դիտիմով, գնդ. 210
Դոլուխանյան, գնդ. 133
Դոկուչան, զոր. 181
Դոնսկոյ Դ. 57, 62
Դովլաթյան Արամ 180, 472
Դորա 433
Դորունց Ն. 590, 658, 667
Դրամփյան Թադ. 388
Դրամբյան Ռ. 271, 275
Դրո 10, 62, 98, 106, 120, 125, 128, 132, 135, 141, 142, 146, 148, 203, 216, 218, 230, 232, 238—241, 262, 267, 280, 335, 394, 396, 472, 484, 506, 513, 521, 531, 533, 534, 538, 539, 543, 558, 593—595, 616, 618
Դուրյան Եղ., արք. 284
Դևի, զոր. 262, 277

Եղիազարյան Խ. 128, 131, 134
Եղիազարյան, ճարտ. 463
Եղիազարյան Ս., բժ. 561
Եղո 347
Ենգիբարյան Գ. 133
Եսայան Զապել 32, 165
Եսայան Մելիք 351
Երզնկյան Ա. 47, 48, 51, 106, 111, 159, 228, 229, 480, 649
Երզնկյան Ե. 401
Երկանյան Արամ 605
Երկանյան Ս. 375
Եվանգուլյան Գ. 90
Եվանգուլյան Լ. 249, 266, 365, 420

Զալինյան, գնդ. 128
Զալյան-Մանուկյան տիկ., բժ. 390
Զավարյան Ս. 41, 411, 412, 611
Զավալիշին Ա. 374
Զավրյան Հ., բժ. 27, 36, 63, 74, 618, 624
Զարաֆյան Լ. 230, 331, 332, 479, 492, 519
Զարիֆյան 386, 445, 461

Զաքարյան Մ. 350, 351, 458
Զաքարյան Գ. 51, 187, 194, 198
Զեմլյակ 148
Զենկեր, գեղ. 63, 64, 381, 383, 384
Զիաբխանով 311
Զաճրաբյան Ա. 37, 74, 152, 156, 403
Զաճրաբյան Լ. 456
Զարին Ա. 198
Զարյան Ա. 28, 280
Զարյան Թադեոս 36, 55, 74, 165, 169, 179, 180, 182, 411, 624
Զվարիկ 473
Զուբյան Դ. 125, 194, 206

Էդմոնդ Լ. Դեյլի, գեղ. 326
Էդիֆ բեյ 358, 359
Էլդեր 279
Էյուբ փաշա 319
Էնվեր 12, 66, 72, 119, 121, 182, 184, 272, 336, 419, 473—475, 500, 606
Էնֆիաջյան Ա. 206, 207, 254, 282, 468

Թագեոսյան Ա. 117, 449
Թագեոսյան Ե. 353, 462
Թադեոսյան Լ. 318, 379
Թադեոսյան Հ. 14, 28, 459
Թադեոսյան Ս. 117
Թաիրով 358
Թալանյան 372
Թալեաթ 182, 272, 336, 419, 499, 605, 606
Թալեաթ Թյուլուկ 473, 475
Թալի 393
Թաղիանոսյան Ստ. 165
Թաղիանոս 578
Թամամշյան 150
Թամանյան Ա. 374, 426, 454, 460, 462—464, 603
Թան Ֆեոդոր 241
Թառայան Հեղ. 463
Թարխանյան Կուտա 134, 203, 233, 499, 506, 507, 560, 561, 577
Թարխարարյան Ստ. 462, 463
Թարվերդյան Գ. 135, 231
Թեքիրյան Սաղոմոն 605, 606
Թեմքրլիյ, գեղ. 361
Թեմուրյան (եղբի, Ցուտոֆ բեգ) 372
Թեյմուր աղա 270
Թեյմուր բեգ 270
Թերլեմեզյան Ռ. 270
Թերլեմեզյան Տ. 270
Թերզիբաշյան Ա. 14, 32, 37, 62, 284 284
Թեֆեյան Վահան 284, 286, 287, 298, 299, 302, 305—307
Թեֆինակի խան 265, 310—313, 315
Թիլիշեն 241
Թոմսոն, զոր. 208, 228, 256
Թոշյան Թ. 132
Թորոսյան Միսաք 606
Թորամանյան Թ. 462
Թորոսյան Ս. 124, 126, 130, 138, 142, 143, 276, 279, 282, 421, 446, 521, 522
Թորոսյան Հովհաննես, վարդ. 284
Թոփալյան Ս. 271, 272
Թոփչյան 499
Թուրունջյան Խ. 460
Թումանյան Լ. 108
Թումանյան Կ. 284, 464
Թումանյան Հ. 534
Թումանյան Հ. 334, 336, 373, 528, 574—576, 578, 579
Թումանյան Մ. 249, 464, 525
Թուրյան Ս. 455, 456

Ժամագործյան 388
Ժամճարյան 452
Ժորդանիա 20, 24, 74, 77—80, 102, 103, 105, 117, 154—156, 159, 214—216, 218, 234, 235, 396, 492, 528, 563

Իբրահիմ Աբալով 472
Իշխանյան Աբրամ բեգ 341
Իշխանյան Բ. 183, 237, 446, 448, 508, 513, 518, 541, 543, 566, 594
Իշխանյան Եղիշե 334, 351
Իպոլիտով-Իվանով 461
Իսախանյան, բժ. 43, 166, 167, 171, 247
Իսակ 180
Իսմայիլ Էֆենդի 475
Իսմեթ 489, 491

Լազարյան 396, 578
Լալայան Ե. 376
Լամբրիվի 82
Լարշե, գեղ. 93
Լեբեդինսկի, զոր. 63, 88, 97, 113
Լեզգան 484—486, 526—531, 534, 538, 543, 646, 648, 653, 683
Լեյլի 280
Լենին 86, 167, 299, 305, 406, 410 472, 480, 499, 528, 562, 563, 601
Լեռ 82, 227, 396, 426
Լեֆան Գևորգ 247
Լիսիցյան Ս. 449
Լոյդ Ջորջ 258, 288
Լոբանով-Ռոստովսկի 15
Լամինաձե 472
Լոշեր, դոկտ. 579
Լոսավ ֆոն, զոր. 118, 119, 152, 156
Լոտեն 258
Լորդկիպանիձե 102, 112, 397
Լվով 27
Լևանդովսկի 472
Լևոնյան Գ. 462
Լևոնյան Գ. 57, 63, 75

Խալիլ բեյ 315, 316, 319, 443
Խալիլ փաշա 118, 157, 159, 193, 202, 213, 358, 419, 444, 468, 473—476, 481, 484, 490, 505, 631, 635
Խալոյան Ս. 270
Խան-Ազատ Ռ. 449
Խան-Խոյսկի 57, 74, 79, 111, 118, 153, 154, 311, 312, 316, 360, 367, 371
Խանլար բեգ 346
Խանջյան Ազատ 403
Խանոյան Ս. 401
Խաչատրյան Աբել 572
Խաչատրյան Ա., պրոֆ. 284, 384
Խաչատրյան Գ. 247, 338, 664
Խաչատրյան Ս. 74, 124, 197, 228, 366, 368, 369, 375, 397
Խաչատրյան, զոր. 423
Խաչատուր 252
Խաչիկյան Ա. 271, 272
Խամամեդով 71, 82, 154, 367, 371
Խատիսյան Ա. 37, 58, 74, 82, 100, 106, 111, 118, 160, 185, 186, 193, 206, 208, 215, 216, 254, 261, 276—279, 294—296, 305, 307, 320, 325, 378, 380, 383, 386, 387, 414, 447, 513, 515, 519, 526, 529, 536, 538, 631, 635, 638, 643, 647
Խատիսյան Գ. 23, 50, 74, 215, 279, 375
Խատիսյան Լ., ինժ. 456
Խարլամով 19, 44, 68, 69
Խեչո 10, 11, 618
Խենկո 577
Խոմերիկի 111
Խոյան Տ. 390
Խոյեցյան 210
Խոնդկարյան Ա. 41, 50, 187, 197, 228, 298, 335, 384, 385, 405, 466, 520, 521, 534, 561, 682
Խոչանանկի Մ. Հ. 346
Խոջայան Մ. 241, 271
Խուրով բեգ Սալբաանով 330
Խարեն եպիսկ. 125
Խարենի Վ. 75, 279, 294, 335, 373, 478, 484, 588, 660
Խուդաբաշյան, գեղ. 507
Խունչիա 224
Խուռնց Հ. 14

Սազիկյան Ստեփան 606
Սամնուր Տիգրան 384, 464, 566
Սերեբելի 74, 101, 102, 105, 111, 117, 158, 214, 215, 227

Կազիմով 449
Կազին 132
Կամսարական Գ. 251
Կամսարական Ս. 23, 49, 50, 143, 300, 459
Կայայան 452
Կայսարով 472
Կանայան Ս. 449
Կանգելակի 367
Կանգուրայան 498
Կանտեմիրով 367
Կասյան Ս. 401, 408—410, 432, 530, 542, 558, 559, 563
Կարախան 483, 612, 614
Կարապետյան, ինժ. 455
Կարապետյան Հ. 572
Կարալով 385
Կարինյան Արտ. 14, 178, 646, 652
Կարինյան Հ. 270
Կարնիկյան Խ. 14, 28, 48, 51, 57, 74, 108, 111, 113, 117, 135, 159, 186, 187, 206, 207, 215
Կերենակի 27

Կիրով (դեսպան) 492
Կիրով 472
Կլեմանսո 288, 322
Կյուլպենկյան Սերովբե 32
Կյուլպենկյան Գ. 450
Կոժևնիկով 374
Կոլոգեյչիկ 241
Կոլչակ, զոր. 366
Կոչոյան 464
Կոսոյան Հ. 70, 279
Կոստանյան Հ. 432, 479
Կարկանյան Մ. 175
Կարկոտյան Զ. 270, 279, 373, 388
Կարխանիդի 90
Կարյուն, վարդ. 272
Կարուկով, գնդ. 128, 203, 230—234, 237—241
Կաշուբինսկի 422
Կրիչինսկի Ս. 397
Կուսիկյան Խաչատուր 553
Կուրդիին 584

Հազարապետյան Մ., սպա 572
Հալապյան 514
Հախնազարյան Ս. 358, 388
Հախվերդյան Հ. 186, 187, 206, 263, 267, 384, 484, 543
Հախվերդով 316, 384
Հակոբյան Գ. 384, 463
Հակոբյան Լ. 463
Հակոբյան Հ. 477
Հակոբյան Ն. 372
Հակոբյան Ս. 166
Հակոբյան Վ. 463
Հակոբյան Փառնակ 251
Հակոբջանյան 424, 456
Համազասպ 10, 166, 173, 175, 181, 414, 543, 563, 594, 616, 618, 619, 623
Համասփյուռ Խ. 75, 90
Համբարձումյան Կ. 28, 36, 74, 98
Համբարձումյան Մ. 284
Համբարձումյան Վ. 270
Համդի փաշա 468
Հայդար բեգ Բամմար 118
Հայդարով 82, 111, 168
Հայկազ Հ. 434
Հայկունի Գ. 32
Հայրապետյան Հ. 270, 279

Հանմյան Ա. 284
Հաջի Ռիզա 133
Հասկել, գնդ. 320, 321, 323—325, 353, 360, 383—385, 396
Հասո Սիրաշ Օղլի 393
Հարբորտ, զոր. 322, 364, 365, 638, 639
Հարությունյան Ե. 271, 272, 590, 658, 667
Հարությունյան Հ. 251
Հարությունյան Մ. 48, 51, 74, 103, 106, 125, 228, 299, 366, 371, 384, 472
Հարությունյան Ս. 14, 159, 204—207, 209, 267, 281, 282, 298, 307, 308, 367, 374, 426, 621, 624
Հեբրբ Հուվր 637
Հինդլյան Ս. 284
Հովասափյան 507
Հովհաննիսյան Ա. 178, 410, 485, 521, 534, 542, 561, 652
Հովհաննիսյան Արսեն 341
Հովհաննիսյան Սնովֆ 388
Հովհաննիսյան Հ. 384, 385
Հովհաննիսյան (Վարանդյան) Միքայել 36, 74
Հովհաննիսյան Վ. 463
Հովսեփյան Գարեգին, եպիսկ. 145, 146, 427, 462, 509
Հովսեփյան, զոր. 261, 391, 443, 508
Հովսեփյան, գնդ. 127
Հովսեփյան Ղ. 270
Հովսեփյան Ն. 350, 351, 372
Հովսեփ Զավուշ (Վան) 572
Հովվյան Ս. 37
Հոֆ 6—8
Հուսեյնով 400, 472, 552
Հուսեյին Զադե Ալի բեյ 55
Հուսեյնյան Մ. 351
Հուվեր 254

Զամոյան 74, 187

Ղազազյան Կ. 36, 74, 472, 499
Ղազարյան, գնդ. 169, 175, 416, 506
Ղազարյան Ա. 384, 385, 543
Ղամազյան 543
Ղամբարյան Իվ., պրոֆ. 384
Ղարաբեգյան Մ. 41, 51

Ղարաբեշիշյան 225
Ղիմոյան Տ. 270
Ղորղանյան Ստ. 261, 372, 446, 515, 519
Ղորղանյան, գնդ. 64, 118, 120, 127, 175, 178, 203, 215, 249, 508, 565
Ղորղանյան Օ. 270, 413
Ղույլան Լ. 206, 207, 267
Ղուկասյան Ա. 270, 450, 478
Ղուկասյան Ղուկաս 402, 433, 439
Ղևոնդ Երեց 146

Ճիվելեկյան, պրոֆ. 14

Մազմանյան, գնդ. 443, 508, 513
Մաղալով, զոր. 60
Մազլիա Ն. էֆ. 55
Մազոիկ, զոր. 237, 239, 241
Մաթիկյան Զ. 284
Մալինցյան Խ. 351
Մալխասյան Ա. 223, 387
Մալխասյանց Ս. 37, 187, 190, 449
Մալիցկի 507
Մալոյան Մ. 270
Մալֆոմ Ճ. 284
Մախարաձե Գեր. 90, 385, 397, 399
Մակարյան Ա. 390
Մակարյան Հ. 28
Մակաև, զոր. 226
Մակինսկի 311
Մահմեդ բեյ 319
Մահմեդ Էմին Ռասուլ Զադե 22
Մամադ խազի Օղլի 393
Մամաջանյան Վ. 388, 507
Մամիկոն (խմբապետ) 565
Մամիկոնյան Ստ. 13, 14, 37, 51, 62, 106, 117, 127, 159, 228, 367—369, 397, 399
Մամիկոնյան Վարդան 147
Մամյանց Ա., սպա 241
Մայիլյան եղբայրներ 451, 452
Մայսուրյան 461
Մանանդյան Հ. 43, 49, 90
Մանասյան Ս. 62, 107, 114, 117, 203, 276, 279, 373—374, 424
Մանդալյան Գ. 75
Մանդելշտամ Մ. 449
Մանյան, փոխգնդ. 233
Մանուելյան Մ. 280

Մանուելով Ա., պրոֆ. 449
Մանուկյան Արամ 14, 30, 51, 106, 107, 125—128, 132, 133, 141—143, 186, 189, 206, 208, 251, 252, 270, 280, 348
Մանուկյան Հմ. 32, 279, 318, 378
Մանուկյան Մ. 270
Մանուկ Սասունցի 28, 63, 347, 493
Մանուկոզլյան Ս. 379
Մանուչարյան Սերգո 175, 181
Մաշուրյան Ս. 590, 658, 667
Մասենյան Հ. խան 284
Մատենյան Ս. 618
Մատո խազի Կանրո Օղլի 398
Մարգարյան Ա. 379
Մարգարյան Մ. 379, 462
Մարգարյան Սմբ. 178
Մարխանյան Ս. 359
Մարկոսյան 647
Մարտիրոս (Բաշգառնեցի) 180, 181, 560, 577
Մարտել կոմս 397
Մացո 430
Մաֆ Մեզեն 331—335
Մաֆսապետյան Ա. 279, 561
Մդիվանի Բ. 526, 529
Մդիվանի Ս. 225, 229, 367, 369
Մելիֆ-Ազարյան Ա. 450
Մելիֆ-Այվազյան, ինժ. 456
Մելիֆ-Ասլանով 57, 74, 111
Մելիֆ-Գասպարյան Տիգրան 341
Մելիֆ-Փանգյան Ներսես, արք. 208, 359
Մելիֆ-Հուսեինյան Տ. 590, 658, 667
Մելիֆ-Ղարագյոզյան Գ. 206, 207, 267, 276—279, 282, 449
Մելիֆ-Միրզախանյան 387
Մելիֆ-Մուսյան Աշոտ 356, 598
Մելիֆ-Մուրադյան, գնդ. 127
Մելիֆյան Ա. 198
Մելիֆյան Հ. 447, 450
Մելիֆյան Հ., բժ. 124, 136, 149, 150, 390, 447, 460
Մելիֆյան Ռ. 461
Մելիֆյան Ս. 254
Մելիֆ-Յոլչյան Ս. 178, 394, 446, 506, 594
Մելիֆ-Շանազարյան Ա. 241, 379, 459
Մելիֆ-Ստեփանյան Սմբատ 583
Մելիֆ-Փարսադանյան Ի. 590

Մելիք-Քալանթարյան Աշխարհբեգ 462, 463
Մելիք-Քալանթարյան Ս. 463
Մելքոնյան Հրտ. 401, 418, 421, 423, 432
Մելքոնյան, բժ. 379, 428, 478
Մելքոնյան Հ. 386
Մելքոնյան եղբայրներ (նգիպտոս) 450
Մելքումյան Հ. 460
Մեխմանդարով, զոր. 368
Մեհրիի 82
Մեհմեդ Ալի փաշա 200, 209, 210
Մեխանոշին 472
Մեսյան Զ. 394
Մեսրոպյան Ս. 561
Միասնիկյան Ա. 601, 603
Միլյուկով Պ. 27, 624
Միլրրաե Ա. 468
Միլն, զոր. 265
Միկոյան 472, 479
Միհախարյան Վ. 379, 384, 403, 515, 519, 521, 561
Միհասյան Մ., գնդ. 572
Միհայան Պետրոս 553
Միսաքյան Շավարշ 399
Միրզախանյան Ժ. 62
Միրզախանյան Մ. 572
Միրզա Հուսեյին Զադե 132
Միրզոյան Ա. 270, 279
Միրզոյան Վ. 389
Միրիմանյան, գնդ. 203, 230, 443, 508, 513
Միքայելյան Ա. 279, 284, 394
Միքայելյան (տեխնիկ) 456
Միքայելյան Ք. 41, 411, 412
Մնացականյան Թ. 203, 233
Մոմսեն Ֆոն 187
Մոնիկ 121
Մոստիչյան Հ. 284
Մովսիսյան Մանուկ 388
Մորիս Ֆարրի 472
Մասվյան Ա. 401, 403, 432, 542, 558
Մուղոյան Հ. 270
Մուհեդդին Ալի Ֆուադ 491
Մունշիե 359
Մուշեղյան Լ. 142, 380
Մուշեղ Սասունցի 28, 63, 262, 347, 579
Մուսայելյան 413, 418, 420, 421, 423, 428, 430
Մուսինյան Մ. 280, 378, 379, 386, 566
Մուսինյան Մ. 125, 126, 143, 150, 543
Մուսթաֆա Սուբհի 475
Մուսթաֆա Քեմալ 364, 419, 444, 475, 483, 485, 487, 489, 491, 492, 500, 501, 519, 537, 538, 555, 588, 596
Մուրադ 63, 92, 93, 96, 146, 180, 445
Մուրադյան Բաշխի 341, 508
Մուրադյան Մարտին 553
Մուրադյան Ս. 247, 271, 553
Մուրսել փաշա 177, 180
Մուֆթի 22

Յաղջյան Հ. 75
Յարալյան 188
Յոյան Զ. 446
Յուզբաշյան-Ավան 379
Յուսոֆ Քեմալ բեյ 492

Նարոկով Վ. 27
Նազարալիև 391
Նազարբեգյան, զոր. 59, 62, 63, 93, 97, 106, 113, 114, 116, 117, 120, 127, 149, 150, 189, 192, 195, 267, 278, 280, 384, 418, 543
Նազարեթյան 406
Նազարյան Ն. 457
Նազարյան Լիպ. 166, 380
Նազրմ 273
Նալբանդյան 14
Նալչաջյան Ա. 74
Նալչաջյան Քեռո 372
Նախիջևանսկի 311
Նանապետյան, բժ. 379
Նանեշվիլի 479
Նաշի բեյ 9
Նարիման Նարիմանով 532, 550
Նարիմանով 434, 436
Նավասարդյան Վ. 41, 543, 557, 559
Նավասարդյան Կոռնետ 577
Ներկարարյան Եզեքի, վարդ. 270
Ներսես եպսկ. 359
Ներսիսյան Ն., խան 284
Նժդեհ Գ. 355, 357, 361, 394, 484, 577, 583—586, 590, 595, 596, 599
Նիհատ 491
Նիկոլայ Նիկոլաևիչ 15, 18, 20
Նիկոդոսյան Թ. 125
Նիկոլաևի Ն. 118, 154—156
Նոհրատյան Գ. 117, 379, 413, 509
Նորատունկյան Գ. 284, 285
Նուրեթ բեյ 118
Նուրիջանյան Ավիս 401, 407, 410, 413, 418, 429, 432, 434, 435, 542
Նուրի փաշա 175, 328, 419, 474
Նևստերովսկի, գնդ. 210, 230, 231, 443
Նեռուշ 57
Նեռուզով, զոր. 394
Նեռուզ, դոկտ. 284, 295, 468

Նազալով 89
Նաթիրյան Մարտին 90, 181, 447
Նալեյան Լևոն 572
Նալվա Էլիավա 683, 688
Նահազիզ Վ. 379
Նահ Աբաս 622
Նահբուդաղյան, գնդ. 443
Նահբազյան Հ. 270, 351
Նահբախտինսկի 90, 683, 687
Նահինյան Գ. 379
Նահխաթունի Ա. 141, 320, 380, 557
Նահխաթունյան Ավ. 23, 34, 36, 40, 50, 57, 74, 159
Նահմազյան Ա. 62, 350, 394, 442
Նանեազարյան Գեր. 90, 329
Նանեազարյան Թ. 338
Նազոյան Լևոն 63
Նազուբարյան, գնդ. 493, 508, 509, 513
Նամոյան 247
Նանք Լևոն 32, 284, 295, 479, 482—485, 543, 559, 645, 647, 652
Նանուշյան Ս. 57, 167, 170, 175, 177, 178, 406, 411
Նապուն (Խնուս) 572
Նատելվորտ, գնդ. 331—333, 337, 349
Նատվարյան Թ. 270, 448, 643
Նարանբեյան Ն. 270
Նարաֆյան Ա. 379, 385
Նարդեի, գնդ. 235
Նախվերդյան Ա. 548
Նանվերդյան Դ. 401, 432
Նավարլյան 128
Նելվոնիկյան, զոր. 444
Նեռմազանյան 461
Նիրինյան Արշ. 346, 350, 484
Նիրինյան 588, 660, 664
Նիրմախեր 577
Նիխլինսկի Ալի Աղա 353, 473
Նեյխ-ոլ-Իսլամով 22, 82
Նմավոնյան Ս. 387
Նոյենբուրգ կոմս 118, 155
Նուբլանե 224
Նուբրի փաշա 261
Նուբրի բեյ 475

Ոսկանյան Մուշեղ 664
Ոսկերչյան Գ. 270

Պալպրանյան 379
Պալխուչյան Գր. 390, 446, 509, 643
Պարոնչյան Լ., գնդ. 144
Պերազ Վ. 390
Պեռեֆչյան Գ., եպս. 271
Պեթիգյան Ս., սպա 241
Պիկալին 82
Պիլինգարյան Արտ. 49, 75, 166, 167, 171, 384, 387, 543, 557, 558
Պիշերին 472, 479, 480, 482—484, 488, 513, 526, 552, 555, 563, 570, 571
Պմշկյան Հ. 276, 279, 281
Պիսեկեի Ս. 19, 44, 74, 82, 86, 87, 99, 100, 106, 107, 109—114, 116, 118, 153, 155
Պոպանյան Արշ. 284, 286, 287
Պոլ 347
Պոլոխյան Հ. 75, 422
Պուբար Գ. 337

Պանգուրան 367
Պապիկյան Վարդ. 32, 386
Պապովյան 247
Պապովյան Ա. 449
Պապայան Մ. 463
Պապաջանյան Մ. 14, 19, 43, 44, 47—49, 51, 106, 107, 160, 185, 186, 193, 208, 209, 621, 624, 631, 635
Պարունակյան Կ. 165
Պարոնյան Մ. 350
Պեպինով 154
Պերեկրեստով, փոխգնդ. 128
Պետրին 463
Պերնանին 472
Պետրոսյան Գ. 190, 233
Պետրոսյան Հ. 548
Պետրոսյան Վ. (Վան) 572
Պիշիկյան Արշ. 366
Պրժեվալսկի, զոր. 92
Պրեզիրով 63

Գրիբիլսկի (հանասնաբույժ) 422
Գոպով Տ. 380, 450
Գոլոյի Արշակ 578
Գուանիարի 358
Գուադերար 265, 383, 384
Գողոսյան Ավ. 457
Գողոսյան Ս., բժ. 28
Գողոսյան (Սիմոն) 341
Գողոսյան Մ. (Գողթն) 572
Գոգոս բեյ Մարլը 284
Գոգոս Նուբար 4, 16, 27, 208, 209, 269, 273, 275, 281, 283—287, 290—293, 302—308, 637

Դաղեբյան Ն. 424
Դաղեբյան Գ. 279, 282
Դալալյան Սեդրակ 372
Դալիլ աղա Մահմեդ Օղլի 393
Դամալյան Ա. 65, 186, 187, 191, 216—220, 223, 235, 294, 317, 405, 406, 414, 416, 440, 484, 506, 511
Դամփալաղյան 10
Դավիդ բեյ 211
Դափարիանե 170
Դաֆարով Մ. 19, 44, 47, 74, 135, 154, 312, 367
Դեմալ Ազմի 273, 505, 506
Դեմալ փաշա 606
Դեյմ Ռեյ 326, 354, 355
Դեմիլ Դանիդ բեյ 328
Դիվանչիր Թեոդոր 90, 168
Դուդելի 61, 192, 499

Ռայկրոֆտ, զոր. 235
Ռամիշվիլի 24, 57, 60, 61, 81, 103, 111, 159, 214—216, 219—222, 249, 367, 368, 369, 399, 411
Ռամազով, գնդ. 224
Ռաուֆ բեյ 83—87, 99, 100
Ռաուպ Զաղե 74, 109, 111, 112, 118, 163, 342
Ռաֆիև, բժ. 90
Ռիզա Թևֆիկ բեյ 468
Ռեմզի 491, 492
Ռուստամբեգով 103, 103, 338

Սարգսխտարաշվիլի Կ. 249, 363, 364
Սազոնով 15, 624
Սազանդարյան Ֆ. 359, 664

Սաբբար 359
Սալարիանե 89
Սահակյան Ա. 75, 90, 106, 111, 117, 187, 189, 192—194, 254, 279, 294, 296, 318, 380, 383, 384, 386, 411, 543
Սահակյան, սպա 128
Սահակյան Կորյուն, վարդ. 271
Սահակյան Մ. 401
Սաղաթելյան 187, 266
Սամարդյան, գնդ. 188
Սամսոն 618
Սայան, դոկտ. 284
Սայիդ Հալիմ փաշա 55, 605
Սասունի Ա. 271, 275, 279
Սասունի Կ. 28, 33, 446, 561
Սարատիկյան Մեսրոպ 346, 372, 424
Սարգսյան Լևոն 422, 511
Սարգսյան Ե. 191, 456
Սարգիսբեգյան Գ. 577
Սարյան Մ. 375
Սարուխանյան 424, 436, 439, 478
Սաֆո 351, 484, 588, 660
Սաֆրաստյան Արամ 295, 384
Սաֆարյան Գրիգոր 241
Սաֆիֆուրդսկի 118, 154, 392
Սեդմա (Ալբերտ) 389
Սելահեդդին բեյ 489, 491
Սիլին 534, 538, 539
Սեմենով 79, 102, 108, 592, 595
Սեպուհ 32, 62, 63, 92, 93, 180, 393, 414, 416, 422, 441, 506, 508, 511
Սերգո 527, 528, 565
Սիլիկյան, զոր. 64, 106, 115, 126, 127, 134, 142, 144—150, 192, 414, 440, 508, 543
Սինապյան Գ. 284
Սիկորսկի 422
Սկոբլև 74
Սմբատ 63, 146, 270, 508, 513, 581
Սմիռնով 65
Սմկո 313
Սողոմոնյան Հ. 388
Սոկատ բեգ Մելիք-Շահնազարյան 329
Սոռնիկյան Պ. 459
Սպենդիարյան Ա. 461
Սպերանսկի 71
Ստարցև 124
Ստարև 499

Ստալին 177, 527, 528
Ստամբոլցյան 51
Ստեփանյան Հ. 37, 643
Ստեփանյան Ստեփան 341, 350, 351, 448
Ստեփանյան Մկ. 457
Ստոկս, գնդ. 180, 514
Սրապիոնյան Սարգիս (Լուկաշին) 14
Սուլթանով, դր. 74, 153, 324, 330—339, 341, 344, 353, 394—396, 399
Սուլթանով Ջալիլ բեգ 346
Սուլթանով (Նազար բեգ) 346
Սուրգուլանե 154, 155
Սուրեն սպարապետ 561, 577
Սևումյան 461

Վաչյան Աս. 165
Վալադյան 618
Վահան, եպս. 338, 395
Վահաբ էֆ. 359
Վայցեխովսկի 595
Վան-Փուշ 271, 279
Վարանդյան Մ. 284
Վարդան 10, 165, 169, 412, 413, 619, 622, 623
Վարդանյան Լևոն 341
Վարդանյան, պրոֆ. 14
Վարդանյան Իգնատիոս 553
Վարդանյան Սերգեյ Ակադիևիչ 478
Վարդապետյան Հ. 271
Վարդիկյան Ս. 380
Վարշամյան Գևորգ 262, 356, 459, 543, 549
Վեզենդոկ ֆոն Օ. 118, 155
Վելիկանով 576, 598
Վելուցց 178
Վենիբ 65—67, 72, 74, 88, 89, 91—93, 95, 103, 112—115, 118, 121, 187, 193, 631, 635
Վենիգելոս 383, 489
Վեստենենիկ 7
Վեսելովսկի Բ. 23
Վեֆիլյան, գնդ. 150, 508, 509
Վեֆիլով 130, 371, 397, 400
Վեզիրով Ա. Ի. 108
Վեյնմարն Գ. 374
Վերմիշյան Լ., սպա 241
Վերմիշյան Քրիստ. 40, 49, 50, 367, 276, 279, 282, 374
Վեշապելի 100
Վիլսոն 66, 258, 288, 363—365, 495
Վիշինսկի, զոր. 62, 94, 114
Վիցերս Դրգեզ 236
Վորոնցով-Դաշկով 10
Վրացյան Սիմոն 14, 38—41, 43, 51, 74, 106, 117, 118, 159, 160, 187, 271, 294, 299, 307, 384, 386, 406, 414, 416, 458, 506, 518, 520, 521, 529, 530, 534, 557—562, 564, 567, 575, 620, 625, 645, 657, 682

Տաղյան 225
Տամատյան Մ. 284
Տեզոյան 462
Տեր-Աբրահամյան Արշ. 388
Տեր-Աբրահամյան Մ. 379
Տեր-Անտոնյան Հ. 358
Տեր-Առաքելյան, գնդ. 509
Տեր-Աստվածատրյան Ա. 334
Տեր-Գաբրիելյան Ս. 178, 472, 485, 552, 603, 652
Տեր-Գրիգորյան Ա., ինժ. 456
Տեր-Գրիգորյան, սպա 241
Տեր-Գրիգորյան Գ. 388
Տեր-Գրիգորյան Մ. 28, 234
Տեր-Գևորգյան Միք. 455
Տեր-Դանիելյան Արամայիս 338
Տեր-Դավթյան Մ. 455, 456, 543
Տեր-Դավթյան Պ. 351, 394, 583—585
Տեր-Դավթյան Հ., բժ. 318, 384, 390, 460, 557, 558, 594
Տեր-Թովմասյան Ա. 279
Տեր-Չաքարյան Հակ. 32, 37, 62, 295, 380
Տեր-Խաչատրյան Հ. 566, 648
Տեր-Խաչատրյան Գր. 125, 194, 228, 448
Տեր-Հակոբյան Ա. 272, 284
Տեր-Հակոբյան Հ. 37, 295, 506, 561
Տեր-Հակոբյան Գր., բժ. 125, 388
Տեր-Հակոբյան, զոր. 150
Տեր-Հակոբյան, պրոֆ. 285, 287
Տեր-Հայրապետյան Սահակ 350
Տեր-Հարությունյան Գ. 75, 125, 546
Տեր-Հովհաննիսյան Մ. 231, 241
Տեր-Ղազարյան Ղ. 37, 50, 51, 74, 106, 107, 165
Տեր-Ղազարյան Ն. 171, 175,
Տեր-Ղազարյան Ս. 263, 167, 247

Տեր-Կուկասյան Ս. 241
Տեր-Մատթեոսյան 241
Տեր-Մարտիրոսյան 233, 388
Տեր-Միհնասյան Ռ. 28, 51, 82, 106, 127, 159, 181, 187, 325, 384, 406, 414, 416, 506, 613, 557, 578
Տեր-Միհնասյան Ե. 207
Տեր-Միհնասյան Գ. 586, 590, 596, 620, 667, 682
Տեր-Միքայելյան Ա. 295, 462
Տեր-Միքայելյան Հ., բժ. (Օվին) 143, 384, 386, 455, 548
Տեր-Միքայելյան Հայկ 90, 165, 167, 171, 386
Տեր-Միքայելյան Ն., ինժ. 455, 456
Տեր-Մկրտիչյան Գ. 350
Տեր-Մկրտիչյան Մ. 590, 664
Տեր-Մովսիսյան 121
Տեր-Նիկողոսյան, գնդ. 230, 231, 238
Տերոյան Վ. 271, 272, 275
Տերպետերյան Մ. 284
Տեր-Պետրոսյան Հ. 351
Տեր-Պետրոսյան, վարդ. 559
Տեր-Պողոսյան Ա., բժ. 390
Տեր-Պողոսյան Մ. 175, 179, 241, 386
Տերունի Հ. 346, 347, 350, 351
Տերվիշյան Ե. 284
Տեր-Սարգսյան Սիգո 372
Տեր-Սարգսյան, գնդ. 134
Տեր-Սարգսյան Լ., օրդ. 280
Տեր-Սիմոնյան Դրաստամատ 428, 432
Տեր-Ստեփանյան Ն., դոկտ. 284, 286, 298
Տերտերյան Հ. 479, 485, 506, 521, 531, 533, 534, 561, 567, 682
Տեր-Սհանյան Գ. 62, 228
Տեր-Սհանյան Հ. 43, 51, 165, 175
Տիգրան Մեծ 465
Տիգրանյան Սիրական 28, 36, 50, 73, 187, 206, 225 227, 228, 250, 257, 258, 282, 330, 367, 385, 618
Տիլիչև 237
Տիմշենկո 237, 238
Տոշյան Թ. 543
Տիրոսյան Ա. 379

Տիճցանի 385
Տիցիանով, զոր. 217
Տուլուկիձե, զոր. 220, 224, 229, 232, 234

Ումանսկի Լ. 178
Ուտրդրոպ Օ. 324, 353, 355, 383, 384, 397
Ուսուֆ Սարո Օղլի 393
Ուսուպբեզով 74, 111, 153, 154, 323, 325, 354, 360

Փանյան 360
Փաշյան (Հասան) 93
Փաստրմանյան Գ. 284, 287
Փափազյան Վահան 14, 28, 30, 32, 37, 62, 107, 284, 371
Փեշկով, զոր. 16
Փիլոս 508
Փիրալյան Հ. 23, 25, 254
Փիրումյան Դանիել բեգ 127, 146
Փիրումյան Ռ. 266
Փիրումյան, զոր. 278, 280, 413, 508, 509, 649
Փիրումյան Սիմ. 47, 74, 128, 133, 134, 141, 142, 480

Քալանթարյան, տիկ. 390
Քալանթարյան Լ. 173, 386, 402, 557
Քաջազնունի Հ. 36, 37, 41, 74, 75, 78, 80, 82, 87, 100, 107, 109, 111, 117, 118, 160, 161, 165, 167, 185, 187, 189, 190, 193, 195, 197, 205, 206, 215, 216, 218, 219, 253, 254, 271, 347, 443, 517, 518, 521, 525, 543, 545, 547, 558, 559, 566, 574
Քաջազնունի Ռուբեն 631, 636
Քաջբերունի Ռ. 165, 459
Քաջունի Եզեկիկ 32
Քարամյան Ս. Մ. 350
Քելեկյան Տ. խան 284
Քեռի 10, 11, 616, 618, 619, 633
Քեսապալյան Արտուշ 245
Քինգի 364
Քիշմիշյան, գնդ. 150, 368
Քիսայան 452
Քյազիմ բեյ 111, 404,
Քյազիմ Կարաբեքիր 150, 473—475, 489, 491, 505, 506, 510, 511, 517, 526, 535, 555, 683—685, 687, 688
Քյազումով Սեյիդ 182
Քյամիլ բեյ., բժ. 212
Քոչարյան Ղ. 357, 360
Քոչարյան Ա. 228, 229
Քորի, զոր. 335
Քվինիքանե, զոր. 155
Քրես ֆոն, 186, 187, 191, 204, 217, 218, 220
Քրմոյան Վ. 28, 271, 272, 275, 279, 280
Քրեյն 364

Օգանեզյան Միքայել 366
Օգանովսկի 618, 623
Օգիչելիձե, զոր. 66, 72, 89, 92, 113—118, 120, 155
Օգանյան Մեր. 457
Օհանյան Ա. (Վան) 575
Օհանջանյան Համո 36, 37, 57, 74, 121, 152, 156, 209, 284, 397, 411, 416, 480, 506, 515—518, 541, 543, 557, 558, 642
Օհանջանյան Սարգ. 126, 251
Օնիաշվիլի 108, 109
Օղաբաշյան Ն. 513
Օրլանտո 288
Օրխան բեյ 118
Օրջոնիկիձե Ս. 472, 527, 528, 532, 575, 576, 580
Օրջոնիկիձե տիկին 496

Ֆիզուլլաբեզով 132
Ֆիերկովսկի, փոխգնդապետ 233
Ֆնտիյան Գ. 284, 286
Ֆոռեստիե Ուսկեր, զոր. 257, 259, 330
Ֆրանգյան Սվ. 388
Ֆրանկլեն Բույոն 489
Ֆրանկենշտեյն 191
Ֆեզի Ահմեդ 491

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աբաս Գեոլ 318
Աբխազավա 61
Ագարակ 318
Ագուլիս 262, 355, 357—359, 361
Ադա 163
Ադրարա 391
Ադրբեջան 77, 79, 80, 154, 155, 160, 176, 182, 183, 188, 197, 215, 220 221, 259, 265, 277, 280, 309, 311, 313, 315, 316, 321, 323—333, 335—340, 341, 345, 349, 350, 352—355, 358, 360, 367, 368, 371, 376, 380, 381, 382, 384, 391—401, 404, 409—412, 415, 419, 429, 430, 433, 436, 471—474, 476, 477, 479 483, 484, 490, 494, 503, 504, 516, 527, 532, 542, 549, 550, 556, 561, 573, 576, 581, 582, 588, 593, 594, 601, 604, 631, 645, 650, 653, 656, 659—661, 664, 683, 686—689
Ալաշկերտ 13, 15, 29, 58, 63, 97, 98, 127, 144, 505
Ալագյազ 133, 148, 162
Ալեքսանդրապոլ 24, 34, 58, 68, 89, 92, 106, 107, 115, 116, 119, 120, 124, 129, 130, 133, 143, 145, 148, 149, 150, 152, 154, 162, 163, 187, 200, 210, 211, 226, 253, 257, 266, 270, 372, 375, 378, 383, 385, 390, 403, 404, 409, 412, 413, 422, 425, 428, 329, 431, 432, 434, 436, 438, 460—462, 477, 479—496, 506, 511, 512, 515, 519, 526, 527, 529, 531, 536, 539, 551—553, 556, 558, 619, 621, 622, 652, 653, 683, 689
Ալեաթ 316
Ալիղրզել 123, 131, 133
Ալիչին 163
Ալլահվերդի 216, 224, 231, 369, 376
Ալեքսանդրետ 209, 362
Ախալքալաք 24, 64, 119, 120, 149, 214, 215, 223, 226, 228, 235, 256, 259, 266, 368, 466, 536, 556, 620
Ախալցխա 64, 70, 105, 119, 149, 154, 158, 257, 259, 309
Աղհամզալու 133, 151
Ազստաֆա 188

Աղբուլաղ 162
Ամերիկայի Միացյալ Նահանգներ 3, 16, 204, 209, 253, 254, 283, 284, 303, 363, 390, 450, 477, 530, 540, 602, 636
Այնթապ 284
Անատոլիա 81, 82, 87, 109, 365, 474, 475, 490, 549
Անգորա 442, 474, 475, 487, 491, 511, 551, 570, 685, 686
Անդրկովկաս 16, 18, 24, 35, 36, 42, 44, 46, 50, 56, 57, 66 67, 73—79, 81, 83—88, 99—101, 103, 104, 108, 109, 111, 113, 117, 118, 120, 121, 123, 137, 140, 141, 153, 155, 158, 159, 161, 168, 193, 220, 250, 256, 261, 278, 302, 324, 328, 356, 363, 365, 374, 380, 396, 397, 400, 404, 405, 466, 481, 502, 549, 556, 564, 581, 586, 627, 630, 684, 686—689
Անի 148, 455, 462, 463, 684, 686, 687
Անգլիա 3, 79, 209, 259, 265, 285, 364, 396, 450, 468, 504, 514
Արդահան 83, 87—90, 99, 104, 257, 314, 363, 369, 393, 427, 449, 466, 474, 621
Աչաղի-Ջանախչի 163
Աշտարակ 127, 162, 270, 372, 378, 390, 457, 506, 573
Ապարան 457
Աչարիա 105, 309, 688
Ասկերան 396
Աստրախան 178, 179, 511
Ադանա 4, 287, 362
Ատրպատական 599, 617, 622
Արաքս 134, 144, 145, 314, 318, 343, 355, 515, 536
Արագած 68, 119, 144, 457, 560
Արծափ 68
Արարատյան դաշտ 124, 143—145
Արալբի 134
Արդվին 99
Աբաչան 316
Արարատ 273, 283
Ազչա-Կալա 148
Արփաչայ 511
Աշհաչ 63, 144
Արեշ 169, 376
Արփա 163
Ավստրիա 193
Ավստրո-Հունգարիա 3, 186, 204
Աքորի 225, 368
Աֆղանստան 177, 310

Բաբերդ 94
Բաթում 83, 86—88, 97, 99, 101, 104, 105, 113, 118, 149, 150, 159, 160, 162—164, 185, 186, 193, 198, 254, 257, 270, 320, 375, 387, 449, 474, 487, 538, 547, 689
Բալկաններ 16, 303
Բաքու 22, 36, 70, 86, 90, 108, 112, 119, 127, 145, 153, 157, 163, 165, 166—170, 172—177, 179—183, 199, 200, 202, 223, 266, 310, 311—313, 316, 323, 324, 328, 331, 333, 338, 353, 360, 365, 366, 371, 392, 395—397, 400, 405, 409, 410, 419, 424, 429, 434, 436, 475—479, 481—484, 486, 492, 494, 501, 502, 527, 531, 532, 542, 550, 559, 581, 596, 646, 651, 654
Բալթիկ ծով 56
Բայազետ 28, 68, 120, 133, 142
Բաշ-Ապարան 120, 146, 148, 189, 203, 608
Բաշ-Գեառնի 271, 670
Բաշքենդ 134
Բաշ-Նորաշեն 315, 316
Բաշքյարան 163
Բասրա 375, 563
Բասեն 28, 68, 71
Բորչալու 136, 154, 215—217, 226, 228, 235, 236, 243, 356
Բարդուս 314
Բեռլին 83, 156, 166, 606
Բեսարաբիա 464
Բելգիա 323, 450
Բեյուք-Վեզի 314—318, 401, 404, 442, 444, 445
Թիֆլիս 5, 15, 362
Բուլղարիա 186, 193, 204, 284, 450, 616
Բուլանըք-Մանազկերտ 28

Գավրեշամի 68
Գայլի Գրունք 323, 369
Գանձակ 24, 49, 60, 68, 71, 86, 91, 127, 129, 153, 154, 166—169, 175, 176, 327, 328, 346, 368, 415, 533
Գերմանիա 3, 5, 6, 9, 107, 152, 155, 186, 192, 193, 217, 259, 450, 613
Գեոլ 89, 392
Գիշա 317
Գյումրի 537
Գյուլիստան 327, 395, 479
Գողթն 355—358, 360, 361, 394
Գորիս 346, 347, 350, 351, 353, 359, 394, 484, 590, 656, 664
Գուրիա 105

Դավալու 128, 134, 135, 138, 141, 258, 269, 315, 316
Դաղստան 86, 111, 528
Դարալագյազ 134, 271, 316, 323, 345, 348, 372, 387, 388, 485, 504, 582, 597—599, 656
Դերջան 28
Դիատին 28
Դիզակ 329, 395, 396
Դիլիջան 91, 127, 145, 187, 188, 203, 218, 219, 230, 232, 311, 378, 402, 403, 424, 425, 427, 439, 440, 460, 477, 513, 514, 577, 653
Դուշեթ 122
Դաշբուռուն 132
Դսեղ 121, 203, 235

Եգիպտոս 284, 285, 303, 449, 621, 652
Երևան 24, 30, 34, 37, 49, 59, 70, 86, 91, 92, 95, 106, 119, 120, 124—127, 129—131, 134—137, 141—145, 148, 151, 153, 175, 185—189, 190—192, 199, 200, 203, 205, 207, 209, 211, 214, 218, 225, 229, 235, 249—252, 258, 259, 262, 265—267, 270, 271, 277—279, 281—283, 288, 290, 291, 298, 302, 306, 307, 310—312, 316, 317, 320, 323—325, 328, 330, 350, 357—360, 363, 372, 375—379, 382, 383, 386, 387, 389, 390, 397, 400, 403, 408—414, 420, 422, 425, 426, 436, 439, 440, 446, 450, 452, 454, 455, 459—462, 463, 467, 472, 477, 479, 482, 484, 486, 493, 494, 498, 506, 508, 509, 511, 514, 526, 528, 529, 531, 534, 535, 557, 558—565, 570, 572—575, 577—579, 581, 592, 597, 599, 638, 646, 653, 655, 656, 668
Ելենովկա 188, 437
Եկատերինոդար 259
Երզնկա 29, 58, 64, 65, 68, 71, 72, 92—95, 146
Երուսաղեմ 288
Եվրոպա 254, 282, 466, 487, 514, 530, 536, 540, 565, 650

Զարուշատ 391, 393
Զանգի 309
Զագալու 325
Զաքաթալա 86, 154
Զանգիբասար 319, 438, 441—443, 445, 447, 516
Զանգեզուր 24, 153, 256, 269, 309, 313, 316, 323, 325, 328—330, 332, 342, 343—354, 357, 359, 360, 372, 375, 393, 394, 411, 412, 419, 471—473, 476, 483—485, 488, 500, 514, 532, 533, 550, 577, 578, 581—583, 586—597, 645, 648, 650, 656—662, 664, 665, 667, 669, 674
Զինջիբլու 444
Զիվին 316
Զեյվա 146, 151
Զեյթուն 64, 146
Զվիցերիա 284

Էլփին 316
Էլփինչայ 163
Էնզելի 179
Էջմիածին 6, 119, 127, 129, 136, 145, 146, 149, 151, 153, 162, 191, 207, 211, 262, 263, 265, 268, 270, 277, 310, 317, 318, 325, 335, 348, 360, 372, 375, 384, 427, 439, 455, 458, 459, 506, 535, 560, 573
Էրզրում 5, 7, 9, 12, 15, 29, 36, 64, 68, 88, 92—97, 106, 127, 142, 211, 212, 260, 417, 474, 475, 490, 505, 517, 552

Թավրիզ 266, 316, 359
Թաթարստան 55
Թաղաքենդ 151

Թերեք 528
Թեհրան 208, 371
Թիմար 29
Թիֆլիս 10, 13, 18—21, 24, 29, 36, 37, 49—51, 55, 57, 61, 63, 68, 71, 74, 75, 79, 86—88, 91, 97, 99—101, 103, 105—108, 113—116, 121, 125, 128—130, 134, 135, 142, 143, 152—156, 158, 160—162, 165, 166, 168, 169, 176, 184, 185, 187— 191, 204, 205, 207, 209, 214, 216, 217—221, 223, 225, 226, 229, 231—235, 242—245, 247—249, 254, 266, 267, 281, 283, 310, 322, 323—325, 336, 349, 354, 363, 365—368, 370, 372, 376, 377, 381, 383, 390, 396, 397, 402, 405, 406, 409, 426, 428, 434, 449, 450, 472, 480, 492, 498, 503, 511, 513, 521, 533, 557, 564, 565, 573, 575, 603, 606, 619, 621—623, 649
Թրակիա 365
Թուրքիա 3—6, 8, 9, 12, 15, 16, 36, 56, 58, 61, 68, 70, 73, 79, 80—83, 86, 87, 91, 100—104, 108, 109, 118, 119, 152, 154, 156, 162, 186, 192, 200, 215, 242, 246, 260, 286, 288, 302, 309, 314, 321, 336, 360, 364, 368, 383, 400, 442, 473, 476, 486—488, 501, 517, 536—539, 547, 548, 550, 551, 556, 569, 646, 650, 653, 657, 683, 685, 688, 689
Թուրքահայաստան 15, 16, 24, 55, 289, 301, 483
Թուրքեստան 109, 476

Ժնև 563

Իգդիր 64, 144, 145, 268, 372, 390, 392, 427, 455, 476, 616, 618, 619, 623
Իզմիր 313, 450, 489
Իլիչա 94, 96
Իշխան 375, 424, 425, 506, 531, 542
Իսկենտերուն 287
Իտալիա 3, 4, 265, 284, 285, 364, 397, 450, 468, 469

Լահն 26
Լարս 122
Լեհաստան 481
Լիբանան 5
Լոնդոն 15, 83, 447, 563, 570, 600, 625, 657
Լոռի 24, 64, 185, 203, 204, 211, 213—218, 223, 224, 226—229, 232, 236, 368, 369
Լոչան 604

Խանլուխլար 129
Խանվալ 162
Խաչեն 395, 396
Խալֆալու—Սուլթանապատ 144
Խաթունարխ 151
Խալմաղ 168, 169
Խանքենդ 344
Խարբերդ 5, 15, 362, 364
Խանասոր 64
Խերթվիս 154
Խորոսան-Զիվին 314
Խոյ 616
Խնձորևսկ 351
Խնուս 29, 63, 64, 92, 94, 96, 347

Մալկա 24
Մաղկաձոր 270

Կաղան 476
Կաղզվան 99, 262, 265, 314, 319, 367, 413, 492, 496, 616—618
Կայալու 163
Կանադա 450
Կարալար 317
Կարաուրգան 106
Կարեսգին 24
Կարին 28, 362, 487, 510
Կարս 24, 34, 36, 49, 59, 68, 70, 83, 86, 87, 89, 92, 98, 99, 104, 106, 107, 112, 114—117, 145, 148, 163, 188, 211, 256, 257—261, 265, 292, 303, 309, 310—312, 314, 315, 319, 329, 348, 363, 372, 374, 376, 378, 380, 390—393, 412, 424, 427, 439, 458, 460 462, 474, 479, 487, 493, 494, 496, 505, 506, 508, 509, 510, 527, 536, 552, 556, 618, 623, 646, 650, 652, 683, 685, 689
Կիլիկիա 4, 6, 10, 15—17, 55, 209, 283, 287, 298, 364, 474, 489, 624
Կիև 83
Կողբ 144, 253, 265, 318, 368, 372, 442, 493, 686, 687
Կովկաս 8—10, 12, 13, 15, 17, 24, 28, 30, 41, 47—49, 52, 54, 61, 66, 67, 71, 72, 78, 90, 91, 93, 109, 111, 119, 123, 127, 128, 157, 166, 168, 186, 188, 208, 215, 220, 284, 286, 288, 296, 310, 313, 328, 362, 366, 369, 401, 473, 479, 574, 601, 602, 612, 622, 648, 683, 644
Կոտայք 270, 598
Կոթուզ 300
Կրկըժան 334

Հալեպ 28, 287
Հալիձոր 585
Համամլու 120, 162, 212, 552
Հայաստան 5, 11, 15—17, 28, 108, 119, 131, 148, 151, 153, 156, 159—165, 181, 184—201, 204, 206—210, 214—230, 235, 242, 246, 248—251, 253, 254, 256—258, 265—283, 285, 287, 289, 291—293, 296, 297—304, 306, 307, 309, 310—314, 316, 321, 323, 324, 326, 330, 332, 339, 342—344, 348, 350, 354, 356, 358, 360, 363—386, 388—393, 396—398, 402—421, 424—429, 431, 432, 436, 441, 442, 445, 447—454, 458, 460—462, 464—474, 476—493, 495—505, 511, 512, 514, 517, 520, 522—571, 573, 575—579, 581, 582, 586, 588—601, 603, 604, 607, 609, 611, 612, 631, 633—638, 641—643, 645, 646, 648, 649, 651, 653, 654, 656, 657, 661, 664—668, 683, 684, 686, 687—689
Հայոց ձոր 69
Հաշտարխան 375
Հասան-Ղալա 71, 96
Հնդկաստան 284, 285, 310, 450, 500
Հռոմ 83, 563
Հրազդան 455, 598
Հունաստան 284, 312, 306, 490

Ղարախանլու 146
Ղարանլուխ 487
Ղափան 346, 347, 350, 351, 484, 583, 590, 662, 663
Ղարախաչ 163, 316, 325
Ղալթախչի 210
Ղայբալիքենդ 334, 336, 337
Ղարաբաղ 127, 153, 154, 166, 191, 256, 259, 279, 309, 312, 317, 324, 325, 327—333, 335—346, 349—354, 367, 393—400, 410—412, 415, 419, 439, 441, 446, 472, 473, 476, 481—484, 494, 500, 513, 532, 550, 556, 573, 581, 582, 592, 593, 595, 646, 648—650, 656
Ղազախ 24, 64, 186, 203, 215, 232, 397, 398, 410, 437, 478, 500, 504, 513, 653
Ղարխուն 318
Ղամբլու 318
Ղարաքիլիսա 58, 64, 92, 121, 150, 188, 203, 209, 211, 212, 225, 230, 233, 249, 271, 320, 372, 387, 390, 469, 413, 440, 477, 512, 552, 666
Ղամարլու 131, 133, 135, 139, 140, 150, 271, 316, 372, 378, 418, 444, 455, 571, 574, 576, 578, 588
Ղզելախչախ 391, 510
Ղըմբլու 148
Ղըշլաղ 210
Ղրիմ 109, 466, 476, 616

Ճաթղոան 317
Ճավա 284
Ճապոնիա 450, 469
Ճորոխ 86

Մազրա 117
Մակու 59, 146, 445
Մասիս 148
Մամախաթուն 69, 93
Մարաշ 362
Մարսել 647, 652
Մալթա 261
Մալայան կղզի 270
Մեծ-Բրիտանիա 15, 285, 696
Մեղրի 674
Մերդենեք 89, 90, 442

Միլի 309
Միլիստան 324
Միլի ձոր 270
Միջագետք 284, 450
Մոսուն 68
Մուշ 28, 63
Մոսկվա 13, 14, 28, 33, 38, 70, 166, 417, 424, 461, 472—474, 478—484, 487, 490, 513, 526, 536, 547, 550, 556, 563, 565, 573, 579, 595, 645, 646, 648—657, 683—685, 687, 689
Մցխեթ 122

Ցուվա 183

Նախիջևան 130, 138, 142, 158, 238, 252, 258, 260, 262, 309—318, 323 396, 342—345, 356, 358, 360, 367, 397, 398, 445, 473, 484, 486, 514, 532, 537, 550, 556, 586, 593, 596, 646, 648, 650, 687
Նեշերլու 151
Նիկոլաևկա 548
Նոր Նախիջևան 13
Նոր Բայազետ 252, 253, 271, 325, 372, 375, 378, 385, 414, 425, 427, 437, 438, 457, 478, 506, 594
Նարաշեն 130, 262
Նուխի 64, 167, 168, 376

Ճահալին 548
Ճահթախթ 138, 315, 316
Ճազարլու 163, 325
Ճամախ 167, 169, 174, 376
Ճարուր 134, 256, 258, 262, 315, 323, 358, 367, 446, 473, 504, 537, 556, 582
Ճարուր-Նախիջևան 131, 145, 153, 292, 309, 310, 312—318, 323, 324, 327, 348, 399, 442, 562, 578, 582
Ճիրակ 119, 148, 188, 212, 213, 366, 458, 410, 551
Ճիրապլու 317
Ճուլի 24, 64, 91, 131, 360, 323, 327, 328, 331, 332, 340, 353, 362, 395, 396, 582, 595

Ռազունլար 224, 225
Ուլուխանլու 133, 135—137, 139, 141, 211, 316
Ուֆա 476

Ջանախլի 316
Ջլղեր 89, 391, 393
Ջինգիլ 144, 145
Ջոլոք 105
Ջոբանքյարա 151
Ջրախլու 120

Պաղեստին 17
Պարսկաստան 8, 32, 98, 127, 134, 145, 166, 168, 177, 179, 180, 182, 202, 232, 246, 265—267, 284, 316, 345, 356, 445, 449, 488, 500, 504, 557, 598, 600, 619, 654, 659, 664
Պոլիս 5, 7, 83, 186, 208, 286, 288, 300, 303, 306, 355, 364, 365, 390, 417, 450, 473, 474
Պետրոգրադ 13, 15, 23, 45, 54, 55, 61, 83, 621, 624

Ջալալ Օղլի 120, 203, 229, 235, 372, 390, 427, 548
Ջիրուտի 450
Ջիբրայիլ 327, 340
Ջիվանշիր 24, 327, 340, 395
Ջուլ 442
Ջուլֆա 315, 316, 323, 343
Ռեհանլու 129, 135, 317
Ռոստով 12, 480, 481, 616, 647
Ռուսահայաստան 289, 303, 305
Ռումանիա 284, 285, 323, 450, 616, 620
Ռումելիա 474, 490
Ռուսաստան 3, 5, 6, 8, 10, 11, 13, 15—17, 20, 22, 23, 26, 30, 32, 34, 35, 38—40, 42, 43, 54—57, 66, 70, 75—83, 88, 89, 92, 101, 103, 104, 108, 109, 111, 166, 167, 168, 177, 198, 199, 209, 252, 259, 265, 327, 366, 367, 382, 399, 401, 406, 409, 410, 412, 428, 431, 432, 435, 471, 472, 478—480, 483, 485, 486, 505, 515, 517, 521, 529, 530, 531, 538, 543, 544, 547, 556, 565, 558, 571, 576, 588, 600, 601, 603, 605, 606, 625, 626, 628, 629, 653, 657, 660, 661, 688, 689

Սալմաստ 616, 617, 622
Սասուն 262, 325, 347
Սարիղամիշ 260, 261
Սարդարապատ 120, 124, 131, 144, 146, 162, 200, 211, 265, 457
Սադախլու 237, 239, 240
Սանահին 466
Սադաբակ 134
Սան-Ռեմո 487
Սեմեոնովկա 188
Սևան 119
Սբվազ 5, 362, 364, 491
Ստոկհոլմ 55
Սիսիան 271, 346, 347, 350, 351, 582—590
Սիբիր 187, 476
Սիրիա 15, 364
Սյունիք 589, 590, 597, 659, 661
Սիս 362
Սզնախ 154
Սուխում 86, 108, 112, 387
Սուրմալու 68, 119, 130, 131, 133, 200, 211, 213, 259, 265, 268, 270, 309, 317, 318, 324, 325, 372, 506, 507, 513, 536, 556
Սուլուխ 94
Սևր 468, 487, 517, 530, 536, 550,
Վասպուրական 13, 28, 127, 571
Վան 5, 7, 8, 10, 12, 15, 28, 29, 62, 64, 65, 68, 92, 94, 97, 98, 144, 146, 347, 362, 517, 616
Վաշինգտոն 83
Վարանդա 329, 395, 396
Վաղարշապատ 372, 390, 427, 573
Վերսալ 650
Վենետիկ 284, 384

Վեդի Ջայ 325
Վեդի Բասար 133, 265, 309, 325, 442
Վիեննա 83, 384

Ցարսկի Կոլոդցի 60
Ցղնա 359

Փամբակ 185, 203, 204, 210, 211, 213, 215—218, 375
Փարիզ 6, 16, 83, 258, 269, 273, 282, 284, 290, 292, 295, 299, 302, 303, 305, 307, 313, 317, 321—324, 362, 363, 365, 381, 383, 390, 468, 470, 517, 625, 647, 652
Փարաքար 427, 438

Քանաքեռ 128, 189, 437, 507, 520, 600, 623
Քեալբիթում 92
Քեորփալու 146, 151
Քեշիշքենդ 427
Քիրմանշահ 56
Քութայիս 86, 236, 248

Օդեսա 83, 616
Օզուրգետին 105
Օլթի 99, 262, 314, 319, 367, 444, 440, 466, 487, 488, 504, 517, 616, 618, 621
Օշական 573
Օվշար 135
Օրգով 144
Օրգուրդ 142, 312, 314, 315, 324, 355, 358, 360, 397, 398, 577

Ֆրանսիա 3, 15, 79, 209, 284, 364, 397, 450, 468, 605, 636

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԿԻԶԲՆ ԵՐԿԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա—Համաշխարհային պատերազմը և հայ ժողովուրդը 3, ԳԼՈՒԽ Բ—Օգակոմի օրերը 18, ԳԼՈՒԽ Գ—Արևմտահայոց գործերը 26, ԳԼՈՒԽ Դ—Արևելահայոց գործերը 34

ԵՐԿՈՒՆՔ

ԳԼՈՒԽ Ե—Պատերազմի ու խաղաղության ճարտը և ռազմանակատը խորհրդային հեղաշրջումից հետո 54, ԳԼՈՒԽ Զ—Ջինաղատար և «մուր ձեռի» աշխատանքը Կովկասում 65, ԳԼՈՒԽ Է—Անդրկովկասյան Սեյմը և հերթին անհամաձայնությունները 73, ԳԼՈՒԽ Ը—Տրապիզոնի խորհրդաժողովը 80, ԳԼՈՒԽ Թ—Հայ-թուրքական պատերազմը 88, ԳԼՈՒԽ Ժ—Տրապիզոնի բանակցությունների խզում, Անդրկովկասը անկախ 99, ԳԼՈՒԽ ԺԱ—Կարսից Ղարաֆիլիսա 111, ԳԼՈՒԽ ԺԲ—Արարատի հովտում հերթ. 124, ԳԼՈՒԽ ԺԳ—Սարդարապատ—Բաշ-Ապարան 144, ԳԼՈՒԽ ԺԴ—Անդրկովկասի քայքայումը. Անկախություններ 152, ԳԼՈՒԽ ԺԵ—Թաֆվի հերոսամարտը 165

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԺԶ—Առաջին քայլեր 184, ԳԼՈՒԽ ԺԷ—«Անձն քառսի» միջից 199, ԳԼՈՒԽ ԺԸ—Հայ-վրացական սահմանավեճը 214, ԳԼՈՒԽ ԺԹ—Պատերազմ և հաշտություն 230, ԳԼՈՒԽ Ի—Սահմանների ընդարձակում 251, ԳԼՈՒԽ ԻԱ—Արևմտահայոց երկրորդ համագումարը 269, ԳԼՈՒԽ ԻԲ—Ազգային համագումար, Կոալիցիայի խզումը 281, ԳԼՈՒԽ ԻԳ—Մահմեդական շարժումները. Գեղապետ Հասկելը Հայաստանում 309, ԳԼՈՒԽ ԻԴ—Ղարաբաղի հարցը 327, ԳԼՈՒԽ ԻԵ—Զանգեզուր—Գողթն 344, ԳԼՈՒԽ ԻԶ—Արտահին և հերթին ճիգեր 362, ԳԼՈՒԽ ԻԷ—Շինարարական վերելք 378, ԳԼՈՒԽ ԻԸ—Մայիսյան խռովությունները 401, ԳԼՈՒԽ ԻԹ—Պետության կառուցումը. Սևրի դաշնագիր 442

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՄՈՒՐՃԻ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱԼԻ ՄԻՋԵՎ

ԳԼՈՒԽ Լ—Հայ-բոլշևիկյան հարաբերությունները 471, ԳԼՈՒԽ ԼԱ—Մուրճի և սալի միջև պատերազմ 487, ԳԼՈՒԽ ԼԲ—Կառավարության փոփոխությունը 516, ԳԼՈՒԽ ԼԳ—Խորհրդայնացումը և Ալեքսանդրապոլի դաշնագիրը 526, ԳԼՈՒԽ ԼԴ—Հայաստանը Հեղկոմի իշխանության տակ 540, ԳԼՈՒԽ ԼԵ—Փետրվարի 18 557, ԳԼՈՒԽ ԼԶ—Զանգեզուրի լեռներում 581, ԳԼՈՒԽ ԼԷ—Վերջին էջ 598, Վերջին խոսք 607

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա—Հ. Հ. Դ. Կովկասի Շրջանային ժողով (1914, սեպտ. 21—23) 611, Բ—Կամավորական խմբեր 615, Գ—Էնվերի արկածախնդրությունը 620, Դ—Հ. Հ. Դ. Շրջանային ժողովի բանաձևերը (1917 թ., ապրիլ) 625, Խաղաղության և բարեկամության դաշնագիր Օսմանյան կայսրության կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև 631, Պայմանագրություն 636, Զոր. Հարբորդը Հայաստանում 638, Օրենք Հայաստանի անկախության փոխառության մասին 641, Լ. Շանթի համակենները Մոսկվայի բանակցության մասին 645, Հայաստանի փրկության կոմիտեի զեկուցում-ճամակը 653, Համազանգվածյան ճամագումարի որոշումները 658, Հաշվեհավասարություն՝ Հայաստանի կառավարության 667, Կարսի խորհրդաժողովը 676, Հատուկ անունների ցանկ 685

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Ա. Մ. Հայրապետյան
Նկարիչ՝ Հ. Մ. Ծատուրյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Բ. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ի. Բ. Մարգարյան

ИБ *7562*

Հանձնված է շարվածքի՝ 11. 06. 91 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 9. 08. 93 թ.։ Չափս՝ 60×90 1/16։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 44,0 պայմ. տպագր. մամ., 1,44 ներդիր, հրատ. մամ., 40,96։ Տպաքանակ՝ 7000։ Պատվեր՝ 344։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Ա. Իսահակյան 28։

ՀՀ Կառավարությանն առընթեր հրատարակչական գործերի վարչության «ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ։

Երևան—9, Տերյան 91։